



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

ՎԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ.
ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

Հատոր առաջին

ԵՐԵՎԱՆ-2013

ՀՏԴ 93/99:323.272
ԳՄԴ 63.3 + 66.017
Պ 505

Երախտագիտություն եմ հայտնում Սփյուռքի ճանաչված ազգային-հասարակական գործիչ Սիմոն Տետեյանին սույն աշխատության առաջին հատորի տպագրությունը հովանավորելու համար:

Հեղինակ

Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնում:

Խմբագիր՝ Բարկեն Վարդանյան

Պ505

Պետրոսյան Վլադիմիր

Ստեփան Շահումյան. Երա կյանքի պատմությունը / Վ. Պետրոսյան. - Եր.: Հեղ. հրատ., 2013 թ.:
Հատոր 1.- 556 էջ:

Գիրքը նվիրված է հայ ժողովրդի արժանավոր գավակ Ստեփան Շահումյանի կյանքին ու գործունեությանը:

ՀՏԴ 93/99:323.272
ԳՄԴ 63.3 + 66.017

© Պետրոսյան Վլադիմիր, 2013

ISBN 978-9939-0-0924-1

ՀԱՅ ՄՏՔԻՆ ԵՒ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐ ԷՋԵՐԵՆ ՄԵԿԸ

Ջլան մեծեր ստանց ծայրահեղ հակառակորդներու.

Բայց մեծութիւն է ճանչնայ արժեքը, նոյնիսկ հակառակորդին:

Իսկ, երբ մարդիկ՝ սերմ կրօնակցական միասնութեամբ կը մտնան մարդուն արժէքը եւ կը փորձեն փարկարեկել, ասոր նացնել արժեքներ՝ ցոյց կու տան իրենց մտաւորական խելճութիւնը:

Ստեփան Շահումյանի կեանքին ու գործին յուսարանութիւնը ձգելով Փր. Վրադիմիր Պետրոսեանի այս յայնսժուայ ուսումնասիրութեան՝ փրջիչնէք մեր մեծ բանաստեղծ Անդրանիկ Մատուկեանի պոէմէն յետեւեայ նշանատար տողերը.

«Մարդիկ կարող են խափռել յունքին եւ բազկի ուժով սանձել գետերին, Բայց ո՛վ է կարող ժամանակների վճիռը եղծել եւ դիւցազնութեան կապոյտ երկնքում Շողացող աստղին վարագոյր քաշել»:

Ներկայ գրագրութիւնը եւ սպասարանս աշխարհին առջեւ Ստեփան Շահումյանին ուղղուած փարկարեկման ճիգերը կիթէ չհեզբացուին՝ մեր պատմասրանները պիտի մնան յանցարտ:

Սիժուպէն գնահատելի է Փր. Վրադիմիր Պետրոսեանի այս ծափարուն ուսումնասիրութիւնը, ցոյց տարով Ս. Շահումյանի գաղափարական եւ մտային մեծութիւնը որպէս հայ, որպէս մարդ, եւ համամարդկային:

Դժբախտաբար, կեանքը Ս. Շահումյանին առիթը չտուաւ իր գաղափարներուն իրականացումը տեսնելու եւ իր երազած հայրենիքին վերածնունդը տեսնելու եւ ապրելու՝ իր հաստատարին յոյսին տակ:

Փր. Վրադիմիր Պետրոսեանի՝ Ստեփան Շահումյանին նուիրուած այն ծափարուն ուսումնասիրութեան հրատարակութիւնը յանձն կ'առնեմ որպէս հայ մտքին եւ գաղափարական պատմութեան կարեւոր էջերէն մէկը:

ՍԻՄՈՆ ՏԵՏԵՅԱՆ
Զուիցեղիա
10 Յունիս, 2013



Ստորև պարտքս եմ համարում ներկայացնել Մինոն Տետիանի գրած ինքնակենսագրությունը

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

1) 1914 թ.: Աբտր, արհալիրք. ծնողքս մանուկ տարուին, թուրք ճիւղադային ծրագրուած ցեղասպանութեան ճամբուն վրայ, կորանցողքս իրենց հարազատները, կը գտնուին Սուրիոյ անապատներուն մէջ:

Հայրս՝ Գրիգոր, Պարսպի Կէօրտալ գիւղէն, մայրս՝ Արբուհի Աւագեան, Պոլսոյ Իզմիտի Ապանակէ գիւղէն:

2) Վերածնունդ. Սուրիոյ անապատներէն հաւաքուած որբեր, Գրիգոր և Արբուհի, աբտրէն տարիներ անցած, կը հանդիպին, կամուսնանան Հայկալի գաղթականական թաղամասերէն մէկուն մէջ՝ Հասիտիէ: Կ'ունենան երկու զաւակներ՝ Յովակի՝ 1931-ին և Մինոն՝ 1933-ին (գրողս). և յետոյ, քիչ մը բարեբաւուած, կը տեղափոխուին Հայկալի Տաւուտիէ թաղամասը՝ Հայ գաղթականներէ կազմուած: Եվ հոն ընտանիքը կամբողջանա Մինասով 1938-ին և Իսկուհիով 1945-ին, չորս զաւակներ:

3) Տաւուտիէ, Հայկալէն մօտ 2 կմ հեռու բարձր դաշտի մը վրայ, Հայ գաղթականներէ կազմուած նոր թաղամաս մը, մօտ 1000 ընտանիքով, կ'ունենայ իր եկեղեցին և քահանան՝ Եղիշ Տէրտէրեան, մանկապարտէզը և նախակրթարանը՝ Վարդանեան վարժարանը, որ կը կառավարուէր իր քահանայով և շատ պարզուսակ ուսուցիչ և ուսուցչուհիներով:

4) Հայկալի Տաւուտիէի մանկապարտէզը և նախակրթարանի ստաջի նախապատրաստականը սկստուած, ծնողքս գիտ կ'արձանագրեն Հայկալի Հայ կաթնան նախակրթարանը (անուանեալ դաշնակցական)՝ եղբորս՝ Յովակիին հետ:

Նախակրթարանի վերջի երէք տարիները ծնողքս գիտ կարճանագրեն Կիլիկիան նախակրթարան (անուանեալ հիշակեան):

5) 1950-ին սկստուելով Կիլիկիանը, ուսումնա շարունակելու համար այդ թուականին Բէյրութի Հ. Բ. Ը. Մ-ի պատասխանատու Բարունակ թովմասեանին (Կէօրտալցի) խորհուրդով կը դրկուիմ Կիպրոսի Մերզոնեան կրթական հաստատութիւն (Մ. Կ. Հ.), Դանիէլ Ոսկեանի տնօրինութեան շրջանին:

6) Աւարտելով Մ. Կ. Հ-ն, չորս շրջանաւարտ ընկերներով Անդրէաս, Վարզէ և Նորէլ և անձս, կ'որոշենք ուսումնիս շարունակել Պոլսոյ ամերիկեան Robert College-ի ճարտարագիտական ճիւղին մէջ 1955-1959:

7) Պոլսոյ ուսման տարիներս, ուսմանս կողքին, ինծի համար սղգային տէ-

ասկէտով սպասարիչ տարիներ եղած են: Հայ մատենագիր Յովհաննէս Դպիրի մը փնտրտուքով ծանօթութիւն ունեցած եմ այդ օրերուն Պոլսոյ պատրիարք Գարեգին Խաչատուրեանին հետ և Իսկիւտարի ազգասէր և հաւատարեցեալ Տէր քահանայ Շաւարշ Պալլանանին հետ:

Ի մասնատրի, Հայ գրականութեան մեծերուն շիրմաներուն այցելութիւններս՝ Շիրշի, Պալլաքլի, Իսկիւտարի գերեզմաններուն մէջ՝ յիշելով անմահ Պետրոս Դուրեանին մահամերձի իր ստղերը՝

«Երբ յիշատակս այ թառամի, Ոհ, այն ստեն ես կը մեռնիմ»:

8) Պոլսոյ Robert College-ի ուսման սկստուելով, 9 տարիներու բացակայութենէ մը ետք կը վերադառնամ Հայկալ:

Ասաջին գործս կըլլայ որպէս ճարտարագէտ՝ Սուրիոյ պետական Major Projects Administration-ի մէջ, 1959-1962, Chab կոչուած շրջանին մէջ՝ ճամբաներու, ջրանցքներու, ամբարտակի շինութեանց գործերով:

9) 1962-ին կը ձգեմ Սուրիան վերջնականապէս և կը հաստատուիմ Բարիգ, Ֆրանսա: Ասաջին ամիսները և տարիները գծուար շրջաններ էին մի-



ՎԱՐԻՍՏԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

այն: Շնորհիւ այդ տարիներուն իր թան թերթին հրատարակիչ Տր. Համբար-
ձեանին կրցած եմ visa-ս երկարաձգել, և շնորհիւ էլեկտրագործատէր Նու-
պար Յովաննէսեանին, HOVAN, կրցած եմ Փրանսա մնալու իրաւունք ստա-
նալ:

1962-1964-ի դժուարին տարիներէ ետք, որպէս ճարտարագէտ առաջին
գործս կը գտնեմ ամերիկեան ընկերութեան մը մէջ, Pro-cofrance, որ քարի-
ղի գտարաններու շինութեանց գործունէութեանց մէջ էր:

10) Փրանսայի մեծ յուսախափութիւններէ ետք, հակառակ
Pro-cofrance-ի մօտ գոհացուցիչ գործիս, մանկութենէ մնացած Հայաստան
հաստատուելու փափաքով, 1965-ին դիմեցի Բարիդի ուսակական Հիւպատո-
սարան: Հիւպատոսարանի պահանջքին համաձայն, շարադրութեան մէջ
գրեցի՝

-ընակաւայր (Հայաստանի մէջ), Հայաստանի ծայրամասերէն տեղ մը:
-Ինչո՞ւ կուզեմ Հայրենիք փոխադրուի՞

Որովհետեւ ես ինքզինքս Հայաստանցի կը նկատեմ, որովհետեւ մեր հայ-
րերը, նախահայրերը երբէք Հայաստան չեն ձգած կամաւոր կերպով և որ
բարբարոս արշաւող յորդաներու բռնութեամբ հեռացած են Հայրենիքէն:

11) Հայրենիք վերադառնալու դիմումէս անդին, 1965-1969, Հայրենիքը
ինձի համար մնաց երազ մը: Հիւպատոսարանին մէջ հիւպատոսը փոխուե-
ցաւ, առաջին քարտուղարը՝ Հայ, փոխուեցաւ, և ես մնացի Հայրենիք վերա-
դառնալ փափաքող հիւպատոսարան այցելողը, գրեթէ ամէն ամիս:

1969-ին, իրապաշտութեամբ, տարիներու Ձուիցերիացի բարեկամուհիի
հետ ամուսնանալով այլևս հիւպատոսարան չգացի:

1970-ին կը փոխադրուիմք Ձուիցերիա, կունենանք մեր առաջին զավա-
րը՝ Դանիէլ-Գրիգոր:

Աշխատած ընկերութիւններու միջոցով կը մեկնիմ երկար ամիսներով
Philippine կղզիները, Pakistan, Nigeria, Soudan և այլն:

1980-ին բաժնուած ըլլալով Ձուիցերիացի կնոջմէս, 1985-ին կրկին կ'ա-
մուսնանամ: Այս անգամ Հայէպէն, օր. Եղսան Միհրանեանին հետ՝ հախտե-
նական դաշինքով, և ունեցանք մեր Սիլվան, որ միասին ենք և որ իր ուսումը
կը շարունակէ Neuchatel-ի համալսարանը:

12) Հայէպի Վարդանեան վարժարանը՝ տնօրինութեամբ Տէր Եղիշէ քա-
հանայ Տէրտէրեանի ուր սորվեցայ Մետրոպեան Ա. ու Բ-էնը, Հայկազեան
վարժարանը՝ տնօրինութեամբ Արմեն Անուշի, Կիլիկեան վարժարանը՝ տնօ-
րինութեամբ Երուանդ Բարսեանի, և Կիպրոսի Սեդրոնեան հաստատութիւ-

նը՝ տնօրինութեամբ Դանիէլ Ոսկեանի, իմ ազգային ապրումներու աղբիւրը
եղած են: Մամուտը բար սպաւորուած Հայկազեանի պատմութեան ուսու-
ցիչ Սիմոն Սիմոնեանի, Կիլիկեանի պատմութեան ուսուցիչ Սրապիոն Խան-
զատեանի դասերէն:

13) 1946. Համախարհային 2-րդ պատերազմը վերջացած, վերածնած,
բայց գաղթական հայութեան հայրենադարձութիւնն էր Սփիւռքէն: Հայէպ,
կարաւաններուն մեկնումները կը դիտէինք մանկական աչքերով և յոյսով, և
երազներով: Եւ իւրաքանչիւր մեկնումին հետ՝ երգելով՝

Այ կարաւան, հեյ ջան կարաւան,
Հէյ գշիր քո ճամբան,
Անապատի բշերի մէջ
Գշիր քո ճամբան,
Կարոտել եմ Հայրենիքս,
Քունս չի տանիր:

14) 1950-1955. Սեդրոնեանի մեր գրականութեան ուսուցիչին՝ Նուպար
Թամամեան՝ Ն. Կատար, իր բանաստեղծի անունով, իմ որպէս շարադրու-
թիւն իրեն յանձնած և այսօր մոռցած բանաստեղծութիւններէս կը յիշեմ մի-
այն հետեւեալ տողերը.

Երազին աչքերուս անցեալի
Կը դառնամ ամէն օր ես կրկին,
Մօր մը սերտ շունչին տակ թանկագին
Պանդուխտ եմ ես կրկին ու կրկին:
Կեանքին հետ դաւաճան օրերուն,
Ես գացի, ծովէ ծով ու հեռուն,
Ու պանդուխտ իմ հողին երերուն
Եղաւ որս մը հողմերուն, ծովերուն:

.....
.....

Եւ հիմա, անկիւնի մը մէջ խոր,
Կերպեմ Հայրենիք մը աղուոր:

15) Այսօր, 80 տարիքիս, այս պարզ կենսագրական գրեցի որպէս յիշա-
տակ իմ զաւակներուս, և բրոֆեսօր Վլադիմիրին և այս թանկագին հատոր-
ներուն ընթերցողներուն համար միայն:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Պատկան Շահումյանը իր անբող կյանքով ու գործով մեր աչքի առջև
Շահումյան է որպես այս անբողին նվիրված ու հարուստ զավակ: Կինը
Շահումյանի անասունների ու նորարարական միջավայրի ծնունդ, դառնալով կոմուն-
իստական, չարժանի անբողի գործիչ, երբեք չհեղվեց իր ընտրած ուղուց՝
Շահումյանի այս ժողովրդի շահերին:

Մեր ոչ շուտ անցյալից կարելի է բարեխիղճ օրինակներ բերել այն մա-
տիկ, որ մեկը որոշել է դասակարգային հարաբերական և այդ միջոցով օգտակար լինել
իր սարգին, մյուսը դարձել է դասակարգային անտրամ և հարևար է գտել այդ
դասակարգային շարժման օգտակար լինել սարգին, սպառազեղ նրա երջան-
կաբերան հասնար:

Արտաքին մտազուտ մը ցնամ էլ դասակարգային է: Նրանցից յուրաքանչ-
յուրը հասնարում է սպառազեղ գործիչ:

Բայց ահա, հասնարում մերթն աստիճանական հարգանքով շարունակում, իսկ
դրանից առաջ էլ սրտասուցանական հարգանքով ծանոթում (հիմնականում
դասակարգային ու դրություն): մեր բոլոր այն գործիչները, որոնք արտաքին
են սպառազեղական կամ էլ կոմունիստական կոստակայինը, իրենց
նվիրել են կոմունիստական գաղափարների հարգանքով իր ժողովրդին
օգտակար լինելուն, սպառազեղ գործիչ չեն հասնարում: Եվ ոչ միայն դա:
Նրանք փարսերգելում են, հասնար ներկայացվում նախկին մեր սպառազեղ
նորարարների փնտամի:

Տարտիման պիտոտրում է: Եվ հարց է առաջանում թե սպառազեղ դաս-
ակարգային արև գործիչ հասնարում է սպառազեղ գործիչ իսկ կոմունիստա-
կան կոստակայինը գործիչը ոչ: Ինչպե՞ս ցնամում իրազեղ փարսերգում է նաև
կոմունիստական, Շահումյանին, որին դասակարգային գաղափարափոխներն ու
նրանց հասնարումները չեն հասնարում սպառազեղ գործիչ:

Ես, այս, փարսի պես, հասնարում եմ ընդհանրորեն ոչ սպառազեղները հասնարող
փարսերգումը նորարար անանարար:

Եստ, այս, գաղափարափոխների կոմունիստները, լինելով փնտակարգային
դասակարգ, անբողում են սրբել իրենց ժողովրդին, իրենց հարգանքով:

Արտաքին աստիճանական միայն կարելի է հարցնել, եթե կոմունիստները չեն
սրբել իրենց հարգանքով, ապա, այս, ինչպե՞ս կարողանան իրենց փնտակարգային
աստիճանականների ընդհանրում անբողային անարարատ հարաբերակարգ
գրառանքային ու բուստարարական կրթել: Կերթին հարցով, այն ասնելը, ինչ Հա-

յատուանը ձեռք էր բերել սովետական իշխանության 70 տարիներին, միայն
հայրենիքը ջերմորեն սիրող մարդկանց սիրանքի, անմնացորդ նվիրումի
արդյունքն է:

Հիմա եկել է այն պահը, որ հարկավոր է ձեռք բերածը պահպանելով, դրա
հիմքի վրա կառուցել, ստեղծել ավելի լավը, ավելի կատարելագործվածը: Իսկ
դա հարավոր է միայն հայրենիքն ու ժողովրդին անկեղծորեն սիրելով,
նրանց նվիրվելով: Եվ այդ նվիրումը ոչ թե առատ խոսքերով ու խոստումնե-
րով, այլ իրական գործերով դրսևորել:

Սա է մեր օրերի գլխավոր խնդիրը: Եվ իմ խորը համոզմամբ մեր ժողովր-
դի կյանքի բոլոր ասպարեզներում առաջացած գլխավոր խնդիրների մասին
ոչ թե խոսողն ու փրճուն ճառեր ասողն է, այլ դրանց իրականացնողն է իմա-
կան ազգային գործիչը, որը հակառակ խոսողների, անկախությունը չի հա-
մարում նպաստակ, այլ միջոց ժողովրդի բարեկեցությունն ապահովելու հա-
մար:

Ես իմ առջև նպատակ չեմ դրել խորությունը քննարկել կամ էլ վերլուծել
Ստեփան Շահումյանի ժամանակ ապրած այլ կուսակցություններին պատ-
կանած գործիչների հայացքները: Իսկ չի մտնում սույն աշխատության նպատ-
ակի մեջ: Ես միայն դրանց անդրադարձել եմ այնքանով, որքանով որ առնչ-
վել են Ստեփան Շահումյանին:

Ես իմ առջև դրել եմ ավելի համեմատ նպատակ, այսօրվա երիտասարդ ըն-
թերցողին ներկայացնել Ստեփան Շահումյանի կյանքի պատմությունը և
ցույց տալ, թե ինչպե՞ս էր նա, որպես կոմունիստական կուսակցության ակա-
նավոր գործիչ ու ինտերնացիոնալիստ, հանդես գալիս իր ժողովրդի շահերի
պաշտպանությամբ, իր դավանած գաղափարափոխությունը դարձրել միջոց,
թույլ տեսնելով ժողովրդի ազգային խնդիրները, որոնց մեջ ազգի գոյատևու-
թյան ապահովումն էր, իրականացնելու համար:

Միաժամանակ հարկ եմ համարում նշել հետևյալը: Ինչու կուսակցությունը
սրբում արևմտահայերի փրկությունը կապում էր երիտթերաքական հեղա-
փոխության հարթամակի, իսկ հետո անբողը Հայաստանի փրկությունը: Եվ
բուստարար տեղությունների ու Ամերիկայի հետ, իսկ հայ սպառազեղներն
կոմունիստները և առաջին հերթին Ստ. Շահումյանը հայ ժողովրդի փրկու-
թյունը կապում էին ուսանական հեղափոխությանը ցարդազի տապալման, հե-
տո նաև Սովետական Ռուսաստանի օգնության հետ:

Նրանցից յուրաքանչյուրը կարծում էր, որ սպառազեղ է իր ժողովրդի
սպառազեղ հասնար: Միայն թե Հայաստանի սպառազեղ նրանք դիտում էին

բառ իրենց տեսակետի: Դաշնակցությունը իր պարագլուխների կամքով որդեգրել էր օսմանյան ինտերնացիոնալի գաղափարը և դրան հավատարիմ է մնացել մինչև արևմտահայության մեծագույն ողբերգությունը, երբ ցեղասպանության զոհ դարձավ մի ամբողջ ժողովուրդ:

Հայ բուլշևիկները Շահումյանի գլխավորությամբ որդեգրել էին ուսև ժողովրդի հետ ինտերնացիոնալ բարեկամության գաղափարը և դրան հավատարիմ մնացին մինչև վերջ: Ինչ տվեցին այս երկու ինտերնացիոնալները Հայ ժողովրդին:

Հարկ չկա պատասխանել այդ հարցին և ասել, թե այս ուղղություններից որն էր պատմականորեն արդարացիված: Պատմությունը վաղուց տվել է դրա պատասխանը:

Բայց հարց է առաջանում. այդ ինչպես է, որ երիտթուրքերի հետ դաշինքի արդյունքով բնաջնջվեց արևմտահայությունը, Եվրոպան ու Ամերիկան էլ չօգնեցին, և այս քաղաքականության կրողները գնահատվում են որպես ազգային գործիչներ, իսկ Ստեփան Շահումյանը, որը Հայ ժողովրդի փրկությունը կապում էր ուսևական հեղափոխության հաղթանակի և Սովետական Ռուսաստանի օգնության հետ, ազգային գործիչ չի համարվում:

Մինչդեռ Ստեփան Շահումյանը իսկական ազգային գործիչ էր, իր ժողովրդի հավատարիմ գաղափար և այդպիսին էլ մնաց մինչև իր կյանքի ողբերգական փախճանը: Ահա, թե ինչու մինչև օրս Ստ. Շահումյանի ունեցած հեղինակությունը, հնայքը հանգիստ չեն տալիս նրա հակառակորդներին, որոնք սերնդեսերունդ փոխանցել են իրենց անզուսպ աստելությունը նրա նկատմամբ:

Ասվածի կապակցությամբ հարկ եմ համարում այստեղ հիշել ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի հետևյալ դիտողությունը. «Ընդունված կանոն է ազգային սրբերի չարքը դասել նրանց, որոնք գործել ու մեռել են ազգի ընդհանրության համար, կամ նրանց, որոնց հայեցողության ու ներգործության աստարտեղը չրհազմվել է ազգային մեկուսացման ասհանմաներով:

Ստ. Շահումյանն այդ իմաստով մեր ազգային սուրբը չէ և ոչ անգամ հերոսը: Սակայն Շահումյանն ամենից ատաղ Հայ բանվորությանն է նվիրել իր երկտասարդական օրերն ու գործերը: Պատռելով ազգային մեկուսացման այն բուրդը, որ միջազնում էր Հայ բանվորության գիտակցական հորիզոնը, նա հերտացցավ ամենից ատաղ Հայ բանվորական շարժման և Հայ սոցիալիզմի սրտտուրության մեջ»: (Ստեփան Շահումյանը ժառանգակալությունների հուշերում, Եր. 1984, էջ 153-154):

Ստ. Շահումյանի մասին գրվել են շատ գրքեր, հիշողություններ, հրատարակված

ընկվել են բազմաթիվ արխիվային փաստաթղթեր: Նրա մասին գրված աշխատությունները, հոդվածները, ինչպես նաև հետուստատեսությունները ու լրատվական մյուս միջոցներով առանձին անձանց հրատարակային ելույթները բաժանվում են երկու իրար հակադիր տեսակետների:

Առաջին տեսակետի հեղինակներն կանգնած են Ստ. Շահումյանին ճիշտ, օբյեկտիվորեն ներկայացնելու դիրքերում և պատշաճորեն ու հարգանքով են գնահատում նրա կյանքն ու գործունեությունը: Այդ հեղինակների աշխատություններում, հիշողություններում ընթերցողի առջև իր ամբողջ վեհությունները համոտում է ազնիվ ու սկզբունքային, ճշմարտասեր ու համեստ, աշխատավոր մարդու շահերի պաշտպանության համար պայքարող Ստ. Շահումյանի պայծառ կերպարը:

Այս առումով հարկ է նշել հետևյալ հեղինակների աշխատություններն ու հոդվածները: Վարդան Ավետիսյանը 1953 թ. հրատարակած «Ստեփան Շահումյան» գրքում տվել է Շահումյանի կենսագրությունը, հատկապես անդրադարձել է նրա գործունեությանը 1905-1918 թվականներին:

Սուրեն Մովսիսյանը «Շահումյանը և Սպանդարյանը աճող սերնդի դատարակության մասին» (1953 թ.) աշխատության մեջ քննարկում է մանուկավարժության վերաբերյալ Շահումյանի հայացքները:

1957 թ. լույս տեսած Գ. Բաղդասարյանի «Ստեփան Շահումյանի պայքարն ազգային հարցի մարքայենիսյան թերոհայի կենսագործման համար» աշխատությունը նվիրված է ազգային հարցի մասին Շահումյանի աշխատությունների վերլուծությանը:

Շահումյանի կյանքի և հեղափոխական գործունեության մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Իլյա Դուբինսկի-Մուխաձեն 1957 թ. տպագրված «Շահումյան» փաստագրական գրքում:

Ա. Բաբախանյանը 1958 թ. հրատարակած «Պատմական մատերիալիզմի մի քանի հարցերը Ստ. Շահումյանի աշխատություններում» գրքում առաջին անգամ խորությամբ քննարկել է այն խնդիրները, որոնք կապված են պատմական մատերիալիզմի տեսության հետ:

Լենդրուշ Խուրդոսյանը «Ստեփան Շահումյան» աշխատությունը (1959 թ.) նվիրել է Շահումյանի պետական և կուսակցական գործունեությանը 1917-1918 թվականներին:

Ն. Մ. Գապարյանը 1960 թ. հրատարակած իր «Ստեփան Շահումյանը մարքայիզմի ակնանավոր տեսարան ու պրոպագանդիստ» մենագրության մեջ տվել է Շահումյանի հայացքների վերլուծությունը և քննադատում է այդ

Հարցում եղած պիսկ պատկերացումներն ու մեկնաբանությունները: Աշխատության մեջ քննարկվում են նաև Շահումյանի գրական-էսթետիկական հայացքները:

Շահումյանի գործունեության լուսաբանման գործում լուրջ ներդրում է կատարել Արտաշես Ոսկերչյանը, որը 1962 թ. հրատարակած «Հայ մարդ-պատական քննարատության հիմնադիրները. Ստեփան Շահումյան, Սուրեն Սպանդարյան» մենագրության մեջ Շահումյանի հասարակական քաղաքական գործունեությանը զուգահեռ լուսաբանել է նրա էսթետիկական հայացքները, հրապարակախոսական ժառանգությունը և այդ ամենը գնահատել որպես Հայ հասարակական կյանքում, մտավոր ու էսթետիկական զարգացման պատմության մեջ առաջ եկած նոր փուլի արտահայտություն: Կարևոր տեղ է տրվել Հայ հասարակական-քաղաքական հոսանքների, ազգային-ազատագրական շարժման բնույթի, Հայ և ռուս գրականության նշանավոր դեմքերի մասին Շահումյանի հայացքների լուսաբանմանը:

Երվանդ Սարգսյանը «Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում» աշխատության մեջ (1964 թ.) հանգամանորեն բացահայտել է Շահումյանի դերը Բաբելի վրա թուրքական ազդեցության դեմադրություն կազմակերպելու գործում:

Խիկար Բարսեղյանի «Ստեփան Շահումյան» (1968 թ.) գիրքը պարունակում է Շահումյանի կյանքի և գործունեության վավերագրական տարեգրությունը:

Հենրիկ Սեյդրյանը իր «Հոկտեմբերյան Հեղափոխությունը և կովկասյան բանակը» (1970 թ.) աշխատության մեջ բացահայտել է Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերը պահելու գործում Շահումյանի ջանքերը:

Գևորգ Նարեթյանյանը «Լենինը և Անդրկովկասը» աշխատությունում (1975 թ.) զգալի տեղ է հատկացրել Շահումյանի գործունեությանը:

Մակիչ Արզումանյանը «Ստեփան Շահումյան» աշխատությունը (1978թ.) նվիրել է Շահումյանի հեղափոխական գործունեությանը:

Կարո Սեյրոնյանը իր «Ռուսաստանի 1905-1907 թվականների Հեղափոխությունը և Ստեփան Շահումյանը» գրքույլը (1986 թ.) նվիրել է ռուսական առաջին հեղափոխության ընթացքում Շահումյանի գործունեությանը:

Շահումյանի գործունեությանը տարբեր առիթներով իրենց աշխատություններում անդրադարձել են Մատուր Աղայանը, Գալուստ Գալոյանը, Զավեն Գրիգորյանը, Ղևնդ Դավաթյանը, Զոն Կիրակոսյանը, Արամայիս Մաքսականյանը, Ծնավոն Հարությունյանը, Ռաֆիկ Մուխիյանը, Կամո Ուլրումյանը, Նորայր Սարուխանյանը և այլ հեղինակներ:

Շահումյանը մասին հետաքրքիր տեղեկություններ է պարունակում «Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուն (1984 թ.):

Շահումյանի մասին հարուստ գրականություն է ստեղծվել նաև ռուսերեն, ինչպես օրինակ, Акоюн Г. "Степан Шаумян", М. 1972; Агаджанян Г. "Степан Шаумян", Ер. 1958; Азизбекова П. "Степан Шаумян", Баку, 1978; Барсегян Х. "Степан Шаумян"; Гарибджанян Г. "Революционная деятельность С. Г. Шаумяна за границей 1902-1907гг.", Ер. 1971; Калтахчян С. "Борьба С. Г. Шаумяна за теорию и тактику ленинизма", М. 1956; Нерсесян М. "Шаумян С. Г." М. 1954; Овсепян О. "Государственно-правовые взгляды Ст. Шаумяна, Ер. 1969", Г. С. Акоюн. "Степан Шаумян", М. 1973 և այլն:

Երկրորդ տեսակետի հեղինակներին հանգիստ չի տալիս Ստ. Շահումյանն իր կյանքում ու գործունեությանը, ժողովրդական զանգվածների մոտ ունեցած մեծ ու անժխտելի հարգանքով: Նրանք մեր օրերում առիթը բաց չեն թողնում հրապարակավ վարկաբեկել Ստ. Շահումյանին, նրան վերագրելով չինձու մեղքեր, ամեն կերպ աշխատում են նրան հեղինակագրել և այդ ամենը ներկայացնում իրականությանը չհամապատասխանող փաստարկներով, հատկապես նորից չրջանառության մեջ դնելով Շահումյանի գաղափարական հակառակորդների հուշերը, որոնք հրապարակվել են Շահումյանի ողբերգական մահից հետո և... մնացել են անպատասխան:

Ստեփան Շահումյանի կյանքն ու գործունեությունը կեղծիքով ներկայացնելու, նրան գրպարտելու մեջ աչքի են ընկնում հատկապես աղբրեջանցի հեղինակները: Նրանցից մեկն էլ պատմահեն է. Իսմայիլովն է, որը իր ռուսերեն հրատարակված "Степан Шаумян-обреченный на забвение. Портрет "легендарного коммунара" без ретуши" («Մոռացության դատապարտված Ստեփան Շահումյան: «Լեգենդար կոմունարի» դիմանկարն առանց ռետուշի») գրքում (2012 թ.) գրում է, որ «խրոնոլոգիական հետևողականությանը ներկայացնում է աղբրեջանական ժողովրդի թշնամի, աղբրեջանական բնակչությանը ֆիդիկապես ոչնչացնելու նպատակ ունեցող Շահումյանի անցած ամբողջ կյանքի ուղին: Հետազոտության մեջ լուսաբանվում են նրա մանկությունն ու պատանեկությունը, ուսման տարիները, հեղափոխության մեջ նրա առաջին քայլերը, քաղաքական հայացքները, Շահումյանի գրագրությունը, հոկտեմբերյան հեղաշրջումից հետո նրա եռանդուն գործունեությունը»:

է. Իսնայիրովի գրքի շնորհանդեսը մեծ աղմուկով կազմակերպվել է Մոսկվայի մի չարք ուսումնական ու գիտական հաստատություններում: Ցավալի է, որ դրանցում աղբրեջանցի մասնակիցների դրսևորված հախուռն և հակահայկական գնահատականները ոչ միայն չեն ժխտվել, այլև դրանք գնահատվել են որպես «պատմական ճշմարտություն»:

Առավել ցավալի է, որ այդ շնորհանդեսների ժամանակ ելույթ ունեցած Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի եւրոպեական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ստանիսլավ Չերնաւսկին, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, կովկասագետ Ռուդոլֆ Իվանովը և ուրշներ, հայտնվելով է. Իսնայիրովի սարքած գաղափարախոսական ծուղակում, ստանց խորանարտ, բացարձակապես անտեղյակ լինելով ոչ միայն Անդրկովկասի իրադարձություններին, այլև Շահումյանի գործունեությանը, նշում են «կեղծպարտություն և պատմական իրադարձությունների նենգափոխումներին հակադրելու և Աղբրեջանի պատմությունը ճիշտ հասկանալու տեսանկյունից» է. Իսնայիրովի աշխատության կարևորությունը:

Աղբրեջանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի տնօրեն, մեջլիսի պատգամավոր Յաղուբ Միսխմուդովը է. Իսնայիրովին խորհուրդ է տալիս իր աշխատությունը հրատարակել «Ստեփան Շահումյանը աղբրեջանական ժողովրդի սպանիչ» վերնագրով:

Ավելին, այս կեղծարար-տնօրենը նույնիսկ չի համաձայնվում Շահումյանի սպանության մասին է. Իսնայիրովի բերած փաստի հետ և գրում է հետևյալը. «Ես և Աղբրեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի ղեկավարությունը մասնակցել ենք Բաբու քաղաքի կենտրոնից «26»-ի հուշարձանի տնօրենությանը: Մենք այնտեղ աշխատեցինք 3-4 օր: Այդ պրոցեսին մասնակցել են դատաբժշկական փորձագիտական հանձնաժողովի անդամները գլխավոր տնօրենի ղեկավարությամբ և Առողջապահության նախարարության պրոֆորգիական անատոմիայի մասնագետները:

Աստիճան. Մենք ուզում էինք պարզել, թե որքան աճյուն է գտնվել: Հետազոտության ժամանակ սրտքվեց, որ գտնվել է 23 աճյունի մնացորդ: Հիմա հարապարտ է, որ էջրար Իսնայիրովը կասի, որ այնտեղ գտնվել է 26 աճյուն, մեկ ուրիշը կասի այլ թիվ: Բայց պատմությունը հենվում է փաստերի վրա:

Երկրորդ. Դատաբժշկական հանձնաժողովի անդամներն այնտեղ գտնված մարմինները դատաբժիշկ են լրատ տարիքի: Իրականացվել է հետազոտություն: Դատարար լրատ տարիքից, Շահումյանն այնտեղ չկար: Չկար Շահումյանի տարիքին համապատասխան աճյուն:

Երրորդ. Մենք կատարեցինք հետազոտություն և պարզեցինք, որ 26 կոմիսարների սպանությունից հետո Կրասնովորսկում Ստեփան Շահումյանը, Անաստաս Մրկոյանը և մյուսները 10 օրվա ընթացքում գտնվել են նույն խցում, նրանց տվել են չոր մթերաբաժին:

Այդ փաստաթղթերը մենք ունենք: Նմանապես կան այլ փաստաթղթեր: Նա, ով չի հավատում այդ փաստաթղթերին, թող հետաքրքրվեն Ռաչիդ Բեհբեթովի ճակատագրով և Հողկատանի այն տեղով, որտեղ թաղված է Շահումյանը»:

Ոչինչ տարօրնակ չէ, որ աղբրեջանցի մեկ կեղծարար մրցում է մյուս կեղծարարի հետ:

Այստեղ տարօրնակն այն է, որ Աղբրեջանի գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտը, որն իր էությունը պետք է չճառայի որևէ կուսակցության գաղափարախոսությանը, ղեկավարում է մեկը, որը քարոզում է մուսավաթական գաղափարախոսություն:

Ստեփան Շահումյանին անվանարկելու և գրապարտելու գործում աչքի է ընկնում նաև Աղբրեջանի պետական հեռուստատեսությունը, որը մշտապես ուսուց լեզվով է թիր է արձակում ստով ու կեղծիքով լի հաղորդումներ:

1993 թ. «Ռեպուբլիկա Արմենիի» և «Հայաստանի Հանրապետություն» թերթերը տպագրել էին «ազգությունը վրացի, Հայաստանի քաղաքացի, կոչումով պատմաբան, երկրաբանական գիտությունների թեկնածու» Գեորգի Խոմիզուրիի «26-ի առասպելը» հոդվածաչարր, որն ուղեկցող խոսքում Ռ. Պապայանն որակել էր իբրև «սիրանք»:

Վերահիշյալ հոդվածաչարրի կապակցությամբ 1993 թ. նոյեմբերի 25-ին և 27-ին «Հայաստան» թերթում տպագրվել է իմ «ՄԿ է քար նետում ճշմարտությանը կամ՝ Ստեփան Շահումյանը պաշտպանության կարիք չունի» ծավալուն պատասխանը, որտեղ գրել եմ նաև հետևյալը. «... Հենց սկզբից ասենք, որ «ազգությունը վրացի, Հայաստանի քաղաքացի, կոչումով պատմաբան» Գ. Խոմիզուրիի հոդվածաչարր սկզբից մինչև վերջ նորկալի տևտ է: Ոչ ավելի, ոչ պակաս՝ նա կրկնում է վրաց մենչեիկների, աղբրեջանական մուսավաթականների ու անգլիական գաղութարարների հերյուրանքները Ստ. Շահումյանի հասցեին, որն այնպես կրքոտությամբ պաշտպանում էր Անդրկովկասի ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման գաղափարը և մերկացնում վրաց մենչեիկներին ու աղբրեջանական մուսավաթականներին այդ բարեկամությանը թիկունքից խփելու համար:

Վրաց մենչեիկներն ու աղբրեջանական մուսավաթականները մինչև օրս

չեն կարողանում հանդիստ մնալ Սոտ. Շահումյանի այնպիսի դիպուկ մերկացումների բեռի տակ և ամեն անգամ առիթը բաց չեն թողնում Շահումյանին վարկաբեկելու համար, չխորշելով այդ անվայել գործում անգլիական գաղութարարների հետ համագործակցելուց և հաճախ էլ նույնիսկ նրանցից ավելի առաջ ընկնելով...:

Սոտ. Շահումյանը պաշտպանության կարիք չունի: Նա իր բյուրեղյա մաքրությունը կյանքը դրեց զրհասեղանին՝ հանուն Հայ ժողովրդի անվտանգության, հանուն Անդրկովկասի և Ռուսաստանի կապի պահպանման»:

1997 թ. Մոսկվայում տպագրված իր «Սոցիալական ցնցումները ժողովուրդների ճակատագրում (Հայաստանի օրինակով)» գրքում ինտելեկտին կրկնում է Շահումյանին վարկաբեկելու մարզանքները և գրում է հետևյալը. «Երեք տարի առաջ ժամանակակից Հայ կոմունիստները ինձանից շատ են վիրավորվել այն բանի համար, որ ես պոկել եմ Շահումյանի վրայից Հերոսի լուսապատկեր: «Մ՛վ է քար նետում ճշմարտությանը կամ՝ Ստեփան Շահումյանը պաշտպանության կարիք չունի»՝ այսպես է կոչվում ոմն Վ. Պետրոսյանի հոդվածը: 1937 թ. լեզվով գրված («Բաբվի հերոսական պրոլետարիատ», «Կեզնդար կոմիսարներ և այլն»), բայց գերազանց վերնազրով, քանի որ խկապես «Ստեփան Շահումյանը պաշտպանության կարիք չունի»,- պաշտպանել մի Հայի, որը պատրաստ է իր տանյակ հազարավոր Հայրենակիցներին կորստի մատնել հանուն ինչ-որ «Համաշխարհային հեղափոխության» և իր ընկերների իշխանության... իսկապես այդպիսի մարդը պաշտպանության կարիք չունի»: (էջ 127): Եթե մի պահ հավատանք Գ. ինտելեկտին, սպառտ նրա պարզվում է, որ Բաբվի 26 կոմիսարների սպանությունը չեն կատարել մենչևիկներն ու էսէռներն իրենց անգլիական տերերի հետ միասին, այլ «26 կոմիսարների սպանության գործում խառն է Արտակարգ Հանձնաժողովի (ՉԿ) մատր» և այլն, և այլն:

Ներողություն խնդրելով ընթերցողից նրա համբերությունը չարաշահելու համար, ինձ թույլ եմ տալիս «ազգությունը... և այլն պատմաբանից» մի երկարաչունջ հատված ևս մեջբերել. «Մի խնդիրը չէ «26-ի գործի» հետ կապված ողջ կեղծիքը վերլուծելը: Ես ցանկանում էի սպացուցել, որ Բաբվի կոմիսարների մասին մեզ Հայտնի ամեն ինչ, ուղքից գլուխ, կեղծիք է, առասպել, լեգենդ: Ի դեպ, ինչպես ողջ խորհրդային պատմագրությունը»:

«Ուսումնասիրելով ինձ հասանելի նյութերը,- շարունակում է կեղծարարը,- ես կկարողացա պատասխան գտնել շատ, այդ թվում՝ սկզբունքային մի շարք հարցերի:

1. Վերջապես ինչո՞ւ գնդակահարեցին «կոմիսարներին»... . . .
2. Ո՞վ սպանեց «կոմիսարներին»:
3. Ո՞ւմ էր դա պետք: Անգլիացիների՞ն, հազիվ թե, Աշխարաղի կատապարտված, հազիվ թե: Անգամ բուլչեիկներին դա պետք չէր: Ինչո՞ւ նրանք այս պատմության մեջ ամեն ինչ խտտեցին իրար:
- Եվ կրկին (որպես միևնույն) երկու հարց.
4. Ինչո՞ւ բուլչեիկները ոչինչ չձեռնարկեցին «կոմիսարներին» ազատելու համար:
5. Ինչո՞ւ Լենինն օգոստոսի 9-ից և հատկապես 1918 թվականի սեպտեմբերի 20-ից հետո ոչ մի բան չի խոսում Շահումյանի մասին, ասես վերջինս բնավ չի եղել: Իսկ չէ՞ որ նա Շահումյանին իբրև թե բարձր էր գնահատում. . . »:

Սույն աշխատության հաջորդ էջերում ընթերցողը կգտնի այս կեղծարարի համար չպարզված հարցերի իրական պատասխանը:

Մեր օրերում էլ, հերթական առի ու կեղծիքի հեղինակներ խոմիզուրիները դեկավարվելով Գեբեյի՝ «որքան սուտը մեծ լինի, այնքան դրան շուտ կհավատան» սկզբունքով, փորձում են նոր «սխալներ» գործել, կանգնելով անգլիական գաղութարարների ու նրանց կամակատար մենչևիկներին ու մտավախականների պաշտպանության ամրոցի խղճուկ փրատակների վրա:

Մենք խոմիզուրիների կեղծիքով շաղաղված չարամիտ առին այսպիսի ուշադրություն դարձրինք, երևելով նաև հետևյալ նկատատումից: Մուսավաթական նացիոնալիզմի ջատագով, իր հայատյացությունը հայտնի Ջիա Բուներթովը, որի գրքերը լեցուն են Սոտ. Շահումյանին վարկաբեկելու և զրպարտելու էջերով, այդպես էլ չհաջողացրեց դրանք տարածել նաև միտթենական ու հայկական մամուլի միջոցով: Իրենց արժանապատվությունը բարձր գնահատող թերթերն իրենց էջերն ամուր փակեցին այդ ստահակի առջև, դրանք երկու խորապույն հարգանք թե՛ ընթերցողների և թե՛ Սոտ. Շահումյանի ու պատմության նկատմամբ:

Սակայն զավեշտականն ու ցավալին նրանումն է, որ այն, ինչ չհաջողվեց փորձված պատմահեն Բուներթովին, կարողացավ իրագործել մեկ այլ ստահակ՝ «ազգությունը վրացի... և այլ պատմաբանը», որն ունենալով երևանյան իր համախոհների աջակցությունը, հայերեն ու ռուսերեն տպագրվող հայկական երկու պաշտոնաթերթերում հրատարակել է Սոտ. Շահումյանի հասցեին թիված զազրելի չարամիտությունն ու նողկալի գրպարտությունը:

Պետք է ցավով նշել, որ մեր իրականության մեջ նույնպես հայտնվում են

ազգությամբ իրենց Հայ կոչողներ, որոնք աշխատում են ետ չմնալ աղբրե-
ջանցի կեղծարարներից և միացած նրանց, նույնիսկ Հայկական առաջին Հե-
ռուստատեսությամբ իրենց մաղձն են թափում Շահումյանի Հիշատակի
վրա, անվանարկում նրա բարի անունը:

Ես նկատի ունեմ ինքնակոչ կերպով իրեն Հայաստանի անկախության
հիմնադիր Համարող մեկին, որը Հայկական առաջին Հեռուստատեսությամբ
(Հ-1) ունեցած ելույթում Շահումյանին տվել է զրպարտիչ գնահատական-
ներ, ինչի համար ՀՀ Ազգային ժողովի նախկին պատգամավոր Նորիկ Պետ-
րոսյանն ու հասարակական գործիչ Գեղամ Գալստյանը դատի էին տվել...

Վերոհիշյալ ստահակներից ետ չի մնում նաև մեկ այլ ընտանի կեղծարար
Լևոն Շիրինյանը, որը 2010 թ. հրապարակած «Հայ գինական ուժը Առաջին
աշխարհամարտի վերջնափուլում» խորագրով լրագրիկ գրքույկում (44 էջ)
կրկնելով Խոսիդուրիին ու աղբրեջանական մուսավաթական կեղծարարնե-
րին, համարձակվում է անվանարկել Շահումյանին, արդարացնելով Բաբվի
Հայ բնակչության ողբերգության մեջ մեղավոր Ս. Մելիք-Յուզյանին և Աբրա-
համ Գյուլխանդանյանին, վերջինիս անվանելով «Հայոց ազգային կռվի տա-
ղանդավոր ղեկավար»:

Լ. Շիրինյանի գրքույկին այսպիսի ուշադրություն դարձրեցի այն պատ-
ճատով, որ դրա հրատարակությունը երաշխավորել են Խ. Աբովյանի անվան
պետական մանկավարժական համալսարանի և ՀՀ ԳԱ Փիլիսոփայության,
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խորհուրդները: Որքան
ինձ հայտնի է, վերոհիշյալ գիտական խորհուրդներում կան գիտնականի Հե-
ղինակությունը պահող ու հարգող բազմաթիվ անդամներ, և միայն զարմա-
նալ կարելի է, թե նրանց ուշադրությունից ինչպես է վրիպել Շահումյանին
անվանարկելը և երաշխավորել են այդ գրքույկի տպագրությունը:

Բաբվում գտնվող Շահումյանի գերեզմանը բարբարոսաբար ավերող
աղբրեջանական մուսավաթականների ժառանգորդներից ետ չի մնում նաև
մեկը, որը նույնիսկ արժանացել է Հայաստանի ժողովրդական նկարիչի պատ-
վավոր կոչմանը: Հետևելով աղբրեջանցիների բարբարոսությունը, 2012 թ.
փետրվարի 18-ին, Երևանում լույս տեսնող բավական ազդեցիկ «Ազգ» թեր-
թում հրապարակած «Մենք ենք, մեր սարերը» հոդվածում այդ նկարիչը
գրել է. «Մնում է մի հուշարձան էլ, բոլշևիկներուն դրածը, որը պետք է տե-
ղափոխվի, դա էլ Ստեփան Շահումյանի հուշածանն է: Որովհետև Ս. Շա-
հումյանը թեև ծագումով Հայ է, բայց ոչ մի բան ըրած է Հայ ազգին համար,
որ արժանի ըլլար հուշարձան ունենալու պատվին»:

Նախ ասեմ, որ ինչպես հորվածագիրը, այնպես էլ նրա հետևորդները միադ-
վում են, որովհետև Շահումյանի հուշարձանը բոլշևիկների դրած վերջին
հուշարձանը է: Դեռ մնում են բոլշևիկների դրած շատ հուշարձաններ, որոնց
թվում նաև Միծեռնակաբերդում կառուցված Հայոց ցեղասպանության ու
Հայ ժողովրդի վերածննդի հուշարձանն է: Եթե հետևենք նրանց դատադո-
ւթյանը, ապա այն ամենը, ինչ ստեղծվել է Սովետական Հայաստանի գոյու-
թյան 70 տարիներին, ապա պետք է դրանցից հրաժարվել ու ոչնչացնել:
Առաջին օրինակը հենց պետք է ցույց տար հորվածագիրը և հետո նրա
հետևորդները՝ հրաժարվելով Սովետական Հայաստանի բոլշևիկյան ղեկա-
վարությունից ստացած բազում պարզեցումներից ու կոչումներից:

Իմ ուշադրությունը գրաված հորվածի հեղինակը Սովետական Հայաս-
տանի բոլշևիկյան ղեկավարության կողմից Սովետական Հայաստանի ժո-
ղովրդական նկարիչի և այլ պատվավոր կոչումների արժանացած Հակոբ Հա-
կոբյանն է, որն այս տողերը գրելուց ամիսներ անց, 2013 թ. փետրվարին կը-
քել է իր մահկանացուն:

Դեռևս 1931 թ. սեպտեմբերի 19-ին Երևանում Շահումյանի հուշարձա-
նի բացման առթիվ նշանավոր գրող Ալազանը գրել է «Արձան Ստեփան Շա-
հումյանին» բանաստեղծությունը, որտեղ կան նաև հետևյալ տողերը

«Մի՞թե միայն բազարտե պատվանդանով վեհանիստ,
Մի՞թե միայն քարեղեն խոյանքներով ամրակուր-
Մենք դնում ենք հատուցման քո արձանը գրանիտ
Եվ ջերմացնում ենք նրան մեր սրտերի կրակով:

.....
Մենք արձան ենք դնում քեզ և՛ Բազալտի և՛ կամքի
Ե՛վ կատուցման գրոհի պատվանդանով անխորտակ,
Մենք կռիվներ ենք մղում-հաղթանակի ու փառքի
Քո արնաներկ դրոշով, անմահ ընկեր Շահումյան»:

Այստեղ տեղին եմ համարում նաև ընթերցողի ուշադրությունը ներկա-
յացնել Սիրվա Կապուտիկյանի «Ստեփան Շահումյանին» խորագրով քչերին
ծանոթ բանաստեղծությունը, որով մեծ բանաստեղծուհին 1991 թ. սեպտեմ-
բերի 13-ին, իր բողոքն է արտահայտել, երբ Երևանում մի խումբ հՀայկան-
ներ փորձում էին ավերել Շահումյանի հուշարձանը:

«Դու, կապույտ, կապույտ ծով աչքերով,
ես դեռ պատանի ու դո՛ւ ասպետ,
Գեղեցիկ, ինչպես վեպի հերոս,
Դու միշտ եղել ես, եկել ինձ հետ»:

Եվ իմ ամբողջում միջնադարյան,
ես փայփայել եմ պատկերդ սեզ,
Մինչ քեզ կանչել է ուրիշ կայան,
Ուրիշ մի պատրանք, ուրիշ մի սեր:

Ես քո այդ սերն եմ սիրել նաև,
Քո նախրուամն ասորուշանող,
Հպարտ եմ եղել քո անուշով,
Քո ասհեղ մահով սրբավայել:

Եվ հիմա, այս մութ տարածամին,
Երբ խև խուժանն է բացել հանդես,
Զգիտեմ, ինչպես պահեմ ես քեզ,
Որ քեզ չփչրեն պատվանդանին:

Որ կյանքիս վերջին, երբ ամեն ուր,
Ամեն ինչ խառն է ու անհեթեթ,
Գոնե դու մնաս մեծ ու մաքուր,
Այդպես, քեզ այդպես տանեմ ինձ հետ»:

Նույն «Ազգ» թերթում 2012 թ. հուլիսի 14-ին հրատարակվել է Ժանե-տա Հակոբյանի «Ես համաձայն չեմ ձեզ հետ, հարգելի Հակոբ Հակոբյան» հոդվածը: Հեղինակը մեծագույն հարգանքով ու տակտով, չխախտելով վար-վեցողության կանոնները, դիմում է նկարիչ Հակոբյանին և բավական զգուշ-ովությամբ նրան բացատրում է, թե ինչու չի ընդունում Շահումյանի հուշար-ձանը քանդելու պահանջը:

Դրան հակառակ, 2012 թ. օգոստոսի 25-ին «Ազգ» թերթում տպագր-ված «Մի տխուր նամակի առիթով» հոդվածի հեղինակ, բանասիրական գե-տությունների գովառք Երվանդ Տեր-Խաչատրյանը պաշտպանության տակ վերջնելով նկարիչ Հակոբյանին, խախտելով վարվեցողության տարրական

նորմերը, շուկայական անողորմությամբ հարձակվում է Ժ. Հակոբյանի վրա, նրան մեղադրում է «ապագային, ամոթալի նյութեր գրելու» համար և կրկ-նում է Շահումյանի հասցեին մուսավաթ-մենչեփկյան ստահակ հեղինակնե-րի ժառանգորդ ինստիտուտի տարածած բամբասանքն ու կեղծիքը, առանց որևէ հիմքի պնդելով, թե Շահումյանը «զինվորազրկած է եղել հրեա-մասա-նական գաղափարներին»:

Այդ բանասիրության գովառքը Շահումյանի խոսքերով ասած՝ «իր հոգ-վածով ուղբի տակ է տալիս ասկանությունն ու ճշմարտությունը և կրքից կու-րացած, միակողմանիության մեջ է խրվում», և կրկնելով աղբյուրներից առա-հակ պատմահեղինների հնարած կեղծիքը, այն հայկական թերթի միջոցով ներ-կայացնում հայ ընթերցողին:

Վերոհիշյալ ստախոսներին ու կեղծարարներին է հասցեագրել Ստ. Շա-հումյանը 1918 թ. օգոստոսի 11-ին գրած «Անագնիվ պրպարոտիչներ» վեր-ջին հոդվածի վերջին տողերը. «ՄԵԶ ՀԱՄԱՐ ԱՎԵԼԻ ԿԱՐԵՎՈՐ Է ԳԻՏԱ-ԿԻՑ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴԱՏԱՍԱՆԸ, ՊԱՏՄԻԳՅԱՆ ԴԱՏԱՍԱՆԸ, ԵՎ ՆԱ ԶԵԶ ՀԱՄԱՐ ԱՎԵԼԻ ՍՈՍԿԱԼԻ ԿԼԻՆԻ, ՔԱՆ ԱՄԲՈՍԻ ԻՆՔՆԱԴԱ-ՏԱՍԱՆԸ, ՈՐԻՆ ԴՈՒՔ ԴԻՍՈՒՄԵՔ»: (Ստեփան Շահումյան, Երվանդ թ-աբատար ժողովածու, Հ. Հինգերդը, Եր. 1978, էջ 244):

Իհարկե, խոսքի ազատությունը սահմանափակվում է բարեկրթությանը, բայց, դժբախտաբար, վերոհիշյալ հեղինակների դեպքում մենք գործ ունենք դրա կոպիտ խախտման փաստի հետ:

Այդպիսի հեղինակների գրվածքները Շահումյանի խոսքով ասած՝ «արատ են բերում մամուլի կոչմանը և միմիայն նպաստում են նրա բարբերի անկմանը»:

Ընթերցողին եմ թողնում դատել, թե ինչ տարբերություն կա աղբյուրնե-րի մուսավաթական բարբարոս կեղծարարների և իրեն «արվեստագետ» հա-մարող ու նրա նման մտածող տնարույս գերեզման ու հուշածան քանդող «գովառողների» միջև:

Բայց նաև հարց է առաջանում: Արդյոք պատահական զուգադիպու-թյուն է, որ մեր ընտանի կեղծարարները հեռուստատեսությամբ և մամու-լում հանդես են գալիս Շահումյանին վարկաբեկելու մոլուցքով, թե՞ դա աղբ-բեղանցի կեղծարարների հետ համաձայնեցված գործողությունների արդ-յունք է:

Ինչպես ասում է Հորացիոսը, ամեն ինչին կա սահման, ամեն ինչ ունի իր չափը: Ահա այս պահանջով դեկավարվելով և խորը հարգանք ունենալով ըն-

Թերցողների նկատմամբ, կամենում եմ պատասխանել սովետական քաղաքակրթության դեմ վերահիշյալ բանասիրության դոկտորի և նրա մյուս նմանների Հարձակումներին, որոնք պարզապես կորցրել են չափի զգացումը: Նրանք իրենց մաղձը թափելով Շահումյանի վրա, այդ հանգամանքն օգտագործում են վարկաբեկելու սովետական քաղաքակրթությունը, սոցիալիզմը:

Իմ նպատակի մեջ չի մտնում այստեղ դիմել նրանց խղճին, քանի որ դա նրանք երբեք չեն ունեցել և ընդարձակորեն պատասխանել, թե ի՞նչ էր իրենից ներկայացնում սովետական քաղաքակրթությունը, ինչպիսի՞ն է այսօր նրա նշանակությունը, սովետական քաղաքակրթությունը ընդմիջող մնացել է անցյալում, թե՞ նրան է պատկանում ապագան:

Գիտեմ, որ այս Հարցերը շատերին է հուզում, ինչպես նրա կողմնակիցներին, այնպես էլ նրա հակառակորդներին:

Մեր կյանքում տեղի է ունեցել ոչ միայն Հասարակական-քաղաքական կացութաձևի փոփոխություն, այլ կատարվել է Հասարակության նոր, մեծ պատակում: Սկսած 1990-ական թվականներից մեր իրականության մեջ խառնվել է ամեն ինչ: Ստորն ու բարձրը փոխել են իրենց տեղերը: Երկրի ճակատագրի համար խոր, գաղափարական, հույժ կարևոր և սկզբունքային դատողությունների փոխարեն ասպարեզում թեյադրողի դիրքի են ձգտում ստորությունն ու գաղափարախառնությունը:

Հունից հանված ընթերցող Հանրությունը դադարել է Հասկանալ, որտեղ է կեղծիքը և որտեղ է ճշմարտությունը, այդ թվում և պատմական ճշմարտությունը, սկսվել է ամեն ինչի այլանդակ սևացումը, և դա ընկալվում է որպես նորմ, ընդհանուր կանոն, ընդօրինակման համար որպես նմուշ և որպես ձեռքբերում, նվաճում:

Վերը հիշատակված հակառակորդները համատրոբեն երիտասարդ սերնդին սովետական ժամանակաշրջանը ներկայացնում են Համատարած ողբերգություն, այնտեղից հանել են այն ամենը, ինչը մարդկանց ուրախացնում էր, ինչով մարդիկ իրավացիորեն հպարտանում էին:

Այստեղ ուզում եմ հիշել ուսու նշանավոր փիլիսոփա, այլախոհ Ալեքսանդր Զինովևին, որը սովետական ժամանակաշրջանը անվանել է ուսու և մյուս ժողովուրդների պատմության գագաթը:

Այսօրվա երիտասարդները պետք է իմանան ճշմարտությունը սովետական քաղաքակրթության մասին, նրա ունիկալ նվաճումները ուշադրությամբ ուսումնասիրեն և ապագայում լիազափորեն ստեղծագործաբար օգտագործեն:

Մեր աչքի առջև աշխարհն արմատապես փոխվում է, խորսակվում են հին պատկերացումները, իրականացվում է ՆԱՏՕ-ի ազդեցիվ քաղաքակրթությունը, ԱՄՆ-ի ձեռքբերով զլորալիզացիան փորձում է ամբողջ երկրագնդին թեյադրել իր կամքը:

Այսպիսի պայմաններում աշխարհում նշանակալիորեն մեծանում է Հետաքրքրությունը սովետական քաղաքակրթության նկատմամբ: Դա կապված է աշխարհն ընդգրկած ճգնաժամի հետ, որի փոսում հայտնվել է ավելի քան 200 երկիր:

Համաշխարհային ճգնաժամից դուրս գալու միջոցների որոնման անխուսափելիորեն ուշադրություն է դարձնում սովետական փորձի վրա:

Նույնիսկ ԱՄՆ-ի նախագահ Օբաման իր նախընտրական ծրագրում Հարկադրված էր խոսել կյանքի առավել չափով մեծ սոցիալիզացիայի մասին, կապիտալը սանձելու գործում պետության դերի ուժեղացման մասին:

Խոր պրոբլեմների առջև է հայտնվել թվացյալ բարեկեցիկ Եվրոպան: Երբ գրվում էին այս տողերը, 2012 թ. սեպտեմբերի 8-ին արմատական և քաղաքական-տնտեսական վերափոխումների նախապատրաստմանը մասնակցած, Ֆինլանդիայի ասպարեզում համաշխարհային առաջատար մասնագետներից մեկը՝ Չեխիայի պրեզիդենտ Վլադլավ Կլաուսը, Եվրոպայում կոմունիստական ռեֆորմների անկումից հետո հիասթափված, գտնում է, որ այժմ Եվրոպան վերադառնում է կառավարման սոցիալիստական մեթոդին:

Չեխիայի նախագահն ընդգծել է, որ «այժմ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում հեղափոխական փոփոխություններից և կոմունիզմի անկումից հետո ամբողջ Արևմտյան Եվրոպան վերադառնում է սոցիալիզմին և Հասարակության պետական կառավարմանը»:

Կապիտալիզմի գոյություն պատմության 150 տարվա ընթացքում, մասնագետների Հաշվարկով, տեղի է ունեցել 12 խոշոր ճգնաժամ՝ ընդգրկելով աշխարհի մեծագույն մասը:

20-րդ դարի ընթացքում տեղի ունեցած երկու Համակարգային ճգնաժամերն ավարտվեցին երկու համաշխարհային պատերազմով: Եվ Սովետական Միությունը աշխարհը դուրս բերեց այդ ճգնաժամից, մարդկությունը փրկեց կրափից:

Սովետական քաղաքակրթությունն ուներ իր բաղկացուցիչ մասը՝ աներևակայելի Հարուստ և ինքնատիպ մշակույթը:

Իմ կարծիքով սովետական ժամանակաշրջանի գլխավոր առանձնահատկությունը մարդու ներքին զգացողությունն էր: Մարդն ուներ վստահու-

Թյուն վաղվա օրվա համար: Որովհետև նա գիտեր, որ պետությունը նրան կրթություն կտա, կապահովի աշխատանքով ու բնակարանով, կբուժի:

Ահա այս փաստությունը վաղվա օրվա նկատմամբ, հրե մարդը զգում էր իր կյանքի իրականորեն տեղը՝ ամենից արժեքավորն է:

Սովետական տարիներին, ինչպես բոլորը, ես նույնպես չրջել եմ Սովետական Միության շատ վայրերով, հանդիպել եմ տարբեր ազգերի մարդկանց: Եվ իմ մոտ նույնիսկ միտք չի առաջացել, որ կարող է ինձ հետ ինչ-որ վատ բան կատարվել և այլն: Մենք այն ժամանակ թերազնահատուկ էինք, թե ինչ ժամանակ էինք սպրտում: Իսկապես ճիշտ էր ասվում այն ժամանակվա երգերից մեկում. «Ես եղևում եմ իմ տանից, բայց կարծես մտնում եմ իմ տունը»:

«Սովետական մարդ», իսկապես բարձր էր հնչում: Հիշում եմ Հայաստան այցելած ցեղյոնցի մի պատմաբանի խոսքերը հետևյալի մասին. «Սովետական Միությունը, ասում էր նա, իմ երկրին ցույց է տալիս օգնություն, որը շատ անգամ գերում է ամերիկացիների և անգլիացիների ցույց տված օգնությունից: Բայց դրա փոխարեն ինչպիսի մարդիկ էին ՄԱՀՄ-ից մեզ մոտ գալիս, ինչպիսի հարաբերություններ: Ահա դա է, որ մենք չենք ստանում որևէ մեկ այլ երկրից»:

1970-ական թվականների վերջերին Սովետական Միություն էր եկել հանրահայտ բուժքրոնոստիկ Մուհամեդ Ալին: Վերադառնալով ԱՄՆ, նա գրել է. «Ես մի քիչ նյարդանում էի, երբ վայրէջք կատարեցի Մոսկվայում: Ես մտածում էի, որ կտեսնեմ ճարձված մի երկիր՝ մտայն մարդկանց ամբողջ մտածող բուրյոնների և իմ սենյակը լսող հասուկ ծառայությունների գործակալների:

Բայց ես տեսա հարյուր ազգությունների մի երկիր, որոնք սպրտում էին ներդաշնակորեն: Ես տեսա միայն մեկ ուստիկանի: Ոչ մի գեներ: Ոչ մի հանցարգործություն, ոչ մի պոռնիկ, ոչ մի հոմոսեքսուալիստ»:

Սովետական քաղաքակրթության նշաններից մեկն էլ այն էր, որ քաղաքացիները հուսալիորեն պաշտպանված էին փաստաբար անդամաթերթից: Այժմ վախով ենք գնում միս, կաթ, միրգ ու բանջարեղեն, քանի որ չգիտենք, թե դրանք ինչ են պարունակում: Մենք հիմա չգիտենք, թե ինչ ենք ուտում:

Իմ համոզմամբ այսօր, երբ կոնյուկտուրայից ելնելով, անձնական մղումներով դեկավարվող քաղաքագետներն ու հասարակագետները, նրանց հետևող պատմաբաններն ու այլք այնպես են կեղծում և սևացնում Հայաստանի սովետական ժամանակաշրջանը, զանազան միջոցներով երիտասարդ ընթերցողին համոզելով, թե նրանում որևէ լավ բան չի եղել: Նրանք ամեն ինչ անում են, որպեսզի նույնիսկ փորձ չանեն մտածել, թե Սովետական Հայաստանում եղել է ինչ-որ լավ բան:

Իրենց նպատակին վերջնականապես հասնելու համար, բոլորիս հայտնի միջոցներով առաջացած վերնախառն ու նրա հյու կամակատար քաղաքագետներն ու հասարակագետ-պատմաբանները սովետական ժամանակաշրջանը վարկաբեկելու հետ միասին հանրությունը ոչինչ չեն կարողանում մատուցել՝ բացի կեղծ ապրանքներով լցված խանութներով սպացուցել, թե Հայաստանում կապիտալիստական վերափոխումներն այլընտրանք չունեն:

Եվ այդ ամենն արվում է նրա համար, որպեսզի երիտասարդության մտքով չանցնի, թե սովետական ժամանակաշրջանում եղել են դրական պահեր: Վերջապես ժամանակն է վերջ տալ մեր պատմությունն ամերիկացիների աչքերով մատուցելուն: Այնտեղ այնքան սուտ կա, որից ազատվելը դարձել է հրամայական պահանջ:

Մինչդեռ սովետական ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության մասն է, իր օրինական տեղն ունի հայ ժողովրդի պատմության մեջ:

Ես պատկերացնում եմ, թե իմ մտքերն ինչպես են ընդունելու այն հաստիքային քաղաքագետներն ու հասարակագետ-պատմաբանները, որոնք մասնագիտացել են ոչ վաղ անցյալի Հայաստանի բացասական կերպարը ստեղծելու մեջ և սովետական ժամանակաշրջանը սևացնելուց բացի, ուրիշ ոչինչ արժեքավոր ու մնայուն գործ չեն ստեղծել:

Կանխազգալով նրանց բարձրացրած աղմուկը, ուզում եմ ասվածն ամփոփելով, նրանց պատասխանել, հիշելով մեր ժամանակի նշանավոր մտածող ու փիլիսոփա Ալեքսանդր Չինովևի հետևյալ խոսքերը: Երբ նրան հարցնում են. «Դուք պաշտպանո՞ւմ եք կոմունիզմը», նա պատասխանում է. «Ոչ, ես պաշտպանում եմ ճշմարտությունը կոմունիզմի մասին»:

Բավարարվեմ ասվածով և ընդգծեմ, որ բոլորովին չպետք է զարմանալ, որ Հայաստանի պայմաններում, մեր ընտանի կեղծարարները ոչ միայն անվանարկում են Ստեփան Շահումյանին, այլև իրենց սպազորված աշխատություններում ու հրապարակային ելույթներում (Հասուկապես գիտաժողովներում) ուղղակի նենգափոխում են Սովետական Հայաստանի պատմությունը, ծաղրի են ենթարկում տասնյակ սերունդների աշխատանքով ստեղծված արժեքները:

Այդ զարմանալու փոխարեն պետք է զայրանալ: Եվ եթե Ազդբեղանում են թույլ տրվում այդպիսի կեղծիքներ, ապա ինչ անում տալ այն փաստին, որ Շահումյանին անվանարկելու մեջ մեր ընտանի կեղծարարները ձայնակցում են աղբբեղանական կեղծարարներին:

Ստ. Շահումյանի սպազայում էլ անվանարկելու փորձեր կլինեն: Բոլոր

ներկա և ապագա փորձերի հեղինակներին կարծես նկատի ուներ Ստ. Շահումյանը, ասելով հետևյալը, «Թուղթը, ճիշտ է, չի բողբոջում ոչ մի բանի դեմ, ամեն ինչ տանում է, բայց պարտններ, հարկավոր է մի քիչ ամաչել»:

Այո, Ստ. Շահումյանը պաշտպանություն կարիք չուներ: Բայց մենք մեր պարտքն ենք համարում բռնել խմայլուպների, խոսիղուրիների և նրանց ձայնակցող ընտանի կեղծարարների ձեռքը և թույլ չտալ կեղծել իրողությունները, թյուրիմացություն մեջ գցել անտեղյակ ընթերցողին: Նրանց թխած «առասպելների» ետևից երևում են անգլիական գաղութարարների և նրանց կամակատարներ վրաց մենչևիկների և ադրբեջանական մուսավաթականների պարագլուխների երկար ականջները:

Եթե սովետական տարիներին ադրբեջանցի հեղինակները հայ ժողովրդի պատմության առանձին հարցերի վերաբերյալ իրենց մեկնաբանությունները տալիս էին բավականաչափ զգուշությամբ, այն ներկայացնում էին ինտերնացիոնալիզմի փաթեթով, ապա այժմ չկա այդ զսպարանակեր և նրանք բոլոր միջոցներով հարձակվում են Հայաստանի ու հայ ժողովրդի պատմության դեմ, կեղծելով ամբողջ ճշմարտությունը:

Ադրբեջանցի կեղծարարները իրենց հարվածի թիրախը հատկապես ուղղել են Սովետական Հայաստանի ամբողջ պատմության դեմ՝ այն աղ ու ձախ կեղծելով: Եվ դա զարմանալի չէ: Ադրբեջանում պետական մակարդակով տարվում է հզոր քարոզչական արշավանք հայ ժողովրդի պատմությունը կեղծելու համար:

Չարմանալին այն է, որ Հայաստանում, մեր ընտանի հեղինակներից ոմանք կարծես մրցության մեջ են մտել ադրբեջանցի կեղծարարների հետ և ամեն միջոցով կեղծում են Սովետական Հայաստանի պատմությունը, սևացնում այն ու բացի ԳՈՒՎԱԳ-ից որևէ լավ բան չեն տեսնում:

Հարկ չեմ համարում այստեղ հիշատակել ընտանի այդ հեղինակներին, բայց խնդրեմ, թող ընթերցողը ծանոթանա վերջին երկու տասնամյակի ընթացքում հրատարակված աշխատություններին, ապա դրանց մեծ մասի բովանդակությունից նրա համար պարզ կլինի կեղծիքի անչափելի սահմանները:

Այդ ընտանի ժխտողների մեջ նույնիսկ կան առանձին հեղինակներ, որոնք կեղծիքն հասցրել են զավեշտի, պնդելով, թե Սովետական Հայաստանը պետություն չի եղել: Այս կեղծարարները գոնե չեն ամաչում այդ տարիներին իրենց ստացած դիպլոմների վրա եղած Սովետական Հայաստանի պետական կնիքի մակագրությունից:

Այդ կեղծարարները, որոնք ետ չեն մնում ադրբեջանցիներից, բարոյա-

կան առումով այնքան փոքրհոգի ու սաղը են, որ իրենց հետ չհամաձայնվողների հետ գաղափարախոսական տարաձայնությունները իջեցնում են անձնական հարաբերությունների մակարդակին: Եվ դժվար չէ պատկերացնել դրա հետևանքները, մասնավոր, երբ այդպիսի անձանց վատահավում է ինչ-որ պաշտոն:

Ստեփան Շահումյանի մասին շատ գրքեր ու մենագրություններ են գրվել ու հրատարակվել: Բայց դժվար է ասել, որ արդեն սպառիչ կերպով բացահայտվել և ուսումնասիրվել է նրա գրական-հրատարակախոսական ամբողջ գործունեությունը: Դրանում կհամոզվի ընթերցողը, նկատի ունենալով սույն աշխատության մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող Շահումյանի մի շարք ելույթ և հոդված:

Համոզված եմ, որ ապագայում էլ անաչառ ուսումնասիրողները ժամանակին Կովկասում լույս տեսած հայերեն և ռուսերեն մասուկում կգտնեն տարբեր ծածկանուններով հրատարակված Շահումյանի հոդվածները:

Սույն աշխատությունը ձեռնարկելով, ես իմ առջև նպատակ եմ դրել դեկավալի պատմականության ակզրուներով, և հենվելով բացառապես օբյեկտիվ տվյալների ու փաստերի վրա, լուսաբանել Շահումյանի կյանքի պատմությունը՝ մանկությունն ու պատանեկությունը, ուսման տարիները, հեղափոխության մեջ նրա առաջին քայլերը, քաղաքական հայացքները, Շահումյանի գրագրությունը, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նրա եռանդուն գործունեությունն Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամությունն ամրապնդելու, սովետական իշխանության հաղթանակի համար:

Եվ հիմա ընթերցողի դատին ներկայացնելով սույն աշխատությունը, հույս ունեմ, որ նա կհամոզվի, թե ադրբեջանցի պատմահեն հեղինակներն ու նրանց ձայնակցող ընտանի կեղծարարները ինչքան խորն են ընկել նացիոնալիստական ճահիճը, փորձելով այնտեղ տանել նաև ռուս ընթերցողին:

Միայն ափսոսում եմ, որ այս աշխատությունը ռուսերեն հրատարակելու հնարավորություն չուներ, և այդ պատճառով այդ կեղծարարներին տրվող պատասխանը լիարժեք չի լինելու:

Իսկ ինչ վերաբերում է ընթերցողի ուշադրությանը ներկայացվող իմ այս աշխատությանը, ապա վստահաբար ուզում եմ կրկնել ժամ ժակ Ռուսոյի հետևյալ խոսքերը. «Իմ գործն է ասել ճշմարտությունը և ոչ թե տախիկ հարվատայ նրանում ասվածը»:

Կարևոր եմ համարում ասել նաև, որ ձգտել եմ աշխատության մեջ շոք

ափված բոլոր իրադարձություններին, դեպքերին և այլն, նայել այն ժամանակվա մարդկանց աչքերով, ինչը, որ կարծում եմ օգնում է սովյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները հասկանալուն և գնահատելուն:

Վերջապես, հարկ եմ համարում ընդգծել, որ ժողովրդի մոտ ուժեղ է հետաքրքրությունը մեր արմատների, մեր անցյալի նկատմամբ: Բայց անտարբեր մարդիկ էլ քիչ չեն, և ես հույս ունեմ իմ այս գրքով նրանց բերել դեպի պատմության, անաչառ պատմության կողմը:


Աշխատությունը գրելու ընթացքում ինձ աջակցություն են ցույց տվել Հայաստանի մշակութային փաստագրավոր գործիչ Հրանտ Ղազարյանը և Արտեմ Մուրադյանը, որոնց հայտնում եմ իմ շնորհակալությունը:

Սույն աշխատությունը գրելիս լայնորեն օգտվել եմ Հայաստանի, Մոսկվայի, Վրաստանի, Ադրբեջանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի տարբեր արխիվներում պահվող նյութերից, որոնք առնչվում են Շահումյանի կյանքին ու գործունեությանը, ինչպես նաև նրա մասին հրատարակված գրքերից, մենագրություններից, հուշերի ժողովածուներից:

ՎԱԿԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԳԼՈՒԽ 1 ՀԱՄԵՍ ԸՆՏԱՆԻՔԻ ՁԱՎԱԿԸ

Ստեփան Գևորգի Շահումյանը ծնվել է 1878 թ. հոկտեմբերի 1(13)-ին Թիֆլիսում, սովորական մի համեստ հայ մարդու ընտանիքում: Նրա հայրը Գևորգ Ղազարի Շահումովն էր (Շահումյան):



Գևորգ Ղազարի Ըահույան (Ըահուով)

Շահումովները երեք եղբայրներ էին: Ավագ եղբայրները, որոնք զբաղվում էին առևտրով, զգացին, որ Գևորգն առևտուր անելու ընդունակ չէ և իրենց փոքր եղբորը գործից վճարում են: Իսկ Գևորգն այդ ժամանակ ամուսնացած էր, ուներ երկու երեխա՝ Նատաչան և Ստեփանը: Եղբայրներից հեռանալով նա սկսում է զբաղվել հանձնարկատարությամբ, կատարելով ցածր վարձատրվող հանձնարարություններ: Քիչ էր վատաբերում և ընտանիքը հաճախ կարիքի մեջ էր հայտնվում: Միայն եռանդուն ու տնտեսվար կնոջ՝ Եղիսաբեթի ջնդհիվ, երեխաները՝ Նատաչան, Ստեփանը, Հայկանուշը և Նիկողայը մեծացան առանց զգալու աղքատության դաստիարակությունը: Այդ համեստ ընտանիքում երեխաները դաստիարակվում էին աշխատասիրության, ազնվության, համեստության ու արդարամտության ոգով:

Վեց տարեկան հասակում Ստեփանը հարևանների մյուս երեխաների հետ ընդգրկվում է նշանավոր հայագետ Արեքսանդր Երիցյանի տանը կազմակերպած մանկապարտեզում, որը ստեղծել էր նրա քեռի Սալոմեն՝ Սոնյա Միրզոյանը: Վերհիշելով այդ օրերի մասին Ա. Երիցյանի որդին՝ Գարեգինը գրել է, որ Շահումյանը դրսևորել է «հասկանալու մեծ ընդունակություն», որ



Շահումյանի մայրը՝
Եղիսաբեթը

նա «Համառությունը ու համբերատարությունը հասնում էր ցանկացած արդյունքի»: (Ք. Երիցյան, Հուշեր Ստեփան Շահումյանի կյանքից, Երևան, 1966, էջ 17):

Մանկապարտեզի ասններից էր նաև Թիֆլիսի հայտնի վաճառականներից ինտարովի որդին՝ Ստեփանը, որն աչքի էր ընկնում իր ծուլությունը: Վաճառականի կինը նկատելով Ստեփան Շահումյանի ուշիմությունը, խելամուծությունը և ամեն ինչ անում է, որպեսզի նա իր երես ատած ու ծուլ տղայի հետ ընկերություն աներ և օգներ նրան:

ՎԱՃԱՌԱԿԱՆ ԽԻՏԱՐՈՎԻ ՀԱՄԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Մանկապարտեզից հետո արդեն 9 տարեկան դարձած Ստեփանն ընդունվում է Օրբելյանների դիշերօթիկ դպրոցը, հետո սովորում է Քաթմանյանների մասնավոր դպրոցում: Շահումյանի հետ սովորում էր նաև հայտնի վաճառական ինտարովի տղան՝ այրպես էլ չդրակորելով ունակություն ուսման մեջ:

Հենց այս հանգամանքն էլ հաշվի առնելով վաճառականն ավելի ու ավելի էր հակվում այն բանին, որ իր տղան չարունակեր Ստեփանի հետ ընկերություն անել, որը ջանք չէր խնայում ինտարովի տղային օգնելու համար: Սակայն արդյունքը մխիթարական չէր: Հենց այս պատճառով էլ Շահումյանը համուն ընկերոջ, մի տարի կորցնում է և չի ընդունվում դպրոց:

Վաճառական ինտարովը չէր հրաժարվում իր տղային ուսման տարւմտադրությունից: Եվ նա ի դեմս Շահումյանի, տեսնում էր մեկին, որը կարող էր ոչ միայն օգնել իր տղային սովորելու գործում, այլև չարունակել նրա հետ ընկերությունը:

Ինչպես արդեն վերը նշվել է, Շահումյանների ընտանիքը շարունակում էր մնալ ծանր նյութական վիճակի մեջ: Ինտարովը դրանից էլ օգտվելով, խոստանում է Շահումյանի կրթության համար վճարել, պայմանով, եթե նա համաձայնվի համատեղ սովորել իր տղայի հետ և օգնի նրան:

Շահումյանի ծնողները համաձայնում են և արդյունքում Ստեփան Շահումյանը 1889 թ. ընդունվում է Թիֆլիսի ռեալական ուսումնարանի նախապատրաստական դասարան, չարունակելով պարտապես ինտարովի տղայի հետ:



Ստ.Շահումյանը Թիֆլիսի
ռեալական ուսումնարանի
աշակերտ

ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԶԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Շահումյանը 1890 թ. հոկտեմբերին հաջողությամբ փոխադրվում է հարյոզ դասարան, արժանանալով գոխասնագրի: (ՀՀ ԱԱ, ֆ. 4007, ց. 1, գ. 6, թ. 1):

Ուսումնարանում Շահումյանը սիրով օգնում էր իր դասընկերներին նյութը յուրացնելու, դասերը պարսպելու գործում: Աշակերտներից շատերն անմիջապես ընկալում էին Շահումյանի բացատրությունը և հասցնում էին առաջադիմել: Բայց ինտարովի տղան նրանց նման չէր: Նա այնքան անընդունակ էր, որ չի կարողանում փոխադրվել հաջորդ դասարան:

Այս ժամանակ էլ ինտարովը դրսևորում է իր բնավորությունը: Նկատի ունենալով Շահումյանների ընտանիքի նյութական ծանր վիճակը, ինտարովը Ստեփան Շահումյանի առջև դնում է պահանջ՝ մնալ նույն դասարանում, որպեսզի չարունակի իր տղայի հետ միասին սովորել, այլապես կրադարեցնի նյութական օգնությունը:

Իսկ Ստեփան Շահումյանն արդեն 12 տարեկան էր և գիտակցում էր, թե վաճառականն օգտվելով իր դիրքից, ինչպես էր վիրավորում իր ծնողների արժանապատիվությունը: Եվ Ստեփանը հրաժարվում է կատարել ինտարովի պահանջը:

ՎԼԵՋՍԱՆԴՐ ԵՐԻՑՅԱՆԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ասվել է վերը, Ստեփանն ընկերություն էր անում նաև նշանավոր պատմաբան-հնագետ Ալեքսանդր Երիցյանի որդու հետ: Որդուց տեղեկանալով Ստեփանի նկատմամբ խնամարտյալի անմարդկային վերաբերմունքի մասին, Ա. Երիցյանը դիմում է Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձու Կ. Յանկովսկուն, խնդրելով օգնել, որպեսզի Շահումյանը կարողանար շարունակել սովորելը, ազատվեր ուսման վարձից, որը տարեկան կազմում էր 70 ռուբլի և անվճար ստանար համազգեստ, դասագրքեր և գրենական պիտույքներ:

Կ. Յանկովսկին հարգանքով էր վերաբերում Ալեքսանդր Երիցյանին, նրա միջոցով ծանոթ էր հայ ժողովրդի պատմությունը, միտաին կազմել և խմբագրել էին «Կովկասի տեղանքի և ցեղերի ուսումնասիրությունների մասին ժողովածուն»:

Ընդատաջելով Ա. Երիցյանի խնդրանքին, Յանկովսկին կարգադրում է ռեալական ուսումնարանի խստապահանջ և պետանդ տնօրեն Տիրյուտինին՝ Շահումյանին, որպես բացատրություն, ազատել ուսման վարձից և անվճար տրամադրել համազգեստ, դասագրքեր ու գրենական պիտույքներ:

Ռեալական ուսումնարանում Ստ. Շահումյանը առաջած գիտելիքների հետ միտաին ինքնուրույն ուսումնասիրում է համաշխարհային դասականներ Շեքսպիրի, Գյոթեի, Շիլլերի, Պուշկինի, Տուրգենևի, ինչպես նաև հայ նշանավոր գրողներ Խաչատուր Աբովյանի, Բաբեջու, Գաբրիել Սունդուկյանի, Ալեքսանդր Շիրվանզադեի, Հովհաննես Թումանյանի և այլոց գործերը:

Ստ. Շահումյանն առանձնակի հետաքրքրություն էր կարողում ուսա նշանավոր հերալիտիական դեմոկրատներ Գերցենի, Բելինսկու, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու, ինչպես նաև Միքայել Նալբանդյանի երկերը: Այս հեղինակների գործերին ծանոթանալը, դրանց միջոցով կյանքի առաջադրած շատ խնդիրների պատասխան որոնելը, կարևոր դեր են խաղում Ստ. Շահումյանի հայացքների ձևավորման համար:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Պատանի Շահումյանի համար կարևոր նշանակություն է ունեցել դեռևս 1892 թ. Մ. Գորկու և Ֆ. Շալապայինի հետ ծանոթանալը: Ռուսական մշակույթի այդ երևելի գործիչները չընկալվում էին Ազրիկովսկու: Գորկուն և Թիֆլիսում կազմակերպել են «Բորիս Գորունովի» բեմադրությունը: Այստեղ ուշագրավն այն է, որ նրանք նկատում են գիմնասփայի լավ սովորող սրտանի Շահումյանին և նրան մասնակից են դարձնում ներկայացման փորձերին, նրան վստահելով Բորիս Գորունովի գերակատարումը:

Տեսականորեն Գորկու և Շալապայինի հետ շփվելը պատանի Շահումյանի համար նույնպես անհետևանք չի մնում: Այս մտաին ափսիս հանդամանորեն կիսույթի, երբ անդրադարձ կլինի նրա գեղագիտական հայացքների ձևավորման մասին:

Պետք է ասել, որ այս ամենը մեծապես նպաստել են Ստ. Շահումյանի սոցիալական հասունությունը: Ասածս «սոցիալական հասունությունը»



Ստ.Շահումյանը՝ Թիֆլիսի ռեալական ուսումնարանի ավարտական դասարանում

չպետք է նույնացնել «հասուն տարիքի» հետ, որովհետև սոցիալական հասունությունն անհատի զարգացման ընդհանրացված բնութագիրն է, իսկ հասուն տարիքը վերաբերում է կյանքի որոշակի փուլին: Ուստի ամեն մի հասուն մարդ չի կարող սոցիալական խնամով լինել հասուն:

Սոցիալական հասունությունը ընտրողում է անհատի զարգացման աստիճանը, նրա կենսափորձը: Սոցիալական հասունությունն ինքն իրեն չի գալիս, այլ ձևավորվում է վաղ տարիքից: Ինչպես ասում են, պատանեկությունը վճռական ավանդ ունի այդ գործում: Իսկ Ստ. Շահումյանի դեպքում այդ ավանդը կախված է եղել ընտանիքից, դպրոցից և ամենից առաջ հենց իրենից:

Սոցիալական Հասունությունը Ստ. Շահումյանի կայացման գործում կարևոր փուլ է: Ընդ որում՝ դա կապված չի եղել տարիքի հետ: Եվ առանց վարանելու, կարող եմ ընդգծել, որ Ստ. Շահումյանն այն հանճարեղ անհատականություններից է, որ սոցիալական Հասունության բարձրագույն աստիճանին է հասել շատ երիտասարդ տարիքում: Նրա մոտ ձևավորվում է ազգային-ազատագրական շարժման նկատմամբ կիրառվող բունությունների դեմ պայքարելու, ազատության հասնելու ձգտումը:

ՄԻ ՊԱՏԿԵՐ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԱՌՕՐՅԱՅԻՑ

1896 թ. սեպտեմբերի 16-ին Ե. և Հ. Տեր-Գրիգորյաններին ուղարկած նամակում Շահումյանն անդրադարձնում է ուսումնարանում տիրող իրավիճակին: Նա նկարագրում է սեպտեմբերի 9-ին ուսումնարանի բակում կազմակերպված «փառավոր մաղթանքի» մասին, որին մասնակցել են «կարգին չարված, Հայաստանում ուղղած դեպի եկեղեցական անոթները» մոտ 500 աշակերտների հետ միասին նաև ուսուցիչները:

Շահումյանի նկարագրությունն այնքան հետաքրքիր է (նաև այժմեական, քանի որ նրա նկարագրածն աստիճանաբար մտնում է այսօրվա դարոց), որ անհրաժեշտ եմ համարում դա ամբողջությամբ ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

«Օղբ,- գրել է նա,- թնդում էր ահագին երգեցիկ խմբի անուշ մեղեդիներով. գեղեցիկ զգեստավորված Հաստափոր քահանան, գլուխը խոնարհած աղոթում էր աստծուն և դրա հետ բոլոր ժողովականները, ինչպես մի հոգի, խոնարհում էին իրենց գլուխները, անընդհատ խաչակնքում և քաղցր աղոթքներ էին մրմնջում, իհարկե, իրենք էլ չհասկանալով, թե ի՞նչ են ուզում... Ո՞ւմ են խնդրում... Եվ ի՞նչ են խնդրում: Վերջին շարքերից մեկում կանգնած՝ ես նայում էի այդ տեսարանին և սիրտս լցվում էր ցավով դեպի այդ խեղճ ողորմյիկները... Եվ այդ այն մարդիկն էին, որոնք կուսպաշտական դարերի պատմությունը հիշելիս զարմանքով ասում են. «Մարդիկ իրենց ձեռքով արձաններ, կուռքեր էին կանգնեցնում, զարդարում էին նոցա ոսկով ու արծաթով և հետո աղոթում, երկրպագում էին նոցա... Որքան տգետ են եղել այդ մարդիկ», բացականշում էին նրանք նրանց ցավելով»:

«... Այ խեղճ ողորմյիկներ,- գրում է Շահումյանը,- մտածում էի ես. մի րոպե էլ ձեր մասին մտածեցեք ար, ինչո՞վ եք զանազանվում այդ կուսպաշտներից. եթե նրանք իրենց ձեռքերով են իրենց Համար արձաններ կանգնեցրել, դուք՝ ձեր երևակայությամբ, բայց արձանը դարձյալ արձան է մնում, ի՞

նի դա իրական, թե երևակայական: Եթե նրանք ոսկով ու արծաթով են զարդարել իրենց կուռքերը, դուք՝ «ամենաբարի», «ամենախմաստ», «ամենակարող», «ամենազոր» և այլն այս տեսակ խոսքերով, բայց «զարդարելը» դարձյալ նույն Հասակացողությունն է մնում... Եթե նրանք երկրպագել են տեսանելի և շոշափելի, այսինքն՝ իրականության մեջ գոյություն ունեցող մի բանի, դուք երկրպագել եք անտեսանելի և անշոշափելի, երևակայական, այսինքն՝ իրականության մեջ գոյություն չունեցող մի բանի, ավելի կարճ ասել՝ եթե նրանք երկրպագել են «ինչին», դուք երկրպագել եք «ոչինչին»... Ուրեմն ավելի ևս վատ...»:

«Առավոտները կամ ճաշերքին,- շարունակում էր Շահումյանը իր նկարագրության վերջում,- դասերից առաջ և հետո, գիտեք, որ ուսումնարանում սովորություն կա աղոթել, ահա հենց այդ ժամանակ, երբ աշակերտներից մեկը բարձրաձայն աղոթք էր ասում, իսկ մնացած 20-30 հոգի խաչակնքվում էին, ես այնքան ընկճվում էի հոգեպես, որ քիչ էր մնում ինքս էլ ոչխարի նման հետևել նրանց օրինակին. չկա այլևս այնքան հոգեկան ուժ, որ կարողանամ, գոնե այդ երեխաների առաջ, բացարձակապես դավանեմ իմ սկզբունքները, կարծես ամաչում և վախենում եմ նրանցից...»: (Մտերման Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. հինգերորդ, էջ 276-277):

«ԾԻԱԾԱՆ» ԽՄԲԱԿԻ ՍՏԵՂՈՒՄԸ

1894 թ. Շահումյանը Երիցյանների տանը ծանոթանում է 1850-ական թվականներից պահպանված «Սիրաբուժար ժողով» կոչված երիտասարդական խմբակի արձանագրություններին: Դա հիմնադրվել էր Ա. Երիցյանի սովորելու տարիներին: Այդ խմբակը սկզբում կազմակերպվել էր որպես ինքնուսուցման խմբակ, ուր սովորում էին գրական Հայոց լեզուն և Հայ ժողովրդի պատմությունը, իսկ հետո վերածվել ինքնագործ խմբակի, որն իր առջև նպատակ էր դրել Թիֆլիսի Հայերի մեջ Հայոց լեզու տարածել և վրացերենի փոխարեն դարձնել խոսակցական լեզու:

Այդ արձանագրություններին ծանոթանալը Շահումյանի մոտ միտք է առաջացնում կազմակերպել այդպիսի մի խմբակ, ուր կընդգրկվեին Թիֆլիսի միջնակարգ ուսումնական Հաստատությունների Հայ աշակերտները:

1894 թ. ռեալական ուսումնարանում Շահումյանի նախաձեռնությամբ ստեղծվում է «Միածան» աշակերտական անլեզալ խմբակը: Այստեղից էլ սկիզբ է առնում Ստ. Շահումյանի հեղափոխական աշխարհայացքի ձևավորումը:

ԱՀա, թե ինչ է գրել նա 1896 թ. սեպտեմբերի 14-ին Ե. և Հ. Տեր-Գրիգորյաններին ուղարկած նամակում. «Այսօր տոն է սիրելիներս, և ես ամբողջ օրն ազատ եմ դասարանական զգվելի պարապմունքներից: Ես... այսօրվանից սկսում եմ «գործել» իմ աշակերտական համեստ ասպարեզում»:

«Մինչև այժմ,- շարունակում է Շահումյանը,- կյանքս բավականին չոր և տաղտկալի է եղել, որովհետև... նա չի համեմվել կենդանի գործունեությանը, որը կատարյալ անհրաժեշտություն է դարձել ինձ համար: Այս երկու օրը ես արդեն պատրաստություն եմ տեսնում իմ սիրած «աշակերտական» գործը սկսելու և միայն այդ պատրաստությունն ահագին կենդանություն է ձգել իմ մեջ»: (Մտերևան Շահումյան, նույն տեղը, Հ. Հինգերորդ, էջ 275):

Շահումյանի նախաձեռնությունները հրավիրվում է կազմակերպչական ժողով, որտեղ էլ որոշվում է խմբակը կոչել «Միածան»: Խմբակի ղեկավար է ընտրվում Շահումյանը: Նրա առաջարկությանը որոշվում է նաև, որ խմբակի պարապմունքները պետք է տեղի ունենային միայն հայոց լեզվով: Հենց առաջին հանդիպման ժամանակ նա հրաժարվում է ստորագրել «Շահումով»: Այդ ժամանակից ի վեր նա ստորագրում է «Շահումյան»: Խմբակի բոլոր անդամները հետևում են իրենց պատանի առաջնորդի օրինակին:

«Միածան» խմբակում հայոց լեզվով պարապմունքներ կազմակերպելու հանգամանքը հատկապես կարևոր է հետևյալ նկատառումով:

1896 թ. ցարական կառավարության որոշմամբ հայկական այն դպրոցները, որոնք չէին ցանկանում անցնել պետության տնօրինության տակ, փակվեցին: Դրան հետևեց հաջորդ պահանջը՝ բացի կրոնից և հայոց լեզվից, բոլոր դպրոցներում դասավանդումը տարվելու էր ուսուցիչ լեզվով: Այս պահանջը ևս չկատարվեց: Արդյունքում Կովկասի ցարական իշխանությունները փակեցին բոլոր հայկական դպրոցները: ԱՀա, այսպիսի պայմաններում պատանի Շահումյանն իր ընկերների հետ հակադրվում են իշխանությունների որոշմանը և իրենց վրա են վերցնում հայոց լեզվի պաշտպանությունը:

Շահումյանը չի բավարարվում դրանով: Նա խմբակում կազմակերպում է հայոց լեզվի, գրականության, հայ ժողովրդի պատմության ուսումնասիրում: Խմբակի անդամները նաև հայերեն գրքեր էին տարածում հայ բնակիչների մեջ: Մայրենի լեզվի նկատմամբ Շահումյանի այսպիսի վերաբերմունքը միայն ցարական իշխանություններին հակադրվելու կեցվածք չէր: Այդպիսի վերաբերմունքը վկայում էր նրա հավատարմությունը իր ժողովրդին ու մայրենի լեզվին: Դա ազգասիրության ամենացայտուն դրսևորումն էր, որին Շահումյանը հավատարիմ մնաց իր ամբողջ կյանքում:

Այնքան շատ էին «Միածան» խմբակի անդամ դառնալու ցանկացողները, որ մի տարի անց Թիֆլիսի առանձին թաղամասերում (Հավլաբար, Կուկիա, Սուրբ Սարգիս) ստեղծվեցին խմբակի մասնաճյուղեր, որոնց ղեկավարների մեջ էին Դանուշ Շահվերդյանը, Վահան Տերյանի եղբայր Արամ Տեր-Գրիգորյանը, Ռուբեն Տեր-Ղևոնդյանը և այլք: Սկզբնական շրջանում «Միածանի» անդամների վրա որոշակի ազդեցություն ունեւր Սիմոն Զավարյանը, որը հետո դարձավ դաշնակցության երևելի գործիչներից մեկը:

Խմբակի աշխատանքով հետաքրքրվում էր Հովհ. Թումանյանը, որը հաճախ մասնակցում էր խմբակի ընդհանուր ժողովներին, տալիս էր օգտակար խորհուրդներ: Թումանյանն ընտրվել էր «Միածանի» պատվավոր անդամ:

«ՄԵՆՔ ՄԵՉ ՀԱՍԱՐ ՌԻՍՈՒՑԻՉ ԵՆՔ ՓՆՏՐՈՒՄ»

Պարբերական մամուլում, ինչպես նաև մի շարք հուշագրություններում կան տեղեկություններ «Միածան» խմբակի մասին: Դրանց հեղինակները պատմում են, որ խմբակի հավաքները մեծամասամբ հրավիրվել են գաղտնի պայմաններում: Ինչպես Շահումյանը, այնպես էլ մյուս անդամները հանդես են եկել գեկուցումներով հատկապես ազգային, մշակութային և քաղաքական հարցերի մասին, որոնց շուրջ ընթացել են բուռն քննարկումներ:

Ըստ եղած տեղեկությունների Շահումյանը իր գեկուցումները նվիրել է տիրող անարդար կարգերի քննադատությանը: Ժամանակակիցների վկայությամբ Շահումյանը համարձակորեն անդրադարձել է քաղաքական ու տնտեսական հարցերին, նշելով, որ զարգացող կապիտալիզմին սպասվում է անխուսափելի վախճան: «Նա,- ինչպես հիշում է խմբակի անդամներից մեկը,- շոշափում էր պրոլետարատի զարգացման, նրա դասակարգային շարժման ու հաղթանակի, ազգային հարցի, կրոնի, եկեղեցու վերաբերյալ խնդիրները»:

«Միածան» խմբակում Շահումյանը ներկայացնում է «Հին հայկական պետությունը, նրա պատմությունը և կենսական դասերը երիտասարդության համար» վերնազգրով իր առաջին ռեֆերատը, որին Սիմոն Զավարյանը մի շարք հետաքրքիր տեղեկություններ է ավելացնում: Այս առաջին ռեֆերատն արտագրվում և ընթերցվում է մասնաճյուղերում, տարածվում Թիֆլիսի հայերի մեջ:

Շահումյանը կազմում է ռեֆերատ նաև «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունու մասին: Ըստ եղած տեղեկությունների Շահումյանը քննադատում է Գ. Արծրունուն այն բանի համար, որ նա «հայերի ամբողջ ցատուն

ուղղել է թուրքերի դեմ», նշելով, որ «Թիֆլիսի Հայ բնակչությունն ավելի մոտ թշնամիներ ունի Հենց Թիֆլիսում»: Այս հարցի շուրջ Շահումյանը չի համաձայնվում Զավարյանի դիտողությունը և ասում, որ ինքն արտասովի է Արծրունու թաղման ժամանակ, տակայն այսօրվա երիտասարդները պետք է առաջ անցնեն և ընդգծում. «Մենք մեզ համար ուսուցիչ ենք փնտրում»: (Ի. Դուրբնակի-Մուխամե, Շահումյան, Եր. 1974, էջ 16-17):

Ի միջի այլոց հարկ է նշել, որ Շահումյանը միշտ հարգանքով է վերաբերվել Ս. Զավարյանին, նրա Հետ երկար ժամանակ փոխանակել է նամակներ, որոնք դժբախտաբար մինչև օրս մնում են անհայտ: Պահպանվել է Շահումյանի գրած անթիվակիր նամակներից մեկը, որի վրա կա Զավարյանի գրատու-մը. «Ստ. 4(12 1912 թիվ)»:

«Հարգելի Միսոն,- գրում է Շահումյանը,- խնդրում եմ մի երկտողով պատասխանեք իմ Հետևյալ հարցին, որով վաղուց է, ինչ որ ուզում եմ Զեզ դիմել, բայց միշտ Հետաձգում էի մինչև Հիմա:

Երկու տարի առաջ Ռիգա գնալուս, որ ես Զեզանից 50 ուսրի վերցրի-այդ ի՞նչ փող էր և ի՞նչ պայմանով տվիք Դուք ինձ: Ամեն անգամ Հիշելուս ինձ տանջում է այն անորոշությունը, որ կապված է այդ հարցի Հետ:

Գուցե՞ հարկավոր էր շուտով վերադարձնել: Ես Հնարավորություն չեմ ունեցել մինչև այժմ վերադարձնելու պարտքս և այս թույլիս էլ չեմ կարող վերադարձնել, բայց կուզենայի գոնե, որ որոշվեր ինձ համար այդ հարցը:

Խնդրում եմ անպատասառ պատասխանեք: Հովսեփը գրել է Զեզ, որ ես Բեռլին եմ,- կարծում եմ նամակս չի զարմացնի Զեզ:

Հորունեք ջերմ բարևներս: Զեզ հարգող Ս. Շահումյան:
Գրեցեք խնդրեմ նույնպես, Արամայիս Երզնկյանն այդտեղ է, թե՞ գնացել է»: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 154, թ. 5):

«...ՆԱ ՍԻՐՈՒՄ ԷՐ ԻՐ ՄՏՔԵՐԸ ՀԱՂՈՂԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ»

Ստ. Շահումյանի նախաձեռնությամբ «Ծիածանի» անդամները ընթերցում էին Պիտաբևին, Բեյլիսկուն, Դոբրոյուբովին, Զերնիչևսկուն, Տուրգենևին, ինչպես նաև Մարքսին ու Դարվինին, Հետո կազմակերպում դրանց քննարկումը: «Ծիածանի» անդամներն այդ կերպ լրացնում էին իրենց գիտելիքները: Նա կարդում էր Բեյլիսկու Հոդվածները Պուշկինի, Լերմոնտովի, Գուգոյի մասին, Դոբրոյուբովի Հոդվածը Տուրգենևի «Հայրեր և որդիներ» վեպի

մասին: Անգիր գիտեր դասականների շատ բանաստեղծություններ և հաճախ արտասանում էր Թումանյանից, Իսահակյանից, Պուշկինից, Լերմոնտովից, Շեքսպիրից, Գյոթեից, Բայրոնից և այլն: Շահումյանը սիրում էր մշտապես կրկնել Իսահակյանից Հետևյալ տողերը՝

«Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ,
Իմ մեջ արևն է փայլում»: (Ն. Զարենցի անվան գրադամություն և ազգայնա-տի թանգարան (ԳԱԹ), Արագու Փոնտ, գ. 226, թ. 3; գ. 227, թ. 19-20):

Խմբակի անդամներից Մովսես Արագին, որը Հետո դարձավ նշանավոր գրող, իր հուշերում հայտնում է, որ Շահումյանը իր հմայքով, եռանդուն գործունեությամբ դարձել էր Թիֆլիսի առաջադեմ Հայ երիտասարդության համախմբողը: Նա գրել է, որ «Շահումյանը սիրում էր գրականություն, ծանոթ էր ողուս, արևմտասեփրոպական և Հայ դասականներին: Սիրում էր բանաստեղծություններ մեջբերել խոսակցության ժամանակ: Նա այն ընթերցողներից էր, որոնք խորամուխ են լինում գրքին, վերապրում այն, և սիրում էր իր մտքերը հաղորդել ուրիշներին»: (Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, Եր. 1984 թ. էջ 61-62):

Տեղին եմ համարում մեջբերել 1919 թ. մայիսին «Կարմիր դրոշակ» Հանդեսում Վահան Տերյանի գրած հուշերից Հետևյալ Հատվածը. «Ստեփան Շահումյանին առաջին անգամ տեսել եմ ես փոքր ժամանակա Թիֆլիսում, սրանից քսան-քսաներկու տարի առաջ «Ծիածան» աշակերտական ընկերության ժողովներից մեկում:

Եվ կարծես դա երեկ էր-այնքա՜ն կենդանի, վա՛ռ, անաղարտ է մնացել իմ հիշողության մեջ. այն գեղեցիկ, դուրեկան, կասեմ՝ ուղղակի Հմայիչ դեմքը:

Մանավանդ այն խելացի, արտահայտիչ, փափուկ, լուսեղեն, սքանչելի աչքերը-Շահումյանի աչքերը:

Ով որ մի անգամ տեսել է այդ դեմքը, նա երբեք չի կարող մոռանալ նրան: Մի հազվագյուտ, հրաշալի ներդաշնակություն կար այդ մարդու հոգեկան հասկությունների և նրա նայվածքի, խոսվածքի, ձայնի, արտաքինի մեջ...»: (Վ. Տերյան. Երկերի ժողովածու, Հ. 3, Եր. 1975, էջ 169):

ՆԱՍԱԿ ԱՎԵՏԻՍ ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆԻՆ

«Միածան» խմբակի մեջ ընդգրկված Թիֆլիսի տարբեր դպրոցների բարձր դասարաններում սովորող 120 աշակերտներին կազմակերպություն էր բերել ովերությունը, հանրությունը հուզող հարցերի նկատմամբ հետաքրքրությունը: Խմբակում ընդգրկվել էին տարբեր հայազգեներ ունեցող ներ և դասով էր պայմանավորված այն իրողությունը, որ «Միածանը» միատարր չէր: Ժամանակակիցների վկայությամբ հենց այդ պատճառով էլ հաստատվեց ազգային հարցի շուրջ քննարկումների ընթացքում ծավալվում էր սուր բանավեճ, հնչում էին իրարամերժ հարցադրումներ:

Եվ դրանց պատասխանը գտնելու համար պատանի Շահումյանը նամակով դիմում է արտասահմանում գտնվող Նազարբեկյանին, խնդրելով պատասխանել, թե ի՞նչ տարբերություն կա «Հնչակյան» ու «Իաշնակցություն» կուսակցությունների միջև: Շահումյանին հետաքրքրում էր, թե ինչո՞ւ այդ «երկու կուսակցություններն էլ ձգտում են ազատագրել Արևմտյան Հայաստանը թուրքական ստրկությունից և աչքերը փակում են հայերի տանջանքների նկատմամբ Կովկասում»: (Ի. Դուբինսկի-Մուխոմե, նույն տեղը, էջ 18):

Իհարկե, Նազարբեկյանը չի պատասխանում Շահումյանի նամակին, բայց դա չի խանգարում, որպեսզի ինքնուրույն շարունակի գտնել իրեն հետաքրքրող հարցի պատասխանը: Այդ որոնումների արդյունքում էլ Շահումյանը «Միածանի» խմբակի պարապմունքին է ներկայացնում Միքայել Նաբանդյանի մասին ունեցած տեղեկությունը, որը ժամանակակիցների վկայությամբ մեծ հետաքրքրություն է առաջ բերել:

Մի քանի տարի անց, այս ունեցած տեղեկությունը արժարժված մի շարք կարևոր հարցադրումներ Շահումյանը շարադրում է Ղ. Արայանի հոբելյանին նվիրված իր հայտնի խոսքի մեջ, որին անդրադարձ կլինի քիչ ավելի ուշ:

Խմբակում ծավալված քննարկումների արդյունքով աստիճանաբար «Միածանի» ներսում առանձնանում են նրանք, ովքեր տարված էին ազգայնական հովերով: Շահումյանն ու նրա համախոհները վճռականորեն պայքարում էին նրանց դեմ, ընդգծելով, որ ցարական Ռուսաստանի պայմաններում որևէ ազգային, այդ թվում հայկական հարցի լուծում, անհնար է մյուս ժողովուրդներից մեկուսանալու պայմաններում:

Նկատի ունենալով այդ իրողությունը, Վահան Տերյանը իր հուշերում գրել է հետևյալը. «Ես, Իհարկե, չգիտեմ ինչպե՞ս և ո՞ր աստիճան էր փոխվել Շահումյանը, բայց ղեփար չէ այժմ կուսակցի, որ նա հետագեղ էր նացիոնալիստական,

տական, մանրրուբուսական նախապաշարունակներից-թևակոխել էր մտածողության և զգացողության այլ հորիզոններ, և այդ հանգամանքն էր երևի, որ չիտթ ու վարանում էր առաջ բերել ծիածանական ազգասերների չրջանում»: (Վ. Տերյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 170):

Ի միջի այլոց նկատեմ, որ վերոհիշյալ հարցը հետագայում դարձավ Հայ հեղափոխական ուժերի ջրբաժան գիծը: Դեպքերի ու իրադարձությունների ընթացքը շուտով ապացուցեց, որ Ստ. Եսեմյանն ու իր համախոհները չէին սխալվում:

«ՍԱՍՈՒՆԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ...»

«Միածան» խմբակը Շահումյանի գլխավորությամբ խմորատիպ (հեկտոգրաֆ) եղանակով հրատարակում էր «Միածան» անունով արմատախորհրդի լույս ընծայումը իրականացնում էին Գարեգին Երիցյանն ու Վանո Հարությունյանը: Ըստ տեղեկությունների «Ամանախը» խմբագրել է Հովհ. Թումանյանը:

Բարեբախտաբար պահպանվել է 1894 թ. դեկտեմբերին հրատարակված այդ արմատախորհրդի օրինակներից մեկը և հարավություն կա ընթերցողին ներկայացնել դրա համառոտ բովանդակությունը: Այդ ձեռագիր արմատախորհրդի գրված է աշակերտական տեսքի մեջ և պարունակում է 20 էջ: Վերջին էջի վրա կա «Խմբագրության կողմից» դիմումը, որով «խոնարհաբար հարգելի ընթերցողներին խնդրվում է կարեկցում շատ շուտով վերադարձնել այս թերթը, նույնպես, եթե ընթերցողների մոտ մնացել են «Միածանի» հին համարները, խմբագրությունը խնդրում է վերադարձնել իրան»: Սա նշանակում է, որ «Միածանը» տարածվել է սահմանափակ քանակությամբ:

Պետք է նշել, որ այս մեկ օրինակի բովանդակությունից էլ պարզ է դառնում դրա կազմողների մտածողության ուղղությունը: Առաջին երեք հոդվածների հեղինակը Շահումյանն է:

Դրանցից առաջինը ունի «Սասունի կոտորածի հետևանքները և այդ դեպքերի նշանակությունը» վերնագիրը: Հոդվածի սկզբում նկարագրվում են Սասունի դեպքերը, թուրքերի գործադրած բռնությունները: «Եվրոպան, այնուհետև գրում է Շահումյանը, բարեհաճեց վերջապես յուր ուշադրությունը դարձնել դեպի Արևելք և տեսավ այն, ինչ որ նա չէր էլ երազում: Նա տեսավ, որ յուր գտված 19-րդ «լուսավորյալ» դարում Հայաստանում կատարվում են հրեշավոր կոտորածներ, որ 19-րդ դարի վերջում կրկնում են մոնղոլական արշավանքների անցքերը, որոնց պատմությունն անկրկնելի էր

կարծվում: Վերջապես եվրոպան մտաբերեց Հայերի աշխարհիս վրա լինելը և այն խոստումները, որոնք նա տվել էր Հայերին 1878 թվին, բայց վաղուց մոռացել»:

Հորվածում ընդգծվում է, որ «Սասունի անցքերը...բացի գործնական հատկանիշներից, ունեն մեծ բարոյական նշանակություն» և համոզմունք է հայտնվում, որ Հայերը սովթանական տիրապետող լծից կարող են ազատագրվել ու հաղթել միասնական ուժերով:

Այնուհետև նշվում է, որ եվրոպական հասարակությունն ու մամուլը հուզվում են և սկսում արշավանք «տաճկական բարբարոսությունների դեմ և ընկճված այդ գայրույթից տաճկաց տերությունը ստիպեց գիշանել, երբ տեսավ յուր սուտ երդումներն ոչ մի տպավորություն չեն գործում»:

«Սուլթանը,- ասվում էր Հորվածի վերջում,- խոստացել է բարենորոգումներ կատարել: Այս ռեֆորմների նշանակությունը ցույց կտա սպագան, բայց, անկասկած, սա էլ տաճկական սովորական աչքակապություններից մեկն է»: (ՀՀ ԱԱ, ֆ, 1437, ց. 1, գ. 5, թթ. 1-5):

Այսպիսով, նկատի ունենալով Հորվածի ամբողջ բովանդակությունը, նրանում արծարծված հարցադրումները, պետք է ասել, որ Շահումյանն ու իր գաղափարակից ընկերները հենց սկզբից չեն հավատացել տաճկական բարեփոխումներին և հասկացել էին եվրոպական տերությունների երկդիմի քաղաքականության էությունը: Այս իրողությունը նկատի ունենալով պետք է ասել, որ նոր ձևավորված դաշնակցություն կուսակցությունը ի սկզբանե հույսը կապել էր եվրոպական տերությունների հետ:

Առաջ անցնելով նշեմ, որ Շահումյանի ուշադրության կենտրոնում մշտապես գտնվել է արևմտահայության ինդիորը: Ահա, օրինակ, 1904 թ. օգոստոսի 20-ին Զարմայր Դազարյանին ուղարկած նամակում գրել է. «...Կյանքում կան ուրիշ իրենայնք, շատ ավելի բարձր ընտանեկան իրենայնք: Դրանցից մեկի հետ դու արդեն ծանոթ ես-այդ տաճկահայերի ազատագրության գործն է»: (Ստեփան Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, Եր. 1978, էջ 322):

«ՈՎ ԱԿԱՆՁ ՈՒՆԻ ԼՍԵԼՈՒ, ԹՈՂ ԼՍԵ...»

Հաջորդը «Ազգերի մտավոր զարգացման բնական պայմանները» վերնադրով անավարտ հորվածն է: «Որպես առանձին անհատներ,- նշվում էր այդ հորվածում,- նույնպես և ամբողջ հասարակություններ, ժողովուրդներ զանազանվում են իրարից բնորոշ հատկություններով, սորա պատճառը պետք է փնտրել թե անհատների և թե մասսայի ոգու և բնավորության մեջ»:

Այնուհետև բացատրվում էր մարդու գոյությունն ապահովող տարրերի՝ կլիմայի, երկրի, բնության ընդհանուր տեսքի և կերակուրի նշանակությունը և բերվում է Հոնաստանի, Սկանդինավյան երկրների, Սիբիրի, Աֆրիկայի, Անգլիայի, Հնդկաստանի և այլ երկրների օրինակը, պարզաբանվում է, թե նրանցում վերոհիշյալ տարրերի տարբերությունն ինչպես է ազդում մարդկանց վրա:

Ուշագրավ է նաև «1894 թ. դեկտեմբերի 31-ին» Հորվածը: Շահումյանը գրում է. «Գալիս է նոր տարին: Ամեն տեղ տեսնում եմ զվարճություն, ամեն տեղից լսում եմ ուրախության այն աղաղակները, որոնցով Հայերը դիմավորում են նոր տարուն: Յուրաքանչյուր Հայի երեսին նկատում ես մի ժպիտ, որ արտահայտությունն է նորա ներքին հոգեկան դրություն»:

Այնուհետև հեղինակը նկարագրում է մի ընտանիքում նոր տարին դիմափոխելու շքեղ արարողությունը, որին ինքը ներկա է եղել, հետագայ է զայրացած և գրում է հետևյալը. «Իսկ մեր ընկերները, փոխանակ օգտվելու պատանեկության հասակի այն թանկագին թուփներից, անձնատուր են լինում մի այն այնպիսի զվարճությունների, որոնք միայն անբարոյականացնում են մարդուն»:

Այդ մարդիկ, ընդգծում է նա, գուրկ են ինքնաճանաչողությունից, նրանք գուրկ են այն գաղափարներից, «որոնք պարզ պիտի լինին յուրաքանչյուր ազնիվ մարդու համար, նրանք չեն կարող մի քանի խուք ասել իրանց մայրենի լեզվով, չեն կարող նկարագրել ոչ իրանց հայրենիքի անցյալը և ոչ ներկան, մինչև անգամ չեն կարող իրանց հաշիվ տալ, թե ինչի համար են սաքրում, ինչի համար են ուտում առնում, ինչի համար են մարդ կոչվում»:

Եվ նկատի ունենալով այդ արտաքին փայլի ետևից ընկած երիտասարդներին, Շահումյանն ընդգծում է. «Նրանք չեն մտածում իրանց ապագայի մասին, իսկ հարկավոր դեպքում, երբ մեկը հարցնում է, թե արդյոք, երբ պիտի կատարելագործվեն, երբ պիտի համոզմունքների տեր դառնան և բազմակողմանի նմանին քաղաքակիրթ եվրոպացուն, ինչպես նմանում են միայն արտաքինով, նրանք մատնացույց են անում համալսարանը, որտեղ իրանց կարծիքով հինգ տարվա ընթացքում պիտի առնեն այն, ինչ չեն կարողացել առնել այստեղ երկար տարիների ընթացքում: Միանգամայն ծիծաղի է արժանի նրանց ակնկալությունը...»:

«Ինչպես կարող է,- շարունակում է Շահումյանը,- մի երիտասարդ զբաղվել ազգային-հասարակական գործերով, երբ նա ծանոթ չէ ազգության հետ, երբ նա ծանոթ չէ ժողովրդի հետ, մինչև անգամ իր մայրենի լեզվի հետ, ինչ-

պես կարող է 20 տարեկան երիտասարդը պատրաստվել ապագա Հասարակական գործիչ լինելու համար համալսարանում, քանի որ նա չէ էլ հետաքրքրվել այդպիսի գործերով աշակերտ ժամանակը»:

Իսկ համալսարանում ուսանողը մտած է չորս կամ հինգ տարի և «այդ կարճ ժամանակամիջոցում նա ուսանում է այս կամ այն մասնագիտությունը, որը գլխավորապես ծառայում է նրան որպես միջոց իր գոյությունը պահպանելու համար»:

«Մի՞թե,- հարցնում է Շահումյանը,- նա կարող է այդ կարճ ժամանակամիջոցում ազատ ժամեր ունենալ իր հայրենիքի, ժողովրդի, նրա դրություն և նիստուկացի հետ ծանոթանալու»:

«Ո՛չ,- պատասխանում է Շահումյանը իր տված հարցին,- չի կարող, որովհետև առաջին, ժամանակը քիչ է գրադվելու թե մասնագիտությանը և թե կողմնակի գործերով»:

Որպես երկրորդ պատճառ Շահումյանը նշում է. «Որովհետև նա, որը մի փոքրիկ քաղաքում չի կարողացել զսպել իրան անբարոյականություններից ու անկանոն կյանքից, մի մեծ համալսարանական քաղաքում միանգամայն կարող է կորցնել իրան և հափշտակվելով կարող է ընկնել ու հավիտենական կորալի խոր անդունդը»:

Իր մտորումները Շահումյանն ավարտում է հետևյալ խոսքերով. «Ով ավանջ ունի լսելու, թող լսե...»: (ՀՀ ԱԱ, ֆ, 1437, ց. 1, գ. 5, թթ. 7-10):

Պետք է նկատել, որ այս հոդվածն առաջին հայացքից՝ ժողովրդին ճանաչելու, դեպի ժողովուրդը գնալու պահանջով հիշեցնում է ուսու նարողներին՝ իր գաղափարախոսությունը: Բայց Շահումյանի առաջ քաշած հարցադրումներն ավելի արմատական են ու ավելի ամբողջական:

Ավաճի կապակցությունը ամենից առաջ ուղղված է նշել, որ Ստ. Շահումյանի հեղափոխական աշխարհայացքի կազմավորման մեջ կարևորագույն նշանակություն է ունեցել հայ ժողովրդի ծանր դրությունը: Մի կողմում արևելահայությունն էր, որի ֆիզիկական գոյության համար սպառնալիք չկար, բայց և այնպես գտնվում էր ազգային-գաղութային ճնշման տակ: Մյուս կողմում արևմտահայությունն էր, որի ֆիզիկական գոյությունը սուբթանական տիրապետության տակ մեծապես վտանգված էր և ենթարկվում էր տարեց-տարի ուժեղացող ազգային, սոցիալական, կրոնական ու տնտեսական ճնշման:

«Միաժամանակ» արմատախի բուխանդակությունից կարելի է հատկորեն եզրակացնել, որ նրա շուրջ համախմբված երիտասարդներից շատերի հայացք-

ները ի սկզբանե ունեցել են սոցիալիստական երանգ, որին նրանք անցնում էին հեղափոխական դեմոկրատիզմի միջով:

Գրող Արաղին վկայում է, որ Շահումյանի թարգմանությունը «Միաժամանակ» արմատախի տեղ է գտել Բայրոնի «Հրեական մեղեդիներ»-ից մի հատված: (ԳԱՓ, Աղաթառ. Փոնտ, գ. 227, թ. 18):

ՉԶԱՎՈՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Ինչպես նշվել է արդեն, Շահումյանն անձամբ զգացել էր ուսումը շարունակելու գործում ծնողների նյութական միջոցների սղությունը: Նա լավ էր հասկանում նրանց վիճակը, որոնք հնարավորություն չունեին ուսումը շարունակել: Եվ նրա նախաձեռնությունը «Միաժամանակ» խմբակում կազմակերպվում է դրամական միջոցների հավաքում չքավոր աշակերտներին օգնելու համար: Այդ օգնությունը միանգամայն տարբերվում էր բարեգործությունից, որոնց հեղինակները դա կատարում էին որոշակի պայմաններով, ինչպես օրինակ, դա տեղի էր ունեցել Շահումյանի դեպքում: Դա ընկերական, մարդասիրական ու անշահախնդիր օգնություն էր:

Հիշելով այդ մասին Շահումյանի դպրոցական ընկերներից Ռուբեն Դաչ սոյանը գրել է, որ Շահումյանը «կյանքում շատ համակրելի ու ջերմ վերաբերմունք ունի դեպի ընկերները: Դեռ աշակերտական շրջանում, երբ նա բավական «հարուստ» դասեր ուներ, իր միջոցներից բաժին էր հանում չքավոր ընկերներին: Շատ անգամ ենք նրանից հացի... դրամ վերցրել: Ստեփանը դասերից առացած փողից տալիս էր «փոխարինաբար», որը, իհարկե, չէր վերադարձվում»: (Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 88):

«ՀԱՅ ԲԱՆՎՈՐ ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՆ»

Շահումյանի հեղափոխական-գաղափարախոսական հայացքների ձևավորման գործում որոշակի դեր է խաղում Թիֆլիսում գործող հեղափոխական, մարքսիստական խմբակների, հատկապես «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի» և վերջինիս միջոցով սոցիալ-դեմոկրատների հետ կապերի հաստատումը:

Այդ ասոցիացիան 1892 թ. վերջերին հիմնադրել են Ա. Խունարյանը, Ս. Խանոյանը, Ս. Մարտիկյանը և ուրիշներ: «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» առաջադիմական կազմակերպություն էր, աշխատում էր ազգային-ազատագրական պայքարի գաղափարն ամրապնդել հայ իրականության մեջ:

Տեղեկություններ են պահպանվել «Ասոցիացիայի» ծրագրի նախագծի մասին, որտեղ, մասնավորապես գրվել են Հետևյալ պահանջները՝ Շողը դարձնել ընդհանուր սեփականություն, գործարանները հանձնել բանվորներին, վերջ ուղի ազգային խորականություն, պարտադիր դարձնել տարրական կրթությունը, վերացնել պարտադիր գինավորական ծառայությունը, ապահովել քաղաքական ազատությունները և այլն: «Ասոցիացիան» իր գլխավոր նպատակն էր համարում ապագա Հայաստանում դեմոկրատական հանրապետության ստեղծումը:

Ուսովկանական Հայաժանգների ու ձերբակալությունների պատճառով 1895 թ. «Ասոցիացիան» դադարեցնում է իր գործունեությունը:

1890-ական թվականներին Անդրկովկասում ստեղծվում են առաջին մարքսիստական խմբակները, որոնցից էր 1898 թ. Թիֆլիսում ստեղծված հայ բանվորների առաջին սոցիալ-դեմոկրատական խումբը, որը գործում է մինչև 1901 թվականը: Դրանցից մեկի հետ էլ համագործակցում է 1891 թ. Թիֆլիս եկած Մաքսիմ Գորկին: Հենց այդ ժամանակ էլ Շահումյանը ծանոթանում է Գորկու հետ:

Շահումյանի համար կարևոր նշանակություն է ունեցել 1896 թ. նրա ծանոթությունն Անդրկովկասում հայտնի սոցիալ-դեմոկրատ Լադո Կեցխովելու հետ: Գ. Երիցյանը հիշում է, որ Շահումյանը Լ. Կեցխովելուն հանդիպել է իրենց տանը: «Մեր տանը կայացած խոսակցության ժամանակ,- գրել է Գ. Երիցյանը,- Լադոն հավանաբար գտել էր իր համախոհին և սկսեց հաճույքով հանդիպել Ստեփանի հետ»:

Ալեքսանդր Երիցյանի տանը հանդիպումներից մեկի ժամանակ, Լ. Կեցխովելին առաջարկում է կազմել սոցիալ-դեմոկրատական խմբակ, որի ղեկավարման աշխատանքը վերցնում է իր վրա: Գ. Երիցյանը հիշում է. «Լադոն մեզ հետ պարապում էր կեն տարուց ավելի: Աբանչեյի պարզ ու հասկանալի լեզվով նա շարադրում էր Մարքսի ուսմունքը»: (Գալեօղլին Երիցյան, Հուշեր Ստեփան Շահումյանի կյանքից, էջ 31-32):

Այդ ժամանակից էլ սկսած Ստ. Շահումյանը մտնում է Թիֆլիսում անլեզու պայմաններում գործող սոցիալ-դեմոկրատական խմբակի մեջ, աստճանաբար դառնալով դրա երևելի գործիչներից մեկը:

Վերոհիշյալ չիտումները կարևոր դեր են ունենում Ստ. Շահումյանի համար: Եվ դրանց ազդեցությունը էլ Շահումյանն ազգային-դեմոկրատիզմից աստիճանաբար անցնում է հեղափոխական-քաղաքական գաղափարախոսությունը:

Ինչը՝ Ստ. Շահումյանը նկատի ունենալով նոր մարդկանց հետ ծանոթություն հաստատելը, 1896 թ. սեպտեմբերի 8-ին Ե. և Հ. Տեր-Գրիգորյաններին ուղարկած նամակում գրել է. «Ժամայության սիրելի և հարգված մարդիկ բարձր են էլ կյանքի մեջ եղած, ապրած ու փորձված մարդիկ են»:

«Տեսնե՛ք սիրելիներս,- շարունակում է Շահումյանը,- ես միշտ զգուշ և դիտող կլինեմ իմ վերաբերմամբ, որովհետև բոլորովին մի նոր պերիոդ է սկսվում ինձ համար, կախատեմ արդարացնել ձեր և իմ ընկերների հույսերը»:

(Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, Եր. 1978, էջ 271):

Վերոհիշյալ գործիչների ու հեղինակների աշխատություններին ծանոթանալը մեծ նշանակություն է ունենում Շահումյանի հեղափոխական-քաղաքական Հայացքների ձևավորման համար: Եթե սկզբում նա զարույթով էր միայն խոսում սոցիալական անարդարությունների, ազգային ճնշման մասին, ապա աստիճանաբար նրա մոտ ձևավորվում է այդ անարդարությունները վերացնելու պահանջը, դրանց իրագործման միջոցների մասին խորհելը:

ԱՌԱՋԻՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Ռուս հեղափոխական դեմոկրատների, ինչպես նաև Մ. Նալբանդյանի աշխատություններին ծանոթանալը լուրջ միջոց էր չրջապատող կյանքը, ձևավորված սոցիալ-տնտեսական հարաբերությունները հասկանալու համար:

Ասվածը փաստելու համար փորձեմ շատ համառոտ ներկայացնել 19-րդ դարի 90-ական թվականներին Անդրկովկասում կատարվող իրադարձությունները: Նախ՝ Անդրկովկասը լայն թափով ընդգրկվել էր զարգացող արդյունաբերական կապիտալիզմի ոլորտ: Շարք էին մտնում նոր արդյունաբերական ձեռնարկություններ, շահագործվում էին նոր հանքավայրեր, երկաթուղին կարևոր դեր էր խաղում տնտեսական չրջանները միմյանց հետ կապելու գործում:

Բայց դա բոլորը չէր: Կապիտալիզմն աստիճանաբար իր ոլորտն էր առնում գյուղը, դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

Առաջընթացի հետ միասին կապիտալիզմն ավելի էր խորացնում սոցիալական անհավասարությունը: Արդյունքում բնակչության մեծամասնությունը նետվում էր աղքատության մեջ, ենթարկվում անողորմ շահագործման: Անդրկովկասի խոշոր քաղաքներում ավելի ու ավելի էին կուտակվում ունեցվածքից զրկված բազմահազար գյուղացիներ:

Իհարկե, այս ամենը գրավում էր Շահումյանի ուշադրությունը և նա,

բնականաբար, լինելով չրջահայաց, ձգտում էր իրեն հետաքրքրող երևույթները հասկանալու համար խորանալ ընթացող պրոցեսների մեջ:

Անդրկովկասի արդյունաբերական կենտրոններում ընթացող կյանքի տարբեր կողմերին ծանոթանալը Շահումյանին բերում է այն գաղափարին, որ հարկավոր է նաև լավ իմանալ հատկապես Հայաստանի գյուղերի վիճակը, որտեղ տիրող կարգերի հետևանքով գյուղացիները հարկադրված էին թողնել իրենց բնակավայրերը և բախտ որոնել Թիֆլիս, Բաքու, Բաթում, Երևան և այլ քաղաքներում:

Այս իմաստով հատկապես աչքի էր ընկնում Լոռին, որի չքավոր գյուղացիները հարկադրված էին մի կտոր հացի համար մեկնել հատկապես Թիֆլիս և Բաթում, համայրելով ունեզրկվածների և գործազուրկների բանակը:

Հենց այդ նպատակով 1895 թ. ամռանը Ստ. Շահումյանը մի խումբ ընկերների հետ առաջին անգամ գալիս է Հայաստան: Լինում է Ջալալօղլիում, որտեղ իր դպրոցական ընկեր Չալալօղլեցի Վասիլ Միմոնյանի երաշխավորությամբ մի քանի շաբաթ մնում է Սարգիս Տեր-Գրիգորյանի տանը: Այստեղ էլ նա առաջին անգամ ծանոթանում է Տեր-Գրիգորյանի աղջկա՝ Բեթևանի (Եկատերինա) հետ, որն աչքի էր ընկնում ոչ միայն իր գեղեցկությամբ, այլև խելացիությամբ:

Շահումյանը իր ընկերների հետ չրջագայում է Ագավերդի, Սանահին, Դսեղ և Լոռիի մի շարք այլ վայրերում: Այս այցելություն ընթացքում Շահումյանը հանդիպում է խոշոր հողատերերի կողմից գյուղացիներին ճնշելու և շահագործելու բազմաթիվ փաստերի, տեսնում է գյուղացիների ծանր վիճակը: Նրա համար պարզ է դառնում, թե ինչու էին գյուղացիները հարկադրված հեռանում իրենց հայրենի բնակավայրերից և Թիֆլիսում հայտնվում անտանելի վիճակի մեջ:

Դսեղում Շահումյանը հանդիպում է Հ. Թումանյանին: «Հովհաննես Թումանյանը, հիշում է Գ. Երիցյանը,- մեզ հոգեբուխ ընդունելություն ցույց տվեց: Ինձ մանկուց գիտեի, Շահումյանին գնահատում էր որպես «Պիածառի» կազմակերպչի ու ղեկավարի»:

Մինչ այդ էլ Ստեփանը հանդիպումներ էր ունեցել Հ. Թումանյանի հետ, երբ նա ներկա էր լինում «Պիածառի» ընդհանուր ժողովներին: Բայց Դսեղ գյուղում նրանց հանդիպման ժամանակ հայ գյուղացու ծանր վիճակի, ինչպես նաև ժամանակի հանրային միտքը հուզող բազմաթիվ հարցերի մասին Թումանյանի արտահայտած մտքերը պատանի Ստեփանի մոտ թողնում են անջնջելի տպավորություն: Հուշակավոր բանաստեղծը իր առջև տեսնելով

չառ հարցերով հետաքրքրվող և դրանց պատասխանն որոնող պատանու, նրա հետ գրույցը վարում էր ինչպես տարիքն առած ու շատ բան հասկացող երիտասարդի հետ: Ինչպես հիշում են Ստ. Շահումյանի ընկերները, Թումանյանի հետ այդ հանդիպումը նույնպես կարևոր դեր է խաղացել Շահումյանի աշխարհայացքի ձևավորման գործում:

Լոռիի գյուղացիների վիճակին ծանոթանալուց հետո, 1896 թ. ամռանը Շահումյանը Գ. Երիցյանի հետ մեկնում է Գորիի գավառ՝ նպատակ ունենալով ծանոթանալ վրաց գյուղացիների կյանքին: Այստեղ, հատկապես Բարելի գյուղում նա ակնատես է լինում վրաց իշխան Ցիցիանովի կողմից գյուղացիներին բարբարոսաբար շահագործելու փաստերին: Պատանի Շահումյանի համար պարզ է դառնում, որ ամենուրեք, Հայաստանում, թե Վրաստանում գյուղացիները միևնույն դաժանությունը շահագործվում են ու ճնշվում, ամենուրեք տիրում են նույն կարգերը, նույն անհավասարությունը: Բարելի գյուղում պատանի Շահումյանը ծանոթանում է վրաց գրականության դասական գրող Ալյակի Մերեթելու հետ:

«...ԱՅՂՊԻՍԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՓՉԱՅՆԵԼ ԻՆՁ...»

1896 թ. ամռանը Ստ. Շահումյանը նորից է գալիս Ջալալօղլի, և հուլիս-օգոստոս ամիսներին բնակվում Տեր-Գրիգորյանների տանը: Այս ժամանակից էլ Ստեփանի և Բեթևանի միջև ստեղծված մտերմությունը վերածվում է անկեղծ սիրո և Ստ. Շահումյանը երգվում է հավատարիմ մնալ իր ընտրյալին: Երկար ժամանակ Ստեփանն ու Բեթևանը միմյանց հետ կապ էին պահպանում նամակագրությամբ:

1896 թ. սեպտեմբերի 3-ին Ստեփանն առաջին նամակն է ուղարկում Բեթևանին ու նրա քրոջը: «Ես գիտեմ,- գրում է նա,- այսօր որք սկի չեք էլ սպասում ինձանից նամակ, բայց ես գրում եմ, որպեսզի մի քիչ թեթևանամ ինքս»:

Այնուհետև Ստեփանը շարունակում է. «Մարդ իրեն տանջող մտածմունքներից և զգացմունքներից թեթևանալու համար կարծեմ ընդամենը երեք միջոց ունի, այդ երեք միջոցներից մեկը արցունքներով թեթևանալն է, երկրորդը՝ անկեղծ ընկերոջ առաջ սիրտ բացելը, իսկ երրորդը՝ այդ տանջող զգացմունքների ու մտածմունքների գրի առնելը: Ես դիմում եմ այս վերջին միջոցին, որը ներկայումս միակ կարելի միջոցն է ինձ համար»:

Նամակի վերջում Ստեփանը Բեթևանին ու նրա քրոջը՝ Հեղուշին (Լելուշ)



Քեթևան (Եկատերինա) Տեր-Գրիգորյան-Շահումյան

խորհուրդներ է տալիս գրքերի ընթերցանության գործը թեթևացնելու մասին և խոստանում է նրանց համար «հարմար գրքեր ուղարկել»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 269):

Իսկ 1896 թ. սեպտեմբերի 8-ին քույրերին ուղարկած նամակում Շահումյանը գրում է. «Ձեր նամակների մեջ հախտացնում եք ինձ, որ ես մի բացառիկ ծնունդ եմ, որ ես ունեմ մի փառավոր ներկա և մի փայլուն ապագա»:

«Իուք այժմ,- չարոճանկում է նա,- «Իավիթ բեկն» եք կարդում... գուցե արդեն հասած լիտեք այն տեղը, որտեղ Բաֆֆին նկարագրելով բռնակալ խանի կյանքը... մի ընդհանուր դիտողություն է անում բռնակալների մասին. ր միջի այլոց նա մոտավորապես այս խոսքերն է ասում. «Երբ խանի հետ խոսում են նորա ստորադրյալները, նա պարտավոր են միշտ շողբորթիլ և կեղծ գովասանքներ շալլել նորա հասցին. բունակալը թեև զգում է այդ և շատ լավ գիտե, որ բոլորը սուտ է, կեղծ է, բայց նա դարձյալ հրճվում, երկինքն է վերանում այդ շողբորթությունից»: Դեհ հիմա մտածիր, թե ինչքան պետք է ազդեն ինձ վրա ձեր գովասանքները-գովասանք, որ լսում ես քո անկեղծ բարեկամներից...»:

Այնուհետև Շահումյանը գրում է. «Գարուս օրից սկսած ես չարոճակ լսում եմ այս ու այն կողմից, որ ինձ բոլոր ընկերներս սիրում և պաշտում են. իմ մասին, Քեթևան, համարյա աստապներ են պատմում, այն տեսակ բաներ, որ կարող են մարդու խելագարացնել, ճշմարիտ, ինչպես ասում են «Я не мог обратиться во всем этом»: Մի երկու չաբաթ առաջ ես երբեք չէի կարող երևակայել մի այդպիսի բան: Բացի ձեզանից և Վլասոյից, ես ոչ ոքից բացարձակապես չեմ լսել իմ մասին մի լավ կարծիք: Եթե հիշում ես, ես մեկ անգամ ասացի ձեզ, որ կյանքուսն իմ մասին վատ կարծիք չեմ լսել, այդ էլ կա, սիրելիներս, բայց դա շատ քիչ էր, որպեսզի ես մի մեծ կարծիք ունենայի իմ մասին:

Վերջապես բավական է իմ մասին այսքանը, ես հագիվ եմ կարողանում չարժեղ գրիչս, որովհետև չեմ կարողանում, ավելի ուղիղ է ասել, դժվարանում եմ համաձայնվել այդ բոլորի հետ, բացի այդ, այդպիսի կարծիքները կարող են բոլորովին փչացնել ինձ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, էր. 1978, էջ 270):

1896 թ. սեպտեմբերի 9-ին Քեթևանին ուղարկած նամակում Շահումյանը գրել է. «Քեթևան ջան, ես անչափ ուրախ եմ, որ դու այնպես ասաջաղիմնել ես այս մի քանի անվա ընթացքում, ուրախ եմ և այն բանի համար, մանավանդ, որ դու արդեն նկատում ես այդ դա մեծ նշանակություն ունի քո ապագայի համար» և մեջբերում է Քեթևանից ասացված նամակի հետևյալ հատվածը. «Ես զգում եմ, որ քեզ հետ ծանոթանալուց հետո փոխվել եմ, և այդ բոլորը քո խոսքերի, քո կարգացած գրքերի շնորհիվ է եղել, գուցե եթե երկար ժամանակ մայիլնք միասին, բոլորովին, բոլորովին իմ միջից վերանային իմ վատ կողմերը և այնպես մի աղջիկ դառնայի, որ ինքս ինձնից գուհ լիտեի», և չարոճանկում է. «Քեթևան ջան... Մարդուս ամենաբարոյր զգացմունքներից մեկը ինքնագրության գգացումն է և իմ կյանքում ամենանշանակավոր բույններից մեկը կլինի այն բույնը, երբ դու, հույսով, կհասնես ինքնաճանաչության այն աստիճանին, որ քո բերանով կխոստովանես քո լավ աղջիկ լիտեյր... Այդ բանը կլինի և այն էլ մոտ ապագայում»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 272-273):

Իսկ սեպտեմբերի 13-ին Քեթևանին ուղարկած նամակում Շահումյանը իր գործի հաջողությունը վերագրելով սիրտ բարերար ազդեցությունը, գրում էր, որ «ավելի ևս կամրանում այն համոզմունքս մեջ, որ սերը, անկեղծ ու փոխադարձ սերն է բնության ամենամեծ պարզեցնելից մեկը մարդու համար (իհարկե, այնպիսի մի մարդու համար, որի ուղեղն ազատ է ասաջուց սիրտ մասին եղած անթիվ նախապաշարունակից)»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 274):

1896 թ. նոյեմբերի 25-ի նամակում Քեթևանի հարցին, թե ավելի լավ է մեռնել, քան թե ապրել այսպես, Շահումյանը գրում է. «Ես պատասխանում եմ անկեղծ. ո՛չ, հարկավոր է ապրել և ապրել, մահ փնտրելը կատարյալ փոքրագություն է, որ ամոթ է բերում քեզ»: Եվ Շահումյանը համոզմունքով խորհուրդ է տալիս. «Ապրել, կրվել, հաղթել և հաղթված դարձյալ ապրել և ապրել»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 287):

«...Ամեն կենդանի արարած,- գրել է Շահումյանը 1897 թ. փետրվարի 12-ին ուղարկած նամակում,- ամեն մարդ աշխատում է որքան կարելի է ավել

լի լավ, ավելի քաղցր անցկացնել յուր երկրային կյանքը... միայն զանազանություներ նրանումն է կայանում, որ մեկը երջանկությունը, կյանքի քաղցրությունը գտնում է եղբայր մարդկանց համար աշխատելու և նույնիսկ զոհվելու գործում, իսկ մյուսը նրանց կողոպտելու, նրանց արյունը խմելու գործում»:

Այնուհետև Շահումյանը նկատի ունենալով այդ երկու ծայրահեղությունները, գրում է հետևյալը. «Պետք է հանդիմանել միայն այն հիմարների, որոնք կարծում են, թե ուրախություն, երջանկություն ասած բաները գտնվում են միայն հարստության մեջ «ոսկյա պարսպներում» և «չամպանային գինու» շշերում» և ընդգծում, որ ասվածը բացատրելու համար պետք է սկսել «ամենախորը կետերից, իմ աշխարհայեցողության հիմնաքարից...»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 299-300):

Իր հարմացու Քեթևանին պատանի Շահումյանի գրած նամակներին ես այսպիսի ուշադրություն եմ դարձնում այն կապակցությամբ, որ վերջերս ուսուցիչներն իրենք տեսած «Շահումյանի դատապարտված մոռացության: «Առասպելական կոմունարի» դիմանկարն առանց ռետուշի» կեղծիքներով լեցուն գրքի հեղինակ աղբյուրների պատմաբան, պրոֆեսոր Էլբար Իսմայիլովը կեղծելով դրանց բովանդակությունը, գրում է. «Նրա (Շահումյանի) կյանքում շատ կարևոր է եղել ամուսնական ժամանակաշրջանը: Ես կարդացել եմ 17 տարեկան հասակում նրա նամակները իր հարսնացուին: Ինչքան պատվամոլություն է եղել այդ մարդու մոտ, ինչքան մեծամտություն: Գուցե նա կամեցել է սուպստիտություն գործել. բայց դա հետաքրքիր է: Դա քաղաքական գործչի ձևավորում է, իսկ որպես քաղաքական գործիչ նա (Շահումյանը) արատավոր կերպով իր մասին ունեցել է մեծ կարծիք»:

Մինչդեռ պատանի Շահումյանն աչքի էր ընկնում համեստությամբ և խուսափում էր անտեղի գովեստներից և ինչպես բերված, այնպես էլ մյուս նամակներում, որոնք Շահումյանը գրել է իր հարմացու Քեթևանին, չկա ոչ մի խոսք իր անձը մեծարելու, ինքնագովության մասին: Նրա նամակներում չկա նույնիսկ «պատվամոլության», «մեծամտության» որևէ նշույլ:

Պատանի Շահումյանի բոլոր նամակներում զգացվում է նուրբ վերաբերմունքը, հոգատարությունը իր սիրած աղջկա նկատմամբ: Նրա նամակները ստորգրված են մարդասիրությամբ, հայրենի երկիրը սիրելու զգացումով: Շահումյանը իր սիրած աղջկան խորհուրդ է տալիս կարդալ հայ, ռուս և եվրոպական նշանավոր գրողների գրքերը և այլն:

1901 թ. հունիսի 19-ին Ստեփանն ամուսնանում է Քեթևանի հետ: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, Եր. 1978, էջ 264): Քեթևանը՝ Եկա-

տերինա Սերգենյան դառնում է Ստ. Շահումյանի կյանքի ընկերը, գինակիցը, նրա հետ կիսել հեղափոխականին վիճակված կյանքի բոլոր դժվարությունները և միշտ հավատարիմ մնացել իր սիրած ամուսնուն:

Տեղին եմ համարում այստեղ մի մեջբերում կատարել Ստ. Շահումյանի դասընկերներից մեկի՝ Վ. Միմոնյանի հուշերից հետևյալ վկայությունը: «Շահումյանի տաղանդը հարգող և նրանով հրապուրվող կանանց թիվը խիստ մեծ էր: Եվ ինչպես կարող էին չհրապուրվել, երբ այդ հրաշալի մարդու մեջ հավաքված կերպով միացած էին արտաքին գրավչությունը և դրանից ավելի ուժեղ՝ ներքինը: Բայց դրա փոխարեն իր սիրող կնոջ կողմից այնպիսի ջերմ սիրո և այնքան նվիրվածության հանդիպեց, որ դրանից ավելի երևակայելն անգամ դժվար է»: (ՀՀ ԱԱ, ֆ. 4007, ց. 2, գ. 118, թ. 2):

ՍՏԵՓԱՆ ՍԱԼԽԱՍՅԱՆԻ ԵՎ ՄԱԿԱՐ ԵՎՍՍԱԼՅԱՆԻ ՀՐԱՎԵՐՈՎ

1897 թ. ամռանը Ջալալօղլիում գտնվելու ընթացքում Ստ. Շահումյանը Գ. Երիցյանի միջոցով Ղարաբաղի հայրենասիրական ծանոթանում է Ստեփան Մալխասյանին և Մակար Եվմալյանին, որոնք պատրաստվում էին մեկնել Անի: Հայ մշակույթի անվանի գործիչների հրավերով Ստ. Շահումյանը և Գ. Երիցյանն ընկերակցում են նրանց:

Այգեքանդակագրում և այլ բնակավայրերում, որտեղով որ անցնում էր ճանապարհը, պատանի Շահումյանը իր բնավորության համաձայն շփվում էր մարդկանց հետ, ձգտելով, որքան հնարավոր է շատ տեղեկություններ ձեռք բերել աշխատավորների վիճակի մասին:

Ամենուրեք նրա առջև բացվում էր նույն պատկերը, որոնց շուրջ նա Անի կատարած ուղևորության ընթացքում մտքեր էր փոխանակում Ստեփան Մալխասյանի և Մակար Եվմալյանի հետ: Նրանց հետ տեղի ունեցած զրույցները, այդ ժամանակ հանրային գիտակցությունը հուզող բազմաթիվ հարցերի շուրջ մտքերի փոխանակությունը նույնպես մեծապես նպաստում են պատանի Ստ. Շահումյանի աշխարհայացքի ձևավորմանը:

Այգեքանդակագրում իր մեծահամբավ ուղեկիցների հետ պատանի Շահումյանը դիտում է ներկայացում նշանավոր դերասան Իսահակ Ալիխանյանի մասնակցությամբ: Անիում ճանապարհորդները հանդիպում են դերասան Արամ Վրույրին, որը Մատի հանձնարարությամբ լուսանկարում էր Անիի հուշարձանները:

Ծանոթանալով Անիի ավերակներին, պատանի Շահումյանը Գ. Երիցյա-

նի վկայությունը ատում է Հետևյալը. «Հրաշալի է, սա Համարյա բացատրիկ բան է: Մենք ծանոթ ենք Ակրոպոլի, հունական և եգիպտական հուշարձանների հինավուրց ճարտարապետությանը, պեղումներ են կատարվում Պոմպեյում, սակայն երբեք և ոչ մի տեղ ես չեմ կարդացել ու չեմ լսել մեծ քաղաքների մասին, որոնց փլատակները մնան գետնի երեսին յոթ դար շարունակ... Անին ցույց տվեց, թե ինչքան մեծ, ինչքան կենսասեր է մեր ժողովուրդը: Չի կարելի այդպիսի ժողովրդին չհարգել ու չսիրել»: (Գ. Երիցյան, Հուշեր Ստեփան Շահումյանի կյանքից, էջ 60-61):

Հաջորդ տարվա ամռանը, 1898 թ. Հուլիս-օգոստոսին Շահումյանը նորից գալիս է Ջալալօղլի: Այստեղ էին նաև Թիֆլիսում սովորող Վասիլ Միմոնյանը, Հակոբ Թադևոսյանը, Կարապետ Իսրայելյանը, Ռուբեն Դաշոտյանը, Աչոտ Թումանյանը, Սեդրակ Հարությունյանը, Միշա Անանյանը, Նիկոլայ Դադիվանյանը, Արտուշ Հարությունյանը, Անուշավան Թումանյանը, Մուսկաթի Համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանող Սերգո Իսրայելյանը և ուրիշներ: Նրանցից ոչ ոք որևէ քաղաքական կուսակցության չէր պատկանում, բայց որոնումների մեջ էին և ձգտում էին պատասխանատու իրենց հուզող հարցերի մասին:

Ահա այս ընկերները իրենց հուզող հարցերի մասին դիմում էին Շահումյանին: Ինչպես վկայում է Անուշավան Թումանյանը, պատասխանելով նրանց հարցերին Շահումյանն ասել է. «Այ, օրինակ, եթե հնարավոր լիներ ատեղծել էնպիսի մի դրություն, որ կարողանայինք մի քանի ընկերներով, որոնց շատ հետաքրքրում են ձեր առաջադրած հարցերը, կանոնավոր կերպով հավաքվել և պարտավորվենք ունենալ, ես կարծում եմ կարող կլինեինք բավարարել ձեր հարցասիրությունը, որի հետևանքով և զգալիորեն կպակասեր ձեր հարցերի թիվը»: (Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 88):

Հարաբրիտա-Սևան ճանապարհով Շահումյանը Գ. Երիցյանի հետ այցելում է Երևան, լինում է էջմիածնում և մի շարք այլ բնակավայրերում, ծանոթանում է գյուղացիների ծանր վիճակին և դառնացած տրամադրությամբ վերադառնում Թիֆլիս:

«...ՍԻ ԽՈՍՔՈՎ՝ ԱՊՐԻՐ ԳԻՏԱԿՑԱԲԱՐ,
ՃԱՆԱԶԻՐ ՔԵԶ...»

Ստ. Շահումյանին հասկանալու, նրա հայացքների բյուրեղացման մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ եմ համարում ընթերցողին ծանոթացնել հարազատներին ու ընկերներին գրած նրա մի քանի նամակների բովանդակությանը: Նկատեմ, որ անձնական բնույթի այդ նամակները գրելիս հազիվ թե Շահումյանի մտքով անցած լիներ դրանք երբևէ տպագրված տեսնել:

Ահա, օրինակ, 1896 թ. դեկտեմբերի 19-ին Ե. և Հ. Տեր-Գրիգորյաններին ուղարկված նամակում Շահումյանը գրել է. «Ձեզ հայտնի է, որ իմ անձին վրա ես շատ եմ մտածում. հետևում ուշադրությամբ իմ մտավոր և բարոյական աշխարհի զարգացման գործին և աշխատում եմ, ինքս ինձ վրա դիտողություններ անելով, հասկանալ ինչ բան է մարդս և այն դիվային մեխանիզմը, որ կոչվում է «կյանք»: Ինձ թվում է, որ աշխարհիս բոլոր գիտություններից ամենանշանակալիցը այդ գիտությունն է»:

Շահումյանը հայտնում է, որ դասարանում, երբ մյուս աշակերտները ուսուցչի հետ անհոգ խնդիրներ էին լուծում, իր ընդհանուր տեսրդի մեջ ուռած ընկեր գրել է "Самая лучшая из всех наук, - самое главное из всех познаний человеческих - это познание самого себя" և շարունակում. «Եվ իսկապես, ի՞նչ կարող է լինել ավելի լուրջ, ավելի նշանավոր գզացմունք, քան ինքնաճանաչությունը, ինքնադիտակցությունը, եթե կարելի է այսպես ասել»:

Շահումյանը գրում է ինչ-որ ներկայացումից ստացած տպավորության մասին և եզրակացնում. «Թատրոնը հասարակական կյանքի ճիշտ արտահայտիչը պետք է լինի որպես մի հայելի, նա պետք է ներկայացնի այդ կյանքը ճշմարտությամբ այնպես, ինչպես որ նա է»:

Այնուհետև Շահումյանը հիշում է Շեքսպիրի հետևյալ խոսքերը.
«Աշխարհը համայն մի բեմ է միայն,
Եվ մարդիկ ու կանայք սոսկ դերասաններ.
Ամեն մեկն ունի յուր մուտքն ու ելքը,
Եվ մի մարդ յուր կյանքում խաղում է շատ դեր»:

Խորհելով Շեքսպիրի այս խոսքերի շուրջ, Շահումյանը գրում է. «...Ճանաչիր քեզ. չնձաց սրտիս մեջ մի ձայն, որը հետզհետե ուժեղանալով փոփոքիներ էր բարձրացնում այնտեղ և ուժգին որոտում... Դուրս արի խայտառակ քառույց, թոթափիր քեզանից այդ մահաբեր խավարը, որի մեջ գտնվել

ես դու մինչև այժմ, և որում խարխափում են քո բոլոր չրջապատողները... մի խոսքով՝ ապրիր գիտակցաբար, ճանաչիր քեզ...»:

Եվ Շահումյանը եզրակացնում է. «Ահա իմ առաջ դրած ամենազխտավոր խնդիրը, որը միշտ և ամեն տեղ լինում է ինձ հետ. թե տանը, թե ուսումնարանում, թե փողոցում և թե ընկերական ու բարձրագույն դաստիարակության ժամանակ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 290-292):

1897 թ. հունվարի 2-ին գրած նամակում Շահումյանը դարձյալ անդրադառնում է վերահիշյալ մտքին, ընդգծելով, որ իր նախապաշարմունքների դարաշրջանն արդեն անցել է և ամեն բան անում է գիտակցաբար: Շահումյանը նաև գրում է, որ կարող է իր ասածն ապացուցել, բայց ժամանակ չունի և ավելացնում է. «... Ասեմք, եթե ժամանակ էլ կլինի, չէի կարողանա անել այդ, որովհետև ստիպված կլինեի մանրամասնորեն վերլուծել իմ բոլոր գործերը (հասկանալի է՝ ինչ գործերի մասին է խոսքս). ստիպված կլինեի շատ գաղտնիքներ բացել թե իմ և թե իմ չրջապատողների, որ բոլորովին ցանկալի բան չէ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 294-295):

ՊՍԱՆԻ ԸԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՍԱՐՁԱԿ ՔԱՅԼԸ

Հանրագումարի բերելով Ստ. Շահումյանի կյանքի պատանեկան և վաղ երիտասարդական տարիները, հարկ եմ համարում ընդգծել հետևյալը: Մի կողմից բնատուր ընդունակությունները, մյուս կողմից ինքնակրթությունը, որով նա զբաղվում էր ջանասիրությամբ, ինչպես նաև սեփական ապրուստի միջոցների հայթափումը, Շահումյանին բերում են ինքնուրույն գիտակցական կյանքի ուղի: Դա նաև նշանակում էր որոշակի կենսափորձ, համարձակություն ու վճռականություն:

Այստեղ արժե ծանոթանալ 1896 թ. սեպտեմբերի 9-ին Շահումյանի գրած նամակին: Խոսելով ուսումնարանում տիրող վիճակի մասին, Շահումյանն այն անվանում է «Գիտության տաճար» անվանյալ ապանդանոց» և շարունակում. «Մեր միջնակարգ դպրոցները ոչինչ չեն տալիս, աշակերտներն ավարտելիս դուրս են բերում ուսումնարաններից միայն մի հիվանդ մարմին, ջախճախված ջղեր և խանգարված ուղեղ, ահա քեզ միջնակարգ ուսումնարանների տված ամբողջ հարստությունը»:

Եվ այդ բոլորի պատճառը Շահումյանը համարում է այն ուսուցիչ հրեշներին, որոնք իրենց երևակայում են իբրև գիտության քարոզիչներ, որոնցից ոչ մեկը «ճշմարիտ գիտության հոտ չի առած և ոչ մեկը ներքին կոչում չունի ուսուցիչ կրեյտ»:

«Ասացեք խնդրեմ,- շարունակում է Շահումյանը,- ինչպե՞ս կարող է մարդ սիրել մի առարկա, որի ավանդողը փոխանակ սիրո և համակրության, միայն զգվանք և աստելություն է վայելում... : Այս բոլորը ես արդեն հասկանում եմ և լուսավորության գործն իմ սեփական ձեռքումն է գտնվում. լավ կլինեի, եթե ուրիշ կերպ էր եղել, բայց որ այդպես է, այդ էլ մի մեծ ցավ չի: Ինքնակրթության ոգին արդեն խոր արմատներ է ձգել իմ և իմ ընկերների մեջ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 272):

Եկավ 1898 թվականը: Շահումյանն ավարտում է Թիֆլիսի ռեալական ուսումնարանը: Ավարտական վկայականները հանձնվում են հանդիսավոր պայմաններում: Այդ հանդիսության ժամանակ էլ դրսևորվում է Շահումյանի ըմբոստ, համարձակ բնավորությունը, որը նրա դասընկերները բնորոշում են որպես քաղաքացիական խիզախություն:

Հանդիսության ժամանակ տեղի է ունենում առաջին հայացքից մի ոչ կարևոր միջադեպ: Վկայականների հանձնման արարողությունը սրահում հավաքվել էր մեծ թվով բազմություն, որոնց մեջ էին բարձրատիճանի չինովնիկներ, գեներալներ, խմբագիրներ: Այստեղ էին նաև չրջանավարտների ծնողները: Շահումյանի մայրը, որպես գերազանցիկ չրջանավարտի մայր, տեղ էր զբաղեցրել առաջին շարքում: Բավական ուշացած դահլիճ է մտնում խոշոր չինովնիկներից մեկի պճնված կինը: Ուսումնարանի դաստիարակներից Ստեցենկոն առաջ է նետվում և այդ պճնված կնոջը փորձում է նստեցնել Շահումյանի մոր տեղը:

Բայց, ինչպես հիշում են ժամանակակիցները, Ստեցենկոն հանդիպում է Շահումյանի շանթոջ հայացին և հարկադրված պճնված կնոջը նստեցնում է ուրիշ տեղ:

Ըստ արարողության կարգի վկայական ստանալուց առաջ չրջանավարտները մոտենում էին Վրաստանի հոգևորականության առաջնորդին, խոնարհվում և համբուրում նրա ձեռքը: Երբ հասնում է վկայական ստանալու Շահումյանի հերթը, նա չի խոնարհվում և չի համբուրում հոգևորականի ձեռքը: Ուսումնարանի պաշտոնյանները փորձում են համոզել Շահումյանին՝ չխախտել հաստատված կարգը: Սակայն Շահումյանը մտած է անդրդվելի: Եվ հարկադրված հրապարակավ ըմբոստություն անող չրջանավարտին հանձնվում է ավարտական վկայականը:

Շահումյանի այս համարձակ կեցվածքն աննկատ չէր մնացել և Թիֆլիսի սովորող երիտասարդության չրջանում երկար ժամանակ խոսվում էր նրա համարձակ քայլի մասին:

«ՍԱՆԹԱՇՈՎՆ ԱՊՇԵԼ ԷՐ ԱՅՂ ԱՆՍՊԱՍԵԼԻ ՊԱՏԱՍԽԱՆԻՑ»

Թիֆլիսի ռեալական ուսումնարանն ավարտելուց հետո Շահումյանի առջև կանգնում է ուսումը շարունակելու, բարձրագույն կրթություն ստանալու անհրաժեշտությունը: Նա գիտակցում էր, որ ուսումնարանում ստացած կրթությունը, դասերից դուրս ձեռք բերած գիտելիքները իր համար շատ քիչ են ազատագրական պայքարին եռանդուն մասնակցություն ունենալու համար: Ուստի բուռն ցանկություն ուներ ուսումը շարունակել հուճախաբար գիտությունների գծով: Սակայն այդ ուղին փակ էր նրա համար:

Դեռևս 1887 թ. հունիսին ընդունված օրենքով տեխնիկական դպրոցների վերակազմավորված ռեալական ուսումնարանների շրջանավարտներն իրավունք չուներին ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն, առաջին հերթին համալսարան:

Ռեալական ուսումնարանի շրջանավարտն իրավունք ուներ ուսումը շարունակել միայն տեխնիկական գծով: Սակայն այս սահմանափակումը չի վճատեցնում Շահումյանին: Իհարկե ցանկությունը շատ մեծ էր, բայց գլխավոր հարցը մնում էր ուսման ծախսը. ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով հոգալ: Կար, իհարկե, մի միջոց՝ ուսման ծախսը և ապրուստի միջոցը հոգալ աշխատանքի միջոցով:

Շահումյանը մինչ այդ էլ աշխատանքի միջոցով (մասնավոր դասեր տալով էր զբաղվում) կարողանում էր հոգալ իր ծախսերը, երբ ապրում էր հայրական տանը: Բայց Անդրկովկասում տեխնիկական ուղղությամբ բարձրագույն ուսումնական հաստատություն չկար: Դրանք գործում էին միայն Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում, որտեղ աշխատանք գտնելը նրա համար որոշակիորեն դժվար էր լինելու:

Այսպիսով, մի կողմից ուսումը շարունակելու բուռն ցանկությունը, մյուս կողմից նյութական միջոցներ չունենալը Շահումյանին կանգնեցրել էին անելանելի դրություն առջև: Բայց նրա համար բոլորովին անսպասելի մի հնարավորություն է ստեղծվում, որն այս անգամ կապված էր Հայտնի նախարար յոնաբերող մեծահարուստ Ալեքսանդր Մանթաչյանի (Մանթաչու) հետ:

Այս առնչությամբ որոշ հեղինակներ ստեղծել ու տարածել են Մանթաչույի անչափանդիր բարեգործության մասին այն միջոց, հաճույքով պնդելով, թե Մանթաչույի նյութական օգնությունը է Շահումյանն ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն, որ Մանթաչույը նույնիսկ օգնել է առցիակ-դեմոկրատ բուլչևիկ Շահումյանին և այլն:

Իհարկե, Մանթաչույը Հայտնի է եղել իր բարեգործությամբ: Սակայն դրան անդրադառնալը չի մտնում իմ նպատակի մեջ:

Իրականում Մանթաչույը Շահումյանին օգնել է ելնելով իր անձնական շահերից: Փորձեն ընթերցողին ներկայացնել Մանթաչույի օգնության անձնական շարժառիթը:

Շահումյանի հետ միասին նույն գիմնազիայում սովորում էր նաև Մանթաչույի ավագ որդին՝ Վանյան: Նա աչքի էր ընկնում ծուլությամբ, որն ավելի շատ անընդունակության արդյունք էր:

Իր որդու վիճակով մտահոգված Մանթաչույը խնդրում է ուսումնարանի տնօրենին, լավ սովորող աշակերտներից մեկին երաշխավորել Վանյայի հետ լրացուցիչ պարապելու համար: Տնօրենն առաջարկում է Շահումյանի թեկնածությունը: Շահումյանը համաձայնվում է պարապել վարձով: Պարապմունքների համար նա գնում էր Մանթաչույների տուն: Մանթաչույը, որը երբեմն ներկա էր լինում պարապմունքներին, ի դեմս Շահումյանի տեսավ մի բարեկիրթ, չրջահայաց ու գիտելիքներ ունեցողի:

Բայց գործը դրանով չի ավարտվում: Գ. Երիցյանը իր հուշերում պատմում է հետևյալը. «...Շահումյանն արդեն 20 տարեկան էր, ուներ զարգացած ու կայուն Հայացքներ: Մանթաչույը Շահումյանին խոստանում է լավ թոշակ տալ և Պետերբուրգում ապրելու տարիներին հոգալ նյութական բոլոր ծախսերը, պայմանով, որ Ստեփանը օգնի Վանյային ուսման մեջ, ետ պահել վնասակար հրապուրանքներից: Մանթաչույի հրավերով Շահումյանը սեղանում է հաճախակի գնալ նրանց տուն՝ Վանյայի հետ պարապելու, նրան նախապատրաստելու ընդունելության քննությունների»:

Այնուհետև Գ. Երիցյանը գրում է. «Ստեփանը Մանթաչույների վրա հրաշայի տպավորություն էր գործել: Մանթաչույի կրտսեր աղջիկը՝ Նադյան սիրահարվում է Ստեփանին: Նա իր սիրո մասին խոստովանում է մորը, որը և տեղեկացնում է այդ մասին ամուսնուն: Մանթաչույը հավանում է և որոշում է համաձայնվել աղջկան կնություն տալ Ստեփանին: Այդ կապակցությամբ Մանթաչույը բացատրվում է Ստեփանի հետ, խոստանալով որ սպաքա փեսան կստանա 200 հազար ռուբլի օժիտ և այնուհետև կարող է վարել նախարարության բարեգործության գործը: Այս բացատրվելուց մեկ տարի անց, Նադյայի հետ նշանվելու մասին Մանթաչույի առաջարկությամբ Ստեփանը պատասխանում է, որ ինքն արդեն ուրիշին է սիրում և ոչ մի պայմանով իր խաբը չի դրժի: Մանթաչույն ապշել էր այդ անսպասելի պատասխանից: Նադյան սկսեց խոսափել Ստեփանից:

Չույսած դրան, Պետերբուրգում Վանյայի ու Ստեփանի միասին ապրելու որոշումը մնաց ուժի մեջ և Ստեփանը որոշեց նրա հետ գնալ Պետերբուրգ, որ պետքի պատրաստվի ինստիտուտ ընդունվելու համար»:

ԿԱՐԱՊԵՏ ԵԶՅԱՆԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

1898 թ. հուլիսի վերջին Շահումյանը մեկնում է Պետերբուրգ: Նա առաջին անգամն էր լինում Ռուսական կայսրության մայրաքաղաքում, որտեղ տեղի էին ունենում հասարակական-քաղաքական իրադարձություններ: Այստեղ նա Ալեքսանդր Երիցյանի երաշխավորագրով հանդիպում է Կարապետ Էզովին (Եզյան), որը զբաղեցնում էր Ժողովրդական լուսավորության մինիստրության ուսումնական ղեկարտասանների տնօրենի պաշտոնը: Էզովը համապատասխան գրությունը Ստեփանին ուղարկում է տեխնոլոգիական ինստիտուտ: Նա հանձնարում է ընդունելության քննությունները և ընդունվում առաջին կուրս:

Սովորելու հետ միասին Շահումյանը պարսպում էր Մանիթաշովի սղալի հետ, դրան հատկացնելով իր ազատ ժամանակի մեծ մասը:

Շահումյանը Թիֆլիսի ծանոթ սոցիալ-դեմոկրատների երաշխավորությանը կապ է հաստատում տեղի սոցիալ-դեմոկրատների հետ և նրանց օգնությանը հեղափոխական աշխատանք է ստանում ուսանողների շրջանում: Հեղափոխական աշխատանքի մեջ արդեն որոշակի փորձ ունեցող Շահումյանին փոստահում են Պետերբուրգի մատուցյալում գտնվող Վոլկովո գյուղում բնակվող բանվորների շրջանում լուսաբանել ու տարածել մարքսիստական գաղափարներ:

«Ինստիտուտ ընդունվելուց հետո,- հիշում է Գ. Երիցյանը,- Ստեփանը ցերեկը դասի էր գնում, երեկոները պարսպում Վանյայի հետ: Իսկ Վանյան հաճախ էր թեղանում պարսպելիս, զբոսնում էր, գվարձանում ուսուցանվողում ու օրն անց էր կացնում բիլիարդ խաղալով, վարում էր շույլ կրանք ու չէր լսում Ստեփանին:

Երբ այս ամենի մասին իմանում է Մանիթաշովը, խտորեն կշտամբում է Ստեփանին՝ Վանյային հակելու իր պարտականությունների մեջ թերամապրո համար:

Մի քանի օր անց, Վանյան պահանջում է Ստեփանին իր փոխարեն գնա քննություն: Ստեփանի բացատրությունը, որ դասախոսները իրեն ղեկավար լավ են ճանաչում, բոլորը գիտեն նաև Վանյային որպես միլիոնատեր Մանիթաշովի որդու, և այդ պատճառով չի կատարի նրա պահանջը:

Սերժում ստացած Վանյան սկսում է Ստեփանին վիրավորել, նրան անվանել ճրիակեր ու անշնորհակալ: Այդ ամենը լցնում է Ստեփանի համբերության բաժակը և նա, հանուն իր արժանապատվության, որոշում է հեռանալ Մանիթաշովի որդուց: Դա նշանակում էր նաև հրաժարվել «մանիթաշովյան թոշակից»:

ՈՒԳԱՅԻ ՊՈԼԻՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

1898 թ. աշնանը Շահումյանը մեկնում է Ռիգա և ընդունվում տեղի պոլիտեխնիկական ինստիտուտի քիմիական ֆակուլտետ: Այսպես ավարտվում է նրա և Մանիթաշովի կապը:

Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում Շահումյանը ևս աչքի է ընկնում ուսանող առաջադիմությանը: Իր նյութական կարիքները բավարարելու նպատակով նա աշխատանք է գտնում, միաժամանակ կապվում է տեղի սոցիալ-դեմոկրատների հետ և եռանդով մասնակցում ուսանողական շարժմանը:

Իր սովորության համաձայն Շահումյանը չէր բավարարվում ուսանող ընթացքում ձեռք բերված գիտելիքներով: Նա մեթոդիկ կերպով



Ստ. Շահումյանը 1902 թ.

զբաղվում էր ինքնակրթությանը: Թե Շահումյանին ինչ է հետաքրքրել, ինչ հեղինակների է կարդացել, հստակորեն երևում է այն գրատումներից, որոնք նա կատարել Ռիգայում ուսանելու տարիներին:

Շահումյանի գրատումներին կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային արխիվում պահպանված տետրերից: Շահումյանի գրատումներից ու նամակներից երևում է նաև, թե նա ինչպիսի ուշադրություն է դարձրել գեղարվեստական գրականությանը: Այդ մասին բազմաթիվ վկայություններ կան նրա նամակներում:

Ահա մի քանի օրինակ: Նկատի ունենալով, որ արդեն կարդացել է ավելի ամբողջական հրատարակված Խ. Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպը, Շահումյանը 1897 թ. մարտի 28-ին Ե. և Հ. Տեր-Գրիգորյաններին ուղարկած նամակում գրում է, որ շատ է ներշնչված նրանով և ընդգծում է հետևյալը. «Որքան հրաշալի բան է... որքան սրբազան ոգևորություն է լցվում կարդացողի սիրտը, ահա... մի գրվածք, որ ամբողջովին «հեղինակի արյունով» է շաղախված, ամբողջովին բանաստեղծություն և անկեղծ ոգևորության արտադրություն է»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 302):

Մեկ այլ նամակում (1897 թ. ապրիլի 12) Շահումյանը նորից անդրադառնում է Թումանյանին, մեջբերում նրա հետևյալ տողերը.

«Ողջուն, վեհափառ լեռներ երկնահույ,
Ով հրաշալիք հզոր արարչի,
Եվ ահա հոգիս, ինչպես մի ասույ,
Թրած գալիս է ձեր գլխին հանգչի»:

Եվ ավելացնում. «Հրաշալի կտոր է, չէ՞, սիրելի քույրերս, ես չեմ կարող հիշել ձեզ առանց ձեր չքեղ երկրի սքանչելի բնության»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 304):

Շահումյանը բացասական կարծիք է կազմել Բաֆֆու «Կայծեր» վեպի մասին: 1899 թ. օգոստոսի 2-ին Ռիզայից ուղարկած նամակում նա գրել է հետևյալը. «Ատում են, որ այս գիրքը ամբողջ մի էպոսիս է կազմել Հայ ինտելիգենցիայի կյանքում, ասում են, որ մեր հեղափոխական շարժման ամենաթունոգ զարկերից մեկն է եղել դա... Չարմանում եմ... Եվ միայն զարմանում... Ձեր առաջ նստած է մի հեքիաթաբան-դերմիչ, պատմում է, փչում է ու փչում, առանց քաշվելու, առանց կարմրելու,- փչում է, ինքը ոգևորվում, երեխայական փրփրոսփայություններ է անում ու էլի շարունակում է փչել...»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 312):

Ռիզայում գտնվելու ընթացքում Շահումյանը չրադարեցրեց կապը Թիֆլիսում գտնվող իր ընկերների հետ, ձգտում էր ամեն կերպ տեղեկություններ ստանալ Անդրևովկասում տիրող իրավիճակի մասին, դրան հետևում «Մուրճ» ամսագրի և «Մշակ», ինչպես նաև "НОВОЕ ОБОЗРЕНИЕ" թերթերի միջոցով: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 307):

1899 թ. Ռուսաստանի մի չարք բուհերում սկսվեցին ուսանողական հուզումներ: Ռիզայի պոլիտեխնիկական ինստիտուտում ևս եղան հուզումներ, որոնց եռանդով մասնակցում է նաև Շահումյանը: Ոստիկանությունը ուսա-

նողական հուզումները ճնշում է դաժանորեն: Շատ բուհերի թվում նաև Ռիզայի պոլիտեխնիկական ինստիտուտն է փակվում: Շահումյանին հաջողվում է խուսափել ձերբակալությունից, բայց կորցնում է աշխատանքը, որով ինչ-որ կերպ ապահովում էր իր ծախսերը:

1899 թ. ապրիլին Շահումյանը Ռիզայից Ե. և Հ. Տեր-Գրիգորյաններին գրել է հետևյալը. «Տրամադրությունս էլի փչանում է, էլի անգործ մնացի: Ինստիտուտը փակված է, ըստ երևույթին մինչև ապրիլի 9-ը. գտնեմ մինչև այդ ժամանակ ОТПУСК են տալիս և աշխատում են, որքան կարելի է, շատ լինի գնացողների թիվը: Հարյուրներով ճանապարհ են ընկնում ուսանողները: Ի՞նչ անեն ես, չգիտեմ: Ստածում եմ- լավ չէ՞ր լինի ձեռք քաշել Ռուսաստանից, թեև ուղ յույնիակ համալսարանից և զնայ արտասահման: Չէ՞ որ Ռուսաստանում ավարտել սաղաթամաթ չի կարելի, կամ պետք է բանտի, աքսորի փայ դառնաս, կամ թե չէ, պետք է բարոյապես փչանաս, մեռնես, որ չգրաս քո շուրջը կատարվող բարբարոսությունները»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 311):

ՍՐԲԱԳՐԻՉՆ ՈՒ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ

Մինչ Շահումյանը մտածում էր ելք գտնել ստեղծված վիճակից դուրս գալու համար, նրա հայրը զայրացած վաճառական տերերի անարդարությունից, կրակում է նրանցից մեկի վրա և ձերբակալվում: Փաստորեն Շահումյանների ընտանիքը դրանով զրկվում է ապրուստի միջոցից և ընտանիքի ամբողջ հոգան ընկնում է Շահումյանի վրա:

Շահումյանին ուրիշ ելք չի մտում և նա 1899 թ. ապրիլին Ռիզայից վերադառնում է Թիֆլիս: Կարճ ժամանակ անց, նա աշխատանքի է ընդունվում "НОВОЕ ОБОЗРЕНИЕ" թերթի խմբագրությունում որպես սրբագրիչ: Միաժամանակ նա զբաղվում է թարգմանություններ և մասնավոր դասեր պարսկերով:

Հետաքրքիր է նշել, որ Շահումյանը ուսանողներից թարգմանում է Մ. Գորկու «Մեկ անգամ աշնանը» պատմվածքը, որն առանձին գրքով տպագրվում է 1901 թվականին: Շահումյանը հայերենից ուսանողներ է թարգմանել Հ. Թումանյանի «Ալքատի պատիվը» պատմվածքը, որը տպագրվում է "НОВОЕ ОБОЗРЕНИЕ" թերթում:

Սրբագրությունը ու թարգմանությունները կատարելու միջոցով Շահումյանին հաջողվում է մի կերպ հոգալ ընտանիքի հոգանքը: Իր դասընկերոջը՝ Ազարյա Արեյանին նա գրել այդ մասին, ընդգծելով, որ իրենց ընտանիքի

դրությունն այնքան վատ է, որ «դժվար է հանգիստ մնալ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 263):

Վերադառնալով Թիֆլիս, Շահումյանն անմիջապես կապվում է ընդհատակում գտնվող սոցիալ-դեմոկրատների հետ և ընդգրկվում հեղափոխական աշխատանքի մեջ:

Վերոհիշյալ թերթում սրբագրիչ աշխատելը, ինչպես նաև թարգմանություններ կատարելը Շահումյանի համար հնարավորություն են ստեղծում չիվիկ Թիֆլիսում գտնվող նշանավոր գրողների հետ, մասնակցել զանազան երեկույթներին, որտեղ քննարկվում էին հայ կյանքին վերաբերող բազմաթիվ հարցեր:

Իր ստացած տպավորությունների մասին Շահումյանը հուլիսի 18-ին ուղարկում է հանձնում Թիֆլիսի հայկական թերթերին, բայց դրանք մերժվում են անբարեհույս բովանդակության համար:

ՆՇԱՆԱՎՈՐ ԱՉԳԱԳՐԱԳԵՏ ԵՐՎԱՆԴԻ ԼԱԼԱՅԱՆԻ ՀԵՏ

1899 թ. հուլիսին Շահումյանը, որ արդեն ծանոթացել էր նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանի հետ, ընկերակցում է նրան և միասին մեկնում են Լոռի, նրա մասնակցությամբ ծանոթանալու «այս հետաքրքրական գավառի ներկային ու անցյալին»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 264): Լոռի գավառում Ե. Լալայանը մտադիր էր նաև որոշ վիճակագրական տվյալներ հավաքել և պեղումներ կատարել Ուզունյար գյուղում: (ՀՀ ԱԱ, Ծ. 4007, ց. 1. գ. թ. 7-9):

1899 թ. հուլիսի 30-ին Շահումյանը կատարված պեղումների մասին իր օրագրում գրում է. «Ուզունյարից մոտ երկու վերստ հեռավորությամբ մի քանի ասժեն չհասած խաչքարին, որտեղից սկսվում է ձորի ճանապարհը:

Ուզունյարի ճանապարհի վրա, դրսից երևում են ոսկորներ: Սկսում ենք փորել, խկուշյն զանազան կտորներ են դուրս գալիս. կես ֆուտի չափ էլ կարասի կտորներ են դուրս գալիս: Թե դրանք և թե ոսկորները անկարգ ածած են: Դուրս է գալիս մի փոքրիկ կարասի ուղբը. հետո երևում է մի մեծ կարասի կողքը և այլն: Երևում են ոսկորների, գանգերի և այլ կտորներ: Հողը մոխրի տպավորություն է թողնում: Բոլորը ենթադրում են, որ կուսապաշտական գերեզման է և որ ոսկորները այրած, ածած են կարասի մեջ: Գտնվում է մի ուրիշ կտոր, սևացած, այրված, հետո մի ուրիշը:

Հողն արևելյան կողմից դեղնավուն է: Գտնվում է մի քարի կտոր, որը փչրվում է (ГУՇЧАТЬИ): Շարունակում ենք փորել:

Առաջին գերեզմանից 20 քալ հեռավորությամբ երևում են կարգով դարձած քարեր գետնի երեսին: Սկսում ենք փորել: 1-1/2 արշին խորությամբ երևում են ուղի ոսկորներ, մանր ոսկորներ: Հետո երևում են մնացած ոսկորները: Թողնում ենք այդպես և սկսում ենք ամբողջ երկարությամբ փորել, սպ քարեր են դուրս գալիս կես-կես արշին մեծությամբ:

Երևում է գանգը: Նա ընկած է աջ կողքի վրա, թեքված դեպի ներքև: Մարմնի դիրքը՝ ոտքերը դեպի արևելք, գլուխը դեպի արևմուտք: Գերեզմանը գտնվում է արևելյան ափին: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 1, թթ. 9-10):

Պետք է, իհարկե, նկատի ունենալ, որ նշանավոր ազգագրագետ Ե. Լալայանի հետ ունեցած շփումները Շահումյանի համար կարևոր նշանակություն են ունենում Անդրկովկասում ապրող ժողովուրդների ազգագրությունը ուսումնասիրելու, նրանց համախումբ բնակվելու վայրերի մասին պատկերացում ունենալու համար:

Ես այս հանգամանքը հատկապես եմ ընդգծում, և հաջորդ էջերում, երբ անդրադարձ կլինի 1917 թ. տեղի ունեցած իրադարձություններին, հանգամանորեն կներկայացվի, թե Շահումյանն ապագա Հայաստանի, Վրաստանի և Արդրեջանի համար ինչպիսի սահմանափակ էր առաջարկում:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՈՒՋԻՆ ՍԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ ՍՏԵՂՈՒՄԸ

Այս այցելության ժամանակ էլ, 1899 թ. ամռանը Շահումյանը Ջալալօղլիում ստեղծում է Հայաստանի տարածքում առաջին մարքսիստական խմբակը, որի մեջ ընդգրկվում են իրեն նախորդ այցելություններից ծանոթ ընկերները, ինչպես նաև իր զարնկերները:

Սովորաբար այդ խմբակի ժողովները կազմակերպվում էին անկեղավ պայմաններում, Ջալալօղլու մոտակայքում գտնվող «Մայրի աղբյուր» կոչվող վայրում:

Հետաքրքրող բոլոր հարցերի մասին զեկուցում էր Շահումյանը: Առաջին ժողովներից մեկում Շահումյանը հանգամանորեն իր ընկերներին ծանոթացնում է Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանրֆեառ» աշխատության բովանդակությանը:

Շահումյանի կազմակերպած խմբակի անդամներից Անուշավան Թումանյանը

յանը հետազայում գրած հուշերի մեջ հայտնում է հետևյալը. «Եկավ 1899 թ. ամառը: Եկավ նաև մեր սիրելի Ստեփանը: Նա մեզ համար բերել էր «Ճանճեր և սարդեր», «Ով ինչպես է ապրում», «Վարձու աշխատանք և կապիտալ» բրյուշուրները ու Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մարտնչությանը»: (Ստեփանն Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 100):

«Մեր խմբակի պարապմունքները,- պատմում է Ա. Թումանյանը,- սիրտեմատիկ բնույթ ստացան: Ուսումնասիրում էինք տարբեր հարցեր: Բոլոր հարցերի շուրջ հիմնական խոսողը Ստ. Շահումյանն էր: Չեմ մոռանում, օրինակ, թե ինչպես պարապմունքներից մեկի ժամանակ Ստեփանն իր գրույցը նվիրեց ուսուպիստ-սոցիալիստներ Շառլ Ծուրիեյին, Ռոբերտ Օուենին ու մյուսներին: Պարզ ու հմայիչ էր նրա խոսքը: Ուսուպիստները հավատում էին, ասում էր Ստեփանը, թե իրենց ընտրած ճանապարհով հասնելու են սոցիալիզմին: Նրանցից Շ. Ծուրիեն այնքան համոզված էր իր ուսմունքի ճշտության մեջ, որ նույնիսկ հատուկ ժամեր էր նշանակում ու իր ընդունարանում սպասում, թե ահա կապիտալիստները կգան մտնելու իր կազմակերպչի միության մեջ»: (Նույն տեղը, էջ 101):

«Ստեփանը,- շարունակում է Ա. Թումանյանը,- կարողանում էր գունեղ դարձնել իր պատմածը: Նա դեռևս բոլորովին երիտասարդ, շատ չնորհայի հետտոր էր և չափազանց համոզիչ խոսք ուներ: Ինչ խնդիր որ հասկանալի չէր լինում այս կամ այն ընկերոջը, նա բազմաթիվ օրինակներով բացատրում էր ու դարձնում մատչելի: Մեզ համար, ի վերջո, ոչինչ անհասկանալի չէր մնում նրա պատմածներից...: Այդ ամառը Ստեփանը մեզ համար կարգաց մի շարք դասախոսություններ մարքսիզմի մասին: Աստիճանաբար պարզ էր դառնում, թե ովքեր են դաշնակցականներն ու հնչակյանները, ովքեր են եղել և ինչ են քարոզել ուսուպիստ-սոցիալիստները, ովքեր էին և ինչ էին ուզում նարոդնիկները, ինչ է մարքսիզմը և այլն»: (Նույն տեղը, էջ 101-102):

1899 թ. ամռանը կատարած այցելության ժամանակ Շահումյանը հանդիպումներ է ունենում Ալավերդում, Հաղպատում, Սամահինում, Շահալիում, Ուզունարում և այլ բնակավայրերում:

Այս այցելությունների, տեղերում կապեր հաստատելու, համախոհներ ձեռք բերելու մասին են վկայում են Մելիք Վարդուհանի նամակները, որոնք նա տարբեր ժամանակներում ուղարկել է Շահումյանին: (ՀՀ ԱԱ, Ծ. 4007, ց. 1, գ. 9, թ. 4, գ. 12, թ. 1):

ԳԼՈՒԽ 2 ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ՄՏՆՈՒՄ Է ՌՄԴԲ ԿՈՄՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐԸ

Մի քանի ամիս անց, բանտից ազատվում է Շահումյանի հայրը: Հոր ազատվելուց հետո, 1900 թ. ամռանը Շահումյանը մեկնում է Ռիգա՝ ուսումը շարունակելու հաստատ որոշմամբ:

Ռիգա մեկնելու և այնտեղ իր գրադմունքի մասին Շահումյանը Ե. և Հ. Տեր-Գրիգորյաններին ուղարկած նամակում 1900 թ. օգոստոսի 2-ին գրել է. «Ես բացի պոլիտեխնիկումի համար պատրաստվելուց, պարապում եմ և ուրիշ առարկաներով: Հիմնավոր կերպով ծանոթացա բանվորական շարժման հետ, այն հասարակական շարժման հետ, որ կրում է սոցիալիզմ անունը, ծանոթացա Չոլայի, Գյուլ-դե-Մուպասանի հետ, Անտոն Չեխովի հետ և այլն»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 313):

1900 թ. սեպտեմբերի 2-ին Շահումյանը ստանում է հնարավորություն ուսումը շարունակելու քիմիական ֆակուլտետում: Սովորելու հետ միասին նա վերականգնում է իր կապերը Ռիգայի սոցիալ-դեմոկրատների հետ և ստանձնում Բայթիական և «Ճենիքս» գործարաններում ստեղծված մարքսիստական խմբակների ղեկավարումը, որոնց մասնակցում էին բազմաթիվ առաջավոր բանվորներ: Այդ ժամանակ էլ նա ընդունվում է ՌՄԴԲԿ անդամ:

Ռիգայում Շահումյանը ծանոթանում է Պետերբուրգում ստեղծված «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միություն» անդամ Մ. Միրվինի հետ և նրանից առաջին անգամ լսում է այդ միության ղեկավար Վլադիմիր Ուլյանովի մասին:

Չուայած ցարական իշխանությունների հարածանքներին, ուսանողության չըջանում չի դադարում հեղափոխական աշխատանքը, որի կենտրոնում դարձյալ հանդես է գալիս Շահումյանը, գլխավորելով հետադեմ պրոֆեսուրայի և միապետական հովերով տարված ուսանողության դեմ մղվող պայքարը:

Շահումյանի եռանդուն մասնակցությամբ 1901 թ. աշնան վերջին ստեղծվում է «Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի կազմակերպական կոմիտե», որը կարճ ժամանակում ձեռք է բերում որոշակի հեղինակություն: Կոմիտեն տարածում էր թոռուցիկներ, ուսանողությանը կոչ էր անում պայքարել ցարական ինքնակալության դեմ և հասնել քաղաքական ազատությունների:

«ՄԵՎԱՆ» ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Ռիզայի պոլիտեխնիկական ինստիտուտում գործում էին տարբեր ազգությունների պատկանող Հայրենակցական միություններ, որոնք խնդիր ունեին միմյանց օգնել, պահպանել կապը սեփական ժողովրդի հետ, կատարել բուսավորչական աշխատանք:

Ինստիտուտում սովորող Հայ ուսանողությունն էլ էր կազմակերպել Հայրենակցական միություն, որին տրվել էր «Աևան» անվանումը: «Աևան» միությունն իր շուրջն էր համախմբել բոլոր Հայ ուսանողներին, որոնց թիվն հասնում էր 45-ի: (Մտե՛լիս Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 351):

Շահումյանը հենց սկզբից էլ դառնում է Հայրենակցից ուսանողների առաջատարը: Դրան հատկապես նպաստում է հետևյալ հանգամանքը: Շահումյանը Ռիզա էր վերադարձել կիսով հետ և ապրում էին վարձով բնակարանում: Բնակարանը բավական հարմար էր և Շահումյանը հնարավորություն ուներ իր մոտ հրավիրել է Հայ ուսանողներին: Այդ բնակարանը դառնում է Հայ ուսանողների հավաքատեղի:

Շահումյանի բնակարանում հավաքված ուսանողները քննարկում էին հանրությունը հետաքրքրող բազմաթիվ թեմաներ, որոնց մեջ կարևորվում էր Հայրենական հարցը: Հատկապես աչքի էին ընկնում «Աևան» Հայրենակցական միության դաշնակցության ուղղության վրա կանգնած անդամները, որոնք մերժում էին համատեսապես ազատագրական ընդհանուր շարժմանը մասնակցելու գաղափարը: Այս հարցի շուրջն էլ ծավալվում էր սուր բանավեճ:

Շահումյանը հիմնավորված առարկում էր այդ տեսակետը և բացատրում էր, որ Հայ ժողովուրդը կարող է իր քաղաքական և տնտեսական ազատագրության համեմատ միայն միանալով ցարական ինքնակալության դեմ մղվող համընդհանուր պայքարին:

Այդ օրերի մասին Ն. Փիրումյանը հիշում է հետևյալը. «Սեպտեմբերի սկզբներին «Աևան» խմբակում տեղի ունեցավ իմ առաջին հանդիպումը Ս. Գ. Շահումյանի հետ, երբ ես այնտեղ ներկայացա՝ անդամագրվելու Հայրենակցական միությանը: Մինք իսկույն բարեկամացանք»:

Շահումյանը հենց առաջին հանդիպումից Փիրումյանի վրա գործում է «անսովոր և անջնջիկ տպավորություն»: «Նրա ձայնը,- չարունակում է Փիրումյանը,- հանգիստ ու մեղմ էր, իսկ գրույցների ու բանավեճերի ժամանակ՝ համոզեցուցիչ, տրամաբանական հետևողականությունը ու հանդիմանությունը ստորված, իսկ երբ բանը հասնում էր սուք վեճերի, սպա այն ժամա-

նակ էլ նա չէր կորցնում բարեկամական և ջերմ վերաբերմունքը չափն անցած ընկերների նկատմամբ»: (Մտե՛լիս Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 351-352):

«ԹԵՈՐԵՏԻԿ» ԽՄԲԱԿԸ

Ռիզայի Հայ ուսանողների մեջ ձևավորվում է երկու ուղղություն: Հնարավոր չեղավ ընդհանուր հայտարարի պալ և Շահումյանն Ա. Աղբյանի (հետագայում հայտնի գյուլագիր Ա. Դանիելյան), Լ. Թարգուլյանի, Ն. Փիրումյանի, Գ. Ղազարյանի, Ա. Աղբյանի, Մ. Սարուխանյանի և Ն. Աթաբեկովի հետ միասին կազմակերպում է մարքսիստական ուղու վրա կանգնած Հայ ուսանողների խմբակը, որին տրվում է «Թեորետիկ» անվանումը:

Խմբակը, որն ուներ 10 անդամ, իր առջև նպատակ էր դրել ուսումնասիրել տարբեր երկրների հեղափոխական շարժումների տեսական հիմունքները:



«Թեորետիկ» խմբակի անդամները.

ձախից աջ - առաջին շարքում՝ Վ.Սիմոնյան, Վ.Հարությունյան, երկրորդ շարքում (նստած են)՝ Ս.Կոստանյան, Ն.Մամիկոնյան, Ա.Դանիելյան, Ստ.Շահումյան, Մ.Սարուխանյան, երրորդ շարքում (կանգնած են)՝ Ն.Փիրումյան, Գ.Եղիազարյան, Վ.Պարոնյան

«ՄԵՎԱՆ» ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Ռիզալի պոլիտեխնիկական ինստիտուտում գործում էին տարբեր ազգությունների պատկանող Հայրենակցական միություններ, որոնք խնդիր ունեին միմյանց օգնել, պահպանել կապը սեփական ժողովրդի հետ, կատարել բուսավորչական աշխատանք:

Ինստիտուտում սովորող Հայ ուսանողությունն էլ էր կազմակերպել Հայրենակցական միություն, որին տրվել էր «Սևան» անվանումը: «Սևան» միությունն իր շուրջն էր համախմբել բոլոր Հայ ուսանողներին, որոնց թիվն հասնում էր 45-ի: (Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 351):

Շահումյանը Հենց սկզբից էլ դառնում է Հայրենակցից ուսանողների առաջատարը: Դրան հատկապես նպաստում է հետևյալ հանգամանքը: Շահումյանը Ռիզա էր վերադարձել կնոջ հետ և սպրտում էին վարձով բնակարանում: Բնակարանը բավական հարմար էր և Շահումյանը հնարավորություն ուներ իր մոտ հրավիրել է Հայ ուսանողներին: Այդ բնակարանը դառնում է Հայ ուսանողների հավաքատեղի:

Շահումյանի բնակարանում հավաքված ուսանողները քննարկում էին հանրությունը հետաքրքրող բազմաթիվ թեմաներ, որոնց մեջ կարևորվում էր հայկական հարցը: Հատկապես աչքի էին ընկնում «Սևան» Հայրենակցական միության դաշնակցության ուղղության վրա կանգնած անդամները, որոնք մերժում էին համատուսաստանյան ազատագրական ընդհանուր շարժմանը մասնակցելու գաղափարը: Այս հարցի շուրջն էլ ծավալվում էր սուր բանավեճ:

Շահումյանը հիմնավորված առարկում էր այդ տեսակետը և բացատրում էր, որ Հայ ժողովուրդը կարող է իր քաղաքական և սոցիալական ազատագրության համեմատ միայն միանալով ցարական ինքնավարության դեմ մղվող համընդհանուր պայքարին:

Այդ օրերի մասին Ն. Փիրումյանը հիշում է հետևյալը. «Սեպտեմբերի սկզբներին «Սևան» խմբակում տեղի ունեցավ իմ առաջին հանդիպումը Ս. Գ. Շահումյանի հետ, երբ ես այնտեղ ներկայացա՝ անդամագրվելու Հայրենակցական միությանը: Մինք խոսեցին բարեկամացանք»:

Շահումյանը Հենց առաջին հանդիպումից Փիրումյանի վրա գործում է «անսովոր և անջնջիլ տպավորություն»: «Նրա ձայնը,- չարձանակում է Փիրումյանը,- հանգիստ ու մեղմ էր, իսկ գրույցների ու բանավեճերի ժամանակ՝ համոզեցուցիչ, տրամաբանական հետևողականությունը ու համոզվածությունը ստորված, իսկ երբ բանը հասնում էր սուք վեճերի, սպա այն ժամա-

նակ էլ նա Հէր կորցնում բարեկամական և ջերմ վերաբերմունքը չափն անցած ընկերների նկատմամբ»: (Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 351-352):

«ԹԵՈՐԵՏԻԿ» ԽՄԲԱԿԸ

Ռիզալի Հայ ուսանողների մեջ ձևավորվում է երկու ուղղություն: Հնարավոր չեղավ ընդհանուր հայտարարի գալ և Շահումյանն Ա. Աղբյանի (հետագայում հայտնի գյուղագիր Ա. Դանիելյան), Լ. Թարգոլյանի, Ն. Փիրումյանի, Գ. Ղազարյանի, Ա. Աղբյանի, Մ. Սարգսյանյանի և Ն. Աթաբեկյանի հետ միասին կազմակերպում է մարքսիստական ուղու վրա կանգնած Հայ ուսանողների խմբակը, որին տրվում է «Թեորետիկ» անվանումը:

Խմբակը, որն ուներ 10 անդամ, իր առջև նպատակ էր դրել ուսումնասիրել տարբեր երկրների հեղափոխական շարժումների տեսական հիմունքները:



«Թեորետիկ» խմբակի անդամները.

ձախից աջ - առաջին շարքում՝ Վ.Սիմոնյան, Վ.Հարությունյան, երկրորդ շարքում (նստած են)՝ Ս.Կոստանյան, Ն.Մամիկոնյան, Ա.Դանիելյան, Ստ.Շահումյան, Մ.Սարգսյանյան, երրորդ շարքում (կանգնած են)՝ Ն. Փիրումյան, Գ.Եղիազարյան, Վ.Պարոնյան

րը, ուշադրություն դարձնելով Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների ազատագրական պայքարին:

Շահումյանը չէր բավարարվում «Սևան» միությունից բաժանվելով: Նա իր համախոհների հետ շարունակում էր աշխատանք տանել «Սևանի» դաշնակցության գաղափարախոսության վրա հենված անդամների հետ:

Սակայն այդպես էլ չի հաջողվում ընդհանուր համաձայնության գալ: Առաջ անցնելով նշեմ, որ երկու տեսակետների վրա կանգնածները ուսումնալարտելուց հետո վերադարձան Անդրկովկաս, և այստեղ, արդեն պրակտիկ աշխատանքում, սկսեցին իրականացնել իրենց գաղափարախոսությունը:

Իսկ Շահումյանը, նկատի ունենալով տեղի ունեցած պատակաւոր, իր ընկերների հետ միասին կազմում է խմորատիպ «Հայ ժողովրդին» կոչը, որն ուղղված էր Անդրկովկասի բոլոր ժողովուրդներին: Այդ կոչում ասվում էր հետևյալը. «Ով ցանկանում է հաց և ազատություն, տուն ու հայրենիք ձեռք բերել, ում համար թանկ է իր երեխաների ու թոռների, ժողովրդի բախտը, նա պետք է միանա ողա աշխատավորներին, միասին նախապատրաստի հեղափոխությունը»:

Կոչը հռչակում էր. «Կովկասի որդիներ, հայեր, վրացիներ, թաթարներ, միավորվեցեք ապագա ուսական հեղափոխության դրոշակի ներքո»: (Թ. Դուբինսկի-Մուխոման, Շահումյան, էջ 47-48):

«Թեորետիկ» խմբակի անդամները չէին սահմանափակվում ուսանողության մեջ կատարված աշխատանքով: Նրանք կապվում են Ռիգայի մի շարք գործարանների բանվորների, սոցիալ-դեմոկրատական խմբակների հետ:

ՌՈՒՄԱՍՏՅԱՆԻ ՀԱՅ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հավատարիմ իր որդեգրած ուսմունքին, Շահումյանը որոշակի քայլեր է ձեռնարկում Ռուսաստանի տարբեր բուհերում սովորող հայ ուսանողներին համախմբելու համար: Նա չի բավարարվում միայն նամակագրությամբ, այլ մեկնում է Պետերբուրգ, որտեղ առավել մեծ թվով հայ ուսանողներ կային: Բոլորի հետ կապ հաստատելուց հետո Շահումյանը միջոցներ է ձեռնարկում հայ ուսանողները միավորելու համար:

Այդ նպատակով էլ 1901 թ. դեկտեմբերի 10-22-ին Ռիգայում Շահումյանի նախաձեռնությամբ հրավիրվում է Ռուսաստանի հայ ուսանողների համագումար: Դա պատմության մեջ առաջին համահայկական ուսանողական համագումարն էր, որին մասնակցում էր տարբեր տեղերից եկած 25 ուսար

նոր-պատգամավոր: (Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 353-354):

Համագումար էին եկել Ռուսաստանի տարբեր բուհերում սովորող ուսանողների ներկայացուցիչները: Մեծամասնությունը հաջվի առնելով Շահումյանի հեղինակությունը, նրան ընտրում է համագումարի նախագահ: Միաժամանակ Շահումյանը ղեկավարում է համագումարի սոցիալ-դեմոկրատական թևը և ծավալում է բուն բանավեճ նրանց հետ, ովքեր ձգտում էին հայ ուսանողները հեռու պահել ուսական հեղափոխական շարժումից և կոչ էին անում միայն զբաղվել հայ ժողովրդի ազգային հարցով:

Այս առումով առավել եռանդով էր գործում Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող Արսեն Ամիրյանը, որն այդ ժամանակ դաշնակցության անդամ էր: Նա իր ելույթում վճռականորեն պահանջում էր, որ հայ ուսանողները պետք է հեռու մնա համառուսական ուսանողական շարժումներից և պետք է միմիայն մտածի արևմտահայերի ազատագրության մասին:

Ա. Ամիրյանի կրակոտ ելույթին անդրադառնում է Շահումյանը, որը չհամաձայնվելով նրա հետ, ասում է, որ Ամիրյանը իրեպրակամացնում է «ազգային չուխան ու փափախը» և բացատրում է, թե ինչու հայ ուսանողները պետք է մասնակցի համառուսական հեղափոխական շարժմանը: Քանի որ, ասում էր նա, կովկասահայությունը Ռուսաստանի մի մասն է, ուստի պետք է աշխատել, որպեսզի Կովկասում ստեղծվեն ավելի ազատ քաղաքական պայմաններ, միայն այդ դեպքում հնարավոր կլինի օգնել արևմտահայերին: Իր միտքը հաստատելու համար Շահումյանը բերում է Վարդան Կուկուչյանի խմբի պատմությունը:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ Ռուսաստանում ազգային հարցը դեռևս լուծված չէ և կանխատեսում էր, որ «ականատես ենք լինելու ազգային շարժումներին»: (Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 206-207):

Շահումյանն անդուլ կերպով բացատրում էր, որ հայ ուսանողները, եթե ուզում է լուծել հայ ժողովրդի ազգային հարցը, ապա նա պետք է հանդես գա ուսական հեղափոխական ուսանողության հետ միասին և եռանդով մասնակցի համառուսական հեղափոխական շարժմանը:

«Թեորետիկ» խմբի անդամ, համագումարի պատգամավոր ապագա ինժեներ Նիկոլայ Փիրումյանը հիշելով հայ ուսանողների համագումարի մասին, գրել է. «Շահումյանը կոչ էր անում յուրացնել Կարլ Մարքսի ուսմունքը, համարակալով կյանքում դասակարգային պայքարի իմաստը, և ՌՄԻՒԿ-ի ղեկա-

վարուձյամբ բոլոր ժողովուրդների աշխատավորների միասնական ճակատ կազմել պայքարելու բանվորների ու գյուղացիների թշնամիների՝ բուրժուա- ների և ֆեոդալների դեմ»:

Ն. Փիրուսյանը հիշում է նաև Հետևյալը. «Համագումարի նախագահ ընկ. Շահումյանից հատկապես լավ դաս ստացան դաշնակցական կուսակցու- թյան պատկանող ուսանողների՝ չափը կորցրած լիդերները, բոլոր ոչ հայերի դեմ բոլոր հայերի պայքարի իրենց լողունգի համար: Նա ամենայն կրքոտու- թյամբ ապացուցում էր Թուրքիայում և Ռուսաստանում դաշնակների պայ- քարի իսկական բուրժուական բնույթը, որը մղվում էր ի հաճույս հայ առևտրական բուրժուազիայի ու բուրժուական մտավորականության և ի միաս աշխատավոր գյուղացիության ու բանվոր դասակարգի»: (Մետեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 354):

Հայ ուսանողների անդրամիկ համագումարում Շահումյանին ու նրա կողմնակիցներին հաջողվում է անցկացնել իրենց տեսակետը, որի արդյուն- քում ընդունված բանաձևում արձանագրվում է, որ «հայ ուսանողությունը պետք է մասնակցի Ռուսաստանում տեղի ունեցող ընդհանուր ուսանողա- կան շարժումներին»:

Ինչպես վկայում է համագումարի մասնակից Ա. Մ. Մեյխրյանը, այդ բա- նաձևի ընդունումից հետո «ազգասիրական թևը» սպառնում է հեռանալ համագումարից և առանձին հավաքվել Դորպատում: Սակայն, բանակցու- թյունների շորհիվ, նրանք հրաժարվում են իրենց մտադրությունից: (Մետե- փան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 207):

Պետերբուրգի, Մոսկվայի, Կիևի, Խարկովի, Կազանի և այլ բուհերից եկած սոցիալ-դեմոկրատ ուսանողները տեղեր վերադառնալով ուժեղացնում են իրենց գործունեությունը, միաժամանակ համար պայքար տանելով ազգա- նական հայացքներ ունեցողների դեմ:

Գտնվելով Ռիգայում Շահումյանը նամակագրական կապ էր պահպանում Թիֆլիսում մնացած իր ընկերների հետ, որոնք դեռ շարունակում էին մնալ «Միածանի» մեջ: Վ. Տերյանի վկայությամբ Շահումյանի ուղարկած նամակ- ներից մեկը «տարակուսանքի մեջ էր գցել «ծխածանականներին», քանի որ դա չէր համապատասխանում «ծխածանական շրջաններում տիրող մտայնու- թյան...»: Չնայած որ Շահումյանի առաջ քաշված գաղափարները չէին հա- մապատասխանում «ծխածանականների» հայացքներին, բայց նրանց մոտ այնքան մեծ էր նրա հեղինակությունը, որ իրենց «Ընկեր» ձեռագիր թերթում գետեղեցին Շահումյանի նամակը, որը, սակայն չի պահպանվել:

«ՄՈՒՐՃ»-Ի ԽՄԲԱԳԻՐ Ա. ԱՐԱՄԽԱՆՅԱՆՑԻՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Շահումյանը ուշադրությամբ հետևում էր հայկական միջավայրում զար- գացող հասարակական ու քաղաքական տրամադրություններին: Ինչպես վկայում են ժամանակակիցները Շահումյանը շարունակում էր բարեկամա- կան կապ պահպանել Հովհաննես Թումանյանի, Հակոբ Հակոբյանի և հայ մշակույթի շատ այլ անվանի գործիչների հետ:

Նա չէր հանդուրժում նրանցից որևէ մեկի դեմ անարդարացի հարձա- կումներ և անմիջապես հանդես էր գալիս պաշտպանությամբ: Այս առու- մով կարելի է հիշել «Մուրճ» ամսագրի խմբագիր Ավետիք Արամյանյան- ցին, որի հետ Շահումյանը ուներ բարեկամական հարաբերություններ: Արամյանյանը ժամանակի հայ իրականության առաջադեմ գործիչներից էր, վայելում էր արժանի հեղինակություն:

1900 թ. «Մշակ» թերթում հրատարակվել էր Ավետիք Արամյանյանցի դեմ անհիմն ու վարքաբեկիչ հոդված: Շահումյանը Թիֆլիսում լույս տեսնող «Տարազ» չաբաթաթերթում այդ հոդվածի դեմ հրատարակում է բաց նա- մակ, որը, ըստ էության, Շահումյանի առաջին տպագիր խոսքն է:

1900 թ. «Մշակ» թերթի թիվ 224-ում տպագրվել էր «Միթե պետք կա բացատրելու» հոդվածը, որի հեղինակն անդրադառնալով «Մուրճ»-ի բո- վանդակությունը, ամսագրի անհաջողությունը վերագրում է խմբագիր Արամյանյանցի «ծայրահեղ անշնորհությունը», «ազնվությունից զուրկ լինելուն» և այդ ամենի արդյունքը համարում է «գրական ազնվության տարրական պահանջներից զուրկ դարձած ամսագրի դատարկությունը»: Վերջապես հոդվածագիրը «Մուրճի» անհաջողությունը տեսնում է նաև նրանում, որ ունի քիչ բաժանորդներ:

Շահումյանը, որ անձամբ ճանաչում էր Ավետիք Արամյանյանցին, հա- մակրում էր նրա հայացքներին, չէր կարող անտարբեր մնալ «Մշակ» թերթի հրատարակմանը և իր վերաբերմունքն արտահայտում է «Տարազ» չաբա- թաթերթում հրատարակված հոդվածում:

Շահումյանը Արամյանյանցին տրված վերոհիշյալ աչառու գնահատա- կանը համարում է «լուկ կրքից բխած անվանարկություն», որը պարզ է մա- մուլին հետևող ամեն մի ազնիվ ընթերցողի համար:

«Դրական ազնվությունից խոսող պարոնը,- գրում է Շահումյանը,- իր հոդվածով ուղբի տակ է տալիս ազնվությունն ու ճշմարտությունը և կրքից կուրացած, միակողմանիության մեջ է խրվում»:

Չհամաձայնվելով հոդվածագրի այն մտքին, թե քիչ բաժանորդ ունենա-

յը նույնպես «Մուրճի» անհաջողություններից մեկն է, Շահումյանը նշում է, որ քիչ տպագրանալը վերաբերում է նաև «Մշակին» և գրում Հետևյալը. «Բայց ինչո՞ւ, երբ հարցը գալիս է «Մուրճին», հասարակությունը շատ ուշ աղիք է դառնում և առհասարակ բոլոր պայմանները փոխվում են և ամապգրի անհաջողության «ամբողջ մեղքը» բացատրվում է նրա «վարողի ծայրահեղ անշնորհքությամբ և անազնավությամբ»...

Այնուհետև Շահումյանը գրում է, որ հոգվածագրի լրջիկայով դատելու դեպքում «Մշակի» (իբրև լրագրի) բաժանորդների թվի դանդաղ աճելը մոտ 30 ձիգ տարիների ընթացքում «պիտի բացատրենք այդ լրագրի դատարկությունը, նրա ղեկավարների անշնորհքությամբ, անազնավությամբ և այլն: Բայց չէ՞ որ այդ սխալ կլիներ. չէ՞ որ այդպիսի անհեթեթություն կասեր միայն կրքից կուրացած մարդը»:

Շահումյանը պաշտպանում է «Մուրճ» ամսագրին, նշելով, որ նրա շուրջ «ժողովված էր երիտասարդ գրողների մի ամբողջ խումբ», ընդգծում է Հետևյալը. «Ասեյ, թե «Մուրճը «փայլում էր իր դատարկությամբ», դա նշանակում է ցեխ չպրտել գրական համեստ ու անխոնջ գործիչների մի խմբի երեսին և վիրավորել նրանց ամենանվիրական զգացմունքները»:

«Մուրճը»,- չեղտում է Շահումյանը,- գրականության անկեղծ ու անաչառ բարեկամների համար, որոնք նշանակություն չեն տալիս մի երկու գրողի անձնական բանակրիվներին, միշտ հետաքրքիր է եղել իր բովանդակությամբ և մանավանդ՝ Հայ ընթերցող հասարակության կողմից ճանաչված էր իր շխտակությամբ ու ազնվությամբ»:

Հոդվածի վերջում Շահումյանը գրում է. «Մենք հարգում ենք հասարակական կյանքի երևույթների բազմակողմանի և անաչառ ուսումնասիրությունը և ահա հանուն այդ գաղափարի և հանուն ճշմարտության՝ բողոքում ենք վերը նշված հոդվածի դեմ, որի հեղինակը ոչինչ չի ասում մեզ և միմիայն գոհացում է տալիս իր կրքերին»:

Շահումյանն այն կարծիքն է հայտնում, որ այդպիսի հոգվածները «արատ են բերում մամուլի կոչմանը և միմիայն նպաստում են նրա բարբերի անկմանը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 417-419):

Շահումյանի այս առաջին տպագիր խոսքը լավագույն վկայությունն է այն բանի, որ երիտասարդ հեղափոխականը «դատապարտում էր Հայ մամուլի բացասական երևույթները և հանդես էր գալիս գրական բարբերի մաքրության պաշտպանությամբ»: (Արտաշես Ոսկերչյան, Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները. Ստեփան Շահումյան, Մուրեն Սկանդարյան, Երևան, 1962, էջ 43):

ԱՌԱՋԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՑՈՒՅՑԸ ՌԻԳԱՅՈՒՄ

1890-ական թվականների վերջին ցարական իշխանություններն ավելի ուժեղացրին ճնշումն առաջադեմ ուսանողների դեմ: Դրան էին ուղղված 1899 թ. հաստատված ժամանակավոր կանոնները, որոնց հիման վրա անբարեհույս ուսանողները զորակոչվում էին բանակ, որն այլ խոսքով նշանակում էր նրանց գրկել բարձրագույն կրթություն ասանալու վերջնական հնարավորությունից: Այս հողի վրա սկսվեցին ուսանողական բուռն բողոքի ցույցեր:

Ռուսաստանի այլ քաղաքներում սկսված ուսանողական բողոքի ցույցերը 1901-1902 թթ. իրենց ոլորտն առան նաև Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողությանը: Ուսանողության ելույթները ղեկավարում էին սոցիալ-դեմոկրատները, որոնց մեջ առաջնակարգ դերը ստանձնել էր Շահումյանը:

Հիշատակության արժանի է 1901 թ. նոյեմբերի 24-ին կազմակերպված ելույթը: Սոցիալ-դեմոկրատների նախաձեռնությամբ հավաքված Ռիգայի 500 ուսանողներ ընդունեցին պահանջ՝ տալ խոսքի, ժողովների, մամուլի, խղճի ազատություն: Հավաքից հետո ուսանողները դուրս եկան փողոց և առաջին անգամ հրապարակավ երգելով «Ինտերնացիոնալը», անցան Ռիգայի կենտրոնական փողոցներով:

Այս բացահայտ ելույթը իսկական մարտահրավեր էր իշխանություններին: Ոստիկանությունը դիմում է բռնությունների, ձերբակալությունների: Իշխանությունները հույս ունեին, որ բանի միջոցներ կիրառելով՝ կաստեն ուսանողներին:

Բայց նրանց սպասելիքները չեն արդարանում: Մի քանի օրվա ընթացքում սոցիալ-դեմոկրատները եռանդուն աշխատանք տարան բանվորների և ուսանողների շրջանում, նրանց համատեղ ելույթի կոչ անելով:

Կատարված աշխատանքն արդյունք է տալիս: 1901 թ. նոյեմբերի 7-ին Շահումյանի գլխավորությամբ Ռիգայում տեղի ունեցավ բանվորների և ուսանողների միացյալ ցույց: Ըստ էության դա Ռիգայում առաջին քաղաքական ցույցն էր: Ոստիկանական հարածանքները չէին դադարում: Կատարվեցին նոր ձերբակալություններ, շատ ուսանողներ վտարվեցին պոլիտեխնիկական ինստիտուտից:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ռիզայի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողների Հեղափոխական ելույթներն այնքան տպավորիչ էին, որ դրա ազդեցությամբ որոշվում է այս տեղ Հրապիրել ուսանողների Համառուսաստանյան երկրորդ Համագումարը: 1902 թ. փետրվարի սկզբին տեղի ունեցած այդ Համագումարի 40 պատգամավորների թվումն էր Շահումյանը, որը ներկայացնում էր Ռիզայի ուսանողությունը:

Այս Համագումարը պետք է պատասխան տար Հետևյալ հարցին. ուսանողական շարժումները պե՞տք է շարունակեն կրել ակադեմիական բնույթ, թե՞ պետք է վերածվեն քաղաքական պայքարի:

Շահումյանը, որն արդեն ձեռք էր բերել որոշակի Հեղինակություն, դառնում է այդ Համագումարի կենտրոնական դեմքերից մեկը: Նա Համոզված էր, որ ուսանողական շարժումները պետք է դուրս գան ակադեմիական չրջանակներից և ընդունեն քաղաքական բնույթ: Շահումյանը իր ելույթում նշում էր, որ Համալսարանական ազատություններն անիրագործելի են, մինչև որ չխորտակվի քաղաքական գլխավոր խոչընդոտը, այն է՝ ցարիզմը»: (Առեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 207):

Համագումարի նիստերից մեկում Շահումյանն այն միտքն է արտահայտում, որի Համաձայն ուսանողական շարժումներն այլևս չեն կարող մնալ ինքնափոփ, որի պատճառով ուսանողության մեծ մասը Հիասթափվելու է, իսկ նրա Հեղափոխական մասն էլ պետք է Հարի սոցիալ-դեմոկրատական կուսակցությանը:

Շահումյանին Համագումարն ընտրում է Ռուսաստանի ուսանողությանն ուղղված կոչ-մանիֆեստի մշակման համար երեք հոգուց բաղկացած հանձնախմբի անդամ: Ինչպես վկայում են ժամանակակիցները, Շահումյանն է գրել այդ մանիֆեստի զգալի մասը:

Մանիֆեստում ուսանողական շարժումը գնահատվում է որպես քաղաքական շարժում և ընդգծվում է, որ ուսանողական շարժման վերջնական նպատակն է՝ Հաստատ քայլերով հասնել քաղաքական ազատության:

Շահումյանն ու նրա համախոհները հասան նրան, որ ընդունված մանիֆեստում ընդգծվում է Հեղափոխական շարժման մեջ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ունեցած դերը և կոչ էր արվում նրանց Հետ հաստատել սերտ կապեր: Մանիֆեստը երաշխավորում էր պայքարի բոլոր ձևերի կիրառման Հետ միասին կարևոր նշանակություն տալ քաղաքական

ցույցերին (Ս. С. Гусятников, Революционное студенческое движение в России, М. 1971, стр. 75):

Ուսանողների Համառուսաստանյան երկրորդ Համագումարից անմիջապես Հետո, 1902 թ. փետրվարի 11-ին Շահումյանի ղեկավարությամբ պոլիտեխնիկական ինստիտուտի 300 ուսանող դասարույ է Հայտարարում, պահանջելով վերականգնել 1901 թ. վերջին ինստիտուտից վտարված ուսանողների իրավունքները: Ուսանողներն ընդունում են բանաձև, որտեղ ընդգծվում էր, որ իրենց պայքարը «չի կարող ավարտվել այնքան ժամանակ, քանի դեռ կատարված չեն ուսական ուսանողության արդարացի պահանջները»:

Ուսանողների ելույթի ժամանակ տարածվում է Շահումյանի գրած թուղթիկը: «Մենք,- սավում էր նրանում,- Ռիզայի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողներս, կզգանք մեզ ոչ միայն ուսանողներ, այլև որպես ստրկացված երկրի քաղաքացիներ... Աշխատավոր մասսաների Հետ միասին կոչ ենք անում ձեզ՝ չխնայելով ուժերը մասնակցել նոր պայքարին»: (ՀՀ ԱԱ, ֆ. 4007, ց. 2, գ. 128, թ. 18):

Թուղթիկն անարձագանք չի մնում: Ուսանողների ելույթին միանում են Ռիզայի բանվորները:

«ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ՉԵՐ ՍՈՒՏՔԸ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

Պոլիտեխնիկական ինստիտուտի այս դասարտւց-ցույցն էլ է ճնշվում և նրա կազմակերպիչները, այդ թվում նաև Շահումյանը, Հեռացվում են ինստիտուտից:

1902 թ. մարտի 1-ին Ռիզայի պոլիտեխնիկական ինստիտուտի տնօրեն Գրենբերգը ուսանողների անկարգության մասին հոգաբարձուների խորհրդի նախագահին Հայտնում է, որ փետրվարի 18-ին ինստիտուտի կարգապահական հանձնաժողովն ավարտել է փետրվարի 11-ին տեղի ունեցած անկախ Հավաքի մասնակիցների գործերի քննությունը և որոշել է մինչև 1903 թ. սեպտեմբեր Հավաքի եռանդուն մասնակիցներին Հեռացնել ինստիտուտից: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 4, թ. 1):

Շատերն էլ աքտրվեցին: 1902 թ. մարտի 2-ին Շահումյանը, որպես ուսանողական շարժման գլխավոր կազմակերպիչներից մեկը, նույնպես վտարվում է ինստիտուտից և արտաքսվում Թիֆլիս: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 4, թ. 2):

Ինստիտուտից վտարվելու մասին պոլիտեխնիկական ինստիտուտի իր Հետադիմությանը Հայտնի տնօրեն Գրենբերգը մարտի 9-ին Շահումյանին

գրավոր հայտնում է հետևյալը. «Սույնով հաղորդում եմ ձեզ ի գիտություն, որ ուսումնական կոմիտեի որոշման հիման վրա, որը հաստատվել է օկրուգի պարոն Հոգաբարձուի կողմից, դուք 1902 թ. փետրվարի 11-ի անկարգություններին մասնակցելու համար վտարված եք ինձ վստահված ինստիտուտի ուսանողների կազմից, հաշված ս. թ. մարտի 2-ից մինչև 1903 թ. սեպտեմբերը: Արգելվում է ձեր մուտքը ինստիտուտ: Ձեր փաստաթղթերը ձեզ կտրվեն ուստիկանության միջոցով»: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 4, թ. 4): Նույն օրը տնօրենը Շահումյանի մորը հայտնում է նրա որդու հեռացման մասին: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 4, թ. 7):

Ուստիկանությունը պահանջում է Շահումյանից՝ անմիջապես հեռանալ Ռիգայից և մեկնել արտաքսման վայր ընտրված Թիֆլիս: Բայց Շահումյանը չէր կարող հենց այնպես, իր համախոհներին առանց որևէ խուճ ասելու հեռանալ Ռիգայից: Շահումյանը գրում է «Կոչ բնակչությանը» թուուցիկը, որը տպագրվում է խմորատիպ և տարածվում: «Մենք,- գրել է Շահումյանն այդ թուուցիկում,- բանվորների հետ դաշն կնքած ձեզ բոլորիդ կոչ ենք անում ինքնակալության դեմ վճռական պայքարի ելնել»: (Ռ. Դուբինսկի-Մուխոման, Շահումյան, էջ 55):

1902 թ. ապրիլի 19-ին Ռիգայի ուստիկանապետը Թիֆլիսի ուստիկանապետին հայտնում է ինստիտուտից Շահումյանի վտարման մասին և ուղարկում է նրա փաստաթղթերը, միաժամանակ պահանջելով Շահումյանից վերցնել ուսանողական քարտը և Ռիգայում բնակվելու իրավունքի վկայականը: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 4, թ. 5):

Անփութելով Ռիգայում Շահումյանի ծավալած հեղափոխական գործունեությունը, նրա ավագ որդի Սուրենը 1927 թ. գրել է, որ եթե մինչև Ռիգա մեկնելը, Շահումյանի հարցասեր միտքը որոնում էր իր տեղը հասարակական կյանքում գաղափարական իմաստով, ապա Ռիգայում նրա աշխարհահայեցողությունն ամբողջապես ձևավորվում է որպես մարքսիստական:

«Հենց առաջին օրից,- գրել է Սուրենը,- այդ ձևավորումը և կուսակցության Ռիգայի կազմակերպության մեջ ընդունվելը, նա ձևավորվել էր որպես հեղափոխական մարքսիստ, որպես բոլշևիկ և իր ամբողջ կյանքի ընթացքում նա երբեք բոլշևիզմից չի հեռացել: Նա պատանեկան իրեալիզմից անխուսափելիորեն հասել է այն իրական մարքսիզմին, որի հետևողական արտահայտիչն է մնացել մինչև իր կյանքի վերջը»: (Գ. Ս. АКОПЯН, Степан Шаумян, Жизнь и деятельность (1878-1918), М. 1973, стр. 22):

«ԱՅՊ ԸԱՏ ԼՈՒՌՁ ԵՎ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԱՐԱԳ ՄՏԱԾՈՂ ՄԱՐԴԸ»

1902 թ. մարտին Շահումյանը վերադառնում է Թիֆլիս և անմիջապես վերցվում ուստիկանության գաղտնի հակողության տակ: Շահումյանը, որն արդեն տիրապետում էր անլեզալ աշխատանքին, կարողանում է կապ հաստեղ Թիֆլիսում գործող սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հետ և ընդգրկվել հեղափոխական աշխատանքի, մեծ ուշադրություն դարձնելով մարքսիստական գաղափարների պրոպագանդմանը:

Այդ օրերին Շահումյանի հետ ծանոթանում է հետագայում Ժողովրդական ուսուցիչ դարձած Միմակ Սահակյանը, որը իր հուշերում գրում է, որ իր վրա մեծ տպավորություն են թողել հայերից երեք մարդ՝ Կոմիտասը, Ղազարոս Աղայանը և Ստեփան Շահումյանը: «Այդ շատ լուրջ ու զարմանալի արագ մտածող մարդը,- գրել է Միմակը,- որ և շատ մեծ զարգացման տեղ էր, շատ ու շատ էր սիրում երեխաներին: Ասենք՝ նա ամենքին էր սիրում, եթե նրանք դաժան ու չար չէին: Ի՛նչ խուճ, նրա հետ խոսող երեխաներն էլ նրան էին շատ սիրում ու վստահ մտեծում: Երեխաների նկատմամբ Ստեփանի սերը, վերաբերմունքը, գուրգուրանքը պաշտոնական չէր, այլ անկեղծ էր, անկաշտ ու սրտանց: Նա միշտ մտածում էր և շատ անգամ էլ ասում, որ պետք է ամեն ինչ անել, ամեն միջոցի դիմել՝ երեխաներին առողջ մտքով և առողջ մարմնով դաստիարակելու համար»: (Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 279-280):

Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը լրջորեն նախապատրաստվում էր 1902 թ. Մայիսի 1-ը նշելու համար: Բանվորների շրջանում լայն աշխատանք էր տարվում նրանց ցույցի հանելու համար: Տարբեր լեզուներով գրվում և տարածվում են թուուցիկներ: Շահումյանը Արշակ Զուրաբյանի, Դանուշ Շահվերդյանի, Ռուբեն Դաշտոյանի, Արամայիս Երզնկյանի և Աշոտ Խոմարյանի հետ միասին ձեռնամուխ է լինում հայերեն թուուցիկի կազմմանը, տպագրության ու տարածմանը: Մայիսմեկյան ցույցերի նախօրյակին Շահումյանը հանդիպում է Հ. Թումանյանին և նրան է ներկայացնում Ա. Պուշկինի «Ազատություն» բանաստեղծությունը, որն անլեզալ տարածվել էր Ռուսաստանում: Ծանոթանալով այդ բանաստեղծությանը, Հ. Թումանյանը Շահումյանի խնդրանքով դրանից թարգմանում է հետևյալ հուշակալորքաւատողը.

«Ատում եմ քեզ և քո գահը,
Միահեծան գոռոզ ցար,
Եվ քո որդոց ու քո մահը
Պիտի տեսնեմ անպատճառ...»:

Այս քառասուորը նույնպես տպագրվում է Հազարավոր օրինակներով և տարածվում մայիսամեկյան ցույցի ժամանակ:

Այստեղ Հարկ եմ համարում նշել, որ մեծ բանաստեղծի Հետ ծանոթության Հենց առաջին օրերից Շահումյանը բարձր էր գնահատում Հովհ. Թումանյանի պոեզիան, Հայ հասարակական կյանքում նրա ունեցած խոշոր դերն ու նշանակությունը և մինչև իր կյանքի վերջը, մնաց նրա ջերմ երկրպագուն:

1896 թ. նոյեմբերի 14-ին Ե. և Հ. Տեր-Գրիգորյաններին գրած նամակում Շահումյանը նորից հիշում է. «Ողջուն , վեհափառ լեռներ երկնահուպ» ստորով սկսվող քառյակը և գրում է. «Այս խոսքերով է հիշում մեր Լոռու բանաստեղծը այդ սքանչելի աշխարհը, որտեղ բնակվում էք այժմ և ուրիշ կերպ չի էլ կարելի հիշել այդ ճոխ գավառը»:

Եվ նկատի ունենալով Թումանյանի պոեզիայի ազդեցությունը, Շահումյանը գրում է. «Հիանալի բան է պոեզիան, բանաստեղծությունը: Մարդ կարդալիս (իհարկե, ոչ թե մի թիաբանություն, այլ իսկական գեղարվեստական ստեղծագործություն կարդալիս), բոլորովին փոխվում, վերանում է... Հոգին լցվում է մի անասելի քաղցր բերկրանքով, և Հետպահետ լայնանալով, մեծանալով մոռացնել է տալիս մարդկային կյանքի բոլոր կեղտերը՝ նրա աղտն ու մուրը, բարձրացնում է մեզ մեր ամենօրյա ցածրությունից և չընդապատում է մեզ մի լուսեղեն քողով, որ յուր չափազանց փայլով արգելում է տեսնել հիշած ախտն ու մուրը»: (Առ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 284-285):

«...ԻՆՉ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՀԱՐՑ ԿՐՆԱՐ ԼԻՆԵԼ ՄԵՐ ՄԵՋ...»

Անդրկովկասում ծափալված Հեղափոխական շարժման գուլերնիցայ ալեկի են խորանում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների և դաշնակցության տարաձայնությունները: Տարաձայնությունների գլխավոր ինդիքը մեծ Հաշվով վերաբերում էր Հայկական Հարցին: Ըստ դաշնակցության գաղափարախոսների Հայ բանվորն ու գյուղացին իրենց ազատագրության համար պետք է պայքար մղեին, գործ չունենալով Ռուսաստանում ծափալվող Հեղափոխական շարժման Հետ: Իսկ դա նշանակում էր Հայ բանվորին ու գյուղացուն Հետու պահել սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունից, որը ներկայացվում էր որպես ազգություն չճանաչող, ազգի մասին չմտածող և ազգային-ազատագրական շարժումները չընդունող: Դաշնակցությունը նաև ժխտում էր Հայ իրականության մեջ հակամետ դասակարգերի գոյությունը, յուրովի քարոզելով ազգային միասնություն:

Տեղի սրության պատճառով Հարկ չեմ համարում այստեղ վերոհիշյալ

Հարցերի մասին ընթերցողի ուշադրությանը ներկայացնել դաշնակցության մասուլի հրապարակումներին: Դրա փոխարեն անհրաժեշտ եմ համարում մի ընդարձակ մեջբերում կատարել դաշնակցության երևելի գաղափարախոս Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ յեղափոխականի մը յիշատակները» գրքից Հետևյալ հատվածը:

«Եւ իրաւ, ի՞նչ դասակարգի Հարց կրնար լինել մեր մէջ, երբ ողջ Հայութիւնը անխտիր՝ ոռւս եւ թուրք իշխանութեանց, նոյնիսկ քիւրտի ու թաթարի կողմէ նկատուած է իբր մէկ դասակարգ: Հայը իր Հայրենիքի մէջ Հողագուրկ «բասորակ» է, ժայռերու մէջ քշուած վայրի երէ, որուն քիւրտը՝ Փլահ, թուրքը՝ կեսվուր, ոռւսը՝ արմեաշկա կ'ըսէ: Հայկական բնագաւառներու մէջ Հայ բուրժուազիա չկար. բոլորն էլ շահագործուած էին խանէն, բեկէն եւ երած կարգերէն: Իսկ եթէ այդ կարգերէն փախած, ստրկութենէն գաղթական եւ փախստական դարձած Հայերու մէջ կային այդպիսիք Բազուի, Թիֆլիսի մէջ եւ այլ ուր, լաւ է որ կային. անոնք կը հակակռէին Հայաստանն ու Հայութիւնը շահագործող տարրերը՝ իրենց դրամական միջոցներով»:

Այնուհետև Ռուբենը շարունակում է. «Դասակարգային պայքարի հիմք չկար մեր երկրի մէջ, քանի որ մէկ իրաւագուրկ դասակարգ կար, եւ այդ՝ Հայությունն էր: Միակ մէկ նպատակ ունէր Հայութիւնը, եւ այդ՝ իր ազատագրումն էր ստրկութենէ: Կարծուածին հակառակ, Հայը այդ կէտին մէջ միաբան էր՝ առանց դաւանանքի, դիրքի ու ծագումի խտրութեան: Եւ այդ պէտք էր խորացնել եւ ոչ թէ քայքայել, ինչ որ ծայրայեղները (այսինքն՝ սոցիալ-դեմոկրատները՝Վ. Պ.) կուզեին դասակարգ փնտռելով: Մանրամասնութիւնները մէկ կողմ թողած՝ Հայը գիտակից էր իր վիճակին. նախ՝ կը ձգտէր իրաւահասարակութեան եւ իր ազատութեան: Անոր դժբախտութիւնը այդ ազատութեան համեմուտ տարրեր եւ իրար խաչաձեւող ուղիներու մէջն էր, որ մեզ անդամարոյծ եւ անուժ է դարձուցած»: (Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Եր. 1990, Բ Հատոր, էջ 139-141):

Շատ հաճախ վերոհիշյալ տարաձայնություններն ուղեկցվում էին գրպարտություններով, որոնց մեջ առանձնապես աչքի էր ընկնում դաշնակցական մասուլը: Նույնիսկ դաշնակցությունն ահաբեկում էր այն բանվորներին, որոնք անցնում էին սոցիալ-դեմոկրատների կողմը: Նկատի ունենալով այս հանգամանքը, Շահումյանը գրել է. «Երբ 1902-03 թվականներին մենք առաջին անգամ ասպարեզ եկանք Հայկական կյանքում,՝ դաշնակցականները մեզ Հայտարարեցին «ազգի դավաճաններ»: (Առ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 47):

Իհարկե, ցարական իշխանությունների դաժան հետապնդումների, դաշնակցության ծավալած պայքարի պայմաններում սոցիալ-դեմոկրատների համար ստեղծում էին լուրջ դժվարություններ հայ իրականության մեջ իրենց գործունեությունը ծավալելու գործում: Եվ դաշնակցությունը սոցիալ-դեմոկրատներին քննարատելով, նրանց դեմ պայքարով ակամա դառնում էր ցարական իշխանություններին աջակցող ուժ:

«...ՄԻԱԿ ԱՆԿԵՂԾԸ ԸԱՀՈՒՄՅԱՆԻ ԽՈՍՔԵՐՆ ԷԻՆ, ԵՎ ԵՍ ԴՐԱՆՔ ԵՐԲԵՔ ՉԵՄ ՄՈՌԱՆԱ»

Ստեղծված այսպիսի պայմաններում հայ սոցիալ-դեմոկրատներին հարկ էր լինում հակայական ջանքեր գործադրել ուժերը համախմբելու, իրենց գործունեությունը ծավալելու համար, օգտագործելով ամեն մի հնարավորություն: Այդպիսի հնարավորություն էր 1902 թ. մայիսի 19-ին Թիֆլիսում ականավոր գրող Ղազարուս Աղայանի գրական ու մանկավարժական գործունեության 40-ամյակի նշումը, որն օգտագործում է Շահումյանը:

Այ. Շիրվանզադեն, որին վատահավել էր հանդիսություն դեկավարումը, իր հուշերում հայտնում է, որ «Բունակալ իշխան Գոլիցինի բռունցքն այն ժամանակ իր գերագույն ուժի մեջ էր, և ամեն մի հայ հասարակական տոնախմբություն արգելված էր»: Այնուամենայնիվ, Թիֆլիսի ոստիկանապետը, որին թույլտվության համար դիմել էր Շիրվանզադեն, համաձայնվել էր, «պայմանով, որ հացկերույթի ժամանակ ոչ մի քաղաքական բովանդակությամբ խոսք չարտասանվի»:

Շիրվանզադեն ոստիկանապետին երաշխավորում է, որ այդպիսի «խոսք չի արտասանվի, բոլոր ճառերը կունենան զրական բովանդակություն»: Ավելին, Շիրվանզադեն անձամբ կարդում է պատրաստված ճառերը և խոսելու ցանկություն ունեցողներին զգուշացնում է, որ ոստիկանապետը չի սահմանափակվել իր երաշխավորությամբ և հացկերույթին ներկա է լինելու նրա գաղտնի գործակալը:

Այնուհետև Շիրվանզադեն պատմում է, որ իրեն է մոտեցել «բարձրագույն տեխնոլոգիական դպրոցի համազգեստով բավականին բարձրահասակ, շատ համակրելի և նույնիսկ գեղեցիկ և խոհուն դեմքով մի մոտ 20 տարեկան երիտասարդ, մի քիչ գունատ և հուզված» և խնդրել է իրեն ևս թույլ տալ շնորհավորելու հոբեյարին:

Շիրվանզադեն ցանկություն է հայտնում ծանոթանալ երիտասարդի գրավոր խոսքի տեքստին: «Իա շնորհավորում չէր,- հիշում է Շիրվանզա-

դեն,- այլ մի սուկալի հարձակողական և անվերապահ քննարատություն ոչ Աղայանցի գործերի, այլ Ռուսիայում այդ ժամանակ տիրող քաղաքական կացություն: Երիտասարդը պնդում էր, որ ամեն մի զրական գործունեություն դատապարտված է ամբողջական ներկա պայմաններում: Ոչ մի զրակախություն չի կարող զարգանալ և առաջադիմել և ոչ մի գրող չի կարող ազատ արտադրել, քանի որ ցարական ռեժիմը կա: Հետևաբար յուրաքանչյուր քաղաքացու ժամանակակից միակ բարոյական պարտականությունն է՝ «Նախքան հոբեյաններ տոնելը» ջանալ այդ ռեժիմը տապալելու»:

Շահումյանի երույթի տեքստին ծանոթանալուց հետո Շիրվանզադեն մերժում է նրան խոսք տալ, ասելով, թե դրանով հանդեսը կհասկանալի:

Թող խափանվի, մի՞թե շատ կցավեք,- պատասխանում է Շահումյանը, որը, ինչպես հիշում է Շիրվանզադեն,- թուղթը դրեց իր գրպանը, հեռացավ տիսուր ու գունատ և նստեց հացի սեղանի հետավոր անկյունում: Ես զգացի, որ չափազանց վշտացրի նրան, բայց ի՞նչ կարող էի անել: Գիտեի, որ նրա գրվածքի մեջ կա մի սուր և դատը ճշմարտություն, արտահայտված ոչ նրբորեն, բայց վերին աստիճանի անկեղծ: Որքան հիշում եմ, վշտացյալ ուսանողը նույնիսկ հացին չմանսակցեց»:

«Այդ օրից,- շարունակում է Շիրվանզադեն,- անցան տասնյակ տարիներ: Սակայն ուսանողի դեմքը չեմ մոռանում... Ես շարունակ զգում էի, խղճի մի տեսակ խայթ ամեն անգամ, երբ հիշում էի այդ հոգեշունչ կերպարանքը:

Ինչո՞ւ հավատացյալին արգելեցի իր հավատը քարոզելու, թող հանդեսը խափանվեր, թող իսկ ձերբակալվեր, միայն թե ճշմարտությունն արտասանվեր այդ բերանից»: (Արքայանոցի Շիրվանզադեն, Հատոր հինգերորդ, Եր. 1988, էջ 600-602):

Չնայած արգելմանը, այնուամենայնիվ, Շահումյանը հայ ուսանողների անունից հանդես է գալիս և սկսում է կարդալ իր պատրաստած երույթը, որն անմիջապես ընդհատվում է: Հոբեյանին ներկա բանաստեղծ Հակոբ Հակոբյանը վկայում է, որ երբ հանդեսից հետո հանդիպել է Ղ. Աղայանին և հետաքրքրվել, թե ինչպես է նա ընդունել Շահումյանի երույթը, Աղայանը պատասխանել է. «Միակ անկեղծը Շահումյանի խոսքերն էին, և ես դրանք երբեք չեմ մոռանա»: (Հավորը Հավորչան, Երկեր, Եր. 1951, էջ 388):

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՀՈՔԵԼՅԱՆԸ

Ինչպես վերն արդեն նշվել է, Շահումյանին թույլ չի տրվել ավարտելու իր ելույթը, որը, չնայած դրան, լայն արձագանք է գտնում: Նախ, 1902 թ. օգոստոսին, ինչպես վկայում է Անուշավան Թումանյանը, խմորատիրով բազմացվում է «Ղազարոս Աղայանի Հորեյանի առթիվ Ստեփանի գրած ճառը, որը նա մայիսին կիսով չափ կարդացել էր Ղ. Աղայանի Հորեյանի օրը, բայց Հորեյանին ներկա գտնված Հայ լիբերալները թույլ չէին տվել ավարտելու»: (Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 102):

Մինչ Շահումյանի ելույթի բովանդակությունն ընթերցողին ներկայացնելը, ամենից առաջ անհրաժեշտ է նշել, որ դա Շահումյանի առաջին հրատարակային քաղաքական ելույթն էր, որտեղ, կարճ ժամանակ անց, առաջադրված դրույթներն ավելի խորացվեցին ու զարգացվեցին «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստում:

Ղազարոս Աղայանը նշանավոր գրող էր ու մանկավարժ, օժտված էր անձնական բազում բարեմասնություններով: Դեմոկրատ Աղայանը Հայտնի էր նաև որպես Հասարակական գործիչ և իր ժողովրդասիրությունը ու հայրենասիրությունը վայելում էր վաստակած ու արժանի հեղինակություն: Աղայանը լուսավորության տարածման իսկական շատագույլ էր և այդ գործում ուներ անուրանալի ծառայություններ:

Հենց այդ էլ նկատի ունենալով Շահումյանը իր ելույթի սկզբում Հորեյանին ողջունում է «այն փոքրամասնության անունից, որը Հնարավորություն է ունեցել ծանոթանալու Հայկական կյանքի ու գրականության հետ և այսօր, գտնե քիչ թե շատ, գիտի ո՞վ է, ի՞նչ մարդ է և ի՞նչ տեսակ գրող է Ղազարոս Աղայանը»:

Այնուհետև շարունակելով իր միտքը, Շահումյանը նշում է, որ Հորեյանի նշումը «մի Հասարակ, մասնավոր Հանդես չէ», որի դեպքում մարդիկ հարկադրված են «հանդուրժություններով ու թանկագին նվերներով շահել ծերուկ Հորեյարի սիրտը»:

Աղայանի Հորեյանի նշումը Շահումյանը գնահատում է որպես մի գրական-հասարակական տոնախմբություն, որտեղ «Հարկավոր է լուրջ և անկեղծ հաշիվ տեսնել 40 տարի Հայ Հասարակությանը ծառայող գրողի ու գործչի հետ»:

«Հորեյանը,- ընդգծում է Շահումյանը,- մեծ Հասարակական նշանակություն ունի, որպես ուժեղ բարոյական խնայուս սուպազ հասարակական գործունեության համար: Իսկ այդ դերը նա կարող է կատարել միայն այն ժա-

մանակ, երբ Հորեյանին մասնակցողները հասկանում են Հորեյանի այդ նշանակությունը, երբ նրանց իսկապես թանկ է այն գործը, որին ծառայել է Հորեյանը տարիների ընթացքում»:

Այս նախաբանից հետո Շահումյանը դիմում է Աղայանին, ասելով, որ թանկ է գնահատում այն գործը, որին Հորեյանը ծառայել է 40 տարի և ցանկություն է հայտնում «բացարձակ հայտնել Ձեզ այսօր այն՝ ինչ-որ մեկը մտածում և զգում ենք Ձեր մասին, հայտնել այն խորհրդածությունները, որ առաջ է բերում մեր մեջ Ձեր այս Հորեյանը»:

Ամենայն հավանականությամբ այս խոսքերն ասելուց հետո Հորեյանին մասնակից լիբերալների մեծամասնությունն աղմկում է և Հնարավորություն չի տալիս Շահումյանին շարունակել իր ելույթը:

Ելույթի շարունակության մեջ Շահումյանը բացահայտում է Հորեյանի առաջ բերած խորհրդածությունները:

«Առաջին հարցը,- նշում է նա,- որ ծագում է Հասարակական գործչին գնահատելու ժամանակ, այդ այն է, թե ի՞նչ դավանանքի տեր է եղել նա, ի՞նչ սրբություններ է պաշտել իր կյանքում և ի՞նչ գործնական հասարակական ծրագիր է ունեցել իր ձեռքին»:

Այստեղ կամենում եմ ընդմիջել Շահումյանին, և ասել՝ հավանաբար նա անտեղյակ է եղել այն իրողությունը, որ Աղայանը Հնչակյան կուսակցության անդամ էր և զգալի գործունեություն էր ծավալել: Այլապես Շահումյանը չէր ասի, թե «Իուք պարոն Աղայան, չեք ունեցել մի որոշ հասարակական դավանանք և որոշ ծրագիր ձեր հասարակական գործունեության համար»:

Այնուհետև դիմելով Աղայանին, Շահումյանը նշում է, որ նա պաշտել է ազնվությունը, շիտակությունը, բարին ու գեղեցիկը, որոնք հասարակական դավանանք, հասարակական գործունեության ծրագիր չեն, այլ անձնական արժանիք են:

Այստեղ արդեն Շահումյանն արտահայտում է հետևյալ գնահատականը, որն ավելի շատ վերաբերում է ժամանակի Հայ մտավորականությանը: «Հասարակական գործչի անունը,- շեշտել է նա,- արժանավորապես կարող է կրել մեր ժամանակներում միայն նա, ով ունի որոշ գիտական հայացքներ հասարակությունների, ժողովուրդների զարգացման օրենքների մասին, ուրիշ խոսքով՝ ով ունի որոշ հասարակական կրթություն, հետո՝ ով ուսումնասիրել և ըմբռնել է իր ժողովրդի առաջադիմության պայմանները և գինված է որոշ, իր բոլոր մանրամասնություններով պարզված, գիտակցված գործունեության ծրագրով»:

Առիթն օգտագործելով Շահումյանն անդրադառնում է Հայ իրականության մեջ՝ գրականության և մամուլի ասպարեզում գոյություն ունեցող կուսակցությունների խնդրին և նշում, որ նրանցից ոչ մեկը չունի ոչ Հասարակական դավանանք և ոչ էլ ծրագիր: Այս աստուծով նա քննադատում է Հայ իրականության մեջ գոյություն ունեցող մշակականների «ամենահավանգիտ կուսակցությանը», որին երբ հարցնում են, թե որն է նրա դավանանքը, որն է նրա գործնական ծրագիրը հայկական կյանքի վերաբերմամբ, միայն հպարտորեն տալիս է հետևյալ պատասխանը՝ «Մենք ազատամիտներ ենք»:

«Բայց, ընդգծում է Շահումյանը, այդ պատասխանը մեզ ոչինչ չի ասում: Ազատամտությունը, լիբերալիզմը դավանանք չէ, ոչ էլ ծրագիր, նա միայն գործունեության եղանակ է»:

Զարգացնելով իր տեսակետը, Շահումյանը շարունակում է. «Երբ մի ժողովուրդ գտնվում է աննորմալ քաղաքական ու Հասարակական պայմաններում, նա ծնում է իր միջից դժգոհ տարրեր, որոնք կոչվ են Հայտարարում տիրող կարգերին»: Ըստ Շահումյանի, այդ կոչվը կարող է տարվել խաղաղ, օրինական կամ արմատական հեղափոխական միջոցներով: Այս երկու եղանակն էլ ցանկալի են ու առաջադիմական, «եթե կոպողները չեն դադարում կոպողներ լինելուց, եթե նրանց հաջողվում է հարվածներ հասցնել հին կարգերին և ազատ քարոզել նորերը»:

Եվ իր տեսակետը հիմնավորելու համար Շահումյանը իր ելույթում բերում է Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատներ Բեյինսկու, Պոսարևի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի օրինակը և ընդգծում է հետևյալը. «Նրանք չեն գրել այն, ինչ որ թույլ կտան տպագրելու, այլ գրել են այն, ինչ որ պահանջ են ունեցել գրելու, ինչ որ չէին կարող չգրել: և հասցրել են իրենց գրածները ժողովրդին երբեմն լեզու գրականության միջոցով, երբ այդ հնարավոր է եղել, երբեմն էլ ազատ մամուլի միջոցով»:

«Այդպիսով, եզրակացնում է Շահումյանը, ուսու լիբերալները մի քաղաքական-հասարակական կուսակցություն են կազմել, դժգոհ է եղել տիրող կարգերից, խստիվ հարվածել է այդ կարգերը և ունեցել է իր խոնարհ ասպարեզի վերաբերմամբ, որը նա քարոզել է իր հրատարակությունների միջոցով, իր գրվածքների ամեն մի ստղով»:

Եվ Հայ լիբերալների համար, իբրև օրինակ, Շահումյանը հիշեցնում է Բեյինսկու հետևյալ խոսքերը. «Եթե գործն այնտեղ հասնի, որ ինձ առաջադրվեն ընտրել երկուսից մեկը, պահպանել համոզմունքի անկախություն ու ինքնուրույնություն կամ սովամահ լինել, ես բավականաչափ ուժ կունենամ, որ»

պեսզի ավելի շուտ աստվեմ շան նման, քան կենդանի տեղովս շների կերակուր դառնամ»:

Ռուսական իրականության մեջ լեզու գրականությունը եղել է միայն գեղեցիկ, լիբերալիզմը՝ գործունեության եղանակ ու ձև:

Ահա այսպիսի էքսկուրսից հետո, Շահումյանն անդրադառնում է Հայ իրականության մեջ գործող «ազատամիտներին», որոնք իրենց երևակայում են ուսու ազատամիտների հետևորդներ և խստորեն քննադատում է նրանց, որ ոչինչ չանելով, իրենց համարում են Հայ ժողովրդի փրկիչներ, առաջնորդներ:

Շահումյանը ծաղրելով նրանց, նշում է, որ եթե փորձ արվի «մի բան ասել նրանց հասցեին», ապա նրանք կատաղի կերպով քննադատողի գլխին հայհույանքներ կտեղան, արդարանալով, թե Ռուսաստանում գոյություն ունեցող գրաքննությունը ոչինչ թույլ չի տալիս գրելու:

«Բայց, նշում է Շահումյանը, մենք գիտենք և այն, որ եթե թույլ էլ տար չին ձեզ գրել, դուք ոչինչ չէիք կարողանա գրել, ոչինչ չէիք կարողանա մեզ տալ, որովհետև դուք ինքներդ ոչինչ չունեք»:

Շարունակելով քննադատել Հայ «ազատամիտներին», Շահումյանը բերում է հետևյալ փաստը, որն այսօրվա (21-րդ դար) իրականությունն է նույնպես:

«Ու՛վ, անխիղճ հայեր, պահպանեցեք ձեր թերթերը, փող տվեք ձեր գրողներին: Անգործ հայեր, հոգացեք ձեր թատրոնի մասին, հաց տվեք ձեր սոված դերասաններին: Անխիղճ վաշխատուներ, ողորմացե՛ք մեր խեղճ գյուղացիներին, փող մի տաք նրանց սոկոսով, մի կեղեքեք նրանց...»:

Եվ Շահումյանը մատնացույց է անում. «Ահա ձեր ամբողջ դավանանքը, ձեր գործունեության ծրագիրը: Եվ դուք համարձակվում եք ձեզ ազատամիտ-առաջադիմականներ անվանել: Մի անպատվեք, խնդրեմ, ուսու ազատամիտների սրբազան հիշատակը»:

Շահումյանը նրանցից պահանջում է իրենց չանվանել նաև Նալբանդյանի ու Արծրունու հետևորդներ և կատարում է հետևյալ գուգահուր: Նա հիշեցնում է, որ Ռուսաստանում 19-րդ դարի 40-60-ական թվականներին գահազան գրական խմբակների մեջ ընդգրկված ուսու գործիչները երբեք չէին օգտագործում կուսակցությունների անուններ, իսկ հայերը «ունեն բազմաթիվ կուսակցություններ՝ «Մշակի» կուսակցություն, «Նոր Դարի» կուսակցություն, «Հին Մուրճի», «Նոր Մուրճի» կուսակցություն և այլն», որոնք «նույնիսկ գրական խմբակներ կոչվելու պատվին արժանի չեն»:

«Մենք,- փաստում է Շահումյանը,- չունենք կուսակցություններ, չունենք գրականական խմբակներ, այլ ունենք,- ինչպես ասում են մեր երիտասարդական դժգոհ չրջաններում,- «Մշակի թայֆա», «Նոր Դարի թայֆա» և այլն:

«Եվ եթե այդ թայֆաներից ոչ մեկին չի պատկանել պ. Աղայանը-այդ միայն պատիվ է բերում նրա ճաշակին»,- եզրակացնում է Շահումյանը:

Աավածի հիման վրա Շահումյանը բարձր է գնահատում Աղայանին, նրան անվանելով «գլխավորապես ազատամիտ, կուստուրական գործիչ» և իր խոսքը շարունակելով ասում է. «Մենք գիտենք միայն, որ Դուք շնորհքով գրող եք եղել, իբրև բանաստեղծ, Հեքիաթաբան ու վիպասան, օրինակելի մանկավարժ եք եղել... իբրև դասագրքեր կազմող, ուսուցիչ, տեսուչ և այլն: Գիտենք, որ Ձեր մաքուր, բարոյական կյանքով լավ օրինակ եք եղել Ձեր ընկերների ու աշակերտների համար, և ամենքի մեջ, ում հետ չիվել եք, գարթնացրել եք ամենալավ զգացմունքները, ներչնչել եք ամենասգեղիվ ձգտումները»:

Իր ելույթի մի զգալի հատված Շահումյանը նվիրում է հայ գրականությանը, նրա սպազային: Արժե ընթերցողին ներկայացնել Շահումյանի արտահայտած գաղափարները: Նա գրել է. «Մենք կարող ենք ներկայումս մի փոքրիկ գրականություն նման բան ունենալ, որի մեջ երբեմն երևան կգան ուժեղ ու տաղանդավոր անձնավորություններ, արժրուհիներ, աղայաններ, որոնք կենդանություն կտան, փայլ կտան գրականությանը, մամուլին և օգտակար կդարձնեն նրանց ժողովրդի համար»:

Բայց, գտնում է Շահումյանը, այդ անհատները «մտեղներ կլինեն, իսկ կենդանություն ու փայլի միջոցները-մոմենտներ միայն»: Շահումյանը համոզված է, որ գրականությունը չի կարողանա հասարակական դեր կատարել, չի կարողանա երբեք ժողովրդի սեփականությունը դառնալ, լինել նրա հոգևոր ու մտքերի թարգմանը, նրա ցավերի դարմանը:

Շահումյանը դա բացատրում է նրանով, որ «Այնտեղ բուն կրճեն զանազան բախտախնդիրներ, անկույտ առաջնորդներ, որոնք գրականությունը, թերթեր, ամսագիրը կծառայեցնեն ոչ թե ժողովրդին, այլ միայն իրենց շահերին, որոնք մուրացկանություններ, հարուստների սեղաններից ընկած փշրանքներով կկարողանան քարշ տալ իրանց հրատարակությունների ողորմելի գոյությունը, հասարակական խնդիրներ ուսումնասիրելու և պարզելու փոխարեն «տխի կրծելով» կզբաղվեն... միայն թե թերթերը լցվեն, միայն թե ասվի գրականություն ունենք, մամուլ ունենք»:

Եվ որպես ասվածի հետևություն, Շահումյանը հայտնում է հետևյալ կարծիքը. ով ուզում է, որ հայ ժողովուրդը գրականություն ունենա, նա ամեն

նից առաջ կռիվ պետք է հայտարարի ժողովրդի ազատ զարգացմանն արգելակող քարաքանդակ կարգերի դեմ, նա պետք է աշխատի տեղեղնային պայմաններ, որ ժողովրդի մեջից դուրս եկող ռաֆֆիներն ու չիրականադրողները անհատներ չլինեն, այլ բազում խմբեր:

«Մի երկրում,- ավարտում է իր միտքը Շահումյանը,- որտեղ չկա խառքի ու մտքի ազատություն, որտեղ ժողովուրդը շնորհիվ տիրող պետական քաղաքականության՝ աղքատ է ու տգետ և քաղաքակրթության բարիքները վայելելու արտոնությունը պատկանում է միայն փոքրաթիվ ապահով դասակարգին, որտեղ օրենքի տեղ տիրում է ցենզուրական կամայականությունը,- երբեք չի կարող իր կոչմանը ծառայող, հասարակական-ժողովրդական գրականություն լինել»:

Շահումյանը նշում է, որ նույնպիսի վիճակ գոյություն ունի հայ թատրոնում և ընդգծում հետևյալը. «...Երբեք ներկա պայմաններում, մենք չենք ունենա մշտական, կարգին, բնական զարգացման ճանապարհի վրա դրված հասարակական թատրոն, երբեք չենք ունենա ինքնուրույն ազգային գեղարվեստ»:

Նա նշում է նաև, որ այդպիսի պայմանների մեջ գտնվող թատրոնը մի կերպ քարշ կտա իր գոյությունը մուրացկանության շնորհիվ և «ոչ մի դեր չի կարողանա կատարել հասարակական տեսակետից»: Շահումյանը ցավով է նշում, որ թատրոնը կծառայի որպես զվարճության միջոց «ազատամիտ», կրթված բուրժուազիկների համար, որոնք իրենց տիկիների հետ «բարեգործական նպատակով» ներկայացումներ կտան և «հասարակական գործիչների» փառք կվաստակեն:

Ընթերցողին հրավիրում եմ ուշադրություն դարձնել, որ այս գնահատականը Շահումյանն արտահայտել է 1902 թվականին, երբ հայ ժողովուրդը չունի պետականություն: Այսօր, երբ մենք ունենք պետականություն, կարելի է ասել, որ համարյա ոչինչ չի փոխվել՝ համեմատած Շահումյանի տված գնահատականի հետ:

Բայց վերադառնանք Շահումյանի ելույթում արտահայտված մտքերին: Նա բարձր է գնահատել Աղայանի մանկավարժական գործունեությունը, հիշեցրել նրա կազմած «հրաշալի դասագրքերը» և հարցրել. «Բայց որտե՞ղ է Ձեր դասագրքերով մայրենի լեզու սովորած, Ձեր գրվածքներով կրթված, մեծացած սերունդը: Ինչո՞ւ այս բոլորին նա չկա այստեղ, ինչո՞ւ նա չի ստանում Ձեր հոբելյանը, այլ ինչ-որ «մի խումբ հարգողներ», որոնցից շատերը Ձեր գրվածքների երեսն էլ չեն տեսել երևի, որոնք նույնիսկ հայերեն չգիտեն

բոլորովին»:

«Ի՞նչ կապ կա, ասացեք խնդրեմ,- շարունակում է Շահումյանը,- իր ծագումով, տարանդով ու անցյալով դեմոկրատ Աղայանի և բուրժուական մտափորականության միջև» և ընդգծում, որ կազմակերպված հանդեսը «մի խոր հասարակական տրագիդիա է պարունակում իր մեջ»:

Շահումյանը նաև ջերմորեն ու համակրանքով է խոսում դպրոցական գործում Աղայանի ունեցած ծառայության մասին ու ցավով նշում, որ ստեղծված պայմաններում հայ ժողովրդի կրթական գործը ոչինչ չի շահել, որովհետև, ընդգծում է Շահումյանը, «այն, ինչ որ Դուք և Ձեր ընկերները մեծ գոհաբերություններով կարողացել եք անել երկար տարիների ընթացքում, մի հարվածով, պրիչի մի շարժումով, վայրենի անգիտությունը ոչնչացրեց լուսավորության ու քաղաքակրթության թշնամին»:

Ելնելով ավածից, Շահումյանը եզրակացնում է. «Այի երկրում, որտեղ չկա քաղաքական ազատություն, չկա ազատ խոսք, մամուլ, որտեղ օրենքի տեղ բռնություն ու կամայականություն է տիրում,- այնտեղ կուլտուրական գործունեությունն այն չինությունն է, որ կառուցվում է ավազի վրա»:

Շահումյանը կատարում է պատմական էքսկուրս, հիշեցնելով, որ Հին ժամանակներում, երբ բարբարոսները հարձակվել են մի կուլտուրական ժողովրդի վրա, ապա այդ ժողովրդի բոլոր չափահաս զավակները, «Ֆիդիկապես հասունացած մարդիկ» թողել են իրենց զբաղմունքը և զենք են վերցրել ու պաշտպանել իրենց հայրենիքի անկախությունը: Իսկ, երբ մի երկրում տիրում է քաղաքական բռնակալություն, երբ վտանգ է սպառնում մի ժողովրդի հոգեկան, կուլտուրական կյանքին, ապա «բոլոր մտավոր չափահասները, բոլոր քաղաքականապես հասունացած մարդիկ զինվոր են գրվում իրանց հայրենիքին, կյանքի ու մահու կռիվ են հայտարարում ժողովրդի դահիճների դեմ»:

Ավածից Շահումյանը հանգում է այն եզրակացությանը, որ հայ իրականության մեջ կուլտուրական գործիչները զինվորներ չեն, կռիվողներ չեն, փախչում են կռվից և դիմելով Աղայանին, ասում է. «Դուք էլ, իհարկե, կուլտուր չեք եղել պ. Աղայան: Դուք ապրել եք Ռուսաստանում, հպատակ եք եղել ամենավայրենի բռնակալություններից մեկին և փոխանակ բողոքելու, քաղաքական-հեղափոխական կռիվն նվիրելու Ձեր ուժերը, Ձեր տաղանդը Դուք հայկական սպեցիֆիկ «ազգասիրությանը» եք պարսպել Ձեր ամբողջ կյանքում»:

«Այդ պատճառով,- շարունակում է Շահումյանը,- մենք հարգում ենք Ձեզ, որպես անձնավորություն, բայց որպես հասարակական գործիչ՝ Դուք օրինակ չեք միզ համար»։ որովհետև, ըստ Շահումյանի, Աղայանը հաշտվել է մարդու իրավունքները բռնաբարող կարգերի հետ, չի եղել կատաղի հեղափոխական: Միաժամանակ Շահումյանն ընդգծում է, որ հարգում են Աղայանին, երբ նրա կյանքը քննում են «հայկական իրականության ֆոնի վրա», երբ համեմատում են Աղայանին ժամանակակից «հայկական գործիչների» հետ:

Դարձյալ ընդմիջեմ Շահումյանին և ասեմ հետևյալը: Ինչպես Աղայանը, այնպես էլ նրա ժամանակակից շատ գործիչներ ելնում էին այն իրողությունից, որ ապահովված էր ցարական Ռուսաստանի կազմի մեջ գտնվող արևելահայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը և հաշտվում էին ստեղծված վիճակի հետ: Ինչպես Աղայանը, այնպես էլ մյուսները իրենց ուշադրությունը բեռնել էին արևմտահայության վրա, որի ֆիզիկական գոյությունը սպառնում էր օսմանյան հայահալած իշխանությունը:

...Շահումյանն իր ելույթն ավարտում է հետևյալ խոսքերով. «Կեցցե՛ մեզ, երիտասարդներին, մինչև անգամ իր սխալներով, անհաջողություններով՝ դեպի կյանք, դեպի գործ տրամադրող Ղազարոս Աղայանը»: (Ստ. Շահումյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. առաջին, Եր. 1975, էջ 24-39):

Նախորդ էջերից, արդեն որոշ չափով, «Մուրճ» ամսագրի խմբագիր Ա. Արափանյանցին հանիրավի քննադատելու առիթով ընթերցողին ներկայացվել է իր գործունեության արչալույսին Շահումյանի դիրքորոշումը գրական ասպարեզում տիրող իրավիճակի, գրական բարքերի մաքրության պաշտպանության մասին:

Ղազարոս Աղայանի հոբեյանին նվիրված ելույթում, համոզված եմ, որ ընթերցողը նկատեց, թե ինչպիսի եռանդով է Շահումյանը շարունակում պաշտպանել գրականության վերաբերյալ իր որդեգրած սկզբունքը:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԿՅԱՆՔԻ ԻՍԱՄՏԻ ՄԱՍԻՆ

Շահումյանի ելույթի բովանդակությանն անդրադառնալուց Հետո, Հարկ է նկատել, որ նա մշտապես Հետևել էր Ղ. Աղայանի գրական-հասարակական գործունեությանը, կարդում էր նրա գործերը, ընկերներին խորհուրդ տալիս կարդալ դրանք: 1898 թ. դեկտեմբերի 26-ին Ռիզայից գրած նամակում Ե. Տեր-Գրիգորյանին խորհուրդ է տալիս կարդալ «Մուրճ»-ի հոկտեմբեր ու նոյեմբեր համարներում տպագրված Աղայանի «Ժամանակակից ատենախոսությունը» և «Համեմատոր նրա Հայտնած մտքերը իմի Հետ»: (Ստ. Ծահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 307):

Ե. Տեր-Գրիգորյանին 1899 թ. հունվարի 26-ին Ռիզայից ուղարկած մեկ այլ նամակում Շահումյանը նորից անդրադառնում է Ղ. Աղայանի վերոհիշյալ Հոդվածին, գրելով Հետևյալը. «Աղայանի Հոդվածի մեջ ի՞նչ նամակություն ես գտել իմ Հայտնած մտքերի հետդրա մասին չես գրում: Հիշատակում ես միայն այն նախադասությունը, որտեղ նա Հայացքի լայնություն է պահանջում մարդուց: Ինձ գրավեց նրա աշխարհայացքի հիմքը-ամեն ինչ կատարվում է մեր կյանքում «ասպրելու համար»: (Ստ. Ծահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 309):

Իսկ որո՞նք էին Շահումյանի Հայտնած մտքերը: 1897 թ. հունվարի 2-ին Ե և Հ. Տեր-Գրիգորյաններին ուղարկած նամակում Շահումյանը բերում է իր ընդհանուր տեսությունը գրած Հետևյալ մտքերը. նախապես նշելով, որ այդ հարցերը իրեն շատ են զբաղեցնում, որոնց մասին միշտ մտածել է «Թե տանը, թե փողոցում, թե դասերին և ընկերական ուրախ քեֆերի ժամանակ...»:

«Աշխարհում,- գրել է Շահումյանը,- հավիտենական ոչինչ չկա-ամեն ինչ ունի իր որոշակի ժամանակը, անսահման ոչինչ չկա-ամեն ինչ սահման ունի, բացարձակ ոչ մի բան չկա-ամեն ինչ հարսբերական է: Ի՞նչ է երջանկությունը, ի՞նչ է դժբախտությունը, բարի՞ք, թե՞ չարիք: Ի՞նչն է լավ և ի՞նչն է վատ, ի՞նչն է գովելի և ի՞նչն է արգասատելի, ի՞նչն է սուրբ և ի՞նչն է նողկալի: Այս հարցերին չկա և չի կարող լինել ոչ մի որոշակի, մշտնջենական, բոլոր մարդկանց ու ժամանակի համար ընդհանուր պատասխան: Մարդը մարդուց, հասարակությունը հասարակությունից, ժողովուրդը ժողովրդից և ժամանակը ժամանակից տարբերվում են իրենց իդեալներով, կյանքի նկատմամբ ունեցած իրենց Հայացքներով և առաջադրած հարցերին իրենց տված պատասխաններով»:

Եվ այնուհետև. «Կան մարդիկ,- շարունակում է Շահումյանը,- որոնց համար կյանքի նպատակը միայն այն է, որ կարգավորեն իրենց նյութական բարեկեցիկ վիճակը: Երջանկությունը հարստության, ոսկու մեջ է, լավ, գովելի

ու սուրբ են այն ամենը, ինչը նրանց ծառայում է այդ բանն անելու համար, նողկալի ու արգասատելի են այն ամենը, ինչը խանգարում է նրանց: Նրանց մեջ կարելի է հանդիպել այնպիսի մարդկանց, որոնք իրենց բարեկեցիկ կյանքը կառուցում են շրջապատողների արյան ու արցունքների վրա, նրանք ծվատում ու մորթում են, պղծում ու թալանում են և իրենց միանգամայն արդար են համարում, նրանք դա բնության օրենք են համարում: «Ի՞նչը կարող է այդ մարդկանցից ավելի վատթար լինել, ի՞նչը կարող է ավելի կեղտոտ, ավելի հանցագործ բան լինել»,- կմտածի ազնիվ քրիստոնյան, որը մերձավորների բարօրության համար պատրաստ է անգամ իր կյանքը զոհել: «Ուրեմն այդ մարդիկ ոչինչ չեն ընդունում, նրանց համար գոյություն չունի ոչ մի իդեալ, ոչ մի սրբություն»: (Ստ. Ծահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 294-296):

Ընդհատելով Շահումյանի մտքերին ծանոթանալը, ընթերցողից ներողություն խնդրելով, ինձ թույլ եմ տալիս կատարել մի շեղում: Կյանքի իմաստի մասին հարցն ունի բազմապիսի պատասխան: Մեկն ասում է՝ ծառ տնկել, որ դուն մեծացնել, տուն կառուցել, ահա և կյանքի իմաստը:

Հիշեմ Արիստոտելին, որն ասում էր, թե կյանքի իմաստն է ծառայել ուրիշներին և բարիք գործել: Բայց չէ՞ որ բարությունը հարսբերական հասկացություն է, ինչն ինձ համար բարիք է, պարտավոր չէ, որ դա ուրիշի համար էլ լինի բարիք:

Մյուսների համար կյանքի իմաստն աշխատանքն է, մարդկանց օգուտ բերելն է: Բայց չէ՞ որ աշխատանքն ու օգուտը միայն իմաստավորված կյանքի պայմանն են, բայց ոչ ինքը՝ իմաստը:

Կա նաև այսպիսի պնդում, ըստ որի կյանքի իմաստը իր՝ կյանքի մեջ է, նրա և մարդկանց նկատմամբ սիրո մեջ է: Բայց չէ՞ որ ամեն ղեք բախտը չի բերում ունենալ լավ բարեկամ, հանդիպել իսկական սիրո:

Ռուս նշանավոր պատմաբան Վ. Կյուչևսկին գրել է. «Կյանքը նրանում չէ, որպեսզի ապրել, այլ նրանում, որպեսզի զգաս, որ ապրում ես»: Բայց այստեղ հարց է առաջանում. մարդը զգո՞ւմ է, որ ապրում է: Հարցին կարող են լինել բազում բացատրական պատասխաններ:

Ունակ գտնում են, որ կյանքի իմաստը երջանկության հասնելն է: Բայց չէ՞ որ հնարավոր չէ մշտապես երջանիկ լինել:

Այսպիսով, կյանքի իմաստի մասին հարցը բոլոր ժամանակներում, նաև մեր օրերում, արդեն 21-րդ դարում, հուզել և հուզում է մարդկանց:

Շահումյանին նույնպես հետաքրքրել է կյանքի իմաստի մասին հարցը:

եւ վերահիշյալ մեջբերումներից հետո, զարգացնելով իր մտքերը, Շահումյանը գրել է. «... Ամբողջ դժբախտությունն այն է, որ բոլոր անհամար դասակարգերը, որ մարդկանց թե տիպերը, թե տեսակները, թե ցեղերը և այլն և այլն, ի վիճակի չեն հասկանալու, որ մարդու կյանքը դա պարզապես ճաշակի հարց է, ամեն ոք յուրովի է հասկանում, որ մեր աշխարհում չկա ոչ մի ընդհանուր կետ, որի վրա հնարավոր լիներ ամուր կանգնել և որոշել: Թե ի՞նչ է բարին կամ չարը, թե ի՞նչն է լավ, ի՞նչը՝ վատ, ի՞նչն է սուրբ և ի՞նչն է գարշելի, վերջապես, թե ո՞վ է իրավացի և ո՞վ է մեղավոր»:

«Մեկը,- շարունակում է Շահումյանը,- կարծում է, թե այս աշխարհում ասպեղու համար հարկավոր է խաբեի, չորոքորթել, քծնել և այլն, և նա այդ բանը միանգամայն բնական, արդարացի է գտնում, մյուսն աստեղծյամբ երեսը թեքում է ստույգումից, կեղծավորությունից: Երրորդը կատարյալ ոճրագործություն է համարում իր նմանին սպանելը, չորրորդը իր սուր դաշույնը մարդու փորն է խրում և գտնում է, թե ինքը շատ սուրբ գործ է կատարում, քանի որ նա նկատի ունի ինչ-որ սուրբ նպատակներ: Հինգերորդը գտնում է, որ ինքը իր հանգիստ կյանքը պետք է ապահովի թեկուզ տասնյակ հազարավոր մարդկանց կյանքի գնով, վեցերորդն իր սրբազան պարտքն է համարում կյանքը գոհաբերել ամբողջ մարդկության բարօրության, երջանկության համար և այլն»:

Այնուհետև Շահումյանը տալիս է մարդու գնահատականը, գրելով հետևյալը. «Մարդս իմ կարծիքով երկրագնդի անթիվ օրգանական արտադրություններից մեկն է. նա ծնվում է, լույս աշխարհ է գալիս նույնպես, որպես ձուկը ծովի խորքերում, որդը հողի խոնավության մեջ, գազանը-անտառի թավուտներում և թռչնակը ծառի ճյուղերում: Նույնպես, որպես բուսնում են ծառերն ու ծաղիկները, և ինչպես այս բոլոր թվածները, յուր ստեղծվելու ժամանակ նա մի պարզ գիտակցություն է բերում իր հետ, այն է՝ որ յուր օրգանական գոյությունը պահպանելու, յուր կյանքը շարունակելու համար, հարկավոր է սնունդ ունենալ, ուրեմն միակ խնդիրը, միակ կոխիքը բոլոր օրգանիզմների (նույնպես, իհարկե, և մարդու) համար գոյության կոխիքն է»:

«Կանգնելով այս հենակետի վրա,- եզրափակում է Շահումյանը,- ես ասում եմ, որ բոլոր աշխարհային փիլիսոփայությունները, իրենց անթիվ ճյուղավորումներով, բոլոր կրոնները, իրենց տեսակ-տեսակ աստվածներով, դրախտներով ու դժոխքներով ծառայում են միայն և միմիայն մի բանի, այն է «գոյության կոխիք» թեթևացնելու, հացի խնդիրը բարավելու գործին»:
(Ատ. Շահումյան, նույն տեղը, հ. Հինգերորդ, էջ 296-298):

ՀԱՅ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Թիֆլիսում, ապա նաև Անդրկովկասում սոցիալ-դեմոկրատների գործունեությունը նկատելիորեն աշխուժանում է Շահումյանի վերադառնալուց հետո: Հայ բանվորների շրջանում սոցիալ-դեմոկրատական աշխատանքը նրա հետ միասին տանում էին Բողզան Կուսնյանցը, Սուրեն Սպանդարյանը և ուրիշներ:

1902 թ. ամռանը Շահումյանի, Բողզան Կուսնյանցի և Արչակ Զուրաբյանի նախաձեռնությամբ կազմակերպվում է «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը»: Կարճ ժամանակ անց, միությունը մեջ մտնում են Աշոտ Խումարյանը, Սերգո Խանոյանը, Մելիք Մելիքյանը, Ռուբեն Դաշոտյանը, Դանուշ Շահվերդյանը և Արամայիս Երզնկյանը:

Միությունն իր առաջնահերթ խնդիրն էր համարում Հայ բանվորների շրջանում աշխատանք տանելու միջոցով նրանց համախմբել Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության շուրջ:

«Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» իր խտրված բանվորներին հասցնելու համար կարողանում է միջոցներ գտնել և ստեղծել անլեզալ տպարան ու կազմակերպել իր տպագիր անլեզալ թերթի հրատարակումը: Այդ թերթը, որին տրվեց «Պրոլետարիատ» անվանումը, սկսեց 24 էջով լույս տեսնել 1902 թ. հոկտեմբերից: «Պրոլետարիատը» առաջին հայերեն հեղափոխական մարքսիստական թերթն էր:

«Պրոլետարիատի» առաջին համարում հրատարակվում է Շահումյանի գլխավորությամբ կազմված «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստը: Իր բովանդակությամբ «Մանիֆեստը» հետաքրքիր փաստաթուղթ է և արժե դրան անդրադառնալ հանգամանորեն:

Մանիֆեստով ազդարարվում են միության ծրագրի հետևյալ հիմնական սկզբունքները:

Առաջին. Կովկասը կապիտալիստական զարգացման ընդհանուր ուղու մեջ է մտել Ռուսաստանի համար բնորոշ ձևերով՝ արդյունաբերությունն իր ոլորտն է առնում մեծ թվով մարդկանց, մանր արդյունաբերական ձեռնարկությունների ավերակների վրա հաստատվում են խոշոր ձեռնարկություններ, առաջանում են Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի նման խոշոր արդյունաբերական կենտրոններ:

Քարաքն ավելի է անջատվում գյուղից: Դրա արդյունքով քաղաքը դառնում է բացառապես արդյունաբերական վայր, երկրի տնտեսական, մշակութային կենտրոն, իսկ գյուղը վերածվում է կապիտալիստական շահագործման համար կենդանի նյութի մատակարարող:

Կենտրոնանալով քաղաքներում, կապիտալը մի կողմից ստեղծում է արտադրության սեփականատեր խոշոր կապիտալիստներ, մյուս կողմից՝ չունեցողներ, որոնք բացի իրենց ֆիզիկական ուժից ոչինչ չունեն։ Իրական են դառնում կապիտալիստ և բանվոր, բուրժուա և պրոլետար հասկացությունները։ Նրանցից առաջինը կապիտալի ներկայացուցիչն է, երկրորդը՝ աշխատանքի։ Երկրի արդյունաբերության զարգացման զուգահեռ մեծանում է նրանց միջև եղած վիճը։

Սկսվում է գյուղի անկասելի քայքայումը, որի հետևանքով մանր սեփականատերը կորցնում է իր ինքնուրույնությունը, գոյություն միակ միջոցը՝ հողը և դառնում պրոլետար։

Քայքայված գյուղական բնակչությունը համարում է քաղաքային պրոլետարիատի շարքերը։ Բանվոր դասակարգի թվաքանակն աճում է, իսկ նրա գոյության պայմանները՝ վատանում են։ Արդյունաբերական ճգնաժամերը հազարավոր բանվորների փողոց են չարտում։

Եվ ստեղծված պայմանները, կյանքը միատեսակ չահեր ու գոյություն ընդհանուր պայմաններ ունեցող բանվորներին զինում են «կրակի ամենահասարակ միջոցներով»։

Ուստի, ազդարարում էր մանիֆեստը, բանվորները պետք է «համերային լինեն իրենց իրավունքների պաշտպանության գործում»։

Երկրորդ. Երբ բանվորն անորոշ կերպով զգում էր իր ծանր վիճակը, սկսում էր գործադուլ անել, չունենալով ղեկավարող ծրագիր։ Եվ դրա արդյունքով բանվորի պայքարը մնում էր անհետևանք։

Ասվածից ելնելով մանիֆեստը նշում էր, որ ուժ էր հարկավոր այդ շարժումը կազմակերպելու համար, նրա պայքարին տար գիտակցական բնույթ։ Մանիֆեստն ազդարարում էր, որ այդ ուժը եղավ սոցիալիզմը, որը «խրանով ներկայացնում է բանվոր դասակարգի իդեալների մարմնացումը»։

Մանիֆեստը նշում էր, որ սոցիալիզմի դրոշի տակ կազմակերպվում են սոցիալ-դեմոկրատական անունը կրող հզոր կուսակցություններ, որոնք «նախատակ ունին աշխատավոր մասսայի-դեմոկրատիայի չահերի պաշտպանությունը»։

Միաժամանակ մանիֆեստը պարզաբանում էր, որ «սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը միացնում է բաժան-բաժան եղած անգիտակցական շարժումները և կազմակերպում է ամբողջ բանվորական դասակարգը»։ Այստեղից էլ մանիֆեստը բխեցնում էր գլխավոր հետևությունը. «Որովհետև բոլոր երկրների բանվորները ճնշվում են միևնույն պայմաններից, որով

հետև նոցա չահերը միատեսակ են և որ նոքա ի դիմաց բուրժուազիայի մեկ ընդհանուր թիչնամի ունեն, սոցիալ-դեմոկրատիան միացնում է բոլոր բանվորներին առանց ազգերի խտրության մի ընդհանուր դրոշակի տակ, որի վրա գրված է. «Պրոլետարներ ամբողջ աշխարհի, միացեք»։

Երրորդ. Մանիֆեստը շարադրում էր սոցիալ-դեմոկրատական կուսակցության ծրագրի հետևյալ գլխավոր հիմունքները.

Ա. Սոցիալ-դեմոկրատիան գտնում է, որ ժամանակակից սոցիալական անհավասարությունը վերացնելով ձեռք կբերվի բանվորի ազատությունը։ Սոցիալ-դեմոկրատիան իր վերջնական նպատակն է համարում «բանվորի ձեռքը հանձնել աշխատանքի գործիքներն ու արտադրության միջոցները»։ Եվ քանի որ «մասնավոր սեփականությունը շնորհիվ հասարակության մի մասը ճնշում է գործ դնում մյուս մասի վրա և այդտեղից են ծագում բոլոր անհավասարությունները, ապա ուրեմն նա պետք է ոչնչացվի և ապագա սոցիալական կազմը պետք է հանգչի հողի և արտադրության գործիքների հասարակական սեփականության սկզբունքի վրա»։

Մանիֆեստն ազդարարում էր, որ վերահիշյալ գաղափարի իրականացմանը կարելի է հասնել ոչ թե «բանվորական դասակարգի տնտեսական ինքնագործունեությամբ, մասնակի սոցիալական ու քաղաքական ռեֆորմների միջոցով», այլև միայն «արմատական հեղաշրջման-սոցիալական հեղափոխության միջոցով, որի անհրաժեշտ նախաբանը պետք է լինի պրոլետարիատի քաղաքական իշխանություն ձեռք բերելը»։

Այնուհետև մանիֆեստը մատնանշում էր վերահիշյալ նպատակի իրականացման միջոցները և ընդգծում, որ սոցիալ-դեմոկրատիայի նպատակն է՝ ղեկավարել պրոլետարիատի քաղաքական և տնտեսական կռիվները, դաստիարակել նրան սոցիալիզմի ոգով։

«Ինչպիսի այդ նպատակը ընթանալիս,- ասվում էր մանիֆեստում,- մեր բանվորական դասակարգը նախ և առաջ ընդհարվում է ռուսական միապետության հետ։ Ցարի միապետությունը, բնականաբար, հակառակ լինելով ամեն մի հասարակական շարժման, կատաղի թիչնամի է հանդիսանում աշխատող մեծամասնությանը, նրա ազատարար ձգտումներին և առաջախաղ շարժմանը»։

Այդ պատճառով էլ, նշում էր մանիֆեստը, սոցիալ-դեմոկրատիայի մոտավոր նպատակն է՝ «զարգացնել մեր բանվորական մասսաներում քաղաքական կրակի անհրաժեշտության գիտակցությունը, միացնել նոցա ու մասնակից անել համառուսական շարժմանը միապետությունը տապալելու համար»։

Բ. Նկատի ունենալով, որ Ռուսաստանի կազմի մեջ են գտնվում մշակութային կյանքում բազմաթիվ առանձնահատկություններ ունեցող ազգություններ, մանիֆեստը գտնում էր, որ «միության տեղական ինքնավարության լայն զարգացումը կարող է պաշտպանել Ռուսիայի կազմի մեջ մտնող տարրերի չափերը», անհրաժեշտ էր համարում «ազատ Ռուսիայում դաշնակցային (ֆեդերատիվ) Հասարակապետության կազմակերպումը»:

Մանիֆեստում իր արտահայտությունն է գտել Կովկասում ազգային հարցի լուծման խնդիրը: Ահա, թե ինչ է սովում այդ մասին. «Ժսկ ինչ վերաբերում է Կովկասին, ուշադրության առնելով նրա ազգաբնակչության բազմացեղությունը, մենք պիտի ձգտենք բոլոր սոցիալիստական տարրերը և զանազան ազգությանց պատկանող բանվորներին ի մի ժողովել մեկ ընդհանուր սոցիալ-դեմոկրատական մարմին կազմակերպելու միապետության դեմ ավելի հաջող մաքառելու համար»:

Դրա հետ միասին մանիֆեստն ազդարարում էր. «Ապագա Ռուսիայում մենք թողնում ենք յուրաքանչյուր ազգի իրան որոշելու յուր դրությունը, որովհետև ազգայնական ազատության մեջ մենք տեսնում ենք քաղաքացիական ազատության մի որոշ տեսակը»:

Այս սկզբունքից էլ ելնելով, մանիֆեստը «նկատի ունենալով Կովկասի ազգաբնակչության բազմացեղությունն ու ազգությունների աշխարհագրական բաժանման բացակայությունը, մենք հնարավոր չենք գտնում մտցնել մեր ծրագրի մեջ կովկասյան ազգությունների քաղաքական ավտոնոմիան, այլ լուրջ ավտոնոմիա կուստուրական կյանքի վերաբերյալ, այսինքն՝ լեզվի, ուսումնարանների, կրթության և այլն լիակատար ազատություն»:

Այսպիսով «Հայ սոցիալ-դեմոկրատիայի միության մանիֆեստում» Շահումյանն առաջին անգամ բարձրացնում է ազգային հարցը, որը նրա հետագա աշխատություններում զարգացվել ու որակական փոփոխությունների է ենթարկվել: Այդ մասին անդրադարձ կլինի քիչ ավելի ուշ:

«Մենք կախատենք,- սովում էր մանիֆեստի վերջում,- բանվորական զանազան խմբերի իրանց տերերի դեմ մղած մասնակի կռիվները բացատրել պրոլետարիատի ընդհանուր դասակարգային կռվի տեսակետով»:

Մանիֆեստի ամբողջ բովանդակությունը վկայում է, որ Շահումյանի գլխավորությունը «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» հենց իր գոյության առաջին օրից կանգնել էր սոցիալ-դեմոկրատական հեղափոխական ուղու վրա և դրա շնորհիվ 1902 թ. վերջին ձուլվեց ՌՄԴԿԿ Թիֆլիսի կոմիտեի մեջ:

Հարկ է նշել, որ մանիֆեստն արժանացել էր Պրեխանովի և Լենինի դրական գնահատականին: Լենինը, օրինակ, ողջունելով «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստը, հատկապես նշել է նրանում «ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշադրավ փորձը» և ցանկություն է հայտնում, որ այդ փորձը հասցվի մինչև վերջ:

Այնուհետև Լենինն ընդգծում է, որ «միությունը միանգամայն ճիշտ է նշել» ազգային հարցում սոցիալ-դեմոկրատիայի հետևյալ երկու հիմնական սկզբունքը.

Առաջին. Ոչ թե ազգային ավտոնոմիայի, այլ քաղաքական ու քաղաքացիական ազատության և լիակատար իրավահավասարության պահանջը:

Երկրորդ. Պետության կազմի մեջ մտնող յուրաքանչյուր ազգության ինքնորոշման իրավունքի պահանջը: (Լենին, Երկեր, հ. 6, էջ 411):

ԳԼՈՒԽ 3

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆԵՏԻ ՈՒՄԱՆՈՂԸ

Շահումյանի ու նրա ընկերների ղեկավարությունը գործող «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» իր գոյություն ասածին օրից նպաստում է, որ պետքի Հայ բանվորական շարժումը սկսեր քաղաքականապես ձուլվել Կոմկուսի, այնուհետև Ռուսաստանի շարժման հետ:

Մանիֆեստի տարածումը Հայ բանվորների չրճանում առաջ է բերում որոշակի արձագանք: Գաղտնի գործակալների ջանքերով ոստիկանությունը Հայտնի է դառնում մանիֆեստի հեղինակը: Բայց ոստիկանությունը ուշացել էր: Շահումյանը իր ընտանիքով 1902 թ. աշնանը մեկնել էր Բեռլին՝ ուսումը շարունակելու նպատակով, դարձյալ Մանիֆեստի նշանակած թոշակատաների ցուցակի մեջ ընդգրկվելու շնորհիվ:

Ոստիկանության ղեկավարամենտը պահանջում է ձերբակալել «պետական հանցագործության մեջ մեղադրվող» Շահումյանին: 1903 թ. հունիսի 23-ին կազմված ոստիկանության զեկուցագրում Հայտնվում էր, որ «ներկայումս Բեռլինում բնակվող» Շահումյանը ինչ-որ ինժեներական ինստիտուտի ուսանող է: (Ի. Գուրգենյանի Մուխամեդ, Շահումյան, Եր. 1974, էջ 65):

Բեռլինում գտնվելու ժամանակ Շահումյանի գործունեությունը մասին տեղեկություններ է հաղորդում նրա ընկերներից Սլյոտից Մանուշարյանը, որի գրատուներն առաջին անգամ տպագրվել են 1922 թվականի սեպտեմբերի 20-ին «Бакинский рабочий» թերթում: Նրա հուշերը տպագրվել են նաև «Շահումյանը ժամանակակիցների հուշերում» ժողովածուում:

Մանուշարյանը տեղեկացնում է, որ Ռուսաստանից Գերմանիա տեղափոխված Շահումյանը կարճ ժամանակում դառնում է Բեռլինում գտնվող կոմկուսի սոցիալ-դեմոկրատական փոքր խմբի առաջնորդն ու լիդերը: Ինչպես մի ժամանակ Ռիպայում, այնպես էլ այժմ Բեռլինում, Շահումյանի բնակարանը դառնում է Կոմկուսից եկած ուսանողների հավաքատեղի: Այստեղ նրանք քննարկում էին ժամանակի կենսական շատ հարցեր, որի ընթացքում դրսևորվում են Շահումյանի գիտելիքներն ու իրադարձությունները վերլուծելու ունակությունը:

«Շահումյանից առաջ» հիշում է Մանուշարյանը, արտասահմանում Հաստատված սոցիալ-դեմոկրատների մեր ոչ մեծ խումբը, որն այն ժամանակ առաջին փորձառություն ուներ մարքսիստական տեսության նրբությունները:

րի մեջ, քան նա, անմիջապես անձնատուր եղավ Շահումյանի անձնավորության հմայքին: Նա հմայք էր ոչ միայն որպես Հասարակական մարտիկ, այլև անձնական կյանքում, անձնական հարաբերություններում: Եվ նրա հմայքի ամենապլիսավոր մոտենալը, թերևս, խոր ճշմարտացիությունն էր, որը դրսևորվում էր նրա արարքների, խոսքերի, շարժումների մեջ: Նրա բնավորության այդ գիծը խակոյն նվաճում էր բոլոր նրանց համակրանքը, ում վիճակվել էր երբևիցե հանդիպել նրան, ընդհուպ մինչև միջինասիական երկաթուղիների «207-րդ վերատի» ստրուս ավազուտներում նրա ողբերգական ապանությունը»: (Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 173):

Բեռլինում Շահումյանն ընդունվում է Հասնարարանի փիլիսոփայության ֆակուլտետ՝ պետական գիտությունների բաժանմունքի գծով, ուսանելով այն ժամանակ Հայտնի պրոֆեսորների մոտ:

Երկու տարի ուսանելու ընթացքում Շահումյանը իր պրոֆեսորների դասախոսություններից քաղում էր «պատմափոփոխական բնույթի փաստերի ու տեղեկությունների մի ամբողջ գանձարան և սիրով դրանք գրանցում իր սև լավիակազմ տետրակի մեջ»:

Մանուշարյանը հիշում է, որ Շահումյանը հաճախ կրկնում էր պետական



Մ.Շահումյան և Մ.Մանուշարյան (Բեռլին)

սոցիալիզմի տեսության անշեղ հակառակորդ Ավգուստ Բեքեյի խոսքերը իր հակառակորդ պրոֆեսոր Վազնի Հասցեին. «Սեր դժբախտությունն այն է, որ մեր հակառակորդները նույնպես, ինչպես և մենք, ուժեղ են և գիտեն համոզել՝ հրանայի զինված լիներով պատմական գիտությունը...»: (Նույն տեղը, էջ 174):

«ԻՄ ՀԱՅ ԲԱՐԵԿԱՍՆԵՐԸ...»

Գիտական պրպտուսների հետ միասին Շահումյանը շատ ժամանակ էր տրամադրում ներվա գտնվելու գերմանական սոցիալ-դեմոկրատների առաջնորդներ Բեքելի և այլոց ելույթներին, որոնք տեղի էին ունենում Բեռլինի տարբեր սրահներում: Շահումյանին հատկապես գրավում էր Բեքելի Հոետորական արվեստը:

Բեռլինում գտնվելու տարիներին Շահումյանը ծանոթանում է գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ձախ թևի տեսաբանների, այդ թվում նշանավոր Կարլ Կաուցկու հետ: Մանուշարյանը հիշում է, որ Շահումյանի և Բախչի Իշխանյանի հետ շուտով հայերեն հրատարակելու էին Կաուցկու «Էրֆուրտյան ծրագիրը» աշխատությունը և կամենում են «այդ թարգմանությունը կցել Կաուցկու հատուկ առաջաբանը՝ նվիրված Ռուսաստանում ազգային հարցին և սոցիալ-դեմոկրատիայի խնդիրներին»: Հենց այդ նպատակով էլ նրանք ծանոթանում են Կաուցկու հետ, նրա բնակարան այցելելով: Կաուցկին չի մերժում և կատարում է նրանց ցանկությունը՝ գրելով ծավալուն Հոդված, որը լույս է տեսնում 1904 թվականին:

Այդ Հոդվածում Կ. Կաուցկին գրել է. «Իմ հայ բարեկամները ինձ առաջարկեցին Էրֆուրտի ծրագրի վերաբերյալ իմ գրքի հայերեն թարգմանությունը կցել մի քանի խոսք ազգային հարցի մասին, որը նրանց համար, հենց հիմա, ունի հատուկ նշանակություն»: (Карл Каутский, О национальном вопросе в России, С.-П., 1905, стр. 3):

Կաուցկուն կատարած այցելություններից մեկի ժամանակ Շահումյանը խնդրում է իրենց մտցնել գերմանական սոցիալիստների ձախ թևի համախոհների շրջանակի մեջ, որոնք հավաքվում էին ամեն հինգշաբթի օր:

Մանուշարյանը հիշում է, որ Շահումյանը, «ի տարբերություն ինձ ու Բ. Ի (նկատի ունի Բախչի Իշխանյանին-Վ. Պ.) եռանդուն կերպով ու ճանապարհորդներն մի ամբողջ տարի լինում էր այդ հինգշաբթիներին և, չնայած գերմաներենի իր համեմատաբար թույլ իմացությունը, այնտեղ հանդես էր գալիս որպես ուսանող բանվորական շարժման մասին մշտական ինֆորմացիա տվող»: (Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 176):

Շահումյանը կապեր է հաստատում Բեռլինում գտնվող տարագիր ուսանողական մարքսիստ հեղափոխականների հետ և դառնում ուսանողական սոցիալ-դեմոկրատների Բեռլինի կոմիտեի եռանդուն անդամներից մեկը, կուսակցությունը կառուցելու վերաբերյալ կազմակերպական բնույթի տարածայնությունների միջ վճռականորեն անցնում Լենինի կողմը: Այդ տարածայնու-

թյունները վերաբերում էին նրան, թե ինչպես կառուցել կուսակցությունը՝ վարից վե՞ր, թե՞ հակառակը:

Հիշելով այս մասին, Մանուշարյանը գրել է. «Բնավորությամբ լինելով մեղմ, մարդկանց հետ անձնական հարաբերություններում՝ «փշոզ, նա անպատկերելի մեր առջև բացահայտեց իր բնավորության նոր գիծը՝ հաստատակամություն և ծայրահեղ անդիջողություն հասարակական համոզմունքի հարցերում, անհորդորդ էր, կարծրաքար...»: Սակայն դրանից Շահումյանի անձնական հնաչքը չէր փոքրանում իր ընկերների աչքերում, որոնք կազմակերպության և տակտիկայի հարցերում տարբեր կարծիք ունեին:

Մանուշարյանը նշում է նաև, որ եղած տարածայնությունները կովկասցիներին չէր խանգարում Շահումյանի հետ միասին աշխատել այն անհետաճգելի խնդիրների վրա, որոնք «առաջ էր քաշում այն ժամանակ Կովկասում հզոր կերպով զարգացող բանվորական շարժումը»:

Սակածի կապակցությամբ Մանուշարյանը հիշում է հետևյալ փաստը: Այդ ժամանակ Բաքվում գտնվող Բոգրան Կուսակցությունը, որը ղեկավարում էր սոցիալ-դեմոկրատական շարժումը, գաղտնագիր նամակներով հայտնում էր, որ շատ է զգացվում վրացերեն ու հայերեն սոցիալ-դեմոկրատական գրականության կարիք և պահանջում էր ուղարկել գրքույկներ, մարդիկ:

«Իսկ արտասահմանում,- գրում էր Մանուշարյանը,- այն ժամանակ մեր թիվը քիչ էր, շատ քիչ, ընդամենը կես տասնյակ սոցիալ-դեմոկրատներ՝ նացիոնալիստորեն տրամադրված, ակտիվ և գործույնյա հեղափոխական մտավորականության հարյուրյակի դիմաց»:

Եվ Շահումյանը դառնում է արտասահմանում գտնվող հայ սոցիալ-դեմոկրատների հայացքների ներքին միասնության համար մղվող պայքարի առաջամարտիկը:

Այդ ժամանակ հայտնի հրատարակախոս, բանաստեղծ, Հնչակյան կուսակցության կենտրոնի անդամ Երվանդ Պալյանը ժնկում սովորելիս, ծանոթացել և մտերիմ կապեր էր հաստատել Պիխանովի հետ, մասնակցել նրա խմբի հավաքներին, հրատարակում էր «Սոցիալիստ» հանդեսը: Նա այս հանդեսի միջոցով եռանդով պայքարում էր նարոդնիկության և ազգային-հեղափոխական գաղափարախոսության դեմ, նպատակ հետապնդելով կազմակերպել տարբեր երկրներում գտնվող հայ բանվորների միասնական հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն:

Երվանդ Պալյանը Հնչակյան կուսակցությունից շուտ հեռանալով, որոշ ժամանակ անց, վերադառնում է Բաքու, որտեղ էլ հեռանում է նաև սոցիալ-դեմոկրատիայից և զբաղվում գրականագիտությունով:

Իսկ Փարիզում գտնվող Հնչակյան կուսակցության առաջնորդ Ավետիս Նազարբեկյանը, որն ընդունել էր սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսությունը, կարևորագույն խնդիր էր համարում սուլթանական ղեկավարից միջ արևմտահայության ազատագրումը:

Կար նաև Հայ սոցիալ-դեմոկրատների շարքում երրորդ ուղղությունը Բախչի Իշխանյանի գլխավորությամբ: Այս ուղղության վրա կանգնածները հանդես էին գալիս Հայ սոցիալ-դեմոկրատական ինքնուրույն կուսակցություն ստեղծելու օգտին, օրինակ վերցնելով հրեական «Բունդից» և «Լեհաստանի ու Լիտվայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունից»:

Այս խումբը 1903 թ. վերջերին ժնևում կազմավորում է «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը», որը, որոշ ժամանակ անց, իր գործունեությունը փոխադրում է Անդրկովկաս: Այս կազմակերպության գործունեության լուսաբանումը չի մտնում իմ նպատակի մեջ, միայն կամենում եմ նշել, որ դրա ղեկավարները, նկատի ունենալով Հայկական Հարցի գոյությունը, գտնում էին, որ Հայկական իրականությունը գտնվում է առանձնահատուկ պայմանների մեջ: Նրանք մեր պատմության մեջ Հայտնի դարձան «սպեցիֆիկներ» անունով:

Ահա, այս երեք հոսանքների միավորման համար Շահումյանը ծավալում է լուրջ աշխատանք: Նազարբեկյանի ու Պալյանի հետ վարում է աշխույժ նամակագրություն, նրանց համոզելով հրաժարվել առաջացած կազմակերպական տարաձայնություններից և մտնել միասնական ուսաստանյան բանվորական կուսակցության մեջ:

Մանուշարյանի վկայությամբ Գերմանիայի և Ավստրիայի համալսարաններում սովորող ուսանողները, որոնք համակրում էին սոցիալ-դեմոկրատիային, սկսեցին կազմակերպել բջիջներ և խնդրում էին ուղարկել որևէ մեկի՝ դաշնակցության դեմ հրապարակային ելույթ ունենալու:

«Այդ ժամանակվա՝ գրել է Մանուշարյանը.՝ Հեշտ բան չէր ճեղքվածք առաջացնել, կտորել ազգային-հեղափոխական գաղափարախոսությունը այդ հաստ չերտը: Եվ իր հաջողությամբ այդ աշխատանքը գլխավորապես պարտական է Շահումյանի գործունեությանը և նրա հմայիչ անձնավորությամբ»: (Նույն տեղը, էջ 178-179):

Բեռլինում գտնվելու տարիներին, Շահումյանը համալսարանում սովորելու հետ միասին վարում էր նաև հեղափոխական-կուսակցական աշխատանք, որը նրանից պահանջում էր ուժերի մեծ լարում: Դրան ավելանում էր նաև ընտանիքի նյութական անապահով վիճակը, որը բավարարելու համար

նա հարկադրված էր կործնակի աշխատանքով զբաղվել: Այս ամենն անհետևանք չի մնում և վատանում է Շահումյանի առողջական վիճակը:

Բեռլինում ծավալած եռանդուն աշխատանքով Շահումյանը իր վրա է գրավում գերմանական գաղտնի ոստիկանության ուշադրությունն այն բանից հետո, երբ ստացվել էր ցարական Ոստիկանական ղեկավարտամենտի խնդրանքը՝ նրան հանդուրժյան տակ պահելու մասին:

Ոստիկանական ղեկավարտամենտը դրանով չէր բավարարվել: Եվ շուտով Շահումյանը հայտնվում է ցարական ոստիկանության գաղտնի գործակալ, համալսարանի բժշկական ֆակուլտետի ուսանող Յակով Ժիտոմիրսկու տեսադաշտում: Վերջինս ամեն կերպ աշխատում էր չահել Շահումյանի վատահոլությունը, նույնիսկ մեկ անգամ Շահումյանին ցույց է տալիս բժշկական օգնություն, երբ նա ծանր նուպա էր ունեցել:

ՀԱՆՐԱԴՊՈՒՄ ՊԼԵՆԱՆՈՎԻ ԵՎ ԼԵՆԻՆԻ ՀԵՏ

Հեղափոխական ընդհատակյա աշխատանքում Շահումյանը ձեռք էր բերել բավական փորձ և դրա շնորհիվ նա նկատում է վտանգը, խստում է ոստիկանության հաշիվները և հեռանում Բեռլինից:

1903 թ. գարնանը Շահումյանը մեկնում է Շվեյցարիա: Ժնևում նա հանդիպում է իր վաղեմի ընկերոջը՝ Վանո Հարությունյանին: Ժնևում Շահումյանը Վ. Հարությունյանի հետ միասին հանդիպում են Լենինին: Այդ ծանոթությունն մասին իր հուշերում Վ. Հարությունյանը գրել է. «Երեկվա պես հիշում եմ մեր առաջին ծանոթությունը Վադիմիր Իլյիչի հետ... Հիշում եմ, թե Իլյիչը որքան աշխույժ կերպով հետաքրքրվում էր Կովկասի գործերով և Ստեփանին խնդրում էր իրեն միշտ իրագեկ պահել Կովկասի գործերի վերաբերյալ» (Ս. Հ. Բարսեղյան, Ստեփան Շահումյան, կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն, Եր. 1968, էջ 96-97):

Պետք է նկատել, որ հենց առաջին ծանոթությունից Լենինի և Շահումյանի միջև հաստատվում են ջերմ հարաբերություններ: Ժնևում Շահումյանը ծանոթանում է նաև Պեխանովի հետ, որը մարքսիստների միջավայրում հայտնի էր նաև հետևյալ ասույթով. «Իմ ընկերոջ ընկերը իմ ընկերը չէ»:

Շահումյանը եռանդով մասնակցում է ժնևում և Յյուրիխում գործող սոցիալ-դեմոկրատական խմբակների աշխատանքին, լուրջ գործունեություն ծավալում ՌՄԻԲԿ 2-րդ համագումարի նախապատրաստման համար:

1903 թ. մարտին, երբ Շահումյանը գտնվում էր արտասահմանում, Թիֆլիսում անրեզալ պայմաններում հրավիրվել էր Անդրկովկասում գործող սոցի-

աղբնոկրատական կազմակերպությունների առաջին համազումարը, որին մասնակցել են նաև «Բրձոյա» և «Պրոլետարիատ» թերթերի ներկայացուցիչները: Համազումարը որոշում է կազմել ՌՄԻԲԿ Կովկասյան միություն և նրա ղեկավար մարմինը՝ Մուլթենական կոմիտե: Համազումարի որոշմամբ միացվում են Հայերեն «Պրոլետարիատ» և վրացերեն «Բրձոյա» թերթերը և դրանց փոխարեն հրատարակվում Հայերեն «Պրոլետարիատի կոիվը», վրացերեն «Պրոլետարիատի բրձոյա» ու ռուսերեն "Борьба пролетариата" թերթերը: «Պրոլետարիատի կոիվը», որի յուրաքանչյուր համարը բաղկացած էր 30 էջից, լույս է տեսնում մինչև 1905 թ. հոկտեմբեր ամիսը:

**«...ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ՀԱՍԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ
ԲԱԶՄԱԶԱՐՉԱՐ ՏԱՃԿԱՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ
ԱԶԱՏԱՐԱՐ ԳՈՐԾԻՆ...»**

1903 թ. ամռանը Շահումյանը Շվեյցարիայից մեկնում է Բեռլին և, ելնելով նյութական վիճակից, ընտանիքի հետ վերադառնում Թիֆլիս՝ ունենալով Լենինի հանձնարարությունը: Պրովոկատոր Ժոտովի ակտիվ հաղորդմամբ ցարական ոստիկանությունը տեղյակ էր Շահումյանի վերադառնալու մասին: Ոստիկանական ղեկավարտամենտը օգոստոսի 28-ի շրջաբերականով սահմանապահ մարմիններից պահանջում է խստորեն հետևել և մանրամասն խուզարկել արտասահմանից վերադարձող Շահումյանին, այն հաշվով, որ պետքի որևէ դատապարտելի բան հայտնաբերելու դեպքում, ձերբակալել: (Մ. Աբրաքանյան, Ստեփան Շահումյան, Եր., 1978, էջ 75): Մինչ այդ, Շահումյանին արդեն հաջողվել էր անմիաս անցնել սահմանը և 1903 թ. հուլիսի 28-ին վերադարձել էր Թիֆլիս: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 7, թ. 28):

Միլիա Յիսակյան իր հուշերում հայտնում է Շահումյանի վերադարձի, նրա հետ հանդիպման մասին: Նա պատմում է, որ Արչակ Զուրաբյանը իրեն տեղեկացրել է արտասահմանից վերադարձած Շահումյանի մասին, որին նա այդ ժամանակ ծանոթ չի եղել: 1903 թ. նոյեմբերին Շահումյանը ՌՄԻԲԿ Կովկասյան միությունական կոմիտեի նիստում զեկուցում է Եվրոպայում գտնվող Ռուսաստանից գնացած տարագիրների, հեղափոխական խմբավորումների, տրամադրությունների ու միտումների մասին: Տեղեկացնում է նաև Լե-նինի հետ իր հանդիպումների մասին:

Լսելով Շահումյանին, որը ներկայացել էր «Աուրենին» անունով, կոմիտեի անդամները ցանկություն են հայտնում, որպեսզի նա մնա և եռանդով ներգրավվի կոմիտեի աշխատանքին: Շահումյանը համաձայնվում է, պայ-

մանով, որ նախ պետք է վերադառնա արտասահման, Լենինին տեղեկացնի Կովկասում տարվող աշխատանքի մասին: (Մ. Աբրաքանյան, Ստեփան Շահումյան, էջ 76; Խ. Բաբանդյան, նույն տեղը, էջ 109-114):

Շահումյանը մասնակցում է ՌՄԻԲԿ Կովկասյան միությունական կոմիտեի «Պրոլետարիատի կոիվը», «Պրոլետարիատի կուլի թերթիկ» լրագրերի խմբագրմանը: Այս թերթերը Շահումյանի գլխավորությամբ ոչ միայն լուսաբանում էին Անդրկովկասի զանազան քաղաքներում բանվոր դասակարգի մղած պայքարը, այլև մերկացնում էին ռուսական ցարիզմի քաղաքականությունն ազգային հարցում:

Պետք է նշել, որ ընդդեմ Հայ սոցիալ-դեմոկրատների ու նրանց թերթի, դաշնակցության մամուլը հանդես էր գալիս սուր քննադատությամբ, շեշտելով, թե սոցիալ-դեմոկրատները Կովկասի Հայ բանվորներին դասակարգային քաղաքական պայքարի կոչելով, վնասում են Արևմտյան Հայաստանի ազգային անկախության համար մղվող պայքարին:

Պատասխանելով այս մեղադրանքին «Պրոլետարիատի կոիվը» պարզաբանում է Հայկական Հարցում Հայ սոցիալ-դեմոկրատների դիրքորոշումը: Սոցիալ-դեմոկրատիան, հայտարարում էր թերթը, միանգամայն բնական ու օրինական է համարում արևմտահայերի ազատագրական պայքարը սուլթանական բռնակալության դեմ:

Շահումյանի խմբագրած «Պրոլետարիատի կոիվը» գրում էր. «Ուղարկելով Տաճկահայաստանում կուլող եղբայրներին մեր սոցիալիստական ողբույնը, մենք բացարձակ կերպով հայտարարում ենք մեր համակրությունը բազմաշարժար տաճկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անկեղծ ցանկությունն է, որ այդ ազատությունը հասնի որքան կարելի է շուտ»: (Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմությունը ուղիվաձեռք, Եր. 1958, էջ 87):

Շահումյանի խմբագրությամբ «Պրոլետարիատի կոիվը» թերթն առաջին անգամ տպագրում է դեռևս 1894 թ. էնգելսի գրած նամակը: Այս կապակցությամբ հարկ եմ համարում նշել հետևյալը: 1894 թ. ժնևում Ֆ. էնգելսի «Սոցիալիզմի զարգացումը ռուսականից ղեպի գիտություն» աշխատությունը հայերեն թարգմանող ու տպագրող Հովսեփ Աթարբեկյանը դիմել էր Ֆ. էնգելսին, խնդրելով «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հայերեն հրատարակության համար գրել առաջաբան:

Ֆ. էնգելսը 1894 թ. նոյեմբերի 23-ին պատասխանն նամակում մերժում է Հ. Աթարբեկյանի խնդրանքը: Իր մերժումը բացատրելով, Ֆ. էնգելսը գրել է նաև հետևյալը. «Առավել ևս տվյալ դեպքում, երբ խոսքը ճշգրիտ ժողովր-

դի մասին է, որը դժբախտություն ունի գտնվելու թուրքական ղեկավարության Սցիլլայի և ուսական ղեկավարության ինտրոդուկտի միջև, ընդ որում ուսական ցարիզմը չարաչառում է՝ հանդես գալով ազատատարի դերում, իսկ լակեական ուսական մամուլը, ելնելով ազդեցիկ ցարիզմի նպատակներից, բաց չի թողնում առիթը օգտագործելու հայերի ազատագրության վերաբերյալ արտահայտած կարեկցանքի յուրաքանչյուր խոսք:

Բայց եթե անկեղծորեն ասենք, իմ անձնական կարծիքն է, որ Հայաստանի ազատագրումը թուրքերից, ինչպես նաև ուսաններից, հնարավոր կլինի միայն այն օրը, երբ կուսակալի ուսական ցարիզմը» (ընդգծումը իմն է -Վ. Պ.): (К. Маркс, Ф. Энгельс, том 39, стр. 270-271):

Այսպիսով, նկատի ունենալով հայ ժողովրդի ծանր վիճակը, Ֆ. Էնգելսը հայ ժողովրդի ազատագրումը պայմանավորում էր ուսական ինքնակալության տապալմամբ: Փաստորեն Ֆ. Էնգելսը հայ հեղափոխականներին մատնացույց էր անում ցարիզմի տապալման կարևորությունը, որով էլ հնարավոր կլինեի արևմտահայերի ազատագրումը թուրքական ղեկավարությանց: Սա նշանակում էր, որ Արևմտյան Հայաստանի ազատագրումը սերտորեն կապված է ուսական հեղափոխության հաղթանակի հետ: Միայն Ռուսաստանի հաղթանակած հեղափոխությունը կարող է օգնել արևմտահայերի ազատագրությանը: Ըստ էության, Ֆ. Էնգելսն այն համոզմանն էր, որ եվրոպական ոչ մի տերություն չահագրդույված չէ Հայկական հարցի լուծմամբ: Դա հնարավոր էր միայն Ռուսաստանի հեղափոխության հաղթանակով:

Ֆ. Էնգելսն իր նամակով արևմտահայության ազատագրման գործում բարձրացնում էր ուսական հեղափոխության դերը, ցարիզմի տապալման առաջնային անհրաժեշտությունը, որոնց արդյունքով կբացվեր արևմտահայության ազատագրության ճանապարհը:

ԳՐԱՆՈՍԱԿԱՆ Մ. ԳՈՐԿՈՒ «ՀԱՏԱԿՈՒՄ» ՊԻԵՍԻ ՄԱՍԻՆ

Շահումյանը մեկնում է Ալավերդի, Ջալալօղլի, հանդիպում իր ընկերներին, նրանց հայտնում ՌՄԻԲԿ 2-րդ համագումարի մասին: Նրա ուղեորությունն անհայտ չի մնում և թիֆլիսի ոստիկանությունից Բորչալուի գավառապետին հանձնարարվում է «պետական հանցագործությունից մեջ մեղադրվող» Շահումյանի մասին, որն «այժմ ապրում է Ջալալօղլիում», տեղեկություններ հաղորդել նրա գրադմուճքի, ապրուստի միջոցների, ծանոթների շրջանակի և ապրելակերպի վերաբերյալ: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 7, թ. 1):

1903 թ. սեպտեմբերի 7-ին «Մշակ» թերթում տպագրվում է Շահումյանի ծավալուն գրախոսությունը Բեռլինում Մ. Գորկու «Հատակում» պիեսի բեմադրության մասին:

Նա նախ, հայտնում է, թե Գորկու «Հատակում» պիեսի բեմադրությունն ինչպիսի հաջողություն ունի գերմանացիների մոտ, որոնք «չեն բավականանում միայն մի անգամ տեսնելով»: Այնուհետև նա նշում է, որ «Հատակում» պիեսը ներկայացնում է «կյանքի խորքից առնված պատկերները» և շարունակում է. «Բայց հենց այս է հիացման արժանի կետը, որը... սկզբից մինչև վերջ լարում է հանդիսատեսի ուշադրությունը, գրավում նրա ուշքն ու միտքը, քաշում ներկա երդո մարդկանց զգացմունքներն ու կարեկցությունը և միացնում տիրմի մեջ խրված, սակայն մարդ կոչված արարածների զգացմունքների վրա»:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացնեմ ևս մեկ-երկու հատված այդ գրախոսականից, որից պարզ է դառնում, թե Շահումյանն ինչի վրա է շեշտը դրել:

«Մարդասիրություն,- գրել է Շահումյանը,- ահա այն իշխող գաղափարը, որով հանակված է այդ երկը: Արարածներից ամենակատարյալը, իր խելքով և իր զգացմունքներով ամենքի վրա թափափողը, տեսնական անողոր պայմանների և ընկերություն անհավասար օրենքների շնորհիվ ընկնում է իր վայել աստիճանից ճահճոտ ու տղմայից խորխորատի մեջ և հոգով ու մարմնով շարժվում այդ զանգվածի հետ»:

Եվ այնուհետև. «... Այդ ընկած հասարակությունը, անտարբերների այդ խումբը իր այդ բոլոր դժբախտ պայմանների մեջ իր կոչումը չի մոռանում, և մենք տեսնում ենք որոշ ռուպեններ, երբ նրանք հիասթափված իրանց ընկած վիճակից, գիտակցության ամենաբարձր աստիճանին են հասնում և խիստ խելացի ճշգրիտ կերպով որոշում մարդուս էություն ու պարտականության սահմանը: Նրանց մեջ բռնկվում է վայրկյանական մի տեսչանք, քանդել իրանց կաշկանդող կապանքները, դուրս գալ այդ անդունդից և ձգտել ու աչխատել նոր կյանքով ապրելու, մի նոր կյանքով»:

Եվ վերջապես. «Մարդ,- որքան քաղցր է հնչում այս խոսքը Գորկու ականջին, որքան հպարտություն է արտասանում նա այդ բառը»,- գրում է Շահումյանը և իր գրախոսականն ավարտում Գորկու հետևյալ խոսքերով. «Մարդ, սա շատ մեծ բան է, այդ բառի մեջ է ամեն բանի սկիզբը և վախճանը. ամեն ինչ մարդու մեջ է և ամեն ինչ մարդու համար է. գոյություն ունի միայն մարդը. մնացած ամեն ինչ միայն նրա ձեռքի ու մտքի արդյունքն են կազմում»:

Մարդը դա մի հրաշալի բան է, մարդը հնչում է հպարտ: Պետք է հարգել նրան և ոչ խղճալ և ասորացնել նրան»: («Մշակ», սեպտեմբերի 7, 1903):

**«ՄԵՐ ՏԱԿՏԻՎԱԿԱՆ ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»
ՌԵՖԵՐԱՏԸ**

1903 թ. նոյեմբերին Շահումյանը նորից մեկնում է Բեռլին: Այստեղ նա ամբողջությամբ ծանոթանում է ՌՄԻԲԿ 2-րդ Համագումարի նյութերին, գրում է «Սեր տակտիկական տարաձայնությունները» ռեֆերատը և կարդում կուսակցության Բեռլինի, Դրեզդենի, Մյունխենի և այլն խմբերում:

Այդ ռեֆերատը բուռն բանավեճ է առաջացնում: Հատկապես մենչևիկներն ու էսէռները զայրացած առարկում են Շահումյանի գլխավոր եզրակացությունը, որտեղ ասվում էր հետևյալը. «Բանվորական կուսակցությունը չպետք է քարշ գա պատմության ետևից, այլ պետք է գործոն կերպով ազդի նրա ընթացքի վրա: Պատվամենտական մեծամասնությունն նվաճելու և պատեր ծիծաղելի կլինեն: Այն պահին, երբ այդ մեծամասնությունը կառաջանա կամ առաջանալու նախօրեին կլինի, կառավարող բուրժուազիան պետական հեղաշրջում կկատարի և պատվամենտարիզմի ակզորունքը դեմ կնետի որպես իր ռեալ շահերին հակասող ավելորդություն: Այդ պատճառով էլ բանվոր դասակարգի կուսակցությունը պարտավոր է նախապես կռահել իրարարձուցություններն ու օգտվել պայքարի բոլոր մեթոդներով... Որոշ պահերի մենք պետք է պատրաստ լինենք ապստամբության, ընդհանուր գործադուլի և այլ միջոցներով իշխանությունը մեր ձեռքը վերցնել, պրոլետարիատի դիկտատուրա հռչակել և վերակառուցել Հասարակությունը»: (Ռ. Դուբինսկի-Մոխաձե, նույն տեղը, էջ 80; Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 183-184):

Ինչպես վկայում է Մ. Լյադովը, Շահումյանը ղեկավարում էր Բեռլինում, և Լայպցիգում ստեղծված սոցիալ-դեմոկրատական խմբակները: (Մ. ЛЯДОВ, Из жизни партии в 1903-1907 годах, М., 1956, стр. 11):

Միաժամանակ Շահումյանը Բ. Կոմյանցի, Ա. Երզնկյանի, Մ. Տորոչևի-ձեի հետ միասին եռանդով մասնակցում էր ժնևում ստեղծված «Կովկաս» մարքսիստական ուսանողական խմբի աշխատանքին:

Լենինին հանդիպելու նպատակով 1904 թ. հունվարին Շահումյանը մեկնում է ժնև և նրա հետ քննարկում հայերեն և վրացերեն կուսակցական գրականություն հրատարակելու հնարավորությունը: Շահումյանը ստանձնում է այդ գործի իրականացումը:

Շուտով, փետրվարի 8-ին, Շահումյանի գլխավորությամբ ստեղծվում է այդ գրականությունը հրատարակող հանձնաժողով, որի մեջ մտնում են Նոյ Ժորդանյան, Արամայիս Երզնկյանը, Մ. Մանուչարյանը, Եփրեմիձեյն, Գաբրիանին: Հանձնաժողովը կարողանում է ձեռք բերել համապատասխան տարաձայնություն: Հանձնաժողովին կարևոր օգնություն են ցույց տալիս տարբեր քաղաքներում գործող հայկական ու վրացական խմբերը:

Իր գործունեության առաջին ամսում հանձնաժողովը ժնևի կուսակցական տպարանում լույս է ընծայում մի քանի հազար տպաքանակով կուսակցության 2-րդ Համագումարի նյութերը, բազմաթիվ թրուցիկներ: 1904 թ. հրատարակվում են Շահումյանի թարգմանությամբ Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», Մարքսի «Վարձու աշխատանքը և կապիտալը», ինչպես նաև Մարքսի, Էնգելսի, Պլեխանովի, Լենինի և այլոց աշխատությունները:

Այդ օրերի մասին Մ. Մանուչարյանը իր վերոհիշյալ հուշերում գրում է. «Հիմա ասես կենդանի կերպով ես իմ առջև տեսնում եմ տատերի արկղերի վրա գրաչարների հետ կողք կողքի գլուխները խոնարհած Ստեփանին և մի ընկերոջ... փոքրիկ տպարանում, որտեղ տպագրվում էին «Искра»-ն և մեր փոքրիկ գրքուկները»: (Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 180):

Կարևոր խնդիր էր համարվում տպագրված գրականությունը Կովկաս հասցնելը: Այդ գրականությունը Թիֆլիս ու Բաքու էր հասցվում Պարսկաստանի, Թուրքիայի վրայով, Սև ծովով: Այս ճանապարհով կազմակերպվում է երկու առաքում: Գրականության երրորդ առաքումը կատարում է Կամոն, որը մասնությունը ձերբակալվում է: (Նույն տեղը, էջ 181):

Վերադառնալով Բեռլին, Շահումյանը շարունակում է հաճախել Համալսարանի դասերին: Մինչև 1906 թվականը, Շահումյանը սովորելու հետ միասին հաճախակի կուսակցական հանձնարարություններ մեկնում էր Պետերբուրգ, Անդրկովկաս: Սակայն այդ բացակայությունները երբեք չեն ազդում նրա կրթության ընթացքին, քանի որ նա դրան մոտենում էր լրջորեն և համառ պարսպամուճքով լրացնում էր բաց թողածը:

Ընդհանրապես Շահումյանը Բեռլինի համալսարանում 5 կիսամյակի ընթացքում լսել է հետևյալ դասախոսությունները.

1. Կապիտալիզմ և սոցիալիզմ (պրոֆեսոր Վազներ).
2. Պետական գիտությունների հանրագիտարան (դոկտոր Յաստրով).
3. Սոցիալական հարցեր (դոկտոր Յաստրով).

- 4. Ընդհանուր տեսական ազգային խնայողություն (պրոֆեսոր Շմոլլեր)։
- 5. Հոգեբանության, որպես հոգևոր գիտության հիմնական գծերը (պրոֆեսոր Զիմմեր)։
- 6. Ժամանակակից բանվորական խավի դրությունը (պրոֆեսոր Շմոլլեր)։
- 7. Էթիկա և գլխավոր սոցիալական պրոբլեմները (պրոֆեսոր Զիմմեր)։
- 8. Սոցիալիզմ (պրոֆեսոր Վազներ)։
- 9. Եվրոպական պետականության համակարգի տեսություն (պրոֆեսոր Գիևտցե) և այլն։ (Г. Гарибджанян, С. Шаумян за границей, Ер. 1971, стр. 21)։

1904 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ ՄԵԿԸ

1904 թ. մարտի վերջին Շահումյանը մեկնում է Պետերբուրգ նպատակ ունենալով կարգավորել անլեզու գրականության առաջուճը Մերձբալթիկա, Պետերբուրգ և Անդրկովկաս։ Պետերբուրգում նա հանդիպում է Կովկասից այստեղ սովորող ուսանողների հայրենակցական խմբերին, նրանցից ակնկալելով նյութական ու տեխնիկական աջակցություն։ 1904 թ. ապրիլի 8-ին Շահումյանը վերադառնում է Թիֆլիս և անմիջապես հայտնվում ժամուր-մական նահանգային վարչության հսկողության տակ։ Այդ մասին Թիֆլիսի պահանջարկային բաժնի պետը գեկուցում է իր վերադասին, տեղեկացնելով, որ Շահումյանը մեկնել է Զալաթովի։ (ՀՀ ԱԱ, ֆ, 1437, ց. 1, գ. 41, թ. 1)։

1904 թ. ապրիլի 13-ին Շահումյանի նկատմամբ աահանմովում է գաղտնի հսկողություն։ Գործակալը գեկուցազրում ըստ ժամերի նշում է, թե Շահումյանը ուր է գնացել և ում է հանդիպել։ (ՀՀ ԱԱ, ֆ, 1437, ց. 2, գ. 55, թ. 3)։

Վերադառնալով Թիֆլիս, Շահումյանը սկսում է մոտիկից ղեկավարել Անդրկովկասում գործող սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների աշխատանքը։

Շահումյանը եռանդով զբաղվում է մայիսյան ցույցի կազմակերպմամբ։ Դեպքերի մասնակից, նախկին գրաչար Ենոք Փահրադյանը հիշում է, որ 1904 թ. ապրիլի 25-ին նախապրկապում Շահումյանը և ընկերները բանվորների մեջ ուժեղ պրոպագանդա էին մղում նախապատրաստվելու Մայիսի 1-ի տոնակատարության համար։ Այնուհետև նա պատմում է, որ Թիֆլիսի տարբեր չրջաններից եկած բանվորների խմբերը միանում են Գողովնա-կու փողոցում։ 10 հազար ցուցարարների առջև բողաշունչ խոսքով հանդես է գալիս Շահումյանը, իր ելույթն ավարտելով «Կորչի ցարական ինքնակա-րությունը։ Կեցցե՜ հեղափոխական Ռուսաստանը» լուզնազներով։

Ցուցարարների վրա հարձակվում են զինված կողակները։ Կրակոցներից վիրավորվում են մի քանիսը, ձերբակալվում է 70 ցուցարար, այդ թվում՝ Ալե-շակ Զուրաբյանը։ Բանվորների օգնությամբ Շահումյանին հաջողվում է խուսափել ձերբակալումից։

ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Մայիսյան ցույցերից հետո Շահումյանը 1904 թ. օգոստոս-սեպտեմբերին մեկնում է Հայաստան, լինում է Ալավերդում, Ալեքսանդրապոլում, Երևանում և այլ վայրերում։ Այդ շրջագայության մասին Շահումյանը «Պրո-լետարիատի կռիվ թերթիկում» 1904 թ. հոկտեմբերի 1-ին հրատարակում է «Երևանից (հայ իրականությունից)» հոդվածը։ Այդ հոդվածը թարգմանվում է ռուսերեն և տպագրվում է նաև «ՄԱՍԿԱ» թերթում 1904 թ. նոյեմբերի 28-ին։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 420-422)։

Իր հոդվածի սկզբում Շահումյանը նշում է իր առաջած առաջին տպավորությունը, գրելով, որ «Հայկական պրովինցիայում վերջին ժամանակներու ամենուրեք շովինիստական ուժեղ տրամադրություն է տիրում»։

Այդ տրամադրության ուժեղացումը նա կապում է երկրի ծայրամասե-րում ցարական ինքնակալության ավազակային քաղաքականության հետ, որի արտահայտությունն էր դարձել հայկական եկեղեցական գույքի բռնազ-րավման մասին 1903 թ. հունիսի 12-ի օրենքի ընդունումը։ «Այս օրենքը, գրում է Շահումյանը, - խիստ կպել է բնակչության կղերական-ազգային լա-րերին և խոր վրդովմուճք է առաջացրել նրա մեջ»։

Ասվածից երևելով Շահումյանը կատարում է հետևյալ եզրակացությունը. «Քաղաքացիական և քաղաքական գիտակցության ամենատարրական ձևերից գուրկ հայ բնակչությունը չհասկանալով, թե որտեղից է իրեն հար-ված հասցվում, նույնացրեց ցարիզմի և ռուս ժողովրդի չահերը և իր ծանր զգացումի ելքը գտավ կոպիտ, կարճատես շովինիզմի մեջ»։

Շահումյանը նշում է, որ այդ հանգամանքից առավելապես օգտվել են հայկական նացիոնալիստական կուսակցությունները, որոնք խրախուսելով բնակչության շովինիստական զգացումները, դրանք օգտագործում են «իրենց կուսակցական նպատակների համար»։

Այս հանգամանքով բացատրելով «վերջին տարիներին ուժաասլառ եղած կուսակցությունների եռանդուն գործունեությունը», Շահումյանը հունիսի 12-ի օրենքի հետևանքների չարքում նշում է այն իրողությունը, ըստ որի «կովկասյան հայերի դրությունն ու կարիքները հայ-նացիոնալիստական կուսակցությունների կողմից հաշվի առնելու անհրաժեշտության հարկադ-

րական ճանաչումն է, «Համազգային» թրքահայ հարցի կողքին նաև ուսուսահայ հարցի առկայության ճանաչումը»:

Ասվածի կապակցությամբ Շահումյանն անդրադառնում է «Դրոշակի» կուսակցությանը, գրելով, որ դաշնակցությունը «ներկայումս ամենաուժեղ և գործունյա, բայց և ամենից ավելի անակզբունք և ռեակցիոն կուսակցություն»,- երկար պայքարում էր կովկասյան հայերի քաղաքական կարիքներին արձագանքելու հայ մտավորականության փորձերի դեմ, բոլոր թույլատրելի ու անթույլատրելի միջոցներով աշխատում էր կասեցնել բանվորական շարժումը Կովկասում և «դավաճաններ» էր անվանում հայ մտավորական սոցիալ-դեմոկրատներին այն բանի համար, որ նրանք Կովկասի հայերի միտքը հեռացնում էին թուրքահայ գործից և մասնատում էին հայ մտավորականության ուժերը»:

Որպես իր գնահատականի ապացույց Շահումյանը հիշեցնում է դաշնակցության «վերջին համագումարում» ընդունված մի շարք որոշումների մասին և նշում է, որ ազգայնական կուսակցություններն ամենուրեք «հրահրելով իրենց համար այնքան ձեռնուռ շովինիստական զգացումը, հակայական միջոցներ են դուրս կորզում»:

«Ամենապիտակորը,- ընդգծում է Շահումյանը,- դա այն է, որ Ռուսաստանի կողմից ուսասկանացման քաղաքականության դեմ պայքարելու պատրվակով բնակչությանը հետո են պահում (նկատի ունի դաշնակցությունը-Վ.Պ.) ամեն տեսակ արտաքին ազդեցությունից, այդ թվում, հասկանալի է,- և, որ գլխավորն է,- «դավաճանական», «սափմիլյատորական» սոցիալ-դեմոկրատական պրոպագանդայի ազդեցությունից»:

«Մյուս կողմից,- շարունակում է Շահումյանը,- «Դրոշակի» կենտրոնական հիմնարկները... արդեն համաձայնության մեջ են մտել Ռուսաստանի... երկու ազգությունների, «խսկական» հեղափոխական ներկայացուցիչների հետ,- սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության» և... նույնպես «սոցիալիստ-ֆեդերալիստների» «Սաքարթվելո» կուսակցության հետ...»:

1903 թ. հունիսի 12-ի օրենքի քաղաքական արդյունքը Շահումյանը համարում է այն, որ «ցարական քաղաքականության հետ բնակչության ուժեղացած արդյունոտ ընդհարումներից» հետո սկսված քաղաքական մտայն ռեակցիան բնակչությանը նետել է նացիոնալիստական կուսակցությունների գիրկը և երկար ժամանակով կանգնեցրել է «հայ բնակչության քաղաքական գիտակցության և հեղափոխական ինքնագործունեության աճը»:

Շահումյանը նշում է, որ ստացված այս արդյունքից ցարական կառավարությունը «կարող է գուհ լինել»:

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԱՆԴՅԱՆԻ ՀՈԴՎԱԾԸ

Շահումյանի «Երևանից (հայ իրականությունից)» հոդվածի դեմ հանդես է եկել դաշնակցության երևելի գործիչ Միքայել Վարանդյանը՝ էսէնների "Революционная Россия" թերթում հրատարակելով «Հայ հեղափոխական դաշնակցությունը ուղղափառ թերամիտների դատի առաջ» հոդվածը:

Իսկ 1904 թ. դեկտեմբերին «Դրոշակ»-ի մեջ Վարանդյանը հրատարակում է «Արևմտահայաստանի յեղափոխ. շարժման մեջ» հոդվածը, որն ամբողջությամբ ուղղված է ուսասկան սոցիալ-դեմոկրատիայի դեմ:

Վարանդյանը իր հոդվածի սկզբում մարքսիզմը գնահատում է որպես «հոյակապ աշխարհայեցություն», որը «նոր հորիզոններ բաց արեց հասարակական գիտության առջև, հրատարակ հանելով տնտեսական գործոնների ահագին, գերիշխող դերը հասարակությունների էլոյիցիայի մեջ, մի վարդապետություն, որ առաջին անգամը փորձեց գիտություն անունով ներագործել սոցիալիզմի մեծ հոսանքը, ցույց տալով նրա տարերային բնաւորությունը, նրա յաղթանակի ճակատագրական անհրաժեշտությունը,- ահա մարքսիզմը՝ իր էական ու տևողական առանձնայատկություններով»:

Այնուհետև Վարանդյանը նշում է, թե այդ ուսմունքի հեղինակներ Մարքսն ու Էնգելսը «այդպես էլ ըմբռնում են իրենց վարդապետության հատողությունը» և ժամանակի ընթացքում իրենց ձեռքով սրբազրեցին ու լրացրեցին:

Վարանդյանը նշում է, որ Մարքսից ու Էնգելսից հետո նրանց հաջորդած աշակերտները մարքսիզմի ուսմունքը սրբազրելու և լրացնելու փոխարեն մոլեռանդորեն ստեղծեցին «Մարքսի և Էնգելսի գաղափարներից մի անշարժ սխտեմ, մի քարացած դոգմա, որի այս կամ այն յօդածի դէմ առարկողները հրատարակում էին հերձաժողներ, ուսուսպիստներ, ըուրժուական իրեօլոգներ և այլն»:

«Մարքսիզմը,- շարունակում է Վարանդյանը,- դարձաւ սոգէտ ու գիտում նորահաստների աչքում անսխալականության մի տեսակ մարմնացում, գերազդյն ու բովանդակ ճշմարտության արտայայտություն և ինչ որ դուրս է նրա տեսակետից-իմի գիտության, փիլիսոփայության կամ գեղարվեստի վերաբերեալ-սխալ է, անպէտք «բուրժուական»։ Անպէտք են և բոլոր միւս սոցիալիստական-պրոլետարական հոսանքներն ու կուսակցությունները, որոնք չեն ուզում դեկավարել մարքսիզմի «հաստոյ հանգանակով»...»:

Ասվածից ելնելով Վարանդյանը եզրակացնում է, որ Արևմուտքում մարքսիզմի նկատմամբ այդպիսի մոտեցումը հակակրեկի երևույթ է և միայն «պարարտ հող է գտնում խոպան, կիսանշակ Ռուսաստանի մեջ»:

Ողջունելով ռուսական սոցիալ-դեմոկրատիայի «այն անձևերը, կորույի զինւորներին, որոնք գործելով այդ կուսակցութեան դրօշակի տակ, անխոնջ պրոպագանդ են մղում, զարգացնում են աշխատատեղ դասի ինքնագիտակցութիւնը և հարիւրներով տատապում են ռուսական բանտերում», Վարանդյանը նշում է, որ այդ ամենի հետ միասին հարկավոր է մատնանշել Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ճակատագրական ծայրահեղութիւններինց առաջացած վերքերը, որոնք «ոչ միայն վնասում են ազատութեան դասին ընդհանրապէս, այլև արագօրէն լափում, լուծում են նոյն իրեն Սոցիալ-դեմոկրատիային»:

Իսկ որոնք են, ըստ Վարանդյանի, ռուսական սոցիալ-դեմոկրատիայի այդ վերքերը:

Առաջին. «Անասնձ դօքտրինօրութիւնը, կազմակերպութեան կենտրոնական սխառնը»:

Ըստ Վարանդյանի տեսակետի, ստացվում է, որ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցութեանը վնասող վերքերից մեկը նրա շարքերում հաստատված կարգապահութիւնն է, մարքսիզմի հիմնական սկզբունքի՝ դասակարգային պայքարի մասին ուսմունքին հավատարիմ մնալն է:

Երկրորդ. «Իհպի ազգային ինդիքը բռնած ոչ-համակրելի դիրքը»: Խնորք վերաբերում է ազգային հարցի վերաբերյալ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի տեսակետին, որի մասին հանգամանալի անդրադարձ կլինի սույն աշխատութեան հաջորդ էջերում:

Երրորդ. «Հրեական «Բունդ»-ի պէս հզօր կազմակերպութիւնը կուսակցութիւնից անջատելը»:

Այս պնդումով Վարանդյանը պաշտպանութեան տակ է վերցնում հրեական «Բունդ»-ին, որը ձգտում էր մնալ սոցիալ-դեմոկրատիայի կազմում որպէս առանձին ազգային կուսակցութիւն:

Չորրորդ. «Անվերջ երկպառակութիւններ են ձգել Սոցիալ-դեմոկրատիայի մէջ, ստեղծելով նրա գրկում երկու և ավելի հակամարտ «կուսակցութիւններ»:

Վարանդյանը նկատի ունի սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան պատակոտմը, բորձիկյան և մենչևիկյան թեւերի առաջացումը, չթաքցնելով իր համակրանքը վերջինների նկատմամբ:

Այնուհետև Վարանդյանը քննադատում է ռուսական սոցիալ-դեմոկրատիայի քաղաքականութիւնը սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութեան նկատմամբ, գովաբանում է այդ կուսակցութեան ահաբեկչական գոր-

ծողութիւնները: Նա քննադատում է Պիեանովին, որը գերմանական սոցիալ-դեմոկրատների թերթում Պիեի դեմ մահափորձի կապակցութեամբ «հուշակում էր ի յուր աշխարհի, թէ այդ տեղօրը ետադէմ է և վնասակար, ինչպէս ետադէմ է և նրա հեղինակ՝ Սոցիալիստ-հեղափոխական կուսակցութիւնը»:

«Սինչ ո՞ր աստիճանի կուսակցական նախանձը, հարցնում էր Վարանդյանը, կարող է կուրացնել մարդկանց, բթացնել նրանց մէջ ազնուութեան, նոյնիսկ տարրական վայելչութեան բնագրը, , , »:

Հանրահայտ է էսէնների կազմակերպած ահաբեկչական գործողութիւնների վերաբերյալ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի տեսակետը: Ցարիզմի դեմ պայքարում սոցիալ-դեմոկրատիան ձգտում էր համախմբել երկրի բոլոր դեմոկրատական ուժերը և նրանց տանել դեպի հեղափոխութիւն: Դրա համար հարկավոր էր տեսական, համբերատար աշխատանք: Իսկ ահաբեկչութեամբ հրապուրվելը նպաստում էր հետադիմութեան համախմբմանը, հեղափոխական ուժերի դեմ բռնութիւնների ու հալածանքի ուժեղացմանը:

Ասվածը հիմնավորելու համար պատմութիւնից կարելի է շատ օրինակներ բերել, երբ այս կամ այն ահաբեկչական գործողութիւնից հետո ուժեղացած հետադիմութեան պայմաններում հեղափոխական ուժերի մոտ սկսվում է տեղատվութիւն: Բավարարվեմ միայն մեկ-երկու օրինակով:

1896 թ. օգոստոսի 26-ին մի խումբ երիտասարդ զաշնակցականներ Կ. Պոլսում գրավում են Օսմանյան բանկը: Դրա նպատակն էր հայոց հարցի վրա գրավել Եվրոպայի ուշադրութիւնը: Արժանին մասուցելով գործողութեանը մասնակցած երիտասարդների սխրանքին, պետք է ասել, որ բանկի գրավումը, ըստ էութեան, ահաբեկչութիւն էր:

Բանկի գրավումից հետո ոչ Եվրոպան ակնկալի ուշադրութիւնը դարձրեց, ոչ էլ հայկական գալիստներն արձագանքեցին:

Դրա արդյունքում բանկի գրավումը թուրքական սուլթանին հնարավորութիւն տվեց օգտագործել այդ առիթը և հենց Եվրոպայի աչքի առջև, կազմակերպեց հայերի գանգվածային կոտորած, որին զոհ դարձավ տասնյակ հազարավոր մարդ:

Դաշնակցութիւնը Բաքվում կազմակերպեց իշխան նակաշիճեի սպանութիւնը: Ի պատասխան դրա, սկսվեց անլուր հալածանք, տասնյակ մարդիկ դատապարտվեցին: Բայց դրանից հետո պայքարը համաժողովրդական շարժում չդարձավ: Ավելին, ցարական իշխանութիւնները սկսեցին ավելի անկաշկանդ հրահրել ազգամիջյան ընդհարումները:

Սույն աշխատութեան հաջորդ էջերում ընթերցողը հնարավորութիւն

կունենա ծանոթանալ տվյալ Հարցի վերաբերյալ Շահումյանի տեսակետին և եզրակացնել, թե ով է ճիշտ և ով՝ սխալ:

Վերջում ուզում եմ նացիոնալիզմի վերաբերյալ մի մեջբերում կատարել Վարանդյանի Հոդվածից: Նա գրում է. «Նացիոնալիստ բառը, մանաւանդ, մտա է: Նա գործածւում է թէ վարդապետների և թե նորընծաների կողմից մի առանձին շեշտով, մի առանձին հեղուկեամբ: Նա Հումանիչ է ամենավատիմաստ անականների: Նացիոնալիստը բոլոր սև ուժերի անձնատրուան է, նա անպայման և «բուրժուա» է, և ազգահարած, և ետադն: «Նացիոնալիզմ» բառով սոցիալ-դեմոկրատները որակում են ոչ միայն ծայրահեղ, թիթու Հայրենասիրութիւնը, որ վտարւած է բոլոր յեղափոխական կուսակցութիւնների ծրագիրներից, ոչ միայն ազգային անջատման ու անկախութեան ձգտումները, այլև առհասարակ ամէն մի ձգտում, որ նպատակ ունի բարձրացնել Հարազատ ժողովրդին, պաշտպանել նրա բնաբարւած իրաւունքները և մղել նրան դէպի քաղաքակրթութեան ճանապարհը, գաղափարներով նրա հաւաքական գրամագլուխը՝ լեզուն, գրականութիւնը և այլն»:

Փաստորեն Վարանդյանը պաշտպանում է «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» գաղափարը և շարունակում է. «Նացիոնալիստ են, մի խօսքով, բոլոր նրանք, որոնք չեն ուզում մարտել, լուծել մի միայնակ կազմակերպութեան-Սոցիալ-դեմոկրատիայի մէջ և մի միայնակ ժողովրդի-ոտա ազգութեան մէջ... Այդպէս են ուսուց սոցիալ-դեմոկրատները կիրառում գործնականի մէջ իրենց հոչակած տեսական մարքսիզմը՝ «ամէն մի ազգ ունի իրաւունք ինքնորոշման»: Անաչառ դիտողին միանգամայն պարզ է, թէ որ կողմն է բուն, հակակրեկի «նացիոնալիզմը»: («Իրօչակ», թիվ 12, դեկտեմբեր, 1904 թ., էջ 191-194):

Ասվածի կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ Վարանդյանի կողմից ուսուսական սոցիալ-դեմոկրատիային վերագրվող «բոլորին ուսու ազգութեան մեջ լուծելու» տեսակետը, մեղմ ասած, իրականությունը չի համապատասխանում: Այդ մասին որևէ արտահայտություն չկա Լենինի, Շահումյանի և ուսուսական սոցիալ-դեմոկրատիայի մյուս երևելի գործիչների աշխատություններում: Ընդհակառակը, Լենինը և նրա գաղափարակիցները վճռահանորեն հանդես են եկել վեյիկոտուսական շովինիզմի դեմ:

Արդարացի լինելու համար ասեմ, որ Վարանդյանը չփոթում է Հարցը: Լենինը, Շահումյանը և մյուս սոցիալ-դեմոկրատները դեմ էին առանձին ազգություններից կազմված սոցիալիստական կուսակցությունների գոյությունը: Նրանք գտնում էին, որ, օրինակ, Կովկասի պայմաններում Հայ, ուսու, վրացի, թաթար և այլ ազգություններին պատկանող պրոլետարները պետք

է համախմբվեն միասնական սոցիալ-դեմոկրատական կուսակցության մեջ: Նրանք վճռականորեն մերժում էին ըստ ազգային պատկանելիության սոցիալ-դեմոկրատական կամ սոցիալիստական կուսակցության գոյությունը:

Իհարկե, այս տեսակետը չէր համապատասխանում ոչ հրեական «Բունդ»-ի, ոչ իհսական սոցիալիստական կուսակցության և ոչ էլ Հայ Հեղափոխական դաշնակցության տեսակետին, որոնք առանձին-առանձին ներկայացնում էին իրենց ժողովուրդների՝ Հայերի, հրեաների, լեհերի ազգային շահերը:

Բավարարվեմ ասվածով, քանի որ հետագա էջերում տվյալ Հարցի վերաբերյալ ավելի հանգամանալի անդրադարձ կլինի:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՎԱՐԱՆԴՅԱՆԻՆ

Նկատի ունենալով Վարանդյանի առաջ քաշած հարցերը, Շահումյանը թարգմանում է Վարանդյանի վերոհիշյալ Հոդվածը ռուսերեն և ուղարկում է Լենինին: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 66-67):

Շահումյանը իբրև պատասխան գրում է «Հայկական հեղափոխական դաշնակցությունը «Հայկական իրականության» դատաստանի առաջ» հոդվածը և ուղարկում բոլշևիկյան «Пролетарий» թերթին, որը չի տպագրվել և ժամանակին չի մտցվել նրա Երկերի լիակատար ժողովածուի մեջ: Այդ հոդվածի քննադիրը «Մ. Յուժանին» ստորագրությամբ պահպանվում է Մոսկվայի Մարքսիզմ-Լենինիզմի կենտրոնական կուսակցական արխիվում (Ֆ. 25. ց. 1, գ. 3, մաս 1, թթ. 1-12):

Շահումյանը նշում է, որ վերջին ժամանակ «սոցիալիստական» մամուլի որոշակի հատվածում նկատվում է Կովկասում գործող նացիոնալիստական կուսակցություններից մեկի եռանդուն գովազդը: Նա հիշեցնում է, որ "Революционная Россия" թերթի 63-րդ համարում հրատարակվել է պ. Վ. ի «Հայ հեղափոխական դաշնակցությունը ուղղափառ թերամիտների դատի առաջ» աղաղակող վերնագրով հոդվածը, որն ուղղված է «Искра» թերթի 78-րդ համարում տպագրված «Հայ իրականությունից» հոդվածի դեմ, որ տեղ հեղինակը կարճ և պարզ ցույց է տվել Երևանում գործերի իրական վիճակը և «Իաշնակցության» դիրքը 1903 թ. հուլիսի 12-ի օրենքի հրապարարկումից հետո:

«Այդ հոդվածում, - գրում է Շահումյանը, - հեղինակ պ. Վ-ն ոչ միայն ջանում է մերկացնել թղթակցության հեղինակին կեղծիքի մեջ, այլև գուզընթաց ձգտում է ապացուցել, որ «նացիոնալիստական «Իաշնակցություն» կուսակցությունը» «սոցիալիստական» կուսակցություն է»:

«Պրն Վ-ի պարզամիտ փորձերին կարելի է և ազատ կերպով առարկել-չարունակում է Շահումյանը,- բայց այժմ, երբ ինքը՝ դաշնակցություն կուսակցությունը իր կենտրոնական օրգան «Դրոշակ»-ի 5-րդ համարում հայտարարում է, թե իր օրգանի էջերում «15 տարվա ընթացքում նա պրոպագանդել է սոցիալիզմի գաղափարները», չի խանդարի ավելի մոտիկից դիտել այդ նորաթուխ ինքնակոչ սոցիալիստական կուսակցության «սոցիալիստական ֆիզդնոմիային»:

Այնուհետև Շահումյանը գրում է. «Դրոշակ»-ը սրամտորեն նշում է. «Մեր սոցիալիստական պրոպագանդան կրել է զուտ տեսական բնույթ, քանի որ մեր ամբողջ գործունեությունը կենտրոնացվել է Թուրքական Հայաստանում, որտեղ հող չկա սոցիալիստական պրոպագանդայի համար» և որպես հետևողական «սոցիալիստներ» նրանք Թուրքական Հայաստանում տարել են «նացիոնալիստական պրոպագանդա», դեռ ավելին, այդ նորահայտ սոցիալիստները գնացել են ավելի հեռու և իրենց նացիոնալիստական քարոզը տարածել են նաև Կովկասում, որտեղ բոլոր սովյալներով սոցիալիստական պրոպագանդայի համար հող են ունեցել»:

Շահումյանը նշում է, որ Թուրքական Հայաստանի համար «նացիոնալիստները» այդպիսին են նաև Կովկասի համար և տարօրինակ են հնչում «15 տարի շարունակ սոցիալիզմ պրոպագանդելու» և «15 տարվա նացիոնալիստական գործունեության մասին» խոսքերի զուգակցումը:

«Եվ եթե,- ընդգծում է Շահումյանը,- սոցիալ-դեմոկրատներն անհամատեղելի են գտնում «սոցիալիստական պրոպագանդան» նացիոնալիստական պրոպագանդայի ու գործունեության հետ, ապա դա պետք է վերազդել նրանց «ուղղափառ թերամտությունը»:

Շահումյանը հիշեցնում է, որ դաշնակցության 15 տարվա սոցիալիստական պրոպագանդան կայանում է էնգելսի «Գիտական սոցիալիզմ» աշխատության հայերեն հրատարակումը, որի զգալի մասն այրել են Երևանի ուղղահայտ դաշնակցականները:

Դաշնակցականները եղել են, մտում են և կման նացիոնալիստներ, եզրակացնում է Շահումյանը և անցնում է Կովկասում նրանց ծավալած գործունեությանը:

«Եվ այսպես,- գրում է նա,- հետևողական սոցիալիստներ պարոնայք դաշնակցականները «տեղական պայմանների» ազդեցությամբ հարկադրված են եղել Թուրքական Հայաստանում «սոցիալիզմի» դրոշ փոխել «նացիոնալիզմի» դրոշով... Հարկադրված լինելով նաև Կովկասում (հակառակ դեպքում

նրանց ամբողջ գործունեությունը Թուրքական Հայաստանում կհավասարվեր Օ-ի, քանի որ Թուրքահայ շարժմանը գլխավորապես աջակցում են կովկասահայերը), որտեղ հող կար սոցիալիստական պայքարի համար, դաշնակցականները որոշում են լինել ավելի հետևողական և նորից «նացիոնալիզմի դրոշը» չփոխել իրենց սրտին շատ մոտ «սոցիալիզմի դրոշով»:

Այնուհետև Շահումյանը հիշեցնում է, որ 1900 թվականից սկսած ավելի ու ավելի շատ մարդիկ են երևան գալիս, որոնք դաշնակցականներին ապացուցում էին, որ Թուրքահայերի հարցը անխզելի թեկերով կապված է Ռուսաստանում «գործերի վիճակից»: Քանի Ռուսաստանում տիրապետում է բացարձակ միապետությունը, հայերը չեն տեսնի լավ պայմաններ նաև Թուրքահայաստանում:

Մյուս կողմից նրանք ցույց էին տալիս, որ Կովկասն ունի իր խնդիրները և կովկասահայերը պետք է մեկուսանան և չմասնակցեն ընդհանուր հարցերի լուծմանը: Այնուհետև նրանք մատնացույց էին անում Կովկասում կապիտալիզմի արագ զարգացումը, հատկապես հայերի մեջ պրոլետարիատի աճը, որ Կովկասում արդեն կա համապատասխան հող սոցիալիստական պրոպագանդայի համար:

Չնայած այդ ամենին, «դաշնակցականները,- նկատում է Շահումյանը,- մտում են հետևողական: Նրանք ժխտում են հայերի մեջ պրոլետարիատի գոյությունը, նրանք ապացուցում էին, թե Կովկասում հող չկա սոցիալիստական պայքարի համար, մեղադրում էին սոցիալիստներին դավաճանության մեջ, քանի որ նրանք հայ բանվորների ուշադրությունը չեղում են «Թուրքահայերի ազատագրության համար մղվող ազատագրական մեծ շարժումից», նրանք պարզանություն էին համարում սոցիալ-դեմոկրատների համոզմունքը, որ Թուրքահայերի հարցը կապված է Ռուսաստանի ճակատագրի հետ և նրանք պատերազմ են հայտարարում սոցիալ-դեմոկրատներին, այդ մատնիչներին ու դավաճաններին (դա հայ սոցիալ-դեմոկրատների հասցեին է ուղղված)»:

Կովկասում աշխատող ռուս սոցիալ-դեմոկրատներին դաշնակցականները վերաբերվում էին որպես կառավարական քաղաքականության համախոհներ, որոնք ձգտում են «ընդհանրապես ռուսականացնել երկրամասը, մասնավորապես և հայ բնակչությանը»: «Կովկասում աշխատող ընկերներին,- գրում է Շահումյանը,- լավ հայտնի է, թե ինչ է նշանակում միջոցների մեջ խտրություն չընող դաշնակցականների հետ «գաղափարական» պայքարը»:

Շահումյանը հարկ է համարում անդրադառնալ 1903 թ. Հուլիսի 12-ի օրենքին, այդ կապակցությամբ դաշնակցության քաղաքականությունը և

նշում հետևյալը. «Կովկասում «պայմանները» փոխվել են, որին նպաստել է ուստական կառավարությունը: Միայն կառավարական բուսնացի Հարվածների ներքո նրանք, պարոնայք դաշնակցականները արժնացան և բնագործուն նետվեցին Հայ Հոգևորականության և բուրժուազիայի գիրկը, նրանց հետ կնքելով ազգային ինքնապաշտպանության դաշինք»:

Ինչպե՞ս են վերաբերվել Հուլիսի 12-ի անխառնակ օրենքին «սոցիալիստական» դաշնակցությունը և նրա բազմաթիվ համախոհները՝ Հոգևորականության, խոշոր և մանր բուրժուազիայի, մտավորականության, գյուղացիության և բանվորների ներկայացուցիչները, մի խոսքով Հայ ժողովրդի բոլոր շերտերը:

Այս Հարցին որպես պատասխան, Շահումյանը նշում է, որ Հայկական նացիոնալիստական կուսակցությունները միացան տարերային ժողովրդական դժգոհությանը, սկսեցին ամրապնդել բնակչության շովինիստական զգացմունքները և «դրանք չահագործել իրենց նպատակների համար»:

Այստեղ չափազանցություն չկա, գրում է Շահումյանը և համոզմունք է հայտնում, որ այդ խոսքերի տակ կատորագրի ամեն մի ազնիվ «դաշնակցական», դրա հետ համաձայն կլինի Հայ իրականությանը քաջատեղյակ յուրաքանչյուր մարդ և հիմնապուր է պ. Վ-ի պնդումը, թե «ԱՎԿՐԱ» թերթում «Հայտարարության մեջ տպագրված խոսքերը հերյուրանք են և զրպարտություն»:

«Այդ,- ավելացնում է Շահումյանը,- ընթերցողը չի մտածի, որ այդ արտահայտությունը պ. Վ-ն գրել է գիտակցաբար: Հարավային արյունը եռացել է նրա մեջ և բերանից թոցրել է: Նա, անմիջապես այդ Հայտարարությունից հետո, նկատում է՝ «ոչ մի կուսակցություն չի կարող պատասխանատու լինել իր անդամների արարքների համար»: Այդ նշանակում է, որ «ԱՎԿՐԱ»-ի թղթակցի նշած երևույթը ոչ «հերյուրանք» է և ոչ էլ «զրպարտություն»: Այլ փաստ է: Բայց դրանում մեղավոր են կուսակցության անդամները, այլ ոչ թե կուսակցությունը»:

Շահումյանը Վարանդյանին կոչ է անում հետագա զրպարտություններից խուսափելու համար բացատրել, թե որտե՞ղ է սկսվում և որտե՞ղ է վերջանում դաշնակցականների կուսակցությունը»:

Հորվածի վերջում Շահումյանը գրում է, որ «չի հավատում դաշնակցության սոցիալիստականությանը», բայց և միաժամանակ հավատում է դաշնակցության մեջ մտած թարմ, երիտասարդ ուժերի անկեղծությանը, որոնք «մի կողմից հրապուրված են սոցիալիստական Հոր շարժման աճով, մյուս կողմից դեռևս չեն ազատվել նացիոնալիստական նախապաշարմունքներից»:

Շահումյանը եզրակացնում է. «Դաշնակցությունը, որպես կուսակցություն, պետք է պառակտվի: Նրա զուտ նացիոնալիստական մասը նախկինի նման կկատուցի օրային ամրոցներ, կխաղա դիվանագիտություն, կղխի Եվրոպայի հասարակական կարծիքին և այլն, և այլն: Մյուս մասը՝ վարակված սոցիալիզմով, բայց միևնույն ժամանակ դեռևս չազատված նացիոնալիստական նախապաշարմունքներից կգնա դեպի Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունից սոցիալ-դեմոկրատների մոտ կամ էլ կձևավորի նոր կուսակցություն՝ Սոցիալիստ-հեղափոխականների տեսքով ու ոգով. Հայ ազգին հարստացնելով երկու-երեք «սոցիալիստական կուսակցությունով», որոնց պակասն այսօր չի զգացվում»: (Մարքսիստ-Լենինիզմի կենտրոնական կուսակցական արժիվ, ֆ. 25. ց. 1, գ. 3, մաս 1, թթ. 1-12):

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

1905 թ. «Իրօչակ»-ի 6-րդ համարում հրատարակվել է Սոցիալիստական միջազգային բյուրոյի նամակը և այդ կապակցությամբ «Իրօչակ»-ի պատասխանը:

Դրանից առաջ Դաշնակցությունը մամուլում հրատարակել էր մի հարդրում, որով հայտնվում էր, թե հարում է սոցիալիստական միջազգային կոնգրեսների մշակած որոշումներին: Այս կապակցությամբ 1904 թ. մայիսի 12-ին սոցիալիստական միջազգային բյուրոն, նկատի ունենալով, որ հնարավորություն չունի ծանոթանալ բոլոր հեղափոխական կազմակերպությունների հետ, նրանց՝ սոցիալիստական կազմակերպությունների ցանկի մեջ մտցնելու համար, նամակով դիմում է Հայ հեղափոխական դաշնակցությանը, խնդրելով «այդ հարցի վերաբերմամբ մի պաշտոնական ծանուցում ուղղել սոցիալիստական միջազգային կոմիտեին»: Պահանջվում է նաև ուղարկել դաշնակցության կանոնադրքի մի օրինակը: («Իրօչակ», թիվ 6, յունիս, 1905 թ.):

Սովորաբար միջազգային բյուրոն սյապես էր պատասխանում, քանի հնարավորություն չունեի ստուգելու, քննարկելու և բավարարվում էր կազմակերպություններից տոացված գրավոր ծրագրով ու հայտարարություններով:

Ի պատասխան այդ նամակի «Իրօչակ»-ի խմբագրությունը 1904 թ. մայիսի 17-ին սոցիալիստական միջազգային բյուրոյին հայտնում է, որ «արդարև, մենք հարած ենք միջազգային սոցիալիզմի սկզբունքներին, որոնք արծարծվել են 15 տարուց ի վեր մեր հայտարարությունների մեջ, մասնավորապես մեր կուսակցության օրգան «Իրօչակ»-ի էջերում»:

Սակայն դաշնակցությունն այդպիսի վիճակը պատճառաբանում է նրա-

նով, որ իր գործունեությունը կենտրոնացված է եղել թուրքաց Հայաստանում, որտեղ «բնաւ հող չկայ սօցիալիստական գործօն պրոպագանդի համար»:

Այնուհետև նշվում է, որ արդեն երկու տարի է, ինչ դաշնակցությունը սկսել է իր կոխիլը նաև ուսանական Հայաստանում, և «քանի որ մեր երկրի այդ հատուածի մէջ պայմաններն աւելի նպաստաւոր են սօցիալիստական շարժում կազմակերպելու համար,- ուստի մեր կուսակցութեան խորհուրդը, վերջին մարտ ամսի իր ժողովում հարկ անպէց մշակել սօցիալիստական ծրագրի մի նախագիծ Կովկասի համար, որի մէջ նա ընդունում է միջազգային սօցիալիստական կօնգրեսների հիմնական որոշումները»:

Պատասխան-նամակի վերջում ասվում էր, որ այդ որոշումների հիման վրա վերջերս դաշնակցությունը համաձայնություն է եկել «ուսանական կայսրութեան յեղափոխական-սօցիալիստական կուսակցությունների հետ` (նկատի ունի սօցիալիստ-հեղափոխականների կուսակցությանը և վրացական «սօցիալիստ-ֆեդերալիստների» «Սաքարթվելո» կուսակցությանը-Վ. Պ.) կազմակերպելու համար միահամուռ գործակցութիւն՝ ցարիզմի և կապիտալիզմի դեմ»: («Իրօչակ», թիվ 6, յունիս, 1905 թ. ; Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 105-106):

Առաջ անցնելով հարկ եմ համարում միայն նշել, բացի էսէյների կուսակցության աշակցությունից, մի քանի տարի անց, գործին խառնվում է երիտթուրքական կուսակցության բարեկամ, միջազգային պրովոկատոր Պարվուսը: Հենց նրա ջանքերով էլ դաշնակցությունը ընդունվում է 2-րդ Իստերնալիստների մեջ, նախապես պարտավորվելով դրա դիմաց համաձայնություն կնքել երիտթուրքական կուսակցության հետ: Դա 1907 թվականն էր: Այս մասին անդրադարձ կլինի քիչ ավելի ուշ: Իսկ, թե ինչ եղավ դրա հետևանքը, այսօր պարզ է հանրությունը:

«Իրօչակ»-ի հրապարակած վերահիշյալ նյութերի կապակցությամբ Շահումյանը 1905 թ. հուլիսի 1-ին «Պրոլետարիատի կոխիլը» թերթում արտահայտել է իր գնահատականը: Նկատի ունենալով, որ «Իրօչակ»-ը Հայտարարում է, թե 15 տարի «սօցիալիստական պրոպագանդա է մղում ու միջազգային սօցիալիզմի սկզբունքներն է տարածում», Շահումյանը գրում է. «Այդ սուս, որ խմբագրությունը մասնացույց չի անում, թե որտե՞ր, ե՞րբ, «Իրօչակ»-ի ո՞ր համարում կամ քաղաքական ո՞ր գործողության ժամանակ է դուրս եկել նրանց ֆեդերալիստ և իր գործունեությունը միջազգային կոնգրեսների որոշումների հետ համաձայնեցրել»:

Առաջը հիմնավորելու համար Շահումյանը կատարում է հետևյալ հարցադրումները.

Առաջին. Գուցե դաշնակցականները երբևիցե դիմել են պրոլետարիատի անկախ քաղաքականությանը և ընդդեմ բուրժուական կուսակցությունների, աշխատել են Հայ բանվորներից առանձին դասակարգային կուսակցություն կազմակերպել:

Երկրորդ. Գուցե դաշնակցականները, իսկապես, պայքար են մղել, որ բոլոր ազգերի պրոլետարների շահերը նույնն են:

Երրորդ. Գուցե դաշնակցականները չեն ասում, որ բոլոր Հայերը, առանց դասակարգերի խտրության, համերաշխ պետք է լինեն:

Եվ այնուհետև Շահումյանը շարունակում է. «Հապա ո՞վ է ամեն ջանք գործ դնում, որպեսզի խոչընդոտ հանդիսանա Հայ պրոլետարիատի մեջ սօցիալ-դեմոկրատիայի աճմանը: Ո՞վ է քարոզում Հայ պրոլետարիատի անգիտակից տարրերին, թե մի այսպիսի կրիտիկական մոմենտում, երբ տաճկահայերը նեղ վիճակի մեջ են, աշխատանքի պայմանները լավացնելու համար կոխ մղել-ազգային գործի դավաճանություն է նշանակում և այլն, և այլն»:

Իր հորվածը Շահումյանն ավարտում է հետևյալ եզրակացությամբ. «Ինչ տեսակ վարազույրով էլ որ ծածկվին, ինչքան էլ որ դաշնակցականների ականջից բռնած դեպի սօցիալիստական բանակ քարչ տան իրանց արժանավոր բարեկամ «սօցիալիստ-հեղափոխականները»-Հայ պրոլետարիատը չի խաբվի: Նա շատ լավ է ճանաչում, նրանց, մի բույս անզամ չի կասկածում, որ դաշնակցությունն իր ամբողջ էությունը բուրժուական կուսակցություն է»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 107):

«ՈՎԶԵՐ ԵՆ ՀՆՉԱՎՅԱՆՆԵՐԸ...»

«Երևանից (Հայ իրականությունից)» հորվածում Շահումյանն անդրադառնում է նաև Սոցիալ-դեմոկրատական «Հնչակ» կուսակցությանը և նշում է, որ «Հնչակի» մի քանի կազմակերպություններ համակրանք են տաժում Հայ սօցիալ-դեմոկրատներին, տարածում են սօցիալ-դեմոկրատական գրականություն, չվախենալով բնակչության մեջ իրենց վարկը կորցնելուց:

Նկատի ունենալով, որ Կովկասի արդյունաբերական կենտրոններում գործող «Հնչակի» կազմակերպությունները գնալով ավելի են հակվում դեպի սօցիալ-դեմոկրատիան, Շահումյանը հույս է հայտնում, որ «հետո չէ այն ժամանակը, երբ նրանք վերջնականապես կթողնեն իրենց սոցիոնալիստական տրադիցիաները և ամբողջովին կհարեն մեր կուսակցությանը», ինչի

մասին Բուլղարիայում հրատարակվող «Վերածնությունը» իր առաջնորդող հոդվածներում վաղուց կոչ էր անում:

Հողվածի վերջում Շահումյանը փաստաբանություն է հայտնում, որ սոցիալ-դեմոկրատիան հայ բնակչությանը «կտրվորեցնի մտածել քաղաքականորեն և գործել քաղաքականորեն, իր դրոշակի տակ կկազմակերպի նրա պրոլետարական և կիսապրոլետարական մասսաներին և վճռական լուսինն նրանց գրոհի կտանի ինքնակարկության դեմ, եղբայրորեն միացած Հենց այն ուսուցողի հետ, որի դեմ այնքա՜ն անմիտ և այնքա՜ն անարդարացի կերպով այժմ լի են նրանք այդպիսի կուպիտատիվությանը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, Եր., 1975, էջ 51-55):

Այստեղ ավելորդ չեմ համարում ընթերցողին ներկայացնել նաև բուլղարական "Искра" թերթի վերաբերմունքը 1903 թ. հունիսի 12-ի օրենքի վերաբերյալ: «Մենք, սոցիալ-դեմոկրատներս,- գրել է "Искра" թերթը,- իհարկե, ազիտացիա կանենք, որ հայերն այդ գույքի գործադրման ավելի լավ միջոցներ գտնեն, որ այն օգտագործվի ոչ թե եկեղեցական կարիքների, այլ ժողովրդի կարիքի, հարկային ճնշումը թեթևացնելու, բանվորների աշխատանքային պայմանները բարելավելու, ազատագրական պայքարին աջակցելու համար. մենք կմիավորենք հայ պրոլետարիատին միմյանց հետ և ուսուցանողների հետ պայքարելու իրենց բոլոր ունեզրկիչներին ունեզրկելու համար»: ("Искра" թիվ 49, 1903):

Այնուհետև "Искра"-ն պահանջում էր, որպեսզի ցարական կառավարությունը չհամարձակվի յուրացնել հայկական եկեղեցական գույքը:

Առաջ անցնելով, հարկ եմ համարում նշել, որ հետագայում էլ Շահումյանն անդրադառնում է «Հնչակ» կուսակցության գործունեությանը, այս անգամ Ա. Նազարբեկյանի խմբագրությանը նոր լույս տեսնող Բուլղարիայի մասնաճյուղի «Ապագա» թերթի կապակցությամբ: Շահումյանի հոդվածը տպագրվել է 1905 թ. փետրվարի 21-ին բուլղարական "Вперед" թերթում: Ընդգծելով, որ «Ապագա» թերթի «նպատակը սոցիալ-դեմոկրատական պրոպագանդան է Կովկասի հայ բանվորների մեջ, Շահումյանը ուշադրություն է դարձնում այն բանի վրա, որ թերթը «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք» կոչին ավելացրել է «Պրոլետարներ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների, միացեք»:

Շահումյանը նշում է, թե «Ապագա» թերթի խմբագրությունը հայտարարում է, որ ինքն «ամեն կերպ ձգտելու է հայկական սոցիալ-դեմոկրատական բոլոր ուժերը համախմբելու Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորների միասնական կուսակցության դրոշի ներքո»:

«Ապագա» թերթն այսպիսի հայտարարություն կատարելով Հենվում էր «Հնչակ»-ի կովկասյան կազմակերպությունների վերջին համագումարի ընդունած որոշման վրա, որտեղ ասվում էր հետևյալը. «Բանի որ ներկայումս համայն Ռուսաստանում, որպես և Կովկասում գործում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը, որն իր մեջ է ամփոփում զանազան ազգերի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները և որը կոխի է հայտարարել նույն այդ ուղղությամբ ընդդեմ ցարիզմի և կապիտալիզմի, միությունը (Հնչակյան կովկասյան կազմակերպությունների ՌՄԻԲ կուսակցության հետ) ներկայանում է անհրաժեշտ և հայտնվում է հիմնական մի պայման՝ սոցիալ-դեմոկրատական հաջող գործունեությանը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 59-60):

Շահումյանը «Ապագա» թերթի լույս ընծայումը գնահատում էր որպես բանվորական շարժման հաղթանակ:

Հետագայում էլ Շահումյանը ուշադրությամբ հետևում էր Հնչակյան կուսակցության գործունեությանը, հաճախ նաև առանձին հարցերում նրան ենթարկում սուր քննադատություն: Այդ մասին է վկայում 1906 թ. օգոստոսի 27-ին «Նոր խոսք» թերթում հրատարակված նրա «Ովքե՞ր են Հնչակյանները...» հոդվածը:

Շահումյանը փաստում է, որ Հնչակյան կուսակցությունը լուր է, իր վերաբերմունքը չի արտահայտում հանրությանը հուզող հարցերի մասին և «փախչում է արևի լույսից, մնում է փակված իր մութ նկուղներում»:

Շահումյանը նկատի ունենալով Հնչակյան կոմիտեների, զանազան հանձնախմբերի, լիազորների, գինվորների գոյությունը, հարցնում է, թե «ինչի՞ համար է այդ բոլորը, ի՞նչ է այդ մարդկանց նպատակը, ինչո՞ւն է կայանում նրանց միսիան, նրանց գործունեությունը»:

Շահումյանը նշում է, որ Հնչակյաններն իրենց սոցիալ-դեմոկրատներ են անվանում, «աշխատում են ծառայություններ մատուցել տեղական սոցիալ-դեմոկրատիային, «հրճվում են և ծափահարում մեզ իրանց ներքնահարկերից, երբ մենք խարազանում ենք դաշնակցականներին, բայց թե ինչո՞ւն է կայանում նրանց «սոցիալ-դեմոկրատիզմը» և ինչո՞վ են զանազանվում նրանք դաշնակցական չլիսիստ ու հակահեղափոխական բանդայից-այդ մենք դեռ չգիտենք»: Եվ նա Հնչակյաններին կոչ է անում դուրս գալ հրապարակ, «հարստացնելու ստե, թե ո՞վ է ինքը և ապացուցել, որ իրավունք ունի գոյություն ունենալու»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 326-327):

Սոցիալ-դեմոկրատներն այն համոզմունքն էին հայտնում, որ ցարական

ինքնակալություն դեմ ուսուցանողի հետ մյուս ազգությունների բանավորների համատեղ պայքարը կնպաստի հայ ժողովրդի ազատագրությանը: Սոցիալ-դեմոկրատիան, այսպիսով, լիակատար կերպով ընդունում էր Ց. Էնգելսի մոտեցումը և համոզված էր, որ Արևմտյան Հայաստանի ազատագրումն անխզելիորեն կապված է ուսական հեղափոխության հաղթանակի հետ: Այստեղից էլ արվում էր այն հետևությունը, որ անհրաժեշտ էր ուժերը միավորել ցարդավի տասպայման համար, որից հետո ստեղծված դեմոկրատական Ռուսաստանն անպայման կնպաստեր օսմանյան կայսրության լծի տակ տառապող ժողովուրդների ազատագրական պայքարի հաղթանակին:

Սոցիալ-դեմոկրատիան նաև համոզված էր հայտնում, որ արևմտահայությունը չի կարող միայնակ հաջողության հասնել, եթե չհամագործակցի օսմանյան լծի դեմ պայքարող մյուս ժողովուրդների հետ, նույնիսկ դեմոկրատական Ռուսաստանի օգնության դեպքում:

Շահույթների այս հորվածին որպես պատասխան «Աշխատանք» թերթի թիվ 33-ում հրատարակվում է «Բաց նամակ «Նոր խոսքի» խմբագրության» վերնագրով Փարամագի նամակը:

Ի տարբերություն դաշակցության, որը հանդես էր գալիս Ռուսաստանում և հատկապես Արևմտյան Հայաստանում մեկուսացված ազգային պայքարի օգտին, «Հնչակը» նույնպես համակարծիք էր մյուս ժողովուրդների հետ համագործակցված պայքար մղելու տեսակետին:

Բայց դրա հետ միասին «Հնչակը» արևմտահայության ազատագրական պայքարի ելքը չէր կապում Ռուսաստանում հեղափոխության հաղթանակի հետ, այսինքն չէր ընդունում Ց. Էնգելսի վերն արդեն նշված տեսակետը: Հնչակյանների այս դիրքորոշումը պաշտպանում էին Ս. Սապահ-Գյուլյանը, Փարամագը և մյուսները: Այս առումով բանավեճ է ծավալվում Շահույթների և Փարամագի միջև:

Այդ բանավեճը տարվում էր լեզույ մամուլում և այդ երկու նշանավոր գործիչները իրենց մտքերը հասկանալի պատճառով արտահայտում էին այլաբանորեն: Եթե Շահույթյանը համաձայն էր Ց. Էնգելսի տեսակետին, ապա Փարամագը խնդրին մոտենում էր մեկ այլ կողմից: Այն դեպքում, եթե ուսական հեղափոխության հաղթանակը ուշանար, ընդգծում էր նա, արդյոք արդարացիա՞ծ կլինե՞ր դրան սպասելը և չօգնել արևմտահայությանը, որի գլխին կուտակված վտանգն ավելի սպառնալից էր դառնում:

Նկատեմ, որ Շահույթների և Փարամագի միջև բանավեճը տեղի էր ունենում 1906 թ. ամռանը և ընդգծեմ, որ նրանք երկուսով էլ ճիշտ էին՝ ատրատեգիական առումով: Տարբերությունը տակտիկայի մեջ էր:

Այդ ընթացքում «Աշխատանք» թերթը փակվել էր և Շահույթյանը 1906 թ. հոկտեմբերի 8-ին իր պատասխան հորվածը հրատարակում է «Աշակ» թերթում: Շահույթյանը նկատում է, որ Փարամագին շատ է զայրացրել իր այն խոսքերը, թե հնչակյանները «փախչում են արևի լույսից, մնում են փակված մութ նկուղներում»: Մինչդեռ, բացատրում է Շահույթյանը, այդ այլաբանական խոսքերից չի կարելի նեղանալ, որովհետև «սոցիալ-դեմոկրատիան ինքը դեռ չի դուրս եկել ամբողջովին այդ «մութ նկուղներից», իսկ վերջերս, ռեակցիայի արասիների շնորհիվ, հարկադրված է համարյա ամբողջովին նորից մտնել այդ «նկուղները»: Պարզ է, որ հարցը «մութ նկուղների» մեջ չէ ամենևին»: (Ստ. Ըսեռայան, նույն տեղը, հ. առաջին, էջ 355-364):

Ժամանակի ընթացքում սոցիալ-դեմոկրատների և հնչակյանների միջև առաջացած հակասությունները մղվում են ետին պլան: Հեղափոխության ընթացքում և դրանից հետո հատկապես բանավորների միասնական պայքարը կազմակերպելու գործում նրանք հաճախ էին համագործակցում: Այդ համագործակցությունը չի թուլանում նաև հետագայում:

Առաջ անցնելով, հարկ եմ համարում նշել, որ սկսված Առաջին համաշխարհային պատերազմի պայմաններում, երբ Անդրկովկասում գործող հնչակյան կազմակերպությունները կտրվել էին իրենց ղեկավար մարմնից, այդ համագործակցությունն ավելի է խորանում ոչ միայն Անդրկովկասում, այլ նաև Միջին Ասիայում:

Այս մասին հանգամանորեն անդրադարձել եմ իմ երկու աշխատություններում («Ժնտերնացիոնալիզմի դրոշին հավատարիմ», Եր. , 1983; «Անդրկովկասի և Միջին Ասիայի բոլշևիկյան կազմակերպությունների համատեղ պայքարի պատմությունից», Ե. , 1987) և հարկ չեմ համարում այստեղ դրանց նորից անդրադարձնալ:

ԵՎՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՆԳՐԵՍԸ

Շահույթների հեղափոխական գործունեությունն աննկատ չէր մնում: Նրա վրա գաղտնի հակողությունն ավելի էր ուժեղացվել: 1904 թ. հոկտեմբերի 1-ին նա նորից մեկնում է արտասահման և Բեռլինում շարունակում է Հաճախել համալսարանի դասերին, միաժամանակ ստանելով գաղտնի հեղափոխական աշխատանք:

Այս անգամ Շահույթյանը ունկնդրում է հետևյալ դասընթացները. Վագների մոտ՝ արտաքին առևտրական քաղաքականություն, Վերբերի մոտ՝ Գերմանիան որպես ինդուստրիալ պետություն, Զիմմերի մոտ՝ սոցիոլոգիան որ-

պես Հասարակության ձևերի մասին ուսմունք, Լաստնի մոտ՝ Հեգելի ուսմունքը, Շմոլլերի մոտ՝ ժամանակակից բանվոր դասակարգի տնտեսական ու իրավական դրություն մասին: Դրանից առաջ Շահումյանը ուսումնասիրել էր գիտական սոցիալիզմի տեսությունը: Այժմ էլ շարունակում էր խորանալ գերմանական սոցիալ-դեմոկրատական շարժման ուսումնասիրության մեջ: Ավելալցանում, որ Շահումյանը չէր բավարարվում դրանով: Նա շատ ժամանակ էր հատկացնում գերմանական սոցիալ-դեմոկրատիայի նշանավոր գործիչների ելույթների ունկնդրմանը:

Սկսած Մանուշարյանը հիշում է, որ ընտանիքը Շահումյանի հետ չէր և «դա նրան հնարավորություն էր տալիս ամբողջովին նվիրվելու աշխատանքին: Նա վաղ էր վեր կենում, սկսում էր պարապել առափոտյան արդեն ժամը 6-ից: Հետո մինչև ցերեկվա ժամը 2-ը լինում էր դասախոսություններին: Շահումյանը մեծ մասամբ ճաշում էր մեզ հետ, և մեր ընկերության երրորդ անդամը Իշ-ն էր» (նկատի ունի Բախչի Իշխանյանին-Վ. Պ.):

«Քանի որ,- շարունակում է Մ. Մանուշարյանը,- մեր ֆինանսները սովորաբար շատ սուղ էին, ապա մենք սնվում էինք «Աշինգերի» անխիվ բաժանմունքներից մեկում: Փողի նկատմամբ նրա վերաբերմունքը շատ անսիրտ էր, և մենք հաճախ դիմում էինք Իշ-ի (նկատի ունի Բ. Իշխանյանին-Վ. Պ.) քասկի օգնությանը: Բայց դա մեզ Համար փուլի չէր»: (Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 182):

Շահումյանն ամրապնդում է գերմանական սոցիալ-դեմոկրատիայի ձախ թևի հետ իր կապերը: Միաժամանակ նա հարաբերություններ է հաստատում աջ թևի հետ՝ նպատակ ունենալով ծանոթանալ նրանց միջև եղած տակտիկական ու ստրատեգիական առանձնահատկություններին: Երկու թևն էլ Շահումյանին ընդունում էին որպես Ռուսաստանում Հեղափոխական ու բանվորական շարժման գիտակի:

Ինչպես հայտնի է, եվրոպական համալսարաններում (Բեռլին, Փարիզ, Ժնև, Լոզան, Լոնդոն, Ցյուրիխ, Բեռն, Վենետիկ, և այլն) սովորում էին Հայ ուսանողներ, որոնց թիվը հասնում էր մոտ 300-ի: Ինչպես հաղորդում է «Մշակ» թերթը, եվրոպական համալսարաններում սովորող Հայ ուսանողների մեծ մասը եկել էին Թիֆլիսից, Բաքվից, Նոր Նախիջևանից և Ռուսաստանի այլ հայաբնակ վայրերից: («Մշակ», ապրիլի 10, 1902 թ.):

Հայ ուսանողների մի զգալի մասը գտնվում էր դաշնակցության ազդեցության տակ, և միավորվել էին «Եվրոպայի Հայ ուսանողների միություն» մեջ:

Հայ ուսանողների մի մասն էլ համակրում էր սոցիալ-դեմոկրատիային և

մտել էր ՌՄԴԲԿ 2-րդ Համագումարից հետո Ժնևում Բուդրան Կուսնյանցի նախաձեռնությամբ ստեղծված «Կովկաս» ուսանողական սոցիալ-դեմոկրատական ընկերության մեջ: (Մ. Արքունյան, Նույն տեղը, էջ 95):

Ինչպես դաշնակցությունը, այնպես էլ սոցիալ-դեմոկրատիան պայքարում էին Հայ ուսանողությանը գրավել իրենց կողմը: Դրա համար կարևոր միջոց դարձավ 1905 թ. ապրիլի մեկին Բեռնում հրավիրված «Եվրոպայի Հայ ուսանողական միության» 6-րդ կոնգրեսը, որին մասնակցում է 51 պատվիրակ, այդ թվում 17-ը՝ սոցիալ-դեմոկրատ:

Կոնգրեսին մասնակցող սոցիալ-դեմոկրատ պատվիրակները Շահումյանի պիսակությամբ փորձում են յուծարել «Միությունը» և եվրոպայում սովորող Հայ ուսանողներին համախմբել Հեղափոխական սոցիալ-դեմոկրատների շուրջ:

Չստանալով պատվիրակների մեծամասնության քվեն, Շահումյանը իր կողմնակից 17 պատվիրակների հետ միասին հեռանում է կոնգրեսից, հրապարակելով մանիֆեստ՝ ուղղված եվրոպական բոլոր Հայ սոցիալ-դեմոկրատ ուսանողներին: («Вперед», 17. 04. 1905):

Այդ մանիֆեստում նշվում էր, որ Հայկական կյանքում գոյություն ունեցող դասակարգային շահերի չերտավորումով պայմանավորված տարբեր Հասարակական գաղափարները սովորող Հայ երիտասարդության մոտ առաջ են բերել տարբեր Հասարակական-քաղաքական ձգտումներ:

Այսպիսի պայմաններում, ընդգծում էր մանիֆեստը, «անհնարին ու անբնական է միևնույն դրոշի ներքո, միևնույն նպատակի համար խմբավորել այնպիսի տարասեռ տարրերի, որոնցից բաղկացած է Եվրոպայում եղած Հայ ուսանողությունը»:

Մանիֆեստը նշում էր, որ «Եվրոպայի Հայ ուսանողների միությունը» վերջին տարիների անպտուղ գոյությունը չի կարող կուսակցություններից վեր կանգնել և իրեն դատապարտել է անգործության:

Ավաճից էլ ելնելով մանիֆեստն ազդարարում էր. «Եվրոպայում սովորող Հայ սոց-դեմոկրատական ուսանողությունը՝ իրան յուրահատուկ աշխարհայացքով, իր ղեկավար սկզբունքներով ու որոշակի կուսակցական շահերով ոչ տեսականորեն, ոչ գործնականորեն չի կարող իրականապես և տեսականորեն որևէ գործում մասնակից լինել նացիոնալիստական ուսանողության (դրոշակականների) հետ, այդ ամենը նկատի ունենալով, հիշյալ կոնգրեսին մասնակցող սոց-դեմոկրատները 17 ձայնով ընդդեմ 34-ի, որոշեցին «Եվրոպայի Հայ ուսանողների միությունը», որպես այդպիսին համարել փաստը»:

րեն տարրալուծված և Հեռացան կոնգրեսի Ե-րդ օրվա երեկոյան նիստից»:

Մանիֆեստի վերջում նշվում էր, որ սոցիալ-դեմոկրատական ուսանողությունը պրոլետարական-դատակարգային շահերի տեսակետից չի կարող «մի ամբողջության մեջ ձուլվել և համատեղ աշխատել ուսանողության մեջ եղած այն տարրերի հետ, որոնք իրենց հասարակական հայացքներով և գործնական ձգտումներով կանգնած են նացիոնալիստական շահերի տեսակետի վրա»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 64-65):

«Իրօչակը» արտատպելով վերոհիշյալ «Մանիֆեստը», տեքստի մեջ ինքնակամ ավերացնում է հնչակյաններին, որոնք ընդհանրապես չէին մասնակցել հայ ուսանողների կոնգրեսին:

Այս կապակցությամբ Շահումյանի խնդրանքով 1905 թ. հունիսի 3-ին բողևեիկյան «Пролетарий» թերթը հրատարակում է հետևյալը. «Սեզ խնդրել են հայտնել, որ Եվրոպայի հայ ուսանողների նացիոնալիստական միությունից անջատված հայ սոցիալ-դեմոկրատ ուսանողների բանաձևի մեջ թյուրմացաբար հնչակյանները հիշատակվում են «գրոշակականների» հետ միասին: Այն տեսքով, ինչ կոնգրեսի մասնակիցների կողմից ընդունվել է բանաձևը, «հնչակյաններ» բառը չի եղել:

Հնչակյանների մասին խոսք լինել չէր կարող Հենց այն պատճառով, որ ոչ կոնգրեսում, ոչ էլ, ինչպես մեզ հայտնի է, Եվրոպայում հայ ուսանողների մեջ չի եղել և չկա ոչ մի հնչակյան»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 64-65):

ԳԼՈՒԽ 4 ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

1905 թ. ապրիլի վերջին Շահումյանը արտասահմանից վերադառնում է Թիֆլիս և անմիջապես ընդգրկվում Հեղափոխական ընդհատակյա աշխատանքին, միաժամանակ ստանձնելով «Պրոլետարիատի կոլվը» թերթի խմբագրումը: Ըստանիքի նյութականը հոգալու նպատակով նա, մինչև 1907 թ. Հավրաբարի արական պրոգրմնագիայում աշխատում է որպես հայոց լեզվի ուսուցիչ:

Մայիամեկյան ցույցի կազմակերպման նպատակով Շահումյանը մեկնում է Ալավերդի: Այստեղից նա ուղևորվում է Երևան և գործոն մասնակցություն ունենում սոցիալ-դեմոկրատական խմբերը մեկ միասնական կազմակերպության մեջ միավորելու գործին:

1905 թ. հուլիսին Շահումյանը Սեծ Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր), մասնակցում է կազմակերպված բանավեճին, որին ներկա է եղել նաև Վ. Տերյանը, որը, ինչպես ինքն է գրել, այն ժամանակ լի էր «նացիոնալիստական և մանրբուժուական նախապաշարումներով, ենթակա նացիոնալիզմի թունալի հմայքին»:

Անդրադառնալով այդ բանավեճին Վ. Տերյանը գրել է. «Բավական բազմամարդ ժողով էր, ուր հանդես էին եկել դաշնակցության «բավազույն» ուժերը, որոնց թվում հիշում եմ հանգուցյալ հմաժակին, որ, անշուշտ, հետադարձական ձիրքից գուրկ չէր, և որի պաթետիկ ու ըստ սովորականին դեմագոգիական ու մասամբ գոեհիկ ճառից հետո խոսք ուղեց Ստեփան Շահումյանը»:

«Պետք է իմանալ, շարունակում է Վ. Տերյանը, թե որպիսի անհամբերատար, ֆանատիկ, բուռն ատերություն էր տիրում դաշնակցական շրջաններում դեպի սոցիալ-դեմոկրատիան, պետք է իմանալ, թե ինչ եռանդազին մոլորթյամբ սերմանվում էր այդ ատերությունը ժողովրդի մեջ և ինչ գոեհիկ ձևով էր պատկերացվում բանվորական կուսակցության աշխարհայացքն այն ժամանակ իշխող դաշնակցականների կողմից և այն ժամանակ համարնալի կլինի, թե ինչպես էր դիմափորում այն ժամանակ սոցիալ-դեմոկրատներին ազգամոլության թուլյնով վարակված այն սրահը»: (Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. երրորդ, Եր. 1975, էջ 171):

Ինչպես պատմում է Վ. Տերյանը, երբ բեմ է բարձրանում Շահումյանը, «մի անսպասելի և տարօրինակ համբերատարություն» է ցույց տվել հավաք-

ված աղմկասեր ամբոխը, որն իր մտքերն ու զգացմունքները միշտ արտահայտել է բուռն կերպով: Իսկ այդ աղմկասեր ամբոխը «այս անգամ չէր վարակվում անգամ իր դաշնակցական առաջնորդների մերթ ընդ մերթ բաց թողած անհամբեր դեմագոգիկ բացականչություններից ու նկատողություններից»:

«Կարծես, գրել է Վ. Տերյանը,- հրաշալի գալիս գործկյանը դյուխված՝ լուռ ու հանգիստ լսում էր այդ ամբոխը Շահումյանի հանդարտ հոտող ճառը, այդ ամբոխը, որ սովոր էր բանվորական կուսակցությունների կայացուցիչներին աղմկայի առեղծվածում ու շվացնելով դիմավորելու և ճանապարհ դնելու...»:

1919 թ. գրած իր վերահիշյալ հուշերում Վ. Տերյանը նկատի ունենալով Սեծ Ղարաքիլիսայում տեղի ունեցած բանավեճը, գրել է. «Ով ծանոթ է Հայ իրականության, շատ լավ կհմանա, թե որքան բացառիկ ու դժվար բան պիտի լիներ այդ սրանից քսան տարի առաջ, եթե մեր օրերում իսկ այդ քաղաքների մտածողության և նացիոնալիստական նախապաշարմունքների այդ ծանր մշուշը սև ամպի նման նստած էր մեր մտավորականության խոշոր մեծամասնության և մինչև անգամ պրոլետարիատի բավական խոշոր մասի մտածողության ու զգացողության վրա»: (Նույն տեղը, էջ 170):

Շահումյանն այցելում է Բորչալու, Ալավերդի, Երևան և այլն, մասնակցում տեղի սոցիալ-դեմոկրատական խմբերի աշխատանքի համակարգմանը: 1905 թ. մայիսին Շահումյանին հաջողվում է միավորել Երևանում գործող սոցիալ-դեմոկրատական խմբերին և ընտրել ՌՄԻԲԿ Երևանի կոմիտե: Նրա ղեկավարությունը 1905 թ. ամռանը տեղի է ունենում Ալավերդու չրջանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության առաջին կոնֆերանսը:

«ԴԱՍԱԿԱՐԳԵՐԸ ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍԵՁ»

1905 թ. Հունիս-Հուլիսին «Մուրճ» ամսագրում տպագրվում է Շահումյանի «Դասակարգերը ժամանակակից եվրոպական հասարակության մեջ» ծավալուն հոդվածը: Բաց մասնուրում տպագրված այս հոդվածում Շահումյանը մատչելի լինելով եվրոպական հրկրների օրինակով վեր է հանել կապիտալիստական հարաբերությունների բոլոր խոցերը և դրանց բացասական հետևանքներն աշխատավոր մարդկանց համար:

Շահումյանը վերլուծում է «ժամանակակից հասարակության դասակարգային կազմը», ընդգծում է, որ կապիտալիստ պաշտպանելով իր շահերը, աշխատում է որքան կարելի է քիչ աշխատավարձ տալ բանվորներին, իսկ

բանվորներն աշխատում են որքան կարելի է շատ աշխատավարձ ստանալ կապիտալիստից:

Եվ ասվածից ելնելով Շահումյանը եզրակացնում է, որ ամբողջ ազգային եկամուտը «ներկա հասարակության մեջ» պատկանում է կապիտալիստական դասակարգին և այդ հանգամանքով է բացատրում, «որ հակառակ բարեխիտ ու խաղաղասեր մարդկանց «ազգային» քարոզներին, անհրաժեշտ և անխուսափելի է դարձնում ներկայումս ամեն մի ազգի մեջ սոսանձին դասակարգերի փոխադարձ կռիվը,- կռիվ՝ հանուն որոշ բաժնի՝ ազգային եկամտի մեջ»:

«Բայց այդ կռիվ մեջ,- բացատրում է Շահումյանը,- բոլոր դասակարգերի շանսերը, նրանց հաղթության կամ պարտության գրավականները միատեսակ չեն: Կռվի և հաջողության գլխավոր զենքը արդյունաբերության միջոցներն են, ներկայումս՝ հողը և կապիտալը, որ պատկանում են սեփականատեր դասակարգերին, ազնվականությանը և բուրժուազիային, մինչդեռ պրոլետարիատը զուրկ լինելով ամեն սեփականությունից, կռվի ասպարեզ է մտնում առանց որևէ զենքի, ապավինելով միմյայն իր բազումների ուժին»:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ ժամանակակից եվրոպական իրականության պայմաններում հաղթանակը ուժեղի կողմն է մնում, իսկ պարտվողը՝ բանվոր դասակարգն է, և ընդգծում է սետյալը. «Ամեն տեղ մենք տեսնում ենք, որ սեփականատեր դասակարգերն անսահման իշխում են պրոլետարիատի վրա: Ամեն տեղ պետական մարմինները, ամբողջ օրենսդրությունը, բոլոր հասարակական-իրավական հիմնարկությունները ծառայում են բուրժուազիայի ձեռքին իբրև զենք՝ նվիրագործելու մասնավոր սեփականության «արբան» ու «անձեռնմխելի» իրավունքը, ամրացնելու և հավերժացնելու կապիտալիստական շահագործության հրեշավոր հիմունքները»:

Պատմական էքսկուրս կատարելու միջոցով Շահումյանը հանգամանորեն բացատրում է, թե իրերի այսպիսի դրությունը ինչպես է ստեղծվել, հատուկ ուշադրություն դարձնելով պրոլետարական դասակարգի առաջացմանը: Նշելով, որ պրոլետարիատը ներքուստ բաժանվում է մի քանի խավերի, Շահումյանն ընդգծում է, որ ներկա հասարակության մեջ նրանց միավորողը «դասակարգային շահերի նույնությունն է»: Այսինքն, «նրանք բոլորն էլ զուրկ են տնտեսական ասպահովությունից, ապրում են աշխատավարձով և «բոլորն» էլ շահագործվում են սեփականատեր դասակարգերի կողմից»:

Շահումյանը հանգամանորեն բացատրում է, թե ինչով է պայմանավորվում այդ շահագործումը և, իբրև ասպացույց, բերում է եվրոպական երկրներ

րի վերաբերյալ մի շարք վիճակագրական տվյալներ ու դրանց միջոցով բացատրում է բանվոր դասակարգի «գարհուրելի դրությունը», որը, ըստ նրա «բարեբախտաբար հուսահատական չէ»:

«Պատմությունը,- գրում է Շահումյանը,- երբեք տեղիք և իրավունք չի տալիս իրան հշմարիտ ըմբռնողներին հոռետես լինելու իր վերաբերմամբ: Ստեղծելով իր զարգացման ընթացքում որոշ անհրաժեշտ ու անխուսափելի չարիքներ, նա միևնույն ժամանակ կոտմ-կոփում է այն գեները, որ պետք է հարվածեն ու վերացնեն այդ չարիքները, ճանապարհ հարթելով մարդկության ազատ ու հաղթական առաջադիմության համար»:

Շահումյանը գրաքննություն պահանջներից խուսափելով հարկ չի համարում անդրադառնալ այդ «փրկարար գեներին» և նշում է, որ հորվածում վերցվել է միայն խնդրի մի կողմը, այն է՝ «այրոքեսարիասի ծագման և նրա վիճակի, նրա գոյություն նյութական պայմանների նկարագրությունը»:

(Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 69-103):

«ՄԵՆՔ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐ ԵՆՔ...»

1905 թ. սկսված ռուսական առաջին հեղափոխության հորձանուտը իր մեջ է ընդգրկում նաև Անդրկովկասը: Արտասահմանից վերադարձած Շահումյանն անմիջապես անցնում է գործի, մտնելով ՌՄԻԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի ղեկավար կազմի մեջ:

Երևանում և Հայաստանի մի շարք այլ բնակավայրերում լինելուց հետո Շահումյանը մեկնում է Բաքու: Այստեղ նա Մ. Յիսակյայի հետ միասին 1905 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին ձեռնամուխ է լինում Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գործունեությունն աշխուժացնելու, նրա ղեկավարներ Պ. Զափարիձեին, Ս. Ալիյուևին, ինչպես նաև ՌՄԻԲԿ Կենտկոմի ներկայացուցիչ Մ. Լյադովին ձեռքակալությունից ազատելու համար:

Բաքվից վերադառնալուց հետո Շահումյանը եռանդով մասնակցում է 1905 թ. հոկտեմբերի 19-ին, 20-ին և 21-ին Թիֆլիսում տեղի ունեցած միտինգների կազմակերպմանը: Հոկտեմբերի 20-ի միտինգում ելույթ է ունեցել Շահումյանը: Նրա ելույթը ուսուցիչական գեղուցազրում գնահատվում է որպես «ծայրահեղ միասակար հասարակության համար»: Նույն գեկուցազրում նշվում է նաև, որ Շահումյանը «հրահրում է տապալել պետական կարգը: Սկսում է այն բանից, որ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան երբեք չի հավատացել ինքնակալությանը: Վերջացնում է պահանջով. «Պետք է գործայուններ կազմել, պետք է պատրաստվել բոլոր ուժերով, բոլոր միջոցներով»:

որքան կարելի է վերջ տալու երկզվյալի հրեշի»: (Ի. Դուբինով-Մոխաձե, նույն տեղը, էջ 94):

Հնվերների աջակցությամբ Շահումյանին հաջողվում է խուսափել ձերբակալումից և շարունակել հեղափոխական աշխատանքը: 1905 թ. նոյեմբերի 20-25-ին Շահումյանը ղեկավարում է Ալավերդու պղծահանքերի բանվորների քործադուլը, որը հայտնի է դառնում նրանով, որ, թերևս առաջին անգամ, ձեռք-ձեռքի տված համատեղ պայքարի մեջ են մտնում հայ, ռուս, վրացի, պարսիկ բանվորները:

Հնվացող հեղափոխության բուռն վերելքի պայմաններում մեծապես զգացվում էր լեզալ մամուլ ունենալու կարևորությունը: Որոշվում է հենց Թիֆլիսում ձեռնարկել այդպիսի թերթի ստպագրությունը:

Սոցիալ-դեմոկրատիայի Հայացքներն ու զաղափարները համակրող սպարանատեր Ն. Թամանյանը 1905 թ. նոյեմբերի սկզբին դիմում է Կովկասի փոխարքային, խնդրելով թույլ տալ հրատարակել «Кавказский рабочий листок» ռուսերեն թերթը, որի պաշտոնական խմբագիր է ներկայացվում Շ. Էլիավան: Թամանյանը միաժամանակ փոխարքային ուղղված դիմումի մեջ միջնորդում էր «թերթի երկրորդ պատասխանատու խմբագիր հաստատել Բեռլինի համալսարանի փիլիսոփայության թեկնածու Ստեփան Շահումյանին»:

Սակայն, թեև այս միջնորդությունը չի հաստատվում, այնուամենայնիվ, թերթի փաստացի խմբագիրը դառնում է Շահումյանը: Եվ 1905 թ. նոյեմբերի 20-ին Շահումյանի անմիջական մասնակցությամբ ու խմբագրությամբ Թիֆլիսում լույս է տեսնում «Кавказский рабочий листок» ռուսերեն լեզալ թերթը 17 հազար սուպրանակով:

Այս թերթը, որտեղ սուպրավում են նաև Շահումյանի մի շարք հորվածներ, գոյություն է ունեցել մոտ մեկ ամիս և դեկտեմբերի 14-ին ցարական իշխանությունների կողմից փակվել է: Լեզալ թերթի կազմակերպման փորձը հետագայում օգտակար եղավ հայերեն «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» թերթերի հրատարակման համար:

Նոյեմբերի 20-ին լույս տեսած թերթի առաջնորդող հորվածում Շահումյանը պարզաբանում է, որ թերթի գլխավոր խնդիրն է՝ ծառայել բանվոր դասակարգի ազատագրման գործին:

«Մենք սոցիալիստներ ենք,- հայտարարում էր Շահումյանը,- որովհետև մենք համոզված ենք, որ միայն այն ժամանակ, երբ բանվոր դասակարգի ձեռքն անցնեն նրա աշխատանքով ստեղծված հարստությունները, որոնց

օգնությունը այժմ նրան տրվելու մեջ են պահում,- այդ բոլոր գործարանները, ֆաբրիկաները, մեքենաները, երբ բանվոր ժողովրդի ձեռքն անցնի նրանից իվված հողը-միայն այն ժամանակ վրա կհասնի իսկական ազատությունը»:

«Մենք դեմոկրատներ ենք,- ազդարարում էր Շահումյանը,- որովհետև համոզված ենք, որ մինչև ամբողջ քաղաքական իշխանությունն առանց մասցորդի չանցնի ժողովրդի ձեռքը, մինչև որ չիրագործվի ժողովրդի ինքնակալությունը, մինչև այդ բանվոր ժողովուրդը կգժվարանա մարդկության ազատագրման, սոցիալիզմի համար իր մղած պայքարում»: (Խ. Հ. Բարսեղյան, Ստեփան Շահումյան, էջ 151):

«ԷՎՈՒԼՅՈՒՑԻՈՆԻԶՄԸ ԵՎ ՈՒՎՈՒԼՅՈՒՑԻՈՆԻԶՄԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՉ»

Սկզբած հեղափոխությունը պրակտիկ հարցերի հետ միասին առաջ էր քաշել նաև հեղափոխության վերաբերյալ մի շարք տեսական հիմնահարցեր, որոնց պարզաբանման համար ծավալվել էր լուրջ բանավեճ:

Այդ բանավեճին եռանդով մասնակցում է նաև Շահումյանը, հրապարակելով մի շարք տեսական բնույթի հոդվածներ: Դրանց մասին պատկերացում կազմելու համար ընթերցողի ուշադրությունը ներկայացնեմ 1905 թ. նոյեմբեր-դեկտեմբերին նրա հրատարակած երկու հոդված: Առաջին հոդվածը՝ «Էվոլյուցիոնիզմն ու ուսուցիչիոնիզմը հասարակական գիտության մեջ» լույս է տեսել 1905 թ. նոյեմբերի 30-ին «Кавказский рабочий листок» թերթում:

Շահումյանը նշում է, որ էվոլյուցիոնիզմի և ուսուցիչիոնիզմի հարցի պարզաբանումը կենսականորեն անհրաժեշտ է և Ռուսաստանում ստեղծված պայմաններում «առանձին կարևորություն է ներկայացնում» սոցիալ-դեմոկրատիայի համար:

Նկատի ունենալով էվոլյուցիոնիզմի և ուսուցիչիոնիզմի հարաբերակցությունը, Շահումյանը դա համարում է բազմիսի և վերնաշենքի հարց, որը, թեև երկար է ծեծվել մարքսիստական գրականության մեջ, բայց դեռևս մնում է չպարզված:

Շահումյանը քննադատում է նրանց, ովքեր չեն կարողացել համատեղել էվոլյուցիոնիզմը ուսուցիչիոնիզմի հետ, ճիշտ չեն ըմբռնել «բազմիսի» և «վերնաշենքի» փոխհարաբերությունը և ընդգծում է, որ այդ ամենի «ախպ ըմբռնումը հանգեցնում է ևս մի ուրիշ, ոչ պակաս ցավալի արդյունքի»:

«Եթե,- շարունակում է Շահումյանը,- մի կողմից երևան են գալիս «Էվոլյուցիոնիստներ», որոնք ժխտում են ուսուցիչիոնիզմի որևէ նշանակությունը, ապա մյուս կողմից մենք տեսնում ենք ծայրահեղ, եթե կարելի է այսպես արտահայտվել, ուսուցիչիոնիստների, որոնք անտեսում են հասարակական էվոլյուցիայի հիմնական օրենքները և դրա հետևանքով ընկնում են... ուսուցիչական, անարխիստական «բուժարարության» մեջ...»:

Նենվելով պատմության մատերիալիստական մարքսիստական ըմբռնման վրա, Շահումյանն ընդգծում է, որ «պատմության սկզբնական, այսպես ասած, շարժիչ գործոնը տնտեսական գործոնն է: Մասցած բոլորը, այսպես կոչված, իդեոլոգիական գործոնները-կրոնը, մորալը, գիտությունը, իրավունքը-երկրորդային կամ ածանցյալ գործոններ են»:

Շահումյանը երևում է այն իրողությունից, որ յուրաքանչյուր հասարակության նպատակն է պայքարել բնության դեմ, պաշտպանել այդ հասարակության մաս կազմող անհատների գոյությունը: Հասարակությունն այդ պայքարի մեջ օգտագործում է իր տեղծած աշխատանքի գործիքները և բնության այն ուժերը, որոնք մարդիկ օգտագործում են իրենց արտադրական գործունեության ընթացքում: Եվ այդ պրոցեսում մարդիկ հասարակության արտադրողական ուժերը օգտագործելով մտնում են իրար հետ հասարակական կամ արտադրական հարաբերությունների մեջ:

Հասարակության արտադրողական ուժերն անընդհատ աճում են, ենթարկվում փոփոխության: Դրանով էլ պայմանավորված՝ փոխվում են ինչպես մարդկանց արտադրական հարաբերությունները, այնպես էլ նրանց հարաբերություններն արտադրության պրոցեսում

«Այստեղից պարզ է,- գրում է Շահումյանը,- թե ինչ իմաստով պատմության սկզբնական, շարժիչ գործոն են հանդիսանում հասարակության արտադրողական ուժերը և արտադրական հարաբերությունները, այլ խոսքով ասած՝ հասարակության տնտեսական կառուցվածքը կամ տնտեսական գործոնը»:

Շարունակելով իր վերլուծությունը, Շահումյանը նշում է, որ հասարակության տնտեսական կառուցվածքի զարգացումը կատարվում է տարերայնորեն, անձնական շահի ու նախաձեռնության ճնշման տակ, «հասարակական գիտակցության բնագավառից դուրս»: Շահումյանը նշում է նաև, որ իդեոլոգիայի բնագավառում դեր է խաղում հասարակական, կոլեկտիվ գիտակցությունը: «Այն կոլեկտիվները,- գրում է նա,- որոնց միջոցով արտահայտվում է հասարակական գիտակցությունը, հասարակական կամքը,- դա-

ասակարգերն են... որոնք բաժանվում են արտադրության պրոցեսում, միատարր են ինքնին, միավորում են միատեսակ փաստական դրություն և միատեսակ շահեր ունեցող մարդկանց և հակադիր են, անտագոնիստական են հասարակության այլ համանման մասերի նկատմամբ»:

Այնուհետև Շահումյանը գրում է, որ առավել ուժեղ և իշխող դասակարգը իր կամքը թելադրում է ունեցած տնտեսական դրությամբ ու տնտեսական շահերով և հակադիր է այլ դասակարգերի կողմնակալ կամքին և «իր դասակարգային կամքը վերածում է հասարակական կամքի, մարմնացնում է հասարակական ու պետական հիմնարկությունների մեջ, որոնք նրա ձեռքին վերածվում են հետագա դասակարգային պայքարի գործիքի»:

Շահումյանը ելնելով ասվածից, նշում է, որ պետությունը պատմության մեջ միշտ հանդիսացել է դասակարգային տիրապետության կազմակերպություն: Սակայն հասարակության արտադրողական ուժերը մշտապես զարգանում են, առաջանում են հասարակության նոր բաժանումներ, ստեղծվում են նոր դասակարգեր, որոնք ձգտում են ստեղծել այլ իրավական կազմակերպություններ:

«Հին իշխող դասակարգերը,- գրում է Շահումյանը,- որոնք պաշտպանելով իրանց կենսական շահերը, ամբողջովին կապված գոյություն ունեցող կարգերի հետ, չեն կարող հոժարակամ գիջել իշխանությունը: Եվ վճռական պահ է հանդիսանում դարձյալ դասակարգային պայքարը, հաղթանակ է տանում դարձյալ ուժը»:

Իր վերլուծությունից Շահումյանը եզրակացնում է, որ «հասարակության տարերային էվոլյուցիոն զարգացմանը փոխարինում են անխուսափելի կատակլիզմները, ցնցումները, հեղափոխությունները, որոնք վերացնում են մարդկանց փաստական հարաբերություններին չհամապատասխանող և հասարակության հետագա զարգացումը կասեցնող հին «վերնաշենքերը»:

«Հեղափոխություններն այսպիսով,- ընդգծում է Շահումյանը,- ավարտում են հասարակության էվոլյուցիոն զարգացման որոշ ցիկլ և ճանապարհ են հարթում նրա հետագա դարձյալ էվոլյուցիոն զարգացման համար»:

Իր միտքը հիմնավորելու համար Շահումյանը բերում է Կ. Կառլսկու «Սոցիալական ուեֆորմն ու հեղափոխությունը» գրքից ծննդաբերության ակտի օրինակը, և գրում է հետևյալը. «Չիշտ նույնն է տեղի ունենում և հասարակության մեջ: Նյութական մանր փոփոխությունների միջոցով, դանդաղ, էվոլյուցիոն ուղիով... ստեղծվում են հասարակական մարմիններ՝ նյութական արտադրողական ուժերը, արտադրողական ամբողջ ապարատը, հասարակության ամբողջ «տնտեսական կառուցվածքը»: Հեղափոխությունն ազդում է միայն «վերնաշենքի» վրա. պետական իշխանությունը, օրենսդրությունը և այլն սկսում են ուրիշ կերպ գործել»:

րակության ամբողջ «տնտեսական կառուցվածքը»: Հեղափոխությունն ազդում է միայն «վերնաշենքի» վրա. պետական իշխանությունը, օրենսդրությունը և այլն սկսում են ուրիշ կերպ գործել»:

Այս ամենի մասին գրելուց հետո Շահումյանն անդրադառնում է իր սուղև դրված հիմնական խնդրի պարզաբանմանը: Նա գրել է. «Որպեսզի «հեղափոխությունը» կենսունակ լինի. որպեսզի նա տանի դեպի հետագա էվոլյուցիան, անհրաժեշտ է, որ այն տեղի ունենա համապատասխան պահին: Եվ մենք գիտենք, որ երբ ծննդաբերությունը ժամանակից շուտ է տեղի ունենում, երբ դեռ պտուղը լիովին չի հասունացել, երեխան չի ապրում. տեղի է ունենում այն, ինչ մանկաբարձական լեզվով կոչվում է «ախտաբան»:

Նշված հանգամանքը պետք է նկատի ունենալ հասարակական հեղափոխությունների ժամանակ և անխմստ է սահմանել նոր հասարակության ծննդյան ճշգրիտ պահը: Այստեղից էլ պարզ է, ինչպես նշում է Շահումյանը, որ «որոշ հեղափոխություն կատարելու համար անհրաժեշտ է, որպեսզի էվոլյուցիան, այսինքն՝ հասարակության ամբողջ նախորդ տնտեսական զարգացումը հասցնի նրան այն վիճակին, երբ այդ հեղափոխությունը հարավոր կլինի»:

«Հեղափոխության փորձերը,- ընդգծում է Շահումյանը,- որոնք հաշվի չեն առել այս հանգամանքը, միշտ անհաջողություններ են վերջացել» և իր տեսակետը հիմնավորելու համար բերում է 18-րդ դարի վերջին Փրանսիական հեղափոխության, 1871 թ. Փարզի կոմունայի օրինակը:

Ասվածից ելնելով, իբրև եզրակացություն, Շահումյանը կատարում է հետևյալ հարցադրումները.

Առաջին. Կարելի՞ է արդյոք ուղյուցիոնիզմը համարել էվոլյուցիոնիզմի հետ անհամատեղելի և նրան հակասող:

Երկրորդ. Կարելի՞ է արդյոք հեղափոխությունները հայտարարել պատմականորեն անօրինաչափ, մասսակար, «անարդար», «անբարոյական», ուտոփ և դատապարտելի ակտեր:

Այս հարցերին, նկատում է Շահումյանը, դրական պատասխան տալու համար «պետք է լինել անհուսալի կույր ֆիլիստեր կամ անհնայտ սրիկա, իր դարն ապրած և ամբողջ հասարակությունը ճնշող հին կարգերի կողմնակից»:

Երրորդ. Կարելի՞ է արդյոք հեղափոխության ժամանակ իրացման ենթա-

կա հեղափոխական պահանջներ, հեղափոխական ծրագրեր առաջադրելիս հաշիի չառնել էվոլյուցիայի օրենքները, կյանքի ռեալ պայմանները:

Չորրորդ. Կարելի՞ է արդյոք առաջադրել պահանջներ, որքան էլ դրանք գեղեցիկ ու ցանկալի լինեն,- եթե դրանք հակասում են իրականությունը, եթե դրանք չեն կարող իրագործվել:

Նրանց, ովքեր դրական պատասխան են տալիս այս հարցերին, Շահումյանը համարում է «բարեհոգի երազողներ, անհիմն ֆանտաստիկներ, գտարյուն ուտոպիստներ»: Շահումյանը նաև նշում է, որ էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը յուրաքանչյուր հեղափոխության անխուսափելի ուղեկիցն են:

Ռուսաստանում հեղափոխությունը բուն թափով առաջ էր գնում և ստեղծված պայմաններում Շահումյանը նկատի ունենալով, որ ամենուրեք երևում են էվոլյուցիոնիստներն ու ռևոլյուցիոնիստները, նշում էր, որ առաջինները «փորձում են կանգնեցնել հեղափոխության փոթորկալի երթը և ձգտում են «խաղաղ բարենորոգումների» վերևից»: Իսկ երկրորդները սոցիալիստական հեղափոխության կոչ են անում:

«Ե՛վ դա այն ժամանակ,- ընդգծում էր Շահումյանը,- երբ ամեն մի մտածող մարդու համար պարզ պետք է լինի, որ երկրի տնտեսական զարգացումը,- ինչպես և Ֆրանսիայում՝ ֆրանսիական մեծ հեղափոխության ժամանակ, ինչպես և Գերմանիայում 48 թվականին (նկատի ունի 1848 թ-Վ. Պ.),- հնարավոր է դարձնում մեզ մոտ միայն բուրժուական-դեմոկրատական հեղափոխություն, այն ժամանակ, երբ մենք դեռ չենք ազատվել ֆեոդալիզմի ծանր շղթաներից»:

Շահումյանը նշում էր, որ էվոլյուցիոնիստները գիտակցորեն ու անգիտակցորեն, իսկ ռևոլյուցիոնիստները միայն անգիտակցորեն, «գործում են հօգուտ ռեակցիայի և ի վնաս հեղափոխության»:

Հորվածի վերջում Շահումյանը ընդգծում էր, որ միայն պատմական պրոցեսների նկատմամբ գիտական վերաբերմունքը, պատմական օրենքների ճիշտ գիտական ըմբռնումը, էվոլյուցիոնիզմը ռևոլյուցիոնիզմի հետ համատեղելու ընդունակությունը կապահովեն «մեզ համար խելացի, նպատակահարմար, ճշմարիտ հեղափոխական գործունեություն»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 122-131):

«ՈՒԹԺԱՄՅԱ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՕՐԸ ԵՎ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ»

Հաջորդը՝ 1905 թ. դեկտեմբերի 3-ին «Кавказский рабочий листок» թերթում տպագրված «Ութժամյա բանվորական օրը և բանվորների պետական ապահովագրությունը» հոդվածն է, որտեղ Շահումյանն անդրադառնում է ընթացող հեղափոխության բնույթին: Նա նշում է, որ, ինչպես նախորդ ժամանակաշրջանում եվրոպական երկրներում տեղի ունեցած հեղափոխությունները, այնպես էլ ռուսական հեղափոխությունը իր բնույթով բուրժուական է «այն մտքով, որ նրանք չեն վերացնում բուրժուական մասնավոր սեփականությունը և բուրժուական գույքային հարաբերությունները»:

Սակայն ռուսական հեղափոխությունը, որը նույնպես բուրժուական է, որոշակիորեն տարբերվում է եվրոպական հեղափոխություններից: Այս իրողությանն անդրադառնալով, Շահումյանը գրել է. «Բոլոր այդ եվրոպական հեղափոխությունները կատարվել են բուրժուազիայի ղեկավարությամբ: Ռուսական մեծ հեղափոխությունը կատարվում է պրոլետարիատի ղեկավարությամբ»:

Այնուհետև Շահումյանն ընդգծում է, որ իր դասակարգային շահերը գիտակցած Ռուսաստանի պրոլետարիատն ընթացող հեղափոխության մեջ «ոչ միայն արյուն է թափում, այլև ներկա հեղափոխությունում հանդես է գալիս որպես տեր ու տիրական»:

Նշված հանգամանքը Շահումյանը գնահատում է որպես ռուսական հեղափոխության մեծ առաջելություն՝ եվրոպական բուրժուական հեղափոխությունների համեմատությամբ:

Շահումյանը հանգամանորեն բացատրում է, թե ինչու բուրժուազիան չի ցանկանում մտցնել ութժամյա աշխատանքային օր: «Սակայն,- գրել է նա,- բուրժուազիան լավ գիտե, որ բանվոր դասակարգը, կազդուրելով իր մարմինը՝ շնորհիվ աշխատանքի տևողության կրճատման և բարձրանալով իր ոգով ու գիտակցությամբ՝ շնորհիվ ձեռք բերած ազատ ժամանակի նպատակահարմար օգտագործման, էլ ավելի հզոր ուժ կդառնա և կարողացնի կապիտալիստական շահագործման ճակատագրական ու անխուսափելի կործանումը: Ահա, թե ինչու ութժամյա բանվորական օրը սարսափեցնում է բուրժուազիային»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 132-134):

1905 թ. դեկտեմբերի 8-ին Շահումյանը «Кавказский рабочий

ЛИСТОК» թերթի առաջնորդող հոդվածում հրապարակելով ներքին գործերի նախարար Դուռնովույի գաղտնի շրջաբերականը, որով պահանջվում էր ձերբակալել «քաղաքական և ագրարային հակակառավարական շարժման պարագլուխներին, դրոհիչներին, դեկավարներին», գրել է հետևյալը. «Մոտ է այն ժամը, երբ ամբողջ Ռուսաստանով մեկ կրճակվի համաժողովրդական ապստամբությունը և ջարդուխուր կանի ցարական ինքնակալության երկաթե զրահը»: (Ատ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 142-143):

Իսկ դեկտեմբերի 10-ին «Кавказский рабочий листок» թերթում Շահումյանը կոչ էր անում ցարական ինքնակալության դեմ «ձեռնարկել պայքարի համաժողովրդական միջոցին՝ զինված ապստամբության»: (Ատ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 147-149):

Կովկասում գնալով ավելի էր ծավալվում հեղափոխական շարժումը իր մեջ ընդգրկելով նոր բնակավայրեր ու շրջաններ: Ցարական իշխանություններն ավելի են ուժեղացնում պատժիչ գործողությունները, որոնք նշանավորվում են Կովկասում ռազմական դրուժյուն մտցնելով:

«ԵՐԱՅՐԱՍՊԱՆ ՊԱՏԵՐԱԶՍԻ ԻՍԿԱԿԱՆ ՀԱՆՅԱԳՈՐԾԸ»

Ցարական իշխանությունները չբավարարվեցին Կովկասում ռազմական դրուժյուն մտցնելով: Հեղափոխական շարժումը ճնշելու միջոցների մեջ առաջին պլան է մղում ազգամիջյան երկպառակությունների հրահրումը: Պրովոկացիոն լուրեր տարածելու միջոցով հրահրվեցին Հայ-թաթարական ընդհարումներ Բաքվում, Գանձակում, Շուշում, Երևանում, Ելիզավետպոլում և այլուր:

Ցարական իշխանությունների կողմից հրահրված այդ ընդհարումների կապակցությամբ իրենց վերաբերմունքը դրսևորեցին Անդրկովկասում գործող քաղաքական ուժերը:

Իմ նպատակի մեջ չի մտնում այստեղ հանգամանորեն անդրադառնալ այդ ուժերի բռնած դիրքին, ձեռնարկած միջոցներին: Միայն ուզում եմ փաստել, որ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների քաղաքականությունն ամբողջովին տարբերվում էր մյուսների քաղաքականությունից ու գործողություններից:

1905 թ. նոյեմբերի վեցին տեղի ունեցած ՌՄԻԲԿ Կովկասյան միություն 2-րդ կոնֆերանսը քննարկում է մի շարք կարևոր հարցեր, այդ թվում նաև ազգային և ազգամիջյան ընդհարումները կանխելու միջոցառումների մասին:

Դատապարտելով ցարական կառավարության քաղաքականությունը, կոնֆերանսը բոլոր ազգերի աշխատավորներին, դեմոկրատական կազմակերպություններին կոչ է անում միավորել ուժերը և միացյալ հարված հասցնել ցարիզմի հրահրած պրովոկացիային:

Կոնֆերանսն անհրաժեշտ է համարում ազգամիջյան ընդհարումները կանխելու նպատակով ստեղծել հեղափոխական ինտերնացիոնալ զինված դրուժինաներ:

Կոնֆերանսի ընդունած բանաձևի դեմ հանդես է գալիս Մ. Վարանդյանը «Ալիք» թերթում հրապարակելով «Ոճրագործ սուտը» վերնազգրով հոդվածը: Վարանդյանը մեջբերում է ՌՄԻԲԿ Կովկասյան միության 2-րդ կոնֆերանսի բանաձևի հետևյալ հատվածը. «Ի նկատի առնելով, որ կովկասեան արևմտու իրականության խոշոր երևոյթներից մէկը՝ այսպէս կոչված թուրք-հայկական կոտորածը, անմիջական հետևանք է կառավարչական պրօվօկացիայի, որ հաստատուած էր երկու թշնամած կողմերի մութ ու ըհակցիօն տարրերի վրայ (ընդգծումը «Ալիք» թերթին է-Վ. Պ.), որոնց կատարութիւնը ուղքի էր կանգնեցնում ու գրգռում ազգաբնակչության խաղաղ մասի վրայ, այդպիսով կազմելով քաղաքականապէս ըհակցիօն մի բանակ և ուղղելով նրան ընդհանուր ազատագրական շարժման դէմ»:

Զայրանալով այս գնահատականի դեմ, Վարանդյանը գրում է. «Կովկասեան սոցիալ-դեմոկրատները այդպէս են որոշել, արդարութեամբ, անաչառութեամբ և պատրաստ են այդպէս ծանուցանել ամբողջ աշխարհին, ամբողջ աշխարհը պիտի իմանայ, որ եթէ Կովկասում երկու ցեղեր 18 ամսից ի վեր արիւնահեղ մենամարտի մէջ են-այդտեղ մեղաւոր են հաստատու չափով երկու ցեղերն էլ. թուրք տարրը չէ միայն, որ հիւժուտ է նախապատմական խաւարի մէջ, որ հօգո պատուար է հանդիսանում հակայեղափոխութեան,- այլ և հայ տարրը. նա էլ է ենթակայ պրօվօկացիայի, նա էլ է արտադրում «մութ ու ըհակցիօն տարրեր...»: («Ալիք», մայիսի 30, 1906 թ.):

Անշուշտ, ընթերցողը կնկատի, որ սոցիալ-դեմոկրատների բանաձևը վերաբերում է ոչ թե հայ և թուրք ժողովուրդներին ընդհանրապես, այլ միայն այդ երկու ժողովուրդների «մութ ու ըհակցիօն տարրերին», որոնք ցարական իշխանությունների հետ միասին բորբոքում էին ազգամիջյան կոտորածները: Սոցիալ-դեմոկրատների բանաձևը չի հիշատակում որևէ կոտակցության, այդ թվում նաև ոչ հայ դաշնակցականներին և ոչ էլ թուրք մուսավաթականներին: Եվ դրա մեջ որևէ «ոճրագործ սուտ» չկա, ինչպես կարծում է Վարանդյանը:

Այսօր Հրապարակի վրա կան բազմաթիվ փաստաթղթեր, վկայություններ ու գնահատականներ այն մասին, որ Հիշյալ մոլթ և ռեակցիոն ուժերը որևէ ուշադրություն չէին դարձնում Հայ-թուրքական կոտորածները դադարեցնելու զգաատացնող կոչերին: Այս առումով միայն Հիշեցնեմ Հայ մեծատուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ջանքերը և բավարարվեմ ասվածով:

Հայ-թաթարական ընդհարումները Հրահրելու գործում ցարական իշխանությունների քաղաքականությունը մերկացնելու, այդ ընդհարումները կանխելու գործում Շահումյանը ստանում էր պրակտիկ գործունեություն: Նա երտասարդության մոտ Հանդես էր գալիս ռեֆերատներով, ղեկավարում էր բանվորական խմբակներ, կազմակերպված ցույցերում և միտինգներում ելույթներ ունենում: Այդ ամենի Հետ միասին նա Հրապարակում է Հողվածների, գրում թուլցիկներ ու կոչեր:

1905 թ. նոյեմբերի 23-ին սպազորվում է Շահումյանի «Ելիզավետպոլի դեպքերի առթիվ» Հոդվածը: Նշելով, որ Ելիզավետպոլում տեղի ունեցած արյունալի դեպքերը «սարսափահար են արել Կովկասի բնակչությանը և առանձնապես Հենց իրենց՝ Հայերին ու թուրքերին՝ այդ եղբայրասպան ցավալի պատերազմի ակտիվ մասնակիցներին, Շահումյանը հստակորեն ընդգծում էր Հետևյալը. «Հազիվ թե այժմ գտնվի մի մարդ, որը չճանաչի այդ եղբայրասպան պատերազմի իսկական հանցագործին: Այդ հանցագործը ցարական ինքնակալությունն է: Այդ նա է տարիների ընթացքում իր նացիոնալիստական «ծայրամասային» քաղաքականությամբ բորբոքում ազգային կրքերը, պատակոտում ու թշնամություն մերմանում առանձին ազգությունների միջև, խրախուսում ու արմատավորում այն ռեակցիոն, չլիինիստական հոսանքները, որոնք ծնունդ էին առնում առանձին ազգությունների մեջ, ուստական «պատրիոտիզմը», հրեական սիոնիզմը, թուրքական պանիպա-միզմը, Հայկական պանարմենիզմը և այլն,- և գիտակցաբար սիստեմատիկորեն նախապատրաստում էր այն սարսափելի ջարդերը, որոնցով նրան հարկավոր էր խորտակել համառուսական հեղափոխական պրոլետարիատի ինտերնացիոնալ Համերաշխությունը»:

Շահումյանը «Հայ-թուրքական արյունալի պատմությունը վերջ դնելու» անենահաստատ միջոցը Համարում էր այդ սարսափների գլխավոր պատճառ Հանդիսացող ցարական ինքնակալության դեմ պայքարի ուժեղացումը:

Միաժամանակ նկատի ունենալով, որ հրահրված Հայ-թուրքական կոտորածների մեջ առաջին Հերթին ներքաշված են թուրքերը, Շահումյանն անհ-

րածեչտ էր համարում «հստակեցնել այն ժողովրդական մասաների, սվյալ դեպքում գլխավորապես թուրքերի գիտակցությունը, որոնք կույր գործիք են ծառայում անիծյալ «չեյթանի» ձեռքին՝ մահացու ինքնակալության ձեռքին»:

Շահումյանը կոչ էր անում զինվել «խուլիզանություն անող մասաներից պաշտպանվելու համար»: Ազգամիջյան կոտորածներին վերջ տալու գործում Շահումյանը կարևորում էր Կովկասի բոլոր ազգությունների պրոլետարիատի «ամենագործույնյա մասնակցությունը»: (Մո. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 114-115):

1905 թ. նոյեմբերի 20-ին Թիֆլիսի Նախարակա թաղամասում, ինչպես հարդրվում է ոստիկանական զեկուցագրում, սոցիալ-դեմոկրատների կազմակերպած միտինգում, որին ներկա է եղել 5000 մարդ, քննարկվում է թաթար-Հայկական ընդհարումների հարցը: Այս միտինգում ելույթ է ունեցել նաև Շահումյանը:

Միտինգն ընդունում է Շահումյանի գրած բանաձևը, որտեղ ասվում էր Հետևյալը. «Ուշադրություն դարձնելով, որ Հայ-թաթարական կոտորածը հրահրվել է հետադեմ կառավարական ուժերի կողմից, որը ձգտում է իր շահերից ելնելով, տարանջատել երկու ազգերի աշխատավորական մասաներին և դրանով թուլացնել հեղափոխական շարժումը»:

Այնուհետև ասվում էր, որ ՌՄԴԲԿ Թիֆլիսի կազմակերպության հրավրած միտինգը իր զայրույթն է հայտնում Ելիզավետպոլում տեղի ունեցած Հայ-թաթարական կոտորածի կապակցությամբ և դատապարտում է կոտորածը կազմակերպող հետադիմական ուժերին:

Բանաձևը դիմում էր Հայ և թաթար բնակչությանը՝ անմիջապես դադարեցնել կոտորածը, իսկ այդ երկու ազգերի աշխատավորությանը կոչ էր անում «միավորվել ՌՄԴԲԿ կարմիր դրոշի ներքո հետադիմական կառավարությունը վերջնականապես ջախջախելու համար»: (Վրաստանի կենտրոնական պետական արխիվ, ֆ. 83, ց. 1, գ. 32, , թ. 247):

1905 թ. նոյեմբերի 24-ին «Кавказский рабочий листок» թերթի առաջնորդը Հողվածում Շահումյանը զգուշացնում էր, որ ցարական իշխանությունները նախապատրաստում են Թիֆլիսում հրահրել Հայ-թուրքական կոտորած և Թիֆլիսի բանվորներին, Հայերին ու թուրքերին կոչ էր անում պրոլոկացիայի չենթարկվել, լինել զգոն: «Սննք,- գրում էր նա,- դիմում ենք Հայ և թաթար բնակչությանը՝ չհավատալ պրոլոկատորներին: Սննք դիմում ենք Թիֆլիսի գիտակից պրոլետարիատին՝ առանց ազգային խորու-

թյան իր հզոր ձայնը բարձրացնելու, որպեսզի կանխվի եղբայրասպան պատերազմը»:

Իսկ 1906 թ. փետրվարի 12-ին տարածվում է Շահումյանի գրած «Կեցցե՛ միջազգային եղբայրությունը» թռուցիկը: Վրացերեն, Հայերեն և ռուսերեն հրատարակված թռուցիկում Շահումյանը գրում էր, որ կառավարությունը թախարհներին հրահրել է Հայերի դեմ և հուսում է անսեղ մարդկանց արյունը:

«Եվ այսօր,- ընդգծում էր Շահումյանը,- կառավարության գործակալները ուզում են կազմակերպել Հայերի և թախարհների կոտորած: Դուք՝ Հայեր, թախարհները, վրացիները և ռուսները՝ ձեռք-ձեռքի տված, միավորվեք և հռչակեք «Կեցցե՛ բարեկամությունը ժողովուրդների միջև»: (Վրաստանի կենտրոնական պետական արխիվ, Ֆ. 153, ց. 1, գ. 943 գ., թ. 1):

Հարկ եմ համարում ընդգծել, որ Շահումյանը իր ամբողջ գործունեության ընթացքում, մինչև իր կյանքի ողբերգական ավարտը, հավատարիմ է մնում Կովկասի ժողովուրդների եղբարական բարեկամության գաղափարին, նրանց համատեղ պայքարի մեջ տեսնելով ապագա հաղթանակի հնարավորությունը:

ԼԵՆԻՆԸ ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լենինը հայ-թախարհական ընդհարումներին անդրադարձել է 1905 թ. փետրվար-մարտ ամսին Ֆինլոն լոյս տեսած «Ոստիականության դեպարտամենտի տնօրեն Լուպուխինի գեկուցագիրը» գրքուկի համար գրված ստաջաբանում:

Լենինը նշում է, որ 1881 թ. սկսած ցարի հրամանով ստեղծված ուժեղացրած պահպանության «ժամանակավոր» կանոնադրության հիման վրա ոստիկանության ձեռնարկած միջոցները հեղափոխական շարժումները վերացնելու ուղղությամբ ոչ մի արդյունք չեն տվել: Այդ փաստն իր գեկուցագրում ընդունում է ոստիկանության դեպարտամենտի տնօրենը:

«Ուժեղացրած պահպանության կանոնադրության երբեմնի անհարկ պարագրաֆները,- ընդգծում է Լենինը,- դուրս եկան չնչին, մանր, խարդախ բծախնդրություններ, որոնք ավելի շատ գրգռում են հեղափոխականների թվին չպատկանող «քաղքենիների» դժգոհությունը, քան լրջորեն շոշափում են հեղափոխականներին»:

Լենինը Լուպուխինի գեկուցագրի «բարոյախտություն» իմաստը համար

ում է այն, որ «Ժողովրդական հեղափոխության դեմ, դասակարգային պայքարի դեմ չի կարելի հենվել ոստիկանության վրա, պետք է հենվել նույնպես ժողովրդի վրա, նույնպես դասակարգերի վրա»:

Լենինը նաև նշում է, որ հեղափոխական շարժումները ճնշելու գործում այլևս ցարական իշխանությունների համար բավարար չեն ոստիկանության և ոսգնական ուժերը: Հեղափոխությունը ճնշելու համար ցարիզմն ընտրել է մի միջոց՝ «պետք է բորբոքել ազգային ուսույնական թշնամանք, , պետք է՝ «սև հարյուրականներ» կազմակերպել քաղաքային (և ապա, հասկանալի է, նաև գյուղական) մանր բուրժուազիայի ամենասակավ զարգացած խավերից, պետք փորձել գահի պաշտպանության համար համախմբելու բուն իսկ ընակչության մեջ եղած բոլոր հետադիմական տարրերին, պետք է խմբակների դեմ ոստիկանության միջոցով պայքարը դարձնել ժողովրդի մի մասի պայքար ժողովրդի մյուս մասի դեմ»:

Ահա, այս տեսանկյունից դիտարկելով հայ-թախարհական ընդհարումները, Լենինն ընդգծում է, որ «Հենց այդպես է այժմ վարվում կառավարությունը՝ Բաքվում թախարհներին գրգռելով Հայերի դեմ»:

Ընթերցողի ուշադրությունն են հրավիրում Լենինի այս մտքի վրա: Ընդգծելով, որ «թախարհներին են գրգռել Հայերի դեմ», Լենինը հստակեցնում է, որ հայ-թախարհական ընդհարումները ցարական իշխանությունների հրահրմամբ սկսել են թախարհները, և ոչ թե Հայերը, որոնք հարկադրված են եղել պաշտպանվել ինչպես Բաքվում, այնպես էլ Անդրկովկասի մյուս բնակավայրերում:

Ես այս հանգամանքը չեչտում եմ, քանի որ ինչպես սովետական տարիներին, այնպես էլ հատկապես այժմ աղբյուրական կեղծարարները 1905-1906 թթ. և հետագա տարիներին տեղի ունեցած հայ-թախարհական ընդհարումների մեջ մեղադրել ու մեղադրում են Հայերին:

Այնուհետև Լենինը գրում է. «Իհարկե, ուսույնական թշնամանք և ցեղային ատելություն հրահրելով՝ կառավարությունը կարող է միառժամանակ կասեցնել դասակարգային պայքարի զարգացումը, բայց միայն կարճ ժամանակով և այն էլ նոր պայքարի դաշտի էլ ավելի ընդարձակման գնով, ինքնակալության դեմ ժողովրդին էլ ավելի զայրացնելու գնով: Ապացույց՝ Բաքվի ջարդի հետևանքները, որը տասնապատկեց բոլոր խավերի հեղափոխական տրամադրությունն ընդեմ ցարիզմի»: (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 9, էջ 409-413):

ՊԱՏԱՍԻԱՆ «ՄՇԱԿ» ԹԵՐԹԻՆ

«Մշակ» թերթը 1905 թ. դեկտեմբերի 7-ին առաջնորդող Հոդվածում անդրադարձնում է Հայ-թուրքական հարաբերությունների մասին սոցիալ-դեմոկրատական Կովկասյան միության կոնֆերանսում ընդունված վերահիշյալ բանաձևին:

«Մենք,- ասված է այդ առաջնորդող Հոդվածում,- մի քանի անգամ խոսել ենք այն պատճառաբանությունների մասին, որ առաջ են բերում մարդիկ Հայ-թուրքական ընդհարումները բացատրելու համար, և Հայտնել ենք մեր կարծիքն այդ պատճառաբանությունների մասին: Այս անգամ կանգ կառնենք մի ձևակերպության վրա, որ առաջ է մղել սոցիալ-դեմոկրատների համազումար-ժողովը: Այդ ձևակերպության մեջ ասված է, որ «Հայ-թուրքական ընդհարումների հիմք ներկայացնում են Հայ-թուրքական մասասների խավար և անգիտակից լինելը, մասասների, որոնք հպատակված են իրենց ազգությունների բուրժուա-ազգայնական իդեոլոգիայի ազդեցության»: Դա սխալ է, իսկ մի բան, որ սխալ է, նա չի նպաստի հրապարակում դրված խնդրի բավարար լուծմանը»:

Շահումյանն անդրադարձել է «Մշակ» թերթի այս առաջնորդող Հոդվածին, հանդես գալով «Кавказский рабочий листок» թերթում 1905 թ. դեկտեմբերի 9-ին: Չհամաձայնվելով «Մշակի» Հոդվածի հետ, Շահումյանը պահանջում է չաղճատել «մեր բացատրությունը՝ կորզելով առանձին կտորներ մեր բանաձևից» և գրում է հետևյալը. «Մենք երբեք Հայ մտավորականությանը չենք մեղադրել Հայ-թուրքական կոտորածների համար: Կոտորածները,- հազար անգամ և բոլոր եղանակներով պարզաբանել ենք մենք ձեզ,- սարքել է ցարական կառավարությունը»:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ ցարական կառավարությունը իր պրոպոկատորական նպատակների համար օգտագործել է մի կողմից՝ թուրք ազնվականության և բուրժուազիայի, մյուս կողմից՝ Հայ մանր ու խոշոր բուրժուազիայի միջև եղած թշնամությունն ու անստադոնիզմը և ընդգծում է, որ «Կոտորածի գլխավոր մասնակիցներն էին թուրք և Հայ ժողովրդական մասասները, որոնք տնտեսապես և իդեապես ստրկացված են իշխող դասակարգերի կողմից և անգիտակից կույր գործիք են նրանց ձեռքում»:

Շահումյանը նշում է, որ Հայ մտավորականությունը, ի դեմս «մշակականների» և «դրոշակականների», ինչպես և մահճանոցային թուրք մտավորականությունը «Հայ-թուրքական տխուր պատմության մեջ մեղավոր են այնքանով, որքանով նրանք, փոխանակ նպաստելու Հայ և թուրք բանվորա-

կան մասասների դասակարգային ինքնագիտակցությունից զարգացմանը, ինչպես որ պետք է վարվելին, եթե այդ մասասների գիտակից կողմնակիցը լինեին,- էլ ավելի միջազնեցին այդ գիտակցությունը, էլ ավելի ամրապնդեցին Հայ և թուրք մասասների ազգային խորթությունն ու ազգային թշնամությունը»:

«Կոտորածի համար,- ընդգծում է Շահումյանը,- ամբողջ Հայ բուրժուական մտավորականությունը մեղադրելը մեր կողմից նույնքան անհեթեթ կլիներ, որքան ձեր կողմից անհեթեթ կլիներ դրա համար պանիպատիստական թուրք մտավորականությունը մեղադրելը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 144-146):

Շահումյանն ազգայնական կոիֆները գնահատելով որպես երկրի ամենամեծ դժբախտություններից մեկը, ընդգծում էր, որ «կորստաբեր ազգային թշնամությունն ու կոտորածներին վերջ տալու համար միակ միջոցը, միակ ճանապարհը՝ դեմոկրատիայի կատարյալ հաղթանակն է»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 204-205):

Ուրեմն՝ ոչ թե ազգամիջյան կոիֆ, այլ Ռուսաստանի ժողովուրդների միացյալ հեղափոխական պայքար ցարիզմի տապալման համար: Եվ Շահումյանը համոզված էր, որ եղբայրասպան կոտորածները կվերջանան միայն այն օրը, երբ կհաղթանակի Ռուսաստանի մեծ հեղափոխությունը և համոզվում էր Հայտնում, գրելով. «Ով ուզում է կատարած լինի իր պարտքը կոտորածների հանդեպ, նա պետք է ամեն կերպ նպաստի այդ փրկարար օրի շուտափույթ գալստյանը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 198):

ԵՐԴՎՅԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐ ԲԱՅԿՈՎԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Բաբելում գործող նշանավոր երդվյալ հավատարմատար, ցարական իշխանության նկատմամբ հավատարմությանը աչքի ընկած Բորիս Բայկովը իր հուշերում անդրադարձնալով 1905-1906 թթ. Հայ-թաթարական կոտորածներին, 1922 թ. գրել է, որ եղել է այդ ընդհարումների վկան և կարող է լրակատար փտահույժությանը ասել, որ դրանք «հրահրվել են ուսական կառավարության կողմից», որը գաղտնի օգտվում էր այդ երկու ազգերի միջև եղած հակադրությունից, թեև դա չէր դրսևորվում արտաքինապես: «1905 թ. առաջին ուսական հեղափոխության ժամանակ,- գրել է Բայկովը,- Բաբուն և նրա չրջանը ներկայացնում էին լուրջ քաղաքական օջախ և ուսական կառավարությունն այդ ազգամիջյան ընդհարումները ասեղծելով, վերացրեց աճող քաղաքական շարժումը, բնակչությանը վախեցնելով քաղաքացիական պատերազմի ուրվականով»:

Հայ-թաթարական կոտորածների կապակցությամբ պատերազմի ժամանակվա օրենքների համաձայն հարուցված քրեական գործերը քննող ռազմական դատարաններում Բայկովը եղել է դատապաշտպան: Նա գրում է, որ այդ գործերից ոչ մեկում չի հաջողվել պարզել այդ ընդհարումների իրական պատճառները և դրանց իսկական ոգևորողների անունները: «Եվ միայն,- չարունակում է նա,- Հայ ահաբեկիչների նետած ռումբից սպանված Բաբվի նահանգապետ իշխան Նակրաչիձեի գործի դատավարության ժամանակ հաջողվում է լույս ափռել այդ կոտորածները կազմակերպելու մեջ իշխան Նակրաչիձեի և ընդհանրապես ռուսական արմինիստրացիայի ունեցած դերի վրա, ընդ որում արմինիստրացիան որոշակիորեն գրգռում էր թաթարներին կատարելու այդ կոտորածները, նրանց սպահովելով զենքով»: (Б. Байков. Воспоминания о революции в Закавказье (1917-1920 гг.), в „Архиве русской революции“, т. 9. с.116).

ԱՌԱՋԻՆ ՀԱՅԵՐԵՆ ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ԼԵԳԱԼ ԹԵՐԹԸ

1906 թ. ապրիլի մեկին Շահումյանի. Սուրեն Սպանդարյանի և Սարգիս Կասյանի ջանքերով հիմնադրվում է «Կայծ» թերթը: Դա առաջին Հայերեն բոլշևիկյան լեզու թերթն էր, որը ցարական իշխանությունների կողմից փակվում է 1906 թ. օգոստոսին, հասցնելով լույս տեսնել ընդամենը 47 համար:

«Կայծ» թերթի առաջին համարի առաջնորդող հոդվածում Շահումյանը պարզաբանում է թերթի խնդիրները, ընդգծելով, որ թերթը «ընկեր և ուսուցիչ պետք է լինի բուրժուական-ազգասիրական գաղափարախոսությանը ատրուկ եղած և այդ ատրուկությունից այժմ ազատվող Հայ բանվորներին»:

Շահումյանը նշում էր նաև, որ թերթը պատասխանելու է հետևյալ հարցերին, թե որոնք են բանվորների նպատակներին համապատասխանող ճանապարհներն ու կույր միջոցները և գրում էր. «Նա կաշխատի իր կարողության չափ ծառայել Հայ բանվորության և նրա բնական բարեկամ ու դաշնակից՝ Հայ աղքատ գյուղացիության շահերին»:

«Սեր թերթը,- այնուհետև գրել է Շահումյանը,- երևան է գալիս պատմական մի արտակարգ պահին: Հեղափոխական այն չրջանը, որում ապրում ենք մենք, դնում է մեր առջև հատուկ խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է ամբողջ ժողովրդի և ամենից առաջ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական ուժերի հսկայական լարումն»:

Շահումյանը ընդգծում էր, որ այդ ամենը մեծ պատասխանատվություն է դնում «Կայծ» թերթի վրա, որը «ուզում է արտահայտել ու ղեկավարել»

հեղափոխական պրոլետարիատի հզոր կույրը, «լուսավորել այն փշոտ ու արյունոտ ճանապարհը, որով ընթանում է Հեղափոխական պրոլետարիատը»:

Միաժամանակ Շահումյանը նշում էր, որ դա շատ դժվարին գործ է «մանավանդ ներկա սև ռեակցիայի տիրապետության օրով և մանավանդ Հայերեն լեզվով հրատարակվող մի օրգանի համար»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 152-155):

Խոսելով «Կայծ» թերթի մասին, կամենում եմ ընթերցողի ուշադրությունը հրավիրել հետևյալ իրողության վրա: «Կայծ» թերթի հրատարակումը, այն էլ Հայերեն ու Անդրկովկասում մոլեգնող ռեակցիայի, ոստիկանական տետրի ուժեղացման և հեղափոխության վայրէջքի պայմաններում, ոչ միայն համարձակություն էր, այլև անմասցորդ նվիրում՝ մնալ այն դատակարգի կողքին, որը հսկայական կորուստներ տալով, հարկադրված էր նահանջել:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ

1906 թ. ապրիլին Ստոկհոլմում տեղի ունեցավ ՌՄԻԲԿ 4-րդ համագումարը, որը Հայտնի է «միավորիչ» անունով: Այս համագումարում բոլշևիկյան թևը մեծամասնություն չէր կազմում: Մեծամասնությունը ներկայացնում էին մենչևիկները:

Չույսած մենչևիկների կազմակերպած սադրանքներին Երևանի և Ալեքսանդրապոլի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները համագումարի պատգամավոր են ընտրում Շահումյանին, որը հանդես էր գալիս «Սուրենին» կուսակցական ծածկանունով: Այն, ինչ մենչևիկները չկարողացան խանգարել Շահումյանի ընտրությանը, փորձեցին իրագործել համագումարում, կասկածանքի տակ դնելով Շահումյանի մանրատի օրինականությունը, առաջարկելով դա չեղյալ համարել:

Սակայն մենչևիկների այս խարդավանքը չի անցնում և համագումարը հաստատում է Շահումյանի մանրատը: Նա ընտրվում է մանրատային հանձնաժողովի անդամ:

Համագումարում Շահումյանը հանդես է գալիս եռանդով, հետևողականորեն մերկացնելով մենչևիկների փորձերը: Հատկապես Շահումյանը մասնակցում է այն հարցերի քննարկմանը, որոնցում արծարծվում էր ազգային հարցը: Նա է ներկայացրել Բուժդի հետ միավորվելու կետի վերաբերյալ բանաձևի նախագիծը, որտեղ սահմանվում էին ՌՄԻԲԿ-ի հետ Բուժդի միավորման պայմանները, ընդգծելով, որ Բուժդը ենթարկվում է ՌՄԻԲԿ համագումարների և Կենտկոմի որոշումներին:

1906 թ. մայիսի սկզբին Շահումյանը արտասահմանից վերադառնում է Թիֆլիս և եռանդուն միջոցներով ձախողում է մենչևիկների փորձերը, որոնք ձգտում էին «կայծ» թերթը իրենց ենթարկել:

Համագումարից վերադառնալուց Հետո Շահումյանը 1906 թ. մայիսի 12-ին, 21-ին և 24-ին «կայծ» թերթում հրատարակում է «ՌՄԻԲԿ վերջին Համագումարը» ծավալուն հորվածաչարք, որտեղ ընթերցողներին է ներկայացնում Համագումարում մենչևիկների և բոլշևիկների միջև ծավալված բանավեճը, որին հարկ չեմ համարում անդրադառնալ:

Միայն կամենում եմ ընթերցողի ուշադրություններկայացնել այդ հորվածում ազգային հարցը շոշափող հատվածը:

Շահումյանը նշել է, որ ՌՄԻԲԿ-ն միշտ ձգտել է, որ ամբողջ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատ բանվորներն առանց ազգերի խտրության միանան և կազմեն մի ընդհանուր սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, որին արգելք են հանդիսացել լեհական, լատիշական և հրեական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները:

Անդրադառնալով վերոհիշյալ ազգային կուսակցությունների կազմակերպական հայացքներին, Շահումյանը գրում է, որ դրանց համաձայն «արդե տարիապես Ռուսաստանում պետք է կազմակերպվի ըստ ազգությունների»: Ըստ այդ կուսակցությունների տեսակետի, «ամեն մի ազգի բանվորություն պետք է ունենա՝ իր ներկայացուցիչը համարվող, իր շահերն արտահայտող և պաշտպանող ազգային՝ թե տեղական և թե կենտրոնական կազմակերպություններ»:

Ստեղծված վիճակը Շահումյանը բացատրում է, գրելով Հետևյալը. «Այդ տեսակ կազմակերպական հայացքները մեր կուսակցությունը Հետևանք էր համարում ազգային այն խորթության ու փոխադարձ դժգոհությունների, որ գոյություն ունի Ռուսաստանում մի կողմից շնորհիվ միապետության ազգային հալածանքների, մյուս կողմից շնորհիվ նրա և բուրժուական կուսակցությունների նացիոնալիստական քաղաքականության»:

Այնուհետև Շահումյանն ընդգծում է, որ «ՌՄԻԲԿ-ն բանվորներին ըստ ազգությունների բաժանելու փոխարեն առաջարկում է ամենուրեք ստեղծել բանվորների ընդհանուր և խառը կազմակերպություններ: Կազմակերպական ազգային սկզբունքի տեղ՝ միջազգային, տարածքային սկզբունքը»:

Իբրև այդպիսի կազմակերպության օրինակ Շահումյանը մատնացույց էր անում Կովկասյան միությունը և նշում էր, որ վերոհիշյալ կուսակցությունները «պահանջում էին ազգային կազմակերպություններ, մենք առաջարկում

էինք տարածքային միաձուլյ կազմակերպություններ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 168-173):

Ասվածի կապակցությամբ Շահումյանն անդրադառնում է Սոցիալ-դեմոկրատական բանվորական Հայ կազմակերպության գործունեությանը, որը շարունակում էր պնդել ըստ ազգությունների կազմակերպվելու տեսակետը:

Շահումյանը չի բավարարվում վերոհիշյալ հորվածի հրատարակումով: Նա մեկնում է մի շարք շրջաններ և տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին ծանոթացնում է 4-րդ Համագումարի նյութերին: Այդ նպատակով Շահումյանն այցելում է նաև Երևան:

Երևան կատարած այդ այցելության մասին Հետաքրքիր տեղեկություններ է հաղորդել Ասքանազ Մուսկյանը: Երևանի սոցիալ-դեմոկրատական կոմիտեի արտակարգ նիստում Շահումյանը երկու ժամ տևող զեկուցում է տալիս Համագումարի մասին:

Ա. Մուսկյանը հիշում է. «Հեղափոխական կուսակցական ավանդներից գուրկ Երևանի կազմակերպության համար գտարյուն բուռն Ստեփանի խտր... մի կատարյալ Հայտնություն էր: Նա պատասխանեց հարցերի մի ամբողջ տարափի, և մեր առաջ պատկերացավ կուսակցությունն իր ամբողջ կյանքով, ֆրակցիաների անհաշտ կոփվր, բոլշևիկների տակտիկական-մարտական ուղին»:

Շահումյանին ուղղված հարցերից մեկն էլ վերաբերել էր «սպեցիֆիկներին»: Մուսկյանը հիշում է, որ այդ «հարցին Ստեփանը մանրամասն պատասխանեց, գուզահեռ քաշելով հրեական Բուճոյի և Հայ սպեցիֆիկների միջև, հիշեցրեց, որ Բուճոյը մենչևիկմի աջ թիւն է, որ ազգային ս.-դ. կազմակերպության սիստեմը մարքսիզմի օպորտունիստական Հարմարեցումն է տիրող նացիոնալիզմին, որ սպեցիֆիկները շատ Հեռու չեն գնացել դաշնակցական մտայնությունից՝ Հայ բանվորների կազմակերպման և դաստիարակության խնդիրներում»:

Շահումյանը Համագումարի արդյունքների մասին զեկուցել է նաև Երևանի կազմակերպության ընդհանուր ժողովում, որին ներկա է եղել 40 մարդ: Նա լինում է նաև Երևանում գտնվող կաշեգործարանում, մասնակցում բանվորների միտինգին: (Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 218-221):

«ԱՀՌԵԼԻ ՉԱՐԻՔ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ»

Վերն արդեն նշվել է, թե «Կայծ» թերթի առաջին համարում Շահումյանն ինչպես էր ներկայացրել այդ թերթի հրատարակման գլխավոր նպատակը: Այս առումով հարկ եմ համարում ընթերցողի ուշադրությունը ներկայացնել «Կայծ» թերթում հրատարակված Շահումյանի բազմաթիվ հոդվածներից միայն մի քանիսը, որոնց միջոցով կարելի է գաղափար կազմել տվյալ ժամանակում տեղի ունեցած իրադարձությունների մասին:

1906 թ. մայիսի 31-ին տպագրված հոդվածում Շահումյանն անդրադառնալով մեկ ու կես տարվա Հայ-թուրքական կոտորածներին, դրանք որակում է որպես երկու հարևան ժողովուրդներին կատարյալ անանկության հասցրած եղբայրասպան կոխի: Նա գրել է. «Բյուրեղատափան կառավարության օպրիչնիկների նյութած դավերը, անարգ պրովոկացիան կարողացավ առեղծել մի մեծ վիճ երկու ժողովուրդների միջև, և կոտորածների չարանենդ ուրվականն ամեն լուպե մահաբեր վհուկի նման կանգնած է այդ բազմաչարչար մասսաների գլխին»:

Այնուհետև Շահումյանը տեղեկացնում է, որ 1906 թ. մայիսի 26-ին սկսել է լույս տեսել ՌՄԻԿԿ Բաբլի կոմիտեին կից Հայկական սեկցիայի և «Հուններթ» կազմակերպության Հայերեն և աղբրեջաններեն «Կոչ-Դեկթ» թերթը, որը «հրատարակ է եկել Համերաշխություն և եղբայրություն նշանաբանով»:

Ողջունելով «Կոչ-Դեկթ» թերթի լույս ընծայումը, Շահումյանը գրել է. «Հայ-թուրքական ընդհարումները դամոկլյան սրի նման կախված են Հայ և թուրք աշխատավոր մասսաների գլխին, իբրև ամենաճախճախիչ ախտյան դասակարգային կռվի գիտակցության: Այդ դասակարգային կռվի գիտակցությունը միմիայն կարող է վերջնական հարված տալ Հայ-թուրքական ընդհարումներին»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 186-188):

1906 թ. Հունիսի 7-ին գրած «Վերջին դեպքերը» առաջնորդող հորվածում Շահումյանը նշում է, որ «Հայ և թուրք աշխատավոր մասսաների չարհերը միևնույնն են, և կոտորածը իր ամբողջ զարհուրելի ծանրությունը ընկնում է Հավասարապես երկու կողմերի վրա» և փաստում է. «Միայն Հայ ժողովուրդը չէ, իհարկե, որ նահատակվում է այդ սարսափներից. ինքը թուրք մասսան, իր սոցիալության և կառավարության ու թուրք իշխող դասակարգերի պրովոկացիայի այդ թշվառ գոհը, նույնքան սուստում ու տանջվում է, որքան և Հայ ժողովուրդը»:

Հայ-թուրքական կոտորածը Շահումյանը չի համարում որպես զուտ ագ-

գային երևույթ և գնահատում է որպես իր ծագումով ու հետևանքներով «մի ընդհանուր չարիք, ընդհանուր դժբախտություն»:

«Հայ-թուրքական կոտորածը,- գրում է Շահումյանը,- մի էջ է այն մեծ տրագեդիայի մեջ, որ կրում է Ռուսաստանի մեծ հեղափոխություն անունը» և ընդգծում է, որ «այդպես պետք է նայել խնդրին, որպեսզի հասկանալ նրա էությունը, որպեսզի իմանալ, թե որտեղից է ծագում դժբախտությունը և որտեղ և ինչպես կարող է նա վերջանալ»:

Շահումյանը զգուշացնում է, որ հարկավոր է հասկանալ ցարական կառավարության ստոր դավերը ու չենթարկվել նրա պրովոկացիային: «Պետք է,- գրում է նա,- աշխատել ամեն կերպ մոտեցնել այն օրը, երբ ժողովուրդը կհասկանա եղբայրասպան կոտորածի ամբողջ փաստակարությունը և կմիացնի իր ուժերը ժողովրդի արյունաբեր թշնամի ուսաց բռնակալության դեմ»:

Շահումյանը եղբայրասպան կոտորածին վերջ տալը կապում է Ռուսաստանի մեծ հեղափոխության հաղթանակի հետ և կոչ է անում բոլոր նրանց, ովքեր ուզում են այդ կոտորածներին վերջ տալ, պետք է նպաստեն «այդ փրկարար օրի շուտափույթ գալստյան»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 196-198):

1906 թ. Հունիսի 9-ին տպագրված «Կովկասյան պատգամավորները դուժմայում» հոդվածում Շահումյանն անդրադառնում է Հայ-թուրքական կոտորածների վերաբերյալ Պետական դրամայի Հայ և թուրք պատգամավորների հարցապնդմանը: Շահումյանը ողջունում է պատգամավորների այդ քայլը և միաժամանակ այն միտքն է հայտնում, որ պատգամավորները չպետք է բավարարվեն միայն հարցապնդում ներկայացնելով: Նրանք, գտնում է Շահումյանը, պետք է «որոշեն իրանց դիրքն այն մեծ քաղաքական կռիվում, որ կատարվում է ամբողջ Ռուսաստանում և որ մասամբ արտացոլվում է այժմ Պետական դրամայում, որտեղ վճռվում է ամբողջ պետության վիճակը, այդ վճռից կախված է, իհարկե, և Կովկասի ապագան»:

Շահումյանն ընդգծում է, որ եթե Կովկասի ներկայացուցիչները ուզում են որևէ քաղաքական դեր կատարել, նրանք պետք է հարեն ոչ թե «օկուպարիտներին» ու կաղեխներին, այլ միանան սոցիալ-դեմոկրատիային: «Ամեն ոք գիտե, գրում է Շահումյանը,- թե ինչ դիրք կբռնեն Պետական դրամայում կովկասյան պրոլետարիատի ներկայացուցիչները: Բայց դեռ Հայտնի չէ, թե քաղաքական ինչ դավանանքի տեր են Հայկական և թուրքական գալատներ ի պատգամավորները»:

Եթե այդ պատգամավորները ուզում են ծառայել աշխատավոր և հարստահարված ժողովրդի, բանվորության ու գյուղացիության շահերին ներկա դեմոկրատական հեղափոխության մեջ, «նրանք վճռականորեն պետք է անցնեն Դուսայի ճախակողմյան կուսակցությունների կողմը, նրանք պետք գործեն Համերայի...կովկասյան սոցիալ-դեմոկրատ պատգամավորների հետ»:

Երկրի ամենամեծ դժբախտություններից մեկը Շահումյանը համարում է ազգայնական կոխը, և գրում է, որ ինչպես երկրի ընդհանուր տնտեսական ու մշակութային առաջադիմության, այնպես էլ կորստաբեր ազգային թշնամությանն ու կոտորածներին վերջ տալու համար «միակ միջոցը, միակ ճանապարհը՝ դեմոկրատիայի կատարյալ հաղթանակն է»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 203-205):

1906 թ. հուլիսի 16-ին «Կայծ» թերթի «Հարկավոր է շտապել» առաջ նորոգող հորվածում Շահումյանը նորից դնում է հայկական գավառներում հեղափոխական շարժումը ծավալելու անհրաժեշտությունը և գրում հետևյալը. «Մի ծանր «ճակատագիր» է հալածում իսկապես հայ ժողովրդին. իզուր չէ, որ այնքան ողբում են միշտ մեր «ազգասերները»: Եվ նկատի ունենալով Ռուսաստանի ամեն մի անկյունում ծավալված հեղափոխական շարժումը, Շահումյանը շարունակում է. «Միայն մեր դժբախտ հայկական գավառներն էին, որ շարունակում էին նիրհել քաղաքական խայտառակ քնով, անփույթ ու անտարբեր այն բոլորի դեմ, ինչով սպրտում էր և ինչով ստանջվում էր համայն Ռուսաստանը»:

Հայտնի էր, որ գոյություն ունեցող տնտեսական-սոցիալական պայմանները, երբ քաղաքներում թույլ էր զարգացած կապիտալը, երբ բացակայում էին ճորտատիրական և կալվածատիրական կարգերը, հայկական գավառներում հնարավոր չէր ուժեղ շարժում առաջ բերել: «Բայց, ինչպես նշում է Շահումյանը,՝ գարնանայի է, որ բռնակալության ազգային-քաղաքական ճնշումները մի կողմից և ազատագրական ընդհանուր փոթորիկը մյուս կողմից, որ պեկոծում է ամբողջ Ռուսաստանը և մասնավորապես Կովկասը, անկարող եղան մի փոքր կենդանություն առաջացնել հայ ժողովրդի մեջ»:

Այնուհետև նկատի ունենալով, ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Կովկասում ծավալված հեղափոխական շարժումը, դրա մեջ մտած հայ պրոլետարիատի հերոսական կոխը բռնակալության դեմ, Շահումյանն այն միտքն է արտահայտում, որ այդ ամենի շնորհիվ վաղուց պետք բացված լինել «մեր գավառների հայ ազգաբնակչության աչքերը», որոնք դեռ մնում են փակ

ված, որ «հայկական գավառները դեռևս կանգնած են Հասարակական-քաղաքական գիտակցության ամենաստոր աստիճանի վրա»:

Եվ Շահումյանը մատնացույց է անում դրա ամենազգիտավոր պատճառներից մեկը՝ հայթուրքական կոտորածը, այն համարելով «հաշտի չարիք Կովկասի համար», որը դաժան միջոց էր մեռնող բռնակալության ձեռքին՝ «փակելու համար հայ և թուրք ազգաբնակչության առաջ հեղափոխական շարժման դռները»:

Միաժամանակ Շահումյանը նշում է, որ ոճրագործ կատալարությունը երբեք իր նպատակին չէր հասնի, «եթե չլիներ մեր և հարևանների կուլտուրական հետամնացությունը, քաղաքական գիտակցության այն թույլ ու պրիմիտիվ ձևը, որ կոչվում է «ազգասիրություն» կամ նացիոնալիզմ»:

Շահումյանն այս ամենը բացատրում է գրելով հետևյալը. «Այդ «ազգասիրությունն» է եղել, որ մարմնացած մեր ազգային բուրժուական կուսակցությունների մեջ, սկզբներում տաճկահայկական դժբախտ դատի, իսկ այժմ հայթուրքական կոտորածի անունով կաշկանդել է հայության միտքը, աչխատել է փակել մինչև այժմ լուստ ճառագայթների ամեն մի մուտք հայկական գավառը»:

Միաժամանակ Շահումյանը հույս է հայտնում, որ աստիճանաբար հայկական գավառներում մուտք գործող քաղաքական գիտակցությունը կնպաստի նույնիսկ ամենահեռավոր գյուղերում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծմանը, որոնք հայ գյուղացիությանը կկազմակերպեն բռնակալության դեմ ընդհանուր պայքարին մասնակցելու համար: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 284-287):

«ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Իր հեղափոխական գործունեության վաղ շրջանից սկսած Շահումյանը կարևորել է ազգային հարցը և հաճախ դրա մասին հանդես է եկել տարբեր ստիժներով: Այդ մասին է վկայում, օրինակ, դեռևս Բեռլինի Համալսարանում սովորելու ժամանակ նրա գրած «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» ռեֆերատը, որը ձեռագիր փրճակում տարածվել էր Բեռլինում սովորող Կովկասից եկած ուսանողների շրջանում:

Բեռլինում ուսանելու ժամանակ Շահումյանը խորապես ուսումնասիրում է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի հայացքներն ազգային հարցի մասին: Նա հատկապես հետաքրքրվում է, թե նրանք ինչ վերաբերմունք են արտահայտել

ընդհանրապես թուրքական բռնակալության դեմ ազատագրական պայքար մղող ժողովուրդների և հասկապես այդ բռնակալական լուծը թոժոփելու համար հայ ժողովրդի ազատագրական պայքարի և հայկական հարցի նկատմամբ:

Այդ մասին են վկայում Շահումյանի գրառումների տեսերերում կատարված քաղվածքները: Ահա, մի քանի օրինակ:

Կ. Մարքս. «Հուլիները, հայերը, պավոնները և արևմտաեվրոպացիները, որոնք հիմնադրվել են ծովային մեծ նավահանգիստներում, իրենց ձեռքին են պահում ամբողջ առևտուրը և նրանք վճռակամորեն ոչ մի հիմք չունեն չնոր հակալուծյուն հայտներու թուրքական բեյերին ու փաշաներին դրանով զբաղվելու հարավորության համար: Հեռացրե՛ք բոլոր թուրքերին եվրոպայից, առևտուրը դրանից ոչնչով չի սուժի»: (K. Маркс, Ф. Энгельс, Сочинений, том 9, стр. 25):

Կ. Մարքս. «Թուրքերն այդ երկրի բնիկները չեն: Փոքր Ասիայում և Հայաստանում նրանք բնակվում են միայն վերջին չորս հարյուրամյակների ընթացքում»: (K. Маркс, Ф. Энгельс, Сочинений, том 9, стр. 5):

Կ. Մարքս. «Եթե Ռուսաստանը Կարսի` Հայաստանի այդ շատ հարուստ և առավել յուրացված մասի հետ միասին տիրի նաև Բաթումին, նա ի վիճակի կլինի խափանելու Տրապիզոնի միջոցով կատարվող առևտուրը Անգլիայի և Պարսկաստանի միջև և կարող է գործողության հնակեստ ստեղծել ինչպես Անգլիայի, այնպես էլ Փոքր Ասիայի դեմ»: (K. Маркс, Ф. Энгельс, Сочинений, том 9, стр. 117):

Կ. Մարքս. «Եթե Կարսը էրզրումի բանալին է, ապա էրզրումը Կոստանդնուպոլսի բանալին է և միաժամանակ այն կենտրոնը, որտեղ խաչաձևվում են Անատոլիայի ստրատեգիական ու առևտրական ճանապարհները»: (K. Маркс, Ф. Энгельс, Сочинений, том 11, стр. 637):

Կ. Մարքս. «Դյումերին մի ամրոց է, որը հատուկ կառուցված է թուրքերից պաշտպանվելու համար»: (K. Маркс, Ф. Энгельс, Сочинений, том 11, стр. 639):

Ֆ. Էնգելս. «Ղորանը և նրա վրա հիմնված մուսուլմանական օրենսդրությունը տարբեր երկրների աշխարհագրությունը և ազգագրությունը հանգեցնում է երկու երկրների և երկու ազգի` հավատացյալների ու անհավատների բաժանելու հասարակ և հարմար ֆորմուլայի: Իսլամն անհավատներին օրենքից դուրս է հայտարարում և մշտական թշնամական վիճակ ստեղծում մուսուլմանների և անհավատների միջև»: (K. Маркс, Ф. Энгельс, Сочинений, том 10, стр. 167):

Ֆ. Էնգելս. «Ամբողջությամբ վերցրած թուրքերի բնածին աստելությունը «գյավուրների» նկատմամբ այնքան է ուժեղ, նրանց սովորությունները և պատկերացումները եվրոպականից այնքան են տարբերվում, որ քանի դեռ երկրում թուրքերը մնում են կառավարող ազգ, նրանք չեն ենթարկվի այն մարդկանց, որոնց իրենց հոգում արհամարում են, նրանց մի քանի անգամ իրենցից ցածր համարելով: Արհամարանքի այդ զգացումը տարածվել է նույնիսկ բանակի կազմակերպման վրա, այն բանից հետո, երբ նա եվրոպական տեսք է ընդունել: Շարքային թուրքը նույնքան ատուժ է գյավուրների կազմակերպությունը, որքան հենց իրենց` գյավուրներին»: (K. Маркс, Ф. Энгельс, Сочинений, том 11, стр. 491):

Ֆ. Էնգելս. (Հ. Աթաբեկյանցին ուղարկած նամակից). «Որքան էլ չնոր հակալ եմ Ձեզանից Հայաստանի դրության վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ տալու համար, այնուամենայնիվ, չեմ կարող ճիշտ և խելացի համարել` դատողություններ անել այնպիսի բաների մասին, որոնք իմ սեփական ուսումնասիրությունների արդյունքը չեն: Մանավանդ տվյալ դեպքում, երբ խոսքը ճշգրիտ ժողովրդի մասին է, որը դժբախտության բերումով գտնվում է թուրքական դեսպոտիզմի Սցիլլայի և ուսական դեսպոտիզմի Խարիբդայի միջև»: (K. Маркс, Ф. Энгельс, Сочинений, том 39, стр. 271):

Այստեղ ուզում եմ ընթերցողին ներկայացնել մի փաստ, որի վրա մեր պատմագրությունը շատ քիչ ուշադրություն է դարձրել: Կ. Մարքսը մշտապես քննադատել է հայկական հարցում Անգլիայի քաղաքականությունը: Այս կապակցությամբ նա ուշադրություն է դարձնում Ղրիմի պատերազմի ընթացքում անգլիական մամուլի հրապարակումներին, որոնցում քարոզվում էր այն միտքը, թե Ռուսաստանն այն միակ երկիրն է, որ փոքր ժողովուրդներին թուրքական լծից ազատելով, նպաստակ ունի նրանց ստրկացնել ու ձուլել, իսկ թուրքիայում նրանք ազատ գոյության ու զարգացման հարավորություն ունեն:

Եվ իբրև այդ տեսակետի ապացույց անգլիական մամուլը 1853 թ. ասպարեզ է բերում իբր Կիլիկիայի հայկական թագավորության ժառանգորդ ավանդուրիստ ոմն Լևոն Լուսինյանին, տարածելով նրա կողմ ուղղված արևմտահայերին:

Կ. Մարքսը, որպեսզի ցույց տա հայկական հարցում անգլիական դիվանագիտության ամբողջ խարդալանքը, հարկ է համարում հրապարակել Լ. Լուսինյանի կողմ, որն ամբողջությամբ մեջբերվում է ստորև:

«Լևոնը, Աստոծ ողորմածությամբ Հայաստանի և այլնի գերագույն իշխանը թուրքիայի հայերին.

Սիրելի եղբայրներ՝ և Հավատարիմ Հայրենակիցներ: Մենք արտահայտում ենք մեր կամքը և բուռն ցանկությունը, որպեսզի դուք մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանեք ձեր երկիրը և սուլթանին ընդդեմ Հյուսիսային բռնակալի:

Հիշեցե՛ք եղբայրներ, որ Թուրքիայում գոյություն չունեն մտրակներ, որ թուրքերը չեն ցավեցնում ձեր ուռնագները և չեն վարկաբեկում ձեր կանանց ոչ գաղտնի, ոչ բացահայտ:

Սուլթանի իշխանության տակ ծաղկում է մարդկայնությունը, Հյուսիսային բռնակալի իշխանության տակ ոչինչ չկա, բացի գազանային բռնություններից: Դրա համար էլ Հանձնեցե՛ք ձեզ Աստծո ողորմածությունը և անձնագրությունը մարտնչեցե՛ք հանուն ձեր երկրի ազատության և ձեր այժմյան իշխանի:

Քանդեցե՛ք ձեր տները բարիկաղներ կառուցելու համար, եթե դուք գնեք չոճեք, ջարդեցե՛ք ձեր տնային իրերը և պաշտպանվեցե՛ք դրանցով: Թող Աստված ձեզ առաջնորդի փառքի ճանապարհին: Իմ միակ երջանկությունը մարտնչելն է ձեր շարքերում՝ ընդդեմ ձեր երկիրը և ձեր Հավատը ճշողների:

Այդ թե՛ս եմ Աստծուն, որպեսզի սուլթանը բարյացակամորեն տրամադրվի Հավանություն տալու իմ կոչին, քանի որ նրա տիրապետության տակ է պահպանվում մեր կրոնի մաքրությունը, այն դեպքում, երբ Հյուսիսային բռնակալի իշխանության տակ մեր կրոնը կկեղծվի:

Հիշեցե՛ք վերջապես, եղբայրներ՝ ր, այս կոչը գրողի անտխներում հոսում է քան թագավորների արյունը, Լուսինյան հերոսների, մեր Հավատքի պաշտպանների արյունը: Մենք ձե՛զ ենք դիմում, մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանենք մեր կրոնի մաքրությունը»: (К. Маркс, Ф. Энгельс, Сочинений, том 9, стр. 141-142):

Ընթերցողին հիշեցնեմ, որ Կ. Պոլսի պատրիարք Վարժապետյանը 1877-1878 թթ ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին նույնպիսի բովանդակությամբ կոնդակ էր ուղղել արևմտահայերին:

Հարկ եմ համարում նշել, որ մեր պատմագրության մեջ դեռևս ամբողջությամբ չի ուսումնասիրվել ու չի ընդհանրացվել Հայաստանի ու Հայկական Հարցի մասին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի դիտարկումները: Առաջին փորձը ձեռնարկել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը 1931 թ. հրատարակած «Էնգելսը և Հայկական Հարցը» գրքում: Նրանց դիտարկումներին առավել Հանգամանորեն անդրադարձել է Սերգեյ Ֆրանգուլյանը 1975 թ. հրատար

րակած «Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ճշգրիտ ժողովուրդների ազատագրական պայքարի մասին» գրքում, որը նույնպես չի ընդգրկում ամբողջ նյութը:

Ինձ մնում է Հուսալ, որ մեր երիտասարդ պատմաբանների մեջ կլինեն ավելի Համարձակ ուսումնասիրողներ, որոնք հաջի չեն առնի մեր օրերում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի անունների նկատմամբ եղած տաբուն և ընթերցող Հանրությունը կներկայացնեն նրանց վերաբերմունքը Հայաստանի ու Հայ ժողովրդի մասին:

Շահումյանը ուսումնասիրում է նաև գերմանական, լեհական, ավստրիական սոցիալ-դեմոկրատ տեսաբանների Հայացքներն ազգային Հարցի մասին:

1906 թ. մայիսի 14-ին «Կայծ» թերթում հրատարակվում է Շահումյանի «Սոցիալ-դեմոկրատիայի ազգային քաղաքականությունը» հոդվածը:

Անդրադառնալով մայիսի 10-ին Պետական դրամայի լիազորների ընտրության մեջ սոցիալ-դեմոկրատիայի տարած Հաղթանակին, Շահումյանը նշում է, որ դա արդյունք է այն բանի, որ Թիֆլիսի բնակչության դեմոկրատական մասերն ընդունում են կովկասցիների համար մեծ նշանակություն ունեցող ազգային Հարցի վերաբերյալ սոցիալ-դեմոկրատիայի տեսակետը:

«Կովկասը,- գրում է Շահումյանը,- որպես աշխարհագրական տարածք, պարունակում է իր մեջ բազմաթիվ զանազան ցեղեր և ազգություններ: Նա որպես քաղաքական տարածք, կազմում է Ռուսաստանի՝ նույնպես զանազան ազգերից բաղկացած, մի մասը՝ «ծայրը»: Պատմական կոնկրետ իրականության այդ փաստը ստեղծել է ազգային շփումներ, բախումներ: Ամբողջ Ռուսաստանը իր ծայրերով Հեծում է այդօրինակ խուլ և բացարձակ ընդհարումների ծանր ու ճշող բեռի տակ»:

Շարունակելով իր միտքը, Շահումյանն ընդգծում է. «Ավելի քան որևէ երկրի՝ Կովկասի գեղ ու փարթամ հողն առատությամբ ոռոգվեց այն հորդահոս արյունով, որը բխում էր այսպես կոչված «թուրք-հայկական կոտորած» աղբյուրից...»:

Այդ ամենն էլ նկատի ունենալով, Շահումյանը Հարցնում է. ինչպե՞ս վերացնել, արմատախիչ անել Ռուսաստանում այդ ազգային բախումները:

Եվ Շահումյանն իր հոդվածը նվիրում է այդ Հարցի պատասխանին: Նա նախ, նշում է, որ սոցիալ-դեմոկրատիան Հենց սկզբից միտժել է ազգերի առանձնացման սկզբունքը և առաջադրել է պրոլետարիատի ազգային քաղաքականությունը, որի էական պայմանն օբյեկտիվ կյանքի զարգացումն է:

Շահումյանը բացատրում է, որ «այլատարր պետության կառավարությունը կենտրոնացած է մի որոշ ազգի դինաստիայի ձեռքում, այդ ազգությունը ստանում է քաղաքական և տնտեսական համեմատական առավելություններ և առաջնություններ: Նա է երկրի մեջ տերը և իշխող տարրը, թեկուզ նույնիսկ զուրկ քաղաքացիական ազատությունից: Իսկ մյուս ազգությունները հպատակ են ոչ թե միայն գերագույն իշխանության, այլ գերագույն ազգության»:

Այնուհետև Շահումյանը նշում է կապիտալիզմի առաջ բերած երկու հակասական միտումները, որոնք մի կողմից քանդում են «զանազան ազգային համայնքների և ջրջանների միջնադարյան չինական պատերը», նրանց միջև ստեղծում է տնտեսական կալույն առնչություններ: Մյուս կողմից էլ առաջ է բերում այն միտումը, որպեսզի միևնույն լեզվով խոսող ազգի տնտեսապես իշխող սոցիալական դասակարգը լինի քաղաքական իշխանության անսահման տեր:

Շահումյանը փաստում է, որ ՌՄԻԲԿ-ն ընդունում է առաջին միտումը և «դրա մեջ է գտնում ճնշվող ազգությունների փրկությունն ու ազատ զարգացումը: Դրա մեջ է գտնում նա այն միակ ելքը, որով կարելի կլինի վերջնականապես լուծել ազգային խնդիրը Ռուսաստանում ընդհանրապես և վերջ դնել զանազան ազգային բախումներին մասնավորապես: Դրա մեջ է գտնում նա անհերքելի երաշխավորություն այդ ազգությունների պրոլետարների իրանց ազատագրության համար մղվող կռվի բազմապատիկ հաջողությունը և մտալուտ հաղթությունը»:

Եվ իբրև սակածի ապացույց, որ բազմազգ Թիֆլիսի պրոլետարիատն ու դեմոկրատական մասերը կանգնած են սոցիալ-դեմոկրատիայի ազգային քաղաքականության վրա, Շահումյանը գրում է. «Միջին ազգային մեր քաղաքականության հաղթանակը չէ այն, որ մարդիկ հետաքրքրվում էին թեկնածուի ոչ թե ազգությունը, այլ նրա քաղաքական դավանանքով:

Միջին մեր սկզբունքի հաղթանակը չէ այն, որ Երբ քաղաքամասում թուրքերն ընտրեցին ոչ թե «հայրենասերներ» դրած բարձրաստիճան և ականավոր թուրք թեկնածուներին, այլ հայ և վրացի բանվոր թեկնածուներին»: (Ս. Բարանդյան, Ստեփան Շահումյան, էջ 168-171):

«ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ»

1906 թ. Հունիսի 27-ին ագրոնոմ-բժիշկ Վ. Վարդանյանը խնդրագրով Թիֆլիսի նահանգապետին դիմում է թույլ տալ հուլիսի 2-ին Հավաքարի Արաքայանի թատրոնում Շահումյանին կարդալու դասախոսություն «Ազգային հարցի մասին»: Վարդանյանը նշում էր, որ «դասախոսության վերջում վրացերեն և ռուսերեն կթարգմանվի վատ հասկացողների համար»: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 12, թ. 1):

Վարդանյանի խնդրագրին կցվել է Շահումյանի գեկուցման հետևյալ համատարագրությունը. «Ազգային հարցի հուլիսյանը. Ի՞նչ է ազգը: Իդեալիստական տեսակետը (պրոֆ. Հեսեն և ուրիշներ), բիրտղգիական տեսակետը (ազգերի զարգացումը ժառանգականության և բնական ընտրության մասին Բագեշտի կապակցությամբ):

Ազգ հասկացության մատերիալիստական վերլուծությունը: Ազգային հարցը 19-րդ դարում: Ազգային պետությունը և ազգությունների պետությունը: Ազգային պրոլետի լուծումը, պետական իրավունքի նացիոնալիստական դարոցը: Նորագույն պետական իրավունքը: Ոչ թե ժամանակակից ինտերնացիոնալ պետությունների բաժանում մանր ազգային գաղութների, այլ լայն դեմոկրատիայի և ինքնավարության իրականացում:

Ազգային հարցը Ռուսաստանում: Ոչ ֆեդերացիա, ոչ ավտոնոմիա, այլ լայն մարզային ինքնավարություն»: (Նույն տեղը, թ. 3):

Հունիսի 29-ին Թիֆլիսի նահանգապետությունից Վարդանյանին հայտնվում է, որ թույլ է տրվել Շահումյանին կարդալ դասախոսությունը: (Նույն տեղը, թ. 2):

1906 թ. հուլիսի 2-ին Թիֆլիսի Հավաքար թաղամասում գտնվող Արաքայանի թատրոնի սրահում Շահումյանը հանդես է գալիս ազգային հարցի մասին գեկուցումով

1906 թ. հուլիսի 5-ին «Կայծ» թերթը հաղորդելով Շահումյանի գեկուցման մասին, նշել է, որ «դասախոսը պարզեց պատմա-մատերիալիստական տեսակետից ազգերի ծագումը և ժամանակակից ազգային հարցի հուլիսյանը»:

Թերթը հայտնում է նաև, որ գեկուցմանը ներկա դաշնակցության անդամներից Թուխչյանը հանդես է եկել և փորձել է առարկել Շահումյանի արտահայտած դրույթները և վիճարկել Շահումյանի հետևյալ տեսակետը, ըստ որի «ազգային հարցը, որպես ժամանակակից սոցիալական պրոլետի մի մասը, կարող է վճռվել վերջնականապես, միմիայն բուրժուական կարգերի ոչնչ-

չացումով»: Թերթը Հայտնում է նաև, որ Շահումյանի պատասխանները «չառ ընկճող տպավորություն թողին ներկա եղած դաշնակցականների վրա»:

Շահումյանն ազգային Հարցի մասին ելույթներ է ունենում նաև Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կոնֆերանսում, ժողովներում, մասնակցում այդ Հարցի շուրջ ծավալված բանավեճերին:

1906 թ. Հուլիսի 5-21-ին «Կայծ» թերթում հրատարակվում է վերահիշյալ դասախոսության հիման վրա Շահումյանի գրած «Ազգային Հարցը և սոցիալ-դեմոկրատիան» աշխատությունը, որը շուտով լույս է տեսնում առանձին գրքով:

Այս աշխատության մեջ պատմական էքսկուրսի միջոցով Շահումյանը գիտականորեն պատասխանում է Հետևյալ Հարցերին. ի՞նչ է ազգը, ե՞րբ և ինչպե՞ս են պատմականորեն առաջացել ազգերն ու ազգային շարժումները: Նա բերում է տոհմային և ցեղային միությունների առաջացման պատմությունը և նշում, որ այդ միություններից աստիճանաբար, առաջնում են «ժամանակակից ազգերը», դա դիտելով որպես «վերջին հազարամյակի ընթացքում» կատարված «վերջին պրոցես»:

Այնուհետև Շահումյանը ցույց է տալիս, թե ինչպես են ժողովուրդները պատմականորեն կազմավորվել որպես ազգություններ: Նա քննադատում է գերմանացի տեսաբաններ Բազելյուսին, Հեսենին և այլոց այն բանի համար, որ նրանք չեն ընդունում ազգի պատմական կատեգորիա լինելը, ժխտում են տարածքի, լեզվի, տնտեսական հարաբերությունների, կրոնի, բարքերի ու սովորույթների միասնությունը: Դրա փոխարեն այդ տեսաբաններն ազգությունը համարում են «ազգային ինքնագիտակցություն», «ազգային գաղափար», «ազգային ոգի»:

Այս տեսակետը գնահատելով որպես ազգային Հարցի մեջ խառնաշփոթություն առաջացնելու միտում, Շահումյանն ընդգծում է, որ դա գիտության Հետ որևէ առնչություն չունի: Նա բերում է լեզվի օրինակը, այն համարելով ազգի բնորոշ գծերից մեկը: Շահումյանը ցույց է տալիս, որ լեզուն Հաղորդակցության միջոց է, առաջ է գալիս «հասարակական արտադրության պրոցեսում», զարգանում է «մարդկանց միջև եղած տնտեսական, քաղաքական, փոխանակային և մշակութային չիման հիման վրա»:

«Որպեսզի հնարավոր լինե՞ր, - ամփոփելով իր միտքը, եզրակացնում է Շահումյանը,- մարդկային հասարակական կյանքը, բացի որոշ արդյունազոր ծովյան նյութական միջոցներից, հարկավոր էր նաև, որ մարդիկ հասկանա-

ին միմյանց, ուրիշ խոսքով, հարկավոր էր ունենալ լեզու, խոսելու ընդունակություն: Լեզուն այդպիսով հասարակական կապակցության հիմնական և անհրաժեշտ պայմաններից մեկն է»:

Շահումյանը նաև նշում է, որ դարերի ընթացքում ասիմիլյացիայի միջոցով մշակվում է կապակցություն կազմող մարդկանց մեջ ընդհանուր լեզուն, որ «զանազան ցեղային բարբառներից ստեղծվել են ժամանակակից ազգային լեզուները»:

Այնուհետև Շահումյանը հանգամանորեն անդրադառնում է ազգերի հասկացության մյուս կարևոր հատկանիշներին՝ ընդհանուր տարածքին, տնտեսական կապերի ընդհանրությունը և այլն: Շահումյանը նշում է, որ ազգերի ձևավորման ու պատմական զարգացման առանձնահատկությունները իրենց կնիքն են դրել մարդկանց հոգեկան կերտվածքի վրա, որով ազգերը նույնպես տարբերվում են միմյանցից:

«Ընդհանուր կյանքը,- չեչուում է Շահումյանը,- տասնյակ ու հարյուրավոր դարերի ընթացքում, ստեղծում է մարդկանց մեջ նաև այլ կարգի հոգեկան կապեր. ընդհանուր մտածողության եղանակ, աշխարհայացք, կրոնական հասկացողություններ, ավանդույթներ, սովորույթներ և այլն»:

Իր աշխատության ակզբում Շահումյանը նշում է, որ ազգային Հարցը, որը 19-րդ դարի ծնունդ է, ժամանակակից պետական իրավունքի «ամենաբարդ ու ամենահետաքրքիր պրոբլեմներից մեկն է» և սերտորեն կապված է «ժամանակակից կապիտալիստական արդյունաբերության և բուրժուական հասարակական կազմի հետ»:

Շահումյանը նաև նկատի ունենալով բազմաթիվ ազգություններ ունեցող Ռուսաստանը, նշում է, որ հենց այդ հանգամանքը դարձել է համընդհանուր ուշադրության առարկա:

Շահումյանը կատարում է Հետևյալ հարցադրումը. «Ինչո՞ւմն է կայանում ազգային Հարցի էությունը և ինչո՞ւ է նա այդքան զբաղեցնում մարդկանց»:

«Ազգային Հարցը,- գրում է Շահումյանը,- հասարակական հարց է, և որպես այդպիսին նա շոշափում է զանազան հասարակական դասակարգերի շահերը: Եվ ամեն մի դասակարգ հանձին իր թեորոնսիկների, ցանկանում է, որ ճանարտություն այնպես լինի, ինչպես այդ ձեռնտու է իրան, այդ դասակարգին»:

Իր միտքն հիմնավորելու համար Շահումյանը բերում է ժամանակակից եվրոպական հասարակությունների օրինակը, որոնք բաժանված են բուրժու-

ազգային և պրոլետարիատի դասակարգերի, և բոլոր խոշոր Հասարակական Հարցերի վերաբերյալ նրանք ունեն տարբեր, հակադիր հայացքներ:

Այդ հայացքների մեջ իսկական ճշմարտությունը, ընդգծում է Շահումյանը, պրոլետարիատի կողմն է, որովհետև «ներկա Հասարակության մեջ ճշմարտությունը Համապատասխանում է միայն պրոլետարիատի դասակարգային շահերին, իսկ բուրժուազիայի շահերը հենվում են միմիայն և ամբողջովին ստի ու կեղծիքի վրա»:

Իհարկե, Շահումյանը չի բացատրում, որ սկզբնական շրջանում, երբ բուրժուազիան նոր էր ձևավորվում, ձգտում էր ազատվել ֆեոդալական Հասարակության ճնշումից և ստեղծել նոր, ավելի ազատ Հասարակական կարգեր: Սակայն ժամանակի ընթացքում այդ նույն բուրժուազիան «դարձել է այժմ եվրոպայում իր օբյեկտիվ դրությունը մի հետադեմ ու վնասակար դասակարգ և այդ պատճառով Հասարակական ճշմարտությունները վնասակար և անմատչելի են այժմ նրա Համար»:

Նշված իրողությունը նկատի ունենալով Շահումյանը գրել է, որ բուրժուական գիտնականները, երևելով իրենց դասակարգային շահերից, ազգային Հարցի շուրջ ստեղծել են «մի միտիկական քող, ներկայացնում են ազգությունը, որպես մի ֆեոդիչ, իսկ ազգային Հարցը, որպես մի անլուծելի Հանելուկ»:

Շահումյանը բացատրում է այդպիսի մտեցման պատճառը, ընդգծելով, որ «ազգային Հարցի շուրջ թանձրացած մատախուղը շատ օգտակար է բուրժուազիայի Համար. նա «անկարող» լինելով պարզել «գիտականորեն» այդ Հարցի էությունը, այնուամենայնիվ, շատ գեղեցիկ կերպով շահագործում է իր դասակարգային տեսակետից այդ Հարցի անորոշությունը, անգիտակից ժողովրդական մասսաների ազգային բնազդները, ազգային նախապաշարմունքները և այլն»:

Իսկ պրոլետարիատը, Համոզված ընդգծում է Շահումյանը, «ամենաբխտ կերպով շահագրգռված է՝ պատռել ազգային Հարցից նրա միտիկական քողը և մերկացնել բուրժուական գաղափարախոսանքի խորամանկ դավերը»:

Այնուհետև Շահումյանը իր աշխատության մի զգալի Հատված նվիրում է այն իրողությանը, որ «մինչև օրս» բուրժուական գիտնականները իրենց Համար չեն կարողացել պարզել, թե ի՞նչ բան է ազգությունը: Իր միտքը հիմնավորելու Համար Շահումյանը բերում է մի շարք բուրժուական գիտնականների արտահայտած տեսակետները, ինչպես օրինակ, Բազեչուտի հետևյալ արտահայտությունը. «Բայց ի՞նչ բան են ազգությունները, այդ ի՞նչ մարդ-

կային խմբակցություններ են, որ մեզ այդքան ծանոթ են թվում, բայց որ միևնույն ժամանակ այնքան անհասկանալի են մեզ Համար: Դա մի շատ դժվարին Հարց է, և ես Հանձն չեմ առնում լիովին պատասխանել այդ Հարցին»:

«Ի՞նչ է ազգությունը» Հարցին բուրժուական տարբեր գիտնականներ տվել են տարբեր պատասխաններ:

Այդ գիտնականներից մեկը նշում է, որ «Ազգությունը միևնույն ժազումն ունեցող մարդկանց մի բազմություն է»: Սեկ ուրիշը ժխտում է դա և կարծում է, որ «Ազգությունը մի տարածքում ապրող մարդկանց խմբակցություն է»: Սեկ այլ գիտնական պնդում է, որ «Ազգության որոշիչ պահը լեզուն է», մյուսն այն կարծիքին է, որ «Ազգության որոշիչ պահը կրոնն է»: Բուրժուական գիտնականներից մեկի տեսակետով էլ «Ազգությունը նշանակում է ազգային ինքնագիտակցություն, ազգային գաղափար, ազգային ոգի»:

Այս տեսակետները նկատի ունենալով, Շահումյանը նշում է, որ դրանք հնարավորություն չեն տալիս հասկանալու ազգային Հարցի էությունը և լուծելու ազգային Հարցը, «միայն մի միտիկական քող են հագցնում այդ Հարցի վրա, միայն մթնացնում ու խճճում են Հարցը»:

Շահումյանը փաստում է, որ ազգությունը մի կողմից «որոշ բնական երևույթ է», մյուս կողմից՝ «մի որոշ Հասարակական երևույթ, Հասարակական Հարաբերություն է»: «Ուրիշ խոսքով՝ բացատրում է Շահումյանը, մի կողմից՝ նա միևնույն տարածքի վրա խմբված, շատ թե քիչ ընդհանուր ծագումով կապված, միևնույն լեզվով խոսող, շատ թե քիչ ընդհանուր կրոնով, բարբերով ու ավանդություններով ապրող միլիոնավոր, երբեմն տասնյակ և նույնիսկ Հարյուր միլիոնավոր մարդկանցից բաղկացած մի բազմություն է, մյուս կողմից՝ նա մի Հասարակական կամ պետական օրգանիզմի տեսակն է»:

Եվ այնուհետև. «...ներկա պատմական շրջանում ընդհանրապես ազգություն գաղափարը՝ նեղ, զուտ բնական իմաստով վերցրած, նույնանում է ազգություն-Հասարակական գաղափարի կամ ազգություն-պետություն գաղափարի հետ»:

Շահումյանը անհրաժեշտ է համարում համառոտ պատմական էքզիկուրա անցկացնել ժամանակակից եվրոպական ազգերի անցած ճանապարհի շուրջ և դրանից հետո Հարցնում է, թե «ներկա ազգային պետությունների զարգացումը Հասն է իր վերջնական կետին և կանգ է առել, թե՞ նա դեռ կշարունակի իր գործը, ստեղծելով հետագա, նոր ու ավելի խոշոր օրգանիզմներ, նոր պետական ձևեր»:

Այս առումով Շահումյանը հիշատակում է «Համեմատաբար նոր ժամանակների ծնունդ՝ մի քանի ազգություններից բարդացած պետությունների» թվում նաև Ռուսաստանը, որոնց սահմաններում, ուրույն սոցիալական և քաղաքական պայմաններով, «ծնունդ է առել... ժամանակակից ազգային Հարցը»:

Շահումյանը նորից պատմական էքսկուրսի միջոցով պարզում է այն Հարցը, թե «ի՞նչ նոր բան են ներկայացնում այդ պետությունները, ինչպե՞ս է ծնունդ առել նրանց մեջ և ինչո՞ւ են է կայանում ազգային Հարցը»:

Զարգացնելով իր տեսակետը, Շահումյանը եզրակացնում է, որ «մի կողմից երևան է գալիս խոշոր միջազգային պետությունների (նկատի ունի բազմազգ պետությունները-Վ. Պ.) անհրաժեշտությունը, մյուս կողմից ազգային դժգոհությունների, բռնության և հարածանքների անխուսափելիությունը»: Այդ հակասությունը Շահումյանը սերտորեն կապում է ժամանակակից կապիտալիստական տնտեսության հետ և ընդգծում, որ «ազգային հակասությունը հասում է ժամանակակից սոցիալական կարգերին և ընդունում է այդ հակասությունից»:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ ազգային անտագոնիզմից օգտվում են «առանձին ազգերի իշխող դասակարգերը, բուրժուազիան և աշխատում են, շահագործական նպատակով, ավելի խորացնել, ուժեղացնել այդ անտագոնիզմը», որի ամենափաստակար արտահայտություններից մեկն այն է, որ երբեմն այս կամ այն ազգությունը խորթ է հայտարարվում պետության մեջ՝ տիրող դասակարգի կողմից և սկսվում են բացի լեզվական, կրոնական և այլն, նաև քաղաքական ճնշումներ և սահմանափակումներ:

«Օգտվելով իր ուժից,- շարունակում է Շահումյանը,- գերակշռող ազգության տիրող դասակարգը, հենվելով պետական մեքենայի վրա, գրկում է այս կամ այն մանր ազգությունը որոշ քաղաքական իրավունքներից և ստեղծում է նրա համար դժոխային կացություն...»:

Ինչպե՞ս լուծել ազգային հակասությունները:

Այս Հարցին տարբեր դասակարգեր տարբեր պատասխան են տալիս, նաև առաջարկում են զանազան միջոցներ «այդ չարիքի դեմ»:

Շահումյանն անդրադառնում է բուրժուական - նացիոնալիստական դպրոցին, որն առաջարկում է «ուղղակի ոչնչացնել ժամանակակից խոշոր միջազգային պետությունները, բաժանել նրանց մի քանի առանձին ազգային պետությունների»:

«Ի՞նչո՞ւ ազգության բուրժուազիայի տեսաբանները,- շարունակում է

Շահումյանը,- ստեղծել են մի սկզբունք, որ ասում է. ամեն պետություն պետք է ազգություն լինի, և նա, այդ բուրժուազիան, առաջնորդվելով այդ սկզբունքով, աշխատում է բոլոր միջոցներով մի ազգություն դարձնել պետության սահմաններում բազմապեզու և բազմացեղ ժողովուրդը»: Սա Շահումյանը գնահատում է որպես իշխող ազգության հարձակողական նացիոնալիզմ:

Հակառակ այս տեսակետին, հարածվող ազգերի բուրժուազիան որպես սկզբունք հայտարարում է, որ ամեն ազգություն պետք է պետություն լինի: Այս սկզբունքն էլ նկատի ունենալով Շահումյանը փաստում է, որ «հարածված ազգերի բուրժուազիաները ձգտում են անդամահատել ժամանակակից մեծ պետությունները», սկզբում կողմնակից լինելով բացարձակ բաժանման, իսկ «այժմ նացիոնալիստների մեծ մասը դարձել են ֆեդերալիստներ» և եզրակացնում է, որ ըստ նացիոնալիստական դպրոցի՝ ազգային Հարցի լուծումը նշանակում է «բաժանել ժամանակակից միջազգային պետությունները մի քանի ազգային պետությունների»:

Այս ամենից հետո Շահումյանն անդրադառնում է այն խնդրին, թե սոցիալ-դեմոկրատիան ինչպե՞ս է նայում ազգային Հարցին և այժմ, ի՞նչ վերաբերմունք ունի դեպի ազգային Հարցը, քանի դեռ գոյություն ունի բուրժուական հասարակությունը:

Շահումյանը նշում է, որ ժամանակակից բուրժուական հասարակության մեջ գոյություն ունեցող կապիտալի և աշխատանքի պրոբլեմ կոչվող սոցիալական հակասությունների անհրաժեշտ և բարդացուցիչ մասն են կազմում ազգային հակասությունները:

«Այդ հակասությունը,- նշում է Շահումյանը,- կարող է վերանայ միայն այն ժամանակ, երբ վերջ կդրվի ներկա սոցիալական կարգերին, երբ աշխատանքը կազատագրվի կապիտալի լծից» և իր միտքը հաստատում է Մարքսի հետևյալ խոսքերով. «Միմիայն մասնավոր սեփականության ոչնչացումը կարող է վերջ տալ ամեն տեսակ բռնության և շահագործության,- մարդու շահագործության մյուս մարդկանց կողմից,- հասարակության մի մասի շահագործության մյուս մասի կողմից, մի ազգի շահագործության մյուս ազգերի կողմից»:

Շարունակելով իր միտքը, Շահումյանը դնում է հետևյալ Հարցը. «Ի՞նչ անել, որպեսզի ըստ հնարավորին դիմադրել կապիտալիստական զարգացման ավերիչ, փաստակար միտումներին, որ անխուսափելի են դարձնում ազգային թշնամությունը» և ընդգծում է. «Սեզ համար չի կարող գոյություն ունենալ իբրև ընդհանուր սկզբունք՝ ժամանակակից միջազգային պետու-

Թյունների անդամահատությունը և ազգային՝ բարոյական բաժանված թե ֆեդերատիվ կապերով կապված՝ պետություններ վերստեղծելը: Խոնարհվելով նոր, ավելի բարձր տեսակի պետական ֆորմացիաների փաստի առաջ, մենք կարող ենք խոսել միայն այն մասին, թե ինչպես դիմագրավենք այն բացասական միտումներին, որ բխում են այդ նոր ձևից»:

Ի՞նչ միջոցներ ունի սոցիալ-դեմոկրատիան այդ նպատակին հասնելու համար: Ի՞նչը կարող է թուլացնել ազգային ճնշումը, որը գործադրվում է մանր ազգերի լեզվի, խոսքի, սովորությունների և այլնի վրա: Ի՞նչը կարող է գրկել իշխող դասակարգերին այս կամ այն ազգը օրենքից դուրս հայտարարելու, նրա իրավունքը սահմանափակելու հնարավորությունից:

Այս հարցերին սոցիալ-դեմոկրատիայի պատասխանը միանշանակ է՝ «Ժողովրդապետության սկզբունքի կատարյալ հաղթությունը, դեմոկրատական քաղաքական կարգերի լիակատար իրականացումը»:

Միակ միջոցը, մատնացույց է անում Շահումյանը, որով պրոլետարիատն ու ժողովրդական լայն մասսաները կարող են պաշտպանվել բուրժուական կարգերի հակառակությունների ու շահատակությունների, այդ թվում՝ ազգային հայածանքների դեմ՝ դեմոկրատիայի գաղափարն է:

Սրանից էլ ելնելով Շահումյանը ներկայացնում է ազգային հարցի լուծման մեջ սոցիալ-դեմոկրատիայի ծրագրային հետևյալ երեք դրույթները.

Առաջին. Քաղաքացիական կատարյալ հավասարություն պետության բոլոր հպատակների համար՝ անխորի ազգից ու ցեղից:

Երկրորդ. Ազգային մշակույթի զարգացման լեզվի, խոսքի, գրականության և այլնի կատարյալ ազատություն:

Երրորդ. Քաղաքական ինքնորոշման իրավունք պետական կազմի մեջ մտնող բոլոր ազգերի համար:

Շահումյանն այս երեք դրույթները պարզաբանում է հետևյալ կերպ.

1. «Քաղաքացիական հավասարությունն անկարելի պետք է դարձնեն մի օրենսդրական սահմանափակում այս կամ այն ազգի վերաբերմամբ: Ամեն մի քաղաքացի հավասարազոր տեղ է իր պետության սահմաններում և ոչ ոք իրավունք չունի բռնաճարտ նրա վրա, ճնշելու նրան իր ազգային ծագումի համար»:

2. «Լեզուների վրա ճնշումը պետք է վերացվի: Ամեն ոք կարող է խոսել և կրթվել այն լեզվով, որով նա ցանկանում է, որով նա կարող է, որով նա ավելի լավ և ավելի ազատ կարող է զարգանալ: Ազգային մշակույթը պետք է ազատ և անձեռնմխելի լինի: Մի պետության մեջ ապրող ազգերի միջև մեր

ձեցումը ցանկալի է, անհրաժեշտ է և անխուսափելի է, բայց այդ պետք է լինի խաղաղ զարգացման և անմիջապես միջոցով և ոչ արհեստական կերպով, բռնության և հայածանքների միջոցով»:

«Ոչ դքի համար, ընդգծում է Շահումյանը, լեզվի, գրականության ճնշումը և սահմանափակումները այնքան զգալի, այնքան վնասակար չեն, որքան պրոլետարիատի համար, և նա պահանջում է լեզվի կատարյալ ազատություն՝ դպրոցներում, դատարաններում, հասարակական ժողովներում և այլն: Նույնպես ոչ ոք իրավունք չպետք է ունենա բռնաճարտ այս կամ այն ժողովրդի կրոնական հայացքների, սովորությունների վրա և այլն»:

3. «Երբ մենք խոսում ենք այն մասին, թե ինչպես է վճռում ազգային հարցը պետական իրավունքի բուրժուական-նացիոնալիստական դպրոցը և հակադրում ենք նրան մեր լուծումը, մենք, իհարկե, այնպես արտույտ և կատեգորիկ կերպով չենք ժխտում սեպարատիզմը կամ ֆեդերալիզմը, ինչպես արտույտ և կատեգորիկ կերպով նացիոնալիստները պնդում են նրանց վրա: Եթե այդպես լիներ, մենք կլինեինք մեր հակառակորդներին արժանի մտաֆիզիկներ և ոչ դիպեկտիկներ...: Հնարավոր են դրություններ, երբ այս կամ այն ազգի վերաբերմամբ մենք կգտնենք ավելի ցանկալի և անհրաժեշտ ֆեդերացիան կամ նույնիսկ կատարյալ անջատում: Այդպիսի դեպքերի համար երկրի սահմանադրությունը պետք է սպահնակ քաղաքական ինքնորոշման իրավունքը: Կամ կարող է լինել այնպիսի դրություն, երբ մի օրեւէ ազգ (նրա թվում, իհարկե, և պրոլետարիատը), որքան էլ այդ հակառակ լիներ նրա ուսույ, օբյեկտիվ շահերին, պահանջում է բաժանումն և պատրաստ է զենքը ձեռքին կռվելու իր պահանջի համար: Արդյո՞ք կատարությունը կամ պետական իշխանությունը իրավունք պետք է ունենա այդպիսի դեպքում դիմելու բռնի ուժի և ստիպելու նրան խոնարհվել իր առաջ: Սոցիալ-դեմոկրատիան չի կարող երբեք թույլ տալ այդ բանը: Պետական սահմանադրությունը պետք է արգելի կենտրոնական իշխանությունը դիմելու զենքի օգնություն, «նվաճելու» և բռնի կերպով ենթարկելու իրան այս կամ այն ազգությունը: Եվ ինչնորոշման իրավունքը տալիս է մեզ այդ անհրաժեշտ սպահնակությունը: Նա կարող է գործադրվել շատ հազվադեպ դեպքերում, բայց և այնպես նա պետք է լինի իբրև պահանջ մեր ծրագրի մեջ:

Ահա թե ինչ և միայն ինչ, ընդհանրապես ասելով (դարձյալ չեչտում ենք վերջինս), կարող է պահանջել պրոլետարիատը ներկա բուրժուական հասարակությունից»:

Այնուհետև Շահումյանն ընդգծում է, որ վերը նշվածով հնարավոր չէ

վերջնականապես վերջ տալ ազգային թշնամանքին ու հալածանքին «քանի դեռ գոյություն ունի տնտեսական կախումը, տնտեսական ստրկությունը, իշխող դասակարգերը կօգտվեն ամեն միջոցից ճնշելու և շահագործելու ժողովրդական մասսաները, նրանք կաշխատեն միշտ իրանց դասակարգային կռիվը դարձնել ազգային կռիվ, կաշխատեն գրգռել մասսաների մեջ ազգային բնազդները, կզարգացնեն նրանց ազգային նախապաշարմունքները և թշնամությունը, որպեսզի օգտվեն հետո դրանցից իրանց շահերի տեսակետից և այլն: Բայց ավելին, ինչպես ասացինք, չի կարելի ձեռք բերել ներկա պայմաններում»:

Եվ վերջապես Շահումյանը ընդգծում է. «Ով խոստանում է պրոլետարիատին տալ ավելի, քան այդ, ով խոստանում է անմիջապես, արմատապես և վերջնականապես լուծել ազգային հարցը, նա-կամա թե ակամա, գիտությունը, թե անգիտությունը, բարի, թե չար նպատակներով-խարում է պրոլետարիատին»:

Ազգային հարցի վերաբերյալ իր տեսակետը շարադրելուց հետո աշխատության եզրափակիչ հատվածում Շահումյանն անդրադառնում է Ռուսաստանում ազգային հարցին, նշելով, թե ազգային հարցի մասին վերը շարադրած իր ընդհանուր դիտողությունների լույսի տակ անհրաժեշտ է խոսել առանձին, սույալ դեպքում մի որոշ պետություն՝ Ռուսաստանի մասին:

Շահումյանը ելնում է այն սկզբունքից, որ «բացարձակ վերացական ճշմարտություններ չկան, որ ճշմարտությունը միշտ կոնկրետ է» և ընդգծում է. «Եթե մենք ընդհանրապես ասում ենք, որ ներկայումս պատմական միտումը տանում է դեպի ազգերի միացումն և ոչ դեպի բաժանումն, դա դեռ չի նշանակում, որ միշտ և ամեն տեղ, ամեն մի առանձին դեպքում, մենք դեմ պետք է լինենք բաժանման և կողմնակից միացման, կենտրոնացման»:

Ելնելով վերահիշյալ ընդհանուր դիտողություններից, Շահումյանը չի բացառում, որ կարող են լինել հակառակ դեպքեր, երբ ելնելով ժամանակի և տեղի պայմաններից, կողմ արտահայտվել որևէ պետության անդամահատմանը:

Նա գտնում է, որ ամեն մի առանձին պետության մեջ, ամեն մի առանձին ազգություն հարցը պետք է քննել առանձին և անկախ, իր ուրույն պայմանների մեջ: Որովհետև կարող է այնպես պատահել, որ որևէ «ազգություն վերաբերմամբ ավելի նպատակահարմար կլինի պահանջել անջատում, կամ ֆեդերացիա, կամ ավտոնոմիա»:

Իր միտքը Շահումյանը բացատրում է հետևյալ ձևակերպումով. «Այդ

կարող է լինել այն դեպքում, երբ այս կամ առանձին ազգության տնտեսական շահերը հակասում են նրա հետ մի պետական մարմին կազմող մյուս ազգերի շահերին, ուրիշ խտրով, երբ այդ ազգությունը փաստորեն մի տնտեսական-հասարակական օրգանիզմ չի կազմում իր կենսակից մյուս ազգությունների հետ»:

«Կամ այն դեպքում,- շարունակում է Շահումյանը,- երբ թեև տնտեսական օբյեկտիվ ոչ մի հիմք չկա, բայց շնորհիվ իրական դրություն, իրանց խրակական շահերի թյուր ըմբռնման, ազգային մասսաների կողմից ստեղծվում են հոգեբանական այնպիսի պայմաններ, որ այլևս անկարելի է դառնում ընդհանուր կյանքը»:

Վերը նշված երկու դեպքերը չի կարելի բացառել ընդհանուր օրենքից, նաև չի կարելի անտեսել, ուստի, ինչպես նշում է Շահումյանը, եթե սոցիալ-դեմոկրատիան դեմ է ֆեդերալիզմին, իբրև ընդհանուր սկզբունքի, «այդ դեռ չի նշանակում, թե մենք սկզբունքով հակաֆեդերալիստներ, սկզբունքով ցենտրալիստներ ենք»: Շահումյանը շեշտում է, որ սոցիալ-դեմոկրատիայի համար պետական կազմի այս կամ այն ձևը սկզբունքի հարց չէ, «այլ քաղաքական նպատակահարմարության հարց»:

Այնուհետև Շահումյանն ընդգծում է հետևյալը. «Մեր միակ հիմնական սկզբունքը, հիմնական չափանիշը՝ երկրի տնտեսական և մշակութային բարգավաճումն է, մարդկանց բարօրությունը: Իսկ դրա համար մենք ունենք շատ բնորոշ, շատ ունակ ու կոնկրետ մի չափ: Դա պրոլետարիատի դասակարգային շահերն են, նրա միջազգային ազատագրական շարժման շահերը»:

Իր տեսակետը հաստատելու համար Շահումյանը բերում է Լեհաստանի օրինակը, նկատի ունենալով, որ եթե 1860-ական թվականներին, երբ Լեհաստանն ապստամբվել էր ու ձգտում էր անջատվել Ռուսաստանից, նրան պաշտպանում էին բոլոր սոցիալիստները: Դրան հակառակ այժմ, այսինքն 20-րդ դարի սկզբին, ինչպես սոցիալ-դեմոկրատները, այնպես էլ բուրժուական փարախարախոսները դեմ են Ռուսաստանից Լեհաստանի անջատմանը, որովհետև այժմ տիրում են այլ պայմաններ: Այն, ինչ օգտակար էր 60-ական թվականներին, այժմ վնասակար է: Եվ միշտ պետք է հաշվի առնել ժամանակի և տեղի պայմանները: Հենց այս էլ նշանակում է, որ «ճշմարտությունը միշտ կոնկրետ է»:

Վերահիշյալ սկզբունքով մտածելու, հասարակական հարցերը քննելու մեթոդով՝ «սոցիալ-դեմոկրատիայի ուժն ու հպարտությունը կազմող դիպելե տիկական մեթոդով» զինված սոցիալ-դեմոկրատիան ինչպե՞ս է վճռում ազգային հարցը Ռուսաստանում:

Այս հարցին Շահումյանը պատասխանում է ամենից առաջ նշելով, որ սոցիալ-դեմոկրատիան ընդհանուր առմամբ «կողմնակից է Ռուսաստանի սահմաններում ապրող ազգերի սերտ միացման, քաղաքական կենտրոնացման: Ոչ մի ազգություն համար նա չի պահանջում անջատումն և ոչ էլ Ֆեդերատիվ կապ, որովհետև այդ բանը չի պահանջում ոչ մի ազգության պրոլետարիատի շահը մասնավորապես և Ռուսաստանի կամ միջազգային պրոլետարիատի շահն ընդհանրապես»:

Այնուհետև Շահումյանը ելնելով պրոլետարիատի շահերի տեսակետից, քննարկում է այն հարցը, թե ինչ առավելություններ է ներկայացնում քաղաքական կենտրոնացումը Ռուսաստանում:

Այս հարցին Շահումյանը պատասխանում է նկատի ունենալով պրոլետարիատի և բուրժուազիայի շահերը և գրում է, որ պրոլետարիատի ուժը կազմում է նրա դասակարգային միջազգային համերաշխությունը, և ընդգծում է հետևյալը. «Թե ներկայումս, այս հեղափոխության ընթացքում, և թե ապագա ազատ Ռուսաստանում, որքան ավելի սերտ կերպով միացած լինեն զանազան ազգությունների բանվորները, այնքան ավելի հաջող կերպով նրանք կարող են կռվել իրանց դասակարգային շահերի համար, այնքան ավելի կատարյալ կլինի դեմոկրատիայի հողթուլությունը ներկայումս և այնքան ավելի հաստատ նրա պահպանման և պրոլետարիատի դասակարգային կռվի հաջողության երաշխիքն ապագայում»:

«Առանձին ազգային պետությունները,- շարունակում է Շահումյանը,- նույնիսկ ավելի սահմանափակ ազգային առանձնացումները (Ֆեդերացիան, ավտոնոմիան) պատնեշներ են կառուցում զանազան ազգերի պրոլետարիատի միջև և բաժանում ու մանրացնում են նրանց դասակարգային կռիվը»:

Իսկ ինչ վերաբերում է բուրժուազիային, ապա նրա համար, ինչպես նշում է Շահումյանը, «որպես իշխող դասակարգի՝ ձեռնառու կլինի, եթե երկիրը բաժանվի ըստ ազգությունների, որովհետև ամեն մի ազգային բուրժուազիա կարող է ավելի լավ շահագործել հանուն «ազգային գաղափարի», «ազգային համերաշխության», հանուն «ազգային արդյունաբերության բարգաձման» իր ազգային պրոլետարիատը: Նա կարող է ավելի հաջողությամբ կռվել ազգային պրոլետարիատի բաժանված և այդ պատճառով թուլացած դիմադրության դեմ»:

Այսպիսով, պրոլետարիատի համար, առանց ազգերի խտրության, անհրաժեշտ է միավորել ուժերը հանուն ազատագրության, իսկ բուրժուազիան, որն արդեն ձեռք է բերել իշխանություն, գործում է «բաժանիր և տիրիր» սկզբունքով:

Շահումյանը նկատի ունենալով, որ գերմանական ռայխստագում բազմաթիվ բուրժուական կուսակցությունների դեմ միայնակ կանգնած է մի պրոլետարիական սոցիալ-դեմոկրատական կուսակցություն, շեշտում է, որ պրոլետարիատի ուժը միության մեջ է, որը «նա կարող է ունենալ միացյալ և անբաժան Ռուսաստանի միացյալ պառլամենտում» և բերում է հայ պրոլետարիատի օրինակը, որին իր շահերով, իր պահանջներով ավելի մոտ է ուսա պրոլետարիատը, քան հայ բուրժուազիան: Հայ պրոլետարիատը գիտե, որ «միացած ուսա, վրացի և այլ պրոլետարիատի հետ ընդհանուր պետական պառլամենտում նա ավելի լավ կարող է հոգալ իր տնտեսական և քաղաքական կարիքները, քան եթե նա հարկադրված լիներ միայնակ գործ ունենալ հայ բուրժուազիայի հետ «ազգային» պառլամենտում»:

Եվ ասվածով էլ Շահումյանը բացատրում է, որ ընդհանրապես պրոլետարիատը կողմնակից է Ռուսաստանի քաղաքական կենտրոնացմանը: Նա նաև նշում է, որ ՌՄԻԲԿ-ի ծրագիրը վարչական ձևերի նկատմամբ պահանջում է ապակենտրոնացում, ինչի մասին ՌՄԻԲԿ-ի ծրագրի 3-րդ կետով պահանջվում է «տեղական լայն ինքնավարություն, չրջանային ինքնավարություն այն տեղերի համար, որ տարբերվում են իրանց ցեղային, կենցաղային կազմով»:

Խոսելով չրջանային ինքնավարության մասին, Շահումյանը նշում է, որ դրա վերաբերյալ տիրող չիտթության պատճառով խառնում են սովորաբար երեք հասկացություն՝ ինքնավարություն, ավտոնոմիա և ֆեդերացիա, որոնք միմյանցից տարբերվում են և հարկավոր է դրանք միմյանցից խստիվ զանազանել: Իր միտքը պարզելու նպատակով Շահումյանը հիշեցնում է, որ «մեր ֆեդերայիստները» Հաճախ գրում են, թե «մենք պահանջում ենք ավտոնոմիա, ֆեդերատիվ հիմքերի վրա... մի խուբով՝ կատարյալ ինքնավարություն»:

Ասվածից ելնելով Շահումյանն ընդգծում է, որ քաղաքական հարցերին ծանոթ ընթերցողը կարող է միայն զարմանալ այդպիսի պահանջի համար և համառոտ կերպով բացատրում է պետական իրավունքի վերահիշյալ երեք տերմինների նշանակությունը:

Առաջին. Ազգերի ֆեդերացիա: Շահումյանը բացատրում է, որ դա «նշանակում է մի այնպիսի պետական կազմ, երբ մի պետության մեջ ապրող զանազան ազգեր բաժանվում են մի քանի ինքնուրույն ու ինքնիշխան քաղաքական մարմինների»:

Շահումյանը բացատրում է, որ ամեն մի ազգություն սկզբից ունենում է

իր Հիմնադիր ժողովրդ, որը «որոշում է, ինչ պայմաններով և ինչ կերպ կապվել մյուս ազգային միավորների հետ»: Այնուհետև յուրաքանչյուր ազգ կազմում է իր պառլամենտն ու կառավարությունը, որոնք «օրենքներ են սահմանում և կառավարում ազգությունը իրանց հայեցողությամբ, առաջնորդվելով միայն այն մի քանի պայմաններով, որ մշակել են իրանք մյուս ազգերի հետ»:

Իր միտքը զարգացնելով Շահումյանը շարունակում է. «Գոյություն ունի երկրում ընդհանուր պառլամենտ, բայց նրա որոշումները պարտադիր են այն չափով, որ չափով նրանք հավանություն են գտնում ազգային պառլամենտի կողմից»: Այդ պառլամենտը կարող է ընդունել ընդհանուր օրենսդրությունը հակասող օրենքներ:

«Մի խտբով,- եզրակացնում է Շահումյանը,- ֆեդերացիայի ժամանակ մի ազգի քաղաքական սովորեցնիտեղը պատկանում է իրան՝ այդ ազգին և մարմնանում է նրա ազգային քաղաքական հաստատությունների մեջ: ...Իսկական ֆեդերացիայի ժամանակ քաղաքական կյանքի ծանրություն կետը գտնվում է ազգային պառլամենտների մեջ. ընդհանուր պառլամենտը և ընդհանուր քաղաքական կյանքը համեմատաբար երկրորդական տեղ են բռնում»:

Երկրորդ. Ավտոնոմիա (ինքնօրինություն): Շահումյանը նշում է, որ ազգերի ավտոնոմիայի ժամանակ էլ գոյություն ունեն ազգային պառլամենտներ, որոնց իրավասության սահմանները որոշում է ընդհանուր Հիմնադիր ժողովրդ: Ազգային պառլամենտի ընդունած օրենքները պետք է վերաբերեն միայն տեղական գործերին և, որպես լրացուցիչ օրենքներ, ոչ մի դեպքում չպետք է հակասեն ընդհանուր պետական օրենսդրության:

«Եթե,- գրում է Շահումյանը,- համեմատելու լինենք միմյանց հետ ազգային ավտոնոմիան և ֆեդերացիան, մենք պետք է ասենք, որ ֆեդերացիան ավելի մոտ է անջատման (սեպարացիային), կամ ուրիշ խտբով՝ սահմանափակ անջատման է, իսկ ավտոնոմիան ավելի մոտ է կենտրոնացման, ուրիշ խտբով՝ սահմանափակ կենտրոնացումն է»:

Այնուհետև Շահումյանն ընդգծում է, որ ավտոնոմիայի և ֆեդերացիայի՝ այդ երկու քաղաքական ձևերի միջև կա «ոչ միայն քանակի, այլև որակի տարբերություն»: Նրանց մեջ կա նաև նմանություն, որովհետև «երկու դեպքում էլ պետությունը բաժանվում է ըստ ազգությունների, ազգերը դառնում են քաղաքականապես ինքնամիտի ու կազմակերպված մարմիններ և քաղաքական իշխանությունը թեև տարբեր չափերով, բաժանվում և ցրվում է ազգային պառլամենտներում»:

Անդրադառնալով չլիանային ինքնավարության գաղափարին, Շահում-

յանը նշում է, որ դա չունի օրենսդրական որևէ ֆունկցիա, որ նա «ընտրովի, դեմոկրատական մի հաստատություն է, որը կոչված է ընդհանուր պառլամենտի տված օրենքների հիման վրա կառավարել ներկա չլիանը, հոգալ նրա մշակութային, տնտեսական և վարչական կարիքները»:

Երրորդ. Շահումյանը հիշատակում է ազգային հարցի վերաբերյալ ՌՄԻԲԿ-ի ծրագրի դրույթը պետության կազմի մեջ մտնող բոլոր ազգությունների համար ինքնորոշման իրավունքի մասին, և անդրադառնալով Կովկասի ինքնորոշման հարցին, նշում է հետևյալը. «Անդրկովկասը կազմում է Ռուսաստանի տնտեսական օրգանիզմի մի մասը և ավելի հեռավանջ, ավելի անկուշտուրական մասը: Իսկ այդպիսի մի մասի համար անհամեմատ ավելի ձեռնառու է, որքան կարելի է ավելի սերտ կերպով կապված լինել ընդհանուր պետական օրգանիզմի հետ: Այս կամ այն չափով բաժանվելով Ռուսաստանից, Անդրկովկասը կդանդաղի իր տնտեսական և մշակութային զարգացման մեջ, իսկ այդ շատ վնասակար է պրոլետարիատի համար»:

Այնուհետև Շահումյանը գրում է, որ «Անդրկովկասը մի բազմալեզու և բազմացեղ զանգված է, որտեղ ամեն մեկը կանգնած է տարբեր մշակութային բարձրության վրա: Եթե պրոլետարիատի քաղաքական-դասակարգային կռիվ ասպարեզն ամբողջովին կամ մասամբ մենք դարձնենք Անդրկովկասը, մենք կստեղծենք այստեղ մի այնպիսի դժոխք, որի նմանը դժվար է երևակայել, մինչև իսկ մեր առաջ ունենալով ներկա թուրք-հայկական արյունաղբի ման: Ամեն մի փոքր ազգություն իր քաղաքական կյանքը պետք է սկսի կոտորածով, արյունահեղությամբ»:

«Մեզ պատասխանում են,- շարունակում է Շահումյանը,- որ ներկա թուրք-հայկական կոտորածի պատճառը միապետական կառավարության պրոպոկացիան է, իսկ ազատ Ռուսաստանում նա այլևս գոյություն չի ունենա: Չարաչար սխալվում եք, պարոններ, եթե կարծում եք, որ այն ժամանակ պրոպոկատորներ չեն գտնվի: Ամեն մի ազգության մեջ կան պրոպոկատորական տարրեր-այդ ազգությունների իշխող դասակարգերը՝ ազնվականությունը, հոգևորականությունը, բուրժուական որոշ խավերը: Ամեն անգամ, երբ այս կամ այն ազդեցիկ տարրին ձեռնառու կլինի պրոպոկացիա կազմակերպել (իսկ այդ կարող է շատ հաճախ պատահել կովկասյան աղջամուղում), նա կզրգուս տգիտության հետ միշտ սերտ կապված ազգային ատելությունը, ազգային բնազդները, և... կհուսի ժողովուրդների արյունը»:

Շահումյանն ընդգծում է, որ կովկասյան պրոլետարիատի համար «ոչ մի դեպքում ձեռնառու չէ պրոպոկացիան և կոտորածը, այդ պատճառով նա երբեք չի պահանջի այնպիսի քաղաքական կարգեր, որոնք անխուսափելի և

խրոնիկական կարող են դարձնել ազգային կոիլը և արյունահեղությունները»։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. առաջին, էջ 237-273)։

Ինչպես այս, այնպես էլ Հետագա աշխատություններում Շահումյանը վճռականորեն պայքարում է դաշնակցականների, վրաց մենչևիկների, աղբյուր-Ջանական մուսավաթականների նացիոնալիստական հայաքցների դեմ և գործել է Անդրկովկասի բոլոր ժողովուրդների միջև համերաշխություն հաստատելու օգտին։

Ազգային Հարցի մասին 1906 թ. Հուլիսի 2-ին Շահումյանի կարդացած դասախոսության վերաբերյալ դաշնակցության «Ալիք» թերթը հրատարակում է մի հոդված, խեղաթյուրելով իրողությունը։ Այդ կապակցությամբ Շահումյանը Հուլիսի 7-ին «Կայծ» թերթում հրատարակած նամակում բողոքում է, որ «Ալիքը» կրճատել, փոփոխել, աղավաղել է իր դասախոսության բովանդակությունը, և դրսևորել է բացարձակ անբարեխղճություն։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. առաջին, էջ 277-278)։

Դաշնակցության «Ալիք» թերթը «Ազգային Հարցը և Ֆեդերացիան» խորագրով հոդվածում անդրադարձել է Շահումյանի դասախոսությանը, բերել է դրա վերաբերյալ մի շարք կարծիքներ և եզրակացրել է. «Դասախոսությունը չէր կազմված ունկնդիրների ճշող մեծամասնությունից մտաւոր կարողությունից համապատասխան, մի հանգամանք, որի վրայ ուշադրություն պէտք է դարձնի յուրաքանչիւր բարեխիղճ դասախոս»։ («Ալիք», Հուլիսի 4, 1906 թ.):

Իհարկե, «Ալիքը» չափազանցում է։ Շահումյանի դասախոսությունը լավ է ուշադրությամբ։ Դրա վերաբերյալ հետաքրքրությունն այնքան է աճում, որ Շահումյանին հրավիրում են մի քանի տեղ նորից խոսելու ազգային Հարցի մասին։ Վերջապես, երբ «Կայծ» թերթի հրատարակումից հետո առանձին տպագրված գրքուկը ձեռքից-ձեռք էր անցնում։ Ահիստում եմ, որ արխիվում չի պահպանվել «Ալիք» թերթի այն համարը, որտեղ հրատարակվել է դաշնակցության երևելի գործիչ Թուփչյանի խոսքը Շահումյանի դասախոսության ընթացքում, բայց դատելով «Ալիք»-ի գնահատականներից, կարելի է եզրակացնել, թե նա ինչ է ասել։

«Ազգային Հարցը և սոցիալ-դեմոկրատիան» աշխատության մեջ քննարկված մի շարք դրույթների Շահումյանն անդրադարձել և որոշ լրացումներ է կատարել «Ռեֆերատ ազգային Հարցի մասին» աշխատությունում, որն առնչապես հավանականությամբ գրել է 1908 թ., բայց առաջին անգամ հրատարակվել է միայն 1957 թ.։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երկրորդ, էջ 286-309)։

«ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԸԱՐԺՈՒՄԸ»

1906 թ. Հունիսի 16-ին «Գյուղացիական շարժումը» առաջնորդող հոդվածում Շահումյանն անդրադառնում է Կովկասում սկսված ազրարային շարժմանը և նշում, որ արևելյան Կովկասում, Երևանի, Բաքվի, Գանձակի նահանգներում, որտեղ կա հոծ Հայ և թուրք բնակչություն, չի զգացվում հեղափոխության շունչը։

Շահումյանը նկատի ունենալով ազգային քաղաքական կուսակցություններին, այս իրողությունը բացատրում է նրանով, որ նրանց մենավաճառներ դարձած դեկավարությունը «կուսությունը ապշեցուցիչ ցինիկությամբ խառնվել են տեղական կյանքի մանր խնդիրներին և ոչինչ չեն արել ազգաբնակչության մշակութային մակարդակի բարձրացման համար, ոչ մի ջանք չեն արել գյուղացիությունը հեղափոխականացնելու և նրան՝ ժամանակակից մեծ դեպքերին նախապատրաստելու համար»։

Թուրք և Հայ գյուղացիությունը, մատնանշում է Շահումյանը, փոխանակ համերաշխությամբ կովելու հողի և ազատության համար, զբաղված են անմիտ եղբայրասպան կոտորածներով և նկատի ունենալով մինչ այդ Լոռիի գյուղացիության վճռական պայքարը, ավելացնում է. «Հայ գյուղացիությունը, որը ներկայացնում է այնքան գեղեցիկ մատերիալ, որպիսի ուժ կարող էր հանդիսանալ կովկասյան կուլի մեջ»։

Շահումյանը սոցիալ-դեմոկրատիայի անունից դիմում է Հայ գավառական մտավորականությանը, գյուղացիության գիտակից մասին, կոչ անելով արթնացնել մասսաներին, կազմակերպել ու համախմբել նրանց «առանց ազգի ու կրոնի խտրության հեղափոխական բանակի շուրջ, կովելու Ռուսաստանի գյուղացիության ընդհանուր լոզունգով»։

«Որքան մեծ լինի ուժը, այնքան մոտ կլինի հաղթանակը,- համոզված գրում է Շահումյանը,- այնքան շուտ կլինի վախճանն ամեն մի պրովոկացիայի, ամեն մի կոտորածի, ամեն մի ասիական շահագործության-բեզբրի, աղաքարների և ամեն մի լրբություն-ինքնակալության ստրուկ չինովիկներին»։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. առաջին, էջ 208-210)։

ԶԻԱԹԻԱՆՈՎԻ ՃԱՌԸ ԵՎ «ԱԼԻՔ»-Ի «ԱԶԳԱՍԵՐՆԵՐԸ»

1906 թ. Հունիսի 16-ին «Կայծ» թերթում հրատարակվում է նաև Եսայի Հոմանյանի «Զիաթիսանովի ճառը և «Ալիք»-ի «ազգասերները» հոդվածը, որը վերաբերում էր Հունիսի 14-ին «Ալիք» թերթում տպագրված «Ինչո՞ւ զարմանալ» անստորագիր հոդվածին:

Վերն արդեն հիշատակված Պետական դրամայում Հայ և թուրք պատգամավորների հարցապնդման կապակցությամբ հրատարակվել է նաև թուրք պատվիրակ Զիաթիսանովի ճառը, որը, ինչպես նկատում է Եսայի Հոմանյանը, «աստիճակ գայրացրել է «Ալիք»-ի «ազգասեր» ու «ճշմարիտ Հայ» հրատարակախոսներին»:

Եսայի Հոմանյանը իր հոդվածում մեջբերում է Զիաթիսանովի ճառի հետևյալ հատվածը. «Կառավարությունն ալիլի զիջողաբար էր վերաբերվում վերջին ժամանակներս մեզ թուրքերիս, որովհետև մենք քնած էինք ամբողջ Հարյուր տարի: Մենք Հաչտ ապրում էինք Հայերի հետ, և ոչ մի զինված ընդհարում տեղի չէր ունենում մեր մեջ: Մեզ սկսեցին հավատացնել, որ Հայերը ուզում են սեփական թագավորություն ստեղծել և կանել թուրքերին: Իսկ Հայերին վախեցնում էին պանիպամիզմի ուրվականով: Բավական է սկիզբ դնել պատերազմին, արյունոտ վրեժխնդրության սովորությունը լրացրեց գործը: Բավական է երկու տարի է մենք լրդում ենք արյան ծովի մեջ...»:

Ամեն մի անաչառ ու շովինիզմից չկուրացած մարդ գոհունակությամբ պետք է կարդա այս հակիրճ, խելացի և անկեղծություն բուրոզ սողերը, բայց, ինչպես նշում է Եսայի Հոմանյանը, դա «խելագարության է հասցնում «սոցիալիստ» դաշնակցականներին և Հայհոյանքներ են, որ թափվում են թշվառ Զիաթիսանովի գլխին...»:

«Ալիք»-ի հրատարակախոսներին հատկապես գայրացրել է Զիաթիսանովի այն խոսքերը, թե «Մեզ հավատացնում էին, որ Հայերը ուզում են ստեղծել իրանց թագավորությունը և կանել թուրքերին»: Եսայի Հոմանյանը նորից մեջբերելով այս խոսքերը, դիմում է «Ալիք»-ի հրատարակախոսներին, հարցնելով. «Մի՞թե սուտ է, որ թուրք տգետ մասսաների վրա մութ ուժերը, պրովոկացիան, ազդում էին գլխավորապես հենց այդ տեսակ «աստապելներով»:

«Մենք գիտենք,- շարունակում է Եսայի Հոմանյանը,- որ «սեփական թագավորություն ստեղծելու» ցանկություն Հայ ժողովուրդը չի ունեցել երբեք, այդ ցնորքներով ապրել են միայն որոշ ժամանակ «հեղափոխական» կոչվող մի խումբ քաղաքական մանուկներ (կճամաչեք երևի նրանց, չէ՞, պարոններ,

նրանք, կարծեմ մինչև օրս էլ սրտի խորքում չեն դադարում փայփայել այդ ցնորքները)»:

Այնուհետև Եսայի Հոմանյանը բացատրում է, որ Պետական դրամայում Զիաթիսանովի արտասանած խոսքերի մեջ չի սալվում, թե Հայ ժողովուրդը խիստ պես ձգտել է ստեղծել իր թագավորությունը և որ այդ է եղել թուրք ժողովրդի թշնամության և կոտորածների պատճառը:

«Ընդհակառակը,- ընդգծում է Եսայի Հոմանյանը,- այնտեղ սալած է, որ այդ է եղել պրովոկացիայի մի միջոց կառավարության ու թուրք խուլիգանների ձեռքին»:

Եսայի Հոմանյանը նորից մեջբերում է Զիաթիսանովի խոսքերից հետևյալը. «Իսկ Հայերին վախեցնում էին պանիպամիզմի ուրվականով» և նշում, որ այդ խոսքերն ստանձնապես գայրացրել է «Ալիք»-ի հրատարակախոսներին:

«Մի՞թե սուտ է,- գրում է Եսայի Հոմանյանը, որ «Հայ ժողովրդին վախեցնում էին պանիպամիզմի ուրվականով» և շարունակում. «Իմացեք ձեր հիշողությանը «Ալիք»-ի հարգելի խմբագիրներ. փորձեցեք հիշել՝ ձեզանից ամեն մեկը քա՛նի տասնյակ լրագրական էջեր է մրտուել, քանի-քանի անգամ, թե այստեղ թիֆլիսում, և թե մանավանդ զավառներում հրատարակային դասախոսություններ է կարդացել պանիպամիզմի մասին, աչխատել է հավատացնել ժողովրդին, որ Հայ-թուրքական կոտորածի հիմնական պատճառը, Հայի թշվառության գլխավոր աղբյուրը պանիպամիզմն է: Մի՞թե դա չի նշանակում «վախեցնել» ժողովրդին... Թե՞ դուք ուզում եք ասել, որ Հայ ժողովրդին ոչնչով չի կարելի վախեցնել»:

Հայ-թուրքական կոտորածը,- գրում է Եսայի Հոմանյանը,- Հայ և թուրք ժողովուրդների հանցանքը չէ, այլ նրանց դժբախտությունը» և ընդգծում է. «Հարկավոր չէ ... անմեղ գառնուկներ ձևանալ այն մարդկանց, որոնք անմեղակից չեն ժողովրդի տգիտության մեջ, որոնք սխառմաստիկաբար գիտությունը, թե անգիտությունը-միջնացրել են ժողովրդի ինքնագիտակցությունը և պարարատացրել են իրանց «գործունեությունը» այն հողը, որի վրա բուսել է արյունոտ պրովոկացիան»: (Ստ. Եսայի Հոմանյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 211-214):

«ՀԱՅ-ԹՈՒՐԶԱԿԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՆ»

1906 թ. հուլիսի 30-ի «Կայծ» թերթում Շահումյանը հրատարակած «Հայ-թուրքական պրովոկացիան» առաջնորդող հոդվածում նշում է, որ «Հայ-թուրքական կոտորածը մի դավադրություն էր, որ կազմեցին միապետական բյուրոկրատիան մի կողմից և թուրք խուլիզանությունը (թուրք բեգերը, աղալարները և այլն) մյուս կողմից՝ ընդդեմ Ռուսաստանի Հեղափոխական շարժման»:

Շահումյանը անարգանքի պլանին է գամում ցարական կառավարությունը, որի «նպատակների համար օգտակար էր բարեկամ ձևանալ թուրքերին և ուղղել թիրամտիներն ու հրացանները հայերի դեմ, այժմ նույն նպատակների համար հարկավոր է փոխել իր դերը և բարեկամ ձևանալ հայերին»:

Շահումյանը զգուշացնում է, որ Շուշիի, Զանգեզուրի գեներալ-նահանգապետ նշանակված Գորոչսպարը միջոցներ է ձեռնարկում թուրք ու հայ մասսաների արթնացող գիտակցությունը նորից միմյանց ներքև, նորից ազգամիջյան կոտորած սարքերու համար: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 299-301):

«ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ»

Ինչպես հայտնի է, 1906 թ. մայիսի 10-ին Ամենայն հայոց կաթողիկոս Սևրտիչ Նիրինյանը հրատարակած կոնդակով ընտրովի էր դարձրել հոգևոր վարչական հաստատությունների պաշտոնյաներին, որոնց ընտրությունը պետք է կատարվեր հայ բնակչության կողմից ընտրված պատգամավորների ժողովում:

Այս պատգամավորների ընտրության շուրջ ծավալված սուր պայքարին է անդրադարձել Շահումյանը 1906 թ. օգոստոսի 2-ին «Կայծ» թերթում հրատարակած «Ընտրողական պայքարը» հոդվածում:

Շահումյանը նշում է, որ պատգամավորների ընտրության գործում իրար դեմ գլխավորապես պայքարում են դաշնակցությունն ու մշակականները և կատարում է հետևյալ հարցադրումը. «Ի՞նչ գաղափարների, ի՞նչ լողունգների շուրջ և ի՞նչ ձևերով է մղվում այդ պայքարը, ո՞ւմ են ներկայացնում այդ կուսակցությունները, ի՞նչ նպատակներ ունեն»:

Հիշեցնելով 14-15 տարի առաջ տեղի ունեցած կաթողիկոսական ընտրությունները, Շահումյանը նշում է, որ այդ ժամանակ պայքարող մշակականների և նոր-դարականների բանակումի ու պայքարի մեջ «ամբիջ հասարակական իմաստ և գաղափարական բովանդակություն կար, քան այժմ այդ ընտրությունների մեջ»:

Շահումյանն ընդգծում է, որ ոչ մի գաղափար, ոչ մի լողունգ չկա կարեւոր, ազատամիտ մշակականների և կվադր-սոցիալիստ դաշնակցականների պայքարի մեջ: Այդ պայքարն ընթանում է բացառապես անձնավորությունների միջև և կրում է «թայֆայական բնավորություն»:

Այդ կովում, ինչպես նշում է Շահումյանը, մարդիկ ոչ մի սրբություն չեն ճանաչում և իբրև փաստարկ օգտագործում են բռնություն, ծեծ, խարդախություն, միաժամանակ ընդգծում, որ «դաշնակցական ենթիշերիները գերազանցում են ուս բռնակալության ոտիկաններին»:

Եվ այս բոլորի պատճառը Շահումյանը բացատրում է հետևյալ կերպ.

Առաջին. «Ազգային Սահմանադիր ժողովը «վերևից» տված, դաշնակցական բռնացքի ու խանչալի ծայրի միջոցով «խլված» մի հաստատություն է և ոչ ժողովրդական պահանջի արդյունք, գիտակցված հասարակական կարիքի ծնունդ»:

Երկրորդ. Երկու պայքարող կուսակցությունները, չնայած արտահայտած սուբյեկտիվ հակառակ կարծիքներին, «միևնույն հասարակական խավերի, միևնույն դասակարգի ներկայացուցիչներն են և հետևապես նրանց միջև չի կարող հասարակական-գաղափարական հողի վրա որևէ լուրջ պայքար մղվել»:

Երրորդ. Մշակականներն ու դրոշակականները, չնայած փոխադարձ հայհոյանքներին, միևնույն մեղալի երկու կողմերն են, միևնույն բուրժուազիայի հարազատ զավակները, «այն միակ տարբերությամբ թերևս, որ նրանց մի մասը սիրահար է քնքուշ ժպիտների, մյուսը՝ բռնացքի ու վատողի»:

Շահումյանը «Իրոշակը» համարում է «Մշակի» արտասահմանյան հրատարակությունը վերջին 10-15 տարիների ընթացքում: «Նրանք,- գրել է Շահումյանը,- իրար չեն խանգարել, ծառայել են միևնույն բուրժուական գործին, աշխատել են խեղդել կովկասահայերի մեջ ամեն մի Հեղափոխական ինքնագործունեություն և թունավորել են հայ բանավորական հոգին ու գիտակցությունը»:

Շահումյանը համոզված նշում է, որ այդ ամենից և այդ ձևով նման տարրերից կազմված Սահմանադիր ժողովից հայ ժողովուրդը ոչ մի օգուտ չի ստանա:

«Դաշնակցական բռնացքը,- փաստում է Շահումյանը,- ուզում է թագավորել հայկական կյանքում, հաստատել ամեն տեղ իր գիեվորական դիկտատուրան, ձեռք գցել բոլոր ազգային հիմնարկությունները, ստեղծել իր արբանյակների համար չար-չաղ պաշտոններ»:

Իր հոդվածը Շահումյանն ավարտում է հետևյալ խոսքերով. «Զինվորա-

կան դիկտատուրան վերջին խոսքն է վինելու մեռնող միապետական բյուրուերատիայի. նույն այդ գինվորական դիկտատուրան վերջին խոսքը կլինի և մեր ազգային դաշնակցական բյուրուերատիայի»։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. առաջին, էջ 302-305)։

«Մշակ» թերթն անմիջապես արձագանքում է Շահումյանի Հողվածին, նշելով, թե «Զորքը գործ չունի ներքին թշնամու հետ։ Ինքնապաշտպանության համար ստեղծված գինվորական կազմակերպությունը (իմս. դաշնակցությունը) չպետք է խառնվի մեր հասարակական գործերի մեջ, չպետք է թեթաղեն մեզ իր կամքը»։

Շահումյանը պատասխանում է «Մշակ»-ին, 1906 թ. օգոստոսի 4-ին «Կայծ» թերթում հրատարակած «Զորքը չեզոք պետք է վինի» Հողվածով։ Նա հիշեցնում է, որ շատ հաճախ միապետության հավատարիմ ծառաներն աղաղակում են, երբ զորքը իր համակրանքն է արտահայտում Ռուսաստանի ազատագրական շարժմանը, երբ նա բռնակալության ձեռքին չի դառնում կույր գործիչ։ Նրանք այդպիսի դեպքերում աղաղակում են նաև այն մասին, թե զորքը գոյություն ունի միայն արտաքին թշնամու դեմ կռվելու համար։

Զուգահեռ անցկացնելով իր բերած փաստի և «Մշակ» թերթի Հողվածում նշված վերոհիշյալ մտքի միջև, Շահումյանը, ի նկատի ունենալով, որ բուրժուազիան պրոլետարիատի ազատագրական պայքարը միշտ արյան մեջ է խեղդել զորքի ուժով, գրել է, որ այդ ոճրագործ սուտը կրկնում է այսօր ազատամիտ «Մշակը», ասելով, թե «դաշնակցությունը չպետք է խառնվի հասարակական գործերի մեջ. նա կոչված է ծառայելու միայն «ինքնապաշտպանության» «սուրբ գործին», դաշնակցության «գինվորները» ներքին թշնամի չպետք է ճանաչեն»։

«Ա-իս, դուք կեղծավոր և խարդախ բուրժուաններ», - բացականչում է Շահումյանը և գրում հետևյալը. «Ձեզո՞ք» էր հայ «զորքը», երբ իր ամբողջ ուժն ու ազդեցությունը գործ էր դնում, որպեսզի տաճկահայկական դատով զբաղեցնեն ռուսահայ ժողովրդական մասսաները, երբ նա «ուժերի ջատական» և «հայրենիքի դավաճանություն» էր հայտարարում հայ պրոլետարիատի կոխը հայ բուրժուազիայի և ռուսաց բռնակալության դեմ, երբ իր գինված հրոսակներով մտրակների օգնությամբ ցրում էր գործադուլի համար հավաքվող հայ բանվորներին, երբ մահվան սպառնալիքով նա արգելում էր ամեն տեղ հայ գավառներում սոցիալիստական պրոպագանդան»։

«Հարցնում ենք ձեզ,- շարունակում է Շահումյանը,- այն ժամանակ չեզոք էր հայկական «զորքը»։ Ապա ինչո՞ւ այն ժամանակ դուք չէիք բողոքում բռնությունների դեմ, չէիք ասում, որ գինվորները «չպետք է խառնվեն ներքին գործերի մեջ, չպետք է թեթաղեն մեզ իր կամքը»։

բում բռնությունների դեմ, չէիք ասում, որ գինվորները «չպետք է խառնվեն ներքին գործերի մեջ, չպետք է թեթաղեն մեզ իրանց կամքը»։

Այնուհետև Շահումյանը նշում է, որ «թուխյանների անմիջական հրամանատարության տակ գտնվող «զորքի» օգնությամբ» ազգային ժողովի համար ընտրվում են Թուխյան կամ Ահարոնյան տիրացուները և դա գնահատում է որպես «դժբախտություն հայ ազգի համար»։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. առաջին, էջ 306-308)։

Էջմիածնի ընտրությունների վերաբերյալ Շահումյանն իր տեսակետը հայտնել է նաև 1906 թ. օգոստոսի 11-ին Թիֆլիսի առաջնորդարանի դահլիճում տեղի ունեցած Թիֆլիսի և նրա գավառների պատգամավորների ընտրության ժողովում։ Այդ մասին հաղորդում է հրատարակել «Նոր խոսք» թերթը 1906 թ. օգոստոսի 18-ին։

Շահումյանը պատգամավոր չէր և այդ պատճառով նրան, որպես կողմնակի անձի, փորձում են երույթի համար խոսք չտալ։ Բողոքելով այդ արգելքի դեմ, այնուամենայնիվ, Շահումյանին հնարավորություն է տրվում ասել հետևյալը. «...Ներկա պատվիրակները քարոզապես իրավունք չունեն իրանք իրանց ներկայացնել Թիֆլիսի և իր գավառի հայ ազգաբնակչության կամքը ներկայացնողներ, քանի որ նրանք ընտրված են ոչ թե չնչին իսկ մեծամասնության կողմից, այլ ընդհակառակը, Թիֆլիսի հայ ժողովրդի ամենաչնչին տոկոսի կողմից, ոչ մի եկեղեցում ծխակամների մեծամասնությամբ ընտրություն չի կատարվել, այլ, ընդհակառակը, ամենափոքրամասնությամբ»։

Իր խոսքի վերջում Շահումյանը ցանկություն է հայտնում, որպեսզի «ներկա պատվիրակները քաղաքացիական քաջություն ունենային այստեղ և էջմիածնում հայտարարեն, որ իսկապես իրանք չեն ներկայացնի հայ ազգաբնակչությունը, ուրեմն և նրա կամքի ներկայացուցիչները չեն»։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. առաջին, էջ 314-315)։

«ՄԵՆԸ ՉԵՆԸ ՀԱՎԱՏՈՒՄ ՁԵՐ ԱՆԿԵՂԾՈՒԹՅԱՆԸ»

Ինչպես վերև արդեն նշվել է, դաշնակցությունը 1904 թ. մայիսին դիմել էր Սոցիալիստական միջազգային բյուրոյին 2-րդ Ինտերնացիոնալի մեջ ընդունվելու խնդրանքով։ Սույն աշխատության հաջորդ էջերում դեռ առիթ կլինի այդ խնդրին ավելի հանգամանորեն անդրադառնալ։ Հարկ է այստեղ միայն նշել, որ դաշնակցությունն այդ նպատակին հասնելու համար իր մասնի միջոցով հրատարակել էր հանում իր սոցիալիստական բնույթն ապացուցելու փաստեր։

Այդ փաստերից մեկն էլ հրապարակվել էր 1906 թ. ամռանը «Ալիք» թերթում, որտեղ մինգրեցի գինավորների դատին նվիրված «Ազատութիւն 27 գինւորներին» հոդվածի մեջ նշվել էր. «Պրոլետարիատի ղեկավար երկու խոչոր կազմակերպություններն էլ՝ Հ. Յ. դաշնակցությունը և սոցիալ-դեմոկրատիան առանձին-առանձին թռուցիկներով գործադուլ յայտարարելով, կոչ էին ուղղել թէ գինւորներին և թէ «ընկերներին ու քաղաքացիներին», բողոքի ու ցասման կոչ ընդդէմ մահաւան պատժի, ընդդէմ 27 գինւորների դատարարութեան»։ («Ալիք», հունիսի 24, 1906 թ.)։

«Դրօշակ»-ը նույնպես 1906 թ. հուլիսին հայտնելով մինգրեցյան գնդի 27 գինավորների դատավարության մասին, գրում է. «Այսօր դատում են 27 գինւորներին։ Բոլորն էլ մօտիկ ազգաբնակչութեան սրտին, սրա բուռն սէրն են վայելում։ Եւ որպէս թարգման ժողովրդի այդ խորը զգացմունքի, քաղաքիս յեղափոխական կազմակերպութիւնները-դաշնակցութիւնը, սօցիալ-դեմոկրատները առանձին թռուցիկներով ազդարարեցին ընդհանրութեանը, որ «իրենք երբէք թոյլ չեն տայ՝ այդ հերոս գինւորների թանկագին կեանքին դիպչելու»։ («Դրօշակ», հուլիս, թիվ 7, 1906 թ.)։

«Ալիք» թերթի վերահիշյալ հոդվածի կապակցությամբ Շահումյանը 1906 թ. հունիսի 30-ին «Կայծ» թերթում հրապարակում է «Դաշնակցությունը՝ «պրոլետարիատի ղեկավար» հոդվածը։

Դաշնակցությանը պրոլետարիատի ղեկավար անվանելու «Ալիք»-ի հրապարակումը Շահումյանը գնահատում է որպես ցինիկություն և պատմում է, թե ինչպես «Թիֆլիսի գործաթող հացթուփների ժողովում մի երիտասարդ դաշնակցական աղաղակում էր «Կեցցե՛ սօցիալիզմը, կեցցե՛ բանվոր դասակարգի շահերի պաշտպան դաշնակցությունը», բոլոր ներկա գտնվող դաշնակցականներն անաչելով նայում էին միմյանց և կարմրում»։

Այնուհետև Շահումյանը նշում է, որ ամենից շատ կարմրում էր ժողովի նախագահ Թոփչյանը, որը և «Ալիք»-ում հրապարակված հոդվածի հեղինակն էր։

«Ամբողջ 15 տարիների ընթացքում,- գրում է Շահումյանը,- խոսել «ազգային» ներքին համերաշխության մասին, հակադրել իրան սօցիալ-դեմոկրատիային հենց նրանով, որ սօցիալ-դեմոկրատիան պաշտպանում է «մի դասակարգի» շահերը, իսկ դաշնակցությունը «ամբողջ ազգի շահերը», հանդիմանել ս.-դ.-ներին, մինչև անգամ «դավաճաններ» անվանել, որովհետև նրանք «դասակարգային կռիվ են առաջացնում» հայկական կյանքում, մտրակներով ցրել գործադուլ անող պրոլետարներին և հրահանգել նրանց, որ

չհանդգնեն խանգարել «ազգային դիսցիպլինան» և այլն, և այլն,- հետո հանկարծ կանգնել և հայտարարել «մենք պրոլետարիատի ղեկավարներն ենք»,- այդ անվազն... ամոթ է, պարոններ»։

Շահումյանը ուրախություն է հայտնում այն քանի համար, որ «երեկվա բանվորական հարց չճանաչող մեծամիտ «ազգասերները» խոնարհվում են պրոլետարիատի առջև և ընդգծում հետևյալը. «Երեկ չէ առաջի օրը դուք աղաղակում էիք, որ հայ ժողովրդի միակ «մտահոգությունն առարկան» պետք է լինի տաճկահայ դատը և երդվում էիք ոչ մի դեպքում չենթարկվել «սպիտակ սուլթանի» պրովոկացիային և «Ճյատիկ հայ հեղափոխական ուժերը»։ Երեկ բանվորական շարժման ազդեցություն տակ մի փոքր արթնացած հայ մասսայի հրամայական պահանջի հանդեպ՝ դուք զիջեցիք և ճանաչեցիք «ոռուսահայ դատի» գոյությունը։ Այսօր, նույն այդ բանվորական շարժման հորձանքի առաջ, դուք չեք բավականանում «ոռուսահայ դատ» անորոշ բառերով և արդեն խոսում եք «աշխատավոր ժողովրդի և մինչև անգամ ուղղակի պրոլետարիատի մասին»։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 224-227)։

«Ալիք» թերթը, մոռանալով, որ մի քանի օր առաջ (1906 թ. հունիսի 24-ին) Հ. Յ. դաշնակցությունը և սօցիալ-դեմոկրատիան անվանել էր «պրոլետարիատի ղեկավար երկու խոչոր կազմակերպություններ», 1906 թ. հուլիսի 22-ին գրում է, որ հայկական կյանքի մոթ ուժերը՝ բուրժուազիան, կղերականությունը և սօցիալ դեմոկրատիան միավորվել են «աշխատավոր ժողովրդին հովանավորող...դասակարգային կռիվի նշանաբանով հրապարակելի» Հ. Յ. դաշնակցության դեմ»։

Սօցիալ-դեմոկրատներին ներկայացնելով որպես բուրժուազիայի և կղերականության դաշնակից, «Ալիքը» հայտարարում է. «Նրանք... աշխատում են ինչ գնով լինի վարկաբեղ անել Հ. Յ. Դաշնակցութիւնը... եթէ հնար է այսպիսով խալատ գատել դասակարգային կռուի նշանաբանով հրապարակելի» Հ. Յ. Դաշնակցութիւնը աշխատատուր ժողովրդից։

Բուրժուաներ, կղերականներ և «սօց. դեմոկրատ» հայեր, ահա այն նորանշան, այն ապշեցուցիչ բոլոր, որ դաշնակցութեան զարչապարին է յատել իր թունոտ աչքերը և սպասում է յարմար առիթին մահացու կերպով խայթելու համար»։

«Ալիք»-ը նշում է նաև, որ մի քանի սօցիալ-դեմոկրատ հայեր կան, որոնք դառնացած ու զառազան, որ հայ աշխատավոր մասսան ավելի ու ավելի ստվար շարքերով դաշնակցության հետևից է գնում, ամեն բան թողած՝ զբաղ

ված են բացառապես ամոթալի խճրճանքով և ինսինուացիաներով: (**«Ալիք»**, Հուլիսի 22, 1906 թ.):

1906 թ. Հուլիսի 22-ին «Կայծ» թերթում Շահումյանը Հանդես է գալիս այդ Հոդվածի դեմ, բացականչելով. «Ա-խ դուք Փրազյորներ... ա-խ դուք պոռոտախոսներ...» և գրում հետևյալը. «Ձեր ի՛նչն է «գազազեցնում» մեզ, ի՛նչն է շարժում մեր նախանձը: ... Մի կուսակցություն, որ 10-15 տարվա ընթացքում ոչ մի խոսք չի ասել «աշխատավոր ժողովրդի», «պրոլետարիատի» մասին, որ ամաչել է իր օրգանում գործ անել «սոցիալիզմ» բառը, որ հազարներով, տասնյակ հազարներով այրել է, աուտոդաֆեի է ենթարկել իր ձեռքն ընկնող սոցիալիստական գրականությունը և մեզ, սոցիալ-դեմոկրատներին, «դավաճաններ» է անվանել շարունակ, այժմ հանկարծ մի քանի ամիսների ընթացքում այնքան «թունոզ» սոցիալիստ է դարձել, որ չի հավանում մեր սոցիալիզմը»:

Հոդվածի վերջում Շահումյանը գրում է. «Մենք չենք հավատում ձեր անկեղծությունը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 292-293):

Ասվածի կապակցությամբ հարկ են համարում հիշեցնել, որ 1906 թ. ապրիլին «Իրօչակ»-ը Ռուսաստանի քաղաքական կուսակցություններին նվիրված ծավալուն Հոդվածում խոսելով «ասհմանադիր ոսակավարների»՝ կադետների մասին, որոնք բաժանվում են «աջակողմնանների և ձախակողմնանների», նշում է, որ ձախակողմնանները «իրենց մի քանի հայեցակետերով յարում են սոցիալիստներին, որոնք, ինչպես յայտնի է, կազմում են երկու կուսակցություն՝ «սոցիալ-դեմոկրատներին» և «սոցիալիստ-յեղափոխականներին» կուսակցություն: Մենք կը սկսենք վերջինից. նախ այն պատճառով, որ դաշնակցականները իրենց ծրագրով և տակտիկայով աւելի մօտ են կանգնած «սոցիալիստ-յեղափոխականներին»: (**«Իրօչակ»**, ապրիլ, թիվ 4, 1906 թ.):

«ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԳՈՒՄԱՐՆ ԷՉՄԻԱԾՆՈՒՄ»

1906 թ. օգոստոսի 25-ին «Նոր խոսք» թերթում հրատարակվում է Շահումյանի «Դաշնակցական Համագումարը էջմիածնում» Հոդվածը: Անդրադառնալով էջմիածնում գումարված ազգային ժողովին, Շահումյանը նշում է, որ «բոլոր ոչ-դաշնակցական պատգամավորները բարվոք են համարել հեռաւայ համագումարից» և դրա արդյունքով «այժմ այդ ժողովը դարձել է արդեն դաշնակցության կուսակցական Համագումար»:

Շահումյանը նշում է, որ Համագումարի պատգամավորները չեն ներկա

յացնում ժողովրդի մեծամասնությունը և դա Հաստատելու համար բերում է Թիֆլիսի օրինակը: Նա գրում է, որ Թիֆլիսի 70 հազար Հայ բնակչությունից 30 հազարից ավելին ընտրող են, որոնցից ընտրություններին մասնակցել է 500-600 մարդ՝ ընտրողների 3-4 տոկոսը:

Շահումյանը հիշեցնում է, որ Պետական դումայի ընտրությունների ժամանակ «Ալիք» թերթը հայտնել է, թե Թիֆլիսի 30 հազար գիտակից դաշնակցականները չեն մասնակցել դրանց և հարցնում է. «Ինչո՞ւ բացատրել ուրեմն, որ այդ 30 հազար գիտակից դաշնակցականները հանկարծ այնքան անգիտակից ու «անտարբեր» դարձան, որ նրանցից հազիվ մի 500-600 հոգի միայն մասնակցեցին «Հիմնադիր ժողովի» ընտրություններին»:

Եվ Շահումյանը եզրակացնում է. «Որքան պերճաբան են այդ թվերը և այդ փաստերը: Որքան զարհուրելի է այն կեղծիքն ու անբարոյականությունը, որ մաքրություն ու առաքինություն տակ բուն են դրել դաշնակցական խմբագրատներում և բյուրոներում... Եվ այդ մարդիկ նստած այժմ էջմիածնում, իրանց կուսակցական Համագումարում, երևակայում են, որ կարող են այս անգամ էլ խաբել Հայ ժողովրդին և փաթաթել նրա վզին իրանց որոշումները, հայտարարելով իրանց՝ ազգի հարազատ ընտրյալներ և այդ որոշումները՝ ազգի հավաքական կամքի արտահայտություն»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 322-325):

Էջմիածնի ազգային ժողովին մեկ անգամ էլ Շահումյանն անդրադառնում է 1906 թ. սեպտեմբերի 3-ին «Նոր խոսք» թերթում հրատարակված «Պատմության դասը» առաջնորդող Հոդվածում:

Շահումյանը, նկատի ունենալով Կովկասի փոխարքայի կարգադրությամբ էջմիածնի «ասհմանադիր» անունը ստացած ազգային ժողովի փակումը, նշում է, որ «կատարվեց այն, ինչ որ անկարող էր չկատարվել ներկա բնասպետական կարգերում»:

«Բյուրոկրատական ուժեղացում է Շահումյանը,- հավատարիմ մարով իր սրբագործած սովորություններին՝ խեղդելու ամեն մի ազատ միտք, մինչև անգամ, եթե նա արտահայտվում է միմիայն իբրև գեղեցիկ ֆրազցրեց «Հայ ժողովրդի ընտրյալներին»: Դա Շահումյանն անվանում է պատմական դատը դաս «Հայ քաղաքական մանուկների համար»:

Այնուհետև Շահումյանը, նկատի ունենալով դաշնակցությանը, նշում է, որ «Հայ աշխատավոր մասսաների դատը պաշտպանող» «խսկական» ներկայացուցիչներն անկարող եղան ըմբռնել այն ակնհայտ իրականությունը, որ «ներկա քաղաքական պահին, ներկա քաղաքական հանգամանքներում»,

երբ բռնապետությունը դեռևս իր ճիրանների մեջ է պահում երկրի ամբողջ հասարակական-քաղաքական կյանքը, այդպիսի ժողովների գոյությունը մի այն կարևոր է «բյուրոկրատիայի ներկայացուցիչների քահանայքից»:

«Իրերի իսկական ընթացքը,- ընդգծում է Շահումյանը,- պատմության անորոշ տրամաբանությունը եկավ թերադրելու իր հրամայողական կամքը. մեր կացնելու այն քաղաքական տհասությունը, որը կարողացել էր կենտրոնացնել հայ ժողովրդի մի որոշ մասի հույսերը և իղձերը էջմիածնի պատերի շուրջը»:

Շահումյանը նշում է նաև, որ հայ «հեղափոխական» «մտքի» ներկայացուցիչների քաղաքական հորիզոնը հետո չգնաց «էջմիածնա գմբեթներից ու կաթողիկոսական կոնդակներից» ու այժմ փոխարքայի կարգադրությամբ «հայ ազգային տիրացուները» վերադառնում են:

Նրանց անվանելով «հայկական կյանքի միրաբոներ», Շահումյանը գրում է, որ նրանք «մինչ խուբի շրջանն էր՝ ոգևորված արտասանում էին «մեր սահմանը վերջանում է այնտեղ, որտեղ սկսվում են ուրախ կատարությունների, այնտեղ գուցե մենք հանդիպենք պիլիների և գնդապիլների, ուստի պետք է պատրաստ լինենք ասելու, ետ քաշվեցեք, և պիտի կարողանանք լայնացնել մեր սահմանները»... այժմ «տալիս ենք այս ստորագրությունը էջմիածնա գավառապետին... որ մենք «պարտավոր ենք» 24 ժամ վա ընթացքում «ադմինիստրատիվ կերպով ուղարկվելուց խուսափելու համար» «հետանալ էջմիածնից մեր բնակության տեղերը... և «օրինական պատասխանատվությունից» «խույս տալու» համար չսարքել այլևս որևէ «խորհրդածորով»:

Այսպիսի ստորագրություն տալով, նշում է Շահումյանը, հայ «հեղափոխական» ժողովրդի «ներկայացուցիչները» հրապարակ եկան իրանց ամբողջ քաղաքական պատկերով:

Շահումյանը հիշեցնում է, որ հայ գիտակից պրոլետարիատը հենց սկզբից բացասաբար է վերաբերել «սահմանադիր» կոչված ժողովին, այն դիտել է որպես հետադիմական քայլ:

Հորվածի վերջում Շահումյանը դիմելով հայ ժողովրդին, ընդգծում է, որ «այժմ խուբը պատկանում է հեղափոխությանը... Պատմությունը ջախջախեց քո իլյուզիաները, գոնե այժմ գիտակցիր, որ քո ազատությունը ձեռք կբերվի ոչ թե էջմիածնա պատերում, վանական վեղարների տակ, այլ քո բախտը վճռող կլինի քո հեղափոխական ուժը: Կռվի դաշտը, փողոցը կլինի քեզ վերջնական ազատողը: Բարձրացրու քո ձայնը...»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. առաջին, էջ 331-333):

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՎԵԼԻ ԵՆ ԽՈՐԱՆՈՒՄ

Գնալով խորանում էին հակաառևանգություններն ու տարածայնությունները դաշնակցության և սոցիալ-դեմոկրատիայի միջև հատկապես հայ իրականության մեջ արծարծվող ազգային հարցի, ընթացող հեղափոխական շարժման, սոցիալիզմի վերաբերյալ:

Այդ հիմնահարցերի կապակցությամբ ծավալված բանավեճին մասնակցել են ինչպես դաշնակցության, այնպես էլ սոցիալ-դեմոկրատիայի տեսաբան գործիչները: Սույն աշխատության համար նախատեսված ծավալը հնարավորություն չի տալիս այստեղ անդրադառնալ բանավեճի բոլոր մասնակիցների արտահայտած տեսակետներին: Եվ քանի որ սույն աշխատությունը բացասապես նվիրված է Ստ. Շահումյանին, ուստի հարկ եմ համարում միայն անդրադառնալ վերահիշյալ հարցերի շուրջ նրա արտահայտած ու պաշտպանած տեսակետին:

Այս առումով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում 1906 թ. դեկտեմբերի 11-ին «Наши потребности» թերթում Պետական դուսայի ընտրությունների կապակցությամբ հրապարակված Շահումյանի «Առաջիկա ընտրությունները թիֆլիսում և «դաշնակցություն» կուսակցությունը» հոդվածը:

Շահումյանը հիշեցնում է, որ դաշնակցությունը 15 տարի առաջ հիմնվել է մի խումբ ուսանողների կողմից թուրքահայերին սովորեցնող լիցեյի ազատակցության նպատակով և առաջ է քաշում հետևյալ հարցերը.

Առաջին. Այդ նպատակը որևէ առնչություն ունի՞ Կովկասի հայ մասսայի շահերի հետ:

Երկրորդ. Արդյոք, նա առնչություն ունի՞ այն դասակարգային պայքարի հետ, որ Կովկասի հայ պրոլետարիատը, վրացական և համատուսաստանյան պրոլետարիատի հետ միասին, մղում է համատուսաստանյան բուրժուազիայի դեմ, այն ազատագրական պայքարի հետ, որ Կովկասի հայ բնակչությունը, ամբողջ ուսա ժողովրդի հետ միասին, մղում է մեռնող իրավակարգի դեմ:

Երրորդ. Արդյոք, թեկուզ քիչ չափով կիտավե՞ր հայ պրոլետարիատի և հայ չքավորության սոցիալ-տնտեսական և քաղաքական դրությունը Կովկասում, եթե այդ կուսակցությունը հանդիմանա ազատել թուրքահայաստանը և այնտեղ ստեղծել նոր, թեկուզև բոլորովին ինքնուրույն, հայկական թագավորություն:

Շահումյանն այն տեսակետն է հայտնում, թե բավական է դնել վերահիշյալ հարցերը, «որպեսզի իսկույն կեթ հասկանանք «դաշնակցություն» կու-

սակցութեան այն ձգտումների ամբողջ անհեթեթեությունը, որոնց նպատակն է Հայ պրոլետարիատի և Կովկասի Հայ ժողովրդական մասսայի վզին փաթաթել թուրքա-հայերի ազատագրման իդեալը, այն ձգտման ամբողջ անհեթեթեությունը, որի նպատակն է կովկասահայերին զբաղեցնել Ռուսաստանի սահմանների ներսում մղվող պայքարով հանուն Հայերի ազատագրության թուրքիայում»:

Արանից էլ երևում է ինչպես նշում է Շահումյանը, դաշնակցությունն ամբողջ ուժերով պայքարել է Հայ պրոլետարիատի և Հայ հեղափոխական մտափորականության բոլոր փորձերի դեմ՝ «կովկուս Կովկասում, ընդդեմ բուրժուազիայի և ընդդեմ կառավարության»: «Այդ փորձերը, ընդդեմ է Շահումյանը, նա անվանում էր «Հայ ժողովրդի հեղափոխական ուժերի հանցավոր մասնատում» և «դավաճանություն ազգային մեծ գործին՝ թուրքահայերի ազատագրմանը...»:

Շահումյանը հիշեցնում է, որ դաշնակցությունը հանգիստ դիտում էր, թե ինչպես էր Հայ բուրժուազիան, ամրապնդվելով, շահագործում Հայ պրոլետարիատին, կեղծքում քաղաքի և գյուղի չքավորությունը: «Բայց, ընդդեմ է Շահումյանը, բավական եղավ, որ շահագործվող մասսան բարձրացներ իր ձայնը շահագործողների դեմ, բավական էր դասակարգային պայքարի ամենափոքր դրսևորումն ընդդեմ Հայ բուրժուազիայի, որպեսզի հնչեր «դաշնակցության» «Հայրենասիրական» բղավոցը, որ հիշեցնում էր բանփորներին, թե բոլոր Հայերը եղբայրներ են, թե Հայերի մեջ չպետք է լինի դասակարգային պայքար, որովհետև նրանք ունեն ընդհանուր ազգային թշնամիներ և ընդհանուր ազգային իդեալ»:

«Բայց բավական էր, չարունակում է Շահումյանը, որ ժողովրդական մասսաների մեջ երևան գար քաղաքական գիտակցության ամենափոքր նյույլ, բավական էր, որ մասսաների մեջ դրսևորվեր ամենափոքր դժգոհություն և պայքար ընդդեմ կառավարության, որպեսզի «դաշնակցությունը» հանդես գար այդ պայքարի դատապարտությունը և մատնանշեր, թե Հայերի Հայրենիքը թուրքահայաստանն է, թե կովկե ուսական կառավարության դեմ՝ նշանակում է դավաճանել ազգային գործին»:

Շահումյանը գտնում էր, որ դաշնակցությունը ձգտում է Հայ բուրժուազիայի դեմ ուղղված ամեն մի պայքար խեղդել և բնակչությանը «բացատար պես ու ամբողջությամբ զբաղեցնել թուրքահայերի ազատագրման ֆանտաստիկական և ավանսյուրստական գաղափարով»:

«Կովկասի Հայ բուրժուազիան, եզրակացնում էր Շահումյանը, բնակար

տրեն «դաշնակցություն» կուսակցության մեջ տեսնում էր իր Հարազատ գավալին, իր լավագույն դաշնակցին, իր շահերի լավագույն արտահայտչին ու պաշտպանին, և այդ պատճառով բոլոր ուժերով, նյութապես ու բարոյապես, աջակցում էր այդ կուսակցությանը»:

19-րդ դարի վերջում և 20-րդ դարի սկզբում Կովկասում տնտեսական Հարաբերությունների ծավալման արդյունքում բանվորական շարժումը սկսում է արագ զարգանալ, առաջանում է սոցիալ-դեմոկրատիան, քաղաքական կյանքի համար արթնանում է Հայկական ծայրամասը և այլն:

Այս ամենը նկատի ունենալով, Շահումյանը նշում է, որ ստեղծված պայմաններում «Հայ բնակչության աչքում ամեն մի վստահություն վերջնականապես չկորցնելու, իր բուրժուական էությունը չմերկացնելու համար» դաշնակցությունը առիպված հայտարարում է, որ այսուհետև «թուրքահայ Հարցի» հետ միասին ընդունում է նաև «ռուսահայ Հարցը»:

Շահումյանը մեջբերում է «Իրօչակ»-ից հետևյալ միտքը. «Պայքարը, որ Հայ ժողովուրդը սկսում է Կովկասում, ինչ-որ նոր բան չէ: Դա ազգային վերածննդի համար մղվող այն պայքարի բաղադրիչ ու անբաժան մասն է, որ մինչև այժմ մղում էին Հայերը «դաշնակցության» ղեկավարությամբ: Արաբի այս և այն կողմերում Հայ ժողովուրդը մղում էր իր պայքարը, որպեսզի ջնջի բռնակալների ձեռքով գծած այն սահմանը, որը ռուսահայերին բաժանում է նրանց եղբայր թուրքահայերից, և ստեղծի իր համար մի միասնական «ընդհանուր Հայրենիք»: Եվ եզրակացնում է. «Այսպիսով, ոչ թե պայքար վրացի, ռուս և այլ Հարևան ժողովուրդների հետ միաստեղ ընդդեմ ինքնակալ կառավարության, այլ թուրքահայերի հետ մեկտեղ ազգային պայքար հանուն «ընդհանուր Հայրենիքի»»:

Շահումյանն այն տեսակետն է հայտնում, որ այդ կերպ դաշնակցությունը «ջանում էր բնակչության մեջ բորբոքել ազգային կրքերը, Հայերի մեջ ստեղծելու սերմանել դեպի մյուս ազգությունները»: Նա նաև նշում է, որ կովկասահայերը ենթարկվում են ռուս կառավարության ճնշման ընդհանուր քաղաքականությանը, որի ազգային քաղաքականության նպատակն է ազգային երկպառակություններ հրահրելով, իրար դեմ գինել իր իշխանության տակ գտնվող ժողովուրդներին:

Այս իրողությունը, ըստ Շահումյանի, դաշնակցությունը չի տեսնում և ցարական կառավարության «ճնշման մեջ տեսնում է ռուս ազգի ձգտումը ճնշելու և կլանելու Հայ ազգին»:

Իր միտքը հաստատելու համար Շահումյանը բերում է «Իրօչակ»-ից

Հետևյալ հատվածը. «Քանի դեռ ուսու ժողովուրդը (Շահումյանն ավելացնում է՝ նկատեցեք՝ ժողովուրդը և ոչ թե կառավարությունը) չահագրգռված էր հայ ժողովրդի բարեկամության հարցում, որպեսզի նրա օգնությունը նվաճի Կովկասը, նա ողորմած էր դեպի նա: Իսկ այժմ, երբ հայերն այլևս պետք չեն նրան, ուսու ժողովուրդը ճնշում է հայերին»:

«Այդ իսկ պատճառով, շարունակում է Շահումյանը,- ցված վիճելով ատելությունը դեպի ուսու ժողովուրդը, թերթը («Դրօշակը»-Վ. Պ.) նրան հայհոյում էր «պավոնա-թաթարական խառնածին» բառերով, մի ժողովուրդ, որի հետ,- օ՝ սարսափ,- ցանկանում են ձուլել, որի մեջ ցանկանում են լուծել ընտրյալ հայ ազգին...»:

Շահումյանն ապարդյուն է համարում շարժումն ազգային շրջանակներում պահելուն ուղղված դաշնակցության ջանքերը և ավելացնում. «Հայերը հասկացան, որ իրանց թշնամին ոչ թե ուսու ժողովուրդն է, այլ ուսական կառավարությունը»:

Շահումյանը նկատում է, որ ընդհանուր լծի տակ պայքարող բոլոր ժողովուրդների համերախությունը գաղափարն արդեն թափանցել է հայ ժողովրդական մասսաների գիտակցության մեջ և թեկուզ թույլ չստի, սկսել են միավորվել ինքնակալության դեմ մարտնչող հեղափոխական բանակին:

Բայց, ինչպես կարծում է Շահումյանը, դաշնակցությունը խաղում է ազատագրական շարժումն արգելակող հետադիմական դեր, անելով «այն բոլորը, ինչ կարող էր, միազանելով պայքարող մասսաների քաղաքական գիտակցությունը, բանվորների դասակարգային ինքնագիտակցությունը նենգափոխելով ազգային ինքնագիտակցությամբ, բանվորական և ընդհանրապես դեմոկրատական ժողովրդական մասսաներին թունավորելով բուրժուական նացիոնալիզմի թույնով»:

Այս գործում դաշնակցությունը օգնել է «այն արյունալի պրովոկացիան, որ կոչվում է հայ-թուրքական կոտորած», որի ժամանակ դաշնակցականները «իրենց վարձկան ջոկատներով» կռվի մեջ են նետվել, իրենց անվանելով «հայրենիքի փրկիչներ», իրականում միայն խորացնելով հայ-թուրքական թշնամությունը, դա բացատրելով «ազգերի բնական ու անխուսափելի պայքարով», բնակչությանը վախեցնելով «պանիպատիզմի» ուրվականով, և ինչպես Շահումյանն է նկատում, շփոթության մեջ է գցել քաղաքական կյանքի համար հենց նոր արթնացած հայկական պրովինցիան, իր ուսանական դիկտատուրան հաստատելով այնտեղ:

Սակայն, ինչպես նշում է Շահումյանը, զարգացման հետագա ընթացքը

բացահայտում է դաշնակցության «դասակարգային բուրժուական էությունը», «հայրենիքի փրկիչներին» իսկական կերպարանքը և այդ կուսակցությանը կանգնեցնում է երկրնտրանքի առջև՝ «կամ ետ մնալ մասսաներից, դաժնալով նրանց միանգամայն խորթ, և այդպիսով վարկաբեկել իրան նրանց աչքում, կամ նոր մետամորֆոզ կատարել, դավաճանելով այն ամենին, ինչ որ նա մինչև այժմ ասել է, ինչի համար նա մինչև այժմ պայքարել է»:

Շահումյանը նշում է, որ դաշնակցությունն ընտրել է վերջին ուղին, այլևս չի խոսում շարժման ազգային բնույթի մասին, ուսու ազգի «պատմական դավաճանություն» մասին, «ընդհանուր հայրենիքի» մասին, որին իբր թե ձգտում են հայերը «Արաբսի այս և այն կողմում», պանիպատիզմի մասին և «հայտարարում էր իրան դասակարգային և նույնիսկ, սարսափելի է ասել, սոցիալիստական կուսակցություն»:

Դաշնակցությունը, ինչպես վերև արդեն նշվել է 1906 թ. հունիսի 22-ին տեղի ունեցած քաղաքական գործադուլի կապակցությամբ, նույնիսկ իրեն հռչակում է որպես «պրոլետարիատին ղեկավարող կուսակցություն»:

Բայց, համոզված գրում է Շահումյանը, դաշնակցությունը իր գործունեությամբ մնում է որպես բուրժուական, նացիոնալիստական կուսակցություն: Շահումյանը իր համոզմունքը հիմնավորում է հետևյալ երկու համաձայնությամբ.

Առաջին. Դաշնակցությունը «մինչև այժմ էլ չի հրաժարվել իր թուրքահայ ավանտյուրայից, հայ ազգային ռեակցիայի այդ ռեզերվից, որն այնքան վնաս հասցրեց Կովկասի հայ բնակչությանը, այնքան վիշտ ու տառապանք պատճառեց թուրքահայերին և այնքան անգնահատելի ծառայություն մատուցեց հայ բուրժուազիային»:

Երկրորդ. Սոցիալիստական դիմակ հագնելով՝ դաշնակցությունը «ամենալիցապահ պայքարն է մղում սոցիալիզմի դեմ, բանվորական շարժման դեմ Կովկասում: Նա մինչև այժմ անվանվում էր «հեղափոխական» կուսակցություն, որպեսզի 15 տարի շարունակ մարտնչի հեղափոխության դեմ: Նա այժմ իրեն անվանում է «հեղափոխական» և «սոցիալիստական» կուսակցություն, որպեսզի կռվի հեղափոխության ու սոցիալիզմի դեմ»:

Այնուհետև Շահումյանն անդրադառնում է Կովկասում սոցիալիստական շարժմանը և ընդգծում է, որ կովկասյան սոցիալ-դեմոկրատիային դաշնակցությունը համարում է իր մահացու թշնամի: Այստեղից էլ կովկասյան սոցիալ-դեմոկրատիայի կարևորագույն խնդիրը՝ Կովկասի բոլոր բանվորներին

առանց ազգություն և ցեղի խտրության համախմբել միասնական պրոլետարական դրոշի տակ:

Իսկ դաշնակցությունը,- ընդգծում է Շահումյանը,- իր բոլոր ուժերով դեմադրում է դրան, ձգտելով իր շարքերում պահել հայ բանվորներին, նրանց անջրպետել և առանձնացնել մյուս ազգությունների բանվորներից:

«Պայքարելով կոմկապյան սոցիալ-դեմոկրատիայի դեմ,- գրում է Շահումյանը,- դաշնակցությունը պայքարում է ոչ միայն սոցիալիզմի դեմ, ոչ միայն բանվոր դասակարգի դեմ: Պայքարելով կոմկապի ոչ միայն միակ սոցիալիստական, այլև միակ դեմոկրատական կուսակցության դեմ, նա պայքարում է կոմկապյան ժողովուրդների ազատության, նրանց պրոպրետի դեմ և ծառայում է ռեակցիայի շահերին»:

Եվ այնուհետև՝ «դաշնակցություն կուսակցությունը,- եզրափակում է Շահումյանը,- Հավատարիմ մնալով ինքն իրեն, կանգ չի առնում ոչ մի միջոցի առաջ, որպեսզի բոլորքի հայերի ազգային կրքերը, որպեսզի նրանց մեջ աստվածություն սերմանի դեպի սոցիալ-դեմոկրատիան՝ որպես վրացական նացիոնալիստական կուսակցության, և անշատի նրանից հայ դեմոկրատական մասսային»:

Առաջ անցնելով հարկ եմ համարում նշել, որ Հավանաբար Շահումյանին հայտնի չեն եղել դաշնակցության և երիտթուրքական կուսակցության միջև ընթացող բանակցությունների մասին, որոնց արդյունքով դաշնակցությունը փոխում է իր քաղաքական դեմքը՝ մի կողմից աստիճանաբար հրաժարվում է արևմտահայերի ազատագրության գործից, մյուս կողմից՝ սոցիալիստական դիմակ հագնելով՝ ստանձնում է պայքարել ռուսական ցարիզմի դեմ:

Առաջիմ բավարարվեմ ասվածով, քանի որ այդ մասին դեռ հանգամանորեն անդրադարձ կլինի հաջորդ էջերում:

Շահումյանը չէր բավարարվում հայ իրականությանը հուզող հարցերի մասին հանդես գալով: Նա գործնական հեղափոխական ընդհատակյա աշխատանքի հետ միասին իրեն դրսևորում է համատուլապատանյան մասշտաբով ոչ միայն հեղափոխության, այլև ազգային հարցի վերաբերյալ հանդես եկող նշանավոր տեսաբան:

Այդ մասին են վկայում 1906 թ. նրա գրած մի շարք հոդվածները, ինչպես օրինակ, «Լիբերալ դավաճանները և միապետական ազնվականությունը», «Հեղափոխության նոր հաղթությունը», «Ութթամյա բանվորական օրը և բանվորների պետական ասպահովագրությունը», «Ազատությունները» կենսագրործվում են», «Վերադարձ չկա», «Պատասխանս պրն Բ. Ա. Վեր

միջևին», «ՌՄԻԲԿ վերջին համագումարը», «Կառավարությունը և դուրան», «Կադետները և սոցիալ-դեմոկրատիան», «Ներկա մոմենտը», «Գյուղացիական շարժումը», «Սովյե մոտենում է», «Պետերբուրգի գործազուրկները», «Պրոլետարիատը և արտաքին քաղաքականությունը», «Մի փափուկ դրություն», «Կադետական մինիստրությունը», «Պետական դուրանի նոր քայլը», «Պետական դուրանի արձակումը», «Հարկավոր է շտապել», «Անհաջող անցած պրովոկացիա», «Մուսքի և մամուլի ազատությունը», «Կոնստիտուցիոնալիզմ, թե՛ պառլամենտարիզմ», «Ներկա մոմենտը և մեր տակտիկան», «Ստոլիպինը գործում է», «Պարտիզանական կրկին Լեհաստանում» և այլն:

1906 թ. օգոստոսի 6-ին «Կայծ» թերթում Շահումյանի գրած «Ստոլիպինը գործում է» առաջնորդող հոդվածը հրատարակելու համար թիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ 1906 թ. օգոստոսի 7-ին փակվում է «Կայծ» թերթը, որը լույս էր տեսնում Շահումյանի, Ս. Կասյանի և Ս. Սպանդարյանի խմբագրությամբ:

«Կայծ»-ի փոխարեն 1906 թ. օգոստոսի 18-ին Շահումյանի և Սպանդարյանի խմբագրությամբ լուս է տեսնում «Նոր խուք» թերթը:

ԱՆՀԱՁՈՂ ԳՈՐԾԱԴՈՒԼԸ

1906 թ. օգոստոսին Ալավերդու պրնձահանքերի բանվորների սկսած գործադուլի կապակցությամբ այնտեղ են մեկնում Շահումյանն ու Սպանդարյանը: Այդ գործադուլի մասին օգոստոսի 31-ին «Նոր խուք» թերթում հրատարակում է «Անհաջող գործադուլ» հոդվածը:

Պրնձահանքերի բանվորների գործադուլն ավարտվում է ծանր պարտություն: Բորչալուի զինվորական հրամանատար Զորտարյուվը գործադուլը ճնշում է զինված կազակների միջոցով:

Շահումյանը նշում է, որ բանվորների գործադուլի անհաջողությունը սպասելի էր ու անխուսափելի: Եվ դրա պատճառը Շահումյանը բացատրում է «բանվորական մասսայի գիտակցության» պակասով: Գործադուլավորները սկզբում դրսևորում են համերաշխություն, բայց իրենց պահանջները մշակելու ժամանակ և հետո, ազմինիստրացիայի հետ ունեցած բանակցությունների ընթացքում, նրանք չդրսևորեցին ունակություն իրենց պահանջները կռելու և ուժերը չափելու մեջ:

Դա հատկապես երևաց նրանում, որ գործադուլավոր բանվորները չսեցին Շահումյանին ու Սպանդարյանին, չսեցին նրանց առաջարկությունը՝

Համաձայնվել առաջին բանակցությունների ժամանակ արմինխտարացիայի խոշոր գիժուկներին և ավարտել գործարարը: Սակայն բանվորները չեն համաձայնվում և ի վերջո պարտվում են:

Շահույթանք գործարարականության պարտության պատճառներից մեկն էլ Համարում է բանվորական մասսայի անկազմակերպվածությունը, նյութական միջոցների պակասը և ընդգծում. «Գործարանատերերի Հետ Հաջողությունը կույժելու Համար անհրաժեշտ է բանվորներին գիտակցություն, կազմակերպություն և նյութական փոխադարձ օգնություն միջոցներ՝ կասասներ և այլն»:

«Այդ բանը,- գրում է Շահույթանք,- արդեն Հասկանում են Այսօրու պարտված ու ընկճված բանվորները, բայց ափսոս, որ այդ դասը նրանք առաջան չափազանց թանկ գնով»: (Ստ. Շահույթանք, նույն տեղը, հ. առաջին, էջ 328-330):

ՇԱՀՈՒՅԹԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՌԱԿՈՐԴՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԻԱՄԻՆ

Շահույթանք եռանդով պաշտպանում էր սոցիալ-դեմոկրատիայի մեծամասնական թեկի Հայացքները: Նա իր Հրապարակած Հոդվածներում անգլիչոկ սկզբունքայնությունը քննադատում էր Համաձայնողականների Հայացքները, ցույց էր տալիս դրանց բացասական Հետևանքները պրոլետարիատի մղած Հեղափոխական պայքարի մեջ:

Եվ պետք է ասել, որ Շահույթանքի գաղափարական Հակառակորդները մեծամասամբ անկարող էին նրան Հրապարակավ պատասխանել, կամ էլ Հերքել նրա փաստարկները, իսկ եթե պատասխանում էին, ապա շատ հաճախ խուսափում էին նրա անունը Հիշատակել:

Բայց Շահույթանքի Հակառակորդները դրանով չէին բավարարվում: Նրանք միավորվում էին բոլոր այն դեպքերում, երբ դրվում էր Շահույթանքի թեկնածությունը Համատեսաստանյան մասշտաբով որևէ միջոցառման ընտրելու Հարցը և աշխատում էին բոլոր միջոցներով ձախողել այդ:

Առաջին այդպիսի փորձը, ինչպես արդեն նշվել է, եղավ ՌՄԻԲԿԻ 4-րդ միավորից Համագումարի պատվիրակ ընտրելու Հարցում: Երբ չի Հաջողվում ձախողել Շահույթանքի ընտրությունը, մենչևիկները փորձում են Համագումարի ընթացքում անվավեր ճանաչել Շահույթանքի մանդատը և նրան զրկել Համագումարին մասնակցելու իրավունքից: Դա մենչևիկներին չի Հաջողվում:

1906 թ. աշնանը սկսվում է Երկրորդ Պետական դումայի պատգամավորների ընտրության գործընթացը: Մասկավում է ուժեղ պայքար:

1907 թ. փետրվարի սկզբին տեղի է ունենում Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կոնֆերանսը, որը պետք է որոշեր, թե որպես Թիֆլիսի ներկայացուցիչ ում ուղարկել Պետական դումա:

Մենչևիկները, օգտվելով այն իրողությունից, որ կազմակերպության բոլշևիկ անդամներից շատերը գտնվում էին ձեռքակալության մեջ, կարողացել էին խարդավանքների միջոցով կոնֆերանսում ապահովել մեծամասնություն և առաջարկել էին իրենց թեկնածուին, որն Արչակ Չոհրաբյանն (Չոհրաբյան) էր: Իսկ բոլշևիկյան թեկի կողմից առաջադրվել էր Շահույթանքի թեկնածությունը: Սակայն մենչևիկներին Հաջողվում է շահել ձայների մեծամասնություն և ընտրել Ա. Չոհրաբյանին:

Այս կապակցությամբ բոլշևիկյան թեկը կոնֆերանսին ներկայացնում է բողոք, որտեղ մասնավորապես ասվում է, որ «Կոնֆերանսի կողմից Հայտարարված թեկնածուն, Արչակ Չոհրաբյանը, ներկայացուցիչ է ոչ թե Թիֆլիսի ամբողջ սոց.-դեմ. կազմակերպության, այլ միայն «փոքրամասնականների» Ֆրակցիայի»: (Ստ. Շահույթանք, նույն տեղը, հ. առաջին, էջ 381-384):

Պետական դումայի պատգամավորի պաշտոնական ընտրությունը տեղի է ունենում Թիֆլիսի ընտրողների ժողովում 1907 թ. փետրվարի 6-ին: Դրված էր Շահույթանքի, Ա. Չոհրաբյանի և Ս. Չավարյանի թեկնածությունը: Չավարյանը Հանում է իր թեկնածությունը: Երբ պարզ է դառնում, որ մենչևիկները և դաշնակցականները միավորվելով կազմում են մեծամասնություն, Շահույթանքը Հրաժարվում է քվեարկվելուց: Դաշնակցականները միանում են սոցիալ-դեմոկրատիայի մենչևիկյան թեկին և ձայների մեծամասնությունը Պետական դումայի պատգամավոր է ընտրվում Ա. Չոհրաբյանը:

Ընտրողների ժողովն ավարտվում է սկանդալով: Արչակ Չոհրաբյանը խուք է վերցնում և չնորհակալություն Հայտնելով, ասում է, որ ինքն իր ընտրությամբ պարտական է ամենից առաջ Թիֆլիսի Հաղթական պրոլետարիատին...

Չոհրաբյանի խուքը մնում է կիսատ: Տեղից վեր է թռչում դաշնակցության լիդերներից ինժեներ և զայրացած բացականչում է. «Հիշեցեք Սրբազանքը»: Նրան միանում են ներկա գտնվող դաշնակցականները, բողոքելով, որ Չոհրաբյանն այդքան շուտ մոռանում է, որ ընտրվել է նրանց ձայների շնորհիվ:

Մենչևիկներին պատկանող «Հոսանք» թերթը 1907 թ. փետրվարի 10-ին

Հրապարակում է Թիֆլիսում տեղի ունեցած վերոհիշյալ ժողովում Շահում-յանի ելույթի և ինստակի Հետ ունեցած բանավեճի մասին:

Մենչեղիկները Շահումյանին մեղադրում են, որ նա դաշնակցականների կոմպանիայի մեջ է գտնվում, որ նա դարձել է դաշնակցական: Պատասխանելով նրանց, Շահումյանն ասում է. «Այո, մինչև ուր եք դուք իջել, ընկեր «փոքրամասնականներ», որ մինչև իսկ դաշնակցականներն են ձեզանից ավելի Հեղափոխական Հայտնվում» և ավելացնում է, որ «ես դեռևս դաշնակցական չեմ դարձել»:

Շահումյանն ավելացնում է. «Դաշնակցականների մեջ ձգտումը կա սոցիալիստ-հեղափոխականների տեսակետի վրա կանգնելու համար, և ես ուրախ եմ, որ գտնվում եմ սոցիալիստ հեղափոխականների և ոչ թե կադետների կոմպանիայի մեջ»:

Շահումյանը իր ելույթում անդրադառնում է նաև պետության կենտրոնացման դեմ դաշնակցության տեսակետին և ասում, որ «դաշնակցականները միշտ մատնացույց են անում Կովկասի և Հայ ժողովրդի առանձնահատուկ պայմանները և պահանջում առանձին պառլամենտ», և քանի որ «Կովկասում գոյություն ունեն նաև ուրիշ ազգություններ իրենց առանձնահատուկ պայմաններով, ուստի նրանք կպահանջեն տասնյակ պառլամենտներ...»:

Շահումյանի այս խոսքերից հետո նրա և ինստակի միջև տեղի է ունենում հետևյալ երկխոսությունը.

«Ինստակ. Այո, թող լինի տապ պառլամենտ, մենք դեմ չենք, այլ հենց այդ էլ պահանջում ենք...»:

Շահումյան. Եվ որովհետև Ռուսաստանումն էլ կան շատ ազգություններ, ուստի նրանց էլ պետք է տալ իրանց պառլամենտն ունենալու իրավունքը:

Ինստակ. Այո, պետք է Ռուսաստանի ազգերին տալ, ինչպես օրինակ, մարտունակներին և այլն:

Շահումյան. Այդ հիման վրա պետք է ունենալ մի շարք պառլամենտներ՝ իրանց օրենսդրական իրավունքներով: Եվ այդ պահանջն արվում է նրա համար, որ մեծ ժողովուրդը չխեղդի փոքր ժողովրդի իրավունքները, քանի որ այս վերջինն ունի իր հատուկ պահանջները, որոնք առաջ են գալիս իր առանձնահատուկ պայմաններից: Գեղեցիկ: Եվ որովհետև յուրաքանչյուր անձնավորությունն էլ իր առանձնահատուկ պայմաններն ունի, ուստի պետք է Ռուսաստանում ամեն մի մարդ իր առանձին պառլամենտն ունենա...»

Հայ պրոլետարիատի ինչի՞ն է պետք առանձին օրենքները, ցույց տվեք

ինձ այդ բանը: -Ձեր պահանջները պրոլետարիատի համար չէ, քանի որ պրոլետարները, առանց ազգերի խտրության, միատեսակ օրենքների կարիք ունեն»:

Այնուհետև Շահումյանն անդրադառնում է դաշնակցականների երկրորդ հիմնական առարկությանը, ըստ որի «Ռուսաստանում հեղափոխությունը չի կարող կատարվել պրոլետարիատի միջոցով, նա մենակ չէ կարող հաղթանակել, այս պատճառով էլ պետք է միանալ ամբողջ ժողովրդին, որպեսզի Հակադրել կարողանա իր հավաքական ուժը հակառակորդի ուժին»:

Իբրև պատասխան, Շահումյանը նշում է հետևյալը. «Պրոլետարիատը միշտ հեղափոխության մեջ է, նա է ամբողջ ժողովրդի շահերի պաշտպանը և այդ շահերի համար մարտնչող է հանդիսանում: Այնպեսովոր ժողովուրդը, որի մասին խոսում են սոցիալիստ-հեղափոխականները և դաշնակցականները, մենք պաշտպանում ենք, քանի որ պրոլետարիատի շահերի մեջ են պարփակվում ամբողջ ազգաբնակչության շահերը»:

Շահումյանն ընդգծում է նաև, որ պրոլետարիատի կուսակցությունը կազմակերպվում է առանձին, բայց դա չի խանգարում, որպեսզի «բոլոր դասակարգերը միասին դուրս գան ընդհանուր թշնամու դեմ»:

«Մենք,- եզրափակում է Շահումյանը,- առանձին ենք դուրս գալիս, բայց երբ ունենում ենք մի ընդհանուր խնդիր, այն ժամանակ այս հարցում մենք «զատ-զատ ենք գնում, և միասին հարվածում»: Այս բանին չէ խանգարում այն, որ մենք առանձին ենք կազմակերպված, այսպես լինելը, առանձին կազմակերպվելը պրոլետարիատի շահերն են պահանջում»: (Սո. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 388-391):

Դաշնակցության «Ժամանակ» թերթը, որը տպագրվում էր Թիֆլիսում որպես փակված «Ձանգ» թերթի շարունակություն, 1907 թ. փետրվարի 8-ին հայտարարում է, որ Շահումյանը պատվիրակների վերոհիշյալ ժողովում իբր թե ասել է, որ «դաշնակցությունն ավելի հեղափոխական կուսակցություն է, քան մեր «փոքրամասնական» ֆրակցիան»:

Այս առիթով Շահումյանը 1907 թ. փետրվարի 11-ին «Հոսանք» թերթում հրապարակում է իր երկտողը, որտեղ ընդգծում է, որ «մեծամասնականների» կարծիքով «մեր «փոքրամասնականները» շատ են հեռացել միջազգային հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի տակտիկական սկզբունքներից, բայց և այնպես «դաշնակցությունը» և սոցիալ-դեմոկրատիան, նույն

նիակ աջակողմյան սոցիալ-դեմոկրատիան, մնում են անհամեմատելի մեծություններ»:

Շահումյանը պարզաբանում է, որ վերն ասված իր միտքը միտումնավոր ազդավորել է «Ժամանակ» թերթը:

Այնուհետև Շահումյանն անդրադառնում է վերոհիշյալ ժողովում «Նա կազմի» առիթով Հ. Օհանջանյանի արտահայտած «նկատողություններին», որոնք նման էին «մեծամասնականներին» նկատողություններին «մենչեկական» տակտիկայի մասին»: «Բայց, - չարունակում է Շահումյանը, - այդ դեռ չի նշանակում, որ պ. Օհանջանյանի խոսքերից «դաշնակցությունը» իբրև կուսակցություն դարձավ «մեծամասնականներին» նման, կամ համարյն Ռուսաստանի մեծամասնական սոց.-դեմոկրատիան նմանվեց դաշնակցության»:

Շահումյանը հիշեցնում է նաև, որ պատվիրակների ժողովում պատասխանելով իրեն ուղղված մենչեկիկների մեղադրանքին, ասել է. «Եթե մեկը մեզանից, որ պետք է ամաչ, դա «փոքրամասնականներն» են, որովհետև նրանք այնքան են իջել, որ նույնիսկ դաշնակցական Օհանջանյանը նրանցից ավելի հեղափոխական մտքեր է արտահայտում»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 393-394):

1907 թ. փետրվարի 11-ին մենչեկական «Հոսանք» թերթը հրապարակում է «Ընկեր Շահումյանի նամակի առթիվ» հոդվածը, որտեղ նշվում է, որ Շահումյանը «իր ամբողջ անզորութեան դատութիւնը թափեց «փոքրամասնութեան» հոսանքի պլիսին՝ համարելով նրան սակաւ յեղափոխական, քան դաշնակցութիւնը»:

«Միայն Շահումյանի բերնից թուան, - չարունակում է «Հոսանքը», - թէ դաշնակցականները յեղափոխականներ են, մինչդեռ մեզ համար վաղուց սպառնացված է, որ նրանք ռեակցիոներներ են»: («Հոսանք», փետրվարի 13, 1907 թ.):

Այսպիսով, դաշնակցականների և մենչեկիկների ատելությունը Շահումյանի նկատմամբ այնքան մեծ էր, որ նրանք միափորեցին իրենց ուժերը, չխորչելով պրոփոկացիայի բոլոր միջոցներից: Կանցնի ևս մի քանի տարի և նրանց համատեղ ատելությունը կընդունի հրեշավոր չափ, որը կհասցնի Ստեփան Շահումյանի ֆիզիկական ոչնչացմանը: Այդ մասին հաջորդ էջերում հանգաբանորեն անդրադարձ կլինի:

ԲՈՐՉԱԼՈՒ-ԼՈՌԻԻ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐԻ ՎՃՈՍԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ձախողելով Շահումյանին Պետական դոմայի պատգամավոր ընտրելը, մենչեկիկները նրա դեմ ձեռնարկում են հաջորդ քայլը: ՌՄԻԲԿ-ն պատրաստվում էր հերթական, 5-րդ համագումարին: Այդ նպատակով տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները պատգամավորներ ընտրելու համար հրավիրում էին կոնֆերանսներ:

1907 թ. մարտին սոցիալ-դեմոկրատիայի բոլշևիկյան դիրքերում կանգնած Բորչալուի և Լոռիի ենթաշրջանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կոնֆերատը ՌՄԻԲԿ 5-րդ համագումարի պատգամավոր է ընտրում Շահումյանին և Ասատուր Կախոյանին, իսկ խորհրդակցական ձայնի իրավունքով Միխա Ցիսակայային:

Թիֆլիսի մենչեկիկյան կոնֆերանսը նրանց ընտրվելը ձախողելու նպատակով մերժում է և չի ընդունում վերոհիշյալ որոշումը, պատճառաբանելով, թե Բորչալուի կազմակերպությունը, որպես այդպիսին, գոյություն չունի, հետևապես ընտրելու իրավունք չունի: Իհարկե, այդպիսի որոշումն ամենից ատաղ ուղղված էր Շահումյանի դեմ:

Բորչալուի և Լոռիի ենթաշրջանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը հրավիրում է իր երրորդ կոնֆերատը: Կոնֆերատի ընդունած որոշման մեջ ասվում է, որ գյուղերում կազմակերպված ենթակոմիտեներն ունեն 3-5 անդամ, կազմակերպությունը գումարել է երկու կոնֆերանս, որին մասնակցել են 20 կազմակերպության ներկայացուցիչներ: Կոնֆերանսը նշում է, որ Թիֆլիսի կոնֆերանսի որոշումը, թե «Բորչալուի կազմակերպությունը գոյություն չունի, ոչ մի բանով չի հիմնավորված»:

Միաժամանակ կոնֆերանսը նշում է, որ պատվիրակների ընտրությունը կատարվել է ճիշտ և արձանագրում է. «Հակասակ Թիֆլիսի կոնֆերանսի ապօրինի որոշման, Բորչալուի կոնֆերանսը որոշում է իր պատգամավորներին ուղարկել համագումար»: Միաժամանակ կոնֆերանսը վստահություն է հայտնում, որ համագումարը կհաստատի Բորչալուի կոնֆերանսի որոշումը: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. առաջին, էջ 399-401):

ՐԱՖՖՈՒ ՈՐԴՈՒ ՀՐԱՎԵՐՈՎ

Շահումյանը մասնակցում է 1907 թ. ապրիլի 30-ից մինչև մայիսի 19-ը Լոնդոնում տեղի ունեցած ՌՄԻԲԿ 5-րդ Համագումարին:

Այս Համագումարում էլ, ինչպես 4-րդ (միավորիչ) Համագումարում, մեջլիսիների ներկայացուցիչ Ն. Ռամիչլիլին, որը Հանդես էր գալիս «Բորցով» ծածկանունով, նորից փորձում է անվավեր ճանաչել տալ Շահումյանի մանդատը և նրան զրկել Համագումարի աշխատանքին մասնակցելու հնարավորությունից:

Ինչպես մանդատային հանձնաժողովում, այնպես էլ Համագումարում Շահումյանը եռանդով մասնակցում է Հարցերի քննարկմանը և իր ունեցած ելույթներով վճռականորեն մերկացնում է կովկասյան մեջլիսիների պրոտեկցիան և հիմնավոր փաստերով ցույց է տալիս նրանց հետո գնացող նպատակները: Արդյունքում Համագումարը հաստատում է Շահումյանի մանդատը:

Համագումարի ավարտին Րաֆֆու որդի Արամի նախաձեռնությամբ Հայ պատգամավորները հրավիրվում են Հանդիպելու լոնդոնաբնակ Հայրի հետ: Այդ Հանդիպմանը Շահումյանի հետ միասին մասնակցել են Արամալիս Երզնկյանը, Ասատուր Կախոյանը, Ղազար Տեր-Ղազարյանը, Նարինան Տեր-Ղազարյանը, բժիշկ Տիգրան Իսախանյանը: Հանդիպումը, որին ներկա են եղել 20-30 արևմտահայեր, տեղի է ունենում Լոնդոնի Հայկական գաղութի ակումբում:

Հանդիպումը սկսվում է Արամ Րաֆֆու ջերմ խոսքով: Նա խնդրում է հրավիրյալներին պատմել ռուսական հեղափոխության և Հայ-թուրքական հարաբերությունների մասին: Առաջինը Հանդես է գալիս Արամալիս Երզնկյանը: Հետո Շահումյանը պատասխանում է ներկանների բազմաթիվ Հարցերին:

Հանդիպումից հետո Արամը Հայ պատգամավորներին հրավիրում է սուն՝ ծանոթանալու իր մոր հետ: Ինչպես հիշում է այդ Հանդիպման մասնակից Ասատուր Կախոյանը, Րաֆֆու կինը, թեև պատաված էր, բայց աչ խոյժ էր ու տալով բազմաթիվ հարցեր, մասնակցում էր գրույցին: (Հին բողջիկների հիշողություններ, գիրք առաջին, Եր. 1958, էջ 74-75):

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՄՆԱԼԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՎՏԱՆԳԱՎՈՐ

Շահումյանը 1907 թ. մայիսի վերջերին Լոնդոնից վերադառնում է Թիֆլիս: Շահումյանի որդի Լևոնի վկայությամբ նա հավանություն է տալիս Կամոյի ձեռնարկին, որը իրագործվում է 1907 թ. Հունիսի 13-ին: Օրը ցերեկով Կամոն իր խնրով Թիֆլիսի Երևանյան հրապարակում բռնագրավում է 250 հազար ռուբլի: Այդ գումարն օգտագործվում է կուսակցության նպատակների համար: (Լ. Շահումյան, Կամո, Եր. 1962, էջ 86):

Շահումյանը մշտապես գտնվում էր ոստիկանության գաղտնի հսկողության տակ: Աննկատ չի մնում նաև նրա թարգմանությամբ Կառուցվող «Ռուսական հեղափոխության շարժիչ ուժերն ու հեռանկարները» գրքույկի հայերեն տպագրությունը: Ոստիկանությունը հայտնաբերում է այդ և ամբողջ տպագրանակը բռնագրավելով, ոչնչացնում է:

Շահումյանի համար Թիֆլիսում մնալը դառնում է վտանգավոր: Ոստիկանության հետապնդումներից զերծ մնալու համար նա հարկադրաբար ազատվում է Հավլաբարի 2-րդ արական պրոգրամագիայի հայոց լեզվի ուսուցչի պարտականություններից:

1907 թ. Հուլիսի 1-ին Շահումյանը տեղափոխվում է Բաբու, որտեղ էլ հաստատում է մշտական բնակություն: Շահումյանը դրանից մի քանի ամիս առաջ, 1907 թ. Հունվարի վերջին եղել էր Բաբվում, որտեղ Ս. Սպանդարյանի և Ս. Կասյանի հետ միասին հիմնադրում և փետրվարի 2-ից սկսում են «Օրեր» թերթի հրատարակումը: Հաջողվում է միայն հրատարակել մի քանի համար: Թերթը ոստիկանության կողմից փակվում է փետրվարի 10-ին:

ՌՄԻԲԿ Բաբվի կոմիտեի որոշմամբ Շահումյանը ղեկավարում է ընդհատակյա բանվորական խմբակների աշխատանքը: Նա միաժամանակ Ստալիների, Օրջոնիկիձեի, Սպանդարյանի հետ միասին մասնակցում էր բանվորների չլճանում կազմակերպվող բանավեճերին, դրաներից իր ամբողջ տաղանդն ու հայոց և ռուսաց լեզուներին գերազանց տիրապետելու ունակությունը:

Նա իր պարզ ու պատկերավոր ելույթներով մեծ ազդեցություն էր թողնում մարդկանց վրա: Կարճ ժամանակում, ինչպես վկայում է Բաբվում հեղափոխական աշխատանքի ճանաչված գործիչ Ն. Կոնյանիկովան, Շահումյանը դառնում է Բաբվի բանվորների սիրելի ղեկավարներից մեկը: (Н. Н. КОЛЕСНИКОВА. По дорогам подполья, Баку, 1973, стр. 60):

Շահումյանի Բաբու տեղափոխվելը Հատկապես կարևոր նշանակություն է ունենում այնտեղ գործող մեջլիսիների ազդեցությունը թուլացնելու գործում: Նա բանվորների ընդհատակյա ժողովներում հանգամանորեն ներկա-

յացնում էր ՌՄԻԲԿ լոնդոնյան Համագումարի մասին, ցույց տալով մենչևիկ-ների սխալ դիրքորոշման հետևանքները:

Շահումյանը Ստալինի, Ս. Սպանդարյանի, Պ. Զախարիձեի հետ միասին մասնակցում էր «Бакинский пролетари» թերթի խմբագրմանը: Այս թերթում էլ 1907 թ. Հուլիսի 10-ին հրատարակվում է Շահումյանի «Թիֆլիսի քաղաքային դումայի ընտրությունները» հոդվածը: Շահումյանը տեղեկացնում է, որ քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ մենչևիկները մոռանալով պրոլետարիատի դասակարգային քաղաքականության մասին, Համաձայնության մեջ են մտել բուրժուական կուսակցությունների հետ և «միշտ էլ առիթ են որոնում բուրժուազիայի գերիշ շեղվելու համար»:

Իր հոդվածում Շահումյանն անդրադառնում է նաև Հնչակյաններին, որոնց հետ սոցիալ-դեմոկրատիայի ձախ թևը դաշինք էր կազմել: Բայց ընտրությունների ժամանակ նրանք քվեարկում են սոցիալ-դեմոկրատների առաջարկած ցուցակում երկու բանվորների թեկնածության դեմ: Այս կապակցությամբ Շահումյանը խստորեն քննադատում է Հնչակյաններին, նրանց կուսակցությունը որակելով որպես Հայ պրոլետարիատին այլասերող և սոցիալ-դեմոկրատիային վարկաբեկող... կուսակցություն»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, Եր. 1976, էջ 16-17):

1907 թ. օգոստոսի 12-ին Շահումյանի մասնակցությամբ լույս է տեսնում «Гудок» լեզավ շաբաթաթերթը, որին 1908 թ. փոխարինում է «Бакинский рабочий» թերթը:

«ԻՆՉՊԵՍ Պ-ՐՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԸ ԻՆՔՆ ԻՐԵՆ ՍԻ ՉԱՅՆՈՎ ԸՆՏՐԵՑ...»

1907 թ. Հունիսի 3-ի Պետական դումայի ընտրությունների օրենքի համաձայն Բաքվի, Երևանի ու Ելիզավետպոլի նահանգների Հայ ունևոր ընտրողների կուրիաններին միացվում է Բաքվի բանվորների կուրիան և կազմում է մեկ կուրիա, որն ընտրելու էր մեկ պատգամավոր: Նպատակը մեկն էր՝ սահմանափակել բանվորների իրավունքը:

Ահա, այսպիսի պայմաններում 1907 թ. սեպտեմբերի վերջին Բաքվի բանվորների կուրիայի լիազորների ընտրության ժամանակ հաջողվում է պատվիրակներ ընտրել նաև բուլչևիկներ Ի. Բովովին, Վ. Տրոնովին, Մ. Մոր դովցևին, ինչպես նաև ծնունդով Գանձակի գավառի Գետաչեն գյուղից, Կ. Խատիսովի գործարանի բանվոր Ա. Արկերյանին:

Ըստ սահմանված կարգի, Գանձակում պետք է տեղի ունենար միացյալ կուրիայի ժողովը, որն ընտրելու էր Պետական դումայի պատգամավոր:

1912 թ. , երբ բուլչևիկները նախապատրաստվում էին մասնակցել 4-րդ Պետական դումայի ընտրություններին, Շահումյանը գտնվում էր Բաքվի Բայիրովի բանտում: Ընտրություններին նախապատրաստվելու համար Շահումյանը «Նոր խոսք» մարքսիստական ամսագրի համար գրում է 1907 թ. Գանձակում տեղի ունեցած ընտրությունների մասին «Ինչպես պրեն Սաղաթեյանը ինքն իրեն մի ձայնով ընտրեց երրորդ Պետական դումայի անդամ» խորագրով իր հիշողությունները: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, Եր. 1976, էջ 240-259): Այդ «Հիշողությունները» ժամանակին չեն հրատարակվել ամսագրի փակման կապակցությամբ:

Բաքվի կոմիտեի որոշմամբ 1907թ. հոկտեմբերի 10-ին Գանձակ են մեկնում Շահումյանն ու Ա. Մուսկյանը, նպատակ ունենալով օգտագործել տեղիում Հնարավորությունը: Առաջին հերթին նրանք Գանձակի իրենց կուսակցի սակավաթիվ անդամների հետ միասին միջոցներ են ձեռնարկում անկուսակցական գյուղացի ընտրողներին գրավել սոցիալ-դեմոկրատիայի կողմը: Սակայն դա չի հաջողվում:

Բաքվից լիազոր ընտրված վերոհիշյալ չորս բանվորին միանում է Նոր Բայազետից ընտրված ուսուցիչ, սոցիալ-դեմոկրատ Ալեքսանդր Աբրահամյանը: Սրանով 25 լիազորներից 5-ը ներկայացնում էին սոցիալ-դեմոկրատական կազմակերպությանը:

Բաքվից ընտրված կադետները Միքայել Պապաջանյանի գլխավորությամբ միանում են մյուս վայրերից եկած մշակական պատվիրակներին, որոնց ղեկավարում էր «Մշակ» թերթի խմբագիր Համբարձում Առաքելյանը: Այս միավորումով Պապաջանյանի ու Առաքելյանի խումբը ստանում է 14 ձայն: Նրանք նախատեսում էին Հ. Առաքելյանին ընտրել դումայի պատգամավոր:

Դաշնակցության պատվիրակները Գանձակ էին եկել Սիմոն Զավարյանի գլխավորությամբ և մտադիր էին բոլորով Պետական դումայի ընտրությունները: Չնայած դրան, դաշնակցականներին հաջողվում է մշակականների խմբից իրենց կողմը գրավել երկու կուրակ գյուղացի լիազորի:

1907 թ. հոկտեմբերի 13-ին Գանձակում հրավիրվում է բոլոր ընտրող լիազորների մասնավոր դեմիակ խորհրդակցություն: Բանվոր լիազորները պնդում են, որպես ուսու պատվիրակների թարգմանիչի, Շահումյանին թույլտրվի մասնակցելու ժողովներին:

Ժողովի նախագահ Պապաջանյանը փորձում է նրանց համոզել, որ ինքը կարող է ուսուներևից հայերեն և հայերենից ուսուներեն թարգմանել, ուստի այլ

Թարգմանչի կարիք չկա: Սակայն բանվորները չեն Համաձայնվում ու ասում են Հետևյալը. «Հարգելի նախագահ, մենք Հավատում ենք ձեր անկեղծությանը, բայց կասկածում ենք, որ դուք օրգանապես ընդունակ լինեք Հասկարնալու մեր ճատերը, որպեսզի մեր ուզածի պես թարգմանեք դրանք գյուղացիների Համար և ոչ էլ գյուղացիների ճատերը թարգմանեք մեզ Համար»:

Հարկադրված Համաձայնվում են և Շահումյանին թույլ են տալիս մասնակցել Ժողովներին: Երբ Շահումյանը ներս է մտնում, Պապաճանյանը նրան դիմում է Հետևյալ խոսքերով. «Պարոն, բանվոր պատվիրակները վիրավորեցին մեզ, չվստահելով մեզ իբրև թարգմանչի և ցանկացան, որ դուք լինեք նրանց թարգմանը: Մենք զիջեցինք պատվիրակներին և Հրավիրեցինք ձեզ, բայց ի նկատի ունեցեք, որ դուք Հրավիրվում եք միայն իբրև թարգման. և ոչ մի խոսք ձեր կողմից, լսո՛ւմ եք, ոչ մի խոսք ավերորդ»: (Ստ. Շահումյան, Նույն տեղը, Հ. երկրորդ, Եր. 1976, էջ 245):

Ժողովում առաջինը Հանդես է գալիս Միմոն Զավարյանը, որը Հենց սկզբից խնդիր է դնում, որ Հայ պատվիրակների ընտրյալը պետք է անպայման լինի Հայ, քանի որ Ռուսաստանում Հայ ազգն առանձնապես է Հարածվում: Եվ իր միտքը Հիմնավորելու Համար Զավարյանը Համեմատում է Կովկասում ապրող ռուսներին Հայերի Հետ: Նա ասում է, որ «այսինչ Հայ գյուղում յուրաքանչյուր գյուղացի Հագիվ մի օրավար Հող ունի, իսկ նրա կողքին ռուս գաղթականների գյուղում յուրաքանչյուրին 4 օրավար Հող է գալիս: Այդ մեկ. երկրորդն էլ, Հայերին պետական Հիմնարկություններում պաշտոններ չեն տալիս. վերջրեք դատարանները, երկաթուղիները, խեղճ Հայերն ամեն տեղ Հարածված են: Հարկավոր է Հոգալ մեր Ժողովրդի վիճակը բարելավելու Համար, Հարկավոր է պաշտպանել նրա շահերը Պետական դռնադուր, իսկ այդ բոլորը ո՛վ կարող է անել, իհարկե, միայն Հայ մարդը, ով ծանոթ է մեր Ժողովրդի... ցամ ու Հոգեբերին»:

Զավարյանը նկատի ունի, որ բանվոր պատվիրակներից երեքը ռուս են, մեկն էլ սոցիալ-դեմոկրատ, և կամենում էր իր խոսքով շարժել պատվիրակների ազգասիրական զգացմունքները, քանի որ ըստ նրա, սոցիալ-դեմոկրատները «ազգի ու կրոնի դավաճաններ» են և Հայ Ժողովրդի մասին չեն մտածում: Զավարյանն ասում է նաև, որ այդ տեսակ մարդիկ ձեռնառու չեն Հայերի Համար: (Ստ. Շահումյան, Նույն տեղը, Հ. երկրորդ, Եր. 1976, էջ 246): Նույն ոգով ելույթ է ունենում նաև կաղեխների ներկայացուցիչ Ալիբեկյանը:

Բանվորների ներկայացուցիչ Ի. Բոկովը իր ելույթում, որը թարգմանվում ու լրացվում էր Շահումյանի կողմից, Հարցնում է, թե ինչո՞ւ դաշնակցու-

թյան ու կաղեխների ներկայացուցիչները չեն ներկայացնում իրենց ծրագիրն ու տակտիկան և ավելացնում, թե որքան Հայտնի է դաշնակներն իրենց հեղափոխական, նույնիսկ սոցիալիստ են անվանում:

-Ո՞ր մնացին դաշնակցականների Հեղափոխությունն ու սոցիալիզմը,- Հարցնում է բանվոր պատվիրակը և ասում, որ նրանք «իրենց ծրագրում ի միջի այլոց, պահանջում են, որքան մեզ Հայտնի է, բոլոր կարվածատիրական, եկեղեցական ու պետական Հողերի գրավումը Հօգուտ Ժողովրդի. ինչո՞ւ այդ մասին ոչինչ չսեցինք պ. Զավարյանից: Մի՞թե նա ամաչում է այստեղ նստած կալվածատեր պ. Անբրուսյանից կամ Հարգելի եպիսկոպոսից»:

Այնուհետև բանվոր պատվիրակն Հիշեցնում է, որ դաշնակցականների ծրագիրը պահանջում է վերացնել ներկա քաղաքական ռեժիմը և Հաստատել Հանրապետություն, որ իրենց տակտիկայի մեջ Հայտարարում են, թե մեր ժամ են խաղաղ ռեֆորմների ճանապարհը և Ժողովրդի գինված ապստամբության կողմնակից են:

«Այս բոլորը,- Հարցնում է բանվոր պատվիրակը,- ինչո՞ւ թաքցրեց մի այսպիսի կարևոր թուգեխն պ. Զավարյանը, մի՞թե Հաճոյանալու Համար կաղեխներին: Չի՞ գտնում պ. Զավարյանը, որ այդ աններեղի է, որ անպատվաբեր է և ուղղակի ինքնասպանություն ու ոճրագործություն քիչ թե չատ իրան Հարզող քաղաքական գործչի Համար»:

Իր ելույթում բանվոր պատվիրակն անդրադառնում է ռուս գյուղացու Համեմատությունը Հայ գյուղացու չարքաչ վիճակի մասին Ս. Զավարյանի արտահայտած մտքին և ընդգծում է, որ «ռուս գյուղացին նույնքան խորթ զավակ է ռուս կառավարության Համար, ինչքան և Հայ, վրացի, թուրք և այլ գյուղացիները»:

«Հայ գյուղացին,- ասում է նա,- թշվառ է, աղքատ է, սղեխ է ոչ թե այն պատճառով, որ նա Հայ է, այլ որովհետև նա ենթարկված է նույն սոցիալական պայմաններին և խեղդված է նույն ռեժիմի ճիրաններում, ինչ որ ռուս, վրացի, թե՛ և այլ գյուղացիներ: Ուրեմն չպետք է խաբել Հայ գյուղացուն կեղծ ազգասիրական երգերով, այլ Հարկավոր է ցույց տալ նրան աղքատության և սոցիալական ճշմարիտ աղբյուրը, իսկական պատճառը, որպեսզի նա իմանա, թե ում դեմ և ում Հետ ձեռք-ձեռքի տված նա պետք է կռվի, որպեսզի արժանանա ավելի լավ ապագայի»:

Բանվոր պատվիրակը խնդիր է դնում խոսել ոչ թե առանձին ազգային շահերի, այլ Ռուսաստանի բանվոր և գյուղացի Հարածված Ժողովրդի մասին, ոչ թե ազգերի բաժանման ու ստեղծության, այլ Համերաշխության ու ընդհանուր կռվի մասին:

Նա ընդգծում է, որ «պ. Զավարյանն այդ ուղիղ ու փրկարար ճանապարհից, գիտությունը, թե անգիտությունը, ուզում է հեռու պահել ձեզ, հայ գյուղացիներ, իր ազգասիրական քարոզով»:

Բանվոր պատվիրակն անդրադառնում է կաղեխների ներկայացուցչի ելույթին և գյուղացիների ուշադրությունը բեռնում է կաղեխների ծրագրի հետևյալ երկու կետերի վրա: Այդ կետերից մեկով նախատեսվում է «Ռուսաստանում ստեղծել միասնական սահմանադրություն: Կաղեխները դեմ են հանրապետության, ժողովրդի իսկական ազատության: Նրանք ուզում են միայն ազատություն բուրժուազիայի համար, որպեսզի ավելի լավ շահագործեն բանվորներին և աղքատ գյուղացիներին»:

Կաղեխներն իրենց ծրագրի մյուս կետով էլ դեմ են, որպեսզի կարվածա տիրական, բեկական և արքունական հողերը հանձնվեն գյուղացիներին: Նրանք առաջարկում են «արդար գնով» այդ հողը ծախել գյուղացիներին, որոնք դա գնելու որևէ միջոց չունեն: Եվ այդ բոլորից հետո, ընդգծում է բանվորը, կաղեխները «հանդգնում են իրենց անվանել «Ժողովրդական ազատության կուսակցություն»»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 247-250):

Հոկտեմբերի 14-ին տեղի են ունենում ընտրությունները: Կաղեխ-մշակական խմբի թեկնածու Համբարձում Առաքելյանն ստանում է 12 ձայն, դաշնակցականների թեկնածու Սիմոն Զավարյանը՝ 9 ձայն, բոլշևիկների թեկնածու Արչակ Արկերյանը՝ 9 ձայն, դաշնակցական Հովհաննես Սաղաթեյանը՝ 11 ձայն:

2. Սաղաթեյանն իր թեկնածությունը դրել էր առանց համաձայնեցնելու դաշնակցական խմբի հետ, կաղեխ-մշակականներին խոստանալով՝ ընտրվելու դեպքում դուռնաբաց միանալ կաղեխներին:

Բանի որ առաջին քվեարկությանը ոչ մեկը ձայների մեծամասնություն չէր ստացել, կատարվում է երկրորդ քվեարկությունը: Երբ դաշնակցական պատվիրակներին չի հաջողվում համոզել Սաղաթեյանին հանել իր թեկնածությունը, հարկադրված որոշում են իրենց ձայնը տալ սոցիալ-դեմոկրատներին: Այդ մասին Ս. Զավարյանը դիմելով Շահումյանին ծիծաղելով, ասում է. «Թող սա լինի մեր սոցիալիստական բարեկամության առաջին գրավակարը: Դուք միշտ այդպես անհաշտ դոգմատիկներ եք, էլի մենք ենք անում առաջին քայլը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 255):

Հաջորդ քվեարկության ժամանակ ձայները բաժանվում են հետևյալ կերպ. Համբարձում Առաքելյան՝ 12 ձայն, Արչակ Արկերյանը՝ 12 ձայն: Նրա օգտին քվեարկում են դաշնակցականները, քանի որ Ս. Զավարյանը հա-

նել էր իր թեկնածությունը: Ս. Զավարյանը փորձում է համոզել Հ. Սաղաթեյանին՝ հանել իր թեկնածությունը: Այդ դեպքում վիճակ պետք է գցվեր Համբարձում Առաքելյանի և Արչակ Արկերյանի միջև: Սակայն կաղեխ-մշակականները գերադասում են Հ. Սաղաթեյանին և նա 15 ձայնով ընտրվում է Պետական Դուռնայի պատգամավոր, չտոանալով դաշնակցական պատվիրակների քվեն:

Ընտրությունից հետո դաշնակցական մամուլը հրապարակում է միայն մի հեռագիր այն մասին, թե Գանձակում ընտրվել է Սաղաթեյանը: Բայց մի քանի օր անց, մոտանալով, որ իրենց նախատեսած Ս. Զավարյանի փոխարեն Պետական դուռնայի պատգամավոր էր ընտրվել ինքնակոչ Սաղաթեյանը, դաշնակցական մամուլը սկսում է գրել կուսակցության տարած հաղթանակի մասին, Սաղաթեյանին անվանելով դաշնակցության ներկայացուցիչ: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 257):

ՆԱՍԱԿ «ՄՇԱԿ»-Ի ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Ընտրություններից հետո «Մշակ» թերթը հրապարակված հոդվածում մեղադրում է սոցիալ-դեմոկրատիային այն բանի համար, որ նրա կողմից առաջադրվել էր անգրագետ Արչակ Արկերյանի թեկնածությունը և դրանով արդարացնում են կաղեխներին, որ այդ պատճառով են իրենց ձայնը տվել Հ. Սաղաթեյանին:

«Մշակ»-ի այս հոդվածի կապակցությամբ Շահումյանը նամակ է հղում խմբագրությանը, որը լույս է տեսնում 1907 թ. Հոկտեմբերի 18-ին նույն թերթում: Շահումյանը նախ զարմանք է արտահայտում այն բանի համար, որ թերթի թղթակիցը չի կարողանում բացատրել կաղեխների քայլը, հակասելով ճշմարտությանը: Նա նշում է, որ «Արչակ Արկերյանը համարադրանական դիպլոմ չունի, այդ պարզ է, բայց նա ոչ միայն շատ լավ «գրագետ» է, այլև Բաբլիի 50 հազար բանվորության լավագույն ներկայացուցիչներից մեկն է»:

Այնուհետև Շահումյանը բնութագրում է Արկերյանին, նշելով, որ նա առաջինն է բարձրացրել կարմիր դրոշը 1901 թ. առաջին հրապարակային ցույցի ժամանակ, որ այդ օրից սկսած նա 5 անգամ ձերբակալվել ու մեկ անգամ էլ աքսորվել է Բաբլից:

«Եթե,- գրում է Շահումյանը,- կաղեխները սովին իրենց քվեները պ. Սաղաթեյանին, որը չենթարկվեց դաշնակցականների վճռին՝ վերցնել իր տուփը ու ձայն տալ սոցիալ-դեմոկրատին, ինչպես այդ արեց պ. Զավարյանը, նրանք այդ արին ոչ թե այն պատճառով, որ Արչակ Արկերյանը «անգրա-

գետ» է, իսկ Սաղաթեցյանը՝ «գրագետ»։ Նրանք այդ արհն, որովհետև Արշակ Արկերյանը սոցիալ-դեմոկրատ է և այն էլ «բողջեիկ» սոցիալ-դեմոկրատ, իսկ պ. Սաղաթեցյանը, չնայած իր դաշնակցական-էսէտական յայտիկին, մի պարզ կաղետ է, էթի ոչ Հոկտեմբերյան»։

Ահա, թե որտեղ է գաղտնիքը և Շահումյանը կոչ է անում «քաջություն ունենալ խտատվանել այդ»։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 19-20)։

ԺՈՐԴԱՆԻԱՅԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՆՈՂՈՒՄԸ

Գանձակից վերադառնալուց Հետո Շահումյանը իր ընկերների հետ շարունակում է եռանդով նախապատրաստվել ՌՄԴԿ Բաքվի կազմակերպության համաքաղաքային կոնֆերանսին։ Կոնֆերանսը, որը գումարվում է 1907 թ. Հոկտեմբերի 25-ին, քննարկում է Շահումյանի «Ներկա էտապում Բաքվի կուսակցական կազմակերպության խնդիրների մասին» զեկուցումը։

Կոնֆերանսը մեծամասնությամբ դեմ է արտահայտվում մենչևիկներին, որոնք փորձում էին իրենց ձեռքը վերցնել կազմակերպության ղեկավարումը։ Կոնֆերանսն ընտրում է 25 հոգուց բաղկացած ՌՄԴԿ Բաքվի կոմիտե՝ Շահումյանի գլխավորությամբ։ Այդ կոմիտեի մեջ էին նաև Ս. Սալամազյանը, Ի. Ստայինը, Պ. Զափարիձեն, Ն. Կոլենիկովան և ուրիշներ։

Չհաշտվելով իրենց պարտության հետ, մենչևիկները հրավիրում են առանձին կոնֆերանս և ընտրում իրենց «Ղեկավար կոլեկտիվը»։ Սրանով ստեղծվում է զուգահեռ կազմակերպություն, որն ավելի է խորացնում սոցիալ-դեմոկրատիայի երկու թևերի միջև առաջացած պառակտումը։ (Մ. Վ. Արդանյան, Ստեփան Շահումյան, էջ 161)։

Մենչևիկները Բաքու են ուղարկում ՌՄԴԿ կենտկոմի անդամ Ն. Ժորդանիային իբր թե երկու թևերի միջև եղած հակասությունները հարթելու համար։ Հրավիրվում է ՌՄԴԿ Բաքվի կոմիտեի կազմի և նրանից առանձնացած մենչևիկների գաղտնի ժողովը՝ քննարկելու Ժորդանիայի միջնորդությունը։ Ժորդանիան բացահայտորեն հանդես է գալիս մենչևիկների պաշտպանությամբ, չթաքցնելով իր մտադրությունը՝ Բաքվի կոմիտեն միավորել մենչևիկների ղեկավարությանը։ Միայն Շահումյանի և մյուս ընկերների վճռական դիրքորոշման շնորհիվ ձախողվում է Ժորդանիայի մտադրությունը և նա հեռանում է Բաքվից, չհասնելով իր նպատակին։

«ՄԱՐՍԱՓԵԼԻ ԿԵՐՊՈՎ ՊԱՐՏՔԻ ՏԱԿ ԵՄ ԸՆԿԵԼ...»

Շահումյանը մշտապես գտնվում էր ոստիկանության գաղտնի Հակողության տակ։ «Ճիկուս» ծածկանունով գործակալի մատնությամբ հայտնի էր դարձել վերահիշյալ հավաքի մասին։ Բարեբախտաբար հավաքի մասնակիցները կարողանում են աննկատ հեռանալ դահլիճի հետնամուտքից և խուսափել ձերբակալությունից։ Շահումյանի դեմ հավաստի փաստարկներ չհայտնաբերելու պատճառով ոստիկանությունը նրան չի կարողանում ձերբակալել։ Այնուամենայնիվ, ոստիկանության ճնշման տակ Շահումյանին ազատում են ժողովրդական տան վարիչի պարտականություններից։

Շահումյանը նորից դառնում է գործազուրկ։ 1908 թ. մայիսի 24-ին նա Մ. Յիսակյայի ուղարկած նամակում հայտնում է, որ Բաքու տեղափոխվելուց Հետո մեկ տարվա ընթացքում աշխատել է միայն երկու ամիս և գրում է հետևյալը. «Սարափեի կերպով պարտքի տակ եմ ընկել և հինա ամենանեղ պայմաններում եմ գտնվում»։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 49)։

Որոշ ժամանակ անց, 1908 թ. սեպտեմբերին, ընկերների աջակցությամբ, Շահումյանին հաջողվում է առանալ Շիրակի Փիրմայի Բալախանիի նավթամուղի վարիչի պաշտոնը, որը նրա համար լայն հնարավորություն է ստեղծում ավելի շատ բանվորների հանդիպել, լուծել նրանց հուզող հարցերը, տանել ընդհատակյա հեղափոխական աշխատանք։

Այդ մասին արժե բերել միայն երկու վկայություն։

Նաթեժյա Կոլենիկովա (հետագայում Շահումյանի ղեկավարած Բաքվի կոմունայի լուսավորության կոմիտայի)։ «Պրոֆեսիոնալ հեղափոխականների մեր խմբակի ճանաչված ղեկավարն ընկեր Ստեփանն է։ Բանվորների չլծանում նա օգտվում է ոչ միայն հեղինակությունից, այլև սիրով։ Բայց երբեք նրա մոտ չի կարելի նկատել իր գերազանցությունը ցույց տալու, որևէ մեկին իր հեղինակությամբ ճնշելու ցանկություն։ Յուրաքանչյուր ընկերոջ, յուրաքանչյուր բանվորի հետ, ինչ ազգության էլ նա պատկանի, ինչ մակարդակի էլ լինի նրա քաղաքական գարգացումը, Ստեփանն իրեն պահում է հասարակ, բարեկամաբար, համբերությամբ լսում է այն, ինչ նրան ասում են, օգնում է խորհրդով, համոզում է...»։

Ռաֆուա Օկենչևիչ (1904 թվականից Բաքվի կոմիտեի անդամ)։ «...Բալախանիում բարձրագույն տիպի խմբակը վարում է ընկեր Ստեփանը։ Նա մեր Բաքվի և Անդրկովկասի կազմակերպության առաջնորդներից մեկն է։

Չգիտես ինչու, նրա մասին այժմ քիչ կամ ամենևին չեն խոսում: Իսկ նա դեկավարել է: Մինք նրան կազմակերպության ուղեղն էինք համարում, իսկ Ալ-յոչային, ինչպես արդեն ասել եմ՝ կազմակերպության սիրտը: Ես նրանց միասին շատ անգամներ եմ տեսել: Ստեփանը թուլացիկներ էր գրում: Թերթեր խմբագրում: Նա, և ուրիշ ոչ ոք»: (Ի. Դուբինսկի-Մուխամե, նույն տեղը, էջ 141-142):

ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ՀԻՆԳ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Ղեկավարելով ՌՄԻԲԿ Բաքվի կոմիտեն, Շահումյանը մեծապես կարևորում էր բանվորների չըջանում տարվող հեղափոխական աշխատանքն ավելի բովանդակալից, ավելի մարտական դարձնելու վրա: Այս առումով էլ մեծ տեղ էր տրվում իր շարքերում 9 հազար բանվորի միավորող Բաքվի նավթարդյունաբերական բանվորների միության գործունեությանը:

Այս միությունը ստեղծվել էր 1906 թ. սեպտեմբերին: Դրան զուգահեռ մենչևիկներն էլ առեղծվել էին մեխանիկական արտադրության բանվորների միությունը:

1907-1908 թթ. կղեկտիվ պայմանագրեր կնքելու շուրջ բանվորների և նավթարդյունաբերող կապիտալիստների միջև ընթանում էր սուր պայքար: Առաջացած վեճը լուծելու նպատակով նավթարդյունաբերողներն առաջարկում են բանվորների հետ հրավիրել խորհրդակցություն:

Շահումյանի ղեկավարած ՌՄԻԲԿ կոմիտեի պաշտպանությունը վայելող միությունը համաձայնվում է մասնակցել այդ խորհրդակցությանը, պայմանով, որ ամբողջ խորհրդակցության ժամանակ բանվորներին տրվեն հետևյալ 5 երաշխիքները

Առաջին. «խորհրդակցության» ժամանակը պետք է որոշվի կապիտալիստների և բանվորության ներկայացուցիչների փոխադարձ համաձայնությունամբ:

Երկրորդ. «խորհրդակցության» ամբողջ ժամանակամիջոցում պետք է տիրե ժողովների և խուփի ազատություն: Մասամբ պետք է ինքը մշակել կրթնկտիվ պայմանագրի հիմքում դրվելիք իր ընդհանուր պահանջները:

Յրրորդ. Կազմողների ժողովը պետք է գոյություն ունենա «խորհրդակցության» ամբողջ ընթացքում: Ամեն մի լիազոր բոլոր հարցերի մասին պետք է զեկուցումներ տա իր ընտրողներին և նրանց համաձայնությունը ստանա:

Չորրորդ. Արհեստակցական միությունները պետք է ղեկավարեն ընտ

րությունները: Նրանց պետք է թույլ տրվի ունենալ իրենց ներկայացուցիչները խորհրդակցական ձայնով, թե լիազորների ժողովում և թե «խորհրդակցության» մեջ:

Հինգերորդ. Ամբողջ նավթարդյունաբերող բանվորների հետ կնքել մի ընդհանուր կղեկտիվ պայմանագիր:

1908 թ. սեպտեմբեր, երբ վերահիշյալ խորհրդակցությունը մտել էր բուռն քննարկման չրջան, Շահումյանը հանդես եկավ «Դեպի~ «խորհրդակցություն»՝ բանվորական հինգ երաշխիքներով» հայերեն գրված գրքույկով:

«Ամենակարևոր հարցը,- գրում է Շահումյանը,- որ զբաղեցնում է նավթարդյունաբերական աշխարհը վերջին ամիսների ընթացքում,- դա, անկասկած, «խորհրդակցության» հարցն է: Նավթարդյունաբերող-կապիտալիստները հոգնել են բանվորների վերջին տարիների համարյա անընդհատ գործադուլային կռվից և ուզում են որոշ «խաղաղություն», որոշ «կարգ ու կանոն» մտցնել նավթարդյունաբերության մեջ»:

Շահումյանը նշում է, որ նավթարդյունաբերողների ցանկությունը շատ հասկանալի է, որովհետև կատարվում է հեղափոխություն, որի ընթացքում մի դասակարգ պայքարում է մյուս դասակարգի դեմ, տեղի են ունենում բուռնություն ու կոտորածներ, որպեսզի «ստեղծվեն նոր կարգեր, նոր պայմաններ այդ դասակարգերի փոխադարձ հարաբերությունների համար»:

Այդ հակամարտ դասակարգերը խաղաղ պայմաններում «հաշվի առնելով իրենց ուժերն ու հարաբերությունները, «խորհրդակցում» են, որոշ օրենսդրական նորմեր են մշակում իրենց փոխադարձ հարաբերությունների համար»:

Շահումյանը փաստում է, որ մարդիկ չեն կոտլում կռվելու համար, այլ «որոշ հասարակական հետևանքի հասնելու համար, նոր հասարակական դիրքեր գրավելու, նոր իրավունքներ ձեռք բերելու համար»:

Ոչ մի անսովոր բան չկա, ընդգծում է Շահումյանը, որ կապիտալիստները ուզում են բանվորների հետ խորհրդակցել, և «մի որոշ հավաքական պայմանագիր կազմելու, հաշիվ տեսնելու անցյալի հետ», կանոնավորել հարաբերությունները բանվորների հետ: Շահումյանը դա համարում է անհրաժեշտ և ավելացնում է, որ եթե բանվորները չեն ցանկանա որևէ խորհրդակցության գնալ կապիտալիստների հետ, ապա նա «դրանով ցույց կտար իր ծայրահեղ անհաստնությունը, իր անարխիստական անմտությունը»:

Նավթարդյունաբերող բանվորները կարողանում են խուսափել այդ անարխիստական բոյկոտից, բայց, ինչպես նշում է Շահումյանը, կար մեկ այլ վտանգ, որից պետք է բանվորությունը խուսափի:

Շահումյանը հանգամանորեն բացատրում է այդ վտանգը և նշում, որ ստեղծված պայմաններում պարտվող կողմը կապիտալիստներն են, որոնք աշխատում են այնպես կազմակերպել «խորհրդակցությունը», որ որքան կարելի է թիչ բան գիշել բանվորներին և թուլացնել նրա դիմադրության ուժն ապագայի համար:

Իսկ բանվորները, նշում է Շահումյանը, պետք է խորհրդակցության համար աշխատեն ձեռք բերել այնպիսի պայմաններ, որ կարողանան ճանաչել սոսկ իրենց հաղթանակը, ամրացնեն իրենց գրաված դիրքերը և «միևնույն ժամանակ հեշտացնեն իրենց կոխը բուրժուաների դեմ»:

Հենց դրա համար էլ բանվորները «խորհրդակցության» առաջարկն ընդունելիս, պետք է հետաքրքրվեն պայմանների մասին: Հակառակ դեպքում կապիտալիստները կխաբեն բանվորներին, «ապարդյուն կբարձեն նրանց տարիների կոխը և զոհաբերությունները»:

Շահումյանը մատնացույց է անում այն սխալները, որ երկու անգամ՝ 1905 թ. դեկտեմբերին և 1906 թ. օգոստոսին, թույլ է տվել Բաբլի բանվորությունը կապիտալիստների առաջարկած խորհրդակցություններին մասնակցելու ժամանակ, երբ չեն հետաքրքրվել կապիտալիստների առաջարկած պայմաններով:

Շահումյանը գզուշացնում է. «Ընդունել Հակառակորդների կողմից ամեն մի հրավեր դեպի «խորհրդակցություն», ինչ տեսակ պայմաններում էլ լինի, դա նշանակում է առաջուց ապահովել խորհրդակցության արդյունքները հօգուտ հակառակորդի»:

Այնուհետև նա գրում է, որ ինչպես կոխը կոպելու, այնպես էլ խորհրդակցությունը խորհրդակցության համար անմտություն է ու ընդգծում է հետևյալը. «խորհրդակցության անպայման կողմնակիցները նույնքան հեռու են խելացի բանվորական քաղաքականությունից, որքան «անպայման բոյկոտողները»:

Շահումյանը Բաբլի բանվորներին խորհուրդ էր տալիս բանակցությունների գնալիս առանց այլևայլության չընդունել թիչնամու առաջարկած պայմանները, այլ պետք է լուրջ քննադատության ենթարկել դրանք և, եթե դրանք խարդախ պայմաններ են, դրանցով չգնալ խորհրդակցության և բոլոր կողմ հայտարարել:

«Իսկ եթե,՝ չարձանակում է Շահումյանը,՝ կապիտալիստներն այնքան նեղն են ընկած, որ ցանկանում են խորհրդակցություն ինչ գնով էլ լինի, բանվորությունը պետք է առաջարկե իր սեփական պայմանները և, դրանք ընդունվելու դեպքում, գնա խորհրդակցության»:

«Այդ տեսակ բոյկոտը և այդ տեսակ մասնակցությունը՝ ընդգծում է Շահումյանը,՝ բխում են բանվորական քաղաքականության լուրջ ըմբռնությունից. միմիայն այդ տեսակ բոյկոտը և այդ տեսակ մասնակցությունն են, որ վայել են, որ պատիվ են բերում գիտակից բանվորությանը»:

Շահումյանը հանգամանորեն անդրադառնում է խորհրդակցության կապակցությամբ դաշնակցականների և էսէռների բոյկոտի քաղաքականությանը, ցույց է տալիս, որ դա բոյկոտ է բոյկոտի համար և չի բխում բանվորների շահերից: Նա կոչ է անում «դեպի խորհրդակցություն՝ բանվորական հինգ երաշխիքներով», որոնք հարկադրված ընդունել են բորժարանատեր կապիտալիստները: (Սո. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 21-32):

«խորհրդակցության» համար ընտրված լիազորների խորհուրդը բացարձակ մեծամասնությամբ (395-ից 250-ը) պաշտպանում էր բոլշևիկների մշակած տակտիկան: Շահումյանն այդ խորհրդի աշխատանքը շատ էր կարևորում, այն համարելով իսկական բանվորական պառլամենտ, որտեղ բանվորները ազատորեն քննարկում էին իրենց հուզող բոլոր հարցերը: Եթե նկատի առնվի, որ լիազորների խորհուրդը գործում էր հեղափոխության անկումից հետո սկսված ռեակցիայի պայմաններում, ապա պարզ կլինի, թե ինչու էր Շահումյանը դրան այդպիսի մեծ նշանակություն տալիս:

«ԲՈՅԿՈՏԻՍՏՆԵՐԸ ԵՎ ԼԻԱՁՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ»

Բոյկոտի կողմնակից դաշնակցականներն ու էսէռները կարողանում են իրենց համախոհներին դուրս հանել լիազորների խորհրդից, որոնք ներկայացնում էին ընդամենը 8 հազար բանվորի, հակադրվելով մեծամասնությանը՝ 27 հազար բանվորներին: Այս կապակցությամբ Շահումյանը 1908 թ. մայիսի 12-ին «Гудок» թերթում հրատարակել է «Բոյկոտիստները և լիազորների խորհուրդը» հոդվածը:

Նկարագրելով փոքրամասնության ներկայացուցիչների հետանալը, Շահումյանը գրում է. «Նալիթարդյունաբերական բանվորների հակայական մեծամասնությունը՝ 27 հազարն ընդդեմ 8 հազարի, որոշում է պայմանազիր կնքել՝ բանվորների օգտին հայտնի պայմանները պահպանելու դեպքում: Եվ այդ ժամանակ փոքրամասնությունը հրաժարվում է ենթարկվել նալիթարդյունաբերական պրոլետարիատի՝ որպես ամբողջության կամքին և... բոյկոտ է հայտարարում լիազորների խորհրդին: Այդ, բոյկոտ լիազորների խորհրդին և ոչ թե կապիտալիստներին, ոչ թե «խորհրդակցությանը»:

Շահումյանն անհեթեթություն է համարում, որ բանվորները բոյկոտի են

ենթարկում իրենց բանվորական հիմնարկը և ընդգծում է, որ բոլորստիստներին «մինչև այրտեղ կարող էին հասցնել միայն բանվորական հարցին ու բանվորական քաղաքականությունը խորթ նրանց չարաբաստիկ դեկավարները»:

Այդ դեկավարները, որոնք Շահումյանի գնահատմամբ զբաղվում էին «ամեն տեսակ աստվածահաճո գործերով, գրքուկներ էին գրում սրբերի կենաց մասին», գուլերգում էին մեռած կաթողիկոսի հոգու մեծությունը և ասում էին, որ նրա փոխարեն պետք է ընտրել հայ «աշխատավոր» ժողովրդի շահերը լավագույն կերպով պաշտպանող մեկին: Եվ հանկարծ նրանք սկսում են միջամտել Բաբլի բանվորների պայքարին ընդդեմ նախարարուհիների:

Շահումյանը մատնանշում է, որ այդ ամենից ստացվեց միայն «մի զույգ գեղեցիկ ֆրագ և ամենատղեղ և հանցավոր գործ»: «Այդ ֆրագներով, գրում է Շահումյանը, նրանք կաշառեցին դասակարգային պայքարում դեռևս անհորձ հայ բանվորներին և նրանց ստիպեցին մի այնպիսի գործ անել, որը նրանց դեմ կարող էին անել միայն նրանց կատաղի թշնամիները: Պատակաբար և կազմալուծում նախարարուհիների և պրոլետարիատի շարքերում, հայ բանվորների մեկուսացում ուսու և մուսուլման բանվորներից, ահա, թե ինչի հասան հայ պրոլետարիատի «դեկավարները»:

Լիազորների խորհրդից հեռացած հայ բանվորներին Շահումյանը կոչ է անում. «Եթե դուք չեք ուզում լիակատար մեկուսացում ընդհանուր բանվորական կյանքից և ընդհանուր համերաշխ աշխատանքից, եթե դուք ուզում եք նվազեցնել այն անհիմն քայլի հետևանքները, որ ձեր վզին են փաթաթել Գրիգոր Լուսավորչի այլևայլ կենսագիրները, ապա, մասնակցեցեք լիազորների խորհրդի աշխատանքին»:

Հոդվածի վերջում Շահումյանը նորից շեշտում է, որ «բոլոր բանվորների միասնությունն ու համախառնությունը հաջողության անհրաժեշտ պայմանն են հանդիսանում» և դիմելով հայ բանվորներին գրում է. «Հասկացե՛ք այդ, ընկերներ, և եթե ձեր դժբախտ դեկավարներն այսուհետև էլ ձեզ խանդարեն դրանում, ասացե՛ք նրանց՝ ձեքներդ հետու: Այդպես, որովհետև նրանց տեղը իրոք էջմիածինն է, նրանց գործը՝ կաթողիկոսի ընտրությունն է»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 40-43):

Միաժամանակ ՌՄԻԲԿ Բաբլի կոմիտեն Շահումյանի գլխավորությամբ եռանդուն աշխատանք էր տանում բանվորական արհմիությունների ուժերը համախառն համար, անդուլ կերպով բացատրելով դրա անհրաժեշտու-

թյունը: Հակառակ բոլոր ազգությունների բանվորներին համախառն Շահումյանի և նրա համախոհների ջանքերի, դաշնակցականները ձգտում էին ստանձնացնել հայ բանվորներին և ստեղծել ազգային սկզբունքներով արհմիություններ: Նրանց հաջողվել էր Բաբու քաղաքում ստեղծել աշխատող հայ հողապահների արհմիությունը, որն առանձին գործելու ընթացքում որևէ հաջողության չէր կարող հասնել: Այս հարցին էլ Շահումյանը նվիրել է 1908 թ. ապրիլի 10-ին «ԴՅՏՈՒՄ» թերթում հրատարակված «Ավերորդաբանող «սոցիալիստները»» հոդվածը: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 38-39):

ԳԼՈՒԽ 5 «ԴԱՍԱԿԱԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՌՈՐԸ»

1905-1907 թթ. ռուսական Հեղափոխության պարտությունից հետո սկսված ռեակցիայի պայմաններում Ռուսաստանում գործող կուսակցությունների շարքերում երևացին տաստանուաներ, պարտակտուաներ, հուսահատություն, հետագա պայքարից հրաժարվելու միտումներ: Ստեղծված պայմաններում հանդես եկան նաև այնպիսի ուժեր, որոնք պայքարի միջոցը համարում էին անհատական տեռորը և հրապուրվեցին դրանով:

Այս ամենը, ինչպես նաև անկումնային տրամադրությունները լայն կերպով դրսևորվում էին նաև Անդրկովկասի հասարակական-քաղաքական կյանքում և գնալով առանձնապես շատանում էին անհատական տեռորով հրապուրվողները:

Շահույժյանը, որն ուշադրությունը հետևում էր այդ ամենին և վճռակարծիքներն գործում էր ՌՄԴԿ-ի շարքերում տեղի ունեցող տաստանուաները, պարտակտան փորձերը կանխելու, կուսակցության կազմակերպությունները զայլք հեղափոխական պայքարին նախապատրաստելու համար, կարևորում է տեռորով հրապուրվելու միտումների մասին բանվորների շրջանում բացատրական աշխատանք տանելը, դրանց դեմ պայքարելը:

Հենց այդ նպատակով էլ 1908 թ. ապրիլի վերջին հրավիրված ՌՄԴԿ Բաքվի կոմիտեի համաքաղաքային կոնֆերանսում Շահույժյանը զեկուցում է առհասարակ տեռորի և, մասնավորապես, տնտեսական տեռորի դեմ պայքարն ուժեղացնելու անհրաժեշտության մասին: Այդ զեկուցման հիման վրա 1908 թ. մայիսի 15-ին Շահույժյանը «Бакинский пролетарий» անկեզպ թերթում հրատարակում է «Դասակարգային պայքարը և տնտեսական տեռորը» հոդվածը:

«Բուրժուազիայի առանձին անձնավորությունների դեմ,- գրում է Շահույժյանը իր հոդվածի սկզբում,- հուսալքված ու սովալլով խմբերի ու առանձին անձնավորությունների պայքարը ձգտում է գրավել պրոլետարական մասսաների լայն ու բացահայտ ելույթների տեղը, կազմակերպված դասարկարգային պայքարի տեղը: Էքսպրոպրիացիաները և տնտեսական տեռորը բանվորական մասսաների մեջ բույն դնելու միտում են դրսևորում»:

Շահույժյանը նշում է, որ բանվոր դասակարգը ամբողջությամբ չահազրգոված է ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական տեռորի դեմ:

պայքարի մեջ և ընդգծում է հետևյալը. «Կառավարության համար, բուրժուազիայի համար տեռորը սարսափելի չէ: Ընդհակառակը, ինքնակալական կարգերի դեմ պայքարի փոխարեն՝ պայքար այս կամ այն ցարական մինիստրի դեմ, կապիտալիստական կարգի դեմ պայքարի փոխարեն՝ պայքար կապիտալի առանձին ներկայացուցիչների ու սպասավորների դեմ,- արանից ավելի ցանկալի ի՞նչ կարող է լինել պրոլետարիատի թշնամիների համար»:

Իր միտքը հաստատելու համար Շահույժյանը բերում է մի շարք փաստեր: Այսպես, Ալեքսանդր 2-րդ ցարի սպանությունից հետո, ինքնակալությունը չի տասպալվել, այլ ավելի է ամրապնդվել նրա հաջորդի՝ Ալեքսանդր 3-րդի թագավորությամբ: Ցարական կառավարությունը որևէ բան չի կորցրել ներքին գործերի մինիստր Պլենկի սպանությունից: Նրան փոխարինած Ստոլիպինն ավելի եռանդով է գործում ինքնակալության ամրապնդման և հեղափոխական ուժերի դեմ պայքարն ուժեղացնելու համար:

Շահույժյանը նշում է նաև, որ տնտեսական տեռորից էլ բուրժուազիան չի մնասկում, որ այդ պայքարը «մազաչափ էլ չի կարող խտրվել կապիտալիստական շահագործման հիմքերը», որ կապիտալիստների համար նույնիսկ տնտեսական տեռորն ավելի շահավետ է:

Այնուհետև Շահույժյանն ընդգծում է, որ քաղաքական պայքարի ասպարեզում կառավարող դասակարգերի համար տեռորի շահավետությունն ասպացուցված է բազմաթիվ փաստերով: Նա, դարձյալ իր միտքը հիմնավորելու համար հիշեցնում է, թե ինչպես Փրանսիայի, Անգլիայի, Բելգիայի, Իտալիայի, Գերմանիայի կառավարությունները հատուկ կերպով ֆինանսավորում են անարխիստական խմբավորումների, որոնք իրականացնում են մահափորձեր, ոստիկանական գործակալների ներդնում են սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների շարքերը, նրանց մահափորձերի ուղին մղելու հատուկ նպատակով, իրենց ծառայությունն առաջարկելով պայթուցիկ նյութեր, զենք ձեռք բերելու համար:

Եվ իր բերած փաստերից ելնելով, Շահույժյանը նկատում է, որ դրանք «առնանափայլում և անհերքելի կերպով ասպացուցում են, որ անհատական, քաղաքական տեռորը մի միջոց է, որը ձեռնառու է իշխող դասակարգերի և կործանարար՝ պրոլետարիատի համար»:

Անդրադառնալով տնտեսական տեռորին, Շահույժյանը գրում է, որ դա «նույնիսկ չա՛տ ավելի փոսնազավոր է պրոլետարիատի համար, քան քաղաքականը», որովհետև տնտեսական տեռորը «մասաայական պայքարը բացառող առանձին անձանց մենամարտն է»:

Շարունակելով իր փաստարկումները, Շահումյանը նշում է.

Առաջին. Տնտեսական տեռորը բանվորներին «վերադարձնում է դեպի պայքարի Հին ձևերը, այն անգիտակից բանվորների, որոնք կարծում էին, թե տիրող չար կամքն է աղքատության ու կեղեքման պատճառը»:

Երկրորդ. Տնտեսական տեռորը մինչև օրս էլ բանվորների Հետամնաց խավերի ուշադրությունը մղում է բուրժուազիայի առանձին անձանց դեմ և բանվորների մեջ սերմանում է դատարկ հույս, թե «սանձահարելով նրանցից առանձնապես վայրագներին, իրենք կարող են բարելավել իրենց ստրկական դրությունը»:

Երրորդ. Տնտեսական տեռորը հաճախ խլում է «բանվորներից ամենալավ ընկերներին», որոնք, մեծապես գիտակից լինելով, կարող էին հսկայական օգուտ բերել պրոլետարիատի կազմակերպությանը:

Չորրորդ. Տնտեսական տեռորը մեծապես խանգարում է սոցիալ-դեմոկրատիայի ամենօրյա լայն քարոզչությանը և խոչնդատում է մասսայական պրոլետարական կազմակերպություններ ստեղծելու գործին:

«Ահա, թե ինչու,- եզրակացնում է Շահումյանը,- սոցիալ-դեմոկրատիան մերժում է տնտեսական տեռորը և ամենուրեք եռանդուն պայքար մղում դրա դեմ»:

Շահումյանը, նկատի ունենալով, որ Բաբելում «ուրիշ կազմակերպություններ ու խմբեր» երևելով իրենց նպատակներից, նույնպես տնտեսական տեռորի դեմ պայքար են հայտարարել, գրում է, որ «այդ պայքարը հաջողությամբ մղելու համար հարկավոր է ամենից առաջ ճիշտ հասկանալ տնտեսական տեռորի էությունն ու նշանակությունը»:

Այստեղ Շահումյանը հիշատակում է նալթարոյունաբերողների շահերը պաշտպանող «Нефтяное дело» թերթի Հետևյալ մտքերը, թե տեռորը «ամբողջ վրդովեցուցիչ բռնությունն է մարդու դեմ», թե տեռորը «ոճրական է իր բարոյական բնույթյամբ», թե «չկան բարոյական օրենքներ, որոնք կարողանային արդարացի կազմանային ինքնադատաստանը», թե տնտեսական տեռորի պատճառը «բանվորների սոցիալությունն է, նրանց հանցավոր կամքը», թե պրոլետարիատի կազմակերպությունները իրենց քարոզչությամբ, չարակամությամբ կապիտալիստների դեմ տեռոր են առաջացնում: Կապիտալիստների խոսափողը կոչ էր անում. «Կորչի ամեն մի բռնություն»:

Այս թերթի ելույթը բնորոշելով որպես ցինիզմ, Շահումյանը գրում էր. «Բռնության դեմ են խոսում մարդիկ, որոնց ամբողջ գոյությունը հենվում է բռնության վրա: Բռնության վրա է պահվում ամբողջ բուրժուական հասար

ակարգը, միայն բռնության միջոցով են իշխող դասակարգերը հնազանդության մեջ պահում իրենց կողմից թալանվող ու շահագործվող մասսաներին: Ամենակուպիտ բռնությամբ է ուղեկցվում նրանց յուրաքանչյուր քայլը, նրանց յուրաքանչյուր արարքը: Մահով ու բռնությամբ են ավերում նրանք բանվորների շարքերը»:

Իսկ եթե, գրում է Շահումյանը, բանվորների մեջ գտնվում են մարդիկ և համարձակվում են նույն կերպ պատասխանել բուրժուազիային, ապա նրանց անվանում են «անբարոյականներ», «Հանցագործներ»:

Այնուհետև Շահումյանն անդրադառնում է իրեն բանվորական թերթի հայտարարող մենչևիկների ղեկավարությամբ գործող «Սեխանիկական արտադրության բանվորների միության» խոսափող «ПРОМЫСЛОВЫЙ ВЕСТНИК»-ի տեսակետին: Այս թերթը չի պարզում տնտեսական տեռորի օբյեկտիվ պատճառները, դրանք չի արժևորում իբրև բուրժուազիայի դեմ պայքարելու հնացած միջոց: Այդ ամենի փոխարեն մենչևիկյան թերթը «բարոյական գայլույթ է թափում բոլորովին անմեղ մարդկանց սպանության անստության և դատանության դեմ», սպանություններ կատարող «աննորմալ անհատների բարբարոսություն» դեմ:

Դրանից էլ երևելով մենչևիկյան թերթը բանվորներին առաջարկում է «Կորչի ամեն տեսակ բռնություն» լողունքը: Իսկ դա, նշում է Շահումյանը, նշանակում է եռանդուն պայքար մղել «ընդհանրապես հենց ամեն տեսակ բռնության դեմ»: Այդ լողունքը նշանակում է հրաժարվել «միջազգային սոցիալ-դեմոկրատիայի լավագույն ավանդույթներից, դա ծաղր ու ծանակ է այն հերոսական պայքարի հանդեպ, որ մղել է ռուսաստանյան պրոլետարիատը հենց նոր ապրած հեղափոխական տարիներում»:

Մինչդեռ, ըստ Շահումյանի, բանվոր դասակարգը երբեք և ոչ մի տեղ չի հրաժարվել «ընդհանրապես բռնությունից»: Նա ընդգծում է, որ «չարին բռնությամբ չլիքնադրելու» նողկալի ռեակցիոն քարոզը միշտ էլ խորթ է եղել պրոլետարիատին:

«Երբ,- գրել է Շահումյանը,- վրա են հասնում անցյալի հնացած ու նեխված հիմքերի խորտակման ժամանակաշրջանները, երբ պատմական գործողության համար բավականաչափ հասունացած մասսաները բեմ են դուրս գալիս, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան կանգնած է լինում «բռնություն» գործադրող և իրենց ճանապարհին եղած ամեն մի խոչընդոտ անողբաբար խորտակող մարտիկների շարքերում»:

Այնուհետև Շահումյանը բացատրում է, որ, եթե սոցիալ-դեմոկրատիան արտահայտվում է տնտեսական ու քաղաքական տեռորի դեմ, ապա դա չի

նշանակում, որ նա ելնում է «քրիստոնեական առաքինության նկատառումներից», չի դատապարտում «տեոտրն ընդհանրապես, սկզբունքորեն, որպես բռնություն»: Շահումյանը գրում է, որ սոցիալ-դեմոկրատիան տեոտրը դիտում է նպատակահարմարության տեսակետից և տեոտրը մատուցույց է անում որպես պայքարի անպետք միջոց «այն ժամանակաշրջաններում, երբ չկան մասսայական հեղափոխական երեյթներ, երբ դասակարգային պայքարի դեկլարման հիմնական խնդիրն է մասսայական կազմակերպությունների ընդդիմությունը և անրանց նախապատրաստումը մասսայական գործողությունների համար»:

«Մենք,- շարունակում է Շահումյանը,- դատապարտում ենք անհաստատան տեոտրը ոչ թե նրա համար, որ չենք ուզում «ահաբեկել», այսինքն՝ վախեցնել, սարսափեցնել բուրժուազիային: Ընդհակառակը, մենք մերժում ենք անհաստատան տեոտրը հատկապես իբրև միջոց, որը բավականաչափ չի վախեցնում բուրժուազիային, այլ միայն կազմալուծում է պրոլետարիատին: Մենք անհաստատան տեոտրը մերժում ենք՝ հանուն մասսայական հեղափոխական տեոտրի»:

Հորվածի վերջում Շահումյանը նշում է, որ վերը նշված պատճառից ելնելով «սոցիալ-դեմոկրատիան պետք է էլ ավելի եռանդով պայքարի «միասակար և բանվորական շարժման պատմությանը դատապարտված մեթոդի՝ տնտեսական տեոտրի դեմ»:

Այդ պայքարը, եզրափակում է Շահումյանը, «անհրաժեշտ է մեր պրոլետարական կազմակերպությունն ամրապնդելու և մեր գիտակցական դասակարգային պայքարն ուժեղացնելու շահերի տեսակետից»: (Ստ. Շահումյան, Նույն տեղը, հ. երկրորդ, էջ 50-57):

**«ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՌՈՐԸ
ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ»**

Շահումյանի Հորվածի հրապարակումից հետո ՌՄԴԲԿ Բաբվի կոմիտեի անդամները, նրանց համախոհ առավել գիտակից բանվորները եռանդուն աշխատանք էին տանում քաղաքական և տնտեսական տեոտրով հրապարակվածներին համոզելու իրենց ընտրած սխալ ճանապարհից հրաժարվելու համար:

Հենց այդ նպատակով էլ 1908 թ. հոկտեմբերի 10-ին «Бакинскійъ рабoчійъ» թերթում հրապարակված «Տնտեսական տեոտրը և դասակարգային պայքարը» Հորվածում Շահումյանը նորից անդրադառնում է այդ ցարփոտ ու հրատապ հարցին:

Շահումյանը դարձյալ ընդգծում է, որ կապիտալի առանձին ներկայացու-

ցիչների ու ծառաների սպանություններով չի կարելի վերացնել ճնշումն ու շահագործումը: Իսկ այդ ճնշումը բանվորները կզգան այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի կապիտալիստական հասարակարգը: Այդ ճնշումն ու հարածանքը հնարավոր է վերացնել միայն ամբողջ բանվոր դասակարգի կազմակերպված պայքարի միջոցով:

Շահումյանը բացատրում էր, որ անհրաժեշտ է, որպեսզի կապիտալիստական ճնշման դեմ բանվորների վրդովմունքը «հանգեցնի բանվոր դասակարգի ազատագրման համար մղվող գիտակցական պայքարի, այլ ոչ թե տեոտրիստական ակտերի, որոնք միայն կազմալուծում են բանվորներին և, բնականաբար, խանգարում են նրա ազատագրական պայքարին»:

Նկատի ունենալով, որ Բաբվի նավթարդյունաբերողները բանվորներին ճնշելու նպատակով դիմում էին լոկաուտների, մասսայաբար գիտակից բանվորներին զրկում էին աշխատանքից, Շահումյանն առաջ էր քաշում հետևյալ հարցը, գրելով. «Կարո՞ղ են արդյոք բանվորները սպանությունների միջոցով պահպանել իրենց նվաճումները, որոնք այժմ փորձում են նրանցից խլել, և առավել ևս՝ նոր նվաճումներ ձեռք բերել»:

Պատասխանելով այս հարցին, Շահումյանը գրում էր հետևյալը. «Յուրաքանչյուր քիչ թե շատ լրջախոհ բանվոր, որը հետևում է բանվորական շարժման ընթացքին, թեկուզ միայն Բաբվում, պետք է գիտենա, որ ահաբեկմանն ու սպանությունների միջոցով չի կարելի մազաչափ անգամ դեպի լավի փոխել բանվորական մասսայի դրությունը»:

Շահումյանը իր միտքը հաստատելու համար հիշեցնում է, որ ամեն մի պանված կառավարիչի փոխարեն խոշոր նավթարդյունաբերողները վարձում են նոր կառավարիչ, որը վարում է նույն ճնշման քաղաքականությունը: Վերջապես, նրանց տրամադրության տակ են ոստիկանությունը, զորքը, որոնց դեմ անհատ բանվորը իր մատչելի միայնակ ոչինչ անել չի կարող:

«Բաբվի բանվորները,- գրում է Շահումյանը,- գիտեն անարխիստական շատ խմբերի գոյության մասին, որոնք գործում են մատչելիների օգնությամբ: Արդյոք չա՞տ բան է մնացել նրանց «եռանդուն» գործողություններից»:

Շահումյանն ընդգծում է, որ անարխիստական այդ խմբերի գործունեությունը որևէ օգուտ չի տվել, այլ միայն այլասերել է բանվորներին և նրանց «կորել կապիտալի դեմ մղվող իսկական պայքարից»:

Շահումյանն ընդգծում էր, որ որքան ավելի է ուժեղանում կապիտալի ճնշումը, այնքան ավելի զորեղ պետք է լինի աշխատանքը «բանվորական կազ-

մակերպությունների ամրապնդման և ընդլայնման ուղղությամբ», և բերելով Արևմտյան Եվրոպայի բանվորների օրինակը, ընդգծում էր. «ժամանակակից բանվորական շարժման ամբողջ ուժն այն է, որ նա առաջաբն է Հանում մասսաներին անհատների փոխարեն, դասակարգային պայքարը՝ կապիտալիստների առանձին ներկայացուցիչների դեմ մենամարտության փոխարեն, կազմակերպությունը՝ մարտերի փոխարեն»:

Վերջապես Շահումյանը նշում է. «Սեզ մոտ՝ Բաբլում սոցիալ-դեմոկրատները, էսէռները, դաշնակցականները, արհեստակցական միությունները՝ բոլոր պայքար են մղում ընդդեմ տնտեսական տեռորի»: Նա խնդիր էր դնում, որ հարկավոր է տնտեսական տեռորի դեմ պայքարը մղել ավելի եռանդուն, այլապես հակառակ դեպքում «տնտեսական տեռորը սարսափելի բարոյալքում կմտցնի բանվորների շարքերում, կթուլացնի ներկայումս առանց այդ էլ թույլ բանվորական կազմակերպությունները և կարճ ժամկետում հնարավորություն կտա կապիտալիստներին բանվորներից ետ խլելու վերջին տարիների բոլոր նվաճումները»:

Շահումյանի վերահիշյալ ակնարկից պարզ է դառնում, որ տնտեսական տեռորի դեմ պայքարում Բաբլի դաշնակցականները սոցիալ-դեմոկրատների հետ ևս համերաշխ են եղել: Սա կարևոր իրողություն է, մանավանդ, եթե նկատի ունենանք, առհասարակ, անհատական տեռորի նկատմամբ դաշնակցության դրսևորած հրապուրանքը:

Շահումյանը նորից ու նորից կոչ էր անում. «Կազմակերպված դասակարգային պայքար, այլ ոչ թե կազմալուծիչ տեռոր,- ահա այն դրոշը, որի շուրջը ներկայումս պետք է համախմբվեն բոլոր գիտակից բանվորները»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 92-96):

ՈՒԵԱԿՑԻԱՆ ԳՆԱԼՈՎ ՈՒԺԵՂԱՆՈՒՄԷ

1908 թ. օգոստոսին ՌՄԻԲԿ Բաբլի կոմիտեն որոշում է երեք լեզվով՝ ռուսերեն, հայերեն և աղբյուրներեն, հրատարակել նոր թերթ: Դեռևս 1906 թ. լույս էր ընծայվել անլեզու «Бакинский рабочий» թերթը: Այժմ էլ որոշ փում է նոր թերթը դարձյալ հրատարակել «Бакинский рабочий» անվամբ:

Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Պ. Զափարիձեն, Վ. Եֆիմովը և ուրիշ ներ ձեռնամուխ են լինում իրազործել այդ թերթի տպագրությունը: Սակայն նյութական միջոցների պակասության պատճառով «Бакинский рабочий» թերթը հնարավոր է լինում հրատարակել միայն ռուսերեն:

1908 թ. սեպտեմբերի 6-ին այդ թերթը լույս է տեսնում Շահումյանի և

Զափարիձեի խմբագրությամբ: Թերթի առաջին համարում հրատարակվեցին Շահումյանի գրած երեք հոդվածները՝ «խմբագրության կողմից» առաջնորդողը, «Բալխանի: Մանթաշեյան լուկաուտը» և «Բաբու. 6 սեպտեմբերի»:

Առաջնորդող հոդվածում Շահումյանը ներկայացնում է թերթի խնդիրները և նշում, որ հարկ չկա «չստ ծավալվելու մեր ծրագրի մասին, այն ուղիների մասին, որոնցով մենք կղնանք և դեպի ուր կկանչենք Բաբլի պրոլետարիատին: Սենք հին ծանոթներ ենք Բաբլի բանվորների հետ և քաջ գիտենք միմյանց»:

Այնուհետև Շահումյանն ընդգծում է, որ նոր թերթը կպաշտպանի նախկին «Гудок» թերթում արտահայտված գաղափարները, այն է՝ դասակարգային գիտակցություն, միավորում և կազմակերպություն: «Սենք,- գրում էր Շահումյանը,- այժմ էլ դրանք համարում ենք միակ ճիշտը, մենք դրանք կպաշտպանենք, մեր ուժերի ու կարողության չափ ծառայելով Բաբլի պրոլետարիատի շահերին»:

«Ընկեր բանվորներ,- կոչ էր անում Շահումյանը,- որքան ավելի մեծ հետաքրքրությամբ դուք վերաբերվեք նրան (թերթին), որքան ավելի ակտիվ մասնակցեք նրանում, այնքան ավելի լիակատար կերպով այն կարտացոլի ձեր կարիքներն ու ցանկությունները, այնքան ավելի հաջողությամբ կպարգաբանի ու կպաշտպանի ձեր շահերը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 72-73):

1908 թ. անհիմն պատճառաբանությամբ «Մանթաշե և Ընկ. » ֆիրման լուկաուտ էր հայտարարել և 500 բանվորներից պահանջել էին ազատել բնակարաններն ու փակել հաշիվները: Զհամաձայնվելով դրանց, բանվորները պայքար են հայտարարում ֆիրմային: Շահումյանն անձամբ մասնակցում է բանվորների պահանջների ձևակերպմանը:

Իր հոդվածում հանգամանորեն անդրադառնալով հայտարարված լուկաուտի դեմ բանվորների պայքարին, Շահումյանը նրանց կոչ է անում «պայքարը չարունակել նույնքան կազմակերպված և գիտակցորեն, որքան մինչև այժմ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 74-77):

Այս լուկաուտի մասին Շահումյանը գրել է նաև «Пролетарий» թերթում, 1908 թ. հոկտեմբերի 16-ին, նշելով, որ լուկաուտը տարածվել է Բաբլի բազմաթիվ ֆիրմաններում ու ընկերություններում, որ կապիտալի հարձակումը «արտահայտվում է ամենուրեք»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 97-99):

«Բաբու, 6 սեպտեմբերի» հոդվածում Շահումյանն անդրադառնալով հե-



«Бакинский рабочий» քերթի խմբագրությունը (1907-1908թ.թ.)

Չախից աջ նստած են՝ Բատիրև, Շահումյան, Յակուշև, Չափարիձե,

Եֆիմով (Սարատովեց)

Կանգնած են՝ Սպանդարյան, Նյուշին

դափուխության պարտության, սկսված ռեակցիայի պայմաններում պրոլետարիատի առջև ծառայած դժվարություններին, կազմակերպվածության բացակայությունը, գրում է. «Ռեակցիայի Հայրժամակով թևավորված բուրժուազիան ամենուրեք սրտել է Հարձակվիլ բանվորների վրա: Թողնված լինելով իրենք իրենց, գրվված լինելով դատակարգային անհրաժեշտ Հենարանից պարզորոշ գիտակցությունից ու ամուր կազմակերպություններից բանվորները սրտել են անօգնական կերպով նահանջիլ թշնամու Հանդեսը»:

Շահումյանը գլխավոր խնդիրն է համարում. «Նախտեղ Բաքվի բանվորների դատակարգային ինքնագիտակցության զարգացմանը, աշխատող պրոֆետարիատի միությունների ու կոոպերատիվների ամրապնդման վրա, դատարկարգային պայքարի Հողի վրա կանգնած ամեն տեսակ բանվորական կազմակերպությունների ստեղծման վրա»:

«Միայն այդպիսի աշխատանքը,- չարունակում է Շահումյանը,- Բաքվի բանվորական շարժումը կազատի պայքարի անարխիտական ձևերից (տե-

տեսական տեսություններից, հրկիզումներից և այլն), որոնք առաջանում են պրոլետարիատի գիտակցության ու դատակարգային կազմակերպության թուլության հիման վրա»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 78-80):

Ռեակցիան գնալով ուժեղանում էր: Չափից ավելի վատթարանում էր աշխատավոր մարդկանց սոցիալական ու տնտեսական դրությունը: Նախթարդյունաբերողներն անցնում են Հարձակման: Առաջին հերթին նրանք հրաժարվում են կոլեկտիվ պայմանագիր մշակելու խորհրդակցությունից, դրա համար մեղքը զցելով գիտակից բանվորների վրա: Նրանք գործածում են տուգանքների համակարգը, իջեցնում են բանվորների աշխատավարձը, կրճատում են հաստիքները, բանվորներին ստիպում են հեռանալ արհմիության անդամությունից: Լոկաուտը դառնում է սովորական միջոց: Հարյուրավոր բանվորներ փողոց են չարտվում:

1908 թ. սեպտեմբերի 27-ին «Бакинский рабочий» թերթում հրատարակված «Բանվորական կազմակերպությունները և ռեակցիան» հոդվածում բերելով տվյալներ Գերմանիայի պրոլետարիատի փորձի մասին, Շահումյանը նկատի ունենալով վերջին տարիներին Բաքվի բանվորների ձեռք բերած նվաճումները, ընդգծում է «ձերկա ռեակցիայի ժամանակ, այդ նվաճումները պաշտպանելու համար» ամուր կազմակերպություններ ստեղծելու անհրաժեշտությունը:

Շահումյանը նշում է, որ ռեակցիայի ազդեցության հետևանքով պայքարից, պրոլետարիատից հեռանում են ինտելիգենտական որոշ խմբեր, «հիստրիաիկաձևների», «հուսահատվածների» ոչ-պրոլետարական տարրեր, բայց, ինչպես գրում է նա, «պրոլետարիատը տեղ չունի գնալու ինքն իրենից, իր դատակարգային պայքարից»:

Շահումյանն ընդգծում է, որ ինչքան էլ ուժեղանա ռեակցիան, միևնույնն է, նա «չի կարող կանգնեցնել կյանքը և ժամանակակից կյանքի գլխավոր ներվը՝ դատակարգային պայքարը», որը պրոլետարիատին «երկաթյա անհրաժեշտությամբ» թեղադրում է համախալվիլ ու կազմակերպվել:

Շահումյանը խնդիր է դնում ամրապնդել ու ընդլայնել պրոլետարիատի կազմակերպությունը: «Թե ինչպիսի կազմակերպություններ մենք պետք է ներկայանան ամրապնդելու ու պաշտպանելու, ինչպիսիները կազմակերպենք նորից, ինչպես պետք է մենք անենք այդ բոլորը, ուր կանչենք ընկերներին,- հենց այդ ամենի պարզաբանումն էլ հանդիսանում է մեր խնդիրը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 87-91):

Հետագա օրերին Շահումյանը «Бакинский рабочий» թերթում հրա-

պարական հողվածներում («Հոկտեմբերի 17-ը», «Պետական դումայի երկրորդ նստաչրջանը», «Հողային հարցը Պետական դումայում») բանվորների ուշադրությունն է հրավիրում 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստի միջոցով ժողովրդին խաբելու, ինքնակալության սարքած որոգայթների մասին: Նա ընդգծում է, որ Պետական դուման դպրոց է պրոլետարիատի դասակարգային դաստիարակության համար, որ դումայի գործունեությունը պարզաբանելու միջոցով պետք է «վերջնականապես խորտակել ամեն տեսակ պատանդները»:

Իշխանություններն այլևս չէին հանդուրժում «Бакинский рабочий» թերթի գոյությունը: Երբ արդեն Հեղափոխական շարժումը սկսված ռեակցիայի պայմաններում թուլացել էր, հակահեղափոխությունն ամբողջ ճակատով անցել էր հարձակման, 1908 թ. հոկտեմբերի սկզբին, ինչպես հայտնում է Շահակյայի Մ. Յիսակյային ուղարկած նամակում, Բաքվի քաղաքապետ զեդապետ Մարտինովի կարգադրությամբ «պտանգավոր ուղղություն» ունենալու պատճառաբանությամբ 17-18 համարից դադարեցվում է «Бакинский рабочий» թերթի տպագրությունը: (Ստ. Շահակյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 110):

«...ՄԵՁ ՏԱՌԱՑԻՈՐԵՆ ԽԱՉՈՒՄ ԵՆ...»

1908 թ. հոկտեմբերի 10-ին Բաքվի նահանգային ժանդարմերիան ձեռք բերված գործակալական տվյալներով պարզում է, որ «Бакинский рабочий» թերթի փաստացի խմբագիրը Ստեփան Շահակյանն է: «Ըստ գործակալական տեղեկությունների,- ասվում էր ժանդարմերիայի զեկուցագրում,- Բաքվի «բոլշևիկյան» ֆրակցիայի գլուխ այժմ կանգնած է Ստեփան Շահակյանը, որը ծառայում է նավթարդյունաբերողների խորհրդում: Հիշյալ Շահակյանը իր մոտ պահում է կուսակցական անլեզալ գրականություն և անմիջապես հարաբերությունների մեջ է գտնվում անլեզալ սպարանի աշխատակիցների հետ: Այդ սպարանի աշխատակիցներից մեկը, ամեն օր, սովորաբար առավոտյան ժամը 7-ին, լինում է Շահակյանի մոտ»

Շահակյանը, չնայած գտնվում էր ոստիկանության մշտական հսկողության տակ, լեզալ և անլեզալ հարավորությունները հմտորեն օգտագործելով, շարունակում է տանել Հեղափոխական աշխատանք, գլխավոր ուշադրությունը դարձնելով բանվորական կազմակերպությունների պահպանման գործին: Դա չափազանց դժվարին գործ էր, մանավանդ, որ ձերբակալվել էին Բաքվի կոմիտեի շատ եռանդուն անդամներ և նոր մարդկանց կարիքն առանձնապես էր զգացվում:

Մ. Յիսակյային ուղարկած նամակներից մեկում Շահակյանը գրում է, որ իրենց աշխատանքում զգացվում է «չափ ցուրտներ և խոհուն մտտեցում ունեցող ընդունակ աշխատողների կարիք» և խնդրում էր հարավորության ղեպչում այդպիսիներին ուղարկել Բաքու: (Ստ. Շահակյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 69):

Այդ նույն նամակում Շահակյանն անդրադառնում է աշխատանքի պայմաններին և գրում է, որ դրանք «սովախի դժվարացել են. մեզ տատացիորեն խաչում են, ամեն կողմից թժխակոծում են, ստորացնում», որ բանվորների մեջ օրեցօր ուժեղացող ռեակցիայի հետևանքով երբեմն հեռանում են լավագույն բանվորները:

Այնուհետև Շահակյանը գրում էր, որ «փողի տեսակետից» գտնվում են այնպիսի դժոխային պայմաններում, որ չեն կարողացել «ճարել նույնիսկ մի հին վերարկու» ձերբակալված Կորայի (նկատի ունի Ստայինին-Վ. Պ.) համար, որը «ոչ մի կուպել փող չունի» և արտաքսվում է հյուսիս: Շահակյանը հայտնում էր նաև, որ «ոչ մի դրամական մուտք չկա, պրոֆեսիոնալները քաղցում են և ուշազնաց են լինում ու հրվանդանում»: Շահակյանը գրում էր, որ ինքը և Ջափարիձեն խրվել են «այնպիսի պարտքերի մեջ», որ ամեն լուպե ապաստում են «ամեն տեսակի անախորժությունների»: (Ստ. Շահակյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 110-111):

Չնայած ստեղծված դժվարություններին, Շահակյանը 1908 թ. նոյեմբերի սկզբին Մ. Յիսակյային ուղարկած նամակում գրում էր, որ «առույզ կերպով կանգնած ենք մեր պոստերում և աշխատում ենք, կանգ չառնելով ոչ մի բանի առաջ»: (Ստ. Շահակյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 108):

Մ. Յիսակյային ուղարկած վերոհիշյալ նամակում Շահակյանը հայտնում է, որ դադարեցված «Бакинский рабочий»-ի փոխարեն հոգ են տանում նոր թերթի մասին, որը «չուտով մեզ մոտ լույս կտեսնի»: (Ստ. Շահակյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 110):

ՎԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՄՆԻԿՅԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

1908 թ. օգոստոսի սկզբին Շահակյանը Ս. Սպանդարյանի, Դանուշ Շահվերդյանի, Արչավիր Մելիքյանի, Ասատուր Կախոյանի և բանաստեղծ Հակոբ Հակոբյանի հետ մեկնում են Ջալալօղլի, որտեղ քննարկում են ՌՄԻԲԿ կազմակերպության խնդիրները: Այստեղից Շահակյանը կապ է հաստատում Երևանի ՌՄԻԲԿ կազմակերպության, էջմիածնի հոգևոր ճեմարանում գործող սոցիալ-դեմոկրատական խմբակի հետ:

Շահակյանի գործունեության այս չրջանի մասին Ալեքսանդր Մյանիկը

յանը գրել է Հետևյալը. «Առաջին անգամ ես նրան տեսա 1907 թ. Բաքվում, երբ ինքս, որպես մի տարվա առաժ ունեցող սոցիալ-դեմոկրատ բոլշևիկ, աշխատում էի միաստանական Հայ կազմակերպության և Ռուսաստանի կուսակցության շարքերում: Վերջինիս կոմկասյան կազմակերպության պարագլուխներից մեկն էր Հաչվում Շահումյանը: Նա մեր նկատմամբ ավագ Հեղափոխական սերնդի ներկայացուցիչն էր: Ուներ առաջնակարգ հոետոր, գրող ու կազմակերպիչ բոլշևիկի համարում: Եվ եթե ի նկատի ունենանք նրա ծայրաստիճան բարեհաստեղ, համակրելի ու միանգամայն սիրելի ընկերական բնավորությունը, այն ժամանակ պարզ կլինի, թե ինչու նա մինչև վերջն է մնաց որպես ամենալավ ու Հեղինակավոր դեկավար»:

«Չնայած անլեզու պայմաններին, շարունակում է Մյաննիկյանը,- նրան գիտեին և Հարգում էին ոչ թե միայն կուսակցական բանվորները, այլև բազմաթիվ անկուսակցական և այլ կուսակցական բանվորներ: Այդ էր պատճառը, որ 1907, թե 1908 թթ. Բաքվի պրոլետարիատի պահանջով և նախարար-յունաբերական բուրժուազիայի գիջումով նա իր վրա վերցրեց նախարար-յունաբերության «ժողովրդական տների» կառավարիչի պաշտոնը»: (Աբգամյանը Մյաննիկյան, Ընտիր երկեր, Եր. 1957, էջ 357-358):

1909 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ ՄԵԿԸ

1909 թ. փետրվարի 17-ին Շահումյանի խմբագրությունը լույս է տեսնում «Волна» ամսագիրը: Մարտի 6-ին «Волна» ամսագրի թիվ 2-ում հրատարակվում է Շահումյանի «Լ. Մարտովի նոր Հայտնագործությունը» հոդվածը: Դրա գրելու առիթը եղել էր Մոսկվայի լիկվիդատոր-մենչևիկների թերթում տպագրված Լ. Մարտովի «Բուրժուազիայի «ձախանայր» վերնագրով հոդվածը:

Իր հոդվածում Մարտովը դատողություններ է անում Հեղափոխության մեջ բուրժուազիայի դեկավար դերի մասին և պնդում է, որ ռուսական բուրժուազիան գնալով «ձախանում» է:

«Յուրաքանչյուր բանվոր,- ընդգծում է Շահումյանը,- ամեն օր իր կաշվի վրա է գզում, թե այդ ինչպես է «ձախանում» մեր բուրժուազիան...: Սեզ համար հարցը բոլորովին այլ կերպ է դրված: Որ ռուսական բուրժուազիան անհուսալիորեն Հակահեղափոխական է...: Նրա ջանքերի նպատակն է բացարձակ միապետությունն իր շահերին հարմարեցնել: Մյուս կողմից հուճի սի 3-ի կառավարությունը կատարում է բոլոր փորձերը, որպեսզի դառնա բուրժուական միապետություն... ապահովի Ռուսաստանի կապիտալիստական զարգացման հնարավորությունը»:

Շահումյանը իր հոդվածն ավարտում է Հետևյալ եզրակացությամբ. «Սեզ համար խնդիրն այն է, թե արդյոք բուրժուազիային և կառավարությանը կհաջողվի՞ իրագործել իրենց դրած նպատակը: Եվ մենք կարծում ենք՝ ոչ, չի հաջողվի»: (Սո. Շահումյան, նույն տեղը, Հ. հրկրորդ, էջ 120-127):

Մոտենում էր 1909 թ. Մայիսի մեկը: ՌՄԴԿ Բաքվի կոմիտեն ընդհատակի ծանր պայմաններում բանվորներին նախապատրաստում էր նշելու Մայիսի մեկը: Նախապատրաստվում էին նաև իշխանության ուժերը՝ պատրաստ խեղդելու բանվորների ելույթը:

Բաքվի նախխարյունաբերողները դիմում են իրենց արդեն սովորույթ դարձած միջոցին՝ ահաբեկելով, որ աշխատանքից կազատեն կամ կհիսկեն գործարանները, եթե բանվորները մասնակցեն մայիսյանկյան ցույցերին: Բաքվի քաղաքապետ Մարտինովը հրամանով արգելում է տոնակատարությունը: Ոստիկանները մտնում էին նույնիսկ հանրակացարաններ և ծեծի ենթարկելով բանվորներին հարկադրում էին դուրս գալ աշխատանքի:

Չնայած իշխանությունների ձեռնարկած խիստ ու դաժան միջոցներին, Բաքվի արհեստանոցների, Հանքավայրերի բանվորների մեծ մասը Մայիսի մեկը նշում են գործադուլ Հայտարարելով:

«ԴՎԱՆՆԱՆՔՍ՝ ՀԱՅ ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ»

Մայիսի մեկի նշումը ձախողելու նպատակով ոստիկանությունը սկսում է ձերբակալություններ: Ապրիլի 30-ին ձերբակալվում է նաև Շահումյանը, որը գործակալների մատնությամբ համարվում էր մայիսյանկյան ցույցերի գլխավոր կազմակերպիչներից մեկը:

Ուղարկության ժամանակ Շահումյանի տանը ոստիկանները Հայտնաբերում են «միտումնավոր և հանցավոր գրականություն»՝ 75 ռուսերեն, 3 հայերեն գրքուկներ, «Волна» Հանդեսի 6 համար, «Бакинский рабочий», «Гудок» թերթեր, հարազատների գրած 18 նամակ և մեկ տետր՝ գրված հայերենով: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 21, թ. 2):

Մայիսի մեկին Բաքվի ժանդարմերիայի վարչությունում կազմվում է Շահումյանի հարցաքննության արձանագրություն:

Ահա մի քանի Հատված Շահումյանին տրված հարցերի և նրա պատասխանների մասին.

«Ի՞մ անունը. Ստեփան Գևորգովիչ Շահումյան: 28 տարեկան եմ, դավաճանաբար՝ Հայ լուսավորչական:

Մագրու՞մը և ազգությունը. Թիֆլիսի նահանգի բնակիչ: Զբարձունքը. Շիրակի նախխամուղի վարիչ:

Կյանքի միջոցները. Անձնական աշխատանքը:

Ընտանեկան դրությունը. Հայրը՝ Գևորգ Լազարև-60 տարեկան, ապրում է Թիֆլիսում, Բերուտովակայա փողոց, Իվանովի տուն, մայրը՝ Ելիզավետա Յոմինիչնա, 50 տարեկան: Բույրերը՝ Նատայա՝ 32 տարեկան և Հայկա-նուշ՝ 23 տարեկան, երկուսն էլ ամուսնացած են, ապրում են Բաբվում: Նա-տայան Դաշոտյանց է, Հայկանուշը՝ Աղամայանց: Կինը՝ Բեթևան Սեբ-գեննա, 30 տարեկան, երեխաները՝ 1) Սուրեն՝ 7 տարեկան, 2) Լևոն՝ 5 տա-րեկան, 3) Մարիա՝ 6 տարեկան:

Մտղների անտեսական դրությունը. Ոչինչ չունեն:

Դաստիարակութային ուսումնական հաստատություններում (տարրա-կան, միջնակարգ, բարձրագույն), մանրամասն նշելով դրանցից յուրաքանչ-յուրը մտնելու տարին, ինչպես նաև դուրս գալու դեպքում մեղադրյալի հե-րանալու տարին և տարիքը: Թիֆլիսի ռեալական ուսումնարան, երկու տա-րի լսել եմ Ռիզայի պոլիտեխնիկական ինստիտուտի դասընթացը և ապա լսել եմ հինգ սեմեստր Բեռլինի համալսարանում:

Ո՞րև հաշվին է դաստիարակվել յուրաքանչյուր ուսումնական հաստա-տությունում և դրանցից յուրաքանչյուրը չափաբաժնու պատճառը. Ազգա-կանների հաշվին:

Արդյոք նախկինում հետաքննության ենթարկվել է. Ոչ:

Առաջադրված մյուս հարցերին Շահումյանը տվել է հետևյալ պատաս-խանը. «Արդեն մեկ տարուց ավելի է, ինչ ապրում եմ Բաբվում: Մասայում եմ Բալախանիում, որտեղ կատարում եմ Շիրակի նալթամուղը 1908 թ. սեպտեմբերից: Ոչ մի քաղաքական կուսակցության չեմ պատկանում: Թե ինչի համար եմ ձերբակալվել՝ չգիտեմ: Ձեր կողմից ինձ ներկայացված գր-քույկները, թերթերը և հայերեն նամակները ես իմն եմ համարում: Այդ նա-մակները պատկանում են կոռուպցիայի: Տեսող իմն է: Ռուսներն գրված թղթի կտորն իմը չէ, այլ թողնված էր նալթամուղի գրասենյակում նրա կողմից, ով ընթերցարանի համար "Бакинскій рабочий" թերթն էր բերել: Այդ թեր-թիկի բովանդակությունն ամենևին ծանոթ չէ ինձ, իսկ դրա վերնագիրը իմ ուշադրությունը գրավեց միայն խոզարկության ժամանակ»: :

Հետո իր այս պատասխանին Շահումյանն ավելացրել է. «1906-1907 ու-սումնական տարում ես ուսուցչություն եմ արել Թիֆլիսի 4-րդ արական գի-մանդիայում: «Рабочий листок» թերթը ես չեմ հրատարակել և Լոնդոնի համազումարին չեմ մասնակցել»: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 26, թ. 2):

Շահումյանի քաղաքական անվտանգեցիկության մասին Բաբվի նահանգի ժանդարմական վարչության հարցման կապակցությամբ Թիֆլիսի նահան-

գի ժանդարմական վարչությունը 1909 թ. մայիսի 14-ին ուղարկել է հետևյալ պատասխանը.

«Շահումյանց Ստեփան Գևորգի, Թիֆլիսի քաղաքացի, Բեռլինի համալ-սարանի նախկին ուսանող:

1904 թ. ապրիլի 8-ին Թիֆլիս է եկել Բեռլինից, որտեղ, ըստ ոստիկանու-թյան դեպարտամենտի տեղեկությունների, գործել է վտարանդի հեղափո-խականների չրջանում: Թիֆլիս ժամանելուն պես կապ է հաստատել տեղա-կան սոց. դեմ. կազմակերպության գործիչների հետ, ինչպիսին են գյուղատն-տեսության կովկասյան ընկերության քարտուղար-ծառայող Քրիստափոր Սամուելյանցը և նախկին ուսուցիչ, քահանայի որդի Միրայիլ Յիսակյան և ուրիշներ:

Մասնակցություն է ունեցել 1904 թ. ապրիլի 18-ին Գուրլիխանի պողոտա-յում կայացած ցույցի կազմակերպմանը: 1904 թ. հոկտեմբերի 1-ին նորից մեկնել է Բեռլին: Թիֆլիսի նահանգապետի կողմից 1904 թ. սեպտեմբերի 27-ին տրված թիվ 718 արտասահմանյան անձնագրով: 1905 թ. մտել է սոցիա-լ-դեմոկրատական կազմակերպության մեջ և 1905 թ. հոկտեմբերի 19-ին, 20-ին և 21-ին հակակառավարական բնույթի ճառեր է արտասանել:

Գործակալների տեղեկությունների համաձայն, 1906 թ. ագիտացիա է մղել բանվորների, սովորողների և զորքերի մեջ: Առաջադրվել է Պետական դրամայի թեկնածու Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կողմից:

Գործակալների տվյալների հիման վրա, 1907 թ. ագիտացիոն աշխա-տանք է կատարել Յարաբովի գործարանի բանվորների մեջ, որոնց նա պար-բերաբար ժողովի էր հրավիրում: Մտել է բոլշևիկների «Գրական բյուրոյի» կազմի մեջ:

Սույն թվականի մայիս ամսին մասնակցել է սոցիալ-դեմոկրատական 5-րդ համագումարին Լոնդոն քաղաքում:

Շրջանային պահնորդական բաժանմունքի տեղեկությունների համա-ձայն, հիշյալ Ստեփան Շահումյանն այլ անձանց թվում Չուբալովի անվան ժողովրդական տանը կիրակի օրերին ագիտացիոն բնույթի դասախոսու-թյուններ է կարդացել»: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 110, թ. 1):

Բաբվի ժանդարմական վարչության քննիչը, որ վարում էր Շահումյանի նկատմամբ հարուցված քրեական գործը, նրանից պահանջում է Թիֆլիսից ստացված գրություն մեջ առաջադրված մեղադրանքի կապակցությամբ տալ բացատրություն:

Շահումյանը իր տված բացատրության մեջ նշում է հետևյալը. «Բեռլի-

նույն զարմալից ժամանակ ես չեմ եղել վտարանդի Հեղափոխականների շրջանում: Բեռլինում ինձ մոտ ոչ մի վտարանդի չի եղել: Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գործիչներից ոչ ոքի չեմ ճանաչում և նրանց հետ կապ չեմ ունեցել: Թիֆլիսում ոչ մի ցույցի չեմ մասնակցել: 1905 թ. ընդհանրապես Ռուսաստանում չեմ գտնվել: 1906 թ. ապրիլին Բեռլինից վերադարձել եմ Թիֆլիս, բանվորների, աշակերտների և գորգերի մեջ ազդեցության չեմ տարել, այլ եղել եմ Հավաքարի 4-րդ արական գիմնազիայի դասատու մինչև ուսումնական տարվա վերջը (1906-07): Իմ անձնավորության վերաբերյալ տեղեկություններ կարող է տալ գիմնազիայի տնօրեն Յա. Խ. Գուլաձեն:

Ես ոչ մի կուսակցության չեմ պատկանել և Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կուսակցության կողմից Պետական դռնալի թեկնածու չեմ առաջադրվել: Ռուսական սոցիալ-դեմոկրատական կուսակցության Լոնդոնի համագումարին մասնակցել չէի կարող, քանի որ 1906 թվականից, առանց բացակայության, ապրել եմ Թիֆլիսում, ապա Բաքվում:

Ես ենթադրում եմ, որ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությանը պատկանելու և ինձ ներկայացված այլ մեղադրանքները թյուրիմացություն են, կամ որևէ մեկի դանտը իմ հասցեին՝ չարությունից դուրս:

Խուզարկության ժամանակ ինձնից բռնազրաված գրքույկները վերցված են իմ գրադարանից: Այդ գրականությունը ես ունեցել եմ սեփական ընթերցանության համար՝ յուրաքանչյուր անուն գրքից մեկ օրինակ: Բոլոր գրքույկները լեզալ են, որոնք ես ձեռք եմ բերել գրախանութներից»: (Թ. Դուրձումի-Մուխոմե, Շահումյան, էջ 161):

Օգտվելով Շահումյանի ձեռքակալումից, նրա քաղաքական հակառակորդները 1909 թ. մայիսի 16-ին Ժողովրդական լուսավորության մինիստրին ուղարկված խնդրագրում հայտնում են, թե գիմնազիայի տնօրեն Գուլաձեն հրվանակվել է հայոց լեզվի դասատու Շահումյանին, որը «ատանում է աշխատավարձ, բայց հազվադեպ է դաս պարսպել, քանի որ նրան Գուլաձեն ուղարկում է Ռուսաստանի տարբեր քաղաքներ Հեղափոխական կուսակցությունների նիստերին մասնակցելու համար»: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 24, թ. 1):

Չնայած Բաքվի և Թիֆլիսի ժանդարմական վարչությունների գործադրած միջոցներին, չի հաջողվում ապացուցել Շահումյանին ներկայացված հանցանշանները և հարկադրված 1909 թ. մայիսի 19-ին նրան ազատում են բանտից, նախապես ստորագրություն վերցնելով Բաքվից չբացակայելու մասին: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 25, թ. 1):

Պետք է նշել, որ Շահումյանին բանտից ազատելու գործում կարևոր դեր է խաղացել նրա վարեմի դասընկեր Բեյբութ Ջիվանչիրը՝ կաշատելով գործը քննող ոտամիսոր Զայցկին:

ՈՍԴԲԿ ԲԱՔՎԻ ԿՈՄԻՏԵԻ ԲԱՆԱԶԵՎԸ

Բանտից դուրս գալուց հետո Շահումյանն ՌՄԴԿ Բաքվի կոմիտեի անունից, մայիսյան ցույցերի կապակցությամբ, գրում է Թուրքիկ, որն անմիջապես տարածվում է բանվորների միջավայրում:

Շահումյանը վերլուծում է բանվորների մայիսյան ելույթի անհաջողության պատճառները, մերկացնում է գործարանատերերի և իշխանությունների քաղաքականությունը:

Առաջին հերթին Շահումյանը նշում է, որ «մայիսյան գործադուլն այնքան էլ համերաշխ չէր», որովհետև ազդեցություն են գործել «կապիտալի գործադուլած ճնշումը, գործարանների փակումը, ոստիկանության բռնությունն ու սպառնալիքները»:

Բայց, ինչպես նշում է Շահումյանը, պետք է ամենից շատ վախենալ «պրոլետարական գործի նկատմամբ եղած ընդհանուր ռեակցիայից», որը նա անվանում է չարիք և անհրաժեշտ համարում դրա դեմ պայքար մղելը:

Շահումյանը նկատի ուներ այն իրողությունը, որ գիտակից բանվորներին չէին հետևել անգիտակից բանվորները, որոնք լինելով փոքրամասնություն, նրանց ցույց էին տվել դիմադրություն և շարունակել էին իրենց աշխատանքը և նշում էր, որ հարակավոր է ընդլայնել սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունն անգիտակից «բանվորների շրջանում, նրանց համախմբել պրոլետարիատի կազմակերպության շարքերում,՝ ահա օրվա այն հարցը, որ դրված է Բաքվի գիտակից պրոլետարիատի առջև»:

Շահումյանը կոչ էր անում. «Անողորք և դաժան պայքար թշնամու՝ բուրժուազիայի և կառավարության դեմ, որոնք նորից գործի են դնում սլիին ու մորակը, պայքար լիակատար հաղթանակի համնելու համար՝ այդ բանը ոչ մի լուրջ չպետք է մոռանա և ոչ մի գիտակից բանվոր»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երկրորդ, էջ 128-132):

1909 թ. մայիսի վերջին Բաքվում պրոլոկատորի ձեռքով սպանվում է հանրակարգի մեկի ինժեներ Բորիսույր: Մայիսի 30-ին գործարանատերերի և նավթարդյունաբերողների հովանավորությամբ նրանց մոտ աշխատող ինժեներները հավաքվում են տեխնիկական ընկերության դահլիճում և չվաքած միջոցառում քննարկում Բորիսույրի սպանության փաստը:

Բողոքելով սպանության դեմ, ինժեներների հավաքը դրա համար մեղադրում է Բաբայի գիտակից բանվորներին և իշխանություններին ներկայացնում պահանջ՝ ուժեղացնել ճնշումը, փակել բանվորական հանձնաժողովները, արհմիությունները, ձերբակալել բոլոր նրանց, ովքեր դեռ համարձակվում են խոսել բանվորների իրավունքների մասին:

Ինժեներների պահանջը համապատասխանում էր Բաբայի քաղաքապետի և ժանդարմերիայի նպատակներին: Դա առիթ էր տալու բանվորներին ձերբակալելու, նրանց նկատմամբ կիրառվող պատժի միջոցներն անարգել իրականացնելու համար: Իշխանությունները նախապատրաստվում էին նոր պրովոկացիայի:

ՌՄԴԲԿ Բաբայի կոմիտեն, չնայած Հայտնվել էր ընդհատակի ծանր պայմանների մեջ, 1909 թ. հուլիսի սկզբին հրավիրում է համաքաղաքային կոնֆերանս, որն ընդունում է Շահումյանի մասնակցությամբ կազմված բաՆԱՃԼԵՐ:

Բանաձևը բազմացվում է և տարածվում Բաբայի բանվորների մեջ: 1909 թ. օգոստոսի 8-ին այդ բանաձևն ամբողջությամբ հրապարակվում է Փարիզում լույս տեսնող «СОЦІАЛ-ДЕМОКРАТ» թերթում:

Բանաձևը մերկացնում է պրովոկացիայի կազմակերպիչներին և դատարարություն է վերոհիշյալ հավաքի մասնակից ինժեներներին, որոնք «հեշտ վատտակի համար պատրաստ են ամեն տեսակի ոճրագործություններ կատարել... որոնք ոսկե հորթի առջև իրենց եռանդազին ծառայամտությամբ պայքարի ասիական միջոցների ու դատաստանի են դիմում բանվորների դեմ... Համարձակվեցին մեղադրել գիտակից բանվորներին... Համարձակվեցին Հայհոյանքով ու սպառնալիքներով հարձակվել բանվորների ղեկավարների՝ գործարանային հանձնաժողովների, արհմիությունների վրա»:

Բանաձևն անարգանքի սյունին է գամում պարոնայք ինժեներներին, որոնք ցանկանում են հավատացնել բանվորներին, թե իրենք են բանվորների իսկական բարեկամները, իսկ գիտակից բանվորները, նրանց ղեկավարները պրոլետարիատի ամենաոխերիմ թշնամիներն են:

«Ձեզ չի հաջողվի,- սավում էր բանաձևում,- հավատացնել բանվորներին, թե Բորիսովի մահվան մեղավորները գիտակից բանվորներն են և պրոլետարիատի կազմակերպությունները: Նրանք պարզորոշ գիտակցում են, ինչպես և դուք ինքներդ, պպ. ինժեներներ, ձեր հոգու խորքում, որ ամենից առաջ դուք եք մեղավոր այդ մահվան և բազմաթիվ այլ մահերի մեջ: Դուք եք Բորիսովի սպանելի: Ձեր ամբողջ կյանքը, որը լի է ոսկու մրցակազմով, կրողպուտով ու անասու

կռիթյամբ, ձեր վարքագիծը, բանվորների դեմ մղած պայքարի ձեր եղանակները՝ բռնաջբը, խաբեությունը, բռնությունը, գիտակից բանվորների նկատմամբ ձեր կիրառած հարածանքները և պրոլետարական կազմակերպությունների դեմ մղած պայքարը՝ ահա սպանությունների հիմնական պատճառը»:

Բանաձևը նկատի ունենալով, որ ինժեներները նախարարապետներին, գործարանատերերի և իշխանությունների կամքով բանվորներին բացահայտ կերպով պատերազմ են հայտարարել, ընդգծում էր, որ այդ պատերազմում բանվորների «միջոցները կլինեն ոչ թե մասնությունները, ոչ թե սպանությունները, այլ բանվորական մասսաների կազմակերպումը, նրանց համախմբումը սոցիալ-դեմոկրատիայի կարմիր դրոշի ներքո, նրանց սովորեցնելը դասակարգային պրանաչափ պայքարին»:

Որո վրդպիմունք հայտնելով ինժեներների ու տեխնիկների ճառերի առթիվ, բանաձևը նշում է, որ «դրանց ամբողջ էությունն այն է, որ կատարյալ զրպարտության և պրովոկացիոն հերյուրանքների միջոցով ինչպես կառավարության, այնպես էլ ամբողջ կուլտուրական հասարակության աչքում վարկաբեկի բանվորական մասսաներին ու նրանց ներկայացուցչական հիմնարկները՝ միությունները և կուսակցությունը, և այդպիսի բնութագրությամբ սքողի իրենց անպատկառությունը շահագործվող դասակարգի նկատմամբ իրենց գիշատիչ քաղաքականությունը վարելու մեջ»:

ՌՄԴԲԿ Բաբայի կոմիտեն միաժամանակ կազմակերպում է 20 ֆիրմաների լիազորների ժողով 101 մարդու մասնակցությամբ: Այստեղ ընդունված բանաձևում նշվում է, որ «Բորիսովի սպանությունն անցանկալի փաստ է և հակասում է բանվորական կուսակցությունների ամբողջ տակտիկային»:

Լիազորների ժողովը կոչ էր անում Բաբայի պրոլետարիատին «կուլ չզնայ պրովոկացիային և շարունակել բոլոր բանվորներին իրենց միությունների և կուսակցության շուրջը համախմբելու գործը»: (ՍՏ. Հ. Բաբայան, Ստեփան Շահումյան, էջ 230-234):

Ինչպես վկայում է Ն. Կոլեսնիկովան, 1909 թ. օգոստոսին, գաղտնապահությունից ելնելով Սաբունչիի հիվանդանոցում Շահումյանի ղեկավարությամբ հրավիրվում է ՌՄԴԲԿ Բաբայի կազմակերպության անլեզալ խորհրդակցություն, որտեղ նա հանդես է գալիս կազմակերպությունում տիրող վիճակի մասին: Շահումյանը նշում է, որ հարկավոր է ուժեղացնել զգոնությունը, օգտագործել բոլոր լեզալ կազմակերպությունները և դրանց միջոցով ազդել բանվորների լայն մասսաների վրա: (Н. Колесникова. По дороге подполья, стр. 102).

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՆԿԱՏԱՍԻ ՈՒԺԵՂԱՑՎՈՒՄ Է ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Բաբվի և Թիֆլիսի ժանդարմական վարչությունները Շահումյանի նկատմամբ ուժեղացնում են գաղտնի հսկողությունը, ամենուրեք հետևում նրան: Շահումյանը գգում էր, որ իր շուրջը սեղմվում է օղակը, փորձում է հեռանալ Բաբվից: Այդ նպատակով նա 1910 թ. հունիսի 1-ին դիմում է Բաբվի քաղաքապետին, խնդրելով իրեն տալ քաղաքական բարեհուսության վկայագիր Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններից մեկին ներկայացնելու համար: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 29, թ. 1):

Շահումյանի դիմումի կապակցությամբ Բաբվի ժանդարմական վարչությունը քաղաքապետին գեկուցում է հետևյալը. «Ստեփան Գեորգիև Շահումյանը ՌՄԻԲԿ նշանավոր գործիչ է: 1909 թ. ապրիլի 30-ին նա խուզարկության է ենթարկվել ու ձերբակալվել, ըստ որում, խուզարկության ժամանակ նրա մոտ հայտնաբերվել է մեծ քանակությամբ անլեզալ հակակառափարական ուղղություն ունեցող գրականություն ու գրքուվեճեր»:

Ժանդարմական վարչությունն առաջարկում է մերժել «հիշյալ Շահումյանի նկրտումը»:

1910 թ. հուլիսի 8-ին Բաբվի քաղաքապետ Պ. Մարտինովը Շահումյանի մասին ժանդարմական վարչության, տեղեկության հիման վրա միջոցում է նրա դիմումը: Միաժամանակ Շահումյանի բնակարանում խուզարկություն է կատարվում, որի ժամանակ ոչինչ չի հայտնաբերվում: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 29, թ. 2):

Խուսափելով ոստիկանության հետապնդումներից, այնուամենայնիվ, Շահումյանին հաջողվում է 1910 թ. հուլիս-օգոստոսին գաղտնի հեռանալ Բաբվից և մեկնել Մոսկվա: Այստեղ նա հանդիպում է Ա. Մյասնիկյանին և մի շարք այլ ընկերների:

Հիշելով այդ մասին Մյասնիկյանը գրել է. «Ռուսաստանյան ոեակցիայի խուլ օրերին, կարծես 1910 թ. , երկու տարվա ընդմիջումից հետո, իրար հետ մենք տեսնվեցինք Մոսկվայում: Շահումյանը հոգնած էր, հանգստի մեծ կարոտություն ուներ նա: Մեր երկար գրույցը պտտվում էր օրվա քաղաքական անցուդարձերի ու ահռելի ոեակցիայի շուրջ. ոեակցիան լիովին տիրապետել էր և Կովկասին, այսինքն՝ նրա բանվորական չրճաններին, որ մինչ այդ, քիչ թե շատ չնչում էին: Շահումյանը ցավի կակիծով էր խոսում այն լքման մասին, որ մուտք էր գործել կուսակցության և կովկասյան կազմակերպությունների ներքո»:

Մյասնիկյանը հայտնում է նաև, որ Շահումյանը մտադրություն է ունե

ցել մնալ Մոսկվայում և զբաղվել գրականագիտությամբ, բայց պայմանների թերադրանքով նա նորից վերադառնում է Բաբու: (Հին բողեվիկների հիշողություններ, գիրք առաջին, Եր. 1958, էջ 18-19):

Մոսկվայում Շահումյանը մտադրություն ուներ ընդունվել համալսարան: Ըստ եղած տվյալների Շահումյանին հաջողվում է էքստեն կարգով ընդունվել համալսարանի իրավաբանական ֆակուլտետ: Այդ մասին նա 1911 թ. հունվարի 10-ին Ս. Տեր-Գրիգորյանին ուղարկած նամակում հայտնում է, որ բարեկամների աջակցությամբ կհաջողվի ավարտել համալսարանը: Նա տեղեկացնում է նաև, որ կարող է առանց պաշտոնը թողնելու «4-5 ամսով զնալ Մոսկվա», բայց Մոսկվայից ընկերը գրել է, թե Մոսկվայում ապաստում են «անկարգություններ» և «հանձն է առնում իմ փոխարեն գրվի դասախոսությունների, գրքերը ուղարկի ինձ բոլորը, իսկ մայիսին կգնամ քննությունները կտամ և կվերադառնամ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 329):

Այդ ընթացքում ոստիկանությունը տեղադրեց որոնում էր Շահումյանին, որն անհետացել էր նրա տեսադաշտից: Գաղտնի գործակալ Ջերնոնազովի հաղորդմամբ հայտնի էր դարձել, որ Շահումյանը մեկնել է Մոսկվա՝ Լենինի գործակալին հանդիպելու նպատակով:

Միջոցներ են ձեռնարկվում Մոսկվայում գտնել Շահումյանի հետքերը: Բայց ապարդյուն:

Մոսկվայի նահանգալիս պահուստական բաժանմունքի պետը Շահումյանի հետքը չգտնելուց հետո, 1910 թ. օգոստոսի 23-ի գրությամբ Բաբվի պահուստական բաժանմունքի պետից պահանջում է խուզարկել Շահումյանի բնակարանը՝ Մոսկվայում նրա ունեցած կապերը բացահայտելու նպատակով:

Շահումյանը, ինչպես ոստիկանության համար անսպասելի հեռացել էր Բաբվից, այդպես էլ անսպասելի վերադառնում է Բաբու:

Բաբվի ժանդարմական վարչության պահուստական բաժնի պետ, ռուս միտր Մարտինովը 1910 թ. օգոստոսի 21-ին հայտնում է, որ առայժմ ձեռնտու չէ Շահումյանի մոտ խուզարկություն կատարել և դա բացատրում է հետևյալ նկատառումներով. «Ստեփան Շահումյանը,- գրում է ռուս միտրը,- անցնում է ինձ վատահաված պահուստական բաժնով 1908 թվականից, իբրև ՌՄԻԲԿ Բաբվի կոմիտեի անդամ, նրա կազմակերպիչ, ղեկավար, բանվորական ս.-դ. անսպասելի անլեզալ խմբագիր, այնպես և անլեզալ շատ հորվածների հեղինակ: Շահումյանը մի գլուխ է, որի մոտ հավաքվում են կազմակերպության անդամները, որը համարյա վճռական ձայն ունի նրա բոլոր գործերում»:

Այնուհետև տեղեկացվում էր, որ Շահումյանը լուսաբանվում է բաժնի գործակալությամբ և նրա ձեռքակալումը մասնակար կլինի հետախուզության համար, «բանի որ նրան կորցնելով, բաժանմունքի աչքից կվերանա կենտրոնը, որի մեջ, ինչպես ճառագայթը հավաքող կիզակետում, հավաքվել և հավաքվում են կազմակերպության գործիչները»: (Ռ. Դուբինսկի-Մուխոմե, նույն տեղը, էջ 166-168):

Բաքվի ոստիկանությունը մերժում է նաև անձնագրի ժամկետը երկարացնելու մասին Շահումյանի խնդրանքը: Այդ մասին 1910 թ. հոկտեմբերի 3-ին կնոջ հորը գրած նամակում Շահումյանը հայտնում է, որ Բաքվում «թարախել են, չեն ուզում տալ: Թեև իրավունք չունին, բայց չեն ուզում հետներն ընկնել»: Այդ նամակով Շահումյանն ուղարկում է անձնագիրը կորցնելու մասին ոստիկանության տված վկայությունը, հույս ունենալով, որ որպես Թիֆլիսի բնակիչ կատանա նոր անձնագիր: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. հինգերորդ, էջ 326):

Գնալով ավելի էր ծանրանում Շահումյանի ընտանիքի տնտեսական վիճակը: Կուտակվել էին բավական մեծ պարտքեր: Դրան ավելանում էր Թիֆլիսում ապրող նրա ծերացած ծնողների կարիքի մեջ գտնվելը: «Փող գտնելը,- գրում է Շահումյանը 1910 թ. նոյեմբերի 5-ին Յիսակայային ուղարկած նամակում,- առհասարակ սարսափելի դժվարացել է»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 140):

Գաղտնի գործակալներ «Ֆիկուսը» և Չերնոմազովը շարունակում էին ոստիկանությանը հաղորդել Շահումյանի գործունեության մասին: Ն. Կոլեսնիկովայի վկայությամբ Շահումյանը հեղափոխականի սուր բնազդ ուներ և չէր վստահում Չերնոմազովին, որը Բաքու էր եկել, ներկայանալով ՌՄԻԲԿ Պետերբուրգի կոմիտեի ներկայացուցիչ: Միայն հետագայում է պարզվում նրա գաղտնի գործակալ լինելու հանգամանքը: (Н. Колесникова. По дороге подполья, стр. 102).

1910 թ. դեկտեմբերի 3-ին գաղտնի գործակալները ժանդարմական վարչությանը տեղեկացնում են, որ Շահումյանն արտասահմանից, առայժմ անհայտ երեք հասցեով առանում է սոցիալ-դեմոկրատական գրականություն: (Ս. Հ. Բաղդասյան, Ստեփան Շահումյան, էջ 242-243):

Բաքվում ստեղծված ծանր վիճակի մասին պատկերացում կազմելու համար հարկ են համարում ընթերցողին ներկայացնել Փարիզում լույս տեսնող սոցիալ-դեմոկրատական «Рабочая газета» թերթում 1911 թ. փետրվարի 11-ին հրատարակված Շահումյանի հորվածում բերված հոռույալ փաստերը:

Բաքվի նախարարյունաբերողները սկսել են բանվորներից վրեժ լուծել՝ զրկում են բնակարանի փողից, իջեցնում են աշխատավարձը, հեռացնում են իրենց անհաճո խոտվարարներին և այլն: Բանվորները հարկադրված են այդ ամենը տանել առանց որևէ ակտիվ դիմադրության:

Շանր ճգնաժամ են ապրում արհեստակցական միությունները, կուլտուր-լուսավորական ընկերությունները, որոնցից հեռացել են բանվորների մեծ մասը: Մեծապես նվազել են սոցիալ-դեմոկրատական անլեզալ կազմակերպության երկու ֆրակցիաների շարքերը: Այդ երկուսն էլ բացառապես բաղկացած են «ծերունի» բանվորներից, որոնք «բնավ մտադիր չեն անձնատուր լինելու հուսահատության, լքելու իրենց ս.-դ. կազմակերպություններն ու ռուսարքի ենթարկելու գրանք»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 150-151):

«Լ. ՏՈԼՍՏՈՅԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՄԵԾԱՐՄԱՆ ԱՌԹԻՎ»

Չնայած ընդհատակի, նաև ոստիկանության գաղտնի ու բացահայտ հարկության հարուցած դժվարություններին, Շահումյանը օգտագործում էր լեզալ պայմանները և շարունակում էր հրատարակել մասնակցել հանրությանը հուզող հարցերի քննարկմանը: Այդ հարցերից մեկն էլ, օրինակ, վերաբերում էր ռուս մեծ գրող Լ. Ն. Տոլստոյի հիշատակին:

Բաքվում լույս տեսնող լիբերալ ուղղություն ունեցող «Баку» թերթում հրատարակվել էր նրա խմբագիր Ք. Վերմիչևի հոդվածը, որտեղ, մասնավորապես, նշվել էր հետևյալը. «Մեծ ծերունին մեզ չի ասել անտազունիզմի մասին, որը բաժանում է դասակարգերին ու ժողովուրդներին, այլ մեզ ուսուցանել է նրանց մեծ համերաշխությունը՝ գործած սիրով և մարդկայնությամբ, հավատարմով, որ համերաշխությունն ու սերը մարդկությանն ավելի շուտ կբերեն համընդհանուր երջանկություն»:

Չհամաձայնվելով այդ հորվածի հեղինակի արտահայտած տեսակետի հետ, Շահումյանը գրում է «Ընթերցողի տարակուսանքը» հոդվածը և ներկայացնում է Ք. Վերմիչևին: Երկար ժամանակ խմբագիրը հրաժարվում էր հրատարակել Շահումյանի հոդվածը, խախտելով եվրոպական մամուլին հասուկ լրագրողական էթիկան, որին հետևելու մասին հաճախ պարծենում էր նա:

Ի վերջո Վերմիչևը տեղիք է տալիս, համաձայնվում է հրատարակել Շահումյանի հոդվածը, խոստանալով դա անպատասխան չթողնել: Վերջապես 1910 թ. դեկտեմբերի 5-ին «Баку» թերթում լույս է տեսնում

Շահումյանի Հողվածը՝ «Նամակ խմբագրության՝ Լ. Ն. Տղստոյի Հիշատակի մեծարման առթիվ» ենթավերնագրով:

Շահումյանը նշում է, որ Լև Տղստոյի մահը իր վրա է բեռեղ ամբողջ աշխարհի Հետ միասին նաև Բաբվի Հանրության ուշադրությունը, ընդգծելով, որ «բոլորն էլ ի դեմս Տղստոյի, ողբում են ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան մեծ գրողին, գեղագետին և այլն, որքան մեծ մտածողին և կյանքի ուսուցչին»:

Շահումյանը նշում է, որ վերջին հանգամանքն առաջացրել է իր մեծ տարակուսանքը և Հիշելով Տղստոյի «Պատերազմ և խաղաղություն», «Ամնա Կարենինա», «Հարություն», «Տերն ու ծառան» և մյուս ստեղծագործությունները, փաստում է, որ «վեր է ամեն մի կասկածից ու վեճից» դրանց ստեղծողի ազնվացնող և վսեմացնող ազդեցությունը միլիոնավոր մարդկանց վրա:

Միաժամանակ Շահումյանն ընդգծում է, որ «այլևս չկա արդի Հասարակական-քաղաքական և Հատկապես եկեղեցական կեղծիքի խոչորազույն թշնամին և մերկացնողը-դա նույնպես Հայտնի է բոլորին»:

Շահումյանը միանգամայն բնական ու օրինաչափ է համարում, որ Տղստոյի մահվան մասին կսկիծով են մտածում բոլոր նրանք, «որոնց համար թանկ է պայքարը ժամանակակից կեղծիքի դեմ, տիրող սարսափների դեմ»:

Շահումյանի համար տարօրինակն այն է, որ կան նաև այնպիսի մարդիկ, որոնք «Տղստոյին հանկարծ հայտարարեցին նաև ուսուցիչ, և Հետևաբար իրենց էլ՝ նրա աշակերտներն ու Հետևողները»:

Այնուհետև Շահումյանը գրում է այն մասին, որ Տղստոյի ուսմունքը մի այն բոլոր չէ տերտերականության դեմ, որ ոչ միայն ժխտում է տերտերականությունն ու մահապատիժը, ամբողջ «աշխարհիկ կյանքը», ամբողջ մշակույթը: Նա Տղստոյին գնահատում է որպես «Քրիստոսի աշակերտ և քրիստոնեության ուսուցիչ»:

«Երեսուն տարվա մեջ»- գրում է Շահումյանը,- նա (Տղստոյը) քարոզում էր... նրա համար, որ մարդիկ կատարեին-հրաժարումն սեփականությունից, պետական կազմակերպությունից, եկեղեցուց, դատարաններից, ընտանիքից, այն բոլորից, ինչով որ մենք ապրում ենք, այդ հաստատությունների արդի ձևերի նկատմամբ գտնվելով այս կամ այն հարաբերության մեջ, մենք թրլորս, որ Տղստոյին «ուսուցիչ» ենք համարում»:

Շահումյանը մեջբերում է Տղստոյի Հետևյալ խոսքերը. «Լինել աղքատ, լինել մուրացկան, լինել չըմոյիկ-դա Հենց այն է, ինչ ուսուցանում էր Քրիստոսը, Հենց այն, առանց որի անկարելի է մտնել աստծո արքայությունը, առանց որի չի կարելի հրճանիկ լինել այստեղ երկրի վրա»:

Եվ Հարցնում է. «Կարո՞ղ են արդյոք այն մարդիկ, որոնց բոլոր իդեալները հիմնվում են սեփականության և Հարստության վրա, որոնց ամբողջ կյանքը հիմնվում է օրենսդրելի վրա, որը 4 տարվա տաժանակիր աշխատանք է սահմանում չըմոյիկության համար և Հաճախ մահվան է դատապարտում... ուրիշ մարդկանց սեփականությունից զրկելու համար,- այդպիսի մարդիկ կարո՞ղ են արդյոք գիտակցաբար և անկեղծորեն Տղստոյին «ուսուցիչ» անվանել...»:

Բոլորը (բժիշկներ, փաստաբաններ, վաճառականներ, լրագրողի հրատարակիչներ ու խմբագիրներ և այլն) ընդունում են «թե պետական իշխանությունը, թե գիևլորականությունը, որոնք ամեն օր միլիոնավոր շուրթերով երգվում են ու դատում իրենց դատարաններում և «Հանցագործներին» բանտերն են նետում»,- գրում է Շահումյանը և Հարցնում. «Մի՞թե նրանք անկեղծ են, երբ ողբում են «կյանքի մեծ ուսուցչի, «սիրո ուսուցչի» մահը»:

Շահումյանը գրում է նաև, որ չարին բռնությունը չընդդիմանալու նույն սկզբունքով Տղստոյը նույնպես բանվորներին ու գյուղացիներին քարոզում է հրաժարվել այն «սխալ համոզմունքից, թե մեր կյանքը կարող է ապահովվել ուրիշ մարդկանց դեմ մեր մղած պայքարով»:

Տղստոյը քարոզում է ոչ թե պայքար, այլ սեր և Հեզուություն, ընդգծում է Շահումյանը և նորից Հարց է տալիս. «Մի՞թե Տղստոյին, որն այդպես էր հակամու կամ, ավելի ճիշտ, այդքան տարօրինակ կերպով չէր ըմբռնում ժամանակակից կյանքի ամենահիմնական հարցերը,- բանվորները գիտակցորեն կարող են «կյանքի ուսուցիչ» անվանել»:

Ընդհանրացնելով Տղստոյի ուսմունքի հիմնական թեզերը, Շահումյանը տալիս է գլխավոր Հարցը. «Ինչպե՞ս և ինչո՞ւ Տղստոյի՝ որպես ուսուցչի ստաջ, որպես հանճարեղ մտածողի ու բարոյագետի ստաջ միաժամանակ խոնարհվում են թե խոշոր կապիտալիստները, թե մտավորականությունը, թե գյուղացիները, թե բանվորները»:

Ըստ Շահումյանի տեղական մամուլը, զանազան Հոետորները Տղստոյի մահվան կապացություններ խուսելով, նրան անվանում են մեծ մտածող, մեծ բարոյագետ, մեծ ուսուցիչ, բայց բոլորովին չեն ասում, թե «Ինչո՞ւ համար են նրանք այդպես անվանում Տղստոյին»:

«Նրանք,- չարմաակում է Շահումյանը,- գոհունակությամբ և նույնիսկ հիացմունքով նշում էին, թե Տղստոյի հանճարին հաջողվել է իր ուսմունքի մեջ (կամ իր ուսմունքի շուրջ) միացնել բոլոր դասակարգերը, դասերը և ազգությունները, բայց մեզ չբացատրեցին, թե ո՞րն է այդ զարմանալի երևույթի գաղտնիքը»:

Տղատյի մահը,- ընդգծում է Շահումյանը,- պարտավորեցնում է մտած-ված, անկեղծ և ոչ-ստրկամիտ խոսք ասելու: «Ոչ-ստրկամիտ, որովհետև Տղատյը ոչինչ այնքան չէր արհամարում, որքան ստրկամիտ, կույր խոնարհումը մեծ մարդկանց, հերոսների, հանճարների առաջ»:

Նրանց, ովքեր ուզում են ըստ արժանիւոյն մեծարել Տղատյի հիշատակը, Շահումյանը կոչ է անում հիշել կրոնական բնույթի գրվածքներում Տղատյի արտահայտած հետևյալ միտքը. «Յուրաքանչյուր մարդու մեջ ապրում է աստծու որդին և որ աստծու առաջ բոլոր մարդիկ հավասար են»:

«Ինչ-որ մի տեղ,- գրում է Շահումյանը,- Տղատյն ասում է, որ նա սիրում է աստծուն, որին նա ճանաչել է, բայց աստծուց ավելի սիրում է ճշմարտությունը, եթե իրեն ապացուցեն, որ ինքը սխալվում է, նա կհրաժարվի իր աստծուց»:

Ավաճից էլ երևելով Շահումյանը դիմում է Տղատյին մեծարողներին. «Միրեցեք Տղատյին, բայց ճշմարտությունն ավելի սիրեցեք, քան Տղատյին»:

Նկատի ունենալով, որ Տղատյը իր երկերում բազմիցս գրել է այն մասին, որ երկու հազար տարուց ավելի է, ինչ եվրոպացիները իրենց քրիստոնյա են անվանում, մինչդեռ նրանց ամբողջ կյանքը քրիստոնեության կատարյալ բացասումն է: «Մարդիկ,- գրում է Շահումյանը,- Քրիստոսին անվանում են «ուսուցիչ», բայց հակառակն են անում այն ամենի, ինչ սովորեցնում էր Քրիստոսը: Եվ նա (Տղատյը) դառնությունը ու զարմանքով նշում է, որ Քրիստոսի անվան շուրջն այնքան կեղծիք է կուտակվել, որ 1800 տարի հետո իրեն մեծ դժվարությամբ հաջողվեց «հայտնագործել», թե որն է Քրիստոսի ուսմունքը»:

Հոգևածի վերջում Շահումյանը նորից դնում է հետևյալ հարցը: Ինչո՞ւ բոլոր նրանք, ովքեր Տղատյին անվանում են «մեծ ուսուցիչ», բայց «հակառակն են անում այն ամենի, ինչ սովորեցնում էր Տղատյը»:

Ահա այս տարակուսանքներին հարկավոր է տալ պարզ ու որոշակի պատասխան,- պահանջում է Շահումյանը և ընդգծում, որ պետք է ասել «ճշմարտացի, մտածված և ոչ-ստրկամիտ խոսք»:(Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 142-149):

L. ՏՈԼՍՏՈՅԻ «ԿԱՆԱՉ ՓԱՅՏԻԿԸ»

Մի քանի ամիս անց, Շահումյանը նորից անդրադառնում է Տղատյին, 1911 թ. ապրիլի 8-ին «Современная жизнь» երկշաբաթաթերթի 2-րդ համարում տպագրված «Մի քանի խոսք Լ. Ն. Տղատյի կրոնի մասին» հոդվածում:

Այստեղ Շահումյանն անդրադառնում է Տղատյի կրոնի գիտակցական կամ մտացածին բնույթին, որը քննարատությունը դեռևս չի շոշափել: Նա նշում է, որ Տղատյի կրոնի այդ կողմն ունի կարևոր նշանակություն պարզե-րու, թե Տղատյն ինչպես էր նայում իր կրոնի վրա և ինչու՞ն է կայանում նրա իմաստն ու արժեքը:

Շահումյանը վկայակոչում է 1883 թ. լույս տեսած Տղատյի «Մ՛րն է իմ հավատը» գիրքը, որտեղ մեծ գրողը հայտնում է, որ իր ապրած 55 տարիներից 35-ն ապրել է որպես նիհիլիստ, «այդ բառի իսկական իմաստով, այսինքն՝ ոչ որպես սոցիալիստ և հեղափոխական, ինչպես որ սովորաբար այդ բառը հասկանում են, այլ որպես նիհիլիստ՝ որևէ հավատի բացակայությամբ իմաստով»:

Տղատյը գրում է նաև, որ «սրանից հինգ տարի առաջ» (այսինքն 1878 թ.-վ. Պ.) նա հավատացել է Քրիստոսի վարդապետությունը և իր կյանքը «հանկարծ փոխվել է»:

Այս հանգամանքն էլ նկատի ունենալով, Շահումյանը գրել է. «Եվ ահա, ոչ թե աստիճանական հոգևոր զարգացման և գիտելիքների կուտակման հետևանքով, այլ այդ բոլորից անկախ և նույնիսկ հակառակ այդ ամենի,- Տղատյի հոգեկան աչքերի առաջ «հայտնվեց» ճշմարտությունը: Եվ նա, այդ «անհավատը», «նիհիլիստը» 50 տարեկան հասակում՝ 1878 թվին «հանկարծ» դարձավ հավատացյալ և դրանից հետո համարյա 30 տարվա ընթացքում սկսեց քարոզել իր հավատը, իր կրոնը»:

Այնուհետև Շահումյանը մեջբերում է Տղատյի գրառումներից հետևյալ հետաքրքիր հատվածը. «Մոտակցությունն աստվածության և հավատի մասին ինձ հանգեցրեց մի մեծ, հսկայական մտքի, որի իրականացման համար ես գզում եմ, ընդունակ եմ կյանքս նվիրելու: Այդ միտքը մարդկության զարգացմանը համապատասխանող նոր կրոնի հիմնումն է, Քրիստոսի կրոնը, բայց զուտ հավատից և խորհրդավորությունից, գործնական կրոն, որը չի խոստանում ապագա երանություն, այլ երանությունը տալիս է երկրի վրա: Ես հավանում եմ, որ այդ միտքն իրագործել կարող են միայն այն սերունդները, որոնք գիտակցաբար աշխատում են այդ նպատակի համար: Մի սե-

րունդ այդ միտքը կտակելու է Հաջորդին, և Փանատիզմը կամ բանականությունը երբևիցե այն կիրազորեն: Մարդկանց կրոնով միացնելու Համար գիտակցորեն գործելը, ահա հիմնական միտքը, որը Հույս ունեւ, ինձ կոզւորի»:

Տղատոյի այս մտքի առնչութեամբ խորհրդացութեաններ անելով, Շահոյանն անդրադառնում է «կանաչ փայտիկի» մասին Տղատոյի պատմվածքներից մեկին: Տղատոյը պատմում է, որ երբ եղել է 5 տարեկան, նրա ավագ եղբայր 10-11 տարեկան Նիկոլենկան Հայտարարել է, թե «ինքը մի գաղտնիք ունի», որի միջոցով, երբ այդ գաղտնիքը բացվի, բոլոր մարդիկ կդառնան երջանիկ, չի լինի ոչ հիվանդություն, ոչ մի անախորժություն, ոչ ոք ոչ մեկի վրա չի բարկանա և բոլորը կսիրեն միմյանց, բոլորը կդառնան «մրջնային եղբայրներ»:

Նիկոլենկան Հայտնում է, որ այդ ամենը նա գրել է «կանաչ փայտիկի» վրա, որը թաղել է ճանապարհի եզրին Ստարի Զակագ ձորակի եզրին: Այս պատմությունն այնքան էր սուպավորվել Տղատոյի մոտ, որ մահից հետո, իր ցանկությունները նրան թաղում են Հենց այդ ձորակի եզրին:

Տղատոյն իր կրոնի մեջ տեսնում էր այն գաղտնիքը, այն «խորհուրդը», որ գրված էր կանաչ փայտիկի վրա, որը, ըստ Տղատոյի, «պետք է ոչնչացնի մարդկանց մեջ եղած չարությունը և պետք է մեծ բարիք տա նրանց»: Տղատոյը իր ուսմունքը շարադրել է մի հոգվածում, այն վերնագրերով «Կանաչ փայտիկ»:

Շահոյանը բերում է Տղատոյի Համար միշտ սուրբ հիշատակ եղած երբոր Նիկոլենկայի մասին ասված խոսքերը, որ նա «իր աշխուժ երևակայության և դեպի մարդիկ, դեպի բարությունն ունեցած սիրտ մեջ Հնարել է այդ բոլոր պատմությունները և ինքն էլ ուրախանում էր և խաբում մեզ դրանով», և իր կողմից ավելացնում է հետևյալը. «Մենք կարծում ենք, որ ճշմարտության դեմ չենք մեղանչի և չենք վիրավորի Տղատոյի հիշատակը, եթե ասենք այդ, իր աշխուժ երևակայությամբ, դեպի մարդիկ ունեցած իր սիրով, իր անասան բարությունը Տղատոյը Հնարել էր իր կրոնը և ինքն ուրախանում էր դրանով ու մեզ խաբում...»:

Շահոյանը բերում է Մարքսի խոսքերն այն մասին, թե «կրոնը ժողովրդի իրական երջանկությանը փոխարինող խաբուսիկ երջանկություն ստեղծելու ձգտումն է» և ընդգծում, որ Մարքսի բառերը «լիովին կիրառելի են նաև Տղատոյի կրոնի նկատմամբ»:

Իհարկե, Տղատոյը տեսնում էր ժողովրդական լայն զանգվածների աղբատությունը, անասան վիշտն ու տառապանքը, զգում էր այդ ամենի սար

տալը, բայց, ինչպես նշում է Շահոյանը, իր առջև ոչ մի ելք չտեսնելով, չհավատարով ժողովրդի Համար իրական երջանկություն ստեղծելու Հնարավորությունը, նա որոշում է ժողովրդի Համար ստեղծել «խաբուսիկ» երջանկություն:

Շահոյանը հիշեցնում է Տղատոյի հետևյալ խոսքերը. «Մենք դժբախտություն-աղքատություն արտահայտող բառով անվանել ենք այն, որը երջանկություն է...: Լինել աղքատ, լինել մուրացկան, լինել չըմբռնիկ, դա Հենց այն է, ինչ որ սովորեցնում էր Քրիստոսը, Հենց այն, առանց որի չի կարելի մտնել աստծո արքայությունը, առանց որի այստեղ երկրի վրա երջանիկ լինել չի կարելի»:

«Տղատոյը,- գրել է Շահոյանը,- տեսնում էր, որ մարդկանց գլխավոր դժբախտությունն առաջ է գալիս աղքատությունից ու սովից: Եվ նա, աստծուն օգնության կանչելով, սկսեց մարդկանց Հավատացնել, թե աղքատությունն էլ ամենևին դժբախտություն չէ...: Տղատոյը տեսնում է, որ մարդիկ պայքարում, կռվում են աղքատության ճիրաններից ազատվելու Համար: Տղատոյը չի Հավատում այս աշխարհում որևէ բան փոխելու Հնարավորությունը: Նրա Համար էլ նա չի ուզում անդրադառնալ Հասարակական պայմաններին, Համարելով դրանք բոլորովին անկարելի»:

Եվ այնուհետև Շահոյանը բերում է Տղատոյի հետևյալ խոսքերը. «Չարին բռնությունը մի ընդդիմադրեք...: Հրաժարվեք սուտ Համոզմունքից՝ թե պայքարով դուք կարող եք ձեր կյանքը բարելավել...: Երջանկությունն այն չէ, որ ուրիշները քեզ Համար աշխատեն, այլ այն, որ դու ուրիշների Համար աշխատես»:

«Բանվորները,- ընդգծում է Շահոյանը,- ուզում են ոչնչացնել դասակարգային տիրապետությունն ու վարձու աշխատանքը, որոնք Հանդիսանում են ժողովրդական մասսաների աղքատության աղբյուրը: Տղատոյը նրանց ասում է, իդուր են այդ բոլորը, պետք է մարդ միմիայն իրեն ասի, թե վարձու ստրկությունը երջանկություն է, և դուք արդեն երջանիկ կլինեք»:

«Ահա, այս է,- եզրակացնում է Շահոյանը,- այն պարզ «գաղտնիքը», որ գրված է Տղատոյի կանաչ փայտիկի վրա: Այսպես է այն «միտքը», որ Տղատոյին թվում էր «մեծ և հակայական», որի իրականացման Համար նա «զգում էր, որ կարող է նվիրել իր կյանքը», և որին նա իսկապես նվիրեց իր կյանքի վերջին 30 տարին»:

Իր հոգվածի վերջում Շահոյանն այն միտքն է արտահայտում, որ Տղատոյի ուսմունքից, նրա քարոզած նոր կրոնից, լիակատար կերպով շահում են

իշխող դասակարգերը, պաշտոնական եկեղեցին, որպեսզի ավելի մթազննեմ ժողովրդի գիտակցությունը և ամրապնդեն իրենց իշխանությունը:

«Տղառոյի կրոնը,- եզրակացնում է Շահումյանը,- այլևս չի անի այն, ինչ իրենց ժամանակին արել են Բուդաբայի, Քրիստոսի, Մահմեդի կրոնները...: Ընչազուրկ դասակարգերն արդեն սկսել են շատ լավ յուրացնել սոցիալիստների գաղափարները, որպեսզի նրանց կարելի լինի Համոզել Հրաժարվելու իրենց «իրական» երջանկության Համար պայքարելուց և բավականանալ կրոնի խոստացած «խարուսիկ» երջանկության խղճուկ մխիթարությունը»:

(Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երկրորդ, էջ 175-184):

«ՄԵՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ»

1911 թ. մարտի 26-ին հաջողվում է հրատարակել «Современная жизнь» երկչաբաթիվների, որի պաշտոնական հրատարակիչ-խմբագիրն էր բոլշևիկներին համակրող Լ. Օհանջանյանը: Թերթի փաստացի խմբագիրը Շահումյանն էր: Նրա հետ էին Աբել Ենուկիձեն, Վլադիսլավ Կասպարովը, Կ. Ռիզելը: Թերթի առաջին համարում հրատարակվում է Շահումյանի գրած առաջնորդող «Մեր խնդիրները» հոդվածը:

Նկարագրելով հեղափոխության պարտությունից հետո մոլեզնած ունեցիկի ճնշման տակ հեղափոխական տրամադրություններին փոխարինած հոգնածությունը, անտարբերությունը, Շահումյանը տեղեկացնում է, որ խմբագրությունը մտադիր է հոդվածներ հրատարակել արդի դրությունը ստեղծող պայմանների մասին, չեչտը դնելով «ներկայումս խիստ կարևոր պրակտիկ նշանակություն ունեցող կողմի վրա»:

Շահումյանն այն կարծիքն է հայտնում, որ բանվոր դասակարգը կվերահանգի իր հին ու փորձված կազմակերպությունները և միաժամանակ ամենազործուն մասնակցություն կունենա հասարակական - քաղաքական կյանքի բոլոր մասերի ոլորտներում:

«Սենք չզիտենք,- գրում է Շահումյանը,- երբ կանցնեն ասոնամանիքները և գարուն կգա ուսաստանյան դեմոկրատիայի փողոցը, բայց անկախ սեփյալ հարցի այս կամ այն լուծումից՝ մենք մեր հերթական խնդիրն ենք համարում ծանոթացնել ընթերցողներին ինչպես հաղթանակի էպոխայի, այնպես էլ պարտությունների էպոխայի համար Հիմք ծառայած անտեսական ու քաղաքական պայմանների հետ, տանել նրան ժամանակակից հասարակական քաղաքական կյանքի սֆերան, մատնանշելով ուղիներ արհմիությունների, կուլտուրապիտակական ընկերությունների և պրոլետարիատի այլ դասակարգային կազմակերպությունների ամրապնդման համար»:

Շաբաթաթերթի մյուս կարևոր խնդիրն է համարվում առաջարկվող պրակտիկ միջոցների տեսական հիմնավորումը, ինչպես նաև արևմտեվրոպական բանվորական շարժման տեսության և պրակտիկայի հետ ծանոթացնելը:

Առաջնորդող հոդվածում որոշակիորեն ընդգծվում էր, որ բոլոր հարցերի քննարկման ու լուծման ընթացքում շաբաթաթերթը եղևու էր մարքսիզմից ու պաշտպանելու էր բանվորական դեմոկրատիայի պահանջներն ու չահերը:

Շահումյանը հույս էր հայտնում, որ շաբաթաթերթի հրատարակությունը «կլրացնի Բաբլի բանվորների կյանքի մեջ եղած խոչոր բացը» և ընթերցողներին հրավիրում էր գործուն մասնակցություն ունենալ շաբաթաթերթի «գաղափարական մասի ղրվածքի, նրա տարածման գործում»:

(Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երկրորդ, էջ 152-154):

«Մ. ԳՈՐԿԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԱՐԴՆ ՈՒ ՊԱՐԾԱՆՔՆ Է»

«Современная жизнь» երկչաբաթիվների առաջին համարում Շահումյանը հրատարակում է ևս երկու կարևոր հոդված, որոնցից մեկը նվիրված էր ուսու հայտնի գրող Մաքսիմ Գորկուն:

Շահումյանը Գորկուն գնահատում է որպես ուսու բանվորների սիրելի գրող, նկատի ունենալով, որ նա «իր բնական զարգացման ընթացքով» եկել է բանվորների մոտ, դարձել է «նրանց երգիչն ու կենցաղագիրը»:

Գորկուն համեմատելով իր «արհեստակից գրողների» հետ Շահումյանը նշում է, որ Գորկին երես է դարձրել բուրժուական հասարակությունից, որի հետևանքով նրա նկատմամբ երկրպագուների եղած սերը փոխարինվել է սառնությունը, դժգոհությունը, նույնիսկ ատելությունը:

Շահումյանն քննադատում է բուրժուական մամուլին, որը ոչ մի միջոցի առջև չկանգնելով, վրեժխնդիր է լինում Գորկուց, այդ շարքում նշելով Բաբլում հրատարակվող «Бакы» թերթին: Շահումյանն անդրադառնում է Գորկու «Տրտունջներ» պատմվածքում ճապոնական պատերազմին մասնակցած ուսու սպայի հիշողություններին, որտեղ նա պատմում է գինվորներից ստացած իր տպավորությունների մասին: Այդ սպան դժգոհում է գինվորի գզեռտ հագած բանվորներից և գյուղացիներից, որոնք ընդունակ չեն ոչ մի նոր բանի: Այդ սպան ասում է, որ «ոտար չի կարող լինել սոցիալիստ», չի հավատում սոցիալիզմին, որը հնարել են հրեաները, որոնց համար սոցիալիզմն ու փոնիզմը նույնն են:

Այնուհետև այդ ուսև սպան հարձակվում է ուսև պատանեկության առաջնորդների վրա, մեղադրում է նրանց բոլոր մահացու մեղքերի մեջ, անվանում է նրանց «խարբեամեր», «դավաճամներ», Համարյա թե մարդասպաններ՝ ուսև պատանեկության նկատմամբ:

Մեղքերելով այս ամենը, Շահումյանը փակագծում գրում է, որ ընթերցողը կուհու է, թե ինչ առաջնորդների մասին է խոսքը և նշում է, որ «Баку» թերթում վերոհիշյալ պատմվածքի մասին գրված հոդվածի հեղինակ Գր. Ստարցևը Գորկուն նույնացնում է այդ սպայի հետ, հավատացնում է ընթերցողին, որ սպայի բերանով խոսում է Գորկին: «Օ~, ճակատագրի ծաղր,- բացականչում է Շահումյանը և շարունակում,- Ստարցևը ուղքի է ելնում պաշտպանելու սոցիալիզմը, պաշտպանելու ուսև գյուղացուն և բանվորին Գորկու հարձակումներից ու զրպարտություններից...»:

Վերոհիշյալ Ստարցևը նույն կերպ է վարվել Գորկու «Մորդովկա» պատմվածքին անդրադառնալիս: Նա բերում է այդ պատմվածքի գործող անձ Իսաչի խոսքերը, որոնք նա ասել է ամուսնուն՝ անձնուրաց կուսակցական աչխատող Պավելին, կշտամբելով նրան, թե «նա ընտանիքի շահերը զոհաբերում է այն մեծ գործին, որին նա ծառայում է»: Շահումյանը նշում է, որ Գորկին միայն այդքանն է պատկերել, բայց «ոչ մի խոսք, ոչ մի ակնարկ այն մասին, որ Պավելն իբր թե պարտվել է, որ նա փոխել է իր իդեալները կնոջ գեղեցիկ մարմնի հետ: Պավելը մինչև պատմվածքի վերջը մնում է նույնը, ինչպես էր սկզբում»:

Իսկ Ստարցևն իր հոդվածում հավատացնում է, թե «Գորկին գանգատվում է, որ կանայք ու ընտանիքները կործանում են բոլոր «գիտակից» բանվորներին, փետում են նրանց թևերը և դարձնում ողորմելի, անաղյն ու անկամ մարդիկ»: «Ստարցևը,- շարունակում է Շահումյանը,- հավատացնում է, որ Գորկու աչքում նախկին «արևկահավերը» բոլորն էլ դարձել են «թրթված հավեր»:

«Եվ հասկանալի է,- ընդգծում է Շահումյանը,- որ Ստարցևը նորից «ատիպված է» պաշտպանելու բանվորին Գորկու զրպարտություններից...»: Այդ բոլորը հնարել է Ստարցևը, նշում է Շահումյանը և ավելացնում. «Բոլոր նման «քննադատները», խոսելով բանվորական գրող Գորկու մասին, ինչպես նաև առհասարակ այն բոլորի մասին, ինչ վերաբերում է բանվորներին, ոչ մի կերպ չեն կարողանում, գիտակցորեն, թե անգիտակցորեն, խուսափել ատից, խեղաթյուրումներից, զրպարտություններից»:

Այնուհետև Շահումյանը վերլուծում է Գորկու «Ինքնուս գրողների մար

մին» հոդվածը, որը նա նվիրել է իր «կյանքի հատակում» գտնվող թղթակիցներին, որոնց նա անվանում է «աարսափելի կյանքի մարդիկ»:

Շահումյանը ցույց է տալիս, որ ապարդյուն են բոլոր նրանց փորձերը, որոնք ձգտում են Գորկուն ներկայացնել որպես «տրանջող, հրաաթափված և նվազող, ... բանվորներին, սոցիալիզմը զրպարտող»: «Գորկին,- ընդգծում է Շահումյանը,- պրոլետարական գրականության զարդն ու պարծանքն է... Եվ բանվորները հպարտությամբ կարող են հայտարարել. «Այո, Գորկին մեքն է. նա մեր արվեստագետն է, մեր բարեկամն ու գինակիցը՝ աշխատանքի ազատագրության վեհ պայքարի մեջ»: (Մտ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 155-167):

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

«Современная жизнь» թերթում հրատարակված իր հաջորդ հոդվածը Շահումյանը նվիրել է Բաբվի քաղաքային ինքնավարության ընտրություններին, որոնք պետք է տեղի ունենային 1911 թ. մարտի վերջին: Օգտագործելով այդ հանգամանքը, Շահումյանը ցույց է տալիս, թե ովքեր են մասնակցում այդ ընտրություններին և ովքեր են շահում:

«Արտի նվարումով,- գրում է Շահումյանը,- քվեատուներին կմոտենան 2530 հղիացած բուրժուաներ, բոլոր նրանք, ովքեր կարողացել են իրենց գիշատիչ մադիլների մեջ առնել քաղաքի հողամասերը, ովքեր կատուցել են տներ, ֆաբրիկաներ ու գործարաններ, ովքեր ստրուկի պես ծծում են քաղաքի հյութերը և տարեցտարի նրա գանձարկղից կորզում և իրենց միջև բաշխում միլիոններ»:

Շահումյանն անդրադառնում է 1892 թ. հունիսի 11-ի օրենքով հաստատված քաղաքային կանտոնադրությանը և ցույց է տալիս, որ այդ օրենքը քաղաքների կատավարումը հանձնել է մի բուռն ճրիակերների, քաղաքային ինքնավարությանը մասնակցելու իրավունքից զրկելով քաղաքի ամբողջ չքավորությանը, ամբողջ պրոլետարիատին, «բոլոր նրանց, ովքեր աճեցրել են այդ քաղաքները, ովքեր ամենից ավելի են շահագրգռված մշակութային և հասարակական հիմնարկներ՝ դպրոցներ, գրադարաններ, ընթերցարաններ, թանգարաններ, ժողովրդական տներ, փոխօգնության դրամարկղեր, աշխատանքի բողոսներ տոնղծելու և ամրապնդելու գործում...»:

Շահումյանը գրում է, որ բուրժուաները կրվում են հասարակական կարկանդակի համար և ընդգծում է. «Բանվոր դասակարգը գիտե այդ պայքարի արժեքը և ոչինչ չի սպասում դրանից»: (Մտ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 168-170):

Բաբբիի նախնարդյունաբերական բանվորների միությունը, որը Հեղափոխության ընթացքում իր կազմում ունեցել էր 9000 բանվոր, հաջողությամբ ղեկավարել էր բանվորների գործադուլները, հասել որոշակի Հեղինակության: Կարևոր դեր էր խաղացել նախնարդյունաբերական պրոլետարիատի պահանջները մշակելու և կոլեկտիվ պայմանագրեր կնքելու համար նախնարդյունաբերողների հետ խորհրդակցություններ կազմակերպելու գործում:

Սակայն Հեղափոխության պարտությունից հետո բանվորների միությունը փաստորեն դադարել էր գոյությունից:

Ահա, այսպիսի պայմաններում ՌՄԻԲԿ Բաբբիի կոմիտեն Շահումյանի գլխավորությամբ ձեռնամուխ է լինում վերականգնել նախնարդյունաբերական բանվորների միությունը: Կոմիտեի անդամները գաղտնի պայմաններում լինում էին գործարաններում, հանքավայրերում, բանվորական համարակացարաններում և համբերատար կերպով բանվորներին բացատրում էին բանվորական միությունը վերականգնելու անհրաժեշտությունը:

Միաժամանակ լուրջ աշխատանքի արդյունքում ընդունվում է որոշում մեխանիկական արտադրության բանվորների միության հետ միաձուլվելու մասին:

Պրակտիկ աշխատանքի հետ միասին Շահումյանը 1911 թ. ապրիլի 8-ին «Современная жизнь» շաբաթաթերթում հրատարակում է «Նախնարդյունաբերական բանվորների միությունը վերականգնելու շուրջ» հոդվածը:

Անդրադառնալով միության անցյալ գործունեությանը, Շահումյանը նախնարդյունաբերական բանվորների կարևոր խնդիրն է համարում՝ ամեն ինչ սկսել նորից և գրում է հետևյալը. «Որքան էլ որ մոլեզնի ռեակցիան, որը, ի միջի այլոց, Միությունից խել է մի շարք օգուակար մտավորական աշխատողների, որքան էլ նախնարդյունաբերողները մոլեզնեն իրենց ազահությանը և ասիականությանը, բանվորական գործը մեզանում չի մեռնի: Հարկավոր է միայն անխոնջ ու համատրեն, կանգ չառնելով դժվարությունների առջև, գցել նոր հիմք և աշխատել Միությունը վերականգնելու ուղղությամբ»:

Շահումյանը մեծապես կարևորում է երկու միությունների միաձուլման անհրաժեշտությունը և գոհունակություն է հայտնում, որ «միաձուլման անհրաժեշտությունը երկու կողմերը գիտակցել են և վաղուց են գիտակցել, և մենք միայն կցանկանայինք միաձուլումը որքան կարելի է ավելի շուտ իրականացած տեսնել»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 185-186):

Ինչպես հայտնի է, Հեղափոխության պարտությունից հետո բոլշևիկյան

կուսակցության մեջ տեղի էր ունեցել պատակտում: Մի կողմից հնչում էր պահանջ՝ վերացնել կուսակցության անլեզալ կազմակերպությունները: Այս պահանջի կողմնակիցները կոչվեցին «փկվիդատորներ»: Մյուս կողմից էլ հանդես էին գալիս մարդիկ, որոնք պահանջում էին բոլոր լեզալ կազմակերպություններից (արհմիություններ և այլն) հոս կանչել կուսակցության ներկայացուցիչներին: Այս պահանջի կողմնակիցներն էլ հայտնի էին «օտար փրատներ» անունով:

Եթե սակածին ավելացնենք, որ գործում էր ՌՄԻԲԿ մենչևիկյան թևը, ապա պարզ է, թե ինչպիսի դժվարություններ էին ստեղծվել նաև Բաբբիում: Բայց ի պատիվ Շահումյանի, պետք է ասել, որ Բաբբիում «փկվիդատորներին» և «օտարփրատներին» չհաջողվեց համենվ որոշակի հաջողության, հանդիպելով Շահումյանի գլխավորած ՌՄԻԲԿ Բաբբիի կոմիտեի ակզբունքային դիրքորոշմանը:

Բաբբիի բանվորական միությունների միավորումն իրականացնելու հետ միասին կարևոր էր համարվում այստեղ գործող բոլշևիկների և մենչևիկների գուգահետ կազմակերպությունների միաձուլումը: Այս խնդրին անդրադարձել է Շահումյանը «Современная жизнь» շաբաթաթերթի առաջնորդող հոդվածում 1911 թ. մարտի 26-ին: 1911 թ. ապրիլի 15-ին արդեն Շահումյանը ՌՄԻԲԿ կենտրոնական կոմիտեին ուղարկած նամակում հայտնում էր, որ «վերջին ժամանակներս սկսված որոշ աշխուժացումն անհրաժեշտ դարձրեց անհապաղ միաձուլումը»:

Նամակի վերջում Շահումյանը գրել է. «Սենք չէինք կամենա չափազանցնել ոչ բանվորների չրջանում նշված աշխուժացման, ոչ մեր միաձուլման փաստի նշանակությունը: Սենք կասենք միայն, որ թե մեկը և թե մյուսը մեզ ստույգություն և հույս են ներշնչում, որ մեզ կհաջողվի մեր շուրջը համախմբել կուսակցության բոլոր հավատարիմ տարրերին և որոշ քաղաքական աշխատանք ծավալել»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 189):

1911 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ ՄԵԿԻ ԱՌԹԻՎ

Մոտենում էր 1911 թվականի Մայիսի մեկը: Ինչպե՞ս պետք է Բաբբիի պրոլետարիատը նշեր իր պայքարի տունը: Մանավանդ, որ Բաբբիի պրոլետարիատը 1910 թ. Մայիսի մեկը չէր նշել: Այդ մասին Շահումյանը հայտնում էր 1910 թ. մայիսի 10-ին Ն. Էլիավային ուղարկած նամակում և գրում, որ ութ տարի շարունակ Բաբբիի բանվորները իրենց պրոլետարական տունը դիմավորում էին ընդհանուր հաղթական գործադուլով: «Այս տարի,- շարունակում է Շահումյանը,- կազմակերպությունները հնարավոր չհամարեցին

նրանց (բանվորներին) ոչ ընդհանուր, ոչ էլ մասնակի գործադուլի կանչել»:
(Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երկրորդ, էջ 137-138):

Մայիսի մեկին նախապատրաստվելու համար 1911 թ. ապրիլի 17-ին, գաղտնի պայմաններում, Շահումյանի գլխավորությամբ տեղի է ունենում ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեի նիստը: Ընդունվում է որոշում՝ կազմակերպել Բաքվի բանվորների մայիսյան ելույթը: Այդ նպատակով էլ Շահումյանը գրում է «Մայիսյան տոնն արտասահմանում» հոդվածը, որը տպագրվում է 1911 թ. ապրիլի 22-ին «Современная жизнь» թերթում:

Իր հորվածում Շահումյանը շարադրում է Մայիսի մեկը եվրոպական երկրներում նչելու պատմությունը և եվրոպական պրոլետարիատի առաջ քաշած պահանջները ներկայացնում նկատի ունենալով Բաքվի պրոլետարիատի դրությունը:

Նկատի ունենալով, որ Բաքվի նավթարդյունաբերողները բանվորների հաստիքները կրճատելով, երեք հերթի փոխարեն աստիճանաբար մտցնում են երկու հերթի աշխատանք, այսինքն՝ ութժամյա փոխարեն տասներկու ժամյա աշխատանքային օր է մտցվում, Շահումյանը գրում է. «Առաջին պահանջը, որ փայլում է մայիսյան դրոշի վրա, դարձ-ժամյա բանվորական օրվա օրինականացման պահանջն է»:

Բուրժուական, միապետական և այլ տիպի պետությունները հակայական միջոցներ են ծախսում բանակների պահպանման վրա: Ժամանակակից բուրժուական կարգերում, առանց ռազմական ուժի, բուրժուազիան չի կարող կառավարել: Բանակը նրանց ձեռքին միջոց է ժողովրդական մասսաներին հնազանդության մեջ պահելու համար:

«Ուստի,- գրում է Շահումյանը,- ներկայումս բանվորները պահանջելով մշտական բանակների ոչնչացում, առաջարկում են դրանք փոխարինել ավելի էժան նստող և ժողովրդին ավելի մոտ կանգնած ժողովրդական միլիցիայով»: Եվ Շահումյանն ազդարարում է, որ ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի մայիսյան երկրորդ պահանջն է՝ վերացնել մշտական բանակները և դրանք փոխարինել ժողովրդական աշխարհազորով:

Իսկ բանվոր դասակարգի մայիսյան երրորդ պահանջն է՝ վերացնել բոլոր քաղաքական սահմանափակումները, պետական կարգը դեմոկրատացնել հետևողականորեն և լիակատար կերպով:

Մայիսյան տոնը Շահումյանը գնահատում է որպես նոր աշխարհ ստեղծելու ձգտող պրոլետարիատի միջազգային համերաշխության խորհրդանիշ:

Այդ խորհրդանիշը տիրող դասակարգերը «մահու չափ ատում են», նշում է Շահումյանը և ավելացնում. «Թ՛վում է, ոչինչ չի պակասի, եթե տասնյակ տոների թ՛վին, որ տոնում են նրանք, և երբ բանվորներն ազատ են լինում, մի տոն ևս ավելանա, բանվորների տոնը, Մայիսի 1-ի տոնը: Բանվորները չեն պատճառում նրանց, որ այդ օրը կոչնչացնեն նրանց գործարաններն ու ֆաբրիկաները, կիսախոն են նրանց «հանգիստն ու անբարբոր» որևէ բռնությունը»:

Բանվորները ցանկանում են միայն ազատ լինել այդ օրը, ցանկանում են խաղաղ կերպով տոնել իրենց տոնը: Բայց շահագործման վրա «հիմնված ժամանակակից հասարակության երջանիկները զգում են, որ յուրաքանչյուր Մայիսի 1-ը մոտեցնում է նրանց բարեկեցության վախճանը: Մայիսի 1-ի օրը նրանք առանձնապես ուժեղորեն են զգում նոր աշխարհն ավետող գանգի ձայնը»:

«Բայց,- գրում է Շահումյանը,- որքան շատ սոսկում և թշնամանք են դրսևորում տիրող դասակարգերը Մայիսի 1-ի հանդեպ, այնքան ավելի աշխույժ և եռանդ, այնքան ավելի հպարտ վստահություն է տալիս ապագայի համար մայիսյան տոնը բանվոր դասակարգին»:

Շահումյանը բանվորներին կոչ է անում. «Հավատարիմ լինել բանվորական գործին, սրբություն պահպանել սրտերում Մայիսի 1-ի փառապանծ ավանդները»:
(Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երկրորդ, էջ 193-197):

Մայիսյան տոնին նվիրված հոդվածին համահունչ է թերթի նույն համարում տպագրված Շահումյանի «Բաքվի նավթարդյունաբերության դրությունը» հոդվածը: Այստեղ Շահումյանը մի շարք թվերի միջոցով ցույց է տալիս, թե ինչպիսի հակայական շահ են առանում նավթարդյունաբերողները գների բարձրացումից և բանվորների շահագործումը ուժեղացնելուց:

«Արյո՞ք,- հարցնում է Շահումյանը,- նավթարդյունաբերական բանվորները կարող են օգտագործել բարենպաստ իրադրությունը և տալ թեկուզ մի որոշ հակահարված անդադար իրենց վրա հարձակվող կապիտալիզմ-դասակարգի կրիսի հենց իրենցից՝ բանվորներից, նրանց ուժից և կազմակերպվածությամբ»:

«Արժնացեք քնից, ընկերներ-կոչ է անում Շահումյանը,- վերականգնեցե՛ք Հին գործարանային հանձնաժողովները, համախմբվեցե՛ք ձեր միությունների շուրջ, կենդանի ուժ ներշնչեցե՛ք նրանց. հակառակ պարագայում, ինչպիսի նպատակավոր պայմաններ էլ որ դասավորվեն, ձեր դրությունն օրեցօր ավելի ու ավելի կվատանա»:
(Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երկրորդ, էջ 198-200):

Ոստիկանությունն ձեռնարկում է բոլոր միջոցները բանվորների մայիս-մեկյան ելույթը կանխելու համար: Զերբակալվում են մի շարք գիտակից բանվորներ: Ուժեղացվում է ահաբեկման ու շանտաժի միջոցառումը: Չնայած այս ամենին, Շահումյանի կոչն անարձագանք չի մնում: Մի շարք հանքավայրերում, հատկապես Բալախանիում տեղի են ունենում բանվորական հարվածներ: Դա արդեն նախորդ տարվա համեմատությամբ նկատելի առաջընթաց էր. բանվորների մոտ նկատվում էր իրենց կազմակերպությունները վերականգնելու ձգտում:

ՀԱՍԱԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՀԱՍԱՐ

Շահումյանը իր հողվածները հրապարակում էր «Ստիվին», «Ունի կում», «Ս» ծածկանուններով: Ոստիկանությունը դեռևս մարտի 30-ին գաղտնի գործակալի տվյալներով հայտնի էր դարձել, որ Շահումյանը, Վ. Կասպարովը, Աբել Ենուկիձեն և Տիգրան Ազատյանը մտնում են «Современная жизнь» թերթի խմբագրության կազմի մեջ, որ վերոհիշյալ ծածկանունների տակ թաքնված է Շահումյանը: Սակայն ուղղակի հանցանշաններ չունենալու պատճառով ոստիկանությունը չէր դիմում ձերբակալումների: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 120, թ. 1):

1911 թ. ապրիլի 22-ին «Современная жизнь» թերթում հրապարակվում է նաև «Վ. Իլին» ստորագրությամբ «Մարքսիզմը և «Նաչա գարյան»» հոդվածը: Գործակալների միջոցով մայիսի 6-ին ոստիկանությունը հայտնի է դառնում, որ այդ ստորագրությունը Վ. Ի. Լենինի ծածկանունն է: Ոստիկանության համար պարզ է դառնում, որ «Современная жизнь» թերթը կապված է Լենինի հետ:

Շահումյանի մայիսյան տոնին նվիրված հոդվածի, ինչպես նաև Լենինի հոդվածի հրապարակումը լուրջ փաստարկ էր ոստիկանության ձեռքին: 1911 թ. ապրիլի 27-ին «Современная жизнь» թերթը, 3-րդ համարի լույս ընծայումից հետո, փակվում է ոստիկանության կողմից: Շահումյանի նկատմամբ ավելի է ուժեղացվում գաղտնի հսկողությունը:

1911 թ. հուլիսի 30-ին Պետերբուրգի Ոստիկանության ղեկավարամենտին ուղարկված գեկուցագրում նշվում է, որ «Современная жизнь» թերթի խմբագրության ղեկավար են դարձել «հայտնի սոց.-դեմ. գործիչ բոլշևիկ Ստեփան Շահումյանը և Բաբլի կոմիտեի անդամ Աբել Ենուկիձեն»:

Զեկուցագրում նշվում էր նաև հետևյալը. «Մայիսյան կոչեր լույս ըն-

ծայելու և գործադուլի օգտին ագիտացիա մղելու հնարավոր քայլերը կանխելու նպատակով սույն թվականի ապրիլի 27-ին, աշխատանքի ժամերին հիշյալ թերթի խմբագրատանը կատարվեց խուզարկություն, որի ժամանակ ոչ մի հանցագործ բան չհայտնաբերվեց»:

Այնուհետև հաղորդվում էր, որ խուզարկություն է կատարվել նաև «Труда» տպարանում, որտեղ տպագրվում էր թերթը և դադարեցվել է «հիշյալ թերթի 4-րդ համարի տպագրությունը և գրավիկեցին տպագրության համար ստացված հողվածները: Վերջիններիս բովանդակության մեջ ստուգումից հետո նույնպես ոչ մի հանցագործ բան չհայտնաբերվեց»:

ՌՄԻԲԿ Բաբլի կոմիտեն Շահումյանի գլխավորությամբ կուսակցության նոր կոնֆերանս հրավիրելու կողմնակիցների առաջին շարքումն էր գտնվում: 1911 թ. հունիսին Փարիզում Լենինի նախագահությամբ գումարված ՌՄԻԲԿ Կենտկոմի անդամների խորհրդակցությունում որոշվում է հրավիրել համակուսակցական կոնֆերանս: Այդ նպատակով էլ ընտրվում է կազմակերպական հանձնաժողով, որին հետո տրվում է «Արտասահմանյան կազմակերպական հանձնաժողով» անվանումը: Այդ հանձնաժողովի անդամ է ընտրվում նաև Շահումյանը:

Կոնֆերանսի հրավիրման համար գործնական աշխատանք տանելու նպատակով Ռուսաստանի տեղական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմվում է ռուսական կոլեգիա:

1911 թ. հուլիսի վերջին Լենինի հանձնարարությամբ Բաբու է գալիս «Արտասահմանյան կազմակերպական հանձնաժողովի» անդամ Գ. Օրջոնիկիձեն: Նրա մասնակցությամբ և Շահումյանի նախաձեռնությամբ օգոստոսի 6-ին հրավիրված ՌՄԻԲԿ Բաբլի կազմակերպության գործադիր հանձնաժողովի նիստն ընդունում է Շահումյանի ներկայացրած բանաձևը: Գործադիր հանձնաժողովը կողմ է արտահայտվում համակուսակցական կոնֆերանս հրավիրելու օգտին:

Միաժամանակ Գործադիր հանձնաժողովը «անլեզայ ու հեղափոխական ՌՄԻԲԿ դրոշին հավատարիմ բոլոր արտասահմանյան խմբերին հրավիրում է իրենց ներկայացուցիչներով լրացնել Կազմակերպական հանձնաժողովի արտասահմանյան կոլեգիան»:

Գործադիր հանձնաժողովն առանձնապես ցանկալի ու անհրաժեշտ է համարում մենչևիկ-կուսակցականների (պեխանովականների) մոտենը Կազմահանձնաժողովի մեջ:

Զարգացնելով Գործադիր հանձնաժողովի ընդունած բանաձևը, ՌՄԻԲԿ

Բաբբի կոմիտեն օգոստոսի 10-ին Շահումյանի առաջարկությունները որոշում է շտապ կերպով հրավիրել Համակուսակցական կոնֆերանս, միաժամանակ բոլոր կազմակերպություններին կոչ անելով «վճռական ու բազմակողմանի աջակցություն ցույց տալ Կազմհանձնաժողովին, խորհրդակցությանը և դրանով իսկ օգնել Հեղափոխական ՌՄԴԿ փառապանծ դրոշի ներքո ս-դ պրոլետարիատի հիրավի կուսակցական համախմբման մեծ ու անհետաձգելի գործին»։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 206-209)։

Համակուսակցական կոնֆերանս հրավիրելու օգտին Բաբբի կոմիտեի տարած աշխատանքի մասին Շահումյանը տեղեկացնում է Ն. Կրոպակայայի հասցեով ուղարկած նամակում։ (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 213-215)։

1911 թ. սեպտեմբերի 29-ին Շահումյանի նախաձեռնությամբ Բաբբում հրավիրվում է Բաբբի, Թիֆլիսի, Կիևի, Եկատերինոբուրգի և Եկատերինոբուրգի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն։ Այստեղ ձևավորվում է Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովը, որի մեջ ընտրվում են Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Գ. Օրջոնիկիձեն և այլք։

Այդ խորհրդակցության մասին որոշ տեղեկություններ է հայտնում Օրջոնիկիձեն, որ, մասնավորապես, հիշում է Շահումյանի ունեցած ելույթի մասին։ (Г. К. Орджоникидзе, Статьи и речи, том 1, М.1956, стр.11)։

ՇԱՀՈՄՅԱՆԸ ՆՈՐԻՑ Է ՉԵՐԲԱԿԱՎՈՒՄ

Վերոհիշյալ խորհրդակցությունից հետո նրա մասնակիցները, որոնց մեջ էին նաև ՌՄԴԿ Բաբբի կոմիտեի բոլոր անդամները, գնում են «Найка» ակումբ՝ ներկա լինելու ուսս գրող Ա. Չեխովին նվիրված զեկուցմանը, որը ներկայացնելու էր Միրոն Չերնոմազովը։ Գաղտնի գործակալ Չերնոմազովի միջոցով ուստիկանությունը հայտնի է դառնում վերոհիշյալ խորհրդակցության, ինչպես նաև «Найка» ակումբում տեղի ունեցող զեկուցումից հետո գաղտնի ժողովի մասին։

Ուստիկանությունը չի համարձակվում խորհրդակցության մասնակիցներին ձերբակալել հենց դրա ընթացքի ժամանակ, քանի որ դա տեղի էր ունենում Սաբունչիի նախաձեռնությամբ, բանվորական միջավայրում։

Սեպտեմբերի 30-ին, գիշերը, երբ Չերնոմազովի զեկուցումից հետո պետք է սկսվեր գաղտնի ժողովը, ուստիկանությունը չլիապատում է ակումբի շենքը և ձերբակալում այնտեղ գտնվող 31 մարդու, այդ թվում նաև Շահումյանին ու Չերնոմազովին։ (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 127, թ. 1)։

Օրջոնիկիձեն, որը պատահամաբ ղուրս էր եկել ակումբից ծխախոտ գնելու համար, ազատվում է ձերբակալումից։ Նույն օրը Շահումյանի բնակարանում կատարվում է խուզարկություն, որի ժամանակ հայտնաբերվում է 11 գրքույկ հայերեն, 4 գրքույկ ռուսերեն, մեկ գրքույկ վրացերեն և ամսագրի երեք համար։ (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 136, թ. 1)։

1911 թ. հոկտեմբերի 7-ին Բաբբի նահանգային ժանդարմական վարչության պետի օգնականը Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետին հստկյալ տեղեկություններն է հաղորդում ձերբակալված Շահումյանի մասին։

«Տեղեկություն».

1. Ե՛րբ է ուղարկվել-1911 թ. հոկտեմբերի 2-ին։

2. Ազգանուն, անուն, հայրանուն (ամուսնացածների դեպքում նշել սկզբնական ազգանունը), իսկ եթե հրեա է, ապա ինչպես է կոչվում քրիստոնեական անունով-Շահումյան Ստեփան Գևորգի։



Ստ. Շահումյանի ձերբակալված ժամանակի լուսանկարները (Բաքու, 1911թ.)

3. Ծննդյան ժամանակը և տեղը, նշել, եթե անօրինական ծնունդ է (արտասովորական կամ որդեգրված)-1880 թ. Թիֆլիս քաղաքում: Կրոնը՝ Հայ գրիգորյանական:

4. Աստիճանը, դասայնությունը և գրանցման վայրը (նահանգը, գավառը, գավառակը, գյուղը, քաղաքը)-Թիֆլիսի քաղաքացի: Մշտական բնակություն վայրը՝ Բաղախանի:

5. Հոր անունն ու Հայրանունը, մոր անունն ու Հայրանունը, նրա օրիորդական սպեցանունը-Հայրը՝ Գևորգ Ղազարի, մայրը՝ Եկատերինա Թովմասի (ծագումով՝ Ջոջանա):

6. Զբաղմունքը կամ արհեստը (սպիտակ միջոցները և ծառայությունների վերջին վայրը-Նավթամուղի վարիչ:

7. Ո՞ր ուսումնական հաստատություններում և ո՞ր թվականին է առաջին անգամ, միջնակարգ և բարձրագույն կրթությունը-1898 թ. սվարտեղ է Թիֆլիսի ռեալական ուսումնարանը, 1902-1904 թթ. սովորել է Բեռլինի համալսարանում:

8. Անչտությունը գինիորական ծառայության նկատմամբ, որտեղ և երբ է ծառայել, իսկ եթե գտնվում է պահեստում կամ աշխարհագրորում, ապա որտեղ է կանգնած Հաշվատման մեջ-

9. Նախկինում ենթարկվել է հետաքննության-1909 թ. ենթարկվել է Բաքվի նահանգալիս ժանդարմական վարչության կողմից պետական պահանջության մասին օրենքով:

10. Ներկա հետաքննության և քրեական օրենսգրքի հոդվածի հիման վրա պատասխանատվության ենթարկելու հիմքը, որով ներկայացվել է մեղադրանքը-Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության տեղական կազմակերպությունը Շահումյանի պատկանելության մասին Բաքվի պահանջարկային բաժանմունքի գործակալական տեղեկություններ:

11. Ենթարկելու ժամանակը-1911 թ. Հոկտեմբեր:

12. Գործի հարուցման վայրը-Բաղաք Բաքու:



Ստ. Շահումյանը դստեր՝ Մանյայի հետ

13. Խուզարկության կամ ձերբակալության ժամանակը և տեղը-1911 թ. սեպտեմբերի 30-ին Սաբունջիում:

14. Առաջին հարցաքննության ժամանակը-1911 թ. Հոկտեմբերի մեկը:

15. Խուզարկության ժամանակ ինչ է հայտնաբերվել-գրքույկներ և Հայոց լեզվով գրազրույցներ:

16. Խափանման միջոցի ձևնաչափը (ցույց տալ երբ և որտեղ է կալանքի տակ վերցվել)-1911 թ. Հոկտեմբերի 1-ին կալանքի է վերցվել Բաքվի բանտում:

17. Ու՞մ է հետ է ձերբակալվել և ովքեր են համարվում նրա մերձավոր հանցակիցները-Գինգուրգ, Մգեղաձե, Արեխովա, Ենուկիձե և ուրիշներ:

18. Հատկապես որ կուսակցական կազմակերպությունն է պատկանում-Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 34, թ. 1-2):

Շահումյանի ձերբակալության մասին Հոկտեմբերի 1-ին հաղորդում է հրատարակում «Баку» թերթը:

Սկզբում ձերբակալվածներին պահում են Բալիլովի բանտում: Շահումյանի հետ նույն խցում էր պահվում նաև Չերնոմուսովը, որն առաջադրանք ուներ հեռուկալում որի հետ Շահումյանի կապերին: Ինչպես վկայում է Ն. Կոլեսնիկովան, Շահումյանը համոզված էր, որ իրենց ձերբակալության գործում մեծ դեր է խաղացել պրոպոկատորը և բանտից ընկերներին զգուշացնում էր այդ մասին: (Н. Н. Колесникова. По дорогам подполья, стр. 122).

Չերբակալումից հետո Շահումյանի բնակարանում կատարված խուզարկության ժամանակ ոստիկանությունը հայտնաբերում է միայն լեզու հրատարակված գրքեր և անձնական բնույթի նամակներ, ինչպես նաև գրաստանների տետր: Հարցաքննությունների ժամանակ ոստիկանությունը չէր հաջողվում որևէ հանցանշան հաստատել և Շահումյանը ժխտում է իրեն ներկայացված մեղադրանքները:

Այսպիսով, հանցանշաններ չկային և չէր սպառնացվում Շահումյանի



Ստ. Շահումյանը կնոջ՝ Եկատերինայի և որդիների՝ Լևոնի ու Սուրենի հետ Բաքվի բանտում

«մեղավորությունը»: Բայց ոստիկանության տրամադրության տակ էր պրոֆոկատորի հայտնած տեղեկությունն այն մասին, որ Շահումյանը համարվում էր ՌՄԻԲԿ Բաքվի կոմիտեի ղեկավարը:

Հետաքննությունը երկարում էր և ոստիկանությունը Շահումյանի դիմադրությունը կոտրելու նպատակով նրան տեղափոխում է Բաքվի Շանախի բանտ, որտեղ պայմանները շատ ավելի վատն էին:

Գտնվելով բանտում, Շահումյանին հաջողվում է կապ հաստատել դրսում գտնվող ընկերների հետ և իր օգտակար խորհուրդներով օգնում նրանց: Այդ օգնությունը հատկապես զգալի եղավ, երբ Բաքվում գործող բոլշևիկներ Ա. Կարինյանը, Ա. Սեյդյանը, Ռ. Դաշոտյանը, Վ. Տերյանը, Հ. Հակոբյանը և մի շարք այլ ընկերներ նախաձեռնեցին հայերեն «Նոր խոսք» երկչարսմթաթերթի հրատարակումը:

ԳԼՈՒԽ 6 «ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԹՈՒԹԱԿԸ»

«Նոր խոսք»-ի Հենց առաջին համարում տպագրվում է Շահումյանի ««Տիեզերական» թոժիակը» հոդվածի առաջին մասը, որ նա գրել էր մինչև ձերբակալվելը: Այս հոդվածը Շահումյանը գրել էր 1910 թ. լույս տեսած Միքայել Վարանդյանի (Հովհաննիսյան) «Հոսանքներ» գրքի կապակցությամբ:

Հոդվածի սկզբում Շահումյանը նշում է, որ «ժամանակները փոխվում են» և դրա հետ էլ փոխվել է նաև Մ. Վարանդյանը: Իսկ ինչո՞ւմն էր կայանում Վարանդյանի փոխվելը: Այս հարցին պատասխանելով, Շահումյանը գրել է. «Կար ժամանակ, երբ նա (Վարանդյանը) արոտասահմանյան մի Հայտնի հրատարակության մեջ տպագրում էր «19-րդ դարը» վերնագրով իր մեծ «աշխատությունը», որտեղ նա ճգնում էր ապացուցել, որ 19-րդ դարը եղել է ամբողջովին ազգային կոիֆների դար, «ազգային կոիֆ-վահա ինչ է ժառանգել մեզ 19-րդ դարը» բացականշում էր նա ոգևորված»:

Շահումյանն ընդգծում է նաև, որ Վարանդյանի մոտ «սոցիալական հարցը» հիշվում էր ի միջի այլոց. «նրան նախընտրված էր միայն մի փոքրիկ էջ», որ նրա «մտահոգությունների մեջ» այդ հարցը շատ քիչ տեղ էր զբաղեցնում:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ գերմանական հայտնի բուրժուական գիտնական Վ. Զոմբարտը իր «Սոցիալիզմը և սոցիալական շարժումը 19-րդ դարում» գրքում մեջբերելով Կ. Մարքսի հետևյալ միտքը, ըստ որի «մինչև այժմյան բոլոր հասարակությունների պատմությունը ներկայացնում է իրենից դասակարգային կոիֆների պատմություն», գտնում է, թե Մարքսի այդ միտքն անբավարար է և միակողմանի:

Շահումյանը մեջբերում է Զոմբարտի հետևյալ միտքը. «Եթե մենք ամփոփելու լինենք մի բանաձևի մեջ պատմության բովանդակությունը, մենք կասեինք, որ պատմությունը երկու հակադրություններ է ճանաչում, որոնց շուրջը պոստվում է ժողովուրդների կյանքը՝ դասակարգային և ազգային հակադրություններ: Այդ պատճառով մենք տեսնում ենք մի կողմից դասակարգային, մյուս կողմից ազգային կոիֆներ»:

Շահումյանը հիշեցնում է, որ ժամանակին մարքսիստական քննադատությունը ցույց է տվել, թե ինչպես է գերմանական պրոֆեսորը չփոթել հասկացությունները: Շահումյանը նկատի ունի, որ Մարքսը խոսել է «մինչև այժմյան հասարակությունների» պատմության մասին, այսինքն՝ «ազգերի (կամ պե-

տուժյունների) ներքին Հասարակական կյանքի մասին, իսկ պրոֆեսորը խոսում է այդ ազգերի պատերազմների, փոխադարձ Հարաբերությունների մասին»:

«Եվ եթե,- շարունակում է Շահումյանը,- փնտրենք այդ ազգային կոիվների, պատերազմների պատճառները, մենք կտեսնենք, որ նրանք բոլորն էլ ունեն տնտեսական-դասակարգային աստատ, որ նրանք էլ արդյունք են ընդհարվող ազգերի մեջ տեղի ունեցող ներքին դասակարգային շարժումների, դասակարգային կոիվների»:

Այստեղից էլ Շահումյանն անդրադարձնում է Վարանդյանին, ընդգծելով, որ նա հավանել է «բուրժուական պրոֆեսորի թեթևամիտ «քննադատական» մարզանքները», ուրախանում է, որ գերմանական պրոֆեսորը Հայ տարարում է, թե «պատմությունը մի կողմից դասակարգային կոիվ է, մյուս կողմից՝ ազգային կոիվ», անուշադրության մատնելով, որ ժամանակին դրանք բացատրվել են մարքսիստների կողմից:

Շահումյանը նշում է, որ այժմ Վարանդյանը մի քայլ առաջ է գնացել, իր նոր գրքում փաստաբանելով «դասակարգային կոիվ գաղափարը», դասակարգային կոիվը համարում է «չավազույն գործելակերպը», «Հարմարագույն ճանապարհը դեպի իդեալի իրականացումը», որ դասակարգային կոիվը «կատարվում էր դարերից ի վեր անկախ մարդկային կամեցողությունից», որ «Հասարակական էվոլյուցիայի մեջ նա մղում է Հասարակությունները դեպի անդուլ կերպարանափոխում»:

Այս ամենի մասին խոսելով, Վարանդյանը, ինչպես նկատում է Շահումյանը, «ոչ մի բույն չի մտաբերում իր հին «ազգային» աստվածներին, ոչ մի անգամ նրա չրվուլքները չեն մրանջում «ազգային» սրբերի անուանները՝ պետոների, սերունների, չաուչների... որ նաև նրա ընկերներն այնքան սիրում են հորվել պատեհ և անպատեհ դեպքերում»:

Այնուհետև Շահումյանն ընդգծում է, որ Վարանդյանը մոռացել է ոչ հետևանքալու բոլոր խնդիրների խնդիրը համարվող մարդկանց «մտահոգությունների գերազույն առարկան»՝ ազգային խնդիրը:

«Այժմ,- շարունակում է Շահումյանը,- նա (Վարանդյանը) Հայտարարում է, որ դասակարգային կոիվն է, սոցիալիզմն է, որ կազմում է «քաղաքակրթված մարդկության մեծագույն կնճիղը, բոլոր խնդիրների խնդիրը»: Սոցիալիզմն է, որ կազմում է այժմ պ. Վ-նի «բարձրագույն երազներին» նախկան ասարկան»:

Շահումյանը մեջբերելով Վարանդյանի հետևյալ խոսքերը. «Ճանա

պարհ... Հարստահարված, իրավազուրկ աշխատավորությունն է, որ արժանավայել տեղ է պահանջում արեգակի տակ» և մեկնաբանում, որ մի ժամանակ Վարանդյանն «ամբողջովին կրանված էր և ուզում էր, որ բոլորն էլ կրանվեն», «որոշելով Հայրենիքի տեղը տիեզերքի մեջ»:

«Այժմ,- գրում է Շահումյանը,- նա (Վարանդյանը) «արժանավայել տեղ է» պահանջում (ոչ թե Հայոց ազգի, այլ տիեզերական սոցիալիստական աշխատավորության համար...) «արեգակի տակ»:

Շահումյանը նշում է, որ Վարանդյանն այժմ ազդարարում է, թե «տիեզերական եղբայրությունը», սոցիալիզմն այն մեծ ուժն է, որ «չարունակ հորձանք է տալիս Արևմուտքից դեպի Արևելք և դեպի Հարավ, որ շարժվում է այսօր քաղաքակրթության հորիզոններում, որպես մի նոր տիեզերական փրկարար կրոն»:

Վարանդյանի այս խոսքերը գնահատելով որպես «ֆրագյորություն», Շահումյանը փաստում է, որ Վարանդյանն այժմ փոխվել է ու դարձել «սոցիալիզմի շատագուլ», «սոցիալիզմի սիրահար»:

Մի քանի տարի առաջ, հիշեցնում է Շահումյանը, Վարանդյանը իր ընկերների հետ միասին «ազգի թշնամիներ, ազգի դավաճաններ էին անվանում այն փոքրաթիվ Հայ մարքսիստներին և Հայ բանվորներին, որոնք դասակարգային կոիվ գաղափարներ էին արծարծում Հայ իրականության մեջ»: Նա նաև հիշեցնում է, թե ինչպես Վարանդյանը «Եվրոպական ուսանողության միություն» կոնգրեսում իր ձեռքով գրված բանաձևն ընդունել է տվել, որով հորոշում էր «կովկասահայ երիտասարդությունը չմասնակցել Ռուսաստանի ազատագրական շարժմանը և «չլրատել» ուժերը, որը պետք էր գործադրել Հայաստանի ազատության համար»:

Այժմ էլ, նկատում է Շահումյանը, Վարանդյանը իր նոր գրքի մեջ «մեղադրում է Հայ մարքսիստներին, որ նրանք լավ և բավականաչափ եռանդով չեն մասնակցել ազատագրական կոմիտեին», որ Հայ մարքսիստները «իրենց անհնորհք ուս ընկերների հետ միասին կարծեիրս են եղել, որ հարկավոր չէ «ոչ մի ճակատամարտ բռնակարության դեմ», որ «բռնակարությունը ինքն իրան կոտորակվի» շնորհիվ «կապիտալիստական զարգացման տարերային պրոցեսի»:

Շահումյանը նշում է, որ Վարանդյանը միայն դժգոհ չէ Հայ և ուս մարքսիստներից: Նա դժգոհ է Մարքսից, Էնգելսից, Լիբկնիխտից, Կաուցկուց, Բեռնշտայնից, Պիեխանովից, Բեքելից, Գեդից, Նոյնիսկ Հայ ազգի բարեկամ ժողովից, նրանց մեղադրելով «քարացած մարքսիզմի», «ֆրագի հեղափոխական» լինելու և այլնի մեջ:

Ստացվում է, որ Վարանդյանն այս բոլորից առաջ է անցել և դարձել է «Հատակ» սոցիալիստ: Իսկ ո՞րն է Վարանդյանի «Հատակ» սոցիալիզմը: Շահումյանը նշում է, որ դժվար է այդ հարցին պատասխանել, որովհետև Վարանդյանը «ոչ մի «տեսակի» սոցիալիզմ չի քարոզում, որովհետև ոչ մի հարկացողություն չունի սոցիալիզմի մասին»:

Շահումյանն անդրադառնում է Վարանդյանի գրքի առաջաբանին, որտեղ նա ի միջի այլոց «գանգատվում է Հայ երիտասարդության և առանձնապես թուրքահայ երիտասարդության ու հասարակական գործիչների «առասպելական» տգիտության վրա, որոնք «տաանյակ տարիներով ապրել են արևմտյան միջավայրում, քաղաքակրթության ամենափոթորկուտ կենտրոններում և սակայն մնացել են անտեղյակ մշակույթի և մտքի խոշոր արտահայտություններին»: Վարանդյանն այս հանգամանքը բացատրում է գրեթե լուրջ, թե «այդ տգիտությունը առաջացել է նրանից, որ նրանք ապրել են փակ ված, կղզիացած, որպես կրիան իր պատյանի մեջ»:

Վերոհիշյալ միտքը նկատի ունենալով, Շահումյանը գրում է, որ Վարանդյանի նախորդ գրքերը թերթեղիս, հաճախ սովել է հետևյալ հարցը. «Ինչու է բացատրել, որ մարդը, տաանյակ տարիներ է, ապրում է եվրոպայում, ունեցել է բոլոր հարմարությունները՝ կարողալու, ծանոթանալու եվրոպական հասարակական մտքի նվաճումների, ժամանակակից սոցիալիստական թեորիաների հետ և սակայն կարողացել է մնալ այդ աստիճան անտեղյակ ու տգետ»:

Նշելով, որ «կրիայի պատյանի» մեջ ամենից շատ կրգիացածը, փաստակարար եղել է ժնևի փողոցներից մեկում գտնվող գեղեցիկ վիլլան, որտեղ տեղափոխված էր «Դրօշակի» խմբագրատունը, Շահումյանը գրել է. «Այդ պատյանի մեջ, կամ մենք կասեինք, այդ նեխված ճահճի և նրա շնորհիվ եվրոպական այլ քաղաքներում առաջացած ազգային ճահճների մեջ է, որ սահմանափակվել ու բխացել է վարանդյանների միտքը»:

«Այդ նեխված ճահճներից,- ընդգծում է Շահումյանը,- նրանք իրենց գրվածները մի փոքր դուրս հանեցին ուսական ազատագրական շարժման ցնցող ու սթափեցնող ազդեցության տակ: Եվ առաջին փորձերը՝ նայելու արար-աշխարհին, հետաքրքրվելու սոցիալիզմով, որի անունից նրանց, որպես նացիոնալիստների, որպես հետադեմ տարրերի, հարվածում էին հայ վրացի և ռուս կովկասյան մարքսիստները,- նրանք անում էին հատկապես հենց այդ հարվածների դեմ իրենց պաշտպանելու համար: Ինչպե՛ս, նրանք նացիոնալիստներ, նրանք հետաշարժ տարրեր, երբ իրենց ծրագրի մեջ սկզբ

բից գրած են եղել սոցիալիզմ բառը, երբ այնտեղ կուլի դաշտում պետներ, սերոններ, բարկեն-սյունիներ... Դա անհանդուժելի էր, դա ոճրագործություն էր մարքսիստների կողմից: Հարկավոր էր ծանոթանալ սոցիալիզմի հետ, հարկավոր էր խրատել հանդուգն ու ատելի մարքսիստներին, ցույց տալ նրանց, որ մենք իրենցից լավ սոցիալիստներ ենք»:

Բայց, պարզաբանում է Շահումյանը, քանի որ «վարանդյանները երկու ոտքով թաղված են իրենց ճահճների մեջ, որովհետև նրանք լցվել էին մի անասելի կատաղությանը ու ատելությանը դեպի մարքսիզմը, որը սոցիալիզմի մի միակ գիտական տեսությունն է, նրանք չկարողացան մոտենալ սոցիալիզմին և կանոնավոր կերպով ծանոթանալ նրա հետ»:

Իր հոդվածի վերջում Շահումյանը նշում է, որ Վարանդյանին լուրջ գրողի տեղ դնող բազմաթիվ ընթերցողներ, հատկապես երիտասարդությունից, «սոցիալիզմը սովորում են Վարանդյանի գրքերի վրա»: Շահումյանը հայտնում է, որ այդ մարդկանց մոլորությունը պարզելու համար հանդես կգա մի շարք հոդվածներով Վարանդյանի «Հոսանքների» տեսական «արժեքը» քննելու համար: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 216-223):

Սակայն օգոստոսի 30-ին ձերբակալվելու պատճառով Շահումյանը հնարավորություն չի ունենում իրականացնել իր մտադրությունը:

«ԴՐՕՇԱԿ»-Ի ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Շահումյանի «Տիեզերական» թուխակը» հոդվածի կապակցությամբ կամենում եմ ընթերցողի ուշադրությունը ներկայացնել հետևյալը:

Հանրահայտ է, որ երիտթուրքական կուսակցության պարագլուխները նպատակ էին դրել իրենց չուրջ համախմբել սուլթանի տիրապետության դեմ պայքարող ուժերին:

Այդպիսի ուժ էր համարվում նաև Հայ հեղափոխական դաշնակցությունը կուսակցությունը, որի ղեկավարները ջանքեր էին գործադրում միջազգային ճանաչում ձեռք բերել Երկրորդ ինտերնացիոնալի մեջ ընդունվելու միջոցով: Այստեղ էլ դաշնակցությունը օգնություն է ցույց տվել Պարլուար, խոստանալով նպատակ Երկրորդ ինտերնացիոնալի մեջ մտնելուն, պայմանով, եթե դաշնակցությունը համաձայնի երիտթուրքական կուսակցության հետ դաշինքի մեջ մտնել:

Եվ ահա, Երկրորդ ինտերնացիոնալի մեջ մտնելու նպատակով դաշնակցությունը սկսում է ավելի ուժեղին խոսել սոցիալիզմի մասին, իրեն ներկայացնելով որպես սոցիալիզմի զարգալուարախոսության կրող:

Այդ մասին է վկայում Սոցիալիստական միջազգային բյուրոյի միջոցով Երկրորդ ինտերնացիոնալի Շտուտգարդի կոնգրեսին 1907 թ. օգոստոսին ներկայացրած «Իրօչակի» տեղեկագիրը: Այս «Տեղեկագիր» սկզբում խոր վրում է դաշնակցության ստեղծման մասին և ընդգծվում է, որ 1892 թ. տեղի ունեցած ընդհանուր ժողովը կուսակցության քաղաքական-հասարակական դավանանքի մասին հայտադրում պահանջել է «Հայկական վեց վիրայեթներում մէջ քաղաքական ազատութիւն, առանց ցեղի և կրօնի խտրութեան»:

«Դաշնակցության ծրագրին մէջ,- ասված է «Տեղեկագրում», - սօցիալիզմը մը Տաճկաստանի համար առաջնորդող սկզբունք մըն է»: Բայց նկատի ունենալով, որ Օսմանյան Թուրքիայում «դասակարգային բաժանումները գրեթէ կանհետանային փոխանակ շեշտելով», որ բռնապետական ռեժիմի տակ ճգնվում էր «Հարուստ և աղքատ», խեղդվում էր «ամէն անհատական նախաձեռնութիւն... ազգային հարստութեան բոլոր աղբիւրները», որ «չը կան հարորդակցութեան ուղիներ, ոչ ալ դրամատիրութիւն, չը կայ պրօլետարիտ աստ եւրոպական մտքով: Մեզի կմնար ուրեմն սօցիալիստական սկզբունքները տարածել երկրի մտաւորականներուն մէջ (ուսանողներ, ուսուցիչներ և այլն) և մենք այդ բրինք մեր փրօփականողիտներու և մեր հրատարակութիւններու միջոցով»:

Այնուհետև «Տեղեկագրի» մէջ նշվում է Թուրքիայի տարածքում դաշնակցության տարած հեղափոխական աշխատանքի մասին, հատկապես ընդգծվում է, որ «Հայ-միւսլիմանական գործակցութիւնը, մեր երբեմնի երազը, իրագործելու վրայ է»:

Անդրադառնալով Անդրկովկասին, «Տեղեկագիրը» նշում է, որ 1890-1903 թթ. դաշնակցության գործունեությունը գլխավորապես կենտրոնացած էր «Թրքահայաստանի մէջ», իսկ կովկասյան կոմիտեներն ու Պարսկաստանի գաղութները «օժանդակ կազմակերպութիւններ էին, որոնք կը հայթայթէին դրամ, մարդ, զէնք Թրքահայերու ազատագրութեան շարժումին»:

«Տեղեկագրում» ընդարձակ անդրադարձ է կատարվում Անդրկովկասում դաշնակցության ծավալած գործունեության մասին, որը հարկ եմ համարում ամբողջությամբ ներկայացնել ընթերցողի ուշադրությանը. «...Սարկայն մեր կուսակցութիւնը անտարբեր չէր կրնար մնալ Ռուսաստանի մեջ բունի ուսացումի քաղաքականութեան հանդէպ, ուրկէ կը տառապէին յաճախ աշխատաւոր մեծ մասաները: Կուսակցութեան կովկասեան հատածները որոշեցին հակադրել բացառիկ օրենքներու դէմ և դիմեցին ամէն կարելի միջոցի, նոյնիսկ ստորերկրեայ գործունեութեան: Դպրոցներու և ուրիշ կրթար

կան հաստատութիւններու փակումէն յետոյ, Դաշնակցութիւնը իր ձեռքը առաւ ժողովրդական դաստիարակութեան գործը: Հիմնեց քաղաքներու և գաւառներու մէջ գաղտնի դպրոցներ, ուր ուսուցիչներ մայրենի լեզուն կանդէպէն ժողովրդին: Շատ տեղեր պարտաւորիչ և ճրի կրթութիւն հաստատեց, որուն ծախքը համայնքը կը հոգար: Կը հիմնէր նաև գաղտնի գրադարաններ, կը տարածէր ժողովրդին և մտաւորականներուն մէջ յեղափոխական գաղափարներ, գրականութեան, իր կեդրոնական օրգանին և արտասահման հրատարակած գրքոյններու միջոցով»:

Այստեղ կամենում եմ ընդմիջել «Իրօչակ»-ից մեջբերումը և ընթերցողին ներկայացնել «Մուրճ» ամսագրի հետևյալ գնահատականը.

«Հ. Յ. Դաշնակցութիւնը Հայոց դպրոցներում» Հոդվածի մէջ «Մուրճը» գրում է. «Հայ ժողովրդի բախտի վրայ զօրով իրան տէր ու տնօրէն յայտարարած այդ ընկերակցութիւնը, օգտուելով պետական ընդհանուր խառն դրութիւնից, ահաբեկուած հասարակութեան տրամադրութիւնից և մեր փիթած, անգոյն, համակերպուող խուժանամետ «ինտելիգենցիայի» ապիկարութիւնից, ինչպէս և էջմիածնում տիրող անպիտութիւնից, իր մեծաքանակ բիւրոկրատիան բոլոր շեֆերով և շրջկներով մտցրեց մեր դպրոցների մէջ և սկսեց այնտեղ նոյն, քայքայիչ, այլաբերող, ապականող գործունեութիւնը, որով փայլել էր այլ ապարեղներում: Եւ երբեք մեր դպրոցները անեղի խառնակ վիճակի մէջ չեն եղել, քան դաշնակցութեան ռեժիմի տակ...»: («Մուրճ», թիւ 2, 1907, էջ 112):

Ձանկարանելով «Մուրճ»-ի գնահատականը, շարունակենք «Տեղեկագրից» մեջբերումը. «Դաշնակցութեան գործունեությունը հող կանգ չառաւ: 1902-էն սկսած ան բացէքաց և զուտ յեղափոխական դարձաւ: Կարգ մը գաւառներու մէջ մենք ձեռք ձգեցինք կառավարական գործունեութեան մէջ մալրարդարարատութիւնը՝ վճռական հարած մըն էր իր հեղինակութեան: Կուսակցութիւնը դատարաններ հաստատեց և տարիներով գերազայն իրաւարարի պաշտօնը կատարեց, գիւղացիներուն մէջ ծագած ամէն տեսակ վէճեր ինք կը դատէր և կը վճէր, դատաւորները յաճախ ընտրւած էին համայնքներէն, կուսակցութեան հակողութեան տակ կը գործէին: Հաճախ մեր մահմետական դրացիները իսկ-թիւրք, քիւրդ կամ թաթար գիւղացիներ-կը դիմէին կուսակցութեան դատարաններուն, վիճելի հարցերուն վերջ տալու համար, այսպէս մենք շատ մը մահմետական համակրողներ ունեցանք, որոնք յեղափոխական դատարանի սնդուկին իրենց դրամավճարները կընէին»:

Այս ամենն էլ նկատի ունենալով «Մուրճ» ամսագիրը գրել է. «Դաշնակ

ցութեան ասպետները ամէն տեղ գործելու ասպարեզը ոչ միայն խելի են, այլ ասպականել, ուր մտնողը, անշուշտ, կմրտալի, ուրեմն պետք է ասպարեզը մաքրել»: («Մուրճ», թիվ 1, 1907, էջ 166):

Այնուհետև «Տեղեկագիրը» հիշատակում է Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավումը, և գրում է հետևյալը. «Իաշնակցութիւնը բողոքի շարժման մը նախաձեռնութիւնը և ուղղութիւնը ձեռք առաւ, և Ռուսահայաստանը շուտով արիւնահեղ կուի և վրիժառութեան թատրը դարձաւ»:

«Տեղեկագիրը» մատնացույց է անում նաև դաշնակցության դերը Հայ թաթարական կոտորածներին վերջ տալու գործում, չմոռանալով արդարացի նեղ «չարք մը բարձր անձնատրութիւններին» իբրև կոտորածների կազմակերպիչների պատուհասի ենթարկելը:

Անցնելով Հայ գյուղացիութեան մեջ տարվող աշխատանքին, նկարագրելով Հայ գյուղացու ամենից խղճալի գրութիւնը, «Տեղեկագիրը» դարձյալ դիմում է չափազանցութեան, գրելով, որ գյուղացին «այս պայմաններու մէջ, իրօք պատրաստած է սօցիալիստական գաղափարներու պրօպագանդին և գլխաւորաբար Հողի Համայնացումին: Այս նշանաբանով է, որ մեր կուսակցութիւնը կը մօտենայ գիւղացիներուն: Այս վերջի երեք տարիներու մէջ մեծ յաջողութիւն ունեցաւ իր բոլոր հեղինակութիւնով ծանրացաւ գիւղական մակաբոյծ տարրերու վրայ և գիւղացիական կեանքին մէջ կարևոր փոփոխութիւններ առաջ բերաւ: Շատ մը գաւառներու, մանաւանդ Գանձակի և Երևանի նահանգներուն մէջ, բաշխել տաւ Համայնական Հողերը յօգուտ Հարստահարած փոքր Հողագործներու մեծ մասին: Այս Հողաբաժանումը քան տարիէ ի վեր չէր կատարուեր Հարուստ և ազդեցիկ գիւղացիներու դիմադրութեան շնորհիւ: Մեր գաւառական կազմակերպութիւնները կանոնաւոր, երբեմն բռն, կռիւ մղեցին սեփականատէրերու դէմ, և շատ մը գաւառներու մէջ գիւղացիները տասանորդ չը վճարեցին»:

«Տեղեկագրում» նշվում է, որ դաշնակցութիւնը «կը կազմակերպէ Հայ բանուորութիւնը՝ դասակարգային կուի Համար». որ կազմակերպված գործադրւելնրը «քիչ բացատրութիւնով յաջողութեամբ պատկեցան»: Նշվում է նաև, որ «մեր կազմակերպւած գործաւորներու թիւն է 23. 000»:

«Տեղեկագիրը» հայտնում է, որ դաշնակցութիւնը Կովկասի մէջ մասնաւոր և ազատութիւն է վայելում, որի շնորհիւ թիֆլիս, Բաքու, Բաթում, Գանձակ, Երևան, Ալեքսանդրապոլ և Շուշի քաղաքներում կազմակերպել է 110 միութիւն՝ 10. 990 անդամներով: Կազմակերպվել է նաև գյուղացիական միութիւններ՝ 67. 000 անդամով:

Այնուհետև նշվում է, որ Տաճկաստանի, Կովկասի, Պարսկաստանի, Բալկանյան երկրների և Ամերիկայի մեջ դաշնակցութիւնն ունի 3093 խումբ՝ 165. 000 անդամով

Այսպիսի տպավորիչ տվյալներ բերելով «Տեղեկագիրը» հայտնում է, որ Վիեննայում գումարված կուսակցութեան ընդհանուր կոնգրեսը «կարգ մը կարևոր որոշումներ կայացուց մեր կուի և ասպագայ գործողութեանց համար: Ի միջի այլոց որոշեց շարունակել երկու երկիրներու (Թուրքիայի) գործունէութիւնը Դաշնակցութեան դրօշակին տակ և ամէն ազգու միջոցներ ձեռք առնել սօցիալիստ և յեղափոխական միւս տարրերուն հետ Համագործակցութիւն մը առաջ բերելու համար»:

Վերջում «Տեղեկագիրը» հայտնում է. «Միջազգային սօցիալիստական կոնգրեսին մասնակցելու առաջարկը ընդունեց միաձայն»: («Դրօշակը», թիվ 9, սեպտեմբեր, 1907, էջ 134-137):

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԴԻՍԱԴԻՐ ՈՒԺԵՐԻ ԿՈՆԳՐԵՍԻ «ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ»

Միջազգային սօցիալիստական կոնգրեսի անդամ ընտրվելու դիմաց դաշնակցութիւնը վերջնականապէս ընդունում է երիտթուրքական կուսակցութեան հետ Համագործակցելու առաջարկը և 1907 թ. դեկտեմբերի 29-ին ստորագրում է «Օսմանեան կայսրութեան ընդդիմադիր տարրերու» կոնգրեսի «Յայտարարագիրը»:

Հարկ եմ համարում այդ «Յայտարարագիր» բովանդակութիւնը ընթերցողի ուշադրութեանը ներկայացնելուց առաջ, անդրադառնալ 1908 թ. Հունվարի թիվ 1-ում «Դրօշակ»-ի խմբագրական Հոդվածին:

«Ահա Համերաշխ գործակցութեան մի կարևոր քայլ. Հավատով բացարկանջում էր «Դրօշակը»,- Իմադիր և գործօն տարրերի կոնգրեսը» կերպարանքով, որ երևի համարում էր ցնորք, անմարմին տենչանք, որ այսօր իսկ յոռետեսների աչքում՝ ներկայանում է իբրև մի անցողակի, խարխուլ ձեռնարկ, բայց որը շօշափելի փաստ է, մարմնացած, կանգուն Հրապարակի վրայ, ընդունակ բանալու մի նոր տարեշրջան օսմանյան բռնապետութեան տապալման գործում»:

Այնուհետև խմբագրական Հոդվածում հաստատված Համերաշխութիւնը գնահատվում է որպէս կենսատու, որը ոչ թե արդյունք է «անհատների անձնական կամեցողութեան», այլ ամենից առաջ և ամենից շատ «արձագանք է այն մարտական եղբայրակցութեան, որ սկիզբն է առել արեան և

տանջանքի երկրում, այն խորհմաստ մերձեցման, որ սուլթանական ընթացիկ իր ծայրայեղ սարսափներով, և Հակառակ իր կամեցողութեան, ներշնչեց կրօնապէս և ազգայնապէս բաժանւած, բայց վշտով, ցաւերով ու դժբախտութեամբ շարկապած ժողովուրդներին»:

«Մենք,- ազգարարում էր «Իրօչակ»-ը,- ջատագովում ենք Համերայխութեան գաղափարը... Միջազգայնականութեան զինուոր ենք մենք և Համերայխութեան անվերապահ կողմնակից: Ոչ մի տարակուսանք, ոչ մի տատանում»: («Իրօչակ», թիվ 1, յունւար, 1908, էջ 1-2):

Փարիզի կոնգրեսում ընդունված «Յայտարարագիր» սկզբում նշվում են այն բոլոր չարիքները, որոնք Աբդուլ-Համիդի ռեժիմը 30 տարվա ընթացքում կիրառել է կայսրութեան սահմաններում ապրող բոլոր ժողովուրդների նկատմամբ:

Արձանագրվում են փաստեր այն մասին, որ Աբդուլ-Համիդի ռեժիմը ռեժիմն աստիճանաբար ոչնչացնում է «Թուրքիոյ բոլոր կենդանի ուժերը», «անկեղծ սարսափ կը զգայ կրթութենէ և կուլտուրայէ, որ ինքնագիտակցութիւնն ու ազատ մտածողութիւնը կը կազմեն, ուստի, կըրցածին չափ կաշկանդեց Հանրային կրթութիւնը և գիտութեան ծարաւ ժողովուրդներէն խից ինքնակրթութեան միջոցները»:

Բերվում են տնտեսական ծանր վիճակի մասին բազմաթիվ փաստեր, որոնց արդյունքով երկրում մեծանում է արտագաղթը, որը սովի հետ միասին «կը շարունակեն կոտորածի գործը և նոյնքան ապահով կերպով կամայայցնեն երկիրը»:

«Յայտարարագրի» մեջ նշվում է, որ արտաքին քաղաքականության տեսակետով էլ «Թուրքիոյ անձկութիւնը նւազ ողբալի չէ»:

«Ապտիւլ-Համիտ,- ընդգծում է «Յայտարարագիրը»,- իր անձնական դիվանագիտութեամբը, բարոյական վարկաբեկեց օսմանեան կայսրութիւնը: Կորանցուց ազատական պետութիւններուն Համակրութիւնը՝ որոնք Փարիզի և Պերլինի դաշնագրութիւններու ժամանակ (նկատի ունի 1856 և 1878 թթ. կոնգրեսները-Վ. Պ.), արգիլեցին կայսրութեան ամբողջական անդամատութիւնը, փոխարեն բարենորոգումներու, որ եթէ ժամանակին գործադրէին՝ ապահոված պիտի ըլլային երկրի վերածնութիւնը և բարգաւաճումը»:

Այնուհետև նշվում է, որ Աբդուլ-Համիդը չկատարելով խոստացած բարեփոխումները, իր հուսափառ Հպատակների մոտ առաջ է բերել «ըմբոստութեան արդարացի շարժումներ և եւրոպական պետութեանց կողմէ բազմաթիւ միջամտութիւններ»:

«Այս կործանարար քաղաքականութիւնը,- շարունակում է «Յայտարարագիրը»,- յանգեցաւ կայսրութեան հողային նւազման, և եթէ այսպէս ժամանակ մըն ալ շարունակէի, ուրիշ մասեր ևս՝ Ալպանիան, Մակեդոնիան, Արաբիան, Հայաստանը (ընդգծումը իմն է-Վ. Պ.), կարճ միջոցի մէջ անվրէպ պիտի բաժնին կայսրութենէն-արդեն իսկ կատարեալ քայքայման վիճակի մէջ-յօգուտ պետութեանց՝ որոնք կը փնտոեն կամ հողային ընդարձակում, կամ գաղթարձակութեան վայրեր, կամ ֆինանսական առաւելութիւններ»:

«Յայտարարագիրը» պահանջում էր.

- «1). Գահընկեցութիւն սուլթան Համիտի:
- 2). Արմատական փոփոխութիւն ներկայ ընթացիկին:
- 3). Հաստատում ներկայացուցչական ընթացի (նորհրդարան)»:

Այս պահանջների իրականացմամբ «կայսրութեան բոլոր ժողովուրդները հաւասար պարտականութիւններով և իրատունքներով, պիտի արտայայտեն իրենց կարիքներն ու կամքը, և որ պիտի ապահովէ ամէնքին, խաղաղ ներդաշնակութեամբ, արդարութիւնը և ազատութիւնը»:

Այս էր համարվում կոնգրեսի «միաբան նպատակը, Համապատասխան երկրի բոլոր ժողովուրդներու կամքին, ... որոնք վճռած են ձեռք բերել Համերայխ գործակցութեամբ մը, ազատութեան և երջանկութեան իրենց բաժինը»:

«Յայտարարագիրը» կոչ էր անում կայսրության բոլոր ազգերին. «Թող ամենքը միանան այս նւիրական պայքարին, թող ներշնչին ազատութեան, բարենորոգման և յեղափոխութեան գաղափարներէն՝ տապալելու Համար, սրամագրեկի բոլոր միջոցներով, ամօթալի և բռնակալ ընթացի մը»:

«Յայտարարագիրը» բռնակալության դեմ կոչվր շարունակելու Համար հանձնարարում էր հետևյալ միջոցները.

- 1). Զինւած դիմադրութիւն կատարութեան քայլերուն:
- 2). Անգէն դիմադրութիւն՝ քաղաքական և տնտեսական գործադրուով գործադու պայտօնեաներու, ոստիկանութեան և այլն:
- 3). Մերժում հարկերու:
- 4). Պրօպականդ գորաբանակին մէջ-հրաւէր կարող պիտի զինուորներուն՝ չի քալել ոչ ժողովուրդին, ոչ ալ յեղափոխականներուն դէմ:
- 5). Ընդհանուր ապստամբութիւն:
- 6). Մարտական այլ միջոցներ, համաձայն պարագաներու թերադրութեան»:

«Մրութիւն և առաջադիմութիւն օսմանեան կոմիտեի», «Օսմանեան մի-

ութիւն անհատ. նախաձեռն. ապակենդրոնացման և սահմանադրութեան», «Կոմիտէ «Ահտի Օսմանի», «Խմբագրութիւն «Խալիֆէթ» լրագրի և «Եգիպտոսի հրէական կոմիտէ»-ի հետ միասին «Յայտարարագիրը» ստորագրել են. «Հայ յեղափոխական դաշնակցութիւն. պաշտոնական օրգան «Դրօշակ», Խմբագրութիւն «Արմէնիա» լրագրի. պրոպագանդի օրգան (Մարտիկա), Խմբագրութիւն «Ռազմիկ» . յեղափոխական օրգան (Պալքանեան երկիրներ), Խմբագրութիւն «Հայրենիք» . յեղափոխական օրգան (Ամերիկա) »: («Դրօշակ», թիվ 1, յունուար, 1908, էջ 2-4):

Կոնգրեսը որոշում է նաև կազմել «գաղտնի մնայուն խտրել կոմիտէ մը բաղկացած այն կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն, որոնք կը գործեն կայսրութեան ներքո»: Այս կոմիտեի վրա էր դրվում կուսակցութեան միջոցով կոնգրեսի որոշումների իրագործումը: (Նոյն տետր, էջ 4-5):

Տեղին եմ համարում հիշել Արշակ Չոպանյանի գնահատականը. «Փարիզի վերջին Քոնկրէին մէջ, սպաննուեցաւ կամ գէթ սպանման ճամբու մէջ դրուեցաւ բան մը, որ գերիվեր է ունէ անհատէ, այն է Հայկական դատը: «Օսմ. Պետութեան ընդդիմադիր տարրէշու Քոնգրէսը» ժէօն թուրքերու համար ընդհանրապէս, և Ահմէտ Րիզայի համար մասնաւորապէս, յաղթանակ մըն է, և Դրօշակեան կուսակցութեան սպազագայնացման խաթարման վերջին դրուագը»: («Անահիտ», թիւ 1-4, 1908, էջ 44-47):

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

1910 թ. սեպտեմբերին Կ. Պոլսում հրատարակվող «Ազատամարտ» թերթում դաշնակցության հայտնի տեսաբան Ռուբեն Դարբինյանը հրատարակում է «Իթթիհատի և դաշնակցութեան համաձայնութեան շուրջ» ծափալուն հորվածաշարը: Դժգոհելով, որ դաշնակցութեան և Իթթիհատի միջև կնքված համաձայնութեանը «կըշարունակէ խանգարել շատերու բունը», Դարբինյանը գրում է. «Մեր հակառակորդ բանակը ոչինչ չի խնայել վարկաբեկելու համար այն բոլոր կարևոր քայիերը, զորս ըրած է դաշնակցութեանը հայ ժողովուրդի ֆիզիկական գոյութիւնը սպառնալովու նպատակով»:

Այդ «կարևոր քայիերի» մասին ասելով, Ռ. Դարբինյանը նկատի ունի «Սահմանադրութեան անասան պահպանման համար Դաշնակցութեան և Իթթիհատի միջև կնքված համաձայնութեանը»: Բայց նա ոչինչ չի ասում, թե որոնք են «հայ ժողովրդի ֆիզիկական գոյութեանը սպառնալիքու նպատար

կով» դաշնակցության «կարևոր քայիերը», այն էլ Աղանայի հայ բնակչության կոտորածից հետո:

Պատասխանելով նրանց, ովքեր դաշնակցությանը մեղադրում էին նրա համար, որ «դաշնակցութեանը որպէս միայն մէկ մասը հայ ազգին՝ իրաւունք չունէր ազգին անունով համաձայնութիւն կնքելու օտար կազմակերպութեան մը հետ», Ռ. Դարբինյանը պարզաբանում է, որ «համաձայնութեանը գոյացած է երկու կուսակցութեանց և ոչ թէ երկու ազգերի միջև, թէ այդ կուսակցութիւնները գործեր են միայն իրենց անունով և իրենց պատասխանատուութեամբ»:

Անդրադառնալով դաշնակցության քննադատների այն տեսակետին, ըստ որի նա իրավունք չունէր Իթթիհատի հետ համաձայնութեան գալ, Ռ. Դարբինյանը գրում էր. «Դաշնակցութեանը ղեկավարուէր է միշտ ոչ թէ այս կամ այն ֆորմիւլներու, այլ քաղաքական առողջ հոտատութեան թելադրութեամբ»:

«Հին կարգերը, շարունակում է Ռ. Դարբինյանը, կը սպաննէին հայ ժողովուրդը ոչ միայն ուղղակի, անհատական ու մասսայական կոտորածներու միջոցով, այլև անուղղակի կերպով – տնտեսապէս քայքայելով զայն: Այսպիսով նոր ուժերի անասան պահպանումը զլիսավորապէս մեզի համար կեանքի և մահու խնդիր է: Հայ հասարակական կեանքի վերածնութեան, հայ ազգի բնականոն զարգացման համար նոր ուժերի այն անհրաժեշտ և կարևորագոյն պայմանն է, առանց որուն մենք դարձեալ դատապարտուած ըլլանք անընդհատ ու սխտեմատիք ոչնչացման, կործանման: Եւ միայն լսել չուզող խուկերը ու տեսնել չուզող կոյրերն են այսօր, որ կը ժխտեն Իթթիհատի և Դաշնակցութեան գործունեութեան անգնահատելի դերը Հայկական գաւառներու մէջ ստեղծուող ապահովութեան հանդէպ»: («Ազատամարտ», 11 (24) սեպտեմբերի 1910 թ.):

Այսօրվա երիտասարդ ընթերցողները, իհարկե, ծանոթ չեն թուրքիայում տիրող իրավիճակին, հատկապէս Աղանայի կոտորածից հետո, և այդ պատճառով, հավանաբար, Ռ. Դարբինյանի տեսակետը կընդունեն իբրև ճշմարտութիւն և կհավատան, որ Հայկական գաւառների մեջ ստեղծվել էր ապահովություն:

Բայց իրականում արևմտահայության վիճակն ավելի էր ծանրանում, նրա զլխին կուտակվող վտանգն ավելի զգալի էր դառնում:

Հենց այն օրերին, երբ «Ազատամարտի» էջերում Ռ. Դարբինյանը գրում և հիմնավորում էր Իթթիհատի հետ համաձայնութեան բերած բարիքների

մասին, մեղադրում «յսել չուզող խուլերին ու տեսնել չուզող կոյրերին», Սարյուկյանը տեղի ունեցած Իթթիհատի կոնգրեսն ընդունում է մի ծավալուն որոշում, որը դառնում է այդ կուսակցության գործողության ծրագիրը:

Այդ ծրագրի 12-րդ կետը, որը վերաբերում էր ազգային հարցին, հուշակում էր. «Ապաննել դէպի իր ազգային ինքնորոշումը տանող ամէն տեսակ ձգտում, որ կրնայ ապահովել որոշ յարողութիւն արտաքին ակնկալութիւններու: Աստիճանաբար ետ առնել հին ազգային առանձնաշնորհումները և զանազան ազգութիւնները վերածել ընդհանուր պետական յայտարարի մը: Կարելի եղածին չափ անելի շատ սահմանափակել նոր ոչ թուրք դպրոցների բացումը և գոյութիւն ունեցողներու մէջ թուրքերէնը պարտադիր դարձնել: Բանալ պետական թուրք դպրոցներ բոլոր ազգերուն համար: Ընդհանրապէս ձգտել ոչ-թուրք ազգութիւններու ազգային նկարագիրը խաթարելու և հանդուրժել միայն կրօնական համոզումներու՝ իբր անելի քիչ փաստակար»:

(«Ազատամարտ», 27 նոյեմբերի 1910թ.):

Ընթերցողի ուշադրությունն եմ հրավիրում հետևյալ հանգամանքի վրա: Նույն «Ազատամարտ» թերթը մի կողմից հրապարակում էր հայ ժողովրդի համար երիտթուրքերի հետ կնքած համաձայնության բարիքների մասին Դարբինյանի քարոզները, մյուս կողմից էլ հրապարակում էր երիտթուրքական կուսակցության համագումարի վերահիշյալ որոշումը, համատրեմն չտեսնելով դրանից բխող փտանգը:

Ահա, այս փտանգն էին զգում ու տեսնում «յսել չուզող խուլերը» և «տեսնել չուզող կոյրերը», իսկ «ամենատես» ու «ամենարտող» Ռ. Դարբինյանի մատուցմամբ դաշնակցությունը շարունակում էր երիտթուրքերի հետ սիրախաղը:

«Եվ այսօր,- գրում է Դարբինյանը, շարունակելով զարգացնել իր տեսակետը,- մենք բոլորովին պարզ գիտակցութիւնն ունինք այն ճշմարտութեան թէ՛ ոչ Ազատ Հայաստանը, ոչ ալ Հայրենիքն անհնարաբար օթծուտիմն (ընդծուտն իմն է-Վ. Պ.) կրնան մեր ցուները բուժել, մեր ազատութիւնը դարբնել: Հետևաբար, այդ երկու գաղափարներն ալ այսօր կրնան արդիւնքը նկատուիլ յեղափոխական ոտանմթիղմի: . . Ազատ Հայաստանը արդէն ինքնին այսօր այնքան անհեթեթ միտք մըն է, որ միայն տգեղներն ու քաղաքական մարտկները կրնան փայտալիլ զայն»:

Այսպիսով դաշնակցությունը հրաժարվում է Արևմտյան Հայաստանի ազատագրման գաղափարից, արևմտահայության երջանկությունը տեսնում է միայն սահմանադրական Թուրքիայի (այսինքն՝ երիտթուրքական իշխա-

նություն- Վ. Պ.) կազմի մեջ մնալով: Ռ. Դարբինյանն Ազատ Հայաստանի գաղափարը անհեթեթ է համարում, քանի որ ըստ նրա, հայկական նահանգներում հայ բնակչությունը փոքրամասնություն է կազմում, նրանցում բնակվող թուրքերի ու քրդերի մեծամասնության համեմատությամբ:

Երևելով այս «ուսել իրողությունից», Ռ. Դարբինյանը շարունակում է. «Դաշնակցութիւնը ստիպուած եղաւ իր օրուայ պահանջներէն դուրս ձգել հայկական նահանգներու օթծուտիմն և դարձնել զայն անելի հետևոր ապագայի մը ինտիլը, մինչև որ ընդհանուր պետական-տնտեսական-քաղաքական կեանքը զարգանայ այնչափ, որ տեղի ունենայ դասակարգային բաղձարի շերտաւորումը հայկական նահանգներու մէջ և առաջ գան ու կազմաւորուին քիւրտերու և թուրքերու մէջ ալ այն աշխատատեղական տարրերը, որոնց հետ միասին հայ աշխատատեղութիւնը պիտի դարբնէ իր ճակատագիրը»: («Ազատամարտ», 11 (24) սեպտեմբերի 1910 թ.):

Իր հողվածում Ռ. Դարբինյանը գրում է. «...Դաշնակցութիւնը, որ իր ամբողջ քաղաքական փորձը ձեռք էր բերած մրրիկներու և փոթորիկներու մէջ, չկորսնցուց իր հոգեկան հաւասարակշռութիւնը Ատանայի աղէտին հանդէպ և,- որովհետև գիտակից էր այն մեծ ճշմարտութեան՝ թէ՛ զգացումի քաղաքականութեամբ չէ որ հայ ժողովուրդը դուրս պիտի գայ իր տազնապալից վիճակէն, այլ հաշուի, բանականութեան քաղաքականութեամբ պէտք էր կորչում ընել հայ ազգի ողջամտութեան և ոչ թէ՛ կոյր վրէժխնդրութեան բնազդներուն»:

«Եվ դաշնակցութիւնը,- այնուհետև ազդարարում է Ռ. Դարբինյանը,- քաջութիւնն ունեցաւ հասարակական այդ բնազդներու գրգռուած վիճակին մէջ ընտրել այն միակ ճամբան, զոր կը թելադրէին մեր ընդհանուր շահերը և ոչ թէ՛ զգացումները,- դաշինք կնքեց Իթթիհատի հետ, որովհետև Իթթիհատի ստապանման փտանգը միաժամանակ փտանգն էր և ամբողջ սահմանադրական ռէժիմին, որուն պահպանումը ամեն գնով մեզ մէ կը պահանջէր մեր հանրային ինքնապաշտպանութեան բնազդն ու ըմբռնումը»: («Ազատամարտ», 16 (29) սեպտեմբերի, 1910 թ.):

Կարծում եմ, Ռ. Դարբինյանի պարտահայրուած մտքերը մեթոդաբանության կազմի չունեն: Դրանք պերճափոս կեղտով ցույց են տալիս, որ դաշնակցության համար թունակ են եղել երիտթուրքական իշխանությունն ու նրա սահմանադրությունը, քան հայ բնակչության անվտանգությունը:

Թե դաշնակցությունը ինչպիսի եռանդով ու կրքոտությամբ էր պաշտպանում սահմանադրությունը և անտեսում հայ ազգային-քաղաքական չր-

լանակների վերաբերմունքը, վկայում է առաջին Հայացքից մանրուք թվա-
ցող Հետևյալ օրինակը:

1909 թ. Հուլիսին, երբ Կ. Պոլսում լույս տեսնող թերթերը շարունակում
էին Հրապարակել Աղանայի կոտորածների զարհուրելի փաստերը, երիտթուր-
քերը կազմակերպում են սահմանադրությունը հռչակելու առաջին տարեկի-
ցի առթիվ ճոխ ընդունելություն:

Դրան մասնակցելու հրավերը մերժում են պատրիարքը, ազգային բոլոր
կազմակերպությունները: Իսկ դաշնակցության ներկայացուցիչները սիրով
մասնակցում և կենսացնել են փոխանակում Աղանայի ջարդի կազմակերպիչ-
ների հետ: Այս փաստը բուռն վրդովմունք է առաջ բերում, բայց դաշնակցու-
թյունը Հաջի չի առնում, քանի որ գործում էր «Հայոց անվտանգության շա-
հերից ելնելով»:

Ռ. Դարբինյանը 1910 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Հանդես է եկել «Հ. Յ.
Դաշնակցութիւնը և իր քաղաքականութիւնը Թուրքիոյ մէջ» ծավալուն հոդ-
վածաշարով, որտեղ տեսական վերլուծություններ կատարելով Հանգում է
հետևյալ եզրակացության. «Հ. Յ. Դաշնակցութիւնը, որպէս պետական քա-
ղաքական կուսակցութիւն մը՝ սահմանադրական ուժի մի անրապնդման սա-
փոխյանցման չրճանին մէջ, հարկադրուած է հաւաքել, կեդրոնացնել իր բո-
վանդակ ուժերը՝ ընդհանուր պետական բնոյթ ունեցող հարցերու լուծումը
յաջողցնելու համար»: («Ազատամարտ», 20 նոյեմբերի, 1910 թ.):

Սակայն դաշնակցության ղեկավարներն այնքան էին «գինուկցած» ու
այնքան էին տարվել թուրքական հեղափոխության մեջ իրենց դերով ու մա-
նակցությամբ, որ կորցրել էին զգոնությունը և ուշադրություն չէին դարձ-
նում իրենց պիտանքնող կոչերին:

Այդ կույր հավատով էր լցված նաև Ս. Վրացյանը, որը գրել է. «Սահմա-
նադրության օրերին ամբողջ թուրքահայությունը, ճնչին բացառությամբ,
կանգնել էր օսմանյան պետականության հողի վրա: ՀՀ դաշնակցությունը,
Հայ ժողովրդի մեծագույն կուսակցությունը՝ գործակցելով Իթթիհատի հետ՝
ձգտում էր իրականացնել համապետական նպատակներ: Երեսուն տարիե-
րի հեղափոխական մաքառումներից հետո, Հայն անվերապահ կերպով դա-
նում էր օսմանյան քաղաքացի, հավասարիմ տարր օսմանյան «վերածնվող
հայրենիքի»: (Ս. Վրացյան, Հայաստանի հանրապետություն, Եր. 1992, էջ
4):

Ռ. Դարբինյանը «Ազատամարտ» թերթում հրապարակում է «Ս. Դ. Չ-
չակեանները, անոնց ծրագիրն ու պահանջները» ծավալուն հոդվածաշար:

որտեղ նա սոցիալիզմի, մարքսիզմի, պրոլետարիատի, դասակարգային պայ-
քարի և այլ տեսական հարցերի շուրջ էկլեկտիկ դատողություններ անելով
հնչակյաններին մեղադրում էր, որ նրանց ծրագրերի մեջ բացակայում է
«ինքնուրույն մտածողությունը», այլև օտար (պիսավորապես գերմանական
և ռուսական) «սոցիալ դեմոկրատ կուսակցությունների ծրագրային պա-
հանջների ուղղակի ստրկական հետևությունն է»:

Այնուհետև Ռ. Դարբինյանը գրում էր. «...Հնչակեանները նեղութիւն չեն
կրել հրապարակ հանելու Թուրքիոյ պայմաններու մէջ իրական արժէք ու-
նեցող պլատֆորմ մը, որ անխուսափելիորէն պիտի բացայայտէին իրենց քա-
ղաքական ստեղծագործութեան կարողութիւնը...»: («Ազատամարտ», 1
(14) հոկտեմբերի, 1910 թ.):

Մինչդեռ Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությունը 1910
թ. իր մասնաճյուղերին ուղարկած չրճաբերականում ուղղակի ընդգծում էր.
«Իթթիհատական կուսակցութիւնը, որ Թուրքիոյ քաղաքական ղեկը իր
ձեռքն է առած, ազատ, համարձակ կերպով դրել է իր անմիտ ձուլման քա-
ղաքականութիւնը և շեշտակի դիմում է իր նպատակին, առանց աջ ու ձախ
նայելու, - այդ ուղղութիւնը մենք բացարձակապէս կորստաբեր եւ փաստակար
ենք համարում ոչ միայն Հայ ազգի եւ համայն պրոլետարիատի շահի եւ
իրաւունքի տեսակէտից, այլ նոյնիսկ օսմ. պետութեան, որի իրական վերած-
նութեան պայմանները, համոզուած ենք կարող են գալ միմայն Ս. Դ. Հնչա-
կեան կուսակցութեան Ծրագրի նուազագոյն պահանջների իրագործումու-
վր»:

Պատասխանելով Ռ. Դարբինյանի անհիմն ու իրականությունից շատ հե-
ռու տեսակետին, Հնչակյան կուսակցության կենտրոնական վարչությունն
ազդարարում էր. «Ս. Դ. Հնչ. կուսակցութիւնը իր անցեալը դատաւարտած
և իր միտալի մէջ թերացած կլինի, եթէ պատմական ներկայ մօմենտի մէջ
զօրեղ թափով առաջ չը նետուի եւ ազգերի իրասահաւասարութեան սկզ-
բունքի վրայ կանգնած՝ իր յանդուգն պայքարը չը մղի ու չը կասեցնի ձուլ-
ման քաղաքականութեան այն խօջ թափը, որ սպառնում է կլանել ամէն ինչ,
որ սպազայ եւ կեանք է խոտտանում» :

Կասեցնել արևմտահայությունը ձուլելու երիտթուրքական քաղաքակա-
րությունը և ամբողջ ուժերը համախորել այդ գործի համար: Ահա Հնչակյան
կուսակցության «իրական արժէք ունեցող պլատֆորմը», որն այդպես էլ
դաշնակցության ղեկավարները ոչ տեսան և ոչ էլ հասկացան դրա կարևորու-
թյունը:

Ռ. Դարբինյանը իր քննադատության մեջ անհետևորդական չէր: Անշուշտ, ընթերցողը նկատեց, թե նա ինչպիսի կրքոտությունը էր մերժում Ազատ Հայաստանի գաղափարը, որի իրագործմանն էլ իրեն նվիրել էր Հնչակյան կուսակցությունը, իսկ այժմ Հնչակյաններին մեղադրում է իրական արժեք ունեցող ծրագիր չունենալու մեջ:

Վերջապես Թուրքիայի պայմանների մեջ Հնչակյան կուսակցությունը անհաշտ դիրքորոշում ուներ երիտթուրքական կուսակցության ու նրա իշխանության նկատմամբ: Բայց Հենց այս հանգամանքն էր Հունից Հանկ «պետական քաղաքական կուսակցության» գաղափարախոսին:

Իհարկե, Ռ. Դարբինյանը միամիտ չէր, նա հասկանում էր, թե վերջին հաշիվով ինչ էր նշանակում երիտթուրքերի հետ համաձայնությունը և ճգտում էր դա ամեն կերպ արդարացին, գրեթե. «... Դաշնակցութիւնը շատ լաւ կը գիտակցեր՝ թէ որքան քիչ կրնան ըլլալ իր շփման կետերը չափաւոր լիբերալ կուսակցութեան մը հետ, ինչպիսին էր Իթթիհատը, և թէ որքան մեծ է այդ երկու կուսակցութեանց ընկերային-քաղաքական Հորիզոններու տարբերութիւնը: Չէ՞ որ Իթթիհատ բուրժուական կազմակերպութիւն մըն էր ամէն պարագայի տակ, և արդեօք ունէ տեւական համաձայնութիւն մը անոր հետչ է՞ր հակասեր «ուղղափառ» ընկերվարութեան ընդունած ըմբռնումներուն»: («Ազատական», 11 (24) սեպտեմբերի, 1910 թ.):

Միաժամանակ Ռ. Դարբինյանն ընդգծում էր, որ եթե չա՛տ սոցիալիստական դաշնակցությունը հանուն «հայութեան անվտանգության» համազոր ծակցում է Իթթիհատի հետ, ապա «ոչ լիարժեք» սոցիալիստական ուղղության հնչակյանները իրավունք չունեն անտեսել հայության անվտանգության շահերը:

Այս ամենը նշելով հանդերձ, հանուն արդարության պետք է ասել, որ դաշնակցության որոշ ղեկավար գործիչներ դեպքերի հետագա զարգացումների ընթացքին կարողացան սթափ նայել ու համոզվել, որ չարահար փափվել են ու խաբվել երիտթուրքերից:

Բայց դժբախտաբար, դաշնակցությունը այնպես էր խճճվել երիտթուրքերի պատրաստած թակարդում, որ այդպես էլ չկարողացավ ուշքի գալ, մնալով Իթթիհատի կամակատարը ընդհուպ մինչև Առաջին աշխարհա՝ մարտի սկիզբը: Այդ թակարդից դուրս գալու նրա թույլ փորձերն արդեն չէին կարող որևէ ազդեցություն ունենալ դեպքերի զարգացման անկասելի ընթացքի վրա:

Երիտթուրքական հեղափոխությունից հետո դաշնակցությունը իրեն

համարում էր «պետական քաղաքականության կուսակցություն մը», իր ուժերը համախմբում էր «ընդհանուր պետական ընդթ ունեցող հարցերու լուծումը յաղոցնելու համար»: Եվ այսպիսի պայմաններում դաշնակցությունն այլևս անելիք չուներ ոչ միայն Թուրքիայում սոցիալիզմ հաստատելու, այլև թուրքական դաժան տիրապետությունից արևմտահայությունն ազատագրելու գործում:

Իսկ որտե՞ղ պետք է շարունակել հեղափոխությունը Հայ հեղափոխական դաշնակցությունը: Իհարկե, Օսմանյան Թուրքիայի դիտերիմ թշնամի Ռուսաստանում: Նա այստեղ իրեն անվանում է ոչ միայն սոցիալիզմի կողմնակից, այլև Հայ պրոլետարիատի առաջնորդ, ցարական ուժեղի դեմ պայքարող, սկսում է զբաղվել ռուսահայության ճակատագրով:

ՎԱՐԱՆԴՅԱՆԸ ԵՐԻՏԾՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տեղին եմ համարում ընթերցողին ներկայացնել դաշնակցության մեկ այլ գաղափարախոս, 1912 թ. ժնևում տպագրված «Վերածնվող Հայրենիքը և մեր դերը» գրքի հեղինակ Մ. Վարանդյանի դատողությունները երիտթուրքական հեղափոխության մասին:

Վարանդյանն այնքան էր ոգևորված երիտթուրքական հեղափոխությամբ, որ այն գնահատում է որպես «Հազազիտ և տիեզերական մի անակնկալ», որը «ոսկե տառերով կարձանազրի համաշխարհային պատմության էջերում»: (Մ. Վարանդյան, Վերածնվող Հայրենիքը և մեր դերը, ժնև, 1912, էջ 91-92):

Այդ հեղափոխության չնորհիվ, համոզված գրում է Վարանդյանը, «Հիվանդ մարդը»... «հզոր ու գեղեցիկ մի ժեստով շտկում էր իր կորացած մէջքը և հաստատում Արևի տակ իր գոյութեան ու յարատևութեան իրաւունքը... Տնցութիւնն ամբողջ ազատասէր և դեմօկրատ մարդկութեան մէջ: Խանդավառ ծափեր՝ բոլոր ճշմարիտ խաղաղասէրների բանակում»:

«Այո, ոգևորված գրում է Վարանդյանը, և ծափ զարկեց Հայ ժողովուրդը ևս գինովութեան այդ օրերում... Մոռացաւ նա մօտիկ անցեալի զարհուրանքը, պոկեց սրտից քէն ու ատելութիւն և ջինջ, անխտով լաւատեսութեամբ ձեռք մեկնեց իր մահմեդական դրացիներին: Չոհն ու դահիճը գրկախառնեցին, համբուրեցին: Չնաշխարհիկ էր տեսարանը...»: (Սուլեյման տեղը, էջ 95):

Այսպես ոգևորված Վարանդյանը, մի քանի էջ հետո, կարծես սթափվում է «գինովցած» լինելուց և գրում է, որ երիտթուրքերի հեղինակավոր առաջ

նորդները «իրենց յարթութեան առաջին օրերում ցոյց չը տւին ոչ միայն յեղափոխական Հաստնութիւն, այլև քաղաքացիական տարրական ինքնազոհ տակցութիւն» և հիշեցնում է «Երբզրդի Համբաւատը Գաղիկոսից» Հեղափոխական Թուրքիայի «մտաւոր պարագլուխներին» Ահմեդ Ռիզայի մեղրածոր խոսքերը Աբդուլ Համիդի Հասցեին:

Վարանդյանը փաստում է նաև, որ թուրքական Հեղափոխութեան «ամենաառաջադէմ ներկայացուցիչները» մոռացան «Հասաարութեան» նշանաբանը և ցոյց տվեցին «ոչ-թուրք տարրերին իր յարձակողական շովինիզմի բռունցքը»:

Հարկ եմ Համարում Վարանդյանի գրքից ևս մի երկու մեջբերում ներկայացնել ընթերցողի ուշադրութեանը:

«Կուսակցական դիկտատուրութիւնը, միացած ամենակատիւար նացիոնալիզմի, ազգայնականութեան Հաստատմբին, ձգտում էր բոլոր միջոցներով իրականացնել անկարելին, ձուլել բոլոր այլազան տարրերը օսմանցիութեան մէջ, առեղծազործել ամբողջ կայսրութիւնից ոչ միայն մէկ, միաձոյլ պետութիւն, այլև մէկ ազգ»: (Նույն տեղը, էջ 100):

Այնուհետև «Հայ տարրը Հին ըէժիմի ամենամեծ գոհն էր, և մենք չը տեսնէք նոր քաղաքականութեան մէջ մի Հատիկ ձեռնարկ, մի Հատիկ լուրջ ու շիտակ փորձ՝ օգնութեան գալու այդ տարրի Հոգեվարք-գոյութեանը, դարմանելու նրա արինահաստ վէրքերը: Հայ երկիրը Հին ըէժիմի ամենատեճափ օճախն է, ուր վխտում են պաշտօնական Համագգեստներով բոլոր Հինասուրբ ու Հոչակաւոր բորենիները, ջարդի ու թալանի կազմակերպողները, և սակայն մենք չը տեսնաք սահմանադրական վարչութեան կողմից ոչ մի անկեղծ նախաձեռնութիւն՝ գէթ մասամբ մաքրագործելու այդ տարաբախտ անկիւնը, գէթ հեռացնելու, եթէ ոչ պատժելու, բիւրօկրատ-մարդասպաններին, թարմացնելու վարչական, ոստիկանական, դատաստանական մթնոլորտը»:

Եվ վերջապես. «Կիլիկեան եղեռնը մի նոր փորձաքար եղաւ մեր ազգային ինքնազոհականութեան Համար: Նորէն Հին Վէրքը, լայնաբերան, արինահաստ, փուռաց մեր աչքի առաջ, նորէն և անելի թափ ու կակիծով զզացիք մեր Հաւաքական կամքի ու նախաձեռնութեան աղաղակող անզօրութիւնը»: (Նույն տեղը, էջ 101, 108):

Այսպիսով, դաշնակցութիւնը տեսնում էր, գիտեր երիտթուրքերի վերջնական նպատակի մասին: Գիտեր, ըայց ոչինչ չձեռնարկեց արևմտահայութեան պաշտպանութիւնը կազմակերպելու Համար: Վարանդյանը, ոչ մի խոսք չի ասում Արամայի Հայ բնակչութեան կոտորածից անմիջապես հետո

դաշնակցութեան ու երիտթուրքերի միջև ստորագրած Համաձայնութեան մասին, որով կոչ էր արվում մոռանալ Արամայի ողբերգութիւնը և չարտնակել Համագործակցութիւնը:

Դրա փոխարեն Վարանդյանը մեղադրում է ազգին, որը «իր «կրթւած» տիրացուատիպ Հրապարակախօսներով ներագործում է այդ ստրկական Հոգեբանութիւնը, «ազգը» իր յայտնի ու անյայտ ցեցերով այսօր մէկ գերագոյն մտահոգութիւն ունի՝ ոչնչացնել Հայ քաղաքական կուսակցութիւնը (այսինքն՝ դաշնակցութիւնըՎ. Պ.), վարկաբեկել այն ամենը, ինչ որ կապ ունի ժողովրդային գոյութեան, ինքնապաշտպանութեան ցաւոտ Հարցի հետ: Եւ ահա նրանք, այդ ցեցերը կրկէս են իջել ազատ մամուլի թիւերի վրայ, գօտեմարտում են յեղափոխական կազմակերպութեան հետ, որի լուկ արհամարանքը միշտ աւելի ամբարտաւագնում, խրախուսում է նրանց»: (Նույն տեղը, էջ 112):

Բավարարվեմ սավածով և միայն նշեմ, որ «ցեցեր» ստերով Վարանդյանը նկատի է ունեցել Հնչակյան գործիչ Փարսմազին, որը Կ. Պոլսում լույս տեսնող «Արեւելք» թերթում անողրք ճշմարտութեամբ մերկացնում էր երիտթուրքերի հետ դաշնակցութեան Համագործակցութիւնը և մատնանշում էր արևմտահայութեան Համար դրանից բխող բոլոր վտանգավոր հետևանքները:

Այստեղ Հարկ եմ Համարում առանց մեկնաբանութեան ներկայացնել «Մշակ» թերթին նրա ընթերցողներից մեկի նամակը, որտեղ արտահայտվում է ժամանակին Հայ իրականութեան մեջ գոյութիւն ունեցող տրամադրութիւններից մեկը: Նամակագիրը քննադատում է դաշնակցութեանն ու նրա օրգան «Հորիզոն» թերթին, որունց Համար «պղտոր ջրում ձուկ որսարն ավելի դյուրին է եղել», որ «Հայի գլխին արև է ծագում շնորհիվ դաշնակցութեան և սիրալիք թոյլտուութեամբ «Հորիզոնի» և այնուհետև «Հորիզոն»-ից Հարցնում է. «1) Ի՞նչ օրինակներով, փաստերով կարող է Հաստատացնել մեզ թերահաւատներին, թէ դաշնակցութիւնը թիւրքահայ ազատամարտի դեկավարն է եղել:

2) Ի՞նչ է արել այդ կազմակերպութիւնը Հօգուտ Հայի, որ սա ինքն իրեն երախտապարտ Համարի նրա առաջ:

3) կարո՞ղ եք հերքել (իհարկե, փաստերով և ոչ դատարկ խօսքերով), որ այդ կազմակերպութիւնն Արամայի կոտորածի ժամանակ ազգին չըտակաւանեց, տասնեակ Հազարավոր անմեղների գոհ չըբերեց իր կուսակցական մատակոր չահերին»:

«Այս հարցերը,- վերջում գրում է նամակի հեղինակը,- կարող է սույ խ-
րաքանչիւր հայ, որը ցանկանում է իմանալ, թէ ինչով է նա պարտական այս
կամ այն կուսակցութեան»: (ՀՀ ԱԱ, ֆ. 227, ց. 1, գ. 104, թ. 45-46):

Հանրահայտ է, որ դաշնակցությունը ստեղծվել է Օսմանյան թուրքիա-
յում հայերի մշտապես կատարվող կոտորածների ազդեցությամբ, որոնք
սպառնում էին ամբողջապես ֆիզիկապես ոչնչացնել արևմտահայությունը:
Դաշնակցությունը իր նպատակն էր համարում փրկել արևմտահայությունը
և որդեգրում է թուրքական կառավարության և սուլթանների իշխանության
դեմ հեղափոխական պայքարի ուղին:

Եվ մինչև 1907 թ. դաշնակցությունը գլխավորապես զբաղված էր թուր-
քիայում մղվող պայքարին արևելահայերին ընդդրվելու խնդրով: 1908 թ.
Վիննայում տեղի ունեցած համագումարից հետո դաշնակցությունը իր հե-
ղափոխական գործունեությունն ավելի եռանդով է ծավալում Ռուսաստա-
նում, հայտարարելով, որ ի դեմս ռուսական կառավարության տեսնում է թշ-
նամու, կպայքարի նրա դեմ մինչև նրա ստապալումը և այդ հողի վրա հարում
է Ռուսաստանի սոցիալիստ-հեղափոխականների կուսակցությանը (հստ-
ներ):

Եվ տեղի ունեցող հետագա գործողությունների ամբողջ տրամաբանու-
թյունը իմ համոզմամբ թելադրում է եզրակացնել, որ թուրքիայի վտանգա-
վոր թշնամի Ռուսաստանի դեմ դաշնակցությունը իր պայքարն ուժեղացրել
է երիտթուրքերի գիտությունը ու նրանց պահանջով, իրականությունը կոծ-
կելով ոչ միայն Վարանդյանի գրքով, այլև «Իրօչակ»-ի և մասնով մյուս մի-
ջոցների հրապարակումներով:

Վ. ՓԱՓԱԶՅԱՆԸ ՊԱՏՄԱԳԵՏԻ ԴԵՐՈՒՄ

Բանտում գտնվելու ժամանակ Շահումյանը պահում էր հատուկ տեղ-
րակ, որի մեջ իր կարդացած գրքերից գերմաներեն, ռուսերեն և հայերեն բազ-
մաթիվ գրատուներ է կատարել: Ահա, այդ գրատուներից մի քանի օրինակ:

Կ. Մարքսի «Փիլիսոփայության աղքատությունը» աշխատությունից
«Սկսած 1825 թ. , համարյա բոլոր հայտնագործությունները եղել են բան-
վորի և ձեռնարկատերի միջև բախումների արդյունք, որը իր ուժերով ձգ-
տում է արժեզրկել աշխատող-մասնագետի աշխատանքը: Ինչ-որ չափով նշա-
նակալի գործադուլից հետո երևան է գալիս նոր մեքենա»:

Պրուտնի «Աղքատության փիլիսոփայությունը» աշխատությունից
գրատուներ է կատարել գործադուլների վերաբերյալ:

Կառուցվու աշխատությունից. «Մարքսիզմն այնպիսի գիտական ուղղու-
թյուն է, որն իր նպատակն է դրել ճանաչել աշխարհը, որպեսզի այդպիսի ճա-
նաչողությունից աշխարհը փոխելու ուժ քաղի»:

Շատ գրատուներ է կատարել նաև Լ. Տոլստոյի տարբեր վեպերից և այլն:
(ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 112):

Շահումյանը բանտում գտնվելու ժամանակ «Նոր խոսք» չաբաթաթեր-
թի առաջին համարում հրատարակել է «Իրականություն և հեռանկարներ»,
«Մատենախոսություն» հոդվածները: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկ-
րորդ, էջ 224-235):

Բանտում նա է գրել նաև «Ինչպես պրն Սաղաթեյանը ինքն իրեն մի
ձայնով ընտրեց երրորդ Պետական դումայի անդամ» հոդվածը, որին անդ-
րադարձ է եղել սույն աշխատության նախորդ էջերում: Շահումյանը գրել է
նաև «Թղթակցություն Բաբվից» հոդվածը, որը լույս է տեսել «Рабочая
газета» թերթում 1911 թ. դեկտեմբերի 22-ին:

Շահումյանը 1912 թ, սկզբին բանտում գրել է նաև «Վ. Փափազյանը
պատմագետի դերում» ծավալուն հոդվածը, որը ժամանակին հնարավոր չի
եղել տպագրել «Նոր խոսք» թերթի փակման պատճառով:

Այս հոդվածը գրելու շարժառիթը եղել է 1907 թ. ստեղծված «Բաբվի Հա-
յոց մշակութային միություն» կողմից «Իրվագներ հայոց պատմությունից»
ընդհանուր վերնագրով 9 գրքույկների հրատարակումը: Այդ գրքույկների
մեծ մասի հեղինակը գրող Վ. Փափազյանն էր:

Շահումյանը բարձ է գնահատում այդ գրքույկների սահուն, գեղեցիկ ու
կենդանի լեզվով շարադրանքը, բայց և միաժամանակ նկատում է դրանց ներ-
քին բովանդակությանը թողած «ցավալի սուպսիդությունը»:

Որպեսզի այդ տեսակ հրատարակությունները լինեն օգտակար, Շահում-
յանը գտնում է, որ դրանք պետք է ամենից առաջ շոշափվող պատմական չր-
ջանների ու անցքերի մասին «առողջ գիտելիքներ տան ընթերցողին»:

Բայց դա բավական չէ: Շահումյանը գտնում է, որ գրողը պետք է ունե-
նա «լուրջ պատմական աշխարհայացք, պատմական տեսակետ»: Դրանք,
ընդգծում է Շահումյանը, կօգնեն գրողին, որպեսզի նա քննադատորեն վերա-
բերի «փր նյութին, իր գրվածքով կրթական ու զարգացուցիչ ազդեցություն
ունենա ընթերցողի վրա»:

Այս պահանջների տեսանկյունից էլ մոտենալով «Իրվագներին», Շա-
հումյանը նշում է, որ դրանցից ոչ մեկը չկա Փափազյանի և մյուս հեղինակ-
ների գրքույկներում: Նա նաև ընդգծում է, որ դրանցում ընթերցողը չի գտ-

նի լուրջ գիտելիքներ ու տեղեկություններ հայոց պատմությունից: Իր միտքը հիմնավորելու համար Շահումյանը վերցնում է Վ. Փափազյանի «Արտաշես Երկրորդը» գրքույկը և նշում, որ դա հեղինակը ներկայացնում է «հեքիաթական, առասպելական ձևով»:

Ամբողջ պատմությունը հյուսվում է առասպելախառն դրվագներով, թե ինչպես Երվանդը սպանում է իր ազգական Սանատրուկ թագավորին, նրա բոլոր որդիներին և տիրանում Հայոց գահին: Պատահաբար փրկվում է Սանատրուկի 5 տարեկան Արտաշես որդին, որին ծծմայրը փախցնում է Պարսից արքա Դարեհի մոտ և այլն, և այլն:

Շահումյանը նշում է, որ Փափազյանը ունի «իր սիրելիները, որոնք օժտված են ամեն տեսակ բարեմասնություններով... և իր ատելիները, որոնք չարագործներ, հրեշներ, դավաճաններ են»: Նրա սիրելին Արտաշեսն է, որը Անբառ Բագրատունու օգնությամբ տիրանում է հոր գահին, ատելին՝ Երվանդն է՝ մարդասպանն ու գահի հափշտակիչը:

Փափազյանը նաև պատմում է, որ «Արտաշեսից առաջ Հայաստանը եղել է մի ամառի անապատ: Ժողովուրդը տգետ էր, խավար, վայրենի և մանավանդ՝ անգիտակից: Պակաս էին արվեստներն ու գիտությունները, մարդիկ զբաղված էին առապատակությունով ու ավազակությունով: Ոչ չարաթիվա, ոչ ամառա, և ոչ տարվա չընդմեջների մասին գաղափար չուներին... և հյուսիսային վայրենիների նման որսորդությամբ էին միայն ապրում»:

Այս «պատմությունը» մեջբերելով Շահումյանը գրում է. «Նկարագրած դեպքերը տեղի ունեն առաջին դարի վերջերում Քրիստոսից առաջ: Հայտնի է, որ հնդեվրոպական ազգերը հազար տարիներ Քրիստոսից առաջ քաղ տեղյակ են եղել հողագործություն, ունեցել են առհասարակ բավական բարձր կուլտուրա, ծանոթ են եղել «արվեստներին ու գիտություններին»: Այնուհետև նա նշում է «Հայերից ոչ այնքան հետու» Տրոյան պաշարող հույների, հետո նաև պարսիկների զարգացման բարձր աստիճանը և ընդգծված մեր ժամ Փափազյանի պատկերացումը, թե հայերը ոչինչ չեն ունեցել և միայն վայրենիների նման ապրել են որսորդությամբ:

Այնուհետև Շահումյանը Փափազյանի պատմության կարևոր թերությունը համարում է այն, որ ընթերցողը չի տեսնում, թե «որտեղ է վերջանում գրվածքի մեջ պատմական իրողությունը, փաստը, որտեղ է սկսվում առապելը, ավանդությունը և ապա որտեղ է «ծայր առնում» հեղինակի, որպես վիպագրողի, բեյլետրիստի՝ ֆանտաստիան: Իսկ դա ամենամեծ պակասությունն է նման գրքույկների համար»:

Փափազյանի գրվածքի մյուս կարևոր թերությունն այն է, որ նա շատ քիչ է օգտագործում «առասպել» բառը, որի դեպքում «միամիտ ընթերցողը պետք է կարծե, որ պ. Փափազյանի և մյուսների պատմած մնացած բոլոր հեքիաթներն անկասկած պատմական եղելություններ են»:

Շահումյանը նշում է նաև, որ ընթերցողի համար շատ դեպքերի բացատրությունը չի տրվում, ինչպես օրինակ, թե ինչու է Դարեհը սիրով ընդունել մանուկ Արտաշեսին: Փափազյանը ոչ մի փորձ չի արել բացատրելու՝ «երկու հարևան պետությունների առնվազն 20 տարվա ընթացքում եղած հարաբերություններն անմիջապես շոշափող և Հայաստանի ապագան որոշող այդ հարցը»:

Փափազյանը պատմում է, թե հայ նախարարները, որոնց համար անտանելի էր դարձել հափշտակիչ Երվանդի լուծը, գրկաբաց են ընդունում պարսից զորքերի հետ Հայաստան վերադարձած Արտաշեսին, իսկ հայ ժողովրդի մասին գրում է հետևյալը. «Ժողովրդի մասին խոսք չի կարող լինել: Որովհետև նրա համար տերերի փոխելը սակավ նշանակություն ուներ: Նա ստրուկ էր իշխանների, սեպուհների և այլ մանր մուծը ազնվականության և կրոնավորության. ստրուկ, անկազմ և անկամ մի զանգված, որ ոչնչով չէր ցույց տալիս իր ուրույն գոյությունը: Գնում էր ուր քրում էին իրենց իշխանները, իրենց գլխին առաջին մտրակ շարժողները»:

Եվ Փափազյանն այս ցավալի երևույթը բացատրում է, գրելով. «Այդ ժողովուրդն անհունապես տգետ էր, խավար, վայրենի և մանավանդ՝ անգիտակից»: Նույնն է ասում Փափազյանը նաև «Գագիկ Երկրորդ» գրքույկում, որտեղ նա բացականչելով գրում է. «Օ՛հ, ոչ, իշխաններն ու կղերականությունը գոհ չէին տալիս: Զոհվողը, ոտնատակ գնացողը, սանձվողն ու հարածվողը այն խեղճ ժողովուրդն էր, որ կպած էր հողին, որ կերակրում էր և իշխաններին, և կրոնավորներին և որը, սակայն, դժբախտության օրերում ոչ իշխաններից էր պաշտպանություն վայելում և ոչ էլ կրոնավորներից»:

Շահումյանը նկատում է, որ միամիտ ընթերցողը կարծում է, թե «Փափազյանը իսկական դեմոկրատ պատմաբան է, որ նրան ամենից առաջ հետաքրքրում է ժողովրդի վիճակը և որ նրա բոլոր համակրանքներն այդ ժողովրդի կողմն են, որին հավածում ու շահագործում են զանազան թագավորներ, նախարարներ, սեպուհներ, կրոնավորներ և այլն»:

«Բայց, շարունակում է Շահումյանը, ընթերցողը տեսնում է, որ այդ բացականչությունները պատահական են, արհեստական ու չինժու: Շինժու ոչ այն մտքով, թե պ. Փափազյանը գիտակցաբար կեղծում է, ձևացնում է իրեն

ժողովրդի բարեկամ, իսկ իրոք բարեկամ չէ: Ոչ, այլ այն մտքով, որ այդ տողերը հակասում են նրա գրածների ընդհանուր բնավորությանն ու բովանդակությանը, չեն մերվում այն պատմական մտածողության հետ, որի ազդեցության տակ գրեց հակասակ իր ցանկության-գտնվում է ամբողջովին պ. Փափազյանը»:

Շահումյանն անդրադառնում է Արտաշես Երկրորդին Փափազյանի վերագրած բարեմասնություններին, որ այդ թագավորը ժողովրդին ազատել էր հարկերից, տվել էր նոր հողեր ու առանձնաշնորհումներ, որ նրա ժամանակ «ժողովուրդը ուրախ ու զվարթ՝ ցանում էր, մշակում, հնձում... և լիովին վաշերում էր իր քրտինքի արդյունքը»:

«Մինչև այժմ,- նկատում է Շահումյանը,- մենք համոզված էինք, որ այն օրից, երբ հասարակության մեջ առաջ են եկել աշխատանքի բաժանում և դասակարգային շերտավորումներ, երբ գոյացել են իշխաններ, հոգևորականներ ու թագավորներ՝ ոչ մի ժողովուրդ ոչ մի երկրում չի վայելել լիովին իր աշխատանքի արդյունքը»:

Շահումյանն ավելացնում է, որ մարդիկ կասկածում են, որ ապագա սոցիալիստական հասարակության մեջ «կհաղորդվի այնպես կազմակերպել աշխատանքը, որ յուրաքանչյուր աշխատող կարողանա վայելել իր քրտինքի ամբողջ արդյունքը»:

Եվ Շահումյանն սավածից եզրակացնում է. «Շատ մեծ ծառայություն մատուցած կլինի պ. Փափազյանը, եթե ծանոթացնի եվրոպացի գիտնականներին իր արած հրաշալի գյուտի հետ: Ինչո՞ւ չի սնանա ամբողջ աշխարհը, որ եղել է Հայաստանում մի այնպիսի զարմանալի թագավոր», որը ժողովրդից ոչ մի հարկ չի վերցրել և ժողովրդին տվել է բոլոր բարիքները:

Այնուհետև Շահումյանը թվարկում է հրատարակված մյուս «Իրավաբանները»՝ «Գազիկ Երկրորդ», «Թորոս իշխան», «Ատոն Երկրորդ», «Սահակ և Մեսրոպ», «Վարդանանց պատերազմ», «Տրդատ և Գրիգոր Լուսավորիչ», «Վահան Մամիկոնյան», «Մուշեղ և Մանվել» և նշում է, որ այդ բոլորը «ոգևորված ներբողներ են Հայ իմաստուն և ժողովրդասեր թագավորների, իշխանների ու հոգևոր Հայրերի մասին»:

Շահումյանը հիշատակում է նաև բոլոր նրանց անունները, որոնք խանգարել են Հայ թագավորների ու նախարարների բարեգործությանը, բոլոր վասակներին ու մերուժաններին և այլոց ու եզրակացնում է, որ ըստ մեր «պատմաբանների» ամբողջ Հայոց պատմությունը ներկայանում է ոչ այլ ինչ, եթե ոչ բարի ու չար հրեշտակների կոփանքի, մի կողմից՝ ազգասեր ու

առաքինի Հայ թագավորների, իշխանների, մյուս կողմից՝ ազգուրաց, ազգի դավաճան թագավորների ու իշխանների կոփանքի պատմություն»:

Շահումյանը մեղքերում է դաշնակցության Հայտնի գործիչ Եղիշե Թովիչյանի հետևյալ խոսքերը. «Երկպառակություն,- որքան զուհեր է տարել նա Հայ ժողովրդից, որքա՜ն թշվառություններ է պատճառել Հայոց աշխարհին»: «Անախաբանություն,- դա մի ներքին որդ էր, որ կանաց-կամաց կրծում էր Հայաստանի արյունոտ սիրտը»: «Հայր կանգնած է Հայի դեմ, Հայը դառնում է Հայի կործանիչ: Ո՛րքան ցավալի իրողություն»: Եվ ավելացնում է, որ այս «ազգասիրական ողբը» արտահայտող տողերի մեջ «կարելի է ամփոփել Մշակութային միության հրատարակած բոլոր ինը գրքույկների բովանդակությունը»:

«Այդ խոսքերի մեջ,- ընդգծում է Շահումյանը,- ամփոփվում են մեր ամբողջ «ազգային» պաշտոնական մտավորականության, գրողների պատմական աշխարհայացքը, նրանց մտածելակերպը, նրանց բովանդակ, այսպես ասած, «պատմա-փիլիսոփայությունը»:

«Դրվագները» հեղինակները չեն բացատրում, թե ինչի՞ց են առաջանում, ինչո՞վ են պայմանավորվում այդ դավաճանությունները, անախաբանություններ, երկպառակությունները: Շահումյանը նշում է, որ այդ ամենի պատճառը բացահայտելու կարիքը չեն տեսնում նշված «պատմաբանները», քանի որ «այնտեղ, ուր մարդիկ իրենց հոգու մեջ արդեն կրում են բարվո և չարի սերմերը»:

Շահումյանը նշում է, որ այն իշխանավորները, որոնք հավատարիմ են Հայաստանյայց սուրբ եկեղեցուն, հետևապես ցանկալի են աստծու համար, նրանք ազնիվ են, գովելի են, իսկ մյուսները, որ հակասակ են Հայոց եկեղեցուն, նրանք վատն են, դավաճան են և արժանի նզովքի:

«Եվ արանով,- ընդգծում է Շահումյանը,- ամեն ինչ վերջանում է» ու շարունակում է. «Բայց որ 20-րդ դարում, ինքն իրեն առաջադեմ ու դեմոկրատ համարող գրողը, ինչպես պ. Փափազյանը, կամ նույնիսկ իրեն «սոցիալիստ» համարող, ինչպես Ե. Թովիչյանը, միանգամայն բավականանում են այդ միամիտ կղերական տեսակետով, կամ, ինչպես արժանի արհամարանքով անվանում է այդ տեսակետը մեր նոր պրոլետարական մտավորականությունը, սփրացողական աշխարհայացքով,- դա անպայման շատ ցավալի է»:

«Պատմությունը,- գրում է Շահումյանը,- այն ժամանակ դադարում է լինել հեքիաթ, հասարակ պատմվածք և դառնում է իսկապես պատմություն, երբ նրա մեջ Հայտնի անցքերի, դեպքերի, պատմական անձնավորություններ

րի գործունեությունը ենթարկվում են լուրջ քննական լուսաբանություն, երբ ցույց է տրվում անցքերի ու մարդկային գործողությունների պատճառական կապը և օրինաչափությունը»:

Շահումյանը թվարկում է բոլոր այն զավթիչներին, որոնք տարբեր ժամանակներում ներխուժել են Հայաստան, թալանել ու ավերածություն են ենթարկել երկիրը և ավելացնում է. «Բայց, որպեսզի այդ բոլորը հնարավոր լինեք, հարկավոր էր, որ երկրում լինեք կոտորելու համար բավականաչափ ժողովուրդ և թալանելու համար բավականաչափ հարստություն»:

Ավաճառից երկերով Շահումյանը հարցնում է. «Ինչպե՞ս է ապրել այդ ժողովուրդը, ինչպե՞ս է արտադրելիս եղել նա այդ հարստությունը: Որո՞նք են եղել նրա արտադրություն, արդյունաբերություն միջոցները և ձևերը, նրա արհեստներն ու արվեստները, նրա առևտուրը և այլ ներքին ու արտաքին տնտեսական հարաբերությունները: Ի՞նչ տեսակ հասարակական կազմակերպություններ, հիմնարկություններ է ունեցել նա, որոնց միջոցով մղել է իր գոյություն կոխիլ բնության և օտար հասարակությունների հետ: Նրա ընտանիքը, նրա արյունակցական, ցեղական կազմի ձևերը, դասակարգերի առաջացումը և նրանց փոխադարձ հարաբերությունները, պետական մարտնի աստիճանական զարգացումը և այլն, և այլն»:

Ավաճառը նկատի ունենալով Շահումյանը խնդիր է դնում, որ վերոհիշյալ հարցերին պետք է պատասխանի «քիչ թե շատ լուրջ և արժեքավոր պատմությունը»: Միայն այդ տեսակ պատմությունը կարող է հատկանալի դարձնել դեպքերի, գործող անձանց արարքների իմաստը, «նրանց պատմական նշանակությունը և արժեքը»:

Այդ ամենի փոխարեն Փափազյանի և մյուսների մոտ կա միայն «Հայաստան» բառը: Նանք ոչինչ չեն կարողանում ասել Հայաստանի «առանձին ինքնուրույն մասերի ներքին դասակարգային կազմի և դասակարգային կոխիլների մասին: Նրանց մոտ չեք գտնի աննշան փորձ անգամ բացատրելու, թե ինչ են նշանակում նախարար, նախարարություն բառերը, որ նրանք հաճախ կրկնում են»:

Մինչդեռ, նկատում է Շահումյանը, «Հենց այդ տարբեր մասերի ուրույն փիճակի մեջ պետք է փնտրել, անշուշտ, բացատրությունը, թե ինչու մենք կարողում ենք շարունակ կոխիլների, պատերազմների, գենքի շտապյունի, թագավորների քաջագործությունների մասին, բայց երևույթներին միայն թեթև կերպով, հեռուից ... նայող պատմաբանին կարող է թվալ, որ միակ կարևոր պատմության մեջ այդ դեպքերն են»:

Շահումյանը նկատում է նաև, որ ժողովուրդների կյանքի, նրանց պատմության ընթացքը «պայմանավորողն ու որոշողը ոչ թե այդ արտաքին դեպքերն են, որքան էլ արմվահաշույց ու էֆեկտավոր լինեն նրանք, այլ ժողովրդական մասանների առօրյա, ընթացիկ, «խաղաղ» տնտեսական կյանքը, նրանց արդյունաբերական պրոցեսը, նրանց ներքին դասակարգային հարաբերությունները»:

Իր միտքը հաստատելու համար Շահումյանը բերում է իր գոյություն ընթացքում բազմաթիվ պատերազմներ մղած Հին Հռոմի օրինակը, և ընդգծում է, որ երբ պատմաբանները քննում են Հռոմի անկման պատճառները, նրանք նկատի են ունենում ոչ թե այդ պատերազմները, այլև հիշում են Հին Հռոմի պետական գործիչ և գրող Պլինուս Կրտսերի (62-114 թթ.) հետևյալ խոսքերը. «Հատիֆունդիանները կործանեցին Հռոմը»:

Շահումյանը նշում է, որ «Իրվագների» հեղինակները կարող են արդարանալ, թե հայկական պատմական աղբյուրներն անհրաժեշտ նյութ չեն տալիս երկրի ներքին փիճակի հետ կապված բազմաթիվ հարցերի լուսաբանման համար: Եվ նրանք ընտրել են ավելի դյուրին ուղի՝ պատմությունը շարադրել զանազան առասպելների միջոցով:

Շահումյանը Փափազյանին ու պաշտոնական ազգային մտավորականությունը մեղադրում է ոչ թե նրա համար, որ նրանք չեն սովել «մինչև այժմ մեր ցանկացած ուսումնասիրությունները, որ չեն լուսաբանել լուրջ գիտական տեսակետից հայոց պատմության բոլոր շրջանները և անցքերը»:

Շահումյանը նրանց քննադատում է այն բանի համար, որ «նրանց մտքովն անգամ չի անցնում, որ կարող է այդ տեսակ պահանջ լինել պատմական գրվածքների հանդեպ, որ նրանք միամիտ ինքնագոհությունը ապրում են իրենց ժառանգած «ազգասիրական», «ստիրացուական», մտածելակերպով և ծաղիկեցնելով կրկնում են Հին Հեթանոսները, պատմության տեղ առաջարկելով այն ընթերցողներին և մոլորեցնելով նրանց»:

Շահումյանը Փափազյանին ու նրա ընկերակիցներին քննադատում է նկատի ունենալով, որ նրանց գրվածքներում լուրջ ու հետաքրքիր պատմական տեղեկություններ ու գիտելիքներ չկան: «Նրանց նահապետական, պրիմիտիվ, կրեթական պատմահայեցողությունը,- ընդգծում է Շահումյանը,- ոչ միայն անօգուտ ու անպտուղ է ... այլև վնասակար ազդեցություն միայն կարող է ունենալ ընթերցողի վրա»:

Շահումյանը Փափազյանին ու նրա ընկերակիցներին քննադատում է նաև այն բանի համար, որ նրանք իդեալականացնում են հայոց պատմու-

թյունը, հայ թագավորների, իշխանների ու մյուս երևելիների ազգօգուտ գործունեության դրվատումներով շղուճ ու զարգացում են ընթերցողի «կույր ազգասիրական զգացմունքները»:

Միաժամանակ Շահումյանը հասկանալի է համարում, թե «Բաբբի հայ մշակութային միությունը» ինչի համար է զբաղվում այդպիսի «ազգօգուտ» ձեռնարկություններով և «ուզում է վառ պահել հայոց ազգի մեջ հայրենասիրական և եկեղեցասիրական զգացմունքները: Հասկանալի է նաև, որ «նրանք դրա համար փողեր են ծախում և առաջարկում են «անվանի» գրողներին գրքույկներ գրել իրենց համար»:

Բայց Շահումյանը ցավալի ու անհասկանալի է համարում, թե ինչու են նրանց հետ ընկերակցում և նրանց նպատակներին իրենց գրչով ծառայում այդ «անվանի» գրողները:

Շահումյանը հատվածներ է բերում Փափազյանի չքեղ հայերնով գրվածքներից, որոնք մեծ հաճույք են պատճառում ընթերցողին և ընդգծում է. «Այսքան գեղեցիկ էջեր չստ քիչ են պատահում մեր գրականության մեջ»: Շահումյանը համոզված է, որ Փափազյանի մեջ ապրում է առողջ գեղարվեստագետը, որն ըմբոստանում է «նույն Փափազյանի մեջ սպրող... տիրացուի դեմ»:

Միաժամանակ Շահումյանը համոզված է, որ իր աշխարհայացքով, իր պատմահայեցողությամբ Փափազյանը որքան էլ որ սահմանափակ ու սլփի միտով լինի, չի կարծում, «որ նա անձնապես ներքին պահանջ զգացած լինի գրելու այդ գրքույկները: Ի՞նչն է ստիպել, ուրեմն, նրան, մյուսների մասին չենք խոսում, թողնել գեղեցիկ գրականությունը և «պատմաբան» դառնալ»:

Ցավով պատասխանելով այս հարցադրմանը, Շահումյանը չի հավատում, որ Փափազյանն իր գրքույկները գրել է, որովհետև «խնացել է, որ չուկայական գին ունի այդ տեսակ ապրանքը, որ «Մշակութային միությունը» կարող է վարձատրել նրան...»:

Շահումյանն ասիտանք է հայտնում, որ Փափազյանն ասպարեզ է գալիս «որպես մի վարձկան գրող», և ցավով ավարտում իր հոդվածը, գրելով հետևյալը. «Ինչքան ընկած ու ապականված պետք է լինեն մեր գրական բարբերը, որպեսզի մարդ ստիպված լինի այդ տեսակ ենթադրություններ անել հայտնի անուն ունեցող գրականագետի մասին»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 260-282):

Բանտում գտնվելու մեկ ամսվա ընթացքում Շահումյանը իր գրատուճեղ ըր շարունակում է երկրորդ տետրում: Այդ գրատուճեղից պարզվում է, որ

Շահումյանը հասցրել է կարդալ ուսերեն և հայերեն բազմաթիվ գրքեր, այդ թվում՝ ուսերեն՝ Արամ Սմիթ-«Ժողովուրդների հարստությունը», Գ. Ռիկարդո-«Քաղաքաճանաչության ակնարկ», Կ. Ռոդեբերտ-«Կապիտալ և շահույթ», Զոմբերգ-«Ժամանակակից կապիտալիզմ», Տուգան-Բարնստուկ-«Քաղաքաճանաչության հիմունքներ», Կ. Մարբր-«Կապիտալ», 3 հատոր, Գ. Պելխանով-«Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի զարգացման հարցի մասին», Հոմերու-«Իլիական», Սերվանտես-«Դոն Կիխոտ», Կ. Կառլկ-«Հնգերի մասին», «Լեհական հարցը», Սուխանով-«Ռուսաստանի արտաքին առևտուրը», Ա. Դյումա-«Թագուհի Մարգո», «Կոստուհի Մոնտրո», «Քառասուն հինգ», Վ. Փափազյան-«Արտաշես Երկրորդ», «Վարդանանց պատերազմ», «Սահակ և Մեսրոպ», «Գագիկ Երկրորդ», «Թորոս իշխան», «Լևոն Երկրորդ», Մ. Առաքելյան-«Տրդատ և Գրիգոր Լուսավորիչ», Մ. Ղազարյան-«Վահան Մամիկոնյան», «Մամիկոնյան Մուշեղ և Մանվել իշխանները», Ե. Թոփչյան-«Սեծն Ներսես», «Սահակ Պարթև», «Մեսրոպ Մաշտոց», Հ. Հովհաննիսյան-«Բանաստեղծություններ», Քաղաքում-«Հայ բանաստեղծներ» և այլն:

Վ. Փափազյանի «Վարդանանց պատերազմ» և «Արտաշես Երկրորդ» գրքերի մասին Շահումյանը կատարել է հետևյալ նշումը. «Երկուսն էլ թեթևալիկ, անբովանդակ, տիրացուական հեքիաթներ»:

Ե. Թոփչյանի գրքերի վերաբերյալ գրել է. «Սակերևոյթային տեղեկություններ տվող, անխառն տիրացուի ոգևորությամբ ու պաթոսով գրված: «Քրիստոնեական թարմ գաղափարներ...», «Նախարարների անմիաբանության և երկպառակությունների» դեմ սրբազան զայրույթ: Մրանք են ամեն երևույթների պատճառը և բացատրությունը, իսկ ինչից են ծագում այդ «երկպառակությունը» և «անմիաբանությունը», այդ հարցը չի առաջանում Ե. Թ.-ի, ինչպես և մյուս տիրացու Վ. Փ.-ի գլխում: Անհասկանալի է նույնպես, թե ինչու է Ե. Թ.-ի ոգևորության առարկան քրիստոնեությունը և ինչու, ընդհակառակը՝ մագդեականությունն այնքան աստիճ է»:

«Վ. Փափազյան-«Թորոս իշխան»։ Ազգասիրական ներքող՝ պատմաբանական տեսակետով ամեն նշույներից զուրկ: Լեզուն, ինչպես և մյուս գրքույկներում, կենդանի ու գեղեցիկ, որով տարբերվում է Ե. Թ.-ի գրքույկներից:

Հ. Հովհաննիսյան-«Բանաստեղծություններ»։ Միակ արժեքավոր գրողները ժողովրդական երգիչներն են, ինչպես, օր. «Արագն եկալ» և այլն: Եվ մի երկու լիրիկական մոտիվներ: Հասարակական-ազգասիրական ոտանա-

վորները դատարկ են, անիմաստ ու չաբղնական: Ընդհանրապես որոշ բանաստեղծական անհաստականություն, կերպարանք չի ներկայացնում պ. Լ. ն»: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 158, թթ. 2, 3, 4, 5):

Կարդացած գրքերի մեծ մասից Շահումյանը կատարել է հետաքրքիր նշումներ, ինչպես օրինակ, «Իոն Կիտտոից» - «Ձկա վիշտ, որը չվերացնի ժամանակը, չկա ցավ, որը չբուժի մահը», «Ճակատագիրը միշտ ելքի համար մի դուռը բաց է թողնում»: Պեխանովից «18-րդ դարի մատերայիստներ Հիվեցիուսի, Հոլբախի և այլոց մոտ բարոյականությունը իրենց սեփական բնորոշ մամբ, անցել է դեպի քաղաքականություն», «18-րդ դարի մատերայիստներն ասում էին. 1) մարդը իր բոլոր մտքերով ու զգացմունքներով միջավայրի արդյունք է, 2) միջավայրը առեղծո՞ւմ է մարդուն», «Մարդը «աուբլիս» է դառնում միայն պատմության մեջ», «Աշխարհագրական միջավայրն ազդում է մարդու վրա հասարակական միջավայրի միջոցով» և այլն: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 157, թ. 3):

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԵՎ ՍՊԱՆԳԱՐՅԱՆԻ ՀԱՆԳԻՊՈՒՄԸ

Ոստիկանությունը շարունակում էր հետաքննությունը և ամեն ինչ գործադրում էր Շահումյանին դատապարտելու համար: Այդ նպատակով էլ 1912 թ. Հունվարի 16-ին Բաքվի քաղաքապետը Կովկասի փոխարքայի գրասենյակին հայտնում էր, որ Բաքվի նահանգական ժանդարմական վարչության պետը դեռ չի ավարտել քաղաքական բարեհուսության աստիճանն ուսումնասիրելու վերաբերյալ գրազրույթը և խնդրում է երկարաձգել Շահումյանի ու նրա ընկերների կայանքի ժամկետը մինչև արտաքսումը:

Բաքվի քաղաքապետը թվարկում է 15 ազգանուն, այդ թվում՝ Շահումյան, Ջերնոմազով, Մելիք Մելիքյանց, Վաղիսյավ Կասպարյանց, Եպիֆան Ենուկիձե, Աբել Ենուկիձե: Շահումյանի և մյուսների կայանքի ժամկետը երկարացվում է մեկ ամսով: (ՈՍ. Հ. Բաքուցյան, նույն տեղը, էջ 271-272):

1912 թ. Հունվարին Պրազայում տեղի էր ունեցել ՌՄԻԲԿ 6-րդ կոնֆերանսը, որին Շահումյանը չէր մասնակցել ձերբակալված լինելու պատճառով: Կոնֆերանսի մասին Շահումյանին տեղեկացնում է Ս. Սպանդարյանը, որը Բաքու գալուց հետո, մարտի 18-ին ձերբակալվել էր:

Բանտի բակում, կարանավորների գրտանքի ժամին Սպանդարյանը պատահաբար հանդիպում է Շահումյանին և նրան տեղեկացնում, որ նա՝ Շահումյանը հեռակա ընտրվել է ՌՄԻԲԿ Կենտկոմի անդամության թեկնածու: Շահումյանը ընտրվել էր «Սուրենին» կեղծանունով, որին ոստիկանությունը

սպարդյուն փնտրում էր այդպես էլ չկուսահելով, որ բանտարկված Շահումյանը նույն ինքը «Սուրենինն» է:

Սպանդարյանը տեղեկացնում է Շահումյանին նաև այն մասին, որ դրսում գտնվող ընկերները նախապատրաստվում են կազմակերպել նրա փախուստը բանտից:

Մպոված պրովոկատոր Ջերնոմազովին պահանջարկն արժեքը արհեստ էր Շահումյանի հետ նույն խցում՝ առաջադրանք տարով հետևել Շահումյանի և մյուսների դրսի հետ ունեցած կապերին:

1912 թ. ապրիլի 16-ին պահանջարկն արժեքի գործակալ Ջորջաձեն հաղորդում է հետևյալը. «Բաքվի բանտում կարանավորված է բոլշևիկ Ստեփան Շահումյանը, Երասևի նավթամուղի վարիչը: Նա մեղադրվում է թիֆլիս քաղաքի Երևանյան հրապարակում 250 հազար ռուբլու կողոպուտին մասնակցելու մեջ: Ներկայումս Բաքու քաղաքում է գտնվում Կամոն (Տեր-Պետրոսյանց), որը զբաղված է Շահումյանի փախուստը նախապատրաստելու գործով: Տեղեկություններ կան, որ Շահումյանին ցանկանում են փոխադրել

Թիֆլիս: Շահումյանը Ստոկհոլմի համազումարին մասնակցել է «Սուրենին» կեղծանունով»:

Գործակալը հայտնում էր նաև, որ Շահումյանի փախուստը նախապատրաստելու գործին մասնակցում է նաև «Ուսուցիչ Ավեսեյ» կեղծանունով հայտնի Ռուբեն Բաթանյանը: (ՈՍ. Հ. Բաքուցյան, նույն տեղը, էջ 283):

Ստանալով այս հաղորդումը, ժանդարմական վարչությունն ու ոստիկանությունը տենդրեն սկսում են Բաքվում որոնել Կամոյին, որն այդ ժամանակ գտնվում էր Կ. Պոլսում: Բաքու ժամանած Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետ Պատրյուկինը պահանջում է ուժեղացնել հսկողությունը և հայտնաբերել Կամոյին: Արդյունքում Թիֆլիսի ժանդարմական



Ստ. Շահումյանը կնոջ և երեխաների հետ արքայազնություն /Աստրախան, 1912թ./

վարչության պետը Հունիսի 6-ին Պետերբուրգ է Հեռագրում, որ «Շահույթա- նի ենթադրյալ փախուստի մասին տեղեկություններ չկան Բաբայի պահապար- դական բաժանմունքի տրամադրության տակ և Միսոն Տեր-Պետրոսյանը (Կամոն) Բաբայում չի գտնված»:

1912 թ. մայիսի 4-ին Բաբայի քաղաքագլուխ Մարտինովը Կովկասի փո- խարքային ուղարկած գեկուցագրով խնդրում է «Հասարակական կարգի պաշտպանության շահերից ելնելով» Հաստատել Շահույթային և մյուս բան- տարկյալներին Կովկասից արտաքսելու միջնորդությունը և Շահույթային ոստիկանության հսկողության տակ աքսորել Ռուսաստանի Հեռավոր նա- Հանգներին մեկը, նկատի ունենալով «նրա քաղաքական գործունեությունն անցյալում»:

1912 թ. մայիսի 15-ին Բաբայի քաղաքագլուխ Մարտինովը Կովկասի փո- խարքային ուղարկում է նոր գեկուցագիր, որտեղ հիշեցվում էր, որ մայիսի 4- ին իր կողմից միջնորդվել է Շահույթային ոստիկանության հսկողության տակ աքսորել Ռուսաստանի Հեռավոր նահանգներից մեկը, նկատի ունենա- լով «նրա քաղաքական գործունեությունն անցյալում»:

Այնուհետև քաղաքագլուխը գրում էր. «Ուշադրության առնելով, սա- կայն, որ վերջին 3 տարվա ընթացքում Շահույթայնը բնակվել է Բաբայում և վարել է օրինակելի կյանք, որը վճռակամորեն առիթ էր տալիս նրան մեղաբ- րել հակակառավարական գործունեության մեջ և, ընդհանրապես, ոչ մի դա- տապարտելի բան չի նկատվել, ինչպես նաև հաշվի առնելով, որ նրա աքսոր- վելը նյութական ծանր վիճակի մեջ է դնում նրա երեք երեխաներից և կոտորից բարկացած ընտանիքին, կարծում եմ, արդարացի կլինի Շահույթայնի նկատ- մամբ պատժի միջոցը նշանակալիորեն մեղմելու իմ առաջարկը թողնել ձեր հայեցողությանը»: (ՀՀ ԱԱ, ֆ, 1437, ց. 1, գ. 137, թ. 1):

1912 թ. մայիսի 31-ին Կովկասի փոխարքայի կարգադրությամբ Շահույ- թայնին 5 տարվա ժամկետով արգելվում է բնակվել Կովկասի երկրամասի սահ- մաններում: Միաժամանակ նրան իրավունք է տրվում ընտրել նոր բնակու- թյան վայրը: Շահույթայնին հաջողվում է ընտրել Աստրախանը, նկատի ու- նենալով, որ այնտեղից հնարավոր կլինի Բաբայի Հետ կապ հաստատելը:

Կովկասից «արտաքսվում» է նաև Միրոն Չերնոմազովը, որը ոստիկանու- թյան Հանձնարարությանը մեկնում է արտասահման, Հետո Լ. Կամենկի երաշխավորությամբ հայտնվում է Պետերբուրգում լույս տեսնող բուլղակյան «Правда» թերթի խմբագրությունում ու շարունակում կատարել պրոֆուգա- տորի ստոր դերը:

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԱՔՍՈՐԱՎԱՅՐՈՒՄ

Շահույթայնի վրա էր ծանրացած ընտանիքի ամբողջ Հոգարը: Նա չէր կա- րող Բաբայում թողնել իր ընտանիքը: 1912 թ. Հունիսի 1-ին Շահույթայնն ըն- տանիքի հետ միասին մեկնում է Աստրախանի աքսորավայր: Հունիսի 13-ին Պետրովսկից (այժմ՝ Մախաչկալա), Ս. և Հ. Տեր-Գրիգորյաններին ուղարկած նամակում Շահույթայնը հայտնում է ճանապարհին եղած դժվարություննե- րի մասին:

Վերջապես Հունիսի 19-ին Շահույթայնն ընտանիքով հասնում է Աստրա- խան և տեղավորվում Պողեսնոյե փոքրիկ գյուղում: Այստեղ ապրելու պայ- մաններն անտանելի էին:

Շահույթայնին հաջողվում է ընտանիքը տեղափոխել Աստրախան քաղաք և մատչելի գնով բնակարան վարձել: Աստրախանում Շահույթայնին տրվում է անձնագիր՝ Կովկասում ապրելու իրավունք չունենալու նշագրումով: Շա- հույթայնին իրավունք էր տրվում ազատ շարժվել Ռուսաստանում, միայն ու- տիկանությանը տեղեկացնելով, թե ուր է մեկնում:

Շահույթայնին հաջողվում է Աստրախանում աշխատանք գտնել: Նա նշա- նակվում է Աստրախանի «Ժողովրդական համալսարանի» գործերի կառա- վարիչ, միաժամանակ մասնավոր դասեր է տալիս: Ստացված միջոցները նրան հնարավորություն են տալիս վճարել բնակարանի վարձը, տղային տե- դավորել մասնավոր ուսուցանողական ուսումնարան և Հոգալ մյուս կարիքները:

Աստրախանի նահանգային ժանդարմական վարչությունն անմիջապես Շահույթայնի նկատմամբ սահմանում է հսկողություն և միաժամանակ 1912 թ. հուլիսի 2-ին Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչություն ուղար- կած գրությունը խնդրում է հայտնել Շահույթայնի Հեղափոխական գործու- նեության և նրան Կովկասի սահմաններից արտաքսելու պատճառների մա- սին:

Ի պատասխան այս գրության, Թիֆլիսի ժանդարմական վարչության պետը ուղարկում է բավական մանրամասն տեղեկություններ Շահույթայնի մասին: Նա հայտնում է, որ «Բեռլինում Շահույթայնը եղել է Հեղափոխական փտարանողիների մեջ, իսկ 1905 թ. արդեն Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ է եղել: 1905 թ. հոկտեմբերի 19-20-21-ին ելույթներ է ունեցել հակակառավարական բովանդակությամբ: 1907 թ. Թիֆլիսի սո- ջիալ-դեմոկրատական կազմակերպության կողմից Բորչալուի գավառում ստաճադրվել է Պետական դոմայի անդամի թեկնածու:

Ժանդարմական վարչության պետը հարորդում է նաև, որ 1907 թ. Շա-

Հումյանը պրոպագանդա է տարել Յարայովի գործարանում, մասնակցել է Լոնդոնի կոնֆերանսին և 1909 թ. Հանդիսանում է Բաբվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության լիդերը: Ըստ գործակալական տվյալների, 1910 թ. դեկտեմբերին Շահումյանն աջակցել է դաշնակցության անդամներին, նրանց աշխատանքի տեղավորելով նալթաՀանքերում: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 3, թ. 1):

Շահումյանին հաջողվում է կապ հաստատել Աստրախանում գտնվող սոցիալ-դեմոկրատների հետ, ձևավորել ՌՄԴԲԿ խումբ, որը նրա գլխավորությամբ քաղաքի արհեստավորների, հատկապես նալաՀանգստի մշակների շրջանում ծավալում է ագիտացիոն աշխատանք:

Շահումյանի ծավալած հեղափոխական աշխատանքի մասին «Աստրախանի կուսակցական կազմակերպության պատմության ակնարկներ» գրքում նշվում է, որ նա արագ կապեր է հաստատում Աստրախանի առաջավոր բանվորների հետ, «նրանց մեջ զարգացնելով հետաքրքրություն դեպի բոլշևիկյան մասնույր, կազմակերպում է այն ժամանակաշրջանի բանվորական ու սոցիալ-դեմոկրատական շարժման առավել կարևոր հարցերի քննարկում, ուղարկելով «ПРАВДА»-յի խմբագրությունը մի քանի թղթակցություններ, նամակագրության մեջ էր Վ. Ի. Լենինի հետ»: (Очерки истории Астраханской партийной организации, 1971, стр.. 72):

1912 թ. ամռանն ու աշնանը ընթանում էր 4-րդ Պետական դումայի ընտրությունների կամպանիան: Աստրախանում նույնպես պայքար էր գնում տարբեր կուսակցությունների ներկայացուցիչների միջև: Ուժեղ էր հատկապես կադետների խումբը: Շահումյանը դեկավարում էր սոցիալ-դեմոկրատական խումբը, որը տարածում է Շահումյանի գրած թուղթերը:

Թուղթերը բանվորներին կոչ էր անում բանվորական կուրիայից ընտրել «այնպիսի ընկերոջ, որն արժանի լինի բանվորների ներկայացուցչի կոչմանը»:

Շահումյանը նշում էր, որ նախորդ երեք դումաներում սոցիալ-դեմոկրատական խմբակցությունները «պատվով ու արժանապատվությամբ էին պաշտպանում բանվոր դասակարգի շահերը, ամբողջ առաջավոր Ռուսաստանի շահերը», որ նրանք համարձակորեն պայքարում էին բանվոր դասակարգի թշնամիների դեմ, «անողոքաբար նշավակում էին կառավարության, աշերի և օկրոյաբրիտանների ներկայացուցիչներին՝ Ռուսաստանի ազնվաբար նույնիսկ և կապիտալիստների այդ գիշատիչ ներկայացուցիչներին»:

Շահումյանը կոչ էր անում ձայն տալ սոցիալ-դեմոկրատի օգտին և ընդդ

ծում էր. «Սոցիալ-դեմոկրատիան բանվոր դասակարգի պայանգարդն է, որը պայքարում է ամբողջ բանվոր դասակարգի հետ միասին, հանուն վարձու ստրկության ոչնչացման, հանուն սոցիալիստական կարգերի տեղիքման...-ցարական ինքնակալության տապալման և դեմոկրատական հանրապետության հաստատման համար»: (Մա. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 312-314):

1912 թ. հոկտեմբերի 21-ին Շահումյանը «ПРАВДА»-յի խմբագրությանն է ուղարկում Աստրախանի նահանգում չորրորդ Պետական դումայի ընտրությունների արդյունքների մասին գրած հոդվածը, որը, սակայն, չի տպագրվել: (Նույն տեղը, էջ 310-311):

«ПРАВДА»-յի խմբագրությունում խցկված Ռ. Մայինովսկին, Մ. Չերնոմազովը (նրանց պրոլեկատոր լինելը պարզվում է միայն հոկտեմբերյան հեղափոխությունից հետո) զանազան պատրվակներով խոչընդոտում էին աշխատանքը, խուսափում էին «յիկվիդատորների» դեմ ուղղված հոդվածների հրատարակումից: Նրանք նույնիսկ համարձակվում էին չտպագրել կամ էլ ոչնչացնել արտասահմանից ուղարկված Լենինի հոդվածները:

Դժգոհ «ПРАВДА»-յի խմբագրության աշխատանքից, 1912 թ. դեկտեմբերի վերջին Կրակովում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ Լենինը նախաձեռնում է տեղից տեղափոխվել խմբագրության նեղ կոլեգիա, որին մասնակցելու էին Պետական դումայի բոլշևիկ պալատավորները: Եվ քանի որ «ПРАВДА»-ն լեգալ թերթ էր, անհրաժեշտություն համարվեց նաև ունենալ լեգալ խմբագիրներ:

«ПРАВДА»-յի խմբագրությունը Լենինի առաջարկությամբ հանձնվում է Յա. Ավերդովին: Վերջինս Կենտկոմին ուղարկած նամակում հայտնում է, որ խմբագրությունում գործերը լավ չեն և գրում է. «Սենք ուզում ենք հրավիրել Սուրենին» (այսինքն՝ Շահումյանին-Վ. Պ.) և խնդրում է ստանալ Լենինի համաձայնությունը: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 160, թ. 1):

Այդ մասին Աստրախանում գտնվող Շահումյանին Ա. Ենտկիձեն 1913 թ. փետրվարի 25-ին հայտնում է, որ նախատեսվում է վերափոխել «ПРАВДА»-յի խմբագրությունը և ավելացնում է, որ Լենինի համաձայնությամբ «առաջարկվում է կազմել մի կոլեգիա՝ քո գլխավորությամբ, որն իր ձեռքը կվերցնի այդ թերթը»:

Վերջապես, 1913 թ. մարտի 10-13-ին Կրակովում տեղի ունեցած ՌՄԴԲԿ Կենտկոմի նիստում, Լենինի համաձայնությամբ, որոշվում է «ПРАВДА» թերթը դեկավարելու համար հրավիրել Շահումյանին:

Այս որոշման Համաձայն Պետական դոկայի պատգամավոր Գ. Պետրով-կին 1913 թ. ապրիլի սկզբին Շահումյանին, որպես «Травада»-յի խմբագիր, հրավիրում է Պետերբուրգ, նրան ուղարկելով ճանապարհածախի գումարը:

1913 թ. ապրիլի 7-ին Շահումյանը մեկնում է Պետերբուրգ: Չնայած նա մեկնել էր անդեպ, այնուամենայնիվ, դա Հայտնի է դառնում Աստրախանի ժամդարմական վարչության պետին, որն անմիջապես այդ մասին Հաղորդում է Պետերբուրգ՝ Ոստիկանության ղեկավարամենտին:

Պետերբուրգում Շահումյանը ծանոթանում է «Травада»-յի խմբագրության գործերին և տհաճություն է ընդունում այնտեղ գտնվող Չերնոմազովին, որին նա երբեք չէր վստահել: Խմբագրության գործունեությանը ծանոթանալուց Հետո, Շահումյանը Գ. Պետրովսկու բնակարանում նեղ շրջանակի Հետ, մասնակցում է «Травада»-յի վերակառուցման Հարցի քննարկմանը:

Շահումյանը դնում է Հետևյալ պահանջը՝ եթե ինքն է խմբագրելու թերթը, ապա պետք է իրավունք ստանա խմբագրության ամբողջ կազմը ցրել և նոր աշխատողներ վերցնելով, ապահովել թերթի սկզբունքային ղեկավարությունը:

Ներկաների մեծ մասը, այդ թվում Չերնոմազովն ու Մալինովսկին չեն ընդունում Շահումյանի առաջարկը: Շահումյանն էլ չհամաձայնվելով իր Համար անընդունելի կոմպրոմիսին, 1913 թ. ապրիլի 18-ին վերադառնում է Աստրախան:

Հետաքրքիր է նշել, որ ապրիլի 18-ին գաղտնի գործակալների միջոցով Ոստիկանության ղեկավարամենտին անմիջապես Հայտնի է դառնում, որ «Շահումյանը չի համերաշխել «Травада»-յի խմբագրական կոլեգիայի Հետ և վերադառնում է»:

Այս տեղեկության Հիման վրա Ոստիկանության ղեկավարամենտը ապրիլի 22-ին Աստրախանի ժամդարմական վարչությանը Հայտնում է. «Շահումյանի Պետերբուրգ մեկնելու նպատակն էր իր վրա վերցնել «Травада»-յի խմբագրի պարտականությունները, բայց նա գաղափարական անհամերաշխություն ունենալով թերթի խմբագրության աշխատողների Հետ, վերադարձել է Աստրախան»:

Դրանից ելնելով Ոստիկանության ղեկավարամենտը պահանջում էր ավելի ուժեղացնել Շահումյանի նկատմամբ կիրառվող գաղտնի Հսկողությունը:

Հետագայում Հիշելով այս մասին, Գ. Պետրովսկին ասել է. «Ընկեր Շահումյանին խմբագիր չհաստատելով, մենք շատ մեծ կորուստ կրեցինք. անհրաժեշտ էր համաձայնվել ընկեր Շահումյանի բոլոր պահանջների Հետ»:

(Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 453):

Աստրախան վերադառնալուց Հետո, 1913 թ. Հունիսի 10-ին Լենինին ուղարկած նամակում Շահումյանը գրում է Հետևյալը. «Պետերբուրգում տեղավորվելու և օգտակար լինելու իմ չհաջողված փորձի մասին, դուք, ինչպես օրերս ինձ գրում էր Ավր (Նկատի ունի Ավել Ենտևիձեին-Վ. Պ.), արդեն գիտեք: Շատ ափսոս, որ մի քանի անձնական պայմանների պատճառով ես չկարողացա ավելի մեծ հաստատականություն ցուցաբերել և Հասնել այն բանին, ինչին անհրաժեշտ էր Հասնել: Ի միջի այլոց, ինչպես պարզվեց իմ այստեղ վերադառնալուց Հետո, ոստիկանական պայմանների պատճառով ես Հագիվ թե կարողանայի մնալ Պետերբուրգ»:

(Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 219):

Պետերբուրգում գտնվելու ժամանակ Շահումյանը «Травада» թերթում, 1913 թ. ապրիլի 13-ին հրատարակում է Աստրախանի բանվորների երկու բանաձևերը: Դրանցից մեկում, որը վերաբերում էր «Травада» թերթին, նշվում է, որ թերթը «խոշոր դեր է խաղացել վերջին ժամանակվա ռուսական բանվորական շարժման մեջ», ավետելով բանվորական շարժման նոր վերելքի սկիզբը: Պատշաճ գնահատական է տրվում «յիկվիրատորների» դեմ մղված պայքարում «Травада»-յի դերին:

Մյուս բանաձևը վերաբերում է Պետական դոկայում սոցիալ-դեմոկրատական խմբակցությանը: Այստեղ Հայտնվում է խմբակցության անդամ վեց բոլշևիկ պատգամավորների նկատմամբ համակրանքի մասին և դատապարտվում է «յիկվիրատորների» վարքագիծը: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 315-318):

«ԿՈՒԼՏՈՒՐ-ԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՆՈՄԻԱՅԻ» ՄԱՍԻՆ

Ռուսաստանում արդեն 1910 թվականից նկատվում էր Հեղափոխական շարժման աճ: Դրա Հետ միասին հաստանում էին ինվերսիոնիստական պատերազմը սկսելու նախադրյալները: ԱՀա, այսպիսի պայմաններում նորից ուժեղանում է Հետաքրքրությունն ազգային Հարցի նկատմամբ:

Դա առանձնապես զգացվում էր Անդրկովկասում, որտեղ ազգային կազմի տեսակետից ստեղծվել էին յուրահատուկ պայմաններ: Ամբողջ խնդիրը կայանում էր նրանում, որ Անդրկովկասում ոչ սոցիալիստական կուսակցություններն իրենց գործելակերպով՝ ազգամիջյան ընդհարումները հրահրելու, Ռուսաստանի ընդհանուր Հեղափոխական շարժումից Անդրկովկասի աշխատավորներին Հեռու պահելու միջոցով արգելակում էին ցարական բռնակալության դեմ Անդրկովկասի ժողովուրդների մղած պայքարը:

Հեղափոխությունից հետո ստեղծված ռեակցիայի պայմաններում հատկապես սոցիալ-դեմոկրատիայի շարքերում հանդես եկած «լիկվիդատորները» ազգային հարցի լուծման համար առաջ են քաշում «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» պահանջը՝ հետևելով հրեական բուրժուական կուսակցությունների օրինակին:

Նրանք, «լիկվիդատորները» նույնիսկ հաչվի չէին առնում, որ «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» գլխավոր տեսաբան Օտտո Բաուերը հրեաների համար անհնարին էր համարում «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» պահանջը:

Դեռևս 1907 թ. ապրիլի 16-20-ին Ֆինլանդիայում տեղի էր ունեցել Ռուսաստանի ազգային-սոցիալիստական կուսակցությունների կոնֆերանսը, որին մասնակցել էին էսդեների կուսակցության, լեհական սոցիալիստական կուսակցության հեղափոխական ֆրակցիայի, հրեական սոցիալիստական բանվորական կուսակցության, վրացական սոցիալիստ-ֆեդերալիստների կուսակցության, բերտուսական սոցիալիստական գրոմսդայի և Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչները:

Այս կոնֆերանսն ընդունել էր «կուլտուր-ազգային ավտոնոմիան»:

1912 թ. օգոստոսին Վիեննայում տեղի ունեցած «լիկվիդատորների» կոնֆերանսն ազգերի ինքնորոշման իրավունքի մասին լրջունգի փոխարեն առաջադրում է կուլտուր-ազգային ավտոնոմիայի պահանջը, որը ՌՄԴԿ համագումարների որոշումներով դատապարտվել էր որպես նացիոնալիզմի դրսևորում:

Կովկասյան մենչևիկները, որոնք մինչ այդ մի ամբողջ 10 տարի պայքարում էին հրեական Բուճդի դեմ, հակահեղափոխության պայմաններում ուժեղացած նացիոնալիստական միջնորդրտի ազդեցությամբ նույնպես արտահայտվեցին «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» օգտին:

Անրհատեչտ եմ համարում, որքան հնարավոր է համառոտ անդրադառնալ «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» գաղափարին և պարզել դրա շեղի առաջացած տարածայնությունները:

Դեռևս 1899 թ. սեպտեմբերին տեղի ունեցած Ավստրիական սոցիալ-դեմոկրատական կուսակցության համագումարում ազգային հարցի քննարկման ժամանակ առաջարկվել էր տարբեր տեսակետ արտահայտող երկու բառաձև.

Առաջին. Կուսակցության կենտրոնի առաջարկած բանաձևը արշտար նում էր ազգերի տարածքային ավտոնոմիան:

Երկրորդ. Կուսակցության Հարավ-սլավոնական կոմիտեն իր բանաձևով պաշտպանում էր էքստարածքային (այսինքն՝ իր տարածքը չունեցող - Վ. Պ.) «կուլտուր-ազգային ավտոնոմիան»:

Այդ բանաձևում ասվում էր հետևյալը. «Ավստրիայում ապրող յուրաքանչյուր ժողովուրդ, անկախ նրա անդամների գրաված տարածքից, կազմում է ինքնավար մի խումբ, որը միանգամայն ինքնուրույն է վարում իր բոլոր ազգային (լեզվական և կուլտուրական) գործերը»: Դա նշանակում էր, որ պետությունը պետք է ամրապնդեր ազգերի սահամանազատումը դպրոցական և այլ գործերում:

Համագումարը միաձայն մերժում է «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» մասին երկրորդ բանաձևը, նկատի ունենալով, որ դա կհանգեցներ կրեդակալուսթյան ուժեղացմանը, որի արդյունքը կլիներ յուրաքանչյուր փոքր համայնքի մեջ, յուրաքանչյուր փոքր խմբի մեջ «չովինիզմի հավերժացումը»:

Համագումարը դրա փոխարեն ընդունում է փոխզինողական բանաձև, որն ընդունում էր ազգային ավտոնոմիա ավստրիական կայսրության սահմաններում:

Ճիշտ է, Ավստրիական սոցիալ-դեմոկրատական կուսակցության համագումարը մերժել էր «կուլտուր-ազգային ավտոնոմիան», բայց այդ գաղափարը չմոռացվեց: Ռուսաստանի պայմաններում առաջինը հրեական Բուճդն է ընդունում «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» ծրագիրը:

Բուճդի օրինակին հետևեցին, ավելի ճիշտ՝ Բուճդի հեզեմոնիային ենթարկվեցին 1907 թ. ապրիլի 16-20-ին Ֆինլանդիայում տեղի ունեցած Ռուսաստանի ազգային-սոցիալիստական կուսակցությունների վերոհիշյալ կոնֆերանսի մասնակիցները:

Ազգային մշակույթի ներկայացնող դպրոցները և այլ հաստատությունները բոլոր երկրներում գտնվում էին կրեդակալանների և բուրժուական շուքիստների ազդեցության տակ: Այդպես էր, Իհարկե, նաև Հայ իրականության մեջ:

Բուճդականներն ընդունելով «կուլտուր-ազգային ավտոնոմիան», պնդում էին դպրոցական բնագավառը դատակարգային պայքարից անջատելու վրա, անտեսելով մի կարևոր հանգամանք՝ դպրոցը և առհասարակ ազգային մշակույթն անհնարին է անջատել տնտեսությունից ու քաղաքականությունից:

Բուճդականները հաչվի չէին առնում, որ կապիտալիստական երկրներում տիրապետող տնտեսական ու քաղաքական կյանքը հարկադրում է ամեն

քայլափոխում ոչնչացնել ազգերի միջև գոյություն ունեցող պատնեշները և այդպիսի պայմաններում դարձրոցական և մշակութային մյուս գործերի անջատումը միայն ուժեղացնելու էր կրեթականությունն ու բուրժուական շովինիզմը:

Դրա հետ միասին դարձրոցական և մյուս գործերը պետության իրավասությունից հանելը և դրանք ազգերին հանձնելը տանում էր դեպի ընդհանուր տնտեսությունից ազգերի անջատում:

Բուժողականների «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» ծրագրի իրականացումը վերջին հաշիվով տանելու էր դարձրոցական գործն ըստ ազգությունների բաժանելուն: Դրա իսկական էությունը հասկանում էին ինչպես ավստրիական, այնպես էլ ռուսական սոցիալ-դեմոկրատները:

Այստեղից էլ այն խոր հակասությունը, որ առաջացել էր նաև Կովկասում սոցիալ դեմոկրատների և բոլոր նրանց, այդ թվում նաև դաշնակցության միջև, որոնք փարսիլ էին «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» ծրագրին:

Հաջորդ էջերում այդ հարցին ավելի համաամանալի անդրադարձ կլինի, երբ ընթերցողին կներկայացվի Շահումյանի «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» աշխատությունը:

ԱՂԻՔԵՉԱՆՑԻ ԿԵՂԾԱՐԱՐԻ ՀԻՄՆԱԶՈՒՐԿ ՓԱՍՏԱՐԿԸ

Ստեղծված պայմաններում սոցիալ-դեմոկրատների բոլջևիկյան թևի համար կարևոր նշանակություն էր ստանում ազգային հարցի վերաբերյալ կուսակցության տեսության և քաղաքականության հիմնավորումը:

Բոլջևիկյան թևը գտնում էր, որ ազգային հարցը հեղափոխական պայքարի մասին ընդհանուր հարցի բաղկացուցիչ մասն է: Այդ թևը եղնում էր ազգային հարցի մասին Մարքսի ու Էնգելսի տված բացատրությունից: Նրանք բացահայտել էին ազգային շարժումների սոցիալական արմատները, սպառցուցել էին, որ ամեն տեսակի ազգային ճնշում և անհավասարություն հարավոր է վերացնել միայն կապիտալիզմը վերացնելու և պրոլետարիատի իշխանություն հաստատելու միջոցով:

1913 թ. Հուլիսի 16-ին Լ. Զինովևը Շահումյանին հայտնում է, որ «Прогрессивение» մարքսիստական ամսագիրը մտադիր է հորվածներ տպագրել Կովկասում ազգային հարցի վերաբերյալ: Եվ նկատի ունենալով, որ Շահումյանը գիտակ է այդ հարցում, նրան առաջարկում է գրել պոպուլյար գրքույկ: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 162, էջ 1):

Ինչպես հայտնի է, 1913 թ. օգոստոսի 24-ին Աստրախանում գտնվող Շահումյանին ուղարկած նամակում Լենինը գրել է. «Անպայմանորեն ավելի շատ նյութեր ուղարկեցեք ազգային հարցի մասին Կովկասում (քանի որ Դուք, դժբախտաբար, ինքներդ գրել չեք կարող) և Կոստրոմի հորվածը, և նրա գրքույկները, պատգամավորների զեկուցումները ռուսերեն թարգմանությամբ (հուսով եմ, կգտնեք որևէ մեկին, որին կարելի է հանձնարարել) և Կովկասի ազգությունների միճակագրությունը, և նյութեր Կովկասում, Պարսկաստանում, Թուրքիայում և Ռուսաստանում ազգությունների հարաբերությունների մասին, մի խուբով՝ այն բոլորը, ինչ կա ու ինչ հավաքել կարող եք, ուղարկեցեք»: (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, Հ. 48, էջ 258):

Դժբախտաբար չի պահպանվել Լենինին ուղարկած Շահումյանի պատահան նամակը, որով նա հայտնել է ինչպես Ն. Ժորդանիայի (Կոստրոմի) գրքույկի, այնպես էլ համահայկական համագումարի մասին: Այդ է պատճառը, որ Լենինը իր նամակում միայն գրում է Կոստրոմի հորվածի և նրա գրքույկների, պատգամավորների զեկուցումների մասին, չնչելով դրանց անունները:

1913 թ. սեպտեմբերի 7-ին Շահումյանը Լենինին ուղարկած պատահան նամակում գրում է. «Ուղարկում եմ Ձեզ խոստացածս բրոշյուրը և հարկավոր գործերի վերաբերյալ երկու զեկուցումների (ընդգծումն իմն է - Վ. Պ.) թարգմանությունը: Ազգությունների միճակագրությունը ես կուղարկեմ Ձեզ: Ընդհանուր թվերը, որոնք ես այժմ կարող եմ հաղորդել, ինչպես օրինակ, մուսուլմաններ՝ 5 միլ., հայեր՝ 2 միլ., վրացիներ՝ 2 միլ., և այլն, Ձեզ համար, իհարկե, նշանակություն չեն կարող ունենալ...: Եթե բրոշյուրի կամ զեկուցումների կապակցությամբ Ձեզ մոտ հարցեր ծագեն, կպատասխանեմ մեծագույն պատրաստակամությամբ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երկրորդ, էջ 321):

Այնուհետև Շահումյանը Լենինին խորհուրդ է տվել. «Ազգային հարցի՝ Կովկասում, և շատ ուրիշ հարցերի գծով Ձեզ համար արժեքավոր կլինեն կապը Ֆիլիպ Մախարաձեի՝ Բաքվի վրացական «Մղարո» թերթի խմբագրի հետ: Շատ սովոր և իրազեկ մարդ է...»:

Այս կապակցությամբ ուզում եմ ընթերցողի ուշադրությունը ներկայացնել հետևյալը.

Ստալին. Լենինը իր վերոհիշյալ նամակում Շահումյանին խնդրում է «Անպայմանորեն ավելի շատ նյութեր ուղարկեցեք ազգային հարցի մասին Կովկասում» և փակագծի մեջ ավելացնում է. «Քանի որ Դուք, դժբախտաբար, ինքներդ գրել չեք կարող»:

Լենինը «դժբախտաբար» բառը գրել է ընդգծված, նկատի ունենալով, որ Շահումյանն աքտորավայրում գտնվելու պատճառով չի կարող գրել ազգային Հարցի մասին: Լենինի այս միտքը բոլորովին էլ չի նշանակում, թե ազգային Հարցի մասին գրելը Շահումյանի ուժերը վեր մի բան է եղել: Եթե այդպես լիներ, սպա Լենինը չէր շարունակի ազգային Հարցի վերաբերյալ նամակագրություն ունենալ Շահումյանի հետ:

Երկրորդ. Շահումյանի նամակում որևէ ակնարկ չկա, թե հրատարվում է կամ էլ չի կարող գրել ազգային Հարցի մասին, որ այդ պատճառով էլ նա երաշխավորում է Ֆ. Մախարաձեին:

1914 թ. ապրիլի 17-ին Լենինին ուղարկած նամակում Շահումյանը Հայտնում է, որ սկսել է գրել ազգային Հարցի վերաբերյալ գրքույկը, որը դեռ չի ավարտել Լենինի հետ տարաձայնելու պատճառով, իսկ «գլխավորապես այն պատճառով, որ հարկավոր էր հայերեն լեզվով գրքույկ գրել «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» մասին»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 329-330):

Այս է ամբողջ իրականությունը, որն այնպես փորձում է ծուռ Հայելու մեջ ներկայացնել աղբբեջանցի պատմաբան-կեղծարար Է. Իսմայիլովը իր վերջ նշված կեղծիքներով լեցուն գրքում:

Ահա, թե ինչ է գրել այդ կեղծարարը. «Լենինն իսկապես չգիտեր ազգային Հարցը, շատ վատ էր կողմնորոշվում ծայրամասներում ազգային Հարցի մեջ: Լենինն առաջարկում է Շահումյանին, որպես կովկասցու, գրել գիրք ազգային Հարցի մասին: Նա կտրտովեց-կտրտովեց, հետո Լենինին ասել է, թող ավելի լավ է Մախարաձեն գրի: Արդյունքում Ստայինն է գրել «Մարքսիզմը և ազգային Հարցը» աշխատությունը»:

Սույն աշխատության հաջորդ էջերում ես անպայման կանդորադառնամ աղբբեջանցի այս կեղծարարի գրքին, ուստի բավարարվեմ ասվածով և միայն ընդգծեմ, որ ինչպես այդ, այնպես էլ մյուս հակահայկական նյութերն աղբբեջանական կողմը մասսայական տպաքանակով հրատարակում է հատկապես ուսներեն և դրանք, ինչպես և Իսմայիլովի գիրքը, տարածում Մոսկվայում կազմակերպվող աղմկարար շնորհանդեսների միջոցով:

Շահումյանը Լենինին ուղարկել է Կոստրովի (Նոյ Ժորդանիայի ծածկա նունն է՝ Վ. Պ.) «Ազգային Հարցը մեզանում» գրքույկը: Լենինը դրան անդրադարձել է 1913 թ. դեկտեմբերի 17-ին «Пролетарская правда» թերթում հրատարակված «Իարձյալ դպրոցական գործն ըստ ազգությունների բաժանելու մասին» հոդվածում: (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 24, էջ 288-291):

Իսկ Լենինի խնդրած «պատգամավորների գեկուցումները» և Շահումյանի ուղարկած «Հայկական գործերի վերաբերյալ երկու գեկուցումների թարգմանությունը» վերաբերում են ամենայն հավանականությամբ հետևյալին:

Ինչպես Հայտնի է, 1912 թ. աշնանը Բալկանյան առաջին պատերազմի ժամանակ նորից Հայ իրականության մեջ հույսեր արթնացան դիվանագիտական միջոցներով Հայկական Հարցը լուծելու համար: Այդ նպատակն էր հետապնդում 1912 թ. հոկտեմբերի վերջին Թիֆլիսում գումարված Հայ հասարակայնության տարբեր շերտերի մասնակցությամբ հրավիրված համագումարը:

Այս համագումարի ընդունած որոշումներից մեկը վերաբերում էր բոլոր Հայաբնակ քաղաքներից պատվիրակներ ընտրելու և նոր համագումար հրավիրելու մասին: Հիշյալ համագումարը հրավիրվել է Թիֆլիսում 1912 թ. նոյեմբերի 25-ին: Համագումարի ընդունած որոշումներից մեկը նվիրված էր Հայկական Հարցի վերաբերյալ ուսական հասարակական և կառավարող շրջանների մոտ պրոպագանդայի միջոցով նպաստավոր տրամադրություն ստեղծելու գործին:

Հայկական Հարցը պրոպագանդելու նպատակով կազմվում են տեղեկագրեր, մամուլում տպագրվում են հոդվածներ և այլն:

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՅԸ ՊՈՐՈՆԻՆՈՅԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Այժմ հարկ եմ համարում ընթերցողի ուշադրությանը ներկայացնել 1913 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին Պորոնինո գյուղում (Կրակով քաղաքի մոտ) տեղի ունեցած ՌՄԻԲԿ Կենտկոմի խորհրդակցությունում ազգային Հարցի վերաբերյալ Լենինի գեկուցման հիման վրա և նրա առաջարկությամբ ընդունած ազգային Հարցի մասին բանաձևը: Դժբախտաբար Պորոնինոյի խորհրդակցության նյութերը մինչև օրս չեն հայտնաբերվել, որոնց մեջ է եղել նաև ազգային Հարցի մասին Լենինի գեկուցումը:

Պորոնինոյի խորհրդակցության նախօրյակին Հայկական Հարցի վերաբերյալ տեղի են ունեցել միայն վերոհիշյալ համագումարները: Ուստի բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ Լենինին հետաքրքրել են հենց Հայկական Հարցի վերաբերյալ վերոհիշյալ, հատկապես երկրորդ համագումարի նյութերը: Կրկնում եմ, որ դժբախտաբար չեն պահպանվել Պորոնինոյի խորհրդակցության նյութերը և այդ պատճառով էլ Հայտնի է, թե Լենինը ինչ է ասել իր գեկուցման մեջ Հայկական Հարցի մասին:

Պորոնինոյի խորհրդակցությունների ընդունած բանաձևի 3-րդ կետն ազդարարում էր. «Բանավոր դատակարգի չափերը պահանջում են տվյալ պետության բոլոր ազգությունների բանավորների միավորումը պրոլետարական միասնական կազմակերպություններում՝ քաղաքական, արհեստակցական, կոոպերատիվ-լուսավորական և այլ կազմակերպություններում: Տարբեր ազգությունների բանավորների միայն այդպիսի միավորումը միասնական կազմակերպություններում հնարավորություն է տալիս պրոլետարիատին հարթականորեն պայքար մղելու միջազգային կապիտալի և ռեակցիայի դեմ, ինչպես և կալվածատերերի, տերտերներին և բոլոր ազգերի բուրժուական նացիոնալիստների քարոզի և ձգտումների դեմ, որոնք իրենց հակապրոլետարական ձգտումները սովորաբար անց են կացնում «ազգային մշակույթի» դրոշի ներքո: Համախարհային բանավորական շարժումը ստեղծում և օրեցօր ավելի է զարգացնում պրոլետարիատի ինտերնացիոնալ (միջազգային) մշակույթը»:

Բանաձևի 4-րդ կետում ասվում էր. «Ինչ վերաբերում է ցարական միապետության կողմից կեղեքված ազգերի ինքնորոշման իրավունքին, այսինքն՝ անջատվելու և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքին, ապա ս.դ. կուսակցությունն անպայման պետք է պաշտպանի այդ իրավունքը: Այս են պահանջում ինչպես ընդհանրապես միջազգային դեմոկրատիայի հիմնական սկզբունքները, այնպես և առանձնապես Ռուսաստանի բնակչության մեծամասնության կրած անկուր ազգային ճնշումը ցարական միապետության կողմից, որը հանդիսանում է ամենատեսակցիոն ու բարբարոսական պետական կարգը՝ համեմատած Եվրոպայի ու Ասիայի հարևան պետությունների հետ: Այդ է պահանջում, այնուհետև, իր՝ վեյիկոտու բնակչության ազատության գործը, որն անընդունակ կլինի դեմոկրատական պետություն ստեղծելու, եթե հիմնովին չօճաչվի վեյիկոտուական սեհարյուրակային նացիոնալիզմը, որը պահպանվում է ազգային շարժումների նկատմամբ կատարված մի շարք արյունալի դատաստանների ավանդույթով և սխտեմատիկաբար մտցվում է ոչ միայն ցարական միապետության ու բոլոր ռեակցիոն կուսակցությունների կողմից, այլև միապետության առաջ ստրկամտող վեյիկոտուական բուրժուական լիբերալիզմի կողմից՝ մանավանդ հակահեղափոխության դարաշրջանում»:

5-րդ կետում նշվում էր. «Ազգերի ինքնորոշման իրավունքի հարցը (այսինքն՝ անջատման հարցը պետության սահմանադրությունը միանգամայն ազատ ու դեմոկրատական եղանակով լուծելն ասպհովելը) անթույլատրելի

է չիթել այս կամ այն ազգի անջատման նպատակահարմարության հարցի հետ: Այդ վերջին հարցը ս.դ. կուսակցությունը պետք է լուծի ամեն մի ստանձին դեպքում միանգամայն ինքնուրույն կերպով՝ ելնելով հասարակական ամբողջ զարգացման չափերի և սոցիալիզմի համար պրոլետարիատի մղած դատակարգային պայքարի չափերի տեսակետից:

Ընդ որում սոցիալ-դեմոկրատիան պետք է նկատի ունենա, որ ճշված ազգերի կալվածատերերը, տերտերներն ու բուրժուազիան բանավորներին միմյանցից բաժանելու և նրանց հիմարացնելու ձգտումները հաճախ սքողում են նացիոնալիստական լոզունգներով՝ նրանց թիկունքում գործարքներ կնքելով տիրապետող ազգի կալվածատերերի ու բուրժուազիայի հետ՝ ի վնաս բոլոր ազգերի աշխատավոր մասամաների»:

ԲԱՆԱՎԵՃ ԼԵՆԻՆԻ ՀԵՏ

1913 թ. հոկտեմբերին Լենինը Շահումյանին է ուղարկում Պորոնինոյի խորհրդակցության բանաձևն ազգային հարցի մասին և խնդրում է նրա կարծիքը:

1913 թ. նոյեմբերի 15-ին Շահումյանը նամակով Լենինին է հայտնում իր տեսակետը վերոհիշյալ բանաձևի մասին: Դժբախտաբար Շահումյանի այդ նամակը չի պահպանվել և դրա մասին կարելի է գաղափար կազմել 1913 թ. դեկտեմբերի 6-ին Շահումյանին ուղարկած Լենինի նամակից:

Լենինը գրել է հետևյալը. «Թանկագին բարեկամ: Շատ ուրախ եղա 15. 11 թվագիր Ձեր նամակի համար: Դուք պիտի խմանաք, որ իմ վիճակում մարդ անչափ գնահատում է Ռուսաստանի ընկերների, մանավանդ խոհուն և տվյալ հարցով զբաղվող ընկերների կարծիքները: Ձեր արագ արձագանքին այս պատճառով ինձ համար առանձնապես հաճելի էր: Ձգում ես քեզ ավելի պակաս կտրված, երբ այդպիսի նամակներ ես ստանում»: (Վ. Ի. Լենին, ԵՎ, հ. 48, էջ 288-292):

Այնուհետև Լենինը բերում է Շահումյանի նամակից առանձին հատվածներ, դրանց շուրջ կատարելով դիտողություններ: Ստորև ընթերցողին ներկայացվող հատվածներից երևում է յուրաքանչյուր հարցի վերաբերյալ Շահումյանի տեսակետը և Լենինի կատարած դիտողությունը:

Առաջին. Պետական լեզվի մասին: «Դուք, գրում է Լենինը, Ռուսաստանում պետական լեզվի կողմնակից եք»: Եվ բերելով Շահումյանի նամակից հետևյալ արտահայտությունը, թե ուղևոր լեզուն «անհրաժեշտ է. նա ունեցել է և ունենալու է առաջադիմական խոշոր նշանակություն», շարունակել է.

«Վճռակալորեն համաձայն չեմ: ... Ձեր փաստարկը ինձ բորբոքում էի հարմարում, ընդհակառակը: Անպիճեցի է, ուստաց լեզուն բազմաթիվ մանր ու հետամնաց ազգերի համար առաջադիմական նշանակություն է ունեցել: Բայց մի՞թե դուք չեք տեսնում, որ նա ավելի ևս մեծ չափով առաջադիմական նշանակություն կունենար, եթե Հարկադրանք չլիներ: Ինչ է, մի՞թե «պետական լեզուն» չի նշանակում մի մահակ, որը ետ է վանում ուստաց լեզվից»: (Վ. Ի. Լենին, նույն տեղը):

Ի միջի այլոց Լենինը պետական լեզվի մասին ավելի ընդարձակ անդրադարձել է 1914 թ. հունվարի 18-ին «Пролетарская правда» թերթում հրատարակված «Հարկավոր է արդյոք պարտադիր պետական լեզու» հոդվածում:

Լենինը նշում է, որ լիբերալները ընդունում են տարրական դպրոցներում մայրենի լեզվով դասավանդելու իրավունքը, բայց նրանք հետադիմականների հետ միանում են այն բանում, որ «պետք է լինի պարտադիր պետական լեզու»:

Իսկ լիբերալներն ու հետադիմականներն ինչո՞ւ են արդարացնում պարտադիր պետական լեզվի անհրաժեշտությունը: Պատասխանելով այս հարցին, Լենինը գրել է. «Անհարյուրակալիների «փաստարկները», իհարկե, կարճ են. բոլոր այլազգիներին անհրաժեշտ է փշե ձեռնոցներում պահել և թույլ չտալ, որ նրանք «ասանձազերծվեն»: Ռուսաստանը պետք է անբաժանելի լինի, և բոլոր ժողովուրդները պետք է ենթարկվեն վեփկոտուսական սկզբունքին, որով հետև իբր թե վեփկոտուսներն են եղել ուստական երկրի կառուցողներն ու համախմբողները: Այդ պատճառով կառավարող դասակարգի լեզուն պետք է լինի պարտադիր պետական լեզու»: (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, Հ. 24, էջ 357):

Այնուհետև Լենինը բերում է լիբերալների տեսակետը, որոնք նշում են, որ ուստաց լեզուն մեծ ու հզոր է և հարցնում են. «Մի՞թե դուք չեք ուզում, որ Ռուսաստանի ամեն մի ծայրամասում սպորոզ յուրաքանչյուր ոք իմանա այդ մեծ ու հզոր լեզուն: Մի՞թե դուք չեք տեսնում, որ ուստաց լեզուն կհարստացնի այլազգիների գրականությունը, նրանց հնարավորություն կտա հարուրդակից լինելու մեր մշակութային արժեքներին»:

Պատասխանելով լիբերալներին, Լենինն ընդգծում է, որ այդ ամենը ճիշտ է, որ Տուրգենևի, Տոլստոյի, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու լեզուն մեծ ու հզոր է: «Մենք» գրում է Լենինը,- ձեզից ավելի լավ ենք ցանկանում, որպեսզի Ռուսաստանում բնակվող անխտիր բոլոր ազգերի հարստահարված դասակարգերի միջև տեղծվի որքան հնարավոր է ավելի անբաժանելի հարողակցություն

և եղբայրական միասնություն: Եվ մենք կողմնակից ենք, որպեսզի Ռուսաստանում յուրաքանչյուր բնակիչ հնարավորություն ունենա սովորելու ուստաց մեծ լեզուն»: (Վ. Ի. Լենին, նույն տեղը, էջ 359):

Միաժամանակ Լենինը ընդգծում է. «Մենք չենք ցանկանում միայն մի բան՝ Հարկադրանքի տարրը: Մենք չենք ցանկանում դրախտ քչել մահակով: Որովհետև որքան էլ գեղեցիկ ֆրազներ դուք ասելու լինեք «մշակույթի» մասին,- պարտադիր պետական լեզուն կապված է Հարկադրանքի, ստիպողականության հետ: Մենք կարծում ենք, որ մեծ ու հզոր ուստաց լեզուն կարիք չի գգում, որպեսզի որևէ մեկն այն սովորի մահակի սպառնալիքի տակ»: (Վ. Ի. Լենին, նույն տեղը, էջ 359):

Իր տեսակետը հիմնավորելու համար Լենինը նկատի է ունենում, որ կապիտալիզմի զարգացումը, հասարակական կյանքի ամբողջ ընթացքը տալիս են դեպի «բոլոր ազգերի մերձեցում»: Այդ ամենի հետևանքով Ռուսաստանի մի ծայրից դեպի մյուսը շարժվում են հարյուր-հազարավոր մարդիկ, խտնվում է բնակչության ազգային կազմը: Եվ բոլոր նրանք, ովքեր իրենց կյանքի ու աշխատանքի պայմաններից ելնելով զգում են ուստաց լեզուն իմանալու անհրաժեշտությունը, «այն կսովորեն առանց մահակի»:

«Իսկ Հարկադրանքը,- շարունակում է Լենինը,- միայն մի բանի կհանգեցնի՝ այն կրժվարացնի մեծ ու հզոր ուստաց լեզվի մուտքը ուրիշ ազգային խմբերի մեջ, իսկ գլխավորը՝ կարի թշնամությունը, կստեղծի միլիոնավոր նոր բախումներ, կուժեղացնի գրգռումը, փոխադարձ անընթացությունը և այլն»:

Լենինը շեշտում է, որ դա հարկավոր չէ ոչ ուստ ժողովրդին, ոչ էլ ուստ դեմոկրատիային, որոնք ոչ մի ազգային ճնշում չեն ընդունում, թեկուզ «ի շահ ուստաց մշակույթի ու պետականության»:

«Ահա, թե ինչու»,- եզրափակում է Լենինը,- ուստական մարքսիստներն ստում են, թե անհրաժեշտաբար չպետք է լինի պարտադիր պետական լեզու, բնակչությանը պետք է սպահանջել դպրոցներով, որտեղ դասավանդումը բոլոր տեղական լեզուներով է և սահմանադրության մեջ հիմնական օրենք մտցնել, որն անվավեր է հռչակում ազգերից որևէ մեկի որևէ արտոնություն և ազգային փոքրամասնության իրավունքների որևէ խախտում...»: (Վ. Ի. Լենին, նույն տեղը, էջ 360):

Երկրորդ. Ավտոնոմիայի մասին: «Դուք» գրում է Լենինը,- դեմ եք ավտոնոմիային: Դուք միայն մարզային ավտոնոմիայի կողմնակից եք: Բնավ համաձայն չեմ»: Այնուհետև Լենինը հիշեցնում է էնգելսի պարզաբանումն այն մասին, որ կենտրոնացումը բոլորովին էլ չի բացառում տեղական «ազատու-

թյունները» և հարցնում է. «Ինչո՞ւ Լեհաստանին ավտոնոմիա, իսկ Կովկասին, Հարավին, Ուրալին՝ ոչ: Չէ՞ որ ավտոնոմիայի սահմաններն որոշողը կենտրոնական պառլամենտն է: Մենք, անպայման, դեմոկրատական կենտրոնացման կողմն ենք: Մենք դեմ ենք ֆեդերացիային»:

Այնուհետև Լենինը ծիծաղելի է համարում Ռուսաստանում ավտոնոմիայից վախենալը և ընդգծում է, թե գոյություն չունի ավտոնոմիայի վնասակար լինելը հաստատելու որևէ օրինակ:

Երրորդ. Ինքնորոշման իրավունքի մասին: Լենինը մեջբերում է Շահումյանի նամակի հետևյալ հատվածը. «Ինքնորոշման իրավունքը չի նշանակում միայն անջատման իրավունք: Դա նշանակում է նաև ֆեդերատիվ կապի իրավունք, ավտոնոմիայի իրավունք» և շարունակում. «Բացարձակապես համաձայն չեմ: Դա ֆեդերացիայի իրավունք չի նշանակում: Ֆեդերացիան հավասարների միություն է, միություն, որն ընդհանուր համաձայնություն է պահանջում: Իսկ ինչպե՞ս կարող է մի կողմը իրավունք ունենալ, որ իրեն հետ համաձայն լինի մյուս կողմը»: (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 48, էջ 288-292):

Լենինը սա համարում է արատրդ և ընդգծում է. «Մենք սկզբունքով դեմ ենք ֆեդերացիային, նա թուլացնում է տնտեսական կապը, նա մեկ պետություն համար պիտանի չէ»:

Այնուհետև Լենինն անդրադառնում է ավտոնոմիայի իրավունքին և գրում է. «Մենք ավտոնոմիայի կողմնակից ենք բոլոր մասերի համար, մենք անջատման իրավունքի կողմնակից ենք... Ավտոնոմիան դեմոկրատական պետություն կառուցելու մեր պլանն է: Անջատումը բնավ էլ մեր պլանը չէ: Մենք բնավ չենք քարոզում անջատում: Ընդհակառակը, մենք անջատման դեմ ենք: Բայց մենք անջատման իրավունքի կողմն ենք՝ նկատի ունենալով սեհարյուրակային վելիկոռուսական նացիոնալիզմը, որն այնպես է պղծել աբգային համակեցությունը, որ երբեմն ավելի մեծ կապ կառացվի ազատ անջատումից հետո»: (Վ. Ի. Լենին, նույն տեղը):

Չորրորդ. Ծրագրի փոփոխման մասին: Լենինը գրում է, որ համաձայն չե ազգային ծրագրի փոփոխմանը և շարունակում է. «Իուք բառերից եք վախենում: Նրանցից չպետք է վախենալ... մենք ծրագրի ողով, հետևողական դեմոկրատական ողով, մարքսիստական (հակաավստրիական) ողով ենք դրոշում, ճշգրտում, զարգացնում և ամրապնդում: Այդ պետք էր անել»: (Վ. Ի. Լենին, նույն տեղը):

Նամակի վերջում Լենինը գրում է, որ շատ է անհրաժեշտ ազգային հարցի մասին հանրամատչելի գրքույկը և Շահումյանին խնդրում է գրել այդ մասին:

1914 թ. մայիսի 30-ին Շահումյանն ընդարձակ նամակով պատասխան է ուղարկում Լենինին: Ահա, թե ինչ է գրում Շահումյանը. «Իուք արդեն գիտեք, որ ես սխալ եմ համարել (և համարում) Ռուսաստանը մի չարք ավտոնոմ մարզերի (Լեհաստան, Մարոուսիա, Կովկաս, Ուրալ և այլն) բաժանելու պահանջը: Իուք ինձ գրում էինք. «Ավտոնոմիան դեմոկրատական պետություն կառուցելու մեր պլանն է»: Ահա այդպիսի ձևակերպման ես համաձայն չեմ»:

«Այնուհետև, շարունակում է Շահումյանը, մի այլ կետ, որի մասին ես գրել էի Ձեզ և Ձեզանից ստացա մի թրուռ պատասխան ու մերադրանք արքայական պրոտական սոցիալիզմի մեջ, դա պետական լիզվիի փորձերով կետն էր: Պոտական լեզուն ես չեմ հակադրել տեղական լեզուներին: Ես պաշտպանում եմ հին ծրագրային ձևակերպումը՝ պետական լեզվի հետ միասին նաև տեղական լեզուների ընդունումը բոլոր պետական և այլ հիմնարկներում»:

Շարունակելով ստարկել Լենինին, Շահումյանը նրան հարցնում է. «Բայց ինչո՞ւ դուք չեք ընդունում, որ մասը ազգերը, ինչպես հայերը, վրացիները, թաթարները, լեռնականները (ես թվարկում եմ կովկասյան ժողովուրդներին), կարող են հոծարական որոշել, որ Կովկասում նրանց փոխարարձ հարաբերությունների համար պետական հիմնարկներում ընդհանուր լեզու ճանաչվի ուսաց լեզուն: Եվ ինչո՞ւ մենք չպետք է այդ առաջարկենք, հանձնարարենք նրանց»:

Շահումյանը ելնում էր նրանից, որ Լեհաստանում, որտեղ մեծապես ապրում են լեհերը, չեն կամենա օգտագործել ուսաց լեզուն: Բայց ուրիշ է իրավիճակը, օրինակ Կովկասում, որտեղ ապրում են բազմաթիվ մանր ազգություններ, որոնք ոչ միայն «դեմ չեն լինի ուսերենին՝ որպես համապետական լեզվի, այլ իրենք անհրաժեշտ կհամարեն այն»:

Այնուհետև Շահումյանը բարեկամաբար կշտամբում է Լենինին այն բանի համար, որ հանդես է գալիս «հարեկ-վելիկոռուսի դերում» և մեծահոգաբար հրաժարվում է իր ազգի ու իր լեզվի համար արտոնություններից»: (Մո. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 342-343):

Առաջ անցնելով հարկ եմ համարում նշել, որ Շահումյանը Լենինի 1913 թ. դեկտեմբերի 6-ին գրած նամակը իր պարզաբանումներով առաջին անգամ հրատարակել է «Бакинский рабочий» թերթում 1918 թ. մարտի 3-ին:

Շահումյանը նախ հիշեցնում է Պորոնինոյի խորհրդակցությունում ընդունված ազգային հարցի մասին բանաձևը, որտեղ «նախկին հարցադրման համեմատությամբ ինչ-որ մի նոր բան մատնանշվում էր, որ անհրաժեշտ է

Ռուսաստանի խոշոր մարզերին ու ազգություններին ավտոնոմիա տալ մարզային ինքնավարության փոխարեն, որը մինչ այդ Հանձնարարում էր մեր կուսակցության ծրագիրը»:

«Բանաձևը,- շարունակում էր Շահումյանը,-մատնանշում էր նաև պարտադիր պետական լեզվի անկարևորությունը և Հանձնարարում էր կուսակցական կենտրոններին առանձին ազգային ծրագրի նախագիծ մշակել ու ներկայացնել մոտակա կուսակցական Համագումարին»:

Այնուհետև Շահումյանը տեղեկացնում է, որ տվյալ Հարցի մասին իր կարծիքը Հայտնել է Լենինին և նրանից առաջել է 1913 թ. դեկտեմբերի 6-ի նամակը, որտեղ Շահումյանի «նամակի որոշ տեղեր» քննարկատվության է ենթարկվում:

«Կարևոր չէ այն,- գրում է Շահումյանը,- որ որոշ կետեր, որոնց առթիվ նա առարկում է, այնքան էլ ճիշտ չէ հասկացվել ընկեր Լենինի կողմից: Սեր կողմից տպագրվող նամակը մեծ նշանակություն ունի Լենինի՝ որպես ազգային Հարցի վերաբերյալ Հայցքների որոշակի և պարզ արտահայտություն»:

Այնուհետև իր պարզաբանման մեջ Շահումյանն ընդգծում է երկու Հանգամանք.

Առաջին. Լենինի նամակից պարզ կլինի, որ «մենք չենք Հանձնարարում, չենք քարոզում անջատում, այլ ընդունում ենք միայն անջատման իրավունքը որպես տարրական դեմոկրատական իրավունք, որը թույլ չի տալիս բռնություն այն մասը ազգերի նկատմամբ, որոնք ճնշվում էին ցարական կառավարության և վեդիկոտուսական նացիոնալիստների կողմից»:

Երկրորդ. Լենինի նամակից պետք է հասկանալի լինի, որ «մենք կողմակից ենք լինելու անջատման և անջատումը պաշտպանելու ենք այն դեպքերում, երբ այդ թեղադրում են աշխատավոր մասսաների շահերը, և երբ պահանջում են իրենք՝ ազգի մեծամասնությունը կազմող մասսաները»:

Շահումյանը բանվորներին Հանձնարարում էր «խոր ուշադրություն» կարդալ Լենինի նամակը, նկատի ունենալով, որ «ազգային Հարցը մեր Հեղափոխության կարևորագույն Հարցերից մեկն է»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 161-162):

Լենինը բարձր էր գնահատում Շահումյանին, նրան համարելով ազգային Հարցի լավագույն գիտակներից մեկը: Այդ մասին է վկայում ազգային Հարցի շուրջ նրանց նամակագրությունը: Այստեղ հարկ եմ համարում նշել հետևյալը:

Բողջեկյան խմբակցությունը պետք է Պետական դռնայի քննարկմանը ներկայացնեն ազգերի իրավահավասարության և ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին օրինագիծ:

1914 թ. մայիսի 19-ին Լենինը Շահումյանին գրած նամակում Հայտնում է այդ մասին և առաջարկում է մասնակցել օրինագծի կազմելուն: «Ինձ թվում է,- գրել է Լենինը,- որ այդ ճանապարհով կարելի կլինի հանրամատչելիորեն պարզաբանել «կույտուղ-ազգային ավտոնոմիայի» հիմարությունը և վերջնականապես սպանել այդ հիմարության կողմնակիցներին»: (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 48, էջ 358-361):

1914 թ. մայիսի 30-ին Լենինին ուղարկած նամակում Շահումյանը իր համաձայնությունն է Հայտնում օրինագծի կազմելուն մասնակցելու մասին, նշելով, որ այդ օրինագիծը «մի սաստիկ հարված կհասցնի «ազգային-կույտուղական ավտոնոմիայի» կողմնակիցներին»: Նա միաժամանակ ընդգծում էր, որ օրինագծի շուրջ ծավալվող բանավեճի ընթացքում «կհանդուրձվի պարզաբանել ազգային-կույտուղական ավտոնոմիայի ամբողջ անհեթեթությունն ու նացիոնալիստական բնույթը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 342):

Իր նամակում Շահումյանն անդրադառնում է դեռևս 1904 թ. Կառուցվող արտահայտած մտքին, ըստ որի Ռուսաստանի ծայրամասերում ուժեղացող անջատողական տրամադրությունները կհասցնեն նրան, որ Ռուսաստանը կդառնա Հյուսիս-Ամերիկյան Միացյալ Նահանգների նման ֆեդերատիվ հիմունքներով կառուցված երկիր»:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ Կառուցվող այդ մտքին կառչած «մեր հակառակորդ ֆեդերալիստները» դաշնակցականներին ու վրացական ֆեդերալիստներին «մենք պատասխանում էինք, որ Ռուսաստանում առանձին ազգությունների ժողովրդական մասսաների մեջ ամենևին էլ չկան անջատողական ձգտումներ, որ նացիոնալիզմն ու սեպարատիզմը մանրրործական մտավորականների ու լրագրողների գործն է»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 345):

Ազգային փոխհարաբերությունների տեսակետից կապիտալիզմի զարգացման պայմաններում առաջ է եկել հետևյալ երկու հակասական միտումը.

Առաջին. Ազգային կյանքի և ազգային շարժումների զարթոնքը, ինչպես նաև ազգային պետությունների ստեղծումը:

Երկրորդ. Ազգերի միջև ամեն տեսակ հարաբերությունների զարգացումը, ինչպես նաև տնտեսական կյանքի, քաղաքականություն, գիտության և այլնի ինտերնացիոնալ միասնության ստեղծումը:

Առաջին միտումը գերակշռում էր կապիտալիզմի զարգացման սկզբնական շրջանում, երբ բուրժուազիան ձգտում էր պետականորեն համախմբել միևնույն իրավիճակ խոտող բնակչության տարածքները: Այս կերպ առաջացան բուրժուական ազգային պետությունները:

Կապիտալիստական զարգացման բարձրագույն աստիճանն Հանդիսացող իմպերիալիզմի ժամանակ ազգային հարցի երկրորդ միտումն արտահայտվում է այն բանում, երբ առաջանում է ժողովուրդների միջև տնտեսական մերձեցման, ազգերի տնտեսական կյանքին և նրանց միջև հարաբերություններին խանգարող արգելքների վերացման ձգտում: Դա տանում է դեպի բազմազգ պետությունների ստեղծում:

Կապիտալիզմ-իմպերիալիզմի ամբողջ պատմությունը ցույց է տալիս, որ վերոհիշյալ միտումները Հանդես են գալիս որպես անհաշտ հակասություն: Որովհետև իմպերիալիզմը իր գոյությունը պահպանում է միայն չահազործման ուժեղացմամբ ու գաղութների ճնշմամբ, ազգերը բռնի զավթումների միջոցով «մերձեցնելով»:

Այդ ամենին հակառակ, վերոհիշյալ երկու միտումները իմպերիալիզմի շահագործումից ժողովուրդներին ազատագրելու երկու կողմերն են: Իսկ դա նշանակում է միայն փոխադարձ վստահության և կամավոր համաձայնության հիման վրա ժողովուրդների համախմբում միասնական համաշխարհային տնտեսության մեջ: Ընդ որում ժողովուրդների կամավոր միավորումը հնարավոր է միայն իմպերիալիզմից գաղութների անջատման, դրանք ինքնուրույն պետությունների վերածելու միջոցով:

ԲԱՆԱՎԵՃ ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՀԵՏ

Կովկասում գործող «յիկվիդատորները», 1912 թ. Վիեննայի կոնֆերանսից հետո սկսել էին տեսականորեն հիմնավորել և պնդել, որ «կուլտուրազգային ավտոնոմիայի պահանջը» չի հակասում ազգային հարցի մասին ՌՄԻԲԿ ծրագրին:

Հայ իրականության մեջ նրանց տեսակետը եռանդով պաշտպանում էր Դ. Անանուհը 1913 թ. փետրվար-մարտ ամիսներին դաշնակցության «Նոր հոսանք» ամսագրում հրատարակած «Ազգային հարցը և դեմոկրատիան» հոդվածաչափում:

Դ. Անանուհը իր հոդվածաչափում անդրադառնալով Շահումյանի 1906 թ. գրած «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» աշխատությանը, մեղադրում է նրան, պնդելով, թե «անհոգ վերաբերմունք» է դրսևորել ազգային հարցը մշակելու գործում:

Շահումյանի վերոհիշյալ հոդվածի դեմ Հանդես է եկել նաև դաշնակցության տեսաբան Մ. Վարանդյանը, որը 1910 թ. ժնևում տպագրված «Հրասանքներ» գրքում նկատի ունենալով Շահումյանին, նշում է, թե Հայ սոցիալ-

դեմոկրատները «խալառ «ազատագրվել են» իրենց ազգային կերպարանքից, զուտ հերվիլյական նախանձախնդրություններով... հրաժարվեք են ասել «ազգայնական ֆեյտիչիզմին», «նախապաշարումներին»:

«Եւ դա,- չարունակում է Վարանդյանը,- միանգամայն հետևողական է, քանի որ մեր «մարքսիստ» Հայրենակիցները իրենց մի գիտուն թէօրեակիր պի բերանով, մի տպած շարադրության մեջ, մատուցել են Հայ աշխարհին հետևեալ գոհարիկները ազգայնական կնճոխ շուրջը»:

Վարանդյանը իր ընթերցողներին է ներկայացնում Շահումյանի վերոհիշյալ աշխատությանից հետևյալ հատվածը. «Մենք գիտենք, որ ազգութիւնը, որպէս հասարակական կատէգորիա, պատմական անցողական մի երևոյթ է և ոչ «բնական», «յստիտենական», իր կողմից պիեաջնելով հետևյալը. «Եւ ճգնում է այրտեղ ոչնչացնել Հայ գիտուն սօց-դեմոկրատը ազգային գաղափար, ազգային ոգի և այլ իրողութիւնները, որոնք նրա կարծիքով լուր «բուրժուական», «միստիկական», «իդեալական» զատանցանքներ են, «ֆեյտիչներ»»: Այդպէս է վկայում նրա «պատմական-մատերիալիստական անալիզը»:

«Եւ, հետևապէս,- չարունակում է Վարանդյանը,- ով որ չի դաւանում այդ համոզումը, ով որ չի համարում ազգային գաղափարը ֆեյտիչ ու զատանցանք, նա չի կարող սօցիալիստ լինել, նա բուրժուա է, նացիոնալիստ, մետաֆիզիք և միստիկ»:

«Այստեղից,- եզրակացնում է Վարանդյանը,- Հայ սօցիալ-դեմոկրատների անտարբերութիւնը ազգային հարցում: Այդտեղից նրանց-բացարձակ ապազգայնացումը, որ սահմանակցում է հակազգայնութեան հետ և որ կազմում է մի բացատրութիւն սօցիալիստական աշխարհում»:

Վարանդյանը, ի դեմս Շահումյանի, Հայ սօցիալ-դեմոկրատներին մեղադրում է «ազգայնական մտահոգություններից» ազատվելու, «կոսմոպոլիտիզմի տիեզերապաշտ խոհերի մեջ լուծելու» արդյունքում «անիական ազգի բարբոթեան հոգար» կորցնելու, «բացի Հայ ազգից» բոլոր ազգերին սիրելու, «բացի Հայ ժողովրդի դատից» բոլոր ժողովուրդների դատը պաշտպանելու համար:

Եվ իբրև այս մեղադրանքների ապացույց Վարանդյանը գրում է թե 1903-1907 թթ. , երբ «մարքսիզմի ու սօցիալիզմի անունով ճատող, «ազգային ինքնորոշման» բառերը որոճող Հայ սօցիալ-դեմոկրատները... ոչ միայն ձեռնպահ մնացին Հայ ժողովրդային գուլումների ընթացքում, ոչ միայն չը կարողացան ու չը կամեցան որևէ ազդու դիմադրություն կազմակերպել Պի-

վհների, ու Գոլցիցիների, Նակաշիձենների և Ալֆտանների շղթայագերծած Հայկական ու Հակայեղափոխական պոզիտիվների դէմ, այլև միացած ուսու մ վրացական սոցիալ-դեմոկրատիայի պրոֆէսիոնալ գրպարտիզներին, անուղ դակի միացած բռնապետական դահիճների Հետ՝ ամէն բան արին, ամեն նե-րելի ու աններելի միջոց ի գործ դրին, որպէսզի ջրատեն, վարկաբեկեն, անդա-մալուծեն միակ ինքնապաշտպան կազմակերպութիւնը՝ «Դաշնակցութիւ-նը»: (Միջառէջ Վարանդեան, Հոսանքներ, Ժնև, 1910, էջ 186-189):

Սույն աշխատութեան Համար նախատեսված ծավալը ինձ թույլ չի տալիս ավելի ծավալուն անդրադառնալ Վարանդեանի գրքում Շահումյանի գլխա-վորութեամբ գործող Հայ սոցիալ-դեմոկրատների Հասցին ուղղված, մերձ ասած, մերադրանքներին: Ուստի բավարարվելով ասվածով, ընթերցողին հրավիրում եմ նորից ուշադրութեան դարձնել սույն աշխատութեան մեջ ներ-կայացված 1903-1907 թթ. Շահումյանի գործունեութեանը և Համոզվել, թե Վարանդեանը ինչքան է սխալվում իրողութեանը ներկայացնելով գլխի վրա շուռ տված:

«Տիեզերական թուխակը» Հորվածում, ինչպես նշել է Շահումյանը, անդ-րադարձել է Վարանդեանի «Հոսանքներ» գրքի առաջաբանին, խոստանա-լով մի շարք Հորվածներով քննարկել «Հոսանքների» տեսական «արժեքը»: Բայց 1911 թ. սեպտեմբերի 30-ին ձերբակալվելու պատճառով Շահումյանը չի գրել Հորվածի շարունակութեանը:

1913 թ. Ասորիստանում արտաքսված Շահումյանը գրել է իր «Ազգա-յին-կուլտուրական ավտոնոմիայի մասին» աշխատութեանը, որի տպագրու-թեանը Հաջողվել է իրականացնել 1914 թ. Թիֆլիսում «Այաքս» կոնսպիրա-տիվ ստորագրութեամբ: Կոնսպիրացիայի նպատակով Հրատարակութեան տեղը նշվել էր Թեհրանը:

Այս մասին Շահումյանը 1914 թ. ապրիլի 17-ին Լենինին ուղարկած նա-մակում գրել է Հետևյալը. «Ազգային Հարցի վերաբերյալ գրքույկը սխալ է գրել, բայց չափարտեցի, մասամբ Ձեզ Հետ տարածայնելու պատճառով... Խժ գլխավորապես այն պատճառով, որ Հարկավոր էր Հայերեն լեզվով գրքույկ գրել «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» մասին: Ան-ի ելույթից հե-տո այդ պահանջը Կովկասում դարձել է չափազանց ժողովրդական: Գրքույ-կը (քննադատական) վաղուց արդեն գրված է, և շուտով, Հավանաբար, կհանձնեն տպագրութեան»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երկրորդ, էջ 329-330):

Աշխատութեան առաջաբանում Շահումյանը Հայտնում է, որ դա գրվել է

որպես պատասխան Դ. Անանուհի Հորվածների, որոնք լույս էին տեսել «Նոր Հոսանք» ամսագրի 1913 թ. 1-2-րդ համարներում:

Շահումյանը նշում է, որ «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» մա-սին Հարցի բազմակողմանի քննութեանը «մեծ կարևորութեան» ունի Հայ դեմոկրատիայի Համար: Բոլոր կուսակցութեանները՝ կղերական, բուրժուա-կան և այլն, կողմնակից են «ազգային-կուլտուրական ավտոնոմիային»: Նրանք, բոլորը, նշում է Շահումյանը, «Հայոց ազգի փրկութեանը տեսնում են այդ ավտոնոմիայի մեջ»:

Հենց սկզբից Շահումյանը Դ. Անանուհի Հորվածը գնահատում է որպես «մի անհաջող փորձ՝ հիմնավորելու «ազգային-կուլտուրական ավտոնոմիա-յի» պահանջը մարքսիստական տեսակետից»: Այլ խոսքով, ինչպես Պեխա-նովն է նկատել՝ սոցիալիզմը Հարմարեցնել նացիոնալիզմին:

Շահումյանը Հատկապես նշում է «Մշակ» թերթի աշխատողներից Բախ-չի Իշխանյանին, որի մոտ «առանձնապես տգեղ ու այլանդակ ձևեր է ընդու-նել մարքսիզմի շահագործումը»:

Նկատի ունենալով բոլոր նրանց, ովքեր «շահագործում ու ապականում են» Մարքսի ուսմունքը, Շահումյանը խնդիր է դնում «Հարվածել ու Հարա-ծել» նրանց հանուն գրական բարբերի մաքրութեան, հանուն «Բեկինակու, Չեռնիչևակու մեզ թողած գրական ավանդների»:

«Գրականութեանը,- ընդգծում է Շահումյանը,- մի տաճար է, ուր կարելի է մտնել միայն մաքուր խղճով և ազնիվ միտումներով: Իսկ երբ մարդիկ մո-տենում են այդ տաճարին մանր փառասիրական տենչերով, շահագիտական նպատակներով և խարեբայական հակումներով,- դա ամենամեծ ոճրագոր-ծութեանն է, որ կատարվում է ժողովրդի դեմ»:

Միաժամանակ Շահումյանը Բ. Իշխանյանի շարքում չի դասում Դ. Անա-նուհին և նշում է, որ նրա Հետ մղում է սկզբունքային վեճ՝ «ցույց տալու հա-մար, որ նա իր աշխարհայացքով և իր առաջադրած ազգային ծրագրով հե-ռու է մարքսիզմից, որ նա, ըստ ամենայնի, մի սուկ նացիոնալիստ է»:

«Սենք,- ընդգծում է Շահումյանը,- ուղում ենք ցույց տալ, որ «ազգային-կուլտուրական ավտոնոմիան» մի փաստակար ու հետադիմական պահանջ է»: Նկատի ունենալով, որ Դ. Անանուհի իր Հորվածը վերնագրել է «Ազգա-յին Հարցը և դեմոկրատիան», Շահումյանը տալիս է Հետևյալ Հարցը՝ ո՞ր դե-մոկրատիայի մասին է խոսքը:

Կա երկու դեմոկրատիա, մեկը բուրժուական դեմոկրատիան է, մյուսը՝ բանվորական դեմոկրատիան:

Շահումյանը տալիս է այդ երկու դեմոկրատիաների մասին իր բացատրությունը, նշելով, որ բուրժուական դեմոկրատիան ձգտում է ժողովրդապետության սկզբունքները կիրառել միայն քաղաքական կարգերում, իսկ սոցիալական ինդիվիդուալիզմը պահպանողական է և կանգնած է «մասնավոր սեփականությունից և վարձու աշխատանքի հողի վրա»:

Բուրժուական դեմոկրատիայի բարձրագույն իդեալը դեմոկրատական Հանրապետությունն է, որը «ցանկանում է և կարող է իրագործել իր ազգության կամ պետության սահմաններում»:

Ահա, այս ամենի պատճառով բուրժուական դեմոկրատը, ըստ Շահումյանի տեսակետի, «ազգային բնույթ ունի. նա միշտ, ավելի կամ պակաս չարժի, հակված է դեպի նացիոնալիզմը»:

Այնուհետև Շահումյանն անդրադարձնում է բանվորական դեմոկրատիային և հիշեցնում է Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստից» հետևյալը. «Առնվազն բոլոր քաղաքակիրթ երկրների ջանքերի միացումն առաջին պայմանն է պրոլետարիատի ազատագրության համար»: (Վ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստ, Եր., 1973, էջ 79):

Սրանից էլ երևելով Շահումյանը եզրակացնում է. «Այդքանը բավական է հասկանալու համար, որ բանվորական դեմոկրատիան ամենից առաջ միջազգային է՝ այդ բառի ամենաընդարձակ մտրով»:

Շահումյանը նշում է, որ եթե Դ. Անանունը խոսում է բուրժուական դեմոկրատիայի անունից, ապա նրա հետ հարկավոր չէ վիճել: Բայց քանի որ Դ. Անանունը հավակնում է խոսել բանվորական դեմոկրատիայի անունից, ուստի պետք է ասել, որ նա սխալվում է, որ Դ. Անանունի «ամբողջ մտածելա կերպն ազգային հարցում», նրա առաջարկած «Համադարմանը» այդ հարցը լուծելու համար՝ «հակասում են բանվորական դեմոկրատիայի սկզբունքներին, նրա աշխարհայացքին, նրա գծած ճանապարհին»:

Ըստ Շահումյանի, մարքսիզմի համար «գոյություն չունի մի ազգային հարց, նա ճանաչում է ազգային հարցեր» և չունի «Համադարման» ազգային հարցի համար: Դա նշանակում է, որ մարքսիզմն ազգային հարցը լուծում է ամեն մի առանձին դեպքում իր «ուրույն և կոնկրետ պատմական արտահայտությունների մեջ և ոչ «ընդհանրապես», անկախ ժամանակի և տեղի պայմաններից»:

Շահումյանը մեջբերելով Դ. Անանունի հոդվածի վերջին խոսքերը. «Վերջացնենք: Ազգային հարցն անկարելի է անգլոսոսնալ: Նա միշտ պետք է

զգացնել տա իրեն: Կապիտալիստական Հասարակարգի մեջ նրա լուծումը պետք է փնտրել «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» մեջ», շարադրում է իր հետևյալ նկատառումները:

Նախ, Շահումյանը համաձայնվում է Դ. Անանունի արտահայտած առաջին մտքի հետ, որ «ազգային հարցն անկարելի է անգլոսոսնալ»: Բայց և մի ածանանակ նշում է, որ ինչքան քիչ «զգացնել տա» իրեն ազգային հարցը, այնքան ավելի լավ:

Այնուհետև անդրադառնալով Դ. Անանունի արտահայտած երկրորդ մտքին, Շահումյանը նշում է, որ Դ. Անանունը «ուզում է «լուծել» ազգային հարցը ոչ թե մի որևէ ազգի, օրինակ՝ հայերիս համար, ոչ նույնիսկ մի որևէ պետության, օրինակ՝ Ռուսաստանի համար, այլև «ընդհանրապես»: Նա մի ընդհանուր դեդալատուն է գրում ամբողջ կապիտալիստական աշխարհի համար»:

Անդրադառնալով նացիոնալիզմի էությունն ու պատմությանը, Շահումյանը նշում է, որ «նացիոնալիզմի բնորոշ առանձնահատկությունը կայանում է հենց նրանում, որ նա ցանկացել է միշտ ազգային հարցը լուծել ընդհանրապես, անկախ իր առանձին կոնկրետ արտահայտությունից»:

«Նացիոնալիզմի հիմնական սկզբունքն այն է՝ շարունակում է Շահումյանը՝ թե ազգությունը մի անհատականություն է, որը հարկավոր է միշտ և ամեն կերպ, ինչ գնով էլ լինի, պահպանել և զարգացնել, որ ազգությունը հասարակական-քաղաքական կենսակցության բնական ու հավիտենական ձևն է, որ ազգությունը միշտ իբրև ամբողջություն... պետք է տնօրինել իր հասարակական կյանքը»:

Սրանից էլ երևելով, մատնանշում է Շահումյանը, հետևողական նացիոնալիզմը հայտարարում էր. «Ամեն ազգություն պետք է պետություն լինի»: Նկատի ունենալով, որ այս նշանաբանը միշտ հնչել է եվրոպական բոլոր հեղափոխությունների ժամանակ, Շահումյանը կատարում է պատմական էքս-մանակ ծնունդ առած բուրժուական նացիոնալիզմը իր վերոհիշյալ նշանաբանով, ունեցել է որոշ դրական պատմական նշանակություն, որը հետագայում դրսևորել է իր հետադիմական բնավորությունը:

Սակայն կապիտալիստական մրցության և նվաճումների համար հիմնված ազգային պետությունը հենց այդ մրցության ու նվաճումների քաղաքականության արդյունքում ու ժամանակի ընթացքում իր մեջ է առել օտար ազգություններ և դարձել իր «կատարյալ հակադաս»:

Այս նվաճողական քաղաքականությունը, կապիտալիզմի զարգացումն անկարելի են դարձնում մաքուր ազգային սահմանափակումները, որին, ինչպես նշում է Շահումյանը, նացիոնալիզմը պետք է ստիպված գիջեր: Նացիոնալիզմը «էր պահանջում այլևս, որ մի քանի ազգերից բաղկացած պետությունների մեջ յուրաքանչյուր ազգ անջատվի և առանձին պետություն դառնա»:

Դրանից էլ ելնելով բուրժուական կուսակցություններն այլևս չէին պահանջում, որ յուրաքանչյուր ազգ պետք է ունենա պետություն: Նրանք, ինչպես նշում է Շահումյանը, «զոհանում էին այժմ պահանջելով, որ ազգերը պետության ներսում սահմանազատվեն և կապվեն միմյանց հետ ֆեդերատիվ կապերով»:

Եվ «Դեպի ֆեդերացիա»՝ նացիոնալիստների դեկոր այժմ դառնում է ազգային Հարցի «նրանց նոր «ընդհանուր», «սկզբունքային» լուծումը»:

Այս ամենից հետո նացիոնալիզմը մի աստիճան էլ է գիջում, «եբբ նույն տնտեսական էվոլյուցիայի շնորհիվ, ֆեդերալիստների կողքին երևան են գալիս ավտոնոմիստներ: «Սրանք էլ, չարունակում է Շահումյանը, առաջադրում են, իբրև ընդհանուր, վերացական սկզբունք, որ խստը պետությունների մեջ ամեն ազգություն ավտոնոմ լինի իր ազգային-քաղաքական կյանքում»:

Շահումյանը նկատում է, որ տնտեսական զարգացման արդյունքում անհեթեթություն են դարձել ամեն տեսակ «սկզբունքային» սեպարատիզմ, ֆեդերալիզմ ու ավտոնոմիզմ: «Ազգերը, գրում է նա, այնքան են խառնվել իրար, որ չկան այլևս ազգային տարածքներ, որոնց սահմաններում կարելի լիներ հեշտությամբ հիմնել ազգային ֆեդերատիվ կամ ավտոնոմ մարմիններ: Իսկ տարածքը ներկայումս ինքնուրույն քաղաքական կյանքի անհրաժեշտ հիմքն է: ...Թվում է, թե ազգային տարածքից զրկվելուց հետո, այսպես ասած՝ «հողը» իր ուղբի տակ կորցնելուց հետո, նացիոնալիզմը պետք է հրգին ավանդեր»:

«Բայց, չարունակում է Շահումյանը, նացիոնալիզմն այսօր ազդարարում է Հայրապետին, եթե անկարելի է, որ ամեն մի ազգ ինքնուրույն կերպով «ազգավին» տնօրինե իր ամբողջ հասարակական-քաղաքական կյանքը, հարկավոր է փրկել գոնե այն, ինչ որ կարելի է: Եթե չկա այլևս ազգային տարածք, կա ազգային լեզու, «ազգային մշակույթ»: Եվ առաջ է գալիս մի նոր «ընդհանուր» և «սկզբունքային» լուծումն ազգային Հարցի: Ամեն տեղ, ասում է նոր նացիոնալիզմը, ուր կողք-կողքի, միևնույն պետական սահման

ներում ապրում են մի քանի ազգություններ, ամեն ազգություն պետք է ավտոնոմ լինի ազգային-կուլտուրական գործերում»:

Վերոհիշյալ բոլոր միջոցները մարքսիստի համար հավասար չափով ընդունելի են և անընդունելի: Դա կախված է ժամանակի և տեղի պայմաններից: Կարող են լինել այնպիսի դեպքեր, երբ մարքսիստներն արտահայտվեն որևէ ազգության կատարյալ անջատման օգտին, կամ կողմնակից լինեն ֆեդերացիայի ու ավտոնոմիայի: Կարող են լինել նաև այնպիսի դեպքեր, երբ մարքսիստները ստիպված հաշտվեն «նույնիսկ «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» պահանջի հետ՝ մի որևէ ազգության վերաբերմամբ»:

Դրա հետ միասին, ինչպես նշում է Շահումյանը, մարքսիստների համար զոյություն չունի այն սկզբունքը, որի համաձայն «ամեն ազգություն պետք է պետություն լինի, կամ թե՛ ամեն ազգություն «ազգավին» պետք է վճռել իր ազգային գործերը»:

Այսօրից էլ ելնելով Շահումյանն ընդգծում է. «Մենք ունենք միայն մի հատ ընդհանուր և պարտադիր սկզբունք, մի հիմնական կշռաչափ. դա մարդկության տնտեսական զարգացման և առաջադիմության շահերն են, որոնց հետ ներկայումս ներքին, անբաժանելի կապով կապված են բանվոր դասակարգի միջազգային ազատագրական շարժման շահերը»:

Իր տեսակետը հիմնավորելու համար Շահումյանը բերում է Լեհաստանի օրինակը: 1860-ական թվականներին Մարքսը կողմնակից էր ցարական Ռուսաստանից Լեհաստանի անջատմանը, այն համարելով ծանր հարված դեպպոտիզմին: Բայց իրավիճակը բոլորովին այլ էր 1905 թվականին, երբ նաև ինչ մարքսիստները դեմ էին Ռուսաստանից Լեհաստանի անջատմանը, որովհետև դա կնշանակեր ջրատեղի համատեղական դեմոկրատիայի ուժերը և ընդհանրապես միասնել ազատության գործին:

Միաժամանակ Շահումյանը կողմ է արտահայտվում Բալկանյան ազգերի ֆեդերացիայի զարգացմանը: Առաջին անգամ Բալկանյան ֆեդերացիայի լողունըն առաջ էին քաշել Բալկանյան երկրների գիտակից բանվորները: ՌՄԴԿ-ն, ելնելով միջազգային բանվորական ազատագրական շարժման շահերից, պաշտպանում էր այդ լողունը, նկատի ունենալով, որ այդ ֆեդերացիայի ստեղծումով Հնարավոր կլիներ Բալկաններում դեմոկրատական հիմունքներով լուծել ազգային Հարցը:

Կողմ լինելով Բալկանյան ֆեդերացիային, Շահումյանը գտնում էր, որ միասակար է միացյալ Ռուսաստանի բաժանումը մի քանի ֆեդերատիվ մարմինների և վճռականորեն ֆեդերացիային դեմ էր արտահայտվում:

Առաջ անցնելով կամենում եմ ընթերցողի ուշադրությունը բեռնել Հետևյալ Հանգամանքի վրա: Մինչև 1917 թ. բոլշևիկները դեմ էին պետության ֆեդերատիվ կառուցվածքին: Հետագայում, Հաչվի առնելով պատմական կոնկրետ պայմաններից առաջացած ազգերի միավորման ուղիների բարդությունները, նրանք վերանայեցին իրենց տեսակետը ֆեդերացիայի նկատմամբ և ֆեդերացիան ընդունեցին որպես սովետական սոցիալիստական Հանրապետությունների պետական կառուցման ձև:

Շահույթան անդրադառնում է նաև այնպիսի նուրբ Հարցի, ինչպիսին է ազգերի ձուլումը: Ելնելով միջազգային բանվորական շարժման չահերից, նա անհրաժեշտ էր Համարում որքան Հնարավոր է ազգերի սերտ մերձեցումը և միությունը: Միաժամանակ նա տեսնում էր, որ «տնտեսական զարգացման տարերային պրոցեսը բնական անհրաժեշտությամբ ավելի ու ավելի է մոտեցնում իրար առանձին ազգերը»:

Այդ ամենի պատճառից ելնելով Շահույթանը գտնում էր, որ ազգերի անջատման պահանջը կարելի է պաշտպանել միայն բացառիկ դեպքերում: «Ավելի Հաճախ,- գրում է նա,- մենք կողմնակից ենք ազգերի մերձեցման և միության: Եվ այդ երբեմն նույնիսկ այն դեպքերում, երբ մերձեցումը զուցե սպառնում է մի որևէ ազգության՝ ձուլվելու մյուս ազգությունների Հետ»:

Եվ նկատի ունենալով, որ Դ. Անանուներ կարող է իրեն մեղադրել որպես ազգերի ասիմիլացիայի կողմնակից, Շահույթանը գրում է, որ «մենք ոչինչ չունենք նույնիսկ ասիմիլացիայի դեմ, եթե այդ վիճակված է այս կամ այն փոքրիկ ազգության, և եթե այդ կատարվում է, իհարկե, ոչ թե բռնությամբ, այլ ազատ, բնական զարգացման ճանապարհով»:

Այնուհետև Շահույթան անդրադառնում է այն Հարցին, թե ինչ է Հարկանում Դ. Անանուներ՝ դնելով «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» պահանջը: Շահույթանը Հիշեցնում է, որ Դ. Անանուներ վիճակագրական թվեր բերելով ապացուցում է, թե Հայերը, վրացիները, թուրքերը, լեռնականներն այնքան են խառնված իրար, որ «անկարելի է բաժանել Կովկասն ազգային տարածքների, որպեսզի Հնարավոր լիներ տալ նրանց տարածքային ավտոնոմիա կամ ֆեդերացիա և այդ ձևով լուծել ազգային Հարցը Կովկասում»:

Շահույթանը Հետևյալ ընդարձակ մեջբերումն է կատարում Դ. Անանուներից. «Մերոնն ի՞նչ անեղ, որ մտաբով ազգության գործոն անդամ՝ չզրկվենք մյուս բարիքներից: Ինչպե՞ս անեղ, որ չառհանձնախաբով Հայի բնակության վայրը և միևնույն ժամանակ էլ չիտրվի նրա ազգային կապը» (ընդգծումը Շահույթանինն է):

Իր առաջադրած Հարցին Դ. Անանուներ տալիս է Հետևյալ պատասխանը. «Այդ նպատակներին Հասնելու Հասնար ազգային միություն Հիմք պիտի ընդունեղ ոչ թե տարածքի անջատումը, այլ ազգային պատմականության գիտակցությունը: (ընդգծումը Դ. Անանունինն է): Դա ունի այն առավելությունը, որ ազգության Հատկացրած գործերի բնագավառում Հնարավորություն է տալիս արտահայտվելու յուրաքանչյուր ազգայինի»:

Դ. Անանունից Հետևյալ ընդարձակ մեջբերումն է կատարում Շահույթանը՝ փակագծում տալով իր մեկնաբանությունը: «Այդպիսի ազգային միությունը գերազանցապես նման կլինի եկեղեցու կազմակերպության: Եկեղեցու պես նա էքս-տարածքային և անձնային կլինի, սակայն իր շուրջը կմիացնե ոչ թե կրոնական, այլ ազգային պահանջների Համար... Պետության յուրաքանչյուր քաղաքացին ազատ կլինի անդամակցելու այս կամ այն Հավաքական մարմին, բայց վերջինս պիտի ճանաչվի, որպես պետական գործառնություն կատարող կազմակերպություն (այսինքն՝ ազգային միությունը պետք է լինի ոչ թե մասնավոր-իրավական, այլ Հրասպարակական-իրավական ինստիտուտ: Ա)

Պետությունը իր և նրա մեջ պիտի բաժանե Հասարակական աշխատանքը: Անտարակույս դա կկատարվի այնպիսի եղանակով, որ ազգային-կուլտուրական Համարված բոլոր գործերի ղեկավարությունը կանցնի ազգային միության: Այս վերջինն էլ կունենա թե իր տեղական և թե կենտրոնական Հաստատությունները, որոնց կազմակերպման գործը կՀանձնվի տվյալ ազգի անդամներին: Անշուշտ, պետությունը իրեն կվերապահե ազգային կազմակերպությունների գործունեության վերահսկողությունը (մի՞թե, ինչքա՞ն վիճող է Դ. Ա-նը). նա վերահասու կլինի նրանց կուլտուրական գործունեության բովանդակությանը, բայց (°) այնուամենայնիվ անխախտելի կմնա այն դրությունը, որ տվյալ ազգի կուլտուրական գործերը տարվում են նույն այդ ազգի ներկայացուցչության միջոցով (...աշ քեզ «վերահսկողություն»... դուք շատ խորամանկ եք եղել, պրն Ա-ն-սուտ միթե՞արանքներ եք Հորինում ձեր Հակառակորդների Համար), որ կուլտուրական խնդիրների մեջ ազգերը ասՀմանազգվում են (օտմեծելրվայուտայա.-ինքը Դ. Ա. նն է բերում փակագծում ուսերեն այս խոսքը) իրարից և թուլացնում են բախման կետերը (մի՞թե, բայց բավական չէ միայն ասել, պ. Ա-նուն, այդ Հարկավոր է ապացուցել, որովհետև մինչև այժմ մենք կատարյալ Հակառակն ենք տեսել: Մենք տեսել ենք, որ ազգերի «ասՀմանազգվումը», մեկուսացումը, խորթացումը ուժեղացնում է և ոչ թե թուլացնում ազգային բախումները և թշնամությունը):

Շահումյանը բերում է Դ. Անանունի Հետևյալ խոսքերը. «Ի՞նչ բովանդակություն պիտի դնեն իրենց գործունեության մեջ նման ազգային միությունները: Մենք ասացինք՝ ազգային-կուլտուրական: Իսկ դրա մեջ հասկանում ենք այն բոլոր կրթական հաստատությունների և բարենամությունների զարգացումը, որ կապված է ինքնուրույն լեզվի անարգել գործածման և իրավահավասարության հետ: Ազգային-կուլտուրական ինքնօրինությունը կրնա ձեռնարկել ազգերին կրթություն ստանալ հարազատ լեզվով. ունենալ սեփական թատրոն, գրադարաններ, ուսումնական հաստատություններ և ընկերություններ, թանգարաններ և այլն, առհասարակ այն բոլորը, ինչ գալիս է նպաստելու մի լեզվի զարգացման գործին, լեզվի, որովհետև մենք նրա մեջ ենք տեսնում ուրույն ազգային կուլտուրան»:

Եվ այնուհետև «Ուրտեղի՛ց պիտի հայթափվեն ազգային հաստատությունների համար անհրաժեշտ միջոցները: Պետական բյուջեից: Յուրաքանչյուր ազգություն՝ ըստ իր քանակի՝ պետությունից կատանա Ֆինանսական ձեռնարկություն»:

Դ. Անանունի հորվածից այս մեջբերումները կատարելուց հետո Շահումյանը գրում է. «Ահա թե ինչ բան է «ազգային-կուլտուրական ավտոնոմիան»: Առաջին հայացքից կարող է թվալ, որ մեր նացիոնալ-սոցիալիստները, ըստ էության, մի «համեստ» պահանջ միայն ունեն. հանձնել դպրոցական գործը առանձին ազգերի իրավասության»:

Մյուս կոնկրետ պահանջների մասին Շահումյանը հարկ չի համարում խոսել և նշում է, որ վերոհիշյալ «համեստ» պահանջներ առաջադրողները «ազգասեր տիրացուներ» են, որոնց գրածները մի որևէ ազգային «վարժապետ» եթե կարդա, անպայման «կհիանա Դ. Ա-նի գծած հեռանկարով»:

Շահումյանը նշում է նաև, որ ամեն մի գիտակից բանվոր, որը «թոթափել է իրենից ազգային մշուշապատ մտածողության և նախապաշարմունքների լուծը», Դ. Անանունի խոսքերը կարդալիս կզգա նացիոնալիզմի խեղդող օդը:

Շահումյանը փաստում է, որ Դ. Անանունին մտահոգում է միայն այն խնդիրը, թե ինչպես անել, որ «չխզվի հայի ազգային կապը», որ «չխզվի» հայ բանվորին հայ բուրժուազիայի ու հայ տերտերի հետ միացնող կապը: Դրա հետ միասին, ինչպես գրում է Շահումյանը, Դ. Անանունը «չի հոգում այն մասին, թե ինչպես անել, որ լավագույն կերպով միանան, «կապվեն» հայ բանվորները իրենց ուսև, վրացի, թուրք և այլ ընկերների հետ, որպեսզի նրանք միացած ուժերով կռվեն հանուն իրենց մեծ իղեայների: Նրան չի քաղեցնում բանվորների միջազգային, դասակարգային կապը»:

Շահումյանը խնդիր է դնում հոգ տանել բանվորների դասակարգային կապի մասին և հարկավոր չէ անհանգստանալ, եթե այդ կապը «պատանում է վնասել որևէ ազգային կապի», ինչը և հաճախ է պատահում:

«Դասակարգային կապը, դասակարգային գիտակցության զարգացումը, շարունակում է Շահումյանը, մահացու հարվածներ է հասցնում ազգային ինքնագիտակցության: Իսկ Դ. Ա-նի կարծիքով, ամենից առաջ՝ ազգային կապ: Ինչո՞ւ, որովհետև «ազգության պատկանելը գիտակցված անհատականություն է, որովհետև Դ. Ա-նի և նրա ընկերների հին և շատ տարօրինակ տրամաբանությամբ՝ բանվորներին առհասարակ ըստ ազգությունների բաժանելը նշանակում է լավագույն կերպով միացնել նրանց»:

Իր աշխատության հաջորդ էջերում Շահումյանը մեջբերում է Դ. Անանունի Հետևյալ տեսակետը. «Մեր նպատակներին հասնելու համար ազգային միության հիմք պիտի ընդունել ոչ թե տարածքի սկզբունքը, այլ ազգային պատկանելության գիտակցությունը»:

Նկատի ունենալով, որ ազգային պատկանելության գիտակցությունը, ցեղական-ազգակցական սկզբունքն անդրժեհեղեղյան ժամանակներից եղել է հասարակական միության հիմք, Շահումյանը կատարում է պատմական էքսկուրս, բերում է Հին Հունաստանի օրինակը և նշում է, որ «Այն օրվանից, երբ գոյացել են առաջին պետությունները՝ մարդկային նույնիսկ հնագույն անցյալում այդ սկզբունքը զիջել է իր տեղը Հարևանության կամ տարածքի սկզբունքին»:

Իսկ Դ. Անանունն առաջարկում է տարածքային սկզբունքի փոխարեն «ազգային պատկանելության գիտակցությունը» և ինչպես նշում է Շահումյանը, «նա ուզում է չրջել պատմության անիվը հարյուրավոր և հազարավոր տարիներ դեպի ետ»:

Շարունակելով քննադատել Դ. Անանունի հայացքները, Շահումյանը նշում է, որ նա ձգտում է «չեզոքացնել ազգերի էվոլյուցիայի խնդրում բանվոր դասակարգը, որպեսզի ասպարեզում մնա միայն բուրժուազիան իր ազգային քաղաքականությամբ, և որպեսզի ինքն այդ քաղաքականությունը հանձնարարե մեզ այսօր, որպես միակ խելացի ազգային քաղաքականություն»:

«Մեր սոցիալ-նացիոնալիստները, գրում է Շահումյանը, պահանջում են ազգերի համար ավտոնոմիա միայն կուլտուրական խնդիրներում», միաժամանակ ընդգծելով, որ նրանք շատ են սիրում կուլտուրա խոսքը, որովհետև գտնում են, որ «ամեն կուլտուրա ազգային է»: Եվ դրանից ոգևորված

Դ. Անանունն այն տեսակետն է արտահայտում, թե քանի որ «դպրոցական գործում, գրականության մեջ, առհասարակ «կուլտուրական բնագավառում» իշխում է ազգային լեզուն, հետևապես պարզ է, որ կուլտուրան միշտ ազգային է»:

Այս միտքը որակելով որպես «հանճարեղ անհեթեթություն», Շահումյանը նշում է, որ իրեն «մարքսիստ» համարող Դ. Անանունի համար միանգամայն անհասկանալի է մնացել «այն տարրական ճշմարտությունը, որ կուլտուրան որոշվում է իր դասակարգային բովանդակությամբ և ոչ թե ազգային արտաքինով»: Դ. Անանունի և նրա կողմնակիցների համար «Ֆեոդալական կուլտուրա», «բուրժուական կուլտուրա», «արդեստարական կուլտուրա» հասկացությունները դատարկ հնչյուններ են, «նրանք ճանաչում են միայն «ազգային կուլտուրա», որը... սկիզբ է առնում ազգային առանձնահատկություններից»:

Ազգային կուլտուրական ավտոնոմիայի կոնկրետ պահանջների թվում Դ. Անանունը միշտ ամենից առաջ հիշում է կրթական-դպրոցական գործի ազգայնացումը: Իհարկե, նշում է Շահումյանը, մարքսիստներն էլ են ընդունում, որ դպրոցներում անհրաժեշտ է մայրենի լեզուն: «Սոցիալ-նացիոնալիստներին,- մասնանշում է Շահումյանը,- երբեմն թվում է նույնիսկ, որ իրենք մի նոր բան չեն պահանջում մեզանից, որ նրանք միայն ավելի հետևողական են, քան մենք»:

Դ. Անանունը քննադատում է Շահումյանին և նրա կողմնակիցներին այն բանի համար, որ «նրանք, երևելով դեմոկրատիզմի սկզբունքներից, պատրաստ են ժողովրդական մասսային տալ մայրենի դպրոց և այլն, բայց դժվարանում են քվե տալ դպրոցական գործի կենտրոնացման, թեև գիտեն, որ կենտրոնացումը կապիտալիստական հասարակարգի բնորոշ առանձնահատկությունն է»:

Շահումյանը նշում է. «Դ. Ա-նր չարաչար սխալվում է: Մենք խոսում ենք տարբեր լեզուներով: Մենք էլ «կենտրոնացում» ընդունում ենք, պ. Ա-նուն, բայց մեր «կենտրոնը» ուրիշ տեղ է, ձերը՝ ուրիշ»:

Շահումյանը իր միտքը հարմարեցնում է Սայաթ-Նովայի հետևյալ խոսքերին.

«Իմ ասածն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ.

Քու ասածն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ...»:

Եվ ավելացնում, որ մարքսիստները պահանջում են դպրոցական գործում լեզուների կատարյալ ազատություն, որ կրթությունը, մանավանդ սկզբնա

կան կրթությունը տրվի մայրենի լեզվով, «այսինքն այն լեզվով, որով խոսում են երեխաները իրենց ընտանիքներում, այն լեզվով, որով նրանք ավելի հիշտ և ավելի շուտ կարող են սովորել»:

«Բայց,- չարունակում է Շահումյանը,- այդ բավական չէ: Մենք հոգում ենք ոչ միայն այն մասին, թե ինչ լեզվով են սովորեցնում երեխաներին, այլև այն մասին, թե ինչ են սովորեցնում, ինչ ոգով, ինչ ուղղությամբ են դաստիարակում մեր զավակներին: Սոցիալ-նացիոնալիստները ի նկատի ունեն միայն ձևը, մենք ի նկատի ունենք նաև բովանդակությունը: Եվ դա դեռ բոլորը չէ. նրանք այդ ձևի համար զոհում են բովանդակությունը»:

Դ. Անանունը դեմ է արտահայտվում օտարալեզու դպրոցներին, ընդգծելով որ «օտարալեզու դպրոցը չի կարող մնալ առանց հետևանքների. նա դրական գիտություն և գիտակցություն չի տալ, բայց դրա փոխարեն կթփառե իր սանի հոգին և հաշմանդամ կղարձեն նրա ուղեղը»:

«Եթե,- չարունակում է Դ. Անանունը,- մի որևէ կատալիստական սխառմի անհրաժեշտ են մտավոր անդամալուծներ, դիմազուրկ և անգույն հպատակներ, ստորակների մի բազմություն, որի վրա նա կարող լինի իր փորձերը կատարելու,- սպա նա պիտի զարկ տա նման դպրոցների ծավալմանը...»:

Մերժելով Դ. Անանունի այս տեսակետը, Շահումյանը հիշեցնում է, որ կոլկապյան հայ մտավորականության մեծ մասը սովորել է պետական «օտարալեզու» դպրոցներում, որոնց մեջ են «Մշակի» դեկավարները՝ Գ. Արծրունուց մինչև Ա. Քալանթար, դաշնակցականները՝ Զավարյան, Ք. Միքայելյան և այլն:

«Եթե,- եզրակացնում է Շահումյանը,- հավատանք Դ. Ա-նի զարհուրելի պատմությանը, մենք պետք է հաշվենք այդ բոլորին թրխատված հոգիներ, հաշմանդամ ուղեղներ, մտավոր անդամալուծներ, անգույն հպատակներ ու ստրուկներ...»:

Իհարկե, Շահումյանն այն կարծիքին չէ, որ «օտարալեզու» դպրոցները «կանգնած են ցանկալի բարձրության վրա»: Այդ դպրոցները նույնպես վատն են և նկատի ունենալով իր սովորած տարիները, ընդգծել է, որ «մեզ սարսափեցնում է ամենից առաջ ոչ թե օտար լեզուն, այլ այն ոգին, այն ուղղությունը, այն ծրագրերը, որ տիրում է այդ դպրոցներում... որտեղ ավելի կարևորը դասակարգային միջուկն է և ոչ ազգային կեղևը, էությունը և ոչ ձևը»:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ հայկական հոգևոր դպրոցներում տիրում է հայերեն լեզուն, իսկ «օտար լեզուն» «միանգամայն արհամարված

է եղել այդ դպրոցներում»: Հայկական հոգևոր դպրոցներում իշխող կղերական, ազգային-տիրացուական ոգին ոչ պակաս զգվելի է, քան «օտարաբեզու» դպրոցներում: Եվ Դ. Անանուն էլ կարծում է, որ հայկական հոգևոր դպրոցները «պակաս են «թլփաստել» իրենց սաների հոգիները և «հաշման դամ» դարձրել նրանց ուղեղները»:

Ասվածն էլ նկատի ունենալով Շահումյանը գրել է. «Այս բոլորը պարզապես ցույց է տալիս, որ խնդիրը միայն այն չէ, թե դպրոցն ազգային է, թե օտարաբեզու, այլև այն, և ամենից առաջ այն, թե նա իր ծրագրով, իր ներքին բովանդակությամբ ժողովրդական դեմոկրատական դպրոց է, թե գործիք շահագործող դասակարգերի ձեռքին»:

Իհարկե, Դ. Անանունն ընդունում է, որ «եթե մի որևէ ազգ ինքնօրինություն է պահանջում իր կրթական-կուլտուրական գործերի համար,- այդ դեռ չի նշանակում, թե ազգի զանազան դասակարգերը միևնույն բովանդակությունն են դնում իրենց պահանջի մեջ»:

Շահումյանը գտնում է, որ խնդիրը «հենց այդ բովանդակության մեջ է» և հարցնում է, թե հայերը, «բանվորական դեմոկրատիայի տեսակետից», ե՞րբ կարող են ցանկալի դպրոցներ ունենալ:

Այս հարցին Շահումյանը պատասխանում է. «Այն ժամանակ, երբ Ռուսաստանում լիովին կհաղթանակե դեմոկրատիան, երբ հայ բանվորը ձեռք էտքի տված ուռ, վրացի, լեհ, հրեա և այլ բանվորների հետ, հենվելով ամբողջ դեմոկրատիայի վրա թե ընդհանուր պետական պառլամենտում և թե շրջանային ու տեղական ինքնավարությունների մեջ, կհակադրեն իրենց դասակարգային պահանջները և իրենց միացյալ դասակարգային ուժը իշխող դասակարգերի ոտնձգությունների դեմ և կկռվեն՝ հանուն լավագույն դպրոցի-ժողովրդական մասսաների համար»:

Շահումյանը մեջբերում է այս հարցին նաև Դ. Անանունի տված պատասխանը, ըստ որի, այդ ցանկալի դպրոցը կարելի է ունենալ «այն ժամանակ, երբ կրթական գործը կառնվի ընդհանուր պետական մարմինների ձեռքից և կհանձնվի ազգային միություններին, երբ հայ բանվորը ձեռք-ձեռքի տված հայ բուրժուազիայի ու հայ տերտերի հետ, կպաշտպանեն հայ դպրոցը, հայ լեզուն օտար ազգերի ոտնձգությունների դեմ»:

Այսպիսով, վերահիշյալ հարցին տրվում են հակադիր պատասխաններ: Անդրադառնալով դրանց, Շահումյանն ընդգծում է, որ հայ բանվորները մյուսների հետ «կհակադրեն իրենց դասակարգային պահանջները»:

Իսկ սոցիալ-նացիոնալիստները գտնում են, որ այդ հարցում դասակարգային

գային պահանջները գործ չունեն: Դ. Անանունն ասում է, որ «բարաբալան և տնտեսական հարցերի մեջ» ընդունում են դասակարգային կոխիք, բայց նաև ընդգծում, որ կուլտուրան միշտ ազգային է, որ հայ լեզուն ընդհանուր «բարենաստություն» է թե հայ բանվորի և թե հայ բուրժուազի ու տերտերի համար, որ ցանկանում են և խոստանում լեզուն, կուլտուրան, առհասարակ ազգային հարցը «դուրս բերել հասարակական դասակարգերի կռվի շրջանառությունից»:

Ասկայն կրթական գործը և լեզվի խնդիրը կառնող դասակարգերի ձեռքին կարևոր գեներելից մեկն է և ոչ մի դասակարգ կամուլին չի գիջելու այդ գեները: «Ռուս բուրժուազիան,- գրում է Շահումյանը,- կարող է ճնշել հայ լեզուն՝ դրված իր դասակարգային շահերից, հայ բուրժուազիան կարող է, նույն իր դասակարգային բնազդներից դրված, արհամարել հայ լեզուն»: Բայց Շահումյանը համոզված է, որ ուռ և հայ բանվորը միասին, «իրենց եղբայրական միության մեջ, չեն թույլ տա, որ ճնշվի հայ լեզուն, եթե այդ լեզվով դասակարգային դաստիարակություն է ստանում հայ բանվորը, եթե այդ լեզվով պետք է կրթվի հայ բանվորը և հայ գյուղացու զավակը»:

Ասվածից էլ Շահումյանը եզրակացնում է, որ լեզվի ազատության խնդիրը, կրթական գործի այս կամ այն բովանդակության խնդիրը՝ ընդհանուր դասակարգային խնդիր է ու ավելացնում է, որ հենց նույն պատճառով «Ռուսաստանում ապրող բոլոր ազգերի բանվորները ցանկանում են միասին պաշտպանել իրենց պահանջները նաև կրթական գործում և չեն ցանկանում ստանձնանալ և սահմանազծվել նաև «կուլտուրական բնագավառում»:

Եթե Դ. Անանունն այն համոզմունքն ուներ, որ հայ տիրացուները պետք է «ազգովի» վարեն իրենց կուլտուրական գործերը, ապա դրան Շահումյանը հակադրում էր իր տեսակետը. «Բանվորներին հարկավոր է դասակարգովին և ոչ ազգովին վարել» կուլտուրայի բոլոր գործերը:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ դպրոցական գործը պետք է գտնվի պետական պառլամենտի և տեղական ինքնավարությունների ձեռքին: Իսկ Դ. Անանունը մտավախություն է հայտնում, հարցնելով, թե «ի՞նչ կանեք դուք, եթե հայերը, փոքրամասնություն կազմելով այդ ընդհանուր և տեղական հաստատությունների մեջ, չկարողանան պաշտպանել հայ լեզուն, և նա հարածվի մեծամասնություն կազմող ուռ ազգի կողմից»:

Պատասխանելով Դ. Անանունի այս մտավախությանը, Շահումյանը տարակուսում է, որ ոչ մի տեղ նա իր հողվածում հարց չի դնում, թե «ի՞նչ կլինի, օրինակ, այն դեպքում, եթե հաջողվել նրա «ազգային-կուլտուրական

ավտոնոմիան» և Հայ բանավորությունը, փոքրամասնություն լինելով ազգային մարմիններում, չկարողանար իր ուզած բովանդակությունը մտցնել ազգային գործում»:

Շահույթյանը համոզված գրում է, որ Դ. Անանունը չի դնում այդ հարցը, որովհետև նա «որքան լավ նացիոնալիստ է, նույնքան վատ մարքեթստ է»:

Շարունակելով բանավեճը Դ. Անանունի Հետ, Շահույթյանը նշում է, որ Հրեա և ավստրիացի իր ուսուցիչներին Հետևող Դ. Անանունի «կարծիքով, որպեսզի լեզուն չճնշվի և ազգային կոիվները վերանան, անհրաժեշտ է «սահամանագծել» ազգերը և ստեղծել «պետական գործառնություն կատարող» ազգային մարմիններ»:

Եվ իր այս տեսակետը հիմնավորելու համար Դ. Անանունը գրում է. «Ազգային-կուլտուրական ավտոնոմիան այն հաջող համադարձանն է, որ լուծում է նաև ազգային փոքրամասնության պահանջների հարցը և վերջ է տալիս այն իրավացի տրտունջին, թե մեծամասնությունը կամա թե ակամա, ճնշում է նրա ազգայնությունը»:

Ընդգծելով, որ ազգություն հիմնական հատկանիշը լեզուն է և չհամարձակելով լեզուների իրավահավասարության երաշխիք ստեղծելու մասին Դ. Անանունի տեսակետի Հետ, ըստ որի կրուծվի ազգային հարցը, Շահույթյանը գրում է. «Երբ լեզվի գործը, ուրիշ խոսքով՝ կրթական-կուլտուրական գործը հանձնվում է իրենց, ազգերին, պարզ է, մտածում է Դ. Ա.-նը, կարելի է փոխառնել, որ լեզուները չեն ճնշվի այլևս, հետևապես ազգային հարցը «դուրս կգա դասակարգային կռվի չընթացությունից» և ազգային բարխումները կվերանան»:

Շահույթյանը գտնում է, որ Դ. Անանունը սխալվում է կարծելով, թե «ազգային հարցը միայն լեզուների իրավահավասարության հարց է» և չի հարկանում, որ «ազգային կռիվը դասակարգային կռվի արտահայտություններից մեկն է, որ նա տնտեսական և քաղաքական բնույթ ունի թե իր ծագումով և թե իր նպատակներով»:

Իր միտքը հաստատելու նպատակով Շահույթյանը բերում է Ռուսաստանի Հրեաների օրինակը, որոնց նկատմամբ կիրառվող ազգային հարածանքները չեն վերաբերում միայն լեզվին և գրում է Հետևյալը. «Մի՞թե այն, որ նրանց փակել են ԿԵՐՏԱ ՕՇԵԼՈՍՏԻ (նստակեցության սահմանազիծ-խմբ.) կոչվող բանտի մեջ, որ նրանց արգելում են զբաղվել այս կամ այն արհեստով և ձեռք բերել Հողային սեփականություն, որ նրանց զրկում են զանազան քաղաքական և քաղաքացիական իրավունքներից, մի՞թե այդ բոլորը լեզուների իրավահավասարության խնդիր է, և ավելի ոչինչ»:

«Եթե հավատանք Դ. Ա.-ին, շարունակում է Շահույթյանը, մենք պետք է համարենք, որ այդ բոլորը ուղղված է հրեական «Ժարգումի» դեմ և նպատակ ունի միայն՝ օտարալեզու դպրոցների միջոցով «թլիփատել» հրեաների Հոգիները: Բայց մենք տեսնում ենք, ընդհակառակը, հրեաներին թույլ է տրվում ունենալ իրենց ազգային դպրոցները, իրենց ազգային գրականությունը (ինչպես և Հայերին), իսկ «օտարալեզու» դպրոցներից նույնիսկ քշում են հրեաներին, սովորապես նորմաններով և այլ միջոցներով փակում են հրեաների առջև այդ դպրոցների դռները»:

Բերված օրինակից ելնելով Շահույթյանը Դ. Անանունի առջև հարց է դնում՝ ի՞նչ երաշխիք նա կարող է տալ, եթե նրա հայկական լայն «ազգային-կուլտուրական ավտոնոմիան» իրագործվելու հաջորդ օրը, ոտս ազգը Հայերի Հետ չի վարվի հրեաների օրինակով ու նրանց չի զրկի «կուլտուրազգային ավտոնոմիայից»:

Շահույթյանը կարծում է, որ Դ. Անանունը կարող է տալ Հետևյալ երկու երաշխիքը.

Առաջին. Հայոց ազգը, որպես մի մարդ-իր բուրժուաններով ու տերտերներով-ուղի կկանգնի պաշտպանելու իր իրավունքները ոտս ազգի դեմ:

Բայց սա, համոզված է Շահույթյանը, թույլ երաշխիք է, որովհետև, «եթե դուք կանգնեցնում եք ազգն ազգի դեմ, երկու միլիոնը շատ փոքրիկ թիվ է հարյուր միլիոնի դիմաց»:

Երկրորդ. Երկրի սահմանադրությունը, որովհետև «ատաճուց որոշված է, որ ազգերը «սահմանազատվում են»:

Բայց, կարծում է Շահույթյանը, այդ սահմանադրությունը նույնիսկ մոգական գորությունը չի կարողանա դիմադրել կենդանի քաղաքական ուժերի գրոհին, որովհետև դա թղթի մի կտոր է:

Եվ իր տեսակետը հիմնավորելու համար Շահույթյանը գրում է. «Բայց Դ. Ա.-նը կպատասխանի գուցե, չէ՞ որ այդ սահմանադրության հետևից էլ կանգնած են կենդանի քաղաքական ուժերը, այն դասակարգերը, որոնք ստեղծել են այդ սահմանադրությունը և թույլ չեն տա ոտս ազգի իշխող դասակարգերին խախտել այդ սահմանադրությունը: Բոլոր ազգերին պատկանող բանփորական և գյուղացիական դեմոկրատիան, որը իր կռիվով նվաճել է նոր սահմանադրությունը, կռիվով կդիմադրի իր թշնամիների ոտնձգություններին»:

Շահույթյանը համաձայնվում է Դ. Անանունի պատասխանի Հետ, բայց և նրան մատնացույց է անում երկու հանգամանք.

Առաջին. Ազգային մշակույթի հարցը նորից մտնում է... «դասակարգային կռիվ չընթացությունից»:

Երկրորդ. «Այդ դասակարգային կռիվ երաշխիքն արդեն մեր երաշխիքն է և ոչ Դ. Ա-նի»:

Շահույթները «ազգային-կուլտուրական ավտոնոմիան» համարելով մի անգամայն ավելորդ, գտնում է, որ նաև վնասակար է: «Վնասակար է նրա նույն- ընդգծում է Շահույթները,- որ բուրժուական-նացիոնալիստական, ազգային-տիրացուական ոգի կմտցնի կրթական գործի մեջ, որ լեզվի և կրթության ազատությունը կծառայի ազգային «տեղական և կենտրոնական հաստատությունների» ձեռքին ոչ հօգուտ ազգերի մերձեցման, հօգուտ միջազգային եղբայրության, այլ, ընդհակառակը, հօգուտ ազգերի կղզիացման, մեկուսացման, օտարացման»:

Դ. Անանունը հիշեցնում է, որ հայերն այժմ ունեն «կուլտուր-ազգային ավտոնոմիա», նկատի ունենալով 1836 թ. Ռուսաստանում հաստատված «Պոլոժենիե»-ն և 1862 թ. թուրքական սուլթանի կողմից հաստատված Կ. Պոլսի հայերի կանոնադրությունը, որին տրվել էր «Ազգային սահմանադրություն» անվանումը: Բայց նա մոռանում է, որ «Ազգային սահմանադրությունը» գործում էր միայն Կ. Պոլսում և որևէ առնչություն չունի Արևմտյան Հայաստանի հայ բնակչության կարիքների ու հոգուերի հետ: Թերի էր նաև «Պոլոժենիան»:

Բայց, ինչպես նկատում է Շահույթները, չի խանգարել, որպեսզի Կ. Պոլսի Ազգային ժողովը և Էջմիածինը երևակայեն «իրենց հայ ազգի հավաքական կամքի արտահայտիչներ և հանդես են գալիս իրենց քաղաքական դեկլարացիաներով, թե իրենց բնական պետությունների և թե ամբողջ աշխարհի առաջ»: Շահույթները որպես իր ասածի «պերճախոս, բայց ոչ եզակի օրի նակ» նկատի ունի Բալկանյան պատերազմին հաջորդած դեպքերի ժամանակ նորից ասպարեզ նետված հայկական հարցը:

Այնուհետև Դ. Անանունը նշում է, որ հայերի համար «ազգային-կուլտուրական ավտոնոմիան» նորություն չէ, «թեև գտնվում է սաղմնային վիճակի մեջ»: Բայց ի՞նչ է տվել ու տալիս այդ հայկական ավտոնոմիան:

Այս հարցին Շահույթների տված պատասխանը հարկ եմ համարում մեղբերել ամբողջությամբ. «Մենք շատ անգամ լսել ենք առանձին հայ անհատների կողմից մի հուսահատ բացականչություն. «Ի՞նչ տիրացու ազգ ենք հարձեր»-և դա մի աղաղակող ճանարտություն է: Տիրացությունը մեզ խնդրում է: Վերջերս մեր ժողովրդական ուսուցչին, մեր հասարակական գործիչներին, հրապարակախոսներին, վիպասաններին, նույնիսկ բանաստեղծներին: Վերջերս մեր դպրոցը, մեր մամուլը: Ամեն տեղ սարափեղի տիրացություն:

Մեր ամբողջ հասարակական կյանքը կպած է տերտերների փարաջաներից, ամեն ինչ պտտվում է Էջմիածնի շուրջը: Ոչ մի հետաքրքրություն դեպի քաղաքական հարցերը, դեպի պետական կյանքը, դեպի նույնիսկ տեղական ինքնավարության մարմինները: Թերթեցիք մեր պարբերական հրատարակությունները (մանավանդ մինչև 1905 թիվը. այդ թիվը շատ բան փոխեց մեր կյանքում) և դուք կտեսնեք, որ բացի ծխական, հողաբարձական, քահանայական հարցերից ոչ մի հարց, ոչ մի հետաքրքրություն: Ինչո՞վ բացատրել հայկական այդ տիրացությունը և ապրիտիզմը: Համաձայնեցեք, որ այդ բոլորը, եթե չասենք ծնունդ է հայկական «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի», գոնե շատ սերտ կերպով կապված է նրա հետ»:

Դ. Անանունը «կուլտուր-ազգային ավտոնոմիան» «նոր խոսք» է հայտարարում մարքսիզմի համար և դա հակադրում է մարքսիզմի «հին» պահանջներին:

Շահույթները համատուտ ներկայացնում է մարքսիզմի այդ «հին» պահանջները, որոնք վերաբերում են հետևյալին.

Առաջին. Սոցիալ-նացիոնալիստները խոստանում են, որ «իրենց ազգային-կուլտուրական «համադարձանով» կապիտալիստական հասարակարգի մեջ» կուժեն ազգային հարցը:

Իսկ հետևողական մարքսիստները հայտարարում են, որ ազգային կռիվներն ու ճնշումները հնարավոր չէ վերացնել, «քանի դեռ գոյություն ունի մասսաների ճնշման ու շահագործման վրա հիմնված այժմյան հասարակարգը: Բանվոր դասակարգը կարող է միայն իր դասակարգային կռիվ, իր որոշ քաղաքական պահանջներով դիմադրել ազգային ճնշումներին և մեղմել ազգային թշնամությունն ու բախումները»:

Երկրորդ. Դեմոկրատական պետությունից բանվոր դասակարգը պահանջում է ամենից առաջ սահմանադրության մեջ մտցնել այն հիմնական կետը, որ «օրենքի առաջ կատարյալ հավասարություն տրվի ամեն մի քաղաքացու, անկախ նրա ազգությունից, ինչպես նաև կրոնից ու սեռից»:

Այնուհետև ապօրինի պետք է ճանաչվի ազգերի իրավահավասարության սկզբունքը խախտելու, ազգային փոքրամասնությունների դեմ ուղղված ամեն մի փորձ:

Երրորդ. Ապագա ազատ Ռուսաստանում պետք է տեղի ունենան վարչական նոր բաժանումներ: Տեղական մանր շրջանների, գավառների, նահանգների սահմանները պետք է փոխվեն, «ի նկատի առնելով, բացի տնտեսական ու կենցաղային պայմաններից, նաև բնակչության ազգային կազմը»: Ընդ որում այդ բոլորը կատարվելու է տեղական ազգաբնակչության որոշմամբ:

Չորրորդ. Քաղաքական կենտրոնացման Հետ միաժամանակ մարքսիստները պահանջում են վարչական և դատական գործի ապակենտրոնացում, որը «նշանակում է, որ բոլոր պաշտոնյաները և դատավորներն ընտրվում են ժողովրդի կողմից և պատասխանատու են օրենքի և իրենց ընտրողների առաջ»:

Մարքսիստները պահանջում են «այն տեղական ինքնավարություն և դրանից զատ՝ չրջանային ինքնավարություն այն տեղերի համար, որոնք տարբերվում են իրենց տնտեսական ու կենցաղային պայմաններով և ազգային կազմով»: Այս ամենը նկատելի չափերով «կթուլացնի գերակշռող ազգի բյուրոկրատիզմի և նացիոնալիզմի վտանգը»:

Հինգերորդ. Սահմանադրությունը պետք է ճանաչի լեզուների կատարյալ ազատություն գրականության մեջ, հրապարակային ժողովներում, դպրոցներում, դատարաններում և այլ պետական հաստատությունների մեջ: Տեղական ինքնավարության մարմինները, որոնց ձեռքին ամենից առաջ կգտնվի դպրոցական գործը, համաձայն զգացվող կարիքի, բացվում են թե խոսք և թե ազգային դպրոցներ, և «այդ դպրոցները պահվում են հախտար պայմաններում՝ ընդհանուր պետական հաշվով»:

Ապօրինի են ճանաչվում բոլոր այն գործողությունները, որոնք «խախտում են լեզուների ազատության իրավահավասարության սկզբունքը և վնասում են դպրոցական գործում ազգային փոքրամասնության շահերը»: Դրա համար մեղավորները ենթարկվելու են դատական պատասխանատվության:

Վեցերորդ. Մարքսիստները պահանջում են, որ «պետական սահմանադրությունը երաշխավորի ազգերի ինքնորոշման իրավունքը»:

Դա ամենից առաջ նշանակում է, որ եթե մի որևէ ազգություն՝ «օբյեկտիվ-տնտեսական թե սուբյեկտիվ-հոգեբանական պատճառներով» չի կարող կամ չի ցանկանում «մի ժողովուրդ կազմել ուս և մյուս ազգերի Հետ միասին», նրան սահմանադրությունը իրավունք պետք է տա բաժանվելու և ինքնուրույն պետություն կազմելու:

Միաժամանակ Շահումյանն ավելացնում է, որ մարքսիստներն այդ տեսակ բաժանում չեն քարոզում և չեն առաջարկում «ներկայումս ոչ մի ազգության Ռուսաստանում», բայց «ճանաչում են ինքնորոշման իրավունքը, ինչպես նաև ճանաչում են խոսքի ազատության կամ խղճի ազատության իրավունքը»:

Ահա, այս ծրագիրն է Դ. Անանույր համարում «Շուսթաթ» որ դրա փոխարեն առաջարկում է իր «նոր» «ազգային-կոլտուրական ավտոնոմիան»:

Շահումյանը նկատի ունենալով, որ «ազգային-կոլտուրական ավտոնոմիայի» մասին խոսքը «նոր» է, այդ պահանջն առաջարկել է 1899 թ. Ավստրիայում, երբ «ուսու մարքսիստների ծրագիրը դեռ գոյություն չուներ»: 1903 թ. , երբ ՌՄԻՔԿ 2-րդ համագումարում ընդունվում էր ուսու մարքսիստների ծրագիրը, «հրեա մարքսիստները հանդես են եկել «ազգային-կոլտուրական ավտոնոմիայի» պահանջով», որը համագումարը մերժել է որպես նացիոնալիստական պահանջ: Հենց այդ պատճառով էլ հրեա մարքսիստները Հեռացել են ՌՄԻՔԿ-ից:

Եվ որպես եզրակացություն, Շահումյանը գրում է. «Ինչպես տեսնում եք, Դ. Ա-նի ավտոնոմիան ոչ միայն պատաված, այլև բավական վարկաբեկված օրիորդ է: Շատ դժվար է, պ. Ա-նուն, մեր ժամանակներում ամուսնացնել մի այդ տեսակի օրիորդի, մանավանդ բանվոր փեսացուներ գտնել նրա համար...»:

Սոցիալ-նացիոնալիստների ազգային քաղաքականությունը քննելուց Հետո Շահումյանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նրանց դասակարգային քաղաքականությանը, թե դրանից ելնելով նրանք «ինչպես են ուզում կազմակերպել բանվոր դասակարգի ընթացիկ քաղաքական և տնտեսական կոխիք»:

Այստեղ էլ, ինչպես նշում է Շահումյանը, սոցիալ-նացիոնալիստների համար հիմնական սկզբունքն է բանվորներին «բոլոր ազգությունների բաժանելը»: Ըստ նրանց տեսակետի, ամեն մի ազգություն ներկայացնում է «յուրահատուկ», «սպեցիֆիկ» միջավայր՝ տարբեր դասակարգային շերտավորումով: Այդ պատճառով անհրաժեշտ է, որ «ամեն մի ազգի մեջ գործեն՝ ազատ ու ավտոնոմ կերպով այդ ազգի բանվորական կազմակերպությունը», որը կարող է մյուս ազգերի բանվորական կազմակերպությունների Հետ կապվել ֆեդերատիվ կապերով:

Այս դեպքում էլ, գտնում են սոցիալ-նացիոնալիստները, հայ բանվորության դասակարգային կոխիք պետք է ղեկավարի «հայ կազմակերպությունը, որը հայ պրոլետարիատի միակ ներկայացուցիչն է»:

Նույնպիսի բաժանում են պահանջում մտցնել նաև արհեստակցական միությունների մեջ: Ըստ նրանց «ամեն մի ազգի բանվորություն պետք է առանձին մղել իր առօրյա տնտեսական կոխիք՝ իր առանձին ազգային արհեստակցական միությունների մեջ»: Նրանք դեմ չեն մյուս ազգերի արհեստակցական միությունների Հետ որոշ կապերին և համերաշխ գործունեության, բայց ազգային սկզբունքն անփախտ պահելու պայմանով:

Շահումյանը բազմազգ պրոլետարիատ ունեցող Բաբու քաղաքի օրինակով ցույց է տալիս, թե ինչի են Հասցնում, երբ «միևնույն քաղաքի, երբեմն միևնույն գործարանի բանվորների քաղաքական ու տնտեսական կոխը պետք է «ղեկավարեն» առանձին-առանձին, ըստ ազգությունների» սոցիալ-նացիոնալիստների որդեգրած սկզբունքների: Շահումյանը հիշեցնում է «մեր սպեցիֆիկները» Բաբվում ստեղծած օրապակաս «Հայ Հոցգպահների արհեստակցական միություն» անհամոզ փորձը:

Իր աշխատության վերջում Շահումյանը կատարում է երկու ընդհանրացում:

Առաջին. Մարքսիստները տարբերվում են ուրիշ բանվորական կուսակցություններից «միայն նրանով, որ, նախ՝ նրանք միջազգային բանվորական կուսակցություն են և ոչ ազգային. հետևապես նրանք հետու են նացիոնալիզմից»: Եվ երկրորդ՝ որ «նրանք միշտ ի նկատի ունեն շարժման ընդհանուր շահերը և ոչ ըսպի, պահի շահը, հետևապես նրանք հետու են օպորտունիզմից»:

Երկրորդ. Մարքսիզմի ամենատիպերիմ թշնամիներն են նացիոնալիզմն ու օպորտունիզմը, որոնք «երկու քույրերի նման, միշտ կապված ու գրկված են միմյանց հետ: Չարմանալու չէ, որ «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» պահանջը հնչում է այսօր մեր «լիկվիդատոր-օպորտունիստների» բանակից: Չարմանալու չէ նույնպես, որ նույն այդ լիկվիդատորական բանակին պատկանում է, որքան մեզ Հայտնի է, և ինքը, մեր պատվական Դ. Ա-նը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 373-426):

Այսպիսով, ամփոփելով «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» հակառակորդների և կողմնակիցների տեսակետները, հարկ եմ համարում ընդթել հետևյալը.

Առաջին. «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» հակառակորդների տեսակետը, որը շարադրել է Շահումյանը, ընդունում է ազգային ինքնորոշման, ազգերի անկախացման և սեփական պետություն ստեղծելու իրավունքը, որը, ինչպես նշվել է, ավելի ընդգրկուն, ավելի արմատական ծրագիր է, քան միայն ազգային լեզուն պահպանելու պահանջը:

Երկրորդ. Ավտորիական սոցիալ-դեմոկրատիայի աջ թևը՝ օպորտունիստները, երևելով ավտոր-հոնգարական կայսրության ամբողջակամությունը պաշտպանելու դիրքերից, չէին խրախուսում այդ կայսրության մեջ զտնվող ժողովուրդների ազատագրական պայքարը և նրանց մղորեցնելու համար ստպարեզ էին նետել «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» գաղափարը:

Ռուսաստանի պայմաններում ավտորիացիներին և հրեական Բուճդի օրինակին հետևելով, Հենց նրանց ուղղակի ազդեցությամբ «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» գաղափարը պաշտպանում էին ՌՄԻԲԿ-ի մեջ Հանդես եկած «լիկվիդատորները», հայ «սպեցիֆիկները», ինչպես նաև դաշնակցությունը:

Վերը շարադրվածից կարծում եմ, որ ընթերցողի համար պարզ է դառնում, թե ՌՄԻԲԿ-ի մեջ Հանդես եկած «լիկվիդատորները» և հայ «սպեցիֆիկները» ինչ նկատատուներով և ինչու էին «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» գաղափարը պաշտպանում:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՒՆՏՈՒՐ-ԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՆՈՄԻԱՆ

Իսկ Հայ հեղափոխական դաշնակցությունն ինչո՞ւ էր պաշտպանում «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» գաղափարը և ի՞նչ միջոցներով էր դա իրականացնում: Այս հարցերին պատասխանելու համար կպահանջվի հասարակացնել բազմաթիվ էջեր:

Եվ քանի որ, երևելով սույն աշխատության համար նախատեսված ծավալից, չունեն այդ հնարավորությունը, ուստի կբավարարվեմ դրան համատուտ անդրադառնալ, հենվելով դաշնակցության պլիսավոր տեսաբան Մ. Վարանդյանի արտահայտած գաղափարների վրա:

Արանայի հայ բնակչության կոտորածից հետո Վարանդյանը իր «Վերածնվող Հայրենիքը և մեր դերը» աշխատության մեջ գրում է. «Չենք ուզում որբերգական գոյն հաղորդել կացութեանը և տոգորել միջնորոտը շարագուշակ մարգարէութիւններով: Չենք էլ ուզում իսպառ սեցնել... օսմանյան ժողովրդի քաղաքացիական ու բարոյական քարտէշը: Այդ ըմբռնումը չի համապատասխանում իրականութեան: Նոյնիսկ կիլիկեան դրամայի պատմութիւնը արձանագրում է մարդասիրութեան ու անձնագոհութեան բազմաթիւ օրինակներ մահմեդական աշխարհի մէջ»: (Մ. Վարանդյան, Վերածնվող Հայրենիքը և մեր դերը, էջ 110):

Ըստ Վարանդյանի ստացվում է, որ Արանայի 30 հազար հայ բնակչության կոտորածը բավական չէ «ողբերգական գոյն հաղորդել կացութեանը և տոգորել միջնորոտը շարագուշակ մարգարէութիւններով»: Բայց դաշնակցությունը դրանից անհրաժեշտ հետևություններ անելու փոխարեն, 1909 թ. սեպտեմբերին երիտթուրքերի հետ կնքում է նոր համաձայնություն՝ ամբողջովին ենթարկվելով երիտթուրքերի թելադրանքին:

Եվ այնուհետև Վարանդյանը գրում է ինչ-որ «մարդասիրութեան ու անձնագոհութեան բազմաթիւ օրինակների» մասին: Բայց Արամայի կոտորածին վկա եղած օտարերկրացիները իրենց գրառումներում այդպիսի «բազմաթիվ օրինակների» մասին չեն գրում:

Վարանդյանը նկատի ունենալով կենտրոնական իշխանությունները մահմեդական լայն ամբողջի տիրապետող «ասանդական կղզի Հնազանդություն» իրողությունը, գրում է, որ այդ իրողությունը «ինքնին թերևս բացասական է, բայց փոխանցման այս ահարկու ժամանակներում կարող է դառնալ միանգամայն դրական ու բարերար մի գործօն, եթէ այդ իշխանությունները, կենտրոնական կառավարությունը կանգնած մնան իրենց կոչման բարձրութեան վրայ, ցոյց տան իրենց՝ ուժեղ, շիտակ, անաչառ և ամենից առաջ՝ սահմանադրական»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 110-111):

Եվ այնուհետև «Քաղաքական Հօրիցօճը» գրում է Վարանդյանը,- դեռ ըտրորովին չի խաղաղվել: «Վտանգը» ոչ միայն ներքին է, այլև արտաքին: Վայրագ, գիշատիչ ախորժակները դեռ կատաղորեն մրցում են թիւրքիոյ Հիւանդ մարմնի շուրջը: Ահա Ավստրո-ուսական ու այլ Համաձայնություններ, ինչ-որ խորհրդատու բանակցություններ ու շղկներ, ուր նորէն մերթ ընդ մերթ արտասանվում են Հին, ահազրեցիկ ֆորմուլները՝ «օսմանեան ամբողջութիւն», «անդամահատում», «բաժանում»:

«Ասես նորէն,- չարժանակում է Վարանդյանը,- դուրս է լողում Հնութեան այլքներից Պետրոս Սեծի Հոջակաւոր կտակը, ցարական արշաւանքի ու տիրապետութեան ուրաւակնը Բօսֆօրի եզերքներում: Ահա յունական Հարց, կրէտական, մակեդոնական, արաբական, այբանական. ահա ասիկ ուժեղ ու անբարիչու Բուլգարիայի անդիմադրելի մղուճը դէպի Մակեդոնիա...: Մի մի Հօր ու պայթուցիկ կնճիռներ, որ սպառնում են վաղ թէ ուշ վերակեղ Արևելեան դրամայի Հակա խաղը՝ նոր ու արյունոտ արարածներով»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 111):

Ընթերցողն անպայման կնկատի, որ Վարանդյանը մտահոգված է թուրքիայի ամբողջականության պահպանմամբ և թվարկած «կնճիռների» մեջ չի հիշատակում Հայկական Հարցը: Եզրակացությունն ինքն իրեն ջրի երես է դուրս գալիս՝ դաշնակցությունը հետաքրքրում է օսմանյան կայսրության մեջ «կուլտուր-ազգային ավտոնոմիան», որը, իհարկե, բացառում է Հայկական Հարցը:

Բայց դրա փոխարեն Վարանդյանը, դաշնակցությունից հնարավոր կառկածանքը փարատելու միտումով, մեղադրում է ազգի «կրթւած» տիրացու-

առիպ Հրապարակախոսներին, «յայտնի ու անյայտ» ցեղերին և գրում հետևյալը. «Ազգը... այսօր մէկ գերագոյն մտահոգութիւն ունի՝ ոչնչացնել Հայ քաղաքական կուսակցութիւնը, վարկաբեկել այն ամենը, ինչ որ կապ ունի ժողովրդային գոյութեան, ինքնապաշտպանութեան ցաւոտ Հարցի հետ: Եւ ահա նրանք, այդ ցեղերը, կրկես են իջել ազատ մամուլի թևերի վրայ, գօտեմարտում են յեղափոխական կազմակերպութեան հետ, որի լուրջ արհամարհանքը միշտ աւելի ամբարտաւանցում, խրախուսում է նրանց»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 112-113):

Այժմ կամենում եմ ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնել դաշնակցության որդեգրած սոցիալիզմի վրա, որն այնպես համազամանորեն ներկայացրել է Վարանդյանը իր վերոհիշյալ գրքում:

Վարանդյանն այն միտքն է արտահայտում, որի Համաձայն պետք է «քաղաքական ու սոցիալական դավանանքների աշխարհում» ներշնչվել ոչ թե ուսական, այլ եկրոպական աղբյուրներից: Իհարկե, նա չի ժխտում, որ ուսանելը «մտավոր կուլտուրայի մեջ» տվել են անգնահատելի և անմոտանալի դասեր, բայց, ըստ նրա «ուսական առանձնայատուկ սոցիալիզմը... մեծ չենք կարող ընդօրինակել»:

Ինչո՞ւ: Վարանդյանը այս հարցին պատասխանում է նշելով, որ ուսական սոցիալիզմին «պակասում է այն լայն ոգին, այն իրապաշտ ու ամբողջական ըմբռնումը, որ ընտրույում է արևմտեան սոցիալիստներին»: Վարանդյանը գտնում է, որ ուսական սոցիալիզմին «յատուկ են վտանգավոր ծայրայեղություններ, սոցիալիստական մի ստարամբժ աղանդականություն: Յեղափոխություն և սոցիալիզմ ձուլում են այնտեղ, ձուլել են միշտ»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 222):

Վարանդյանը ուս սոցիալիստներին մեղադրում է այն բանում, որ նրանց «յեղափոխությունը, քաղաքական յեղարջումը աներևակայելի, անհնարին է թւում առանց սոցիալիզմի և այդ իսկ պատճառով՝ կոխների՝ նոյնիսկ ամենասուր տազնապնների ընթացքում յաճախ մերժում է ոչ սոցիալիստ, բուրժուարդեմոկրատ Հատաձների գործակցությունը: Սերժում է իբրև չարիք, որ կարող է վարկաբեկել պրոլետարիատի, սոցիալիզմի դասը, նրա «կուսական մաքրությունը»»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 222-223):

Այս տեսակետն էլ երակետ ունենալով, Վարանդյանը Հայտարարում է, որ դաշնակցության «սոցիալիզմը ընդհանուր ոչինչ չը պետք է ունենայ այդ ըմբռնումի հետ»: Որովհետև, բացատրում է Վարանդյանը, քաղաքական խեղդիչ մթնոլորտում, ազատագրական դժվարին պայքարի մեջ դաշնակցու-

Թյունը չպետք է մերժի «աջակցությունը, նոյնիսկ ժամանակակառու դաշինքները, այնպիսի տարրերի, որոնք թէև Հակառակ մեր սօցիալական ծրագրին, բայց պատրաստ են գործակցել յանուն ընդարձակ սահմանադրությունան յարթանակի»:

ԻՀարկե, Վարանդյանը նկատի ունի Հանուն «ընդարձակ սահմանադրությունան յարթանակի», առաջին հերթին երիտթուրքերի Հետ 1907 թ. դեկտեմբերի վերջին կնքած Համաձայնագիրը:

Այնուհետև Վարանդյանը գրում է, թե «բուրժուա», «կադետ», «մանր բուրժուա» անունները իրենց չպետք չփոթեցնեն, քանի որ «առելի լաւ է թոյր բուրժուա-սահմանադրական տարրերի Հետ միացած դիրացնել քաղաքական վերիվայրումը, քան թէ միայն պրօլետարիատի ու նման ուրիշ կուլքերին փարած՝ լողալ անվերջ ընկալցիայի ու ստրկութեան արիւնազոյն ճահի մէջ»:

Վարանդյանը Համոզված գրում է, որ Հարկավոր է «արևմտյան «ընկալող մով» ներշնչել մասնատրապէս ազգային ծանր կնճխներին մէջ», որտեղ, ըստ նրա, «ոտակական սօցիալիզմի տիրապետող Հատաձը՝ սօցիալ-դեմօկրատիան ևս մատնում է իր «արտառոց դօզմայնությունը»:

«Ո՛վ չի յիշում,- շարունակում է Վարանդյանը,- այն տենդային ուժակրծունները, որ կրում էր Դաշնակցութիւնը այդ կուսակցութեան դատախազների կողմից, մեր ազգային արիւնոտ ճգնաժամերի միջոցին: Ազգային մարտնի բոլոր վէրքերը, նրա ամենաաղաղակող ցաւերը նետուում էին մետաֆիզիկների ու վերացականութեան սահմանները և ամեն ինչ վերածուում էր «բուրժուազիայի ու պրօլետարիատի» Հակամարտութեան-անգամ թափարական «Վանդէի» մէջ»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 224-225):

Վարանդյանը դրվատանքով է խոսում 19-րդ դարի 60-80-ական թվականների ուս Հեղափոխականների մասին, որոնք «եղել են աւանդականօրէն յարգող ազգային իրաւունքների և պահանջների»:

Բայց նրա կարծիքով այդ «աւանդական ընթացքից» բացառութիւն է կազմել «ոտակական սօցիալ-դեմօկրատիան, որ սիրով Հանդիսանում է ապաղզային, երբ ինդիքը վերաբերում է ոչ-ոտա ազգութիւններին, բայց որ անվերջ ծօրէն ազգային է և թունդ Հայրենասէր՝ երբ Հարկատր է շեշտել ոտա ազգութեան ու Հայրենիքի իրաւունքները»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 225):

Անդրադասնալով ոտակական սօցիալ-դեմօկրատական մարքսիստական կուսակցության կողմից ընդունված «Ազգային ինքնորոշման» բանաձևին, Վարանդյանը դա գնահատում է որպէս «ծրագրային մի պաճուճանք», «մի

աւերորդութիւն, որ յամենայն դէպս չի գտնում կիրառութիւն գործնականի մէջ և մինչև իսկ արգելք լինում ուրիշ ազգերի ինքնուրույնութեան ձգտումներին, ի ցոյց դնելով այդ ինքնուրույնութիւնը յաճախ իբրև «բուրժուազական» մի ցանկութիւն. . . : Նոյն Փրագէօրգիան ծայր է տալիս և մեր Հայ ս.դ.-ական սահմանափակ գրականութեան մէջ»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 226-227):

Վարանդյանին դուր չի գալիս, որ Ռուսաստանի սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւնը «Հակառակ բոլոր Համանուն արևմտեան կուսակցութիւնների, կողմակից է Հանդիսանում կենտրոնական պետակազմի», որ այդ կուսակցութիւնը «ուզում է լինել ավատրիական սօցիալ-դեմօկրատիայի Հակապատկերը»:

Վարանդյանը նշում է, որ Ռուսաստանի, Կովկասի պայմաններում սօցիալիզմի գաղափարի մեջ երևան են եկել «Հիւանդոտ ծայրայեղութիւններ», ավելի մեծ չափով է շեշտվել «այդ ախտատր, պաթօլօգիական յափշտակութիւնը»: «Սօցիալիզմի մի թվը կար-սօցիալ դեմօկրատիզմ անունով-որ Հասցրեց գաղափարը անօրինակ խեղաթիւրման և բռնեց ազգայնական և մի շարք ուրիշ Հարցերի մէջ միանգամայն տարօրինակ, Հակասօցիալիստական դիրք»:

Վարանդյանը նշում է, որ սօցիալիզմը դասակարգային նկատումներից բացի, պետք է ղեկավարվի «ընդհանուր և կուլտուրայի ու առաջադիմութեան նկատումներով»: Այդ առաջադիմութեան գրականականներից մեկը նա Համարում է «ազգային արդիւնաբերութեան, ինդուստրիայի զարգացումն ու բարգաւաճումը, որ երբեմն խաթարում էր սօցիալիստական-գլխատրապէս ս.դ.-ական-տակտիկի ծայրահեղութիւններով, բացառապէս Հայ կապիտալիստների դէմ ուղղած գործադուլային Համաճարակներով»:

Ըստ Վարանդյանի տրայգիում է, որ Հայ սօցիալ-դեմօկրատները չպետք է պաշտպանեն Հայ կապիտալիստների շահագործման դեմ Հանդես եկող Հայ բանվորներին: Բայց, թե ով պետք պաշտպանի Հայ բանվորներին՝ դա Վարանդյանին չի Հետաքրքրում:

«Ոչ մի տեղ,- գրում է Վարանդյանը,- աշխատատրութիւնը շահագրգռած չէ իր ազգակից բուրժուազիայի աւերումով: Մասնատրապէս Հայ պրօլետարիատին-որ մատնւած է Անդրկովկասում բացառիկ վիճակի, դուրս վտարւած գրեթէ բոլոր օտար ու կատալորական ինդուստրիանից-ընտւ ձեռնտու չէ Հայ արդիւնաբերող դասակարգի տնտեսական քայքայումը»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 351-352):

ԻՀարկե, Վարանդյանը չի ժխտում, որ Հայ աշխատատրութիւնը իրա-

վունք ունի կազմակերպված կուլի ճանապարհով «գիշտաներ իղել Հայ բուրժուազիայից», բայց նա «երբէք չը պիտի ցանկանայ, որ այդ Համացեղ արդիւնաբերող դասակարգը կու գնայ ուրիշ, դրացի կապիտալիստների մրցման մէջ և տնտեսապէս կորստեան մատնւի»: (Նույն տեղը, էջ 352):

Վարանդյանը, այսպիսով շատ հատակ, իր կուսակցութեան անունից, հանդես է գալիս Հայ բուրժուազիայի պաշտպանութեան շահերից: Եվ, նաև զարմանալի է, որ դաշնակցականները զայրանում էին, երբ Շահումյանը նրանց պարտավում էր բուրժուազիային պաշտպանելու, նրա շահերը արտահայտելու համար:

Վարանդյանը իր աշխատութեան մեջ անդրադառնում է նաև Թուրքիայի պայմաններում սոցիալիզմի գաղափարին: Իբրև դրա առաջին քայլ նա համարում է Թուրքիայում գոյութիւն ունեցող կուսակցութիւններից դաշնակցութեան ընդունումը Երկրորդ ինտերնացիոնալի մեջ: Երկրորդ քայլը նա համարում է մահմեդական և քրիստոնյա տարրերից կազմված Մակեդոնական կուսակցութեան ընդունումը կլինի Երկրորդ ինտերնացիոնալի մեջ: «Գաղափարը նետած է արդէն,- վստահ գրում է Վարանդյանը,- և նա կերթայ անդիմադրելի առաջնադասութեամբ, շարունակական նւաճումներով»:

Այնուհետև Վարանդյանը շարադրում է սոցիալիզմի մասին դաշնակցութեան ծրագիրը և նշում, որ դրա իրագործումը Թուրքիայում դյուրին չի լինելու: «Շատերը կան,- գրում է Վարանդյանը,- անբուժելի թերամտութեամբ ու կոնտինիզմով վարակւած շատ շատերը Հայ և մահմեդական շրջաններում, որ անւանում են մեր ծրագիրը ցնորական, փնասակար, նոյնիսկ «վտանգալոր» պետութեան ամբողջութեան համար»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 360):

Բայց Վարանդյանը համոզված է, որ դաշնակցութեան ծրագրում արտահատված քաղաքական և տնտեսական պահանջները «բխում են կենդանի իրականութիւնից, մեր բոլոր տենչերը ուղղւած են դէպի նոյն մեծ նպատակը-ազատ պահել այդ հոգևարք-երկիրը, ամբողջ օսմանեան պետութիւնը, նոր, հարատու արկածներից ու ցնցումներից, ազատ՝ բոլոր ազգայնական հատածների բարօրութեան հաստատման մէջ»:

«Սենք ենք,- շարունակում է Վարանդյանը,- որ քաղաքական ապակինտրոնացման մեր նախազգով առաջադրում ենք լաւագոյն միջոցը, ապահովելու պետական ամբողջութիւնը, հանգցնելու կենտրոնախոյս լալաների մը տարրերը հրաբուխը, որ այսօր իսկ այբանական ապստամբութեամբ դող է պատճառում թիւրք ու օտար դիւանագէտներին»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 360-361):

«ՕՍՄԱՆՅԱՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ»

Ահիտում էմ, որ տեղի սղութեան պատճառով հնարավորութիւն չունենալով հանգամանորեն ընթերցողին ներկայացնել Վարանդյանի նկատած այբանական ապստամբութեան մասին:

Բայց միայն կարող եմ ընդգծել, որ այն ժամանակ, երբ Ադանայի կոտորածից հետո դաշնակցութիւնը շարունակում էր երիտթուրքերի հետ սիրախաղը, երբ մտահոգված էր Թուրքիայի պետական ամբողջութիւնը պահպանելով, վերոհիշյալ այբանական կուսակցութիւնը 1909 թ. կազմակերպեց ու համախմբեց այբանական ժողովրդի բոլոր խավերին ու կազմակերպութիւններին, բարձրացրեց ապստամբութիւն և ձեռք բերած հաղթանակով 1912 թ. ապահովեց Ալբանիայի անկախութիւնը:

«Սենք ենք դարձեալ,- վերջապես ազդարարում է Վարանդյանը,- որ տնտեսական կամ սոցիալական մեր ծրագրով ու մեր իղէայով նպատակ ունինք և պիտի ձգտենք-մեր քսանամեա արիւնսալառ վիպերգութեաններ շնչած կորովով-ստեղծել այն կուռ, մեծագործ շաղախը, որ պիտի միացնէ այդ կենտրոնախոյս, հակամարտ, ատերութեան դարատուր թոյնով մշակւած՝ այլաբանական ազգութիւնները»:

«Դա,- պարզաբանում է Վարանդյանը,- միջազգայնութեան (ինտերնացիոնալիզմ) արծարծումն է, մեր ծրագրային պրօպագանդի անհրաժեշտագոյն նիւթը, կարելի է ասել, նրա վախճանական նպատակը: Փարած մեծ, Համաշխարհային Ինտերնացիոնալիստ-մենք պիտի աշխատենք կազմակերպել մեր փոքրիկ, սահմանափակ օսմանեան ինտերնացիոնալը, (ընդգծումն իմն է-Վ. Պ.) որից դուրս չիք փրկութիւն և որի աստիճանական իրականացման մէջ միայն կարող է ապրել ու բարգաւաճել մեր ազգային, ժողովրդական էութիւնը ևս»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 361):

Ինձ մտում է ասել, որ օսմանեան ինտերնացիոնալի ստեղծման սին գաղափարներով տարված դաշնակցութիւնը չկարողացավ, գուցէ ճիշտ կլինի նաև ասել, որ չուզեցավ լրջանալ, չուզեցավ սթաբիլիլ ու արևանտահայութեանը փրկել այն մեծ ողբերգութիւնից, որի հետևանքները մինչև օրս հնարավոր չի եղել վերացնել:

Վարանդյանն իր գրքում անդրադառնում է կովկասյան սոցիալ-դեմոկրատիային, որտեղ «Ազգային ինքնորոշման» բանաձը, ըստ Վարանդյանի, «ուժ ու արժէք ունի միայն տիրապետող վրացական հատվածի համար»:

Խոտելով ազգային հարցի մասին Վարանդյանը շարադրում է «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» մասին դաշնակցութեան տեսակետը:

«Թուրքաց Հայաստանում,- գրում է նա,- ինչպես կայսրութեան մի շարք ուրիշ հաստատման մեջ, ինչպես նաև Ռուսաստանում, Աստորիայում-ազգային հարցի բաւարար լուծումը կնճռոտուում է այն ծանր հանգամանքով, որ տարացեղ ազգաբնակութիւնները հիւսուում են, խճողուում գրեթէ բոլոր ծայրերում, քաղաքներում ու գաւառներում. կան ամեն տեղ մեծամասնութիւններ ու փոքրամասնութիւններ-վերջինները, տարաբախտաբար, մեծագոյն մասամբ բաժին են ընկած Հայութեան-մի հանգամանք, որ չափազանց պիտի բարդացնէ ինքնօրինութեան ու ինքնավարութեան պրօբլեմը զարց ապակենտրոն երկրի մէջ, թէ չըջանի, թէ գաւառի և թէ նոյնիսկ համայնքի սահմաններում»։ (Մ. Վարամբեան, նույն տեղը, էջ 241)։

Վարանդյանը նշում է, որ Հեղինակավոր գիտնականները վաղուց մշակել են ազգային լավագոյն ծրագիրը, որը «կիրառելի է բոլոր տարացեղ պետութիւնների մէջ»։ Այդ ծրագրի առաջին պահանջն է «այսպէս անսանձած կուտուրական ինքնօրինութիւնը», որը Վարանդյանը համարում է «առաջին մեծ սպեղանին՝ ազգայնական վեճերով հիւանդ, տառապող պետութեան համար։ Կուտուրական ինքնօրինութիւնը, ավտոնոմիան, արտահոգային (էքստերիտօրեալ) կամ անձնական սկզբունքի կիրառումն է»։

Հարկ եմ համարում ստորև մեջբերել Վարանդյանի ամբողջական բացատրությունը։ «Ազգը,- գրում է նա,- թեկուզ և ցիրուցան պետութեան ամբողջ տարածութեան վրայ, կազմում է իրաւական ու օրգանական մի ամբողջութիւն իր ազգային կենտրոնական խորհրդով, իր գաւառական խորհուրդներով, միահեծան տէր ու տնօրէն իր բոլոր կուտուրական ու հոգևոր հաստատութիւնների, նա իրաւունք ունի հիմնելու և վարելու քաղաքներում, գաւառներում, համայնքներում-իր սեփական դպրոցները, թէ ծխական, թէ միջնակարգ ու բարձրագոյն ակադեմիաները, համալսարանները, մուզէները, թատրոնները, հրահրակոցներն ու բարեգործական ընկերութիւնները և այլն, մի խօսքով այն բոլոր հիմնարկութիւնները, որոնք անհարժեշտ են մի ազգի՝ իբրև ուրոյն, առանձնատիպ ցեղապատմական ամբողջութեան՝ ազատ, անարգել առաջադիմութեան համար։ Այս է «կուտուրական ինքնօրինութեան» ամբողջական իմաստը»։ (Մ. Վարամբեան, նույն տեղը, էջ 242)։

Վարանդյանը հույս է հայտնում, որ Թուրքիայում, Ռուսաստանում և Իրանում հայ ժողովուրդը իր զարգացման ու ազգային ինքնորոշման ճանապարհի վրա «մի մեծ էտապ նւաճած կը լինի», երբ ստանա արտահոգային ինքնօրինութեան իրավունքը «իր ամբողջական կիրառութեամբ», որը որոշ

չափով վայելում է «իր երեք ընտանավայրերում»։ Եվ իբրև դրա՝ «կուտուր-ազգային ավտոնոմիայի» իրագործման ապացույց, Վարանդյանը հիշեցնում է Թուրքիայում Հայոց սահմանադրութեան գոյությունը։

Դրա հետ միասին Վարանդյանը նկատում է Թուրքիայում եղած քաղաքական և տրամաբանական անհեթեթութիւնը, որն արտահայտուում է նրանով, որ «հայ ազգային կուտուրական ավտոնոմիան Տաճկաստանում գոյութիւն ունի դե ֆակտո, ոչ դէ յուրէ։ Կայ Ազգային խորհուրդ, որ տնօրինում է բոլոր «ներքին» գործերը, կայ ազգային պաշտօնական ներկայացուցիչ կառավարութեան, պետութեան հանդէպ, բայց «ազգը» չի ճանաչուում իրաւապէս, սահմանադրական նոր ուժիմը ճանաչում է սուսկ կրօնական համայնքներ՝ օսմանցիութեան հանրանւան սուսկ»։ (Մ. Վարամբեան, նույն տեղը, էջ 243)։

Վարանդյանը հույս է հայտնում, որ ապագայում Թուրքական պետութիւնը ճանաչելու է հայ ազգութեան «զուտ ազգային-իրաւական դէմքը»։

Այնուհետև Վարանդյանը շարադրում է «ազգային-կուտուրական ավտոնոմիայի» մասին դաշնակցութեան ծրագրի մանրամասները և լավատեսական տրամադրութեամբ գրում է, որ Արևմտյան Հայաստանում «հայ ժողովուրդը կունենայ իր ազգային կատարեալ ավտոնոմիան, ինքնավարութիւնը, գէթ լաւագոյնը, որ հնարաւոր է երևակայել մեր միջնակարգում»։

Նա նաև այն միտքն է հայտնում, որ եթե դաշնակցութեան ծրագրի «ազգային ինքնավարութեան այս ազատարար սկզբունքները այսօր կամ վաղը իրագործելու բաներ չեն», ապա դա չի նշանակում, որ պետք է լուծիւյան մատնել այն և ավելացնում է. «...չի կարելի ողբերգականացնել, ողբերգութիւն ընդունել մեր իրականութեան-նոյնիսկ Թուրքահայկական իրականութեան-այսօրւան տարևանտութիւնները և այրափտով ցաւազին ֆիասկօներ գոչակել մեր ծրագրային այդ սկզբունքների համար»։ (Մ. Վարամբեան, նույն տեղը, էջ 253)։

Այսքանով վերջացնեն դաշնակցութեան սոցիալիզմի, «ազգային-կուտուրական ավտոնոմիայի» մասին Վարանդյանի շարադրած տեսութեան վերլուծությունը։

Հանողված եմ, որ անաչառ ընթերցողը հնարավորութիւն ունի դատելու, թե որքանով էին արդարացի դաշնակցութեան գաղափարախոսները Շահումյանին քննադատելու մեջ, քննադատութիւն, որ միշտ աղերսվում է նրան վարկաբեկելու հետ...

ՓԼՈՒՆ 7 ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է ԱՔՍՈՐԻՑ

Ասորախանի աքսորում Շահումյանը մշտապես գտնվում էր ոստիկանության հսկողության տակ: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 170, թ. 1): Ոստիկանությունը հարուցում էր գաղտնի ու բացահայտ դժվարություններ ոչ միայն նրա գործունեության, այլև ընտանիքի համար ապրուստ հոգալու գործում: Շահումյանի ընտանիքի փիճակը ինչ-որ չափով թեթևացնում էր Եկատերի նա Սերգենայի հոր նյութական աջակցությունը:

Շահումյանը, թեև դժվարությամբ, բայց որդիական պատասխանատվությամբ էր վերաբերում Թիֆլիսում ապրող իր ծնողներին օգնություն ցույց տալուն: Ահա, օրինակ, 1913 թ. նոյեմբերի 12-ին մորը գրած նամակը, որով նրան է ուղարկում 10 ռուբլի և գրում է. «Սիրելի մայրիկ, ներիր, որ այս անգամ ուշացրի փողը: Ցանկանում եմ քեզ ատղձություն և երկար կյանք: Հատուկ եմ բոլորիդ քեզ նատույին և երեխաներին»: (ՈՍ. Հ. Բաղդասյան, Ստեփան Շահումյան, էջ 322):

1913 թ. փետրվարի 21-ին Նիկոլայ Երկրորդի մանիֆեստով Ռուսաստանի ղեկնաստիպի թագավորության 300-ամյակի առթիվ հայտարարվում է ներում: Այդ կապակցությամբ 1913 թ. դեկտեմբերի 8-ին Շահումյանը խնդրագրով դիմում է Կովկասի փոխարքային: Նա հայտնում է, որ 1912 թ. հունիս ամսից Բաքվի քաղաքապետի կողմից 5 տարով արտաքսվել է Կովկասի սահմաններից և գտնվում է իր ընտրած Ասորախան քաղաքում և միաժամանակ խնդրում է տեղեկացնել, թե «թագավոր կայսրի սույն թվականի փետրվարի 21-ի հրամանագիրը որևէ ազդեցություն ունեցել է» իր ճակատագրի վրա: Ցարական մանիֆեստի հիման վրա Շահումյանի աքսորի ժամկետը կրճատվում է մեկ տարով: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 55, թ. 3):

Մինչ Շահումյանը սպասում էր իր խնդրանքի պատասխանին, 1914 թ. հունվարի 26-ին Թիֆլիսում Ս. Կապանի խմբագրությամբ սկսեց լույս տեսնել «Սեր խուբը» բոլշևիկյան շաբաթաթերթը:

«Սեր խուբը» թերթի առաջին համարում, 1914 թ. հունվարի 26-ի հարպարակվում է Շահումյանի «Չորրորդ պետական դրաման» հոդվածը, որտեղ նա տալիս է նախորդ դրամարման երեք Պետական դրամաների բնութագիրը և քննադատում է ռուսական լիբերալիզմի տեսակետն արտահայտող Մյուրկովին, որը Պետական դրամայի հրավիրումը համարում էր որպես Ռուսաստանում գոյություն ունեցող սահմանադրություն:

«Եվ տարիների ընթացքում,- գրում է Շահումյանը,- Ռուսաստանի լիբերալիզմը հանձինս միլյոնավորների ոչ մի ջանք չի խնայել-ավաղ անհաջող վարկաբեկ անելու բանվոր դասակարգի և նրա ղեկավար կուսակցության տակտիկան և ներշնչելու ժողովրդին, որ Ռուսաստանն արդեն սահմանադրական, պառլամենտական երկիր է, որ նա կարիք չունի այլևս մասսայական քաղաքական ակտերի, և որ իր բախտը ժողովուրդը կարող է միանգամայն վստահել կադետական ճառագիտներին ու «դիպլոմատներին»:

Շահումյանը նշում է, որ «բոլշևիզմի հաղթանակի» սարսափն ազդել է ամբողջ բուրժուական ու ադնական բանակի վրա ու գրում է. «Ով աչքեր ունի տեսնելու և տեսնում է, թե ինչ է կատարվում Ռուսաստանում վերջին երկու-երեք տարիների ընթացքում, նա պետք է, որ այդ «ուրվականը» վախեցած բուրժուազիայի հիվանդոտ երևակայության արդյունք չէ, այլ վերին աստիճանի իրական և «չոչափելի» երևույթ»:

Շահումյանը նկատի ունի «հարստերեն» գյուլի բարձրացրած բանվորական շարժումը, որը «սահ ու սարսափ է ազդում ռեակցիայի միացյալ բանակի» վրա: Եթե այս շարժումը հանգստությունից զրկում է իշխող դասակարգերին, ապա «եռանդով ու ոգևորությամբ» է լցնում Պետական դրամայում բանվոր դասակարգի ներկայացուցիչներին: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 323-328):

Նկատի ունենալով Շահումյանի հորվածի վտանգավոր ուղրությունը, Թիֆլիսի մամուլի կոմիտեն կարանք է դնում «Սեր խուբը» թերթի վրա և փակում այն: Այդ կապակցությամբ ժանդարմական գնդապետ Ֆեոդորինը Թիֆլիսից Ոստիկանության ղեկավարամենտին ուղարկած գեկուցագրում հայտնում է, որ Շահումյանը «ամենաաշխույժ կերպով» հետաքրքրվում է Պետական դրամայի սոցիալ-դեմոկրատական խմբակցության գործունեությամբ և կապված է ՌՄԻԿ սկանսավոր աշխատողների, այդ թվում Վ. Ի. Ուլյանովի հետ:

Գնդապետը հայտնում է նաև, որ Շահումյանը 1914 թ. հունվարի 7-ին Ասորախանի հայկական կոմիստորիայի շենքում ռեֆերատ է կարդացել «հայկական ազգային հարցի շուրջ»:

1914 թ. մարտի 7-ին Շահումյանը ցարական մանիֆեստի հիման վրա ազատվում է աքսորից և նույն օրվա երեկոյան ընտանիքով հեռանում է Ասորախան քաղաքից: Այդ մասին մարտի 13-ին Ասորախանի նահանգի ժանդարմական վարչության պետը Բաքվի իր կորեզային հայտնում է հետևյալը. «Կովկասի փոխարքայի փետրվարի 14-ի գրությամբ Ս. Գ. Շահումյանին իրավունք է տրվել ապրելու կովկասյան երկրամասի տարածքում, որը ս. թ. մարտի 7-ին հարկազանց արձակվել էր»:

տի 7-ից Աստրախանից ճանապարհով է Բաբու և սպրիչու է Շիրակի գլխավոր գրասենյակի շենքում»։ (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 171, թ. 1)։

Մի քանի օր անց, մարտի 19-ին Աստրախանի նահանգի ժանդարմական վարչության պետը Բաբու է հայտնում, որ Բաբու վերադարձող Շահումյանի մոտ, ըստ տեղեկությունների, «պետք է լինի սոցիալ-դեմոկրատական կուսակցության անդամ գրականություն» և խնդրում է կատարել խուզարկություն ու հայտնել արդյունքների մասին։

Շահումյանը սկզբում մեկնում է Թիֆլիս, հանդիպում է մորը, կապվում այնտեղ գործող կուսակիցների հետ և միայն մարտի 27-ին ուղևորվում է Բաբու։ Այստեղ Շահումյանի նկատմամբ անմիջապես հաստատվում է ոստիկանական հսկողություն։

1914 թ. մայիսի 17-ին Լենինին ուղարկած նամակում Շահումյանը հայտնում է, որ փոխարքայի կարգադրությամբ իրավունք է ստացել վերադառնալ Կովկաս։ «Եվ ահա,- գրում է նա,- մեկ ամսից ավելի է, ինչ Կովկասում եմ՝ մեկ Թիֆլիսում, մեկ Բաբուում։ Այժմ ես վերջնականապես հաստատվել եմ այստեղ՝ Բաբուում։ Գրեթե բոլորի հետ տեսնվել եմ, ուստի հետ կարելի էր տեսնվել»։

Այնուհետև Շահումյանը տեղեկացնում է իր տպավորության մասին, որը «չստ վատ է» և ընդգծում է, թե ուրախ կլինեմ, «եթե դուրս գար, որ ես չափազանցնում եմ»։ Իր տպավորության մասին Շահումյանը գրում է. «Շոք հանուր առմամբ այստեղի բանվորները ստակալի մերկանտի մարդիկ են։ Նախապես շահումյանի վերաբերմանը գիշատչականությունն ազդում է նաև նրանց վրա։ Հաճախ մոմտում և խոտում են նոր տնտեսական գործադուլի մասին, որպեսզի դարձյալ մի յուրալի պատատ պոկեն և ավելացնեն «պարզևաղբա մը», այդ բարեբը հեշտ է ձեռք բերվում, բայց չկա ամենափոքր իսկ հետադարձություն դեպի քաղաքականությունը, ամենափոքր իսկ հոգատարություն կազմակերպություն ստեղծելու մասին, միություն ամրապնդման մասին և այլն»։ (Ատ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 329)։

«...ԱՅԼԵՎՍ ՀԱՊԱՂԵԼ ՉԻ ԿԱՐԾԼԻ...»

Բաբու վերադառնալուց հետո Շահումյանին հաջողվում է իր խմբագրությունը կազմակերպել նոր՝ «Наша жизнь» թերթի լույս ընծայումը։ (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 55, թ. 1)։ 1914 թ. ապրիլի 19-ին լույս է տեսնում թերթի առաջին համարը, որտեղ հրատարակվում են Շահումյանի երկու հոդվածները։ Դրանցից մեկը «Բաբու, 19 ապրիլի» առաջնորդողն էր։

Շահումյանը հենց առաջնորդող հոդվածի սկզբից ազդարարում է, որ «մի

ամբողջ տարի է անցել», ինչ հետադիմության հարածանքների պատճառով դադարեցրել է իր գոյությունը բանվորական մամուլը։ Այդ ընթացքում շատ բան է փոխվել բանվորական շարժման մեջ։ Առաջին պլան էր մղվել ապահովագրական դրամարկների հարցը, որն այլևս տեսական բնույթ չունեցրել և դարձել էր բանվորական լայն մասսաների ուշադրության առարկան։

Շահումյանը նկատի ուներ Չորրորդ պետական դուռնայի ընդունած բանվորների ապահովագրական օրենքը, որն ուղղված էր պրոլետարիատի նկատմամբ ճշդումն ավելի ուժեղացնելու նպատակին։

Այդ օրենքի հիման վրա Բաբուի նախապես շահումյանի վերաբերմանը, որոնք ավելի կազմակերպված էին գործում, նախաձեռնում են իրականացնել ապահովագրական կամպանիան և օգտվելով այն իրողությունից, որ սկզբնական չրջանում Բաբուի բանվորները չէին ընդունել ապահովագրական օրենքը, սկսեցին կենսագործել այդ օրենքը։

Ահա այս իրավիճակն էլ նկատի ունենալով, Շահումյանը գրում է, որ այլևս հարկավոր չէ խոսել այդ օրենքների լավ կամ վատ լինելու մասին։ Այլ հարկավոր է, նշում է նա, խոսել «այն մասին, թե ինչ եղանակով մասսագործները դրանք, բանվորական ինչպիսի տակտիկա պետք է հակադրել կապիտալիստներին»։

«Եվ այդ սապարեզում,- շարունակում է Շահումյանը,- այլևս հապաղել չի կարելի, քանի որ ամեն մի հապաղում սոյալ դեպքում հավասարազոր է հակաակորդի նկատմամբ թողտվության և նրա ուժեղացման»։

Այս ամենն էլ նկատի ունենալով Շահումյանը գրում է. «Ճիշտ տակտիկա սահմանելը և նրա կենսագործմանն ամեն կերպ աջակցելը պետք է կազմի մեր թերթի գլխավոր խնդիրներից մեկը»։

Այնուհետև Շահումյանը նկատի ունենալով վերջին մեկ տարվա ընթացքում բանվորների կյանքում տեղի ունեցած իրադարձությունները, արհմիութենական շարժման որոշ աշխուժացումը, գրում է, որ թերթի ամենակարևոր խնդիրն է բացահայտել բանվորական շարժման անկման պատճառները, աջակցել արհեստակցական շարժման վերածննդին և նորոգմանը։

Նկատի ունենալով 1913 թ. ամռանը Բաբուի բանվորների գործադուլի ժամանակ ձեռք բերած հաղթանակը, Շահումյանը խնդիր է դնում ամփոփել դրա արդյունքները։ «Ձեռք բերած նվաճումների արդյունքների հանրագումարը, անցած շարժման թույլ կողմերի ու դրանց պատճառների բացահայտումը դարձյալ կարելի է կատարել միմիայն ինքնուրույն բանվորական մամուլում»։

Շահումյանը կարևորում է Ռուսաստանի բանվորական շարժման Հեռ Բաբբի բանվորների ընդհատված կապի վերականգնումը և ընդգծում է. «Եվ այդ կապը վերականգնելը, տեղականն ընդհանուրի Հեռ միավորելը-ահա այն կենտրոնական գաղափարը, որով պետք է տողորված լինի մեր թերթը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 331-333):

Հաջորդ հոդվածը Շահումյանը նվիրել է բանվորական մամուլի օրվան: Շահումյանն ընդգծում է բանվորական մամուլի ունեցած կարևոր դերը, ցույց է տալիս նրա դեմ «կյանքի տերերի» գործադրած բռնությունները, հարածանքը, սուզանքները, հարուցած բազում դժվարությունները և այդ ամենը բացատրում է այն իրողություններով, որ «բանվորական մամուլը բանվորների դատակարարային զարգացման ամենահզոր միջոցներից մեկն է», որ բանվորական մամուլը «միավորում է մի ընտանիքի մեջ ամբողջ բազմացել ու բազմապեզու բանվորական Ռուսաստանը և Համախմբում նրան՝ պլանաչափ և սովորուն պայքար մղելու իր բանվորական շահերի համար»:

Շահումյանը վստահություն է հայտնում, որ Բաբբի բանվորների «հարգատ գործն» է պաշտպանել ու աջակցել բանվորական մամուլին: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 334-336):

1914 թ. ապրիլի 26-ին «Наша жизнь» թերթի երկրորդ համարում հրատարակվում է Շահումյանի «Բաբու, 26 ապրիլի» հոդվածը: Այստեղ Շահումյանը դնում է արհեստակցական ու բանվորական այլ ուժեղ կազմակերպություններ ունենալու խնդիրը: Ստեղծված պայմաններում իրենց լուծումն են պահանջում այնպիսի հարցեր, ինչպիսին են տնտեսական պայքարը, ապահովագրական կամպանիան, բնակարանային պայմանների բարելավումը, մասսաների կուլտուրական մակարդակի բարձրացումը, տեղական կոոպերատիվ շարժման մեջ առողջ գաղափարներ մտցնելը և այլն:

Այս վիթխարի խնդիրները պետք է լուծեն արհեստակցական միությունները: Բայց քանի որ դրանց քիչ բանվորներ են մասնակցում, ուստի չափազանց թույլ են այդ խնդիրները կենսագործելու համար:

Շահումյանը «այս տիրալի երևույթը» բացատրում է նրանով, որ Բաբբի պրոլետարիատը, որը տանջվում է «արդի իրականության ճնշմանց», դեռևս չի վարժվել «համառ պայքար մղելուն»:

Հիշեցնելով 1903-1906 թթ. Բաբբի բանվորների Հաջող ելույթները, որով նրանք գրավել էին ամբողջ Ռուսաստանի ուշադրությունը, այժմ, երբ աշխուժանում է Համառուտական բանվորական շարժումը, «Բաբբի բանվորը դեռ չի կարողանում իր սեփական ուժերի վրա կանգնել... Հատկապես Հենց այժմ

է ամենից ավելի ուժեղ կերպով զգացվում տեղիս բանվորական շարժման թույլ կողմը»:

Եվ այս ամենի պատճառով է Շահումյանը բացատրում, թե ինչու գործատերերն այդպես Հեշտություններ Բաբբի բանվորներից ետ են խլում նրանց տնտեսական ու կուլտուրական նվաճումները:

ՈՒԺԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Ստեղծված վիճակից դուրս գալու և առաջ շարժվելու միակ միջոցը Շահումյանը համարում է ուժեղ կազմակերպություն ունենալը և դնում է Հետևյալ խնդիրը. «Ներկայումս Բաբբում բանվորական միջավայրում նկատվում են աշխուժացման նշաններ: Առաջավոր բանվորների խնդիրն է՝ օգտագործել այդ նպաստավոր տրամադրությունը նոր կազմակերպություններ առեղծելու և Հներն ամրապնդելու նպատակով»:

Շահումյանը կոչ է անում. «Ամենից առաջ՝ կազմակերպություն: Հարկավոր է այս գաղափարը դարձնել Բաբբի բանվորների հարազատ սեփականությունը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 337-339):

1914 թ. մայիսի 3-ին «Наша жизнь» թերթի 3-րդ համարում հրատարակվում է Շահումյանի «Պատմական 25-ամյակը» հոդվածը նվիրված Երկրորդ ինտերնացիոնալի ստեղծմանը: Նա նշում է, որ բանվորական շարժումը տարեցտարի աճում ու ընդլայնվում է՝ ընդգրկելով նորանոր երկրներ և ընդգծում է Հետևյալը. «Չկա մի այնպիսի արգելք, որ կարողանա երկար ժամանակով կասեցնել նրա հաղթարշավը: Ոչ լեզուն, ոչ առանձնահատուկ բարքերը, ոչ էլ պետական կարգի ձևերը մի բան ի վիճակի չէ խանգարելու նրան իրագործելու մարդկության միավորման ու ազատագրման մեծ գործը»:

Շահումյանը լավատեսորեն է տրամադրված բանվոր դասակարգի ազատագրական շարժման կրողը լինելու մեջ, որի ելույթներն ավելի են ազդեցիկ դառնում և «ամենուրեք ուժեղանում է նրա ներգործությունը Հասարակական և քաղաքական կյանքի ընթացքի վրա, որովհետև նա է ապագայի այն դասակարգը, որի վրա պատմությունը դրել է պատմական մեծ միտա կատարելու խնդիրը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 340-342):

Թերթի նույն համարում Շահումյանը «Բաբու 3 մայիսի» հոդվածում գրում է Չորրորդ պետական դումայի դահլիճից գինված ուժով սոցիալ-դեմոկրատական և աշխատավորական խմբակցության բոլոր դեպուտատներին դուրս բերելու մասին: (Ս. Հ. Բաբբույան, Ստեփան Շահումյան, էջ 341-342):

Ոստիկանության գործակալների միջոցով 1914 թ. ապրիլի 25-ին Հայտնի է դառնում, որ «Наша жизнь» թերթի Հրատարակությանը մասնակցում է «Թիֆլիսի քաղաքացի Ստեփան Գևորգի Շահումյանը, որը սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունում Հայտնի է «Ստեփան» ծածկանվամբ»: Ժանդարմերիան 3-րդ Համարի լույս ընծայումից Հետո փակում է «Наша жизнь» թերթը և բռնագրավում է բոլոր նյութերը: Շահումյանի նկատմամբ ուժեղացվում է ոստիկանական Հակողությունը: Շահումյանը նախաձեռնում է Պետերբուրգում լույս տեսնող «Трудовая правда» թերթին կից «Кавказский листок»-ի սպազորությունը

Այսպիսի պայմաններում գտնվող Շահումյանը ետանդով մասնակցում է Բաբվում բանվորների գործադուլ կազմակերպելով: Նրա ջանքերով գումարված բանվորների լիազորների ժողովներում քննարկվում են պահանջները: Այդ քննարկումներն այնպիսի բուռն մթնոլորտում էին կատարվում, որ բանվորները նույնիսկ չէին ուզում սպասել մինչև պահանջների մշակելուն և սպազորելուն:

1914 թ. մայիսի 26-ին, երկուշաբթի օրը, արդեն այդ պահանջները պատրաստ էին: Նույն օրվա երեկոյան հրավիրվում է բոլոր ֆիրմաներից ընտրված թվով 100 լիազորների ժողով, որտեղ որոշվում է Հաջորդ օրը պահանջները ներկայացնել ֆիրմաների տերերին, իսկ չորեքշաբթի գործադուլ հայտարարել:

1914 թ. մայիսի 28-ին Բաբվի գլխավոր նավթարդյունաբերական ջրման Բալախանիում գործադուլ են անում բոլոր ֆիրմաների բանվորները, որոնց Հետագա երկու օրերին միանում են նաև Բիբի-Շեյբաթի և Սալիտակ քաղաքի մնացած բանվորները՝ թվով 50 հազար մարդ:

ՌՄԻԲԿ Բաբվի կոմիտեն գործադուլավորներին դիմում է Հատուկ կոչով, որը գրել էր Շահումյանը: Ողջունելով գործադուլավորներին, Շահումյանը կոչ էր անում ամուր կանգնել Հիմնական պահանջների Համար, որպես մեկ մարդ, թողնել աշխատանքը և կազմակերպված ձևով «պայքարել մինչև վերջ, մինչև մեր պահանջների լիակատար բավարարումը»: (Սու. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 348-349):

Գործադուլը ղեկավարելու դժվարությունը կայանում էր նրանում, որ ինչպես Շահումյանն է նշում, Համարյա չկան «պիտանի, գիտակից բանվորներ»: (Սու. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 345-346):

Չնայած այդ դժվարությունը, գործադուլը շարունակվում էր: 1914 թ. Հունիսի 13-ին տարածվում է գործադուլային կոմիտեի անունից Շահումյան

նի գրած «Ընկերներ» թուղթիկը: Թուղթիկում թվարկվում են գործադուլավոր բանվորների ներկայացրած պահանջները և նշվում են նրանց անունները, որոնք «դավաճանում են ընկերներին և օգնում բանվոր դասակարգի թշնամիներին»: Նրանցից ոմանք այդ բանն անում են «իրենց տգիտություն, չհասկանալու պատճառով: Բայց նրանց մեջ կան և գիտակից դավաճաններ, որոնք ոստիկանության պաշտպանության տակ ագիտացիա են մղում գործադուլի դեմ և կազմակերպում շտրեյկբրեխերներին»:

Գործադուլային կոմիտեն Հայտարարում էր, որ այդ դավաճանները պատահան են տալու «իրենց խայտառակ գործողությունների Համար» և հրապարակում է նրանցից մի քանիսի անունները: (Սու. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 353-354):

Գարտնի գործակալների Հաղորդմամբ ոստիկանությանը Հայտնի է դառնում, որ Բաբվի բանվորների գործադուլը ղեկավարում է Շահումյանը, որ նա է բանվորներին ուղղված բոլոր կոչերի ու թուղթիկների Հեղինակը: Այդ տեղեկությունների Հիման վրա ոստիկանությունը պատրաստվում է ձերբակալել Շահումյանին: Սակայն ընկերների օգնությամբ Շահումյանին Հաջողվում է խուսափել ձերբակալումից և մեկնել Զալաչոլլի:

Այդ մասին Բաբվի նահանգային ժանդարմական վարչության պետը Ոստիկանության ղեկավարտանունին Հայտնում է, որ խուզարկվել է Շահումյանի բնակարանը, բայց նրան տեղում չեն գտել՝ մեկնել է անհայտ ուղղությամբ: Խուզարկությանը ոչինչ կասկածելի բան չի Հայտնաբերվում:

Մի քանի օր անց, Շահումյանը գաղտնի վերադառնում է Բաբու և շարունակում է ընդհատակից ղեկավարել բանվորների գործադուլը:

Սատիճանաբար Բաբվի բանվորների շարունակվող գործադուլը մեծ արձագանք էր ստանում ամբողջ Ռուսաստանում: Բաբվի բանվորների մասնակի ելույթը, նշում է Շահումյանը 1914 թ. Հունիսի 28-ին Բաբվի բանվորներին ուղղված կոչում, ստանում է Համառուսաստանյան նշանակություն: (Սու. Շահումյան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 355):

Շարունակվող գործադուլը դարարեցնելու նպատակով ոստիկանությունն ու գործարանատերերի գործակալները տարածում են պրովոկացիոն լուրեր շուտով Հայթուրքական կոտորած սկսվելու մասին: Ոստիկանները հարձակվում էին բանվորական հանրակացարանների վրա, ծեծում ու ձերբակալում էին բանվորներին:

Գործադուլային կոմիտեն իր թուղթիկում, որը գրել էր Շահումյանը, կոչ էր անում բանվորներին չթուլացնել պայքարը և ուժապատ թշնամիները

«Հարկադրված կլինեն Հանձնել դիրքերը, դիմել բանակցությունների, խոսել զինուժանների մասին»: (Ստ. Ծաֆույան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 359):

1914 թ. Հուլիսի սկզբին Շահումյանի գրած թեուցիկով գործադրույթին կոմիտեն գգուշացնում էր բանվորներին մասնակի բանակցություններ չվարել առանձին ձեռնարկատերերի հետ, որոնք կփորձեն չնչին զինուժաներով ձախողել բանվորների ընդհանուր ելույթը:

Գործադրույթին կոմիտեն բանվորներին կոչ էր անում պահանջել ընդհանուր բանակցություններ, հրավիրել լիազորների խորհուրդ կոլեկտիվ պայմանագիր կնքելու համար: Ընդհանուր բանակցությունները պետք է սկսվեին միայն ձեռքավարված բանվորներին ազատելու, հարածանքները դադարեցնելու պայմանով: (Ստ. Ծաֆույան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 361-363):

Չնայած Բաքվի իշխանությունների գործադրած ահաբեկումները էին դադարում, բայց գործադրույթի բանվորները շարունակում էին իրենց պայքարը: Ցարական կառավարությանը մեծապես անհանգստացնում էր Բաքվի բանվորների գործադրույթը, որը ճնշելու համար Բաքու է ուղարկվում ներքին գործերի նախարարի տեղակալ Ջուճկովսկին:

Ջուճկովսկին նույնիսկ չփորձեց խորանալ գործադրույթի պատճառների, բանվորների պահանջների մեջ և հայտարարում է, որ գործադրույթը «մի քանի չարամիտ մարդկանց ձեռքի գործն է»: Նա բանվորներին սպառնում է գնդի դիմել, եթե չդադարեցնեն գործադրույթը:

Հայտնելով այս ամենի մասին, 1914 թ. Հուլիսի 19-ին գործադրույթին կոմիտեն Շահումյանի գրած թեուցիկով ազդարարում է, որ «Ջուճկովսկու գալուստը և նրա առաջին կարգադրությունները մի անգամ ևս հաստատում են, որ բանվորները ոչինչ չունեն սպասելու ոստիկանական իշխանությունից, որ նա կսպիտակի դեմ աշխատանքի մղված պայքարում միշտ էլ կանգնած է չար հազործողների կողմը»:

Թուուցիկը բանվորներին կոչ էր անում շարունակել գործադրույթը, թող Ջուճկովսկիները համոզվեն, որ «Բաքվի պրոլետարիատն ամենալուրջ պայքար է հայտարարել ձեռնարկատերերին»: (Ստ. Ծաֆույան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 364-367):

Սակայն ուժերն անհավասար էին: Երկու ամիս տևած գործադրույթի սկսարսվում է բանվորների պարտությունը: Այդ մասին 1914 թ. օգոստոսի 7-ին հայտարարում է գործադրույթին կոմիտեն Շահումյանի գրած թեուցիկով:

Շահումյանը գրում է. «Օմանը զգացումով և սրտի ցավով ստիպված ենք սանել մենք պարտված ենք»:

Այնուհետև նա վերլուծում է պարտության պատճառները: «Դասակարգային ուժը,- գրում է Շահումյանը,- միշտ և ամենուրեք տվյալ դասակարգի կազմակերպվածության մեջ է: Միայն անձնագրահարկային թիչ է, պետք է լինել նաև լավ կազմակերպված ու կարգապահ»:

Անկազմակերպվածությանը է Շահումյանը բացատրում բանվորների շարքերում եղած բարոյալքումը, որի շնորհիվ ձեռնարկատերերը դիտեին գործադրույթի բանվորների ամեն մի քայլը, բոլոր թեուցիկները, որոնց «հետևանքով թշնամիներն իրենց հաղթանակն են տոնում, թեև ժամանակավորապես»:

«Գործադրույթը տանուլ է տրված,- գրում է Շահումյանը,- Բայց այն չպետք է իզուր անցնի, այն մեզ համար դաս կծառայի սպառազին համար: Մեր դասակարգային պայքարը տվյալ գործադրույթում կրած պարտությանը չի վերջանում, որովհետև այն առաջ բերող պատճառները մնում են չոչնչացված»:

«Հաջորդ գործադրույթ,- ազդարարում է Շահումյանը,- այնքան հեռու չէ, և մենք պետք է գործադրենք բոլոր ջանքերը, որպեսզի այդ գործադրույթը դարձյալ դաստարկ ձեռքերով չսկսենք»: Դրա համար հարկավոր է ստեղծել ուժեղ պրոֆեսիոնալ և կոոպերատիվ կազմակերպություններ, խոշոր գործադրույթին ֆոնդ, բանվորական մամուլ:

Այնուհետև Շահումյանն ընդգծում է, որ գործադրույթն ակնառու կերպով ցույց է տվել, որ ամեն մի տնտեսական պայքար քաղաքական պայքար է, ուստի «մեզ հարկավոր է ամուր քաղաքական կազմակերպություն» և բանվորներին կոչ է անում ուժեղացնել այն:

Թուուցիկի վերջում Շահումյանը գրում է. «Կազմակերպության լոզունգը պետք է դառնա օրվա լոզունգը»:

Այսպես ուրեմն, անկազմակերպվածությունից դեպի կազմակերպություն: Պարտությունից դեպի հաղթանակ: Գործադրույթը տանուլ է տրված:

Կեցցե գործադրույթը»: (Ստ. Ծաֆույան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 368-370):

Բաքվի բանվորների գործադրույթը դեկավարելու ընթացքում Շահումյանը զբաղվում էր նաև իր «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» աշխատությունը տպագրելու հարցով: Նա դրա շուրջ նույնիսկ բանակցում է դաշնակցության «Նոր հոսանք»-ի խմբագիր Ղազարյանի հետ: Այդ մասին նա 1914 թ. օգոստոսի 25-ին Բաքվից նամակով հայտնում է բանաստեղծ Հակոբ Հակոբյանին: (Ստ. Ծաֆույան, նույն տեղը, հ. երկրորդ, էջ 371-372): Նույն ամսին էլ Թիֆլիսում լույս է տեսնում «Այլաքս» ստորագրությունը Շահումյանի աշխատությունը, որի առաջաբանի տակ նշված է՝ «10 հունիսի, 1914 թ. »:

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻՆ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՍԱՐ

1914 թ. Հունիսի 17-20-ին «Մշակ» թերթում «Ա. Բոգրանովիչ» ծածկանունով հրատարակվում է Շահումյանի «Հին ուժերը «Նոր ուժի» էջերում» հոդվածը: Այս հոդվածը գրելու առիթը եղել է 1914 թ. ապրիլի 30-ին Թիֆլիսի Երաժշտական ընկերության դահլիճում Վահան Տերյանի կարդացած «Հայ գրականության գալիք օրը» գեղուցման կապակցությամբ «Նոր ուժ» թերթում հրատարակված գրախոսականը:

«Նոր ուժ» թերթը, որը լույս է տեսել ընդամենը 11 համար, խմբագրում էին Արշակ Չամալյանը, Արշակ Ղազարյանը: Թերթին աշխատակցել է նաև Դավիթ Անանունը:

Հարկ եմ համարում նախ ընթերցողին ներկայացնել Տերյանի գեղուցումից մի քանի քաղվածք, որից, կարծում եմ, պարզ կլինի, թե ինչն է այդպես զայրացրել «Նոր ուժ» թերթին:

1. «Հայրենիքի երգը հնչել է մեզանում առավել կամ պակաս ուժեղ եղիչ եից ու խորենացող սկսած մինչև մեր օրերը: Այդ գաղափարը կարմիր թեփ նման անցնում է մեր գրականության միջով սզբբից մինչև մեր օրերը, դարձել է մի անբաժանելի հատկանիշ, գունավորել է մեր ինտելիգենցիայի միտքն ու երևակայությունը դարեր շարունակ, անշուշտ իր կոնկրետ ձևերի որոշ ձևերումն որով ու տարբեր գույներով, սակայն էությունը միշտ նույնն է մնացել մի ֆանտոմ է եղել, մի գորություն, որը մղել է դեպի Հերոսական մարտիրոսություն, դեպի աներևակայելի թալան հոգեկան ու նյութավոր էներգիայի, մի անհասանելի, մի միշտ բաղձալի ցավատանջ իղձ է դարձել այդ անկախ Հայրենիքի, այդ ազգային գոյության գաղափարը»:

2. «...Եթե ազգային այդ դժբախտ հարցը իրոք ազգային կուլտուրայի հարց է և ոչ քաղաքական մի ֆանտոմիստիկա և այն վատ տեսակի, եթե դա կուլտուրական ազատ ինքնորոշման խնդիր է և ոչ պոլիտիկանների մի ոլորմանի ցնորք, ապա հետաքրքրական է դիտել, թե ինչի՞ վրա է հիմնում իր ակնկալությունները մեր ազգային հորժուրժվող ինտելիգենցիան-հրապի ի՞նչ կուլտուրական նպատակների է ձգտում նա, ի՞նչ ճանապարհով և ո՞ւմ միջոցով է կամենում իրականացնել իր բաղձանքը:

Ամենից առաջ, իհարկե, դպրոցն է, որ մտավոր-հոգեկան կուլտուրայի ստեղծման ամենախոշոր մի գործոն է հանդիսանում: Իսկ ի՞նչ է ներկայացնում մեր դպրոցը»:

3. «Ես գիտեմ, որ իմ ունկնդիրներից շատերի, գուցե և մեծամասնության, համար տարօրինակ թվա այս կարծիքս, սակայն ես, այնուամենայնիվ, պիտի

պնդեմ, որ քանի կղերը դեր ունի ժողովրդական դպրոցում, միշտ պետք է կատարվում ու երկուրդով վերաբերվեմ դեպի այդ դպրոցը: Ես գիտեմ, այո, այն մտրացիկ ցնցոտիների նման հին ու փթած առարկությունները, որ արվում են այդպիսի դեպքերում: Այդ առարկությունների ընդհանուր իմաստն այն է, որ մեր կղերը նման չէ ուրիշ կղերին, կամ որ մեր կղերի դերը շատ չնչին է դպրոցական գործում, որ մեր եկեղեցին ժողովրդապետական է, նրա պետք ազդեցություն և այլն, և այլն... Ատում եմ այդ առարկությունները չափազանց միամիտ են և հին: Հայ կղերի դերը մեր պատմության մեջ եղել է շատ խոշոր և շատ կրատաբեր, ավերիչ բառ ամենայնի: Սեմինարիստական-սիրացուկան մտածողությունն է ստեղծել այդ արատուրային կարծիքը մեր կղերի վերաբերմամբ, և ինքը կղերը, որ մինչև այժմ հովանավորում ու սնում է այդ սեմինարիզմը, ամեն ջանք գործ է դրել, որ այդ սխալը, որպեսզի ավելին չասեմ, գաղափարը հաստատվի ժողովրդի մեջ: Պատմության մեջ չափազանց մեծ դեր է վերագրվում մեր կղերին, իբր ազգի լուսավորության և Հոգեկան-կուլտուրական պահանջները հոգացող ժրջան մի դասի...»:

4. «Հայտնի է, թե որպիսի բուռն եռանդով, որպիսի ֆանատիկոս ատեություններ կղերը ոչնչացրել է ամեն ինչ, որ աշխարհիկ բնույթ է ունեցել: Վերջապես չպետք է մոռանալ և այն հանգամանքը, որ այն բոլոր սքանչելի գործերը, որ վերագրվում են մեր կղերին, արձանագրվել են նույն կղերի պաշտոնյաների, կղերական անձերի ձեռքով-այսինքն ինքը կղերականությունն է գուրբանական պատմություններ գրել իր մասին: Սեղ գրեթե ոչինչ չի հասել ոչ հեթանոսական գրականությունից, ոչ էլ այն գրականությունից, որ անտարակոյս գոյություն է ունեցել, բայց հայածվել է ու ջնջվել իբրև հերետիկոսական, աղանդավորական»:

5. «Թե որքան սահմանափակ է մտքով և տգետ մեր կղերը, դրա մասին երկու կարծիք չի կարող լինել-այդ ամենքին քաջ Հայտնի է, սակայն մեր ազգային կոչվող ինտելիգենցիան մի խոր քաղաքագիտական ստոնով պնդում է միշտ այն անխնայատ միտքը, թե կղերը պաշտոնական ներկայացուցիչ է Հանդիսանում պետության առաջ: Կարծես թե էլ ուրիշ միջոց չկա ժողովրդի համար իրա ներկայացուցիչն ունենալու, եթե միայն այդպիսի մի ազգային ներկայացուցիչ կարիք կա:

Ամեն ոք, ով չահագրգռված է մեր ժողովրդի առաջադիմությունները, ամենից առաջ կղերի դեմ պիտի ուղղել իր հարվածները:

Մի ուշագրավ հանգամանք:

Ամենուրեք կղերը հանդիսանում է հասարակության ամենալոյալ մասը,

նա միշտ հլու հպատակ է այն պետական կազմին, որն ապահովում է իր կրօնի առանձնաշնորհումները և իրավունքները: Սակայն բավական է, որ պետությունը ձեռք տա նրա իրավունքներից ու առանձնաշնորհումներից որևէ մեկին, որպեսզի այդ աստծո խոնարհ գառը միանգամից ըմբոստանա, ներշնչվի ապատամբ ոգով և մղե ժողովուրդը դեպի բողոք ու ըմբոստացում: Եվ այդ դեպքերում կղերը սովորաբար (ինչպես և բուրժուազիան) իր կատարյալ շահերը հայտարարում է ընդհանուր ազգային շահեր և նրանց խանգարումն ու վնասը ժողովրդական շահերի վնասում: Այդպես եղել է մեր պատմության ընթացքում, այդպես է և մեր օրերում»:

6. «Եվ չի կարելի պնդել, որ կղերը ոչ մի հաճողություն չի ունեցել, ընդհակառակը՝ նա շատ կողմերով հաջողել է և դեռ մեր օրերում անգամ նա շարունակում է իր այդ համակերպվող խորամանկ քաղաքականությունը, որ մեր ազգային ինտելիգենցիայի մտածողությունը ազատամտության նշան է և հորջորջվում է իբր ազգային մի բարեմասնություն, ազգային կուլտուրայի մի որոշ գոնապորում: Այդ մտածողության հետևանքն այն է, որ մեզանում ոչ միայն պաշտոնական գործերի, այլև գուտ կուլտուրական գործերի գլուխն է դասվում կղերը: Դրան օրինակ կարող է ծառայել այն, որ չզիտեմ ինչու, մեր գրողների, պոետների հոբեյսական հանդեսի առաջին մասը կազմում է կոնդակի ընթերցումը, ինչպես ասում են, «հոտընկայս»:

7. «Հայ սեմինարիզմով սողորված ինտելիգենտը ծուլանում է մտածելու, տեղեղները մի սխտեմաստիկ աշխարհայացք, ծուլանում է աղբյուրներին դիմելու-նա գոհ է, թե իսկ է այս ու այն գաղափարը և ցուցանակի նման կայքրել իր ճակատին: Եթե մեր խավարամիտ ինտելիգենցիան Արծրունու ժամանակ ապավինում էր փարաջային ու սոցիալական, եթե նա կարծում էր, որ ազգը կպահպանվի, եթե տգետ մնա և խավար, եթե նա դեմ էր կրթության, կարծելով, որ ազատվելով ավանդական մասհավատություններից ու սոցիալություններից ազգը կուռանա, այժմ ինտելիգենցիան շատ հեռու չի գնացել այդ խավարամիտներից-նա ամենայն հանգամանակ սուտգասար իրականության տեղ է ընդունում և անդորր ինքնագոհություններ է լցվում: Դպրոց ունենք: Գրականություն ունենք: Մամուլ ունենք, ասում է նա և գոհ է, և հպարտ: Իսկ թե ի՞նչ է այդ դպրոցը, ի՞նչ է այդ գրականությունը, ի՞նչ է այդ մամուլը, նա չի ուզում քննել:

Այդ կիսաինտելիգենցիան է, որ այնպիսի եռանդով ու տոկոնությունը պաշտպանում է հսթեռիկական և գրական սակավապետությունը, չափափորությունը: Նա կոզենար, որ հայը բավականանար կասկածելի մի ստեղծար

գործությունը, որին ազգային քննադատությունը պոեզիա և գեղեցիկ գրականություն է անվանում: Նրա համար գեղարվեստը ճոխություն է: Եվ ինչպես քաղաքական ասպարեզում նա ստեղծել է դաշնակցություն, կուսակցություն ծրագրներում ու գործերում միացրել է սոցիալիզմն ու պանարմենիզմը, որպես հեղափոխությունն ու ժոռնալիստիկա հետ բլոկ կազմելը հնարավոր է համարել, այնպես էլ արվեստի մեջ է վարվել, կամենալով իսկական արվեստը միացնել ծխականի մտածողության և սեմինարիզմի հետ: Սակայն երկրորդը նույնքան անհնար է, որքան և առաջինը»:

8. «Այսպիսով եթե համեմատության դեմքը, կտեսնենք, որ սիմբոլիստ համարվող Ահարոնյանը, որը նույնպես ունի գրվածքներ, ուր հայկական ոչինչ չկա, օրինակ՝ «Լուսություն»-ը այնուամենայնիվ հայ ինքնամիտի միջավայրից դուրս չի գալիս, չնայած այդ եվրոպական անուններին ու ձևերին, նա չի դառնում եվրոպական գրող, մինչդեռ Շիրվանզադեն, որքան և թերություններ ունենա, դարձյալ կմնա այն հեղինակը, որ տանում է մեր գրականությունը դեպի Եվրոպա: Ահարոնյանը չէ մեր ապագա գրականության ուղին, այլ Շիրվանզադեն, Իհարկե, սուկ իբրև էտապ...»:

9. «Մեզ չի փրկի ոչ մի պատենչ և ոչ մի ազգային մտապարծ ու գոհունակ ինքնախաբեություն: Մենք աշակերտներ ենք Եվրոպայի առջև, և մեր ապագան կախված է նրանից, թե որքան լավ աշակերտներ ենք լինելու մենք: Խոսելով լեզվի կենտրոնացման մասին, ես ոչինչ չստացի պղտահայ կամ արևմտահայ գրականության և նրա լեզվի մասին: Այս հարցը ես կամեցա կապել այն խնդրի հետ, որ պիտի ծագեր-այն է Ռուսիայի և Թուրքիայի խնդիրը: Բանն այն է, որ մեր հասարակական և գրական նոր ջրմանի սկզբից իսկ դրված է եղել հրապարակի վրա մի հարց:

Դա տաճկահայոց հարցն է: Դա այն կնճոտ ու բազմամյա «Հայկական խնդիրն է», որ այնքա՞ն մտավոր, հոգեկան և ֆիզիկական լարում է տոեղծել մեզանում ստանյակ տարիների ընթացքում: Այդ հարցի վրա կենտրոնացրել է մեր ինտելիգենցիան իր բոլոր ուշադրությունը, նրա վրա է հիմնել իր լավագույն ապագայի բոլոր հույսերն ու ակնկալությունները, այդ հարցի լուծումից է պայանել մեր ժողովրդի համար ամեն տեսակ բարիք, դրանով է պայմանավորել մեր ժողովրդի առաջընթացի բոլոր ճանապարհները: Ես կանգ չեմ առնելու այդ հարցի վրա ըստ էության և քննության առարկա չեմ դարձնելու: Դա իմ նպատակից դուրս է: Ես այժմ զբաղված եմ մեր կուլտուրական զարգացման խնդրով, ուստի կբավականանամ երկու խոսքով պար

գելու իմ վերաբերմունքը դեպի այդ Հարցի լուծումը այն չափով, որչափով նա կապված է իմ այսօրվա թեմայի Հետ:

Ես տաճկահայկական Հարցի լուծմանը թուրքիայի սահմաններում չեմ Հավատում: Լավագույն լուծումն այդ Հարցի Համարում եմ Ռուսիայի գրավումը տաճկահայկական նահանգների: Այս դեպքում գուշակողի դեր չեմ ուզում ստանձնել. կարող է պատահել, որ այդ Հարցը (որ մեր ժողովրդի Համար մի ահագին դժբախտություն է դարձել) այլ կերպ լուծվի: Սակայն լավագույն լուծումն այդ Հարցի ես Համարում եմ Ռուսական տիրապետությունը: Եթե դա Հնարավոր է՝ ուրեմն մեր ժողովրդի երկու խոշոր Հատվածների միացումով ավելի ևս կգործեղանայ այն կուլտուրական Հոսանքը, որը փախագեղի է ինձ Համար. եթե չլինի այդ, ապագայում էլ մենք պիտի ձգտենք այդ միացման:

Տաճկաստանի վերածնությունն ես չեմ Հավատում, իսկ Ռուսիայի ապագան ինձ Համար աներկբայելի է: Եվ կապելով իմ լավագույն Հույսերը ռուս առաջավոր դեմոկրատիայի Հույսերի և իմ բաղձանքները նրա բաղձանքների Հետ, ես չեմ տարակուսում, որ չեմ Հիասթափվելու»:

10. «Ներկայումս մեզանում իշխող ազգայնության ժխտումով է միայն, որ մենք կարող ենք առաջ գնալ կուլտուրական ասպարեզում: Եվրոպային մենք ընդունում ենք բաց աչքերով և բաց սրտով, մենք ժխտում ենք այն ազգայնությունը, որ լավագույն դեպքում (թեպետ դա էլ անկարելի է) կարող է մեզ Համար Պարսկաստանի նման մի Հայրենիք ստեղծել: Մեր Հայրենիքը Ռուսիան է և նրա ծոցում է, որ կամենում ենք մենք առաջ տանել ու պահպանել մեր կուլտուրան-եթե կարող ենք մենք յուրացնել ժամանակակից Եվրոպայի ամբողջ կուլտուրական ժառանգությունը, ուրեմն կարող ենք ապրել, եթե ոչ մենք կմեռնենք իբրև ազգ: Պետք է չափազանց կարճատես լինել գալիքի վերաբերմամբ կամ չափազանց վատատես Ռուսիայի ապագայի նկատմամբ այս ամենը լուկ (որ ես մատնանշեցի ամենաընդհանուր գծերով միայն) ռուս բյուրոկրատական-արքայադատ կառավարության քաղաքական գերիշխանության առաջընթացի մի նշան Համարելու Համար»:

11. «Ահա այդ ինտելիգենցիան է, որ պիտի Հարթեն մեր գրականության նոր ուղիները: Նա է, որ պիտի մղե այդ գրականությունը նեղ ու անձուկ ազգային կղերական բանտից դեպի իսկական արվեստի անձայրածիր լայնությունը: Այդ գրականության նորագույն ծիլերը կան, իսկ նրանց փարթամ ու

գունազեղ ծաղկումը կլինի այն ժամանակ, երբ երիտասարդ Ռուսիան կթափահարե իր արծաթի թևերը, երբ երկրի կենդանի ուժերը գարնան երման ջրերի նման կչարժվեն՝ Հզոր ու խնդուն»: (Վահան Տերջյան, Երկերի ժողովածու, Հ. երրորդ, 1975, էջ 48-102):

Շահումյանն անդրադառնում է «Նոր ույժ» թերթի 2-րդ Համարում Վահան Տերջյանի վերոհիշյալ դասախոսություն մասին տպագրված հոդվածին և գրում է, որ դրա Հեղինակի Համար «կարծեք տարրական կորեկտության սահմաններ գոյություն չունեն. «սողայամիտ» բառով սկսում է և Վահան Տերջյանին «հիմար» ասելով վերջացնում»:

Շահումյանը բերում է այդ հոդվածից Հետևյալ Հատվածը. «Տերջյան բանաստեղծները ծիծաղելի են, երբ իրանց մտքերը հրապարակ Հանելով Հանուն բանվորության են խոսում և նրա շահերի գիտակցողները Հանդիսանում»:

Պատասխանելով հոդվածագրին, Շահումյանը նշում է. «Վահան Տերջյանի դասախոսությունը մի լուրջ ուսումնասիրություն էր, ուր որոշ անհերքելի ճշմարտություններ կային և որ միայն Հայ Հասարակության գիտակից անդամները ողջունել կարող են և ցանկալի կՀամարեն այդպիսի շատ դասախոսություններ լսել, քան թե այն տախակ ու տիրացուական ճառերը, որոնք տեղի են ունենում մի այլ տեղ»:

«Նոր ույժ»-ի հոդվածագիրը ձգտելով նսեմացնել Տերջյանի դասախոսությունը, գրում է. «Ունկնդիրները քիչ էին, եղած մեծ մասն էլ ջահել օրիորդներ էին, որոնք, երևի եկել էին ավելի շատ բանաստեղծ Տերջյանին տեսնելու, քան նրա «քաղաքական մտքերը» լսելու»: Այնուհետև այդ քննադատը Տերջյանին խորհուրդ է տալիս ժամանակ չկորցնել «այդպիսի բաների վրա, այլ ուսումնավոր գրե և բանվորների շահերի գիտակցող Հանդիսանա»:

«Ես,- գրում է Շահումյանը,- միանգամայն ավելորդ և անտեղի եմ Համարում հոդվածագրի այդ նկատողությունը, քանի որ նա ոչնչով չապացուցեց, որ բանվորների շահերի տեսակետից այդ դասախոսությունը վնասակար էր կամ լի էր Հակասություններով, այլ տաք Հայհոյանքների տարափով սկսեց ու Հայհոյանքով էլ վերջացրեց հոդվածագիրը»: («Մշակ», Հունիսի 17-20, 1914 թ.):

«ՈՉ, ԼԵՌՆԵՐԸ ՉԵՆ ՄԵՂԱՎՈՐ...»

Իր «Հին ուժերը «Նոր ույժի» էջերում» հոդվածում Շահումյանը նշում է, որ «Նոր ույժ» թերթին ուշադրություն է դարձնում ոչ թե «նրա բովանդակության վրա, այլ այն բանի համար, որ այդ թերթը հավակնություն ունի բանվորական կամ թե աշխատավորական համարվել»:

«Եվ որպեսզի կիսազիտակից ընթերցող հայ պրոլետարիատն ու աշխատավորությունը հարած յուղի տեղ չընդունի», Շահումյանը կարևոր է հանարում պարզել այդ թերթի «խակական ֆիզոնոմիան»:

Շահումյանն ընդգծում է, որ բավարար չէ մի քանի անգամ իրար ետևից կրկնել «բանվոր» և «աշխատավոր» բառերը, այլ «հարկավոր է այդ բառերի մեջ դնել համապատասխան բովանդակություն թերթի էջերում», որը կարող է ստացվել միայն այն ժամանակ, երբ «խոսողը կամ գրողը շահագրգռված կլինի պրոլետարիատի վերջնական հաղթանակով»:

Անդրադառնալով թերթում տպագրված «Հայ բանվորությունը» հոդվածին, Շահումյանը վիճարկում է դրա հեղինակի այն պնդումը, թե «հայ բանվորությունն ավելի շատ է քանակով, քան վրացականն ու թուրքականը»:

Թերթի հոդվածագիրը փորձում է բացահայտել, թե հայ իրականության մեջ «ինչ ֆակտորների շնորհիվ է, որ առաջ է գալիս պրոլետարիզացիան» և հետևյալ միտքն է հայտնում. «Դյուրացին օտարության է դիմում, որովհետև դրա պատճառը, ընդհանուր առմամբ, գյուղացի դասակարգի տնտեսական անսպառնալիքությունն է»:

Հոդվածագիրն այդ դրությունը բացատրում է նրանով, որ հայ գյուղացիությունը «գլխավորապես լեռներում է ապրում, հացահատիկները բավարար չեն լինում և ուստի նա ստիպված է լինում դեպի քաղաքները դիմել հաց վառ տակելու նպատակով»:

Շահումյանը չի համաձայնվում այս տեսակետին և ընդգծում է. «Ոչ, լեռները չեն մեղավոր, այլ համաճարակն է, որ ընդհանուր առմամբ կոչվում է կապիտալիզմ, և նա մուտք է գործել գավառներ ու իր պատմական դերն է կատարում ամենուրեք»:

Եթե, բացատրում է Շահումյանը, հայերի մեջ բանվոր դասակարգը առկա չէ, ապա ինչու է նկատի ունենալ և այն հանգամանքը, որ հայ առևտրական դասն էլ է շատ, քան թե թուրք-թաթարականը և վրացականը և «նոր հիվ այդ առևտրական դասի է, որ գյուղացիք դեպի քաղաք են դիմում»:

Շահումյանը մեջբերելով «Նոր ույժ» թերթի հոդվածից հետևյալ միտքը. «Ամենից առաջ հայկական (մենք կասենք՝ թուրքահայ-Ս. Բ.) հարցը, ավելի

շատ նպատակ է դասակարգերի համախմբմանը», նշում է, որ պարզ չէ, թե ինչու է ինչ դասակարգերի մասին է և գրում է հետևյալը. «Դասակարգերի մասին ինչ էլ չի կարող այն հասարակ պատճառով, որ թուրքահայ հարցը նպատակ է մանր բուրժուական նացիոնալիստ կուսակցության համախմբմանը. դա բացատրել չի կարելի, իսկ որ այդ կուսակցությունը մինչև վերջին ժամանակներս միազնե է հայ պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը, այդ էլ չի կարելի բացատրել. և թայֆայական բնագրներն արագացնելով մեղքել է նրանց մեջ դասակարգային շահի գիտակցությունը և սուտել է մանր բուրժուական նացիոնալիզմով և շովինիստական հակամարտություն է գարգացրել և շնորհիվ դրան է, որ հայ պրոլետարիատը հետամնաց է եղել մինչև վերջին ժամանակներս իր դասակարգային գիտակցությանը: Ահա, թե ուր պետք է փնտրել հայ բանվորի հետամնացության պատճառները»:

Շահումյանը նշում է, որ հոդվածագիրը չի հասկանում վերոհիշյալ իրողությունը որպես իրական փաստ, «քանի որ դա նրան ձեռնառու չէ, որովհետև նրա իրեայր բանվորական դատը չէ, այլ հայ բուրժուակցայի շահը»:

Նկատի ունենալով հոդվածագրի այն միտքը, ըստ որի «թուրքահայ հարցը իր էությունը դասերին էլ հավասարապես շահագրգռել է», Շահումյանը դրան համաձայնվում մասամբ, նշելով, թե «այդ հարցը շահագրգռել է, բայց ոչ բոլորին հավասարապես» ու ընդգծում է հետևյալը. «Հայ պրոլետարիատի գիտակցի տարրերը շահագրգռված են եղել այն տեսակետից, որ որքան շատ լուծվի այդ հարցը, այնքան շուտ կովկասահայ աշխատավոր ժողովուրդն ընդհանրապես, իսկ հայ պրոլետարիատը մասնավորապես, կազատվեն մանր բուրժուական նացիոնալիստ կուսակցության գաղափարախոսության շահագործումից և դասակարգային գիտակցությունը միազնեյուց հաղթանակի համայն ազդեցության»:

Այնուհետև Շահումյանը շարունակում է, որ հայ բուրժուակցիան շահագրգռված է եղել այն չափով, ինչ չափով նրա շահերն են պահանջել այդ «սպառազ ազատ Հայաստանում հիմնելու իր դասակարգային տիրապետությունը կապիտալիստական շահագործման ակզրուներից ելնելով, որպես սփրապետող դաս՝ հայ իրականության մեջ»:

Շահումյանն անդրադառնում է նաև «Նոր ույժ» թերթի մեկ այլ խմբագրական հոդվածին, որտեղ ընդգծվում է հետևյալ միտքը. «Ռուսաստանի աշխատավոր դասը՝ գտնվում է ապարտասակարգ մտավորականության հակառակության և հովանավորության տակ»:

Այս կապակցությամբ Շահումյանը նկատում է, որ «ապարտասակարգ» տերմինը հնացած ու վաղուց մոռացված է, քանի որ «ապարտասակարգային

մտավորականություն գոյություն չունի, այլ կան երկու հակադիր դասակարգեր իրենց գաղափարախոսությունները՝ տիրող և տիրապետող, չահագործող և չահագործվող, և մենք տեսնում ենք կյանքի մեջ մարդիկ իրենց աշխարհայացքով ու գործիակերպով հարում են մեկ կամ մյուս դասակարգին և միջին տեղ գոյություն չունի»:

«Ասե՛լ «սպարտակարգ»,- փաստում է Շահումյանը,- դա կնշանակի դիտավորյալ կերպով քողարկել ճշմարտությունը հետին նպատակով. հարավորություն ունենալու համար միջազնեղ բանվորի դասակարգային չահ գիտակցությունը և ետ կասեցնել նրան բանվորական դասին մասնակցությունը»:

Շարունակելով բանավեճը, Շահումյանը մեջբերում է Հոդվածագրի հետևյալ միտքը. «Ներկա հասարակակազմը բանվորական շարժումների թշնամին է. նա դեռ չի գիտակցում այդ դասի լայն իրավունքները» և գրում է, որ Հոդվածագիր պարոնը միանգամայն գուրկ է դասակարգային սոցիալ պատմական հասկացությունից և «մանր բուրժուական ու մեչչան դաստորություն է երևան գալիս, որ իբր թե կգա մի օր, երբ ներկա հասարակակազմը կգիտակցե պրոլետար դասի լայն իրավունքները և հետևապես ինքնակամ կդադարե չահագործելուց և վերջ կդրվի բանվորի այն դժոխային դրությունը, որին ներկայումս «նա ենթակա է»:

Շահումյանը եզրակացնում է, որ ուժեր կարծում են, թե տիրող հասարակակազմը դեռ չի գիտակցում բանվորական դասի լայն իրավունքները, կարող են միայն նրանք, որոնք սոցիալ-պատմական դասակարգային զարգացման հետ ծանոթ չեն կամ թե դիտավորյալ կերպով ուզում են բանվոր դասակարգին ասել, որ մի վրդովվեք, բոլորովին հանգիստ եղեք և լուռ համբերատարությամբ կատարեցեք այն բոլորը, ինչ որ ձեզ ասում են բուրժուական իդեոլոգները՝ «հասարակակազմը թշնամի է ձեզ», որովհետև «դեռ չի հասունացել գիտակցորեն ըմբռնելու ձեր լայն իրավունքները, և համոզված եղեք, որ կգա մի օր, երբ նա կգիտակցե և առանց այլ և այլություն վերջ կտա ձեր ներկա անտանելի կացությունը»:

Շահումյանն ընդգծում է, որ այդպես կարող են դատել միայն նրանք, որոնք որևէ առնչություն չունեն պրոլետարիատի ազատագրության հետ և ցանկանում են «միջազնեղ նրա դասակարգային գիտակցությունն ու քողարկել այն ճշմարտությունը, որ կոչվում է՝ բուրժուազիան կամավորապես երբեք չի բարեկալի և չի բարեկալելու բանվորի դրությունը, որովհետև բանվորի դրության բարելավման հետ կապված է բուրժուազիայի չահերի վտարը»: («Մշակ», հունիսի 17-20, 1914 թ.):

«...ԹՈՒՐՔԱՀԱՅ ԴԱՏԸ ՄԻՇՏ ՏԱՐՎԵԼ Է ՄԵՍԼ ՇԱՎՂՈՎ...»

Իր հոդվածի մի զգալի հատված Շահումյանը նվիրում է Հայկական հարցին: Նա նախ մեջբերում է «Նոր ույժ» թերթից հետևյալ միտքը. «Կրկնում ենք, որ թուրքահայ դատը խորթ չէ կարող լինել աշխատավորությանը և նրա մասնակցությունն ունի ոգեպնդիչ նշանակություն»:

Այս առնչությամբ Շահումյանը գրում է. «Հենց այդ դրսի մասնակցությունն է եղել պատճառ՝ թուրքահայ ազատագրման գործում, որ տուժել է երկու երկրների հայ ժողովուրդը» և իր միտքը փաստելու համար նշում է հետևյալը.

Առաջին. «Թուրքահայ ժողովուրդը,- ընդգծում է Շահումյանը,- տարիներից ի վեր սպասել է, որ դրսից անեն իրան համար ամեն բան: Նա, թուրքահայը, մի ինքրտ մասսա է եղել իր ազատագրման գործում, գիտակցության բացակայումը, ինիցիատիվ տենդենցը և ինքնագործունեության գաղափարը խորթ են եղել նրա համար, և դա առաջ է եկել չնորհիվ այն քաղաքական կուսակցության, որը պատմականորեն իրեն կոչված է համարել ղեկավարը հանդիսանալու թուրքահայ ժողովրդի ազատագրման գործում»:

«Այդ քաղաքական կուսակցությունը,- շարունակում է Շահումյանը,- ավելի շատ տարված է եղել ուսմանտիկ վերացական գաղափարներով ու կյանքի իրականության օրջեկտիվ տվյալները ըմբռնել չէ կարողացել և մտմենտը հասկանալու ընդունակությունը չեն ունեցել հետապայուս-Բալկանյան պատերազմի ժամանակ և չնորհիվ այդ՝ հեղափոխական իմաստով՝ քաղաքական լայն գիտակցության բացակայություն, թուրքահայ դատը միշտ տարվել է սխալ շավղով (թե՛ դիվանագիտական և թե՛ հեղափոխական ասպարեզում)»:

Երկրորդ. Շահումյանը նշում է, որ տարիներ շարունակ «Կովկասահայ ժողովուրդը զոհաբերել է իր նյութականը, անձը և այլն՝ ոչ մի հասկացություն չունենալով թուրքահայ երկրի այն իրական պայմանների մասին, որոնց չնորհիվ կարելի կլիներ ցանկացած նպատակին հասնել՝ թուրքահայ ժողովրդին ազատագրված տեսնել»:

Երրորդ. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մանր բուրժուական նազիոնալիստական կուսակցությունը միջազնեղ է հայ մասսաների դասակարգային գիտակցությունը, նրանց կերակրել է վերացական գաղափարներով ու «ճոճոճան Փրագներով օղային պալատներ է կառուցել թուրքահայ ժողովրդի համար», Շահումյանը փաստում է հետևյալը. «Եվ եթե այսօր որոշ

բարենորոգումներ են արվում թուրքահայերին, դա ոչ մի կապ չունի այդ կուսակցության գործունեության հետ և դրան ապացույց կարող է ծառայել այն փաստը, որ պատգամավորությունը Նուպար փաշայի նախագահությանը եվրոպայում՝ հայ լիբերալների և հոգևորականության ներկայացուցիչն էր, և այդ կուսակցությունը, չնորհիվ իր սխալ դիվանագիտական գործերակերպի, չկարողացավ այդ դերը ստանձնել»:

Չորրորդ. Նկատի ունենալով, որ «այսօր նորից կոչ է արվում կովկասահայ աշխատավոր ժողովրդին ակտիվ մասնակցություն ունենալ թուրքահայ խնդրի գործում», Շահումյանն ընդգծում է, որ այդ կոչ անողներն անկարող են եղել կատարել այն միսիան, որ «իրանց վրա են վերցրել տարիներից ի վեր»։ Այդ անկարողությունն «առաջ է եկել նրանից, որ Կովկասի քաղաքների կաբինետներից է հրահանգվել ամեն բան և, որ գլխավորն է, հրահանգողները տարրական հասակացություն-ծանոթություն չեն ունեցել երկրի ներսում կատարվող իրական այն պայմանների հետ, որի չնորհիվ կարելի կլիներ ցանկալի հետևանքի հասնել»:

Հինգերորդ. Նկատի ունենալով մոտ անցյալի պատմական շրջանում կատարված «ահագին փաստերը», Շահումյանը նշում է. «Թուրքահայ ժողովրդի ազատագրման գործը պետք է լինի իր թուրքահայ ժողովրդի ձեռքով. և որքան թուրքահայոց գործերի վարելը ստանձնեն դրսեցիները-կամ այն քաղաքական կուսակցությունը, որն իրան է վերապահված համարում թուրքահայ ազատագրական գործը-և նա տարվի այն շավղով, ինչպես անցյալում կաբինետների հրահանգներով, առանց անմիջական կապ ունենալու բուն ժողովրդի հետ, ապա երկրի ներսը, մեր համոզումով, նույն ջուրը և նույն ջրաղացը կլինի»:

«Եվ այժմ,- գգուչացնում է Շահումյանը,- որ մենք կանգնած ենք թուրքահայ հարցի հանդեպ, դիվանագիտական խաղերի չնորհիվ թուրքահայաստանը դառնում է երկրորդ Սակեդոնիս, և դա ակնհայտնի է»:

Վեցերորդ. Շահումյանը նշում է. «Մեզ մնում է ասել, որ որքան շուտ ազատագրվի թուրքահայը, այնքան շուտ կազատագրվի կովկասահայ աշխատավոր ժողովուրդը մանր բուրժուական նացիոնալիստ կուսակցությանը գանազան անվան տակ-չահագործումից հանուն թուրքահայերի մեկ կողմից, իսկ մյուս կողմից՝ նա կազատվի տիրացուական ծխակրանների հովանավորությունից և, դասակարգային գիտակցության գալով, առաջ կտանն իր միսիան»:

Նկատի ունենալով «Նոր ույժ» թերթի բովանդակությունը, Շահումյանն

ընդգծում է, որ «այդ թերթը իր բովանդակությամբ ու ներքին իմաստով՝ նույն հին ուժերի մանր բուրժուական նացիոնալիստական տենդենցն է արծարծում, միայն թե այժմ նոր ձևի մեջ, բայց էությունը, իհարկե, նույնն է»:

Նկատի ունենալով, որ «Նոր ույժ» թերթը իրեն հայտարարել է բանավորների շահերի պաշտպան, Շահումյանը հորվածի վերջում նշում է, որ այդ հայտարարության սակ «մենք տեսնում ու հասկանում ենք այն, որ նրանք ցանկանում են կովկասահայ պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը միագնել և էլի իրանց հին երգն են երգում. թուրքահայ ժողովրդի ազատագրման գործը կովկասահայ աշխատավոր ժողովրդի ձեռքով. և մենք հարավորության ասհմաններում ցույց տվինք, որ դա սխալ է, թուրքահայ ժողովրդի ազատագրումը կարող է լինել իր թուրքահայ ժողովրդի ձեռքով, եթե որևէ ազատություն հնարավոր է այն իմաստով, ինչ իմաստով նրանք ցանկանում են»։ («Մշակ», հունիսի 17-20, 1914 թ.):

Այսպիսով, Շահումյանը գտնում էր, որ դաշնակցության շարժումը թուրքահայերի ազատագրության համար չի հասնելու իր նպատակին, որովհետև դա ոչ թե թուրքական բուժակալական լծից ազատագրվելու համար թուրքահայ ժողովրդական գանազանների բնական շարժումն էր, այլ ներմուծվել էր դրանց՝ Կովկասից, այստեղի ազգային-նոստալիզմական տրամադրություններով համակված հայ մտավորականության ջանքերով:

Շահումյանը ելնում էր այն սկզբունքից, ըստ որի անհաջողության է դատապարտված այն շարժումը, որը չունի մասսայական բնույթ: Այդպիսին եղավ նաև արևմտահայերի ազատագրության համար մղված պայքարը, որը խեղդվեց երիտթուրքերի հետ դաշնակցության սիրախաղի որոգայթում...

ԳԼՈՒԽ 8 ՄՍԿՎԱԾ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԼՈՒՐՁ ԲՆՆՈՒԹՅՈՒՆ ԵՐ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

1914 թ. օգոստոսի 1-ին սկսվում է Առաջին Համաշխարհային պատերազմը, որին մասնակցում էր 33 երկիր՝ 1, 5 միլիարդ բնակչությամբ:

Այդ պատերազմը եղավ մեծագույն փորձություն ոչ միայն ամբողջությամբ վերցրած դրան մասնակցող ժողովուրդների, այլև տվյալ երկրների տարբեր դասակարգերի ու կուսակցությունների համար:

Տեղի էր ունենում մի հակայական ջրբաժանում: Միմյանց մեղադրում էին այսպես կոչված «հարձակվող» պետություններն ու «պաշտպանվող» պետությունները, որոնց կառավարություններն անասելի մրցակցության մեջ էին մտել իրենց որդեգրած քաղաքականությունը պաշտպանելու համար, դրա մեջ ներքաշելով նույնիսկ սոցիալիստական կուսակցություններին:

Այդ կուսակցությունները, որոնք պատերազմից առաջ միավորվել էին Երկրորդ ինտերնացիոնալի մեջ և գոնե արտաբոլսապես պահպանում էին գաղափարական միասնություն, պատերազմը սկսելուց անմիջապես դեն նետեցին իրենց «միասնությունը» քողարկող դիմակը և մոռացան 1912 թ. Բազելի կոնգրեսում ընդունված մանիֆեստի հետևյալ զգուշացումը. «Թող կատարությունները լավ հիշեն, որ Եվրոպայի ներկա վիճակում և բանվոր դասակարգի մեջ տիրող տրամադրությունների պայմաններում նրանք չեն կարող պատերազմ բորբոքել, առանց վտանգի ենթարկելու հենց իրենց: Պրոֆտարները հանցագործություն են համարում կրակել միմյանց վրա հանուն կապիտալիստների շահույթների ավելացման, դինաստիաների փառամոլության կամ դիվանագետների գաղտնի պայմանագրերի պատվի համար»: (Всемирная история, т. 7, М. 1960, стр. 489):

Միաժամանակ Բազելի կոնգրեսի ընդունած մանիֆեստն այդ պատերազմի համար սահմանում էր «միջազգային մատչաբար թանկությունների հեղափոխական պայքարի տակտիկական ընդդեմ իրենց կառավարությունների», որը հենց պրոլետարական հեղափոխության տակտիկան էր:

Երկրորդ ինտերնացիոնալի անդամ կուսակցությունները կանգնեցին իրենց պետության ու կառավարության կողքին՝ դառնալով «հարձակվող» և «պաշտպանվող» կողմ: Նրանց բոլորին միավորում էր «ազգասիրական» հռչակված պատերազմը, որը պետք է հասցվեր հաղթական վախճանի:

Սկսված Համաշխարհային պատերազմը լուրջ քննություն եղավ նաև

Ռուսաստանի քաղաքական կուսակցությունների համար: Ստեղծված պայմաններում միայն բոլշևիկյան կուսակցությունը հանդես եկավ սկսված իմպերիալիստական պատերազմի դեմ, այն գնահատելով որպես աշխարհի վերաբաժանման կատաղի պայքարի, նոր գաղութներ ու շուկաներ գավթելու, ժողովուրդներին կեղեքելու և ստրկացնելու, աշխատավորներին հեղափոխական պայքարից հեռու պահելու միջոց: Ըստ բոլշևիկյան կուսակցության, սրանում էր կայանում սկսված պատերազմի իրական թուխնալուծությունը, նրա նշանակությունն ու իմաստը:

Ինչպես վկայում են փաստերը, սկսված պատերազմի նախօրյակին բոլշևիկյան կուսակցությունը դեռ չէր կարողացել ամրապնդել իր շարքերը: Խախտվել էին կազմակերպությունների միջև եղած կապերը: Չկար կանոնավոր կապ կենտրոնական մարմինների հետ: Բազմաթիվ կազմակերպություններ ուղղակի ջախջախվել էին մեծաքանակ ձեռքակալությունների, աքսորի, հալածանքների ու մահապատիժների հետևանքով:

Այսպիսի պայմաններում հայտնված և իրենց գոյությունը ինչ-որ կերպ պահպանած տեղական կազմակերպություններին մտած էր ճիշտ կողմնորոշվել ու ինքնուրույն գործելու միջոցներ գտնել:

Այդ կազմակերպություններից մեկն էլ Շահումյանի գլխավորությամբ գործող Բաբլի կոմիտեն էր:

Երբ պատերազմը սկսվեց, Շահումյանը գտնվում էր Զալպարյոլիում: Այստեղից, ինչպես վկայում է Միմակը, 1914 թ. օգոստոսի սկզբին Շահումյանը մեկնում է Թիֆլիս, որտեղ նա հանդիպում է իր կուսակից Զախարիձեի, Կախոյանի և այլոց հետ և քննարկում սկսված պատերազմի պայմաններում իրենց խնդիրների մասին:

Վերադառնալով Բաբլու, Շահումյանը իր համախոհների հետ միջոցներ է ձեռնարկում կուսակցական կազմակերպությունն ամրապնդելու համար: Դրա հետ միասին, ինչպես վկայում է Ն. Կոլեանիկովան, Շահումյանը բանվորներին բացատրում էր պատերազմի բնույթը, օգնում էր սկսված պատերազմի հայրենասիրական բնույթի մասին տարածված առասպելին հավաստացող ընկերներին ճիշտ հասկանալ իրողությունը: (Ն. Կոլեանիկովա, նույն տեղը, էջ 134):

1914 թ. օգոստոսին Շահումյանը գրում է «Բոլոր գինավորներին ու քաղաքացիներին» թղուցիկը, որը տարածվում է Թիֆլիսում ու Բաբլում: Շահումյանը ցույց է տալիս սկսված պատերազմի անսպասելի բնույթը, դրան մասնակցող պետությունների իրական նպատակները:

«Թշնամիներ միք որոնի օտար երկրներում,- գրում էր Շահումյանը,- ժողովրդի թշնամին ցարական կառավարությունն է: Եթե ուզում եք, որ պատերազմ չլինի, որ ձեզ չկտրեն ընտանիքից և Հարազատ օջախից, եթե դուք ժողովրդի հրշանկությունը գտնում եք իսաղաղ, ազատ կյանքում, ապա ուրքի կանգնեք ցարական կառավարության դեմ: Ձեզ զինել են, զենքը շուտ սուլեք ժողովրդի թշնամիների դեմ և նվաճեք Հողը գյուղացիության Համար ու ազատություն՝ ամբողջ ժողովրդի Համար: Պատերազմը վերածեք պայքարի՝ ժողովրդի ազատագրման Համար... Ձեր ձեռքին է ձեր կանանց, երեխաների, ամբողջ ժողովրդի բախտը: Բարձրացրեք զենքը ձեռքներիդ՝ Հանուն Հողի և ազատության... Նվաճելով ազատություն, Ռուսաստանի ժողովուրդը կարող է վերջ տալ արյունալից պատերազմին»: (Մ. Վ. Արարմանյան, Ստեփան Շահումյան, էջ 304-305):

Շուտով Բաբու է ժամանում Պետական դումայի բոլշևիկ պատգամավոր Ա. Բադաևը: Այդ այցելությունը կարևոր նշանակություն է ունենում Հարկավոր կապերի Հաստատման Համար:

Շահումյանն Ա. Բադաևի մասնակցությամբ օգոստոսի 23-ին Հրավիրում է գաղտնի խորհրդակցություն, որտեղ նշվում են աշխատանքն աշխուժացնելու միջոցները: Սակայն ուստիկանությունը Հայտնի էր դարձել Բադաևի Բաբու ժամանելը և ձերբակալումից խուսափելու նպատակով նա օգոստոսի 24-ին Հեռանում է Բաբովից:

Ինչպես վկայում է Բադաևը, նա Շահումյանին տեղեկացնում է պատերազմի վերաբերյալ Պետական դումայի բոլշևիկյան խմբակցության վերաբերմունքի մասին: (А. Бадаев, Большевики в Государственной думе, М, 1954, стр. 355):

1914 թ. օգոստոսի վերջին Շվեյցարիայում գտնվող Լենինը գրում է «Թեզիսներ պատերազմի մասին», որը վերնազրված էր նաև՝ «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները եվրոպական պատերազմում»: Այդ թեզիսներում Լենինը սկսված պատերազմը բնութագրում էր որպես իմպերիալիստական և բոլոր երկրների կոմունիստների խնդիրն էր Համարում դատարարական այն և մասսաներին կազմակերպել այնպես, որպեսզի նրանք զենքն ուղղեն սեփական Հարստահարիչների դեմ:

Միաժամանակ Լենինը Ռուսաստանի բոլշևիկների առջև խնդիր էր դնում. «Անողորմ և անմիտապահ պայքար մղել վիլիկուստական ու ցարական միապետական շովինիզմի դեմ և Համենչ չարիքներից փոքրագույնին՝ ցարական միապետության ու նրա զորքերի պարտությունը»: (Վ. Ի. Լենին, ԵՎ, Կ. 26, էջ 45):

Օգոստոսի 24-25-ին Բեռնում տեղի ունեցած բոլշևիկների խորհրդակցությունը, որին մասնակցում էր նաև Վ. Կասպարովը, որոշում է Լենինի թեզիսներն ընդունել որպես բանաձև և ուղարկել բոլոր կազմակերպություններին:

1914 թ. Հոկտեմբերի վերջին Պետերբուրգից Բաբու է գալիս ՌՄԴԿԿ կենտկոմի ներկայացուցիչ Ն. Յակովլևը, որը Շահումյանին է Հանձնում Լենինի գրած թեզիսները պատերազմի մասին:

Գաղտնի ժողովում Շահումյանը զեկուցում է Լենինի թեզիսների մասին: «Շահումյանն առաց,- գրում է Ն. Կոլենսկիովան,- որ թեզիսների Հետ ստացված նամակում խնդրում են քննարկել թեզիսները և կարծիք Հայտնել: Թեզիսների քննարկումը տեղի ունեցավ շատ լավ: Թեզիսների ամեն մի դրույթ Հանդիպում էր ընկերների Համաձայնության, որոնք մասնակցում էին քննարկմանը և բերում էին փաստեր, որոնք ցույց էին տալիս, թե ինչպես առաջավոր բանվորները մտածում են Հենց այդպես»:

«Մենք,- շարունակում է Կոլենսկիովան,- ընդունեցինք որոշում՝ խնդրել Շահումյանին Հաղորդելու, որ մենք ողջունում ենք թեզիսները, լիովին Հավանություն ենք տալիս դրանց և կօգտագործենք բոլոր Հնարավոր միջոցներով, որպեսզի դրանց Հետ ծանոթացնենք կուսակցության բոլոր անդամներին»: (Н. Н. Колесникова. По дорогам подполья, стр. 134-135).

ԲԱԲՎԻ ԿՈՄԻՏԵԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

1914 թ. Հոկտեմբերի 30-ին գաղտնի գործակալը Բաբվի ժամապարմական վարչությանը Հաղորդում է Հետևյալը. «Պետրոգրադից օրերս եկել է մի անհայտ Հրեա, որը տեսակցություն է ունեցել Պետական դումայի պատգամավոր Բադաևի Հետ և Հանձնարարություն է ստացել Բաբվի կազմակերպությունը Հաղորդելու, որ նոյեմբերի 1-ին, թե 5-ին Պետրոգրադում կամ Ճինլանդիայում տեղի է ունենալու Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կոնֆերանս, իսկ 15-ին միջազգային կոնգրես (ենթադրվում է Դանիայում), որպեսզի Բաբվի կազմակերպությունը պատգամավոր ուղարկի»:

Գործակալը տեղեկացնում է նաև, որ «տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունից ոչ մի պատգամավոր չի լինելու, քանի որ կազմակերպությունը ներկայումս ջախջախված է և գոյություն չունի, բայց Հին աշխատող, սոցիալ-դեմոկրատ բոլշևիկ Ստեփան Շահումյանը նամակ է ուղարկել Թիֆլիս Ալեքսեյ Ջախարիձեին (կուսակցական ծածկանունը «Ալյոտա») և ասել, եթե նա մեկնում է կոնֆերանս, ապա թող ներկայանա նաև իբրև

Բաբլի ներկայացուցիչ»։ (Պ. Հ. Բաբանդյան, Ստեփան Շահումյան, նույն տեղը, էջ 355-356)։

1914 թ. Հոկտեմբերի 19-ին «Սոցիալ-դեմոկրատ» թերթում հրատարակվում է Լենինի գրած «Պատերազմը և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան» վերնագրով մանիֆեստը, որն ուղարկվում է բոլոր կազմակերպություններին։

Այստեղ Հանգամանորեն բացահայտվում են պատերազմի պատճառներն ու բնույթը և առաջ է քաշվում իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու պահանջը։ Ինդիքը էր դրվում իսկ սամոյլ ջապես կապերը Երկրորդ ինտերնացիոնալի Հետ և ստեղծել Երրորդ ինտերնացիոնալ։

Ն. Կոլեսնիկովայի վկայությամբ «Սոցիալ-դեմոկրատ» թերթը, որտեղ տպագրված էր «Մանիֆեստը», Բաբու է ստացվել նոյեմբեր ամսին։ Կազմակերպության անդամների անլեզալ խորհրդակցությունում, որը նոր տարին դիմավորելու անվան տակ հրավիրվել էր 1914 թ. դեկտեմբերի 31-ին Կոլեսնիկովայի ընտանիքում, Շահումյանը ներկայացնում է Լենինի գրած «Մանիֆեստը»։

Կոլեսնիկովան հիշում է, որ իր զեկուցման մեջ Շահումյանն ասել է հետևյալը. «Մեզ պետք է համեն նրան, որպեսզի բանվորների մեջ հաստատանա այն հետևությունը, որ միայն ինքնակալության տապալումը կարող է երկիրը փրկել վերահաս աղետից»։

Բաբլի բոլշևիկների առջև Շահումյանը դնում է խնդիր՝ համախառն տարբեր ազգությունների բանվորներին պատերազմի և ինքնակալության դեմ պայքարում։ (Н. Н. Колесникова. По дорогам подполья, стр. 136).

Շահումյանի ղեկավարությամբ հաջողվում է 1915 թ. սկզբին վերականգնել Բաբլի կոմիտեն, որը զգալիորեն տուժել էր պատերազմի սկզբից կատարված ձերբակալությունների պատճառով։

1915 թ. Հունվարի սկզբին Շահումյանը մեկնում է Թիֆլիս և մասնակցում է Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարների խորհրդակցությանը, որը նույնպես քննարկում է վերոհիշյալ հարցերը և կարևորում է պատերազմի պատճառով ՌՄԻԲԿ Կենտրոնի Հետ ընդհատված կապը վերականգնելու հնարավորությունը։

1915 թ. գարնանը Շահումյանը նորից է հայտնվում ոստիկանության տեսարչաշում։ Բայց այս անգամ էլ ոստիկանությանը չի հաջողվում սաբոտաժներ գտնել, քանի որ Շահումյանը գործում էր բավականաչափ զգույշ և

իր ընտանիքում Հանցանշաններ չէր պահում։ Այդ մասին է վկայում Ոստիկանության դեպարտամենտին 1915 թ. Հունիսի 5-ին Բաբլի նահանգային ծանրարմական վարչության ուղարկած զեկուցագիրը։

Շահումյանին հաջողվում է մեծ ջանքերի գնով Գանձակի մոտ գտնվող Կոյունապատ գյուղում ստեղծել անլեզալ տպարան, որը Հետո փախուղթվում է Թիֆլիս։ (Մ. Վ. Արքունյան, Ստեփան Շահումյան, էջ 313)։ Շահումյանը ձգտում էր Բաբլում կազմակերպել անլեզալ թերթի տպագրությունը, որը, սակայն, նրան չի հաջողվում ոստիկանության կողմից շարունակվող դաժան հարածանքի հետևանքով։

Հեղափոխական աշխատանք տանելու կարևոր միջոց էին բանվորական լեզալ կազմակերպությունները, որոնց վրա էլ Շահումյանը կենտրոնացնում է ամբողջ ուշադրությունը, ձգտելով հատկապես վերականգնել նախկին յունաբերական բանվորների արհմիությունը։ Բայց դա չի հաջողվում, քանի որ ցարական իշխանությունները չեն համաձայնվում, հայտարարելով, որ այդ արհմիությունը կատեղծվի միայն պատերազմի ավարտից հետո։ (Սո. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 33)։

Լեզալ կազմակերպություններում, ինչպես օրինակ, գրասենյակային ծառայողների, տպագրիչների արհմիություններում, գաղթականներին օգնող կոմիտեներում, կոոպերատիվներում, թմանկության դեմ պայքարող քաղաքացիական մարմիններում, ժողովրդական համալսարաններում և այլն, Շահումյանի Հետ միասին Հեղափոխական աշխատանք էին տանում Ի. Ֆիդե սովը, Ն. Կոլեսնիկովան, Մ. Ազիզբեկովը, Ն. Նարիմանովը և ուրիշներ։ Նրանք հաճախակի հանդես էին գալիս այդ կազմակերպություններում ու հիմնարկներում և պարզաբանում էին ընթացող պատերազմի իմպերիալիստական, թալանչիական բնույթը։

Բաբլի նախկին յունաբերողները կազմակերպել էին ուղղափառ-արդյունաբերական կոմիտե և փորձում էին դրան կից ստեղծել բանվորներից կազմված խմբեր։ Բոլշևիկների ազդեցությամբ գիտակից բանվորները բոլորում են դրանց ստեղծումը։

Պատերազմի պայմաններում Կովկասում նկատելիորեն աշխուժացել էին մեղեկները, որոնք Ն. Ժորժանիայի գլխավորությամբ լայնորեն քարոզում էին «հաղթական պատերազմի» օգտին։ Ժորժանիան իր քարոզական խմբով մեկնում է նաև Բաբու, բայց այստեղ նա հանդիպում է Շահումյանի ուժեղ դիմադրությանը և ձեռնուձայն վերադառնում է Թիֆլիս։

Այս մասին Շահումյանը 1915 թ. Հոկտեմբերի 1-ին Լենինին ու Ն.

Կրուակայային՝ «Թանկագին Հորեղբորկնոջն ու Հորեղբորը» հայտնում է ծածկագիր նամակով:

Հարկ եմ համարում այդ ծածկագիր նամակը վերծանությունը ամբողջությամբ ներկայացնել ընթերցողի ուշադրությունը:

«Թանկագին Հորեղբորակին և Հորեղբայր:

Ինձ հիշելու և նամակի համար շատ շնորհակալ եմ Ձեզանից: Ձեր նամակները, խորհուրդները և ցուցումները ինձ համար միշտ ամեն բանից թանկ են եղել, բայց թվում էր, թե անհնարին կլինի շատ թե քիչ կանոնավոր (իմաստալի) նամակագրություն հաստատել: Հիմա կարծում եմ այդ հեշտացել է, և Ձեր նամակը ստանալուց առաջ ես ճարել էի Ձեր հասցեն և պատրաստվում էի գրել:

Դուք ուզում եք իմանալ, թե ես ինչ եմ մտածում և ինչ եմ անում: Կարծես այս անգամ էլ Ձեզ հետ միանման եմ մտածում, և երբ առաջին անգամ ստացա դրա հաստատումը (մոտ մի տարի սրանից առաջ), շատ երջանիկ զգացի ինձ: Եվ նվազագույնի մասին հարցը, և Ձեր նամակի մյուս թեզիսներն ուրախությամբ ընդունվեցին:

Ժորժ Հորեղբոր (Գ. Վ. Պեխանով) վարքագիծն անհասկանալի էր, իսկ նրա Պիտերի երկրպագուհիների (Իոր. և ուրիշներ) (Բորդամակի) վարմունքը զզվելի ու վրդուկեցուցիչ: Ինձ հետ համաձայն էին մեր բոլոր ազգականները և նույնիսկ Ժորժի մտերիները վճռակամորեն դեմ էին նրան ու մեզ հետ համաձայն, որ և շարունակվում է մինչև օրս:

Ժորժի բախտը Կովկասում ընդհանրապես չբերեց, Ան-ը (Ն. Ժորդանի) նրա միակ բարի կամեցողն է: Նա եկավ այստեղ և իր կողմը դարձրեց միայն մի մարդու (Պլին., Ս-լն (Սրախ Կասպարով) նրան ճանաչում է), բայց վերջինիս համար այդ տիտղոս վախճան ունեցավ: Այդպիսի անցման համար նրա իսկ բարեկամները խայտառակ կերպով դուրս վճռեցին նրան իրենց շրջանից:

Սեծապես ցավում եմ, որ ես չգիտեմ, թե Դուք ինչպես եք ապրում վերջերս, ինչ եք մտածում, ինչ եք անում: Ես ինչքան ուրախ կլինեի որևէ բան առանալ Ձեզանից:

Իմ առևտրական (կրասնոցարան) գործերն այնքան էլ լավ չեն գնում: Ես հիմա վարձակալած ունեմ Բալախանիում 4 նավթարեր հողամաս (Բաբախանովում գործում է 4 կրասնոցարան կազմակերպություն). Հողամասերը փոքր են, հին, յուրաքանչյուրում 8-10 ծառայող (կրասնոցարան): Երկու խառնուկ էլ քաղաքում կա (կրասնոցարան կազմակերպություն):

Իմ եղբոր (կրտսերի) (Աննչևիկին) գործերը մոտավորապես նույնպիսին են, նա անվերջ խնդրում է մեր ձեռնարկությունները (կազմակերպություններ) միավորել:

Դուք Ալյոշայի (Չախարիձե) մասին էիք հարցնում: Նա Թ(իֆլիս)-ում էր, մի քանի ամիս սրանից առաջ հիվանդացավ (ձեղրակաբացի), հիմա նա մեկնել է Ավելի (Ենոկիձե) մոտ բժշկվելու (աբտորված է): Նրա հետ ընկերացած՝ ես Թ(իֆլիս)-ում մի լավ փուռ (տապալաան) սարքեցի, որն աշխատում է և կարող է շատ եկամտաբեր լինել: Այնտեղ հիմա աշխատում են Ալ(յոշա)-ի եղբայրները, «չավ տղերք են»:

Ինչքան շատ հարցեր կան, որոնց մասին ես կուզեի ավելի կոնկրետ գրել Ձեզ և հարցնել Ձեր խորհուրդը, բայց, ցավոք սրտի, չեմ կարող: Ձեզ համար էլ հավանորեն, հետաքրքրական կլիներ ավելի մանրամասնորեն իմանալ, թե ես ինչպես եմ ապրում և ինչ նորություն կա այստեղ:

Ընդհանրապես ասած՝ թույլ եմ տալիս կարծելու, որ ես և մեր բոլոր ազգականները (բոլշևիկները) բարձր ենք պահում մեր ընտանեկան (բոլշևիկյան կրասնոցարան) դրոշակը և որ Դուք կարող եք մեր ռեպուտացիայի համար հանգիստ լինել:

Ես վերն ասացի, որ իմ գործերը լավ չեն, բայց հիմա այլ կերպ չի էլ կարող լինել: Իսկ երբ ընդհանուր չփոթմունքն ու խոչընդոտն անցնի, ես ունեմ բոլոր հիմքերը կարծելու, որ մենք կունենաք փայլուն հաջողություն:

Սրանով վերջացնում եմ առայժմ: Կներեք, եթե նամակս Ձեզ անհեթեթ թվա: Գրում եմ՝ գլխացավով տատապելով և շտապում եմ վերջացնել, սրտազին բարևներով ու լավագույն ցանկություններով՝ Ձեր Ստ...»: (Ստ. Շախունյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 14-16):

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

1915 թ. հոկտեմբերին Շահունյանի նախաձեռնությամբ Բաքվում հրավիրվում է Թիֆլիսի, Քուֆայիսի և Բաբալի բոլշևիկյան կազմակերպությունների ընդհատակյա խորհրդակցություն, որը ստանում է կոնֆերանսի նշանակություն:

Ուրհրդակցությունում օրակարգի հարցերի մասին զեկուցել է Շահունյանը, որն էլ ըստ քննարկվող հարցերի՝ գրել է համապատասխան բանաձևեր, որոնք կամենում եմ ներկայացնել ընթերցողի ուշադրությանը:

Առաջին. Ընթացիկ մոմենտի մասին:

1. Նշվում է, որ ընթացող պատերազմը «անծ տերությունների իմպերատուական (գաղութային) քաղաքականության արդյունքն է», որի համար «պատասխանատվություն են կրում հավասարապես բոլոր այդ պետությունները, անկախ նրանց փոքր-ինչ ավելի կամ նվազ ազդեցիկությունից՝ վերջին մոմենտին պատերազմի բռնկումից առաջ»:

2. Պատերազմի բերած «տակալի աղետից» ժողովուրդները պետք է քաղեն պլանավոր դասը՝ ոչնչացնել կապիտալիստական կարգը և «այդ կարգը սոցիալիստական կարգով փոխարինելը ժողովուրդներին կարող է փրկել հետագա գազանացումից ու ինքնաբնաջնջումից և մարդկությունը դուրս բերել հետագա պրոգրեսի ուղին»:

3. Սոցիալիզմի իրագործման ճանապարհին որպես անցողիկ էտապ՝ «անխուսափելի է դառնում եվրոպական միապետությունների տապալումը (Գերմանիա, Ավստրիա, Ռուսաստան և այլն) և եվրոպայի հանրապետական Միացյալ Նահանգների ստեղծումը»:

4. Սոցիալ-դեմոկրատիայի առջև դրվում է հետևյալ հիմնական խնդիրը. համաժողովրդական պայքարի միջոցով հասնել ցարական միապետության տապալմանը և դեմոկրատական հանրապետության ստեղծմանը:

5. «Փթած և ժողովրդի նկատմամբ դավաճանական ոռուսական բուրժուազիան վերջնականապես հասկացել է», որ խաղաղ պայմաններում «ներքին թշնամու» դեմ պայքարում «նրան լավ ծառայող ցարական կառավարությունն անընդունակ դուրս եկավ երկիրը և նրան՝ բուրժուազիային պաշտպանելու ավելի կուլտուրական և ուժեղ արտաքին թշնամու կողմից ջափ ջափվելուց ու քայքայվելուց»:

6. Բայց ոռուսական բուրժուազիան դրա հետ միասին վախենում է սոցիալիստական հեղափոխությունից ու ոռուս բանվոր դասակարգից և հարկադրված է «ամուր կերպով կառչել միապետությանը և ամենալույս ձևով ամենաերկչուտ պահանջներ առաջադրել կառավարությունը «նորոգելու» մասին»:

7. Ստեղծված պայմանները ցույց են տալիս, որ Ռուսաստանի բանվոր դասակարգը պետք է դաշինք կնքի գյուղացիական ու քաղաքային դեմոկրատիայի ավելի վճռական տարրերի հետ և վճռական պայքար մղի «բուրժուազականականական բոլոր դեմ և պատրաստվել անխուսափելի քաղաքացիական պատերազմի ազնվականության ու խոշոր բուրժուազիայի դեմ»:

8. Պայքար հայտարարել հանուն հաշտության, «առանց ամեն տեսակ անեքսիաների և հակառակորդների ստորացման»: Ես հույսով եմ նկատի ու-

նենալով Արևմտյան Հայաստանի հարցը, առաջ էր քաշում «միհնչի մարդերում» հանրաբլի անցկացնելու անհրաժեշտությունը:

9. Այդպիսի հաշտություն պետք է կնքի ոչ թե Ռուսաստանի ցարական կառավարությունը, այլ ժողովրդի ջանքերով ստեղծվող դեմոկրատական հանրապետությունը, որի համար բանվոր դասակարգը «պետք է առաջադրի ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության հիման վրա հրավիրված Սահամանադիր ժողովի լուծումը»:

10. Երկրի պաշտպանությունը մասնակցելու մասին կոչերին, որոնց «ցար փոք սրտի միացել է մարքսիզմի ականավոր թեորոտիկներից մեկը՝ Գ. Վ. Պլեխանովը», բանաձևը խնդիր էր դնում՝ ոչ մի համադրականություն «ժողովրդին և բանակին դավաճանած ու վաճառած ցարական կառավարության հետ»:

Երկրորդ. Կազմակերպական հարցի առթիվ:

Նշվում է, որ պատերազմը սկսելու առաջին օրից կառավարությունը վարադրեն հարձակվել է բանվոր դասակարգի վրա, «նպատակ ունենալով ոչնչացնել նրա բոլոր կազմակերպությունները և բացառել պրոլետարիատի կազմակերպված կամքի ամեն մի դրսևորման հարավորություն»:

Նկատի ունենալով, որ «կառավարության ռազմական պարտությունները և դրանց առաջացրած՝ իշխանության կազմալուծումն ու հասարակաբնության որոշ վերելքը բուրժուական միջավայրում մի քիչ խաղաղացրել է ռեակցիայի մթնոլորտը և բանվորների համար ստեղծվել է որոշ ակտիվություն ցուցաբերելու թեկուզ նվազագույն հարավորություն», խորհրդակցությունը կոչ է անում.

1. Բոլոր ուժերը տրամադրել անջատ գործող անբեզայ կազմակերպությունները միավորելու և ուժեղացնելու համար:

2. Ուժեղացնել լեզայ կազմակերպությունների, հատկապես արհմիությունների հետ տարվող աշխատանքը: Ետանդով մասնակցել կոպերատիվ շարժմանը:

3. Նկատի ունենալով Արևմտյան Հայաստանից եկած փախստականներին ու գաղթականներին, Ես հույսով եմ բանվորներին կոչ էր անում «մասնակցել պատերազմի և կառավարության խեղճորոշ, տնայրդի քաղաքականության ամենի գրհերին օգնելու գործին...»:

Երրորդ. Ազգային հարցի մասին:

Նշվում է, որ 1904-1905 թթ. ազատագրական շարժման պարտությունը հրաժարություն է առաջացրել Ռուսաստանի մանր ազգությունների չրջա-

նում, որի հետևանքով մանրրոտրժուական նացիոնալիստական կուսակցությունների ամրապնդումը, ազգային պարտիկուլյարիզմի ուժեղացումն ադրել են «սոցիալ-դեմոկրատիայի օպորտունիստական տարրերի վրա և ազգային ծրագրի հարցում տատանումներ են առաջ բերել կուսակցության շարքերում»:

Այդ տատանումները բացատրվում են նրանով, որ կուսակցության անդամները քիչ են ծանոթ կուսակցության ազգային ծրագրի հիմքում դրված սկզբունքներին: Դրանից է ելնելով կուսակցության անդամներին հանձնարարվում էր ծանոթանալ ազգային հարցի վերաբերյալ եղած գրականությունը, այդ թվում Ստալինի և Լենինի աշխատություններին:

Միաժամանակ Խորհրդակցությունը նշում է այն տարածված մոլորությունը, որ առաջացել է «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» պահանջի վերաբերյալ: Այս կապակցությամբ ընդունված բանաձևում նշվում էր, որ ազգությունների սահամանազատումը «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» միջոցով հակասում է ժողովուրդների տնտեսական զարգացման ընթացքին և «ծայրաստիճան փասակար է դեմոկրատիայի և ինտերնացիոնալ բանվորական շարժման տեսակետից»:

Վճռակամորեն արտահայտվելով ամեն տեսակի ազգային ճնշման դեմ, պաշտպանելով լեզուների լիակատար ազատությունն ու իրավահավասարությունը, բանաձևը դրա լավագույն երաշխիքն էր համարում հետևյալը.

1. Պետական կարգի լիակատար դեմոկրատացումը և առանց ազգության խտրության բոլոր քաղաքացիների իրավունքների հավասարեցումը:
2. Լեզուների լիակատար իրավահավասարություն դպրոցում, գրականության մեջ, հասարակական ժողովներում, դատարանում, ոստիկանությունում և այլ հասարակական ու պետական հիմնարկներում:
3. Մարզային ինքնավարություն առանձնահատուկ կենցաղային ու տնտեսական պայմաններով և առանձնահատուկ ազգային կազմով աչքի ընկնող վայրերի համար:
4. Կայսրության կազմի մեջ մտնող բոլոր ազգերի ինքնավարության իրավունքի ճանաչումը:

Բանաձևում նշվում էր, որ եթե որևէ մարզ կամ ազգ տնտեսական փոքրագույն օբյեկտով կամ այլ պատճառով չի ցանկանա մնալ Ռուսաստանի կազմում, ապա երկրի սահմանադրությունը պետք է «նրա համար երաշխավորի անջատման իրավունք»:

Միաժամանակ նշվում էր, որ ազգային անջատման կամ ազգային ինքնավարության իրավունքի արդարացի պահանջները «ներկայումս չպետք է

առաջ քաշվեն ու ընդգծվեն», որովհետև առանց ազգության խտրության «ամբողջ բանվոր դասակարգի և ամբողջ դեմոկրատիայի ջանքերը ներկայումս պետք է կենտրոնացվի համաժողովրդական հերթական լողունգի Ռուսաստանում ցարական միապետությունը տապալելու վրա»:

Չորրորդ. Ազգությունների հարաբերությունների մասին Կովկասում: Նշվում է, որ պատերազմի ժամանակաշրջանում Կովկասում ազգությունների հարաբերությունները սրվել են «ցարական կառավարության նկատմամբ լակեյություն անելու այն կատաղի մրցակցության հետևանքով, որ իրար դեմ մղում էին տարրեր ազգությունների տիրող դասակարգերը՝ Հայ բուրժուազիան, վրաց ազնվականությունը և մուսուլման բեկերը:

Այս բանաձևում հանգամանորեն տրվում է Հայ բուրժուազիայի, վրաց ազնվականության և մուսուլման բեկերի բնութագրերը:

Ցարական կառավարության հովանավորությունից օգտվող Հայ բուրժուազիան, որը նրան հավատարմության զգացումներ արտահայտելով ազատորեն հարստանում էր, «պատերազմի ժամանակ սարքեց ուսու-հայրենավորության ամենավայրենի վակիանայի»:

Բանաձևում նշվում է, որ Հայ բուրժուազիան որդեգրելով Հայ ժողովրդական մասսաների մեջ «թուրքահայերի ազատագրման պոպուլյար լողունգը», օգտվելով Հայ գյուղացիության ու քաղքենիական մասսաների մեջ «մեծ ազդեցություն ունեցող «դաշնակցություն» կուսակցության քաղաքական կարճատեսությունից», նրա հետ միասին արեց իրենից կախված ամեն ինչ, որպեսզի «թուրքահայերին պատկերացնի որպես ցարական կառավարությանը նախաձեռն և դավաճան այն պետության նկատմամբ, որտեղ նրանք ապրում էին: Դրա համար նա իր փողով ատեղծեց Հայ կամավորական խմբեր, որոնց մեջ ներգրավվում էին նաև թուրքահայերը (թուրքական բանակի դասալիքները և նույնիսկ թուրքական պառլամենտի պատգամավորը):

Միաժամանակ ընդգծվում էր, որ Հայ բուրժուազիան աղմուկով գովազդում էր ցարական կառավարությանը մատուցած իր «չնչին ռազմական ծառայությունները» և դիմում էր ամեն միջոցի իրեն հակադրելու իբր թե «ոչ այնքան հավատարիմ վրաց ժողովուրդին և ոչ լոյս ու դավաճան մուսուլման բնակչությանը»:

Մյուս կողմից էլ «Կովկասում ուսուական իշխանության առջև լակեյների դերին սովոր» վրաց և մուսուլման ազնվականները չէին հաշտվում Հայ բուրժուազիայի ունեցած «գերակշռող ազդեցության հետ» և միավորելով իրենց ջանքերը, ձգտում էին ուսու հասարակական կարծիքի աչքում «վարկաբեկ հայերին ու նրանց կամավորական խմբերին»:

«Կապիտալիստների կողմից,- ասվում էր բանաձևում,- պաշտպանվող մուսուլման ազնվականությունը և մանրբուրժուական նացիոնալիստական կուսակցությունների կողմից պաշտպանվող վրաց ազնվականությունը Հայ բուրժուազիայի նման ջանում էին իրենց դասակարգային քաղաքականությունը և դասակարգային մրցակցության մեջ ներգրավել ժողովրդական մասաներին և մուսուլման ու վրաց ժողովուրդների մեջ չարություն ու ատերություն բորբոքել ամբողջ Հայ ժողովրդի նկատմամբ»:

Այդ մրցակցության հետևանքն այն եղավ, որ «Կովկասի առանձին ազգությունների միջև եղած հարաբերությունները զգալիորեն վատացան»:

Այնուհետև, նկատի ունենալով արևմտահայությունը Հասած մեծագույն ողբերգությունը, Շահումյանը եզրակացնում է հետևյալը. «Հայ բուրժուազիայի և նրա սպասարկու «դաշնակցություն» կուսակցության շահախնդիր դասակարգային քաղաքականության ցավալի, բայց բնական հետևանքը եղավ այն, ինչ նախազգուշացնում էինք մենք՝ սոցիալ-դեմոկրատներս,- տարաբախտ թուրքահայերի՝ որպես իրենց պետության բացահայտ դավաճանների, համարյա գլխովին բնաջնջումը»:

Բանաձևը կարևորում էր «իշխող դասակարգերի հանցավոր ու դավաճանական քաղաքականությունը մերկացնելու համար» ուժեղին ազդեցության տանելը բանվորների և բոլոր ազգությունների «ներքնախավերի մեջ»:

Բանաձևը Կովկասի բանվորներին և բնակչության լայն մասաներին կոչ էր անում. «Չենթարկվել տիրապետող դասակարգերի, նացիոնալիստական կուսակցությունների պրոպոկացիաներին և հիշել, որ միայն բոլոր ազգությունների դեմոկրատիայի միասնության մեջ է նրանց հաղթանակի ու ազատագրման գրավականը և, որ, ընդհակառակը, ազգային թշնամության հետագա ուժեղացումը Կովկասը կարող է դարձնել արյունալի ազգային ընդհարումների ասպարեզ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 17-29):

Վերահիշյալ բանաձևը, առանձին զրքոյկով, տպագրվում է Թիֆլիսի ընդհատակյա տպարանում և ուղարկվում բոլոր կազմակերպություններին:

Կոնֆերանսն ընտրում է ՌՄԲԿ Կովկասյան բյուրո՝ Շահումյանի գլխավորությամբ: Բյուրոյի կազմի մեջ ընտրվում են նաև Ֆ. Մախարաձեն, Ի. Ֆիդեոսովը, Ա. Բավթարաձեն և ուրիշներ:

1915 թ. հոկտեմբերի կեսերին Բուխարեստում Ն. Ժորճանիայի գլխավորությամբ տեղի էր ունեցել նաև Անդրկովկասի մենչևիկների խորհրդակցությունը, որը պաշտպանում է պատերազմի վերաբերյալ սոցիալ-չոնիխստների տեսակետը և նորից առաջ է քաշում կուրտուր-ախտոնոմիայի տեսակետը:

ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ՆՈՐՑ Է ՉԵՐԲԱԿԱԿՈՒՄ

Տեղի ունեցած վերահիշյալ երկու խորհրդակցությունների մասին 1915 թ. հոկտեմբերի 24-ին Շահումյանը նամակ է գրում Շվեյցարիա՝ կոնսպիրատիվ նպատակներով հասցեագրելով այնտեղ գտնվող Գ. Շկրովսկուն՝ Լենինին հանձնելու համար: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 30-33):

Սակայն Օրենայում ռազմական գրաքննիչի կողմից Շահումյանի այս նամակը բռնագրավվում է և այդ պատճառով տեղ չի հասնում: Այդ նամակի հիման վրա Շահումյանի նկատմամբ ավելի է ուժեղացվում ոստիկանական հսկողությունը:

1915 թ. նոյեմբերին Բաքվի նահանգի ժանդարմական վարչության պետը Կովկասի փոխարքայի գրասենյակին զեկուցում է, որ գործակարական տվյալների համաձայն «ՌՄԲԿ Կովկասյան կազմակերպության բանաձևի հեղինակը Շահումյանն է»:

1915 թ. դեկտեմբերի 7-ին Բուխարեստի ժանդարմական վարչությունը նույնպես զեկուցում է, որ խորհրդակցության ընդունած բանաձևերի հեղինակը «սոցիալ-դեմոկրատական նշանավոր գործիչ Ստեփան Շահումյանն է»:

Դեկտեմբերի 16-ին Թիֆլիսի նահանգի ժանդարմական վարչության պետը Ոստիկանության ղեկավարում մենտին ուղարկած զեկուցագրում նշում է, որ «բանաձևերը» կազմել է «խորհրդակցության մասնակից և բոլշևիկյան կազմակերպության ղեկավար լենինյան (պարտվողական) Ստեփան Գևորգի Շահումյանը, որի ծածկանունն է «Սուրենին», որն այժմ ապրում է Բաքվում»:

Շահումյանը զգում է, որ իր նկատմամբ ոստիկանության հետապնդումներն ավելի են ուժեղանում և ձերբակալվելուց խուսափելու նպատակով 1916 թ. փետրվարի 7-ին ժամանակավորապես փոխադրվում է Գրոզնի քաղաք, որտեղ իր ընկերոջ՝ Հով



Ստ. Շահումյանը կրտսեր որդու հետ Բաքվի Բայիդովյան բանառում /1916թ./ քաղաք, որտեղ իր ընկերոջ՝ Հով

Հաննես Հարությունյանի միջնորդությամբ աշխատանքի է անցնում Անգլո-ռուսական նավթարդյունաբերական ընկերությունում որպես կառավարիչի օգնական:

Շահումյանն արդեն գտնվում էր Գրոզնիում, երբ 1916 թ. փետրվարի 14-ին Բաքվում սկսվեցին Հուզումներ, որին մասնակցող բանվորների հետ միասին կանաչ բողոքում էին առաջացած սովի դեմ, պահանջելով կասեցնել հացի գների բարձրացումը: Երբ այդ պահանջը չի կատարվում, ցուցարարները հարձակվում են հացի խանութների ու պահեստների վրա:

Գնալով Հուզումներին մասնակցողների թիվը մեծանում էր, սպառնալով ընդգրկել ամբողջ քաղաքը: Փետրվարի 16-ին ոստիկանությունը զորքի հետ միասին, հարձակվում է ցուցարարների վրա: Սպանվում և վիրավորվում է 70 մարդ, ձերբակալվում 200 մարդ, այդ թվում 80 կին:

Բաքվի ցարական իշխանություններն այսպիսի դաժան Հաշվեհարդար կազմակերպելով չբավարարվեցին: Ժանդարմական վարչության պետը քաղաքապետին Հանձնված զեկուցագրում տեղի ունեցած Հուզումների համար մատնացույց է անում բոլշևիկներին:

Առիթը ներկայացել էր և ոստիկանությունը սկսում է խուզարկություններ: Փետրվարի 19-ին խուզարկության արդյունքներով ձերբակալվում են Ն. Կոլեսնիկովան, նրա ամուսին Յա. Ջևիդը և ուրչներ, թվով 13 մարդ:

Ն. Կոլեսնիկովայի բնակարանում խուզարկություն կատարելիս ոստիկանությունը հայտնաբերում է մի շարք փաստաթղթեր, որոնց մեջ էին ոստիկանությանը շատ հետաքրքրող հոկտեմբերյան խորհրդակցության Շահումյանի ձեռքով գրած բանաձևերը:

Բաքվից Շահումյանի հետևանք չի վրիպում ոստիկանության ուշադրությունից: Փետրվարի 16-ին բողոքի ցույցերը դաժանորեն ճշեղուց հետո գործակալների տվյալներով ոստիկանությանը հաջողվում է ճշտել, որ Շահումյանը գտնվում է Գրոզնի քաղաքում:

1916 թ. փետրվարին Ոստիկանությունը դեպարտամենտին ուղարկված զեկուցագրում ժանդարմական վարչության պետը հայտնում է. «Ս. Գ. Շահումյանը Հանդիսանում է ՌՄԻԲԿ Կովկասյան բոլշևիկյան կազմակերպության Բաքվի խորհրդակցության կազմակերպիչը և բանաձևերի հեղինակը, տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գլխավոր ղեկավարը, որը գործակալության տեղեկություններով, վերջին ժամանակներս բնակություն է մեկնել Գրոզնի»:

Զեկուցագրում ասվում էր նաև հետևյալը. «Գործակալական տվյալներով

Շահումյանը համարվում է Կովկասի ամենից զարգացած և փորձված կուսակցական գործիչներից մեկը, որի հետ կապված են բոլոր չրջանները և արտասահմանում բնակվող գործիչները: Նա հանդիսանում է համոզված բոլշևիկ և հայտնի Լենինի կողմնակիցը, որի հետ գրագրություն է վարում: Իր գործունեության բնույթով նա շատ զգույշ է: Մի քանի անգամ խուզարկության և ձերբակալման ենթարկվելով, նա իր մոտ ոչ մի վարկաբեկիչ բան չի պահում և միշտ գործում է ուրիշ անձանց միջոցով, ինչի համար էլ խուզարկություններն արդյունք չեն տվել:

Գործակալության կարծիքով նրան Կովկասի սահմաններից հեռացնելը հանգամանություն կմտցնի ոչ միայն տեղական կյանքում, այլև ընդհանրապես Կովկասի տարածքում»: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 188, թ. 1-5):

Հայտնվում էր նաև, որ մարտի 7-ին Շահումյանին հայտնաբերել են Գրոզնի քաղաքում և հաջորդ օրը ուղարկվել է Բաքու:

Այս զեկուցագրի հիման վրա Ոստիկանության դեպարտամենտը 1916 թ. փետրվարի 18-ին Գրոզնու օկրուգի թերեքի մարզային ժանդարմական վարչությանը կարգադրում է Գրոզնի քաղաքում փնտրել, գտնել և խուզարկել Շահումյանին: Ժանդարմական վարչության պետը նույն օրը Շահումյանին գտնելու և ձերբակալելու մասին հեռագիր է ուղարկում նաև Գրոզնի:

Թերեքի ոստիկանությունը հաջողվում է պարզել Շահումյանի գտնվելու վայրը և 1916 թ. մարտի 7-ին Գրոզնու վերոհիշյալ ընկերության գրասենյակում նրան խուզարկում և ձերբակալում են, բռնազրավելով մոտը եղած ծոցատետրերը: Մարտի 8-ին Շահումյանին ուղարկում են Բաքվի բանտ: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 188, թ. 5):

Շահումյանին ձերբակալելու և Բաքու ուղարկելու մասին նրա մանկության և ուսանողական տարիների ընկեր Լովհաննես (Իվան) Հարությունյանը մարտի 8-ին նամակով հայտնում է նրա կնոջը՝ Եկատերինային, ընդգծելով, որ «Ստեփանն առողջ է և տրամադրությունն էլ լավ է, որովհետև ոչ մեկ մեղք չի գտնվում և հույս ունի շուտով վերադառնալ Գրոզնի»: Հարությունյանը հայտնում է նաև, որ ֆիրման ուղարկում է 100 ռուբլի, որ մինչև Ստեփանի ազատվելը նույնպես յուրաքանչյուր ամիս կուղարկվի 100 ռուբլի:

Հարությունյանը շտապ հեռագիր է ուղարկում Բաքվում գտնվող Շահումյանի մտերիմ ընկեր, Բաքվում որոշակի ազդեցությունից օգտվող Ջիվանչիրին. «Ստեփանը հիվանդացել է: Բերում են Բաքու»:

Մարտի 8-ին Շահումյանը կալանավորական վազոնով հասնում է Բաքու: Կայարանում, երբ նա ոստիկանի ուղեկցությամբ դուրս է գալիս վազոնից,

Հաջողվում է տեսակցել ընտանիքի՝ կնոջ և երեխաների Հետ: Եկատերինա Սերգենյան Հասցնում է Շահումյանին տեղեկացնել քաղաքում կատարված դեպքերի մասին:

1916 թ. մարտի 18-ին Ոստիկանության ղեկարտամենտին Բաբվի ժանդարմական վարչության պետը գեներալգաբով Հայտնում է, որ Շահումյանը գտնվում է Բաբվի Բայրովյան բանտում և նշում է հետևյալը. «Գործակալական վերջին տվյալների համաձայն Շահումյանը համարվում է Կովկասի ամենազարգացած և փորձված կուսակցական աշխատողներից մեկը, որի հետ կապված են բոլոր չրջանները և արտասահմանում ապրող կուսակցական ղեմքերը: Նա հանդիսանում է հանողված բոլշևիկ և Հայտնի Լենինի կողմակից, որի հետ վարում է գրագրություն: Իր գործունեության ընդլայնում նա շատ զգույշ է: Մի քանի անգամ խուզարկված և ձերբակալված լինելով, նա իր մոտ վարկաբեկիչ ոչինչ չի պահում, որի պատճառով էլ խուզարկությունները նրա մոտ անհետևանք են լինում: Նրան Կովկասից հեռացնելը հանգստություն կանոցնի ոչ միայն տեղի կյանքում, այլև ընդհանրապես կովկասյան չրջանում»:

Մարտի 9-ին կատարված առաջին հարցաքննության ժամանակ Շահումյանը ժխտում է իրեն ներկայացված մեղադրանքները: Նույնը կրկնում է մարտի 24-ին տեղի ունեցած հարցաքննության ժամանակ:

Ոստիկանության ղեկարտամենտն այնքան էր կարևորում Շահումյանին ներկայացվող մեղադրանքների հաստատումը, որ նրան հարցաքննելու նպատակով Պետրոգրադից գործուղվում է ժանդարմների հատուկ կորպուսի գնդապետ Շատրովը: Գնդապետը փորձագետների միջոցով կատարում է գիր վորական գրաքննության կողմից բռնված նամակի ֆոտոնկարում եղած ձեռագրի և Շահումյանի սեփական ձեռագրի համեմատությունը: Փորձագետները համոզվում են, որ այն ձեռագիրը, որից հանվել է լուսանկարը, պատվարում է Շահումյանին:

Շատրովը Շահումյանի առաջին հարցաքննությունը կատարում է մարտի 26-ին և նրան է ներկայացնում փորձագետների եզրակացությունը, որի համաձայն ուղևորեն «Ж, З, К, С, А, М, И, Ъ, Х», «А, Б, Д» մեծատառերը համընկնում են Շահումյանի ձեռագրի հետ, նմանություն կա նաև «Баку» և այլ բառերի գրաձևի մեջ:

Շահումյանն ընդունում է, որ Գրոզնիում իրենից բռնագրաված տետրը իր գրատուներով պատկանում է իրեն և պնդում է իր նախկին ցուցումները, որը ինքը Օդեսայում բռնագրաված նամակի հեղինակը չէ և երբեք հերպիտ խական գործունեությանը չի զբաղվել:

Գործակալների մատուցյալը ձերբակալված Ն. Կոլեանիկովայի մոտ կատարված խուզարկության ժամանակ այլ փաստաթղթերի հետ միասին Հայտնաբերվել էր 4 նամակ: Դրանցից մեկում, որը Կոլեանիկովան գրել էր իր ամուսին, ապագայում Բաբվի 26 կոմիսարների թվում գոհված Յակով Զեկինին, կային հետևյալ խոսքերը. «Ստեփանը բարի մարդ է, գործին մինչև վերջ նվիրված և անսահման խելացի, ես նրան բարձր եմ դասում, ես նրա հետ կարող եմ աշխատել ձեռք-ձեռքի տված...»:

Ինչպես հիշում է Կոլեանիկովան, ինքը պարապում էր բանտապետի երկու աղջիկների հետ, նրանց պատրաստելով էքստերն քննություն հանձնելու համար: Գուցե և այդ պատճառով էր, որ այդ ժամանակ բանտում ռեժիմը ինչ որ չափով թուլացել էր: Դրա արդյունքով էլ Շահումյանին թույլ էին տվել մեկ ժամ տեսակցել կնոջ և երեխաների հետ: Այդ տեսակցություններից մեկի ժամանակ էլ Շահումյանի ալագ որդի Սուրենը բերում է լուսանկարչական ապարատ և հորը նկարում երկու տարեկան Սեդյոժայի, մոր և Լևոնի հետ:

Շատրովը շարունակում էր հարցաքննությունը, փորձում էր գտնել նորանոր ապացույցներ: Եվ եթե գնդապետին հաջողվեր հիմնավորել մեղադրանքը, ապա պատերազմի ժամանակվա օրենքի համաձայն Շահումյանը ճանաչվելու էր որպես պետական դավաճան և դատապարտվելու էր կախաղանի:

Հերթական հարցաքննության ժամանակ Շահումյանը նորից ժխտում է, որ ինքը Օդեսայում բռնված նամակի հեղինակը չէ և պահանջում է ներկայացնել լուսանկարված նամակի իսկական օրինակը:

Գնդապետը փորձված քննիչ էր: Նա հասկանում էր, որ միայն ֆոտոպատճենի առկայությունը և փորձագետների եզրակացությունը դատարանի համար բավական չեն մեղադրանքն ապացուցված համարել: Եվ Շատրովը Օդեսայի ոստիկանությունից պահանջում է Բաբու ուղարկել բռնագրված նամակի բնօրինակը: Սակայն Օդեսայից ստացվում է պատասխան՝ նամակի բնագիրը չի պահպանվել:

Մինչև այսօր էլ առեղծված է մնացել այդ նամակի անհայտնալը: Ինչևէ, գնդապետ Շատրովը, չկարողանալով ապացուցել Շահումյանին ներկայացվող հիմնական մեղադրանքը, ապրիլի 30-ին կազմում է Շահումյանի գործի վերաբերյալ մի նոր արձանագրություն, որտեղ նշվում է, որ Շահումյանի մոտ հայտնաբերված գրատուների գրքույկը սերտ կապ ունի նրա տվյալ գործի հետ և իրեն նա ապացույց է ծառայում նրա մեղադրանքն հաստատելու համար:

Ոստիկանության ղեկարտամենտի ղեկավար, սենատոր Բելեցկին հենվելով Բաբվի ժանդարմական վարչության պետ փոխգնդապետ Սևերինսկու

մարտի 18-ի վերահիշյալ առաջարկության և գնդապետ Շատրովի զեկուցագրի վրա, որոշում է Շահումյանին աքսորել Սիբիր:

Դրա հիման վրա Բաբլի ժանդարմական վարչության պետը դիմում է քաղաքապետին Շահումյանին աքսորելու մասին: Հունիսի 2-ին Բաբլի օկրուգային դատավորը պատասխանելով քաղաքապետի հարցմանը, հայտնում է, որ դեմ չէ Շահումյանին Կովկասի սահմաններից աքսորելուն:

Հունիսի 9-ին Բաբլի Բայրյուկյան բանտապետի օգնականը կազմում է տեղեկանք Շահումյանին Սիբիր աքսորելու կապակցությամբ:

Հուլիսի 16-ին Կովկասյան զինվորական օկրուգի հատուկ բաժինը Կովկասի փոխարքայի գրասենյակին և Բաբլի քաղաքապետին հայտնում է, որ Շահումյանին անհրաժեշտ է աքսորել Իրկուտսկի նահանգ՝ ոստիկանության բացահայտ հսկողության ներքո, պատերազմական գործողությունների ափսոսելի ընթացքում:

Բանտային ծանր պայմաններն ամբողջովին հյուծել էին Շահումյանին և նա 1916 թ. օգոստոսի 3-ին դիմում է Բաբլի քաղաքապետին, նկատի ունենալ, որ իր առողջական վիճակն օրեցօր վատանում է, և ի վիճակի չէ հտապով հասնել Իրկուտսկի նահանգ, ուստի խնդրում է նշանակել բժշկական հանձնաժողով իր ասածները հաստատելու համար:

Շահումյանի դիմումի կապակցությամբ Բաբլի քաղաքապետի հանձնարարությամբ Բայրյուկյան բանտի բժիշկ Բ. Սիրոտյանը Բաբլի քաղաքապետի գրասենյակի բժիշկ Թոփուրիձեի հաստատմամբ եզրակացություն է ներկայացնում Շահումյանի առողջության վատ վիճակի մասին:

Սեպտեմբերի 6-ին Բաբլի քաղաքապետը բժշկական եզրակացությունը ուղարկում է Կովկասի փոխարքայի գրասենյակի հատուկ բաժին և խնդրում է այն հաշվի առնել:

Վերջապես 1916 թ. դեկտեմբերի 9-ին Բաբլի քաղաքապետին է ուղարկվում Կովկասի զինվորական օկրուգի հատուկ բաժնի պետի գրությունը, որով հայտնվում է հետևյալը. «Ոստիկանության դեպարտամենտի որոշմամբ Ս. Գ. Շահումյանին առողջության պատճառով թույլատրվում է Իրկուտսկ չուղարկել, բացի մայրաքաղաքներից, մայրաքաղաքային նահանգներից, Աստրախանից, Բաբլից և պատերազմական թատերաբեմից (որտեղ պատերազմական դրություն է հայտարարված) նա իրավունք ունի ընտրությունը բնակվել: Միաժամանակ խնդրվում է Շահումյանի արտաքսման օրվա և կարգի մասին վաղորդք հայտնել փոխարքայության գրասենյակին»:

Իր հերթին փոխարքայի գրասենյակից նույն օրը Բաբլի ոստիկանապետին

հաղորդվում է, որ Կովկասյան զինվորական օկրուգի գլխավոր պետը նկատի ունենալով Շահումյանի հիվանդությունը և նրա դիմումը, կարգադրել է Իրկուտսկի նահանգի փոխարեն նրան արտաքսել նրա ընտրած բնակավայրը:

Միաժամանակ ոստիկանապետին հանձնարարվում է հայտնել արտաքսման ժամանակի մասին, տեղեկություններ ներկայացնել Շահումյանի արտաքսին նշանների և այն մասին, «թե երբ, հատկապես ուր և ինչ կարգով նա կարտաքսվի, ընդ որում արտաքսումից առաջ նրան մեկ օրով ազատել կալանքից իր տնային գործերը կարգավորելու համար և հետո կրկին կալանքի տակ վերցնել և որպես արտաքսվող կալանավորի ուղարկել էտապային կարգով...»:

Դեկտեմբերի 12-ին Բաբլի քաղաքապետը ոստիկանապետին կարգադրում է Կովկասի զինվորական օկրուգի սահմաններից արտաքսման ենթակա Շահումյանին կալանքից ազատել մեկ օրով իր տնային գործերը կարգավորելու համար:

Միաժամանակ քաղաքապետը կարգադրում է ոստիկանապետին Շահումյանին իր ընտրած վայրն ուղարկել ոչ թե հտապով, այլ անցաթղթով:

Դեկտեմբերի 12-ին Շահումյանը մեկ օրով ազատվում է կալանքից, իսկ հաջորդ օրը՝ դեկտեմբերի 13-ին Շահումյանն արտաքսվում է Սարատով քաղաք, այնտեղ մեկնելով իր հաշվին:

Շահումյանի ձերբակալության, նրան ներկայացված մեղադրանքի, հարցաքննությունների վերաբերյալ նյութերը և ցարական չինովնիկների գրագրությունը պահպանվում էին Ազդրբեջանի պետական կենտրոնական պատմական արխիվում (Ֆ. 46, ց. 2, գ. գ. 400, 401): Ես անցյալ ժամանակով եմ գրում այս մասին, նկատի ունենալով, որ այդ և նաև մյուս արխիվային փաստաթղթերը, որոնք վկայում են Շահումյանի մարդկային վեհ ու ազնիվ կերպարի, հեղափոխության, ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու գործին նրա անհուն նվիրվածության մասին, ոչնչացրած կլինեն: Այլապես այդ փաստաթղթերի գոյության պայմաններում պատմության ոչ մի կեղծարար չէր համարձակվի արատավորել Շահումյանի կյանքն ու գործունեությունը, ինչպես վարվել է նրանցից էլքար Իսմայիլովը իր կեղծիքով ու չարախոսությամբ լեցուն «աշխատության» մեջ:

Սակայն, բարեբախտաբար, պահպանվել են Շահումյանի հետ աշխատած, նրա ժամանակակից ու նրան լավ ճանաչող գործիչների, այդ թվում նաև ազդրբեջանցիների հուշերն ու վկայությունները, որոնց մասին խոսք կլինի հետագա էջերում: Իսկ առայժմ ուզում եմ բերել Ն. Կոբենիկովայի հուշե-

րից հետևյալ հատվածը, որը վերաբերում է Շահումյանի վերահիշյալ ձերբա-
կալության ժամանակին:

«Շահումյանի վարմուճքը բանտում,- գրել է Ն. Կոլենիկովան,- ակնառու
վկայությունն էր այն բանի, որ իսկական հեղափոխականներին չի կարելի
ընկճել ոչ մի հարածանքով: Ստեփանը չընդհատեց իր եռանդուն կուսակցա-
կան աշխատանքը: Նա կապեր հաստատեց չրջանային կուսակցական կազ-
մակերպությունների հետ, նրանց ուղարկում էր նամակներ: Միաժամանակ
նա ուժեղ աշխատում էր իր վրա, շատ կարգում...»:

Շահումյանը մեծ հետաքրքրություն էր ցուցաբերում ընկերների նկատ-
մամբ, որոնք նաև էին բանտում: Նրանց մեջ քիչ չէին բանվորները, այդ
թվում՝ անհորձ երիտասարդներ, որոնք առաջին անգամ էին ընկնում բանտ:
Նրանցից ոմանք, իմանալով, որ գուցեև խստորեն կպատժվեն, ընկճվում էին:
Նրանք անհանգստանում էին նաև իրենց ընտանիքների համար:

Շահումյանը նրանցից յուրաքանչյուրի հետ երկար զրուցում էր: Նա
փաստերով ապացուցում էր, որ Ռուսաստանը հեղափոխության նախօրյա-
կին է, և եթե նույնիսկ մենք տանջվենք, մեղադրվենք, ապա դա կլինի ոչ եր-
կար, որ ամբողջ երկրի բանվոր դասակարգը կտապալի ինքնակալությունը,
և մենք կազատագրվենք: Եվ պետք է ասել, որ նրա այդ զրույցները հիանա-
լի ազդեցություն էին ունենում ընկճված ընկերների վրա: Նրանք նորից դառ-
նում էին աշխույժ, եռանդուն և հրաշալի էին պահում իրենց հարցաքննու-
թյան ժամանակ»: (Н. Н. Колесникова. По дороге подполья, стр. 150).

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԱՍԻՆ

Շահումյանը Բաբվի Բայկովյան բանտում մնացել է 1916 թ. մարտ ամ-
սից մինչև դեկտեմբերի 13-ը: Այդ ընթացքում, չնայած բանտային ծանր
պայմաններին, նրան հաջողվում է կապ հաստատել ազատության մեջ մնա-
ցած ընկերների հետ և մասնակից լինել ընթացող հեղափոխական աշխա-
տանքին և գրել է մի շարք հոդվածներ:

1916 թ. օգոստոսի 14-ին Թիֆլիսում լույս տեսնող «Պայքար» թերթում, որին
այդ ժամանակ ակադեմիկոս էին քոլեկիները, հրատարակվում է Շահումյանի
«Գրպիտասական «Հայ գրականության ժողովածվի» մասին» հոդվածը:

Այդ ժողովածուն կազմել էին Վ. Տերյանը, Պ. Մակինցյանը և Լ. Քալան-
թարը, որոնք արժեքավոր «ցուցմունքներ են առաջել» Վ. Բրյուսովից և Յու-
Վեսելովսկուց:

Թվարկելով ժողովածուի մեջ ընդգրկված հեղինակներին ու նրանց գոր-

ծերը, Շահումյանը դրական է գնահատում «վիպական և բեմական գրվածք-
ների ընտրությունը» և միաժամանակ նշում է բանաստեղծությունների ընտ-
րության, ինչպես նաև դրանց թարգմանության թերությունները:

Շահումյանը նշում է նաև, որ շատ ավելի լավ ընտրություն կարելի էր
անել մասնավորապես Հովհ. Թումանյանից և Ռ. Պատկանյանից, «որոնց բա-
նաստեղծությունները, բացի այդ, շատ բան են կորցրել թարգմանությունե-
րում», մանավանդ «Արաբսի արտասուքը»:

Թարգմանություններից սուժեյ են նաև Գ. Սունդուկյանի «Պեպոն» և
Հովհ. Թումանյանի «Գիքորը»: Բայց դրանում Շահումյանը չի մեղադրում
թարգմանիչներին, «որովհետև անկարելի է նույնիսկ մոտավոր հարազա-
տությամբ թարգմանել Սունդուկյանի կորդիտավոր «քաղքի լեզուն» և Թու-
մանյանի գրչի տակ այնքան ճկուն ու արտահայտիչ Լոտու բարբառը»: Շա-
հումյանը բերում է ուսուցիչներին թարգմանության առանձին նմուշներ, որոնք
ճիշտ չեն արտահայտել այս կամ այն բառի իմաստն ու նշանակությունը:

Շահումյանը ժողովածուի թերություններից է համարում այն, որ նրա-
նում տեղ չի տրվել բանաստեղծ Հակոբ Հակոբյանին: «Մեր մեջ,- գրում է Շա-
հումյանը,- կա մի ամբողջ հասարակական խափ-գիտակցության եկող Հայ
բանվորությունը, որի համար Հակոբ Հակոբյանը ճանաչված բանաստեղծ է:
Նա այդ բանվորության ցավերի և ուրախությունների արտահայտիչն է,
նրանց աշխատանքի և կռվի երգիչը: Եթե Հայ բանվորությունն ունի որևէ
նշանակություն հայկական կյանքում, նրա բանաստեղծն անշուշտ պետք է
գտնվեր այդ ժողովածուի մեջ»:

Միաժամանակ Շահումյանը գրում է, որ ժողովածուի մեջ ընդգրկվածնե-
րից «իսկական բանաստեղծ կարելի է համարել միայն Հովհ. Թումանյանին
և Ավ. Իսահակյանին», մնացածներին՝ Շահ-Ազիզին, Ալ. Մատուրյանին,
Հովհ. Հովհաննիսյանին, Դ. Դեմիրճյանին նա համարում է «ոտանավորներ
գրողներ»:

Այնուհետև Շահումյանն անդրադառնում է ժողովածուի մեջ ընդգրկված
Դ. Անանուհի «Հայկական հարցը Ռուսաստանում» և Պ. Մակինցյանի «Հայ
գրականության ակնարկ» հոդվածներին: Այս երկու հեղինակներին Շա-
հումյանը համարում է «Լեոյի աշակերտներ», որոնց հոդվածների մեջ չկա
«նոր խոսք կամ նոր տեսակետ»:

«Դ. Անանուհի,- գրում է Շահումյանը,- չի կարողացել ազատվել իր հող-
վածի մեջ լայկան-տիրացուական ոգուց և ոճից, որ այնքան հատուկ է Հայ
հրատարակախոսությունը, իսկ պ. Մակինցյանը՝ ազգային պարծենկոտու-
թյունից, որ նույնքան ընտրոջ է մեր մտավորականության համար»:

իր տված գնահատականը հաստատելու համար Շահումյանը բերում է Դ. Անանունի հոդվածից հետևյալ հատվածը. «Հայերը որք ժողովուրդ են: Որք և միայնակ: Թ՛վով նրանք քիչ են, իսկ անգութ պատմությունը միշտ հանգչում է հայ ժողովրդի ստեղծագործող ոգին և թույլ չի տալիս նրան թեև սուներ ու ուղբի կանգնել: Բախտից հալածված՝ նա գնում է իր պատմական ճանապարհով, ցանկանում և փորձում է բարձրանալ իր ոչնչությունից և սփռանալ իր բախտին, բայց չընդհատող պայմաններն ամեն անգամ ավելի դժբեղ են հանդիսանում, քան նրա հավաքական կամքը:

Եվ ո՛ւր է ուղղված արդյոք քո ճանապարհը, օ՛ պատմության բազմաչարչար խորթ զավակ...»:

Դ. Անանունը իր հորվածում աշխատում է ուսու ընթերցողին հավաստացնել, որ հայ ազգը Ռուսաստանից անջատվելու ձգտում է չունի և ընդգծում է, որ հայ հասարակական-քաղաքական բոլոր հոսանքները «միանգամայն լրջալու հավատարիմ են եղել միշտ ուսու պետության վերաբերմամբ»:

Շահումյանը գրում է, որ երբ Դ. Անանունը խոսում է գոյություն ունեցող հոսանքների մասին, թույլ է տալիս երկու սխալ: Ըստ Շահումյանի, առաջին սխալն այն է, որ հայկական կյանքում Դ. Անանունը նվաստացնում է դաշնակցության նշանակությունը և «խիստ չափազանցում «Մշակի» դերը»:

Շահումյանը նշում է, որ 1904-1905 թթ. սկսած հայ մտավորականությունը խզել է իր կապերը «Մշակ»-ի հետ և կանգնել է դաշնակցության դրոշի տակ, «որտեղ նա կանգնած է մինչև օրս»:

Շահումյանը նշում է նաև, որ «Մշակը» այնքան զուրկ «ամաց մտավորականությունից, որ հարկադրված էր հատիկ-հատիկ կողմնակիցներ և աշխատակիցներ փնտրել, մի կողմից դաշնակցության միջնադարի տակնային մեջ, մյուս կողմից (Դ. Անանունի նման)՝ մարքսիստ լինելու ցանկություն ունեցող երիտասարդների շարքերում»:

Եթե նախկինում «Մշակը» հենվում էր հայ բուրժուազիայի վրա, ապա այսօր փոխվել է իրավիճակը: Հայ բուրժուազիային այլևս «Մշակը» հարկափոր չէ, քանի որ նա ունի «այժմ վերմիջևներ, դուրվասնուխներ և այլն, նրանց «Баку» և «Кавказское слово» լրագրերով:

«Սենք» գրում է Շահումյանը,՝ դաշնակցության բարեկամները չենք, բայց չենք կարող ժխտել այն պարզ ճշմարտությունը, որ հայ ժողովրդական մտավորականությունը իր ճնշող մեծամասնությունը գտնվում է այսօր դաշնակցության ազդեցության ներքո: Եվ, կապիկացնենք դրան, մենք չէինք էլ ցանկանա երբեք, որ այդ մտավորականությունը նորից մշակական դասնափորով հետև ալը կլիներ խոշոր քայլ... դեպի հետ»:

Շահումյանը տալիս է նաև դաշնակցության ընդհանրացրը, գրելով հետևյալը. «Իս ինքը հայ դեմոկրատիան է, մոլորված, չնած, քաղաքականապես սգեռտ և կույր առաջնորդների ձեռքին խաղալիք դարձած հայ դեմոկրատիան: Դաշնակցության ազդեցության տակ են ոչ միայն հայ քաղքենի, մանրբուրժուական տարրերը՝ ժողովրդական ուսուցիչները, գրողները, հասարակական գործերին նվիրված գյուղական և գավառական երիտասարդությունը, այլև դժբախտաբար, հայ բանվորության անգիտակից մեծամասնությունը»:

Սակայն Շահումյանը համոզված է, որ վերջի վերջո «այդ բանվորությունը և արմատական երիտասարդությունը» հետանալու են դաշնակցությունից և դառնալու են մարքսիստներ: «Սենք գիտենք, շարունակում է նա,՝ որ հայ դեմոկրատիան բուռն ցատտով դեն է չալրտելու միանգամայն իր այժմյան կույր ու հանցավոր առաջնորդներին, բայց սպազայի նոր, էվոլյուցիայի ենթարկված մանրբուրժուական ազգային դեմոկրատիան լինելու է համեմայն դեպս դաշնակցության ժառանգորդը և ոչ «Մշակ»-ի»:

Դ. Անանունի թույլ տված երկրորդ սխալը Շահումյանը համարում է այն, որ «ոչ մի խոսքով չի հիշում այն ազդեցության մասին, որ ունեցել է հայկական կյանքում համառուսական մարքսիստների կուսակցությունը»: Դրա փոխարեն Դ. Անանունը «մեծամիտ պարծենկոտությունը հայտարարում է իբրև խոշոր պատմական երևույթ հայկական կյանքում», որ 1904 թ. առաջ է եկել մի նոր կուսակցություն՝ «Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը»:

Համառոտ նշելով այդ կուսակցության առաջ գալու հանգամանքները, Շահումյանը փաստում է հետևյալը. «Այն միջոցին, երբ համառուսական մարքսիստների շարքերից բազմաթիվ մտավորականներ ու բանվորներ լցրել են տարիների ընթացքում բանտերը և այժմ էլ տասնյակներով տքնում են տաժանակիր աշխատանքի դատապարտված և հավիտյան Սիբիր ուղարկված,՝ այդ միջոցին ոչ ժանդարմները, ոչ պրոկուրատուրան չեն կարողացել խոշորադիտակի մեջ նույնիսկ նկատել «հայ ս-դ. կազմակերպության» գոյությունը, որպեսզի գտնե մի հատիկ ձեռքակալություն տեղի ունեցած լինելը այդ «կազմակերպությանը» պատկանելու համար»:

Շահումյանը նշում է, որ Դ. Անանունը և նրա նման մարդիկ «այրվում են ուկրաինի և ինքնագովություն արտով, շտապում են մտնել պատմության մեջ»:

Այնուհետև Շահումյանը քննարկում է Պ. Մակինցյանի հոդվածը: Մակինցյանը թվարկում է վերջին 100 տարվա ընթացքում հայ ժողովրդի ստեղծած մշակութային արժեքները և հետո նշում, որ թուրքերն ու քրդերը, որոնք

«Թվով մի քանի անգամ գերազանցում են Հայերին», վերջին 100 տարվա ընթացքում նոր են անցել քոչվորությունից դեպի նստակյաց կյանք և նոր են սովորում հողագործություն:

Շահումյանը նշում է, որ այս համեմատությունն անելիս Մակինցյանը Հայվի չի առնում «համապատասխան պատմական և քաղաքական պատճառները» և ուզում է «Հայերի համեմատական առաջադիմությունը բացատրել «Հայի ցեղային հանճարով», իսկ թուրքերի հետամնացությունը նրանով, որ այդ «բարբարոս» ցեղն անընդունակ է քաղաքակրթության»:

Շահումյանը չի կարծում, որ Մակինցյանը դավանում է այս «մանկական թեորիան» և եզրակացնում է, որ Մակինցյանը «անգիտակցաբար հարկ է հատուցանում հայկական ավանդական մեծամտությունն ու ամբարտապանությունը»:

Հորվածի վերջում Շահումյանը դրվատանքի խոսք է ասում և ժողովածուն գնահատում է որպես «ընդհանուր առմամբ բավարար կերպով իրագործված ձեռնարկություն»: Նաև եզրակացնում է, որ թեև ժողովածուի նախաձեռնող Մաքսիմ Գորկին ունենար լավ օգնականներ ու համապատասխան աշխատակիցներ, ապա նա «հարկադրված չէր լինի օգնականներ փնտրելու՝ ազգայնական տեսակետից դեռ չազատագրված կիսամարքսիստների, սուտ մարքսիստների և ոչ մարքսիստների շրջանում»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 38-46):

«ԱՅՌ ԲՈՒՈՐԸ ՍՈՒՏ Է ԿԱՄ ՍԽԱԼ Է»

Հաջորդ՝ «Ազգային հարցը և հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան» հորվածը, որը Շահումյանը գրել է բանտում, ժամանակին չի հրատարակվել: Հորվածի բնագիրը պահպանվում է ՀՀ Ազգային արխիվում:

Հորվածի սկզբում Շահումյանը իր խոսքն ուղղում է Հայ բանվորությանը, Հայ գյուղացիներին և Հայ ժողովրդական մտավորականությանը, որոնք սոցիալ-դեմոկրատների հակառակորդներից միշտ լսել են, թե նրանք «ազգություն չեն ճանաչում, Հայ ազգի մասին չեն ուզում մտածել. թե Հայ ժողովրդի մեծ ցավերը նրանց սրտին օտար են»:

Շահումյանը նաև նշում է, որ երբ Հայ սոցիալ-դեմոկրատները 1902-1903 թթ. ապարեզ են եկել, դաշնակցությունը նրանց Հայտարարել է «ազգի դավաճաններ»:

«Այդ բոլորը,- ընդգծում է Շահումյանը,- սուտ է կամ սխալ է»:

Շահումյանը հիշեցնում է, որ 10-15 տարի առաջ Հայ սոցիալ-դեմոկրատ

ներն առաջին անգամ քննադատել են դաշնակցականներին ու Հնչակյաններին նրանց ազգային քաղաքականության համար, նրանց անվանելով «Հայ ազգի կույր առաջնորդներ», որոնք ունեցել են բարի ցանկություններ, բայց նրանց գործերը, ընտրած ճանապարհը «կորստաբեր են Հայ ժողովրդի համար»:

Շահումյանը գրում է. «Ով ականջ է ունեցել լսելու Համար և ով աչքեր ունի տեսնելու Համար, նրանք պետք է Համաձայնեն, որ մեր ասածները՝ դաշնակցականների կույր ու կարճատես քաղաքականության մասին, միանգամայն արդարացի են»: Նա նշում է, որ նրանց քաղաքականությունը Հայ ժողովրդին պատճառել է միմիայն դժբախտություն, կոտորածներ ու ավերածներ:

Շահումյանը նկատի ունենալով, որ Հայ ժողովուրդը «բախտի բերումով» ապրում էր երկու բռնակալների՝ ռուսական ցարիզմի և թուրքական սուլթանի իշխանության տակ, չրջապատված էր «խրեկից էլ ավելի հետամնաց, դժբախտ տաճիկ և քուրդ ժողովուրդներով՝ Տաճկաստանում և թուրք ու վրացի ժողովուրդներով՝ Ռուսաստանում», կարևոր էր համարում խեղացի և հեռատես քաղաքականություն վարելով «ձգտել որքան կարելի է Համերայն ապրել Հարևանների հետ»:

Այնուհետև նա հիշեցնում է 22 տարի առաջ ասված էնգելսի այն խոսքերը, թե Հայերը գտնվում են «տաճիկ Ացիլլայի և ռուսական դեպոտիզմի մարդկայի արանքում» և դրանից ելնելով նշում էր, որ «հարկավոր էր այնպես դիկավարել քաղաքականության նախը, որպեսզի նա չջախճախվեր»:

Շահումյանը դաշնակցությունը մեղավոր չի համարում «Հայ ժողովրդի պատմական վիճակը այդքան անազորյուն» լինելու համար, որովհետև «ոչ մի կուսակցություն չի կարող դժոխքը դրախտ դարձնել»:

«Բայց,- համոզված ընդգծում է Շահումյանը,- կուսակցությունները ատեղծվում են Հենց նրա համար, որ ըստ կարելույն լավացնեն ժողովրդի դրությունը, որ խեղացի կերպով առաջնորդեն մասաններին և տանեն նրանց ազատության ճանապարհով»:

Շահումյանը եզրակացնում է, որ «մեր ազգային կուսակցությունները քաղաքականության մեջ տգետ են եղել» և դա բացատրում է նրանով, որ դրանք «կազմվել են գլխավորապես կովկասահայ մտավորականությունից, որը թե իր ծագումով, թե կրթությամբ և թե իր տնտեսական շահերով սերտորեն կապված է եղել և այսօր էլ կապված է կովկասահայ բուրժուազիայի հետ»:

Իսկ այդ բուրժուազիան իր «ապահով կացութիւնը» ստեղծել էր ռուսական կառավարութեան հովանավորութեամբ, միշտ պատրաստ՝ ծառայելու Տաճկաստանի դեմ նրա նվաճողական քաղաքականութեանը:

Անդրադառնալով Ռուսաստանի նվաճողական քաղաքականութեանը, որը ձգտում էր «մոտենալ Պոսին Սև ծովի այն կամ այս կողմից», Շահումյանը նշում է, որ Տաճկահայաստանը նվաճելու դեպքում կովկասահայ բուրժուազիայի «ստաջ կրացիներ նոր ասպարեզ անասահման շահագործութեան համար, իսկ եթե այդ նվաճումը չհաջողվեր, Համենայն դեպս իր քաղաքականութեամբ նա շահում էր ռուս կառավարութեան սիրտը և կարող էր հուսալ, որ կվայելի նրա հովանավորութիւնը Կովկասում»:

«Այդ էր պատճառը,- ընդգծում է Շահումյանը,- որ կովկասահայ բուրժուազիան այնքան «ազգասեր» էր, որ նա միշտ նյութական միջոցներ էր տալիս դաշնակցականներին՝ նրանց արկածախնդիր քաղաքական ձեռնարկութիւնների համար»:

Եվ այն հանգամանքը, որ Հայ ազգային կուսակցութիւնները «գործիք ու խաղալիք» էին դարձել կովկասահայ բուրժուազիայի ձեռքին և նրա միջոցով նաև ռուսական կառավարութեան ձեռքին, Հասցրեց այն բանին, որ «նրանց գործունեութիւնն այնքան կորստաբեր հետևանք ունեցավ տանկահայերի համար և այնքան վնասակար էր նա և կովկասահայ ժողովրդական մասսաների համար»:

«Ազգը,- եզրակացնում է Շահումյանը,- այսինքն ժողովուրդն իր մեծամասնութեան մեջ ոչ միայն չհասնեց հնչակյան-դաշնակցական «ազգասիրութիւնից», այլև կրեց ամենասոսկայի պատիժները, զոհ դարձավ ամենաառեւելի պատուհանների»:

Շահումյանը հողվածի վերջում հիշեցնում է «Վրոնցով-Դաչկովի ննջարանում ծրագրած և Հայ բուրժուաների փողերով իրագործած այն քաղաքականութիւնը, որ վարում էր դաշնակցութիւնը ներկա պատերազմի ընթացքում (կամավորական շարժումը և այլն), որպեսզի Հասկանալ Հայ մտավորականութեան «ազգասիրութեան» արժեքը, նրա պատմական նշանակութիւնը»:

Եվ այս ամենի պատճառով է բացատրում Շահումյանը, թե ինչու էին Հայ սոցիալ-դեմոկրատները դեմ դաշնակցականների ազգային քաղաքականութեանը: Հայ սոցիալ-դեմոկրատների համար սկզբից էլ «պարզ էր, թե ինչ կորստաբեր հետևանքներ կունենա այդ քաղաքականութիւնը»: Հենց այս անհաշտ քննադատութեան համար դաշնակցութիւնը հավատացնում էր Հայ մասսաներին, թե Հայ սոցիալ-դեմոկրատները «Հայ ազգի թշնամիներն են»:

«Ժամանակն է արդեն,- ազդարարում է Շահումյանը,- որ Հայ բանվորութիւնը, որի նշանավոր մասը դեռ չի ազատագրվել դաշնակցութեան լծից և Հայ գյուղացիութիւնը, որ համարյա ամբողջովին գտնվում է նրա ազդեցութեան տակ,- ուշքի գան, սթափվեն և լուրջ կերպով մտածեն իրենց ապագայի մասին»: (Մտ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 47-50):

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆՂԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

1916 թ. սեպտեմբերի 11-ին սիրիյան աքտորում տաժանակրութեան դատապարտված Սուրեն Սպանդարյանը մահանում է Կրասնոյարսկի քաղաքային հիվանդանոցում:

Ստանալով իր հավատարիմ ընկերոջ, աննկուն հեղափոխական Սպանդարյանի մահվան լուրը, Շահումյանը բանտում գրում է «Մեր Սուրենը» մահախոսականը, որը հրատարակվում է 1916 թ. սեպտեմբերի 18-ին «Պայքար» թերթում:

Շահումյանը բարձր է գնահատում Սպանդարյանին, որն «Հայ իրակառնութեան համար իր կյանքով և իր մահով, մի նոր երևույթ է, անսովոր ու անհավանալի այդ իրականութեան հին-հին գաղափարներով սնված մարդկանց համար: Նրան չէր կարող հասկանալ մեր «ազգային» գործիչն ու հրապարակախոսը, նրա հոգին և նրա կյանքը չէր կարող ըմբռնել ու նկարագրել Հայ վիպագիրը»: (Մտ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 60-61):

Նկատի ունենալով, որ այսօրվա Հայ երիտասարդներից շատերը չգիտեն Սուրեն Սպանդարյանի մասին, հարկ եմ համարում ստորև, որքան հնարավոր է համառոտ ներկայացնել նրա գործունեութիւնը:

Սուրեն Սպանդարյանը ծնվել է 1882 թ. դեկտեմբերի 3-ին Թիֆլիսում, Հայտնի հրատարակախոս, «Նոր-դար» թերթի հիմնադիր Սպանդար Սպանդարյանի ընտանիքում:

Սուրենը նախնական կրթութիւնը ստացել է տանը, հետո 1902 թ. ավարտել է Թիֆլիսի 3-րդ արական գիմնազիան: Այս ժամանակից էլ նա աչքի էր ընկնում ընթերցասիրութեամբ, կարդում էր Հայ, ռուս և եվրոպական գրողների ստեղծագործութիւնները:

Նշանավոր գրող Նար-Խոսր, որը մտերիմ էր Սպանդարյանների ընտանիքին, իր հիշողութիւններում գրել է Սուրենի ընթերցասիրութեան մասին, հատկապես շեշտելով. «Հազիվ թե ռուս ժամանակակից գրականութեան մեջ մի նշանավոր աշխատութիւն լիներ-գեղարվեստական, թե գիտական-որ կարդացած չլիներ»:

Գիմնագիայի ավարտական դասարանում Սուրենը մասնակցում է գաղտնի սոցիալ-դեմոկրատական խմբակի աշխատանքին, ծանոթանում է Մարքսի, Պլեխանովի և այլոց աշխատություններին: Նա դառնում է Համովիած մարքսիստ, հեռանում է պահպանողական Հայացքների ունեցող Հորից և երկու եղբայրներից:

Նար-Ռուր գրել է. «Քիչ թե շատ մոտիկ լինելով Սպանդարյանների ընտանեկան կյանքին, երկար տարիներ չփվելով նրանց հետ, շատ անգամ է պատահել, որ ես ականատես եմ եղել բուռն ու Համառ, երբեմն պարզապես կրքոտ վիճաբանությունների՝ խմբագիր Հոր և գիմնագիտ ուղղու միջև՝ ժամանակակից Հրատապ խնդիրների մասին, վիճաբանություններ, որոնց ժամանակ Հայրը երբեմն զայրացած չաբտում էր որդու երեսին՝ «սուս արա, լա կոտ, ոչինչ չես հասկանում» բառերը: Բայց Սուրենը սուս անող չէր, համարուժեղ կողմից իր Հոր գավակն էր: Այդ վիճաբանություններին երբեմն մասնակցում էին Սուրենի երկու ավագ եղբայրները, իբրև իրենց Հոր գաղափարի պաշտպաններ, և, չնայելով երեքի (Հոր և երկու մեծ որդիների) միասնական գրոհին, փոքրիկ Սուրենն իր ճարտար լեզվով և արգունենտացիայով եթե չէր հաղթում, չէր էլ հաղթվում: Ու երկու կողմն էլ ժեռ քարի պես մտած էին անսասան կանգնած իրենց տեսակետի վրա»: (Նար-Ռուս, Հայր և որդի, «Մարտակոչ», 1926, թիվ 219):

Այս գաղափարական տարաձայնությունները որևէ ազդեցություն չեն թողել Սուրենի որդիական ջերմ վերաբերմունքի վրա, որ նա մինչև վերջ ակնաձանգ էր ստածում Հոր նկատմամբ:

1902 թ. ավարտելով գիմնագիան, Սուրենը մեկնում է Մոսկվա և ընդունվում է Համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետ, հետո փոխադրվում է իրավաբանական ֆակուլտետ:

Սպանդարյանը մտնում է Համալսարանում գործող ուսանողական ընդհատակյա սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մեջ և ստանձնում է «Դուկատ» ծխախոտի ֆարքիկայի բանվորների մեջ պրոպագանդա տանելու գործը:

Շուտով Հայ եկեղեցու ունեցվածքը բռնազրավելու դեմ եռանդով բողոքելու Համար իշխանությունները փակում են «Նոր-դար» թերթը և ձերբակալում Սպանդար Սպանդարյանին: Դրա հետևանքով Սուրենը գրկվում է Հոր կողմից ստացվող նյութական օգնությունից և ուսման վարձը չվճարելու համար կանգնում է Համալսարանից փտարվելու փտանգի առջև:

Օճանը վիճակի մեջ Հայտնված Սուրենը նույնիսկ չի փորձում դիմել Հայ

Հարուստներին, դրսևորելով իր ազատ ու անկախ լինելու կամքը: Նա Հորը ուղարկած նամակներից մեկում գրում է. «Ես ուրախ եմ, որ իմ կրթությունը միմիայն ձեզ եմ պարտք, որ չեմ օգտվել և չեմ օգտվի ոչ մի Հայ «բարերարի» փողից, այդ ինձ իրավունք է տալիս ազատ իմ գլուխս պահել և բարոյական մեծ հրճվանք գգայ: Այդ ինձ ուժ է տալիս, և երբ ես դուրս գամ կյանքի ասպարեզը, ազատ կեղավով ես կթքեմ Հայ բուրժուայի երեսին և կկռվեմ նոցա դեմ, ինչպես Հայությունն ապականող ցեղերի դեմ»: (Ս. Սպանդարյան, Երկեր, հ. 2, Եր. 1959, էջ 284):

Սուրենը ուսու ուսանող ընկերների աջակցությամբ կարողանում է վճարել ուսման վարձը և չվտարվել համալսարանից:

Համալսարանում ուսանելը նպատակ է Սուրենի գաղափարական Հայացքների ամրապնդմանը: Դա երևում է Հորը գրած նամակներից: Նա 1904 թ. նոյեմբերի 6-ի նամակում Հորը գրում է. «Ուրախ եմ, որ թերթի գործն ստաջ է գնում, բայց իմ կարծիքով թերթը Հաջողություն չի ունենա, եթե իր չորս բողոքը չհավաքի նոր ուժեր, թե գրական և թե գիտական տեսակետից պատրաստված: Բավական չէ այժմ միմիայն «Հրապարակախոսություն», պետք է և անհրաժեշտ է գիտական արգունենտացիա»: (Ս.Սպանդարյան, նույն տեղը, էջ 282):

Սուրենին դուր չէր գալիս, որ Հայրն իր թերթի էջերում պաշտպանում էր Հայ բուրժուաներին և Հոգևորականներին, որոնք Հոր անհաջողության ժամանակ նրանից երես էին թեքել և չէին աջակցել: Հենց այդ վիճակն էլ նկատի ունենալով, Սուրենը 1904 թ. նոյեմբերի 17-ին Հորը գրում էր. «Ոչինչ, այս կյանքի դասն է և ապագայի «Նոր-դարը» չպետք է նոցա պաշտպանե, այլ մտրակե»:

Եվ Հորը նա կոչ էր անում. «Թող կոտորեն, թող սպանեն այդ պարագիտներին, որոնք միմիայն Հայի անունն են կեղտոտում ու վայր ձգում: Պատերազմ անխտիր և անգութ նոցա դեմ: Բավական է, քանի մեզ անվանեցին Հետադեմ և «եկեղեցական թերթ»»: (Ս. Սպանդարյան, նույն տեղը, էջ 283):

Նույն նամակում Սուրենը Հորը գրում է. «Դուք քաղցած, ստանց փողի, չորի, ձեր որդիքը միևնույն դրություն մեջ, իսկ ձեր պաշտպանած Հոգևորականությունը տոգված, Հանգիստ ապրում է և լիտիությունը պարսպում: Բավական է, դուք ձեր կյանքը, առողջությունը, խելքը, ստղանդը՝ բողոք գրեցիք, բողոք, ամեն ինչ տվիք ազգին և ինչ ստացաք: Ոչինչ: Վիրավորանքից, կեղտից, բանասարկությունից ավել»: (Ս. Սպանդարյան, նույն տեղը, էջ 284):

Սակայն որդու խորհուրդները մնում են անպատասխան: Հայրը շարունակում է իր գործը: Իսկ Սուրենը նետվում է կյանքի բոլորովին այլ ուղի: Նա վերջնականապես ընտրում է հեղափոխականի փոստը՝ ընդունելով ու գրկանքներով լեցուն ճանապարհը: Այդ ճանապարհն էլ Սուրենին հասցնում է 1904 թ. դեկտեմբերին տեղի ունեցած ուսանողության ցույցին եռանդով մասնակցելուն, ցույց, որն ավարտվում է ոստիկանության ու զորքի հետ ընդհարումով:

Իր այս առաջին հեղափոխական մկրտության մասին Սուրենը 1904 թ. դեկտեմբերին հորն ուղարկած նամակում գրում է հետևյալը. «Դա ահռելի բան էր, գրանդիոզ: Ցավալիին այն է, որ մի քանի ուսանող և ուսանողուհի սպանված են: Շատերը վիրավորված, կան և անդամալուծներ: Կատակարության վախն այն աստիճան էր հասել, որ թնդանդները էր բերել, պոլիցիայի և կազակների գազանությունը չափն անցել էր»:

Այնուհետև Սուրենը գրում է իր մասնակցության մասին, ավելացնելով, որ «մի քիչ ծեծ» է ստացել, որ ինքն էլ իր մահակով լավ ջարդել է «պոլիցիայի գլուխներն ու մեջքները»: (Ս. Սպանդարյան, նույն տեղը, էջ 286-287):

Չնայած Համալսարանը փակվել էր, բայց Սուրենը մնում է Մոսկվայում և շարունակում է մասնակցել հեղափոխական շարժմանը:

1905 թ. մարտին Սպանդարյանը հոր առաջարկությամբ մեկնում է Գերմանիա և ընդունվում Հայդելբերգի Համալսարան, ստանալով այստեղ բնակվող Մուրացյանի կնոջ՝ Ոսկի Տեր-Հովհաննիսյանի օգնությունը, որը կապված էր Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական շարժման հետ:

Սակայն Սուրենի ամբողջ ուշադրությունը Ռուսաստանի կողմն էր և հաղթահարելով մի շարք դժվարություններ, նա 1905 թ. հունիսի 8-ին վերադառնում է Թիֆլիս և միանում իր կնոջն ու երկու երեխաներին:

Թիֆլիսում հեղափոխական շարժմանը եռանդով մասնակցելու համար Սպանդարյանը հայտնվում է ոստիկանության հակողության տակ:

1905 թ. հոկտեմբերի սկզբին Սպանդարյանը մեկնում է Մոսկվա և եռանդով մասնակցում է հոկտեմբերի 20-ին սկսված վիթխարի քաղաքական ցույցին: Նա նաև մասնակցում է Մոսկվայում սկսված դեկտեմբերյան զինված ապստամբությանը՝ ստանալով մարտական մկրտություն:

1906 թ. հունվարին Սպանդարյանը վտարվում է Համալսարանի իրավաբանական ֆակուլտետի երրորդ կուրսից հեղափոխական շարժումներին մասնակցելու համար և ստիպված վերադառնում է Թիֆլիս: Այստեղ նա իրեն ամբողջությամբ նվիրում է հեղափոխական աշխատանքին, դառնում է հայտնի պրոֆեսիոնալ հեղափոխական «Հնկեր Տիտոֆեյ» անունով:

Սպանդարյանը Շահումյանի հետ միասին մասնակցում է Թիֆլիսում հայերեն բուլչեկյան լեզու «Կայծ» թերթի հիմնադրմանն ու հրատարակությանը, դառնում թերթի խմբագիրներից մեկը:

Սպանդարյանը սուր և կրքոտ ելույթներ էր ունենում բանվորների հավաքներում: Նրա բազմաթիվ հուլիսիաները, որոնք սպառնում էին «Կայծ» թերթում, սողորված էին աշխատավորների հաղթանակի նկատմամբ ունեցած հավատով:

Սպանդարյանը վճռականորեն հանդես էր գալիս դաշնակցության դեմ: Մի անգամ, 1906 թ. հունիսի սկզբներին Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում Սպանդարյանը սուր քննադատում է դաշնակցությանը: Այդ քննադատությանը պատասխանելու փոխարեն դաշնակցության հայտնի գործիչ Սափակը բռնաջնջելով հարձակվում է նրա վրա: Սպանդարյանը Սափակին հրավիրում է միջնորդ դատարան, բայց նա խուսափում է այդ դատարանից:

Սպանդարյանն իր հուլիսիաներում դաշնակցությանն անվանում էր «հայ կյանքի ցեցեր», որոնք բթացնում են հայ բանվոր դասակարգի գիտակցությունը, հայ գյուղացիությանն ամենաամանով կերպով հարստահարում ու կեղեքում են:

1906 թ. հունիսի 9-ին «Կայծ» թերթում հրատարակված ««Սոցիալիստ» դաշնակցությունը և թյուրք բանվորները» հոդվածում Սպանդարյանը գրել է. «Այդ կվագի (կեղծ) սոցիալիստական դաշնակցությունն ամեն կերպ աշխատում է անջատել հայ բանվորությունը ուրիշ ազգերի պրոետարիատից և, օգտվելով այդ բաժանումից, շահագործել այդ մասան իր բուրժուական նպատակների համար»:

Այնուհետև Սպանդարյանը շարունակել է. «Որքան էլ որ տարօրինակ որքան էլ որ արտասոց թվա այն, որ դաշնակցությունը կարող է որևէ առնչություն ունենալ բանվորական շարժման հետ, բայց այդ փաստ է և այն էլ տիտուր փաստ: Այդ կուսակցությունը, որ ներկայացնում է որպես մի մեխանիկական ազդեցատ, անասելի խառնուրդ բուրժուաների և բանվորների, գյուղացիների ու ճորտերի և կալվածատերերի, շահագործողների և շահագործվողների, զուտ ազգային շովինիզմի և կվագի սոցիալիզմի այդ հերմոֆրոդիտական կուսակցությունը խանգարում է բանվորական միությունների կազմակերպությանը և ամենակայրենի օբարուկցիաներ է սարքում իր թշվառ ու մոլորված «զինվորների» աջակցությամբ»:

Սպանդարյանը լայն հեղափոխական աշխատանք էր տանում Ապակերու պրնճահանքերում, Լոռվա գյուղերում:

1906 թ. օգոստոսին «Կայծ» թերթի փակվելուց հետո Սպանդարյանը մասնակցում է «Նոր խոսք» թերթի հրատարակմանը: Այդ թերթի օգոստոսի 23-31-ի համարներում Սպանդարյանը հրատարակում է «Խորոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան» ուշագրավ հոդվածը:

Այս հոդվածով առաջին անգամ պարզաբանվում է հայ սոցիալ-դեմոկրատների հայացքները դպրոցի, կրթության, մշակույթի հարցերի վերաբերյալ: Այդ հարցերը, հատկապես 20-րդ դարի սկզբին, ստացել էին հրատապ բնույթ, քանի որ դաշնակցությունը բացահայտորեն ձգտում էր իր մենաշնորհը հաստատել դպրոցի, կրթության ասպարեզում, պարտադրելով իր գաղափարախոսությունը:

Պետք է ասել, որ Հանրության բոլոր խավերը չէ, որ ընդունում էին դաշնակցության թեղադրանքը, ձգտելով կրթությունը չթողնել որևէ քաղաքական կուսակցության գերիշխանության տակ: Այս հարցում առանձնապես եռանդով էին պայքարում հայ սոցիալ-դեմոկրատները, որոնց դաշնակցության մամուլը գրպարտում էր, մեղադրելով, թե սոցիալ-դեմոկրատները ոչ միայն չեն հետաքրքրվում կրթության, մշակույթի հարցերով, այլև աշխարհ են եկել վճռելու միայն «ստամոքսի հարցը»: (Ալեքոպյան Վարդան, Սուրեն Սպանդարյան, Եր, 1957, էջ 90):

Իր հոդվածում Սպանդարյանը փաստում է, որ սոցիալ-դեմոկրատիան ամենից շատ է մտահոգված մշակութային-սոցիալական հարցերի լուծմամբ, որ վճռական նշանակություն ունի այդ հարցերի վերաբերմամբ սոցիալ-դեմոկրատիայի նշանակությունը, որովհետև «ոչ թե բուրժուազիայի, այլ պրոլետարիատի շահերը, նրա ձգտումներն են ժամանակակից հասարակության մեջ իրենց օբյեկտիվ նշանակությամբ համապատասխանում հասարակական, ընդհանուր մարդկության զարգացման առաջադիմությունը»:

«Բուրժուական հասարակության մեջ», գրում է Սպանդարյանը, ամեն բան դառնում է ապրանք, ծախս առնելու առարկա, և այդ կանոնին են թարկվում են ոչ միայն նյութական, ձեռքով շոյափելի իրերը, այլև մտավոր, ոչ-նյութական բաները՝ գիտություն, տաղանդ, շնորհք և այլն»:

«Իզուր են», շարունակում է Սպանդարյանը, մեր գիտնականները, գրողները, նկարիչները մեծ-մեծ խոսում իրենց «ազատության» մասին, իզուր են իրենք իրենց բարձր դասում «շուկայից»: Նրանք բուրժուազիայի ծառաներն են, և իրենց գործունեությունը համակերպում են բուրժուազիայի պահանջներին և ճաշակներին»:

Այնուհետև անդադարաձևալով աշխատավորների երեխաներին կրթու-

թյունից զրկելու, ուսման մեջ զանազան սահմանափակումների հարցերին, Սպանդարյանը գրում էր, որ բուրժուական հասարակության մեջ կրթության գործն ունի որոշակի դասակարգային բնույթ:

Այս ամենն էլ հաշվի առնելով, ընդգծում էր Սպանդարյանը, սոցիալ-դեմոկրատիան ձգտում է իրականացնել ճիշտ և պարտադիր ուսուցում, կրթություն իրականացնել մայրենի լեզվով, դպրոցները լինեն միայն ժողովրդական, որտեղ հնարավորություն կունենան կրթություն ստանալ աշխատավորների երեխաները: Սոցիալ-դեմոկրատիան պահանջում է պետական բյուջեի խոշոր մասը հատկացնել ժողովրդական լուսավորությանը:

Սպանդարյանը նշում էր, որ կրթությունը բարձր հիմքերի վրա դնելու համար սոցիալ-դեմոկրատիան պահանջում է մեծ ուշադրություն դարձնել ժողովրդական ուսուցչի վրա, բարելավել նրա նյութական պայմանները:

«Ժողովրդական ուսուցիչը», գրում էր Սպանդարյանը, պիտի համարվի ամենաօգտակար և ամենակարևոր հասարակական գործիչներից մեկը և այդ տեսակետից նա բոլորովին պետք է ապահովված լինի իր գոյության խնդրի կողմից, որպեսզի կարողանա իր բոլոր ուժերը և գիտությունը նվիրել ժողովրդի զարգացման, առաջադիմության գործին»:

Սպանդարյանը կրթության ամբողջ գործը վերափոխելու պահանջի մեջ առաջ էր քաշում նաև դասավանդման բովանդակությունն արմատապես փոխելը: «Խորոցը», գրում էր նա, ընդհանրապես, պիտի նպատակ ունենա տալ դրական, գիտական պաշար, պիտի պատասխանի կյանքի իսկական պահանջներին ու կարիքներին»: Նա պահանջում էր դպրոցից դուրս մղել փտաբանիկ, հետադիմական, հակագիտական բովանդակությունը:

Սպանդարյանը դպրոցի բարելավման գործում կարևորում էր նրա աշխարհիկ ուղղությունը և ընդգծում էր դպրոցի կրթական ծրագրից կրոնը հեռացնելու անհրաժեշտությունը, որովհետև «կրոնը ոչ միայն հակառու է առողջ դատողությանը և տրամաբանությանը, այլև բուրժուական կարգերում կրոնը, հավատքը դասակարգային ճնշման միջոց է»:

Շարունակելով իր միտքը, Սպանդարյանը գրել է. «Այն միտքաբանությունը, որ քրիստոնեությունն ու մյուս կրոնները տալիս են խեղճ, աշխատավոր դասակարգին, խոստանալով «այստեղի» տանջանքների և տառապանքների փոխարեն «այնտեղի» երջանկությունը, խոնարհություն, հպատակություն, ստրկության այն քարոզն ու փիլիսոփայությունը, որի խմաստը կարելի է արտահայտել «Ամեն բան աստծուց է կախված» խոսքերով, միշտ եղել է մի գործը լծակ հարստահարվողների գիտակցությունը ըթնացնելու, մթնաց-

ներու, միաժամանակ տալով ազատ ասպարեզ բուրժուական սանճարձակություններին»:

Սպանդարյանը մեծ նշանակություն էր տալիս կանանց կրթության գործին և դնում էր երկու սեռի միաստեղ ուսուցման պահանջը, այն դիտելով որ պես միջոց՝ վերացնելու «այն ցավալի հայացքը կնոջ մասին, որպես ոչ հասարակարարածի: Պետք է Հենց ուսումնարանական հարկի տակ երկու սեռերը սովորեն միմյանց վրա հավասար, բնկերական աչքով նայել»:

Մայրենի լեզվով ուսուցման պահանջն առավ քաջելու հետ միասին, Սպանդարյանը նկատի ունենալով աճող սերնդի ինտերնացիոնալ դաստիարակության գործը, միաժամանակ կարևորում էր տիրապետող բուրժուական ազգի ասիմիլատորական քաղաքականության դեմ պայքարի անհրաժեշտությունը: Դրա հետ միասին Սպանդարյանը դեմ էր արտահայտվում ազգային ներկայակամությանը, ազգերի մերձեցմանը խոչընդոտող ազգայնական ձգտումներին:

«Մեր դերը գյուղերում» հոդվածում Սպանդարյանը շարադրել է սոցիալ-դեմոկրատիայի հայացքներն ազգարային շարժումը կազմակերպելու և դեկավարելու սկզբունքների մասին:

«Սոցիալ-դեմոկրատիան,- գրել է Սպանդարյանը,- պետք է ձգտի, որ շարժումը լինի ոչ թե տարերային, անձև, անկազմակերպ, սուկ ժողովրդական գայրույթի և կատաղության բռնկում, պայթյուն, առանց որևէ որոշակի նպատակի, այլ գիտակից և կազմակերպված, հետև էքսցեսներից և ավելորդ, աննպատակ ծայրահեղություններից: Այդպիսի տարերային և հանկարծակի պայթյունները միշտ ջախջախվում են, թողնելով գյուղացու հոգում հրապիրտություն, անբավականություն, մի տեսակ պեսիմիզմ և մինչև անգամ թշնամական վերաբերմունք դեպի հեղափոխությունը և հանուն հեղափոխության գործող կուսակցությունները»:

Դատապարտելով ավանտյուրիզմն ազգարային շարժման մեջ, Սպանդարյանը պարզաբանում էր, որ «գիտակից, պատրաստված և կազմակերպված շարժումը, եթե նույնիսկ անհաջող ելք ունենա, այնուամենայնիվ, գերադասելի է, որովհետև մասսան այդ շարժմանը մասնակցել է գիտակցաբար, և նրա պարտությունն ավելի ևս բաց է արել նրա աչքերը, ավելի ևս ավելացրել է նրա հեղափոխական էներգիան»:

ՌՄԴԲԿ Անդրկովկասյան մարզային կենտրոնը 1906 թ. Սպանդարյանի վրա էր դրել ելիզավետալոյի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարումը, իսկ 1907 թ. ընդհատակյա կուսակցական աշխատանքի է ո-

ղարկվում Բաբու: Այստեղ Սպանդարյանը դառնում է բանվորական շարժման ղեկավարներից մեկը: Բաբվում Սպանդարյանը եռանդով մասնակցում է բոլշևիկյան «Օրեր» թերթի հիմնադրմանը:

1907 թ. փետրվարի 2-ին «Օրեր» թերթում հրատարակվում է Սպանդարյանի «Օրվա ինդիքներ» հոդվածը, որտեղ սուր քննադատության է ենթարկում կաղետներին, որոնք փորձում էին իրենց ներկայացնել ամբողջ ազգի միակ ներկայացուցիչներ:

Սպանդարյանը մատնանշում է «ազգ», «ազգային շահեր» հասկացությունների վերաբերյալ կաղետների և սոցիալ-դեմոկրատների հայացքների արմատական տարբերությունը և ընդգծում է հետևյալը. «Բայց ինչ պետք է հասկանանք «ազգ» խոսքի տակ: Եթե այդ հասկացողության տակ պետք է ընդունել քաղաքային խոչոր և միջին բուրժուազիան, եթե «ազգ» ասելով պետք է հասկանանք լիբերալ կալվածատերերին, գյուղական բուրժուազիան և նրանց հարող խավերը, նրանց իդեոլոգները և ծառաները, այն ժամանակ, այո, կաղետները ներկայացնում են «ազգը»:

«Բայց,- շարունակում է Սպանդարյանը,- մենք այլ կերպ ենք հասկանում ազգը և ազգային շահը: Ծնված, հարստահարված և տնտեսական քայքայման վերջին աստիճանին հասած, սովամահ դրություն և անծայր տգիտության ճիւղերում գտնվող, արթնացած, ազատության և հողի ձգտող բազմամիլիոն գյուղացիությունը, պրոլետարիատը, որ իր արյուն-քրտինքով ստեղծում է բոլոր հարստությունները և իր հզոր հարվածներով ու իր կրվով ցնցում է ամբողջ երկիրը, քաղաքային աղքատությունը-ահա ով է ներկայացնում ազգը, ահա ովքեր են կազմում այն ազատագրական հզոր փոթորկի դիրքի գործոնները, որի մակերևույթի վրա հաստատվելու փորձեր են անում կաղետները»:

Սպանդարյանի հեղափոխական գործունեությունն աննկատ չէր մնում: 1906 թ. նա ձերբակալվում է, բայց նրա մոտ կասկածելի ոչինչ չի հայտնաբերվում և ազատվում է կալանքից:

1907 թ. մայիսի 5-ին Բաբվում ՌՄԴԲԿ կոմիտեի խորհրդակցության ժամանակ, որին մասնակցում էր նաև Սպանդարյանը, ներս են խուժում ուսուկանները և ձերբակալում բոլորին: Ձերբակալության ժամանակ Սպանդարյանը թաքցնում է իր իսկական անունն ու ազգանունը և ներկայանում է որպես Լուարսաթ Յաչվիլի: 10 օր անց Սպանդարյանն ազատվում է կալանքից: Բայց կարճ ժամանակ անց գործակալների հաղորդմամբ պարզվում է Յաչվիլու ով լինելը և Բաբվի ժամադրական վարչության պետը միջոցներ է ձեռնարկում հայտնաբերել ու ձերբակալել Սպանդարյանին:

Անցնելով խոր ընդհատակ, Սպանդարյանը շարունակում էր Հեղափոխական աշխատանքը Բաքվի Սև քաղաքում: 1907 թ. Հունիսի սկզբին նա Շահումյանի, Ստալինի, Զափարիձեի Հետ միասին մասնակցում է «Бакинский пролетарий» թերթի ստեղծմանն ու խմբագրմանը:

1907 թ. Հոկտեմբերի վերջին Սև-քաղաքում, մատիսովի գործարանում տեղի ունեցած Բաքվի բոլշևիկյան կազմակերպության համաքաղաքային կոնֆերանսում Սպանդարյանը Շահումյանի, Ստալինի, Զափարիձեի, Ֆիոլետովի Հետ միասին ընտրվում է Բաքվի նոր կոմիտեի անդամ և եռանդով մասնակցում է բանվորների ու նավթարդյունաբերողների միջև ծավալված խորհրդակցական կամպանիային:

1908 թ. Սպանդարյանը Շահումյանի Հետ միասին խմբագրում է «Бакинский рабочий» թերթը: Այստեղ Սպանդարյանը իր հրապարակած Հոդվածներով մերկացնում կադետներին, մենշևիկներին և վճռականորեն պաշտպանում պրոլետարիատի շահերը:

1909 թ. օգոստոսի 28-ին գործակալների մասնությունը ոստիկանությանը հաջողվում է գտնել Սպանդարյանի Հետքը և ձերբակալել նրան: Բաքվի նահանգային ժանդարմական վարչության պետի կարգադրությամբ Սպանդարյանը դեկտեմբերի 22-ին արտաքսվում է Դերբենդ քաղաք: Այստեղից 1910 թ. Հունվարին Սպանդարյանը փոխադրվում է Թիֆլիս և այնտեղ հաստատում է անլեգալ բնակություն: Նա եռանդով մասնակցում է Թիֆլիսի անլեգալ կոմիտեի գործունեությանը: «Ս. Օլգին», «Տիմոֆեյ» ստորագրությանը հրապարակում է մի շարք Հոդվածներ ժամանակի հրատապ հարցերի, հատկապես նացիոնալիզմի վերաբերյալ:

Սպանդարյանն իր հրապարակախոսական Հոդվածների մեջ մեծ տեղ է տվել գրականության, արվեստի, թատրոնի և կրթության հարցերին:

1910 թ. մայիսի 1-ին «Новая речь» թերթում հրապարակված «Ուր վազրեր հայկական կյանքից» Հոդվածաշարում Սպանդարյանն անդրադառնում է Հայ նշանավոր գրողների հոբելյաններ կազմակերպելուն և նշում է, որ այդ հոբելյանները պարփակվում են մտավորականության որոշ խավերի նեղ շրջանակներում, չեն կրում համաժողովրդական բնույթ, չեն վերածվում իր կական համաժողովրդական, մշակութային տոնի, որովհետև «մի կողմից քիչ է ժողովրդի մեջ ընթերցող մասսան, իսկ մյուս կողմից՝ Հայ մտավորականությունը քիչ է հոգ տանում գրականությունը ժողովրդին մոտեցնելու մասին»:

Այդ հոբելյանները, ընդգծում էր Սպանդարյանը, մեծ մասամբ կազմակերպվում են ոչ թե այս կամ այն գրողի կամ ընդհանրապես գրականության

անցած ուղին ամփոփելու և նոր խնդիրներ առաջադրելու նպատակով, այլ որպեսզի չարժեն «հայկական պրոլետարատիայի գույժը և նրան որոշ նյութական օգնության հրավիրելու»:

Այդ կերպ Հոբելյանների նշումը Սպանդարյանը համարում էր վիրավորական Հայ գրողի արժանապատվության համար և գրում էր. «Հայ, իսկապես դեմոկրատական մտավորականությունը պետք է գրականությունը մոտեցնի ժողովրդին, այն դարձնի ժողովրդական՝ բառիս իսկական իմաստով, և այն ժամանակ իրենց գրողներին կմեծարեն բնակչության լայն խավերը և առիթ չի լինի աղաչելու Հայ բուրժուաներին, որ «Հանուն Հայրենիքի սիրո և սզգային հպարտության» բանան իրենց տոգած քսակը»: (Սուրեն Սպանդարյան, երկեր, հ. առաջին, Եր. 1959, էջ 241-242):

Նույն Հոդվածաշարում Սպանդարյանը նկատի ունենալով, որ Կոստանդնուպոլիսի Հայոց պատրիարքին կից խորհուրդը «օսմանցիների մայրաքաղաքում ընդունել է մի բանաձև, որով թույլատրվում են ամեն տեսակ ժողովները եկեղեցիներում, միայն մի պայմանով՝ այդ ժողովներում երույթներ չունենալ Հայոց եկեղեցու դեմ», նշում է Հետևյալը. «Այդորինակ որոշումն իր անորոշությանը և առաձգականությանը լայն ասպարեզ է բաց անում ամեն տեսակ ժողովների համար և եկեղեցին մի այնպիսի սովորական չինքի է վերածվում, որտեղ կարող են տեղի ունենալ և՛ միտինգներ, և՛ համերգներ, և՛ դասախոսություններ, և՛ թատերական ներկայացումներ»:

Այնուհետև, նշելով, որ որոշ տեղերում եկեղեցին վերածել են թատերաբեմի, որ «կուսակցական կրքերի հողի վրա առաջացող կոփ ու Հայհոյանքով ժողովները սովորական երևույթ են դարձել», Սպանդարյանը գրում է. «Սեղ մոտ, Արևելքում, եկեղեցին սրբազան մի վայր է հանդիսանում, և ամեն ոք, ով եկեղեցի է մտնում, պետք է միառժամանակ հրաժարվի այն ամենից, ինչ որ աշխարհիկ է: Հետևաբար՝ ներխուժելով եկեղեցի և «հեղափոխական» մեթոդներով վերածելով այն մի սովորական ժողովարահի,՝ «ազատության այդ կողմնակիցները» վիրավորում են բնակչության ահագին մեծամասնության զգացմունքները»:

Շարունակելով եկեղեցու վերաբերյալ սոցիալ-դեմոկրատիայի տեսակետի շարադրանքը, Սպանդարյանը նշում է, որ այդպիսի միջոցներով մասսաների մեջ ոչ թե «սեր է արմատավորվում դեպի ազատությունը, այլ՝ ընդհակառակը, զգվանք դեպի այն»:

«Կարելի է անհավատ լինել-ընդգծում է Սպանդարյանը,- կարելի է չընդունել եկեղեցին, սակայն հարկավոր չէ, փաստակար և անտակտ բան է բունակ հավատացողների կամքի և զգացմունքների վրա»:

Իր հողվածի վերջում Սպանդարյանը գրում է. «Եկեղեցին պետք է մնա մի կողմ. կարիք չկա քաղաքական ելույթների ասպարեզի վերածելու այն: Հարձակվեցեք նրա վրա, եթե այդ ձեզ հաճելի է, բայց նրա պատերից դուրս, նրա տաճարը-հավատացյալների համար սրբազան համարվող վայրը չչարձնելով հետտորական ամբիոն, և մի՛ գայրացեք, երբ հավատացյալները դիմադրություն են ցույց տալիս ձեզ, պայքարում են իրենց իրավունքների դեմ, մի՛ ճչացեք «կղերականություն», «խավարապաշտություն» և այլ սարսափելի բաների մասին, որովհետև ձեր արարքները շատ քիչ առնչություն ունեն իսկական ազատության և պրոգրեսի հետ և ավելի շուտ սահմանակց են «խուլիգանության»»: (Սուրեն Սպանդարյան, հ, առաջին, էջ 235-237):

1910 թ. ամռանը, մենչևիկները, օգտվելով բոլշևիկների ձերբակալություններից, ՌՄԴԿԿ Թիֆլիսի կոմիտեն վերցրեցին իրենց ձեռքը և սկսեցին կազմավորվել անլեգալ կազմակերպությունները:

Սպանդարյանը մի խումբ համախոհների հետ ձեռնամուխ է լինում նոր անլեգալ կոմիտեի ստեղծմանը: Նա միաժամանակ եռանդուն աշխատանք է տանում ՌՄԴԿԿ կոնֆերանս հրավիրելու օգտին, որի պատգամավոր ընտրվում է նաև ինքը: Այդ նպատակով նա մեկնում է Մոսկվա, Պետերբուրգ, Ռիգա և այլ քաղաքներ:

Պետերբուրգում ուստիկանությունը հայտնի է դառնում Սպանդարյանի գործունեությունը և նրա նկատմամբ սահմանվում է գաղտնի հսկողություն: Սակայն Սպանդարյանը խուսափում է ձերբակալումից և 1912 թ. հունվարի սկզբին մեկնում է Փարիզ, որտեղ նա հանդիպում է հորը: Սպանդար Սպանդարյանը Փարիզ էր եկել դաշնակցության լիդերների հորինած ծանր մեղադրանքը հերքելու նպատակով:

Դեռևս 1910 թ. օգոստոսին «Դրոշակ»-ը հրատարակել էր մի գրպարտություն, Սպանդար Սպանդարյանին մեղադրելով, որ իբր թե նա 1904 թվականից սկսած եղել է Ռուսիկանության դեպարտամենտի գաղտնի գործակալ: Դաշնակները սպառնում էին հաշվեհարդար տեսնել նրա հետ:

Դաշնակցության հաշվարկը պարզ էր դաշնակների նկատմամբ ատելությունը ցցված հորը պախարակելու միջոցով վարկաբեկել նրա որդուն՝ դաջ նակցության անհաշտ հակառակորդին:

«Դրոշակ»-ի հրատարակումը մեծ արձագանք է գտնում: Առաջադիմ հանրությունը պահանջում էր, որպեսզի դաշնակցությունը հիմնավորի մեղադրանքը, իսկ Սպանդար Սպանդարյանին հնարավորություն տալ պառտախանելու «իր վրա բարդած սպանիչ մեղադրանքին»:

«Սուրհանդակ» թերթում հրատարակված նամակի հեղինակները նշում էին նաև, որ եթե պարզվի Սպանդար Սպանդարյանի անմեղությունը, ապա ուրեմն «դաշնակցության կենտրոնական օրգանը մի անպուխ գրպարտիչների բանդա է»: (Ավետիսյան Վ, նույն տեղը, էջ 228):

Սուրեն Սպանդարյանը խորապես համոզված էր, որ դաշնակցությունը պարզապես գրպարտում է հորը, միջոցներ է ձեռնարկում պարզելու ամբողջ ճշմարտությունը: Այդ նպատակով նա նամակով դիմում է հոր նկատմամբ պրովոկացիային մասնակցություն ունեցած հաշտական կուսակցության լիդերներից Բուրցևին (հետագայում պարզվում է, որ եղել է պրովոկատոր):

Իր նամակում Սպանդարյանը բերում է բազմաթիվ փաստեր և դրանց միջոցով հերքում է դաշնակցության հնարած գրպարտությունը:

1911 թ. հուլիսի 20-ին Փարիզում սոցիալ-դեմոկրատական և էսէտական կուսակցությունների ներկայացուցիչներից կազմված «Հեղափոխական դատարանը» դաշնակցության դեմ կազմակերպում է միջկուսակցական դատ: Բոլոր փաստերը ատուգելուց հետո այդ դատարանն ընդունած որոշմամբ անմեղ է ճանաչում Սպանդար Սպանդարյանին և վերջնականապես հերքում է դաշնակցության կողմից նրան ներկայացված ծանր մեղադրանքը:

Դատից հետո ծերունի Սպանդար Սպանդարյանը հիվանդություն և նյութական սուղ միջոցների պատճառով չի կարողանում վերադառնալ Թիֆլիս և մնում է Փարիզում, որտեղ էլ մահանում է 1922 թվականին:

Սուրեն Սպանդարյանը մասնակցում է 1912 թ. հունվարին Պրագայում տեղի ունեցած ՌՄԴԿԿ կոնֆերանսին և ընտրվում է Կենտկոմի անդամ: Կոնֆերանսը Ռուսաստանում կուսակցական կազմակերպությունների աշխատանքն ու հեղափոխական շարժումը դեկավարելու համար ձևավորում է Կենտկոմի Ռուսական բյուրո, որի կազմի մեջ ընտրվում է Սպանդարյանը Ստալինի, Օրջոնիկիձեի, Մ. Կապիխինի, Յա. Սվերդլովի հետ միասին:

Կոնֆերանսից հետո Կենտկոմի հանձնարարությունը Սպանդարյանը, Ն. Պոլետսկը և Օ. Պյատնիցկին մեկնում են Բեռլին և բանակցություններ վարում Կ. Կառցկու հետ՝ բոլշևիկներին պատկանող գույքն ու միջոցները ետ առանալու մասին:

Բեռլինում Սպանդարյանը Լենինի հետ միասին կարգավորում են Ռուսաստան հեղափոխական գրականություն առաքելու գործը, դրանում ընդգրկելով Ոսկի Տեր-Հովհաննիսյանին, որը, թեև սոցիալ-դեմոկրատ չէր, բայց համակրում էր այդ շարժմանը:

Վերադառնալով Ռուսաստան, Սպանդարյանն այցելում է մի շարք քա-

դաքներ և տեղական կազմակերպություններին տեղեկացնում է Պրազայի կոնֆերանսի որոշումների մասին:

Այդ շրջագայությունից հետո Սպանդարյանը գալիս է Թիֆլիս և Վլոդզդայի աքսորից փախած Ստայինի, Ե. Ստասովայի, Օրջոնիկիձեի հետ միասին եռանդով մասնակցում է անդրկովկասյան կազմակերպությունները ուժեղացնելու գործին: Իր գրած մի շարք հոդվածները, ինչպես նաև կազմակերպությունների հետ գրազրույթունը Սպանդարյանը ստորագրում էր «Ներուսով» ծածկանունով: Երկար ժամանակ ուստիկանությունը չէր հաջողվում պարզել «Ներուսովի» ով լինելը:

1912 թ. փետրվարի 19-ին «Звезда» թերթում հրատարակված «Նամակ Կովկասից» հոդվածում Սպանդարյանը սուր քննադատության է ենթարկում Թիֆլիսի մենչևիկ-լիկվիդատորներին, որոնք կադետներին միացած Թիֆլիսի քաղաքապետի էին առաջադրել ու պաշտպանել Ալեքսանդր Խատիսովին:

«Գուցե,- գրում էր Սպանդարյանը,- կադետական հոստորի ելույթները ցույց կտան նրանց և կապացուցեն բանվորական դեմոկրատիայի հանդեպ նրանց գործած հանցանքները, երբ նրանք իրենց հեղինակություններով և նույնիսկ իրենց քվեներով Թիֆլիսի քաղաքապետի պաշտոնը տվին պ. Ա. Ի. Խատիսովին, ժողովրդի իսկական ազատության դավաճանների «հաղթական երթերի» գլխավոր կազմակերպողին»:

«Գուցե,- չարունակում է Սպանդարյանը,- նրանք հիմա կհասկանան, որ բանվորական կազմակերպության գործը չէր իր հավանության կնիքը դեպ քաղաքական ստահակ Ա. Ի. Խատիսովի ընտրության վրա,- որը հասկանալիորեն պիտի ընտրվեր (ընդգծումն իմն է՝ Վ. Պ.) թե՛ իշխանավորների և թե՛ բանվորների հետ, ճառեր է ասում թե՛ բանվորական միտինգներում և թե՛ ուստիկանական վարչության շենքն օձեյիս, գովաբանում է թե՛ բանվոր դասակարգի հեղափոխականությունը և թե՛ «ուսասական բանակի տոկոսությունը, որ կարողացավ փչրել ուսաստանյան հեղափոխության ալիքները»:

Այնուհետև նկատի ունենալով իրենց հոդվածներում Խատիսովին գովեր գող մենչևիկներին, Սպանդարյանը գրում էր. «Գուցե հիմա կկարդին այն հոդվածների հեղինակները, որոնք պաշտպանում էին Ա. Ի. Խատիսովին որպես «դեմոկրատ քաղաքապետի»: Այդ հոդվածների հեղինակներն իրենց ամբողջ վարքագծով, «փոքրագույն չարիքի» իրենց ամբողջ խղճուկ տակափ կայով դեպի Տավրիկյան պալատը ճանապարհ հարթեցին քաղաքապետի պաշտպանության (ընդգծումն իմն է՝ Վ. Պ.), այդ չեխտյան թաղապետ Գիդարինի

Համար: Թող մեր բանվորը մի քիչ մտածի այս փաստերի մասին և Հանի Համապատասխան եզրակացություններ»: (Ս. Ալեքսանդրյան, Նույն տեղը, հ. երկրորդ, էջ 262-264):

Ես պատահաբար չեմ ընդգծում Սպանդարյանի «հավասարակետ սիրաբանում է», «քաղաքական այդ քամերի» բառերը: Իդանք ճշտորեն բնութագրում են Ա. Խատիսյանին, որի ձեռքով ստորագրվել են Հայոց ցեղասպանությունն իրագործած երիտթուրքական հանցագործ կառավարության հետ 1918 թ. Բաթումի ստորագրուցիչ պայմանագիրը և քեմալական թուրքիայի հետ 1920 թ. Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագիրը, որը Լեոնի դիպուկ գնահատմամբ «հավերժորեն մնում է դաշնակցության ամոթն ու խայտառակությունը»:

Շուտով գործակալների մատնությունը ուստիկանության ձեռքն է ընկնում նաև Սպանդարյանի գրած և նրա հասցեով ստացված մի քանի նամակ: Հետո է միայն պարզվում, որ այդ մատնության հեղինակը պրովոկատոր Մալինովսկին է եղել, որը Պրազայի կոնֆերանսի օրերին Սպանդարյանի հետ միևնույն հյուրանոցում է ապրել:

1912 թ. մարտի 5-ին Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչությունը հրահանգում է ուժեղացնել Սպանդարյանի նկատմամբ կիրառվող արտաքին հսկողությունը: Այդ միջոցով Հայտնի է դառնում, որ Սպանդարյանը մեկնում է Բաքու: Մարտի 18-ին, երբ Բաքվի Բալայտանիում բանվորական բջի ժողովում Սպանդարյանը զեկուցում էր Պրազայի կոնֆերանսի մասին, ներս են խուժում ուստիկանները և ձերբակալում են Սպանդարյանին ու ներկա գտնվողներից շատերին: Հաջորդ օրը ուստիկանությունը խուզարկում է Թիֆլիսում գտնվող նրա բնակարանը:

Ձերբակալված Սպանդարյանը պահվում էր ամենավատ բանտախցում: Բանտում գտնվող Շահումյանը նամակով ընկերներից պահանջում է լինել գրոյշ ու աշարուջ:

Ինչպես պատմում է Ն. Կրուպակյան, Լենինը անչափ մտահոգվում է ստանալով Սպանդարյանի ձերբակալման լուրը: Նա այցելում է Փարիզում գտնվող Սպանդար Սպանդարյանին՝ Սուրենի ձերբակալության մասին մանրամասր տեղեկություն ստանալու և նրան անհրաժեշտ օգնություն կազմակերպելու համար:

Ն. Կրուպակյան գրել է. «Սուրենի Հայրը, Հիվանդ ծերունի, ապրում էր մեծակ ու աչքափող, չարունակ մտանում էր, փող չուներ, նույնիսկ բնակարանի վարձը չէր կարողանում տալ, Հիշողությունը դավաճանում էր նրան. գրում էր նամակ և մտանում հասցեն: Իլլիչը չափազանց խղճաց ծերունուն»:

«Իսկ Բաքվից»- շարունակում էր Կրուպկայան,- ստացվող լուրերն ուրախալի չէին: Սուրենը նստած էր բանտում, աստիճանը ծանր պայմաններում, նրա մասին հոգացող չկար: Երբ վերադարձանք տուն, Իլյինն անմիջապես նստեց, նաևակ գրեց Ոսկուն, խնդրելով, որ հոգ տանի երկու Սպանդարյանների մասին»: (Н. К Крупская, Воспоминания о Ленине, М. 1967, стр. 178):

Իսկ Լենինը Ոսկի Տեր-Հովհաննիսյանին ուղարկած նամակում գրել է հետևյալը. «Ձգիտեմ, հայտնի՞ է արդյոք Ձեզ մի տխուր լուր մեր ընդհանուր բարեկամի՝ Սուրեն Սպանդարյանի մասին, որն ինձ Ձեզ հետ ծանոթացրեց Բեռլինում: Նա Բաքվում ձերբակալված է: Նրա կինը գրում է հորը, որ նրա մասին հոգ տանող չկա, որ նա անկողին, որևէ բան չունի: Մարդ չկա, որ նրան կաթ տանի և այլն: Հայրն ինձ ասաց, որ ինքը Բաքվում շատ ծանոթներ ունի և որ մեկին գրել է: Ինչո՞ւ միայն մեկին, չգիտեմ»:

Սպանդարյանի հայրն ասլորում է այստեղ...: Նա շատ հիվանդ և ծեր տեսք ունի: Որդին նրան խոստացել է ամեն ինչ անել Բաքվից նրան փող ուղարկելու համար, ձերբակալման պատճառով չի կարողացել: Հայրը փող չունի, բնակարանից քչում են: Նրա դրությունը շատ տխրալի է, նույնիսկ հուսահատական:

Մենք նրան մի փոքր փոխառություններ օգնեցինք: Բայց ես, այնուամենայնիվ, վճռեցի գրել Ձեզ: Հավանական է, որ Դուք Սպանդարյանի ծանոթներ և բարեկամներ գիտեք թե Բաքվում և թե Փարիզում: Սպանդարյանի հայրը մի անգամ չէ, որ նամակներ է ուղարկել՝ մոռանալով հասցեն դնել: Դրա համար էլ շատ եմ վախենում, որ նրա նամակները Բաքու չհասնեն: Բաքվում որևէ մեկին արդյոք չե՞ք ճանաչում, որին կարելի լիներ գրել Սուրենի մասին և խնդրել հոգ տանելու նրա մասին:

Ապա, եթե Դուք ընդհանուր ծանոթներ ունեք, շատ կարևոր կլիներ հոգ տանել նաև հոր մասին: Ասում էին, թե նա հարուստ որդի ունի Եկատերինոզարում: Լավ կլիներ, եթե Դուք նրան որքան կարելի է եռանդուն գրեիք, որ նա մի քիչ շատ փող ուղարկի հորը, որպեսզի հայրը կարողանա պարտքը վճարել և մեկնել:

Հույս ունեմ, որ Դուք կանեք ինչ կարող եք՝ երկու Սպանդարյանների համար և այդ մասին մի երկու խոսք կգրեք ինձ»: (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 48, էջ 78):

Սպանդարյանին մեկ ամիս քսան օր պահեցին բանտում և 1912 թ. մայիսի 8-ին ազատեցին կալանքից, պարտավորեցնելով իր հասցեի փոփոխման դեպքում տեղյակ պահել ոստիկանությունը:

Սպանդարյանին այդպես հեշտությամբ կալանքից ազատելը ունեցել է որոշակի նպատակ: Այդ մասին է վկայում 1912 թ. մայիսի 3-ին Բաքվի պահանջողական բաժանմունքի պետին Թիֆլիսի նահանգային ժանդարմական վարչության պետի հետևյալ գրությունը. «Ենիտով լենինյան ուղղության բոլշևիկների կազմակերպության գծով տարվող հետախուզության շահերից, բոլշևիկներ, որոնք, ըստ երևույթի, Թիֆլիսում ունեն իրենց տպարանը, ես անհրաժեշտ եմ գտնում անմիջապես կալանքից ազատել Սուրեն Սպանդարյանին, ստորագրությամբ պարտավորեցնել անհապաղ Թիֆլիս մեկնելու և ուղեկցել նրան ամենազգուշ հսկողությամբ, իսկ մեկնելու մասին հետագրել ինձ»: (Վրաստանի կոմերսի կենտրոնին կից ՍԼԻ պրիվիլ, ֆ. 31, ց. 2, գ. 173, թ. 135):

Մայիսի 9-ին Սպանդարյանը գնացքով մեկնում է Թիֆլիս: Նա նկատում է, որ իրեն հետևում են, կռահում է իրեն կալանքից ազատելու ոստիկանության մտադրությունը և Թիֆլիս հասնելուն պես, անհայտանում է ոստիկանության տեսարաշարից: Երբ հնարավոր չեղավ Սպանդարյանի հետքերով բոլշևիկյան ընդհատակյա տպարանը հայտնաբերել, մայիսի 17-ին Ոստիկանության դեպարտամենտը պահանջում է անմիջապես ձերբակալել Սպանդարյանին:

Ընկերների հետ խորհրդակցելով, Սպանդարյանը որոշում է մեկնել Եկատերինոզար՝ ավագ եղբայր Բելիզարի մոտ: Մայիսի 22-ին նա Թիֆլիսի կայսրանից պեսք է մեկնել Բաքու և այնտեղից՝ Եկատերինոզար: Թիֆլիսի կայսրանում Սպանդարյանը նկատում է ոստիկանության գործակալին և անմիջապես Բաքվի փոխարեն նստում է Բաթում մեկնող գնացքը: Գործակալը հետևում է նրան: Երբ շարժվում է Բաթում մեկնող գնացքը, Սպանդարյանը, գործակալից աննկատ տեղափոխվում է արդեն շարժվող Բաքու մեկնող գնացք:

Թիֆլիս-Բաքու երկաթուղային բոլոր կայարանների ոստիկանության բաժանմունքներին Թիֆլիսի ժանդարմական վարչության պետի հեռագրով հանձնարարվում է որոնել և ձերբակալել Սպանդարյանին: Սպանդարյանն ասպահով անցնում է բոլոր կայարաններով և հասնում է Բաքու: Բայց այստեղ, կայարանում, մայիսի 22-ին, նրան գործակալները նկատում են և անմիջապես ձերբակալում են:

Չնայած խուզարկության ժամանակ Սպանդարյանի մոտից ոչ մի հանցավոր նշան չի հայտնաբերվում, նրան կալանավորում են և հաջորդ օրը ուղարկում Թիֆլիս: Այստեղ Սպանդարյանին նստում են Սեռեիսի բանտ: Դա Սպանդարյանի հինգերորդ բանտարկությունն էր:

Այդ օրերին կատարված խուզարկությունների միջոցով ձերբակալվում են շատերը: Ոստիկանության ձեռքն է ընկնում Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպության ամբողջ արխիվը, որոնց մեջ հայտնաբերվում է նաև Սպանդարյանի ձեռքով գրված մի քանի նամակներ «Ներուսով» ստորագրությամբ: Քննիչները «Ներուսով» անունից «ով» վանկը ջնջում են և հակառակ ուղղությամբ այդ անունը կարդում են «Սուրեն»: Պարզվում է, որ «Ներուսով» անվան տակ թաքնվել է Սպանդարյանը: Դա բավական էր Սպանդարյանին լուրջ մեղադրանք ներկայացնելու համար:

1913 թ. մայիսի 2-4-ին տեղի է ունենում Սպանդարյանի, Ստասովայի և մյուս ընկերների դռնփակ դատավարությունը: Սպանդարյանը իր ընկերների հետ դատապարտվում է ցմահ աքաղի Սիբիրում: Չորս ամիս ձգձգվում է դատավճռի հաստատումը: Այդ ամբողջ ժամանակ Սպանդարյանին պահում էին Մուսեխի բանտի ամենավատ խցում: Վերջապես, 1913 թ. սեպտեմբերի 21-ին Սպանդարյանը շղթայակապ աքաղվում է Սիբիր: Շուրջ երկու ամիս շղթայակապ Սպանդարյանը գտնվում էր կալանավորական վազոնում: Նոյեմբերի 8-ին Սպանդարյանը հասնում է իր աքաղի վերջնական վայրը՝ Ենիսեյսկի նահանգի Կանսկի գավառի Պերովսկ ոլոստի Իսոկենտևակայա գյուղ, որտեղ արդեն գտնվում էին Ստալինն ու Սվերդլովը:

Աքաղավայրում Սպանդարյանը կնոջ և ընկերների միջոցով ստանում էր Կովկասում լույս տեսնող հայերեն թերթեր, գրականություն, բառարաններ, քերականության դասագրքեր և այլն: Նա շատ էր կարդում, սովորում էր գերմաներեն:

Աքաղավայրից երեխաներին գրած Սպանդարյանի նամակներն անհնար է կարդալ առանց հուզմունքի ու ցավի: Նա իր երեխաներին խորհուրդ էր տալիս լինել ազնիվ, դառնալ հասարակության համար պիտանի մարդիկ:

1914 թ. նոյեմբերի 27-ին զավակներին ուղարկած նամակում նա գրել է. «Հետաքրքիր է կարդալ ինստիտուտների, Դոլոխանովների և այլ գրգռանալին գործոց վարպետների մեծախոսությունները: Եթե դուք, զավակներս, երբեմն լսեք այն, ինչ որ նրանք գրում են կամ ասում, դուք նրանց բողբոլվին մի հավատաք: Նրանք խաբեբաներ են, որոնք վաճառում են իրենց խիղճն ու սքա տիվը. եթե միայն խիղճ ու պատիվ ունեն»: (Ս. Սպանդարյան, նույն տեղը, էջ 317):

Սպանդարյանը նաև նամակներ էր գրում ազատության մեջ մնացած ընկերներին, որոնք մտադիր էին կազմակերպել Սպանդարյանի, Ստալինի և Սվերդլովի փախուստը: Դարձյալ Մայիսովսկու մատնությունը դա հայտնի է

դառնում Ոստիկանության ղեկարտամենտին: Ստալինին և Սվերդլովին ղեկարտամենտի պահանջով տեղափոխում են ավելի հյուսիս ընկած Կուրեյկա կայարան: Իսկ Սպանդարյանին 1914 թ. մայիսի 26-ին տեղափոխում են տունդրայում գտնվող Տուրուխանյան երկրամասի Մոնաստիրակոյե գյուղ, որտեղ ստանամանիքը հասնում էր 45 աստիճանի: Սպանդարյանի նոր աքաղավայրը Ստալինի աքաղավայրից հեռու էր 180 կիլոմետր: 1915 թ. ձմռանը Ստալինին հանդիպելու նպատակով Սպանդարյանը մեկնում է Կուրեյկա, հետո նրա հետ վերադառնում է Մոնաստիրակոյե գյուղ, որտեղ տեղափոխվել էր Սվերդլովը:

Սիբիրյան աքաղավայրում գտնվող Սպանդարյանը ուշադրությունը հետևում էր սկսված համաշխարհային պատերազմի ծանր պայմաններում հայտնված իր հարազատ ժողովրդի ճակատագրին, խորապես հուզվում էր ամեն մի դժբախտ լուր ստանալիս: Իսկ երբ Սպանդարյանին է հասնում արևմտահայերի կոտորածի լուրը, Սպանդարյանը ծանր ապրումներ է ունենում: Իր նամակներից մեկում գրում է հետևյալը. «Սիրտս կակծում է, երբ կարդում եմ այն հազարավոր փախուսականների մասին, այն խեղճ ու տառապյալ, անյուր տանջվող ու արյունոտ ժողովրդի բռնաբարված կանանց ու մորթված երեխաների մասին: Ահա հայ ազգային քաղաքականությունը, ահա ողորմություն հայցող դաշնակցականների հեղափոխությունը, Տաճկահայաստանի ազատությունը: Արդ. «ազատություն», բայց առանց հայերի, այո, «ազատություն», որ դառնում է Պուրիշևիչների և Միլյուկովների զավթումը: Ինեղճ ժողովուրդ»:

Իսկ 1915 թ. դեկտեմբերի 12-ին «Նոր-դար» թերթի նախկին աշխատակից, Թիֆլիսում գտնվող Բագրատ Շահպարտյանին ուղարկած նամակում Սպանդարյանը գրել է. «Այդ ինչե՞ր են կատարվում այդտեղ: Վա՛յ էն ազգին, որի ճակատագիրը վճռում են ծակ փիլիսոփա Վարանդյանը և «ազգալին», բայց առանց տաղանդի փաստաբան, տիպիկական ֆիլիստեր Սամսոն Հարությունյանը: Մի՞թե ժամանակ չէ, մի՞թե մարդիկ չկան, որ այդ ոճրագործների վզին տան և այն չնչինը, որ դեռ մնացել է, ազատեն, պահպանեն: Սիրտս այրվում է, էլ չգիտես քանի անգամ սկսել եմ գրել: Բայց ինչ արած, ասպարեզը, մամուլը և ուժը, պոլիցիական ուժը նրանց կողմն է: Ես հենց սկզբից գիտեի, որ պիտի կատարվե ողբերգություն, գրել էի Բագրու, առաջարկելով մի որևէ բան գործել այդ ժողովրդասպանների դեմ...»: (Ս. Սպանդարյան, նույն տեղը, էջ 338):

Աքաղավայրում Սպանդարյանի առողջությունը զնայով վատանում էր:

Միջբրյան սառնամանիքը, վատ եղանակը, անբավարար անունըը տեսան իրենց սև գործը: Խորացող սրտի արատը, անվերջանալի գլխացավերը նրան վերջնականապես գամեցին անկողնուն: Աքտրական ընկերները փորձեցին իրավունք ձուք բերել Սպանդարյանին Ենիսեյակ քաղաքի Հիվանդանոց տեղափոխելու համար: Վերջապես 1916 թ. Հունիսի 4-ին Ենիսեյակի բանտային տեսչությունը մի քանի անգամ մերժելուց հետո, համաձայնվում է Սպանդարյանին քաղաք տեղափոխել: Հուլիսի 1-ին ոստիկանության հսկողությունը Սպանդարյանը տեղափոխվում է Ենիսեյակ: Այստեղ Սպանդարյանի հիվանդությունն ալիելի է խորանում և բժիշկները ոչինչ չկարողանալով անել, առաջարկում են նրան տեղափոխել Կրասնոյարսկ քաղաք:

1916 թ. օգոստոսի 25-ին Սպանդարյանը տեղափոխվում է Կրասնոյարսկի Հիվանդանոց: Բայց արդեն շատ ուշ էր: 1916 թ. սեպտեմբերի 11-ին Սուրեն Սպանդարյանը, գիտակցությունը չկորցրած, մահանում է, չտեսնելով իր երազած Հայաստանը:

Ավարտելով Սուրեն Սպանդարյանի կյանքի համառոտ պատմությունը, կամենում եմ ավելացնել հետևյալը: Սովետական տարիներին, երբ կառուցարար պատվում էր Երևանի «Երրորդ մաս» կոչվող թաղամասը, որոշվել էր այդ թաղամասի կենտրոնում կառուցել հրապարակ և այն կոչել Սուրեն Սպանդարյանի անունով: Հրապարակի ձևավորման, նրա շուրջ բնակելի և հասարակական նշանակության շենքերի կառուցման հետ միասին, հրապարակի կենտրոնում դրվեց նաև Սպանդարյանի արձանը և հրապարակն էլ կոչվեց նրա անունով:

Երբ Հայաստանում դադարեց սովետական լոյսանությունից գոյությունը, իշխանությունն եկած Խոստիսյանների ու Վարանդյանների գաղափարափոսությունն ու աստիճանները ժառանգած ՀՀչականները, վրեժխնդրությունը լցված, ընդունեցին որոշում՝ վերացնել Սպանդարյանի անունը հրապարակի վրայից, մոռացություն մատնել նրան, իսկ հրապարակը վերանվանել Գ. Նժդեհի անունով:

Մինչև այժմ էլ հաճախ մամուլում երևում են հրապարակումներ, որոնց հեղինակները չիմանալով (գուցե և գիտեն) իրողությունը, անհարիր են համարում Նժդեհի անունով հրապարակում «ինչ-որ Սպանդարյանի» արձանի գոյությունը և պահանջում են վերացնել ու դրա փոխարեն կանգնեցնել Նժդեհի արձանը և այդ կերպ «վերականգնել» արդարությունը:

Մինչդեռ արդարությունը պահանջում է վերացնել կատարված անարդարությունը և վերականգնել Սպանդարյանի անունը նրա հիշատակի պատվին կառուցված հրապարակի վրա:

«ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԱՑԻՈՆԱԼԻՉՍՆ»

Շահումյանը բանտում գրել է նաև երկու գրախոսական: Առաջինը վերաբերում է Մ. Պավլովիչի «Ժորեսի մահը» գրքին, որը հրապարակվում է «Պայքար» թերթում 1916 թ. սեպտեմբերի 16-ին: Շահումյանը հայտնում է, որ այդ գիրքը իրեն «դեռ չի հասել», բայց հարկ է համարում այդ գրքի մասին ընթերցողներին ծանոթացնել դրա վերաբերյալ հրապարակված գրախոսականի միջոցով: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 55-59):

Երկրորդ գրախոսականը վերաբերում է Սուխանովի «Ինչու ենք մենք պատերազմում» գրքին, որը հրապարակվել է «Պայքար» թերթում 1916 թ. հոկտեմբերի 1-ին: «Ներկա պատերազմը,- գրում է Շահումյանը,- այս կամ այն թաղակիր անձի փառախրական տենչերի կամ առանձին պետություն անանց ազահուլթյան ու տիրական ձգտումների արդյունքը չէ, այլ կապիտալիստական բոլոր պետությունների մրցությունից բնական ու անխուսափելի հետևանք»:

Շահումյանը բերում է Անգլիայի օրինակը, որն ունի 40 միլիոն բնակչություն, բայց նվաճել է 400 միլիոն բնակչություն ունեցող գաղութներ: Նա ընթերցողին ծանոթացնում է Անգլիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Ֆրանսիայի, Պորտուգալիայի, Իսպանիայի և Գերմանիայի մասին Սուխանովի բերած տեղեկությունների հետ և ընդգծում է հետևյալը. «Եղած տվյալներից երևում է, որ Գերմանիան վերջին տեղն է բռնում որպես ալիելի քիչ գաղութ ունեցող: Ուստի Գերմանիան պետք է ուժեղացնել իր միլիտարիզմը, ազրեսիվ լինել և ձգտեր գեների միջոցով խլել իր հարևանների գաղութների մի մասը»:

Այնուհետև ասվածից երևելով Շահումյանը քննադատում է կաղեսական գրող Սյունյակուն, որն իր գրքում գրում է, թե «ներկա պատերազմը ցեղային կռիվ է՝ պլավոնների և գերմանացիների միջև»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 62-67):

«Պայքար» թերթում տպագրվում է նաև Կ. Կառուցկու «Գաղութային քաղաքականությունը» աշխատությունը Շահումյանի թարգմանությամբ: («Պայքար», հոկտեմբերի 9, 16 և 23, 1916 թ):

1916 թ. դեկտեմբերի 4-ին և 11-ին «Պայքար» թերթում հրապարակվում է Շահումյանի «Մտավորականությունը և նացիոնալիզմը» ծավալուն հոդվածը, որը նույնպես գրել էր բանտում եղած ժամանակ: Հոդվածն ունի տեսական բնույթ և նվիրված է մտավորականության հասարակական դերին:

Շահումյանը ուսումնասիրել է եվրոպական առաջատար երկրներում մտավորականության ունեցած դերը, նշել է, որ պատմական տարբեր ժամանակաշրջաններում մտավորականությունը խաղացել է և դրական, և բացար-

ասական դեր: Նա վիճարկում է այն ընդունված կարծիքը, որի Համաձայն «երկրի աղբ» Հանդիսացող մտավորականությունը միշտ առաջադիմական է եղել «ամեն մի Հասարակության» մեջ:

«Եթե,- գրում է նա,- վերցնենք, օրինակ, ներկայիս Հայ մտավորականությունը և մի շարք ուրիշ ազգային մտավորականություններ, ովքեր կոտենենք, որ նրանք ոչ միայն առաջադիմական ուժեր չեն, այլև ընդհակառակը, շատ սոցեղ ու վնասակար դեր են կատարում իրենց ժողովուրդների առաջադիմության գործում»:

Բերելով Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի պատմությունից օրինակներ, Շահումյանը նշում է, որ Ֆրանսիական Հեղափոխության և լուսավորիչների ժամանակ, 1848 թ. «Երիտասարդ Գերմանիայի», «Երիտասարդ Իտալիայի» ժամանակ մտավորականությունը հակապական առաջադիմական գործ է կատարել, կռվելով միջնադարյան ֆեոդալական ու կղերական «մոթ աշխարհայեցողությունն ու նախապաշարմունքների դեմ՝ նախապատրաստել են առաջադեմ բուրժուազիայի տիրապետությունը և նոր ու Հարուստ մշակույթի ծաղկումն ու զարգացումը 19-րդ դարում»:

Շահումյանը փաստում է, որ երբ բուրժուազիան «իր օբյեկտիվ պատմական դրությունը» եղել է առաջադեմ դասակարգ, առաջադեմ է եղել նաև նրա մտավորականությունը:

«Այժմ,- գրում է նա,- ընդհակառակը, ամեն տեղ եվրոպայում բուրժուական մտավորականությունը իր ամբողջ Հասարակական աշխարհայեցող ու գործունեությամբ մի վիթխարի խոչընդոտ է ժողովուրդների առաջադիմության Համար»: Այդ մտավորականությունը ծառայում է բուրժուազիայի շահերին, կեղծում է Հասարակական ճշմարտությունները, մթազնում է ժողովրդական մասսաների գիտակցությունը, խաբեության միջոցով արդարացնում է «չահագործման ու բռնության վրա հիմնված այժմյան Հասարակարգը»:

Այնուհետև Շահումյանն ընդգծում է, որ եվրոպական երկրներում ասով է եկել նոր մտավորականություն, որը, ճիշտ է, փոքրաթիվ է, բայց առաջադիմական ուժ է, որը «ոչնչացնող քննադատության ենթարկելով բուրժուական Հասարակական գիտությունները՝ քաղաքատնտեսությունը, պատմագիտությունը, փիլիսոփայությունը, և գիտակցության բերելով իրենց շահերի նկատմամբ բանավորական մասսաները, այդ մտավորականությունը մի խոշոր առաջադիմական գործ է կատարում, որ երբեք չի մոռացվելու պատմության մեջ»:

Շահումյանը դրա հետ միասին նշում է, որ իր «ահագին մեծամասնությամբ մտավորականությունը»՝ ինժեներներ, փաստաբաններ, դատավոր

ներ, բժիշկներ, ուսուցիչներ, գրողներ, դերասաններ և այլն գտնվում են բուրժուազիայի բանակում և ծառայում են նրա շահերին:

Շահումյանը բուրժուական գաղափարախոսության գլխավոր Հատկանիշներից մեկը համարում է նացիոնալիզմը: Նա բերում է գերմանական մասնատված իշխանությունների միավորման օրինակը, Իտալիայի միավորման փաստը և այլն ու ընդգծում է, որ բուրժուազիան կոչված էր միավորելու այդ բաժանված մասերը և ստեղծելու մի ամբողջական ազգային «խաղաղացրած միջավայր», լայն ազգային շուկա, ուժեղ «ազգային պետություն»:

Շահումյանը նշում է նաև, որ 19-րդ դարում ազգային գաղափարի, ազգային պետության Համար տեղի ունեցած մի շարք պատմական շարժումները, Հեղափոխությունները և պատերազմները ունեին առաջադիմական ու ազատագրական նշանակություն:

Մի շարք օրինակներով Շահումյանը տալիս է իր ժամանակի մտավորականության հետևյալ բնորոշումը:

Առաջին. Բուրժուական Հասարակության մեջ մտավորականությունը «մի որոշ սոցիալական խավ է, որը, ինչպես և ամեն մի ուրիշ սոցիալական խավ, իր գործունեության մեջ առաջնորդվում է Հողերեն և նյութեղեն երկրային շահերով»:

Երկրորդ. Ներկա պատմական շրջանում բուրժուազիայի և մտավորականության շահերն այլևս չեն Համապատասխանում «ազգերի զարգացման ու առաջադիմության գործին»:

Երրորդ. Մտավորականությունը իր «այրոֆեսիայով» չահագրգռված լինելով նացիոնալիստական գաղափարախոսության պահպանմամբ, շարունակում է իրեն Հռչակել ազգի հոգատար, ազգի «փրկիչ»: Եվ իր շահերից երեքով, Հաճախ միացած այս կամ այն իշխող ուժերի հետ, «նա շարունակում է իր «ազգասիրական» պատիր ֆրադներով ու քարոզներով մոլորեցնել ժողովրդական մասսաները, համարյա միշտ ահագին մասսաներ հասցնելով առաջադիմության գործին, իսկ երբեմն և զարհուրեցի պատուհասներ բերելով իրենց ազգերի գլխին»:

Իր հորվածի վերջում Շահումյանը նշում է, որ «Ժամանակակից մտավորականության և ժամանակակից նացիոնալիզմի» բնորոշումից հետո Հատկանալի է դառնում, թե ինչու է Հետևողական մարքսիզմը «այդ աստիճան կատարի կռիվ մղում» նացիոնալիզմի դեմ: Եվ իբրև օրինակ բերում է «Պայքար» թերթը, որի յուրաքանչյուր Համար «մի-մի կենդանի բողոք է նացիոնալիզմի և նացիոնալիստների դեմ»: (Սա. Ծանոթյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 68-80):

ԳԼՈՒԽ 9 ԲԱՔՎԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ

Սարատովի աքսորավայր հասնելուց հետո, Շահումյանին հաջողվում է աշխատանք գտնել: Զբաղվում էր սիսեմաներ և դիագրամաներ գծելով, դրա դիմաց ստանալով որոշ վարձատրություն: Գործուց էլ նրան դրամ էր ուղարկում իր ընկերը՝ անխոնջ Հովհաննես Հարությունյանը:

Շահումյանը Սարատովումն էր, երբ տեղի է ունենում 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը: Հեղափոխության ջնորհիվ Շահումյանն ազատվում է աքսորից և ճանապարհվում Բաքու:

Մինչ Շահումյանը գտնվում էր Բաքու տանող գնացքի մեջ, 1917 թ. մարտի 6-ին տեղի է ունենում Բաքվի պատգամավորների սովետի նիստ: Բանվորների պահանջով Շահումյանը հեռակա կարգով ընտրվում է Բաքվի բանվորների պատգամավորների սովետի նախագահ: Այդ մասին Շահումյանն իմանում է գնացքի մեջ: Մարտի 8-ին Բաքվի կայարանում հավաքված հարգարավոր բանվորներ դիմավորում են իրենց փորձված առաջնորդ Շահումյանին:

Շահումյանն անմիջապես ձեռնամուխ է լինում սովետի գործադիր կոմիտեի նախագահի պարտականությունների կատարմանը և ստանձնում է Բաքվի սովետի «ВЗВЕСТІЯ» թերթի խմբագրումը:

Մինչ այդ Պետրոգրադում ստեղծված Ժամանակավոր կառավարությունը տեղեկում սկսել էր ձևավորել իշխանության իր մարմինները: 1917 թ. մարտի 9-ին ստեղծվել էր Անդրկովկասյան հատուկ կոմիտեն (ՕԶԱԿՈՄ): Բաքվում էլ նախարարադեպարտների համագումարի խորհրդի թեղադրող մասնակցությունը ստեղծվել էր տարբեր հասարակական կազմակերպություններից կազմված խորհուրդ, որտեղ ընտրվում է գործադիր կոմիտե կազմում Բիչի գլխավորությամբ: Այդ գործադիր կոմիտեն էլ դառնում է Բաքվի նահանգի կառավարման մարմին՝ ենթակա ՕԶԱԿՈՄ-ին:

Այսպիսով Բաքվում նույնպես ստեղծվում է երկիշխանություն:

Սակայն Բաքվի սովետում ընտրված 52 պատգամավորից միայն 9-ն էր բոլշևիկյան կուսակցության անդամ: Գերակշռում էին մենչևիկները, էսէռներն ու դաշնակցականները:

Շահումյանը իր առաջին գործն է համարում սովետում բոլշևիկների ազդեցության ուժեղացման միջոցով հասնել սովետի՝ որպես նոր իշխանության հեղինակության ամրապնդման:

1917 թ. մարտի 30-ին Բաքվի բանվորների և զինվորների պատգամավորների սովետի նիստում Շահումյանը զեկուցում է Բաքվի սովետի գործադիր կոմիտեի նախագծի մասին, որով առաջարկվում էր ոստիկանության փոխարին ստեղծել միլիցիա:

Այդ նախագծով առաջարկվում էր.

Առաջին. Կազմել միլիցիա 1000 մարդուց բաղկացած, որից 500-ը քաղաքային շրջանի և 500-ը նախաձեռնաբային շրջանի համար:

Երկրորդ. Չինվորների պատգամավորների սովետը միլիցիայի համար երաշխավորելու էր 800 մարդ, բանվորների պատգամավորների սովետը՝ 200 մարդ:

Երրորդ. Չինվորների վճարումը կատարելու էին քաղաքային ինքնավարությունը և արդյունաբերողների համագումարի խորհուրդը:

Չորրորդ. Նախաձեռնաբային շրջանում ծառայող ոստիկաններն անհապաղ հեռացվում էին աշխատանքից, իսկ քաղաքից ոստիկանները հեռացվելու էին ապրիլի 4-ին:

Նախատեսվում էր, որպեսզի միլիցիոներները թեկնածությունը տրվեր զինվորներից ու բանվորներից:

Ընդունելով Շահումյանի առաջարկած նախագիծը, սովետը վճռական քայլ է կատարում քաղաքում կարգ ու կանոնի հաստատումը իր ձեռքը վերցնելու գործում:

Շահումյանը մեծապես կարևորում էր 8-ժամյա աշխատանքային օրվա պահանջի համար բանվորների տևական պայքարի իրականացումը, որին, նույնիսկ Փետրվարյան հեղափոխությունից հետո, շարունակում էին դիմադրել արդյունաբերողները: Այդ հարցում եղած անհամաձայնությունը հարթելու համար ստեղծվում է Բաքվի բանվորների պատգամավորների սովետի և Բաքվի շրջանի արդյունաբերողների կազմակերպության ներկայացուցիչների համաձայնեցնող հանձնաժողով:

Ապրիլի 3-ին հրավիրվում է Բաքվի բանվորների պատգամավորների սովետի և Բաքվի շրջանի արդյունաբերողների կազմակերպության ներկայացուցիչների համաձայնեցնող հանձնաժողովի առաջին նիստը, որտեղ Շահումյանը սովետի անունից առաջարկում է լուծել հետևյալ հարցերը.

Ա. 8-ժամյա աշխատանքային օրվա անհապաղ կիրառում՝ արտաժամյա աշխատանքի մանրամասն կարգավորմամբ այն դեպքերում, երբ այդ աշխատանքը համարվի անհրաժեշտ և թույլատրելի:

Բ. Հաշտարար առդամների անհապաղ հիմնում, որոնց որոշումը պետք է պարտադիր լինի երկու կողմերի համար:

Գ. Ֆարքիկա-գործարանային Հանձնաժողովների ճանաչում: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 92):

Շահումյանի առաջարկությունն արդյունաբերողների ներկայացուցիչները մերժում են:

Ապրիլի 8-ին տեղի է ունենում վերոհիշյալ Համաձայնեցնող Հանձնաժողովի երկրորդ նիստը Բաբբի շրջանում 8-ժամյա աշխատանքային օր մտցնելու և այլ Հարցեր լուծելու համար: Արդյունաբերողների ներկայացուցիչներն այս անգամ էլ մերժում են և չեն Համաձայնվում մտցնել 8-ժամյա աշխատանքային օր:

Ապրիլի 9-ին Հրավիրված բանվորների պատգամավորների սովետում Շահումյանը զեկուցում է 8-ժամյա աշխատանքային օր մտցնելու և մյուս Հարցերի մերժման մասին: (Ստ. Շահումյան, նույն տեղը, էջ 94):

Այդ կապակցությամբ ապրիլի 10-ին Շահումյանը կոչով դիմում է բանվորներին՝ պահպանել ստանալու թյուն և սպասել ապրիլի 11-ին բանվորների պատգամավորների սովետի որոշմանը: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 98):

Կոտրելով արդյունաբերողների դիմադրությունը, 1917 թ. մայիսի 1-ին Բաբբի պատգամավորների սովետը Հատուկ որոշմամբ Բաբու քաղաքում և նրա շրջանում մտցնում է 8-ժամյա աշխատանքային օր:

Մարտի 10-ին Շահումյանը հրավիրում է Բաբբի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ժողով, որն ընտրում է ՌՄԻԿԿ Բաբբի ժամանակավոր միացյալ կոմիտե, որի մեջ մտնում են երեք մենչևիկ և երկու բոլշևիկ:

Այս միավորումը ուներ ժամանակավոր բնույթ: Շահումյանը վարում էր այն քաղաքականությունը, որի արդյունքով նա ձգտում էր Հասնել մենչևիկների հետ տարանջատման: Բայց դա բավական չէր: Նա խնդիր էր դնում նաև որքան հնարավոր է շատ բանվորների անջատել մենչևիկներից:

«ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԸ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

1917 թ. մարտի 29-ին Թիֆլիսում լույս տեսնող «Հորիզոն» թերթն ազդարարում է, որ «այսօրվանից «Հորիզոնը» ղլովում է Լ. Յ. Դաշնակցութեան տրամադրութեան տակ»: («Հորիզոն», մարտի 29, 1917 թ.):

Մի քանի օր անց «Հորիզոնը» հրապարակում է «Վայրկեանի պահանջը» վերնագրով խմբագրական Հոդվածը, որտեղ խոսվում է Ռուսաստանում ստեղծված ժամանակավոր կառավարության նկատմամբ տարբեր կուսակցությունների վերաբերմունքի մասին:

«Հորիզոնը» Հասկապես անդրադառնում է սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կուսակցության վերաբերմունքին, գրելով հետևյալը. «Եւ սա

կայն այս երկրում կան անհատներ և ամբողջ քաղաքական Հոսանքներ՝ զարդարած ծայրահեղ յեղափոխականի պաճուճանքներով, որոնք ճգնում են Համոզել, թէ վտանգը ոչ թէ Հին իրաւակարգի պաշտպաններից է սպառնում, այլ ամենից առաջ և ամենից աւելի՝ այն անձերից, որոնց ուսին է դրւած երկիրը ժամանակաւորապէս կառաւարիւմ ծանր պարտականութիւնը: Նրանք նիզակներ են ճօճում ոչ միայն բուրժուա Միլիկոյների ու Գուչկոյների դէմ, այլև ռուսական դեմոկրատիայի ամենահոյակապ առաջնորդներից մեկի՝ Կերենսկիի, որ նրանց խօսքով «ժողովրդական ազատութեան դահիճի գիրկն է նետելը» և «Հակայեղափոխութիւն է պատրաստում»:

Այնուհետև «Հորիզոնը» գրում է, որ առանց «զարմանքի ու զայրույթի» չի կարելի առանց վրդովմունքի կարդալ Մուկվայի և Պետրոգրադի «բոլշևիկների» թերթերում տպագրված Հոդվածները, «որոնց միակ նպատակը ներկայ ժամանակաւոր կառավարութիւնը վարկաբեկելն է:

«Բայց նրանք,- շարունակում է «Հորիզոնը», - չեն հասկանում, որ դրանով ոչ թէ կառավարութիւնն է վնասուում, այլ նախ և առաջ փորում են Հիւժքերն այն ազատութեան, որի անունից իրենք էլ են ճառում»:

«Հորիզոնը» դժգոհում է, որ սոցիալ-դեմոկրատ բոլշևիկները ձգտում են ժողովրդի աչքում վարկաբեկել ժամանակավոր կառավարությանը, երբ «այսօր աւելի քան երբեկեցէ անհրաժեշտ է ժողովրդական մտքի ու Հոգու անորոշութիւնը և Հաւատը դէպի այն անձերն ու Հաստատութիւնները, որոնք իրերի բերումով կոչւած են ձեռք բերւած ազատութեան պատանդաւոր ամբապնդելու»:

«Հորիզոնը» նշում է նաև, որ դեմոկրատիայի անունից խոսող «բոլշևիկները» կատարում են նաև «մի վատ գործ» և գրում է հետևյալը. «Մինչդեռ թուրք-գերմանա-աւստրիական միլիոնատու սկիները խիտ շարքերով պատրաստ են ցցելու ռուսական ժողովուրդների սիրտը, մինչդեռ Վիլհելմի զօրավարները հրէշաւոր դաւեր են նիւթում և երազում են իրանց երկաթէ հիւաններով շնչախեղը անել Ռուսաստանի մանուկ ազատութիւնը, ռուս դեմոկրատիայի ղեկավարների մի մասը ջրածգորէն աղաղակում են. «Ձեռքերը վար. վերջ պատերազմին, ինչ գնով էլ լինի՝ Հաշտութիւն»: Եւ այսպիսի աղաղակներով կասկածի ու բարոյաքքման թոյն է ներարկւում այն միլիոնատու Հոգիների մէջ, որոնք աննման անձնագոհութեամբ կուրծք են տալիս թշնամու տակալի գորհնեղին»:

Վերջում «Հորիզոնը» գրում էր. «Սրտի անհուն կակիծով, սեղմւած ստամոքսով՝ պատերազմը պետք է շարունակել մինչև վերջ, որովհետև ուրիշ ելք չկայ»: («Հորիզոն», ապրիլի 2, 1917 թ.):

Այսպիսով դաշնակցությունը Հանդես էր գալիս խոչըր բուրժուազիայի իշխանության՝ ժամանակավոր կառավարության պաշտպանությունը և արտահայտվում էր պատերազմը մինչև վերջ շարունակելու օգտին:

Ի միջի այլոց, հիշեցնեմ, որ 1908 թ. երաժշտության Հեղափոխության Հաղթանակից հետո էլ Կ. Պոլսի դաշնակցական մամուլը Հանդես էր գալիս բոլոր նրանց դեմ, ովքեր Համաձայն չէին երաժշտության հետ դաշինքին և մասնացույց էին անում երաժշտության իշխանությունից եկող վտանգը:

«Հորիզոնի» վերահիշյալ խմբագրական հոդվածի կապակցությամբ 1917 թ. ապրիլի 8-ին «Кавказский рабочий» թերթում Շահումյանը հրատարակում է «Դաշնակցականները բողջեկներին մասին» հոդվածը:

«Հայկական «Հորիզոն» թերթը,- գրել է Շահումյանը,- ջանադրաբար խուսափելով ցույց տալ իր քաղաքական ֆիզիոնոմիան, նույնիսկ այն ժամանակ, երբ նշված թերթի գիծը համընկնում էր Վորոնցով-Դաշկովի քաղաքականության հետ, այսօր իրեն հայտարարելով «Դաշնակցություն» կուսակցության օրգան, առաջին հարձակումն է գործում սոցիալ-դեմոկրատիայի բողջեկյան ձախ թևի վրա»:

Շահումյանը մեջբերում է «Հորիզոն» թերթից հետևյալ հատվածը. «Ձի կարելի ատանց զարմանքի ու զայրույթի կարող այն վրդովեցուցիչ հոդվածները, որոնք սպառնում են պետրոգրադյան և մոսկովյան բողջեկյան թերթերում, որոնց միակ նպատակն է վարկաբեկել ժամանակավոր կառավարությունը: Բայց նրանք չգիտեն, որ դրանով չեն մնասում ժամանակավոր կառավարությունը, այլ ամենից առաջ քայքայում են այն ազատության հիմքերը, որի անունից նրանք Հանդես են գալիս»:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ ճիշտ նույնպիսի արտահայտություններով են Հանդես գալիս լիբերալ-բուրժուական թերթերը, ինչպես օրինակ, «Русская воля», «Речь» և այլն:

«Հորիզոնի» ղեկավարները,- գրում է Շահումյանը,- մինչև այսօր որևէ պատկերացում չունենալով բողջեկոսի էություն մասին, հանդգնում են դառնալ սալ հեղափոխական պրոլետարիատի իսկական ներկայացուցչությունը»: Նա ընդգծում է, որ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ուղղակի պարտքն է վերահսկել և միջամտել ժամանակավոր կառավարության գործունեության մեջ թույլ տրվող սխալներին, և եզրակացնում է. «Այսպիսով ժամանակավոր կառավարությունը վարկաբեկելու մասին խոսք լինել չի կարող»:

Իր հոդվածում Շահումյանն անդրադառնում է նաև իտալադոկտրինայի հար

ցի վերաբերյալ բողջեկոսի հասցեին «Հորիզոնի» արտահայտած մեկ այլ կեղծիքին: «Կարո՞ղ է բողջեկոսն անտարբեր մնալ համալսարանային սպանողի հանդեպ»,- հարցնում է Շահումյանը և տալիս է հետևյալ պատասխանը.

«Առաջին. Բողջեկները եռանդով միջամտում են միջազգային քաղաքականությանը, որպեսզի առաջ բերեն հեղափոխություն նաև մյուս երկրներում, որպեսզի այդ երկրների պրոլետարիատը նույնպես պայքարի ժողովրդական սպանող վերջ դնելու համար»:

Երկրորդ. Բողջեկները, ճիշտ է, առաջ են քաշում կոչեր, բայց ոչ այնպիսիք, որոնք նրանց է վերագրում «Հորիզոնը»:

Այնուհետև Շահումյանը գրում է. «Դեմոկրատիայի անունից խոսող բողջեկները,- ասում է «Հորիզոնը,- կատարում են ևս մեկ գեշ գործ. այն ժամանակ, երբ Վիհելմի գորավարները ծրագրում են հրշավոր դավեր և երազում են իրենց երկաթե մագիլներով խեղդել Ռուսաստանի երիտասարդ ազատությունը, ռուսական դեմոկրատիայի առաջնորդների մի մասը նյարդացած բացականչում է. «Դե՛ն նետեք գեները: Դադարեցրե՛ք պատերազմը: Խաղաղություն, ինչ գնով էլ որ լինի»:

«Պատերազմի վերաբերյալ,- շարունակում է Շահումյանը,- բողջեկների հայացքը հայտնի է ամբողջ աշխարհին և միայն «Դաշնակցություն» կուսակցության ներկայացուցիչները ձևացնում են չիմանալ այն, ինչ պետք է իմանալ, քանի որ նրանք ունեցել են պատգամավորներ այնտեղ, որտեղ այդ հայացքը ձևավորվել է»:

Շահումյանը նկատի ունի Ցիմերվալյացյան կոնֆերանսը և այնտեղ ընդունված որոշումները, որոնց հիմնական գաղափարները կիսում են բողջեկները:

«Այնքանով,- գրում է Շահումյանը,- որ պատերազմը հարստանալու նպատակով մղվում է տիրապետող դասակարգերի շահերից և ոչ թե բանվորների ու գյուղացիների շահերից, որոնք հակառակ իրենց կամքի կրում են պատերազմի ծանր բեռը, դրա հետ կապված իրենց բազմաթիվ զոհերով, մենք պահանջում ենք պատվավոր հաշտություն առանց անեքսիաների»:

Շահումյանը նշում է, որ բոլոր ժողովուրդներին ուղղված բողջեկների կողմը բաժանում են բանվոր դասակարգի պատգամավորական սովետները, որ այդ կոչին միացել է համարյա ամբողջ Ռուսաստանը:

«Ահա,- ընդգծում է Շահումյանը,- պատերազմի մասին բողջեկների հայացքների այն հիմնական թեզիսները, որոնք «Հորիզոնը» կեղծել է և ընթերցողներին զգել է մոլորության մեջ»:

«Հեղափոխական պրոլետարիատի և բանակի Հաղթական հեղափոխու-

թյունը պետք է առաջ բերի Հեղափոխական հրեճ նաև մյուս երկրներում և Հեղափոխության ուղիով վերջ դնի եղբայրասպան պատերազմին՝ այսպիսին է բուլղարիկների ազդեցության խնամարար և ուրիշ ոչինչ նրանք չեն առաջարկում»:

«Բուլղարիկների Հասցեին չարախոսությունը, թե նրանք առաջարկում են բացել ռազմաճակատը և զենքը ցած դնել, ոչ այլ ինչ է, եթե ոչ զրպարտություն»:

Հողվածի վերջում Շահումյանը բերում է Ցիմերվալոյցյան կոնֆերանսի կոչերը՝ «Կեցցե՛ Հաշտությունն առանց անհրաժեշտների: Կեցցե՛ միջազգային Համերաշխությունը: Կեցցե՛ սոցիալիզմը» և գրում է. «Ահա, այս կոչերն են բուլղարիկները ձգտում կենսագործել կյանքում»: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 2, գ. 61, թթ. 1-3):

ԱՌԱՋԻՆ ԼԵԳԱԼ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

1917 թ. ապրիլի 10-ին Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության միջոցառմանը առաջին լիակ կոնֆերանսում Շահումյանը գեկուցում է ընթացիկ մոմենտի մասին: Այդ գեկուցման մասին կարելի է պատկերացում կազմել Շահումյանի առաջարկած բանաձևից:

Բանաձևի սկզբում նշվում է, որ եթե վերջ չտրվի տասնյակ միլիոնավոր զոհեր իրաձ, վերջնականապես Ռուսաստանը քայքայած Հանցավոր պատերազմին, ապա «ազատությունը չի կարող ամրապնդվել Ռուսաստանում»:

Հաշտություն ձեռք բերելու և Ռուսաստանում ու Եվրոպայում ազատությունն ամրապնդելու համար անհրաժեշտ էր համարվում առաջադրել ոչ թե ինպերիալիստական բուրժուազիայի «պատերազմ մինչև վերջ», «Հայրենիքի պաշտպանություն» լողունը, այլ միայն «բոլոր երկրների պրոլետարների եղբայրական լողունը, ինտերնացիոնալ դասակարգային պայքարի և իրենց ինպերիալիստական կառավարությունների դեմ ժողովուրդների ապստամբության լողունը»:

Փետրվարյան Հեղափոխությունը բնորոշելով որպես բուրժուա-դեմոկրատական, բանաձևը խնդիր էր դնում այն վերածել սոցիալիստական Հեղափոխության: Բանաձևը նկատի էր առնում Հետևյալը.

Առաջին. Ժամանակավոր կառավարությունը զիջումներ է անում պրոլետարիատի և բանակի ճնշման տակ: Ժամանակավոր կառավարությունն անմիջապես կդադարի Հակահեղափոխության բացահայտ մարմին, եթե նրա նկատմամբ թուլացվի այդ ճնշումը:

Ուստի սովյալ ժամանակի համար կարևորվում էր ոչ թե քաղաքացիական խաղաղություն, այլ դասակարգային պայքարի լողունը: Դա նշանակում էր ավելի ուժեղացնել ճնշումը Ժամանակավոր կառավարության վրա և պատրաստ լինել հակահարված տալու «բուրժուազիայի անխուսափելի հակահեղափոխական փորձերին»:

Երկրորդ. Նկատի ունենալով, որ Ռուսաստանի պրոլետարիատը ձգտում է վերականգնել խաղաղությունը և այդ նպատակով հարկադրել է Ժամանակավոր կառավարությանը հրապարակային հայտարարություն անել զավթողական քաղաքականությունից հրաժարվելու մասին, խնդիր էր դրվում, որպեսզի եվրոպական պրոլետարիատը համի այն բանին, որ հարկադրի անգլիական և ֆրանսիական դաշնակից կառավարություններին Հանդես գալու նույնպիսի հայտարարությամբ:

Երրորդ. Նկատի ունենալով Արևմտյան Հայաստանում ստեղծված կացությունը, Շահումյանը բանաձևի մեջ ընդգծում է Հետևյալը. «Բանի դեռ խաղաղություն ձեռք չի բերված, մեկ կողմ էր անում ոչ թե թուլացնել և քայքայել բանակը թիկունքում և ռազմաճակատում, այլ ամեն կերպ աջակցել նրան»:

Այդ նպատակով կարևոր էր համարվում պարզաբանել զինվորներին «պատմական այն մեծ խնդիրները, որ ծառայած են բանվոր դասակարգի առջև Ռուսաստանում, և Հնարավորություն չտալ բուրժուազիային բանակը դարձնելու բուրժուական հակահեղափոխության գործիքը»:

Բանակի վերաբերյալ Շահումյանն անդրադարձել էր նաև 1917 թ. ապրիլի 6-ին Բաքվի սովետի նիստում ունեցած ելույթում: Նա ասել է Հետևյալը. «Մենք բոլորս խաղաղություն ենք տենչում: Մենք գիտենք, որ ամբողջ աշխարհի դեմոկրատիան խաղաղություն է տենչում, և մենք վարում ենք ոչ նվաճողական քաղաքականություն և դիմել ենք բոլոր ժողովուրդներին (նկատի ունի 1917 թ. մարտի 14-ին Պետրոգրադի սովետի «Ամբողջ աշխարհի ժողովուրդներին» կոչը՝ Վ. Պ.) պայքարելու հանուն խաղաղության: Բայց մինչև որ խաղաղությունը հաստատվի, մենք կրծքով կպաշտպանենք մեր ազատությունը և բանակին կրոնք այն ամենը, ինչ մեր ուժերը ներում են»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 93):

Չորրորդ. Ոչ թե ազգային-պետական, այլ ինտերնացիոնալ-դասակարգային դիրքերի վրա կանգնած բանվոր դասակարգը պետք է կարևորի պայքարը հանուն 8-ժամյա աշխատանքային օրվա, ինչպես նաև իր մյուս տնտեսական պահանջների, «որոնք սովյալ պահին Համրենկեղով երկրի շահերի հետ, մեզ համար ունեն նաև անկախ-սկզբունքային նշանակություն»:

Հիմնադրուողը. Բանաձևը ի հակադրություն Բաբելոն ժամանակավոր կառավարության ստեղծած գործադիր կոմիտեի, կարևորում էր բանվորների պատգամավորների սովետի շուրջը պրոլետարիատի համախմբումը և նպաստել սովետի, որպես նոր իշխանության մարմնի, ազդեցության ընդլայնմանը: (Առ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 95-97):

Միաժամանակ կոնֆերանսը մերժում է մենչևիկ-պաշտպանողականների ներկայացրած բանաձևը, որով պաշտպանում էին ժամանակավոր կառավարության քաղաքականությունը:

Կոնֆերանսի ընտրած ժամանակավոր կոմիտեի անդամներից կազմվեց բյուրո 9 հոգուց բաղկացած, որից 5-ը բոլշևիկ, 4-ը՝ մենչևիկ:

ԿՈՉ՝ ՈՒՂՂՎԱԾ ԲԱԶՎԻ ՀԱՅ ԲԱՆՎՈՐՈՒԹՅԱՆԸ

Մայիսի մեկի կապակցությամբ Շահումյանը կոչով դիմում է Բաբելի Հայ բանվորներին, նրանց կոչ անելով հետո չմնալ և միանալ սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կուսակցության հաղթական դրոշին:

Իր կոչում Շահումյանը զգալի տեղ է հատկացնում Արևմտյան Հայաստանի խնդրին: Նա նշում է, որ Բաբելի Հայ բանվորները «ցավելով տաճկահայ եղբայրների վիճակի համար», ամբողջովին գերված են եղել ազգայնական կուսակցությունների կողմից և հետևել են նրանց քարոզներին:

Շահումյանը գրել է. «Վերջին տարիների ողբերգական դեպքերը ձեռք չույց տվին, թե որքան անհեռատես և որքան կորստաբեր էր այդ կուսակցությունների քաղաքականությունը: Այդ կույր քաղաքականությունը փոխանակ «ազատ Հայաստանի» մեզ տվեց խիսապես որ «ավերակ Հայաստան», ինչպես այդ պետք էր գուշակել և ինչպես գուշակում էին իրենք դժբախտ տաճկահայերը, որոնք խնդրել էին ուսասհայ «փրկիչներին» չխառնվել իրենց գործերի մեջ»:

Այնուհետև Շահումյանը հիշեցնում է 23 տարի առաջ Հովսեփ Աթաբեկյանցի խնդրանքով «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» հայերեն հրատարակության համար Փ. Էնգելսի գրած նամակի հետևյալ խոսքերը. «Հայ ժողովրդի ազատության նալը տեղ հասցնելու համար, պետք է մեծ զգուշությամբ անցնի տաճկական բռնակալության Սցիլլայի և ուսական դեպարտիզմի Խարիբուայի միջև... Բանի դեռ գոյություն ունի ուսական ցարիզմը, տաճկահայ ժողովուրդը երբեք չի կարող ազատվել ըստ իրենց ճիշտներից»:

Շահումյանը նշում է, որ այն, ինչ հասկանալի էր Եվրոպայի սոցիալ-դե-

մոկրատիայի համար, անհասկանալի է եղել «մեր «ազգասերների» համար», որոնք ուզում էին Հայ ազգի փրկությունը կապել «Հայ ժողովրդի ամենամեծ թշնամի Նիկոլայ Ռոմանովի հետ»:

«Համաշխարհային դահիճ Նիկոլայ Ռոմանովի այդ երեկվա դաշնակցները,- ընդգծում է Շահումյանը,- այսօր նորից, ինչպես նրանք այդ արին 1905 և 1906 թվականներին, հանդես կգան ձեր առջև սոցիալիստական փետուրներով»:

Շահումյանը իր պարտքն էր համարում զգուշացնել Հայ բանվոր ընկերներին «այդ կեղծ ու անշնորհ սոցիալիստներից», որոնք իրենց անմիտ ազգային քաղաքականությամբ «զոհ բերին տաճկահայ ժողովուրդը, այսօր նրանք փտանգի են ենթարկում ուսասհայերի բախտը»:

Շահումյանը գտնում էր, որ Կովկասին ամենից առաջ հարկավոր է միջազգային համերաշխություն և նշում էր, որ բանվորների շահերը միատեսակ են, «յինեն նրանք Հայ թե ուս, վրացի թե թուրք»։ Այս միտքը, գրում էր նա, կարող է անհասկանալի լինել Ղարաբաղի կամ Ապարանի գյուղացիներին կամ ազգային նախապաշարունակներով սնված Հայ մտավորականի համար, «բայց Բաբելի Հայ բանվորի համար դա արդեն պարզ ճանապարհություն պետք է լինի»:

Շահումյանը Հայ բանվորներին կոչ էր անում. «Մեկնեցեք ձեր ձեռքը ուս, թուրք, վրացի ընկերներին և կազմեցեք նրանց հետ մի անբաժան եղբայրական ընտանիք»:

Հիշեցնելով, որ միջազգային սոցիալիստական կոնգրեսներն ստեղծ են հետևյալը. «Ամեն մի պետության մեջ պետք է գոյություն ունենա մի Հատ սոցիալիստական կուսակցություն», Շահումյանն ընդգծում էր. «Ինչպես մեկ է պրոլետարիատը, նույնպես մեկ պետք է լինի նրա քաղաքական կուսակցությունը»:

Նկատի ունենալով, որ ամբողջ Ռուսաստանի բանվորությունը ճիզ է թափում ազատվելու իր բաժանումներից, առանձին կուսակցություններից, Շահումյանը նշում էր, որ միավորման են ձգտում սոցիալ-դեմոկրատիայի զանազան ճյուղերը:

«Այն կուսակցությունը,- ազդարարում էր Շահումյանը,- որ կարող է հիմք ծառայել միացման համայն Ռուսաստանի պրոլետարիատի համար և որ պետք է միացնել Ռուսաստանի բանվորությունը համայն քաղաքակիրթ աշխարհի բանվորության հետ, սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն է»։ Նա ընդգծում էր, որ այդ կոչը չի թերադրում կուսակցական կիրքն ու

ասելով՝ «այն մեծ սերը դեպի մեր մեծ իրեաները, որով լի են այսօր մեր սրտերը»:

Շահումյանը Հայ բանվորներին կոչ էր անում. «Չկա ոչինչ սպեյի կարևոր Հայ բանվորի և ընդհանրապես ամբողջ Հայ ժողովրդական մասսայի համար, քան թողնել Հին նացիոնալիստական ճանապարհը և ընդգրկել մեր միջադպին իրեաները»:

Հայ ընկերներ, մենք հրավիրում ենք ձեզ՝ խզել ձեր բոլոր կապերը նացիոնալիզմի հետ և գալ սովորացնելու մեր միջադպին շարքերը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 106-108):

«ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈՒԿՐԱՏ» ԹԵՐԹԸ

Շահումյանը մեծապես կարևորում էր մամուլի դերը: 1917 թ. ապրիլի 22-ին նրա նախաձեռնությամբ և խմբագրությամբ վերսկսվում է «Бакинских рабочих» թերթի տպագրությունը, որն ընդհատվել էր 1907 թվականին: Հենց առաջին համարում Շահումյանը հրապարակում է «Ապրիլի 22-ը բանվորական մամուլի օրն է» հոդվածը:

Հոդվածի սկզբում Շահումյանը նկարագրում է Ռուսաստանում բանվորական մամուլի առաջացման պատմությունը, ընդգծելով, որ բանվորական մամուլը «կարող է գոյություն ունենալ իրենց իսկ՝ բանվորների ամենաբանական, ամենաբարձրակարգմանի ու ըստ ամենայնի աջակցությամբ միայն»: Նա բանվորներին կոչ է անում. «Պաշտպանեք ձեր թերթը»: Իսկ այդ պաշտպանությունը հնարավոր էր ոչ միայն հանգանակություն անցկացնելով, այլև թերթի տարածողների, աշխատակիցների, թղթակիցների խմբեր կազմակերպելով:

«Փողից բացի» գրում էր Շահումյանը, մեզ անհրաժեշտ է նյութ: Անհրաժեշտ է լայն իրազեկություն տեղերում տիրող դրություն մասին: Անհրաժեշտ են գործին նվիրված ընկերներ, որոնք ճիշտ ու կանոնավոր կերպով տարածեն մեր թերթը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 99-102):

1917 թ. մայիսի մեկին Շահումյանի նախաձեռնությամբ և խմբագրմամբ լույս է տեսնում Հայերեն «Սոցիալ-դեմոկրատ» թերթը, որը տպագրվում է մինչև 1917 թ. օգոստոսի 16-ը:

«Սոցիալ-դեմոկրատ» թերթի առաջին համարում հրապարակվում է Շահումյանի Հայ բանվորներին ուղղված վերահիշյալ կոչը:

Մայիսի 7-ին լույս տեսած «Սոցիալ-դեմոկրատ» թերթի թիվ 2-ում Շահումյանը հրապարակում է «Ընկեր բանվորներին» ուղղված խոսքը, որտեղ

նա գրում է բանվորական թերթի անհրաժեշտության մասին և ընդգծում է հետևյալը. «Սոցիալ-դեմոկրատը» հանդիսանում է պրոլետարիատի շահերի պաշտպան և նրա անդալիստական արտահայտիչը, ահա թե ինչու աշխատավոր բանվորությունը պետք է օգնության ձեռք մեկնի իր թերթին-ամեն տեղ՝ գործարաններում ու արհեստանոցներում համառ կերպով տարածի և բաժանորդագրվի նրան: Բանվորական լրագիրը միայն բանվորի ջանքերով կարող է գոյություն ունենալ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 115):

«Սոցիալ-դեմոկրատ» թերթում Շահումյանը հրապարակում է հետևյալ հոդվածները.

1. «Մինիստրական կրիզիսի առիթով» (մայիսի 7-ին) հոդվածում Շահումյանը նշում է, որ Ռուսաստանում տեղի ունեցող հեղափոխությունը բուրժուական է, բայց «նրան առաջ մղողը բուրժուազիան չէ»:

«Այն օրից» գրում է Շահումյանը, երբ Ռուսաստանի քաղաքական ասպարեզ դուրս եկավ պրոլետարիատը, որպես կազմակերպված մի ուժ, բուրժուազիայի հեղափոխական թափն ընկավ, և նա ամեն կերպ ձգտում էր համաձայնության գալ ցարիզմի հետ, աշխատելով հարմարեցնել նրան իր դասակարգային շահերին ընդդեմ ուսական դեմոկրատիայի՝ բանվորության և գյուղացիության»:

Շահումյանը ցույց է տալիս ժամանակավոր կառավարության երկդիմի քաղաքականությունը, ընդգծելով, որ առիվված է կատարում դեմոկրատիայի պահանջները, բայց հենց որ հարմար պահը գա, նա առաջ է մղելու իր քաղաքականությունը և դավաճանելու է հեղափոխությանը:

Կարելով պատերազմը մինչև հաղթական վախճան չարձանակելու քաղաքականությունը, ժամանակավոր կառավարությունը կատարել է դավաճանական քայլ: Սակայն հանդիպելով պրոլետարիատի և գործի ուժեղ դիմադրությանը, ժամանակավոր կառավարությունը նորից հրաժարվում է նվաճողական քաղաքականությունից: Այդ անկայունության համար ժամանակավոր կառավարությունը կորցնում է իր հեղինակությունը դեմոկրատական լայն խավերի մեջ: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 112-114):

2. «Կուսիցիոն մինիստրությունը» (մայիսի 14-ին) հոդվածում Շահումյանը ընդգծում է, որ հեղափոխությունը չի վերջացել և չարձանակվում է այն տարրերի դեմ, «որոնք իրենց սոցիալական էությունը հանդիսանում են» տապալված ցարական ռեժիմի «մոտավոր ժառանգները»:

Եվ կազմված ժամանակավոր կառավարությունը «անխուսափելի տապալումից» փրկվելու համար «համաձայնության» մեջ է մտել դեմոկրատի-

այի ներկայացուցիչների հետ կոալիցիոն մինիստրություն կազմելու համար: «Այսօր,- փաստում է Շահումյանը,- մենք ունենք մի մինիստրություն, որը կազմված է բուրժուական և սոցիալիստական ներկայացուցիչներից»: Դա միայն առաջին հայացքից է թվում, որ «նախկին զուտ բուրժուական մինիստրության տեղ այժմ գոյություն ունի կիսով չափ սոցիալիստական մինիստրություն»:

Այդպիսի փոփոխություն, նշում է Շահումյանը, ձեռնառու է միայն բուրժուազիային, որը «կոալիցիոն կառավարությունը պիտի ծառայեցնի իր դասակարգային շահերին... միայն այն տարբերությամբ, որ այժմ նա պատասխանատվությունը վերցնում է իր վրայից և գցում դեմոկրատիայի ներկայացուցիչների վրա»:

Շահումյանը համոզված է հայտնում, որ իրավիճակը կիսով չափ միայն այն ժամանակ, երբ իշխանությունը լիովին անցնի բանվորական և գյուղացիական սովետների ձեռքը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 116-117):

3. «ՌՄԻԲԿ Բաբվի միջընթացային կոնֆերանսի բանաձևերը» (մայիսի 28-ին): 1917 թ. մայիսի 15-ին տեղի ունեցած ՌՄԻԲԿ Բաբվի կազմակերպության միջընթացային երկրորդ կոնֆերանսում Շահումյանը զեկուցել է կոալիցիոն մինիստրության և ազատության փոխառության մասին: Այդ փոփոխությունների հիման վրա ընդունվել է երկու հարցերի վերաբերյալ Շահումյանի կազմած բանաձևերը:

Առաջին բանաձևով կոնֆերանսը փաստություն չի հայտնում ձևավորված կոալիցիոն մինիստրությանը և դեմ է «արտահայտվում ամեն մի կոալիցիոն մինիստրության ներկայումս՝ ընդունելով, որ բուրժուազիան, քանի իշխանությունը իր ձեռքին է, երբեք չի հրաժարվի իր հակառակական արտաքին քաղաքականությունից և կձգտի իր շահերի համար օգտագործել սոցիալիստների մասնակցությունը կառավարության մեջ»:

Նկատի ունենալով, որ Ժամանակավոր կառավարությունը դեռևս «գործով չի հրաժարվել իմպերիալիստական պատերազմից, փոխառություն է կնքում գլխավորապես պատերազմական նպատակների համար», կոնֆերանսը երկրորդ բանաձևով նշում է, որ «բանվորները պիտի հրաժարվեն հանաձայնություն տալ այս փոխառությանը, որ ուղղված է ոչ թե հօգուտ, այլ հակառակ հաշտության և ազատության»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 120-122):

4. «Քաղաքական ճգնաժամը» (մայիսի 28-ին) Հոդվածը Շահումյանը

նվիրել է Ժամանակավոր կառավարության «պատերազմը մինչև վերջ տանելու» քաղաքականության հետևանքով առաջացած ճգնաժամին:

Շահումյանը նշում է, որ դեմոկրատական հանրապետություն հաստատելու պրոլետարիատի պահանջը հակասում է ռուսական կապիտալիստական բուրժուազիայի կենսական շահերին: Իսկ պատերազմը կարող է վերջացնել և հեղափոխությունը մինչև վերջ տանել միայն բանվորների ու գյուղացիների ներկայացուցիչներից կազմված դեմոկրատական հանրապետության կառավարությունը: Իսկ այդ կառավարությունը, պարզաբանում է Շահումյանը, «պիտի բաղկանա հեղափոխականներից և ոչ թե ռեակցիոններից և հակահեղափոխականներից» (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 123-124):

5. «Ողջուն «Բանվորի կուլին»» (Հուլիսի 9-ին) Հոդվածը Շահումյանը գրել է ՌՄԻԲ(Կ)Կ Կովկասյան երկրային և Թիֆլիսի կոմիտեների օրգանի 1917 թ. հունիսի 29-ին լույս տեսած առաջին համարի կապակցությամբ: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 141-142):

6. «Ճանարությունը պարզվում է» (Հուլիսի 16-ին) Հոդվածում Շահումյանը, նկատի ունենալով Լենինի դեմ տարածված լուրերը, գրում է. «Լենինի գործը հակահեղափոխականների սարքածն է, և որ հեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցչությունը պետք է պաշտպանի բոլշևիկներին և Լենինին՝ աջից տեղացող հարվածներին»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 164-165):

7. «Պետրոգրադի դեպքերը» (Հուլիսի 16-ին) Հոդվածը Շահումյանը նվիրել է 1917 թ. հուլիսի 3-5-ին Պետրոգրադում տեղի ունեցած դեպքերին, երբ Ժամանակավոր կառավարությունը և հակահեղափոխական բուրժուազիան օգտագործելով հարմար առիթը, պրոպոկանդայի ենթարկեցին խաղաղ հեղափոխական ցույցը և մուխ ուժերին ուղղեցին հեղափոխականների դեմ ու արյունահեղություն առաջացրին:

«Արանից հետո,- նշում է Շահումյանը,- չտեսնված լրբությունը և անամոթությունը ամեն ինչ գցեց (Ժամանակավոր կառավարությունը) բոլշևիկներին և պրոլետարիատի վրա, մեղադրելով, որ նրանք գերմանական փողերով ուզում են հակահեղափոխություն առաջացնել»:

Շահումյանը համոզված է, որ ճանարությունը կպարզվի և «ինչքան էլ այս ցավալի հետևանքներ ունեցած դեպքերի իսկական հեղինակները ուզենան մեղքը բարդել մեք (բոլշևիկյան) կուսակցության վրա և նրան վարկաբեկել,- այդ նրանց չի հաջողվի»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 166-168):

8. «Ողջունյ «Նոր կյանքին»» (Հուլիսի 16-ին) Հորվածը Շահումյանը նվիրել է ՌՄԻԲԿ Ագեքսանդրասպողի կազմակերպության օրգանի հրատարակմանը, որի առաջին համարը լույս էր տեսել 1917 թ. Հունիսի 22-ին: Թե՛ր թը տպագրվել է ընդամենը 8 համար և փակվել է Հուլիսի 16-ին:

Ողջունիով թերթի լույս ընծայումը, Շահումյանը, որին հասել էր թերթի առաջին 5 համարը, գրել է Հետևյալը. «Շատ մեծ գործ է վիճակված անելու մեր ընկերներին այնտեղ: Ռեակցիայի թագավորության շնորհիվ՝ մեր սցիպիտական խոսքը գավառի հայ բանվորության ամենից քիչ է հասել: Հենց նույն ռեակցիայի շնորհիվ դաշնակցականները մեր գավառի բանվորության ատողճ գիտակցությունը մթացրել և ազգայնամոռական ագիտացիա են տարածել նրանց մեջ, ազգի մեջ (բանվորի ու բուրժուայի, գյուղացու և կազվածատերերի մեջ) համերայխություն են քարոզել, իսկ զանազան ազգերի բանվորների մեջ՝ ատելություն և թշնամություն են սերմանել»:

Նման միջավայրում այդպիսի գործ սկսելը Շահումյանը գնահատում է որպես «ծանր և պատասխանատու գործ», որը պահանջում է մեծ եռանդ, «հավատ և սեր դեպի բանվոր դասակարգի ազատագրման գործը»:

Ստացված թերթի հինգ համարների բովանդակությունը գնահատելով «չատ միթիթարական ու ոգևորիչ», Շահումյանն ընդգծում է. «...Մեր գավառի ընկերները կրվելով դաշնակցության նեղ շովինիզմի և կեղծ սոցիալիզմի դեմ, և դասակարգային գիտակցության բերելով հայ բանվորությանը՝ իրենք կանգնած են և անշեղ կերպով ընթանում են միջազգային սոցիալիզմի ուղիով, հավատարիմ կերպով և Հետևողականորեն պաշտպանում են ինտերնացիոնալ վե՛հ գաղափարները»:

Շահումյանը «Նոր կյանք»-ը համարում էր «նորածագ մի լույս խավարի թագավորության մեջ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 169-170):

9. «Հեղափոխության ընթացքը» (Հուլիսի 22-ին) Հորվածում Շահումյանը պարզաբանում է Հեղափոխության ընթացքում հասարակական ուժերի փոխհարաբերություններն ու հակասությունները: Այդ ուժերից մեկը բանվորությունը և գյուղացիությունն է, մյուսը՝ բուրժուազիան, որի ձեռքում է իշխանությունը ժամանակավոր կառավարության տեսքով:

«Մինչև այս հակասությունը չլուծվի, մինչև կառավարությունը չդառնա ուղիղ արտահայտիչը հասարակական ուժերի փոխհարաբերության, այսինքն՝ մինչև իշխանությունը չանցնի Բ. Զ. և Գ. Պ. սովետի ձեռքը, մինչև այդ մեր գլխից անպակաս կլինեն քաղաքական ճգնաժամները և խառնակությունները, կառավարական անկայուն և խախտող դրությունները»:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ սոցիալիստների համաձայնության վրա ստեղծված կոալիցիոն կառավարությունը ցույց է տվել իր կատարյալ անանկությունը: Բայց, չնայած դրան, մանրբուրժուական ղեմավարտիան, երկար ժամանակ տատանվելուց հետո, անցել է բուրժուազիայի կողմը: Իսկ սոցիալիստական պրոլետարիատը մնացել է մենակ և որպես դրա հետևանք՝ Հուլիսին կրել է պարտություն:

Երկրում հաղթել է կապիտալիստների և մանր բուրժուազիայի բյուր: Դրա հետևանքով, նշում է Շահումյանը, ուժերի փոխհարաբերությունը ժամանակավորապես անցել է բուրժուազիայի կողմը, որի համար էլ ճգնաժամը ստացել է «նպատակավոր ընթացք»:

Շահումյանը պարզաբանում է այն հարցը, թե որքան է տևելու հակահեղափոխական բուրժուազիայի տիրապետությունը և որքանով է կենսունակ բուրժուազիայի գերակշռությունը նոր կազմվող կոալիցիոն կառավարությունը:

«Այն պատճառները, բացատրում է Շահումյանը, որ առաջացրել են Հեղափոխությունը, դեռ չարձանակում են գոյություն ունենալ: Այն խնդիրները և գործունեության ղեմավարտական ծրագրերը, որ դրված են Հեղափոխության առջև և հրամայաբար լուծում ու իրագործում են պահանջում, վեր են նոր կոալիցիոն կառավարության ուժերից»:

Եվ նշված իրողությունը համարելով «խոշոր գրավական», Շահումյանը փաստում է, որ ռեակցիայի ուժեղացումը ժամանակավոր է և «այս կոալիցիոն կառավարությունը... իր նախորդներից ավելի երկար ապրել չի կարող»:

Հորվածի վերջում Շահումյանը վստահաբար նշում է, որ «հզոր Դեմոստր նորեն Հեղափոխական դրոշակը պարզած և զինված անցյալի փորձով՝ առանց միջոցվելու և տատանվելու՝ կառավարի կապիտալիստների գերիշխանությունը, կսունի կառավարությունն իր ձեռքը և մեր եվրոպական եղբայրների հետ միասին վերջ կրնի ներկա սպանդանոցին և կիրկի ախարհը կորստից»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 181-184):

10. «Նոր կառավարությունը և մեր անելիքը» (Հուլիսի 30-ին) Հորվածում Շահումյանն անդրադառնում է 1917 թ. Հուլիսյան ղեպքերից հետո ստեղծված նոր կոալիցիոն կառավարության հարցին: Նա նշում է, որ «խայտառակ անհարողությունը» են ավարտվել հակահեղափոխական բուրժուազիային Հեղափոխական բանվորների հետ հաշտեցնելու մենշևեիկների և էսէժների փորձերը:

Այս անհարողությունից հետո մենշևեիկներն ու էսէժները պետք է համարենային հաճախակի կրկնվող ճգնաժամների պատճառները, ամեն մի կոալիցի-

ոն կառավարության անպետքությունը և կանգնեին «Հետևորդական դեմոկրատիայի տեսակետի վրա ու ընդատաղ գնալով կյանքի ատող պահանջներին՝ իշխանությունը պետի Հանձնին կազմակերպված դեմոկրատիայի խորհուրդների ձևով»:

Սակայն մենչեիկներն ու էսէռները չեն հասկացել այս ամենը և իրենց կապերը բուրժուազիայի հետ խզելու փոխարեն, նորից կազմել են կոալիցիոն կառավարություն, «նորից միացան և դաշն կապեցին հակահեղափոխական բուրժուազիայի հետ»:

Շահումյանը նշում է, որ այդպիսի կառավարությունը չի կարող երկիրը դուրս բերել «ձերկա ծանր դրությունից»: Կակախի նոր ճգնաժամ և այդ կառավարությունը կտապալվի: Ասվածից էլ երևելով Շահումյանը զգուշացնում է, որ բուրժուազիան կօգտագործի այդ ճգնաժամը հակահեղափոխության համար և ամբողջ իշխանությունը կվերցնի իր ձեռքը:

Եվ որպեսզի դա տեղի չունենա, Շահումյանն ընդգծում է բուրժուական կուսակցության ունենալիք դերը դեմոկրատիայի հաղթանակի և կապիտալիստների ու սոցիալ-դեմոկրատների իշխանությունը տապալելու, իշխանությունը բանվորական, գինվորական և գյուղացիական սովետների ձեռքը հանձնելու գործում: (Սու. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 193-195):

11. «Երկու ճանապարհ» (օգոստոսի 6-ին) հոդվածում Շահումյանն անդրադառնում է հուլիսյան դեպքերից հետո երկրում ստեղծված իրադրությունը և նշում է, որ բուրժուազիան ցնցության մեջ է, քանի որ ընդհանուր քաղաքականության մեջ սովետների դերը «զրոյի է հասել»:

Բայց Շահումյանն ընդգծում է, որ բուրժուազիան համոզված է՝ իր հաղթանակը երկար չի տևելու և «ամեն կերպ աշխատում է իր կողմը քաշել սովետներին, ձգել նրան իր հակահեղափոխական գիրկը»: Բուրժուազիան լավ գիտե սովետներում մեծամասնություն կազմող մանր բուրժուազիայի ուժը և ամեն միջոցի դիմում է նրան պրոլետարիատից հեռացնելու և վերջնականապես իր կողմը գրավելու համար:

«Այդ կլինի այն ժամանակ՝ մատնանշում է Շահումյանը,- երբ կհայտարարվի գինվորական դիկտատուրա: Զինվորական դիկտատուրան է, որ կապահովի բուրժուազիայի հաղթանակը: Այդ ճանապարհի վրա են ուզում բուրժուաները կանգնեցնել սովետներին»:

Զինվորական դիկտատուրայի հաստատումը կապիտալիստների դիկտատուրան է ընդդեմ աշխատավորության: Դա բուրժուազիայի ճանապարհն է:

Շահումյանը միաժամանակ նշում է, որ կա երկրորդ ճանապարհ, դա «հեղափոխական պրոլետարիատի ճանապարհն է...: Դա վճռական ու կտ

րակ միջոցների ձեռնարկության ճանապարհն է ընդդեմ կապիտալի շահատակությունների, ընդդեմ ճնշման»:

Շահումյանը սովետների համար երկու ճանապարհ է նշում. կամ շարունակել կապիտալիստների հետ միասին կռվելու պրոլետարիատի և գյուղացիության դեմ, «կամ մնալ պրոլետարիատի հետ, կռվելու կապիտալիստների դեմ, հակահեղափոխության դեմ»:

Երրորդ ճանապարհ գոյություն չունի, փաստում է Շահումյանը և զգուշացնում է, որ գինվորական դիկտատուրան չի կարող փրկել հեղափոխությունը և նրա նպատակը չէ երկիրը տնտեսական ճգնաժամից դուրս բերելը: Այդ դիկտատուրան գյուղացուն հող չի տա, բանվորին էլ՝ հաց ու հաշտություն: Այդ դիկտատուրան երկիրը կտանի դեպի անկում և կվերականգնի ցարիզմը:

Կյանքը, նշում է Շահումյանը, ուրիշ ճանապարհ է ցույց տալիս, դա իսկական ազատության ճանապարհն է, դա իսկական եղբայրության և իսկական հավասարության ճանապարհն է:

Իր հոդվածը Շահումյանն ավարտում է Հետևյալ խոսքերով. «Մենք համարձակ ու անվախ, չնայած անսովոր ու ստոր բանասանձներին, հարածանձներին, բանտարկություններին, չվախենալով մահատակներից ու կախարաններից. կոչ ենք անում բոլոր նրանց, որոնց համար թանկ են պրոլետարիատի շահերը, բոլոր շահագործիկներին, ճշմարիտներին, հարածվածներին, բոլոր նրանց, որոնք ուզում են իսկական ազատություն, եղբայրություն ու հավասարություն, հանախաբեկ սոցիալիզմի դրոշմը բարձր բռնած պրոլետարիատի կուսակցության շուրջը-ընդդեմ ճնշումների, ընդդեմ կապիտալիստների, ընդդեմ հակահեղափոխության»: (Սու. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 203-205):

12. «Մեքազրությունից» (օգոստոսի 16-ին) ծանոթագրությունը Շահումյանը գրել է «Սոցիալ-դեմոկրատ» թերթի նույն համարում հրատարակված Ալ. Մյանսիկյանի «Պրոլետարիատն ու բուրժուազիան հեղափոխության մեջ» հոդվածի կապակցությամբ:

Շահումյանը բարձր է գնահատում Ալ Մարտունուն (Մյանսիկյանին) և ողջունում է նրան, որը «տարիներ առաջ լինելով ՄԻԲՀ կազմակերպության անդամ,- մեկն էր այն սակավաթիվ մեծամասնական ընկերներից, որոնք հավատար Խանդով և անձուրացությանը սոցիալիստական աշխատանք էին վաղում թե հայ և թե ռուսական պրոլետարիատի շարքերում»:

Շահումյանը նշում է, որ ընկերները Մյանսիկյանին լավ են հիշում և ուրախվում է համարում, որ «ընկ. Մարտունին հեռավոր հյուսիսում աշխատել է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի շարքերում և այսօր մեզ հետ է»: (Սու. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 211):

ԲԱՔՎՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՍՈՎԵՏՆԵՐԻ ՄԻՎՎՈՐՈՒՄԸ

Շահույթները իր համախոհ ընկերների հետ շարունակում էր լարված աչիառել: Նա երույթներով հանդես էր գալիս բանվորական ժողովներում, արհմիութենական կազմակերպություններում և ամենուրեք ներկայացնում էր բոլշևիկյան կուսակցության պահանջները՝ պատերազմն ավարտել առանց անկախության, կնքել հաշտություն առանց որևէ պայմանի:

Նա անորով աշխատանք էր տանում 8-ժամյա բանվորական օր հաստատելու, բանվորների աշխատավարձը բարձրացնելու, բանվորական վերահսկողությունն ուժեղացնելու, սկսված պարենային ճգնաժամը կանխելու համար: Նրա ջանքերով ապրիլի 30-ին վերականգնվում է Բաքվի նավթարդյունաբերական բանվորների միությունը:

Միաժամանակ Շահույթները բոլոր միջոցները գործադրում էր Բաքվի սովետում սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան թևի ազդեցությունն ամրապնդելու համար: Մեծապես կարևորում էր մենշևիկ-պաշտպանողականների դեմ մղվող պայքարի ուժեղացումը:

Հրատապ ինդիդ էր գյուղացիության մեջ տարվող աշխատանքի կազմակերպումը, նրան հեղափոխական շարժման մեջ ընդգրկելը: Շահույթների նախաձեռնությամբ Բաքվի կոմիտեի մի շարք անդամներ մեկնում են գյուղ և գյուղացիների մեջ աշխատանք են տանում հողերի բռնագրավման մասին լուր տարածելու համար:

Բաքվում բանվորների պատգամավորների սովետում գերակշռում էին էսէռները, մենշևիկները և դաշնակցականները: Բաքվի սովետին զուգահեռ, այնտեղ գործում էին նաև առանձին-առանձին գինվորների պատգամավորների սովետ և սպանների պատգամավորների սովետ: Այս երկու սովետները 1917 թ. մարտի վերջին միավորվեցին մի ընդհանուր սովետի մեջ: Զինվորների պատգամավորների սովետում մեծամասնությունը կազմում էին էսէռները:

Բաքվի սովետում և զինվորների պատգամավորների սովետում գերակշռություն ունեցող ուժերը, երևելով Շահույթների գլխավորությամբ գործող բոլշևիկների ազդեցությունը թուլացնելու նպատակից, նախաձեռնեցին այդ երկու սովետների միավորումը:

1917 թ. մայիսի 10-ին տեղի ունեցավ այդ միավորումը: Դրա արդյունքում ամրապնդվում է էսէռների, մենշևիկների և դաշնակցականների դիրքը: Միացյալ սովետում նրանք ստանում են 136 տեղ, իսկ 25 բոլշևիկ պատգամավորները իրենց համախոհների հետ ունեին 91 տեղ: Ստանալով ձայների մեծամասնություն, նրանք Շահույթների փոխարեն սովետի գործկոմի նախագահ են ընտրում Բաքվի աջ էսէռների ղեկավար Սաքո Սահակյանին:

ԸՆԹԱՑԻԿ ՄՈՍԵՆՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՅԸ

Բաքվի սովետում տեղի ունեցած փոփոխությունն ավելի է ուժեղացնում մենշևիկ-պաշտպանողականներից տարանջատվելու անհրաժեշտությունը: 1917 թ. մայիսի 15-ին տեղի ունեցած ՌՄԻԿԿ Բաքվի միջըրձանային կոնֆերանսում Շահույթները իր զեկուցման մեջ սուր քննադատության է ենթարկում հեղափոխության, այսպես կոչված «սոցիալիստական» դաշնակիցների՝ բուրժուազիային աջակցելու քաղաքականությունը: Նա դատապարտում է նրանց բուրժուական կառավարության մեջ մտնելու համար: Կոնֆերանսն ընդունում է Շահույթների զեկուցման ոգով կազմված բանաձևը և մերժում է մենշևիկների ներկայացրած բանաձևը:

Սա Բաքվի մենշևիկների բացահայտ պարտությունն էր և նրանք հեռանում են կոնֆերանսից: Կոնֆերանսն ընդունում է Շահույթների առաջարկությունը՝ նախապատրաստվել համաքաղաքային կոնֆերանսի և այնտեղ ամբողջապես խզել կապերը մենշևիկների հետ:

Չայսյած Բաքվի սովետում ունեցած փոքրամասնությունը, Շահույթները շարունակում էր այնտեղ իր երույթներով մերկացնել համաձայնողականների քաղաքականությունը: 1917 թ. մայիսի 16-ին Բաքվի սովետում ունեցած երույթում Շահույթները, նկատի ունենալով ժամանակավոր կառավարությունը, նշում է, որ բուրժուական իրավակարգում չի կարող լինել պրոլետարիատի վստահությունը վայելող կառավարություն: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 207, թ. 3-4):

Նա մատնանշում է, որ ընթացիկ մոմենտի հիմնական հարցը պատերազմի և հաշտության հարցն է: Իսկ ժամանակավոր կառավարության մեջ մտած բուրժուազիայի ներկայացուցիչները մեծապես չահագրգռված են պատերազմը շարունակելու մեջ: Եվ այդպիսի պայմաններում կոալիցիոն մեկնադրության մեջ սոցիալիստների մտնելը Շահույթները գնահատում է որպես «քաղաքական խոշոր սխալ, այնքան տխրալի սխալ, որ նրանք ոչ միայն ժամանակավոր կառավարությունից չպահանջեցին վճռականորեն հրաժարվել ինվերսիալիստական ձգտումներից, այլև իրենք ղեկավարացնելու կոչ են անում անցնել հարձակման և դրանով իսկ կանգնում են սայթաքուն ճանապարհի վրա, թեքվելով դեպի ինվերսիալիզմը»:

Իր երույթի վերջում Շահույթները հայտարարում է. «Որքանով, որ ժամանակավոր կառավարությունը չի հրաժարվում զավթողական քաղաքականությունից՝ չի կարելի նրան վստահություն ցույց տալ»: (Ստ. Շահույթյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 118-119):

Որպես բանաձևի նախագիծ, Շահույթները ներկայացնում վերևում արդեն հիշատակված միջըրձանային կոնֆերանսի ընդունած բանաձևը կոալի-

ցիոն մինիստրության մասին: Սակայն սովետը ձայների մեծամասնությամբ մերժում է Շահումյանի առաջարկությունը:

1917 թ. մայիսի 24-ին տեղի ունեցած Բաբվի սովետի նիստում Շահումյանը դարձյալ հանդես է գալիս պատերազմի և հաշտության հարցի կապակցությամբ և ընդգծում է հետևյալը. «Հաշտությունը, որին մենք ձգտում ենք, չի կարող լինել սեպարատ: Այն պետք է միաժամանակ կնքվի բոլոր ժողովուրդների կողմից անեքսիաների և կոնտրիբուցիաների հրաժարման ակտ բռնաբռնությամբ՝ բոլոր փոքր ազգերի քաղաքական ինքնորոշման իրավունքի ճանաչմամբ և ընդհանուր ֆոնդի ստեղծմամբ հատկապես պատերազմից առժամ Բելգիային, Սերբիային, Հայաստանին և այլոց օգնելու համար»:

Երկրթի ոգով Շահումյանը ներկայացնում է բանաձևի նախագիծ, որը դարձյալ մերժվում է մեծամասնություն կազմող բրկի կողմից:

ՍՈՎԵՏՆԵՐԻ ՀԱՄՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՄԱԳՈՒՍԱՐՈՒՄ

Մայիսի 24-ին Բաբվի սովետի նիստում Շահումյանն ընտրվում է Սովետների Համառուսաստանյան առաջին Համագումարի պատգամավոր: Մայիսի վերջին Շահումյանը մեկնում է Պետրոգրադ և մասնակցում է հունիսի 3-24-ին տեղի ունեցած Համագումարին: Համագումարի 1000 պատգամավորներից 105-ը բողոքիկ էին: Սեծամասնություն էին կազմում էսէռներն ու մենչևիկները:

Համագումարում քննարկվող հարցերի մեջ կարևոր էին ժամանակավոր կառավարության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի, պատերազմի, հաշտության նկատմամբ վերաբերմունքի հարցերը:

Հունիսի 12-ի նիստում Շահումյանը ելույթ է ունենում դեմոկրատական հաշտություն կնքելու մասին և բոլշևիկյան խմբակցության անունից ներկայացնում է իր գրած «Առանց անեքսիաների հաշտության մասին» բանաձևի նախագիծը:

«Կարելի է հաստատված համարել,- ընդգծվում էր բանաձևի նախագծում,- որ ռուսական հեղափոխական դեմոկրատիայի և սոցիալիստական պրոլետարիատի խնդիրների կենսագործումը պահանջում է այժմ ամբողջ ճշգրտորեն և ամենապարզ կերպով սահմանել «հաշտություն առանց անեքսիաների ու ռազմատուգանքների, ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա» ֆորմուլայի բովանդակությունը»:

Ասվածից ելնելով նախագիծն ազդարարում էր.

Ստալին. Համագումարը հայտարարում է, որ վճռակամորեն դեմ է արտահայտվում գերմանական կապիտալիստների հետ սեպարատ հաշտությանը, որովհետև,

ա) այդպիսի հաշտությունը նշանակում է Համաձայնվել գերմանական իմպերիալիստական կառավարության հետ և ենթարկվել նրա կողպտիչ պլաններին:

բ) այդպիսի հաշտությունը Ռուսաստանի պրոլետարիական մասսաների և Անգլիայի, Ֆրանսիայի ու մյուս երկրների պրոլետարիատի մերձեցման և եղբայրական դաշինքի գործում կստեղծի անհավասարակշռություններ:

Երկրորդ. Համագումարն արձանագրում է, որ իմպերիալիստական պատերազմից չի կարելի դուրս գալ նրանով, որ «մի երկրի զինվորները պարզապես հրաժարվեն պատերազմից»՝ միակողմանիորեն «նիզակները գետին խրելով»:

Բոլոր ճնշված ու բռնություններ միացված ազգերի շահերին համընկնող աշխարհի բոլոր պրոլետարների շահերը պահանջում են իմպերիալիստական պատերազմին վերջ տալ կայուն և երկարատև համընդհանուր դեմոկրատական հաշտությամբ:

«Այդպիսի հաշտություն,- ընդգծվում էր բանաձևի նախագծում,- չի կարող լինել իրենց իշխանությունը պահպանած իմպերիալիստների դիվանագետների կնքած հաշտությունը, մի հաշտություն, որը նրանք կձգտեն կնքել՝ մի տեսակի զավթումները փոխանակելով այլ զավթումների հետ, միմյանց տրամադրելով հետամնաց երկրներն ու գաղութները շահագործելու ազատություն, այս կամ այն ձևով վերականգնելով տնտեսական պատերազմի և առևտրական պայմանագրերի քաղաքականությունը՝ հօգուտ բուրժուազիայի, ի հաշիվ աշխատավոր մասսաների»:

Իր ներկայացրած նախագծով Շահումյանը պարզաբանում էր, որ աշխատավորների շահերին համապատասխան կլիներ միայն առանց անեքսիաների ու ռազմատուգանքների, ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա կնքված հաշտությունը:

Երրորդ. Համագումարը հավաստապես մերժում է «այն փորձերը, որոնց նպատակն է «ազգերի ինքնորոշման իրավունքը» մեկնաբանել որպես կիրառելի միայն այն մարզերի նկատմամբ, որոնք պատերազմի ժամանակ դարձան ռազմական գործողությունների ասպարեզ:

Շահումյանն ընդգծում էր, որ ազգերի ինքնորոշման իրավունքը «պետք է կիրառվի ոչ միայն պատերազմող պետությունների գործերի գրաված ու-

ասկան Լեհաստանի, Էլզաս-Լոթարինգիայի, Հայաստանի նկատմամբ, այլև Բոհեմիայի, Խորվաթիայի, Պոզնանի, ինչպես և բոլոր գաղութների՝ Եգիպտոսի, Մարոկկոյի, Ալժիրի, Տրիպոլիտանիայի նկատմամբ»:

Չորրորդ. Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա առանց անեքսիաների ու ռազմատուգանքների հաշտության պայմանը պետք է լինի գործերի ընդհանուր դուրս բերումը Բելգիայից, Լեհաստանից, Սերբիայից, Ռումինիայից, Պարսկաստանից և Միջագետքից:

Այստեղ հարկ է նշել, որ Շահումյանը չի հիշատակում Թուրքիան, որի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանը գրավել էին ռուսական զորքերը: Այս հանգամանքը վկայում է այն մասին, որ Շահումյանը, երևելով արևմտահայերի անվտանգության շահերից, նպատակահարմար չէր համարում ռուսական զորքերի դուրս բերումն Արևմտյան Հայաստանից:

Հետագա էջերում այս իրողության մասին ավելի հանգամանալի անդրադարձ կլինի և կպարզաբանվի, թե ինչու էր Շահումյանը ուզում ռուսական զորքերը պահել Արևմտյան Հայաստանում:

Շահումյանի ներկայացրած բանաձևի նախագիծը վերջում նշում էր, որ համագումարն արձանագրում է, որ «առանց անեքսիաների ու ռազմատուգանքների, ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա կնքվելիք հաշտության իսկական իմաստը՝ որպես Ռուսաստանի սոցիալիստական պրոլետարիատի խնդիր և կոչ է անում բոլոր պատերազմող երկրների հեղափոխական պրոլետարիական տարրերին՝ հանուն այդ խնդրի միավորել իրենց ջանքերը իրենց իմպերիալիստական կառավարությունների դեմ մղվող պայքարում»:

(Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 125-128):

Համագումարը ձայների մեծամասնությամբ դեմ է քվեարկում Շահումյանի ներկայացրած բանաձևին: Դա նշանակում էր, որ համագումարի հսկա-մենչեկիկյան մեծամասնությունը դեմ էր առանց անեքսիաների ու ռազմատուգանքների և ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա հաշտության կնքելուն և արտահայտվում է պատերազմը մինչև վերջ շարունակելու օգտին:

Համագումարի ընթացքում Շահումյանը Լեհիների հետ զրույց է ունենում Անդրկովկասում և Հայաստանում տիրող վիճակի մասին, ներկայացնում է պատերազմի ընթացքում հայ ժողովրդի կրած ծանր կորուստների հետևանքները և իր տեսակետն է հայտնում ստեղծված պայմաններում Հայկական հարցը լուծելու միջոցների մասին:

Հունիսի 22-ին սովետների համագումարում պատերազմի հարցի քն-

նարկման ընթացքում Հանդես է գալիս Լեհիներ: Նա իր ելույթում քննադատում է Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը, անդրադառնում է Հայկական հարցին և դիմելով նիստին ներկա գտնվող այդ կառավարության ղեկավարներին, ասում է հետևյալը.

«Թուրքական ռազմաճակատում կա մեր բանակը, որի թիվը ես չգիտեմ: Ենթադրենք, թե այնտեղ մոտավորապես 3 միլիոն զորք կա: Եթե այդ բանակը, որն այժմ պահվում է Հայաստանում և անեքսիաներ է կատարում, որը դուք հանդուրժում եք, մյուս ժողովուրդներին քարոզելով հաշտություն առանց անեքսիաների, թեև ձեր ձեռքին են ուժը և իշխանությունը, եթե այդ բանակն անցնեք այն ծրագրին, եթե նա Հայաստանը դարձնեք անկախ հայկական հնարապետություն, և այն դրամը, որ մեզից վերցնում են Անգլիայի ու Ֆրանսիայի ֆինանսիստները, տար նրանց, ապա դա ավելի լավ կլինի»: (Վ. Ի. Լեհին, ԵԼԺ, հ. 32, թ. 358-359):

Փաստորեն Լեհինն առաջինն էր, որ անկախ Հայկական հանրապետության ստեղծման միջոցով առաջ է քաշում Հայկական հարցի լուծման խնդիրը:

Համառուսաստանյան սովետների առաջին համագումարն ընտրում է Կենտրոնական գործադիր կոմիտե՝ 256 անդամով: Նրանցից 35-ը բողևևիկյան կուսակցության անդամներ էին, այդ թվում՝ Լեհիներ, Շահումյանը, Ստալինը, Ձերժինսկին, Ա. Կոլլոնտայր և ուրշներ:

ԻՆՉ ԵՆ ՈՒՉՈՒՄ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ

Շահումյանը Պետրոգրադից Բաբու է վերադառնում 1917 թ. Հուլիսի մեկին: Նա սկզբում ՌՄԻԲԿ Բաբվի կազմակերպության միջրջանային կոնֆերանսում գեկուցում է Սովետների առաջին Համագումարի արդյունքների մասին: Իսկ Հուլիսի 5-ին այդ մասին ելույթ է ունենում Բաբվի սովետի նիստում:

Իր ելույթում Շահումյանը պատմում է Համագումարից ստացած տպավորությունների մասին և ընդգծում է, որ այն անցել է «բոլշևիզմի դեմ պայքարելու նշանաբանի տակ»: Այնուհետև նա պատմում է Պետրոգրատում Հունիսի 10-ին բոլշևիկների նշանակված ցույցի մասին, որի դեմ բողոքել են էսէռներն ու մենշևիկները, դա գնահատելով որպես սեպարատ ելույթ: Իսկ գործադիր կոմիտեն Հայտարարել է, թե դա հակահեղափոխական շարժում է, որի թիկունքում թաքնված է անգլիական դեսպան Բյուքենենը: Գործադիր կոմիտեն Հայտարարել է, թե բոլշևիկները իրենց ելույթով օգնում են հակահեղափոխական շարժմանը:

Շահումյանը փաստերով ցույց է տալիս, որ այդպիսի պնդումները ունեցել են բոլշևիկներին վարկաբեկելու նպատակ: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 130-133):

Նույն Հարցի մասին Շահումյանը «Бакинский рабочий» թերթում 1917 թ. Հուլիսի 7-ին հրատարակում է «Հեղափոխության նոր բռնկում Պետրոգրատում», իսկ Հուլիսի 12-ին «Պետրոգրադի իրադարձությունները» հոդվածները: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 134-136; 143-146):

1917 թ. Հուլիսի 9-ին «Бакинский рабочий» թերթում Շահումյանը հրատարակած «Մի անգամ ևս զրպարտիչների մասին» հոդվածում անդրադառնում է բոլշևիկների Հասցեին Հնչած մեղադրանքներին: Նա գրում է. «Ինչի մեջ միայն չի մեղադրվում բոլշևիզմը... Եվ գերմանացիների կողմից կաշառվելու, և դավաճանության մեջ, և պրոպագանդայի մեջ: Ամեն օր բուրժուազիան լրագրերի ու թերթիկների տասնյակ միլիոնավոր օրինակներում Համատրեն և սիստեմատիկաբար ներշնչում է անգլիական մասսաներին, թե բոլշևիզմը պրոպագանդայի արդյունք է»:

«Պրոլետարական մեծ շարժումը, միլիոնավոր բանվորական մասսաների շարժումը,- շարունակում է Շահումյանը,- քաղաքականապես անդրադառնում և անազնիվ մարդկանց երևակայության մեջ պատկերանում է իբրև մի խումբ լենինյանների կամ նույնիսկ ուղղակի գերմանական լրտեսների Հարած բան»:

Այնուհետև Շահումյանն անդրադառնում է նրանց, ովքեր Հասարակական շարժումները բացատրում են պրոպագանդաներով: Եվ որպես այս թեթևամիտ և քաղաքականապես Հանցավոր բացատրության Հեղինակների, Շահումյանը մատնացույց է անում էսէռների կուսակցությանը, որը սովել է Հայտնի պրոպագանդաներ ագեֆներին, բոգոմներին, գապոներին:

«Բուրժուազիան,- ավելացնում է Շահումյանը,- մոռացել է «Ֆինլանդական փողերի» մասին, էսէռական և մենշևիկյան պրոպագանդաների մասին և իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել է բոլշևիզմի վրա»:

Շահումյանը բուրժուազիայի այսպիսի դիրքորոշումը բացատրում է նրանով, որ նա ձգտում է քաղաքականապես խեղդել պրոլետարիատին, որ մանր բուրժուազիան, էսէռներն ու մենշևիկները «երբեք չեն Համարձակվի վճարականապես, ինքնուրույն կերպով դուրս գալ նրա դեմ»:

Շահումյանը տեղեկացնում է, որ բոլշևիկների պահանջով սովետի գործադիր կոմիտեն որոշել է «Նկատի ունենալով մամուլի բուրժուական օրգաններում և Հանրային թերթիկներում տարածված լուրերը, որոնք արատապիտում են բոլշևիկներին, միջոցներ ձեռք առնել գործը Հետաքննելու Համար» և պահանջում է թող դատ լինի, որը լինի ոչ թե Հակահեղափոխական բուրժուազիայի, այլ ազատ Հեղափոխական դեմոկրատիայի դատը:

Շահումյանը պահանջում է ամբողջ Ռուսաստանի Համար պարզել, թե ովքեր են «մասսաների գիտակցությունն օրեցօր թունավորող այդ անազնիվ զրպարտիչները»

Իր հոդվածի վերջում Շահումյանը Հետզրուխյանը Հայտնում է, որ ստացվել է Համառուսաստանյան սովետի գործադիր կոմիտեի բյուրոյի կոչը, որի մեջ ուսական Հեղափոխության Հեղինակավոր օրգանը՝ Պետրոգրադի բանվորների և զինվորների սովետի «ИЗВЕСТИЯ» թերթը գերմանական կառավարության Հետ բոլշևիկների կապի վերաբերյալ լուրերն անվանում է Հարամիտ և պրոպագանդական ու քաղաքացիներին կոչ է անում չհավատալ այդ լուրերին:

Շահումյանն իր ուրախությունն է Հայտնում, որ վերջապես ուշքի է եկել «ռուսական դեմոկրատիայի կենտրոնական օրգանը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 137-140):

Բոլշևիկների Հասցեին Հնչած վերոհիշյալ մեղադրանքներին Շահումյանն անդրադառնում է նաև 1917 թ. Հուլիսի 14-ին «Бакинский рабочий» թերթում հրատարակված «Սոսյալականություն» հոդվածում: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 152-154):

1917 թ. Հուլիսի 14-ին Բաքվի սովետի նիստում էսէշներն ու մենչեկինե-
րը բողջեկիներին մեղադրելով դավաճանության մեջ, Հարձակվում են Շա-
հումայանի վրա, որը իր հրապարակած հոդվածներում ցույց էր տվել ամբողջ
ճշմարտությունը:

Պատասխանելով Հնչած զրպարտություններին, Շահումայանը իր ելու-
թում նորից փաստում է, որ դրանք անհիմն են և Հայտարարում է, թե այն,
ինչ գրել է իր հոդվածում, իր վրա է վերցնում ողջ «պատասխանատվությու-
նը նրա ամբողջ բովանդակության համար»: (Ստ. Շահումայան, նույն տեղը,
Հ. երրորդ, էջ 155-157):

Բողջեկինների Հասցեին Հնչած զրպարտություններին որպես պատաս-
խան, Շահումայանը 1917 թ. Հուլիսի 16-ին «Бакинский рабочий» թերթի
«Ինչ են ուզում բողջեկինները» առաջնորդող հոդվածում նշում է, որ որքան էլ
«Հալածեն մեզ, որքան էլ ստեն ու զրպարտեն մեր Հասցեին,- մեր Համոզ-
մունքների համար մղվող պայքարի դրոշմ,- մեր գաղափարների ու լոզունգ-
ների պրոպագանդան մենք չենք դադարեցնի»:

Միաժամանակ նա նշում է, որ ինչքան էլ խաբեն բանվորներին, ինչքան
էլ խեղաթյուրեն բողջեկինների պահանջների իմաստը, այնքան ավել մեծ
եռանդով կպարզաբանվեն բողջեկինների, հեղափոխական պրոլետարիատի
նպատակները:

Որպես բողջեկինների առաջին և հիմնական նպատակ՝ Շահումայանը համար-
ում է Հետևյալը. «Բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատ-
ների սովետների շուրջը կազմակերպված դեմոկրատիայի ներկայացուցիչնե-
րը խզեն իրենց կապը հակահեղափոխական բուրժուազիայի հետ և իրենց
ձեռքը վերցնեն ամբողջ պետական իշխանությունը»:

«Ռուսաստանին,- ընդգծում է Շահումայանը,- այժմ հարկավոր է ուժեղ իշ-
խանություն: Ուժեղ իշխանությունը խարխվում է ոչ բողջեկինների քննադա-
րությունից և այն կարող է վերականգնվել ոչ ռեպրեսիաներով»:

Շահումայանը փաստում է, որ իշխանության նկատմամբ ժողովրդական
մասսաների վստահությունը խախտվել է նրանով, որ այդ իշխանությանը
մասնակցում է բուրժուազիան, որը ցանկանում է շարունակել ազգություն-
ների ճնշման ցարական հին քաղաքականությունը: Նա միաժամանակ ընդգ-
ծում է, որ այժմ ամբողջ Ռուսաստանի համար պարզ է, որ բողջեկինները իրա-
վացի են, երբ խոսում են իշխանությունը դեմոկրատիային հանձնելու անհ-
րաժեշտության մասին:

Բողջեկինների երկրորդ նպատակը Շահումայանը համարում է պատերազմի

շուտափույթ դադարեցման պահանջը: «Իրա համար,- գրում է Շահումայա-
նը,- հարկավոր է, որ մենք դադարենք անգլիական ու ամերիկյան խնայելիա-
վասների ստրուկները լինելուց, որ մենք հրաժարվենք այն կողոպտչական
պայանաագրերից, որպիսիք նրանց հետ կնքել է Նիկոլայ Ռոմանովը»:

Այնուհետև Շահումայանը նշում է այն իրողությունը, որ երբ էսէշներն ու
մենչեկինները փոխեցին իրենց տակտիկան և սկսեցին հարձակում քարոզել,
բողջեկինները դա փնտրեցին որպես եղբայրասպան պատերազմի շարունա-
կություն և նրանց զգուշացնում էին, որ դրանով խաղաբարտի վրա են դնում
հեղափոխության բախտը:

Բողջեկինների նախազգուշացումները Հաչվի չառանվեցին, ենթարկվեցին
ծաղր ու ծանակի, իսկ այժմ, ինչպես նշում է Շահումայանը, «երբ պարզվում
են անմիտ քաղաքականության հետևանքները, մեղավոր ենք դուրս գալիս
մենք»: Այդպես ստում ու զրպարտում են բողջեկիններին՝ նպատակ ունենա-
լով նրանց դեմ ուղղել «սակավ գիտակից մասսաների զայրույթն ու վրդով-
մունքը»:

Բողջեկինների երրորդ հիմնական նպատակը Շահումայանը համարում է
արտագրության և առևտրի նկատմամբ վերահսկողություն կիրառելու պա-
հանջը:

«Մեր նվաճած ազատությունը,- գրում է Շահումայանը,- դուրս եկավ սպե-
կուլյացիայի ազատություն, ժողովրդական մասսաներին կողոպտելու ազա-
տություն»:

Ուստի անհրաժեշտ է կապիտալիստներին սանձահարելու, արդյունաբե-
րությունը լոկաուտներից ու քաղքայումից փրկելու, երկրի արտադրողակա-
նությունը բարձրացնելու համար «սահմանել դեմոկրատիայի, բանվորների
վերահսկողություն արդյունաբերողների, սպեկուլյացիա անող բանկերի,
առևտրի նկատմամբ»:

Հոդվածի վերջում Շահումայանը դիմում է բանվորներին և կոչ անում
«անտածեցեք այդ երեք հիմնական պահանջների մասին և ասացեք՝ ճիշտ է
արդյոք, որ մենք հեղափոխության թշնամիներ ենք»:

«Թե՞ իրավացի ենք մենք,- ավարտում է իր խոսքը Շահումայանը,- երբ
ասում ենք, որ էսէշները և մենչեկիններն անվճռական, տատանողական,
մանրբուրժուական քաղաքականության արտահայտիչներն են, որ նրանք
վախենում են կապերը խզել խոշոր բուրժուազիայից և արգելակում են մեր
հեղափոխությունը, այն ենթարկում են մահացու վտանգի»: (Ստ. Շահում-
յան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 158-161):

«ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՏԱՆԳԻ ՄԵՁ Է»

1917 թ. Հուլիսի 3-5-ին Պետրոգրադում տեղի ունեցած խաղաղ ցույցին մասնակցած 500 հազար բանվորներն ու զինվորները պահանջել էին ամբողջ իշխանությունը հանձնել սովետներին: Ժամանակավոր կառավարությունը, ստանալով էսէռների ու մենշևիկների աջակցությունը, զնդակոծել էր խաղաղ ցույցի մասնակիցներին:

Շուտով Բաբու են հասնում 1917 թ. Հուլիսի 3-5-ին Պետրոգրադում տեղի ունեցած արյունահեղություն մասին լուրերը: Այդ կապակցությամբ Շահումյանը հրատարակում է վերն արդեն հիշատակված «Պետրոգրադի դեպքերը» հոդվածը, ինչպես նաև Հուլիսի 19-ին «Бакинский рабочий» թերթում «Հեղափոխությունը փտանգի մեջ է» հոդվածը:

Շահումյանը գրում է, որ սկզբնական շրջանում ստեղծվել էր փոստալուծություն այն մասին, որ Հեղափոխական մասսաների ելույթների վրա հենված Համառուսաստանյան սովետների կենտրոնները և գյուղացիների պատգամավորների սովետի գործկոմը իշխանությունը կվերցնեն իրենց ձեռքը:

Բայց, ինչպես նշում է Շահումյանը, սխալ է եղել «կառավարող» կուսակցությունների մասին եղած լավ կարծիքը: «Փոխանակ,- գրում է Շահումյանը,- ընթանալու Հեղափոխական բանվորների ու զինվորների հետ, գործադիր կոմիտեն իր սանկցիան սույն Կերենսկուն՝ ռեակցիոն գործեր կանչելու և Պետրոգրադի շարժումը ջախջախելու համար: Սովետների գործադիր կոմիտեն դրանով իսկ կտրեց այն ճյուղը, որի վրա ինքը նստել էր: Նա վերջնականապես իրեն վարկաբեկեց Հեղափոխական մասսաների աչքում և զրկվեց ամեն մի հենարանից, ամեն մի ուժից»:

Շահումյանը ստեղծված դրությունը գնահատում է որպես սպառնալի, որ Հեղափոխությունը փտանգի մեջ է: Նա Հեղափոխական բանվորներին կոչ է անում հետևել Կերենսկու վարքագծին, որն այնքան հետու է գնացել, որ «այլևս չի կարող վերադառնալ դեմոկրատիայի շարքերը»:

Շահումյանը միաժամանակ դիմում է մենշևիկներին և էսէռների շարքերում գտնվող բոլոր ազնիվ Հեղափոխականներին՝ «իրենց հարց տան, թե ուր է հասցրել մեզ իրենց տակտիկան» և ընդգծում է, որ նրանց «սխալ տակտիկայի շարունակումն անխուսափելի է և մոտ ժամանակներս կհասցնի հավաքահեղափոխության լիակատար հաղթանակին»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 171-174):

Շահումյանն անդրադառնում է բուրժուական «Баку» թերթի տարածած այն զրպարտությունը, ըստ որի Լենինն ու Մ. Գորկին «Հայրենիքի դա

վաճան են և անցել են Գերմանիայի կողմը»: Այդ կապակցությամբ թերթը հրատարակում է «Новая жизнь» թերթում տպագրված Լենինի և Մ. Գորկու նամակները: Այդ նամակները հրատարակվում են նաև Հուլիսի 23-ին «Սոցիալ-դեմոկրատ» թերթում:

Նկատի ունենալով, որ էսէռներին և հետո կադետներին հարող հրատարակախոս Վ. Բուրցևը շատ անվայել դեր է կատարել, առանց ապացույցների և փաստաթղթերի «Հայրենիքի դավաճան» և պրովոկատոր է անվանել մի շարք անվանի և վաղուց ուսու հասարակության իբրև ազնիվ գործիչներ, հայտնի մարդկանց: Բուրցևը գրել է նաև, որ Գորկուն պատկանող «Новая жизнь» թերթը համակրում է բոլշևիկյան ուղղությունը և ծառայում է Գերմանիայի շահերին, եղել է «պարտովորական»:

Գորկին իր նամակում վճռակամորեն պահանջում է հերքում և գրում է, որ իր թերթը «ծառայում է միջազգային դեմոկրատիայի, սոցիալիզմի և մշակութի շահերին: Նա միշտ էլ խիստ կերպով արտահայտվել է ձախից և աջից եկող այն բոլոր փորձերի դեմ, որոնց նպատակն է եղել զրգոել մասսաների մոթ քնազրնները: Նա պատերազմը համարում է համաշխարհային դժբախտություն, եվրոպական մշակույթի մի կառասարոֆա, որ առաջացել է բոլոր երկրների կապիտալիստների ագահությունից:

Կրկնում եմ ձեզ, Բուրցև, որ ինձ մեղադրել «Հայրենիքի դավաճանություն» մեջ կարող է միայն այն մարդը, որը կամ խեղաքար է, կամ անազնիվ:

Հայրենիքը-ժողովուրդն է: Ես այդ ժողովուրդին ծառայում եմ ամբողջ քառորդ դար, և այժմ դուք եք, ողորմելի մարդ, դատում և մեղադրում ինձ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 294):

Շարունակելով մեղկացնել դավաճանության մեջ բոլշևիկներին մեղադրելու մասին հակահեղափոխական ուժերի նյութած սաղոսանքները, Շահումյանը 1917 թ. Հուլիսի 26-ին «Бакинский рабочий» թերթում հրատարակված «Ռեակցիան» հոդվածում նշում է, որ հակահեղափոխությունը գործչունի մեղադրանքների հիմնավոր լինելու հետ, նրան հարկավոր է, թեկուզ ժամանակավորապես, խափանել հակահեղափոխության համար փտանգավոր մարդկանց գործունեությունը, «իսկ հետո թող դատարանն արդարացի մեղադրյալներին և ցույց տա, որ այդ «սովյալները» անհեթեթ են»: Այդ արդարացումն այլևս կարևոր չէ, քանի որ հակահեղափոխությունն արդեն «հասած կլինի իր նպատակին»:

Շահումյանը համոզմունք է հայտնում, որ հակահեղափոխության «ստամբնիցազ երթը» կկանցվի միայն այն ժամանակ, երբ բանվորների և

գյուղացիների պատգամավորների սովետները Հեռանան Հակահեղափոխությունից և իրենց ձեռքը վերցնեն իշխանությունը: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 187-188):

Եվ Շահումյանը նկատի ունենալով 1905 թ. «անհաջող ապստամբությունը», հարցնում է. «Միթե՞ մեզ փնձակված է տեսնել Հեղափոխության պարտությունը նաև 1917 թվականին»: Շահումյանը բերում է շարունակվող պատերազմի մասին կադետական կուսակցության պարագլուխներից մեկի՝ Միլյուկովի հետևյալ խոսքերը. «Կամ Հեղափոխությունը կկանխ այս պատերազմին, կամ պատերազմը կկանխ Հեղափոխությանը» և ընդգծում է, որ ինպե՞րիափառների առաջնորդը և Հեղափոխության երդվյալ թշնամին «բռուն կերպով ցանկանում է պատերազմը շարունակվի, որ այն կոչ տա իրեն ատելի Հեղափոխությունը»:

Շահումյանը կոչ է անում՝ ամեն ինչ անել Միլյուկովի հույսերը ձախողելու համար, իսկ դա հնարավոր է միայն շարունակելով Հեղափոխությունը, հասնել հաղթանակի և այդ միջոցով վերջ տալ եղբայրատաան պատերազմին, պատերազմ, որն ավերել է երկրները, կործանել է միլիոնավոր ընտանիքներ, որը վայրենացրել է բարձրը, կրախի է մատնել ամբողջ Եվրոպայի մշակույթը: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 175-177):

ՆԱՎԹԱՀԱՆՔԵՐԸ ԲԱՔՈՒ ԶԱՂԱՔԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Դեռևս 1917 թ. փետրվարին Բաքվի բոլշևիկներն առաջ էին քաշել քաղաքի հետ նավթահանքերի չրջանների միացման հարցը, որով հնարավոր կլիներ ապահովել նավթահանքերի բանվորների մասնակցությունը քաղաքային դումայի ընտրություններին: Սակայն Բաքվում գործող բուրժուական կուսակցությունները և նրանց միացած մյուս ուժերը հասկանում էին, որ այդ միացմամբ Բաքու քաղաքում կուժեղանար բանվորների աջակցությունը վախերից բոլշևիկյան կուսակցությունը, ցույց են տալիս համառ դիմադրություն և ձախողում միացումը:

Կարևորելով վերոհիշյալ միացման հարցը, 1917 թ. Հուլիսի 26-ին Շահումյանը Բաքվի սովետի գործադիր կոմիտեի նիստում նորից այդ մասին առաջադրում է բանաձև: Գործադիր կոմիտեն ձայների մեծամասնությամբ քվեարկում է Շահումյանի բանաձևի օգտին, որտեղ նշվում էր, որ նավթահանքերի չրջանների բացահայտ հայտարարված պահանջը գործադիր կոմիտեն միանգամայն օրինական և օգտակար է համարում դեմոկրատիայի չարհերի տեսակետից և որոշում է նշված չրջանները միացնել քաղաքին:

Միաժամանակ ընտրվում է հանձնաժողով, որը 3 օրում պետք է պարզեր միացվող չրջանների սահմանները և ընդունված որոշումը տեխնիկապես իրականացնելու պայմանները: Նաև խնդիր էր դրվում, որպեսզի գործադիր կոմիտեն այդ միացումը իրականացնի մինչև քաղաքային դումայի ընտրությունները: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 191):

Հուլիսի 29-ին Բաքվի սովետի գործադիր կոմիտեի նիստում ընդունվում է Շահումյանի ներկայացրած նոր բանաձևը, որով առաջարկվում է Բաքու քաղաքին անհատալ միացնել Սաբունչիի, Բախախանի, Ռոմանիի, Սուրախանի, Բիբի-Հեյրաթի և Բելոգորոյյան տարածությունները: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 192):

Այս բանաձևն Անդրկովկասյան հատուկ կոմիտեում պաշտպանելու նպատակով գործադիր կոմիտեն պատգամավորներ է ընտրում Շահումյանին և Մ. Մանդելշտամին:

Անդրկովկասյան հատուկ կոմիտեն օգոստոսի սկզբին քննարկում է վերոհիշյալ հարցը: Կոմիտեի նիստում միացմանը վճռականորեն դեմ է արտահայտվում Ա. Չխենկելին, նկատելով, որ այդ միացումը Բաքվի նավթարդյունաբերական պրոլետարիատի պահանջն է: Այդ մտավախությամբ էլ Անդրկովկասյան հատուկ կոմիտեն մերժում է նավթահանքերի չրջանները Բաքվին միացնելու որոշումը: Նավթահանքերը Բաքու քաղաքին միացվեցին միայն 1918 թ. հունվարին:

1917 թ. օգոստոսի 11-ին Բաքվի հասարակական կազմակերպությունների գործադիր կոմիտեում Շահումյանը ներկայացնում է հաշվետվություն թիֆլիս կատարած ուղևորության մասին և նշում, որ Վերմիչևն ու մուսավաթական կուսակցության ղեկավարներից Աչուրովը «փորձում էին վախեցնել Անդրկովկասյան հատուկ կոմիտեին մուսուլման բնակչության կողմից բողոքների և էքսցեսների հնարավորությամբ»:

Օգոստոսի 18-ին «Бакинский рабочий» թերթում Շահումյանը գրում է, որ Անդրկովկասյան հատուկ կոմիտեում Վերմիչևը միացման հարցը ձախողելու համար բոլոր միջոցները գործադրելուց հետո, նիստի մասնակիցների ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, «թե այդ թերթում ինչ լեզվով են խոսում իր հասցեին»: «Իսկ այնտեղ,- տեղեկացնում է Շահումյանը,- ի միջի այլոց, ասված էր. «Եթե Բաքվի բանվորներն ավելի եռանդուն ու վճռականորեն պահանջեին նավթահանքերի միացումը, Անդրկովկասյան հատուկ կոմիտեն չէր համարձակվի մերժել նրանց»:

«Ես իմ կողմից,- ավարտում է Շահումյանը,- այս առթիվ պ. Վերմիչևին

կհաղորդեմ հետևյալը: Երբ նա «Бакинский рабочий»-ի այդ քաղվածքը կարդում էր Անդրկովկասյան հատուկ կոմիտեի անդամներին, ես ինձ չզսպեցի և իմ կողքին նստած ընկ. Տեր-Առաքելովին ասացի. «Վերմիշեն ատանց պրոպագանդայի և մատուցությունների ապրել չի կարող...»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 216):

Մայրամասերը Բաբու քաղաքին միացնելու հարցի մասին Շահումյանը ելույթ է ունենում նաև օգոստոսի 31-ին Բաբվի քաղաքային դումայում: Նա հիշեցնում է, որ հունիսի սկզբին Պետրոգրադում եղած ժամանակ, Բաբվի սովետի հանձնարարությամբ Սաքո Սահակյանի հետ միասին նավթահանքերի չրջանները Բաբվին միացնելու համար միջնորդություն են հարուցել ժամանակավոր կառավարության առջև: Ի պատասխան այդ միջնորդության, ներքին գործերի մինիստրությունը պատասխանել է, որ սույնպե՛ս հարցը կարելի է լուծել տեղում՝ քաղաքային ինքնավարության կողմից:

Այնուհետև Շահումյանը հանգամանորեն հիմնավորում է նավթահանքերի չրջանները Բաբվին միացնելու անհրաժեշտությունը և ընդգծում է հետևյալը.

Առաջին. Նավթահանքերի չրջաններում ապրող 120 հազար բնակիչների զրկված են ինքնավարության մարմիններից և դրա «հետևանքով բնակչությունն էականորեն տուժում է հակասանիտարական պայմաններից, բնակարանների, ճանապարհների, փողոցների, տրամվայի բացակայությունից և այլն: Այնտեղ չկա ոչ մի մշակութային հիմնարկություն: Նավթահանքերի չրջանները կարիք ունեն ինքնավարության մարմինների»:

Երկրորդ. Քաղաքի և նավթահանքերի չրջանների միջև եղած տնտեսական սերտ կապն արտահայտվում է նրանով, որ բոլոր ձեռնարկությունների գլխավոր գրասենյակները, արդյունաբերական միություն կենտրոնական կազմակերպությունը գտնվում են քաղաքում: Բացի դրանից չրջաններում և քաղաքում գործող կուտակցությունները միաձուլված են միասնական կազմակերպությունների մեջ: Բաբվում են գտնվում նաև մշակութային հիմնարկությունների կենտրոնական բաժանմունքները:

Երրորդ. Նկատի ունենալով նավթահանքերի չրջանների նյութական հարատույնները, անհրաժեշտ է դրանք միացնել քաղաքին, որով զգալիորեն կբարելավվի քաղաքի ֆինանսական դրությունը, մասնավորապես, որ քաղաքն ունի 40 միլիոն ռուբլու պարտք:

Չորրորդ. Ցենզի միջոցով ընտրված նախկին քաղաքային դումայում խժականության բուրժուական-ազգային շահերի պաշտպանության հետևանքով

հաճախ բախումներ էին տեղի ունենում տարբեր ազգությունների ներկայացուցիչների միջև, որից տուժում էր քաղաքային դեմոկրատիան: Դուման դարձել էր ազգամիջյան պայքարի օջախ: Բաբվի և նավթահանքերի դեմոկրատիայի մասնակցությամբ «այդ ամենը չի վնի և կհոխվի Բաբվի հասարակական կյանքի ընդհանուր բնույթը»:

Շահումյանը նշում էր, որ այդ ամենի արդյունքով «պայքարը կընդունի ավելի բարձր, դասակարգային ձև և հեղափոխության պահանջն է՝ ունենալ դեմոկրատական դումա»: Իսկ դեմոկրատական դումային կարելի էր հասնել «միայն արդյունաբերական դեմոկրատիայի մասնակցությամբ»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 192):

ԲԱՆԱՎԵՃ ՎԵՐՄԻՇԵՎԻ ՀԵՏ

Պետրոգրադում տեղի ունեցած հուլիսյան դեպքերից հետո օրակարգից հանվում է «Ամբողջ իշխանությունը սովետներին» լուրուզը: Հակահեղափոխությունը տոնում էր իր հաղթանակը: Մենչևիկներն ու հսկոները կամավոր կերպով իշխանությունը հանձնում են կաղեխներին: Սովետները գրկվում են ժամանակավոր կառավարության վրա ազդելու հնարավորությունից: Մանր բուրժուազիան ավելի արագորեն է չրջվում դեպի ուսանողների և փրկությունը որոնում է խոշոր բուրժուազիայի մոտ:

Ստեղծված իրավիճակը Շահումյանը վերլուծում է 1917 թ. օգոստոսի 11-ին «Бакинский рабочий» թերթում հրատարակված «Արդի մոմենտը» հոդվածում և եզրակացնում. «Մանր բուրժուազիայի քաղաքականությունը բոլոր տեսակետներից սնանկ դուրս եկավ: Խոշոր բուրժուազիայի տիրապետությունը միայն նոր հեղափոխության է հասցնելու»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 206-209):

Հուլիսյան դեպքերից հետո ժամանակավոր կառավարության հակահեղափոխական քաղաքականությունը պաշտպանող ուժերը, նրանց հետ նաև Բաբվի բուրժուական մամուլը սկսում են ավելի կոպիտ միջոցներով հարձակվել Շահումյանի դեմ: Առավել եռանդով էին գործում Բաբվի մենչևիկների ստաջնորդ Մ. Սադովսկին և «Баку» թերթի ոչ անհայտ խմբագիր, Շահումյանի վաղեմի հակառակորդ Բ. Վերմիշեր:

Պատասխանելով Սադովսկու հորվածին, որտեղ նա Շահումյանին մեղադրում է Համառոտաստանյան սովետների առաջին համագումարի մասին ճանաչությունը թաքցնելու, այդ համագումարում էսէտների և մենչևիկների վարքագիծը կիղծելու մեջ, Շահումյանը 1917 թ. հուլիսի 12-ին

«Известия Бакинского Совета» թերթում գրել է Հետևյալը, «Ինչ վերաբերում է ինձ, ապա ես գտնում եմ, որ պ. Սաղոմակին շատ հետու է ճշմարտության սիրուց, և եթե ես որոշել եմ բացատրվել այդպիսի մի պարտնի հետ, ապա ոչ թե նրա նկատմամբ տածած Հարգանքից, այլ միայն «Известия»-ի բազմաթիվ ընթերցողների նկատմամբ տածած Հարգանքից, որոնց նա կարող է մոլորության մեջ պցել»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 148-151):

«Бакинский рабочий» թերթը հրատարակել էր 1905 թ. օգոստոսի 29-ին Թիֆլիսում տեղի ունեցած արյունահեղության մասին: Այդ օրը Թիֆլիսի քաղաքային վարչության շենքում 2500 մարդ Հավաքվել էին ժողովի: Հարվաքվածները չեն ցանկանում լսել Բուլիդինյան դռնայի մասին լիբերալ խոսակցությունները և պահանջում են քննել ժողովրդի կարիքների, ընթացիկ հեղափոխական իրադարձությունների և կառավարության գործակալների կողմից Բաքվում, Շուշում, Ելիզավետպոլում ու այլ քաղաքներում հրահրված հայ-թուրքական ընդհարումների հարցերը:

Իշխանությունը միջոցներ է ձեռնարկում հավաքվածների հետ հարկաբար տեսնելու համար: Ժողովի սկսվելուց կես ժամ չանցած, քաղաքային վարչության շենքը շրջապատում են 500 կազակներ և ոստիկաններ: Նրանք ձևականորեն առաջարկում են «ցրվել», որին ժողովի մասնակիցները պատասխանում են մերժմամբ: Կազակները և ոստիկանները ներխուժում են շենք, փակում բոլոր ելքերը, հանգցնում լույսերը և կրակ բացում անգին ժողովականների վրա, որի հետևանքով սպանվում են 60, վիրավորվում, 300 մարդ: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. առաջին, էջ 427-428):

Այս հրատարակման հետ միասին «Бакинский рабочий» թերթը Կիեցնում է այդ ժամանակ Թիֆլիսի քաղաքագլուխ Վերմիչևի ճառը Թիֆլիսի քաղաքային դումայում, նշելով, որ նրա դեմ Թիֆլիսի մենչևիկների կազմակերպությունը սպանիչ մեղադրանք էր ներկայացրել, որից հետո Վերմիչևը առկալված է եղել փախչել Թիֆլիսից:

«Бакинский рабочий» թերթի այս հաղորդման դեմ Վերմիչևը իր «Баку» թերթում հրատարակում է «Հարձակում անկյունից» հոդվածը, որ տեղ նշում է, թե վերջերս գրել է «Ոչ վաղ անցյալից (1905 թ. օգոստոսի 29-ը Թիֆլիսի քաղաքային դումայում)» ուսեներին գրքույկը, որով արդարանում է և չի ընդունում իր հասցեին հնչած մեղադրանքը, գրելով, թե այդ գրքույկից հետո իրեն ոչ ոք չի առարկել, հետևաբար «իս պարզաբանումներն անառարկելիորեն հաստատեցին իմ անմեղասկզբությունը օգոստոսի 29-ի իրադարձություններին»:

Այս ամենն էլ նկատի ունենալով Շահումյանը 1917 թ. Հուլիսի 16-ին «Бакинский рабочий» թերթում հրատարակած «Պրն Վերմիչևի կեղծ գայրույթը» հոդվածում գրում է. «Ոչ, պ. Վերմիչև: Ինչպես արտակարգության դրոշմը ձեռնից հանված չէ: Մինք կրդարենք վկայակոչել այդ իրադարձությունները և նրանցում ձեր կատարած դերը, երբ դուք ձեզ արդարացնեք Թիֆլիսում: Երբ Թիֆլիսի մենչևիկները ձեր փաստարկները գտնեն համոզիչ և ձեզնից հանեն մեղադրանքը, կամ որևէ հեղինակավոր հիմնարկություն (ստենք՝ դատարանը) անհիմն ճանաչի ձեր դեմ ուղղված մեղադրանքները»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 162-163):

Չբավարարվելով Շահումյանի պատասխանից, Վերմիչևը «Баку» թերթում հրատարակում է Շահումյանին ուղղված բաց նամակ, որով մեղադրում է Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական այն խմբին, որը 1905 թ. օգոստոսին դեկավրել էր Թիֆլիսի քաղաքային դումայում տեղի ունեցող միտինգները, որ այդ խմբի տակտիկան իրեն գրկել է «այդ իրադարձությունների ընթացքի վրա ազդելու որևէ հնարավորությունից», որոնք հանգեցնում են օգոստոսի 29-ի զնդակոծության, և որ այդ խումբն ամեն ինչ արել է, որպեսզի իրեն «որպես քաղաքագլխի գրկի դումայում հավաքված մարդկանց աչքում ունեցած ամեն մի հեղինակությունից»:

Վերմիչևը ժխտում է իրեն ներկայացված մեղադրանքները, դրանք համարում է սուտ և պահանջում է, «թե մեզանից ով է իրավացի՝ ես, թե «Бакинский рабочий» թերթը հանձին ձեզ, թող որոշի միջկուսակցական դատարանը»: Վերմիչևը պահանջում է, որ այդ միջկուսակցական դատարանը կազմված լինի Բաքու քաղաքի կուսակցությունների ներկայացուցիչներից, բացառությամբ սոցիալ-դեմոկրատիայի այն խմբակցության, որին ինքը ներկայացրել է մեղադրանք:

1917 թ. Հուլիսի 21-ին «Бакинский рабочий» թերթում Շահումյանը հրատարակում է իր պատասխանը ուղղված Վերմիչևին: Նա հիշեցնում է, որ մենչևիկների Թիֆլիսի կազմակերպությունը «սրանից 12 տարի առաջ հրատարակավ ծանր մեղադրանք է ներկայացրել Վերմիչևին, որն անցած ժամանակաշրջանում իրեն չի արդարացրել»:

«Այնպիսի մի դատ,- գրում է Շահումյանը,- որպիսին այժմ դուք առաջարկում եք ինձ, դուք միշտ էլ կարող էիք կազմակերպել ձեզ մեղադրողների դեմ, բայց դուք այդ չարիք»:

«Մինք,- չարոճակում է Շահումյանը,- չենք խոստովում դատից, մենք պատրաստ ենք պատասխան տալ բոլորի առջև այն բանի համար, ինչ մենք գրում ենք մեր թերթում»:

Շահումյանը հիշեցնում է, որ Թիֆլիսի մենչեկիներն են Վերմիշևին ներկայացրել մեղադրանք, որը մինչև այժմ Հանված չէ: Ուստի այդ մեղադրանքը կարող է ստուգվել միմիայն Թիֆլիսում և ոչ թե Բաքվում:

Շահումյանը Վերմիշևին խորհուրդ է տալիս. «Ձեզ պատեպատ մի խիթք եթե ուզում եք դատ լինի, պարզվի ճշմարտությունը... եթե որևէ մեկին ցանկանում եք պատասխանատվության կանչել, որևէ մեկին ցանկանում եք մեղ կացնել ստի մեջ, դուք պետք է դիմեք նրանց, ովքեր բացեիբաց բարձրաձայն, հրապարակայնորեն առաջադրել էին ձեզ իրենց մեղադրանքը»:

Մատնացույց անելով Թիֆլիս դիմելու ճանապարհը, Շահումյանը վերջում ավելացնում է, որ իր և Վերմիշևի միջև ավելորդ է «ամեն մի վիճաբանություն այդ հարցի շուրջը»: (Մտ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 178-180):

Սակայն Վերմիշևը, անտեսելով Շահումյանի առաջարկությունը Թիֆլիս դիմելու մասին, շտապում է դիմել Բաքվի քաղաքական կազմակերպություններին պատվով դատարանի համար ներկայացուցիչներ առաջադրելու համար:

Այս կապակցությամբ Շահումյանը 1917 թ. հուլիսի 26-ին հարկ է համարում նորից հանդես գալ «Бакинский рабочий» թերթում, հրապարակելով «Ք-ն Վերմիշևին» ուղղված խոսքով: Շահումյանը նորից հիշեցնում է, որ Վերմիշևին խորհուրդ է տվել Բաքվում պատվով դատարանը ոչ մի իմաստ չունի և պետք է գնալ Թիֆլիս:

Շահումյանը նորից է Վերմիշևին խորհուրդ տալիս. «...Եթե դուք ցանկանում եք մեզ դատի տալ, խոնարհաբար խնդրում ենք, եթե դուք այդ դատը սկսեք Թիֆլիսում, ս.դ. Թիֆլիսի կազմակերպության հետ միասին կարող եք կանչել նաև մեզ: Որքան էլ տհաճ է մեր ապրած ծանր ու պատար խանաստու ժամանակաշրջանում դատի մեջ մտնել ձեզ հետ, մենք չենք հրաժարվի ընդունել այդ դատը և տալ ձեզ այն բավարարությունը, որ դուք պահանջում եք»:

Եվ դա այն պատճառով, բացատրում է Շահումյանը, որ դատը Թիֆլիսում. «ի տարբերություն այստեղ ձեր առաջարկած դատի, այնուամենայնիվ, կունենա հասարակական որոշ նշանակություն. այն որոշ չափով կպարզի ձեր դեմքը՝ որպես կարեւորական հասարակական գործչի»: (Մտ. Շահումյան, նույն տեղը, էջ 189-190):

Իհարկե, Վերմիշևը վախեցավ և խուսափեց կատարել Շահումյանի խորհուրդը, որովհետև Թիֆլիսում դեռ կենդանի էին այն մարդիկ, որոնք մեղադրում էին Վերմիշևին և ականատես էին եղել Վերմիշևի մեղաակցությունը:

Բայց Վերմիշևը չէր հանգստանում, իր թերթի էջերը շարունակում էր լցնել Շահումյանի հասցեին նորանոր գրապարտություններով:

1917 թ. օգոստոսին ձախողվել էր Ժամանակավոր կառավարության ձեռնարկած հարձակումը, որ նա կազմակերպել էր Ռիզայի ռազմաճակատում: Այս կապակցությամբ օգոստոսի 18-ին «Баку» թերթը գրել է հետևյալը. «Պպ. շահումյանները կարող են գոհ լինել, նրանց պրոպագանդան և կոչերը մի ինչ-որ էլեկտրական հոսանքով հաղորդվում են գնդերին, որոնք ինքնազույգ թողնում են դիրքերը»: Թերթը պահանջում էր ոչ թե մահապատժի ենթարկել զինվորներին, այլև «պպ. շահումյաններին»:

Պատասխանելով այդ գրապարտությանը, Շահումյանը գրում է. «Այսպես ուրեմն, «Бакинский рабочий»-ի պրոպագանդան «մի ինչ-որ էլեկտրական հոսանքով» հաղորդվում է Ռիզայի ռազմաճակատ, և գերմանացիները ձեռքում են այն: Այնտեղ մահապատժի են ենթարկում խեղճ զինվորներին, այնինչ այդ մահապատժին արժանի են «պպ. շահումյանները»: Ա. Ք, դուք խղճուկ գրապարտիչներ»: (Մտ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 215):

ՄՈՍԿՎԱՅԻ ԽՈՐՀՐԳԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1917 թ. հուլիսի վերջին տեղի էր ունեցել ՌՄԻԲ(բ)Կ 6-րդ համազումարը, որին Շահումյանը չի մասնակցել Կովկասում տիրող լարված իրավիճակի պատճառով: Համազումարում Շահումյանը իր բացակայությամբ ընտրվում է կուսակցության կենտկոմի անդամ: 1917 թ. օգոստոսի 5-ին կենտկոմի պլենումը Շահումյանին ընտրում է կենտկոմի նեղ կազմում:

1917 թ. օգոստոսի 12-ին Ժամանակավոր կառավարությունը Մոսկվայում հրավիրել էր պետական խորհրդակցություն, որը երկրում հեղափոխական շարժումները ճնշելու համար պետք է մշակեր միջոցառումներ:

Բնականաբար խորհրդակցությանը բողոքիկները չէին մասնակցում և դրա բացման օրը կազմակերպում են գործադուլ 400 հազարից ավելի բանվորների մասնակցությամբ: Այս կապակցությամբ 1917 թ. օգոստոսի 18-ին Շահումյանը «Бакинский рабочий» թերթում հրապարակում է «Մոսկվայի խորհրդակցությունը» հոդվածը, որի սկզբում նա ներկայացնում է խորհրդակցությունում եղած երկյթները:

«Հեղափոխական դեմոկրատիայի» առաջնորդներ Մերթելու և Ջիսիձեի երկյթները գնահատելով որպես «լիակատար չիտիվածություն» արտահայտություն, Շահումյանը նշում է, որ դրա փոխարեն ավելի հաստատուն է հնչել գեներալների Կոռնիլովի, Կալեդինի ու Ալեքսեևի ձայնը, որոնք քննադա-

տում են սովետների քաղաքականությունը, պահանջում ցրել կոմիտեները և ուժեղացնել հրամանատարական կազմի իշխանությունը:

Գեներալները նշում են, որ բանակի կազմալուծումը, ռազմաճակատում կրած պարտությունները բանակում տարվող պրոպագանդայի և դեմոկրատական սկզբունքների կիրառման հետևանք են: Նրանք պահանջում են բանակում արգելել միտինգներն ու ժողովները: Ինչպես ռազմաճակատում, այնպես էլ թիկունքում վերացնել բոլոր կոմիտեներն ու սովետները: Գեներալները պահանջում են պատերազմ մինչև հաղթական վախճան: Իսկ գեներալ Կոռնիլովը հպարտությամբ է նշում, որ ռազմաճակատում իր առաջարկությամբ է մտցվել մահապատիժ:

Շահումյանը նաև նշում է, որ գեներալները պահանջում են բանակը քաղաքականությունից դուրս լինի, բայց միաժամանակ «ցանկանում են, որ իրենք որոշեն երկրի ամբողջ քաղաքականությունը, երազում են ռազմական դիկտատուրայի մասին»:

Բայց, ինչպես նշում է Շահումյանը, «խորհրդակցությունն իրեն զգում է հրաբխի վրա»: «Մոսկվայի բանվորները,- շարունակում է նա,- իրենց գործադուլներով ու բողոքներով փչացրին խորհրդակցության նախաձեռնողների ամբողջ երաժշտությունը...: Մոսկվայի բանվորները իրենց մոտ եկած հակահեղափոխականներին բացահայտ մարտահրավեր նետեցին... և բարձր պահեցին հեղափոխության դրոշմը»:

Հորվածի վերջում Շահումյանը նշում է, որ «այսօր արդեն ակնհայտ է Մոսկվայի բանվորները, Պետրոգրադի հեղափոխական բանվորների հետ միասին, ամբողջ Ռուսաստանի սոցիալիստական պրոլետարիատի հետ միասին, առանց մարտի, առանց դաժան մարտի չեն հանձնի այն դիրքերը, որ իրենք նվաճել են հեղափոխության ընթացքում»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 212-214):

Մոսկվայի խորհրդակցությանն է նվիրված նաև օգոստոսի 25-ին հրատարակված Շահումյանի «Սկավորւմ է» հոդվածը:

«ՊԱՀԱՆՁԵՑԵՔ ՍՈՎԵՏԻ ՎԵՐՆՏՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

1917 թ. Պետրոգրատում գեներալ Կոռնիլովի խռովության կապակցությամբ օգոստոսի 30-ին Բաքվի սովետի նիստում քննարկվում է հակահեղափոխության դեմ մղվող պայքարի հարցը: Բողջեիկներին և ձախ սոցիալիստ-հեղափոխականներին հաջողվում է անցկացնել իրենց բանաձևը:

Այդ բանաձևը դատապարտում էր գործադիր կոմիտեի համաձայնողական քաղաքականությունը և առաջարկում էր ստեղծել հակահեղափոխության դեմ պայքարի ինքնուրույն բյուրո, որն անկախ էր լինելու հասարակական կազմակերպությունների գործադիր կոմիտեից:

Հաջորդ օրը, սեպտեմբերի 1-ին, էսէռա-մենչևիկյան մեծամասնությունը հրավիրում է սովետի նոր նիստ, որտեղ գործադիր կոմիտեն ներկայացնում է իր հրաժարականը և պահանջում է վերանայել վերահիշյալ բանաձևը:

Այս կապակցությամբ 1917 թ. սեպտեմբերի 3-ին «Бакинский рабочий» թերթում Շահումյանը հրատարակում է «Պահանջեցե՛ք սովետի վերընտրություններ» հոդվածը:

Շահումյանը տալիս է Բաքվի սովետի գնահատականը, գրելով հետևյալը. «Զարմանալի խղճուկ տեսարան է ներկայացնում բանվորների ու զինվորների պատգամավորների Բաքվի սովետը: Թ՛վում է, որ այսպիսի խոշոր արդյունաբերական կենտրոնում մենք պետք է ունենայինք լավագույն, առավել հեղափախական սովետներից մեկը: Բայց պակ'դ: Մենք չենք կարող պատկերացնել ավելի օպորտունիստական և ավելի անկենդան հաստատություն, քան մեր սովետն է»:

Այնուհետև Շահումյանը դատապարտում է գործադիր կոմիտեի վարքագիծը, որն օգուվելով ստեղծված սուր քաղաքական մոմենտից, սպառնում է հրաժարական տալ: Նա խնդիր է դնում բանվորներին ու զինվորներին պարզաբանել, որ Բաքվի սովետը կործանվում է, հարկավոր է նրան փրկել, բուժել ու առողջացնել: Իսկ դա հնարավոր է միայն վերընտրությամբ:

Հայտնելով, որ գործադիր կոմիտեն արգելակում է վերընտրությունները, Շահումյանը խնդիր էր դնում. «Հարկավոր է, որ բանվորները ներքեից պահանջեն և հասնեն վերընտրությունների»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 237-239):

Նոր ընտրությունների անհրաժեշտության մասին Շահումյանը սեպտեմբերի 6-ին ելույթ է ունենում Բաքվի սովետի նիստում: Նա ընդգծում է, որ նոր ընտրությունները պետք է լինեն դեմոկրատական: Դեմոկրատիզմի բացակայության պատճառով բանվորները հնարավորություն չեն ունեցել ետ կանչել «իրենց համար անցանկալի պատգամավորներին»:

Այնուհետև Շահումյանը խոստում է այն մասին, որ վերընտրություններ անցկացնելու և նախագր մշակելու համար կազմված հանձնաժողովը (որի կազմում ընտրվել էր նաև Շահումյանը) դեռևս համաձայնության չի եկել և այդ պատճառով չի հասցրել մշակել պատրաստի նախագիծ:

Շահումյանը հայտարարում է, որ Բաբայի սովետի պաշտոնական քաղաքականությունը մասսաներին չի բավարարում, նա կորցրել է իր հեղինակությունը և առաջարկում է վերընտրություններն անցկացնելու հետևյալ կարգը:

Առաջին. Յուրաքանչյուր ձեռնարկություն, որտեղ աշխատում է 500 մարդ, ինքնուրույն ընտրում է մեկ պատգամավոր: Մանր ձեռնարկությունները միավորվում են պատգամավոր ընտրելու համար:

Երկրորդ. Բաղաբում արհեստակցական միությունները հրավիրում են սույլ պրոֆեսիայով բոլոր աշխատողներին, որոնք ընտրում են իրենց պատգամավորին:

Երրորդ. Չինվորականներից ընտրությունները պետք է կատարվեն յուրաքանչյուր 500 մարդուց մեկ պատգամավոր: Փոքրաքանակ գործանակը միավորվում են:

Շահումյանն առաջարկում է փոխել նաև նախկին կարգը, երբ 75 հազար բանվորներն ալեյի քիչ պատգամավոր էին ընտրում, քան 18 հազար սինվորները, իսկ սպաները մեկ պատգամավոր էին ընտրում յուրաքանչյուր 10 մարդուց: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 249-250):

Սեպտեմբերի 27-ին Շահումյանը գրում էր, որ արդեն Բաբայի սովետում նշանակված վերընտրությունները «հսկայական մեծամասնություն կռան բոլշևիկներին և ինտերնացիոնալիստ-էսէռներին»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 256):

ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բաբայի սովետի սեպտեմբերի 6-ի նիստում Շահումյանն ընտրվում է որպես սովետի ներկայացուցիչ Պետրոգրադում դեմոկրատական խորհրդակցությանը մասնակցելու համար: Շահումյանի հետ միասին ընտրվել էին ևս յոթ պատգամավոր՝ վեցը բոլշևիկներ ու ինտերնացիոնալիստ-էսէռներ, մեկը պաշտպանողական:

Դեմոկրատական խորհրդակցությունը մասնակցելու համար սեպտեմբերի 10-ին Շահումյանը մեկնում է Պետրոգրադ, որտեղ ծավալում է եռամյակ

գործունեություն: Նա մասնակցում է տեղի ունեցած ՌՄԻԲ(բ)Կ Կենտկոմի հետևյալ նիստերին:

Սեպտեմբերի 15-ին Շահումյանը մասնակցում է Լենինի «Բոլշևիկները պետք է վերցնեն իշխանությունը» և «Մարքսիզմը և սպատամբությունը» նամակների առաջին անգամ քննարկումներին:

Սեպտեմբերի 20-ին Շահումյանը մասնակցում է կուսակցական խորհրդակցության, կուսակցության արտահերթ համագումար հրավիրելու հարցերի քննարկմանը:

Սեպտեմբերի 21-ին Շահումյանը մասնակցում է Դեմոկրատական խորհրդակցության և Նախապաշտպանների մասին հարցերի քննարկմանը:

Սեպտեմբերի 23-ին Շահումյանը մասնակցում է կուսակցական խորհրդակցության, Դեմոկրատական խորհրդակցության, Նախապաշտպանների, Սահամանադիր ժողովին մասնակցողների Կենտկոմի առաջադրած ցուցակի մասին հարցերի քննարկմանը:

Սահամանադիր ժողովի համար հաստատվում է 40 մարդուց բաղկացած բոլշևիկ-թեկնածուների ցուցակը, որի մեջ էին Լենինը, Շահումյանը, Ֆ. Չերժինսկին, Ստալինը, Ա. Լուենաչարսկին և ուրիշներ: («ПРОТОКОЛЫ ЦЕНТРАЛЬНОГО КОМИТЕТА РСДРП/Б», М. 1958, стр. 67):

Միաժամանակ ընդունվում է որոշում. «Եթե Չխեիձեն առաջադրվի Նախապաշտպանների նախագահ, ապա դեմ քվեարկել», իսկ Շահումյանին հանձնարարվում է ելույթ ունենալ և ներկայացնել, թե ինչ պատճառաբանությամբ են բոլշևիկները դեմ քվեարկում: (Նույն տեղը, էջ 67):

Սեպտեմբերի 24-ին Շահումյանը մասնակցում է կուսակցական խորհրդակցությունում Պետրոգրադի սովետի, երկաթուղայիների գործադուլի, Սովետների 2-րդ համագումար հրավիրելու հարցերի քննարկմանը:

Դեմոկրատական խորհրդակցությունը, որը հրավիրվել էր էսէռ-մենշևիկյան սովետի կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից, պետք է որոշեր իշխանության հարցը և նպատակ էր հետապնդում ժողովրդական մասսաների ուղադրությունը շեղել անող հեղափոխությունից:

1917 թ. սեպտեմբերի 14-ին 1500 պատգամավորների մասնակցությամբ ավարտվում է խորհրդակցությունը:

Սեպտեմբերի 21-ին խորհրդակցությունը որոշում է ստեղծել հանրապետության ժամանակավոր խորհուրդ, որին տրվում է Նախապաշտպանն առփամուսը: Այս նիստին մասնակցող Շահումյանը ելույթ է ունենում և հրապարակում է բոլշևիկյան խմբակցության անունից հայտարարություն:

Նկատի ունենալով, որ խորհրդակցությունում անհամամասնորեն են ներկայացվել գյուղացիական, բանվորական ու զինվորական սովետները, Շահումյանը պահանջում է նախապաշտամենտում ընդլայնել նրանց ներկայացուցչությունը: Այս պահանջը չի կատարվում և բողջեկյան խմբակցությունը հետանում է խորհրդակցությունից:

Պետրոգրատում Շահումյանը հանդիպում է այնտեղ գտնվող մի շարք հայ գործիչների, այդ թվում՝ Սարգիս Սրապիտյանի (Լուկաշին), Ա. Կարինյանի, Վ. Տերյանի, Սմբատ Մարգարյանի հետ: Ինչպես վկայում է Կարինյանը, Շահումյանը նրանց հրավիրում է Անդրկովկասում աշխատելու, ասելով, որ «այնտեղ աշխատողների մեծ կարիք կա»: (Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, Եր, 1964, էջ 359):

Շահումյանի խորհրդով Վ. Տերյանը գրում է «Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին» գրքուկը, Ա. Կարինյանը գրում է «Հեղափոխական արդարադատության մասին» Հոդվածը, Ս. Մարգարյանը՝ «Սահմանադիր ժողովի մասին» գրքուկը:

Հետագայում այս մասին Տերյանը գրել է հետևյալը. «Հիշում եմ, թե որպիսի սիրով ու եռանդով մենք գործի կպանք, երբ փոքրիկ խորհրդակցություններից հետո որոշվեց ձեռք զարկել մի շարք ազիտացիոն բրոյուրների հրատարակության, և երբ նա (Շահումյանը) խոսք առավ մեզին, որ երեք օրվա ընթացքում մեզինց ամեն մինը մի փոքրիկ բրոյուր գրի չարաբահտ Հիմնադիր ժողովի նախընտրական ազիտացիայի համար»: (Վահան Տերյան, Երկերի ժողովածու, Հ. երրորդ, Եր. 1975, էջ 172):

Վ. Տերյանի բնակարանում Շահումյանի ղեկավարությամբ վերոհիշյալ գործիչների հետ տեղի ունեցած մի շարք խորհրդակցությունների ժամանակ քննարկվում է նաև ազգային հարցը, Արևանդյան Հայաստանի կացությունը:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՍԱՐՁԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՍԱՐԸ

1917 թ. սեպտեմբերի վերջին Շահումյանը վերադառնում է Բաբու, որտեղ սեպտեմբերի 22-ից սկսվել էր նավթարդյունաբերող բանվորների համընդհանուր գործադուլը Զափարիձեհի, Ի. Ճիրխտովի, Մ. Ազիզբեկովի և այլոց ղեկավարությամբ: Այդ գործադուլն ավարտվում է Հոկտեմբերի 2-ին բանվորների լիակատար հաղթանակով:

«Рабочий путь» թերթը Հոկտեմբեր 6-ին հրատարակում է Շահումյանի ուղարկած հեռագիրը, որով հայտնվում էր, որ գործադուլի հաղթանակի արդյունքով ձեռնարկատերերը հարկադրված են եղել ստորագրել կոլեկտիվ

պայմանագիրը: «Բաբվի բանվորների հաղթանակը,- նշում է Շահումյանը,- համաձայնողականների պարտությունն է, որոնք վեց ամիս տանջում էին պրոլետարիատին»:

Շահումյանը տեղեկացնում էր նաև, որ գործարանային կոմիտեների կոնֆերանսը բողջեկիների առաջարկությամբ որոշել է մասնակցել Պետրոգրատում Հոկտեմբերի 17-ին հրավիրվող ֆաբրիկա-գործարանային կոմիտեների համագումարին: (Սո. Շահումյան, նույն տեղը, Հ. երրորդ, էջ 260-261):

Բաբվի բանվորների գործադուլի հաղթանակից հետո Շահումյանը հարավորություն է ունենում Հոկտեմբերի 3-ին, քիչ ուշացած, մեկնել Թիֆլիս և որպես ՌՄԻԲ(Բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչ ղեկավարել կուսակցության կովկասյան մարզային կազմակերպության առաջին համագումարը:

1917 թ. Հոկտեմբերի 5-ին Շահումյանը համագումարում զեկուցում է ընթացիկ մտմենտի մասին: Վերլուծելով հեղափոխության առաջին վեց ամիսների ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները, նա նշում է, որ հաղթանակած և կառավարող մենչևիկների կուսակցությունը դրսևորել է «իր քաղաքականության լիակատար սնանկությունը»: Նաև նշում է, որ հեղափոխության սկզբին սովետները եղել են երկրի «ամբողջ քաղաքական կյանքի գրեթե լիիշխան ղեկավարները»:

Այնուհետև նկատի ունենալով Ծերեթելու և մյուս մենչևիկների վարած համաձայնողական քաղաքականությունը, Շահումյանը նշում է, որ դա հասցրել է երկիրչխանության և հետո «լրիվ իշխանազրկության», որն իր արտահայտությունն է գտել Մոսկվայի խորհրդակցությունում:

Համաձայնողականների, էսէռների ու մենչևիկների քաղաքականության իմաստը Շահումյանը բացատրում էր նրանով, որ չարժուր ղեկավարող այդ կուսակցությունները հենց սկզբից հայտարարել էին, «թե Ռուսաստանը չի կարող ղեկավարվել առանց բուրժուազիայի, որին պետք է օգնի դեմոկրատիան»:

«Ժամանակավոր կառավարությունը,- շարունակում է Շահումյանը,- իրեն նպատակ էր դրել պայքարել մասսաների ինքնագործունեության դեմ, պայքարել հեղափոխության պրոբլեմները լուծելու նրանց ակտիվ ելույթների դեմ, «անարխիսայի» դեմ»:

Ընդգծելով, որ համաձայնողականները միշտ էլ եղել են հեղափոխությունը ճնշելու կողմնակից, Շահումյանը բերում է հետևյալ փաստերը:

Առաջին. Երբ բանվորները առաջադրել էին 8-ժամյա բանվորական օրվա պահանջ, մենչևիկները դեմ են եղել, ասելով, թե «այդ պահանջը կխախտի բուրժուազիային»:

Երկրորդ. Իսկ երբ գյուղացիները դնում են ազգարային ռեֆորմի պահանջը, էսէտներն ու մենչևիկները դա համարել են անարխիստական և նրանց առաջարկում են սպասել մինչև Սահամանադիր ժողովի հրավիրումը:

Երրորդ. Համաձայնողականները նույն կերպ են վարվում ազգային Հարցի նկատմամբ:

Չորրորդ. Անհապաղ Հաշտության Համար պայքարելու փոխարեն, Համաձայնողականները ոչ միայն չեն խզել կապը դաշնակից երկրների իմպերիալիստների հետ, այլև ամբողջապես ենթարկվել են բուրժուազիայի քաղաքականությանը:

Հինգերորդ. Համաձայնողականները բողջեիկներին Հայտարարել են հակահեղափոխականներ, անարխիստներ և բուրժուազիայի դեմ պայքարելու փոխարեն, պայքար են Հայտարարել բողջեիկների դեմ:

«Այս բոլորը,- եզրակացնում է Շահումյանը,- ցույց է տալիս, թե ինչպիսի գիծումների դիմացին նրանք (Համաձայնողականները) ի շահ բուրժուազիայի: Նրանք լիովին դավաճանեցին մեր հեղափոխությունը»:

Այնուհետև Շահումյանն անդրադարձնում է Նախապետականների կազմակերպմանը, այն համարում է հակահեղափոխական ձեռնարկ և խնդր է դնում՝ գլխավորել հեղափոխությունը, գրավել իշխանությունը և հրավիրել սովետների համագումար:

«Չայսօք այն ամբողջ պատասխանատվության,- եզրափակում է Շահումյանը,- որ մենք վերցնում ենք մեզ վրա, չվախենալով աշխատանքի դժվարությունից ու բարոյությունից՝ Համարձակորեն առաջ գնալ կյանքի առաջադրած խնդիրներին և, մեր ձեռքը վերցնելով իշխանությունը, հեղափոխությունը Հասցնել մինչև Հաղթական վերջը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 262-267):

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Կուսակցության կովկասյան մարզային կազմակերպության առաջին համագումարում քննարկվում է նաև ազգային Հարցը, որի մասին զեկուցել է Տորոչեյիձեն: Նա վճռականորեն մերժում էր Կովկասի ամեն մի սահմանափակում՝ ըստ ազգությունների, դա համարելով «աշխատավոր մասսաների մասնատում և նրանց ինքնազիտակցությունը մթաղնող» և իր ներկայացրած բանաձևի նախազգծով պահանջում էր նախատեսել միայն «համակուկ կասյան մարզային ինքնավարություն»:

Հետաքրքիր է նշել, որ Տորոչեյիձեի տեսակետը իրենց ելույթներում

պաշտպանել են **Ֆ. Մախարաձեն և Մ. Օրախելաշվիլին**: (Очерки истории коммунистических организации Закавказья, ч. 1, стр. 361):

Անաստաս Միկոյանը, որը համագումարի պատգամավոր էր, հիշում է հետևյալը. «Ազգային Հարցի մասին համագումարում զեկուցումով Հանդես եկավ Տորոչեյիձեն, որն ազգերի ինքնորոշման ձևերի Հարցում փաստորեն կառչում էր այսպես կոչված տեղական ինքնավարության հին ծրագրային դրույթից: Դատելով ըստ ամենայնի, նա համաձայն չէր 1917 թվականի ապրիլյան կուսակցական կոնֆերանսի բանաձևին, որով նախատեսվում էր մարզային ինքնավարություն՝ որպես ազգային Հարցում կուսակցության ծրագրային նոր պահանջ: Նրա դիրքավորումը հատկապես պարզ դարձավ համագումարի բանաձևի՝ նրա առաջարկած նախազգծից, որով նա պահանջում էր մարզային համակուկկասյան ինքնավարություն (ավտոնոմիա)»:

«Դա,- չարձանակում է Միկոյանը,- մի խառնաշփոթ ձևակերպում էր, որը պարզ հարցը «գլխավայր» էր դնում: Ինքնավարության և ավտոնոմիայի միջև գոյություն ունի սկզբունքային տարբերություն. դրանք համանշանակ բաներ չեն և մեկը մյուսին չի փոխարինում»:

Միկոյանը վկայում է, որ ազգային Հարցում Տորոչեյիձեի վրա ակնհերևաբար զգացվում էր Մախարաձեի ազդեցությունը, որը 1917 թ. ապրիլյան կոնֆերանսում Հանդես էր եկել մարզային ավտոնոմիայի դեմ: (Ա. Ի. Միկոյան, Պայքարի ուղիով, Գիրք առաջին, Եր. 1972, էջ 147-148):

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ազգային Հարցի քննարկման ժամանակ ելույթ է ունեցել նաև Շահումյանը: Նա ամենից առաջ նշել է, որ ազգային Հարցի մասին զեկուցող Տորոչեյիձեն թույլ է տվել սխալ՝ դեմ արտահայտվելով Կովկասում ազգերի ինքնորոշման իրավունքի կիրառմանը, պահանջելով միայն կիրառել մարզային ինքնավարություն:

Շահումյանը նշում է, որ Տորոչեյիձեն անտեսել է այն հանգամանքը, որ ազգային Հարցի մասին կուսակցության ծրագիրը կազմված է եղել տասը տարի առաջ: «Իսկ այժմ,- ընդգծում է Շահումյանը,- մենք կանգնած ենք առջիպական հեղափոխության առաջ, և բուրժուական կարգերի չրջանակում չէ, որ պետք է լուծվի ազգային Հարցը»:

Շահումյանը խնդր է դնում՝ ազգային Հարցին մոտենալ ոչ միայն տեսականորեն, այլև պրակտիկ ձևով և հարկավոր է հաշվի առնել, որ իրադար-

ձուլվում են զարգանում են մեծ արագություն: Եվ իր միտքը հիմնավորելու համար Շահումյանը բերում է Յինյանդիայի և Ուկրաինայի օրինակը, որոնք չեն սպասել, թե «ինչ կասի Ռուսաստանն ազգային ինքնորոշման մասին»:

Շահումյանը որոշակիորեն ասում է, որ չի կարելի ազգային հարցը հետաձգել մինչև Սահամանադիր ժողով, այլ «հարկավոր է հարցը կոնկրետ դնել», ընդգծելով, որ «վրացական ու հայկական նացիոնալիստական կուսակցություններն արդեն մշակել են իրենց ծրագրերը»:

Շահումյանը հիշեցնում է, որ կուսակցության ծրագրում ասված է, որ ստեղծվում են մարզային ինքնավարություններ, ըստ որում ուշադրության են առնվում տնտեսական և կենցաղային հաստիակները: Նա հիշեցնում է նաև այն կետը, որով ընդունվում էր ազգային ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև ինքնուրույն պետության կազմավորում, երկրի ընդհանուր դեմոկրատացում ու մայրենի լեզվով դասավանդելու իրավունքի մասին:

Նկատի ունենալով 1913 թ. սեպտեմբերին Պորոնինյոյում տեղի ունեցած բուլղարական խորհրդակցությունը, Շահումյանը նշում է, որ այնտեղ ազգային հարցի վերաբերյալ կուսակցության ծրագիրը «փոքր-ինչ լայնացվեց, և մարզային ինքնավարության փոխարեն, ընկ. Լենինի առաջարկությամբ, ընդունվեց մարզերի ավտոնոմիա»:

Այնուհետև Շահումյանը տալիս է մարզային ինքնավարության, ավտոնոմիայի և ֆեդերացիայի միջև եղած հետևյալ տարբերությունը.

Առաջին. Մարզային ինքնավարությունը չունի օրենսդրական իրավունքներ: Այն իր ձեռքն է կենտրոնացնում կուլտուրական և տնտեսական-սոցիալական հարցերի փոխարեն, օգտվում է հարկադրման իրավունքից:

Երկրորդ. Ավտոնոմիան տարբերվում է ինքնավարությունից նրանով, որ ունի սեյմ՝ լայն օրենսդրական իրավունքով: Ավտոնոմիայի դեպքում տեղական ավտոնոմ մարզերին կենտրոնական կառավարությունը վերապահում է հարցերի մի որոշ խումբ:

Երրորդ. Ֆեդերացիան հավասար միավորների միություն է: Ունենում է իր Սահամանադիր ժողովը:

Ասվածից ելնելով Շահումյանն ընդգծում է, որ կուսակցության այժմյան ծրագրի համաձայն պետք է ընդունել մարզերի ավտոնոմիան, որովհետև «մենք ընդհուպ մոտենում ենք սոցիալական հեղափոխությանը, հետևաբար մեզ քիչ պետք է վախեցնի սպակինոթոնացումը»:

Անդրադառնալով Անդրկովկասին, Շահումյանը նշում է, որ Անդրկովկասը պետք է բաժանել երեք մարզերի.

Ա. Արևմտյան Անդրկովկաս, որի մեջ մտնում են Գուբայիսի, Բաթումի նահանգները և Թիֆլիսի նահանգի մի մասը:

Բ. Արևելյան Անդրկովկաս, որի մեջ մտնում են Երևանի, Կարսի, Ելիզավետպոլի նահանգները և Թիֆլիսի նահանգի մի մասը:

Գ. Բաքվի, Ելիզավետպոլի մի մասը և Դաղստանի մարզը:

Այսպիսով Շահումյանն առաջարկում է Անդրկովկասում ստեղծել երեք ազգային-տարածքային միավորումներ: Շահումյանը դրանց հիմքում դնում էր ազգային-տարածքային սկզբունքը, որը համապատասխանում էր Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի սպառազանց կազմավորմանը:

Իր ելույթում Շահումյանն անդրադառնում է Արևմտյան Հայաստանի պրոբլեմին և ընդգծում է հետևյալը. «Ազգային հարցի լուծման ժամանակ անխուսափելիորեն դրվում է նաև Թուրքահայաստանի հարցը: Այդ հարցի լուծումը մենք պետք է թողնենք հենց այդ մարզի բնակչությանը, որն ինքը պետք է որոշի իր բախարը: Ռուսաստանին միանալու՝ նրա որոշման դեպքում, նրանք պետք է միացվեն հայերին»: (Ստ. Ծախումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 268-270):

Շահումյանը նկատի ուներ արևմտահայերի ցանկության դեպքում Արևմտյան Հայաստանը միացնել իր առաջարկած ազգային-տարածքային սկզբունքով կազմվող Հայաստանին:

Վրասահարար կարելի է ասել, որ Հայ իրականության մեջ Շահումյանն առաջինն էր, որ հաստիկ և օրջեկոխ կերպով ձևակերպում է սպառազանց տարածքային սահմանները, որի համար էլ նա պայքարել է իր ամբողջ կյանքի ընթացքում: Հարկ է նշել նաև, որ Շահումյանը իր առաջարկությունն անելիս հենվում էր կուսակցության ազգային ծրագրի սկզբունքի վրա: Այս մասին ավելի հանգամանակի անդրադարձ կլինի սույն աշխատության հարջորդ էջերում:

Համազումարը ընդունում է ընթացիկ մոմենտի, Սահամանադիր ժողովի և Նախապառլամենտին մասնակցելու մասին Շահումյանի ներկայացրած բանաձևերը: (Ստ. Ծախումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 271-274):

Կովկասի բուլղարների առաջին երկրամասային համագումարն ընտրում է ՌՄԻԲ(Ե)Կ Կովկասյան երկրային կոմիտե, որի մեջ մտնում են Շահումյանը, Զախարիձեն, Մ. Յիսակյան, Դ. Շահվերդյանը, Յ. Մախարաձեն և ուրշներ:

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Համագումարում լավում են նաև տեղերից եկած պատգամավորների գեկուցումները: Միևույնը գեկուցում է Ալավերդում, Մանեսում և Հաղպատում տիրող դրուկի մասին և հայտնում, որ «դա միակ գավառն է, որտեղ սահմանափակ և հողագուրդ հայ գյուղացիությունը կազմակերպված է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի դրոյի տակ»: (Ա. Ի. Միևույն, Պայքարի ուղիով, Գիրք առաջին, Եր. 1972, էջ 146):

Ալեքսանդրապոլի 600 անդամ ունեցող կազմակերպության անունից գեկուցել է Պյոտր Արվերաձեն, որն առաջարկում է հատուկ ուշադրություն նվիրել Սահմանադիր ժողովի ընտրությունների անցկացմանը:

Համագումարի ավարտից հետո Շահումյանն Արվերաձեի ուղեկցությամբ Հոկտեմբերի 7-ին մեկնում է Ալեքսանդրապոլ: Դեպքերի ականատես Բագրատ Լոգյանը պատմում է, որ կայարանում Բագրատ Ղարիբջանյանի գլխավորությամբ աշխատավորները ջերմորեն են դիմավորել Շահումյանին: (Հին բողջեկեցիների հիշողություններ, գիրք առաջին, Եր. 1958, էջ 290-291):

Շահումյանն Ալեքսանդրապոլում մնում է երեք օր, ծանոթանում է քաղաքական իրավիճակին: Հոկտեմբերի 8-ին նա հանդիպում է տեղի բողջեկեցիական կազմակերպության անդամներին, նրանց պատմում է Համագումարի, Մոսկվայում հրավիրված Դեմոկրատական խորհրդակցության մասին և նշում է Անդրկովկասի և Ալեքսանդրապոլի կազմակերպությունների խնդիրները:

Նույն օրը, կրկեսի շենքում Շահումյանը մեծ բազմության առջև գեկուցում է ընթացիկ մոմենտի մասին, հանգամանորեն անդրադառնում է տեղի ունեցող հեղափոխական իրադարձություններին:

Դեպքերի ականատես Լոգյանը հայտնում է, որ կրկեսը «լեվ-բեցում էր կայազորի զինվորներով և քաղաքի աշխատավորներով: Շենքն այնպես էր ցրվել մարդկանցով, որ անգամ մանեթում այլևս տեղ չկար ակոռների համար: Մարդիկ խռնվել էին նույնիսկ դռների մեջ»: Երբ ներս է մտնում Շահումյանը, բոլորը ոտքի են կանգնում և բռնում ծափահարություններով ու ողբույթի բացականչություններով դիմավորում նրան: (Հին բողջեկեցիների հիշողություններ, գիրք առաջին, Եր. 1958, էջ 291):

Հոկտեմբերի 9-ի առավոտյան Շահումյանը ներկա է գտնվում Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիական համագումարի բացմանը և ելույթ է ունենում առաջին նիստում: Նա պատգամավորներին կոչ է անում համախառն բողջեկեցիական լուրջների շուրջ: (Գ. Ղարիբջանյան, Ալեքսանդրապոլի

բողջեկեցիական կազմակերպությունը 1917-1920 թվականներին, Եր. 1953, էջ 53):

Հոկտեմբերի 9-ին Շահումյանը Ալեքսանդրապոլի կայազորի 2000 զինվորների ժողովում գեկուցում է Դեմոկրատական խորհրդակցության մասին: Ժողովը կայազորի 20 հազար զինվորների անունից բողջ է արտահայտում նախապաշտամենտի և ժամանակավոր կառավարության դեմ: (Ստ. Ծառուցյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 277):

Դեպքերի ականատեսներ Նոյ Լեժավան և Կարապետ Ինչատրյանը վկայում են, որ Շահումյանի գեկուցումը նպաստել է Ալեքսանդրապոլի սովետի ընտրությունների ժամանակ ձեռք բերված հաջողությանը: (Հին բողջեկեցիների հիշողություններ, գիրք երկրորդ, Եր. 1961, էջ 314, 317):

ԿԱԶՄՎՈՒՄ Է ՍՈՎԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵ

1917 թ. Հոկտեմբերի 10-ին Շահումյանը վերադառնում է Բաքու, որտեղ քաղաքական միջնորդողը շատ էր շիկացել: Ստեղծվել էր այնպիսի վիճակ, որ Հոկտեմբերի 13-ին սովետի էսէռա-մենչևիկյան գործադիր կոմիտեն չդիմադրում բանվորների ճնշմանը, հարկադրված հրաժարական է տալիս: Նույն օրը, անտիճակաբար, Շահումյանի նախագահությամբ կազմվում է սովետի ժամանակավոր գործադիր կոմիտե:

Հոկտեմբերի 15-ին Շահումյանի առաջարկությամբ հրավիրվում է բանվորների և զինվորների պատգամավորների Բաքվի սովետի, չրջանային կոմիտեների, հանքարդյունաբերական-գործարանային հանձնաժողովի և զինվորական կազմակերպությունների ներկայացուցիչների համատեղ նիստ: Բացելով նիստը, Շահումյանն առաջարկում է նիստը համարել բանվորների և զինվորների պատգամավորների ընդլայնված սովետ:

Նիստին ներկա մենչևիկեները Սաղովակու գլխավորությամբ փորձում են առարկել Շահումյանի առաջարկությանը, բայց ստանում են ընդամենը 55 ձայն: Նիստը 284 ձայնով ընդունում է Շահումյանի առաջարկությունը:

Նկատի ունենալով, որ բուրժուազիայի ձեռքին գտնվող հակահեղափոխական իշխանությունը Ռուսաստանը տանում է դեպի կործանում, Շահումյանի առաջարկությամբ նիստն ընդունում է Համառուսաստանյան սովետների 2-րդ համագումարին մասնակցելու մասին բանաձևը, որտեղ նշվում էր նաև հետևյալը.

Առաջին. Նշանակված ժամկետում ու ժողովրդի իսկական կամքն արտա-

Հայտող կազմով Սահմանադիր ժողով հրավիրելու համար անհրաժեշտ է իշխանությունը խզել ժողովրդի թշնամիներից և հանձնել հենց ժողովրդի ձեռքը՝ հանձնին բանվորների, գինավորների և գյուղացիների պատգամավորների սովետների:

Երկրորդ. Սահմանադիր ժողովի աշխատանքի ժամանակ անհրաժեշտ է ամուր սովետներ ունենալ ինչպես կենտրոնում, այնպես էլ տեղերում՝ Սահմանադիր ժողովի հեղափոխական միջոցառումները պաշտպանելու և կենսագործելու համար:

Երրորդ. Բաբու քաղաքի և նրա շրջանների բանվորների ու գինավորների պատգամավորների ընդլայնած սովետը որոշում է մասնակցել հոկտեմբերի 20-ի սովետների համագումարին և ուղարկել իր պատգամավորներին: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 278):

Սովետի նիստը Շահումյանին ընտրում է Սովետների Համառուսաստանյան 2-րդ համագումարի պատգամավոր: Բայց նա հնարավորություն փոնենում մեկնել, նկատի ունենալով Բաբվում ստեղծված վիճակը, որը սրվել էր քաղաքում հացի պաշարների պակասությունը:

Դրությունը շտկելու նպատակով 1917 թ. հոկտեմբերի 20-ին Շահումյանը, արդեն որպես գործադիր կոմիտեի նախագահ, հետևյալ հեռագիրն է ուղարկում Անդրկովկասյան Հատուկ կոմիտեին. «Հացի լիակատար բացակայությունը նահանգում, սովամահության դեպքերը սպառնում են նոր ծանր բարդություններ, արգելակում են Սահմանադիր ժողովի ընտրությունները: Բաբվի հացի նորմայի բավարարումը հույժ անհրաժեշտ է, լիովին հրատապ է»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 282):

ԽՈՍՔ՝ ՈՒՂՂՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆԸ

Դեռևս 1917 թ. օգոստոսին Շահումյանի նախաձեռնությամբ Բաբվի կոմիտեին կից ստեղծվել էր երիտասարդական կազմակերպություն, որը գործում էր Դ. Բաբաևի, Ս. Աղամիրովի, Բ. Բարխաչևի, Օ. Շատունովայայի ղեկավարությամբ: Նրանց հետ էր նաև Շահումյանի որդին՝ Սուրեն Շահումյանը:

Երիտասարդությանը հեղափոխական աշխատանքի մեջ ներգրավելը մշտապես գտնվում էր Շահումյանի ուղղորդության կենտրոնում: 1917 թ. օգոստոսի 13-ին «Бакинский рабочий» թերթում հրատարակված երեսուսարդությանն ուղղված խոսքում Շահումյանը կոչ էր անում «բոլոր նրանց, ում աչքերը բացվեցին այս հեղափոխության շնորհիվ, բոլոր նրանց, ուներ

Հատկացել են ճշգրտների ու ճշգրտողների, աշխատանքի ու կապիտալի միջև եղած անհարաբեր հակասությունները, ուղբեր ցանկանում են խզել կապերը հարստահարության ու շահագործման աշխարհի հետ, սարդերի աշխարհի հետ, ում խղճի պարսպը թելադրում է պահանջ՝ կանգնել հեղափոխական պրոլետարիատի շարքերում, որն ամուր կերպով իր կոչուկավոր ձեռքերում է պահում Իստեքնացիոնալի կարմիր դրոշմը, ճշգրտողների համար և բոլոր երկրների ու ժողովուրդների ճշգրտողներին դեմ մղվող պայքարում, համախառնվել հեղափոխական պրոլետարիատի կուսակցության՝ ՌՄԻԲԿ -ի շուրջը»:

Միաժամանակ Շահումյանը երիտասարդությունը կոչ էր անում մտնել ՌՄԻԲԿ Բաբվի կոմիտեին կից երտասարդության կազմակերպության մեջ: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 210):

Հատկանշական է, որ Բաբվի երիտասարդական կազմակերպությունը ստեղծվում է իստեքնացիոնալիստական սկզբունքի հիման վրա, որը հետագայում ունեցավ կարևոր նշանակություն:

Շահումյանը հետևողականորեն զբաղվում էր հեղափոխական երիտասարդության դաստիարակությամբ և լուրջ հոգատարություն էր ցույց տալիս նրա գործերի նկատմամբ: Դրա արտահայտություններից մեկն էլ այն էր, որ 1917 թ. հոկտեմբերի 15-ին Շահումյանի նախաձեռնությամբ լույս է տեսնում Բաբվի երտասարդության թերթը՝ «СВОБОДНОЕ СЛОВО»-ն:

Այդ թերթի առաջին համարում հրատարակվում է Շահումյանի «Խնչ բան է առանց անեքսիանների ու ռազմատուգանքների հաշտությունը» հոդվածը:

Շահումյանը իր երիտասարդ ընթերցողներին բացատրում է, թե ինչ է նշանակում «առանց անեքսիանների ու ռազմատուգանքների» հաշտությունը և ինչու պետք է բոլոր ուժերով հասնել դրան:

Բերելով անարդար պատերազմների պատմությունից մի շարք փաստեր, Շահումյանը գրում է, որ «միայն առանց անեքսիանների ու ռազմատուգանքների հաշտությունը կարող է հավասարապես արդարացի և հավասարապես ընդունելի լինել բոլոր պատերազմող պետությունների համար»:

«Ապագա հաշտության պայմանագրի հիմքը,- ընդգծում է նա,- պետք է կազմի ազգերի ինքնորոշման իրավունքը, այսինքն՝ յուրաքանչյուր ժողովրդի իր բախար ինքնուրույն կերպով որոշելու իրավունքը»:

Այնուհետև Շահումյանը թվարկում է վիճելի մարզեր Էլզաս-Լոթարինգիտան, Մերձբալթյան երկրամասը, Լիտվան, Լեհաստանը և նկատի ունենալով Արևմտյան Հայաստանը, այդ մարզերի թվում հիշատակում է նաև Հայաստանը:

տանը և ընդգծում է, որ նրանք «պետք է իրենք ընդհանուր քվեարկությունը որոշեն՝ արդյոք ուզո՞ւմ են միանալ պետություններից որևէ մեկին, թե՞ ինքնուրույն կերպով գոյություն ունենալ»:

Այսպիսի լուծումը Շահումյանը համարում է «վիճելի մարզերի ստեղծված չափազանց խճճված դրությունից դուրս գալու միակ հավան ելքը»:

Հորվածի վերջում Շահումյանն ազդարարում է. «Ժողովուրդների ինքնուրույն հիմքի վրա առանց անեքսիաների ու ռազմատուգանքների հաշտության պահանջն ամբողջ աշխարհի գիտակից դեմոկրատիայի պահանջն է և այն է՝ այսօրվա պահանջը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. երրորդ, էջ 279-281):

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՍԱՐԸ

1917 թ. Հոկտեմբերի 29-ին Թիֆլիսում իր աշխատանքը սկսեց Հայոց ազգային Համագումարը, որին մասնակցում էին դաշնակցականներից ընտրված 98 պատգամավոր, Ժողովրդական կուսակցությունից՝ 36, էսէռներից՝ 20, սոցիալ-դեմոկրատներից՝ 15, անկուսակցականներից՝ 2-ը: Հայ բոլշևիկները չմասնակցեցին և Ա. Միկոյանի ստորագրությամբ հրապարակված հայ տարարությամբ բոյկոտեցին Համագումարը: (ՀՀ ԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17, թ. 71; գ. 21, թ. 8ա):

Փորձեմ, որքան հնարավոր է, համատուտ ներկայացնել այդ Համագումարի ընթացքը: Հենց սկզբից դաշնակցությունը, որի նախաձեռնությամբ էր հրավիրվել Համագումարը, իր վրա է վերցնում դրա ղեկավարությունը:

Հոկտեմբերի 30-ին, Համագումարի երկրորդ նիստի ժամանակ Անդրանիկ Օզանյանն արտահերթ հանդես է գալիս և հայտարարում է, որ ինքը կնստնակցի միայն գաղթականության, պարենապտության և ինքնապաշտպանության հարցերի քննարկմանը: Մյուս հարցերին, ընդգծում է Ժողովրդական հերոսը, որովք վերաբերում են միայն Անդրկովկասին, «արևմտահայ խորհուրդը իրան իրաւունք չէ համարում մասնակցել»:

Համագումարում Ս. Վրացյանը զեկուցում է ներկա քաղաքական մոմենտի և դրա հետ կապված խնդիրների մասին: Անդրադառնալով Ռուսաստանում տիրող տագնապալի վիճակին, զեկուցողը դա բացատրում է ուժեղ իշխանության բացակայությամբ, երկրի արդյունաբերության անկումով, ֆինանսական քայքայումով և շարունակվող պատերազմով:

Ինչպես նշված է Համագումարի արձանագրության մեջ «տնտեսական անկումից դուրս գալու համար զեկուցողն առաջարկում է ոչ թե դասակար

գային կոխը շարունակել, այլ ջանալ հաշտեցնել մրցող դասակարգերը փոխադարձ գիշումներով»:

Վրացյանը խնդիր է դնում միայն դաշնակիցների համաձայնությամբ հանել հաշտության, միաժամանակ կոչ անելով ինքնապաշտպանության համար ուժեղացնել զորքը:

Վրացյանի զեկուցման շուրջ արտահայտվում են տարբեր խմբակցությունների ներկայացուցիչներ:

Դավիթ Անանուն այն տեսակետն է արտահայտում, ըստ որի «ներկայ ուսական հեղափոխութեան մէջ բուրժուազիան դեր չի կատարել»: Նրա կարծիքով «Ռուսաստանի ազատագրական հեղափոխութիւնն առաջ է բերել դեմոկրատիան, ուստի բուրժուազիան դեմոկրատիայի հետ պետք է զնա անկեղծութեամբ, այլ ոչ թէ ծոցում քար պահելով, որպէսզի Ռուսաստանում հաստատուի սոցիալիստական տարրական իրականարգ»: Անանուն արտահայտվում է կոալիցիոն կառավարության օգտին:

Այնուհետև Անանուն անդրադառնում է Հայերին և ընդգծում է հետևյալը. «Հայերս իբրև ազգ չպետք է անտարբեր մնանք հեղափոխութեան այս օրերին, բայց և չպետք է վարենք ստանձին քաղաքականութիւն, ստանձին տնակ ունենանք, այլ պետք է վարենք համառուական քաղաքականութիւն»:

«Եթէ,- շարունակում է նա,- ուսաներն այժմ թոյլ են, այդ պետք է վերադրել նրա մեծ զանգվածի գիւղացիութեան անպատրաստութեան: Բայց երբ այդ գիւղացիութիւնը պատրաստուի՝ Ռուսաստանը կը վերականգնվի նորից, որովհետև նա մեծ ազգ է: Իսկ մենք, եթէ անջատ քաղաքականութիւն վարենք՝ կ'հոչուովնք և մեր հայրենիքը գերեզման կը դառնա: Սեր հաջողութիւնն ու սպազան կախված է Ռուսաստանի հետ սերտ հարաբերութիւն պահելուց, որից մենք ավելի շահել ենք, քան տուժենք»: Անանուն ընդգծում է, որ այդ միտքը պաշտպանել են «մեր հին երախտավոր գործիչները»:

Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Իսահակ Ամիրյանը գտնում է, որ հայ ժողովուրդը չպետք է զբաղվի ներքին դասակարգային կռիվներով: Անդրադառնալով դաշնակցությանը, նա նշում է, որ այդ կուսակցությունը «եթէ իր նախկին գուտ ազգային ծրագրի վրա ավելացրել է սոցիալիստական ծրագիր՝ այդ արել է արհեստական կերպով, ընդհատաջ գնալով ժամանակակից հոսանքներին և զնալով ամենաթոյլ ընդդիմութեան ուղղութեամբ, բայց նա միշտ մնացել է ազգային»:

Ամիրյանը նշում է, որ Հայերը իբրև ազգ, պետք է իրենց զգան ուսա քա-

դաբացիներ և չպետք է գնալ սեպարարտ ուղիով: Նա նաև ընդգծում է. «Բողոքի գրքը և սեպարատիզմը մեր մէջ հող չեն կարող գտնել» և պաշտպանում է ինքնորոշման իրավունքը, իսկ ինչ վերաբերում է արևմտահայերին, ապա, ըստ նրա «Թիւրքահայերն ազատութիւն պետք է ստանան» Ռուսաստանի և դաշնակցների հաղթանակի շնորհիվ:

Էսէժների անունից հանդես եկած Լևոն Աթաբեկյանը նշում է, որ ինչպես 18-րդ դարում բուրժուազիան ստապայեց ֆեոդալիզմը, այժմ էլ սոցիալիզմին է վերապահված բուրժուազիայի խորտակումը:

Արևմտահայերի ներկայացուցիչ պրոֆեսոր Հակոբյանը նշում է, որ թուրքահայերն այսօր ոչ թուրքահայատակ են, ոչ ռուսահայատակ: Նրանց դասը միջազգային դաս է և խնդրում է ռուսահայ եղբայրներին՝ «Թիւրքահայոց դասին աջակցել այն մտքով, որ թիւրքահայերին ազգային ինքնորոշման իրավունք տրվի»:

Համագումարում տիրող մթնոլորտի մասին պատկերացում կազմելու համար հարկ եմ համարում ներկայացնել դրան մասնակցող կուսակցությունների հայտարարությունները:

Հայ սոցիալիստ-հեղափոխականների և սոցիալ-դեմոկրատների միացյալ հռչակագիրը նշում էր «այն ներհակութիւնները, որոնք կան փրկարար ինտերնացիոնալիզմի և կործանարար նացիոնալիզմի մեջ»:

Այնուհետև ընդգծվում էր, որ իրենց աշխատանքի նպատակն է հայ աշխատավոր ժողովրդին դուրս բերել այն մեկուսացումից, որի մեջ «գտնվում է այսօր» և ժողովրդին մտցնել «Ռուսաստանի համայն հեղափոխական դեմոկրատիայի միջազգային ընտանիքը» և դրանով ապահովել նրա «սոցիալ-քաղաքական ազատագրումը և ֆիզիկական անվտանգ գոյությունը»:

Հռչակագիրը նշում է, որ համագումարի աշխատանքի ընթացքում պարզվում է, որ այստեղ տիրող խմբակցությունը «հանձինս ՀՀ դաշնակցութեան, չի կամենում մագաչափ անգամ հրաժարել իր հնավանդ մտածելակերպից ու գործելակերպից և իր տակտիկայով այստեղ ձգտում է նորից մեկուսացնել Հայ սոցիալիստական ուժերը մեր կեանքից՝ առանց գիտակցելու, որ նման տակտիկայով նա մեկուսացնում է Հայ ժողովուրդը Ռուսաստանի հեղափոխութիւնից և Անդրկովկասի բոլոր հեղափոխական տարրերից»:

Հռչակագիրն ընդգծում է, որ դաշնակցության մտայնությունն ու վարքագիծն արտահայտվել է Ն. Աղբալյանի «պետական և ժողովրդական խնարհից զուրկ ճառի մեջ, որի հիմնական տրամադրություններն էին.

Ա. Անվատահոլութիւն դէպի սոցիալիզմը և հեղափոխական միջազգային դեմոկրատիան:

Բ. Անվատահոլութիւն դէպի Անդրկովկասի դրացի ժողովուրդները:
Գ. Քաղաքական նոր արկածախնդրութեան սպառնալիքը՝ իբրև հայ ժողովրդի քաղաքական իրավունքների պաշտպանութեան մի ձև»:

Հռչակագրի հեղինակները հայտարարում էին, որ իրենց համար գաղտնիք չի եղել դաշնակցության մտայնությունն ու գործելակերպը, բայց գաղտնի համագումար, նպատակ են դրել «պայքարել հայ դիմազուրկ բուրժուազիայի և հարձակողական մեչջանականութեան դէմ»:

«Այժմ,- հայտարարում էին հռչակագրի հեղինակները,- պատմութեան մէջ շատ հաճախ աշակերտի զորավոր մուրճը վճռորէլ է սոցիալական ասպարեզից անպատասխանատու և բռնավոր վարպետին: Հայտարարում ենք նաև, որ հրապարակավ ձեռք համախորհրդի անդամներին և ձեր գլխի վրայով ողջ հայ ազգին, թէ այսօր Ռուսաստանում կա մի վարպետ միայն և այդ վարպետը դա հեղափոխական դեմոկրատիան է: Գիտակցեք, որ հայ սոցիալիստական բանակը այն միակ կամուրջն է, որ շարկապում է լքված և անկազմակերպ հայ ժողովուրդը Ռուսաստանի մեծ հեղափոխութեան հետ»:

Հռչակագրի վերջում ասվում էր. «Թերևս մենք կամզնած ենք աղետալի անակնկալների առջև և գիտակցելով մեր մեծ պատասխանատուութիւնը դէպի հայ ժողովուրդը, մենք իբրև փոքրաթիւ մտում ենք այստեղ մեր հեղափոխական դիրքի վրայ իբրև արթուն պահապան մեր ժողովրդի գիտակցված շահերի և ֆիզիկական գոյութեան»: (ՀՀ ԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17, թ. 24):

Պատասխանելով վերահիշյալ հռչակագրին դաշնակցության խմբակցությունը հրապարակում է իր հայտարարությունը, որտեղ ժխտելով իր հասցեին հնչած մեղադրանքները, ընդգծում է, որ իր նպատակն է «Ռուսաստանի և մասնաւորապէս Անդրկովկասի բոլոր հեղափոխական տարրերի հետ միասին» ապահովել հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական ազատագրումը և ֆիզիկական անվտանգութիւնը:

«Մենք,- ազդարարում էր հայտարարությունը,- եկել ենք այստեղ ոչ թէ հրաժարելու մեր աշխարհայեցողութիւնից, այլ հայ ժողովրդի բոլոր գործուն տարրերի հետ համագործակցութեան գալու այն գործնական միջոցների վերաբերմամբ, որոնք իրապէս պիտի ապահովեն ազգամիջեան համերաշխութիւնը Կովկասում և գործակցութիւնը համառուական դեմոկրատիայի հետ՝ հանուն հայ աշխատավոր ժողովրդի կենսական շահերի և ռուսական մեծ հեղափոխութեան հաղթանակի»: (ՀՀ ԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17, թ. 25):

Համագումարում սուր բանավեճ է ծավալվում Ազգային բյուրոյի քաղաքական գործունեության շուրջ: Դրա մասին գաղափար կազմելու համար հարկ եմ համարում ներկայացնել հետևյալ բանավեճի նախադէտերը:

Առաջին. Սոցիալ-դեմոկրատները իրենց նախագծում նշել են Հետևյալը. «Ի նկատի ունենալով, որ Ազգային բիւրոն իր քաղաքականութիւնը տաճկահայ դատի վերաբերմամբ տարել է առանց հաշի առնելու տաճկահայոց համաձայնութիւնը ու ցանկութիւնը, որ այդ քաղաքականութիւնը կրել է արկածախնդրական բնավորութիւն, որ այդ քաղաքականութիւնը վարել է դիպլոմատական ճանապարհով քույրների ետևը, որ այդ քաղաքականութիւն վարողները սերտ հարաբերութեան մէջ են եղել միապետական ռեժիմի ներկայացուցիչների հետ և դեկլարել են նրանց ցանկութիւններով ու ցուցումներով, մի Հանգամանք, որ չէր կարող չը վստահել տաճկահայ ժողովրդի կենսական շահերը և չը նպաստել տաճիկ կառավարութեան դիվային քաղաքականութեան հայ ժողովրդի նկատմամբ, խորհրդաժողովը գտնում է, որ այդ քաղաքականութիւնը եղած է հիմնովին սխալ և վստահալից տաճկահայ ժողովրդի համար»: (ՀՀ ԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17, թ. 34):

Երկրորդ. Սոցիալիստ-հեղափոխականների առաջարկած բանաձևի նախագծում նշվում էր Հայաստանի պատմականորեն անբարեհաճ աշխարհագրական դիրքը, հայրենիքի երեք հատվածների բաժանված վիճակը, այդպիսի պայմաններում Հայաստանին տիրելու հարևանների տենչը, այլակրոն և մոլեռանդ ազգերի հետ ունեցած տնտեսական ու քաղաքական շահերի բախումը, պատմական անցյալներում տաճկահայ ժողովրդի ազատագրման գործը «ներկայացնում է քաղաքականորէն մի բարդ խնդիր, որի լուծումը կը պահանջէր քաղաքագիտական աւելի հասուն հետազոտութիւն, կազմակերպչորէն աւելի զօրեղ ոյժ ու նրկական մեծ կարողութիւն, քան թէ ասպարեզում եղած են և հայրենիքի երեք հատվածների գիտակից գործակցութիւնը, որի մեջ տաճկահայութիւնը պիտի ունենար գերակշիռ ու առաջնակարգ տեղ»:

Այնուհետև նշվում էր, որ այդ «հմպուկների ու Հանգամանքների» բացակայութիւնը տեղ է տվել «սխալ հասկացված հայրենասիրութեան արտահայտութիւնների և մասնատր անհաստների անպատասխանատու գործերակերպին ի դեմս մի շարք ինքնաստեղծ քաղաքագետների՝ ազգային բիւրոյի ներսը և նրանից դուրս»:

Սոցիալիստ-հեղափոխականների նախագծի վերջում ընդգծվում էր. «Դուրս խոնարհելով մեր ժողովրդի ազատագրման ճանապարհին ընկած մարտիրոսների և զոհերի առաջ և վերջին տարիների այդ զոհերի բարոյական պատասխանատուն համարելով Ազգային բիւրոն իր սխալ ըմբռնած քաղաքականութիւնը, նրա գործակիցների հետ միասին,- դրանց գործերակերպի

դնահատումը թողնում ենք անկողմնակալ պատմութեան անաչառ դատին»:
(ՀՀ ԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17, թ. 35-37):

Վերոհիշյալ բանաձևերը մերժում են մեծամասնութիւն կազմող դաշնակցականները:

Համագումարը, թեև համարվում էր ազգային, վերածվում է կուսակցական վեճերի ասպարեզի, այդպես էլ չդառնալով բոլոր ուժերը համախմբող միջոց:

Հինց այս հանգամանքն էլ նկատի ունենալով Հակոբ Մանանդյանը, Գրիգոր Զախուշյանը, Անդրանիկը, Ա. Ասրիբեկյանը, Լեոն և Հայկ Տեր-Սիբայեկյանը Ժողովրդական կուսակցության և անկուսակցական պատգամավորների անուանից հրապարակում են հետևյալ բանաձևը, որտեղ նշվում է, որ համաշխարհային պատերազմի և ռուսական հեղափոխութեան հետևանքով հայ ժողովրդի գոյութիւնը սպառնացող վտանգի պայմաններում «ամեն մի հայի ու իւրաքանչիւր կուսակցութեան սրբազան պարտքն էր լինելու, զգալով քաղաքական ներկա մոմենտի մեծ պատասխանատուութիւնը, դիմել գործնական ու շինարար աշխատանքի, երկրորդական տեղ տալով առժամանակ կուսակցական իդէոլոգիաների տարբերութեան»:

Այնուհետև բանաձևում ասվում էր, որ համագումարի 9 օրվա նիստերը «ցոյց են տալիս, որ անհաշտ կուսակցականութիւնը խանգարում է խորհրդակցութեան բեղմնավոր աշխատութիւնները, որոնք հայ ժողովրդի արդի կացութեան հրամայական պահանջն են: Կուսակցութիւնների գործերակերպը այս խորհրդաժողովում իրական իր հետևանքներով կարող է դառնալ ստեղծագործական շինարար աշխատանքի ամենամեծ արգելքը»:

Բանաձևի վերջում ռուսահայ ազգային խորհրդակցութեան արտակուսակցական պատգամավորները հայտարարում են, որ «իրանք ուշարկւած են այստէղ շինարար գործ կատարելու, ուստի և մատնանշելով խորհրդակցութեան զբաղմունքների սխալ ընթացքը, կոչ են անում անմիջապէս անցնել շինարար գործունեութեան»:
(ՀՀ ԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17, թ. 26):

Դժբախտաբար այս զգուշացումը հաշի չի առնվում համագումարի մեծամասնութեան կողմից: Դաշնակցութիւնը, ունենալով ձայների մեծամասնութիւն, ընտրում է 15 անդամից՝ հիմնականում դաշնակցականներից կազմված Արևելահայ ազգային խորհուրդ: Ավետիս Ահարոնյանի նախագահութիւնը:

Ազգային համագումարն ընդունում է բանաձև Ժամանակավոր կառավարութիւնը պաշտպանելու մասին: (ՀՀ ԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 21, թ. 8ա):

Համագումարին մասնակցում էին նաև տարբեր Հասարակական, դպրոցական, մշակութային կազմակերպություններ, որոնցից յուրաքանչյուրը որոշակի հույս էր տածում իրեն հուզող հարցերը լուծելու համար: Այդպիսի կազմակերպություններից մեկն էլ Հայ արվեստագետների միությունն էր, որի ղեկավարներ Մարտիրոս Սարյանն ու Գ. Շարբաբջյանը հոկտեմբերի 7-ին Համագումարի նախագահությունը հանձնած նամակում Հայտնում էին հետևյալը. «Ի նկատի ունենալով, որ Հայ ազգային կուլտուրական և գեղարվեստական պատմական հիշատակարանները թէ՛ Արևելեան և թէ՛ Արևմտեան Հայաստանում ներկայումս գտնվում են վերին աստիճանի անմխիթար դրություն մեջ, ի նկատի ունենալով, որ մինչև մեր օրերը հատած հիշեալ հարգարեան թանկարժեք հիշատակարանները ժամանակի ժանիքներին զոհ գնալուց բացի, նույնպէս և կորչում, քանդվում, և կողոպտւում են զանազան բարբարոս ձեռքերից:

Ի նկատի ունենալով, որ մենք ժամանակակից Հայ քաղաքական-Հասարակական ու մտավոր կեանքը ղեկավարողներս, մեր այս անտարբերութեամբ ու ապագայի Հայ կուլտուրական կեանքի հիմքը կազմող նախնական մնացորդները կորցնելով մեծ պատասխանատվութիւն ենք վերցնում մեր վրա Հանդեպ ապագայ սերունդների»:

Սարյանն ու Շարբաբջյանն առաջարկում էին Համագումարին «ի թիվս այլ կարևոր և անհետաձգելի հարցերի» չմոռանա լուրջ կերպով զբաղվելու իրենց հուզող այդ կարևոր խնդրով և հույս էին Հայտնում, որ Համագումարում ընտրվող մնայուն մարմինն կից կստեղծվի գործին քաջածանոթ և հմուտ անձնավորություններից կազմված մի առանձին հանձնատուրով, որը կմշակի գործունեության ծրագիր՝ «այդ ցանկալի և մեծ գործը» իրականացնելու համար: (ՀՀ ԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 17, թ. 62):

ԳԼՈՒԽ 10
ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ ԸՆՏՐՎՈՒՄ Է ԲԱՔՎԻ ՍՈՎԵՏԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

Պետրոգրադում բուլչեկիների ղեկավարությամբ գինված ապստամբության և ժամանակավոր կառավարության տապալման մասին լուրերը հասան Բաքու:

Նույն օրն էլ Շահումյանի նախագահությամբ տեղի է ունենում Բաքվի բանվորների և զինվորների պատգամավորների սովետի ժամանակավոր գործադիր կոմիտեի և սոցիալիստական կուսակցությունների ընդլայնված նիստը, որին մասնակցում էին նաև արհմիությունների, գորամասերի ներկայացուցիչները:

Դրված էր իշխանության Հարցը: Բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների ներկայացուցիչները մտքրեցին առաջարկություն՝ որպես Բաքու քաղաքի գերագույն մարմին, Հասարակական անվտանգության կոմիտե ստեղծելու մասին: Այդ կոմիտեի ստեղծմամբ նրանք նպատակ ունեին Բաքվի սովետին զրկել իշխանությունը վերցնելու հնարավորությունից:

Հակառակ այդ առաջարկության, Շահումյանը Հայտարարում է, որ ժամանակավոր գործադիր կոմիտեն դեմ է Հասարակական անվտանգության կոմիտեի ստեղծմանը, գտնելով, որ «քաղաքական և հեղափոխական ղեկավար մարմին է հանդիսանում բանվորների և զինվորների պատգամավորների սովետի գործադիր կոմիտեն»:

Նկատի ունենալով, որ միացյալ նիստը մեծամասնությամբ քվեարկում է վերահիշյալ կուսակցությունների առաջարկության օգտին, Շահումյանը նշում է, որ ընդունված որոշումը պարտադիր է միայն մինչև կոնֆերանսը, «որը վերջին խոսքը կստի այդ հարցի վերաբերյալ» և ընդգծում է. «Գործադիր կոմիտեն իր իրավունքները չի գիջի և դրանք ոչ ոքի չի հանձնի, որով հետև պատասխանատու է միայն կոնֆերանսի առջև»:

Միաժամանակ Շահումյանը հրապարակում է հետևյալ բանաձևը. «Հարկավոր է պաշտպանել իշխանության համար մղվող պայքարը, պաշտպանել Պետրոգրադում նոր ծնունդ առնող իշխանությունը: Մեր տեղական սակառիկան ուղղված է բանվորների և զինվորների պատգամավորների սովետի իրավունքների աստիճանական ընդլայնմանը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. չորրորդ, էջ 13-14):

Հոկտեմբերի 27-ին հրավիրվում է Բաքվի սովետի ընդլայնված նիստը:

Շահումյանն առաջարկում է ճանաչել Լենինի գլխավորությամբ ստեղծված սովետական կառավարությունը և Բաքվում ամբողջ իշխանությունը հանձնել սովետին:

Սակայն էսէռները, մենշևիկները և դաշնակցականները միանում են և ձայների մեծամասնությամբ նորից քվեարկում են իշխանությունը հասարակական անխտանգության կոմիտեին հանձնելու օգտին:

Չհամաձայնելով այդ առաջարկությանը, Շահումյանը հայտարարում է, որ գործադիր կոմիտեն դեմ է նոր մարմնի ստեղծմանը, ընդգծելով, որ «Սովետի գործադիր կոմիտեն հանդիսանում է Հեղափոխական և քաղաքական ղեկավար մարմին»: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 207, թ. 16):

Ծավալվում է սուր բանավեճ: Կողմերը համաձայնության չեն գալիս: Բոլշևիկները Շահումյանի գլխավորությամբ դնում են պահանջ՝ իշխանություն հարցը ներկայացնել լայն քննարկման, դրանում ընդգրկելով բանվորական մասամաներին:

Այդ կապակցությամբ Շահումյանը գրում է Բաքվի կոմիտեի անունից կոչ՝ ուղղված բանվորներին: Բանվորներին հայտնվում էր Պետրոգրադում տեղի ունեցած իրադարձությունների մասին, որոնց արդյունքով այնտեղ հաղթանակած Հեղափոխության շնորհիվ հաստատվել է սովետական իշխանություն:

Բաքվի պրոլետարիատը, ընդգծվում էր կոչում, որը միշտ եղել է համառուսաստանյան Հեղափոխական շարժման առաջատար շրջաններից մեկը, պետք է վճռակամորեն պաշտպանի Պետրոգրադում տեղի ունեցած Հեղափոխությունը: Կոչը դատապարտում էր էսէռներին ու մենշևիկներին, որոնք բացահայտորեն դավաճանում են Հեղափոխությանը և բոլշևիկների հասցեին տարածում են գրպարտություններ:

«Մենք,- ասվում էր կոչում,- ապրում ենք այնպիսի ժամանակ, երբ չի կարելի տեղում դուրել: Պետրոգրադի բանվորներն ու զինվորներն ասում են ձեզ՝ ով մեզ հետ չէ, նա մեր դեմ է: Կամ Հեղափոխություն կամ հակահեղափոխություն: Կամ բուրժուազիայի իշխանություն կամ սովետների իշխանություն: Ընտրեցեք երկուսից մեկը»:

Այնուհետև կոչը սխալ էր համարում հոկտեմբերի 27-ին ընդունված որոշումը, որը թյուրիմացության մեջ է գցել բանվորներին, որոնք չեն կարող Հեղափոխության դավաճաններ լինել: Բանվորներին կոչ էր արվում վերանայել հոկտեմբերի 27-ի իսյատասակ որոշումը, և պաշտպանել Հեղափոխական Պետրոգրադին: (Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане, стр. 179):

Հոկտեմբերի 28-ին Բաքվի սովետի նիստում քննարկվում է գործադիր կոմիտեի նախագահի հարցը: Շահումյանը միաձայն ընտրվում է գործադիր կոմիտեի նախագահ: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 207, թ. 15):

Հոկտեմբերի 29-ին Բաքվի կոմիտեի անունից Շահումյանը գրում է «Կովկասյան բանակի բոլոր ընկեր զինվորներին» կոչը: «Հասել է,- ասվում էր կոչում,- այն մեծագույն ժամանակ, երբ վճռվում է բանվորազուլայական Հեղափոխության բախտը: Ամբողջ Ռուսաստանը երկու մասի է պատակտվել: Մի կողմում կապիտալիստների, կալվածատերերի, նրանց աջակիցների ու ծառաների՝ ժողովրդի դահիճների ոհմակը, մյուս կողմում՝ բանվորները, չքավոր գյուղացիները, զինվորներն ու նավաստիները»:

Կոչը դատապարտում էր պետական գերագույն իշխանությունը զավթած կապիտալիստներին ու կալվածատերերին, որոնք Հեղափոխության ութ ամսվա ընթացքում պաշարում էին բանվորների, զինվորների ու գյուղացիների դեմ, «հաշտության, հացի, հողի ու ազատության նրանց պահանջների դեմ»:

Կոչը հայտնում էր. «Պետրոգրադի և Կրոնշտադի Հեղափոխական բանվորներն ու զինվորները և Բալթիական նավատորմի նավաստիները չսպասեցին հակահեղափոխական բուրժուազիայի զինված ուժերի դավաճանական հարձակմանը-սպասամբլեցին և տապալեցին կալվածատերերի ու կապիտալիստների կառավարությունը»:

«Ուղբի ելք,- ասվում էր կոչում,- երկաթե պարսպով պաշտպանելու ձեր Հեղափոխությունը... Ձեներ ձեռքից բաց մի թողեք: Միք ենթարկվի պրովոկացիայի: Բոլոր ելույթները պետք է լինեն կազմակերպված և միայն Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի կուսակցության ղեկավարությամբ...: Մերկացրեք հակահեղափոխականներին: Հաղորդեցեք նրանց բոլոր կարգադրությունների մասին: Խնամանեցեք սովետների կառավարության դեմ ուղղված նրանց բոլոր կարգադրությունները»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 15-17):

Վերահիշյալ կոչերը տարածելու հետ միասին բոլշևիկները Շահումյանի գլխավորությամբ եղան գործարաններում, հանքավայրերում, գործամատերում և հանգամանորեն բացատրում էին Պետրոգրադում հաստատված սովետական իշխանությունը պաշտպանելու կարևորությունը, ինչպես նաև Բաքվում սովետի ղեկավարությունը հաստատելու անհրաժեշտությունը:

1917 թ. հոկտեմբեր 29-ին Բաքվի Ազատության հրապարակում բոլշևիկների կազմակերպմամբ տեղ է ունենում զինվորների ու նավաստիներ

րի Հակայական միտինգը: Միտինգն ավարտվում է իշխանությունը Բաբվի սովետին հանձնելու պահանջով:

Բազմամարդ միտինգներ կազմակերպվեցին նաև գործարանների, ֆաբրիկաների, նավթահանքերի բանվորական կոլեկտիվներում: Ամենուրեք բանվորներն արտահայտվում էին իշխանությունը Բաբվի սովետին հանձնելու օգտին:

Այս ամենը բողջեկիներին հնարավորություն է տալիս հոկտեմբերի 31-ին հրավիրել Բաբվի սովետի ընդայնված նիստը, որին մասնակցում էին հանքագործարանային, գնդային, վաշտային և նավատորմային կոմիտեների ներկայացուցիչները:

Նիստը նախագահող Շահումյանը հրապարակում է բանաձևի նախագիծ, որտեղ նշվում էր հետևյալը.

Առաջին. Բաբվի չրջանի բանվորների և զինվորների պատգամավորների ընդայնված սովետը հավատարիմ մնալով սովետական իշխանության անհրաժեշտության և կռախցիոն կառավարության նկատմամբ անվստահության վերաբերյալ իր նախկին որոշմանը, «Պետերբուրգում և ամբողջ Ռուսաստանում տեղի ունեցող այս պայքարում որոշակիորեն կանգնում է ստեղծվող նոր ժողովրդական իշխանության կողմը և հին բուրժուակապիտալիզմի կառավարությունից պահանջում է իր վրադրությունները հանձնել նոր իշխանությանը, որը հենվելու է բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների սովետների վրա»:

Երկրորդ. Պաշտպանելով Ռուսաստանի մաշտաբով «ծնվող նոր կառավարությունը», Բաբվի ընդայնված սովետը «անհրաժեշտ է համարում իր առջև դնել սովետի իշխանությունը նաև Բաբվի չրջանում ընդայնվելու խնդիրը, ընդհուպ մինչև ամբողջ իշխանության անցումը նրա ձեռքը»:

Յրորդր. Հանձնարարելով գործադիր կոմիտեին Սովետի առաջիկա նիստում զեկուցելու վերոհիշյալ հարցի մասին, ընդայնված սովետն արտահայտվում է ձօգուտ այն բանի, որ Բաբվի չրջանում «որևէ Հակահեղափոխական երլյթի կամ Բաբվի պրոլետարիատի տնտեսական պայքարի հետևանքով դրությունը սրվելու դեպքում կոմիտեն իրեն հայտարարի միակ իշխանությունը Բաբվում»:

Չորրորդ. Ընդայնված սովետը հայտարարում է, որ Բաբվի պրոլետարիատը, զինվորներն ու նավաստիները, մյուս զինվորական մասերը «լիակատար կազմակերպված աջակցություն ցույց կտան իրենց ղեկավար մարմիններին հեղափոխության հաղթանակի համար, Ռուսաստանում իսկական

հեղափոխական ժողովրդական իշխանությունն ստեղծելու համար»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 18-19):

Շահումյանի առաջարկած բանաձևն ընդունվում է 283 ձայնի մեծամասնությամբ: Դեռ էր քվեարկել 78 մարդ, իսկ 21-ը՝ ձեռնապահ:

ԿՈՉ՝ ՈՒՂՂՎԱԾ ՁԻՆՎՈՐՆԵՐԻՆ

Բաբվի սովետի ընդայնված նիստում, երբ որոշվում է ցրել հասարակական անվտանգության կոմիտեն և Բաբվում իշխանությունը հանձնել սովետին, էսէռ, մենշևիկ և դաշնակցական պատգամավորների մի մասը հետանում է սովետի նիստից և սկսում են հակաբողջեկյան ուժեղ պրոպագանդա, բողջեկիների հասցեին կեղծ լուրեր տարածել, նրանց համարելով պրովոկատորներ, հեղափոխության թշնամիներ և գերմանական լրտեսներ:

Ընդայնված նիստից հետո, էսէռների ու մենշևիկների մեքենայությունները բացահայտելու, բողջեկիների նկատմամբ թշնամանք տարածելու փորձերը մերկացնելու նպատակով, նոյեմբերի 1-ին Շահումյանը կոչով դիմում է զինվորներին:

Այդ կոչում Շահումյանն անդրադառնում է հետևյալ փաստերին.

Առաջին. Բողջեկիների թշնամիներն ասում են, թե զինվորները բողջեկիների ետևից են գնում, քանի որ հոգնել են պատերազմից: Իհարկե, ճիշտ է, որ զինվորները հոգնել են, բայց դա միայն վերջին ամիսներին երևան չի եկել: Ձինվորները հոգնել էին երեք տարվա պատերազմից առաջ էլ, բայց նրանք գնում էին համաձայնողական և պաշտպանողական ուժերի ետևից, որովհետև վստահում էին նրանց:

Բայց ամբողջ խնդիրը նրանումն է, պարզաբանում է Շահումյանը, որ այդ ուժերը խաբել են զինվորների վստահությունը և ուժ ամսում այդ ուժերի «քաղաքականությունը բացել է նրանց աչքերը»:

Երկրորդ. «Ասում են,- չարունակում է Շահումյանը,- թե զինվորները բողջեկիների ետևից են գնում նրա համար, որ վերջիններս նրանց շատ են հաց խոստանում, առհասարակ խոստանում են երկրում նրանց համար դրախտ ստեղծել»:

Այս ամենը համարելով սուտ, Շահումյանն ընդգծում է, որ բողջեկիները ոչինչ չեն խոստանում և ոչ ոքի չեն խաբում, որովհետև բողջեկիները իրենք բանվորներ ու զինվորներ են և «ինչո՞ւ նրանք պետք է իրենք իրենց խաբեն»:

«Բողջեկիները,- գրում է Շահումյանը,- ոչինչ չեն խոստանում, նրանք ասում են հենց իրենց՝ բանվորներին, զինվորներին և գյուղացիներին՝ վերց

րեք իշխանությունը ձեր ձեռքը: Բարեբալիցեք ձեր տնտեսական և իրավա-
կան դրությունը: Գրավեցեք Հողը կալվածատերերից: Բանը խոստումների
մեջ չէ, պարտույթ Համաձայնողականներ, պարտույթ պաշտպանողական-
ներ: Միթե՞ դուք նրանց քիչ եք կիրակրի խոստումներով, քիչ եք նրանց գե-
ղեցիկ Ֆրազներ ասել 8 ամսվա ընթացքում»:

Այնուհետև Շահումյանը պարզաբանում է, որ բանվորներն ու գինավորնե-
րը, ինչպես նաև շատ տեղերում գյուղացիները բոլշևիկների ետևից են գնում,
որովհետև բոլշևիկների լողուններն արտահայտում են ժողովրդական հեղա-
փոխական մասսաների շահերն ու կարիքները:

Շահումյանն ընդգծում է, որ այդ հասկացել են նաև Բաբվի գինավորները,
որոնք Հոկտեմբերի 29-ին իրենց ձայնը տվին պրոլետարիատի կուսակցու-
թյանը, բոլշևիկներին: Նա գինավորներին կոչ է անում ստեղծել գինավորական
ու նավաստիական ուժեղ ու ներդաշնակ կազմակերպություն, որի օգնու-
թյամբ Հանուն ազատության, հեղափոխության հաղթանակի մղվող պայ-
քարի համար կստեղծվի ուժեղ հենարան: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ.
չորրորդ, էջ 20-22):

ԲԱԲՎԻ ՍՈՎԵՏՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԸԱՀՈՒՄՅԱՆԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1917 թ. նոյեմբերի 2-ին հրավիրվում է Բաբվի սովետի հերթական նիս-
տը, որին հրաժարվում են մասնակցել Հոկտեմբերի 31-ին ընդգայնած նիստից
հեռացած պատգամավորները: Սովետի նիստի նախագահ է ընտրվում Շա-
հումյանը:

Սովետի քննարկմանն էին դրվել հետևյալ հարցերը.

1. Պարենային վիճակի մասին:
2. Սահմանադիր ժողովի ընտրությունների մասին:
3. Սովետի վերընտրությունների մասին:

Սովետի նիստին եկել էին մեծ թվով գինավորների կամայք, որոնք ներկա-
յացնում են իրենց կարիքները, խնդրելով ավելացնել իրենց տրվող մթերա-
բաժնի չափը: Այս խնդրանքը կարևորելով Շահումյանն առաջարկում է դա
քննարկել հերթից դուրս: Սովետը Համաձայնվում է Շահումյանի առաջար-
կին և որոշում է գինավորների կամանց մեկ շնչին ամսական բաց թողնվող 19
ու 86 կոպեկի դիմաց վճարել 28 ուտայի:

Սովետի նիստում քննարկվող հարցերի մասին գեկուցումով Հանդես է
եկել Շահումյանը: Պահպանվել է միայն նրա գեկուցման համատեղ լրագրա-
յին հաշվետվությունը:

Անդրադառնալով Հոկտեմբերի 31-ին նիստից հեռացածների խնդրին,
Շահումյանը նշում է, որ «մեզնից փոխածների մեջ» ավելի շատ կան մտա-
փորակներ, քան սովետում մնացածները, բայց դրա փոխարեն «մենք ու-
նենք ավելի առողջ միտք, իսկական ժողովրդական կյանքի ճանաչողություն,
մոմենտի առաջադրած խնդիրների լուծմանն այնպիսի գործնական կողմերից
մոտենալու հնարություն, որոնք ուժերի և միջոցների ավելի քիչ ծախսում են
պահանջում ու տվյալ պայմաններում հնարավոր առավելագույն դրական
արդյունք են տալիս»:

Այնուհետև Շահումյանն ընդգծում է, որ «այն անձանց հեռանալը սովե-
տից, որոնք բուրժուազիայի հետ իրենց հավիտենական համաձայնողակա-
նությունը արգելակում էին դեմոկրատիայի գործը, մնացած մեծամասնու-
թյանը պարտավորեցնում է բոլոր ջանքերը ներդնել, որպեսզի ակտիվ մտա-
փորական աշխատողների մաղումը լրացնել նոր, զուտ դեմոկրատական կյան-
քի պայմանների ստեղծման մեծ աշխատանքում ներդրվող էլ ավելի մեծ
եռանդով, գործնականությամբ ու էստուգիազմով»:

Իր գեկուցման մեջ Շահումյանը նշում է այն միջոցառումները, որոնք անհ-
րաժեշտ են իշխանությունը սովետների ձեռքը հանձնելու համար:

Առաջին. Անհրաժեշտ է բարձրացնել սովետի գործադիր կոմիտեի հեղի-
նակությունը: «Եթե գործադիր կոմիտեն,- ընդգծում է նա,- բանվորական և
գինավորական ազնիվ քաղաքականություն վարի, ապա ապահովված է գին-
վորների և բանվորների աջակցությունը նրան»:

Երկրորդ. Անհրաժեշտ է վերացնել հասարակական կազմակերպություն-
ների գործադիր կոմիտեն, որը «կարող է գոյություն ունենալ լոկ տնտեսա-
կան ֆունկցիաներ կատարելով»:

Յրրորդ. Բոլոր գինված ուժերը պետք է գտնվեն սովետի հսկողության
տակ և «առանց գործադիր կոմիտեի գիտության անհանդուրժելի է գործերի
ամեն մի տեղաշարժ»:

Չորրորդ. Չորքերի տեղաշարժի նկատմամբ, զորամասերում, ինչպես նաև
քաղաքապետարանում, բանկերում և միլիցիայում վերահսկողություն իրա-
կանացնելու համար պետք է նշանակվեն կոմիսարներ:

Նշված խնդիրների իրականացման համար Շահումյանը կարևորում է
գործադիր կոմիտեի շուրջ համախմբվելու անհրաժեշտությունը: (Ստ. Շա-
հումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 23-27):

Նոյեմբերի 2-ի նիստում Շահումյանի առաջարկությունների շուրջ ծա-
վարվում է ուժեղ պայքար: Էսէյների, մենչևիկների և դաշակցականների

այն մասը, որը չէր Հեռացել Հոկտեմբերի 31-ի նիստից (144 պատգամավոր), և մասնակցում էր նոյեմբերի 2-ի նիստին, փորձում է դիմադրել և չընդունել Շահումյանի առաջարկությունները: Սակայն Հաղորդության չեն հասնում և հարկադրված Հեռանում են սովետի նիստից: Նրանց Հեռանալուց հետո 488 պատգամավորից մնում են 344 բոլշևիկ և ձախ էսէր:

Մեծանասնությունն ապահովված էր: Սովետն ընդունում է Շահումյանի առաջարկությունները:

Սովետը Շահումյանին նորից ընտրում է Բաքվի սովետի գործադիր կոմիտեի նախագահ: Նրա հետ միասին գործադիր կոմիտեի կազմում ընտրվում են նաև Պ. Զափարիձեն, Ի. Ֆիոլեստովը, Ս. Էֆենդիևը, Մ. Բափինը, ձախ էսէր Մ. Վեզիրովը և ուրշներ:

ԱՆԴԻՎՈՎԿԱՍՈՒՄ ՀՈՉԱԿՎԱԾ ԱՌԱՋԻՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 4-ին հրապարակվում է Բաքվի քաղաքացիներին ուղղված գործադիր կոմիտեի կոչը, որը գրել էր Շահումյանը: Կոչը հայտնում էր, որ Պետրոգրադում հեղափոխական պրոլետարիատն ու կայսզորը տապալել են Կերենսկու-Կոնովալովի բուրժուական կոալիցիոն կառավարությունը և բանվորների ու զինվորների պատգամավորների սովետների համապատասխան հուշակել է ժողովրդական կոմիտեի նոր կառավարություն: Լենինի գլխավորությամբ:

«Նոր հեղափոխական կառավարությունը,- հայտնում էր կոչը,- հրատարակել է մի շարք դեկրետներ՝ հաշտության, կալվածատիրական հողերն անհատապես գրավելու մասին և այլն: Նա ամենաեռանդուն միջոցներ է ձեռք առնում պատերազմին վերջ տալու և երկրի ներքին դրությունը բարելավելու համար»:

Այնուհետև կոչը տեղեկացնում էր, որ Հոկտեմբերի 31-ի և նոյեմբերի 2-ի ընդլայնած սովետը իրեն հայտարարել է Պետրոգրադի նոր հեղափոխական կառավարության կողմնակից և ընդունել է որոշում՝ Բաքու քաղաքում իշխանությունը բանվորների ու զինվորների պատգամավորների սովետի ձեռքն անցնելու մասին: «Այս որոշումն ընդունելով,- ընդգծվում էր կոչում,- բանվորների և զինվորների սովետը հենվում է Բաքվի պրոլետարիատի և Բաքվի կայսզորի հաստատ կամքի ու գիտակցական օգնության վրա»:

Կոչը տեղեկացնում էր, որ մենշևիկների, էսէրների ու դաշնակցականների պաշտպանողական և համաձայնողական կուսակցությունների կոմիտեն

բանվորների ու զինվորների շարքերը լքելուց հետո, մնացած ձախ սոցիալիստ-հեղափոխականները և բոլշևիկները կայսզորի ներկայացուցիչների հետ միասին ընտրել են «Նոր գործադիր կոմիտե, որն արդեն կազմակերպվել է և սկսել է իր գործունեությունը»:

Կոչը հայտարարում էր. «Գործադիր կոմիտեի նպատակն է ամենից առաջ ամեն կերպ պաշտպանել նոր հեղափոխական կառավարությունը, պայքարել քայքայման ու սպեկուլյացիայի դեմ Բաքու քաղաքում և հեղափոխական կարգ ու կանոն հաստատել մեր քաղաքում»:

Սովետը հայտարարում էր, որ «ամինա կճնչի հակահեղափոխական ելույթների ամեն մի փորձ Բաքու քաղաքում» և քաղաքացիներին կոչ էր անում «Հանգիստ մնալ և աջակցել իշխանության նոր հեղափոխական մարմիններին»: (Սո. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 28-30):

Այսպիսով Բաքվում, այն էլ խաղաղ միջոցներով, հռչակվում է սովետական իշխանություն: Դա Անդրկովկասում հռչակված առաջին սովետական իշխանությունն էր:

Սովետից հեռացած համաձայնողական կուսակցությունները, որոնք կենտրոնացել էին հասարակական անվտանգության կոմիտեում, Բաքվում սկսել էին այդ կոմիտեի անունից տարածել թրուցիկներ՝ բնակչությանը կոչ անելով չենթարկվել բանվորների և զինվորների պատգամավորների սովետին:

1917 թ. նոյեմբերի 5-ին Բաքվի սովետում Շահումյանը հրապարակում է հայտարարություն, որով քաղաքացիներին վստահեցնում է, որ բանվորների ու զինվորների պատգամավորների սովետը միշտ «ամուր կերպով կանգնած է եղել հեղափոխության պաշտպանության, հասարակական անդրորության, քաղաքացիների կյանքի և գույքի պահպանության դիրքերում»:

Այնուհետև Շահումյանն անդրադառնում է հասարակական անվտանգության կոմիտեին, այն անվանում է «ինքնակոչ», որն «իրեն ներկայացնում է որպես միակ իշխանությունը քաղաքում» և իբր թե հենվում է բանվորների ու զինվորների, ամբողջ դեմոկրատիայի կամքի վրա: Իսկ իրականում այդ կոմիտեի նպատակն է առաջ բերել անարխիա ու քաղաքացիական պատերազմ: Միաժամանակ այդ ինքնակոչ կոմիտեն կոչ է անում հնազանդվել «այն կառավարությանը, որն արդեն գոյություն չունի, և ենթարկվել իրեն՝ այդ կոմիտեին, որն այլևս գոյություն չունի»:

Շահումյանը վճռականորեն հայտարարում է. «Հարկավոր է մեկ ընդամիշտ վերջ տալ տասնամյակին: Կամ մենք ենք հեղինակավոր իշխանություն,

որին պետք է բոլորն անվերապահորեն հնազանդվեն, կամ այդ իշխանություններ հանդիսանում է մի ինչ-որ, մութ անկյունից հանկարծ հայտնված կեղծ հասարակական անվտանգության կոմիտե, ... որը, ըստ երևույթի, հանդիսանում է հասարակական կազմակերպությունների այն կոմիտեի երկրորդ հրատարակությունը, որը մենք ընդունել ենք որպես փոխություն չունեցող»։ (Ատ. Շահումյան, նույն տեղը, Հ. չորրորդ, էջ 31-32)։

Շահումյանի հայտարարությունն ընդունվում է 409 ձայնով։ Ընդունված որոշմամբ պարտադրվում է հասարակական անվտանգության կոմիտեին երկու օրվա ընթացքում դադարեցնել իր գործունեությունը։

Այդ ինքնակոչ կոմիտեի անդամները՝ էսէժները, մենչևիկները, մուսավաթականները և դաշնակցականները հրաժարվում են կատարել Բաբվի սովետի որոշումը և չարժանակում են իրենց հակասովետական գործողությունները։ Նրանք տարածեցին քաղաքացիներին ուղղված դիմում, որտեղ կեղծելով իրականությունը Բաբվի սովետի գործադիր կոմիտեին մեղադրում էին իշխանությունը բռնի գործողություններով զավթելու համար։

Ի պատասխան այդ կոմիտեի տարածած պրպարտություններով լեցուն դիմումի, նոյեմբերի 10-ին գործադիր կոմիտեի անունից Շահումյանը հրապարակած կոչում ներկայացնում է նոյեմբերի 5-ին ընդունված որոշումը և տեղեկացնում, որ այդ կոմիտեն չի կատարում մեծամասնության որոշմամբ ստված ժամկետը՝ երկու օրում դադարեցնելու իր գործունեությունը, չարժանակում է իր դավաճանական աշխատանքը, հրահրելով քաղաքացիական պատերազմ։

Շահումյանի կոչը ստանում է լայն արձագանք։ Բանվորներն ու գինվորները իրենց ժողովներում պահանջում էին վերացնել հասարակական անվտանգության կոմիտեն։

Սակայն այդ կոմիտեն պաշտպանություն էր գտնում երկրամասային կազմակերպությունների կողմից և դրա վրա հենվելով, փորձում էր խուսափել սովետի որոշումը կատարելուց։

Նոյեմբերի 10-ին Բաբվի սովետի ընդլայնած նիստում Շահումյանը գերկոչում է գործադիր կոմիտեի աշխատանքի մասին և հայտնում է, որ հասարակական անվտանգության կոմիտեն չի կատարել երկօրյա ժամկետում գործունեությունը դադարեցնելու մասին որոշումը, իսկ Բաբվում բնակվող երկրամասային կենտրոնի անդամները դա բացատրում են նրանով, թե սովետի ուղտիմաստիվ որոշումը ղեկավարացնում է խաղաղությունը լուծելու ստեղծված դրությունը։

Երկրամասային կենտրոնի ներկայացուցիչներն առաջարկում են սովետի գործկոմի անդամներ Շահումյանին և Ֆիդեոսովին ներկայանալ մենչևիկներին, էսէժներին և դաշնակների միացյալ կուսակցական կոնֆերանսին, որպեսզի համատեղ ջանքերով միջոցներ գտնել միասնական հեղափոխական ճախատում դեմոկրատական ուժերը միավորելու համար։

Սակայն Շահումյանն ու Ֆիդեոսովը հրաժարվում են այդ առաջարկն ընդունել, ելնելով այն իրողությունից, որ չի կարելի մի կողմից դիտել բանվորների և գինվորների պատգամավորների սովետը, իսկ մյուս կողմից՝ երկրամասային կենտրոնի ներկայացուցիչներին և անջատված կուսակցություններին որպես իրավահավասար կողմեր։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԿՈՍԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Նոյեմբերի 12-ին Բաբվի սովետը վերացնում է հասարակական անվտանգության կոմիտեն որպես հակահեղափոխական ուժերի օջախ։

Բաբվում այդ ժամանակ շարունակում էր գործել 1917 թ. մարտի 5-ին ստեղծված հասարակական կազմակերպությունների գործադիր կոմիտեն, որը նույնպես իր էությունը հակահեղափոխական մարմին էր։

Ենթադրվում էր, որ այդ գործկոմը ստեղծված պայմաններում կինքարուծարվի և իր ֆունկցիաները կհանձնի քաղաքային դումային։ Բայց այդպես չեղավ։ Այդ կոմիտեն շարունակում էր գործել և իր գործողություններով խոչընդոտում էր Բաբվի սովետի գործունեությունը, միջամտում էր նրա ֆունկցիաներին։

Հաջվի առնելով այդ հանգամանքը Բաբվի սովետն առաջ է քաշում հասարակական կազմակերպությունների գործադիր կոմիտեն վերացնելու անհրաժեշտությունը։ Դրան համապատասխան, նոյեմբերի 17-ին Բաբվի սովետի գործադիր կոմիտեն ընդունում է Շահումյանի ներկայացրած առաջարկությունը և 10 կողմ, 2 դեմով որոշում է. «Հասարակական կազմակերպությունների գործադիր կոմիտեն, նկատի ունենալով բանվորների և գինվորների պատգամավորների սովետի կայացած որոշումը և մյուս կողմից նկատի ունենալով արդեն ստեղծված նոր դեմոկրատական դուման, իրեն հայտարարում է լուծարել ենթարկված և որպես հասարակական կազմակերպություն, իր ֆունկցիաները, ինչպես նաև իր գույքը բացառություն սպարանի, որը գտնվել և գտնվում է բանվորների ու գինվորների պատգամավորների սովետի տրամադրության տակ, հանձնում է քաղաքային վարչությունը»։ (Ատ. Շահումյան, նույն տեղը, Հ. չորրորդ, էջ 37)։

Գործադիր կոմիտեի այս որոշումը կատարվում է նոյեմբերի 21-ին:

Մնում էր Բաբվի քաղաքային դուման, որը կազմված էր բուժօժանակային ներկայացուցիչներից: Այս դուման նույնպես բացահայտորեն խոչընդոտում էր Բաբվի սովետի ու նրա գործադիր կոմիտեի գործունեությունը: Դումայի և սովետի միջև ընթանում էր սուր պայքար:

Նոյեմբերի 10-ին տեղի է ունենում քաղաքային դումայի նոր կազմի ընտրություն: Նոյեմբերի 12-ին հրավիրված դումայի առաջին նիստը պետք է ընտրեր նոր նախագահ: Այս կապակցությամբ դումայի առաջին նիստում ելույթ է ունենում Շահումյանը և ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ նավթահանքային չրջանները չեն մասնակցել դումայի ընտրություններին:

Շահումյանն առաջարկում է նավթահանքային չրջաններում ընտրությունները կատարվեն ամենամոտ ժամանակներում, «որպեսզի 120-հազարանոց բնակչության ներկայացուցիչները գտնվեն իրավասուների չրջանում և բոլոր հարցերը վճռեն այժմյան իրավասուների առկա կազմի հետ միասին»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 38-39):

Սակայն Շահումյանի առաջարկությունը մերժում են էսէռների, մենչևիկների, մուսավաթականների և դաշնակների խմբակցությունները: Նրանք դեմ են արտահայտվում նավթահանքերի բանվորների մասնակցությամբ, որի դեպքում դումայում բոլշևիկները կունենային մեծամասնություն:

Քաղաքային դումայի նախագահի համար առաջադրվում է երկու թեկնածու՝ «Մուսավաթ» կուսակցության լիդեր Ծ. Խան-Խոյսկի և մենչևիկների ներկայացուցիչ, բժիշկ Ա. Օկինչևիչ: Ստեղծված պայմաններում բոլշևիկ իրավասուները գերադասում են քվեարկել մենչևիկների թեկնածուի օգտին: Էսէռները ձեռնապահ են մնում քվեարկությունից: Դաշնակները միանում են մուսավաթականներին և ձայների մեծամասնությամբ քաղաքային դումայի նախագահ է ընտրվում Խան-Խոյսկին:

Փաստորեն վերոհիշյալ կոմիտեները վերացնելուց հետո, Բաբվի սովետի համար փոստապետը հակառակորդ է մնում քաղաքային դուման, որն իր գոյության հենց առաջին օրից ցույց է տալիս իր քաղաքական դեմքը և ավելի ու ավելի է դրսևորվում նրա հակահեղափոխական հույսերով:

Քաղաքային դումայի երկրորդ նիստում, նոյեմբերի 14-ին, պետք է յուրաքանչյուր խմբակցություն հանդես գար իր հռչակագրով:

Շահումյանի կազմած հռչակագրում ասվում էր. «Մեր՝ սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան խմբակցությունը կանգնած է բանվոր դասակարգի և

քաղաքային չքավորության շահերի պաշտպանության դիրքերում, հաշվի չառնելով ոչ մի ազգային տարբերություն, կապառանքի բոլոր ազգերի ու լեզուների լիակատար հավասարություն մոնիցիսկալ և հասարակական կյանքի բոլոր ապարեզներում»:

Հռչակագիրը նշում էր, որ քաղաքային դուման պետք է մեծ դեր ունենա բնակչության չքավորական խավերի շահերի համար քաղաքի տնտեսության կարգավորման գործում: Առաջին պլան էր մղվում պարենային հարցը և նշվում էին դրանում առաջացած դժվարությունները հաղթահարելու ուղիները:

Քաղաքային դուման պետք է մոտիկից զբաղվի բնակարանային հարցով, դպրոցական և մշակութային շինարարությամբ, ստղծապահություններ և դրանք լուծի բնակչության շահերից ելնելով, առանց ազգային տարբերությունների:

Ինչպես հիշում է դեպքերի ակնաստես Ն. Կոլեսնիկովան, Դումայում Ֆիդեոսովը պետք է Հռչակագիրը ներկայացներ, իսկ Շահումյանը հանդես էր գալու մյուս խմբակցությունների հռչակագրերի քննադատությամբ: (Ռ. КОЛЕСНИКОВА, նույն տեղը, էջ 213):

Հենց դրանից էլ վախենալով էսէռների ներկայացուցիչն առաջարկում է չսեղ խմբակցությունների հռչակագրերը և դրանք կցից արձանագրությամբ, որը և ընդունվում է: Այս կապակցությամբ Շահումյանը հանդես է գալիս հայտարարությամբ: Նա ընդգծում է, որ կուսակցությունների հռչակագրերը չսեղվով դուման «չորոշեց իր ապագա գործունեության ծրագիրը» և չհրապարակված հռչակագրերը «կորցնում են այն նշանակությունը, որի համար դրանք սովորաբար մտցվում են ներկայացուցչական հիմնարկություններ»:

Շահումյանը վճռականորեն բողոքում է դումայի որոշման դեմ և նշում է, որ «այդ փաստը իր նախատիպը չունի ոչ մի դեմոկրատական դումայում, չնայած կուսակցական խմբավորումների ամբողջ տարբերությունը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 35):

Շահումյանը հետևողականորեն քաղաքային դումայում հանդես էր գալիս, մերկացնում էր հակահեղափոխական ուժերի դիտավորությունները և պաշտպանում էր աշխատավորության շահերը: Այսպես օրինակ, 1917 թ. նոյեմբերի 29-ին քաղաքային դումայի նիստում Շահումյանը իր ելույթում նշում է, որ բոլշևիկյան կուսակցությունը իր բոլոր ուժերը տալիս է ժողովրդին ծառայելու:

Իրա Հետ միասին նա մատնացույց է անում, որ բոլշևիկյան Ֆրակցիան չի մասնակցում դումայի Հանձնաժողովներին, քանի որ «այնտեղ նիստեր են անելու աջ էսէռներն ու մենշևիկները, որոնք արդեն ոչ մի բանով չեն տար բերվում կադետներից, և նրանց քաղաքականության Համար մեզ վրա պատասխանատվություն վերցնել մենք չենք ցանկանում»:

Այնուհետև Շահումյանն առաջարկում է Հետևյալը.

Առաջին. Անհապաղ բանկերից փոխառություն վերցնել այն չափով, որ քան անհրաժեշտ է գինավորների կանանց վճարելու համար:

Այս կապակցությամբ, դեռևս նոյեմբերի 14-ին քաղաքային դումայում Շահումյանը բանկերի կողմից քաղաքային դումայի փոխառությունը իրացնելուց հրաժարվելը գնահատել էր որպես քաղաքական բնույթ ունեցող քայլ և առաջարկել էր բողոքել բանկերի տեղական ղեկավարների վաղբազժի դեմ և պահանջել նրանցից կատարելու փոխառության իրացումը: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 34):

Բոլշևիկյան խմբակցության ճնշմամբ դուման ընդունում է որոշում գինավորների կանանց պահանջը բավարարել և վճարումը կատարել յուրաքանչյուր ամիս, ինչի համար պահանջվում էր մեկ միլիոն 250 հազար ռուբլի:

Երկրորդ. Հարկավոր է խոչոր գումարով հարկ դնել Բաբլի միլիոնատերերի, արդյունաբերողների, առևտրականների և խոչոր տնատերերի վրա:

Երրորդ. Դիմել Պետրոգրադում գտնվող կառավարությանը, որպեսզի նա փոխադրի պահանջված գումարը:

Միաժամանակ Շահումյանը նշում է, որ քաղաքային դուման չի ուզում դիմել Պետրոգրադի կառավարությանը, որովհետև վախենում է, որ դրանով կճանաչվի ժողովրդական կառավարության իշխանությունը: «Իուք,- չարունակել է Շահումյանը,- ճանաչել եք ամեն տեսակ Հետադիմական և բուրժուական կառավարություններ, բայց բանվորների, գինավորների և գյուղացիների կառավարությունը ճանաչել չեք ցանկանում»:

Սկսված դրամական ճգնաժամի համար Շահումյանը մեղադրում է ապրտաժ անող բուրժուական և պաշտպանողական տարրերին: «Իուք,- ընդգծում է Շահումյանը,- չեք ուզում ճանաչել Հեղափոխական կառավարությանը, բայց սաբոտաժ եք անում, կազմալուծում եք առանց այն էլ քայքայված պետական մեքենան: Եվ ահա, ձեր գլխի վրայից ես ասում եմ գինավորների կանանց, գինավորներին և բանվորական բնակչությանը՝ եթե նրանք մնան առանց փողի, եթե դրամական ճգնաժամն ավելի սրվի, մեղքի զգալի բաժինը կրնկնի ձեր վրա»:

Չորրորդ. Ինդրել ժողովրդական կոմիսարներին անհրաժեշտ գումար հատկացնել գինավորների կանանց օգնելու համար:

Ինչպես նշված է լրագրային Հաշվետվության մեջ, երբ Շահումյանն արտասանում է «խնդրանքով դիմել» բառերը, տեղից լսվում են ձայներ՝ «պահանջով», ինչին Շահումյանը պատասխանում է. «Ին լավ, պահանջով դիմել»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 43-44):

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՆԿԱՏԱՄԲ

1917 թ. նոյեմբերի 15-ին Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի փոխարեն Թիֆլիսում ձևավորվում է Անդրկովկասի կառավարման նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատ՝ մենշևիկ Ե. Գեգեչկորու նախագահությամբ:

Նոյեմբերի 18-ին Շահումյանը «Бакинскій рабочий» թերթում հրատարակում է «Նոր իշխանության կազմակերպումը Կովկասում» հոդվածը: Նա հայտնում է, որ սոցիալիստական ու դեմոկրատական կուսակցությունների, ազգային ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված նոր իշխանությունը ժամանակավոր է, մինչև որ Սահմանադիր ժողովի պատգամավորներն ընտրվեն, որոնց էլ կհանձնվի իշխանության կազմակերպումը:

«Թե ինչպիսի քաղաքական դեմք կունենա նոր իշխանությունը,- գրում է Շահումյանը,- այդ մասին կարելի է դատել ըստ նրա կազմի մեջ մտնող կուսակցությունների ու կազմակերպությունների բնույթի: Դա կլինի կառավարություն-Վերենակու կառավարությունից ոչ լավ մի կառավարություն»:

Շահումյանը նշում է, որ էսէռների և մենշևիկների դաշինքը, լրացված հարյուրի, մուսուլմանների և մյուս ցեղերի ու ազգությունների նացիոնալիստական կուսակցություններով... «չի կարող Հեղափոխական իշխանություն առեղծել: Նա կարող է սույ մեզ միայն կարգի կառավարություն, Հեղափոխության դեմ պայքարելու կառավարություն, Հեղափոխությունից «փրկող» կառավարություն»: Եվ այդ պատճառով էլ Հեղափոխական պրոլետարիատի կուսակցությունը հրաժարվել է մասնակցել այդ կառավարությանը:

Նկատի ունենալով, որ Կովկասը «մանրբուրժուական երկիր է», Շահումյանը նշում է, որ մենշևիկները, դաշնակցականները և մյուս մանրբուրժուական կուսակցությունները միշտ Կովկասում «գերակշռող դեր են խաղացել»: Իսկ արդյունաբերական Բաբուն իր «առավելապես բոլշևիկյան պրոլետարիատով» մի կողմ է կանգնած եղել:

Շահույթն ընդգծում է նաև, որ մանր բուրժուականությունը մի կողմից և նացիոնալիզմը մյուս կողմից, եղել են Կովկասում քաղաքական հետամուտության պատճառը:

«Բնորոշ է,- գրում է Շահույթն,- որ նոր իշխանությունը խուսափում է հեղափոխության դրած արմատական հարցին պատասխանելուց՝ ճանաչում է արդյոք Կովկասը Լենինի նոր կառավարությունը, թե՞ պատերազմ է հայտարարում նրան: Այդ հարցին պատասխանելու փոխարեն կովկասյան նոր կառավարությունը որոշում է փաստորեն անջատվել Ռուսաստանից և ավտոնոմ Անդրկովկաս ստեղծել»:

Այնուհետև Շահույթնը հիշեցնում է, թե ինչպես Պետրոգրադում տեղի ունեցած դեմոկրատական խորհրդակցության ժամանակ կովկասյան մենչևիկների ներկայացուցիչներ Ջիսերիձեն ու Մերեթելին, երբ Ռուսաստանում իշխանության տեղ էին, հանդես էին գալիս Ռուսաստանի միասնության օգտին, իսկ այժմ, «երբ նրանք արդեն վճռված են Պետրոգրադից, կովկասյան մենչևիկները միանգամից մոռացան «ընդհանուր հայրենիքի» հանդեպ իրենց հավատարմության մասին և փաստորեն Անդրկովկասի ավտոնոմիա հայտարարեցին»:

Շահույթնը նշում էր, որ Բաքվի պրոլետարիատը ոչ մի լավ բան չի սպասում կովկասյան նոր կառավարությունից, որը «Անդրկովկասը կբաժանի երեք ազգային սատրապության՝ Վրաստանը կվերցնեն մենչևիկները, հայերին կընեն «դաշնակցություն» կուսակցության տրամադրության սակ, մուսուլմաններին կտրամադրեն մուսուլման նացիոնալիստներին»:

Ասվածից Շահույթնը եզրակացնում էր, որ այդպիսի բաժանումից հետո մանրբուրժուական-պայտուպանողական կուսակցությունները «իրենց բոլոր ուժերը կմիավորեն բոլոր ազգությունների հեղափոխական պրոլետարիատի դեմ, բուլչևիկների կողմից, բանվորների ու զինվորների կողմից հեղափոխական ելույթների ամեն մի փորձի դեմ»:

Շահույթնը գտնում էր, որ Կովկասում հեղափոխությունը կշարունակվի, որ բանվորներն ու զինվորները պայքարելու են հեղափոխությունը շարունակելու, Լենինի գլխավորած ժողովրդական կոմիսարների իշխանությունը ճանաչելու, տեղեկում բանվոր-գյուղացիական պատգամավորների սովետների իշխանության համար:

«Մենք,- վերջում գրում էր Շահույթնը,- Կովկասում ճանաչում ենք մի այն այն իշխանությունը, որը ստեղծված է սովետների համագումարում և պատասխանատու է սովետների երկրային կենտրոնի առաջ: Մինչ այդ մենք

միշտ օպորտիզիա կլինենք: Մինչև այդ մենք կողմնակից ենք հեղափոխությանը և դեմ ենք մանրբուրժուական հետադիմական իշխանությանը՝ մենչևիկների ու հսեղների գլխավորությամբ»: (Ստ. Շահույթն, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 40-42):

Անդրկովկասում ստեղծված նոր կառավարությունը իր առաջին քայլերից մեկը համարում է Շահույթնի գլխավորած Բաքվի սովետի աճող հեղինակությունը կասեցնելու և հակահեղափոխական ուժերին ոգևորելու նպատակով Բաքու ուղարկել կազակային զորամասեր:

Նոյեմբերի 21-ին Շահույթնը հեռագիր է ուղարկում Թիֆլիս՝ Անդրկովկասյան կոմիսարիատ, որով ուժովն բողոքում է կազակային զորամասերը Բաքու ուղարկելու դեմ և վճռականորեն պահանջում է՝ այսուհետև առանց Բաքվի սովետի համաձայնության զորամասեր չուղարկել Բաքու և նրա շրջանները:

Նոյեմբերի 23-ին Շահույթնը հեռագրով Լենինին հայտնում է, որ Բաքվի սովետը կոխ է հայտարարել հակահեղափոխության մարմին հանդիսացող Անդրկովկասյան կոմիսարիատին: Շահույթնը հայտնում է նաև, որ կալազորի մեծ մասը սովետի կողմն է: «Մենք,- գրում է Շահույթնը,- կարող ենք բանակի օգնությամբ ստիպել կոմիսարիատին՝ ճանաչել ժողովրդական կոմիսարների իշխանությունը»:

Շահույթնը Լենինին խնդրում էր «անհապաղ հայտնել, թե ինչպես վարվել»: (Ստ. Շահույթն, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 45):

«ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

Դեռևս 1917 թ. մայիսի վերջերին Կովկասի բանվորների պատգամավորների սովետի երկրային համագումարում ընտրված սովետների կովկասյան երկրային կենտրոնին նոյեմբերի 24-ին նամակով դիմում է Շահույթնը «վճռականապես առաջարկելով» Կովկասյան բանակի 2-րդ համագումարի հետ միասին 1917 ղեկոսմաների 10-ին հրավիրել Բանվորների և գյուղացիների պատգամավորների սովետների համագումար՝ «սովետների գոյության ու գործունեության հատկապես մի շարք հարցեր լուծելու և ամենից առաջ, Կովկասում հեղափոխական իշխանություն ստեղծելու հարցը լուծելու համար»: (Ստ. Շահույթն, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 46):

Միաժամանակ Շահույթնը խնդրում էր շտապ կարգով քննարկել համագումարի հարցը:

Այս նամակն ուղարկելուց Հետո Շահումյանը նոյեմբերի 25-ին կարևոր Հարցերով մեկնում է Թիֆլիս: Այստեղ նա ժամտեսանում է ստեղծված իրավիճակին, Հանդիպում է Անդրկովկասյան կոմիտարիատի ղեկավարներին, նրանց Հետ բանակցություն է վարում Ռուսաստանի սովետական կառավարությանը ճանաչելու և այդ կառավարության ներկայացուցիչներին Թուրքիայի Հետ բանակցություններին մասնակից դարձնելու շուրջ:

Եթե Անդրկովկասյան կոմիտարիատը Համաձայնվեր, ապա Թուրքիայի Հետ բանակցություններին Սովետական Ռուսաստանի անունից մասնակցելու էր Շահումյանը:

Երբ Անդրկովկասյան կոմիտարիատը մերժում է Շահումյանի առաջարկությունը, հրաժարվում է ճանաչել Սովետական Ռուսաստանի կառավարությունը և չի Համաձայնվում նրա ներկայացուցիչների մասնակցությանը Թուրքիայի Հետ սպասվող բանակցություններին, Շահումյանը Հայտարարում է, որ Բաքվի սովետը չի ճանաչում Անդրկովկասյան կոմիտարիատի իշխանությունը:

1917 թ. նոյեմբերի 25-ին Թիֆլիսից Շահումյանը Լենինին ուղարկում է Հեռագիր, որով Հայտնում է, որ Գեգեչկորիի գլխավորությամբ պաշտպանողականներից և նացիոնալիստներից կազմված անդրկովկասյան իշխանությունը չի ընդունում ժողովրդական կոմիսարների իշխանությունը:

«Այդ իշխանությունը,- գրում էր Շահումյանը,- Համարելով Հակահեղափոխական, մենք պաշքար ենք Հայտարարել նրա դեմ: Չորքերը նրա գործողությունը դիտում են որպես անջատում Հեղափոխական Ռուսաստանից»:

Շահումյանը Հայտնում էր նաև, որ Թուրքիան Համաձայնվել է Հաշտություն կնքել: Եվ նկատի ունենալով, որ Թուրքիան անպայման կձգտի Անդրկովկասյան կոմիտարիատից մեծ զիջումներ կորզել ու իրականացնել ամբողջությամբ Կովկասի նկատմամբ իր զավթողական ծրագիրը, Շահումյանն անհրաժեշտ էր Համարում սովետական կառավարության «ներկայացուցիչների ներկայությունը` Հաշտության բանակցություններին մասնակցելու Համար» (ընդգծումն իմն է-Վ. Պ.):

Այնուհետև Շահումյանը Լենինին Հայտնում է. «Չորքերի և Բաքվի սովետի վրա Հենվելով կարելի է տեղական իշխանությունը Հարկադրել ճանաչելու ձեր իշխանությունը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. չորրորդ, էջ 47):

Վերահիշյալ երկու Հեռագրերը Շահումյանը ուղարկում է Թիֆլիսից, սակայն դրանք տեղ չեն Հասնում, քանի որ մենչևիկյան գործակալները կտեղ

րել էին դրանց Հարորդումը: Միայն Հետագայում է պարզվում, թե Լենինը ինչու չէր պատասխանել Շահումյանի Հեռագրերին:

Առաջ անցնելով, Հարկ են Համարում նշել, որ Շահումյանի մտավախությունը Հիմքեր ուներ: Կարճ ժամանակ անց, սկզբում Տրասպիդոնի, Հետո նաև Բաթումի բանակցություններին Անդրկովկասյան կոմիտարիատը, Հենվելով գերմանացիների խոստացած աջակցության վրա, նորից մերժում է Սովետական Ռուսաստանի պահանջը բանակցություններին մասնակցելու մասին: Իսկ Թուրքիան իր պարտադրած պայմանագիրը ստորագրել տալով, իրականացում է իր զավթողական ծրագիրը, որից առավելապես փաստվում է Հայ ժողովուրդը:

Նոյեմբերի 27-ին Շահումյանը Թիֆլիսից վերադառնում է Բաքու: Դեկտեմբերի 1-ին Շահումյանի ղեկավարությամբ հրավիրվում է Բաքվի բոլշևիկների կոնֆերանս, որտեղ նա զեկուցում է Անդրկովկասյան կոմիտարիատի ղեկավարների Հետ բանակցությունների և ընդհանրապես ընթացող իրադարձությունների ու Բաքվի կազմակերպության խնդիրների մասին: Շահումյանը իր զեկուցման Հիման վրա գրում է «Ռուսական Հեղափոխությունը և Անդրկովկասյան իշխանությունը» հոդվածը, որը հրատարակվում է դեկտեմբերի 9-ին «Бакинский рабочий» թերթում:

Հոդվածի սկզբում Շահումյանը նշում է, որ Անդրկովկասի երեք ազգային կառավարությունները` վրացի մենչևիկները, Հայ դաշնակցականները, մոսկովյանական մոսավաթականներն Անդրկովկասը բաժանել են իրենց մեջ, ստեղծում են ազգային գնդեր, «որպեսզի ամեն մեկն ամրապնդի իր ավտոնոմիան»:

Դրա մեջ Շահումյանն անբնական ոչինչ չի տեսնում, քանի որ բոլշևիկներն էլ են առաջ քաշել «ձայրամասերի Հետամնաց մանրբորժուական ազգությունների Համար ինքնորոշման իրավունքը»:

Շահումյանը նշում է նաև, որ վերջին տասնամյակների ընթացքում Հայերի ամբողջ պատմական զարգացումը և «դաշնակցություն» կուսակցության զարգախարախոսությունն անխուսափելիորեն պետք է Հանգեցնեն Հայերի ավտոնոմիայի պահանջին: Նույնն են պահանջում նաև մոսկովյանները:

Բայց այդ երևույթի անբնականությունը կայանում է նրանում, որ Վրաստանի մենչևիկներն էլ են նույնն անում, «որոնք իրենց ծրագրով ու ավանդույթներով կապված են պրոլետարական ինտերնացիոնալ սոցիալ-դեմոկրատիայի Հետ»: Այդ անբնականությունը Շահումյանը Համարում է «միայն երևույթական», քանի որ վրաց մենչևիկները Վրաստանում «Հենվում էին ոչ թե պրոլետարիատի, այլ գյուղական և քաղաքային մանր բուրժուազիայի

վրա, միշտ էլ եղել են մանրբուրժուական-վրացական ազգային կուսակցություն»:

Այդպիսով, ինչպես նկատում է Շահումյանը, վրաց մենչևիկները «երևան Հանեցին իրենց դասակարգային ողջ էությունը և ցույց տվեցին, որ մենչևիկները վրացական «Իաշակցությունն» է այնպես, ինչպես որ «Մուսավաթն» էլ մուսուլմանական «Իաշակցությունն» է»:

Շահումյանը բացատրում է, որ վրաց մենչևիկներին քննադատում է ոչ թե նրա Համար, որ նրանք օգտվում են բուլչևիկների հռչակած ինքնորոշման իրավունքից, այլ որովհետև «նրանք ինքնորոշվում են որպես մանրբուրժուական-նացիոնալիստական կուսակցություն, շարունակելով, սակայն, իրենց անվանել սոցիալիստական կուսակցություն»:

Անդրկովկասում «երեք աստրապությունների» ստեղծումը Շահումյանը «գլխավոր չարիք» չի համարում: «Դիսավոր չարիքն այն է,- ընդգծում է նա,- որ Ժորժանիայի և Ընկ. ղեկավարությունը Անդրկովկասն այս կրիտիկական և պատմական պատասխանատու թույլ են փաստորեն, ռեալապես, թող լինի ժամանակավորապես, ինչպես ասում են նրանք,- բայց անձատկել է հեղափոխական Ռուսաստանից»:

Շահումյանն ընդգծում է, որ Անդրկովկասյան կոմիսարիատը չի ճանաչում հեղափոխական Ռուսաստանին, ուղղակիորեն աջակցում է հեղափոխական Ռուսաստանի թշնամի գեներալ Կալեդինին և «բառացի իմաստով դանակ է խրում հեղափոխության թիկունքը, դավաճանություն է կատարում Ռուսաստանի պրոլետարիատի, զինվորների և գյուղացիների նկատմամբ»:

Այնուհետև Շահումյանը գրում է. «Անդրկովկասի ազգություններն ինքնորոշվում են: Թող այդպես լինի, բայց մի՞թե կարելի է մի այսպիսի ժամանակ դավաճանություն կատարել ուսաստանյան հեղափոխության հանդեպ, որի շնորհիվ ենք մենք ապահովել մեզ համար ինքնորոշման իրավունքը»:

Նկատի ունենալով, որ Կովկասում կանգնած է ուսական կեանքի լուսավորման թանակը, որի զինվորները այրում թափելով երեք տարի պաշտպանել են Կովկասի սահմանները, Շահումյանը հարցնում է. «Ի՞նչ եք կարծում, կարո՞ղ է նա հանգիստ մնալ ռազմաճակատում, երբ դուք դավաճանում եք ուսաստանյան հեղափոխությանը, երբ դուք Կալեդինին գերադասում եք Լենինից»:

«Ռուս զինվորը,- շարունակում է Շահումյանը,- ոչինչ չպետք է ունենա Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ավստոնոմիայի դեմ: Բայց նա իրա

վունք ունի վճռականապես բողոքելու Ռուսաստանի բանվորագյուղացիական հեղափոխության նկատմամբ թույլ տված ձեր դավաճանության դեմ»:

«Ռուս զինվորը,- ընդգծում է Շահումյանը,- կարող է իրեն հարց տալ, թե ես ինչու պիտի ճակատը պաշտպանեմ թուրքերից, եթե ես Կովկասում «եկվոր» տարր եմ, որի շահերը կովկասցիք չեն կամենում հաշվի առնել: Ռազմաճակատում ամեն մի զինվոր կարող է մտածել, որ հեղափոխական պարտքը հրամայում է իրեն անմիջապես գնալ Հյուսիսային Կովկաս՝ կռվելու Կալեդինների և Կարաուլովների դեմ ի պաշտպանություն ուսական հեղափոխության, հանուն Հողի և ազատության»:

Այս ամենի մասին բուլչևիկներին գգուշացումը մենչևիկները համարում են պրովոկացիա, որ դրանով «ուսաներին գրգռում են տեղացիների դեմ»: «ԹՇվա՞ր կույրեր,- պատասխանում է Շահումյանը մենչևիկներին,- դա պրովոկացիա չէ, գրգռում չէ, այլ աշալուրջ նախազգուշացում ձեզ: Դուք չեք հասկանում, թե ինչ եք անում: Եթե մենք այդ չասեինք, դուք կարծում եք զինվորներն իրենք այդ չէին հասկանա: Ձեր դավաճանությունն աղաղակում է երկնքին: Եթե դուք ուշքի չգաք, չյաք մեր կոչերը, դուք Կովկասում աներևակայելի պրովոկացիա, աներևակայելի անարխիա եք պատրաստում»:

Շահումյանը նշում է, որ եթե մենչևիկներն ու դաշակագականները ճանաչեն Ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը, ապա դա բնավ էլ չի հակասում «Անդրկովկասի ինքնորոշվող ազգությունների շահերին»:

Այնուհետև Շահումյանն անդրադարձնում է երկրամասը հացով սպահովելու խնդրին, իշխանությունների կարճատես քաղաքականության հետևանքով սպասվող սովի վտանգին և Անդրկովկասյան իշխանություններին խորհուրդ է տալիս «հեղափոխական զորքերի պաշտպանության տակ առնել ամբողջ երկաթուղագիծը մինչև Ռուստով և դրանով ապահովել հացի հայթայթումը բանակի և թիկունքի համար»: Հաց ապահովելու համար ոչ թե պետք է ստորաքարշություն անել հակահեղափոխության առջև, համբուրել Կալեդինի ու Կարաուլովի ձեռքերը, այլ «նրանց դեմ պատերազմելով ու Հյուսիսային Կովկասում հեղափոխական կարգ հաստատելով»:

«Մենք պնդել ենք,- գրում է վերջում Շահումյանը,- որ թե՛ ուսական հեղափոխության, թե՛ Անդրկովկասի ազգաբնակչության շահերը ձեզանից պահանջում են միևնույն բանը,- ճանաչել Ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը, զորքերը չարժել Կալեդինների ու Կարաուլովների դեմ, ապահովել հացով բանակն ու Անդրկովկասի թիկունքը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 48-51):

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1917 թ. դեկտեմբերի 2-ին Շահումյանը նորից մեկնում է Թիֆլիս, այս անգամ Կովկասյան բանակի 2-րդ համազումարին մասնակցելու համար: Այս կապակցությամբ, Թիֆլիս մեկնելու նախօրյակին, նոյեմբերի 30-ին «Бакинский рабочий» թերթում կուսակցության Կովկասյան երկրային կոմիտեի անունից հրապարակված կոչում Շահումյանը դիմում է ռազմաճակատի և թիկունքի զինվորներին: Հայտնելով դեկտեմբերի 10-ին Կովկասյան ռազմաճակատի 2-րդ համազումարը սկսելու մասին, նա գրում է. «Այդ համազումարում դուք պետք է վճռեք՝ մնա՞ արդյոք պաշտպանողականների և նացիոնալիստների հակահեղափոխական բոլոր երկրամասի անընտ իշխանության դեկի գլուխ, թե՞ Անդրկովկասի իշխանությունը ենթարկել կենտրոնական իշխանությանը՝ Ժողովրդական կոմիսարների սովետին, Ռուսաստանի բանվորազյուղացիական կառավարությանը»:

Թիֆլիսում Շահումյանը կուսակցության երկրային կոմիտեի անդամների հետ եռանդուն գործունեություն է ծավալում բանակային 2-րդ համազումարում կուսակցության գիծն անցկացնելու համար: Նա մասնակցում է նաև Թիֆլիսի սովետի նիստին, որտեղ բանավեճի մեջ է մտնում Ն. Ժողովարայի հետ և կոնկրետ փաստերով մերկացնում է նրա հակահեղափոխական վարքագիծը:

Դեկտեմբերի 8-ին Շահումյանը ելույթ է ունենում Հավլաբարի ակումբում: Նա ներկա գտնվողներին պարզաբանում է Հյուսիսային Կովկասում հակահեղափոխական ուժերին օգնելու գործում կովկասյան իշխանությունների խաղաղած վնասակար դերը:

Այդ ելույթի հիման վրա 1917 թ. դեկտեմբերի 12-ին «Кавказский рабочий» թերթում Շահումյանը հրապարակում է «Կովկասյան պաշտպանողականները Կարաուլովի դաշնակիցներն են» հոդվածը:

Շահումյանը Հյուսիսային Կովկասից ստացված հավաստի լուրերի հիման վրա ներկայացնում է բնակչության նկատմամբ Կարաուլովի գործադրած բռնությունները, երկաթգծի քայքայումն ու տրանսպորտային կապի դադարեցումը և նշում է, որ այդ ամենի հետևանքով «արդեն երեք շաբաթ է, ինչ Հյուսիսային Կովկասից հացի բեռ չի ստացվում Անդրկովկասի համար»:

Այս ամենի հետևանքով ռազմաճակատում կանգնած զորքն ու Անդրկովկասի բնակչությունը անխուսափելի սովի են դատապարտված: Իսկ կովկասյան կառավարող կուսակցություններն այդ իրողությունից անհրաժեշտ եզրակացություն անելու փոխարեն շարունակում են իրենց դավաճանական դերը, Կարաուլովին ցույց տալով ռազմական օգնություն:

Շահումյանը բերում է փաստեր այդ օգնության մասին և ընդգծում է, որ կովկասյան պաշտպանողականների և Կովկասյան ռազմաճակատի զինվորների պատգամավորների սովետի առաջին համազումարում 1917 թ. մայիսին մեծամասամբ էսէռներից և մենշևիկներից ընտրված բանակի կովկասյան երկրային կենտրոնի վրա է ընկնում «Հյուսիսային Կովկասի հակահեղափոխությանն աջակցելու և զինելու ամբողջ բարոյական ու քաղաքական պատասխանատվությունը»:

Այնուհետև Շահումյանը գրում է. «Ծանր պատասխանատվություն է ընկնում երկրային կենտրոնի վրա նաև նրա համար, որ շնորհիվ նրանց քաղաքականության, Անդրկովկասի բնակչությունը և զորքը մասնավոր են սովի: Պարոնայք Ժողովարայի և Գեգեչկորին իրենց այս հանցավոր, ակնհայտ, թե գաղտնի դաշինքը Կարաուլով-Կալեդինի հետ պատճառաբանում էին նրանով, որ այդ անհրաժեշտ է Անդրկովկասին հաց մատակարարելու համար: Մենք մատնանշում էինք նրանց, որ հատկապես իրենց հանցավոր քաղաքականությունն անխուսափելիորեն հանցնելու է երկաթուղու քայքայմանը ու մատակարարման դադարեցմանը: Մեր մատնանշումները, ցավոք սրտի, արդարացան ավելի վաղ, քան մենք սպասում էինք»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 52-55):

1917 թ. դեկտեմբերի 12-ին իր աշխատանքն է սկսում Կովկասյան բանակի երկրային 2-րդ համազումարը, որտեղ բոլշևիկյան խմբակցությունն ամենամեծն էր, ուներ 160 պատվիրակ: Համազումարի ամբողջ ընթացքում Շահումյանը մեծ դեր է խաղում: Նա նախ հանգամանային փաստերով առարկում է էսէռ Դոնսկոյին համազումարի նախագահ ընտրելու առաջարկությանը, հատկապես ընդգծելով, որ նրա վրա «բանվոր դատակարգի մատնիչի մեծազույն հանցանքն է ծանրացել», որն ընդդեմ հեղափոխության դավադրության մեջ է մտել Կալեդինի և մյուս հակահեղափոխականների հետ:

Ջկարողանալով Դոնսկոյին անցկացնել համազումարի նախագահ, էսէռները մենշևիկների հետ փորձում են մենշևիկներից ու էսէռներից կազմված բանակի հին երկրային սովետին վճռական ձայնի իրավունքով տալ 15 տեղ: Շահումյանի ջանքերով այս փորձն էլ է ձախողվում:

Շահումյանը ելույթ է ունենում համազումարի օրակարգում դրված բոլոր հարցերի քննարկման ժամանակ: Նրա ելույթները հողվածների տեսքով հրապարակվել են մամուլում:

Առաջին. «Նացիոնալիզմը Կովկասում և ռազմաճակատի մերկացումը» (հրապարակվել է 1917 թ. դեկտեմբերի 17-ին «Кавказский рабочий» թերթում):

Կովկասում նացիոնալիզմը համարելով հեղափոխության ամենատիրեղ թշնամի, Շահումյանը հիշեցնում է, որ 1905 թ. «մուսուլմանների տարերա-
յին նացիոնալիզմի և հայերի կազմակերպված նացիոնալիզմի» հասցրած հայ-թուրքական արյունոտ կոտորածը, երկու ժողովուրդների միջև գոյու-
թյուն ունեցած ազգային թշնամանքը մահացու հարված են հասցրել հեղա-
փոխությանը և գրում է հետևյալը. «Նույն նացիոնալիզմը չար կատակ է
անում կովկասյան ժողովուրդների հետ և այժմ՝ 1917 թ. հեղափոխությու-
նում: Նացիոնալիստական այն կուրսը, որ բռնել են Անդրկովկասի երեք խոչ-
որագույն կուսակցությունները, առաջին իսկ քայլերից ամենացավալի
հետևանքների է հասցնում»:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ Կովկասում սրվող դասակարգային
պայքարի միջնորդություն և Կովկասում գտնվող կենսիլիոնանոց ուսա բանակի
ներկայությունը կատարվում են «ըստ ազգությունների առանձնանալու և
ինքնորոշվելու ձգտումը, ազգային տարածքները սահամանազատելու փոր-
ձերը, սեփական ազգային գորագնդերի ստեղծելը»:

Շահումյանը հիշեցնում է, որ ուսա զինվորներին «առանձնապես շատ է
վրդովեցնում», որ ազգային գորամասերը իրենց հաչվին են գինվում ու զգե-
րատարվում, որ հաճախ գնդերի զինաթափմամբ են ստեղծվում ազգային գո-
րամասերը, որ այդ ազգային գորամասերին ավելի շատ են ուշադրություն
դարձնում, քան հին գործին:

Ռուս զինվորների վրդովմունքի մյուս պատճառն էլ Շահումյանը համար-
ում է այն, որ Անդրկովկասյան կոմիսարիատի միջոցով Կովկասի ազգու-
թյունները «փաստորեն անջատվել են հեղափոխական Ռուսաստանից և չեն
ցանկանում ճանաչել ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը,
այն կատարողության իշխանությունը, որը նախ և առաջ բանվորների և զին-
վորների ջանքերով է ստեղծվել, որը գյուղացիությանն արդեն սպառնել է
հողով և երկրին զինադադար է սովել»:

Կովկասյան նացիոնալիզմի «ամենացավալի հետևանքը» Շահումյանը
համարում է ռազմաճակատի կազմալուծումը և փաստում է. «Բնական է,
քանի դեռ հաշտություն չի կնքվել, զորքերը պետք է պաշտպանեն ռազմա-
ճակատը. սակայն կովկասյան նացիոնալիստների ստեղծած միջնորդական
կա՛ն արդյոք ուժեր, որոնք կարողանային ուսա գորամասերին իրենց դիրքե-
րում պահել»:

Իհարկե, ուսական զորքի համար ամենահեղինակավոր ձայնը կլինե՞ր
բուլչեիկյան կուսակցության ձայնը, բայց, ինչպես նշում է Շահումյանը, նա էլ

«անգոր է կանգնեցնելու ռազմաճակատից ելեղ այն տարերային շարժումը,
որ սկսվել է գրեթե ամեն տեղ»:

Անդրկովկասյան ավտոնոմ կոմիսարիատի կազմվելուց հետո, երբ խզվեց
կապը Ռուսաստանի դեմոկրատիայի հետ, պարզ է դառնում, թե դա ինչ
հետևանքներ կունենա: «Եվ մենք,- գրում է Շահումյանը,- առաջին իսկ օրից
բերանացի ու սուպազիր խոսքով զգուշացնում էինք այդ մասին Անդրկովկա-
սի կառավարող կուսակցություններին»:

«Մենք,- շարունակում է Շահումյանը,- ասում էինք նրանց. դուք գրավել
եք այնպիսի դիրք, որը ձեզ կխորտակի. դա անխուսափելիորեն կհանգեցնի
ռազմաճակատը բացելուն: Բանակը... ձեր նացիոնալիստական քաղաքակա-
րությունից դժգոհ տարերայնորեն, անկազմակերպ կերպով կհորդի ռազմա-
ճակատից և կարբի ու կհեղեղի ձեզ: Այժմ այդ բոլորն արդարացավ: Արդեն
մի քանի կորպուս շարժվել են տեղից ու գալիս են»:

Ստեղծված իրավիճակը նկատի ունենալով, Շահումյանը գտնում է, որ
արդեն ուշ է և ոչ մի միջոց չի օգնի զորքի տարերային շարժումը կանխելու
համար: Երբ ուշ չէր և դեռ ժամանակ կար, Շահումյանը կովկասյան իշխա-
նություններին կոչ էր անում. «Հրաժարվեցեք ձեր նացիոնալիստական ու
պարտիկուլյար քաղաքականությունից, ճանաչեցեք ժողովրդական կոմի-
սարների սովետի հեղափոխական իշխանությունը, կենսագործեցեք նրա հո-
ղային ու բանվորական դեկրետները և բանակի դեմոկրատացումը, խզեք ձեր
կապերը Կարաուլովից և Կալեդինից, մաքրվեք ձեր հակահեղափոխական
չտարբից, որին գլխավորում են Պրեկասկին ու Դոնսկոյը, արշավի գնացեք
Հյուսիսային Կովկասի հակահեղափոխության դեմ, ձեր ձեռքը վերցրեք եր-
կաթուղին Հյուսիսային Կովկասում, բանակն ու բնակչությունն առանց հա-
ցի չխողնեք,- այն ժամանակ բանակը վստահությունը կտազորվի դեպի ձեզ և
կարող է ճանաչել ձեր իշխանությունն այնպես, ինչպես բանակը վստահում
է Արևմտյան ռազմաճակատում ժողովրդական կոմիսարների սովետին և
կատարում է իր հեղափոխական պարտքը՝ պաշտպանելով ռազմաճակատը
մինչև հաշտություն կնքելը»:

Եթե, ընդգծում էր Շահումյանը, թվարկած միջոցառումները կատարվեն,
սպա դեռևս հնարավոր կլինի զորքերի տեղափոխումը կանոնավորել և զոր-
քերի մի մասը պահել ռազմաճակատում:

Շահումյանը վճռականորեն մերկացնում է մենչեիկներին, որոնք փոր-
ձում են ռազմաճակատից զորքերի հեռանալու պատճառ համարել բուլչեիկ-
ների ազիտացիան, այն դեպքում, երբ հենց սկզբից էլ բուլչեիկները Շահում-

յանի գլխավորությունը հանդես էին գալիս գործերը ռազմաճակատում պահելու օգտին:

«Մենք,- այնուհետև գրում էր Շահումյանը,- մասնանշում ենք նրանց (մենչևիկների) քաղաքականության անխուսափելի հետևանքները և, երբ մեր մասնանշումներն արդարանում են, նրանք ուզում են մեր վրա բացել մեղքը»:

Շահումյանն ընդգծում է. «Բանակին գրգռում և ռազմաճակատից չարժու էն ոչ թե մեր «ազիտացիան», ոչ թե մեր խուբերը ձեր նացիոնալիզմի մասին, այլ ձեր նացիոնալիստական գործերը»:

Եվ նկատի ունենալով մենչևիկների քաղաքական այդ խաղը, Շահումյանը նրանց զգուշացնում է. «Ոչ մի փորձ ձեր վրայից գցելու պատասխանատվությունը ձեր քաղաքական կարճատեսության ու անտակտության, ձեր նացիոնալիզմի և ձեր հակահեղափոխության համար, որի պատճառով բարակը մի գրոչի վատահոլություն էլ չի տաձում դեպի ձեզ,- չի կարող ձեզ օգնել»:

1917 թ. Շահումյանն անջատողական ու նացիոնալիստական քաղաքականության նախաձեռնողներ է համարում բացահայտորեն վրացական ազգային կուսակցություն դարձած մենչևիկներին, և ոչ թե հին նացիոնալիստ դաշնակցականներին, որովհետև նրանք (մենչևիկները) «ատալինը դրեցին Վրաստանի ազգային տարածքային ավտոնոմիայի պահանջը, նրանք եղան ազգային գնդեր ստեղծելու նախաձեռնողները»:

Եվ այս ցավալի հետևանքների գլխավոր պատմական պատասխանատվությունը Շահումյանը դնում է Ժորդանիայի, Գեգեչկորու և Ընկ. վրա և եզրակացնում, որ «այդ պատասխանատվությունից նրանք չեն խուսափի և նրանց համար ոչ մի արդարացում գոյություն չունի»: (Ստ. Շահումյան, **Ես յն ստեղծ. հ. չորրորդ. էջ 56-59**):

Երկրորդ. «Վովկայան բանակի ետ քաշվելու առթիվ» (հրատարակվել է 1917 թ. դեկտեմբերի 20-ին «Кавказский рабочий» թերթում):

Շահումյանը դարձյալ անդրադառնում է ռազմաճակատից գործերի հեռանալու խնդրին, ընդգծելով, որ ցավալի կլինեն, եթե բոլոր գործերը միանգամից հեռանալին իրենց դիրքերից:

Ճիշտ է, հաստատվել է զինադարար, բայց դեռևս հաշտություն չկա, նաև քիչ հավանական է, որ պատերազմը վերակալի, սակայն, ինչպես նշում է Շահումյանը, «որքան էլ քիչ հավանական լինի պատերազմի վերակուտը, այնուամենայնիվ, անհրաժեշտ է ռազմաճակատում գեթ որևէ պաշտպան գործ մաս»:

Այնուհետև Շահումյանը զգուշացնում է. «Եթե թուրքական բանակը չի ուզում և չի կարող պատերազմել, ապա բաց տեղում առաջ չարժվել նա ազատ կերպով կարող է: Իսկ մենք այնտեղ ունենք շատ գույք, ամրություններ ու հանդերձանք, որոնք պաշտպանության կարիք են զգում: Բացի դրանից, բանակի միաժամանակ ետ քաշվելն աներևակայելի դժվարություններ է ստեղծում զինվորների համար գործերն ու պարենը տեղափոխելու իմաստով: Երկաթուղիները չեն կարող այդպես շուտ տեղափոխել բոլոր ցանկացողներին: Տեղաշարժման ժամանակ աստիճանականությունն ու պլանայնությունը չափազանց անհրաժեշտ են, ամենից առաջ, հենց բանակի շահերի տեսակետից»:

Բայց դա բոլորը չէր: Ռազմաճակատից բանակի հեռանալու հարցը ուներ մեկ այլ, ավելի վտանգավոր կողմ, որի մասին Շահումյանն ընդգծում է հետևյալը. «Ռուսական գործերի անակնկալ ետ քաշվելը չափազանց ծանր դրություն է ստեղծում Թուրքահայաստանում: Մենք արդեն գիտենք այս անիծյալ պատերազմի ժամանակ հայերի կրած հարյուր հազարավոր զոհերի մասին: (Ընդգծումն իմն է-Վ. Պ.) Հավանորեն, դրանցից պակաս թվով խաղաղ քրդեր ու թուրքեր չեն ոչնչացել ռազմական գործողություններից, սովից ու ցրտից: Ռուսական գործերի ետ քաշվելու լուրն առաջ կրեքի հարազատ վայրերից փախած, մի կողմից՝ թուրքերի ու քրդերի, մյուս կողմից՝ հայերի շարժում: Իմանալով իրերի դրությունն այդ դժբախտ երկրում, մենք պետք է հավատացած լինենք, որ այնտեղ մի նոր դժոխք է ստեղծվում, անմեղ խաղաղ բնակչության արյան գետեր են հոսելու: Մեր հեղափոխական բանակը չի կարող անտարբեր մնալ դեպի այդ բնակչության բախտը»:

Նկատի ունենալով, որ Ռուսաստանից անջատվելու համար կովկասյան պաշտպանողական և նացիոնալիստական կուսակցությունների քաղաքականությունից Վովկասյան բանակը դժգոհելու շատ հիմքեր ունի, Շահումյանը հայտարարում է. «Մենք լիովին լմբռնում ենք, թե ինչու նրանք չեն ուզում այլևս մնալ այստեղ՝ Անդրկովկասյան կոմիտարիատի դավաճանական, հակահեղափոխական քաղաքականությունից, Ռուսաստանի բանվորազյուղացիական կառավարության թշնամիների և Կալեդինների ու Կարաուլովների բարեկամների քաղաքականությունից հետո»:

«Մենք,- շարունակում է Շահումյանը,- բազմիցս մատնանշել ենք, որ բանակի ընդհանուր հոգնածության և հարազատ օժախը՝ խաղաղ կյանքի վերադառնալու նրա ցանկության պայմաններում անդրկովկասյան միևնույնի, պարոնայք Գեգեչկորիների ու Ընկ. այդպիսի նացիոնալիստական ու

Տակահեղափոխական քաղաքականությունը պետք է անխուսափելիորեն հասցնի ամենաողորմագույն հետևանքների»:

Այս ամենն էլ նկատի ունենալով Շահումյանը բանակին կոչ է անում չինթարկվել նացիոնալիստների պրոփոկագիային, իսկ «գիտակցից ընկեր գինվորները պետք է բացատրեն զորքերին, որ ժողովրդական մասաները, որ գյուղական չքավորությունը, որին նրանք տեսնում են իրենց շուրջը, մեղք չունեն Անդրկովկասյան կոմիսարիատի պարապլուխների դավաճանություն մեջ»:

Դիմելով ռուս գինվորներին, Շահումյանը կոչ է անում. «Հայ, քուրդ և մուսուլման գյուղացիները, որոնք ապրում են այդ երկրում և նրանք, ովքեր կհանդիպեն ետ քաջվող զորամասերի անցման ճանապարհին, նույնպիսի եղբայրական վերաբերմունքի են արժանի մեր կողմից, ինչպես և ռուս գյուղացիները, ձեր հայրերը, ձեր կանայք ու քույրերը»:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ շարունակելու են մերկացնել անդրկովկասյան պաշտպանողականների նացիոնալիստական ու հակահեղափոխական քաղաքականությունը, բայց դրա հետ միասին չպետք է թույլ տալ, որ «նրանց փոխարեն տուժեն ժողովրդական մասաներն այնտեղ, գրավված վայրերում, և այստեղ, Անդրկովկասում»:

Շահումյանը գիտակցից ընկերների առջև խնդիր է դնում՝ զորքի մի մասը պահել ռազմաճակատում, «ինչպես այդ բնակչության շահերից ելնելով, այնպես էլ պետական նկատառումներով և սեփական օգուտի նկատառումներով»:

Հորվածի վերջում Շահումյանը գրում է, որ «մեր թշնամի պաշտպանողականները ուզում են բանակը պատկերացնել որպես ջարդարարների բանդաներ» և գինվորներին կոչ է անում. «Մի՞ք ենթարկվի, ընկերներ, նացիոնալիստների պրոփոկագիային, մի՞ք արդարացի մեր թշնամիների գրպարություն ու ինսինուացիաները»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 60-62):

Երրորդ «Ճատ Հյուսիսային Կովկասի դեպքերի մասին Կովկասյան բանակի երկրային երկրորդ համագումարում» (հրատարակվել է 1917 թ. դեկտեմբերի 30-ին «Известия Бакинского Совета» թերթում):

Իր ելույթի սկզբում Շահումյանն անդրադառնում է իրենից առաջ Հյուսիսային Կովկասում տիրող դրություն մասին հանդես եկած Հոետորների ելույթներին, տալիս է դրանց գնահատականը: Նրանցից մի մասը՝ կաթոլիկական սպա կազմը, լեռնական իշխան Բամմատովը, երկրային կենտրոնի ներկայացուցիչ Զվոնարյովը ժխտում են Հյուսիսային Կովկասում հակահեղափոխության մասին և մեղադրում են միայն գինվորներին:

Շահումյանն ընդգծում է, որ անտեղի են Հյուսիսային Կովկասում հակահեղափոխությունը ժխտելու այդ հոետորների և նրանց պաշտպանների փորձերը, ինչպես նաև այդ հակահեղափոխության հետ ունեցած կապը ժխտելու մենչևիկների ջանքերը:

Եվ իր ասածն հիմնավորելու համար Շահումյանը հրապարակում է մի շարք փաստեր Հյուսիսային Կովկասի հակահեղափոխական ուժերին զենք ու զինամթերք ուղարկելու մասին և դրա համար պահանջում է հեռացնել Պրժևալսկուն, Դոնսկոյին՝ իրենց համախոհների հետ միասին: Շահումյանն ուղղակի մեղադրանք է ներկայացնում Բանակի երկրային սովետին հակահեղափոխության թողտուխության և նրան աջակցելու համար»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 63-66):

«ԱՐԵՎ» ԹԵՐԹԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Բաբլի դաշնակցության կենտրոնական կոմիտեի «Արև» թերթը խմբագրական հոդվածում գրում է, որ Պետրոգրադում կազմված ժողովրդական կոմիտեների կառավարության օրինականությունը կովկասյան իշխանությունները չեն ճանաչել, որպեսզի չկասեցնեն Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքերի հեռանալը:

«Ամենքին յայտնի է,- շարունակում է «Արև» թերթը,- որ զորացրումը տեղի ունեցաւ ոչ թէ Պետրոգրադի կառավարութեան հրահանգով, այլ Կովկասյան հրամանատարի, ուրեմն և Կովկասեան կոմիսարիատի հրամանով»:

«Բոլշևիզմի դէմ,- շարունակում է թերթը,- կռիւ մղելու նպատակով՝ կովկասեան գինւորական իշխանութիւնը միացած Կովկասեան կոմիսարիատի հետ դատարկեց մեր Ֆրոնտը, չնայած այն բանին, որ ամենից շատ նրանք էին խօսում Ֆրոնտի պաշտպանութեան մասին: Այդ պաշտպանութիւնը խօսքերով ու կոչերով չէր կարող տեղի ունենալ, այլ չիտակ, անկեղծ, ակտիվ գործունէութեամբ, որ պակասեց մեր երկրի իշխանութեան»:

Եվ այս պայմաններում «Արև»-ը տարօրինակ է համարում, որ «Կովկասեան հրամանատարի գորացրման հրամանը ամենից շատ քննադատութեան ենթարկեց մեր երկրի բոլշևիկեան խաւերի և խորհուրդների կողմից: Կոմիսարիատը և կոմիսարիատի մեջ նստած դեմոկրատները չկարողացան կշռադատել, որ այս բոլորի հետևանքը կարող է շատ ողբերգական լինել ամբողջ երկրի համար»:

Թերթը նաև փաստում է, որ Կովկասյան կոմիսարիատի «թույլ գործունէութեան հետևանքով» և զորացրման «ոճբախտ հրահանգի համաձայն»

նազանճակատից հետացող գինավորների դեմ սկսվել է «մի այլանդակ պատե-
րազմ»: Եւ այն մարդիկ, որոնք տարիներ շարունակ, ամենածանր և դժոխա-
յին պայմանների մէջ, պաշտպանել են մեր երկիրը տաճկական զորքերի դի-
մաց, այսօր կոտորուում են մեր երկրի ներսը, մեր իսկ ձեռքով»:

Այնուհետև անդրադառնալով Շամխորի կայարանում ուռւ գինավորներին
սպանելու իրողությանը, «Արև»-ը գրում է. «Կարծիքներ կան, թէ իբր այդ
անհրաժեշտ ընդհարումը գինաթափման պատրուակի տակ կատարւել է Կոմ-
կասեան կոմիսարիատի հրամանով: Եթէ դա ճիշտ է, ապա պէտք է կովկա-
սեան դեմոկրատիան իր ձայնը բարձրացնէ վերջապէս և ցոյց տայ Կոմիսա-
րիատին նրա քաղաքականութեան բոլոր սխալը և այն սարսափելի
հետևանքները, որ կարող են առաջ գալ այդ քաղաքականութիւնից»:

Իմպրազրական հոդվածի վերջում ընդգծվում էր հետևյալը. «Մենք հարց-
նում ենք Կոմիսարիատում նստած դեմոկրատներին, թէ ինչպէ՞ս կատարվեց
Կովկասեան Ֆրոնտի այս անօրինակ դատարկումը, ինչպէ՞ս տեղի ունեցաւ
այս տխրահուշակ զորացրումը և ո՞վ ստեղծեց Կովկասեան բանակի այս սպե-
րախտ կոտորածը:

Իսկ մինչ այդ կովկասեան դեմոկրատիան պէտք է թող չտայ վերջապէս,
որ մեր Ֆրոնտը դատարկվի այսպէս անփառունակ կերպով և մեզ պաշտպա-
նող գինավորը խողովի այսպէս անխիղճ կերպով:

Որովհետև դա ոչ միայն քաղաքական անմտութիւն է, այլև քաղաքական
անազնուութիւն ու ասպերախտութիւն»: («Արև», հունվարի 13, 1918 թ.):

Այսպիսով Բաքվի դաշնակցականների «Արև» թերթը, բացահայտելով
ամբողջ ճշմարտությունը, դատապարտում է Կովկասյան կոմիսարիատում
նստած դեմոկրատներին, որոնց մեջ էին նաև դաշնակցության գործիչները և
որոշակիորեն հանդես է գալիս Կովկասյան ռազմաճակատից ուռւական զոր-
քերը հետացնելու քաղաքականության դեմ, որն այնպես վճռականորեն մեր-
կացնում էր Շահումյանը:

ԿՈՉ՝ ՈՒՂՂՎԱԾ ԲՈՒՈՐ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

Կովկասյան բանակի երկրորդ համազումարի փակումից հետո Շահում-
յանը Կովկասյան բանակի երկրային սովետի անունից հրապարակում է
«Զինավորների բոլոր սովետներին ու կոմիտեներին, Կովկասյան բանակի բո-
լոր գինավորներին» կոչը:

Շահումյանը նշում է, որ Կովկասյան բանակի երկրային համազումարը
պաշտպանել է բանվորազյուղացիական հեղափոխությունը և ժողովրդա-
կան կոմիսարների սովետի իշխանությունը, հողի, հաշտության, բանվորա-
կան վերահսկողության մասին այդ իշխանության դեկրետները:

Նա նշում է նաև, որ համազումարը դատապարտել է աջ էսէյների և
մենչևիկների պաշտպանողական և համաձայնողական քաղաքականությու-
նը և ամբողջովին ընդունել է բանվորների, գինավորների ու գյուղացիների սո-
վետական իշխանությունը և մերժել է Անդրկովկասյան կոմիսարիատի իշ-
խանությունը որպես «ոչ սովետական և ոչ հեղափոխության օրգան»:

Այնուհետև Շահումյանն անդրադառնում է հաշտության խնդրին և դի-
մելով «ընկեր գինավորներին», ընդգծում է, որ մինչև հաշտության կնքվելը,
«դուք չպետք է ինքնակամ թողնեք դիրքերը, առանց ժողովրդական կոմի-
սարների կառավարության ընդհանուր վճռի և բանակի երկրային սովետի
որոշման, դուք չպետք է մերժացնեք ռազմաճակատը և ուռւական հանրա-
պետության ծայրաստների բնակչությանը (նկատի ունի արևմտահայության
ընդհ. Պ.) հանձնեք քրդերի կողմաբռնական բանտանների լիակատար կամայա-
կանությունը»: (Ընդգծումն իմն է-Վ. Պ.):

«Հանուն շուտափույթ հաշտության շահերի» գրում էր Շահումյանը,-
նպատակ ունենալով պահպանել ձեր իսկ կյանքը, պահպանել բազմամիլիոն
գույքը, որը բանվորների ու գյուղացիների սեփականությունն է, ինչպես և
կանխել զորքերի անբարենպաստ չարժույթը, որ կործանարար է Անդրբլաթա-
սի գյուղացիների և բանվորների համար, մենք կոչ ենք անում գինավորների բո-
լոր հեղափոխական կառավարություններին, Կովկասյան բանակի բոլոր
գինավորներին՝ դադարեցնել զորաստների ու գինավորների խմբերի ինքնազ-
բուխ և անբարենպաստ չարժույթը դիրքերից»: (Ընդգծումն իմն է-Վ. Պ.):

Շահումյանը կոչ է անում գեներալ պահեստներն ու գույքը պետական տա-
րածքներ փոխադրելու, հանգրվանները, երկաթուղին, փոստն ու հեռագիրը,
կայարանները, նավամատուցները պաշտպանելու նպատակով բոլոր զորա-
մասերում ու կայազորներում, երկաթուղային կայարաններում ստեղծել զոր-
ացրման կոմիտեներ: «Ժողովրդական ունեցվածքը»- ընդգծում է Շահում-
յանը,- չպետք է հափշտակվի ու ոչնչացվի մի բուռ կողպտիչների կողմից»:

Շահումյանի գրած կոչը երկրային նոր սովետի կողմից ընդունվել և տա-
րածվել է մինչև պատակտումը: Իսկ երբ 1918 թ. հունվարի 3-ին
«Бакинский рабочий» թերթում հրապարակվում է այդ կոչը, արդեն տե-
ղի էր ունեցել պատակտումը և այդ կապակցությամբ Շահումյանը թերթում
տալիս է հետևյալ ծանոթագրությունը:

«Պաշտպանողականները» գրում է Շահումյանը,- իրենց լիտիության մեջ
հասան այնտեղ, որ պահանջեցին հրաժարվել Բանվորազյուղացիական կա-
ռավարության իշխանությունը ճանաչելու վերաբերյալ բանակային համա-

գումարի ընդունած բանաձևից և պահանջում էին, որպեսզի ոչ բանաձևում, ոչ էլ որևէ այլ դիմումի մեջ չհիշատակվի Ժողովրդական կոմիսարների սովետի մասին»:

«Եվ երբ,- սովետացում է Շահումյանը,- երկրային սովետի մեծամասնությունը դրա հետ չհամաձայնվեց և սպա նաև դեկրետ հրատարակեց բանակի դեմոկրատացման մասին, պաշտպանողականները կատարեցին իրենց նոր հանցագործությունը Կովկասյան բանակի դեմ, հենվելով Թիֆլիսում եղած իրենց զինված ուժերի վրա և երկրային սովետն ամբողջապես վերցնելով իրենց ձեռքը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 77-81):

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՌԱԶՄԱ-ՀԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Ձհանելով իրենց նպատակին, կրելով անհաջողություն, աջ էսէռները, մենչևիկիները և նրանց համախոհները հեռանում են Կովկասյան բանակի երկրորդ համազումարից: Նրանք հեռանում են նաև Կովկասյան բանակի երկրային սովետից և Թիֆլիսի մենչևիկյան սովետի հետ միասին ստեղծում են իրենց կենտրոնը:

Այս կապակցությամբ 1917 թ. դեկտեմբերի 28-ին Կովկասյան բանակի հեղափոխական երկրային սովետի անունից Շահումյանը հրապարակում է կոչ՝ ուղղված զինվորների բոլոր սովետներին ու կոմիտեներին, Կովկասյան բանակի բոլոր զինվորներին:

Շահումյանը հայտնում է, որ բանակի երկրային սովետի փոքրամասնությունը թվով 48 անձ՝ մենչևիկիներ, աջ էսէռներ, դաշնակցականներ, ուլրախնացիներ ու կազակներ անջատվելով, իրենց հայտարարել են Կովկասյան բանակի սովետ, ապօրինի զավթելով սովետի շնքը, բոլոր միջոցներն ու սեփականությունը, բանակի ամբողջ կենտրոնական ապարատը:

Իսկ բանվորական և գյուղացիական պատգամավորների երկրային կենտրոնը, որի ճնշող մեծամասնությունը կազմված էր պաշտպանողական և նացիոնալիստական կուսակցությունների ներկայացուցիչներից, ընդունած բանաձևով պաշտպանում է փոքրամասնությունից կազմված բանակի երկրային սովետին:

«Մենք,- ընդգծում է Շահումյանը,- սոցիալ-դեմոկրատ բոլշևիկներն և ձախ էսէռ-սոցիալիստներն, որպես սովետում ձեր ընտրյալների մեծամասնություն, մեզ համարում ենք ամբողջ հեղափոխական Կովկասյան բանակի իր

կական ներկայացուցիչները և նկատի ունենալով ստեղծված դրուժյունը, մեզ հայտարարում ենք Կովկասյան բանակի հեղափոխական երկրային սովետ՝ մինչև բանակային նոր արտակարգ համազումարի հրավիրումը, որը գումարվելու է մոտ ժամանակներս»:

Բանակի ու նրա կենտրոնի կազմավորումից առաջացած հետևանքների ամբողջ պատասխանատվությունը Շահումյանը դնում է պաշտպանողականների վրա:

Շահումյանը հայտնում է Կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեի ստեղծման մասին և կոչ է անում այդպիսի կոմիտեներ ստեղծել նաև զորքերի անցման գլխավոր կետերում: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 82-85):

Իսկ երկրային սովետը մեծամասնությամբ դատապարտում է այդ պարակույց գործիչներին և Գ. Կորզանովի գլխավորությամբ ընտրում է Ռաֆմա-հեղափոխական կոմիտե: Ստեղծված պայմաններից ելնելով, կարճ ժամանակ անց, Ռազմահեղափոխական կոմիտեն Թիֆլիսից փոխադրվում է Բաքու: Կենտրոնական ռազմահեղափոխական կոմիտեի օրինակին հետևելով այդպիսի կոմիտեներ են ստեղծվում նաև Սարիղամիշում, Զուլֆարյում և այլ վայրերում գտնվող զորամասերում, որոնք նպաստում են բոլշևիկների ազդեցության ամրապնդմանը:

ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ՄՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԱՆՈՂՎՈՒՄ Է

Կովկասյան բանակի երկրային երկրորդ համազումարի արդյունքները Շահումյանն ամփոփում է առանձին հոդվածով, որը հրապարակվում է 1917 թ. դեկտեմբերի 30-ին «Бакинский рабочий» թերթում:

Շահումյանը նախ հիշեցնում է, որ 1917 թ. ապրիլի 23-ից մինչև մայիսի 25-ը տեղի ունեցած Կովկասյան բանակի երկրային առաջին համազումարում բոլշևիկների ներկայացուցիչներն այնքան քիչ էին, որ նրանց հաշվի չէին առնում: Այդ համազումարում մեծամասնություն էին կազմում էսէռներն ու մենչևիկիները:

Դրուժյունը փոխվել էր երկրորդ համազումարում, որտեղ արդեն բոլշևիկյան խմբակցությունն ուներ 160 մարդ, իսկ աջ էսէռները՝ 100, մենչևիկիները՝ 30, ձախ էսէռները՝ 15 մարդ: Համազումարին մասնակցում էին կազակային

խուսճը, դաշնակցականները, անկուսակցականները, որոնք քիչ ձայն ունեին: Գեգեչկորին անվայել միջոցներով փորձում է բուլչեիկների գլխավորած ձախ թևին գրկել մեծամասնությունից, բայց Հաջողություն չի հասնում:

Շահումյանը հիշատակում է այն հարցերը, որոնց վերաբերյալ ընդունվել են բուլչեիկների ներկայացրած բանաձևերը, դրանց մեջ Հատկապես նշելով ռազմաճակատի, թուրք-հայկական հարցի, մեկնող զորամասերի գինման և այլնի մասին: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 67-70):

Թուրք-հայկական հարցը սերտորեն առնչվում էր ռազմաճակատի մերկացման, զորքերի հեռացման հետ: Հայ ժողովուրդը, որը հսկայական վնասներ էր կրել թուրքական բարբարոսների պատճառով, խորապես չահագրդված էր, որպեսզի զորքերը մնային ռազմաճակատում: Այդ ցանկությունը համազումարում արտահայտում էին հայ բուլչեիկները, ինչպես նաև Շահումյանը իր ունեցած զեկուցման մեջ:

Այս կապակցությամբ էլ, ինչպես նշում է Շահումյանը, Կովկասյան բանակի երկրորդ համազումարն ընդունում է բանաձև «Թուրք-հայկական հարցի մասին»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 69): Սակայն, ցավոք, այդ բանաձևը չի պահպանվել: Ժամանակին Վրաստանի և Ադրբեջանի արևիմներում ուսումնասիրություն կատարելիս, ինձ չի հաջողվել գտնել այդ բանաձևը: Բայց դատելով նախորդ էջերում հիշատակված Շահումյանի զեկուցման բովանդակությունից, փաստահար կարելի է եզրակացնել, թե այդ բանաձևում ինչ հարցեր են բարձրացվել:

Ձևանդուրժելով համազումարում Շահումյանի ունեցած հեղինակությունն ու մեծ ազդեցությունը, էսէտա-մենչևիկյան խմբակցությունը Գեգեչկորիի գլխավորությամբ դիմում է ամեն միջոցի նրան վարկաբեկելու կամ համազումարից հեռացնելու համար:

Համազումարի առաջին օրերին Գեգեչկորին իր ելույթում Շահումյանին մեղադրում է նացիոնալիզմի մեջ, որ նա իր քաղաքականությունը թշնամացնում է ազգերին:

Գեգեչկորիի այս գրավարտության կապակցությամբ համազումարը ձայների մեծամասնությամբ ընդունում է բուլչեիկյան խմբակցության բանաձևը, որտեղ ընդգծվում էր, որ ոչ թե Շահումյանն ու բուլչեիկներն են ազգերին լարում միմյանց դեմ, այլ կովկասյան նացիոնալիստները, որոնք իրենց քաղաքականությամբ բորբոքում են ազգամիջյան թշնամանք: («Кавказский рабочий», 20. 12. 1917):

Երբ էսէտա-մենչևիկյան խմբակցությանը չի հաջողվում Շահումյանին

մեկուսացնել, նվազեցնել նրա ազդեցությունը, դիմում են նոր միջոցի, օգտագործելով դեկտեմբերի 16-ին բուլչեիկ պատվիրակների կողմից առաջարկված Հյուսիսային Կովկասում տիրող դրությունից մասին բանաձևը: Այդ բանաձևով առաջարկվում էր համազումարի անունից արտակարգ լիազորություններով օժտված պատվիրակություն ուղարկել Հյուսիսային Կովկաս:

էսէտա-մենչևիկյան պատվիրակության անունից Գեգեչկորին պնդում է, որ այդ պատվիրակությունը ղեկավարի Շահումյանը: Նրանց նպատակը պարզ էր. նախ դրանով Շահումյանին հեռացնում էին համազումարից և, երկրորդ Հյուսիսային Կովկաս մեկնելիս երաշխիք չկար Շահումյանի կյանքի անվտանգության համար: Համազումարի մեծամասնությունը մերժում է Գեգեչկորիի առաջարկությունը:

ՍՈՎԵՏՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԿՐԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1917 թ. դեկտեմբերի 17-23-ին տեղի է ունենում բանվորների պատգամավորների սովետի կովկասյան երկրային առաջին համազումարը: Մենչևիկները կեղծիքի ու խարդախության միջոցով կարողացել էին համազումարում ապահովել մեծամասնություն:

Մենչևիկների խարդախության և, ընդհանրապես, Կովկասյան երկրամասի բանվորների պատգամավորների սովետների առաջին համազումարի մասին Շահումյանն անդրադարձել է 1918 թ. հունվարի 1-ին «Бакинских рабочих» թերթում հրատարակած հոդվածում:

Շահումյանը նշում է, որ պաշտպանողական երկրային սովետը սահմանել էր 500 բանվորից մեկ պատգամավոր ընտրելու նորմը: Միայն Բաքվի սովետն այդ նորմի համաձայն պետք է համազումար ուղարկեր 160 պատգամավորներ, որոնց ուղևորության համար հարկավոր էր վճարել բավական մեծ գումար՝ 24 հազար ռուբլի: Նույնպիսի դժվարություն էր ստեղծվել նաև մյուս 15 բուլչեիկյան և ձախ էսէտական սովետների համար:

Փաստորեն այդ սովետները միավորում էին 198. 300 բանվոր և 397 պատգամավոր ուղարկելու իրավունք ունեին: Դրա փոխարեն ուղարկում են ընդամենը 91 պատգամավոր, որոնց բոլորի մեկնման համար հարկավոր էր ծախսել ավելի քան կես միլիոն ռուբլի: Իսկ մենչևիկների ազդեցության տակ գտնվող Թիֆլիսի և Քուլթայի սովետները, որոնք միավորում էին 80 հազար բանվոր, որոնց մեծ մասը խանութպաններ ու չինովիկներ էին, ուղարկում են 200 պատգամավոր և դրանով ապահովվում է ձայների մեծամասնություն:

Բաքվի բուլչեիկ պատգամավորները Շահումյանի գլխավորությամբ պա-

Հանձնում են ներկայացուցչական Հավասարեցման Համար 91 պատգամավորից յուրաքանչյուրին տալ 4 ձայն:

Երբ Համագումարի մեծամասնությունը մերժում է այս արդարացի պահանջը, բողոքի և ձայն էսէտ 91 պատգամավորները հեռանում են Համագումարից և Հրավիրում են իրենց առանձին Համագումարը, որն ընդունում է Անդրկովկասյան կոմիսարիատի իշխանությունը չճանաչելու և նրան դատապարտելու բանաձև: Միաժամանակ Համագումարը ճանաչում է Ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը:

Իսկ մենչևիկները Ժողովրդային և Գեգեչկորիի ղեկավարությունը իրենց հայտարարում են սովետի «արտակարգ» Համագումար և ընդունում են Անդրկովկասյան կոմիսարիատին աջակցելու մասին բանաձև:

Հորվածի վերջում Շահումյանը ողջունում է բանակային Համագումարի և Կոմկուսի պրոլետարական սովետների համագումարի որոշումները, և ընդգծում է, որ նրանք «պճուսպես խզեցին կուսր պաշտպանողականություն և համաձայնողականություն հետ և ճանաչեցին Ժողովրդական կոմիսարների սովետի հեղափոխական իշխանությունը»: (Սու. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 71-74):

1917 թ. դեկտեմբերի վերջին Շահումյանը Թիֆլիսից վերադառնում է Բաբու: Նա լինում է բանվորների ու գինվորների ժողովներում, զեկուցում է Թիֆլիսում տեղի ունեցած վերահիշյալ Համագումարների մասին, ներկայացնում է էսէտների, մենչևիկների, մուսավաթականների ու նրանց միացած դաշնակների հակահեղափոխական գործունեությունը և, ելնելով ստեղծված իրավիճակից, հիմնավորում է Կովկասում սովետական իշխանություն հաստատելու անհրաժեշտությունը:

Շահումյանը շարունակում էր կարևորել քաղաքին նախահանքային շրջանները միավորելու հարցը: Դրան է նվիրում 1918 թ. Հունվարի 1-ին «Бакинский рабочий» թերթում հրատարակված «Հանքերի միացումը քաղաքին» հոդվածը: Ներկայացնելով այդ ուղղությամբ տարված պայքարի ընթացքը, Շահումյանը հարկ է համարում ամենից առաջ դիմել «սոցիալիստական» բոլկին՝ քաղաքային դումայում նստած էսէտներին ու մենչևիկներին:

Նա հիշեցնում է, որ մեկ ամիս առաջ նոր քաղաքային դուման որոշել էր միացման և շրջաններում շուտով ընտրություն կատարելու անհրաժեշտության մասին և այդ բոլկի ներկայացուցիչներին հարցնում է, թե ինչո՞ւ են նրանք «ամստեսում ու սոմահարում հանքային շրջանների 120 հազարանոց բնակչության իրավունքները: Ինչո՞վ բացատրել այդպիսի ծաղրածանակը «դեմոկրատական» դումայի կողմից»:

Շահումյանը գրում է, որ մուսուլմանական բեկերի ու կապիտալիստների անուսից մուսավաթականների ղեկավարներ Թոփչիբաշևն ու Աչուրովը վախեցրել են դումայում նստած էսէտներին ու մենչևիկներին, նրանց սպառնալով, թե «թույլ չեն տա «եկվորներին» (այսինքն բանվորներին-Վ. Պ.) կարգադրություններ անել մուսուլմանական թագավորության մեջ»:

Շահումյանը նշում է, որ մուսավաթականների այդպիսի վերաբերմունքը հայտնի էր Բաբվի սովետին, բայց նրանց սպառնալիքները հաշվի չեն առնվել, որովհետև, ինչպես գրում է Շահումյանը, «մենք գիտեինք, որ հանքերի միացումը ոչ միայն չի հակասում մուսուլմանական դեմոկրատիայի շահերին, այլև թերադրվում է նրա սեփական շահերով»:

«Մենք,- հայտարարում է Շահումյանը,- կանգնած ենք մեր նախկին դիրքում, մենք բանվորական մասանների հետ միասին պահանջում ենք հանքերը միացնել»: (Սու. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 75-76):

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ 1917 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ

1917 թ. դեկտեմբերի 31-ին Բաբվի տեխնիկական ուսումնարանում Շահումյանը Հանդես է գալիս «Կպահեն արդյոք բողոքիկները իրենց ձեռքում պետական իշխանությունը» դասախոսությամբ, որի միայն լրագրային հաշվետվությունն է պահպանվել:

Դասախոսության սկզբում Շահումյանը պարզաբանում է հեղափոխության բնույթը, նշում է, որ դա մենչևիկների համար բուրժուական է, իսկ պրոլետարիատի համար՝ ոչ: Նա համեմատում է Ֆրանսիական հեղափոխության հետ ուսական հեղափոխությունը և նշում է ամենահիմնական ստանձնահատկությունը, այն է, որ Ռուսաստանում գոյություն ունի որպես ինքնուրույն կազմակերպված ուժ՝ պրոլետարիատը:

Այնուհետև Շահումյանը նշում է, որ ուսական հեղափոխության առջև ծառայած են հողի, հաշտության, արտադրության կարգավորման և այլ հարցեր, որոնք ի վիճակի են լուծել միայն հեղափոխական դասակարգերը՝ բանվոր դասակարգն ու գյուղացիությունը: Իսկ բուրժուացիան ի վիճակի չէ լուծելու այդ հարցերը, քանի որ նա հեղափոխական չէ:

Շահումյանը հերքում է պաշտպանողականների այն պնդումը, թե այդպիսի տակտիկան տանում է դեպի պրոլետարիատի մեկուսացում: Նրանք իրենց այս տեսակետը պնդում են, գտնելով, թե «պրոլետարիատը չի կարող տեխնիկապես տիրապետել պետական մեքենային և այն գործի գցել»:

կուսակցությունների կենտրոնական կոմիտեի անդամ, բանվորների և զինվորների պատգամավորների Բաքվի սովետի նախագահ Ստեփան Շահումյանը նշանակված է Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար, մինչև Կովկասում երկրամասային սովետական իշխանություն կազմակերպելը»:

Վերոհիշյալ փաստաթղթերը և Հատկացված գումարը Թիֆլիս է բերում Կամոն՝ Հաղթահարելով ճանապարհի բազում արգելքներ: 1918 թ. Հունվարի 6-ին Շահումյանը Բաքվից մեկնում է Թիֆլիս՝ Կովկասի ժամանակավոր արտակարգ կոմիսարի պարտականությունները ստանձնելու համար:

Սակայն Հունվարի 7-13-ին Շահումյանը մնում է Գանձակում, քանի որ ճանապարհը փակել էին մենչևիկների և մուսավաթականների զնդերը: Շահումյանին մեծ դժվարությամբ հաջողվում է Գանձակ-Ղազախ-Շանչալի-Իջևան-Իրիջան-Ղարաբիխա շրջանցիկ ճանապարհով հասնել Թիֆլիս:

Աքաբանազ Մուսվաթյանը իր հուշերում պատմում է Գանձակից դեպի Թիֆլիս ճանապարհակցելու մասին: «Միակ ճանապարհը,- գրել է նա,- դեպի Թիֆլիս ձգված էր Գանձակի և Ղազախի գավառների հարավային լեռնազոտով: Երկար մտածելուց հետո կանգ առանք այդ ելքի վրա: Մի քանի երիտասարդներ (նրանց թվում աբտորից նոր վերադարձած և այնտեղ հեղափոխականներից շատ ազգական Նիկոլ) և ճանապարհները լավ իմացող Հանես ապերն իրենց պատրաստակամությունը Հայտնեցին ուղեկցելու ընկ. Շահումյանին

Бланк Чрезвычайного комиссара по делам Кавказа.

С О В Ъ Т Ь
НАРОДНЫХ КОМИССАРОВЪ
О Д
ЧРЕЗВЫЧАЙНЫЙ
ВРЕМЕННЫЙ КОМИССАРЪ
По деламъ Кавказа
—
Б А К У
Телефонъ № 45

191

№ [redacted]

Կովկասի գործերով արտակարգ կոմիսարի օրանկը

և «աչքի լույսի պես տեղ հասցնելու»: Հունվարի 13-ին ստափոսյան ընկ. Շահումյանին և նրա ուղեկիցներին ճանապարհեցինք: Ստեփանի համար դա ծանր ճանապարհորդություն է եղել՝ լի վտանգներով: Մի քանի անգամ ենթարկվել են հրացանային կրակի, առաջին անգամ դեռ քաղաքից 4 վերտոյի վրա»:

«Ճանապարհից,- շարունակում է Ա. Մուսվաթյանը,- Զանգիկ գյուղից, Ստեփանից ստացա նամակ, ուր գրում էր, որ ձիու անսովոր լինելով, շատ է տանջվում, և որ ճանապարհները շատ վտանգավոր են հայթույրը հարբերությունների սրման պատճառով: Ստեփանը կասկածում էր, թե կհաջողվի տեղ հասնելը: Սակայն, բարեբախտաբար, մեծ դժվարություններ հաղթահարելով, նրանք կարողացել են Չարափայտ-Ղուլաի գծով մտնել Շանչաղին, այրտեղից էլ լեռնային ճանիով Իջևան, որտեղից ընկ. Շահումյանը Դիլիջանի, Ղարաբիխայի վրայով անցնում է Թիֆլիս, ամբողջ ճանապարհը կտրելով 9 օրում»: (Ստեփան Շահումյանը ժամանակակիցների հուշերում, էջ 233-234):

Հունվարի 22-ին Շահումյանը հասնում է Թիֆլիս և անցնում է արտակարգ կոմիսարի պարտականությունների կատարմանը: Նույն օրն էլ նրա դեկավարությունը տեղի է ունենում ՌՄԻԲ(ը) Կովկասյան երկրային կոմիտեի նիստը:

Թիֆլիսը համարվում էր Կովկասյան երկրամասի կենտրոնը և այդ հանգամանքը նկատի ունենալով, Շահումյանը նպատակահարմար է գտնում իր ամբողջ գործունեությունը որպես արտակարգ կոմիսար, կենտրոնացնել Թիֆլիսում, իհարկե, իր սերտ կապը չխզելով Բաքվի սովետի և կուսակցական կազմակերպության հետ: Թիֆլիսում Շահումյանը պետք է կազմակերպեր արտակարգ կոմիսարիատի գործունեությունը, ձևավորեր ապարատ, ընդգրկեր հեղափոխությանը հավատարիմ ու բանիմաց, հեղինակավոր մարդկանց:

Շահումյանի գլխավորությամբ արտակարգ կոմիսարիատն իրագործելու էր հետևյալ առաջնահերթ խնդիրները.
Առաջին. Կազմակերպել ու ղեկավարել սովետական իշխանությունը հաստատելու և ամրապնդելու համար պայքարը:

Սա նշանակում էր ինչպես խաղաղ միջոցներով, այնպես էլ հակահեղափոխության բռնությունների դեպքում՝ զինված ապստամբության միջոցով հաստատել սովետական իշխանություն:

Երկրորդ. Հակահեղափոխական բոլոր ուժերի դեմ կազմակերպել պայքարի միասնական ճակատ:

Սա նշանակում էր ծավալել եռանդուն գործունեություն հեղափոխության հաղթանակի համար շահագրգիռ ղեկավարողական բոլոր ուժերը համախմբելու համար:

Յրրորդ. Երկրամասում կենսագործել կենտրոնական սովետական կառավարության ղեկընտններն ու որոշումները:
Սա նշանակում էր առաջին հերթին կենսագործել Սովետական Ռուսաստանի Ժողովրդական կոմիսարների սովետի հուշակած ղեկընտնները հողի, հաշտության, բանվորական վերահսկողության հաստատման և այլնի մասին:

Չորրորդ. Ապահովել երկրամասի անխափան կապը Սովետական Ռուսաստանի հետ:

Սա նշանակում էր ռազմաճակատում գտնվող զինված ուժերի աջակցությունը կուտրել Հյուսիսային Կովկասում ստեղծված հակահեղափոխական, հակասովետական ուժերի դիմադրությունը և այնտեղ սովետական իշխանության հաստատմամբ լուծել ոչ միայն Սովետական Ռուսաստանի հետ կապը վերականգնելու խնդիրը, այլև այդ միջոցով ապահովել հացի ստացումը, որի պաշարների բացակայությունն առանձին տեղերում ստեղծել էր սովի վտանգ:

Հինգերորդ. Իրագործել Սովետական Ռուսաստանի Ժողովուրդների 1917 թ. դեկտեմբերի 31-ին ընդունած «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որը հրապարակվել էր Ժողովրդական կոմիսարների սովետի նախագահ Վ. Ի. Լենինի և Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար Ի. Վ. Ստավինի ատորագրությամբ:

Այս մասին հանգամանորեն անդրադարձ կլինի սույն աշխատության հաջորդ էջերում:

«ՈՒՇԵԻ ԵՎԵՔ, ԶԱՆԻ ԴԵՌ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՈՒՇ ՉԷ»

1918 թ. հունվարի 25-ին Շահումյանը Թիֆլիսի երկաթուղային գլխավոր արհեստանոցների բանվորների միտինգում հանդես է գալիս «Հեղափոխությունը և հակահեղափոխությունն Անդրկովկասում» թեմայով: Այս ելույթի հիման վրա հետագայում Շահումյանը հրապարակել է «Անդրկովկասյան կոմիսարիատը և Հեղափոխությունն Անդրկովկասում» հոդվածը «Бакинский рабочий» թերթում:

Հորվածի սկզբում Շահումյանը տալիս է երեք ազգային կուսակցությունների՝ վրացական մենչևիկների, հայ դաշնակցականների և մուսուլմանական բեկերի բյուրից կազմված Անդրկովկասյան կոմիսարիատի բնութագիրը, այն անվանելով «խոճուկ ու անփստունակ կոոսափարություն», որը հրաժարվում է իր լիազորություններից և իշխանությունը հանձնում է Անդրկովկասյան սեյմին:

Անդրադառնալով Անդրկովկասյան կոմիսարիատի հակահեղափոխական քաղաքականությանը, Շահումյանն առանձնացնում է հետևյալը.

Առաջին. Վարում է անջատողական ծայրագավառային քաղաքականություն, «երես է դարձրել» Պետրոգրադի Հեղափոխական իշխանությունից, դաշինքի մեջ մտնելով Հյուսիսային Կովկասի հակահեղափոխական կառավարությունների հետ:

Երկրորդ. Անդրկովկասի ներսում տանում է ըստ ազգությունների տասնամյազավելու քաղաքականություն: «Ազգային տարածքների վերաբերյալ

վեճերը, ազգային զնդերի ստեղծումը և դրանով իսկ մինչ այդ եղբայրական Կովկասյան բանակի ընտանիքի մեջ երկպառակություն մտցնելը,- այս բոլորը, փոխանակ բոլոր ազգությունների դեմոկրատիայի միավորման՝ Հանուն Հեղափոխության և սոցիալիզմի մեծ գաղափարների, ստեղծեց ազգային մեկուսացման, թշնամանքի մթնոլորտ, և հող է պատրաստել Անդրկովկասում արդեն անխուսափելի ազգային պատերազմների համար»:

Յրրորդ. Նացիոնալիզմի հետ միասին կոմիսարիատի քաղաքականության մեջ «կործանարար դեր է խաղում» նրա կոալիցիոնությունը, որի մեջ զգալի դեր է խաղում վրացական մենչևիկյան մտավորականության բացահայտ դաշինքը մուսուլմանական ֆեոդալական մտավորականության հետ:

Չորրորդ. Կոմիսարիատի անջատողական-նացիոնալիստական քաղաքականությունը և «դեպի Կովկասյան բանակը ցուցաբերած նրա գյաղայական, դավաճանական վերաբերմունքը» առաջ է բերել ուսու զինվորների զայրույթը: Դա նպաստել է ռազմաճակատի մերկացմանը, «Ռուսաստանյան հանրապետության՝ ռազմաճակատում գտնվող միլիարդանոց հարստության կողոպուտին, Կովկասում ծանր կացություն ստեղծելուն»:

Հինգերորդ. «Չինվորի շինել հազած, զինված, Հեղափոխությանը նվիրված կես միլիոն ուսու գյուղացիներ, որոնք կարող էին անգնահատելի ծառայություններ մատուցել կովկասյան գյուղացիությանն ու պրոլետարիատին հակահեղափոխության տարրերի դեմ նրանց մղած պաշարում, հայտարարվեցին ավելորդ «եկվորներ», որոնց աշխատում էին որքան կարելի է շուտ հեռացնել Կովկասից: Եվ մուսուլմանական ֆեոդալները՝ Գեգեչկորու դաշնակիցները, նրանց համար սարքեցին բոլորին հայտնի արյունալի իրադարձությունը՝ այնուհետև պատմական Շամխորում...»:

Ստեղծված իրավիճակից ելքը Շահումյանը տեսնում էր անջատողականությանն ու նացիոնալիզմին վերջ տալու մեջ, կովկասյան դեմոկրատիային մեկ անգամ էլ էր նախազգուշացնում. «Ուշքի եկե՛ք, քանի դեռ բոլորովին ուշ չէ: Այդ Սեյմը, սեպարատիզմի և նացիոնալիզմի այդ քաղաքականությունը, վերջնական կործանման կհասցնի Հեղափոխությունն Անդրկովկասում»:

(Ստ. Ծառուսյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 150-155):

ԱՐՏԱԿԱՐԳ ԿՈՍԻՍԱՐԻ ԴԻՍՈՒՍԵ

Հունվարի 25-ին «Кавказский рабочий» թերթում Շահումյանը հրապարակում է Հայտարարություն իրեն Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար նշանակելու մասին և գրում Հետևյալը. «Անցնելով իմ պարտականությունների կատարմանը, խնդրում եմ Կովկասի բոլոր քաղաքացիներին, բանվորներին, գինավորներին և գյուղացիների պատգամավորների բոլոր սովետներին, Կովկասյան բանակի բոլոր գործերին, ինչպես նաև տեղական բոլոր քաղաքական, կառավարական և հասարակական կազմակերպություններին ու հիմնարկություններին ինձ դիմել Հետևյալ ժամանակավոր հասցեով. . .»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 91): Շահումյանի այս հայտարարությունը փակցվում է նաև Թիֆլիսի շինքերի պատերին:

Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար նշանակելու կապակցությամբ Շահումյանը հրապարակում է դիմումներ, հանդես է գալիս հողավածներով, որոնցում նա արծարծում է իր գլխավորությամբ ստեղծված կոմիսարիատի վերահիշյալ խնդիրները:

1918 թ. հունվարի 31-ին Շահումյանը հրապարակում է բանվորների, գինավորների և գյուղացիների պատգամավորների բոլոր սովետներին, Կովկասի բոլոր բանվորներին, գինավորներին ու գյուղացիներին ուղղված դիմում: Նա շեշտում է Կովկասում անհասպող սովետական իշխանություն ստեղծելու անհրաժեշտությունը և ընդգծում է Հետևյալը. «Ռուսաստանում ոչ մի տեղ Հեղափոխության գործն այնպիսի վտանգի մեջ չի գտնվում ներկայումս, ինչպես մեզ մոտ՝ Կովկասում», որտեղ դեռ չարունակում է գոյություն ունենալ բուրժուական-կալվածատիրական իշխանությունը, որտեղ Հեղափոխական սովետների փոխարեն կան «ոռակցիտն բուրժուական կամ կալվածատիրական ազգային խորհուրդներ, որոնք ազգային կառավարությունների դեր են խաղում»: Ինտերնացիոնալ սովետական կարմիր գվարդիայի փոխարեն գոյություն ունեն «ոռակցիտն տարրերի կողմից ղեկավարվող ազգային գնդեր»:

«Այս ազգայնական քաղաքականության հետևանքով»- գրում է Շահումյանը,- Կովկասն ու, մասնավորապես, Անդրկովկասն ամբաստանաբեկորներն պրոլետն են դեպի հակահեղափոխության ու ազգայնական պատերազմների գիրլը»:

Շահումյանը փաստում է նաև, որ ոռակցիտն մուսուլմանական բեգերի ու խաների, վրացական իշխանների ու ազնվականների և հայ բուրժուական տարրերի վարած համաձայնողական քաղաքականության հետևանքով ոչ միայն Հնարավորություն չկա կիրառելու որևէ Հեղափոխական միջոցառում... այլ ընդհակառակը՝ ուժեղանում են հակահեղափոխական դասակարգերը

ու սպառնում են վերջնականապես խեղդել մինչև իսկ փետրվարյան Հեղափոխության միջոցով ձեռք բերված ազատությունները»:

Անդրկովկասում ստեղծված փակուղուց դուրս գալու, ազգամիջյան կոիմների և կովկասյան ժողովուրդների փոխադարձ ոչնչացման սարսափների առաջն առնելու միակ միջոցը, Շահումյանը համարում է Կովկասում սովետական իշխանության ստեղծումը: Դրա համար էլ Շահումյանը կոչ է անում ամենուրեք ստեղծել սովետներ, որոնք պետք է լինեն «փրկյաան Հեղափոխական մարմիններ»:

«Ոչ թե բուրժուական-պապամենտական հանրապետությունը՝ կապիտալիստների ու կալվածատերերի գլխավորությամբ, ոչ թե կովկասյան «սեյմը» բեգերի, ազնվականների, բուրժուա-նացիտնալիստական պաշտպանողականների գլխավորությամբ, այլ սովետների բանվորապետական հանրապետությունը, ահա, թե ինչը կարող է մեզ փրկել կործանումից»,- գրում էր Շահումյանը:

Այնուհետև Շահումյանը դիմում է Կովկասի խոշորագույն սովետներին՝ Բաքվի, Թիֆլիսի, Գրոզնու և այլ սովետներին, նրանց կոչ անելով «նախաձեռնություն վերցնել շուտափույթ կերպով, առանց հետաձգելու գումարել Կովկասի բոլոր սովետների համագումար՝ կենտրոնական Հեղինակավոր սովետական իշխանություն ստեղծելու համար»:

Իր դիմումի վերջում Շահումյանը գրում է. «Կովկասը կանգնած է անդունդի եզրին: Փրկեցե՛ք նրան: Ստեղծեցե՛ք ինտերնացիոնալ բանվորապետական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու ժողովրդական կոմիսարների սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի հակահեղափոխությանը և երկրի բանվոր ու գյուղացի բնակչությանը կառավարողի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 98-101):

«...ԿԱՆԳ ԱՌԵՔ՝ ԶԱՆԻ ԴԵՌ ՈՒՇ ՉԷ»

Շահումյանը մշտապես հանդես էր գալիս նացիոնալիզմի դեմ, ինտերնացիոնալիզմից որևէ չեղում համարում էր թիկունքից հարված Հեղափոխությանը:

Բաքվի սովետի գործադիր կոմիտեի նիստում մուսավաթական կուսակցության ներկայացուցիչ Ռասուլ-Ջադեհն 1918 թ. հունվարին հայտարարում է, որ Ռուսաստանում տիրող անարիփան տարածվում է Կովկասում և այդ անարիփան վերջ դնելու, կարգ ու կանոնը վերականգնելու նպատակով մուսուլմանական խորհուրդը կազմակերպել է իր ազգային գնդերը:

Ռասուլ-Ջադեի այս հայտարարության դեմ հանդես է գալիս Շահումյանը, 1918 թ. հունվարի 25-ին «Бакинский рабочий» թերթում հրատարակելով «Ժողովուրդների ինքնորոշումը նացիոնալիստների ըմբռնմամբ» հոդվածը:

Շահումյանը նշում է, որ այդպիսի հայտարարությամբ Ռասուլ-Ջադեն արտահայտում է ուսանական բուրժուազիայի և կալվածատերերի տեսակետը, որը նշանակում է վերականգնել «Հին, բուրժուակալվածատիրական ոտնաձուլյան կարգ ու կանոն»:

Իսկ մուսուլմանական խորհուրդը ղեկավարում են մուսուլմանական բուրժուազիայի ներկայացուցիչներ Թադիևը, Նազիևը և ուրչներ, որոնց միջոցներով էլ կազմակերպվում են ազգային գնդեր: Նրանք հայտարարում են, թե այդ գնդերի կազմակերպումը նպատակ ունի պաշտպանել Հեղափոխությունը:

Այս հայտարարությունը նկատի ունենալով, Շահումյանը գրում է, թե «քաղաքական տեսակետից մանուկ պետք է լինել պպ. Թադիևներին ու Նազիևներին հավատալու համար»:

«Այժմ,- գրում է Շահումյանը,- ամեն մի հակահեղափոխական գործում է Հեղափոխության դրոշի տակ և դա միայն նրա համար, որ ավելի Հաջող շահաձագի Հեղափոխությունը»

Մուսավաթն ու նրա ներկայացուցիչ Ռասուլ-Ջադեն Հեղափոխություն ասելով հասկանում են միայն ազգային ինքնորոշում, այն էլ «ամենախեղաթյուրված ձևով»: Ռասուլ-Ջադեն դժգոհել էր, որ գործադիր կոմիտեի անդամները դեմ են արտահայտվել ազգային գնդերի կազմակերպմանը, դա ներկայացնելով այնպես, թե ուսանական դեմոկրատիայի ներկայացուցիչները մուսուլմանների հետ խոսում են «նույնպիսի լեզվով, ինչ որ ինքնակալությունը»:

«Դեմոկրատիայի ներկայացուցիչները,- ընդգծում է Շահումյանը,- իրոք դեմ են ազգային ինքնորոշման այնպիսի ըմբռնմանը, որ պաշտպանում են մուսուլմանական նացիոնալիստները, որոնք ուսանական Հեղափոխության կողմից առաջ քաշված դեմոկրատական լուրճազր ցանկանում են օգտագործել ոչ ավել ոչ պակաս Կովկասում ճորտատիրական իրավունքը վերականգնելու համար»:

«Արտահայտվելով մուսուլմանական բուրժուազիայի և կալվածատերերի կողմից ազգային գորք կազմակերպելու դեմ,- շարունակում է Շահումյանը,- ուսանական դեմոկրատիայի ներկայացուցիչներն ամենևին դեմ չլինելով նրա ինքնորոշմանը, ոչ միայն չեն գործում մուսուլմանական ժողովրդի դեմ, ինչ

պես դա պնդում է Ռասուլ-Ջադեն, այլ գործում են հենց այդ ժողովրդի շահերի օգտին»:

Շահումյանը նախազգուշացնում է թուրքական, մուսավաթական նացիոնալիստներին, այնպես, ինչպես իր ժամանակին` հայ նացիոնալիստներին` «Կանգ առեք, քանի դեռ ուչ չէ: Այլպես ձեր քաղաքականությունը կհանգեցնի նույն այն արդյունքներին, որոնց հանգեցրեց դաշնակցականների թերևամիտ քաղաքականությունը Թուրքիայում: Հայաստանն այժմ վերածվել է ավերակների կույտի: Դուք ավերակների կվերածեք նաև Կովկասը: Ահա այն ամենաշատը, ինչ կհաջողվի անել ձեզ»:

Հորվածի վերջում Շահումյանը գրում է. «Բայց մենք հավատում ենք, որ ամբողջ կովկասյան դեմոկրատիայի միացյալ ջանքերով կհաջողվի կանխել կովկասյան նացիոնալիստների հանցագործ աշխատանքի տիտուր հետևանքները»: (Մտ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 92-94):

ԿՈՉ՝ ՈՒՂՂՎԱԾ ՄՈՒՍՈՒՍԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

1918 թ. հունվարի 31-ին Շահումյանը կոչով դիմում է նաև Անդրկովկասի մուսուլմանական գավառների գյուղացիական բնակչությանը: Նա «գյուղացի եղբայրներին» ավետում է, որ «հասել է ժամը, երբ դուք վերջնականապես պետք է թողնեք ձեր ուսանական կալվածատեր-հողատերերի, խաների, բեկերի, աղալարների և այլոց դարավոր լուծը»:

Հայտնելով, որ ուսու բանվորները չեն հանդուրժել կապիտալիստների ու կալվածատերերի լուծը և հոկտեմբեր ամսին նոր Հեղափոխություն անելով բոլշևիկների կուսակցության գլխավորությամբ ստեղծել են նոր բանվորագյուղացիական կառավարություն, Շահումյանն ընդգծում էր, որ «ձեր խաներն ու լրագրողները խաբում են ձեզ` իբր թե նրանք մուսուլմանների թշնամիներ են: Ընդհակառակը, բոլշևիկները մուսուլմանների, ինչպես և բոլոր մյուս գյուղացիների ու բանվորների ամենաանկեղծ բարեկամներն են»:

Շահումյանը ողջունում է մուսուլման գյուղացիների արթնացումը, որ նրանք հունվարի սկզբից ապստամբվել են բեգերի դեմ ու խլում են նրանց հողերը և վատահեցնում է, որ Պետրոգրադում հաստատված բանվորագյուղացիական նոր կառավարությունը «ոչ դքի թույլ չի տա ձեզանից հողերը խլել ու վերականգնել կալվածատերերի աստեղի լուծը»:

«Պետք չէ սպանել ձեր խաներին ու բեգերին, նրանց կանանց ու երեխաներին, պետք չէ այրել ու ոչնչացնել նրանց գույքը»,-կոչ էր անում Շահումյանը մուսուլման գյուղացիներին,- որովհետև երբ նրանք հողից ու հարստությունից զրկվեն, այլևս սարսափելի չեն լինի:

«Աշխատեցեք,- կոչ էր անում Շահումյանը,- որ ձեր ապստամբությունն ընդհանուր լինի, որպեսզի մուսուլման գյուղացիներն ամենուրեք կազմակերպված կերպով գրավեն բեգերի հողերը: Ստեղծեցեք գյուղացիական կոմիտեներ, որոնք պետք է վերցնեն այդ հողերը»:

«Գյուղացի եղբայրներ,- գրում էր Շահումյանը,- ձեր բեգերն ու խաները մինչև այժմ քանիցս գրգռել են ձեզ հայ գյուղացիների դեմ և կոտորած են սարքել ձեր միջև: Բավական է, ինչքան այրալիսի եղբայրստպան կոխվեց: Հայ գյուղացիները նույնպիսի աշխատավորներ են, ինչպես և դուք: Նրանք էլ են ուռքի ելնում իրենց բեգերի ու հարուստների դեմ»:

«Բոլոր բանվորները,- չարունակում է Շահումյանը,- Ռուսաստանում և մեր երկրամասում, քաղաքներում՝ ուսաները, վրացիները, հայերը, մուսուլմանները խաղաղ են ապրում և միասին կախում իրենց հարուստ տերերի դեմ: Նույնպես խաղաղ ու եղբայրաբար պետք է ապրեն և մուսուլման գյուղացիները հայերի հետ»:

Այնուհետև դիմելով գյուղացի եղբայրներին, Շահումյանը գրում է, որ բեգերն ու խաները շատ են խաբել նրանց և ուզում են մեկ անգամ էլ խաբել: Բեգերն ու խաները «իրենց կոմիտեների միջոցով մուսուլմանական զորքեր են ստեղծում և ուզում են Բաքվի, Ելիզավետպոլի ու Երևանի նահանգներում մուսուլմանական նոր պետություն հռչակել»:

«Մուսուլմանների ազատության և ինքնուրույնության դեմ,- ընդգծում է Շահումյանը,- բանվորագյուղացիական նոր կառավարությունը ոչինչ չունի: Ընդհակառակը՝ նա իրավունք է տալիս բոլոր ժողովուրդներին տնօրինել իրենց բախտն ազատորեն, ինչպես իրենք են այդ կամենում»:

Շահումյանը մուսուլման գյուղացիներին զգուշացնում է, որ խաներն ու բեգերը նրանց կխաբեն ու կվերականգնեն իրենց իշխանությունը և այն գորքը, որ նրանք ուզում են ստեղծել, կուղղեն գյուղացիների դեմ, որպեսզի նորից ետ խլեն հողերը:

«Մի թողեք,- կոչ էր անում Շահումյանը,- նրանց նստել կոմիտեներում ու խոսել ձեր անունից, ամբողջ մուսուլմանական ազգի անունից: Կոմիտեներ ընտրեցեք ձեր միջից, ընտրեցեք ձեզ հավատարիմ ու նվիրված մարդկանց, որոնք կարող են պաշտպանել ձեր շահերը»:

«Ձեր բախտն ու ձեր երեխաների ապագան ձեր ձեռքումն է»,- նշում էր Շահումյանը և Ռուսաստանի բանվորագյուղացիական նոր կառավարության անունից մուսուլմանական ժողովրդին ցանկանում է ազատություն և բախտավորություն: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 107-109):

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵԼԻԶԱՎԵՏՊՈԼԻ ԻՐԱՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գտնվելով Թիֆլիսում, 1918 թ. հունվարի 31-ին Շահումյանը նախաձեռնում է և իր խմբագրությունը հրատարակում է Ժողովրդական կոմիտարների սովետի «Кавказский Вестник Совета Народных Комиссаров» թերթը, որը լույս է տեսնում միայն մեկ անգամ: Այս թերթում Շահումյանը հրատարակում է վերն արդեն հիշատակված իր գրած կոչերը, ինչպես նաև «Հողային հարցը և գյուղացիական հեղափոխությունն Անդրկովկասում» և «Ճշմարտությունը Ելիզավետպոլի իրարարձությունների մասին» հոդվածները:

«Հողային հարցը և գյուղացիական հեղափոխությունն Անդրկովկասում» հոդվածում Շահումյանը նկարագրում է մինչև հեղափոխությունն Անդրկովկասում գյուղացիների և գյուղերի կյանքը, պարզաբանում է հեղափոխության նկատմամբ վրացական գյուղացիության անտարբեր վերաբերմունքի պատճառները և նշում է, որ Անդրկովկասում Հողային հարցը պետք է լուծել այնպես, ինչպես լուծվել է հեղափոխական Ռուսաստանում: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 102-106):

Թիֆլիսում էին գտնվում Կովկասյան ռազմաճակատի հիմնական պահեստները, որտեղ պահվում էին հակապական քանակություններ գեներ, հանդերձանք, պարեն և այլն, որը նախատեսված էր մեկ միլիոնանոց բանակի համար: Այդ ունեցվածքով հնարավոր էր լիակատար կերպով զինել ու հանդերձավորել հայկական, վրացական և մուսուլմանական ազգային զորամասերը: Չհաշված, որ ռազմաճակատներից սույն վերադարձած հայ և վրացի զինվորների մեծ մասը իր հետ գեներ էր բերել:

Թափարները նույնպես ձեռնամուխ են լինում ազգային զորամասերի ստեղծմանը: Սակայն Անդրկովկասյան կառավարությունը սկզբում խոստանում է, հետո հրաժարվում է նրանց գեներ ու հանդերձանք հատկացնել: Դրա փոխարեն վրացի մենչևիկները թափարներին ցույց են տալիս գեներ ձեռք բերելու ճանապարհը՝ զինաթափել սույն վերադարձող ռուս զինվորներին:

Մուսուլմանական պարագլուխներն անհասպաղ ձեռնամուխ են լինում զորքերի զինաթափմանը, որի հետևանքով Շամխորում տեղի է ունենում ահավոր արյունահեղում:

Ռուս զինվորների չարանենդ սպանությունը կազմակերպելու հետ միասին, մուսավաթականները փորձում են իրենց արդարացնելու միջոցներ գտնել: Այդ նպատակով Բաքվի Թագա Փիր մզկիթում 1918 թ. հունվարի 16-

ին տեղի ունեցած միտինգում Թոփչիբաշևն ու Ռասուլ-Ջալեֆն Հայտարարում են, թե Գանձակի, Շամիրիի ղեպքերը անկազմակերպ մասսայի գործն է եղել, որի պատճառը կայանում է «թէ Համայն Ռուսաստանի անիշխանութեան և թէ Անդրկովկասեան կոմիտարիատի անստաճած կարգադրութեան մէջ»:

Մուսավաթական պարագլուխների առաջարկութեամբ միտինգում ընդունված բանաձևում կեղծելով իրականությունը, Հայտարարվում է հետևյալը.

Առաջին. Թուրքերը ոչ մի թշնամություն չունեն «ոչ ուսաների դէմ մասնաւորապէս, և ոչ էլ այլ ազգերի դէմ ընդհանրապէս և չեն էլ կարող ունենալ»:

Երկրորդ. «Գանձակի մօտերքում կատարւած ղեպքերը կազմակերպւած ոյժի գործ չեն, իսկ թէ ինչ է պատճառը, այդ ղեպքերը դեռ յայտնի չեն»: («Արև», Հունվարի 19, 1918 թ.):

Շահումյանը «Ճշմարտությունը Ելիզավետպոլի իրադարձությունների մասին» հոդվածը նվիրել է Շամիրիի ողբերգությունը, որին զուհ էին գնացել հազարավոր ռուս զինվորներ:

Հորվածը գրելու շարժառիթը եղել է այն, որ մենչևիկներն ու մուսավաթականները աշխատել են թաքցնել տեղի ունեցած ղեպքերը: «Մենք հայտարարում ենք,- գրում է Շահումյանը,- որ Ելիզավետպոլի ղեպքերի մեղաւորների թվում նախ և առաջ պետք է անվանվի կովկասյան սոցիալ-դեմոկրատիայի երբեմնի առաջնորդ «վրաց ժողովրդի հայր» Նոյ Նիկողանիչ Ժորդանիան», որի ղեկավարութեամբ Երկրային կենտրոնի նախագահությունը որոշել էր զինաթափել մեկնող ռուսական զորամասերը և նրանց հաշվին զինել ազգային գնդերը: Ժորդանիան այդ հանցավոր գործը կատարել է երկրային կենտրոնի նախագահություն և ազգամիջյան խորհրդի որոշմամբ ու Անդրկովկասյան կոմիտարիատի գիտություններ:

Ժորդանիայի ատորագրությունը էր հեռագիր ուղարկվել Ելիզավետպոլի մուսուլմանական ազգային կոմիտեին Շամիրիի մոտ կուտակված էջերունեքը զինաթափելու մասին: Ժորդանիան նույն հանձնարարությունը Թիֆլիսից պատվիրակություններ էր ուղարկել Շամիրու: Ժորդանիան և նրա օգնական Ն. Ռամիշվիլին Շամիրու էին ուղարկել զրահապատ գնացք Աբխազավայի գլխավորությամբ, որը գնեք էր բաժանել մուսուլմաններին և օգնել նրանց գնդակահարել հազարավոր ռուս զինվորների ու զինաթափել էջերունեքը:

Շահումյանը դատապարտում է ինչպես Ժորդանիայի, այնպես էլ Անդրկովկասյան կոմիտարիատի մուսուլման անդամներ Խան-Նոյակիի, Խասանմուրադի, Մելիք-Ապրանովի փորձերը պատասխանատվությունից խուսափելու և արդարանալու համար:

«Սակայն խուբը,- գրում է Շահումյանը,- անձնական պատասխանատվության ու անձնական արդարացման մասին չէ: ...Ներկա ղեպքում Ժորդանիան մեզ հետաքրքրում է ոչ թե իբրև անհատ, այլ որպես Անդրկովկասի քաղաքականությանն ուղղություն տվող կուսակցության առաջնորդ, որպես Անդրկովկասյան իշխանության առավել հեղինակավոր ու պատասխանատու ներկայացուցիչ»:

Միաժամանակ Շահումյանը հիշատակում է Ելիզավետպոլի մուսուլմանական ազգային կոմիտեի անդամների անուանները, որոնք 1918 թ. Հունվարի 7-ի երեկոյան հիմք ընդունելով Ժորդանիայի հեռագիրը, որոշել են ամեն գնով զինաթափել էջերունեքը, «աներևակայելի անամոթությունը ու արյունարբությունը» Հունվարի 9-12-ին կատարելով իրենց որոշումը:

Այնուհետև Շահումյանը տեղեկացնում է, թե մուսուլմանական ազգային կոմիտեն ու մենչևիկները ինչպես են իրականացրել այդ հանցագործությունը և մերկացնում է կազմակերպված գործողությունները, որպես «ավազակային հարձակում» ներկայացնելու նրանց փորձերը:

«Արդեն ոչ ոքի համար գաղտնիք չէ,- փաստում է Շահումյանը,- որ Անդրկովկասում գոյություն ունի վրացական-մուսուլմանական հակահեղափոխական ազնվական բոլ. այդ բոլոր գոյություն ունեւ նաև ցարական ռեժիմի օրով և այդ բոլորի ոգին էր Նիկոլայ Ռոմանովը: Այժմ հակահեղափոխական ազնվականության բոլորի ոգին է Ալակի Չիսնկելին-այս ևս ոչ ոքի համար գաղտնիք չէ»:

1918 թ. Հունվարի 4-ին Ելիզավետպոլի նահանգում ապստամբվել էին մուսուլման գյուղացիները, որոնք այրում ու բնաջնում էին «սոցիալիստական» բեգերի ու խաների ունեցվածքը:

Ապստամբված գյուղացիության դեմ բեկերն ու խաները գործի են դնում ինչպես հայթուրքական կոտորածի փորձված միջոցը, այնպես էլ վրաց մենչևիկների օգնությամբ ազգային գնդեր կազմակերպելը:

Հայթուրքական կոտորած կազմակերպելով մուսուլմանական ազնվականությունը ձգտում էր ապստամբների ուշադրությունը շեղել և կասեցնել պայթած ազդարային շարժումը: Միաժամանակ նրա նպատակն էր որքան հնարավոր է արագորեն զինք ձեռք բերել և զինել իր ռեակցիոն գնդերը ու նրանց միջոցով հռչակել աղբրեջանական խանություն:

Բեկերի այս ամբողջ ոճրագործական աշխատանքը, ինչպես նշում է Շահումյանը, միաժամանակ «հայ-թուրքական կոտորածի նախապատրաստումն է»: Նա բերում է հայերի վրա հարձակվելու փաստեր, որոնց հետևանքով մի քանի տասնյակ մարդ է սպանվել և նշում է, որ միասնություն կլինի կարծիք, թե բեկական հակահեղափոխությունը վայր կընի զենքը: Նա զենքը վայր չի դնի, ընդգծում է Շահումյանը, որովհետև ունի այնպիսի պաշտպաններ, ինչպիսիք են Ժորդանիան, Գեղեցկորին, Չխենկելին:

Շահումյանը նաև նշում է, որ բեկերը զենքը վայր չեն դնի, որովհետև «նրանց հանցավոր խաղը բողբոջի ու պալքարի չի հանդիպում նույնիսկ «դաշնակցություն» կուսակցության կողմից, որի ներկայացուցիչներն Անդրկովկասյան կոմիսարիատում նիստեր են ունենում: Չէ՞ որ այդ հակահեղափոխական, այդ վրացական-մուսուլմանական ազնվականության բլրկին գոհ է զնայու սպստամբ մուսուլման պուղաջիուլության հետ միասին նախ և առաջ հայ պուղաջիուլությունը»:

Իսկ ուսա բանակի դեմ կատարված «մեծագույն ոճրագործությունը» Շահումյանը գնահատում է որպես դավաճանություն Անդրկովկասի ամբողջ հեղափոխական շարժման դեմ:

Հորվածի վերջում Շահումյանը նշում է, որ ուժեղացող ազնվականական հակահեղափոխությունը պաշտպանում է Անդրկովկասի հայ, վրացի և մուսուլման ազգային կուսակցությունների ազգայնական քաղաքականությունը և հարցնում է. «Մի՞թե անդրկովկասյան դեմոկրատիան չի հասկանա, թե ինչ քաղաքականության հետևանք է ազնվականական հակահեղափոխության ուժեղանալը... և չի ասի իր առաջնորդներին. «Հեռացե՛ք: Բավական է, որքան հանդուրժեցիկք ձեր ոճրագործ քաղաքականությունը»: (Սու. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 110-118):

Ռուսական զորամասերը, որոնք սում էին վերադարձնում Ելիզավետպոլ-Բարքու երկաթուղով, վրոճված իրենց հազարավոր եղբայրների նկատմամբ կազմակերպած սպանդից, համարելով, որ չարժեքում են արդեն թշնամական երկրով հարձակվում են մի քանի մուսուլմանական պուղերի վրա, դրանց բնակիչներին համարելով Շամլուրի կայսրանում ուս գինվորներին սպանելու մասնակիցներ:

Այս փաստը ճարվարներն օգտագործում է մուսուլմանական նացիոնալիստական վերնախավը և տարածում, որ ուս գինվորները թալանել ու ավերել են 200 մուսուլմանական պուղ: Մինչդեռ իրականում երկաթուղու երկայնքով հղած մուսուլմանական պուղերի թիվը իրականում չէր անցնում 10-ից:

Կրոնական մոլեռանդությունը բորբոքված մուսուլման պուղաջիուլությանը նրանք ուղղում են Մուղանում ապրող ուսա բնակչության դեմ: Կուր և

Արաքս գետերի միջև գտնվող Մուղանի տախտատանը և Լենքորանի գավառի հյուսիսային մասը, որը մինչ այդ անպտուղ տարածք էր, 19-րդ դարի երկրորդ կեսից այնտեղ բնակություն հաստատած ուսաների (որոնց մեծ մասն արևմտափորական մոլեռանդներ էին) շնորհիվ վերածվել էր ոչ միայն Անդրկովկասի, այլև ամբողջ ուսական կայսրության պտղաբեր տարածքի:

Մուսուլմանական ազգային խորհրդի հրահրմամբ գինված ավազակախմբերը հարձակվում են Մուղանի ուսական բնակավայրերի վրա, ավերում և թալանում են 30-ից ավելի հարուստ ու չեն պուղեր, սպանելով հազարավոր անմեղ մարդկանց:

Այսպիսով Շահումյանն առաջիններից մեկն էր, որ հատկապես ցույց է տվել Շամլուրի կայսրանում հազարավոր ուս գինվորներին գինավթափելու և սպանելու, ինչպես նաև Մուղանում բնակվող հազարավոր ուս (մոլեռանդներ) պուղաջիուլների սպանությունը կազմակերպողների ճիշտ հասցեն՝ վրաց մենչևիկներին ու աղբրեջանական մուսավաթականներին:

Այս մերկացման համար Շահումյանին չեն ներում ոչ վրաց մենչևիկների և ոչ էլ աղբրեջանական մուսավաթականների այսօրվա հետնորդները, որոնք ամեն կերպ ձգտում են կոծկել կազմակերպված ոճրագործության փաստը և դա անտեղյակ ուս ընթերցողին ներկայացնում ընդամենը որպես ավազակային հարձակման մի դեպք, ինչը հաճախ, սովորաբար, տեղի է ունենում անիշխանության պայմաններում:

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՉԵՐԲԱՎԱԼԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

Անդրկովկասյան կոմիսարիատը ղեկավարող էսէտամենչևիկյան բրդը, որին միացել էին դաշնակցականներն ու մուսավաթականները, չհաշտվելով Շահումյանին արտակարգ կոմիսար նշանակելու փաստի հետ, 1918 թ. հունվարի 24-ին ընդունում են որոշում, պահանջելով, որպեսզի Շահումյանը և նրա քարտուղար Կուզնեցովը 24 ժամվա ընթացքում հետանան Անդրկովկասի սահմաններից: Նրանք միաժամանակ զգուշացնում են, որ եթե Շահումյանն ու Կուզնեցովը չկատարեն այդ որոշումը, ապա անհապաղ կձերբակալվեն:

Այդպիսի որոշում ընդունելով, Անդրկովկասյան կոմիսարիատը մարտահրավեր է նետում Մովսեսական Ռուսաստանին, որի մասին ինչ-որ ժամանակ գերմանական կանցլեր Բիսմարկը զգուշացրել էր. «Հույս չունենաք, որ մի անգամ օգտվելով Ռուսաստանի թուլությունից, դուք մշտապես շահ կատանաք: Ռուսները միշտ վերադարձնում են իրենց փողերի ետևից: Եվ երբ նրանք դան, հույս չունենաք իբր ձեզ արդարացնող ձեր ստորապրած պայ-

մանագրերի վրա: Դրանք չեն ունենա նույնիսկ այն թղթի արժեքը, որի վրա գրվել են: Ուստի արժե ուսանելի հետ ազնիվ խաղալ կամ ընդհանրապես չխաղալ»: («КОМСОМОЛЬСКАЯ ПРАВДА», 17. 05. 2012):

Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ Գեգեկորու և ներքին գործերի մինիստր Չխնկելու տոտրագրությանը Թիֆլիսի միլիցիայի պետին տրված հրամանով հանձնարարվում էր կատարել կառավարության որոշումը՝ Շահումյանից վերցնել տոտրագրություն հետամուտ մասին, համարակ դեպքում՝ ձեռքարկել:

Ընկերների միջոցով տեղեկանալով այս որոշման և տրված հրամանի մասին, Շահումյանն ու Կուզնեցովը փոխում են իրենց բնակության վայրը և փաստորեն անցնում են ընդհատակ:

Մինչևիկյան կառավարության պարագլուխները, հատկապես Գեգեկորին, հանդես գալով, հայտարարում էին, թե Շահումյանին արտակարգ կոմիսար նշանակելու լուրը կարող է քաղաքում խառնակություններ սկսվելու առիթ տալ և իբր թե դրանք կանխելու նպատակով է որոշում ընդունվել Շահումյանին արտաքսելու կամ ձերբակալելու համար:

Հունվարի 27-ին, երբ արդեն հայտնի էր դարձել, որ Թիֆլիսի միլիցիայի պետին չի հաջողվել գտնել Շահումյանի հետքերը, մինչևիկյան «ИЗВЕСТИЯ» պաշտոնաթերթը բացահայտորեն պահանջում է «հաշվեհարդար տեսնել Շահումյանի նկատմամբ»: Մինչևիկյան թերթի այս պահանջն ամբողջովին բացահայտում է Անդրկովկասյան կոմիսարիատի կառավարության նպատակը՝ ֆիզիկապես ոչնչացնել Շահումյանին, որը հանրությանը հրամայվում էր որպես «արտաքսում և ձերբակալում»:

Հունվարի 27-ին «Кавказский рабочий» թերթը նույնպես հաղորդում է հրապարակում Շահումյանին ձերբակալելու որոշման մասին և նշում է, որ Անդրկովկասյան կոմիսարիատի կառավարողները «անամոթաբար պատերազմ են հայտարարում բանվորագյուղացիական կառավարությանը՝ փորձ կատարելով ձերբակալելու Կովկասում Ռուսաստանի սովետական իշխանության պաշտոնական ներկայացուցչին, որով հրահրում են քաղաքացիական պատերազմ»:

Շահումյանին ձերբակալելու որոշման դեմ Թիֆլիսում կազմակերպվում են մի շարք բողոքի միտինգներ: Առաջինը հանդես են գալիս Թիֆլիսի բուլժեիկները, որոնք իրենց ժողովում դատապարտում են Անդրկովկասյան կառավարության որոշումը, ընդձեռնով, որ վճռակամորեն կպայքարեն հակահեղափոխական կառավարությունը տապալելու համար:

Իսկ փետրվարի 4-ին Թիֆլիսի համաքաղաքային կուսակցական կոնֆերանսը, այնուհետև փետրվարի 6-ին տեղի ունեցած ՌՄԻ(Բ)Կ Կովկասյան

երկրային կոմիտեի նիստը վճռակամորեն դատապարտում են Անդրկովկասյան կառավարության որոշումը և կոչ են անում հեղափոխության կողմնակիցներին բոլոր ուժերով պայքարել հակահեղափոխության դեմ և երկրաստամ հաստատել սովետական իշխանություն:

Թիֆլիսում, Բաքվում և մյուս քաղաքներում լույս տեսնող թերթերն արագորեն տարածեցին Շահումյանին ձերբակալելու որոշման մասին: Վերաբերմունքը միատեսակ չէր: Բնական էր անձատրոպականների, հակահեղափոխական ուժերի հրճվանքը, որոնք պահանջում էին ոչնչացնել Շահումյանին և դրանով հաստատել Ռուսաստանից անջատվելու վճռակամությունը:

1918 թ. հունվարի 26-ին Թիֆլիսի հայ բուլժեիկների ընդհանուր ժողովը, մեծ թվով անկուսակցականների մասնակցությամբ, քննարկելով Շահումյանին ձերբակալելու մասին Անդրկովկասյան կոմիսարիատի որոշումը, ընդունված բանաձևում նշել է հետևյալը. «Պաշտպանողական-բեկական կոմիսարիատի խայտառակ որոշումը նշանակում է ուղղակիորեն պատերազմի հայտարարում կարվածատերերի և կապիտալիստների տիրապետությունը տապալած բանվորագյուղացիական հեղափոխությունը»:

Ընկեր Շահումյանին ձերբակալելու մասին որոշումը նշանակում է քաղաքացիական պատերազմի սկիզբ, արշավանք հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների դեմ:

Անդրկովկասյան կոմիսարիատի սկսած քաղաքացիական պատերազմի պատասխանատվությունն ամբողջովին ընկնում է պ. պ. մեյնելիկների և էսէռների գլխին, որոնք իրենց հանցավոր քաղաքականությունը երկրամասը հասցրել են սովի ու անարիստիայի և նպատակ են ազգամիջյան կոտորածներին»: (ՀՀ ԱԱ, ֆ. 1437, ց. 1, գ. 220, թ. 1):

Անդրկովկասի բանվորների, գյուղացիների մեծամասնությունը ի դեմս Շահումյանի տեսնում էր որպես Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի և պատրաստակամություն հայտնում նրա ղեկավարությամբ պայքարել հանուն սովետական իշխանության հաղթանակի:

Ասվածը փաստելու համար ընթերցողներին ուշադրությունը ներկայացնեն միայն փետրվարի 10-ին Ալեքսանդրապոլի բանվորների միտինգում ընդունված բանաձևն ամբողջությամբ, որը հրապարակել է Թիֆլիսում լույս տեսնող «Բանվոր» թերթը 1918 թ. մարտի 4-ին:

«Մենք, սակավ է այդ բանաձևում, լսելով գեկուցում Կովկասի կոմիսարիատի հակահեղափոխական գործունեության մասին, հոգու անհուն զգրվանքով բողոքում ենք նրա մի նոր ոճրագործ քայլի՝ ընկ. Ստ. Շահումյանի ձերբակալման որոշման դեմ:

Բռնություն է կատարվում մի այնպիսի անձնավորության վրա, որն իր ամբողջ կյանքը, իր բախտը կապել է մեր պրոլետարական շարժման ու ազատագրման հետ, մի այնպիսի մարդու, որ մեր՝ բանվորներին ցանկություններն ու շահերի անկեղծ արտահայտիչն է եղել, մի այնպիսի անվեհեր մարտիկի, որն իր սեփական շահերը գոհելով մերին, իր երիտասարդական տարիներին կարմիր օրերը խոնավ բանտերում, Նիկոլայի բուռնացքի և ժանգոտած չղթանների ճշման տակ է անցկացրել:

Ով դեմ է Շահումյանին, դեմ է մեզ՝ պրոլետարներին, որովհետև ընկեր Ստեփանն է, որ հասկանում է մեզ և խոսում է մեր լեզվով: Ով դեմ է Շահումյանին, դեմ է ուղևորական մեծ հեղափոխությանը, կարմիր Պետրոգրադին, որովհետև նրանք են, որ նշանակել են Կովկասի ժամանակավոր կոմիտար, մինչև սովետների գումարեյը, որպեսզի երկիրն անարխիստի և հակահեղափոխության գրկից ազատեն»:

Գտնվելով ընդհատակում, խուսափելով հետապնդումներից, Շահումյանն առանց ընկճվելու, շարունակում էր իր վրա դրված պատասխանատու գործը: Նա ոչ միայն գաղափարի հանդիպում էր ընկերներին, տալիս էր նրանց հանձնարարություններ, աշխատում էր ընդհատակի դաժան պայմաններում կարգավորել իր ղեկավարությունը ստեղծված կոմիտարիստի գործերը:

ՂԻՍՈՒՄ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԲԱՆԱԿԻՆ

Որպես Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիտար, 1918 թ. փետրվարի 6-ին «Кавказский рабочий» թերթում Շահումյանը հրատարակում է «Կովկասյան բանակի ետ քաշվող զորքերին» դիմումը:

Հայտնելով, որ չնայած գերմանական կառավարության հետ հաշտության բանակցություններն ընդհատվել են, Շահումյանը նշում է, որ գերմանական և ավստրիական պրոլետարիատն ապստամբության դրոշ է բարձրացրել և պաշտոնական բանակցությունների փոխարեն «հաշտությունը կնքված է ուսև և գերմանական զինվորների և բանվորների սրտերում»:

Իսկ պաշտպանողականները չեն ուզում տեսնել և խաղաղության համար ուրախանալու փոխարեն «շարունակում են խոտվություն սերմանել բանվորների մեջ և ուզում են թունավորել զինվորների ուղևորությունը»:

«Արտաքին թշնամին ընկճված է,- գրում է Շահումյանը,- մենք կարող ենք այժմ մեր ամբողջ ուժերը, և մեր ամբողջ միտքը դարձնել ներքին թշնամուն խորտակելու վրա, կարվածատերերի ու կապիտալիստների հակահեղափոխությունը ճնշելու վրա»:

Այնուհետև բերելով Ռուսաստանի տարբեր հատվածներում հեղափո

խություն տարած հաղթանակի մասին փաստեր, Շահումյանը նշում է, որ դեռ թշնամին վերջնականապես չի ջախջախվել և զինվորների բաժին աշխատանքը մնում է:

«Գործերի դրությունը,- ընդգծում է Շահումյանը,- ամենից վատ է մեզ մոտ, Կովկասում: ...Գեգեչկորին ու նրա դաշնակից մուսուլմանական բեկերը դեռ իշխանություն գլուխ են կանգնած: Բայց այստեղ էլ է մոտենում նրանց տիրապետության վերջը: Բանվորները, գյուղացիները և նրանց հետ միասին ազգային գնդերի զինվորներից շատերն արդեն գալիս են իրենց շահերի գիտակցությունը: Մոտ է ժամը, երբ Անդրկովկասյան պաշտպանողական Հանցագործ կոմիտարիստի վրա ևս խաչ կդրվի և Թիֆլիսի վրա կծածանվի սովետական հեղափոխական կարմիր դրոշը»: Միաժամանակ Շահումյանը զինվորներին հայտնում է, որ Շամիրոյի արյունահեղությունից հետո հակահեղափոխական բանդաները նրանց սպասում են հնաշմասում, Դաղստանի ու Թերեքի մարզերում և զգուշացնում է լինել աչալուրջ, դրսևերել վճռականություն ամեն մի դիմադրություն ոչնչացնելու համար:

«Սրանից հետո,- գրում է Շահումյանը դիմումի վերջում,- պատերազմը վերջանալուց և լրիվ զորացրում հայտարարելուց հետո, այլևս ոչինչ չի կարող ձեռք պահել Կովկասում: Խաղաղությանը գնացեք տուն, բայց շարունակեցեք հավատարմորեն ծառայել բանվորագյուղացիական մեծ հեղափոխության գործին»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 128-131):

1918 թ. փետրվարի 6-ին Շահումյանը «Кавказский рабочий» թերթում հրատարակած «Ժողովրդական կոմիտարների խորհրդի զորքերը Կովկասում զինաթափելու առթիվ» հոդվածում գրում է, որ Ելիզավետպոլի մուսուլմանական ազգային կոմիտեի անդամների գլխավորությամբ և անդրկովկասյան իշխանությունների աջակցությամբ կատարվել են Ռուսաստան մեկնող զորամասերի բունի զինաթափումներ, որոնց գոհ են գնացել հազարավոր ուսև զինվորներ: Բանդաները գրավել են 15 հազար հրացան, 70 գնդացի և քանակից ավելի թնդանոթ:

Կատարված այդ շարագործության դեմ Ռուսաստանի Հանրապետության կենտրոնական կառավարության անունից բողոքելով, Շահումյանը գրում է. «Թափվում է այն զինվորների անմեղ արյունը, որոնք երեք տարվա ընթացքում անձուրացությունը պաշտպանում են Կովկասի սահմանները, թողնելով մարտադաշտում և Հայաստանի լեռներում տասնյակ հազարավոր իրենց եղբայրներին. անողոք կերպով հափշտակվում է Ռուսաստանի հանրապետությանը պատկանող զինվորը»:

Շահույթները Սովետական Ռուսաստանի կառավարության անունից պահանջում է անհապաղ դադարեցնել զինաթափման հետագա փորձերը: Նա Ռուսաստան գնացող ժողովրդական կոմիսարների սովետի գործերին կոչ էր անում. «Ոչ մի դեպքում զենք չհանձնել բռնացողներին, որը վատահեղ են նրանց և որը զինվորների կողմից պետք է գործադրվի մեր հոկտեմբերյան բանվորացու զայտերի անձ հեղափոխության պաշտպանության համար»: (Ստ. Շահույթներ, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 132-133):

Շահույթները շարունակում էր մերկացնել Անդրկովկասյան կոմիսարիատի կառավարության հակահեղափոխական քաղաքականությունը՝ մամուլում հրապարակելով մի շարք հոդվածներ, որոնց վերաբերյալ անդրադարձ եղել է նախորդ էջերում:

Անդրկովկասը ղեկավարող հակահեղափոխական ուժերը գիտակցում էին, որ իրադարձություններն իրենց օգտին չեն զարգանում և որոշում են անցնել հարձակման: Նրանք փետրվարի 7-ից սկսում են կատարել ձեռքարկություններ: Ձեռքարկվում են բոլշևիկյան մի քանի հայտնի գործիչներ: Փակվում են Թիֆլիսում լույս տեսնող բոլշևիկյան թերթերը: Օրակարգի հարց է դառնում բոլշևիկյան կազմակերպությունների վերացումը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՍԵՅՄԻ ՍՏԵՂՏՈՒՄԸ

Ահա, այսպիսի պայմաններում 1918 թ. փետրվարի 10-ին Անդրկովկասյան կոմիսարիատի փոխարեն ստեղծվում է Անդրկովկասյան սեյմը, որի անդամներ են դառնում Սահամանադիր ժողովի համար մենչևիկներից, դաշակներից, մուսավաթներից, էսէռներից, կադետներից և հակահեղափոխական այլ ուժերից ընտրված պատգամավորները, բացի բոլշևիկներից:

Այդ կապակցությամբ 1918 թ. հունվարի 31-ին Շահույթները «Бакинский рабочий» թերթում հրապարակում «Անդրկովկասի սեյմի հրավիրման շուրջը» հոդվածը:

Սեյմի հրավիրումը Շահույթներն անվանում է «մենչևիկյան հարանք», «կատակերգություն» և նշում է, որ սեյմի և Անդրկովկասյան կոմիսարիատի միջև ոչ մի տարբերություն չկա, որվհետև այնտեղ են նույն պաշտպանողական կուսակցությունների ներկայացուցիչները՝ մենչևիկները, էսէռները, դաշակները և մուսուլմանական բեկերի ու խաների ներկայացուցիչները, որոնք վարում են նույն քաղաքականությունը:

Նկատի ունենալով, որ ազնվական-կալվածատերերից կազմված Անդրկովկասյան կոմիսարիատի ազդարային քաղաքականության

արդյունքով ամրապնդվել է կալվածատերերի իշխանությունը, որ գյուղացիներն էլ ավելի են ստրկացվել. Շահույթներն ընդգծում է, որ սեյմը վարելու է նույն քաղաքականությունը:

Շահույթները նշում է, որ Անդրկովկասյան կոմիսարիատը իր վարած քաղաքականությամբ այլևս ժողովրդականություն չի վայելում, որ «ժողովրդի լայն խավերն ասում են նրան... հարամիտ ժողովանիաները, Գեգեչկորիները և Ընկ. իրենց խղճուկ գոյությունը շարունակելու համար դիմել են պաշտպանողականների համար սովորական միջոցին՝ ժողովրդական մասաներին նորից հիմարացնելուն»:

Բայց միևնույն է, նշում է Շահույթները, դա էլ, ինչպես Անդրկովկասյան կոմիսարիատը նրանց չփրկեց, չի փրկի նաև սեյմը, որը նույնպես «դատապարտված է անգործության ու անանկություն»: (Ստ. Շահույթներ, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 95-97):

Բոլշևիկները սեյմի ստեղծումը դիտում էին որպես նոր միջոց Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու գործում: Եվ դրանից էլ ելնելով նրանք սեյմի բացման օրը Թիֆլիսի Ալեքսանդրոպոլյան այգում կազմակերպում են բողոքի ցույց, որի ժամանակ տարածվում է Շահույթների գրած ՌՄԻԲ(բ)Կ երկրային կոմիտեի կոչը:

Այդ կոչում ընդգծվում էր, որ սեյմը նոր կեղծիք է, նոր խաբեություն ժողովրդի համար, նոր միջոց Անդրկովկասում հեղափոխությունը ճնշելու համար՝ «ի շահ մուսուլմանական բեկերի ու խաների, ի շահ վրաց իշխանների ու հայ բուրժուազիայի»:

Այնուհետև նշվում է, որ մենչևիկները կառուցում են ժողովրդի թշնամիների՝ մուսուլմանական և վրաց ֆեոդալների ու հայ բուրժուազիայի հետ կազմած կոալիցիային, որը հասցրել է այն բանին, որ «Անդրկովկասն անջատվեց հեղափոխական Ռուսաստանից, մի բան, որ երազում էին մուսուլմանական խաները, այն հասցրեց ֆեոդալական ու բուրժուազական նացիոնալիզմի հաղթանակին Անդրկովկասի ներսում և երկրամասը կանգնեցրեց հայթոհական կոտորածի և այլ բնաջնջի պատերազմների անհրաժեշտության առջև դարձյալ ի հաճույս մուսուլմանական խաների ու բեկերի, կոալիցիան հասցրեց ուսական բանակի փտարմանը Կովկասից և ուսա զինվորների դավաճանական գնդակահարություններին ու կողոպուտին»:

Կոչում նշվում էր, թե սեյմում մենչևիկները ում հետ պետք է նխտի մասնակցեն: Առաջին հերթին հիշատակվում է մուսուլմանական

Ֆեոդարական մտավորականությունը, որը բեկերի և խաների Հետ միասին արյան մեջ են խեղդում գյուղացիների ապստամբությունը:

Անդրկովկասյան սեյմին մասնակցում է «դաշնակցություն» կուսակցությունը, որը «տասնյակ տարիների ընթացքում նացիոնալիզմի թույնով թունավորել է կովկասյան և ամենից առաջ Հայկական դեմոկրատիային: ...Նիստին մասնակցելու են այդ կուսակցության Հին պարագլուխները, որոնցից երես է թեքել Հայ պրոլետարիատը և որոնց նկատմամբ վատահույժությունը կորցնում է դեռ վերջերս նրանց օգտին քվեարկած Հայ գյուղացիությունը»:

Իսկ մենչևիկների մասին կոչում ասվում է, որ «դրանք վրացական դաշնակցականներն են, ավելի վատ՝ դա մուսուլմանական բեկերի առջև լավեյություն անող ազնվական-բուրժուական մտավորականությունն է»:

Կոչն ընդգծում էր, որ Անդրկովկասի ժողովուրդները սեյմում նստած վրաց նացիոնալիստական մտավորականությունից, Հայ դաշնակցականներից և մուսուլմանական բեկերից կարող են միայն սպասել նոր շղթաներ, Անդրկովկասում նոր արյունալի սարսափներ ու Հեղափոխության լիակատար կործանում:

Կոչը դնում էր կուսիցիոն սեյմի փոխարեն բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների սովետները նորից ստեղծելու և կառուցելու անհրաժեշտությունը:

«Սեյմը դեռ չի բացվել,- ասվում էր կոչում,- իսկ նրա ղեկավարներն արդեն սկսել են ռեպրեսիաների ու Հայածանքների քաղաքականությունը: Սրբազան պատերազմ են Հայտարարել բոլշևիկներին, կատարում են Հին Հեղափոխականների Համատարած ձեռքարկություններ, փակում են թերթերը, պատժելու սպառնալիքով սպարաններին արգելում տպագրել բոլշևիկյան թերթերը»:

Կոչը հիշեցնում էր, որ Հայերի և մուսուլմանների թաղամասերի միջև գտնվող թիֆլիսի Հրապարակներից մեկում արդեն կախաղան է կանգնեցված, որի մեջ է մարմնավորված «Հայ-թուրքական կոտորածը կանխելու ամբողջ հույսը» և ընդգծում էր, որ Հակահեղափոխական իշխանությունը ժողովրդական մասսաների վրա «չի կարող ազդել այլ կերպ, քան մահապատժի սպառնալիքով»:

Ավելացնեն, որ այդ կախաղանը Հակահեղափոխական բոլոր նախատեսել էր Շահումյանին կախելու համար: Այս փաստը նշել է նաև Լենինը, ընդգծելով Հետկայր. «Այս ծանր ժամանակում մենչևիկներն ու աջ էսէյանները՝ այդ քնքուշ գառնուկները, ճչում են մեր դաժանություն մասին,

մոռանալով, որ նրանք կախաղան կանգնեցրին ընկ. Շահումյանի համար: Ի պատասխան նրանց ես կարող եմ ասել՝ այո՛, մենք չենք ժխտում այն բռնությունը, որ մենք գործում ենք շահագործողների նկատմամբ»: (Վ. Ի. Լենին, ԵԼԺ, 36, էջ 264):

Կոչն ազդարարում էր. «Կախաղան՝ ահա մենչևիկների ու բեկերի «Հեղափոխական» ու «սոցիալիստական» իշխանության խորհրդանիշը... սեյմի խորհրդանիշը»: (Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. չորրորդ, էջ 134-139):

Միտինգի մասնակիցները իշխանություններին ներկայացնում են պահանջ՝ անհապաղ ազատել ձերբակալված բոլշևիկներին, բացել բոլշևիկյան փակված թերթերը, վերջ տալ բոլշևիկների նկատմամբ կիրառվող Հայածանքներին:

«...ՎԱՁԶ ՀԵՌԱՅՈՂ ԱԼԻՔՆԵՐԻ ԵՏԵՎԻՑ»

Ալեքսանդրովյան այգու ցույցը, որը ուղղված էր անդրկովկասյան սեյմը կառավարող ուժերի հակահեղափոխական քաղաքականության դեմ, ուներ խաղաղ բնույթ: Բայց դա անստեղծի, իշխանությունները դիմում են զենքի օգնության: Մենչևիկյան զորքերը գնդակոծում են խաղաղ ցույցը: Դրա հետևանքով շատերը զոհվեցին ու վիրավորվեցին:

Ցուցարարների վրա Հարձակվող ոստիկանները ստացել էին Հանձնարարություն՝ անպայման ձերբակալել կամ սպանել Շահումյանին: Նրանք այնքան էին ձգտում կատարել իրենց տերերի կամքը, որ ցուցարարներից մեկին նմանեցնելով Շահումյանին, տեղն ու տեղը գնդակահարում են նրան:

Խաղաղ ցույցի գնդակոծությունից Հետո անդրկովկասյան կառավարիչները տարածեցին մի Հայտարարություն, որով փորձում էին իրենց արդարացնել, կատարվածի մեջ մեղադրելով բոլշևիկներին: Այդ Հայտարարության մեջ նորից նշվում էր Շահումյանին ու Կուզնեցովին ձերբակալելու հրամանը:

Ալեքսանդրովյան այգու ցույցի ժամանակ զոհվածների թաղումը, որը տեղի ունեցավ փետրվարի 14-ին, վերածվում է քաղաքական ցույցի: Դրա մասնակիցները բողոքում էին անդրկովկասյան կառավարիչների դեմ: Տարածվեցին թուռցիկներ, որոնցով դատապարտվում էին սպանողի կազմակերպիչները և մասսաներին կոչ էր արվում՝ ուղքի ելնել ժողովրդի արյունը թափող դահիճների իշխանությունը ստապելու համար:

Ալեքսանդրովյան այգու խաղաղ ցույցի գնդակոծումն առաջ է բերում բողոքի հզոր այլք: Հեղափոխական նոր վերելքը կարող էր ավելի ծավալվել ու իշխանությունների համար դառնալ անհաղթահարելի ուժ: Եվ Շահումյանը, որը գործում էր ընդհատակում, դնում է ինդիլո՝ ամբողջ երկրամասում ծավալված շարժումը դարձնել միասնական, համաձայնեցնել գործողությունները և ապահովել գործի ավակցությունը:

Շահումյանը մտածում էր նաև գինիված ապստամբություն կազմակերպելու մասին, դրա համար նպատակ ունենալով օգտագործել ռազմաճակատից տուն վերադարձող զորամասերին, որոնց ճանապարհն անցնում էր Թիֆլիսով:

Շահումյանի հանձնարարությունները Սարիղամիշ են մեկնում Ն. Կուզնեցովը և Գ. Յազդովը, որոնք տեղի ռազմահեղափոխական կոմիտեի հետ միասին Թիֆլիս են բերում 10 հազար զինվորից կազմված էջերուր: Դա հակայական ուժ էր, որի օգնությամբ հնարավոր էր արմատապես լուծել ինդիլը: Չինվորներին բոլշևիկները մի քանի օր շարունակ ագիտացրին էին անում ապստամբություն բարձրացնել Անդրկովկասյան կառավարության դեմ:

Սակայն այդ ագիտացիան արդյունք չույժեց, քանի որ Թիֆլիս հասած զինվորներին հետաքրքրում էր միայն մի բան՝ որքան հնարավոր է շուտ տուն վերադառնալ: Կար նաև մեկ այլ, նույնպես կարևոր պատճառ: Հեղափոխությունների ընթացքում ամեն օր կատարվում են անսպասելի, անկանխատեսելի փոփոխություններ: Կովկասյան բանակի զինվորների մեջ սկզբնական շրջանում ուժեղ էին հեղափոխական տրամադրությունները, բոլշևիկների ազդեցությունը: Բայց աստիճանաբար թուլացել էր այդ տրամադրությունը և զինվորների մոտ գերակշիռ էր դարձել մանրրոշմունքային ոգին ու հսկաների ազդեցությունը:

Փետրվարի 10-ին տեղի ունեցած խաղաղ միտինգի գնդակոծության դեմ որպես բողոք կենտրոնական գործադուլային կոմիտեն Թիֆլիսում հայտարարում է գործադուլ: Գործադուլավորների պահանջները վերաբերում էին Շահումյանին ձերբակալելու հրամանի վերացմանը, ձերբակալված բանվորների ազատմանը, բոլշևիկյան թերթերի հրատարակմանը: Գործադուլավորները պահանջում են գործադուլին մասնակցած բանվորներին չձերբակալել և պատժել խաղաղ միտինգի արյունահեղության մեղավորներին:

Սկսված գործադուլը չհորացվեց: Նույն օրն էլ այն ավարտվում է: Գործադուլային կոմիտեն բավարարվում է հայտարարություններով, որ

գործադուլի ինդիլը լուծվել է՝ Անդրկովկասյան կոմիտեի անվտանգությունն արտահայտվել է:

Ընդհանուր գործադուլի հնարավորությունն էլ չի օգտագործվում և փաստորեն բոլշևիկներին չի հաջողվում օգտագործել ստեղծված նպաստավոր պայմանները իշխանությունը գրավելու համար:

Դրա փոխարեն Անդրկովկասյան սեյմն ուժեղացնում է ճնշումը: Շահումյանին ձերբակալելու հրամանին ավելացվում է բոլշևիկյան կուսակցությունն օրենքից դուրս հայտարարելը: Փետրվարի 10-ը դառնում է շրջադարձային պահ: Երկրամասում քաղաքական իրավիճակը կտրուկ փոխվում է:

Այս կապակցությամբ Շահումյանը «Бакинский рабочий» թերթին ուղարկում է «Անդրկովկասում բոլշևիկների կուսակցության նկատմամբ գործադրված հալածանքի առթիվ» նամակը, որը տպագրվում է 1917 թ. մարտի 8-ին: Այս հոդվածում Շահումյանը փաստերով ժխտում է բոլշևիկներին ներկայացված մեղադրանքները:

Առաջին. Շահումյանը նշում է, որ փետրվարի 10-ի միտինգի գնդակոծության վերաբերյալ կառավարության հայտարարությունն այն մասին, թե բոլշևիկ հոստորները կոչ են արել «գնալ ու ցրել սեյմը», ճիշտ չէ և իրականությունը չի համապատասխանում, քանի որ նախապես որոշվել էր, որ քաղաքական բանաձև ընդունելուց հետո միտինգի մասնակիցները պետք է ցրվեին:

Երկրորդ. Կառավարության հաղորդագրության մեջ նշված է, թե միտինգի կողմից եղել է կրակոց, որով իբր թե միլիցիոներ է սպանվել: «Դա, գրում է Շահումյանը,՝ ճիշտ չէ, միտինգի մասնակիցների կողմից կրակոց չի եղել»:

Յրրորդ. Նշվում է, որ միտինգին ներկա է եղել Շահումյանը: Դա նույնպես ճիշտ չէ:

Չորրորդ. Շահումյանին ներկայացվում է մեղադրանք, որ նա իբր թե գնացել է ռազմաճակատ և գործ է բերել Թիֆլիս: Դա ճիշտ չէ: Ճիշտ չէ նաև այն, որ նա Ալեքսանդրովյան այգում ելույթ է ունեցել և կոչ է արել բռնի ուժով ցրել սեյմը: (Ստ. Շահումյան, նույն տեղը, հ. չորրորդ, էջ 142-147):

Ալեքսանդրովյան այգում փետրվարի 10-ի խաղաղ միտինգը գնդակոծելու փաստին Շահումյանն անդրադարձել է նաև «Թիֆլիս, 12 փետրվարի» հոդվածում, որը հրատարակվել է «Бакинский рабочий» թերթում 1918 թ. մարտի 10-ին:

Շահումյանն Ալեքսանդրովյան այգու իրադարձությունները

պատահականություն չի համարում և ընդգծում է, որ «դրանք մի ամբողջ սխառեմի արդյունք են, սխառեմ, որին լավագույն հրապարակախոսներից մեկն անվանել է «վազք հեռացող այիքների ետևից»»:(Ստ. Շահումյան, նույն տեղը, Հ. չորրորդ, էջ 158-160):

Նախորդ էջերում նշվել է, որ Անդրկովկասյան կոմիսարիատում և հետո նաև սեյմում ավելի են խորանում այնտեղ գտնվող կուսակցությունների հակասությունները: Միաժամանակ Անդրկովկասի տարածք գերմանաթուրքական զորքերի ներխուժման պայմաններում Իրանում գտնվող անգլիական հրամանատարության հետ Բաքվի դաշնակների, մենչևիկների և էսէռների կապերն ավելի են ուժեղացնում նրանց միջև եղած հակամարտությունը:

Այս ամենն էլ նկատի ունենալով 1918 թ. փետրվարի 14-ին Լենինը Շահումյանին ուղարկած հեռագրում իր հրճվանքը հայտնելով հաստատական և վճռական քաղաքականության համար, Շահումյանին խորհուրդ էր տալիս. «Կարողացեք դրան միացնել այն ամենազուրկ դիվանագիտությունը, որն անպայման թերադրվում է այժմյան դժվարագույն դրությունը,- և մենք կհաղթենք»:

Այնուհետև Լենինը հաշվի առնելով առաջացած անսահման դժվարությունները, ընդգծում էր. «Առայժմ մեզ փրկում են միայն հակասությունները, կոնֆլիկտներն ու պայքարը իմպերիալիստների միջև» և խորհուրդ էր տալիս. «Կարողացեք օգտագործել այդ կոնֆլիկտները. առայժմ հարկավոր է դիվանագիտություն սովորել»:(Վ. Ի. Լենին, ԵՎժ, Հ. 50, էջ 84-85):

Ստեղծված պայմաններում Շահումյանը զրկվում է արտակարգ կոմիսարի պարտականությունները կատարելու հնարավորությունից և անհնար է դառնում Թիֆլիսում մնալը: Շահումյանը որոշում է Թիֆլիսից մեկնել Բաքու: Դա լուրջ դժվարությունների հետ էր կապված իշխանության խուզարկումները տեղադրեն որոնում էին Շահումյանին:

1918 թ. փետրվարի 20-ին Շահումյանին ընկերների օգնությամբ հաջողվում է դուրս գալ Թիֆլիսից, հասնել քաղաքից 300 կմ հեռավորության վրա կանգնած զինվորական էջերին, և զինվորի համազգեստ հագած՝ նա նրանց հետ մեկնում է Բաքու:

Վերջ առաջին հատորի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սիմոն Տետեյան3
Սիմոն Տետեյանի ինքնակենսագրությունը4
Երկու խոսք8

ԳԼՈՒԽ 1

Համեստ ընտանիքի գավակը29
Վաճառական Խիտարովի համառությունը30
Արժանապավոթյան գգացողությունը31
Ալեքսանդր Երիցյանի միջամտությունը32
Շահումյանի սոցիալական հասունությունը33
Մի պատկեր ուսումնարանի ատոլոյայից34
«Ծիածան» խմբակի ստեղծումը35
«Մենք մեզ համար ուսուցիչ ենք փնտրում»37
«...Նա սիրում էր իր մտքերը հաղորդել ուրիշներին»38
Նամակ Ավետիս Նազարբեկյանին40
«Սասունի կոտորածների հետևանքները...»41
«Ով ականջ ունի լսելու. բող լսե...»42
Չքավոր ընկերներին օգնելու համար45
Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան45
Առաջին այցելությունը Հայաստան47
«...Այդպիսի կարծիքները կարող են բոլորովին փչացնել ինձ...»49
Ստեփան Մալխասյանի և Մակար Եվմայանի հրավերով53
«...Մի խոսքով ապրիր գիտակցաբար. ճակաչիր քեզ...»55
Պատանի Շահումյանի համարձակ քայլը56
«Մանթաշովն ապշել էր այդ անսպասելի պատասխանից»58
Կարապետ Եգյանի օգնությունը60
Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում61
Սրբագրիչն ու բարգամախը63
Նշանավոր ազգագրագետ Երվանդ Լալայանի հետ64
Հայաստանում առաջին մարքսիստական խմբակի ստեղծումը65

ԳԼՈՒԽ 2

Շահումյանը մտնում է ՌՍԴԲ կուսակցության շարքերը67

«Սևան» միությունը68

«Թեորետիկ» խմբակը69

Ռուսաստանի հայ ուսանողների համագումարը70

«Մուրճ»-ի խմբագիր Ա.Արասխանյացնին պաշտպանելու համար73

Առաջին քաղաքական ցույցը Ռ-ի գայում75

Ռսանողների Համառուսաստանյան երկրորդ համագումարը76

«Արգելվում է ձեր մուտքը ինստիտուտ»77

«Այդ շատ լուրջ և վարմանալի արագ մտածող մարդը»79

«...Ի՞նչ դասակարգային հարց կրնար լինել մեր մէջ...»80

«Միակ անկեղծը Շահումյանի խոսքերն էին,
և ես դրանք երբեք չեմ մոռանա».....82

Ղազարոս Աղայանի հորեյանը84

Մտորումներ կյանքի իմաստի մասին92

Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը95

ԳԼՈՒԽ 3

Փիլիսոփայության ֆակուլտետի ուսանողը100

Իմ հայ բարեկամները102

Հանդիպում Պլեխանովի և Լենինի հետ105

«...Հայտարարում ենք մեր համակրությունը բազմաչարչար տաճկահայ ժողովրդի ազատարար գործին...»106

Գրախոսական Մ. Գորկու «Հատակում» պիեսի մասին.....108

«Մեր տակտիկական տարածայնությունները» ռեֆերատը.....110

1904 թվականի Մայիսի մեկը.....112

Տպավորություններ Հայաստանից.....113

Միքայել Վարանդյանի հողվածը.....115

Շահումյանի պատասխանը Վարանդյանին.....119

Շահումյանի հարցադրումները.....123

«Ովքե՞ր են հնչակյանները».....125

Եվրոպայի հայ ուսանողների կոնգրեսը.....129

ԳԼՈՒԽ 4

Վահան Տերյանի վկայությունը.....133

«Դասակարգերը ժամանակակից եվրոպական հասարակության մեջ».....134

«Մենք սոցիալիստներ ենք...».....136

«Էվոլյուցիոնիզմը և ռեյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ».....138

«Ռութամյա բանվորական օրը և բանվորների պետական ապահովագրությունը».....143

«Եղբայրասպան պատերազմի իսկական հանցագործը».....144

Լենինը հայ-թաթարական ընդհարումների մասին.....148

Պատասխան «Մշակ» թերթին.....150

Երդվյալ հավատարամատար Բայկովի վկայությունը.....151

Առաջին հայերեն բոլշևիկյան լեզուլ թերթը.....152

Այցելություն Երևան.....153

«Առեղի շարիք Կովկասի համար».....156

«Սոցիալ-դեմոկրատիայի ազգային քաղաքականությունը».....159

«Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան».....165

«Գյուղացիական շարժումը».....181

Զիաթխանովի ճառը և «Ալիք»-ի «ազգասերները».....182

«Հայ-բուրքական պրովոկացիան».....184

«Ընտրողական պայքարը».....184

«Մենք չենք հավատում ձեր անկեղծությանը».....187

«Դաշնակցության համագումարն Էջմիածնում».....190

Հակասություններն ավելի են խորանում.....193

Անհաջող գործադուլը.....199

Շահումյանի գաղափարական հակառակորդները գործում են միասին.....200

Բորչալու-Լոռիի սոցիալ-դեմոկրատների Վճռականությունը.....205

Բաֆթու որդու հրավերով.....206

Թիֆլիսում մնալը դառնում է վտանգավոր.....207

«Ինչպես պ-րն Մաղաբեյանը ինքն իրեն մի ձայնով ընտրեց».....208

Նամակ «Մշակ»-ի խմբագրությանը.....213

Ժողովանիայի միջնորդության ձախողումը.....214

«Սարսափելի կերպով պարտքի տակ եմ ընկել».....215

Բանվորներին տրվող հինգ երաշխիքները216

«Բոլկոտիստները և լիազորների խորհուրդը».....219

ԳԼՈՒԽ 5

«Դասակարգային պայքարը և տնտեսական տեռորը».....222

«Տնտեսական տեռորը և դասակարգային պայքարը».....226

Ռեակցիան գնալով ուժեղանում է.....228

«...Սեզ տառացիորեն խաչում են...».....232

Ալեքսանդր Մյասնիկյանի գնահատականը.....233

1909 թ. Մայիսի մեկը.....234

«Դավանանքս՝ հայ լուսավորչական».....235

ՌՄԳԲԿ Բարվի կոմիտեի բանաձևը.....239

Շահումյանի նկատմամբ ուժեղացվում է ոստիկանական հսկողությունը.....242

«Լ. Տոլստոյի հիշատակի մեծարման առթիվ».....245

Լ. Տոլստոյի «Կանաչ փայտիկը».....249

«Մեր խնդիրները».....252

«Մ. Գորկին սրողետարական գրականության գարդն ու պարծանքն է».....253

Բանվորների միության վերականգնումը.....255

1911 թ. Մայիսի մեկի առթիվ.....257

Հասակոսակցական կոնֆերանս հրավիրելու համար.....260

Շահումյանը նորից է ձերբակալվում.....262

ԳԼՈՒԽ 6

«Տիեզերական բութակը».....267

«Դրոշակ»-ի «Տեղեկագիրը».....271

Օսմանյան կայսրության ընդլայնման ուժերի կոնկրետի «Յայտարարագիրը».....275

Դաշնակցություն և Հնչակյան կուսակցությունների դիրքորոշումը.....279

Վարանդյանը երիտթուրքական հեղափոխության մասին.....285

Վ Փափագյանը պատմագետի դերում.....288

Շահումյանի և Սպանդարյանի հանդիպումը.....298

Աստրախանի արտրալայրում.....301

«Կուլտուր-ազգային ավտոնոմիայի մասին».....305

Ադրբեջանցի կեղծարարի հիմնագուրկ փաստարկը.....308

Ազգային հարցը Պորոնիևի խորհրդակցությունում.....311

Բանավեճ Լենինի հետ.....313

Բանավեճ Դավիթ Անիադի հետ.....320

Դաշնակցությունը և կուլտուր-ազգային ավտոնոմիան.....343

«Օսմանյան ինտերնացիոնալը».....349

ԳԼՈՒԽ 7

Շահումյանը վերադառնում է արտրից.....352

«...Այլևս հապաղել չի կարելի...».....354

Ռոժեղ կազմակերպություն ունենալու անհրաժեշտությունը.....357

Վահան Տերյանին պաշտպանելու համար.....362

«Ռ՛չ, լեռները չեն մեղավոր...».....368

«...Թուրքահայ դատը միշտ տարվել է սխալ շալիղով».....371

ԳԼՈՒԽ 8

Սկսված համաշխարհային պատերազմը լուրջ ջնկություն էր բողոքի համար.....374

Բարվի կոմիտեի վերականգնումը.....377

Անդրկովկասյան կազմակերպությունների վերականգնումը.....381

Շահումյանը նորից է ձերբակալվում387

Հայ գրականության ժողովածուի մասին394

«Այդ բոլորը սոստ է կամ սխալ է...»398

Սուրեն Սպանդարյանի մասին401

«Մտավորականությունը և նացիոնալիզմը»421

ԳԼՈՒԽ 9

Բարվի սովետի նախագահը424

«Դաշնակցականները բոլշևիկների մասին»426

Առաջին լեզալ կոնֆերանսը430

Կոչ՝ ուղղված Բարվի հայ բանվորությանը432

«Սուցիալ-դեմոկրատ» բերքը434

Բարվում գործող սովետների միավորումը442

Ընթացիկ մոմենտի հիմնական հարցը443

Սովետների համառոտաստանյան առաջին համագումարում444

Ի՞նչ են ուզում բոլշևիկները448

«Հեղափոխությունը վտանգի մեջ է»452

Նավթահանքերը Բաքու քաղաքին միացնելու անհրաժեշտությունը454

Բանավեճ Վերմիշևի հետ457

Մոսկվայի խորհրդակցությունը461

«Պահանջեցեք սովետի վերընտրություններ»463

Շահումյանը դեմոկրատական խորհրդակցությունում464

Կուսակցության կովկասյան առաջին մարզային համագումարը.....466

Ազգային հարցի քննարկումը468
 Ազգային հարցի վերաբերյալ Շահումյանի առաջարկությունը469
 Այցելություն Ալեքսանդրապոլ472
 Կազմվում է սովետի ժամանակավոր գործադիր կոմիտե473
 Խոսք՝ ուղղված երիտասարդությանը474
 Հայոց ազգային համագումարը476

ԳԼՈՒԽ 10

Շահումյանը միաձայն ընտրվում է Բարձի սովետի գործադիր կոմիտեի նախագահ.....483
 Կոչ՝ ուղղված զինվորներին.....487
 Բարձի սովետն ընդունում է Շահումյանի առաջարկությունները488
 Անդրկովկասում հռչակված առաջին սովետական իշխանությունը490
 Հասարակական կազմակերպությունների գործկոմի վերացումը.....493
 Շահումյանի վերաբերմունքն Անդրկովկասյան կոմիսարիատի նկատմամբ497
 «Ռուսական հեղափոխությունը և Անդրկովկասյան իշխանությունը» ...499
 Կովկասյան բանակի երկրորդ համագումարը504
 «Արև» թերթի գնահատականը511
 Կոչ՝ ուղղված բոլոր զինվորներին512
 Կովկասյան բանակի ռազմահեղափոխական կոմիտեի ստեղծումը514
 Մենչևիկների մտադրությունը ձախողվում է515
 Սովետների առաջին երկրային համագումարը517
 Շահումյանի դասախոսությունը 1917 թ. դեկտեմբերի 31-ին519

ԳԼՈՒԽ 11

Շահումյանը նշանակվում է Կովկասի գործերի արտակարգ կոմիսար.....521
 «Ուշքի եկե՛ք, քանի դեռ բոլորովին ուշ չէ»524
 Արտակարգ կոմիսարի դիմումը526
 «...Կանգ առեք՝ քանի դեռ ուշ չէ»527
 Կոչ՝ ուղղված մուսուլման գյուղացիներին529
 Ճշմարտությունը Ելիզավետպոլի իրադարձությունների մասին531
 Շահումյանին ձերբակալելու որոշումը535
 ‘Իմում’ ուղղված Կովկասյան բանակին538
 Անդրկովկասյան ՍեՏմի ստեղծումը540
 «Վազը հեռացող ալիքների ետևից»543

ՎԱՐԻՍԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՂԵՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՏՊԱԳՐՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ապարանի անցյալն ու ներկան. Երևան, 1960, 37 էջ.
2. Ինտերնացիոնալիզմի դրոշին հավատարիմ, Երևան, 1983, 368 էջ.
3. Անդրկովկասի և Միջին Ասիայի բուլշևիկյան կազմակերպությունների համատեղ պայքարի պատմությունից, Երևան, 1987, 327 էջ.
4. Էնվերի վերջը, Բեյրութ, 1996, 190 էջ.
5. Արարատը պետք է մնա Երևանի կողմը, Բեյրութ, 2001, 176 էջ.
6. Ռուբեն Սևակը և մեր ժամանակը, Երևան, 2003, 302 էջ.
7. Կոմս Լորիս-Մելիքով, Երևան, 2005, 479 էջ.
8. Չմոռանանք. Արևմտահայության ազգային-ազատագրական պայքարը 20-րդ դարի երկրորդ կեսին, Երևան, 2006, 813 էջ.
9. Հայաստան. 1918 թվական, Երևան, 2007, 211 էջ.
10. Ժամանակի հրամայականը, հատոր առաջին, Երևան, 2008, 801 էջ.
11. Հայաստանի պատմություն (համահեղինակ՝ Լ. Ղարիբջանյան), Երևան, 2008, 245 էջ.
12. Գրիգոր Հարությունյանի ժամանակը, առաջին հատոր, Երևան, 2008, 474 էջ.
13. Գրիգոր Հարությունյանի ժամանակը, երկրորդ հատոր, Երևան, 2008, 516 էջ.
14. Գրիգոր Հարությունյանի ժամանակը, երրորդ հատոր, Երևան, 2008, 526 էջ.
15. Ռուբեն Սևակի աչքերով, Երևան, 2009, 219 էջ.
16. Հայաստան. 1919-1922 թվականներ, առաջին հատոր, Երևան, 2011, 623 էջ.
17. Հայաստան. 1919-1922 թվականներ, երկրորդ հատոր, Երևան, 2011, 675 էջ.
18. Նիզ-Ապարան, Երևան, 2011, 1008 էջ.
19. Էնվերի վերջը (երկրորդ լրամշակված հրատարակություն), Երևան, 2012, 256 էջ.
20. Ստեփան Շահումյան. նրա կյանքի պատմությունը, առաջին հատոր, Երևան, 2013, 555 էջ.
21. Ստեփան Շահումյան. նրա կյանքի պատմությունը, երկրորդ հատոր, Երևան, 2013, էջ.

22. Անտոն Քոչինյանի ժամանակը, Երևան, 2013, 582 էջ
23. Էնվերի վերջը (3-րդ հրատարակություն), Երևան, 2013, 256 էջ
24. Վլադիմիր Մովսիսյան. կյանքը և գործը, Երևան, 2013, 323 էջ

**Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ
ԸՆԴԱՐՉԱԿ ԱՌԱՋԱԲԱՆՈՎ ՏՊԱԳՐՎԱԾ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Գուրգեն Յանիկյան, Նպատակ և ճշմարտություն, Երևան, 1999.
2. Սասուն Գրիգորյան, Հավերժության լուսամատյան, Երևան, 2002.
3. Յովհաննես Չիլինկիրեան, Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականությունները, առաջին հատոր (հայերեն, թուրքերեն, անգլերեն, ֆրանսերեն), Երևան, 2005.
4. Անտոն Քոչինյան. Անավարտ հուշեր, Երևան, 2008.
5. Յովհաննես Չիլինկիրեան, Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականությունները, երկրորդ հատոր, Երևան, 2009.
6. Վլադիմիր Միսակյան, Խաղողն Արագածի փեշերին, Երևան, 2009.
7. Советская Армения в годы Великой отечественной войны (1941-1945), сборник документов и материалов, Ереван, 2009.
8. Дни сквозь строчки. Из рабочих дневников Карена Демирчяна, Ереван, 2010.
9. Յովհաննես Չիլինկիրեան, Վերադարձ Հայաստան, Երևան, 2011.
10. Նազարեթ Սրմաքեշեան, Ազգովին զգաստանանաք, Երևան, 2011.
11. Յովհաննես Չիլինկիրեան, Սուտերե եւ սխալներե ազատած Ռուբեն Սեւակի հերոսական կեանքի պատմությունը, Երևան, 2012.
12. Սասուն Գրիգորյան, Մեր հերոսները և զինուժի գեներալները (1988-2012 թթ.), Երևան, 2012.
13. Արամայիս Երզնկյան. Դեմք, լեզենդ (հայերեն և ռուսերեն), Երևան, 2012.
14. Բարկեն Վարդանյան, Չրույց կյանքիս հետ, Երևան, 2012.
15. Յովհաննես Չիլինկիրեան, Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականությունները (հայերեն, թուրքերեն), երրորդ հատոր, Երևան, 2013.

**ՄԻՍՈՆ ՏԵՏԵՅԱՆԻ
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՏՊԱԳՐՎԱԾ ԳՐՔԵՐԻ
ՑԱՆԿ**

- Վլադիմիր Պետրոսյան, Չնոռանանք, Երևան, 2006 թ. , 848 էջ.
 Վլադիմիր Պետրոսյան, Գրիգոր Հայրությունյանի ժամանակը, գիրք
 առաջին, Երևան, 2008 թ. , 508 էջ.
 Վլադիմիր Պետրոսյան, Գրիգոր Հայրությունյանի ժամանակը, գիրք
 երկրորդ, Երևան, 2008 թ. , 516 էջ. էջ.
 Վլադիմիր Պետրոսյան, Ստեփան Շահումյան. նրա կյանքի պատմու-
 թյունը, գիրք առաջին, Երևան, 2013 թ. , 558 էջ.

ՎԼԱԴԻՄԻՐ ԳԵՎՈՐԳԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ
 ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆ.
 ՆՐԱ ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հատոր առաջին

ВЛАДИМИР ГЕВОРГОВИЧ ПЕТРОСЯН
 СТЕПАН ШАУМЯН.
 ИСТОРИЯ ЕГО ЖИЗНИ

Том первый

Հրատարակչության խմբագիր՝ Տիգրան Հարությունյան
 Համակարգչային շարվածքը՝ Մարատ Պետրոսյան
 Էջադրումը և շապիկի ձևավորումը՝

Դիանա Գրիգորյան

Սրբագրությունը՝

Մարատ Պետրոսյան



Տպագրությունը՝ օֆսեր: Չափսը՝ 60X 84, 1/16
 Թուղթը՝ օֆսեր, ծավալը՝ 34.75 մամուլ
 Տպաքանակը՝ 300 օր.:

«Նոյյան Տապան» տպագրատուն
 ՀՀ, Երևան 0009, Իսահակյան 28
 Հեռ. (374) 060 276462
 Էլ. փոստ՝ contact@nt.am
 Կայք՝ <http://www.nt.am>